

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ

I

ՀԻՆ ԸՐՁԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՐԱԿԻՑ ԵՐԿՐՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԶՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

ՀԱՏՈՐ

I

ՀԻՆ ՇՐՋԱՆ



ԶԱՆԳԱԿ
ԵՐԱՍՏՐԱԿՎՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2013



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES



HISTORY OF NEIGHBOURING COUNTRIES OF ARMENIA

IN FOUR VOLUMES

VOLUME

I

ANCIENT PERIOD


ZANGAK
PUBLISHING HOUSE
YEREVAN 2013



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК АРМЕНИИ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ИСТОРИЯ СОПРЕДЕЛЬНЫХ С АРМЕНИЕЙ СТРАН

В ЧЕТЫРЕХ ТОМАХ

ТОМ

I

ДРЕВНИЙ ПЕРИОД


ЗАНГАК
ИЗДАТЕЛЬСТВО
ЕРЕВАН 2013

Քառասորոյակի գլխավոր խմբագիր՝ ՌՈՒԲԵՆ ԱՐԱՄԻ ՍԱՖՐԱՏՅԱՆ

խմբագրական խորհուրդ՝ Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐՅԱՆ (պ. գ. դ.), Ն. Վ. ՎԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (պ. գ. դ.), Ն. Հ. ՎՈՎՈՆՆԻՍՅԱՆ (պ. գ. դ.), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Պ. Մ. ՄՈՒՐԱԴՅԱՆ (պ. գ. դ.), Պ. Ա. ՉՈՐԱԿՅԱՆ (պ. գ. դ.), Ռ. Ա. ՍԱՖՐԱՏՅԱՆ (պ. գ. դ.), ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Ա. Վ. ՔՈՍՅԱՆ (պ. գ. դ.)

Հատորի պատասխանատու խմբագիր՝ ԱՐԱՄ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՔՈՍՅԱՆ

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3
Հ 247

Հ 247 Հայաստանի հարակից երկրների պատմություն/ խմբ. խորհուրդ՝ Ռ. Սաֆրաստյան և ուրիշ. — Եր.: Զանգակ, 2013: Հ 1: Հին շրջան. — 600 էջ + 24 էջ ներդիր:

Հայաստանի հարակից երկրների պատմության առաջին հատորն ընդգրկում է Հայաստանին սահմանակից տարածաշրջանների՝ Միջագետքի, Փոքր Ասիայի, Իրանական բարձրավանդակի և Հարավային Կովկասի (Վիրք և Աղվանք) հին պատմությունը՝ սկսած պետականությունների կազմավորումից ընդհուպ մինչև Պարթևական պետության անկումը: Աշխատությունը զրկված է սկզբնաղբյուրների և նորագույն ուսումնասիրությունների հիման վրա:

Գիրքը հասցեագրված է Հին Առաջավոր Ասիայի և հայոց պատմության մասնագետներին, ուսանողներին և ընդհանրապես քաղաքակրթությունների պատմության հարցերով հետաքրքրվողներին:

ՀՏԴ 93/99
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-68-236-5

© ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2013 թ.
© «Զանգակ-97» ՍՊԸ, 2013 թ.

Editor in Chief: RUBEN SAFRASYAN

Editorial Board: V. A. Bayburtyan (Doctor of Historical Sciences), P. A. Chobanyan (Doctor of Historical Sciences), N. V. Harutyunyan (Doctor of Historical Sciences), N. H. Hovhannisyan (Doctor of Historical Sciences, Corresponding Member of NAS RA), A. V. Kosyan (Doctor of Historical Sciences) P. M. Muradyan (Doctor of Historical Sciences), R. A. Safrastyan (Doctor of Historical Sciences, Corresponding Member of NAS RA)

Editor of the Volume: ARAM KOSYAN

The first volume of the "History of Neighbouring Countries of Armenia" includes the ancient history of adjacent to Armenia regions including Mesopotamia, Asia Minor, Iranian Plateau and Southern Caucasus (Iberia and Albania) from the formation of states up to the decline of the Parthian Empire. The work is based on primary sources and modern studies.

The book is addressed to the specialists of the history of Ancient Near East and Armenia, students and all those who are interested in the history of civilizations.

Главный редактор: РУБЕН САФРАСТЯН

Редакционная коллегия: Н. В. Арутюнян (доктор исторических наук), В. А. Байбуртян (доктор исторических наук), А. В. Косян (доктор исторических наук), П. М. Мурадян (доктор исторических наук), Н. О. Оганесян (доктор исторических наук, член-корр. НАН РА), Р. А. Сафрастян (доктор исторических наук, член-корр. НАН РА,), П. А. Чобанян (доктор исторических наук)

Редактор тома: АРАМ КОСЯН

Первый том "Истории сопредельных с Арменией стран" охватывает древнюю историю соседних с Арменией регионов, включая Месопотамию, Малую Азию, Иранское плоскогорье и Южный Кавказ (Иберия и Албания), начиная от формирования государств до падения Парфянской империи. Работа написана на основе первоисточников и новейших исследований.

Книга адресована специалистам по истории Древнего Ближнего Востока и Армении, студентам, а также всем интересующимся историей цивилизаций.

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

խմբագրական խորհրդի կողմից..... 9

ԱՌԱՋԱԲԱՆ (Ա. Քոսյան) 10

Օգտագործված գրականություն 21

ԲԱԺԻՆ 1.

ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՏՔ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (Ա. Քոսյան) 25

ՄԱՍ 1. ՄԻՋԱԳԵՏՔԸ Ք. Ա. ՍՈՒ ՀԱՋԱՐԱՄՅԱԿՈՒՄ (Ա. Մուկիսյան) 29

Տարածքը և բնակլիմայական պայմանները..... 29

Միջագետքի բնակչությունը Ք. ա. ՍՈՒ հազարամյակում 30

Պատմության աղբյուրները 32

Գլուխ 1. ՇՈՒՄԵՐ 34

Նախադիտատիական դարաշրջան..... 34

Վաղդիտատիական դարաշրջան..... 35

Գլուխ 2. ԱՔՔԱԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՐԻ ՍՈՒ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ 37

Աքքադի կազմավորումը և վերելքը. Սարգոն I..... 37

Աքքադը Սարգոնի հաջորդների օրոք. Նարամ-Սին (Նարամ-Սուեն) 38

Աքքադի անկումը..... 41

Միջագետքը Ուրի ՍՈՒ հարստության դարաշրջանում..... 42

Գլուխ 3. ՀՆԱԳՈՒՅՆ ՄԻՋԱԳԵՏՔԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՈՂԱՇԽԱՐՀԸ 46

Շումերը և Հայկական լեռնաշխարհի երկրները 46

Աքքադի տերությունը և Հայկական լեռնաշխարհը 49

Ուրի ՍՈՒ հարստությունը և Հայկական լեռնաշխարհը 52

ՄԱՍ 2. ԱՍՈՐԵՍՏԱՆ 54

Գլուխ 1. ԱՇՇՈՒՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (Ե. Գրեկյան) 54

Աշշուրը մինչև ամորեացիների տիրապետությունը..... 54

Հին ասորեստանյան թագավորությունը. Աշշուր 58

Գլուխ 2. ԱՍՈՐԵՍՏԱՆԸ Ք. Ա. XIV-IX ԴԴ. (Ա. Քոսյան).....	64
Միջին ասորեստանյան պետության կազմավորումը և վերելքը.....	64
Սարմանասար I և Թուկուլթի-Նինուրտա I.....	67
Թիզբարպարասար I-ը և նրա հաջորդները.....	70
Նոր ասորեստանյան թագավորությունը. Սարմանասար III.....	75
Գլուխ 3. ԱՍՈՐԵՍՏԱՆԸ Ք. Ա. VIII-VI ԴԴ.	80
Թիզբարպարասար III (Ե. Գրեկյան).....	80
Սարմանասար V և Սարգոն II (Ե. Գրեկյան).....	84
Սինախներիբ (Ե. Գրեկյան).....	87
Ասարհադդոն (Ե. Գրեկյան).....	89
Աշշուրբանասպալ (Ե. Գրեկյան).....	92
Ասորեստանը վերջին արքաների օրոք (Ե. Գրեկյան).....	94
Ասորեստանի քաղաքական կարգը և բանակը (Ա. Քոսյան).....	98
Ասորեստանը և Հայկական լեռնաշխարհը (Ա. Քոսյան).....	102
ՄԱՍ 3. ԲԱԲԵԼՈՆԻԱ	114
Գլուխ 1. ԲԱԲԵԼՈՆԻԱՆ Ք. Ա. XIX-XI ԴԴ. (Ա. Քոսյան).....	114
Հին բաբելոնյան պետությունը.....	114
Կասսիտական Բաբելոնիան.....	116
Իսինի արքայատոհմը.....	121
Քաղղեական ցեղերը Բաբելոնիայում.....	123
Գլուխ 2. ՆՈՐ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ (Ե. Գրեկյան).....	129
Նաբուգոդոնոսոր II.....	129
Նաբոնիդը և Բաբելոնիայի անկումը.....	132
Բաբելոնիան և Հայկական լեռնաշխարհը (Ա. Մովսիսյան).....	136
ՄԱՍ 4. ՄԻՋԱԳԵՏՔԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ (Ա. Քոսյան).....	143
Կրոնը.....	143
Գիրը.....	146
Գրականությունը.....	147
Գիտությունը.....	148
Ճարտարապետությունը և քանդակագործությունը.....	151
Օգտագործված գրականություն.....	152

	ԲԱԺԻՆ 2.
	ՀԻՆ ՓՈՔԸ ԱՍԻԱ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (Ա. Քոսյան).....	165
Տարածքը և բնակչությունը.....	165
Պատմության աղբյուրները.....	169
Գլուխ 1. ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ.....	174
Հին թագավորություն (Ա. Քոսյան).....	174
Միջին թագավորություն. Խեթական տերության կազմավորումը (Ա. Քոսյան).....	177
Նոր թագավորություն. Տերության անկումը (Ա. Քոսյան).....	180
Վարչաքաղաքական կարգը և բանակը (Ա. Քոսյան).....	188
Խեթական Փոքր Ասիայի մշակույթը (Ա. Բորոխյան).....	190
Խեթական տերությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները (Ա. Քոսյան).....	194
Գլուխ 2. ԼՈՒՎԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	201
Տարածքը, բնակչությունը և պատմության աղբյուրները (Ա. Քոսյան).....	201
Քաղաքական պատմություն (Ա. Քոսյան).....	203
Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի մշակույթը (Ա. Բորոխյան).....	212
Լուվիական պետությունները և Հայկական լեռնաշխարհը (Ա. Քոսյան).....	213
Օգտագործված գրականություն.....	216
	ԲԱԺԻՆ 3.
	ՀԻՆ ԻՐԱՆ
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (Ա. Քոսյան).....	225
Գլուխ 1. ԷԼԱՄ (Ե. Գրեկյան).....	227
Տարածքը և բնակչությունը.....	227
Պատմության աղբյուրները.....	228
Վաղ էլամական թագավորությունները.....	230
Էլամը «սուկկալմախների» օրոք.....	234
Միջին էլամական թագավորությունները.....	236
Նոր էլամական թագավորությունը.....	238
Էլամի մշակույթը.....	251
Գլուխ 2. ՄԱՐԱՍԱՆ.....	261
Տարածքը (Ե. Գրեկյան).....	261
Մարական ցեղերը և Միջագետքի պետությունները (Ե. Գրեկյան).....	262

Մարական աշխարհը Ք. ա. VIII դ. երկրորդ կեսին (Ե. Գրեկյան)	266
Մարաստանի կազմավորումը (Ե. Գրեկյան)	269
Մարաստանը Ք. ա. VII դ. երկրորդ կեսին (Ե. Գրեկյան).....	270
Մարաստանի «վերելքը և անկումը» (Ե. Գրեկյան).....	272
Մարաստանը և Հայաստանը (Տ. Դալայան).....	283
Գլուխ 3. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ (Ե. Գրեկյան).....	289
Պատմության աղբյուրները	289
Նախապատմություն	292
Ցեղապետությունից մինչև տերություն	293
Աքեմենյանների իշխանության հաստատումը. Դարեհ I	299
Աքեմենյանների «Համաշխարհային տերությունը»	305
Աքեմենյան տերությունը Դարեհի հաջորդների օրոք	312
Աքեմենյան տերության անկումը	320
Աքեմենյան տերության քաղաքական-տնտեսական կարգը և մշակույթը.....	323
Աքեմենյան Իրանը և Հայաստանը.....	333
Գլուխ 4. ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ	344
Պետության կազմավորումը (Վ. Բայբուրդյան).....	344
Պարթևաստանի վերելքը (Վ. Բայբուրդյան)	348
Պարթևա-հռոմեական պատերազմները (Վ. Բայբուրդյան)	354
Պարթևաստանի անկումը (Վ. Բայբուրդյան)	365
Պարթևաստանի մշակույթը (Ա. Քոսյան)	366
Պարթևա-հայկական փոխհարաբերությունները (Վ. Բայբուրդյան)	368
Օգտագործված գրականություն	374

ԲԱԺԻՆ 4.

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ

ՄՅՈՒՍ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԷԹՆՈՍՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ (Ա. Քոսյան).....	387
Գլուխ 1. ՄԻՏԱՆՆԻ	389
Տարածքը և բնակչությունը (Ա. Քոսյան).....	389
Պատմության աղբյուրները (Ա. Քոսյան).....	391
Քաղաքական պատմություն (Ա. Քոսյան)	394
Միտաննիի մշակույթը (Ա. Քոսյան)	398
Միտաննին, խորրիները և Հայկական լեռնաշխարհը(Ա. Պեպրոսյան, Ա. Քոսյան)	401

Գլուխ 2. ԷԲԼԱ (Ա. Մովսիսյան).....	404
Էբլայի քաղաք-պետությունը.....	404
Էբլան և Հայկական լեռնաշխարհը	405
Գլուխ 3. ԿԱՍԿԵՐ (Ռ. Ղազարյան)	407
Տարածքը.....	407
Կասկերը Ք. ա. XVI-XIII դարերում.....	408
Կասկերը Ք. ա. XII-VIII դարերում.....	415
Գլուխ 4. ՀՆԴԱՐԻԱՅԻՆԵՐ (Ե. Գրեկյան)	416
Գլուխ 5. ԱՐԱՄԵԱՅԻՆԵՐ (Ա. Քոսյան).....	419
Արամեացիները Ք. ա. II հազարամյակում.....	419
Արամեական պետականությունները (Ք. ա. X-VIII դդ.)	421
Արամեացիները Ք. ա. VIII-VII դդ.	422
Արամեացիները Աքեմենյան դարաշրջանում	422
Գլուխ 6. ՍԿՅՈՒԹՆԵՐ (Տ. Դալայան)	425
Ընդհանուր տեղեկություններ	425
Սկյութական ցեղերի նախահայրենիքի խնդիրը.....	426
Սկյութական «թագավորության» կազմավորումը և ընդարձակումը	428
Սկյութական ցեղերի ներթափանցումը Հայկական լեռնաշխարհի.....	430
Սկյութները Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում.....	433
Օգտագործված գրականություն	439

ԲԱԺԻՆ 5.

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՆ ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Գլուխ 1. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ.....	449
Հելլենիզմի հիմնական առանձնահատկությունները (Ռ. Մանասերյան)	449
Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները	451
և Աքեմենյան տերության կործանումը (Ռ. Մանասերյան)	451
Դիադոքոսների պատերազմները (Ռ. Մանասերյան)	453
Մակեդոնական արշավանքները և Հայաստանը (Ա. Մովսիսյան)	454
Գլուխ 2. ՍԵԼԵՎԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ (Ռ. Մանասերյան).....	457
Պետության կազմավորումը	457
Սելևկյան տերության քաղաքական կառուցվածքը	460
Սելևկյան տերությունը միջազգային հարաբերություններում	461

Սելևկյան տերության հզորացումը Անտիոքոս III Մեծի օրոք.....	464
Սելևկյան տերության ընդհարումը Հռոմի հետ (Ք. ա. 195–189 թթ.)	466
Սելևկյան տերության թուլացումն ու անկումը	470
Հելլենիստական Սիրիան և Կիլիկիան Տիգրան Մեծի իշխանության ներքո. հռոմեական տիրապետության հաստատումը Սիրիայում.....	473
Գլուխ 3. ԴՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ (Ռ. Մանասերյան).....	478
Պոնտոսի թագավորության կազմավորումը.....	478
Պոնտոսի թագավորության վերելքը. Միհրդատ VI Եվպատոս	480
Հռոմեա-պոնտական պատերազմները.....	485
Պոնտոսի թագավորության անկումը	490
Գլուխ 4. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ (Ռ. Մանասերյան)	493
Օգտագործված գրականություն	496

**ԲԱԺԻՆ 6.
ԱՅՍՐԿՈՎԿԱՍ**

Գլուխ 1. ՎՐԱՍՏԱՆ (Պ. Մուրադյան)	501
Տարածքը, բնակչությունը.....	501
Քաղաքական պատմություն.....	502
Վիթրի մշակույթը.....	511
Գլուխ 2. ԱՂՈՒԱՆՔ (Ա. Հակոբյան)	514
Կովկասյան Աղուանքի տարածքը Ք. ա. VI–II դդ.	514
Աղուանքը Ք. ա. I դ.: Թագավորության կազմավորումը և ամրապնդումը	517
Աղուանքը I–III դդ.	524
Օգտագործված գրականություն	530
ԱՆՎԱՆԱՅԱՆԿ	534
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	589

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ

Հայաստանը, փետրակալված լինելով մարդկային քաղաքակրթության բնօրրաններից մեկը հանդիսացող փարսաձաշրջանում, հազարամյակների ընթացքում հարաբերվել է Հին աշխարհի, Միջին դարերի ու Նոր և նորագույն ժամանակների Մերձավոր ու Միջին Արևելքի, Առաջավոր Ասիայի և Կովկասի գրեթե բոլոր էթնիկական ու պետական կազմավորումների հետ:

Այդ հարաբերությունների վերուվարումները սրիպում էին հայ պատմագրական մտքի ներկայացուցիչներին ուշի-ուշով հետևել փարսաձաշրջանում փետի ունեցող իրադարձություններին և արձագանքել նրանց իրենց մեկնաբանություններով և քննական վերլուծություններով: Այսպես, օրինակ, արդեն իսկ հայ պատմագրության առաջնեկները՝ Ագաթանգեղոսը, Եղիշեն, Խորենացին, Փարպեցին իրենց երկրի ներսում կատարվածից ոչ պակաս ներկայացնում ու քննարկում էին փարսաձաշրջանի բախորոշ անցքերն ու հայոց առնչությունը նրանց հետ:

Մեր օրերում հարևան երկրների ու ժողովուրդների պատմության ընթացքի ու վերջին զարգացումների առանձնահատկությունների համալիր ու անկողմնակալ հետազոտումը սրանում է բացառիկ գիտական ու քաղաքական նշանակություն: ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտը ձեռնարկելով սույն՝ իր նախադեպը չունեցող քառահարոր աշխարհային հրատարակումը հաշվի է առել առաջին հերթին այն մեծ հետաքրքրությունը, որը գոյություն ունի մեր երկրում հարևան ժողովուրդների պատմության ու մշակույթի նկատմամբ: Հեղինակային կոլեկտիվը ձգվել է բավարարել այդ հետաքրքրությունը, հնարավորություն ընձեռելով հայ հասարակայնությանը խորացնել և համակարգել գիտելիքները մեր հարևանների անցյալի ու ներկայի կարևոր էջերի վերաբերյալ:

Միաժամանակ, քառահարորյակը կարող է դառնալ լուրջ գիտական հենարան մեր երկրի որոշ հարևանների կողմից փարսաձաշրջանի պատմությունը վերանայելու և Հայոց դերը նսեմացնելու ուղղությամբ փարվող լայնածավալ քարոզարշավին արժանի հակահարված փալու համար:

Աշխարհությունը բաղկացած է հետևյալ հատորներից.

- Հարոր առաջին՝ Հին շրջան
- Հարոր երկրորդ՝ Միջին դարեր
- Հարոր երրորդ՝ Նոր շրջան
- Հարոր չորրորդ՝ Նորագույն շրջան

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն քառահատորյակի առաջին հատորն ամբողջությամբ նվիրված է Հայաստանին անմիջականորեն հարող առաջավորասիական պետությունների պատմությանը՝ դրանց կազմավորումից մինչև Ք. հ. III դ. (ավելի քան երեքհազարամյա մի դարաշրջան): Ներկայացվում են տասնյակ խոշոր պետականություններ իրենց կազմավորումից մինչև անկում, ներառյալ հոգևոր և նյութական մշակույթը, ինչպես նաև դրանց և Հայաստանի քաղաքական կազմավորումների փոխառնչությունները: Հատորում տեղ են գտել նաև Առաջավոր Ասիայի մի շարք փոքր պետական կազմավորումներ և էթնիկական խմբեր, որոնց պատմությունը որոշակիորեն խաչաձևվել է Հայկական լեռնաշխարհի հասարակություններին: Այս նախաձեռնության կարևորությունը դժվար է գերազնահատել, քանի որ առ այսօր հայերենով գոյություն չունի մեր անմիջական հարևանների ամբողջական պատմությունն ամփոփող նման աշխատություն՝ գրված հայ մասնագետների կողմից: Այն ունի գիտական ուղղվածություն՝ գիտական ընդարձակ ապարատով, որը թույլ կտա ընթերցողին ինչպես հարկն է կողմնորոշվել մատուցվող նյութի բովանդակության և մեկնաբանության հարցում: Ծավալի սահմանափակության պատճառով յուրաքանչյուր երկրի պատմությունը ներկայացվում է ամփոփ տեսքով, նվազագույնի է հասցված բանավիճային խնդիրների քննարկումը:

Առաջավոր Ասիան համաշխարհային քաղաքակրթության բնօրրանն է, որտեղ մեզանից շուրջ 12 000 տարի առաջ սկսեցին ձևավորվել դրա սաղմերը՝ արդյունքում հիմք դնելով առաջին պետականություններին, հոգևոր և նյութական անանց արժեքներին: Երեք աշխարհամասերի հանդիպավայրում գտնվող և բնական հարուստ ռեսուրսներ ունեցող այս ընդարձակ տարածաշրջանն արդեն Նոր քարի դարի ավարտին միմյանց հետ բազմապիսի թելերով կապված ինքնուրույն մշակութային համալիրների մի ամբողջություն էր: Վերջիններիս աստիճանական զարգացումը քանակական և որակական հատկանիշների վերընթաց աճի շնորհիվ արդեն Ք. ա. IV հազարամյակում հանգեցրեց առաջին պետականությունների ձևավորմանը, սկզբում՝ Միջագետքի հարավում և Եգիպտոսում, այնուհետև՝ նաև այլ շրջաններում: Ք. ա. III հազարամյակում, իսկ ավելի ակնհայտ՝ II հազարամյակում, Առաջավոր Ասիայում արդեն առկա էին մի շարք խոշոր պետականություններ (Եգիպտոսի Հին, Միջին և Նոր թագավորությունները, Աքքադը, Ասորեստանը և Բաբելոնիան Միջագետքում, Խեթական տերությունը և Միտաննին ու Էլամը), որոնցից յուրաքանչյուրն իր բուն տարածքում և ազդեցության գոտիներում ժամանակի քաղաքակրթական արժեքների կրողն էր, դրանց ինքնատիպ մեկնաբանման զարգացնողն ու տարածողը:

Առաջին համաշխարհային կրոնների (հուդայականություն, քրիստոնեություն և իսլամ) ձևավորման, հետագայում այս տարածաշրջանում նոր էթնիկական խմբերի գանգվածային ներհոսքի և այլ գործոնների ազդեցության հետևանքով առաջավոր

րասիական հնագույն քաղաքակրթությունների գոյությունը ժամանակի ընթացքում աստիճանաբար մոռացվեց: Դրանց մասին որոշ տեղեկություններ պահպանվել էին միայն անտիկ հեղինակների աշխատություններում (Հերոդոտոս, Ստրաբոն և այլն)՝ հիմնականում կիսաառասպելական բնույթի վերհուշերի տեսքով:

Միայն նոր ժամանակներում, շնորհիվ եվրոպացի ճանապարհորդների և Արևելքի երկրներում դիվանագիտական ու այլ առաքելություններով գտնվող անձանց (Պ. դելլա Վալլե, Հ. Լեյարդ, Պ. Բոտտա, Հ. Ռաուլինսոն և այլն), քաղաքակիրթ աշխարհը վերագտավ արդի քաղաքակրթության հիմնադիրների հետքերը: 1822 թ. Ժ.-Ֆ. Շամպոլյոնի կողմից «Ռոզեթյան քարի» վերծանման, քիչ անց՝ Բեհիսթունյան եռալեզու արձանագրության հայտնաբերման և դրան հաջորդած՝ սեպագրի ընթերցման արդյունքում հնարավոր դարձավ ձեռնամուխ լինել հին Առաջավոր Ասիայի պատմության գիտական ուսումնասիրմանը: Նպատակային և համակարգված հնագիտական ուսումնասիրությունները և դրանց շնորհիվ հայտնաբերված վիթխարի քանակությամբ գրավոր ու նյութական աղբյուրների ուսումնասիրությունը թույլ տվեցին վերականգնել մեր հեռավոր նախնիների պատմությունը: Այսօր Առաջավոր Ասիայի հին պատմության ուսումնասիրությունը վաղուց ի վեր դադարել է առանձին նվիրյալների մենաշնորհը լինել: Աշխարհի տարբեր երկրներում այս ասպարեզում սերնդեսերունդ աշխատում է մասնագետների մի մեծ բանակ: Հին Արևելքի պատմությունը իր համար կայուն ներկայություն է ապահովել դպրոցական և բուհական ծրագրերում, ժամանակակից մշակույթի ամենատարբեր ոլորտներում:

Հայկական լեռնաշխարհը՝ որպես Առաջավոր Ասիայի բաղկացուցիչ մաս, բնականաբար, ներգրավված է եղել այս տարածաշրջանում ընթացող քաղաքակրթական բոլոր գործընթացներում: Շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և հարուստ բնական ռեսուրսների՝ այն սերտ շփումների մեջ էր առաջին հերթին իր անմիջական հարևանների՝ Միջագետքի, Փոքր Ասիայի, Իրանական բարձրավանդակի և Այսրկովկասի հետ: Լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանները Ք. ա. III-I հազարամյակներում գտնվում էին ժամանակի առաջատար պետությունների (Աքքադ, Աշշուր, Խեթական տերություն, Միտաննի, Ասորեստան) քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքի ոլորտում: Իրավամբ, Հայաստանը բաղկացուցիչ մասն էր կազմում Առաջավոր Ասիայի քաղաքակրթությունների՝ իր ներդրումն ունենալով դրա կայացման և զարգացման գործում: Ելնելով այդ հանգամանքից՝ հատորում ներկայացվում է յուրաքանչյուր պետության և Հայաստանի միջև գոյություն ունեցած փոխհարաբերությունների բնույթը:

Տարբեր ժամանակներում հայ մասնագետներն իրենց ներդրումն են ունեցել և ունեն Առաջավոր Ասիայի պատմության ուսումնասիրության գործում (Ն. Ադունց, Հր. Աճառյան, Ն. Մարտիրոսյան, Գր. Ղափանցյան, Ն. Հարությունյան, Գ. Զահուկյան, Գ. Սարգսյան և այլք): Այսօր էլ Հայաստանի Հանրապետությունում արևելագիտության այս բնագավառն ունի շատ ներկայացուցիչներ, ինչը պայմանավոր-

ված է մեր ժողովրդի հնագույն պատմության, հայոց վաղ պետականության և հայ ժողովրդի կազմավորման խնդիրների հետազոտման անհրաժեշտությամբ:

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅԻՆ

Առաջավոր Ասիան (հաճախ օգտագործվում են «Մերձավոր և Միջին Արևելք» կամ «Միջին Արևելք» եզրերը) երկրագնդի այն եզակի տարածքներից է, որը, գտնվելով Ասիա աշխարհամասում, միացնում է երեք աշխարհամասեր՝ Եվրոպան, Ասիան և Աֆրիկան: Այն ընկած է Միջերկրական, Սև, Կասպից ծովերի և Հնդկական օվկիանոսի միջև: Ռելիեֆային և բնակլիմայական առումներով այն իր նմանը չունի երկրագնդի որևէ այլ շրջանում: Այստեղ ներկայացված են, բացի բնեռայինից, մյուս բոլոր կլիմայական և ռելիեֆային գոտիները: Ընդ որում՝ դրանք հաճախ այնքան մոտ են գտնվում միմյանց, որ որևէ սահմանափակ տարածքում կարելի է հանդիպել մի քանի կլիմայական գոտիների: Օրինակ՝ Իրանական բարձրավանդակի արևելքում գտնվող Զագրոսի լեռնաշղթային անմիջականորեն սահմանակցում է սկզբում նախալեռնային ջրառատ և բերրի հողեր ունեցող Հայկական Տավրոսի հարավային նախալեռնային շրջանը, որին մի քանի տասնյակ կիլոմետր հարավից փոխարինում է շոգ և անջրդի միջագետքյան անապատը՝ ձգվելով ընդհուպ մինչև Պարսից ծոց: Նմանապես Միջերկրական և Սև ծովերին հարող շրջանների մերձարևադարձային կլիմայական գոտին երեք կողմերից եզերում է ցամաքային կլիմայով և սահմանափակ ջրային ռեսուրսներով աչքի ընկնող ընդարձակ փոքր-ասիական սարահարթը:

Ռելիեֆային և կլիմայական մեծ բազմազանությունը իր խոր հետքն է թողել Առաջավոր Ասիայի հնագույն հասարակությունների վրա՝ պայմանավորելով բազմակենցաղ հանրությունների համակեցությունը միմյանց հարևանությամբ, միաժամանակ նպաստելով դրանց կանոնավոր և սերտ փոխշփումներին, որի շնորհիվ էլ միասնացման գործընթացներն այստեղ սկսվել են անհամեմատ ավելի վաղ և ընթացել վերընթաց զարգացման ուղիով:

Այն հարցին, թե ինչու հենց Առաջավոր Ասիայում ձևավորվեցին երկրագնդի առաջին պետականությունները, ստեղծվեցին հոգևոր և նյութական մշակույթի բարձրակարգ հուշարձաններ, դժվար է միանշանակ պատասխանել: Ավելի հեշտ է թվարկել այն օբյեկտիվորեն առկա գործոնները, որոնք կարող էին նպաստել դրան: Վերջիններիս շարքում պետք է նշել երկրագնդի վերջին սառցակալումից հետո Առաջավոր Ասիայում և հարակից շրջաններում ստեղծված խոնավ և մեղմ կլիմայի առկայությունը, օգտակար հանածոների մեծ տեսականին, վայրի ցորենի տարածման արեալ լինելը և շատ այլ հանգամանքներ: Իհարկե, այդպիսի նպաստավոր պայմաններ կային նաև երկրագնդի որոշ այլ տարածաշրջաններում, ինչպես Չինաստանում, Հնդկաստանում և այլուր, որտեղ ձևավորվեցին տեղական բնույթի (լոկալ) զարգացած մշակույթներ, սակայն Առաջավոր Ասիայի պարագայում, թերևս, իր վճռական խոսքն ասել է նրա հանգուցային դիրքը երեք աշխարհա-

մասերի միջև: Արևելք-արևմուտք, հյուսիս-հարավ երթուղով ընթացող էթնիկական տեղաշարժային ալիքների կրողները, իսկ հնագույն ժամանակներում նման երևույթները սովորական էին, անխուսափելիորեն անցնում էին այստեղով և որպես կանոն՝ հիմնականում այստեղ էլ ավարտվում: Թարմ, այլամշակույթ բնակչության պարբերական ներհոսքը Առաջավոր Ասիա վերջինիս համար մշտապես ապահովում էր բնակչության անհրաժեշտ քանակություն, միաժամանակ ստիպում տեղական բնակչությանը անցնելու տնտեսավարման նոր՝ ինտենսիվ եղանակների՝ եկվորների գալստյան հետևանքով կենսատարածքի նվազման պատճառով:

Հին Առաջավոր Ասիայի քաղաքակրթությունների ուսումնասիրության համար կարևոր են հնաերկրաբանության, հնակլիմայաբանության և հնաբուսաբանության ընձեռած տվյալները: Դրանք թույլ են տալիս պատկերացում կազմել մեզանից հազարավոր տարիներ առաջ ձևավորված քաղաքակրթական կենտրոններում տիրող էկոլոգիական իրավիճակի և փուլ առ փուլ դրա կրած փոփոխությունների մասին¹: Ք. ա. IV-I հազարամյակներում Առաջավոր Ասիան ամեննին այն չէր, ինչպես տեսնում ենք այսօր:

Ք. ա. 10 000-3000 թթ. միջև սկսում է գերակշռել խոնավ և տաք կլիման, որի հետևանքը անտառածածկույթի նշանակալից աճն էր, հատկապես Հայկական լեռնաշխարհում, Զագրոսի գոտում, նաև Սև, Միջերկրական և Կասպից ծովերի առափնյա շրջաններում: Այստեղ տարեկան տեղումները միջին հաշվով կազմում էին 500 միլիմետր: Մասնավորապես Վանա լիճը՝ Ք. ա. 5000-4000 թթ. շատ ավելի խորն էր և ավելի մեծ տարածք էր զբաղեցնում, նույն շրջանում Մեռյալ ծովի մակարդակը շուրջ 120 մ բարձր էր այսօրվա մակարդակից, Հյուսիսային Միջագետքը աչքի էր ընկնում ջրառատությամբ և համատարած առատ բուսականությամբ: Եփրատի վտակ հարուրը նախկին ճահճուտից վերածվել էր մշտական հեղեղումներով աչքի ընկնող խոշոր գետի: Այս պարագայում Միջագետքը, հատկապես դրա հյուսիսը սկսում են վերածվել երկրագործական կարևորագույն շրջանի, որի բնակչությունը կտրուկ աճում է ոչ միայն ներքին ռեսուրսների, այլև արտաքին աղբյուրների շնորհիվ:

Ք. ա. IV հազարամյակի վերջին քառորդից Առաջավոր Ասիայում խոնավ կլիման աստիճանաբար տեղի է տալիս. մի միտում, որ որոշակի տատանումներով շարունակվում է նաև հետագայում: Օրինակ՝ Ք. ա. 3250-2900 թթ. և Ք. ա. 2350-2000 թթ. նկատվում է խոնավ կլիմայի և տեղումների լուրջ անկում,

¹ Առաջավոր Ասիայում հողոցների ընթացքում վկայված կլիմայական փոփոխությունների մասին տես Schaeffer C.F.A., Commentaires sur les lettres et documents trouvés dans les bibliothèques privées d'Ugarit. - In: Ugaritica V, Paris, 1968, 761ff.; Degens T. and Kurtman F. (Eds.), The Geology of Lake Van, Ankara, 1978; Key P.A. and Johnson D.L., Estimation of Tigris-Euphrates Streamflow from Regional Paleoenvironmental Proxy-Date, Climatic Change 3, 1981, 251ff.; Bintliff J.L. and Zeist W. van (Eds.), Palaeoclimates, Palaeoenvironments, and Human Communities in the Eastern Mediterranean Region in Later Prehistory, Oxford, 1982; Weiss B., The Decline of Late Bronze Age Civilization as a Possible Response to Climatic Change, Climatic Change 4, 1982: 173ff.; Neumann J. and Parpola S., Climatic Change and the Eleventh-Century Eclipse of Assyria and Babylonia, JNES 46/3, 1987, 161ff.; Butzer K.W., Environmental Change in the Near East and Human Impact on the Land. - In: CANE I, 1995, 123ff. և այլն:

որի հետևանքը Վանա լճի, Եփրատի, Տիգրիսի և Առաջավոր Ասիայի այլ ջրային ռեսուրսների խիստ նվազումն էր, նաև անտառածածկույթի էական կրճատումը: Նման միտում է նկատվում նաև Ք. ա. 1250–950 թթ.:

Արոհիչյալ կլիմայական տատանումները չէին կարող ազդեցություն չունենալ առաջավորասիական քաղաքակրթությունների զարգացման ընթացքի վրա: Դա հատկապես առավել վաղ արտահայտվեց գետահովտային տարածաշրջաններում (Միջագետք և Եգիպտոս), որտեղ գետերի մակարդակի ամենամյա բարձրացումների բացակայությունը կտրուկ նվազեցնում էր երկրագործական արեալների ծավալները և նպաստում մշակովի հողերի աղակալմանը: Ինչ վերաբերում է լեռնային շրջաններին, ապա այստեղ նկատվում է նստակեցության նվազում և շարժունակության նկատելի աճ, որն արտահայտվում էր դեպի գետահովտային տարածքներ խոշոր կամ փոքրածավալ էթնիկական տեղաշարժերի տեսքով:

Մասնագետները նկատել են կլիմայական պայմանների փոփոխությունների և Առաջավոր Ասիայի քաղաքակրթական կենտրոնների միջև առկա փոխհարաբերությունների դինամիկան: Ուշագրավ է, որ կլիմայի չորացման վերոհիշյալ փուլերից յուրաքանչյուրում Առաջավոր Ասիայում վկայված են բազմապիսի բացասական երևույթներ, որոնք էականորեն ազդել են պետականությունների կենսունակության վրա՝ հաճախ հանգեցնելով դրանց վարընթաց զարգացմանը կամ կործանմանը: Հենց այդպիսի փուլերից մեկի ընթացքում անկում ապրեց Աքքադի պետությունը, որից հետո շուրջ մեկ դար Միջագետքն ընկավ լեռնաբնակ կուտիների տիրապետության տակ: Հաջորդ փուլում, որը սկսվել էր Ք. ա. XIII դ. վերջերից և շարունակվեց շուրջ երկու դար, տրոհվեց Խեթական տերությունը, քաղաքական–տնտեսական աննախադեպ անկում ապրեցին Ասորեստանը և Բաբելոնիան, նաև Եգիպտոսի XIX հարստության պետությունը:

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Հին Առաջավոր Ասիայի գիտական ուսումնասիրման հիմքերը դրվեցին XIX դ.՝ միջագետքյան սեպագրական և եգիպտական հիերոգլիֆային, իսկ արդեն հաջորդ դարում՝ այլ գրային համակարգերի վերծանման շնորհիվ: Պարզվեց, որ Առաջավոր Ասիան, մարդկության պատմության վաղ փուլերից սկսած, եղել է «գրային հասարակությունների» մի համաբույլ: Գիրն ամենուրեք ուղեկցում էր նույնիսկ մանր քաղաքական միավորներին, գրից օգտվում էին ոչ միայն արքունի և տաճարական դիվաններում, այլև մասնավոր անձինք՝ առևտրականներ, արհեստավորներ և այլք: Մեծ է եղել գրի նկատմամբ հոգածությունը: Միջագետքի պետությունների դպրոցներում գիրը աշակերտների ուսուցման գործընթացում առաջնային տեղ ուներ:

Առաջավոր Ասիայի տարբեր երկրներից հնագիտական ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են գրավոր հուշարձանների միլիոնավոր օրինակներ (կավե սալիկներ, կոթողային և այլ բնույթի արձանագրություններ): Դրանք

կա՛մ պահպանվում էին դիվաններում, կա՛մ կառույցների պատերին, հուշայունների և տարբեր իրերի վրա: Հնարավոր վնասվածքներից խուսափելու նպատակով կավի կամ մագաղաթի վրա գրված տեքստերը ժամանակ առ ժամանակ արտագրվում էին և համակարգված եղանակով պահպանվում (ըստ բովանդակության, ինչպես և մերօրյա գրադարաններում):

Առաջավորասիական քաղաքակրթությունների պատմության աղբյուրների անբաժանելի մասն են կազմում հնագիտական ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված նյութական մշակույթի հուշարձանները, որոնց շնորհիվ ոչ միայն ճշգրտվում են գրավոր աղբյուրների տեղեկությունները, այլև հիմնավոր պատկերացում է ստեղծվում ճարտարապետության, քանդակագործության, քաղաքաշինության և ընդհանրապես շինարարական արվեստի, հնագույն մարդկանց հոգևոր–գեղարվեստական մտածողության և հասարակության սոցիալ–քաղաքական կեցության վերաբերյալ:

ԱՌԱՋԱՎՈՐ ԱՍԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՓՈՒԼԵՐԸ

Առաջավոր Ասիայի պատմության հին շրջանը, որը ներկայացվում է սույն հատորում, համաշխարհային պատմության դարակազմիկ դարաշրջանն է, երբ մարդկային հասարակությունը, մուտք գործելով քաղաքակրթության փուլ, աստիճանաբար ստեղծեց վերջինիս կարևորագույն քաղաքիչները՝ պետություն, մարդու կենսագործունեության հիմնական ոլորտները, կրոն, նյութական և հոգևոր մշակույթ: Քաղաքակրթության կայացումն ու հետագա զարգացումը բարդ գործընթաց էին, որոնք մշտապես ուղեկցվում էին քաղաքական, տնտեսական և հոգևոր–մշակութային ցնցումներով, վերջիններս էլ հաճախ հանգեցնում էին քաղաքակրթական կենտրոնների կենսագործունեության տեմպերի դանդաղեցման կամ ուղղակի ընդհատման:

Առաջավորասիական տարածաշրջանի պետությունները ձևավորման եղանակների առումով երկու տիպի են, որը հետևանք է քաղաքակրթության զարգացման ընդհանուր միտումների և տեղական առանձնահատկությունների համադրման:

Առաջինը այսպես կոչված «գետահովտային» քաղաքակրթություններն են (Կենտրոնական և Հարավային Միջագետք և Եգիպտոս), որտեղ հարթավայրային տեղանքը և մարդու կենսագործունեության համար առաջին անհրաժեշտություն ներկայացնող ջրային ռեսուրսների սահմանափակ պաշարները նպաստեցին հասարակության վաղ համախմբմանը, որով էլ պայմանավորված է պետականության վաղ կազմավորումը: Այս շրջաններում ստեղծված պետականությունները, մյուս տարածաշրջանների համեմատ, շատ ավելի կենտրոնացված և կայուն բնույթ ունեին:

Երկրորդը «լեռնահովտային» քաղաքակրթություններն են (Փոքր Ասիա, Հայկական լեռնաշխարհ, Իրանական բարձրավանդակ): Բարձրադիր լեռնահովիտների հասարակությունները, ապահովված լինելով բնությունից տրված ջրային

ռեսուրսներով, օգտակար հանածոներով և շինանյութով, քավական երկար ժամանակ կարող էին գոյատևել առանց քաղաքական վերնաշենքի՝ պետականության: Այդ է պատճառը, որ վերոհիշյալ ընդարձակ շրջաններում պետականության անցման գործընթացը դանդաղ էր ընթանում, և դրանք նույնիսկ պետությունների կազմավորման շրջանում դեռևս երկար ժամանակ պահպանում էին մինչպետական փուլի՝ տոհմատիրական դարաշրջանի շատ բնորոշ գծեր: Այստեղի պետություններն աչքի էին ընկնում քաղաքական և տնտեսական անկայունությամբ:

Թե՛ առաջին, թե՛ երկրորդ եղանակի հիմքում ընկած է այսպես կոչված քաղաք-պետությունը (հին հունական դասակարգմամբ՝ պոլիս կամ նոմ): Վերջինս մեկ կամ ավելի ցեղերի կենսագործունեության համար անհրաժեշտ երկրագործական-անասնապահական տարածքն էր: Քաղաք-պետությունը կառուցվում էր բոլոր քաղաքացիների իրավունքների հավասարության սկզբունքի վրա (էգալիտարիզմ): Այդ պետությունների համակարգը հինարևելյան դարաշրջանի պատմության ընթացքում դրսևորեց արտակարգ կայունություն՝ տարբեր դրսևորումներով գոյատևելով նույնիսկ հելլենիստական փուլում քաղաքային ինքնավարության տեսքով:

Պետությունների ձևավորման, դրանց կազմակերպման եղանակների առումով Առաջավոր Ասիայի պատմությունը անցել է մի շարք փուլեր:

Առաջին փուլը Ք. ա. IV հազ. երկրորդ կեսն է, երբ Շումերում և Եգիպտոսում ձևավորվեցին սահմանափակ տարածք զբաղեցնող տասնյակ քաղաք-պետություններ (նոմեր), որոնց տնտեսավարման հիմքը արհեստական ոռոգման համակարգն էր: Քաղաք-պետությունների համակարգը Միջագետքում գոյատևեց ընդհուպ մինչև Ք. ա. III հազ. կեսերը, երբ ողջ տարածաշրջանը միավորվեց Աքքադի պետության մեջ: Եգիպտոսում միավորման գործընթացը սկսվեց ավելի վաղ՝ ավարտվելով արդեն Ք. ա. XXIX դարում:

Առաջավորասիական հասարակությունների պատմության հաջորդ փուլը խոշոր տարածքներ զբաղեցնող կենտրոնացված պետությունների ձևավորումն էր: Արդեն Ք. ա. III հազարամյակում Աքքադը, Եգիպտոսի Հին թագավորությունը ընդարձակ տերություններ էին՝ արքայի անսահմանափակ և աստվածացված իշխանությամբ: Սա լայնածավալ տարածքային նվաճումների, միջպետական կապերի և միջազգային առևտրի ընդլայնման դարաշրջանն էր: Այս փուլում է, որ քաղաքակրթությունը մեծ նվաճումների հասավ տնտեսության և մշակույթի բոլոր ոլորտներում (տնտեսավարման նոր եղանակներ, մետաղամշակություն, արհեստագործության նոր ճյուղեր, գրային համակարգերի կատարելագործում և այլն):

Ք. ա. II հազ. կեսերից սկսվում է Առաջավոր Ասիայի պատմության մի նոր դարաշրջան, որի գլխավոր բնորոշ առանձնահատկությունը պետությունների լայն ցանցի ձևավորումն էր: Միջերկրածովյան ավազանից մինչև Իրանական բարձրավանդակի արևմուտք, հարավմերձսևծովյան շրջանից մինչև Արաբական թերակղզի և Պարսից ծոց ընկած տարածքներում ձևավորվել էին զարգացման տարբեր մակարդակների վրա գտնվող պետականություններ: Խոշոր պետություն-

ների (Ասորեստան, Բաբելոնիա, Միտաննի, Խեթական տերություն, Եգիպտոս) հարևանությամբ գոյություն ունեին փոքր տարածք զբաղեցնող բազմաթիվ մանր քաղաք-պետություններ (օրինակ՝ փյունիկյան քաղաքները, ներկայիս Սիրիայի ծովափնյա շրջանում՝ Ուզարիտը, արևմտյան Փոքր Ասիայում՝ Աստուվայի, իսկ հետագայում՝ Արցաղայի միությունը և այլն): Ք. ա. XVI-XIII դդ. բնութագրվում են միջազգային հարաբերություններում առաջատար պետությունների միջև լարված հարաբերությունների առանձնակի սրությամբ, մի իրավիճակ, որը պարբերաբար հանգեցնում էր խոշոր պատերազմների (Եգիպտոսի և Միտաննիի, Եգիպտոսի և Խեթական տերության, Ասորեստանի և Խեթական տերության):

Ք. ա. XIII դ. վերջերից սկսված ճգնաժամի հետևանքով Առաջավոր Ասիայի հասարակությունները երկու-երեք դարերի ընթացքում կրեցին արմատական փոփոխություններ: Ժողովուրդների մեծ տեղաշարժերի, գոյություն ունեցող պետությունների անկման և նոր պետականությունների ձևավորման հետևանքով հիմնավորապես փոխվեց տարածաշրջանի էթնոքաղաքական նկարագիրը: Դրա հետևանքով Ք. ա. X-VII դդ. աստիճանաբար ձևավորվեց սկզբում միակենտրոն (Ասորեստանի Նոր թագավորություն), այնուհետև՝ Ք. ա. IX-VII դդ., երկկենտրոն (Ասորեստան և Վանի թագավորություն) աշխարհաքաղաքական իրադրություն: Այս երկրորդ փուլի բնորոշ առանձնահատկությունը Ասորեստանի և Վանի թագավորության (Ուրարտու) միջև սկսված տևական հակամարտությունն էր, որին այս կամ այն չափով մասնակցում էին սրանց հարևանությամբ գտնվող փոքր պետությունները:

Ք. ա. VII դ. երկրորդ կեսին Ասորեստանի և Վանի թագավորության անկումով և հաջորդ՝ VI դ. Աքեմենյան տերության կազմավորումով սկսվեց հին Առաջավոր Ասիայի պատմության մի դարաշրջան, որի գլխավոր առանձնահատկությունը ողջ տարածաշրջանի միավորումն էր մեկ գերտերության մեջ՝ դրանից բխող հետևանքներով: Տերության տարածքում սկսվում են ինտեգրացիոն խոր գործընթացներ, որոնք ընդգրկում էին քաղաքական կառույցներից մինչև տնտեսավարման եղանակները, կրոնական գաղափարախոսությունից (կրոնական սինկրետիզմ և միաստվածության սաղմեր) մինչև նյութական մշակույթ: Այս գործընթացը շարունակվեց և ավելի խորացավ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներից հետո ձևավորված հելլենիստական դարաշրջանում: Առաջավոր Ասիայի պատմության քթմենյան և հելլենիստական փուլերը իրավամբ կարելի է համարել համընդգրկուն համահարթեցման դարաշրջաններ:

Հին Առաջավոր Ասիայում ստեղծվեցին համաաշխարհային քաղաքակրթության այնպիսի արժեքներ, որոնց վրա է հենվում ժամանակակից աշխարհը: Դրանք են՝ պետականության տարբեր դրսևորումները, իրավական միտքը, բնական և հասարակական գիտությունների շատ ուղղություններ, նյութական և հոգևոր մշակույթ: Առաջավոր Ասիան այն տարածաշրջանն է, որի քաղաքակրթական արժեքները ուղղակի կամ միջնորդավորված եղանակով (հունահռոմեական աշխարհի միջոցով) փոխանցվեցին սկզբում Եվրոպա, այնուհետև երկրագնդի տարբեր շրջաններ:

Ժամանակագրությունը հին Առաջավոր Ասիայի պատմության դժվարագույն և միաժամանակ կարևորագույն խնդիրներից է: Հաշվարկման միասնական ելակետի բացակայության պայմաններում հրատապ անհրաժեշտություն է ծագում մեկ համակարգում ներառելու յուրաքանչյուր պետությունում ընդունված ժամանակագրությունը¹:

Միջագետքում առավել ընդունված էր պատմությունը հաշվարկել որևէ ակնառու իրադարձությունից (պատերազմ, կարևոր նշանակություն ունեցող շինարարություն): Շատ հաճախ հաշվարկումը տեղի էր ունենում արքաների կառավարումով: Վերջիններիս կառավարման յուրաքանչյուր տարի նշվում էր՝ ըստ էպոնիմների (արքադ.՝ *լիմնու*): Պահպանվել են Ք. ա. III–I հազ. միջագետքյան տարբեր պետությունների արքայացանկերը, որտեղ նշվում են յուրաքանչյուր արքայի կառավարման տարիները: Բացի այդ՝ խիստ օգտակար տեղեկատվություն են պարունակում քարեդրոյան և ասորեստանյան ժամանակագրությունները, որտեղ ներկայացվում է այս կամ այն արքայի կառավարման յուրաքանչյուր տարում տեղի ունեցած իրադարձությունների համառոտ բնութագիրը:

Միջագետքի պատմության ժամանակագրության առավել վստահելի չափանիշը այս կամ այն իրադարձության նույնացումն է աստղագիտական երևույթների հետ (արևի կամ լուսնի խավարում): Այս եղանակով հնարավոր է կոնկրետ թվագրել տվյալ ճշգրտված իրադարձությունից դեպի հետ և առաջ ընկած դեպքերը, եթե, իհարկե, հայտնի է դրանց և առաջինի միջև անցած ժամանակահատվածը: Վերոհիշյալ սկզբունքով թվագրված իրադարձությունների շնորհիվ հնարավոր է դառնում ժամանակագրական համապատասխանություններ գտնել Միջագետքի պետություններին հարևան երկրների պատմության որևէ իրադարձության համար (պատերազմ, պայմանագիր և այլն):

Թվագրման համար որոշակի հիմք են տալիս նաև հետազգա ժամանակների գրավոր աղբյուրները (անտիկ հեղինակներ, Աստվածաշունչ, նաև միջնադարյան աղբյուրներ), որտեղ պահպանվել են սահմանափակ քանակությամբ տեղեկություններ Առաջավոր Ասիայի տարբեր երկրների (հիմնականում Եգիպտոսի և Միջագետքի) պատմական անցքերի վերաբերյալ:

¹ Առաջավոր Ասիայի պատմության ժամանակագրության հիմնախնդիրների մասին տես Cornelius F. Berossos und die altorientalische Chronologie, Klio 35, 1943, 1ff.; Bickerman E.J., Chronology of the Ancient World, Ithaca, New York, 1968; High, Middle or Low? Acts of an International Colloquium on Absolute Chronology Held at the University of Gothenburg 20th-22nd 1989, Gothenburg, 1987; Kuniholm P. and Striker L., 1987, Dendrochronological Investigations in the Aegean and Neighboring Regions, Journal of Field Archaeology 14, 1987, 385ff.; James P.J. et al., Centuries of Darkness: a Challenge to the Conventional Chronology of Old World Archaeology, New Brunswick, 1991; Ehrich R.(ed.), Chronologies in Old World Archaeology, Chicago, 1992; Cryer F.H., Chronology: Issues and Problems. – In.: CANE I, 1995, 651ff. (ընդհանուր); Kitchen K.A., Suppiluliuma and the Amarna Pharaohs, Liverpool, 1962 (Եգիպտոս); Boese J., Zur absoluten Chronologie der Akkad-Zeit, WZKM 74, 1982, 33ff. (Միջագետք); Astour M.C., Hittite History and Absolute Chronology, Gothenburg-Partille, 1989 (Խեթական տերություն) և այլն:

Պատմության թվագրման հարցում գոյություն ունեն նաև հնագիտության մեջ կիրառվող մի շարք մեթոդներ, որոնցից մինչև վերջին շրջանը առավել ընդունելի էր համարվում ածխածնի ռադիոակտիվ C14 իզոտոպի կիսաքայքայման մեթոդը: Սակայն այս մեթոդով իրադարձությունները հնարավոր է թվագրել մինչև 50–60 տարվա ճշգրտությամբ, որն ի վիճակի չէ օգտակար լինելու այն դեպքերում, երբ անհրաժեշտ է կատարել ճշգրիտ հաշվարկներ: Բացի այդ՝ ամենուրեք չէ, որ հնավայրում առկա են օրգանական նյութերի մնացորդներ:

Հարկ է նշել, որ Առաջավոր Ասիայի մյուս երկրներում գոյություն չունեին իրադարձությունների թվարկման հստակ եղանակներ, այնպես, ինչպես դա կատարվում էր Ասորեստանում և Բաբելոնիայում: Լավագույն դեպքում նշվում էր միայն որևէ իրադարձության՝ նախորդ արքաներից մեկի կառավարման ընթացքում տեղի ունեցած լինելու փաստը: Այդ է պատճառը, որ Խեթական տերության, Միտաննիի, Էլամի և այլոց պատմության ժամանակագրությունը գերազանցապես վերականգնվում է միջագետքյան, որոշ չափով նաև եգիպտական պատմության լույսի ներքո:

Ներկայումս մասնագիտական գրականության մեջ աստղագիտական հիմքի վրա Առաջավոր Ասիայի պատմության ժամանակագրման երեք տարբեր համակարգեր են գործում՝ վերին, միջին և ստորին: Սրանց հիմքում ընկած է Հին բաբելոնյան թագավորության արքա Ամմիծաղուկայի (Համմուրապիի հետնորդներից մեկը) կառավարման ութերորդ տարում բաբելոնյան աստղագիտական (գուշակային) բնույթի մի տեքստ (այն մեզ է հասել Ք. ա. VII դ. ասորեստանյան պատճենի տեսքով), որտեղ հաշվարկված է Վեներա մոլորակի շրջապտույտը (մոլորակի մեկ լրիվ պտույտը կազմում է 64 տարի): Քանի որ դեռևս պարզ չէ, թե մոլորակի պտույտներից որ մեկի մասին է խոսքը, ապա բաբելոնյան արքայի կառավարման առաջին տարվա թվագրման խնդրում մասնագետներն առաջարկել են երեք տարբեր թվականներ՝ Ք. ա. 1710 թ. (վերին), Ք. ա. 1646 թ. (միջին) կամ Ք. ա. 1582 թ. (ստորին): XX դարի վաղ շրջանի աշխատություններում գրեթե համատարած կիրառվում էր վերին ժամանակագրությունը, սակայն վերջին տասնամյակներում դրանից հրաժարվել են՝ հօգուտ միջին կամ ստորին ժամանակագրության: Ներկա հատորում գերազանցապես օգտագործվում է ստորին ժամանակագրությունը, որը հենվում է նաև եգիպտական և խեթական որոշ սինխրոնիզմների վրա:

ԱՌԱՋԱՎՈՐԱՍԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Հայաստանը թե՛ աշխարհագրական, թե՛ քաղաքական և մշակութային առումներով Առաջավոր Ասիայի բաղկացուցիչ մասն է, ինչը լիուլի դրսևորվում է՝ սկսած հնագույն ժամանակներից: Հայաստանում սկզբնավորվել և ձևավորվել են վաղ երկրագործական կենտրոններ, որոնք ժամանակակից են Առաջավոր Ասիայի հայտնի երկրագործական կենտրոններին: Նրա տարբեր շրջանների պետական

կազմավորումները բազմապիսի թելերով (քաղաքական, տնտեսական, մշակութային) կապված էին հնագույն Միջագետքի, Փոքր Ասիայի և Իրանական բարձրավանդակի համաժամանակյա քաղաքակրթական կենտրոնների հետ: Ք. ա. IV–I հազարամյակների ընթացքում Առաջավոր Ասիայում պարբերաբար ընթացող խոշոր և տեղական նշանակության էթնիկական տեղաշարժերը էլ ավելի էին ամրապնդում այդ փոխառնչությունները: Այդ գործընթացին նպաստում էին նաև Լեռնաշխարհի արտակարգ հարուստ նյութական և մարդկային ռեսուրսները:

Հայաստանին հարևան հին Առաջավոր Ասիայի քաղաքակրթությունների ուսումնասիրությունը չափազանց կարևոր է առաջին հերթին հենց ի շահ հայագիտության: Մեր վաղնջական շրջանի պատմությունը անհնար է պատկերացնել անմիջական հարևանների պատմության համատեքստից դուրս: Հին միջագետքյան, փոքրասիական և իրանական աղբյուրների տեղեկությունները Հայկական լեռնաշխարհի երկրների վերաբերյալ այն աղբյուրագիտական հենքն են, որի վրա, ընդհուպ մինչև վաղ միջնադարյան հայ մատենագրության ի հայտ գալը, հենվում է մեր վաղ պատմության լուսաբանումը:

Հեղինակային խումբը նպատակահարմար է համարել որոշակիորեն սահմանափակել գիտական ապարատը (ծանոթագրություններ, հղվող մասնագիտական գրականությունը և այլն): Ընդ որում՝ հիմնականում ներկայացված է նորագույն մասնագիտական գրականություն: Աշխատությանը կցված են օգտագործված մասնագիտական գրականության ցանկ, ինչպես նաև հատուկ անունների համապարփակ անվանացանկեր:

Հայաստանի պատմություն, Երևան, 1972:
 Ավետիսյան Հ.Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII–IX դարերում, Երևան, 2002:
 Բայրուրյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) Երևան, 2005:
 Ղազարյան Ռ., Հայաստ. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009:
 Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94–64թթ., Երևան, 1987:
 Մովսիսյան Ա., Հայաստանը Ք.ա. III հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005:
 Պետրոսյան Ա. Ե., Հայոց ազգաձագման հարցեր, Երևան, 2006:
 Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
 Բոսյան Ա. Վ., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ձգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:
 Арутюнян Н. В., Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы, 1970. топонимика, Ереван (II дополненное и переработанное изд.: Санкт-Петербург 2006).
 Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985.
 Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
 Капанцян Гр., Хайаса–колыбель армян, Ереван, 1948.
 Хачикян М.Л., Хурритский и урартский языки, Ереван, 1985.
 Фридрих И., Дешифровка забытых письменностей и языков, Москва, 1984.
 Astour M. C., Hittite History and Absolute Chronology, Gothenburg–Partille, 1989.

to the Conventional Chronology of Old World Archaeology, New Brunswick, 1991.
 Key F. A. and Johnson D. L., Estimation of Tectonic-Dependent Streamflow from Regional Climate Data, J. Hydro-Data, Climate Change, 2, 251–261, 1981.
 Gutschalk E., They wrote on the wall (1984) (անթարգմանաբար).
 Bickerman E. J., Chronology of the Ancient World, Ithaca, New York, 1968 (II ed. 1980).
 Bintliff J. L. and Zeist W. van (Eds.), Palaeoclimates, Palaeoenvironments, and Human Communities in the Eastern Mediterranean Region in Later Prehistory, Oxford (BAR International Series 133), 1982.
 Boese J., Zur absoluten Chronologie der Akkad-Zeit, WZKM 74, 33–55, 1982.
 Brice W. C., The Environmental History of the Near and Middle East Since the Last Ice Age, London – New York, 1978.
 Bryson R. A., Lamb H. H., Donley D., Drought and the Decline of Mycenae, Antiquity 43, 46–50, 1974.
 Butzer K. W., Environmental Change in the Near East and Human Impact on the Land. – In.: CANE I, 123–151, 1995.
 Cambridge Ancient History, vol. I, Part II, The Early History of the Middle East (eds. I. E. S. Edwards, C. J. Gadd and N. G. L. Hammond)(3rd edition), Cambridge, 1971, 1980.
 Cambridge Ancient History, vol. II, Part I, History of the Middle East and the Aegean Region c. 1800–1380 B. C. (eds. I. E. S. Edwards, C. J. Gadd N. G. L. Hammond and E. Sollberger)(3rd edition), Cambridge, 1973, 1980.
 Cambridge Ancient History, vol. II, Part II, The Early History of the Middle East and the Aegean Region c. 1380–1000 B. C. (eds. I. E. S. Edwards, C. J. Gadd N. G. L. Hammond and E. Sollberger)(3rd edition), Cambridge, 1975, 1980.
 Cambridge Ancient History, vol. III, Part I, The Prehistory of the Balkans: the Middle East and The Aegean World, tenth to eight centuries B. C. (eds. J. Boardman, I. E. S. Edwards, N. G. L. Hammond and E. Sollberger)(2nd edition), Cambridge, 1982.
 Cambridge Ancient History, vol. III, Part II, The Assyrian and Babylonian Empires, the Eastern Mediterranean and the Black Sea, eight to sixth centuries B. C. (eds. J. Boardman, I. E. S.

Աղունց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972:
 Ավետիսյան Հ.Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII–IX դարերում, Երևան, 2002:
 Բայրուրյան Վ., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը) Երևան, 2005:
 Ղազարյան Ռ., Հայաստ. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009:
 Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևստանի դեմ մ.թ.ա. 94–64թթ., Երևան, 1987:
 Մովսիսյան Ա., Հայաստանը Ք.ա. III հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005:
 Պետրոսյան Ա. Ե., Հայոց ազգաձագման հարցեր, Երևան, 2006:
 Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
 Բոսյան Ա. Վ., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ձգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:
 Арутюнян Н. В., Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы, 1970. топонимика, Ереван (II дополненное и переработанное изд.: Санкт-Петербург 2006).
 Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985.
 Арутюнян Н.В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
 Капанцян Гр., Хайаса–колыбель армян, Ереван, 1948.
 Хачикян М.Л., Хурритский и урартский языки, Ереван, 1985.
 Фридрих И., Дешифровка забытых письменностей и языков, Москва, 1984.
 Astour M. C., Hittite History and Absolute Chronology, Gothenburg–Partille, 1989.

Edwards, N. G. L. Hammond and E. Sollberger) (2nd edition), Cambridge, 1991.

Carpenter R., Discontinuity in Greek Civilization, Cambridge, 1966.

Chiera E., They wrote on clay, Chicago 1938 (ռուսերեն թարգմ. 1984).

Cornelius F., Berossos und die altorientalische Chronologie, Klio 35, 1–16, 1943.

Cornelius F., Geistesgeschichte der Frühzeit (2 Bände in 3 Teilen), Leiden, 1960–1967.

Coulmas F., The writing systems of the world, Oxford – New York, 2003.

Cryer F. H., Chronology: Issues and Problems. – In.: CANE I, 651–664, 1995.

Degens T. and Kurtman F. (Eds.), The Geology of Lake Van, Ankara, 1978.

Doblehofer E., Voices in stone: the Decipherment of Ancient Scripts and Writings, New York, 1961.

Ehrich R. (ed.), Chronologies in Old World Archaeology, Chicago (III ed.), 1992.

Friedrich J., Geschichte der Schrift, Heidelberg, 1966.

Gelb I. J., Two Assyrian King Lists, JNES 13, 209–230, 1954.

Gelb I. J., A Study of Writing, Chicago 1963 (II ed. 1974).

Gilbert A. S., The Flora and Fauna of the Ancient Near East. – In.: CANE I, 153–174, 1995.

Götze A., The Predecessors of Suppiluliumas of Hatti and the Chronology of the Ancient Near East, JCS 22, 46–50, 1968.

High, Middle or Low? Acts of an International Colloquium on Absolute Chronology Held at the University of Gothenburg 20th–22nd 1989 (=SMA 80), Gothenburg, 1987.

Jacobsen Th., The Sumerian King List, Chicago, 1939.

James P. J. et al., Centuries of Darkness: a Challenge to the Conventional Chronology of Old World Archaeology, New Brunswick, 1991.

Key P. A. and Johnson D. L., Estimation of Tigris–Euphrates Streamflow from Regional Paleoenvironmental Proxy–Date, Climatic Change 3, 251–263, 1981.

Kitchen K. A., Suppiluliuma and the Amarna Pharaohs, Liverpool, 1962.

Kuniholm P. and Striker L., Dendrochronological Investigations in the Aegean and Neighboring Regions, Journal of Field Archaeology 14, 385–398, 1987.

Maspero G., The Dawn of Civilization, 2 vols., London (transl. from French), 1894.

Meyer E., Geschichte des Altertums, Stuttgart und Darmstadt, 1925.

Millard A. R., The Eponyms of the Assyrian Empire 910–612 B. C., Helsinki, 1994.

Nassouhi E., Grande liste des rois d'Assyrie, AfO IV, 1–11, 1927.

Neumann J. and Pärpola S., Climatic Change and the Eleventh–Tenth Century Eclipse of Assyria and Babylonia, JNES 46/3, 161–182, 1987.

Schaeffer C. F. A., Commentaires sur les lettres et documents trouvés dans les bibliothèques privées d'Ugarit. – In: Ugaritica V, Paris, 753–768, 1968.

The Crisis Years: the 12th Century B. C. From Beyond the Danube to the Tigris (eds. W. A. Ward and M. Sh. Joukowsky), Dubuque, 1992.

Ungnad A., Eponymen. – In.: RIA II, 412ff, 1938.

Waerden van der B. L., On Babylonian Astronomy. The Venus Tablet of Ammisaduqa, JEOL X, 414ff. §

Weiss B., The Decline of Late Bronze Age Civilization as a Possible Response to Climatic Change, Climatic Change 4, 173–192, 1982.

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Միջագետքը (իսկ՝ Մեծասորոսամեր) իրականում համարվում է համաշխարհային քաղաքակրթության ընտրաններից մեկը։ Խոսվածքովային դիրքը Առաջավոր Ասիայում մեծաշրջանների միջև, այստեղ սարքեր ձևավորվելու և քաղաքակրթության զարգացման և մշակութային միջոցառումների արագ հարկանների վրա Միջագետքին վերապահել են բացառիկ դեր մարդկային հասարակության հետագա զարգացման գործում։

ԲԱԺԻՆ

1

Ք. մ. IV հազ. երկրորդ կեսից ընդհուպ մինչև Արեւելյան տերության կազմալուծումը Միջագետքի տարածքում ձևավորվել և զարգացել են սասանյանների հասկող հարս և մյուս սասանյաններ հայտնական քաղաք-պետություններ, Ագաթանգեոսի Բարեկոնիս, Ասորեստան, Միտանների և այլն։ Բնական պաշարներով աչքի չընկնող, անապատային Առաջավոր Ասիայում կենտրոնական դիրք զբաղեցնող այս տարածաշրջանը շարժվել համաշխարհային քաղաքակրթության անվիճելի առաջատարներից մեկը։

ՀԻՆ ՄԻՋԱԳԵՏՔ

Չնայած Միջագետքի պատմությունների, այստեղ սարած ժողովուրդների և ստեղծված էությունների արդյունքին անհայտ անհայտ էին դեռևս անտիկ հեղինակները։ Սակայն ընտանա մինչև XIX դ. գիտական աշխարհի տեղեկատվության աղբյուրները շահունակաբար էին վրան վերցնումներին տեղեկատվությունը։

Միջագետքի հնագույն քաղաքակրթությունների պատմության գիտական առաջնությունները հիմնը դրանք XIX դ. կեսերից, երբ ֆրանսիացի և անգլիացի դիվանագետներ Դ. Բուստան, Հ. Լեյբարդը և Օ. Ռասսանը պեղումները ընթացքում հայտնաբերեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի (Մոսուլից հիմա զանազան Բոյունջիլի բլուրդ)։ Ասորեստանի հիմնած Գուր-Շարրուկին ամրոցը (Խորասանից զուրի մոտ) և Կալխու քաղաքի (Նինվեից ընդամենը 100 կմ) ամրոցը։ Շեազայում, որտեղ ընդհատվելու և վերականգնվելու շարունակվեցին այլ հնադարյան լճ. Բոյունջիլի, Զ. Սևիթ, Լ. Զինգ, Ռ. Չանիթեյ-Բոնիստ, և այլն։

Մ. Մալլոուն, Լ. Օպպենհայմ և այլք¹), որոնց շնորհիվ հայտնաբերեցին նոր հնավայրեր, ինչպես նաև սեպագիր աղյուսակների մեծաքանակ արխիվներ և կոթողային արձանագրություններ: Միջագետքի հնավայրերի ուսումնասիրություններն ընդհատվեցին 1990-ական թվականների սկզբներին՝ սկզբում իրաքա-քուվեյթյան պատերազմի, այնուհետև Իրաքի դեմ սկսված պատերազմի պատճառով:

Հայտնաբերված սեպագիր տեքստերի հրատարակությունը սկսվեց XIX դ. վերջին տասնամյակներից և շարունակվում է առ այսօր: Այդ ասպարեզում իրենց ավանդն ունեն տարբեր երկրներ ներկայացնող անցյալի և ներկայիս հարյուրավոր մասնագետներ, ինչպես Լ. Մեսերշմիդտը, Վ. Անդրեն, Է. Վայդները, Է. Էբելինգը, Բ. Մայսները, Օ. Շրյոդերը, Դ. Լուքենբիլը, Հ. Տադմորը, Ա. Գրեյսոնը, Ս. Պարպուլան, Ա. Ֆուխսը և այլք²: Ասորեստանյան տեքստերը հրատարակվել և հրատարակվում են ինչպես առանձին շարքերով³, այնպես էլ թեմատիկ սկզբունքով: Հիմնականում գրի առնված կավե սալիկների վրա՝ դրանք պահպանվել են արքայական, տաճարային, զավառական և մասնավոր արխիվներում: Զգալի քանակություն են կազմում նաև տարբեր շինությունների, բարձրաքանդակների և հուշայտյունների վրա գրված տեքս-

¹ Պեղումների արդյունքները հրատարակվել են մի շարք աշխատություններում՝ Layard H., The Monuments of Nineveh, London, 1849; Layard H., Nineveh and its Remains, London, 1850; Layard H., Discoveries in the Ruins of Nineveh and Babylon, London, 1853; Botta P.E. and E.Flandin, Monuments de Ninive (5 vol.), Paris, 1849-1850; Sarzec E. de et L.Heuzey, Découvertes en Chaldée, Paris, 1884-1912; Koldewey R., Das Ishtar-Tor, Leipzig, 1918; Andrae W., Der Anu-Adad-Tempel in Assur, Leipzig, 1909; Andrae W., Die wiederstandene Assur, Leipzig, 1938; Woolley C.L., Ur Excavations, vols.2-9, London-Philadelphia, 1934-1962; Lloyd S., The Archaeology of Mesopotamia, London, 1978 և այլն):

² Harper R.F., Assyrian and Babylonian Letters, Chicago, 1892-1914; Craig J.A., Assyrian and Babylonian Religious Texts, Leipzig, 1895; Johns C.H.W., Assyrian Deeds and Documents, Cambridge, 1898-1923; Budge E.A.W. and L.W.King, Annals of the Kings of Assyria, vol.I, London, 1902; Messerschmidt L., Keilschrifttexte aus Assur historischen Inhalts, I, Leipzig, 1911; Clay A.T., Documents from the Temple Archives of Nippur dated in the Reigns of Cassite Rulers, Philadelphia, 1912; Schröder O., Keilschrifttexte aus Assur verschiedenen Inhalts, Leipzig, 1920; Schröder O., Keilschrifttexte aus Assur historischen Inhalts, Leipzig, 1922; Ebeling E., Meissner B., Weidner E., Die Inschriften der altassyrische Könige, Leipzig, 1926; Ebeling E., Keilschrifttexte aus Assur juristischen Inhalts, Leipzig, 1927; Ebeling E., Bruchstücke einer mittelassyrischen Vorschriftensammlung für die Akklimatisierung und Trainierung von Wagenpferden, Berlin, 1951; Luckenbill D.D., Ancient Records of Assyria and Babylonia, vol I (From the Earliest Times to Sargon), Chicago, 1926; Luckenbill D.D., Ancient Records of Assyria and Babylonia, vol. II (From Sargon to the End), Chicago, 1927; Luckenbill D.D. 1930, Inscriptions from Adab, Chicago, 1930; Weidner E., Die Kämpfe Adad-nirari's I gegen Hanigalbat, AfO 5, 1928-1929, 89ff.; Weidner E., Die Annalen des Königs Aššur-belkala von Assyrien, AfO 6, 1930-1931, 75ff.; Weidner E., Die Inschriften Tukulti-Ninurtas I und seiner Nachfolger, Graz, 1959; Bauer Th., Das Inschriftenwerk Assurbanipals. I-II, Leipzig, 1933; Pfeiffer R., State Letters of Assyria, New Haven, 1935; Tadmor H., The Inscriptions of Tiglath-Pileser III King of Assyria, Critical Edition, with Introductions Translations and Commentary, Jerusalem, 1994; Fuchs A., Die Inschriften Sargons II. aus Khorsabad, Göttingen, 1994; Gurney O.R. and P. Hulin, The Sultantepe Tablets, vols.I-II, London, 1957-1964; Postgate J.N., Neo-Assyrian Royal Grants and Decrees, Rome, 1969 և այլն:

³ Օրինակ, AbB, CT; VS; SAA; նաև Չիկագոյի համալսարանի Արևելագիտության ինստիտուտի կողմից հրատարակվող շարքը (OIP).

տերը: Վերջիններիս բովանդակությունը խիստ բազմազան է՝ արքայական տարեգրություններ, շինարարական արձանագրություններ, ծիսապաշտամունքային, տնտեսական, իրավական տեքստեր, նամակներ, գրական ստեղծագործություններ և այլն:

Սեպագիր աղբյուրների հրատարակությունն ուղեկցվում էր շումերերեն և արքադերեն լեզուների քերականության և բառարանների ստեղծումով: Այսօր երկուսն էլ ուսումնասիրված են բավարար չափով, և մասնագետները հնարավորություն ունեն լիարժեքորեն օգտագործելու դրանք:

Միջագետքի պատմության ուսումնասիրության կարևորագույն սկզբնաղբյուրներ են նաև հարևան պետությունների գրավոր աղբյուրների տեղեկությունները, որոնք էականորեն լրացնում են տեղական աղբյուրներին: Դրանք պարունակվում են եգիպտական, խեթական, Սիրիայի մանր քաղաքական կազմավորումների, ինչպես նաև Ասորեստանի գոյության վերջին երկու տասնամյակներում՝ Վանի թագավորության աղբյուրներում: Որոշ քանակությամբ (հիմնականում ոչ այնքան հավաստի) նյութեր են առկա նաև անտիկ հեղինակների երկերում (օրինակ՝ Հերոդոտոս, Կտեսիաս, Հովսեպոս Ֆլավիոս, Պոմպեոս Տրոգոս, Լուկիանոս Սամոսացի և այլն):

Միջագետքի պատմության և մշակույթի ուսումնասիրության համար մեծ նշանակություն ունեն նյութական մշակույթի հուշարձանները՝ մեծաքանակ շինություններ (պալատներ, տաճարներ, հասարակական և մասնավոր նշանակության կառույցներ), բարձրաքանդակներ, հուշայտյուններ, կենցաղային իրեր, զենքեր և այլն:

Ասորեստանի պատմության ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ մասնագետներ Եվրոպայում, ԱՄՆ-ում, ասիական երկրներում: Առկա են զգալի քանակությամբ ընդհանրացնող և էլ ավելի մեծաքանակ մասնավոր աշխատություններ⁴: Հայ սեպագրագետները իրենց ուսումնասիրություններում անդրադարձել են ինչպես Միջագետքի պետությունների պատմությանը, այնպես էլ վերջիններիս և Հայկական լեռնաշխարհի հասարակությունների ու պետությունների միջև տարաբնույթ փոխհարաբերությունների լուսարանման խնդիրներին: Այստեղ զգալի ավանդ ունեն Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Ն. Հարությունյանը, Գ. Զահուկյանը, Գ. Սարգսյանը, Ն. Մկրտչյանը,

⁴ Olmstead A.T., History of Assyria, Chicago and London, 1923; Smith S., Early History of Assyria, London, 1928; Дьяконов И.М., Общественный и государственный строй древнего Двуречья. Шумер, Москва, 1959; Gadd C.J., Assyria and Babylon c.1370-1300. - In: CAH II/2, 1975, 21ff.; Wiseman D.J., Assyria and Babylonia c.1200-1000 B.C. - In: CAH II/2, 1975, 443ff.; Munn-Rankin J.M., Assyrian Military Power 1300-1200 B.C. - In: CAH II/2, 1967, 274ff.; Oppenheim A.L., Ancient Mesopotamia, Chicago-London, 1968; Paley S.M., King of the World: Assur-nasir-pal II of Assyria, 883-859 B.C., Brooklyn, 1976; Saggs H.W.F., The Might that was Assyria, London, 1984; Harrak A., Assyria and Hanigalbat, Hildesheim - Zürich - New York, 1987 և այլն, հատկապես CANE-ում տեղ գտած մեծաքանակ հոդվածները հնագույն Միջագետքի պատմության ամենատարբեր խնդիրների վերաբերյալ:

Դ. Սարգսյանը, Հ. Ավետիսյանը, Մ. Խաչիկյանը, Ա. Մարտիրոսյանը, Ա. Մովսիսյանը, Ե. Գրեկյանը և այլք¹:

Միջագետքի ավելի քան երկու և կեսհազարամյա պատմությունն ընդունված է տարանջատել հետևյալ փուլերի՝ Շումերական շրջան (հնագույն ժամանակներից մինչև Ք. ա. XXIV դ.), Շումերա-աքքադական շրջան (Ք. ա. XXIV դ. – XXI դ. վերջ), Հին ասորեստանյան (կամ Աշշուրի) շրջան (Ք. ա. XX–XV դդ.), Միջին ասորեստանյան շրջան (Ք. ա. XIV–XI դդ.), Նոր ասորեստանյան շրջան (Ք. ա. X դ. – 612 թ.), Հին բաբելոնյան շրջան (Ք. ա. XX–XVI դդ.), Միջին բաբելոնյան (կամ Կասսիտական) շրջան (Ք. ա. XVI–XII դդ.) և Ուշ բաբելոնյան (կամ քաղղեական) շրջան (Ք. ա. X դ. – 539 թ.): Ասորեստանի և Բաբելոնիայի պատմությունը համապատասխանաբար տրվում է՝ համաձայն այդ պարբերացման:

¹ Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972; Манандян Я., О некоторых спорных проблемах истории древней Армении, Ереван, 1956; Հարությունյան Ն.Վ., Բիայնիլի–Ուրարտուն ծաղկման դարաշրջանում, ՊԲՀ 4, 1967, 39–56; Հարությունյան Ն.Վ., Բիայնիլի–Ուրարտուն վերելքի դարաշրջանում, ՊԲՀ 4, 1968, 39–50; Арутюнян Н.В., Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Ереван, 1970; Арутюнян Н.В., Топонимика Урарту, Ереван, 1985; Саркисян Г.Х., Самоуправляющийся город селевкидской Вавилонии, ВДИ 1, 1952, 68 слл.; Саркисян Г.Х. 1953, О городской земле в селевкидской Вавилонии, ВДИ 1, 1953, 59 слл.; Саркисян Г.Х. 1955, Частные клинописные контракты селевкидского времени из собрания Государственного Эрмитажа, ВДИ 4, 1955, 136 слл.; Sarkisjan G.Kh., New Cuneiform texts from Uruk of the Seleucid Period in the Staatliche Museen zu Berlin. – In.: Staatliche Museen zu Berlin (Forschungen und Berichte, Bd.16, Archäologische Beiträge), Berlin, 1975, 15ff.; Саркисян Г. Х., Греческая ономастика в Уруке и проблема Graeco-Babyloniaca, ДВ 2, 1976, 191 слл. և այլն; Мкртчян Н.А. 1979, «Отклонения» от закономерностей армянского языка в свете данных аккадского языка, ИФЖ 4, 1979, 219 слл.; Мкртчян Н.А., Семитские языки и армянский, Ереван, 2005 և այլն; Саркисян 1989; Мартиросян А. 1978, Хозяйство делового дома Эгиби с Вавилонии в 555–522 гг. до н.э., 1978, ДВ 3, 179 слл.; Мартиросян А., Ткачи храма Эанна в Уруке Нововавилонского периода, ДВ 5, 1988, 27 слл.; Мартиросян А., Деловой дом Эгиби, Ереван, 1989; Մովսիսյան Ա., Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Երևան, 1992; Մովսիսյան Ա., Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը. Հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Երևան, 1997; Մովսիսյան Ա., Հայաստանը Ք. ա. III հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005 և այլն Գրեկյան Ե. Հ., Մանայի թագավորության վարչա-քաղաքական միավորների և դրանց տեղադրության շուրջ, ՄՄԱԵԺ XIX, 2000, 153–172; Գրեկյան Ե. Հ., Ուրարտու և Մանա (մերձուրմյան ավազանում ուրարտական տիրապետության հաստատման խնդրի շուրջ), Արևելք, Երևան, 2001, 5–19; Գրեկյան Ե. Հ., Ուարուշի ձակատամարտը, ՄՄԱԵԺ XXI, 2002, 180–199; Գրեկյան Ե. Հ., Ուրարտական աստվածապետության առանձնահատկությունների շուրջ Ուրարտուի «արքաները» (նախնական դիտարկումներ), ՄՄԱԵԺ XXIII, 2004, 315–338; Գրեկյան Ե. Հ., Ասորեստանյան սեպագիր աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին», Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, 2007, 90–138; Grekyan 2005; Grekyan E., The Will of Menua and the Gods of Urartu, AJNES 1, 2006, 150–195 և այլն:

ՄԱՍ 1

ՄԻՋԱԳԵՏՔԸ Ք. Ա. III ՀԱՋԱՐԱՄՅԱԿՈՒՄ

1. ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԲՆԱԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհից հարավ՝ Եփրատ և Տիգրիս գետերի ավազաններով մինչև Պարսից ծոցն ընկած տարածքը, կազմում է Միջագետքը: «Միջագետք» (հուն.՝ «Մեսոպոտամիա») տերմինը շրջանառության մեջ են դրել հին հույն աշխարհագրագետները: Այն այսօր հիմնականում ընդգրկված է Իրաքի Հանրապետության սահմաններում:

Միջագետքի համար կենսական նշանակություն ունեն Եփրատ և Տիգրիս գետերը: Եփրատը շումերական աղբյուրներում հայտնի է Բուրանուն (Buratum), աքքադականում՝ Պուրատտու (Purattu), իսկ սուրբարեականում՝ Ուրատտու, Ուրուտտու (Urattu, Uruttu) անուններով: Այն սկիզբ է առնում Հայկական լեռնաշխարհից՝ գոյանալով երկու վտակներից՝ Արևելյան Եփրատից կամ Արածանիից և Արևմտյան Եփրատից: Միջագետքով հոսելիս այն ընդունում է մի շարք վտակներ, որոնցից ամենախոշորներն են Բալիխը և Խաբուրը: Տիգրիսը ևս գոյանում է երկու քաղուկներից (Արևելյան և Արևմտյան): Նրա խոշոր վտակներից են Մեծ Զար, Փոքր Զար և Դիալա գետերը:

Տիգրիսը և Եփրատը միախառնվելով ներկայումս կազմում են Շատ–Էլ–Արաբ գետը, որը թափվում է Պարսից ծոց: Հին շրջանում, սակայն, նշյալ գետերն առանձին էին թափվում Պարսից ծոց, որի հյուսիսային ծովեզրը տարածվում էր ներկայիս սահմանագծից զգալիորեն հյուսիս: Մերձափնյա տարածքներում հնում ձահձուտ էր գոյացել, որը Միջագետքի բնակիչները կոչում էին «Դառը գետ»:

Առանց Եփրատի և Տիգրիսի Միջագետքը կվերածվեր անապատի, ուստի պատահական չէ, որ վաղնջական ժամանակներից առաջնահերթ անհրաժեշտություն է եղել արհեստական ջրանցքներով ոռոգման համակարգի ստեղծումը:

Կլիման Միջագետքի հյուսիսում մերձարևադարձային է, իսկ հարավում այն զգալիորեն տարբեր է՝ արևադարձային և անապատային: Տարածված են մերձարևադարձային և արևադարձային անապատներ, ծայրամասերում՝ կիսաանապատներ, գետերի երկարությամբ՝ տեղ–տեղ սրահային անտառներ:

Միջագետքը հարուստ է կավով և բնական ասֆալտով, ինչով էլ պայմանավորված են բնակչության կենսագործունեության մի շարք առանձնահատկություններ (այդ թվում՝ դպրության ասպարեզում կավը որպես գրանյութ օգտագործելը):

Շնորհիվ Առաջավոր Ասիայում զբաղեցրած կենտրոնական դիրքի՝ Միջագետքը վաղնջական ժամանակներից կարևոր դերակատարում է ունեցել ողջ տարածաշրջանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում:

Հյուսիսային Միջագետքն ունի նպաստավոր աշխարհագրական դիրք, որտեղով անցնում էին ժամանակի արևելք-արևմուտք տարանցիկ առևտրական ուղիները: Մի հանգամանք, որով զգալիորեն պայմանավորված էր այս տարածաշրջանի բնակչության կենսագործունեությունը՝ արհեստագործությունը և առևտուրը:

2. ՄԻՋԱԳԵՏՔԻ ԲՆԱԿԿԱՆ ԼԵՈՆԱՇԽԱՐԻԻ ԿԱՐԱՎԿԱՆ շրջաններում վերջին տասնամյակներին իրականացված հնագիտական աշխատանքները մեծ անակնկալներ մատուցեցին: Ք. ա. XI–IX հազ. թվագրվող հնավայրերում բացահայտվեցին քարե պատերով տաճարական և այլ կառույցներ, որոնցում առկա էին մի քանի մետր բարձրություն ունեցող քարակոթողներ՝ զանազան պատկերաքանդակներով, արձաններ և այլն (Հալան Չեմի և Չայոնյու հնավայրերը հետագա Մեծ Հայքի Աղձնիք նահանգի տարածքում, Նեվալի չորի և Գյոբեքլի թեփն հնավայրերը Եդեսիայի մերձակայքում, Ջաֆեր հյոյուքը Մալաթիայի մոտ): Իսկ Ք. ա. X հազ. թվագրվող Շանիդար հնավայրից (հետագա Մեծ Հայքի Կորդվաց աշխարհի տարածքում) երկրագնդի վրա առաջին անգամ վկայված են վաղ երկրագործության և անասնապահության հետքեր: Այսինքն՝ նշված ժամանակաշրջանում Միջագետքի և դրան հյուսիսից հարող Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների բնակչությունն արդեն անցել էր արտադրողական տնտեսության: Այդ հնավայրերի ուսումնասիրությունը էապես փոխեց և լրացրեց մարդկային հասարակության վաղ շրջանի պատմության մասին գիտության մեջ արմատացած պատկերացումները:

Միջագետքի բնակեցումը հետագա հազարամյակներում դարձավ ավելի ինտենսիվ: Երկու մեծ գետերի հովիտներով հյուսիսի լեռնային շրջանների բնակիչները սկսեցին աստիճանաբար յուրացնել ձախիճներից նոր ազատ-

ված բերրի տարածքները: Ք. ա. VII–VI հազ. Միջագետքի հյուսիսում հաստատված առաջին երկրագործները Խասսունյան և Խալաֆյան մշակույթի կրողներն էին: Վաղ երկրագործական այդ մշակույթների տարածման արեալն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհի հարավն ու Միջագետքի հյուսիսային կեսը:

Միջագետքի հյուսիսից դեպի հարավ ընթացող բնակչության տեղաշարժերի հետևանքով Ք. ա. VI–V հազ. Հարավային Միջագետքն արդեն բնակեցվել էր: Այդ ժամանակաշրջանի մշակույթն, ըստ առավել տիպական Էլ-Ուբեյդ հնավայրի անվան, գրականության մեջ ընդունված է կոչել «Ուբեյդյան» կամ «Նախաշումերական»: Ք. ա. IV հազ. սկզբին Հարավային Միջագետքում արդեն հայտնի են դառնում շումերական առաջին բնակավայրերը:

Ք. ա. III հազ. առաջին կեսին հարավից և արևմուտքից Միջագետք են ներթափանցում սեմական ցեղերը: Նրանց լեզուն աքքադերենն էր, որը բաժանվում է երկու բարբառի՝ ասուրերենի (հյուսիսային) և բաբելերենի (հարավային): Աստիճանաբար հաստատվելով Միջագետքի հյուսիսային և կենտրոնական շրջաններում՝ նրանք հասնում են գերիշխող դիրքերի, իսկ Ք. ա. III հազ. վերջերին յուրացնում են նաև Հարավային Միջագետքը՝ ժամանակի ընթացքում իրենց մեջ ձուլելով շումերներին, միաժամանակ նրանցից փոխառնելով քաղաքակրթական բոլոր հիմնական արժեքները (սեպագիր, դիցարան և այլն): Ք. ա. II հազ. առաջին կեսին շումերներն արդեն խոսակցական լեզու չէր և Առաջավոր Ասիայում խաղում էր գրեթե այն դերը, ինչ լատիներենը՝ միջնադարյան Եվրոպայում. Միջագետքում գերիշխող դարձավ աքքադերենը (ասուրա-բաբելերենը):

Ք. ա. III հազ. վերջերին Միջագետք են ներթափանցում արևմտասեմական ցեղերը, որոնց աքքադացիները կոչում էին «ամորեացիներ» (*ամորրու*՝ «արևմուտք» բառից, Աստվածաշնչի հայերեն ոսկեդարյան թարգմանության մեջ՝ «ամովրացի»): Ք. ա. II հազ. առաջին դարերում նրանք հիմնեցին մի շարք պետական կազմավորումներ:

Հնագույն ժամանակներից Միջագետքի հյուսիսում բնակվել են նաև խուրրիական ցեղեր (Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ՝ «քոռեցիներ»): Մեզ հայտնի առաջին խուրրիական պետականությունը հիշատակվում է Ք. ա. XXIII դ. Հյուսիսային Միջագետքի Ուրկեշ քաղաքի (ժաման. Թեյ Մոզան) շուրջ: Խուրրիների ծագման մասին ևս գիտության մեջ միասնական եզրակացություն չկա. առավել ընդունված երկու կարծիքների համաձայն՝ նրանք Միջագետքի հյուսիս են տեղափոխվել Հայկական լեռնաշխարհից կամ Իրանական սարահարթի հյուսիսից (*տե՛ս Բաժին 4. Գլուխ 1*):

Միջագետքի հյուսիսում վկայված է նաև հնդեվրոպական բնակչություն, որոնց թվին են դասում Հայկական լեռնաշխարհի հարավից Միջագետք ներխուժած կուտիներին (Ք. ա. XXIII–XXII դդ.), ինչպես նաև կասսիտներին (Ք. ա. II հազ. առաջին կես):

Միջագետքի հյուսիսարևելյան շրջաններում բնակվել են լուվուրեացիները, որոնց քուն տարածքը Ուրմիո լճից հարավ գտնվող լեռնային շրջաններն են:

3. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ք. ա. III հազ. Միջագետքի պատմության գրավոր աղբյուրները բաժանվում են մի քանի հիմնական խմբի¹.

1. համաժամանակյա արձանագրություններ,
2. հնագույն բնագրերի ու շրջանի պատճեններ,
3. նախորդ դարաշրջանների տեքստերի հիմամբ ստեղծված պատմական երկեր,
4. պատմագեղարվեստական (հատկապես վիպական) բնույթի ստեղծագործություններ, որոնք գրի են առնվել իրադարձություններից դարեր հետո և պարունակում են կարևոր պատմական տեղեկություններ:

Շումերների մեծագույն ներդրումներից մեկը համաշխարհային քաղաքակրթության մեջ սեպագրի ստեղծումն է, որով գրված արձանագրությունները ներկայացնում են Ք. ա. III հազ. սկզբից մինչև Ք. ա. II հազ. սկզբն ընկած ժամանակահատվածի պատմական իրադարձությունները: Ժամանակագրական հերթականությամբ միջագետքյան աղբյուրների հաջորդ խումբը աքքադերեն տեքստերն են, որոնք տեղեկություններ են հաղորդում՝ սկսած Ք. ա. XXIV դ.: Ք. ա. III հազ. և II հազ. սկզբի մի շարք տեքստեր զուգահեռաբար գրված են շումերերեն և աքքադերեն:

Առաջին և երկրորդ խմբերի տեքստերը ներկայացված են Ք. ա. XXV–XXIV դդ. շումերական արքաների, աքքադական և կուտիական տիրակալների, Լագաշի կառավարիչ Գուդեայի, Ուրուկի արքա Ուտուխեգալի, Ուրի III հարստության արքաների ու նրանց ձեռնված արձանագրություններով, ինչպես նաև դրանց՝ հետագա (հատկապես՝ հինբաբելոնյան) դարաշրջաններում կատարված պատճեններով:

Երրորդ խմբի սկզբնաղբյուրներից հատկապես կարևոր է Ուրի III հարստության օրոք (Ք. ա. 2112–2004/3 թթ.) կազմված «Շումերական արքայացանկը», որն ընդգրկում է շումերական կառավարիչների և արքաների անունները, գահակալման ժամկետները, նշանավոր գործերն ու այլ տեղեկություններ: Հետագայում նախնական

բնագիրը լրացվել ու շարունակվել է մի քանի խմբագրումներով: Նույն խմբին են պատկանում ուշ շրջանում կազմված ժամանակագրությունները:

Պատմագեղարվեստական բնույթի ստեղծագործությունների մեջ առանձնակի ուշադրության են արժանի շումերական հերոսավեպը, «Պատերազմի արքան» և «Աքքադի նգովումը» վիպասերը, «Ուրի անկման ողբը», «Շումերի և Ուրի անկման ողբը» և այլն:

Որպես սկզբնաղբյուր՝ կարևոր է նաև «Գիլգամեշ» դյուցազնավեպը, որի համար գաղափարաաշուժետային հիմք են հանդիսացել Ուրուկի արքա Գիլգամեշի մասին շումերական պատումները (հատկապես՝ «Գիլգամեշը և Անմահության երկիրը»): Աքքադական դյուցազնավեպը մեզ է հասել մի քանի տարբերակներով, որոնցից ամբողջականը՝ Նինվեից: Դյուցազնավեպը երկու անգամ հրատարակվել է հայերեն թարգմանությամբ:

Դիցաբանական տարրեր պարունակող ստեղծագործությունները բաժանվում են երկու հիմնական խմբի՝ երկեր, որոնցում հերոսները քացառապես աստվածներ են, և բնագրեր, որոնցում աստվածներն ու մարդիկ հանդես են գալիս համատեղ: Ջուտ դիցաբանական բնույթի երկերից հատկապես նշանավոր են շումերական «Էնկի և Նինմախ», «Էնկի և Նինխուրսագ», «Նինուրտա աստծո սխրանքներն ու գործերը», «Ինաննան ու Էրիխը», աքքադա–բաբելոնյան «Ատրախասիս», «Էնումա էլիշ...» («Երբ վերնում...») վիպասերը: Դրանցում պահպանված տեղեկությունները բազմաթիվ զուգահեռներ ունեն հին առաջավորասիական այլ բնագրերում, հատկապես Աստվածաշնչի Ծննդոց գրքում, Ուգարիտից հայտնաբերված բնագրերում, Բաբելոնի գերագույն աստված Բելի տաճարի քրմապետ Բերոսոսի «Բաբելոնիկա» եռահատոր աշխատությունից մեզ հասած հատվածներում և այլուր:

Կարևոր նշանակություն ունեն տնտեսական բնույթի վավերագրերը, որոնք պատկերացում են տալիս համապատասխան ժամանակաշրջանների սոցիալ-տնտեսական կյանքի և հարակից հարցերի վերաբերյալ:

Միջագետքյան սկզբնաղբյուրների շարքում ուշագրավ են երկու աշխարհագրական բնագրեր, որոնք պարունակում են Ք. ա. III հազ. մասին տեղեկություններ, սակայն մեզ են հասել Ք. ա. II–I հազ. գրառումներով և կրում են նաև այդ ժամանակաշրջանների իրականության կնիքը: Դրանցից առաջինն «Աշխարհի բաբելոնյան քարտեզն» է, որում Հայկական լեռնաշխարհը նշված է Ուրարտու («Ուրաշտու») անունով, ինչն արտացոլում է Ք. ա. I հազ. առաջին կեսի իրավիճակը: Երկրորդը Սարգոն Աքքադացու տերության աշխարհագրությանը վերաբերող նոր աստուրական բնագիրն է, որում արտահայտված են նաև Ք. ա. II հազ. իրողությունները:

Վարչական նշանակություն ունեցող գրակիր առարկաներ են արձանագրված կնիքները, որոնց հայտնաբերումը լրացնում է այլ սկզբնաղբյուրներից մեր իմացությունը: Օրինակ՝ Թել Բրաք հնավայրից հայտնաբերվել են Նարամսինի անունը կրող արձանագրությամբ յոթ կնիքներ, որոնք փաստում են այդ հնավայրի և շրջակա տարածքի նվաճման մասին նույն արքայի մեկ այլ արձանագրության հավաստիությունը:

¹ Միջագետքի պատմության Ք.ա. III հազ. աղբյուրների հրատարակությունները տես Barton G.A., The Royal Inscriptions of Sumer and Akkad, New Haven, 1929; Sollberger E., Kupper J.-R., Inscriptions royales sumeriennes et akkadiennes, Paris, 1971; Frayne D. R., The Royal Inscriptions of Mesopotamia, Early Periods / Vol. 2, Sargonic and Gutian Periods (2334-2113 BC), Toronto-Buffalo-London, 1993; Bottéro J., L'Épopée de Gilgamesh (traduite de l'akkadien et présentée), Gallimard, 2000; George A., The Epic of Gilgamesh. The Babylonian Epic Poem and Other Texts in Akkadian and Sumerian, London, 2003 և այլն (շումերական դարաշրջան); Weidner E. F., Der Zug Sargons von Akkad nach Kleinasien, Leipzig, 1922, 62ff.; Weidner E., Das Reich Sargons von Akkad, AfO 16, 1952-1953, 1ff.; Hirsch H., Die Inschriften der Könige von Agade, AfO 20, 1963, 1-82 և այլն (Աքքադի պետություն):

ՇՈՒՄԵՐ

Հնագույն Միջագետքի՝ գրավոր աղբյուրներով ավանդված քաղաքական պատմությունը սկսվում է Ք. ա. IV հազ. վերջերից – III հազ. սկզբներից: Ըստ պետականության զարգացման փուլերի՝ այն ընդունված է բաժանել երեք ժամանակաշրջանների. ա) նախադինաստիական (Ք. ա. IV հազ. մինչև XXVIII դ.), բ) վաղդինաստիական (Ք. ա. XXVIII–XXIV դդ.) և գ) կենտրոնացված պետականության (սկսվում է Ք. ա. XXIV դ.) դարաշրջաններ: Ընդ որում՝ նախադինաստիական և հաջորդող երկու դարաշրջանների բաժանումը կարելի է համեմատել «Շումերական արքայացանկում» և հինմիջագետքյան գրավոր ավանդույթում հայտնի «մինչջրհեղեղյան» և «հետջրհեղեղյան» ժամանակների հետ:

1. ՆԱՆԱԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Ք. ա. IV հազ. վերջերին – III հազ. սկզբին Միջագետքում կազմավորվել էին բազմաթիվ քաղաք-պետություններ, որոնք քաղաքականապես միավորված չէին: Այդ դարաշրջանն ընդունված է կոչել «նախադինաստիական»¹: Մի քանի տասնյակ քաղաք-պետություններից Շումերի պատմության մեջ մեծ դեր են խաղացել Էրիդուն, Ուրուկը, Ուրը, Լարսան, Լագաշը, Ումման, Շուրուպակը, Իսինը, Քիշը, Միսպարը և այլն: Շումերի գլխավոր պաշտամունքային կենտրոնը՝ Նիպպուրը, գտնվում էր երկրի հյուսիսում:

Միջագետքի նախադինաստիական ժամանակաշրջանի կարևորագույն ձեռքբերումը, որն ունեցավ համաշխարհային նշանակություն, պատկերագրի ստեղծումն էր Ք. ա. XXXIII–XXXII դդ.: Այն բաղկացած էր շուրջ երկու հազար պատկերանշանից, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում էր մեկ ամբողջական գաղափար, ուներ գրության վերից վար ուղղություն: Շումերական պատկերագիր տեքստերի արխիվներ են հայտնաբերվել Ուրուկից, Լարսայից, Ջեմդեթ–Նասր և Թել Ամար հնավայ-

¹ Այս փուլի մասին ամփոփ տես Frankfort H., The last Predynastic Period in Babylonia. – In: CAH III, vol.I/2, 1971, 71ff.; նաև Delougaz P., Pottery from the Diyala Region, Chicago, 1952; Delougaz P. and S. Lloyd, Pre-Sargonid Temples in the Diyala Region, Chicago, 1942; Heinrich E., Bauwerke in der altsumerischen Bildkunst, Wiesbaden, 1957; Mallowan M.E.L., Early Mesopotamia and Iran, London, 1965; (սյուրական մշակույթի մասին); Дьяконов И.М., Общественный и государственный строй древнего Двуречья. Шумер, Москва, 1959: Հետագա շրջանի պատմության և մշակույթի մասին տես Kramer S.N., History Begins at Sumer, New York, 1959; Kramer S.N., The Sumerians, Chicago, 1963; Oppenheim A.L., Letters from Mesopotamia, Chicago, 1967:

րերից: Դրանց շնորհիվ հնարավոր է զգալի պատկերացում կազմել դարաշրջանի իրողությունների վերակազմության մասին:

Ուրուկյան դարաշրջանի քաղաքներում ակնհայտ է արտադրողական ուժերի վերելքը և, որպես վերջինիս արդյունք, գույքային անհավասարության և սոցիալական շերտավորման առկայությունը: Տնտեսության ասպարեզում կարևոր նշանակություն ունեին անասնապահությունը և արհեստագործությունը, ինչպես նաև արտաքին առևտուրը: Ուրուկյան իրերը զգալի քանակ են կազմում նույնիսկ Լևանտյան տարածաշրջանում: Նշանագրերում «առևտրական» և «սալլ» (քառանիվ) նշանների առկայությունը վկայում է հեռու տարածություններ ընդգրկող առևտրական գործունեության մասին: Կարևոր դերակատարում ունեին տաճարները. հատկապես մեծ էր Նիպպուր սրբազան քաղաքի դերը, որը շումերների գերագույն աստված Էնլիլի պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր:

Նախադինաստիական շրջանի շումերական քաղաքների առաջնորդները սովորաբար կրում էին en («քուրմ», որը հետագայում ստացավ նաև «տեր, տիրակալ» իմաստը) տիտղոսը: Ավելի ուշ տարածում է գտնում նաև ensi (բառացի՝ «եղջյուրի տեր») տիտղոսը: Առաջինն ավելի շատ կրում էին հոգևոր առաջնորդները, երկրորդը՝ քաղաքների ռազմական առաջնորդները: Հետագա՝ վաղդինաստիական շրջանում կիրառվող lugal («մեծ մարդ») տիտղոսը դեռևս անհայտ էր: Նախադինաստիական շրջանին բնորոշ են առաջնության և տարածքների համար հաճախակի պատերազմները միմյանց դեմ:

Ընդհանրացնելով վաղդինաստիական փուլի Միջագետքի պատմությունը՝ կարելի է այն բնութագրել որպես նախապատմությունից պատմություն անցման դարաշրջան:

2. ՎԱՂԴԻՆԱՍՏԻԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆ

Վաղդինաստիական դարաշրջանի Միջագետքի պատմությունն ընդունված է բաժանել երեք փուլերի: Առաջին փուլը (Ք. ա. XXVIII–XXVII դդ.) նշանավորվեց Քիշի վերելքով: Այդ դարաշրջանի սկիզբը համապատասխանում է «Շումերական արքայացանկում» հիշվող հետջրհեղեղյան ժամանակների սկզբին, երբ համաշխարհային ջրհեղեղից հետո արքայական իշխանությունը կրկին իջեցվեց երկնքից, և առաջինը գերիշխեց Քիշը: Հենց Քիշի հարստության առաջին արքա Էտանան է համարվում Շումերում թագավորության հիմնադիրը:

Քիշից հետո գերիշխանությունը անցավ Ուրուկին (Աստվածաշնչում՝ Արեք. այն երբեմն իր գլխավոր տաճարի անունով կոչվում է նաև Էաննա): Ուրուկի I հարստությունն ունեցավ տասներկու արքա: Հարստության երեք արքաները՝ Էնմերբարը, Լուգալբանդան և Գիլգամեշը, դառնում են շումերական հերոսավեպի գլխավոր հերոսներ: Եթե առաջին երկուսը հիմնականում առնչվում են Հայկական լեռնաշխարհի

հարավում գտնվող Արատտա երկրի հետ, ապա Գիլգամեշը տապալեց Քիշի գերիշխանությունը, և Ուրուկի իշխանությունը հաստատվեց գրեթե ողջ հարավային Միջագետքում: Գիլգամեշի կառավարման շրջանից մինչև Ուրի առաջին հարստության իշխանության հաստատման շրջանը հայտնի է որպես II Վաղդինաստիական շրջան (Ք. ա. XXVII–XXVI դդ.):

Վաղդինաստիական երրորդ շրջանում (Ք. ա. XXVI–XXIV դդ.) Շումերում գերիշխանության է հասնում Ուրի I հարստությունը, որի հզորության մասին պատկերացում ենք կազմում Ուրի արքայական դամբարանների պեղումներից: Առաջնորդների հուղարկավորություններն ուղեկցվել են տասնյակ մարդկային և կենդանական զոհաբերություններով, դամբարաններից հայտնաբերվել են ոսկուց և թանկարժեք քարերից պատրաստված զարդեր, կառքերի մնացորդներ և այլ իրեր:

Ուրի I հարստությունից գերիշխանությունն անցավ Լագաշին, որի կառավարիչն էր Ուր-Նանշեն: Լագաշը առավելագույն հզորության հասավ վերջինիս թոռ Էաննատումի օրոք (մոտ Ք. ա. 2400 թ.), որին հաջողվեց ոչ միայն հաղթանակներ տանել շումերական Ումմա, Քիշ, Ուրուկ և Լարսա քաղաքների նկատմամբ և միավորել գրեթե ողջ Շումերը, այլև հաջող արշավանք կատարել Էլամի դեմ:

Էաննատումի հաջորդներից Լուգալանդայի օրոք տեղի ունեցավ համաշխարհային պատմության մեջ հանուն արդարության և քաղաքացիական ազատությունների բարձրացված առաջին ապստամբությունը: Նրա դեմ ըմբոստացավ Լագաշի ազատ բնակչությունը («քաղաքի որդիները»), որին առաջնորդում էր քաղաքի «պատվավոր մարդկանցից» Ուրուինիմզինան: Վերջինս, դառնալով Լագաշի առաջնորդ, իր կառավարման շրջանում (Ք. ա. 2318–2312 թթ.) իրականացրեց բազմաթիվ բարեփոխումներ, այդ թվում՝ կրճատեց հարկերը և տուրքերը, տաճարներին վերադարձրեց տնտեսական ազատությունը, տասնապատկեց Լագաշի լիիրավ քաղաքացիների թիվը (3600–ից հասցնելով 36000–ի):

Ուրուինիմզինան հռչակվեց լուգալ «արքա», ինչն անհանգստություն առաջացրեց հարևան պետություններում, հատկապես Լագաշի հակառակորդ Ումմայում: Ումմայի արքա Լուգալզագեսին, դաշնակցելով Ուրուկի հետ, արշավեց Լագաշ, գրավեց և ավերեց այն: Վերջինս ստիպված ձանաչեց Ումմայի գերիշխանությունը: Լուգալզագեսին պարտության մատնեց նաև Քիշին և, ըստ «Շումերական արքայացանկի», իշխեց քսանհինգ տարի: Նրա իշխանության տակ մի կարճ ժամանակով միավորվեց ողջ Շումերը: Լուգալզագեսի իշխանության ավարտով էլ եզրափակվում է Վաղդինաստիական երրորդ ժամանակաշրջանը, որին հաջորդում է Աքքադի թագավորությունը:

ԱՔՔԱԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՐԻ III ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՔՔԱԴԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԵԼՔԸ. ՍԱՐԳՈՆ I

Լուգալզագեսիի քսանհինգամյա իշխանությունն ընդհատվեց նոր հակառակորդի դեմ պայքարում, որն այս անգամ ոչ թե շումերական քաղաք-պետություններից մեկն էր, այլ սեմական ծագում ունեցող մի իշխանություն, որն իր կենտրոնի անունով գիտության մեջ ընդունված է կոչել «աքքադական»:

Ք. ա. III հազ. կեսերին սիրիական տափաստանային գոտուց Միջագետք էին ներթափանցել սեմական ցեղեր, որոնց ներկայացուցիչները աստիճանաբար ինտեգրվում էին շումերական պետությունների տնտեսական, վարչական և ռազմական կյանքում: Ժամանակի ընթացքում նրանք ձեռք բերեցին որոշ ազդեցություն և նույնիսկ սկսեցին հավակնել իշխանության առանձին քաղաքներում:

Նման ձանապարհով Քիշի արքա Ուր-Ջարաբայի իշխանությունը զավթեց նրա սեմացեղ այգեպան-մատովակը, որը չունեի ազնվական ծագում: Դավադրությամբ գահ բարձրանալով՝ իր ցածր ծագումը քողարկելու միտումով նա վերցրեց Շարում-կեն (Սարգոն) անունը, որ նշանակում է՝ «հիրավի (ճշմարիտ) արքա»: Հետապնդվելով Լուգալզագեսիի կողմից՝ նա հաստատվեց Շումերից հյուսիս ընկած մինչ այդ աննշան Աքքադ (կամ Ազադե) քաղաքում: Այդ քաղաքի անունով Միջագետքի կենտրոնական շրջանը հետագայում սկսեց կոչվել Աքքադ:

Սարգոնը վերափոխեց գորքը՝ ստեղծելով պատմությանը հայտնի առաջին մշտական մասնագիտացված (պրոֆեսիոնալ) բանակը՝ բաղկացած 5400 զինվորներից, այնուհետև պատերազմ սկսեց շումերական քաղաքների դեմ: Նրան ուղեկցեցին հաջողությունները, քանի որ շումերական քաղաքների աշխարհագրոների դեմ Սարգոնը կռվում էր պրոֆեսիոնալ բանակով: Նիպպուրից գտնված արձանագրությունների համաձայն՝ Սարգոնը հաղթանակներ է տարել Լուգալզագեսիի և շումերական 50 առաջնորդների նկատմամբ:

Շուրջ տասը տարի պատերազմելով՝ Սարգոն Աքքադացին (Ք. ա. 2334–2279 կամ 2316–2261 թթ.) տվեց 34 ձակատամարտ և նվաճեց Շումերն ու կենտրոնական Միջագետքը: Այսօր վերականգնվող մոտավոր ժամանակագրության համաձայն՝ Սարգոնը շումերական քաղաքներին տիրելուց հետո արշավանք է կատարել դեպի արևելք՝ Էլամ, նվաճել այն, որից հետո ձեռնարկել է արշավանքներ դեպի հյուսիս՝ նախ Եփրատի, ապա Տիգրիսի հովիտներով:

Սարգոն Աքքադացու արձանագրություններից մեկում հաղորդվում է, որ նա նվաճել է Եփրատից արևմուտք գտնվող երկրները՝ «Մարին, Յարմուտին և Էրլան՝ մինչև Մայրիների և Արծաթի լեռները»: Ուշ շրջանի բնագրերի համաձայն՝ դա տեղի է ունեցել Սարգոնի կառավարման տասնամեկերորդ տարում: Հավանաբար սրա շարունակությունն էր նրա արշավանքը «Արևամուտի ծովով» (իմա՝ Միջերկրական ծովով) մինչև Փոքր Ասիայի Պուրուսխանդա քաղաք, որի տիրակալ Նուր-Դագանը ճնշումներ էր գործադրել առևտրականների նկատմամբ:

Չափազանց հետաքրքիր է, որ աշխարհի քաբելոնյան քարտեզին կից պահպանված վիպական բնագրում նշվում է, թե միայն երեք մարդու է հաջողվել «թռչնի թևով» անցնել ծովի մյուս կողմը: Դրանք են Ուտնապիշտիմը (աքքադական Նոյը), Սարգոն Աքքադացին և Նուր-Դագանը:

Սարգոնի եաջորդ հյուսիսային արշավանքն ընթացավ Տիգրիսի հովտով. այս անգամ նա հասավ Ներքին Ջար գետի հովտում գտնվող Սիմուրում երկիր:

Սարգոնի տիրապետության վերջին տարիներին նվաճված երկրներում ծագեցին ապստամբություններ: Ապստամբները պաշարեցին Աքքադի մայրաքաղաքը, և Սարգոնը դժվարությամբ կարողացավ փրկել իր գահը: Ուշագրավ է, որ դրանից հետո նա արշավանք սկսեց Սուբարտու (Սուբուր) երկրի դեմ, ինչից կարելի է ենթադրել, որ դա եղել է վրիժառու արշավանք ընդդեմ Աքքադի դեմ արշաված երկրի:

Սարգոնի տերության աշխարհագրության մասին տեղեկություններ է հաղորդում Նոր ասորեստանյան մի բնագիր, որում արտահայտություն են գտել նաև Ք. ա. II հազ. իրողությունները:

Ըստ «Շումերական արքայացանկի»՝ Սարգոն Աքքադացին կառավարել է հիսունհինգ (որոշ տարբերակներում՝ հիսունչորս կամ հիսունվեց) տարի և ստեղծել նախադեպը չունեցող մի տերություն՝ պատմությանը հայտնի առաջին բռնապետությունը: Նրա իշխանության ողջ ժամանակաշրջանն անցավ բռնարարներով, ապստամբություններով, որոնք ճնշվում էին չտեսնված դաժանությամբ: Թերևս դա է հիմնական պատճառներից մեկը, որ ուշ շրջանի աղբյուրներում նրա վախճանը համարվում է սրբապղծության արդյունք:

2. ԱՔՔԱԴԷ ՍԱՐԳՈՆԻ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ.

ՆԱՐԱՄ-ՍԻՆ (ՆԱՐԱՄ-ՍՈՒԵՆ)

Ապստամբությունների ու դրանց ճնշման մթնոլորտում անցան նաև Սարգոնին հաջորդած նրա երկու որդիների՝ Ռիմուշի և Մանիշտուսուի գահակալության տարիները (երկուսով միասին կառավարել են Ք. ա. 2278–2255 կամ 2260–2237 թթ.): Իրավիճակը պատկերացնելու համար բավական է նշել, որ Ռիմուշը միայն մեկ ապստամբություն ճնշելիս ավերեց շումերական հինգ քա-

ղաք, որոնցից երկուսում սպանվեցին մոտ 9 հազար, կախաղան հանվեցին 3600 և գերվեցին շուրջ 20 հազար շումերներ: Ապստամբությունները ստիպեցին Ռիմուշին սահմանափակել իր արտաքին արշավանքները. հայտնի է, որ նա ընդամենը երկու արշավանք է ձեռնարկել դեպի Էլամ: Ռիմուշին հաջողվեց պահպանել պետության ամբողջականությունը, սակայն ինքը զոհ դարձավ պալատական դավադրության՝ սպանվելով մերձավորների կողմից: Գահն անցավ Մանիշտուսուին, որի կառավարման տարիները նույնպես անցան ապստամբությունների մթնոլորտում, և նա ևս կարողացավ հեռավոր արշավանքներ ձեռնարկել միայն դեպի Էլամ: Նրան էլ էր վիճակված զոհ գնալ պալատական դավադրությանը:

Դրությունը փոխվեց Աքքադի չորրորդ տիրակալ՝ Մանիշտուսուի որդի Նարամսինի օրոք (Ք. ա. 2254–2218 կամ 2236–2200 թթ.), որին հաջողվեց վերականգնել Սարգոնի տերության՝ նախորդների օրոք անկում ապրած հզորությունը, հռչակել իրեն ոչ միայն «Շումերի և Աքքադի արքա», «աշխարհի չորս կողմերի արքա», «տիեզերքի արքա», այլև «աստված»: Նարամսինի առաջին գործերից եղավ Շումերում ծագած նոր ապստամբությունների ճնշումը, որի համար հարկ եղավ կազմակերպելու մի շարք արշավանքներ:

Նա քայլեր ձեռնարկեց տեղերում արքայական իշխանությունն ուժեղացնելու նպատակով. հեռացրեց մի շարք քաղաքների կառավարիչների և նրանց փոխարինեց իր մերձավորներով: Մեծ ուշադրություն էր դարձվում քրմությանը, որն արտահայտվում էր նույնպիսի կաղերային փոփոխություններով: Արքան տաճարներին մեծ կալվածքներ ու հարստություն տրամադրեց և նոր տաճարներ կառուցեց: Դրա դիմաց նոր քրմությունը Նարամսինին հռչակեց «աստված»:

Տերության ներսում որոշակի կայունություն հաստատելուց հետո արքան ձեռնարկեց բազմաթիվ արշավանքներ գրեթե բոլոր ուղղություններով: Իր նախորդների նման նա արշավանքներ է կատարել արևելյան ուղղությամբ դեպի Էլամ: Եփրատի և Տիգրիսի հոսանքներն ի վեր նա ձեռնարկեց բազմաթիվ արշավանքներ դեպի հյուսիս՝ հասնելով Հայկական լեռնաշխարհի մատույցներին (տե՛ս ստորև՝ «Աքքադի թագավորությունը և Հայկական լեռնաշխարհը» բաժնում):

Նարամսինի տեքստերը տեղեկացնում են ծովային արշավանքների մասին, որոնց ընթացքում նա Պարսից ծոցով պետք է հասած լիներ մինչև Արաբական թերակղզու արևելյան և Հնդկաստանի հյուսիսարևմտյան շրջաններ (Դիլմուն, Մագան և Մելուխիա երկրներ):

Նարամսինի կառավարման վերջին շրջանն անցավ ներքին և արտաքին թշնամիների դեմ ծանր պայքարում: Իբրև հյուսիսային արշավանքների բնական հետևանք՝ նրա դեմ, ըստ երևույթին, կազմավորվում է դաշինք, որի գլուխ կանգնած էր կուտիական երկիրը: Կուտիական վտանգն այնքան զգալի էր, որ Աքքադի տիրակալը հերթական անգամ դեպի Էլամ կատարած արշավանքի ժամանակ ոչ թե ավերածություններ գործեց, այլ Էլամի արքայի հետ կնքեց հաշ-

տության ու փոխօգնության պայմանագիր՝ ստեղծելով հակակուտիական միություն: Էլամի արքա Կուտիկ-Ինշուշինակի մի արձանագրության մեջ կուտիական երկիրը՝ Կուտու ձևով, հիշատակվում է նրա թշնամի երկրների ցանկում, որոնց դեմ ինքը պատերազմել է:

Սակայն դա ևս չէր փրկելու Նարամսինին կործանումից: Իր իշխանության հենց սկզբից նա մեծ հարված էր հասցրել միջագետքյան բնիկ իշխանատոհմերին և քրմությանը՝ առաջիններին զրկելով տոհմական տիրույթներից, իսկ քրմական կարևորագույն պաշտոններում նշանակելով իր մերձավորներին: Վերջին միջոցառման արդյունքում հնարավոր դարձավ նախադեպը չունեցող սրբապղծությունը. Նարամսինն իրեն հռչակեց «աստված»՝ հաստատելով իր անձի պաշտամունքը:

Դա առաջ բերեց նոր ընդվզում, որը ճնշելու նպատակով արքան զրոհեց շումերների սրբազան Նիպպուր քաղաքի վրա: Ըստ «Աքքադի նգովումը» պատմավիպական տեքստի՝ սրբապղծությունից զայրացած մեծ աստվածները նգովեցին Աքքադը, իսկ գերագույն աստված Էնլիլը (որի պաշտամունքի կենտրոնը Նիպպուրն էր) լեռներից Աքքադի դեմ ուղարկեց կուտիական մեծաթիվ զորքերը: Այս տողերում պետք է տեսնել շումերական քրմության խնդրանքով կուտիական զորքերի օգնության գալու պատմության վիպականացումն ու դիցաբանական գունավորումը: Միջագետքի կենտրոն արշավեցին կուտիական դաշինքի զորքերը, որոնց դեմ պատերազմում ինքնակոչ «աստվածը» սպանվեց:

Կուտիական երկրի (աղբյուրներում՝ Կուտիում, Գուտիում) մասին հնագույն հիշատակությունները մեզ են հասել Ք. ա. XXIV դ.: Աղաբի Լուգալանիմունդու արքայի արձանագրության մեջ արևելքից արևմուտք՝ շրջանաձև հերթականությամբ, թվարկվում են Մայրիների լեռները, Էլամը, Մարխաշին, Գուտիումը, Սուբիրը, Մարտուն, Սուտիումը և Էաննայի երկիրը (այսինքն՝ Ուրուկի շրջանը): Նարամսինի մասին պատմող «Քութայի արքայի առասպելը» անունը ստացած բնագրի համաձայն՝ նրա դեմ գործող բանակը Ումման-Մանդայից մտնում է Սուբարտուի կենտրոն, միավորում «Ծովերը» (իմա՝ Վանա և Ուրմիո լճերը), ապա Գուտիումը: Գուտիումը Սուբիր-Սուբարտուի հարևանությամբ է հիշատակվում նաև Բաբելոնի Համմուրապի արքայի (Ք. ա. XVIII դ.) արձանագրություններում: Այս տեղեկություններից հետևում է, որ Գուտիումը գտնվել է Սուբիր-Սուբարտուի, Վանա և Ուրմիո լճերի ավազանների հարևանությամբ:

Կուտիների առաջնորդ Էնրիդա-պիզիրը Սիպպար քաղաքում կանգնեցրած արձանագրության մեջ ներկայանում է պարտված Նարամսինից նվաճված «աշխարհի չորս կողմերի թագավոր» տիտղոսով: Նույն տիտղոսն է կրում նրա որդի Էրրիդու-պիզիրը, որի թողած երեք արձանագրություններից տեղեկանում ենք, որ նրա հայրը նվաճել էր Սիմուրրում և Լուլլուբում երկրները, որոնք իր օրոք ապստամբել էին Սիմուրրումի արքայի գլխավորությամբ: Էրրիդու-պիզիրը ճնշում է ապստամբությունը և իր իշխանությունն ամրապնդում

Սիմուրրում, Լուլլուբում, Ուրբիլում, Մադգա և այլ երկրամասերի վրա: Հատկանշական է, որ այդ ժամանակ Աքքադ քաղաքը գտնվել է Էրրիդու-պիզիրի իշխանության ներքո:

3. ԱՔՔԱԴԻ ԱՆԿՈՒՄԸ

Նարամսինի որդի Շարկալիշարրին (Շար-կալի-շարրի) (Ք. ա. 2217-2192 կամ 2200-2176 թթ.) ծանր ժառանգություն ստացավ: Արքային հաջողվեց վերստին տիրել հոր գահին, սակայն նրա իշխանությունը տարածվում էր միայն տեղական մի մասի վրա: Նա այլևս չէր կրում «աշխարհի չորս կողմերի արքա» կամ «տիեզերքի արքա» տիտղոսները, այլ ստիպված էր բավարարվել միայն «Աքքադի արքա» տիտղոսով: Նրանից մեզ են հասել մի քանի արձանագրություններ, որոնցից երկուսում հաղորդվում է, որ նա հասել է մինչև «ակունքները Տիգրիսի և Եփրատի»:

Աքքադին հյուսիսից սահմանակից է դառնում կուտիական պետությունը, որի հետ ռազմական բախումներ էին տեղի ունենում: Այդ մասին են վկայում նրա արձանագրություններից երկուսը, որոնցից մեկը միայն հիշատակում է Գուտիումի պարտության մասին, երկրորդում նշվում է, որ Շարկալիշարրին հաջողվել է հաղթել կուտիական Սարլակ (Շարլակ, Սարլագաբ) արքային և գերեվարել նրան:

Շարկալիշարրիի մահից հետո կուտիական զորքերին հաջողվում է տիրանալ Աքքադին ու Շումերին և իրենց ազդեցության սահմանը հասցնել Պարսից ծոցի ափերին: Քիչ անց կուտիական գերիշխանությունը տարածվում է նաև Էլամի վրա, որը Նարամսինի դաշնակիցն էր և պատերազմել էր ընդդեմ կուտիների:

Միջագետքում կուտիական տիրապետության ընդհանուր տևողության մասին աղբյուրներում պահպանվել են միմյանցից տարբերվող երեք տեղեկություններ.

ա) 21 արքաներ կառավարել են 125 (տարբերակ 124) տարի և 40 օր,

բ) 23 արքաներ կառավարել են 99 տարի,

գ) 21 արքաներ կառավարել են 91 տարի և 40 օր:

Ժամկետների նման անհամապատասխանությունը տարբեր աղբյուրներում, հավանաբար, պայմանավորված է այն հանգամանքով, որ Աքքադը կուտիական տիրապետության տակ էր մտել դեռևս Էրրիդու-պիզիրի (հնարավոր է՝ նրա հայր Էնրիդա-պիզիրի) օրոք, ապա անցել Շարկալիշարրին և նրա մահից հետո կրկին ենթարկվել կուտիական իշխանությանը:

Կուտիական տիրապետության շրջանը բաժանվում է երեք փուլի: Առաջինում կուտիական զորքերը, շարժվելով Հայկական լեռնաշխարհի հարավից, հաստատվել էին Միջագետքի հյուսիսում և այնտեղից արևելք ընկած շրջաններում (Սիմուրրում, Լուլլուբում, Ուրբիլում և այլն): Այս փուլը ժամանակագ-

րորեն համընկնում է Նարամսինի իշխանության վերջին տարիների հետ: Երկրորդ փուլը Էնրիդա-պիզիրի արշավանքից և Նարամսինի տապալումից մինչև Շարկալիշարրիի մահն ընկած ժամանակամիջոցն է: Այս փուլում կուտիական գերիշխանության հարավային գիծը հասավ Աքքադի տերության հյուսիսին, հակառակորդ կողմերի միջև տեղի ունեցան մի շարք բախումներ: Երրորդ փուլում՝ Շարկալիշարրիի մահից հետո, կուտիները տիրացան Շումերին և Աքքադին, ապա նվաճեցին Էլամը:

Կուտիների տիրապետության շրջանում Միջագետքում սկսվեց շումերական քաղաքների կենսագործունեության և մշակույթի վերելք: Վերականգնվեցին շումերական ավանդական հոգևոր ու աշխարհիկ կարգերը: Կրկին սկսեցին գործել ավագների խորհուրդն ու ժողովրդական ժողովները, որոնք ընտրում էին իշխանավորին. Գուդեան, ըստ աղբյուրների, ընտրվել էր 216 հազար մարդկանց կողմից: Այս շրջանը որոշակի հիմքեր ստեղծեց ավելի ուշ՝ Ուրի III դինաստիայի օրոք շումերական հոգևոր ավանդույթների վերականգնման համար:

Հարկ է նշել, որ Միջագետքում երկար պահպանվեց հիշողությունն արդարությունը վերականգնած արքաների մասին: Կուտիների գերիշխանության ավարտից ավելի քան կես դար անց Լագաշ քաղաքի իշխանները շարունակում էին կրել նաև «կուտիների երկրի կառավարիչ» տիտղոսը:

Կուտիական վերջին տիրակալ Տիրիկանի թագադրության ժամանակ տեղի ունեցավ լուսնի խավարում, որը քրմերի կողմից մեկնվեց որպես նրանց գերիշխանության ավարտի երկնային նախանշան: Դրանից քառասուն օր անց Ուրուկ քաղաքում Շումերի թագավորությունը վերականգնելու դրոշը պարզած Ուտուխեգալի գորբերի հետ բախումից հետո կուտիները հետ քաշվեցին իրենց լեռները:

4. ՄԻՋԱԳԵՏՔԸ ՈՒՐԻ III ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Ուտուխեգալի իշխանությունը կարճ տևեց՝ յոթ ու կես տարի: Նրա մահից հետո գերիշխանությունն Ուրուկից անցավ Ուր քաղաքի արքա Ուր-Նամմուին, որն էլ դարձավ Ուրի III հարստության (Ք. ա. 2112–2003 թթ.) հիմնադիրը:

Ուրի III հարստության արքաները վերցրին աքքադական տիրակալների հիմնական տիտղոսները՝ «Ուրի արքա, Աքքադի և Շումերի արքա», իսկ Ուր-Նամմուի որդի Շուլգիից սկսած՝ հարստության բոլոր արքաները կրում էին նաև

¹ Ուրի III հարստության շրջանի մասին հանգամանորեն տես Edzard D.O., Neue Inschriften zur Geschichte von Ur III unter Šusuen, AfO 19, 1959-1960, 1ff.; Sollberger E., Kupper J.-R., Inscriptions royales sumériennes et akkadiennes, Paris, 1971, 97ff.; Kärki I., Die Königsinschriften der Dritten Dynastie von Ur, Helsinki, 1986; ИДВ, I, 267 слл. և այլն: Ուր-Նամմուից մեզ է հասել այսօր հայտնի հնագույն օրենսգիրքը (Kramer S.N., Ur-Nammu Law Code, Or. 23, 1954, 40ff.; Афанасьева В. К. 1960, Законы Ур-Намму, ВДИ 1, 1960, 61 слл.; Römer W. H. Ph., Aus den Gesetzen des Königs Ur-nammu von Ur - In: Texte aus der Umwelt des Alten, 1982, 17ff.):

«աստված» տիտղոսը: Նրանք ունեին անսահմանափակ իշխանություն: Ստեղծվեց հսկա վարչարարական ապարատի միջոցով կառավարվող պետական համակարգ: Երկրում ձևավորվել էր մեծաքանակ պաշտոնություն, երկիրը բաժանվեց փոխարքայությունների, որոնց գլուխ կանգնած էին *էնսի* տիտղոսը կրող, սակայն լիովին արքային ենթակա պաշտոնյաներ: Կազմավորվեց և գործում էր նաև արքայական դատարան:

Մեծ ուշադրություն դարձվեց երկրի տնտեսությանը, հատկապես ոռոգման համակարգին: Մշակովի հողերի հիմնական մասը կազմում էին արքայական և տաճարային տնտեսությունները, որոնցում աշխատում էին կախյալ կարգավիճակ ունեցող *գուրուշները*, ստրկացված ռազմագերիները և հողը կորցրած համայնականները. վարձատրությունն իրականացվում էր բնամթերային եղանակով: Մշակովի հողերի մի մասն էլ տրվում էր զանազան պաշտոնյաների և զինվորականների՝ ծառայության դիմաց: Ուրի արքաները փորձում էին կասեցնել համայնքի քայքայումը, որի համար նրանք արգելեցին համայնական հողատարածքների վաճառքը, ինչը, սակայն, շատ արդյունավետ չեղավ:

Ուրի III հարստության ժամանակաշրջանում ծաղկում ապրեց նաև մշակույթը, բարձր զարգացման հասավ գրականությունը:

Արտաքին քաղաքականության մեջ Ուրի III հարստությունը զգալիորեն զիջում էր Աքքադի արքաներին: Նրանց արձանագրություններում տրվող իրենց տիրապետության սահմանները՝ «Ստորին ծովից մինչև Վերին ծով», կարող է մեկնաբանվել ինչպես «Պարսից ծոցից մինչև Միջերկրական ծով», այնպես էլ «Պարսից ծոցից մինչև Վանա լիճ»: Վերջինս ավելի հավանական է, քանի որ Միջերկրական ծովը սովորաբար կրում է «Արևամուտի ծով» անվանումը: Նրանց (հատկապես Շուլգիի) արձանագրություններում բազմիցս հիշատակվում են Տիգրիսի հոսանքով դեպի հյուսիս կատարված արշավանքները դեպի Սիմուրրում, Լուլլուբում, Ուրբիլում, Շաշրում (Աշշուր), Խումուրտում, Կիմաշ և Խարշի երկրներ: Վերջինս, որ նշվածներից ամենահյուսիսայինն է, հիշատակվում է Շուլգիի իշխանության 27-րդ և 48-րդ տարիների ընթացքում: Այն համադրելի է Աշշուրբանասալի արձանագրություններում հիշատակվող Խարսի լեռան և Թիզլաթպալասար I-ի հիշատակած Խարուսա լեռների հետ, որոնք տեղորոշվում են Ուրմիտ լճի հարավում՝ Մանայի թագավորության հարևանությամբ: Տիգրիսի հովտով ավելի հյուսիս Ուրի III հարստության արքաներին չի հաջողվել թափանցել:

Շուլգիի գորբերը հաղթական արշավանքներ են իրականացրել Էլամի նկատմամբ: Նրա հաջողությունները հիմք տվեցին իրեն հռչակելու նաև «աշխարհի չորս կողմերի արքա»:

Եփրատի հոսանքով դեպի հյուսիս կատարած արշավանքներում Ուրի III հարստության արքաները, տիրելով Մարիին, կարճ ժամանակով իրենց իշխանությանը ենթարկեցին Էրլան և Ուրշուն, շինարարություն իրականացրին Թել Բրաք հնավայ-

րի տարածքում: Վերջինս գտնվում էր Սուրուր-Սուրարտուի հարավային սահմանի մոտ, որը մնաց Ուրի արքաների վտանգավոր ախոյանը, ինչի մասին են վկայում Շուլգիի ժամանակվա հետախուզական նամակները, որոնցում Սուրուրը ներկայանում է հզոր ու բարգավաճ:

Էլամի դեմ արշավանքներ իրականացրին նաև Շուլգիի որդիները՝ Ամար-Սուենը և Շու-Սուենը: Շուլգիից հետո արտաքին քաղաքականության մեջ առավել աչքի ընկած Շու-Սուենի տեքստերից մեկում նշվում է, որ ավերել է Ջաբշալի երկիրն ու Սու ժողովրդի երկրները, մեկ ուրիշ տեքստում հաղորդվում է, որ ոսկի և արծաթ է բերել Սու ժողովրդի երկրից (= Սուրուր-Սուրարտուից): Ուրի III հարստության արքաներին, սակայն, այդպես էլ չհաջողվեց ծնկի բերել ո՛չ Էլամը, ո՛չ էլ Սուրուրը: Ընդհակառակը, Ք. ա. XXI դ. վերջին Սուրուրի գորքերը էլամցիների հետ միասին մասնակցեցին Ուրի III հարստության իշխանության կործանմանը:

Ուրի III հարստության վիճակը սկսեց ծանրանալ Ք. ա. XXI դարավերջին՝ կապված ամորեացիների ներխուժումների հետ: Այդ ցեղերի մի խումբը կարողացավ հաստատվել Լարսայում և հիմնել թագավորություն: Ուրի III հարստության լուծը թոթափեցին նաև Իսինը և Էշնուննան: Դրանց ավելացան նաև էլամցիների կատարած պատասխան արշավանքները:

Հարստության վերջին արքա Իբբի-Սուենի՝ երկիրը փրկելու ջանքերը ձախողվեցին: Այդ լարված քաղաքական իրադրության մեջ տեղի ունեցան նաև տեղական կառավարիչների ըմբոստություններ, որոնցից աչքի էր ընկնում հատկապես Իշբի-Էրրան: Երբ Ուրը պաշարված էր հակառակորդների կողմից, նա դադարեցրեց պաշարված մայրաքաղաքի պարենի մատակարարումները՝ քաղաքը մատնելով սովի: Էլամցիները՝ սուրարեական զորքի աջակցությամբ, գրավեցին Ուրը (Ք. ա. 2004/3 թ.), իսկ Իբբի-Սուենը պետության աստվածների արձանների հետ միասին գերի տարվեց Էլամ: Միջազևտքում առաջնությունն անցավ Իսինին, որի I հարստության հիմնադիրը դարձավ Իշբի-Էրրան:

ԱՐՔԱՂԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

	Ջ. Բրինքման	Վ. Յակոբսոն
Սարգոն Աքքադցի.....	(2334 - 2279)	(2316 - 2261)
Ռիմուշ	(2278 - 2270)	(2260 - *)
Մանիշտուսու	(2269 - 2255)	(* - 2237)
Նարամ-Սին	(2254 - 2218)	(2236 - 2200)
Շար-կալի-շարրի	(2217 - 2193)	(2200 - 2176)
(Աննշան իշխողներ, որոնք կառավարել են միայն Աքքադ քաղաքում)	(2192-2154)	

ՈՒՐԻ III ՀԱՐՍՏՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

	Ջ. Բրինքման	Վ. Յակոբսոն
Ուր-Նամմու	(2112 - 2095)	(2112(*)-2094)
Շուլգի	(2094 - 2047)	(2093-2046)
Ամար-Սուեն	(2046 - 2038)	(2045-2037)
Շու-Սուեն	(2037 - 2029)	(2036-2028)
Իբբի-Սուեն	(2028 - 2004)	(2027-2003)

ՀՆԱԳՈՒՅՆ ՄԻՋԱԳԵՏՔԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Հայաստանը Ք. ա. III հազարամյակում կայուն փոխհարաբերություններ է ունեցել միջագետքյան պետական կազմավորումների հետ: Այդ փոխհարաբերությունների առկայության մասին բավարար նյութեր կան նույն հազարամյակի վերջերի և հաջորդ հազարամյակի բաբելոնյան պատճեններով պահպանված առասպելաբանական բնույթի տեքստերում:

1. ՇՈՒՄԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Ըստ «Շումերական արքայացանկի»՝ Միջագետքում ջրհեղեղից առաջ իշխել են հինգ արքայատոհմեր, որոնցից առաջինը Էրիդու քաղաքին էր: Արքայացանկի տարբերակներից մեկի համաձայն՝ այդ արքայատոհմի ծագումը կապվում է Հայա-Սուբարի (Սուբուր) քաղաքի (երկրի) հետ, ինչից ելնելով՝ Ի. Գեյլը հավանական է համարում, որ «շումերական առաջին արքայատոհմը կոչվել է սուբարեցիների անունով»:

Այս փաստը մեր խնդրի տեսանկյունից հատուկ հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ շումերա-աքքադական մի շարք երկլեզու տեքստերում շումերերենի «Հայա» (HA.A) երկրանվանը աքքադերենում փոխարինում է «Սուբուրը», ինչը ցույց է տալիս, որ դրանք միևնույն երկրի երկու անվանումներն են: Սուբուր (Սուբարտու) երկիրը, ինչպես հաղորդում է Նարամսինի տեքստերից մեկը, Ք. ա. III հազ. երկրորդ կեսին գտնվել է Վանա լճի («Վերին ծովի») ափերին: Մյուս կողմից՝ «Արատտա» երկրանունը գաղափարանշանային գրության պարագայում գրվում է Սուբուր երկրի գաղափարագրով՝ SU.KUR. RU, ինչով փաստվում է Արատտա-Սուբուր (Սուբարտու)-Հայա նույնությունը: Այսինքն՝ շումերական ավանդությունն իրենց առաջին արքայատոհմի ծագումը կապել է Հայկական լեռնաշխարհի հետ:

«Շումերական արքայացանկի» համաձայն՝ ջրհեղեղից հետո առաջինը գերիշխեց Քիշը, ապա նրան փոխարինեց Ուրուկը: Ուրուկի I հարստությունն ունեցավ տասներկու արքա, որոնցից մեր նյութի հետ առնչվում են առաջին հինգը: Առաջինը Մեսքինգաշերն էր՝ «որդին արևի», որն իր իշխանության վերջում վերադարձավ լեռները, որտեղից եկել էր: Երկրորդը նրա որդի Էնմերքարն էր, «ոմ օրոք կառուցվեց Ուրուկը»: Նրան հաջորդեց Լուգալբանդան: Չորրորդ իշխողը Դումուզին էր, «որի քաղաքն էր Հայան (Սուբուրը)»: Հինգերորդը Գիլգամեշն էր, «որի հայրը Լիլլ

էր, քուրմը Կուլլարայի...»: Այս հարստության չորրորդ արքան ևս Հայայից էր, որը կրում էր Հայա-Սուբուր-Արատտայի հովանավոր աստված Դումուզիի անունը:

Հարստության երեք արքաները՝ Էնմերքարը, Լուգալբանդան և Գիլգամեշը, դառնում են շումերական դիցազնավեպի գլխավոր հերոսները: Անկախ իր էպիկական բնույթից՝ շումերական դիցազնավեպը կարևոր պատմական սկզբնաղբյուր է: Դիցազնավեպի «Էնմերքարը և Արատտայի տիրակալը» վիպերգում հաղորդվում է, որ վերոհիշյալ Էնմերքարի և Արատտայի տիրակալի միջև ընթանում էր երկարատև պայքար, որն, ի վերջո, ավարտվեց հաշտությամբ ու տոնախմբությունների կազմակերպմամբ: Պայմանավորվածության համաձայն՝ շումերները պետք է Արատտա ուղարկեին երկրագործական ապրանքներ՝ փոխարենը ստանալով մետաղներ: Արատտայի վարպետները համաձայնում են Շումերում կառուցել ճարտարապետական կառույցներ:

«Էնմերքարը և Էնսուխբեշդաննան» տեքստի համաձայն՝ Արատտայի և Շումերի պայքարը հետագայում էլ շարունակվեց: Այդ ժամանակ կործանված Խամազի երկրից Արատտա է գալիս նրա ներկայացուցիչը և առաջարկում Արատտայից Շումեր ռազմական արշավանք կատարել Եփրատով: Արատտայի տիրակալ Էնսուխբեշդաննան արշավանքի համար տրամադրում է հինգ մինա ոսկի, նույնքան էլ արծաթ, պարենամթերք: Խամազիի ներկայացուցիչը հասնում է Եփրատի ափին գտնվող Էրեշ քաղաքը, սակայն այնտեղ անհաջողություն է կրում, որից հետո Արատտայի տիրակալն ընդունում է Էնմերքարի առաջնությունը՝ կոչելով նրան «մեծ եղբայր»:

«Լուգալբանդան լեռների խավարում» («Լուգալբանդան և Խուռում լեռը») և «Լուգալբանդա» («Էնմերքար և Լուգալբանդա») տեքստերում պատմվում է հետևյալը: Շումերական զորքի գլուխ անցած՝ Էնմերքարն արշավում է դեպի Արատտա: Արշավանքի մասնակիցների մեջ էր նաև Լուգալբանդան: Ճանապարհին, երբ զորքը հասնում է Զամուա (Լուլլուբի) երկիր, Լուգալբանդան մահացու հիվանդանում է: Թողնելով նրան այնտեղ՝ զորքը շարունակում է արշավանքը՝ պայմանով, որ վերադարձին վերցնեն Լուգալբանդայի մարմինը և տանեն հայրենի երկիր: Այնուհետև պատմվում է, թե ինչպես է աստվածների և գերբնական ուժերի օգնությամբ նա առողջանում ու հասնում քանակին: Շումերական քանակը պաշարում է Արատտայի համանուն մայրաքաղաքը, սակայն մեկ տարի պաշարելով՝ չի կարողանում գրավել այն: Լուգալբանդան օգնության է մեկնում Շումեր, սակայն թե ինչպես է ավարտվում պատերազմը, հայտնի չէ, քանի որ բնագրի վերջնամասը վնասված է:

Լուգալբանդայի վիպաշարքն ավարտվում է Ուրուկի համար ծանր իրադրությամբ և, թերևս, դրանով է պայմանավորված, որ նրան հաջորդում է Դումուզին, «որի քաղաքն էր Հայան (Սուբուրը)»:

Եթե Էնմերքարն ու Լուգալբանդան դիցազնավեպում հանդես են գալիս պատմական իրադարձությունների կապակցությամբ, ապա նրանց հոշակավոր հետնորդ Գիլգամեշի առնչությունն Արատտա երկրի հետ վերաբերում է դիցաբանության ոլորտին: Ըստ «Գիլգամեշն ու Ամմահույան երկիրը» վիպերգի, որը դարձել է բաբելոնյան (աքքադական) «Գիլգամեշ» էպոսի գաղափարայուժետային սկզբնաղբյու-

րը, Գիլգամեշը որոշում է ուղևորվել «անմահության երկիր», որին հասնելու համար Ուտու (Արև) աստվածը նրան տալիս է «*դեպի Արատուա ճանապարհը ցույց տվող*» յոթ ուղեցույցներ: Ըստ բաբելոնյան «Գիլգամեշ» էպոսի՝ հերոսը հաղթահարում է Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մաշու (հուն. աղբյուրների Մասիուս և «Աշխարհացոյց»-ի Մասիոն) լեռները և, ի վերջո, հասնում է իր նպատակին: Նա ձեռք է բերում «անմահության ծաղիկը», սակայն վերադարձին օձը գողանում է այն (ինչպես և Աստվածաշնչում՝ մարդկությունը մահկանացու է դառնում օձի միջամտության հետևանքով):

Ք. ա. XXVIII–XXVII դդ. մինչև Աքքադի թագավորության ժամանակաշրջանը Հայկական լեռնաշխարհի և նրա բնիկների մասին տեղեկությունները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինը վերաբերում է Միջագետքում բնակություն հաստատած սուբարեցիներին, երկրորդը՝ Հայկական լեռնաշխարհին:

Առաջին խմբի առավել վաղ տեքստերը (որոնք գտնվել են Ֆառայից և թվագրվում են Ք. ա. XXVI–XXV դդ.) սուբարեցիներին հիշատակում են որպես դպիրներ, դպրապետեր, հացթուխներ, հացթուխապետեր, դարբիններ, իսկ քիչ ավելի ուշ շրջանում՝ դարբիններ, այգեպաններ և այլն:

Երկրորդ խումբը կազմում են Ք. ա. XXV–XXIV դդ. իշխած երեք՝ Ադաբի Լուգալանիմունդու, Լագաշի Էաննատում և Ումմայի Լուգալզագեսի արքաների արձանագրությունները:

Էաննատումը տեղեկացնում է, որ միջագետքյան մի քանի քաղաքներից բացի՝ պարտության է մատնել արևելյան և հյուսիսային երկրներին. արձանագրություններում նա հիշատակում է Սուբուր երկիրը:

Լուգալանիմունդուի արձանագրության ուշ շրջանի կրկնօրինակը հաղորդում է, որ նա հարկեր է ստացել Մայրիների լեռներից (տե՛ս վերը նշված տեքստում), Էլամից, Մարիաշից, Գուտիումից, Սուբիրից, Մարտուից, Սուտիումից և Էաննայի երկրից (այսինքն՝ Ուրուկի շրջանից): Այստեղ կարևորն այն է, որ արձանագրության մեջ երկրանուններն ակնհայտորեն թվարկված են արևելքից արևմուտք՝ շրջանաձև հերթականությամբ, ինչը ցույց է տալիս, որ սարգոնյան արշավանքների նախօրյակին Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելքն ընդգրկված էր Գուտիումի, իսկ հարավ-արևմուտքը՝ Սուբուրի կազմում:

Ք. ա. XXIV դ. երկրորդ կեսին Լուգալզագեսի արքայի արձանագրություններում հաղորդվում է, որ շումերների հայր-աստված Էնլիլը բացել է նրա ճանապարհը «*Ներքին ծովից Տիգրիսով ու Եփրատով մինչև Վերին ծով*»: Եթե սա հայտնի բանաձևի սոսկ մի կրկնությունը չէ, նշանակում է՝ Լուգալզագեսին հասել է մինչև Հայկական լեռնաշխարհի փեշերը:

Ամփոփելով տեսնում ենք, որ Շումերի (Վաղդինաստիական Միջագետքի) և Հայկական լեռնաշխարհի միջև գոյություն են ունեցել այդ ժամանակաշրջանի համար բավականին գործուն փոխհարաբերություններ: Դրանք արտահայտվել են ոչ միայն առանձին արքաների տեքստերում, այլև՝ բանահյուսական ստեղծագործություններում, որոնք կարևորագույն արժեք են ներկայացնում այսօր

Հայկական լեռնաշխարհի և հարակից երկրների հնագույն փոխառնչությունները լուսաբանելու համար:

Միջագետքի հնագույն բնակիչների՝ շումերների և Հայկական լեռնաշխարհի հասարակությունների միջև տեղ գտած փոխառնչությունների վկայությունը կարելի է համարել հայերենում որոշ քանակությամբ շումերերեն բառերի առկայությունը: Իհարկե, հայերենի և շումերերենի կրողների միջև ուղղակի շփումների առկայության հնարավորությունը խիստ վիճարկելի է: Այդ բառերը կարող էին անցնել հայերենին աքքադերենի, խուրրիերենի կամ արամեերենի (ասորերեն) միջնորդավորմամբ: Այնուամենայնիվ, վերոհիշյալ փոխառնչությունները վկայում են միջագետքյան աշխարհի հետ մեր հեռավոր նախնիների ունեցած կանոնավոր շփումների մասին:

2. ԱՔՔԱԴԻ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Աքքադի թագավորության և Հայկական լեռնաշխարհի երկրների առնչությունները արտացոլված են արքայատոհմի երկու ակնառու ներկայացուցիչների՝ Սարգոնի և Նարամսինի իշխանության ժամանակաշրջանի աղբյուրներում:

Հայտնի է, որ Սարգոնի տիրապետության վերջին տարիներին նվաճված երկրներում ծագեցին ապստամբություններ: Ապստամբները պաշարեցին Աքքադի մայրաքաղաքը, և Սարգոնը դժվարությամբ կարողացավ փրկել իր գահը: Ուշագրավ է, որ դրանից հետո նա արշավանք սկսեց Սուբարտուի դեմ, որն ավարտվեց հաղթանակով և ավարտությամբ:

Սարգոնի տերության աշխարհագրությունը ներկայացնող Նոր ասորեստանյան տեքստը, որում արտահայտություն են գտել նաև Ք. ա. II հազ. իրողությունները, հաղորդում է, որ «*Էբլայից մինչև Բիթ-Նանիպ Արմանի երկիրն է (տարածվում)*»: Բիթ-Նանիպը, դատելով առկա փաստերից, գտնվել է Նուգիի շրջանում: Արմանում երկրի համար գծագրվում է քավական մեծ մի տարածք, որը համեմատելի է Սուբարտու երկրի տեղորոշմամբ պարզաբանված տարածքի հետ:

Կարևոր տեղեկություններ են պահպանվել Նարամսինի հյուսիսային ռազմարշավները նկարագրող տեքստերում, որոնք իրականացվել են Եփրատի և Տիգրիսի հոսանքներն ի վեր: Հյուսիսային արշավանքներից առաջինն ուղղված էր Սուբուր երկրի դեմ, որի ընթացքում երկու զորքերի միջև ճակատամարտ է տեղի ունեցել Թավմուս բնակավայրի մոտ (Մոսուլից 40 կմ հյուսիս), ինչը կարող էր լինել Սուբուրի հարավային շրջանը:

Աքքադի արքայի դեմ կազմված առաջին դաշինքը ղեկավարում էր Ապիշալ երկրի արքա Ռիդ/2-Ադադը (կամ Ռիդ/2-Թեշուբը): Նույն անունը կրում է Նարամսինի դեմ պայքարած Արմանում երկրի արքան (տե՛ս ստորև): Համընկնումը, թերևս, պատահական կլիներ, եթե չլիներ մեկ այլ հանգամանք: Ապիշալ և Ուրումու երկրները համատեղ հանդես են գալիս Նարամսինի մասին պատմող ուշ շրջանի մի տեքստում,

ինչը գուգադրելի է Թիգլաթպալասար I-ի արձանագրություններում արեշլայցիների և ուրումեացիների համատեղ հիշատակությանը. դա հիմք է տվել եզրակացնելու, որ Ապիշալը գտնվել է Հայկական լեռնաշխարհում: Առաջարկվել է նաև Ապիշալը տեղադրել Միջագետքում՝ Ումմայի հարևանությամբ:

Հաջորդ առնչությունը Հայկական լեռնաշխարհի հետ Նարամսինն ունեցավ իր դեմ ծագած «Մեծ ապստամբությունից» հետո, որը ճնշելով՝ նա արշավեց Եփրատի վերին հոսանքի շրջանում գտնվող Խախ(ում) երկրի դեմ: Ոսկու արդյունահանման այս կարևոր շրջանը հիշվում է Գուդեայի (-Ք. ա. XXII դ.), -Ք. ա. XX–XVIII դդ. փոքրասիական (Քանեսի) առևտրական տեքստերում, Խախա անվամբ՝ խեթական աղբյուրներում, Խախի տարբերակով՝ Վանի թագավորության արձանագրություններում, Խախ ձևով՝ Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի մոտ: Այն գտնվել է Մեծ Հայքի Բարձր Հայք նահանգի Եկեղյաց գավառում, որը հայտնի էր ոսկու արդյունահանմամբ:

Մի շարք արձանագրություններ վկայում են Սուբարտուի հարավային Ազուխի նում բնակավայրի մասին: Թե որքան էր կարևոր Նարամսինի համար Սուբարտուի դեմ Ազուխիումի մոտ տարած հաղթանակը, երևում է այդ իրադարձությամբ տվյալ տարին անվանակոչելու փաստից. «Տարին, երբ Նարամսինը հաղթեց Սուբարտուին Ազուխիումի մոտ և գերեց Տախիշատիլիին»: Եվս երկու արձանագրություն տեղեկացնում են Խարաբիից մինչև Նախուր, Կուրդայից մինչև Ազուխիում արշավանքի մասին: Ազուխիումի մոտ տարած հաղթանակից հետո Թել Բրաք հնավայրի տարածքում Աքքադի արքան կառուցեց ամրոց, որի պեղումներից գտնվել են նրա անունը կրող արձանագրությամբ յոթ կնիքներ: Ազուխիումը հիշատակվում է նաև Նարամսինի՝ Սուբարտուի բնակավայրերը ներկայացնող արձանագրության մեջ:

Նորակառույց ամրոցը հենակետ դարձնելով՝ Նարամսինը կատարեց մի քանի արշավանք դեպի շրջակա տարածքները: Մասնավորապես նա հասավ մինչև «ակունքը Տիգրիսի (և) ակունքը Եփրատի», այնուհետև՝ մինչև Փիր-Հուսեյն հնավայրի շրջան (Դիյարբաքրից մոտ 25 կմ հյուսիս-արևելք), ուր թողեց իր պատկերաքանդակով և արձանագրությամբ կոթող:

Որ Հայկական Տավրոսի լեռնազանգված մտնելը և դեպի հյուսիս առաջանալը համարվել է բացառիկ հերոսություն, երևում է Նարամսինի գահակալության ևս երկու տարիները այդ իրադարձություններով անվանակոչելու փաստից: Դրանցից մեկը վկայում է Տիգրիսի և Եփրատի ակունքները հասնելու, մյուսը՝ Արևմտյան Տիգրիսի ակունքներում գտնվող Աբարնում (Ամարնում) երկրի դեմ արշավելու մասին: Աբարնումը հիշատակվում է նաև Նարամսինի գահակալության վերջին շրջանի մի վնասված արձանագրության մեջ, որում ամփոփվում են նրա նվաճումների արդյունքները. «...Մախազ(ում), Փու(շ), ..., Էբլա, Մարի, Թուրթուլ, ..., Ուրկիշ, Մուկիշ, ..., ..., Աբարնում, և երկիրը, որտեղ մայրիներ են կտրում, իր նահանգներով: Սուբարտու երկիրը՝ Վերին ծովի ափերին, և Մագանը՝ իր նահանգների երկայնքով ... ծովի մյուս կողմը...»:

Նարամսինի մեկ այլ արձանագրություն ներկայացնում է Սուբարտուն և

Վերին երկրները՝ որպես նվաճված և հարկատու, որոնցից նա հարկեր է ստացել դեպի Թալխադում կատարած արշավանքի ընթացքում:

Եփրատի վերին հոսանքի երկրները նվաճելու մասին է պատմում Նարամսինի ամենածավալուն արձանագրություններից մեկը. «Քանի որ երբևէ՝ մարդկության արարումից ի վեր, ոչ մի թագավոր չէր կործանել Արմանումն ու Էբլան, Ներգալը (իր) գեներով ճանապարհ բացեց Նարամսինի՝ հզորի համար և տվեց նրան Արմանումն ու Էբլան: Եվ նա տվեց նրան Անանսը՝ Մայրիների լեռը, ու Վերին ծովը: Շնորհիվ Դագանի գեների, որը մեծացնում է նրա թագավորությունը, Նարամսինը՝ հզորը, նվաճեց Արմանումն ու Էբլան: Եվ Եփրատի ափից մինչև Ուլիշում նա ջախջախեց մարդկանց, ում Դագանը նվիրել/տվել էր նրան ի սկզբանե...»: Արձանագրության շարունակության մեջ նշվում է նաև Արմանումի արքա Ռիդ/շ-Ադադին գերելու, նվաճված տարածքում ամրոց կառուցելու և Նարամսինի պատկերով ու արձանագրությամբ կոթող կանգնեցնելու մասին: Վերջին երկու միջոցառումները, ամենայն հավանականությամբ, կապվում են Թել Բրաք և Փիր-Հուսեյն հնավայրերի հետ:

Նարամսինը՝ որպես նվաճողն Արմանումի ու Էբլայի, հիշվում է ևս երեք տարբեր առարկաների վրա թողնված նույնաբովանդակ արձանագրություններում և իրեն ենթակա Նիզգումի (Դիյալա գետի վերին հովտում) կառավարիչ Քարշումի երկու տեքստերում:

Արմանի երկիրը հիշատակվում է Ք. ա. II հազ. զրի առնված «Նարամսինն ու իր թշնամիները» անվանումը ստացած խեթերեն տեքստում, որը հաղորդում է Միջագետքի արքայի դեմ ելած տասնյոթ երկրների դաշնության մասին:

Նարամսինի դեմ դաշնակցած տասնյոթ երկրների մասին է պատմում նաև «Քութայի արքայի լեգենդը» անունով հայտնի վիպաաքը, որի համաձայն՝ դաշինքը դեկավարել է Լուլլուբիի արքա Անուբանինին իր յոթ որդիների հետ: Համաձայն տեքստում հիշատակվում են Ումման-Մանդան, «Ծովերը» (իմա՝ Վանա և Ուրմիո լճերը), Գուտիումը, ընդ որում՝ նշվում է, որ բոլոր գորքերը հավաքվել էին «Սուբարտուի կենտրոնում»: Նարամսինը դաշնակից գորքերի դեմ է ուղարկում երեք բանակ (120 հազար, 90 հազար և 60 700 զինվորներով), որոնցից ոչ մի կենդանի չունչ չի վերադառնում:

Անուբանինիից մեզ է հասել ժայռափոր կոթող՝ պատերազմի Ինաննա-Իշտար դիցուհու և իր պատկերով ու աքքադերեն արձանագրությամբ, որում նա ներկայանում է «հզոր արքա, արքա Լուլլուբումի» տիտղոսներով: Վնասված արձանագրության մեջ հիշատակվում են Վերին և Ներքին ծովերը, սակայն չի հասկացվում, թե ինչ առնչությամբ:

Լուլլուբի երկիրը հիշատակվում է Նարամսինի թողած արձանագրություններից մեկում, որը ժամանակին որպես ռազմավար՝ Սուսա էր տարել Էլամի արքա Շուտուկ-Նախխունտեն:

Նարամսինը Տիգրիսի հովտով արշավանքներ է ձեռնարկել դեպի Մեծ և Փոքր Զար

գետերի միջնատարածքում գտնվող Սիմուրրում երկիրը: Այդ մասին վկայող տեքստերից մեկը պատմում է միայն դեպի Սիմուրրում երկիր արշավանքի, մեկ ուրիշը՝ Սիմուրրումի դեմ տարած հաղթանակի և Սիմուրրումի ու Արամե երկրի տիրակալներին գերեվարելու մասին: Երկրորդ արձանագրության մեջ ուշագրավն այն է, որ Նարամսինը հաղթում է Սիմուրրումին, Արամե երկրի նվաճման մասին խոսք չկա, քայց գերեվարվում են երկու երկրների տիրակալները: Դրանից կարելի է եզրակացնել, որ Արամե երկիրը գտնվել է ավելի հեռու (տվյալ դեպքում՝ հյուսիսում), նրա կառավարիչը եկել է Սիմուրրումին օգնության, սակայն անհաջողություն է կրել վերջինիս կառավարչի հետ միասին:

Արամե երկրին իր տարածքով ու անվամբ կարող է համապատասխանել Ուրի III հարստության արքա Շուլգիի մի բնագրում հիշվող Արամի, Ք. ա. III–II հազ. սահմանագծով թվագրվող Աշշուրից գտնված խաթա–խեթական երկլեզու մի արձանագրության Ուրամեի, հինբաբելոնյան աղբյուրներում հիշատակվող Արամուի, որը Սուրարտուի մասն էր կազմում, Ուրարտուի արքունական Արամայի (Արմարիլի) երկրի հարավակողմին կամ Մանայի թագավորության Արմաիդ (Արմեդ, Ուրմեյատե) քաղաքի շրջանին: Պատահական չէ, որ Ք. ա. III հազ. Արամ(ե) երկիրը մի շարք ուսումնասիրողներ նույնացնում են Արման(ի/ում)ի հետ: Ուստի մեծ հավանականությամբ Արամ երկրանունը կարելի է կապել հայկական ավանդության Արամին, որի անունով էլ, ըստ Պատմահայր Խորենացու (Գիրք Ա, Գլուխ ԺԲ), օտարները կոչեցին մեր երկիրն ու ժողովրդին:

Ամփոփելով վերը բերված տեղեկությունները՝ հարկ է նշել, որ ինչպես և նախորդ՝ շումերական դարաշրջանում, Աքքադի պետության շրջանում միջագետքյան աշխարհի և Հայկական լեռնաշխարհի հարավային հատվածի միջև գոյություն են ունեցել կանոնավոր փոխհարաբերություններ: Թերևս նախորդի համեմատ նկատվում է հակամարտության և ռազմական բախումների գերակայություն, որ պայմանավորված էր Աքքադի տիրակալների նվաճողական նկրտումներով:

3. ՈՒՐԻ III ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Ինչպես վերը նշվեց, Տիգրիսի հոսանքով Շուլգի արքայի՝ դեպի հյուսիս կատարած արշավանքների ընթացքում հիշատակված ամենահյուսիսային երկիրը Խարսին էր, որը համադրելի է ասորեստանյան տեքստերում հիշատակվող Խարսի լեռան և Խարուսա լեռների հետ, որոնք տեղորոշվում են Ուրմիո լճի հարավում՝ Մանայի թագավորության հարևանությամբ:

Ուրի III հարստության արքաները Տիգրիսի հովտով ավելի հյուսիս չեն թափանցել: Եփրատի հոսանքով հյուսիս կատարած արշավանքներում նրանք տիրել են Մարիին, կարճ ժամանակով իրենց իշխանությանը ենթարկել Էբլան և Ուրշուն, շինարարություն իրականացրել Թել Բրաք հնավայրի տարածքում, որը գտնվել է

Սուրուր–Սուրարտուի հարավային սահմանի մոտ: Վերջինս մնաց Ուրի III հարստության արքաների վտանգավոր ախոյանը, ինչի մասին են վկայում Շուլգիի ժամանակվա հետախուզական տեքստերը:

Նամակներից մեկում հետախույզը Շուլգի արքային հաղորդում է, որ Սուրուր երկրի տիրակալն ուներ «արշավանքի տուն» (ներկայիս եզրաբանությամբ՝ «զլխավոր շտաբ»), որի պատերը զարդարված էին թանկարժեք մետաղներից ու քարերից պատրաստված զինատեսակներով: Տիրակալը նստում էր ոսկե գահի վրա՝ ոտքերը դնելով ոսկե աթոռակին: Օտարերկրյա դեսպանի ընդունելության ժամանակ արքայի աջում և ձախում կանգնում էին նրա կառավարիչները, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու էր նշանակված հինգ հազար ծառայողների համար: Պատասխան նամակում Շուլգի արքան հանձնարարում է Սուրուրի «մեծ մարդկանցից», այսինքն՝ Ավագների խորհրդի անդամներից, «իմանալ նրանց խոսքը», ինչը ցույց է տալիս, որ պետական կառավարման մեջ դեռևս Ք. ա. XXVIII–XXVII դդ. հայտնի արքային կից քարձրագույն խորհրդակցական մարմինը («Ավագների խորհուրդը») շարունակում էր գոյություն ունենալ նաև հազարամյակի վերջում:

Շուլգիի թոռան՝ Շու–Սունի բնագրերից մեկում նշվում է, որ նա ավերել է Ջարշալի երկիրն ու Սու ժողովրդի երկրները, մեկ ուրիշ բնագրում հաղորդում է, որ ոսկի և արծաթ է բերել Սու ժողովրդի երկրից, այսինքն՝ Սուրուր–Սուրարտուից:

Ք. ա. XXI դ. վերջին և XX դարակերպին ևս Սուրուր–Սուրարտուն շարունակում է մնալ քավականին հզոր. այդ մասին է վկայում այն փաստը, որ վերջինիս գորքերը, դաշնակցած Էլամական զորքերի հետ, մասնակցեցին Ուրի III հարստության իշխանության կործանմանը:

ԱՍՈՐԵՍԱՆ

ԳԼՈՒԽ 1

ԱՇՇՈՒՐԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ԱՇՇՈՒՐԸ ՄԻՆՉԵՎ ԱՍՈՐԵԱՅԻՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հյուսիսային Միջագետքում Ք. ա. III հազ. երկրորդ կեսին գոյություն ունեին մի քանի տասնյակ պետական կազմավորումներ: Դրանք ներկայացնում էին մեկ պաշտամունքային-քաղաքական կենտրոն՝ շրջակա երկրագործական տարածքով և գյուղատիպ բնակատեղիներով: Առավել խոշոր միավորումներն ունեին մի քանի կենտրոններ: Հյուսիսային Միջագետքում նման կազմավորումներից էին, օրինակ, Նուրուգգումը, Ուրբիլումը (Արբախի), Աշիմանումը, Ուրգուխինումը (Արգուխինա) և Աշշուրը¹:

Աշշուր քաղաքը գտնվում էր Տիգրիսի հետ Մեծ Ջաբի միախառնման վայրից քիչ հյուսիս՝ Ջերել Մախուլ բլրաշարի ձևավորած եռանկյունաձև դարավանդի վրա՝ Տիգրիսի ձախ ափին: Որպես բնակատեղի՝ այն գոյություն ուներ՝ սկսած առնվազն Ք. ա. III հազ. կեսերից: Քաղաքի անվանումը ծագում է համանուն՝ Աշշուր աստծո անունից, որն այն լեռան աստվածն էր, որի վրա հիմնվել էր բնակատեղին: Ըստ վարկածներից մեկի՝ Աշշուրը կարող էր լինել շումերական վաղ դինաստիական պետական կազմավորումներից որևէ մեկի կողմից կառուցված առևտրական հանգրվան:

Գրավոր աղբյուրներում առաջին անգամ Աշշուրը հիշատակվում է Շումերի վաղդինաստիական տեղանունների շարքում: Առավել հաճախ քաղաքը հանդես է գալիս հին աքքադական դարաշրջանի տեքստերում: Ուրից հայտնաբերված տեքստերից մեկում հիշվում է Աշշուրի կառավարիչ ensi-ն: Քաղաքը հաստատապես գտնվել է Սարգոն Աքքադացու (Ք. ա. 2334–2279 թթ.) տերության կազմում, որի վկայություններից են նաև Աշշուրից գտնված հին աքքադական արձանագրությունները:

Աշշուրից հայտնաբերած հին աքքադական տեքստերի հաջորդ խումբը պատկանում է քաղաքի աքքադական կառավարիչներին, որոնցից հայտնի են Իտիտին և Ազուգուն: Վերջինս հիշվում է որպես Աքքադի արքա Մանիշտուսուի ծառա: Հետաքրքիր է, որ նրանց և, ընդհանրապես, Աշշուրի առաջին կառավարիչների անունները աքքադական չեն. առանց բացառության դրանք պատկանում են, այսպես կոչված, «բանանային» և «սուրարեական» լեզուների աշխարհին, ինչը կարող է հուշել Աշշուրի վաղ բնակչության էթնիկ կազմի մասին, որը սկզբնապես սեմախոս չէր, և նրանց համար աքքադերենը դեռևս չէր դարձել lingua franca:

Աքքադական ներկայությունը Աշշուրում թույլ էր արտահայտված: Աշշուրը չի տեղադրվեց աքքադական տերության մեջ, աքքադական դարաշրջանով թվագրվող ճարտարապետական կառույցներ Աշշուրից հայտնի չեն, և աքքադական գերիշխանությունն այստեղ արտահայտվում էր զուտ ռազմական ներկայությամբ: Աշշուրը, հնարավոր է, տերության ռազմական հենարաններից մեկն էր հյուսիսում: Հայտնի է, որ Աշշուրի կառավարիչներից Իտիտին արշավանք էր ձեռնարկել դեպի արևելք՝ Գասուր (հետագայում՝ Նուգի, ներկայիս Յորդան թեփե հնավայրը), գրավել և ավարառության ենթարկել քաղաքը, իսկ ավարից բաժին հանել նաև աքքադական Էշտար (Իշտար) աստվածուհուն:

Աքքադի անկումից հետո Աշշուրը հայտնվեց Ուրի III հարստության գերիշխանության տակ: Ուրի III հարստության անկումն ու դրան հաջորդած խառնակ ժամանակները հանգեցրին գոյություն ունեցող քաղաքական և տնտեսական համակարգի փլուզմանը: Կենտրոնական և Հարավային Միջագետքում տեղ գտած զարգացումներն անդրադարձան նաև հյուսիսի վրա: Այստեղ ձերբագատվելով հարավից եկող ազդակներից՝ տեղի քաղաքները անկախություն ձևեց բերեցին: Սկսվեց նաև Աշշուրի անկախ գոյության շրջանը:

Աշշուրում հաստատվել էր աստվածապետական իշխանություն. Աշշուր աստվածն ընդունվում էր իբրև արքա, այդ իսկ պատճառով Աշշուրի կառավարիչ-արքաները երբևէ հանդես չեն գալիս որպես արքա: Դրա փոխարեն նրանք կրում էին Աշշուրի «տեղապահ» տիտղոսը: «Տեղապահների» թվում էր Ծիլուլուն: Վերջինս սովորաբար նույնացվում է հետագա ասորեստանյան արքայացանկերից հայտնի Սուլիլուի հետ, որը, ըստ ցանկի, Աշշուրի 27-րդ արքան էր:

Այսպիսով՝ Աշշուրում գոյություն ուներ «տեղապահություն», որն արքայական իշխանության մի ձև էր, իշխանությունը փոխանցվում էր ժառանգաբար: Տեղապահն, ըստ էության, գլխավոր քուրմն էր, միաժամանակ նա ուներ վարչական գործառնություններ, որի տնօրինության ներքո էր գտնվում նաև ռազմական գործը:

Աշշուրում պահպանվել էին համայնական կարգերի բազում դրսևորումներ: Մասնավորապես արքայական իշխանությունը զուգահեռ Աշշուրում մեծ էր ինքնակառավարման մարմինների դերը, ինչպիսին էր «մեծերի և փոքրերի» ժողովը (ժողովր-

¹ Աշշուրի պատմության վաղ փուլի մասին տես Poebel A., The Assyrian King List from Khorsabad, JNES 1/3, 247-306; 1/4, 1942, 460ff.; Gelb I.J., The Assyrian King Lists, JNES 13/4, 1954, 209ff.; ИДВ II, 1988, 25стл.; Bär J. 2003, Sumerians, Gutians and Hurrians at Ashur? A Re-Examination of Ishtar Temples G and F, Iraq 65, 2003, 143ff.; Westenholz 2004; Novák M., From Assur to Nineveh: The Assyrian Town-Planning Program, Iraq 66/1, 2004, 177ff. և այլն:

դական ժողով): Վերջինս, սակայն, Ք. ա. II հազ. սկզբներին սկսեց կորցնել նշանակությունը՝ իր տեղը զիջելով «քաղաքի տան» անդամներին, այն է՝ ավագների խորհրդին: Դրա անդամներն էին Աշշուրի խոշոր գերդաստանները ներկայացնող նահապետերը, համեմատաբար վաղ առանձնացած առևտրական դասի և քրմական վերնախավի ներկայացուցիչները: Այս մարմինը իր նշանակությունը չկորցրեց ասորեստանյան տերության գոյության ողջ ընթացքում:

Ավագների խորհրդի անդամների շարքից մեկ տարի ժամկետով ընտրվում էր limtu-պաշտոնյան: Վերջինս ուներ կարևոր գործառույթներ, մասնավորապես տնօրինում էր զանձարանը, իսկ տարին անվանակոչվում էր նրա անունով: Ավագների խորհուրդն էր ընտրում նաև ukullutu-պաշտոնյային, որն ուներ վարչական և դատական գործառույթներ: Մեծավ մասամբ Աշշուրի տեղապահը համատեղում էր նաև այդ պաշտոնը:

Աշշուրում թեև առկա էին արքայապատկան, տաճարապատկան կամ մասնավոր տնտեսություններ, սակայն այս շրջանում հողի զգալի մասը դեռևս գտնվում էր համայնքի ձեռքին: Այն ամեն տարի վերաբաժանվում էր համայնքը կազմող տոհմերի միջև: Աշշուրի բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ և անասնապահությամբ: Սակայն Աշշուրին հարակից տարածքի երկրագործական հնարավորությունները փոքր էին: Քաղաքի բարձրացումը կապված էր հիմնականում առևտրի և արհեստների հետ, ինչն աստիճանաբար դարձավ բնակչության հիմնական զբաղմունքը: Աշշուրով էին անցնում Արևելամիջերկրածովյան ավազանը, Փոքր Ասիան, Հայկական լեռնաշխարհն ու Կովկասը Սիրիային, Միջին և Հարավային Միջագետքին կապող առևտրական մայրուղիները:

Ք. ա. XX դ. սկզբներին կարևոր փոփոխություններ են նկատվում Աշշուրում: Աճում է տեղի նստակյաց-երկրագործական բնակչության հետ ինտեգրված աքքաղացիների դերը: Վերջիններս Սիրիա և Միջագետք ներթափանցած սեմախոս ցեղերի հյուսիսային ճյուղն էին, որոնց հետագայում սկսեցին կոչել «աշշուրցի», երկիրը՝ Աշշուր: Ինչպես Սիրիայի և Միջագետքի մի շարք այլ պետություններ, Աշշուրը ևս հավանաբար այս շրջանում ստացավ աքքաղական ծագում ունեցող հարստություն: Որպես նրա կառավարիչներ՝ սկսում են հանդես գալ աքքաղական անուններ կրող անձինք:

Աշշուրի «հին ասորեստանյան հարստության» հիմնադիրը Պուզուր-Աշշուր I-ն էր (Ք. ա. 1970–1961 թթ.): Այս հարստության առաջին արքաները՝ Շալիմ-ախում, Իլու-շումմա (Ք. ա. 1961–1942 թթ.), Էրիշում I (Ք. ա. 1941–1902 թթ.), Իկունում (Ք. ա. XIX դ. առաջին քառորդ), հայտնի են գերազանցապես իրենց թողած շինարարական բնույթի արձանագրություններից: Նորակառույցների շարքում են Աշշուր, Էշտար և Ադադ աստվածների տաճարները և այլ պաշտամունքային կառույցներ: Բացի այդ՝ վերակառուցվեցին Աշշուրի պարիսպները, քաղաքային դարպասները, լեռնային աղբյուրներից ջրատար անցկացվեց քաղաք: Հետագա ավանդությունը Աշշուրի տաճարի կառուցումը վերագրում էր Ուշաիային, իսկ քաղաքային պարիսպները՝ Կիկկիային:

Աշշուրի աքքաղական հարստության կառավարման շրջանում մեծապես աճեց

քաղաքի ներգրավվածությունը միջազգային առևտրին: Աշշուրն իր առևտրական գաղութները՝ «կարում»-ները (քառացի՝ «նավահանգիստ/հանգրվան», «առևտրական կետ»), հիմնեց առևտրական մայրուղիների հանգուցակետերում՝ հումքի աղբյուրներին առավել մոտ՝ հատկապես Փոքր Ասիայում: Ընդ որում՝ դա իրականացվեց ոչ թե ռազմական արշավանքների, այլ խաղաղ ներթափանցման ճանապարհով՝ տեղի առաջնորդների հետ պայմանագրային հարաբերություններ հաստատելու միջոցով: Ենթադրվում է, որ կարումների հիմնադրումը սկսվել է Էրիշում I-ի օրոք:

Փոքր Ասիայում հիմնված առնվազն 20 կարումներից առավել խոշորը Քանեսն էր (Քյուլ-թեփե հնավայրը Կեսարիա/Կայսերիից 21 կմ հյուսիս-արևելք): Խոշոր կարումներից էին Անկուվան և Խաթթուսադը: Այստեղից հայտնաբերվել են սեպագիր աղբյուրներ, որոնցից խոշորագույնը՝ շուրջ 15 000 միավոր, գտնվել է Քանեսից: Աշշուրցիների հաստատուն ներկայության մասին է վկայում այն փաստը, որ «կարում»-ներից հայտնաբերված տեքստերի թվագրումները պարունակում են աշշուրցի առնվազն 84 էպոնիմների (անվանադիրներ) անուններ, ինչը նշանակում է նվազագույնը 84-ամյա հարաբերություններ: Տեքստերը վկայում են, որ կարումներում գործել են վաճառականների մի քանի սերունդներ: Արևելքում Աշշուրի գլխավոր առևտրական հանգրվանը Գասուր բնակավայրն էր Տիգրիսից արևելք:

Աշշուրի արքաները ևս ներգրավված էին այս գործում: Առևտուրը խթանելու նպատակով Իլու-շումման և Էրիշում I-ը անգամ ազատեցին աքքաղացի առևտրականներին մաքսատուրքից՝ նրանց շնորհելով տեղաշարժի ազատություն: Պետությունը մենաշնորհ ուներ հատկապես պղնձի առևտրում, բայց Էրիշում I-ն ընդհանրապես վերացրեց մենաշնորհը՝ ազատ թողնելով ապրանքների շրջանառությունը:

Աշշուրցի առևտրականները գլխավորապես զբաղվում էին մետաղի հումքի ներմուծմամբ, ինչից Միջագետքը զուրկ էր: Ներմուծում էին նաև ընտանի կենդանիներ, բուրդ, կաշի, փայտանյութ: Արտահանում էին գերազանցապես արհեստագործական պատրաստի արտադրանք՝ գործվածքներ, հագուստ, կահկարասի, ինչպես նաև անագ, որը բերվում էր հեռավոր Աֆղանստանից:

Հյուսիսային Միջագետքի, Հյուսիսային Սիրիայի ու Փոքր Ասիայի հասարակությունների անդորրն ու ներդաշնակ զարգացումը սկսեցին խախտել Առաջավոր Ասիայում հայտնված նոր, ռազմատենչ դերակատարներ՝ ամորեացիները:

Սեմախոս ամորեացիները, որոնք Ք. ա. III հազ. վերջերից սկսել էին զանգվածաբար ներհոսել դեպի Սիրիա, ապա և կենտրոնական ու հարավային Միջագետք, աստիճանաբար մոտեցան Հյուսիսային Միջագետքին: Ճանապարհին հիմնելով իրենց ցեղապետությունները՝ նրանք պարբերաբար ձեռնարկում էին ավարառական արշավներ, ինչը վտանգում էր առևտուրը, խախտում տարբեր պետական կազմավորումների ու էթնիկ խմբերի միջև հաստատված հարաբերությունները: Աշշուրցիների առաջին ռազմական արշավանքները դեպի արևմուտք՝ Եփրատի միջին հոսանքի շրջան, և Տիգրիսի հոսանքով դեպի հարավ մեծ արդյունքների չհանգեցրին:

Առկա խնդիրներին գումարվեց նորը՝ Մարի պետության վերելքը Եփրատի միջին հոսանքում: Մարի քաղաքը, ուր հաստատվել էր ամորեական հարստությունը,

դարձավ Աշտուրի գլխավոր առևտրական մրցակիցը: Արդյունքում Աշտուրի արևմտյան առևտուրը հայտնվեց կործանման եզրին: Պատահական չէ, որ փոքրասիական կարումների տեքստերից հայտնի Աշտուրի արքաների անունները սահմանափակվում են դեռևս գահաժառանգ, ապագա Պուգուր-Աշտուր II-ի հիշատակությամբ (Ք. ա. մոտ 1840-ական թթ.), իսկ այս շրջանի վերջին սեպագիր նյութը Պուգուր-Աշտուր II-ի որդի Նարամսինի մի արձանագրված կնիք է (Ք. ա. մոտ 1820-ական թթ.):

Առևտրական գաղութների անկումով սկսվեց նաև Աշտուրի քաղաքական վայրէջքը: Նարամսինից հետո իշխած Էրիշում II-ի կառավարումով աքքադական հարստությունն Աշտուրում սպառվեց:

2. ՀԻՆ ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԱՇՇՈՒՐ

Ամորեական ցեղերի ակտիվությունը Սիրիայում և Միջագետքում ուղեկցվում էր այս շրջաններում ամորեացիների խոշոր գանգվածների հաստատումով: Տեղի պետական կազմավորումները սկսեցին օգտագործել կիսաքոչվոր ռազմունակ ամորեացիների ուժը: Աստիճանաբար աճեց նաև ամորեացիների քաղաքական դերակատարությունը, Սիրիայի և Միջագետքի թագավորությունների մեծ մասում անգամ հաստատվեցին ամորեական հարստություններ: Նման երկրներից էին Քատնան, Խալպան, Մարին, Բաբելոնը, Լարսան, Էշնունան: Ամորեական հարստություն հաստատվեց նաև Էկալատումում:

Շամշի-Ադադ (Շամշի-Ադդու) I-ը Էկալատումի արքա Իլա-կարկարուի որդին էր՝ Խանա կամ Նումիա ցեղից: Հաջորդելով իր եղբայր Ամինումին՝ Շամշի-Ադադը ժառանգեց հայրական գահը՝ դառնալով Էկալատումի արքա (Ք. ա. 1833-1776 թթ.):

Սկզբնապես Շամշի-Ադադը փոքր ցեղապետության առաջնորդ էր և կախման մեջ էր գտնվում Էշնուննա պետությունից: Ք. ա. 1818 թ. խոյս տալով Էշնուննայի արքա Նարամսինի՝ հյուսիսային Սիրիա իրագործած արշավանքից՝ նա ստիպված էր լքել Էկալատումն ու ապաստանել Բաբելոնում: Որոշ ժամանակ անց վերահաստատվելով Էկալատումում՝ Շամշի-Ադադը սկսեց այստեղից հարձակումներ գործել հարևան տարածքների վրա, հատկապես Աշտուրի, որի գործությանը ծանր հարված էր հասցրել Նարամսինը: Էկալատում վերադառնալուց երեք տարի անց՝ Ք. ա. 1808 թ., Շամշի-Ադադը նվաճեց Աշտուրը:

Հնարավոր է, որ Շամշի-Ադադն իրականում «հրավիրյալ» արքա էր: Ռազմական զգալի ուժ ունեցող առաջնորդի իշխանության հաստատմամբ շահագրգռված էր Աշտուրի վերնախավը, որը դժգոհ էր աքքադական հարստության անգործությունից: Տարածաշրջանում տիրող անապահովության պայմաններում ամորեացի առաջնորդի ռազմական ներկայությունը կապահովեր առևտրական ճանապարհների անվտանգությունը, իսկ առևտուրը Աշտուրի տնտեսության հիմքն էր:

Աշտուրում հաստատվելուց հետո Շամշի-Ադադը սկսեց սիրաշահել բնակչությանը՝

ձեռնամուխ լինելով Աշտուր աստծո տաճարի վերանորոգմանը, ընդունելով նաև այս աստծո պաշտամունքը: Ձգտելով վերահսկել առևտրական մայրուղիները՝ նա սկսեց գրավել Եփրատի վտակներ Խաբուր և Բալիխ գետերի ավազանում ընկած քաղաքները: Որոշակի դադարից հետո վերսկսվեց Աշտուրի փոքրասիական կարումների կյանքը: Խաբուրի և Բալիխի վերին ավազանը ամորեացիներին գրավում էր նաև երկրագործության համար նպաստավոր հողերով և հարուստ արոտավայրերով: Նվաճելով Շեխնա քաղաքը՝ նա այն դարձրեց արևմուտքում իր հենարաններից մեկը և արքունի նստավայր՝ վերանվանելով Շուբաթ-Էնլիլ (ներկայիս Թել Լեյլան հնավայրը):

Այս տարածքների նկատմամբ անտարբեր չէին նաև Սիրիայի այլ ցեղապետություններ, մասնավորապես Յամհադը: Այստեղ իր գերիշխանությունն էր փորձում հաստատել նաև Մարիի արքա Յախդուն-Լիմը: Երկու ուժերի ծավալումը նույն ուղղությամբ հանգեցրեց երկարատև պայքարի, ինչն ավարտվեց Շամշի-Ադադի հաղթանակով: Ք. ա. 1792 թ. նա նվաճեց վաճառաշահ Մարի քաղաքը:

Իր իշխանությունն օրինականացնելու նպատակով Շամշի-Ադադն ընդունեց Մարիի հովանավոր աստվածության՝ Իտուր-Մերի պաշտամունքը՝ Մարիի նվաճումը համարելով իբրև իրագործված այս աստծո կամքով: Մարիում ձևականորեն իշխանության թողնվեց Յախդուն-Լիմի դուստրը, որը կնության տրվեց Շամշի-Ադադի կրտսեր որդի Յասմախ-Ադադին: Ամորեացի արքայի կողմից մասամբ հնագանդեցվեցին նաև Սիրիայում հաստատված արևմտասեմական ցեղերը: Արշավանքներից մեկի ժամանակ նրա զորքերը դուրս եկան Միջերկրական ծով, ինչը նշանավորվեց ծովի ափին հաղթակոթող կանգնեցնելով:

Շամշի-Ադադի մյուս հակառակորդը Յամհադի թագավորությունն էր՝ Խալպու (Հալեպ) կենտրոնով, ուր ապաստանել էր Մարիի արքայի որդին՝ Ջիմրի-Լիմը: Շամշի-Ադադը դաշնակցեց Կարգամիսի թագավորի հետ, որը դրա դիմաց ստացավ Մարիի հետ առանց մաքսատուրքի առևտուր անելու հնարավորություն: Ձգտելով չեզոքացնել Յամհադի արքա Սումու-Էպուխին, որը միաժամանակ Բաբելոնիայի արքա Համմուրապիի դաշնակիցն էր, Շամշի-Ադադը փորձեց նրան մեկուսացնել՝ արշավելով Յամհադի և Բաբելոնիայի միջև ընկած Քատնա՝ Կենտրոնական Սիրիայում: Քատնան ռազմակալվեց, այստեղ թողնվեց կայազոր, իսկ նրա արքա Իշխի-Ադադի հետ կնքվեց դաշնագիր, որն ամրապնդվեց նրա դստեր և Յասմախ-Ադադի ամուսնությամբ:

Շամշի-Ադադն արևմուտքում կառավարիչ թողեց Յասմախ-Ադադին, որի նստավայրն էր Մարին: Արքայի ավագ որդին՝ Իշմե-Դագանը, որպես կառավարիչ թողնվեց Էկալատում քաղաքում: Ըստ էության ստեղծվեց «եռապետություն»՝ Շամշի-Ադադի գերագահությամբ: Նա սկսեց կրել «Մեծ արքա» տիտղոսը, մինչ իր որդիները կոչվում էին «արքա»: Սակայն իրականում նրանք պարզապես բարձրաստիճան պաշտոնյաներ էին և պարտավոր էին վճարել հարկեր, ինչպես նաև իրենց զորքերով մասնակցել մեծ արքայի արշավանքներին: Որպես նորաստեղծ տերության կենտրոն՝ Շամշի-Ադադն ընտրեց Շուբաթ-Էնլիլ քաղաքը, ուր արքան սովորաբար անցկացնում էր տարվա մեծ մասը:

Հյուսիսային Սիրիայում իր գերիշխանությունը հաստատելուց հետո Շամշի-Աղաղն ուղղվեց արևելք: Այստեղ նրա գլխավոր հակառակորդը Էշնուննայի հզոր թագավորությունն էր՝ Տիգրիսի վտակ Դիյալայի ստորին հոսանքում: Ք. ա. 1783-1782 թթ. Էշնուննայի արքա Դադուշայի զորքերը գրավեցին Սուխու երկիրը, սկսեցին սպառնալ անգամ Մարիին: Սակայն Շամշի-Աղաղին հաջողվեց կարգավորել հարաբերությունները Էշնուննայի հետ: Իր արևելյան արշավանքը սկսելուց առաջ նա մեկնեց Աքքադ, որը գտնվում էր Էշնուննայի տիրապետության տակ, և այստեղ դաշինք կնքեց Դադուշայի հետ՝ ապահովելով նրա զինական աջակցությունը: Ք. ա. 1781 թ. նա արշավեց Տիգրիսի և Զագրոսյան լեռների միջև ընկած տարածք՝ ընդդեմ Առապիսա, Կարրա և Նուրուզգում երկրների:

Առաջինը նվաճվեց Առապիսան (ներկայիս Քերքուբի մոտ): Այնուհետև Շամշի-Աղաղը շարժվեց դեպի Կարրա (հետագայի Արբելա/ ներկայիս Ըրբիլի մոտ): Առապիսան նվաճելուց անմիջապես հետո Շամշի-Աղաղն Իշմե-Դագանի գլխավորությամբ 60 000-անոց զորաբանակ ուղղեց դեպի Նուրուզգում: Խուրրիաքնակ այս երկիրը՝ Նուրուզգում և Նինվե կենտրոններով, արշավանքի գլխավոր նպատակակետն էր: Արքայի ավագ որդու առաջնորդած բանակը հայտնվեց Նինվեի պարիսպների տակ: Քաղաքը պաշարվեց, ամրեական զորքերը սկսեցին ավարառության ենթարկել շրջակա տարածքները: Նինվեն չկարողացավ երկար դիմադրել:

Ցույց տրված դիմադրության համար Նինվեն պատժվեց, ավելի քան հազար մարդու Իշմե-Դագանի հրամանով ենթարկեցին մահապատժի, ողջ մնացած բնակչությունը տեղահանվեց: Արքայազնի ձեռքն ընկավ Նինվե քաղաքի Էշտար աստվածուհու տաճարի սպասարկող անձնակազմը, որոնց թվում էր Նուրուզգումի արքա Կիպրամի դուստրը:

Նինվեի նվաճմանը հաջորդեց Նուրուզգումի պաշարումը, որը տևեց շուրջ մեկ տարի: Շամշի-Աղաղի դրությունը բարդանում էր նրանով, որ անսպասելի ապստամբեցին արքայազն Յասմախ-Աղաղի բանակում գտնվող ամրեական Յա՛իլանում ցեղի ռազմիկները: Տեղեկանալով այդ մասին՝ Շամշի-Աղաղը հրամայեց «նույն զիշերը» նրանց բոլորին սպանել: Դրան հաջորդեց Յա՛իլանում ցեղի կոտորածը: Յա՛իլանում ցեղի նկատմամբ իրականացված հաշվեհարդարը դիտվեց այնքան կարևոր, որ այդ տարին անվանակոչվեց այս իրադարձության անունով:

Ք. ա. 1780 թ. Շամշի-Աղաղի զորքերը երկու ուղղություններով շարժվեցին դեպի Նուրուզգում: Բանակներից մեկը Իշմե-Դագանի գլխավորությամբ պատերազմում էր ամրեական Ախագում ցեղի առաջնորդ Յաշուր-Աղաղի դեմ: Երկրորդ բանակը շարժվեց դեպի Նուրուզգում և վերստին պաշարեց քաղաքը, որը շուտով գրավվեց: Նուրուզգումը կցվեց տերությանը, իսկ նրա ռազմիկներին ամրեացիները սկսեցին օգտագործել իրենց մղած պատերազմներում:

Շամշի-Աղաղը ձգտում էր վերականգնելու Աքքադի թագավորությունը կամ առնվազն իրեն համարում էր այդ թագավորության ժառանգորդը: Աշշուրի նվաճումից հետո նա իրեն սկսեց կոչել այդ քաղաքի ensi, որը Աշշուրի կառավարիչների տիտղոսն էր Աքքադի թագավորության դարաշրջանում, իսկ ինքը սկսեց կրել Աքքադի

և աքքադացիների թագավոր տիտղոսը: Նրա հրամանով զոհաբերություններ էին իրականացվում Աքքադի արքաների արձանների մոտ՝ նրանց ներառելով իր նախնիների շարքը, իսկ կյանքի վերջում նա հանդիսավոր ուխտագնացության մեկնեց դեպի Աքքադ: Այդ իրադարձությունն այնքան նշանավոր էր, որ Մարիում տարին անվանակոչվել էր այդ իրադարձության անունով:

Այս արշավանքների արդյունքում ստեղծվեց լայնածավալ տերություն, որն ընդունված է կոչել «հին ասորեստանյան թագավորություն»: Շամշի-Աղաղի իշխանությունը տարածվում էր Սիրիայից մինչև Զագրոսյան լեռներ: Թեև իր արձանագրություններում նա շարունակում էր իրեն համարել «Էկալլատումի արքա», բայց չվարանեց հավելել նաև «մեծ արքա», «տիեզերքի արքա» տիտղոսները: Աշշուրում Շամշի-Աղաղը կառավարեց 33 տարի: Նրա անունը հետագայում ասորեստանյան արքաները ներառեցին իրենց նախնիների շարքում:

Ստեղծելով տարածքային կայսրություն՝ Շամշի-Աղաղը ձեռնամուխ եղավ իրագործելու վարչաքաղաքական փոփոխություններ: Աճեց արքայական իշխանության դերը, ստեղծվեց պետական կառավարման ապարատ՝ մեծաթիվ պաշտոններով: Երկիրը բաժանվեց փոխարքայությունների, ուր կառավարիչները արքայական ընտանիքի անդամներն էին: Հավանաբար գոյություն ունեին առավել փոքր վարչամիավորներ: Դրանց կառավարիչները, որոնք կոչվում էին aapi'um և merhom, տարբերակվում էին իրենց գործառույթներով: Առաջինը երկրագործ համայնքի կառավարիչն էր, մինչդեռ երկրորդը վերահսկում էր տարբեր քոչվոր ցեղերի: Կար նաև կառավարման միջին և ցածր օղակներում զբաղված մեծաթիվ պաշտոններ: Բացի այդ, հաստատվեց միասնական հարկային համակարգ, կանոնակարգվեցին աշխատանքային պարհակները և այլն:

Շամշի-Աղաղի ձեռքն անցավ ողջ միջնորդ առևտուրը Հայկական լեռնաշխարհից մինչև Պաղեստին ձգվող հատվածում: Առևտրական նպատակներով նա Ք. ա. 1777 թ. պատվիրակություն ուղարկեց անգամ դեպի հեռավոր Դիլմուն (ներկայիս Բահրեյնը):

Շամշի-Աղաղի տերության մեջ ամեն ինչ չէ, որ հարթ էր ընթանում: Զբաղեցնելով ընդարձակ տարածքներ՝ ամրեացիներն ի գորու չեղան յուրացնելու դրանք: Իրենց իշխանությունը նրանք ապահովում էին զուտ ռազմական ներկայության շնորհիվ, ամրեական կայսրոսները ցրված էին երկրի տարբեր հատվածներում: Մշտապես գտնվելով պատերազմների մեջ՝ Շամշի-Աղաղը սկսեց սուր կերպով զգալ ռազմիկների կարիք՝ ստիպված լինելով բանակը համալրել ոչ սեմախոս տարրերով: Դրան գումարվեց Ք. ա. 1780 թ. Եփրատի հովտում բռնկված համաճարակը, որը բնակչությունից խլեց հսկայական մարդկային զոհեր: Բացի այդ, խնդիրներ էին ծագում Շամշի-Աղաղի և նրա կրտսեր որդու՝ Յասմախ-Աղաղի միջև: Արքային դուր չէր գալիս որդու վարած պալատական ճոխ կյանքը, կառավարման գործերից մեկուսացումը: Խնդիրներ էին ծագում նաև եղբայրների միջև: Երբ նվաճված տարածքները Շամշի-Աղաղը դնում էր իր այս կամ այն որդու իշխանության տակ, միշտ չէ, որ նրա վճիռը բարյացակամությամբ էր ընդունվում մյուս որդու կողմից:

Բարդ էր նաև արտաքին քաղաքական իրադրությունը: Յամհադի դեմ շարունակվող պատերազմին շուտով գումարվեց նոր պատերազմը Էշնուննայի դեմ: Դադուշային հաջորդած Էշնուննայի արքան խզեց դաշինքը Շամշի-Ադադի հետ և վերսկսեց պատերազմը: Այնինչ վերելք էր ապրում Բաբելոնիան Համմուրապիի օրոք՝ սպառնալով հին ասորեստանյան տերությանը:

Շամշի-Ադադը մահացավ Ք. ա. 1776 թ.՝ 75 տարեկան հասակում, չի բացառվում՝ ընկնելով ռազմադաշտում: Նրա կերտած տերությունը սկսեց քայքայվել: Դեռևս իր կենդանության օրոք Շամշի-Ադադը երկիրը փաստացի բաժանել էր երկու որդիների միջև: Իշմե-Դագանը տիրում էր Էկալլատումին և տերության արևելյան հատվածին՝ Տիգրիսից մինչև Զագրոսյան լեռներ, Յասմախ-Ադադի իշխանության տակ էր գտնվում Եփրատի միջին ավազանը, Խաբուր և Բալիխ գետերի ստորին հոսանքի շրջանը, և Սուխու երկիրը՝ Բաբելոնիայից հյուսիս-արևմուտք:

Ք. ա. 1776 թ. սկսած՝ Յասմախ-Ադադն աղբյուրներում դադարում է հիշատակվելուց: Նրա փոխարեն Համմուրապիի գինական աջակցությամբ Մարիի գահին բազմեց տեղի հին արքայատան անդամներից մեկը՝ Մարիի թագավոր Յախոուն-Լիմի որդի Զիմրի-Լիմը: Յասմախ-Ադադը, հնարավոր է, սպանվեց: Հայտնի է, որ նրա կինը՝ Քատնայի արքայադուստր Դամ-Խուրաձուն, ամուսնացավ Զիմրի-Լիմի հետ: Ամորեացիների կողմից նվաճված Հյուսիսային Սիրիայի պետական կազմավորումները վերագտան իրենց անկախությունը: Մարիի նոր վերելքը ծանր հարված էր Աշշուրի տնտեսական հզորությանը: Վերջինս կտրվեց իր փոքրասիական կարումներից: Թեև աշշուրցի վաճառականներն առժամանակ դեռ շարունակում էին այստեղ գործել, բայց, ամենայն հավանականությամբ, ապրանքների հոսքն արդեն ուղղված էր դեպի Մարի, Քատնա և Բաբելոնիա՝ շրջանցելով Աշշուրը: Շուտով աշշուրյան ավանդույթներն այստեղ ընդհանրապես դադարեցրին իրենց գոյությունը:

Շամշի-Ադադի տերությունից գոյատևեց միայն Իշմե-Դագանի թագավորությունը: Ասորեստանյան արքայացանկերը վերջինիս համար նշում են շուրջ 40-ամյա գահակալության շրջան: Իշմե-Դագանը չկարողացավ երկար պահպանել իր թագավորությունը: Աշշուրից հայտնաբերված արձանագրություններից մեկում ոմն Պուզուր-Սին հայտնում է «չարիքը խափանելու», Շամշի-Ադադի հարստությունը տապալելու և «ճշմարիտ իշխանություն» հաստատելու մասին: Հնարավոր է, որ նա ներկայացնում էր Աշշուրի ոչ ամորեական վերնախավը:

Աշշուրը չկարողացավ երկար պահել իր անկախությունը: Այս ուղղությամբ, այն է՝ դեպի Սուբարտու (Հյուսիսային Միջագետք և Հայկական լեռնաշխարհի հարավ), արշավանք ձեռնարկեց Համմուրապին Ք. ա. 1764-1763 թթ. սահմաններում: Արշավանքը կրկնվեց Ք. ա. 1756 թ., իսկ քիչ ավելի ուշ Աշշուրն ու Նինվեն արդեն հիշատակվում են որպես բաբելոնյան տարածքներ: Այստեղից հայտնի են հին բաբելոնյան ներկայության անառարկելի հետքեր: Գրեթե ողջ Հյուսիսային Միջագետքը հայտնվեց բաբելոնյան գերիշխանության տակ:

Հին բաբելոնյան հարստության անկումից հետո Աշշուրը հայտնվեց քաղաքական նոր իրողությունների առջև: Փոքր Ասիայում գերիշխանության հասավ Խեթա-

կան պետությունը, և Աշշուրի կարումներն ընկան խեթերի տիրապետության տակ: Այստեղից՝ Քանեսից և Անկուվայից, հայտնի են խեթական առաջին արքաների և արքայազների անունները՝ Պիթխանա, Անիտտա, Պերուվա և այլն: Դեպի Հյուսիսային Սիրիա խուրրիների նոր հոսքը հանգեցրեց տեղի խուրրիական պետական կազմավորումների հզորացմանը՝ որոշ ժամանակ անց ծնունդ տալով միտանական թագավորությանը: Միաժամանակ դեպի Սիրիա սկսեց առաջանալ Եգիպտոսը: Տիգրիսից արևելք ձևավորվեցին խուրրիական մի քանի թագավորություններ, որոնցից առավել հզորը Առապխայի պետությունն էր: Աշշուրը վերածվեց անկլավի խուրրիական աշխարհի մեջ: Միտանների արքա Սաուսադատտարի արշավանքներից մեկի ժամանակ Աշշուրը գրավվեց և թալանվեց: Միտաններիցները չվերացրին տեղի արքայատան իշխանությունը, այլ քաղաքում թողնվեց հատուկ պաշտոնյա, որը վերահսկելու էր իշխանությունների գործունեությունը: Սկսվեց գրեթե 150 տարի տևած միտանական գերիշխանության դարաշրջանը (Ք. ա. XV դ. սկիզբ – XIV դ. կեսեր):

Այս շրջանին վերաբերող տեղեկությունները չափազանց սուղ են: Թեև ասորեստանյան արքայացանկերը պահպանել են տասնյակ կառավարիչների անուններ, որոնք հաջորդել են Իշմե-Դագանին, սակայն իրականում նրանց գործունեության որևէ հետք հայտնի չէ: Արքայացանկերն առանձնացնում են նրանց որպես «ոչ մեկի որդի», այսինքն՝ արքայական ծագում չունեցող: Նրանց մի մասի անունը օտարահունչ է, ըստ այդմ՝ ենթադրվել է, որ Աշշուրում ինչ-որ մի պահ իշխանությունը կարող էր անցնել Զագրոսյան լեռնականներին, մասնավորապես՝ լուլուբեյներին: Միայն Շարմա-Ադադ II-ից հետո է վերադարձ նկատվում Աշշուրի հին ավանդույթներին, իսկ արքայանունները կրկնում էին նախորդներին: Հաջորդաբար կառավարում են Էրիշում III-ը, Շամշի-Ադադ II-ը, Իշմե-Դագան II-ը և այլք: Այս արքաների գործունեությունը լուսաբանող տեքստերը փոքրաթիվ են, եղածները՝ կաղապարային: Նույնատիպ տեքստեր են պահպանվել Պուզուր-Աշշուր III-ից: Հայտնի է նաև, որ այս արքան պայմանագիր է կնքել կասսիտական Բաբելոնիայի արքա Բուրնա-բուրիաշ I-ի հետ (Ք. ա. XVI դ. վերջ): Հիշյալ արքաների թողած տեքստերը վկայում են, որ նրանց օրոք Աշշուրի հնարավորությունները որոշակիորեն աճել էին՝ թույլ տալով ձեռնամուխ լինել ավերված տաճարների և քաղաքային պարիսպների վերակառուցմանը: Այս առումով հետագա արքաները հաճախ շեշտադրում էին Պուզուր-Աշշուր III-ի անունը:

Ենթադրվում է, որ Աշշուրում ինչ-որ մի պահ միտանական գերիշխանությանը փոխարինեց կասսիտականը. կասսիտ արքաները Աշշուրի տեղապահներին համարում էին իրենց հպատակները: Սակայն կասսիտական գերիշխանությունը մակերեսային էր: Ք. ա. XV դ. սկզբներին Աշշուրում տապալվեց Աշշուր-շադունի I-ը, և գահն անցավ նրա ազգականներից Աշշուր-ոարի I-ին, որն էլ դարձավ նոր հարստության հիմնադիրը: Հետագա արքաները երբեմն նրանից էին սկսում իրենց ծագումնաբանությունը: Սկսվեց միջին ասորեստանյան թագավորության դարաշրջանը:

ԱՍՈՐԵՍԱՆԸ Ք. Ա. XIV-IX ԴԱՐԵՐՈՒՄ

1. ՄԻՋԻՆ ԱՍՈՐԵՍԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԵԼՔԸ

Աշշուրի պետության նկատմամբ Միտաննիի քաղաքական ազդեցությունը սկսեց նվազել Ք. ա. XIV դ. կեսերից՝ խեթա-միտաննական տևական պատերազմների շրջանում: Աշշուրը, որի արքա Աշշուրուբալիտ I-ը կարողացել էր զգալիորեն վերականգնել պետության ինքնուրույնությունը, նույնիսկ իր մասնակցությունը բերեց Միտաննիի նվաճմանը: Համագործակցելով իր հյուսիսային հարևան Ալգիի (հայկ. Աղձնիք) հետ՝ նա գրավեց վերջինիս պատկանող որոշ շրջաններ: Աշշուրուբալիտը ռազմական ուժով միջամտում էր Բաբելոնիայում ընթացող դինաստիական պայքարին և պարբերաբար փորձում էր դիվանագիտական հարաբերություններ հաստատել Եգիպտոսի հետ¹: Փարավոն Ամնհոտեպ IV-ին (Էխնաթոն) ուղղված նրա երկու նամակները վկայում են ասորեստանյան արքայի անթաքույց ձգտումների մասին՝ համարվելու ժամանակի առաջատար ուժերին (Խաթթի, Եգիպտոս, Բաբելոնիա) համարժեք պետություն:

Նրա անմիջական հաջորդների օրոք Ասորեստանը արագորեն սկսեց վերածվել լուրջ ռազմաքաղաքական ուժի, որին զգալիորեն նպաստեց Միտաննիի նվաճումից հետո նոր թափ ստացած խեթա-եգիպտական տևական հակամարտությունը, ինչպես նաև կասսիտական Բաբելոնիայի երբեմնի հզորության անկումը: Այս շրջանում Ասորեստանի արքաների արտաքին քաղաքականության հիմնական խնդիրներն էին հարավում Բաբելոնիայի դեմ առձակատումը, ինչպես նաև հյուսիսի և արևմուտքի մանր քաղաքական միավորների հսկողության տակ գտնվող և օգտա-

կար հանածոներով հարուստ տարածքների նվաճումը: Տարածքային զավթումները պայմանավորված էին ոչ այնքան այս կամ այն արքայի անձնական հատկություններով կամ տվյալ պատմական ժամանակահատվածում Ասորեստանի հարևանների թուլությամբ, որքան պետության տնտեսական կամ քաղաքական շահերով, որոնք բխում էին Հյուսիսային Միջագետքի այս պետականության կայացման և հետագա զարգացման առանձնահատկություններից:

Ասորեստանի տնտեսության հիմքը կազմող տարանցիկ փոխանակային առևտուրը (և դրա անբաժանելի մասը հանդիսացող արհեստագործությունը), որը պայմանավորված էր նրա դիրքով՝ արևելք-արևմուտք և հյուսիս-հարավ տանող ճանապարհների խաչմերուկում, պահանջում էր դեպի արտաքին աշխարհ դուրս եկող ուղիների նկատմամբ կայուն վերահսկողության հաստատում, ինչպես նաև հնարավորություն անխափան հաղորդակցություն ապահովելու հումքի աղբյուրների հետ: Ք. ա. II հազ. սկզբին Աշշուրի պետության շրջանում պետությունը զարգանում էր վերընթաց ուղիով՝ շնորհիվ հենց այս երկու պայմանների առկայության: Սակայն հետագայում Միտաննիի, այնուհետև Խեթական տերության հզորացման հետևանքով Ասորեստանը զրկվեց թե՛ մեկից, թե՛ մյուսից: Ք. ա. XVIII դ. վերջերից ընդհուպ մինչև Աշշուրուբալիտ I-ի գահակալումն ընկած շուրջ չորսդարյա ժամանակահատվածում Ասորեստանը չկորցրեց իր տնտեսական ներուժը, սակայն ստիպված էր պարփակվելու իր բնական սահմանների մեջ, և այն իրագործելու միակ միջոցը ռազմական ուժով քաղաքական և տնտեսական շահերի իրականացումն էր: Տարածքային զավթումների գաղափարը, սկսած Աշշուրուբալիտից, դառնում է Ասորեստանի պետության գերխնդիրը և յուրաքանչյուր արքայի սրբազործված պարտականությունների անբաժանելի մասը՝ արտացոլվելով նույնիսկ նրա տիտղոսաշարում: Այսուհետև ընդհուպ մինչև պետության անկումը՝ Ք. ա. 612 թ., Ասորեստանի պատմության հիմնական բնորոշ առանձնահատկությունը դառնում է ծավալապաշտությունը:

Անցումը ակտիվ արտաքին քաղաքականության ուղեկցվում էր արքայական իշխանության հզորացմամբ, որի վկայությունը Ադադնիրարի I-ի կողմից «տիեզերքի արքա» տիտղոսի ընդունումն էր: Վերջինս այսուհետև ամրագրվում է ասորեստանյան արքաների տիտղոսաշարում: Ընդ որում՝ Միջին՝ ասորեստանյան փուլում Ասորեստանի արտաքին քաղաքականության կարևոր առանձնահատկություններից մեկը նվաճված տարածքների նկատմամբ ռազմավարչական կազմակերպման անվիճելի գերակայությունն էր: Սովորաբար ասորեստանցիները չէին փորձում (համենայնդեպս այդ մասին հստակ տվյալներ չկան) նվաճված երկրներում իրենց գերիշխանությունը ամրապնդել կրոնագաղափարախոսական և մշակութային ինտեգրման միջոցով:

Համեմատաբար հեռու ընկած երկրների հպատակեցման նպատակով կիրառվում էր վերջիններիս արքաների/կառավարիչների հետ պարտադրված պայմանագրեր կնքելու պրակտիկան: Որպես կանոն՝ այդ պայմանագրերում գրեթե արտացոլված չէին Ասորեստանի արքայի պարտավորությունները: Դրանք իրենց ուղղվածությամբ միակողմանի էին՝ ամրագրելով միայն տվյալ պետության պարտավորու-

¹ Ասորեստանի Միջին թագավորության պատմության աղբյուրները տես Grayson A.K., *Assyrian Royal Inscriptions*. vol. I, Wiesbaden, 1972; Grayson A.K., *The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods / vol. I: Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC)*, vol. I, Toronto - Buffalo - London, 1987; Grayson A.K., *The Royal Inscriptions of Mesopotamia. Assyrian Periods / vol. 2: Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114-859 BC)*, Toronto-Buffalo-London, 1991; քաղաքական պատմության խնդիրների մասին՝ Weidner E., *Die Kämpfe Adad-nirari's I gegen Hanigalbat*, AfO 5, 1928-1929, 89ff.; Weidner E., *Die Annalen des Königs Assurbelkala von Assyrien*, AfO 6, 1930-1931, 75ff.; Weidner E., *Die Feldzüge und Bauten Tiglatpileser's I*, AfO 18, 1958, 342ff.; Munn-Rankin J.M., *Assyrian Military Power 1300-1200 B.C.* - In: *САН II/2*, 1967, 274ff.; Арутюнян Н.В., *Бийинили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики*, Ереван, 1970, 11 слл.; Wiseman D.J., *Assyria and Babylonia c.1200-1000 B.C.* - In: *САН II/2*, 1975, 443ff. և այլն:

թյունները: Այդ է պատճառը, որ վերոհիշյալ պայմանագրերը կարելի է բնութագրել որպես կախյալ արքայի «երդում»՝ տրված Ասորեստանի արքային:

Իսկ արդեն կայսերական փուլում (Ք. ա. IX–VII դդ.) Ասորեստանի ծավալապաշտական քաղաքականության իրականացման ուղիներից մեկն էր տեղերում խամաճիկային իշխանությունների ստեղծումը: Ռազմական եղանակով կամ կամավոր Ասորեստանի գերիշխանությունն ընդունած և նրա հանդեպ լոյալություն դրսևորող արքաները օգտվում էին ասորեստանյան արքայի «բարի կամքի» դրսևորումներից (տարածքային հավելումներ հարևանների հաշվին, ռազմաքաղաքական աջակցություն գահի հավակնորդների նկրտումների դեմ և այլն): Լայնորեն կիրառվում էր նաև պատանդներ վերցնելու պրակտիկան: Տեղական արքայատոհմերի ներկայացուցիչներից (հիմնականում՝ արքայազներ) պատանդներ էին վերցվում, որոնք, որոշ ժամանակ ապրելով ասորեստանյան արքունիքում, այնուհետև պարտադրվում էին որպես այդ երկրների արքաներ՝ դրանով իսկ ապահովելով ասորեստանամետ դիրքորոշում: Այս ուշ փուլում, իհարկե, լիուլի դրսևորվում էր նաև կայսերական քարոզչական մեքենան. վերոհիշյալ պարտավորություններով կապված կախյալ երկրների կառավարիչների համար Ասորեստանի արքայի հետ կապը ներկայացվում էր որպես նրանց տրված առանձնահատուկ շնորհ, որ բխում էր իրենց իսկ շահերից:

Վերջապես տարածքային զավթումները հաճախ ուղեկցվում էին տեղական բնակչության ստվար զանգվածների տեղահանությամբ, որը նպատակ ուներ թուլացնելու երկրների դիմադրունակությունը: Տեղահանման ենթակա բնակչության սոցիալական կազմը ինքնին արդեն վկայում է դրա նպատակների մասին: Դրանք սովորաբար տեղական ազնվականության ներկայացուցիչներն էին (արքայատոհմի անդամներ, ռազմական ավագանի, որակյալ զինվորներ), արհեստավորներ: Տեղահանության քաղաքականությունը հատկապես կարևոր դեր ուներ Ք. ա. IX–VI դդ. Աշշուրնաձիրպալ II–ից մինչև Սինախներիբ (Սին–ախսե–երիբա) ընկած ժամանակահատվածում, երբ ընդհանուր առմամբ տեղահանվեց շուրջ 4,5 միլիոն մարդ տեղությանը ենթակա տարբեր երկրներից, որը նպատակ ուներ թուլացնելու երկրների դիմադրունակությունը: Տեղահանման ենթակա բնակչության սոցիալական կազմը ինքնին արդեն վկայում է դրա նպատակների մասին: Դրանք սովորաբար տեղական ազնվականության ներկայացուցիչներն էին (արքայատոհմի անդամներ, ռազմական ավագանի, պրոֆեսիոնալ զինվորներ), արհեստավորներ:

Աղաղնիրարիի հաջորդ խոշոր ռազմական ձեռնարկումը արշավանքն էր դեպի Խեթական տերության վերահսկողության տակ գտնվող Միտաննի: Հաղթելով Միտաննիի արքա Շատտուարա I–ին՝ նա ասպատակեց մի շարք միտաննական քաղաքներ (Տաիդու, Սուրու, Կախատ, Ամասակու և այլն), այդ թվում՝ մայրաքաղաք Վաշշուկաննին: Ասորեստանյան զորքը հասավ մինչև Եփրատի մեծ ոլորանը՝ Կարգամիսի մոտ: Աղաղնիրարիի միտաննական արշավանքը պետք է տեղի ունենար Քաղնեի ձակատամարտից հետո՝ Խաթթիում Ուրիսի–Թեշուրի կառավարման շրջանում՝ Խաթթուսիլիս III–ի և նրա միջև լարված փոխհարաբերությունների ժամանակ: Թերևս հենց այդ պարագայով կարելի է բացատրել Ասորեստանի քացահայտ

մարտահրավերը խեթերին: Սրանով չավարտվեցին Աղաղնիրարիի միտաննական ձեռնարկումները: Որոշ ժամանակ անց Շատտուարայի որդի Վասաշատտան փորձեց վերականգնել պետության անկախությունը և դիմեց խեթերին: Եգիպտոսի դեմ լարված հարաբերությունների պայմաններում խեթական արքա Խաթթուսիլիս III–ը չցանկացավ սրել հարաբերությունները Ասորեստանի հետ և օգնություն չուղարկեց: Վասաշատտան պարտվեց և գերեվարվեց Ասորեստան:

Միտաննիի նկատմամբ Ասորեստանի ձեռնարկումների շրջանում կարծես գծագրվում էր Առաջավոր Ասիայում քաղաքական ուժերի նոր վերադասավորում: Ք. ա. 1258 թ. խեթա–եգիպտական դաշնագրի կնքումից որոշ ժամանակ առաջ սկսեց ձևավորվել եգիպտա–ասորեստանյան միությունը՝ ի հակակշիռ խեթա–բաբելոնյանի: Խեթահպատակ Միտաննիի և Բաբելոնիայի նկատմամբ տարածքային նկրտումները նրան պիտի մերձեցնեին Խաթթիի հակառակորդ Եգիպտոսի հետ:

Այնուամենայնիվ, Աղաղնիրարին ի վիճակի չեղավ պահպանելու նորանվաճ Միտաննին: Այս իրադարձություններից որոշ ժամանակ անց՝ Աղաղնիրարիի օրոք կամ Սալմանասար I–ի (Շուլմանու–աշարեդ) կառավարման սկզբում, առայժմ չպարզված հանգամանքներում Խաթթուսիլիս III–ը վերականգնեց իր ազդեցությունն այստեղ:

Այսպիսով՝ Աղաղնիրարիի օրոք Ասորեստանը վստահորեն մուտք գործեց Առաջավոր Ասիայի մեծ քաղաքականություն: Շնորհիվ Միջագետքի հարավում և արևմուտքում կատարած նվաճումների՝ հիմքեր ստեղծվեցին հետագա տասնամյակներում էլ ավելի մեծ հեղինակության ձեռքբերման համար:

2. ՍԱԼՄԱՆԱՍԱՐ I ԵՎ ԹՈՒԿՈՒԼԹԻ–ՆԻՆՈՒՐՏԱԻ

Աղաղնիրարիին հաջորդեց նրա որդին՝ Սալմանասար I–ը (Ք. ա. 1263–1244 թթ.), որի ակտիվ արտաքին քաղաքականությունը կրկնում էր իր նախորդին, միայն թե անհամեմատ ավելի մեծ չափերով: Նրա առաջին գործողությունը հյուսիսի լեռնային շրջանների՝ Ուրուարի երկրների նկատմամբ տարած հաղթանակն էր, որին հաջորդեց այդ նույն շրջանում Մուծրի երկրի նվաճումը. վերջինիս պաշտամունքային կենտրոն Արինուն հիմնահատակ ավերվեց: Դրան հաջորդեց արշավանքն ընդդեմ Միտաննիի (տեքստում՝ Խանիգալրատ): Չնայած այս անգամ Միտաննի արքա Շատտուարա II–ին աջակցում էր խեթական մի զորաջոկատ և արամեական *ախլամու* կոչվող ցեղը, Սալմանասարը հասավ հաջողության և ավերելով 180 բնակավայրեր՝ հասավ մինչև Եփրատ՝ Կարգամիսի մերձակայքում: Ըստ աղբյուրի՝ թվով 14 400 ռազմագերիներ, նախապես կուրացվելով, տարվեցին Ասորեստան: Միտաննիի արքան հեռացավ երկրից՝ թերևս, հանգրվանելով Կարգամիսում:

Չնայած Միտաննիի ողջ տարածքը կցվեց Ասորեստանին, և նրա որոշ քաղաքներում նշանակվեցին ասորեստանյան կառավարիչներ, սակայն նվաճումը այնքան էլ հիմնավոր չէր, և պայքարը Խաթթիի ու Ասորեստանի միջև Միտաննիի համար

ավարտված չէր, ինչը երևում է Սալմանասարի հաջորդ Թուկուլթի-Նինուրտա I-ի տեքստերից:

Հյուսիսում Սալմանասարը ստիպված էր իր նախորդի պես պատժիչ արշավանք ձեռնարկել լեռնական ժողովուրդների, այս անգամ՝ կուտիների և լուլումեացիների դեմ, որոնք բնակվում էին Ուրուատրիից մինչև Կադմուխի ընկած շրջանում: Դատելով ըստ ամենայնի՝ կուտիների և նրանց հարևանների հնազանդեցումը ժամանակավոր բնույթ ուներ, և արքայի այս ձեռնարկումը ավելի շուտ կանխարգելիչ արշավանք էր բուն Ասորեստանի հյուսիսային շրջանները պարբերաբար ասպատակող լեռնականների դեմ:

Սալմանասարի օրոք Բաբելոնիայի հետ հարաբերությունների վերաբերյալ գրեթե տեղեկություն չկա: Հավանաբար, զբաղվածությունը Միտաննիի և հյուսիսի լեռն-ցիների հետ ռազմական ձեռնարկումներում թույլ չէին տալիս գործել այլ ճակատում ևս: Մանավանդ որ Բաբելոնիան տվյալ փուլում իրենից այլևս լուրջ ուժ չէր ներկայացնում, հատկապես իր ավանդական դաշնակից Խաթթիի հետ հարաբերությունների սրման և հարևան Էլամի դեմ առճակատման պայմաններում:

Սալմանասարին փոխարինեց նրա որդին՝ Թուկուլթի-Նինուրտա I-ը (թ. ա. 1243–1197 թթ.), որը իր գահակալման իսկ տարում ձեռնամուխ եղավ իր նախորդի նվաճումների ամրագրմանը, առաջին հերթին՝ հյուսիսում և զագրոսյան գոտում: Այս անգամ էլ առաջին հարվածը ստացան կուտիները, որոնք բնակվում էին Ուբումնու երկրում: Կուտիների հնազանդեցումից և նրանց առաջնորդներին Ասորեստան ուղարկելուց հետո արքան շարունակեց իր երթը՝ մեկը մյուսի հետևից քախվելով Տավրոսի գոտու քաղաքական միավորների հետ՝ Շարնիդա, Մեխրի և այլն, որից հետո ասորեստանյան զորքը մտավ Կադմուխի: Ըստ աղբյուրի՝ ողջ «Շուբարի երկիրը»՝ ընդհուպ մինչև Ալզի, հպատակվեց իրեն: Փորձելով խուսափել հարևանների ճակատագրից՝ Ալզիի արքա Էխլի-Թեշուբը իր ընտանիքի և մերձավորների հետ հեռացավ Նաիրի երկրի սահմանները: Թուկուլթի-Նինուրտան գրավեց և ավերեց նաև Ալզիի թվով 180 ամրացված բնակավայրեր:

Շուբարյան երկրներին հաջորդեց «Նաիրիի 40 երկրների» հնազանդեցումը, որոնք ընկած էին ընդհուպ մինչև «Վերին ծովը»:

Թերևս, վերոհիշյալ արշավանքների դրդապատճառը ոչ թե հյուսիսի լեռնային շրջանների նվաճումն էր, այլ պայմանավորված էր վերջիններիս հակասորեստանյան գործողություններով: Համենայնդեպս, Կադմուխի պարագայում հիշատակվում են նախկինում այստեղի բնակչության կողմից ասորեստանյան տարածքի ասպատակությունները: Նվաճված շրջաններում ասորեստանյան կայազորների տեղադրման կամ այստեղ վարչաքաղաքական որևէ միջոցառման մասին հիշատակությունը ստիպում է ենթադրել, որ սա ավելի շուտ կանխարգելիչ արշավանք էր, որի միջոցով Ասորեստանի արքան ձգտում էր որոշ ժամանակով հետ պահել լեռնականներին իրենց ասպատակություններից: Ամենուրեք հիշատակվում է գրավված տարածքների ավերումը և ռազմավարի առաքումը Ասորեստան: Միաժամանակ կարծես ավելի տրամաբանական է այն ենթադրությունը, որ շուբարյան երկրներում, այդ թվում նաև Սալմանասար I-ի կողմից նվաճված Միտաննիի որոշ շրջաններում պետք է ձևավոր-

ված լինեի հակասորեստանյան հզոր դաշինք, որը, հնարավոր է, ուներ Խեթական տերության աջակցությունը: Հիմքեր կան ենթադրելու, որ նույնիսկ Սալմանասարի արշավանքներից հետո էլ Միտաննիի մի մասում շարունակում էր գոյատևել խուրիական ինչ-որ քաղաքական միավոր: Ահա այս միացյալ ուժերի դեմ պիտի ուղղված լինեի Թուկուլթի-Նինուրտայի արշավանքը դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք:

Այս արշավանքների համատեքստում ասորեստանցիները մերձեփրատյան գոտում բախվեցին Խեթական տերության շահերի հետ, որն արձանագրված է ինչպես Թուկուլթի-Նինուրտայի, այնպես էլ համաժամանակյա խեթական և այլ աղբյուրներում: Ասորեստանյան տեքստը հիշատակում է Եփրատի արևմտյան ափից 28 800 խեթապատակ բնակչության տեղահանման մասին: Սույն իրադարձությունը այլ աղբյուրից հայտնի է որպես Նիխրիայի ճակատամարտ, որի ընթացքում ասորեստանյան զորքը կարողացավ հասնել հաջողության, սակայն այն հետագա զարգացում չստացավ: Ավելին՝ այս իրադարձությունների շրջանում խեթական արքա Թուդիսալիյաս IV-ը ձեռնարկեց Ասորեստանի մեկուսացման քաղաքականությունը, որով արգելվում էր խեթերի սիրիական կախյալ երկրներին Ասորեստանի հետ որևէ հարաբերություն ունենալ:

Նաիրյան արշավանքից հետո Թուկուլթի-Նինուրտան ռազմական գործողությունները տեղափոխեց հարավ, որտեղ, ըստ աղբյուրի, Բաբելոնիայի արքա Կաշտիլաշ IV-ը նախահարձակ էր եղել և գրավել Ասորեստանին պատկանող որոշ շրջաններ: Պատերազմը կարճատև էր, որի հենց սկզբում Բաբելոնիայի արքան ճակատամարտում գերվեց, և ասորեստանցիները գրավեցին Բաբելոն քաղաքը: Մեծ քանակությամբ բաբելոնցիներ գերեվարվեցին, և, ի թիվս ռազմավարի, նաև երկրի գլխավոր աստված Մարդուկի արձանը: Բաբելոնիան յոթ տարի ընկավ Ասորեստանի տիրապետության տակ և կառավարվում էր ասորեստանյան կառավարչի կողմից: Այս հաջողությունը արձանագրվեց Թուկուլթի-Նինուրտայի տիտղոսաշարում նոր հավելվածով՝ «Կարդունիաշի (Բաբելոնիա) արքա, Շումերի և Աքքադի արքա, Սիպպարի և Բաբելոնի արքա, Դիլմունի և Մելուխիայի արքա»: Թուկուլթի-Նինուրտայի կառավարման շրջանի վերջին կարևոր իրադարձությունը նոր մայրաքաղաքի՝ Կար-Թուկուլթի-Նինուրտայի կառուցումն էր:

Այս պահից ի վեր Թուկուլթի-Նինուրտայի կառավարման շրջանում նոր նվաճողական պատերազմներ այլևս վկայված չեն: Նախկինում նվաճված երկրներից ստացվող հարկերի մասին հիշատակությունների բացակայությունը կարող է վկայել դրանց նկատմամբ վերահսկողության առնվազն մասնակի կորուստ: Նրա կառավարման վերջերին սրվեցին արքայի և նրա մերձավորների փոխհարաբերությունները. վերջիններիս աջակցում էր արքայազն Աշշուրնաժիրպալը (Աշշուր-նաժիր-ապլի): Արքայի կառավարումն ավարտվեց դավադրությամբ. նա ձերբակալվեց և շուտով սպանվեց: Արքայի սպանության և նրա դեմ ասորեստանյան վերնախավի կազմակերպած դավադրության գործում կարևոր դեր պետք է ունենար նաև բարձրագույն քրմությունը (մասնավորապես երկրի գլխավոր աստված Աշշուրի տաճարի), քանի որ նա Բաբելոնի նվաճումից և Մարդուկի արձանի գերեվարումից հետո Աշշուրում ներդրել էր Բաբելոնիայի գլխավոր աստված Մարդուկի պաշտամունքը:

Նոր մայրաքաղաքի անվանակոչումը իր անվամբ (Կար-Թուկուլթի-Նինուրտա) նույնպես կարող էր արքայի սպանության պատճառ դառնալ:

Թուկուլթի-Նինուրտա I-ի մահից հետո Ասորեստանը մուտք գործեց մի քանի տասնամյակ տևած ներքաղաքական խոր ճգնաժամի փուլ, որը ծանր հետևանքներ ունեցավ նրա համար հատկապես հյուսիսի ժողովուրդների և արևմուտքից արամեական ցեղերի՝ դեպի Միջագետք պարբերաբար ընթացող տեղաշարժերի հետևանքով: Ընդհուպ մինչև Ք. ա. 1114 թ., երբ գահ բարձրացավ եռանդուն Թիզլաթալասար I-ը (Թուկուլթի-ապիլ-էշարրա), Ասորեստանում կառավարեցին ութ արքաներ, որոնցից միայն մեկը՝ Աշշուրդան I-ը, իշխեց երկար: Այս ժամանակաշրջանը բնորոշվում է ակտիվ արտաքին քաղաքականության գրեթե իսպառ բացակայությամբ, նախկինում նվաճված երկրների նկատմամբ գերիշխանության վերացմամբ: Պահպանված սակավաթիվ տեքստերը վկայում են համատարած քաղաքական և տնտեսական անկման օգտին: Այս շրջանի տեքստերում շատ են հիշատակությունները վերացած տարանցիկ առևտրի, պարբերաբար կրկնվող չորային տարիների ու հողի ցածր բերքատվության (Եփրատի և Տիգրիսի մակարդակի անկման հետևանքով) մասին:

Միայն առանձին դեպքերում Ասորեստանը ստիպված էր որոշակի ակտիվություն ցուցաբերել, որ ավելի շուտ պայմանավորված էր անհանգիստ հարևանների գործողություններով և ուղղված էր նրանց հարձակումների շրջաններում գտնվող սահմանների պաշտպանունակության բարձրացմանը: Այս առումով որոշակիորեն առանձնանում են Աշշուրդան I-ը, որն արշավեց հարավ-արևելք՝ Էլամի նկրտումներին վերջ դնելու համար, ինչպես նաև Աշշուրուեշահիշին (Աշշուր-ռեշա-իշի), ով կարողացավ ժամանակավորապես դուրս մղել Ասորեստանի տարածքում հաստատված արամեական *սիսլանու* ցեղին և ամրություններ կառուցել Մոսուլի շրջանում: Իսկ ընդհանուր առմամբ՝ այս փուլում Ասորեստանն ապրում էր իր պատմության ամենածանր ժամանակաշրջաններից մեկը՝ պարփակվելով իր միջուկում:

3. ԹԻԳԼԱԹՊԱԼԱՍԱՐ I-Ը ԵՎ ՆՐԱ ՀԱՋՈՐԴՆԵՐԸ

Թիզլաթալասար I-ի երկարատև կառավարումը Ասորեստանում (Ք. ա. 1114-1077 թթ.) նշանավորվեց պետության արտաքին քաղաքականության ակտիվացմամբ և տարածքային նվաճումներով: Այնուամենայնիվ, ինչպես ցույց տվեցին թե՛ նրա օրոք և թե՛ հետագայում տեղ գտած իրադարձությունները, Ասորեստանը, ինչպես և ամբողջ Առաջավոր Ասիան դեռևս շարունակում էին իրենց վրա զգալ ճգնաժամի ծանր հետևանքները:

Թիզլաթալասարի կառավարման շրջանում Ասորեստանի առջև կանգնած էր մի հրատապ խնդիր, այն է՝ վերջ դնել դեպի երկիր հյուսիսային ժողովուրդների, ինչպես նաև արևմուտքից արամեական ցեղերի՝ տասնամյակներ շարունակվող շարժումներին: Վերոհիշյալ միգրացիոն ալիքների կրողներից եկող վտանգը իրոք լուրջ

էր, քանի որ նրանք ոչ միայն սպառնում էին առանց այդ էլ ճգնաժամի ընթացքում տնտեսապես խիստ տուժած երկրագործական շրջաններում զգալի քանակությամբ նոր բնակչության հավելումով, այնպես էլ շրջափակել էին երկրի համար կենսական նշանակություն ունեցող՝ դեպի արտաքին աշխարհ տանող առևտրական ուղիները: Ասորեստանը գրկվել էր հյուսիսում գտնվող մետաղներով հարուստ շրջանների (Տավրոսի գոտի) հետ կապից: Արքայի հոր օրոք երկրի սահմաններին սկսված ամրությունների կառուցումը ի վիճակի չէր կանգնեցնելու եկվորներին, քանի որ սահմանամերձ շրջանների բնակչության զգալի մասը արդեն հեռացել էր այնտեղից, ընդ որում՝ նաև դեպի հյուսիս՝ Ասորեստանից դուրս:

Թիզլաթալասարի կառավարման հենց առաջին տարում տեղի ունեցած իրադարձությունից սկսվեց նրա երկարատև պատերազմների շարքը: Ըստ աղբյուրների՝ Ք. ա. 1115 թ. 20 հազ. մուշկեր, որոնք դրանից 50 տարի առաջ հաստատվել էին Ալզիում և Պուրուլումգիում (հայկ. Աղձնիք), հինգ ցեղապետերի առաջնորդությամբ շարժվեցին դեպի Միջագետք և հաստատվեցին Կադմուխիում (Քաշիյարի լեռների շրջան = ժաման. Ջուդի դաղ): Մուշկերի առաջխաղացման պահին Կադմուխին, որը նախկինում գտնվում էր Ասորեստանից կախյալ վիճակում, արդեն հասցրել էր հարաբերությունները խզել նրա հետ և դադարեցրել էր հարկի առաքումը: Ասորեստանցիների առաջին հարվածը կրեցին մուշկերը: Նրանցից 6000-ը պարտությունից հետո ընդունեցին Ասորեստանի գերիշխանությունը և հաստատվեցին Կադմուխիում: Արքան այնուհետև անցավ բուն Կադմուխիի բնակչությանը, որին օգնության էր եկել հարևան Բաբխիի խուրրի արքա Կիլի-Թեշուրը՝ Կալի-Թեշուրի որդին: Հաղթելով վերջինիս՝ արքան հաջողության հասավ նաև հարևան Ուրբատինաշ քաղաքի կառավարիչ Շադի-Թեշուրի հետ ձակատամարտում:

Դատելով աղբյուրների տեղեկություններից՝ Թիզլաթալասարի կառավարման պահին Ասորեստանից հյուսիս արդեն ձևավորվել էր լեռնային երկրների մի յուրօրինակ դաշինք: Ասորեստանյան զորքերի գործողությունների ընթացքում հարևան երկրները ամենուրեք միասնաբար էին հանդես գալիս: Ավարտելով Կադմուխիի և Բաբխիի դեմ ռազմական գործողությունները՝ արքան իր հարվածն ուղղեց «Նաիրի երկրների» դեմ, որը և նրա գլխավոր ընդդիմադիր ուժն էր հյուսիսում:

Ասորեստանյան զորքը, հաղթահարելով դժվարամատչելի լեռնային անցումները, ի վերջո հասավ Ալզի և Պուրուլումգի (դրանք աղբյուրում նշվում են որպես «Սուբարի երկրներ») և հնազանդեցրեց: Այստեղ նա մեկ անգամ ևս բախվեց Ալզիի մուշկերի՝ այս անգամ 12 000 զորքի, ինչպես նաև «խեթական երկրի կասկերի և ուրումունների» 4000 զորքի հետ: Թիզլաթալասարի արշավանքն, ըստ արքայի հայտարարության, ավարտվեց «սուբարյան երկրների» նվաճմամբ, և վերջիններս հարկատու դարձան:

Իր հյուսիսային արշավանքը ասորեստանյան արքան ավարտեց «Վերին ծովի ափին»՝ այդ ընթացքում երկու անգամ պարտության մատնելով «Նաիրյան» սկզբում 23, այնուհետև 60 երկրներից բաղկացած միություններին: Ըստ տեքստերի՝ Թիզլաթալասարը նաիրյան երկրների դեմ երեք արշավանք էր ձեռնարկել:

Ոչ պակաս ծանր էր իրավիճակը արևմտյան և հյուսիսարևմտյան ձակատամ, որտեղ

շարժունակ արամեական *սխլամու* կոչվող ցեղերը կիսաշրջանի մեջ էին վերցրել Ասորեստանը: Ախլամունների դեմ Թիգլաթպալասարը արշավանքների մի ողջ շարք ձեռնարկեց. մի տեքստում ասվում է, որ նա տարեկան երկու անգամ գետանցում էր Եփրատը արամեացիներին հետապնդելու համար: Իսկ ընդհանուր առմամբ՝ նա 28 անգամ անցել էր Եփրատը: Ասորեստանյան զորքի՝ ախլամունների դեմ մղած ճակատամարտերի աշխարհագրությունը (միջին Եփրատի Սուխու մարզ, Ամուրրուի՝ Տադմար, Բաբելոնիայի՝ Ռապիքու քաղաքներ) հասկանալի է դարձնում ասորեստանյան արքայի մտահոգությունը: Որքան էլ որ աղբյուրները հիշատակում են ասորեստանցիների հաջողությունները, այնուամենայնիվ, հազիվ թե միմյանցից այդքան հեռու գտնվող շրջաններով ցրված ախլամունների դեմ կարելի էր վճռական հաղթանակ տանել: Ախլամունները կարող էին հարվածել ցանկացած պահի, և իրականում այդպես էլ կար:

Ախլամունների դեմ մղած ռազմական գործողությունների ենթատեքստում հիշատակվում է արշավանքը դեպի Բաբելոնիա: Պարտության մատնելով Բաբելոնիայի արքա Մարդուկ-նադին-ախխեին՝ Թիգլաթպալասարը նվաճեց երկրի մի շարք կարևոր քաղաքներ, այդ թվում՝ Սիպպարը, Դուր-Կուրիզալզուն, Բաբելոնը:

Թիգլաթպալասարի արևմտյան արշավանքների համատեքստում նշանակալից էին սիրիական տարածաշրջանում, թեև ուզե ժամանակավոր, ձեռք բերված հաջողությունները: Ասորեստանյան զորքը հասավ մինչև Միջերկրական ծով՝ գրավելով Լիբանանյան լեռների շրջակայքում ընկած Ամուրրու երկիրը (Փյունիկիա), այդ թվում՝ ծովափնյա քաղաք-պետությունները՝ Բիբլոսը, Սիդոնը և Արվադը: Հատկանշական է, որ արքան անձամբ էր ղեկավարում արշավանքը և նավերով հասավ կղզու վրա գտնվող Արվադ քաղաքը: Ամուրրուից վերադառնալիս նրան հնագանդություն հայտնեց «Խաթթի երկրի» (= լուվիական Կարգամիս) արքա Ինի-Թեշուրը:

Սիրիայում կատարված նվաճումները և այս տարածաշրջանի երկրների նկատմամբ ստացած գերիշխանությունը չէին միայն ասորեստանյան արքայի նպատակը: Նրա մի ձեռնարկումը թույլ է տալիս ենթադրել, որ Թիգլաթպալասարը ծրագրում էր Ասորեստանի կայուն ներկայությունը ապահովել օգտակար հանածոներով հարուստ և առևտրական ճանապարհների վրա գտնվող այս երկրներում: Նա կայագործներ տեղադրեց Կարգամիսից քիչ հարավ՝ Եփրատի երկու ափերին գտնվող Պիտրու (քաղաքը վերանվանվեց Անա-Աշուր-ուտեր-ածքատ) և Մուտկինու քաղաքներում, որը թույլ կտար վերահսկել Եփրատի այս կարևոր գետանցումը և կապ ապահովել սիրիական երկրների հետ:

Թիգլաթպալասարի կառավարման վերջին շրջանում Ասորեստանում հատկապես մայրաքաղաքում, իրականացվեցին լայն շինարարական աշխատանքներ, մասնավորապես դրա ամրացման ուղղությամբ՝ կապված, թերևս, ախլամու-արամեացիների պարբերական հարձակումների հետ: Ասորեստանի արևմտյան սահմանամերձ շրջանները ողողած արամեական ցեղերը իրենցից լուրջ սպառնալիք էին ներկայացնում, հատկապես տևական երաշտի և որպես դրա հետևանք՝ սովի պատճառով: Ասորեստանյան ժամանակագրության համաձայն՝ Ք. ա. 1083 թ. Ասորեստանում ուժեղ երաշտ էր, որի պատճառով արամեացիները զանգվածաբար ներ-

թափանցեցին երկրի սակավաբնակ շրջաններ: Նրանք շրջափակեցին սովահար բնակչության համար ուղարկվող սննդամթերքի առաքման ճանապարհները, որի հետևանքով մարդիկ ստիպված էին հեռանալ դեպի հյուսիսի՝ Ասորեստանի կողմից չվերահսկվող լեռնային շրջանները (մասնավորապես՝ Խաբրուրի երկիր): Երաշտը շարունակվեց նաև հաջորդ տարի, և արամեացիների նոր առաջխաղացումը արդեն սպառնալիք ստեղծեց երկրի գոյության համար: Արամեացիները հասան մինչև Նինվեի շրջան, իսկ Թիգլաթպալասարը ստիպված էր գործով հեռանալ Կադմուխի՝ ժամանակավորապես երկիրը թողնելով առանց հսկողության:

Թիգլաթպալասարից հետո Ասորեստանի արտաքին քաղաքական խնդիրները շարունակում էին մնալ հրատապ: Նրան կարճատև կառավարումով փոխարինած որդուց՝ Աշարեդ-ապիլ-էկուրից (Ք. ա. 1175-1074 թթ.) հետո իշխանության եկած մյուս որդին՝ Աշուրբեդկալան (Ք. ա. 1073-1056 թթ.), առաջին իսկ տարում ստիպված էր գրադվել Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններով: Արքայի տեքստերում հիշատակվում է արշավանքը Ուրուատրի և Խաբիի երկրների, ինչպես նաև, թերևս, Կադմուխիում հաստատված մուշկերի դեմ: Այնուամենայնիվ, արքայի հիմնական մտահոգության առարկան Ասորեստանից արևմուտք գործող շարժունակ արամեական ցեղերն էին: Դեպի Բաբելոնիա ձեռնարկված կարճատև արշավանքից հետո, որի ընթացքում գրավվեցին Դուր-Կուրիզալզուի մի շարք շրջաններ, և գերեվարվեց Բաբելոնիայի արքայազն Կադաշման-բուրիաշը, ասորեստանցիները հիմնական ուշադրությունն ուղղեցին արամեացիների դեմ:

Աշուրբեդկալան հիշատակում է Խաբուրից մինչև Կարգամիս ընկած տարածքներում, ինչպես նաև այլ շրջաններում արամեացիների զանազան խմբավորումների դեմ մղած ճակատամարտերը: Հավանաբար այս պահին վերջիններս արդեն հասցրել էին վերագրավել Թիգլաթպալասարի կողմից նվաճված անդրեփրատյան շատ շրջաններ, քանի որ արքան հայտնում է Եփրատից այն կողմ՝ Սագգուրրու գետի ափին գտնվող ինչ-որ քաղաքի նվաճման մասին: Դա կարող էր լինել Պիտրուն, որտեղ արքայի նախորդի օրոք ասորեստանյան կայագոր էր տեղակայվել: Այս պահին արամեացիները դեռևս չէին հասցրել հաստատվել և ստեղծել նստակյաց քաղաքական միավորներ, այլ գործում էին գոյություն ունեցող կենտրոնների հարևանությամբ, որը դժվարացնում էր նրանց վերահսկումը: Այսպիսի իրավիճակում ասորեստանյան արքայի հաջողությունները չէին կարող հիմնավոր լինել, այլ միայն ժամանակավոր էին:

Հավանաբար արամեացիների կողմից Ասորեստանի և Բաբելոնիայի ուղղությամբ ձեռնարկված շարունակական հարձակումներն էին պատճառը, որ երկու պետությունների միջև նախկինում լարված հարաբերությունները բարելավվեցին: Միաժամանակ, օգտվելով Բաբելոնիայի արքա Մարդուկ-շապիկ-գերիի մահվանից, Աշուրբեդկալան Բաբելոնիայի գահին նստեցրեց տեղական արքայատոհմի հետ չառնչվող, արամեացի Ադադ-ապլա-իդդինային և կնության վերցրեց նրա դստերը:

Աշուրբեդկալայի կառավարման շրջանում ձեռնարկվեցին շինարարական աշխատանքներ մայրաքաղաքում, մասնավորապես վերակառուցվեցին արքայական

պալատը և Աշտուրդան I-ի կողմից փորված, սակայն անխնամ վիճակից շարքից դուրս եկած ջրանցքը:

Աշտուրբելական վերջինն էր Ք. ա. XI-X դդ. ասորեստանյան արքաներից, որի կառավարումը կարելի է որոշակիորեն համարել հաջող: Նրանից հետո աղբյուրներում գրեթե դադարում են հիշատակվել արտաքին քաղաքական ձեռնարկումները: Մի բան, որ աներկբայորեն վկայում է Ասորեստանի վրա արամեական ցեղերի ճնշման ու ժողացման օգտին: Իսկ այդ ընթացքում արամեական շարժունակ ցեղերը հասցրեցին հաստատվել բուն Ասորեստանին հարող սահմանամերձ շրջաններում, թեև երբեմն ավարառուական նպատակներով ասպատակում էին երկրի տարբեր շրջանները:

Ք. ա. X դ. կեսերից Ասորեստանը աստիճանաբար սկսում է վերականգնվել ավելի քան մեկ դար տևած անկման փուլից: Սկզբում տեղական բնույթի, այնուհետև ավելի ընդարձակ տարածք ընդգրկող արշավանքները վկայում են այն մասին, որ Ասորեստանը քայլ առ քայլ սկսում էր ակտիվություն դրսևորել և լուրջ նկրտումներ ցուցաբերել՝ կրկին վերաճելու ռազմաքաղաքական հզոր ուժի:

Այս ժամանակաշրջանում հիմնավորապես փոփոխվել էր Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը, հատկապես Ասորեստանին անմիջականորեն հարևան երկրների առումով: Արևմուտքում և հյուսիս-արևմուտքում ձևավորվել էին նախկին հզոր Խեթական տերության ժառանգորդ տասնյակ համեմատաբար փոքր պետականություններ, այդ թվում՝ արամեական բազմաթիվ մանր իշխանություններ: Կասսիտական Բաբելոնիայի անկումից հետո Միջագետքի հարավում հաստատված քաղղեական բազմաթիվ ցեղերը դեռևս չէին հասցրել միավորվել և իրենցից ներկայացնում էին մանր ցեղապետությունների համատարած զանգված: Թերևս միայն հյուսիսի լեռներում էր շարունակվում նախկին իրավիճակը, որի հետ Ասորեստանը ստիպված էր մշտապես հաշվի նստել՝ իր հյուսիսային սահմանների անվտանգության ապահովման կարիքներից ելնելով: Ընդհանուր առմամբ՝ չկար որևէ հզոր հակառակորդ, որն ի վիճակի լիներ լուրջ սպառնալիք ներկայացնելու Ասորեստանի համար: Այսպիսի պայմաններում Ասորեստանը աստիճանաբար անցավ ակտիվ արտաքին քաղաքականության՝ հիմնականում արևմտյան և հյուսիսային ուղղություններով:

Առաջին նշանակալից հաջողությունները գրանցվեցին Աշտուրդան (Աշտուր-դան) II-ի օրոք (Ք. ա. 934-912 թթ.): Ասորեստանը սկսում է կրկին որոշակի ակտիվություն ցուցաբերել և վերականգնել նախկին ազդեցության շրջանակները: Ասորեստանյան գործերը սկզբում շարժվեցին արևմուտք՝ ընդդեմ արամեական Յախան (հետագայի տեքստերում՝ հիմնականում Բիթ-Ագուսի) ցեղապետության, որը գրադեցնում էր նախկին Միտաննիի արևմտյան շրջանները՝ Եփրատից արևելք: Արամեական բնակավայրերն ավերվեցին, թալանվեցին, իսկ գերեվարվածները վերաբնակեցվեցին Ասորեստանում: Այնուհետև արքան շարժվեց դեպի Կադմուխի, որի ընթացքում գերեվարվեց և Աշտուր քաղաքում մահապատժի ենթարկվեց նրա արքա Կունդարխալեն: Աշտուրդանը արշավանքներ ձեռնարկեց նաև Տավրոսյան գոտի, որտեղ նրա հարձակման թիրախ դարձան Մուծրին, Խաբրուրին և այլ շրջաններ: Արքայի հրամանով Ասորեստան վերադարձվեցին նախկինում երաշտի և սովի պատճառով

երկիրը լքած բնակիչները: Նրանք տեղավորվեցին բնակության համար պիտանի բնակավայրերում: Երկրի տարբեր շրջաններում կառուցվեցին հացահատիկի շտեմարաններ, որպեսզի բնակչությունը կարիքի դեպքում ապահովված լինի:

4. ՆՈՐ ԱՍՈՐԵՍՏԱՆՅԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ. ՍԱՆՄԱՆԱՍԱՐ III

Ք. ա. X դ. կեսերից աստիճանաբար իր նախկին հզորությունը վերականգնելու ճանապարհին գտնվող Ասորեստանի արտաքին քաղաքական ակտիվությունը և առաջխաղացումը արևմտյան և հյուսիսային ուղղություններով շարունակվեց էլ ավելի մեծ չափերով Ադադնիրարի II-ի (Ք. ա. 911-891 թթ.) օրոք: Առաջին հարվածը ստացան Կումանին (Մուծածիր) և Խաբխին: Հետագա արշավանքներն ուղղված էին դեպի Կադմուխի, Լուլլումու, ընդհուպ մինչև Ուրուատրի. այս համատեքստում հիշատակվում է նաև Կարդունիաշի (Բաբելոնիա) արքայի նկատմամբ տարած հաղթանակը, որի հետևանքով Ասորեստանին անցան վերջինիս որոշ շրջաններ՝ Լախիրուն, Ուգարսալլուն, Դերը, Առապխան: Ասորեստանցիները հարվածեցին նաև Ալգիին, ինչպես նաև Խանիգալքատին (նախկին Միտաննիի մի մասը): Թերևս այս վերջին պարագայում ասորեստանցիները լուրջ դիմադրության հանդիպեցին այստեղ բնակվող արամեական *տեմաննի* ցեղի կողմից, քանի որ աղբյուրները նշում են նրանց դեմ ուղղված վեց արշավանքներ: Ի վերջո, արքային հաջողվեց հասնել իր նպատակին. *տեմաննի* արքա Նուր-Ադադը գերեվարվեց Ասորեստան: Ըստ տեքստի՝ Ադադնիրարին իր գերիշխանությունը հաստատեց ողջ Խանիգալքատի վրա՝ ընդհուպ մինչև Եփրատ: Այս նույն շրջանում կան հիշատակություններ նաև հյուսիսային ուղղությամբ ձեռնարկված արշավանքների վերաբերյալ:

Մինևույն քաղաքականությունը շարունակվեց Թուկուլթի-Նինուրտա II-ի (Ք. ա. 890-884 թթ.) օրոք: Նաիրի երկրում հնազանդեցվեց արամեական Բիթ-Ջամանիի արքա Ամմե-Բաալը, որից հետո նոր արշավանք ձեռնարկվեց Խաբրուրիի ուղղությամբ: Այստեղ արքան հիշատակում է իր հաղթանակը արամեացիների և լուլլումուների նկատմամբ: Նրա հաջորդ արշավանքի նպատակակետը Եփրատի հոսանքով դեպի հարավ ընկած շրջաններն էին: Դրա արդյունքում, գրեթե առանց դիմադրության, նշված շրջանների բնակչությունը կամավոր ընդունեց Ասորեստանի գերիշխանությունը: Այսպիսով՝ իր կարճատև կառավարման ընթացքում արքան կարողացավ զգալիորեն ընդարձակել Ասորեստանի ազդեցության գոտիները հյուսիսում, հարավում և արևմուտքում՝ հիմք ստեղծելով իր երկու հաջորդների նվաճումների համար: Հատկապես կարևոր ձեռքբերում էր Խանիգալքատի հնազանդեցումը, որի շնորհիվ ճանապարհ էր բացվում դեպի անդրեփրատյան Սիրիա:

Թուկուլթի-Նինուրտա II-ի որդի՝ Աշտուրնաժիրպալ (Աշտուր-նաժիր-ապլի) II-ի (Ք. ա. 883-859 թթ.) արտաքին քաղաքականությունը գերազանցապես ուղղված էր դեպի հյուսիս և արևմուտք ընկած շրջանները: Առաջին հարվածն ուղղվեց դե-

պի հյուսիսի լեռները, որտեղ պարտության մատնվեց Տումմե երկիրը: Խաբրուրիի, Սիմեաիի, Ուլմանիայի և այլոց բնակչությունը իրենց հարևանի ճակատագրից խուսափելու նպատակով կամովին հարկ առաքեց Ասորեստանի արքային: Հաջորդ թիրախը Խաբիսի կազմում գտնվող բազմաթիվ մանր իշխանություններն էին՝ Խատարու, Նիշտուն, Տելա, Խալուա և այլն:

Վերադարձից քիչ անց արքան արշավեց Կադմուխի, որտեղ նվաճեց մի շարք բնակավայրեր: Այս անգամ կադմուխցիները և այնտեղ դեռևս -Ք. ա. XII դ. վերջերին հաստատված մուշկերը ստիպված էին հարկ վճարել: Կադմուխից արքան շարժվեց դեպի Խաբուրի հոսանքների շրջան՝ հնագանդեցնելու արամեական Բիթ-Խալուպե իշխանությունը, որտեղ հաշվեհարդար տեսնելով ասորեստանյան դրածոյի հետ՝ իշխանության էր եկել Բիթ-Ադինիից ոմն Ախիյարբան: Վերջինս պարտվեց և գերեվարվեց Ասորեստան, միաժամանակ այստեղից մեծ ռազմավար վերցվեց: Այս հաջողությանը հաջորդեց Խաբուրի շրջանի և ավելի արևմուտք ընկած արամեական իշխանությունների նվաճումը: Դրանով ճանապարհի բացվեց դեպի Եփրատ, որից արևմուտք գտնվում էին տնտեսական մեծ ներուճակություն ունեցող մեծաքանակ լուվիական ու արամեական պետությունները: Աշշուրնաժիրպալի արտաքին քաղաքականության մեջ այս պահից արևմուտքը գերիշխող դիրք է ստանում:

Եթե Հայկական լեռնաշխարհի երկրները Ասորեստանի համար կարևոր էին վերջինիս տնտեսական նվազագույն կարիքների, ինչպես նաև անվտանգության ապահովման տեսանկյունից, ապա անդրեփրատյան երկու տարածաշրջանների (Հյուսիսային Սիրիա և Հարավարևմտյան Փոքր Ասիա) նկատմամբ գերիշխանության հաստատումը թույլ կտար վերահսկել Առաջավոր Ասիայի բոլոր հիմնական առևտրական ուղիների գերակշիռ մասը և անսպառ ռեսուրսները, որն էլ, վերջին հաշվով, տանում էր «համաշխարհային տիրապետության»: Հենց Աշշուրնաժիրպալով սկսվեց Ասորեստանի վերածումը այդպիսի տերության, որով այն բնորոշվում էր ընդհուպ մինչև իր անկման շրջանը:

-Ք. ա. 866 թ. սկսած՝ արքան մի շարք արշավանքներ ձեռնարկեց արևմտյան ուղղությամբ, գրավեց արամեական Լաբու, Խինդանու, Սուխու իշխանությունները, ինչպես նաև Բիթ-Ադինին, որն անմիջականորեն հարում էր Եփրատին՝ լուվիական Կարգամիսի շրջակայքում, որտեղ գտնվում էր Եփրատի գլխավոր գետանցումներից մեկը: Այնուհետև անցնելով Եփրատը՝ ասորեստանյան զորքը առանց դիմադրության հասավ Միջերկրական ծով՝ ճանապարհին ստանալով բոլոր պետությունների, այդ թվում՝ Կարգամիսի՝ կամավոր հնագանդության երաշխիքները՝ արժեքավոր նվերների տեսքով: Որքան էլ որ արքայի արձանագրություններում արևմտյան արշավանքների հաջողությունները չափազանցված են, այնուամենայնիվ առաջընթացը ակնառու է: Իհարկե, այս աննախադեպ ընդարձակ նվաճումները նշանակալից էին, սակայն կարիք ունեին հետագա ամրապնդման, որը դարձավ նրա հաջորդի, ինչպես նաև -Ք. ա. VIII դ. ասորեստանյան արքաների արտաքին քաղաքականության կարևոր միջոցառումներից մեկը:

Սալմանասար III-ի (-Ք. ա. 858-824 թթ.) կառավարման ողջ ընթացքում Ասորեստանը

տանը ձգտում էր բոլոր ուղղություններով կազմակերպված անդադար արշավանքների միջոցով ընդարձակել իր անմիջական տիրապետության և քաղաքական ազդեցության ոլորտը:

Նախկինի պես Ասորեստանի ծավալման ուղղությունները նույնն էին: Սալմանասարը շարունակեց հոր կողմից Հյուսիսային Սիրիայի երկրների հնագանդեցման քաղաքականությունը: Ակնհայտորեն, Աշշուրնաժիրպալի վերոհիշյալ արշավանքի արդյունքները անցողիկ էին: Ավելին՝ -Ք. ա. 858 թ.՝ Սալմանասարի առաջին արշավանքի պահին, այստեղի որևէ պետություն չէր ընդունում Ասորեստանի գերիշխանությունը, ընդ որում՝ սկսել էին ձևավորվել հակասորեստանյան միություններ: Առաջինը հյուսիսսիրիական միությունն էր, որում ընդգրկված էին Կարգամիսը, Սամալը, Ունքին (նաև՝ Պաստին), Բիթ-Ադինին, Գուրգումը (Մարաշի շրջանում), նաև Կիլիկիայի երկու քաղաքական միավորները՝ Կունն և Խիլակուն: Երկրորդը հարավսիրիական էր՝ Դամասկոսի արամեական պետության գլխավորությամբ, որին մասնակցում էին 12 իշխանություններ:

Հատկապես ուժեղ էր Բիթ-Ադինի դիմադրությունը, որից հետո Սալմանասարը մեկը մյուսի հետևից նվաճեց Սիրիայի հյուսիսը՝ հասնելով Միջերկրականի ծովափ: Արքան փորձեց զարգացնել իր հաջողությունը հարավային ուղղությամբ, սակայն Կարկարի ճակատամարտում պարտություն կրեց հարավսիրիական միությունից: Միայն մի քանի տարի անց Սալմանասարը հաջողության հասավ հարավսիրիական միության նկատմամբ, որը թույլ տվեց Ասորեստանի քաղաքական ազդեցության ոլորտը ներառել նույնիսկ ծովափնյա փյունիկյան Բիբլոս, Սիդոն և Տյուրոս քաղաք-պետությունները: Բիթ-Ադինի նվաճումը հատկապես կարևորվում էր այն առումով, որ վերջինիս տարածքը վերածվեց հզոր հենակետի՝ անդրեփրատյան տարածքների նկատմամբ կայուն վերահսկողություն ապահովելով: Այստեղի մի շարք քաղաքներ վերանվանվեցին, դրանց մի մասում բնակեցվեցին ասորեստանցիներ:

Սիրիական ուղղությամբ մղած պատերազմների հետ միաժամանակ Սալմանասարը ակտիվություն էր դրսևորում նաև հյուսիսում: Նույն՝ -Ք. ա. 858-856 թթ. նա արշավանքներ ձեռնարկեց դեպի Վանա լճի ավազան, որտեղ, ըստ աղբյուրների, զգալի հաջողությունների հասավ Վանի թագավորության արքա Արամուի նկատմամբ:

Սալմանասարը առաջինն էր ասորեստանյան արքաներից, ով լրջորեն ձեռնամուխ եղավ Փոքր Ասիայի լուվիական պետությունների նվաճմանը: -Ք. ա. 839 թ. ասորեստանյան զորքը առաջին անգամ մուտք գործեց Փոքր Ասիա Ամանուսի լեռների կողմից՝ նվաճելով լուվիական Կունեի մի շարք քաղաքներ՝ Կիցցուվատնան, Աբարնանուն, Լուսանդան (խեթ. Լավացանտիյա): Իսկ -Ք. ա. 837-836 թթ. Սալմանասարը ավելի խորացավ այս ուղղությամբ՝ արշավելով դեպի Կիլիկյան Տավրոսից հյուսիս ընկած լուվիական Թաբալ:

Հետագա տարիներին ասորեստանյան զորքերի արշավանքները պարբերաբար կրկնվում էին՝ ամրապնդելով նախորդ շրջանում կատարված նվաճումները: Չնայած այն հանգամանքին, որ արշավանքների ընթացքում մեծ քանակությամբ գերեվարված բնակչություն և նյութական մեծ քարիքներ էին մուտք գործում Ասորեստան,

սակայն դրանք միաժամանակ խիստ բացասաբար ազդեցին երկրի տնտեսական ներուժի վրա: Մարդկային ուժի զգալի կորուստները և ռազմական ծախսերը չէին կարող աննկատ անցնել, ինչն իրեն զգացնել տվեց Սալմանասարի հաջորդների օրոք: Արդեն Շամշի-Ադադ V-ի կառավարման շրջանում Ասորեստանը բախվեց ներքին և արտաքին լուրջ խնդիրների հետ՝ կորցնելով նախորդ փուլում կատարած իր նվաճումների մեծ մասը: Ասորեստանի համար Սալմանասարի արտաքին քաղաքականության հիմնական բացասական հետևանքներից մեկն էր նաև Սիրիայում, Հայկական լեռնաշխարհում և Փոքր Ասիայում հակաասորեստանյան տրամադրությունների խորացումը, որը հանգեցրեց ռազմական միությունների ստեղծմանը և դրանց հետագա ամրապնդմանը: Շուրջ 80 տարի՝ ընդհուպ մինչև Թիգլաթպալասար III-ի կառավարման սկիզբը, Ասորեստանը զգալիորեն զիջել էր իր դիրքերը առաջավորասիական տարածաշրջանում՝ հայտնվելով մի իրավիճակում, որն ընդունված է անվանել «ձգնաժամային»:

Արդեն Սալմանասարի կառավարման վերջին շրջանում հոր դեմ ապստամբեց որդին՝ Աշշուրդանինապլին, որին աջակցում էին նույնիսկ Նինվե և Աշշուր քաղաքները (Ք. ա. 827 թ.): Ապստամբությունը տևեց մինչև Սալմանասարի կառավարման վերջը: Միայն հոր մահից հետո Շամշի-Ադադը կարողացավ ձեռնել այն, սակայն Ասորեստանը արդեն ստիպված էր դիմագրավել շատ ավելի լուրջ հակառակորդների ճնշմանը: Արքայի առաջին իսկ արշավանքն ուղղված էր դեպի հյուսիս, որտեղ Ասորեստանի սահմանների անվտանգությանը սպառնում էր Իշպուինիի օրոք հզորացող Վանի թագավորությունը:

Ք. ա. 823 թ. Շամշի-Ադադը անձամբ գլխավորեց արշավանքը դեպի Վանի թագավորություն: Ռազմական գործողությունները հիմնականում ծավալվեցին Վանի թագավորության հարավային, հարավարևմտյան սահմանամերձ գոտում (էնգա՝ Տիգրիսի ակունքների շրջան և Ուրմիա լճից հարավ): Ամենայն հավանականությամբ, հաջողությունները մեծ չէին, քանի որ հաջորդ տարում կազմակերպվեց նոր արշավանք՝ այս անգամ գորավար Մուտարիս-Աշշուրի գլխավորությամբ: Վերջինիս երթուղին սահմանափակ տարածք էր ընդգրկում: Ըստ տեքստի՝ ասորեստանյան զորքը գրավել էր «Մայր մտնող արևի վերին ծովի» (= Ուրմիա լիճը) մոտ գտնվող 11 «ուժեղ քաղաքներ», 300 այլ քաղաքներ և Իշպուինիին պատկանող 200 մանր քաղաքներ: Ասորեստանցիները տարածքային զավթումներ չիրականացրին, այլ ընդամենը «Նաիրիի արքաներից» ստացան որոշ քանակությամբ ձիեր: Թերևս մերձուրմյան տարածաշրջանը Ասորեստանի համար ինչ-որ հետաքրքրություն էր ներկայացնում, քանի որ հաջորդ տարի Շամշի-Ադադը կրկին, այս անգամ անձամբ արշավեց նույն վայրեր: Արքան հիշատակում է իր հակառակորդներին, որոնց թվում էին մանացիները, պարսուացիները: Համառ մարտերից հետո ասորեստանյան զորքը հասավ հաջողության, ավերեց 500 բնակավայրեր և շարժվեց դեպի Ուրմիա լճի արևմտյան ափին գտնվող Գիգիլթունդա: Գիգիլթունդայից հետո ասորեստանցիները բախվեցին մարերի հետ, որի ավարտին ստացան մեծ քանակությամբ տեղական ցեղապետների հարկը:

Շամշի-Ադադը իր կառավարման չորրորդ տարում արշավեց հարավ՝ Բաբելոնիա, որտեղ նրա դեմ հանդես եկավ քաղղեական ցեղերի, Էլամի և այլոց միացյալ զորքը՝ Մարդուկ-բալատու-իբբիի գլխավորությամբ: Հնարավոր է, որ Բաբելոնիան մասնակցել էր Սալմանասարի կառավարման վերջին շրջանում Ասորեստանում սկսված ապստամբությանը կամ ուղղակի օգտվել էր հարմար առիթից: Մանավանդ որ Սալմանասարի օրոք, ըստ բաբելոնյան ժամանակագրության, նրա և Բաբելոնիայի արքա Նարու-ապլա-իդդինայի միջև հաստատվել էին դաշնակցային հարաբերություններ: Սալմանասարը օգնել էր վերջինիս որդի Մարդուկ-գաբիր-շումիին նրա ապստամբած եղբոր դեմ պատերազմում:

Դեպի Բաբելոնիա արշավանքը Շամշի-Ադադի վերջին արտաքին քաղաքական ձեռնարկումն էր: Արևմուտքում, փաստորեն, Սալմանասարի բազմաթիվ արշավանքների հետևանքով Ասորեստանի համար ստեղծված նպաստավոր իրավիճակը Շամշի-Ադադի օրոք փոխվել էր: Ապստամբել էին Արամը (Դամասկոս), Պաղեստինի իշխանությունները և այլ երկրներ: Նրա մահից հետո չորս տարի՝ մինչև Ք. ա. 805 թ., մանկահասակ որդու փոխարեն կառավարեց մայրը՝ թագուհի Շամմուրամատը (Շամիրամ), ընդհուպ մինչև Ադադնիրարի III-ի հասունանալը:

Իր կառավարման հենց առաջին տարում Ադադնիրարին արշավեց Արամի դեմ և պարտության մատնեց՝ վերցնելով խոշոր ռազմավար (100 տաղանդ ոսկի և 100 տաղանդ արծաթ):

Ադադնիրարին Նիմրուդից հայտնաբերված արձանագրության մեջ նշում է մեծ քանակությամբ երկրների նվաճման և հարկատու դարձնելու մասին՝ Իրանական բարձրավանդակից մինչև Միջերկրականի ծովափ, նաև ողջ Նաիրին, սակայն դեպի վերոհիշյալ երկրներ ձեռնարկված արշավանքների մասին տեքստերում որևէ հիշատակություն չկա: Բացի Արամից, որը նվաճվել էր արքայի առաջին տարվա արշավանքի ընթացքում և Բաբելոնիայից ու քաղղեական ցեղերից, որոնք չէին նվաճվել, այլ կամավոր ընդունել էին Ասորեստանի գերիշխանությունը, այլևս ոչինչ հայտնի չէ նրա արշավանքների վերաբերյալ: Ամեն դեպքում դժվար է պատկերացնել Ադադնիրարիի այդպիսի խոշոր հաջողությունները, մանավանդ Նաիրիի հնազանդեցումը Վանի թագավորության հզոր արքաներ Մենուայի և Արգիշտի I-ի ակտիվ արտաքին քաղաքականության օրոք:

Ադադնիրարիին փոխարինեց նրա որդին՝ Աշշուրնիրարի (Աշշուր-նիրարի) V-ը (Ք. ա. 754-745 թթ.): Նրանից մեզ է հասել հյուսիսսիրիական արամեական Արպադ պետության արքա Մատիիլուի հետ կնքված պայմանագիրը, որը հաջորդել էր ասորեստանյան արշավանքին: Աշշուրնիրարիի կառավարումը համընկավ Վանի թագավորության արքա Սարդուրի II-ի գործունեության վաղ փուլի հետ, երբ վերջինս ակնհայտորեն ձգտում էր ներթափանցել սիրիական տարածաշրջան և հասել էր լուրջ հաջողությունների:

Աշշուրնիրարիով ավարտվում է Ասորեստանում տասնամյակներ տևած քաղաքական ձգնաժամը: Արդեն հաջորդ արքա Թիգլաթպալասար III-ի օրոք Ասորեստանը կրկին բռնեց վերելքի ուղին:

ԱՍՈՐԵՍՏԱՆԸ Ք. Ա. VIII-VI ԴԱՐԵՐՈՒՄ

1. ԹԻԳԼԱԹՊԱԼԱՍԱՐ III

Վանի թագավորության դեմ Ք. ա. 754 թ. տեղ գտած պատերազմում Ասորեստանը պարտվեց: Վանի թագավորությունն այսուհետև գործում էր անկաշկանդ, որի վկայությունն է Սարգուրի II-ի՝ դեպի Բաբելոնիա իրագործված հեռավոր արշավանքը: Դրան նպաստում էր Ասորեստանի պասիվ դիրքը, որը շարունակվեց ընդհուպ մինչև Թիգլաթպալասար III-ը (Ք. ա. 744-727 թթ.): Վերջինս գահ բարձրացավ, հավանաբար, բանակի գլխավոր հրամանատար Շամշիլուի կազմակերպած ապստամբության հետևանքով:

Գալով իշխանության՝ Թիգլաթպալասարը կատարեց մի շարք արմատական քայլեր՝ արքայական իշխանության ամրապնդման և հեղինակության բարձրացման համար: Առաջին հերթին արքունիքից հեռացվեցին նախորդ արքաների օրոք մեծ ազդեցություն ունեցող անձինք, այդ թվում՝ Շամշիլուն: Սահմանափակվեց նահանգապետերի իրավասությունների շրջանակը: Նախկին փոխարքայությունների տարածքները կրճատվելով վերակազմավորվեցին նահանգների. այժմ արդեն սկսեցին նահանգապետ նշանակել բացառապես ներքինիների:

Թիգլաթպալասարի օրոք փոխվեց նվաճված տարածքների հանդեպ տարվող քաղաքականությունը: Նախկինում ասորեստանյան ռազմական մեքենան միտված էր թալանելու և ավերելու հակառակորդի երկիրը, և արշավանքները չէին հանգեցնում տարածքային նվաճումների: Այժմ Ասորեստանը սկսեց իրականացնել ծավալման քաղաքականություն՝ ձեռնամուխ լինելով նորանվաճ տարածքների յուրացմանը: Վերջիններս կցվում էին Ասորեստանին, միայն սակավ դեպքերում՝ նրա հետ կապվում կախյալ պարտավորություններով: Հաճախ նվաճված տարածքների բնակչությունը մասնակիորեն կամ ամբողջությամբ տեղահանվում և վերաբնակեցվում էր տերության այլ հատվածներում՝ գերազանցապես նորանվաճ երկրներում կամ սահմանային գոտիներում: Թիգլաթպալասարի գահակալության առաջին իսկ տարում տեղ գտան այդպիսի վերաբնակեցումներ: Արշավելով Բաբելոնիա և ընդդեմ քաղղեական ցեղերի՝ ասորեստանցիներն այստեղից տերության արևելյան սահմաններ տեղափոխեցին բնակչության խոշոր զանգվածներ: Միայն Թիգլաթպալասարի օրոք վերաբնակեցվեց ավելի քան 400 հազ. մարդ:

Հաջորդ քայլը ռազմական բարեփոխումներն էին: Նախկին աշխարհագրի փոխարեն հիմք դրվեց պրոֆեսիոնալ բանակին, այսպես կոչված՝ «արքայական զնդին»: Այն պահվում էր բացառապես պետական միջոցների հաշվին: Դրանով նվազագույնի էր հասցվում արքայի կախումը աշխարհագրին առաջնորդող աստիճանավորներից:

Կազմավորվեցին «նահանգային զորքեր»: Յուրաքանչյուր նահանգ պարտավոր էր պահել և հանդերձավորել որոշակի թվով զորամիավորումներ, որոնք պատերազմներին մասնակցում էին արքայի պահանջով՝ իրենց նահանգապետերի հրամանատարության ներքո: «Նահանգային զորքերը» համազորային ուժեր էին և ընդգրկում էին մի քանի զորատեսակներ: Բանակ վերջնականապես մուտք գործեց հեծելազորը, որը ստորաբաժանվում էր ծանրագն և թեթևագն միավորումների: Հետևակը ևս ստորաբաժանվեց՝ ըստ զինվածության: Որպես առանձին զորատեսակ՝ առանձնացվեցին սակրավորներն ու առաջապահ-հետախույզները: Յուրաքանչյուր զորամիավորում ուներ մարտակառքերի ջոկատ, ընդ որում՝ առաջին անգամ ստեղծվեց զրահապատ քառաձի մարտակառքը: Այն տեղավորում էր չորս ռազմիկի (երկու վահանակիր, մեկ աղեղնավոր կամ տեգավոր զինվոր և մեկ կառավար): Ջրահապատ էին և՛ ռազմիկները, և՛ ձիերը: Մարտակառքային զորամասերին վերապահվում էր թեև հանդիսավոր, բայց արդեն երկրորդական դեր. առավել հաճախ դրանք մասնակցում էին շքերթների, քան մարտերի: Կարևոր նորամուծություն էր ամրացված ճամբարը:

Բանակը հանդերձավորվեց և զինված էր միակերպ, բրոնզե զենքերը փոխարինվեցին երկաթով. այն ապահովված էր մատակարարման և պաշարողական միջոցներով: Իրականացվեց հրամանատարական կազմի հստակ բաժանում՝ տասնպետից մինչև հազարապետ և զնդի հրամանատար: Կարևոր առաջընթաց արձանագրվեց մարտավարության ասպարեզում: Բարձր հրամանատարական կազմում՝ գլխավոր զորահրամանատարի կողքին, սկսում են հիշատակվել «թևերի հրամանատարները»: Բանակի բաժանումը թևերի մեծացրեց ճակատամարտում ինքնուրույն խնդիրներ լուծելու գորքերի հնարավորությունը: Աճեց բանակի թվաքանակը: Ասորեստանյան տարածքներում տեղաբաշխված միայն կայազորային ուժերի թիվը հասնում էր առնվազն 35 հազ. մարդու:

Ռազմաքաղաքական այս բարեփոխումների արդյունքում Ասորեստանը դարձավ Առաջավոր Ասիայի առաջատար ռազմական պետությունը և ի գործու էր ձեռնամուխ լինելու իր երբեմնի հզորության վերականգնման գործին:

Ասորեստանի առջև կանգնած առաջին խոչընդոտը Վանի թագավորությունն էր, որը Սարգուրի II-ի օրոք գտնվում էր իր հզորության բարձրակետին: Գրեթե ողջ արևմտյան Իրանը, այն է՝ Ջագրոսյան տարածաշրջանը, այստեղով անցնող առևտրական կարևորագույն ուղիներով հանդերձ, գտնվում էր Վանի թագավորության վերահսկողության ներքո, որն իրականացվում էր ենթակա թագավորությունների ուժերով, ինչպիսիք էին Մանան և Պարսուան: Վանի թագավորությունը վերահսկում էր նաև Փոքր Ասիան Հյուսիսային Սիրիայով Միջագետքին կապող ճանապարհ-

ներն իր արևմտյան դաշնակիցների՝ լուվիական պետությունների միջոցով, որոնց տարածքով դուրս էր եկել Միջերկրական ծով:

Թիզլաթալասար III-ի առաջին արշավանքներն ուղղված էին Արևմտյան Իրանում հյուսիսային հզոր հարևանի դիրքերը չեզոքացնելուն: Արևելյան արշավանքն ապահովագրելու նպատակով նա Վանի թագավորության դեմ ելույթի դրդեց լուվիական Կումմուխ երկրի արքա Կուշտաշպի(լի)ին, որի երկիրը վաղուց էր վայելում Ասորեստանի հովանավորությունը: Մինչ Սարգուրին գրադված էր Կումմուխի դեմ մղվող մարտերով, Ք. ա. 744 թ. ասորեստանյան բանակը շարժվեց Իրանական բարձրավանդակ: Արշավանքի արդյունքում վերացվեց Զագրոսյան երկրներից Պարսուայի և Բիթ-Խամբանի անկախությունը. նրանց տարածքներից կազմավորվեցին նույնանուն նահանգներ: Նորանվաճ տարածքներում հիմնադրվեցին ամրոցներ և բնակավայրեր: Դրանով Ասորեստանն ապահովագրեց իր արևելյան սահմանները և դարձավ դեպի արևմուտք, ուր ծավալվում էին հիմնական իրադարձությունները:

Վանի թագավորության հետ բախումը տեղի ունեցավ Թիզլաթալասարի գահակալության երկրորդ տարում (Ք. ա. 743 թ.): Արքան արշավեց Վանի թագավորության գլխավոր դաշնակիցներից Բիթ-Ագուսի երկրի արքա Մատիլիուի դեմ և պաշարեց նրա մայրաքաղաք Արպաղը: Այս ընթացքում Սարգուրիի խոշոր բանակը, միանալով իր դաշնակիցներ Մելիդի արքա Սուլումալի և Գուրգումի արքա Թարխուլարայի ուժերին, մտավ Հյուսիսային Սիրիա և շարժվեց դեպի Արպաղ: Ճակատամարտը տեղի ունեցավ Կումմուխի Քիշտան և Խալպու քաղաքների մերձակայքում: Ասորեստանյան բանակը վճռական հաղթանակ տարավ:

Վանի թագավորության պարտությունը թույլ տվեց Թիզլաթալասարին զարգացնել հաջողությունը: Եռամյա պաշարումից հետո նվաճվեց Արպաղը (Ք. ա. 740 թ.): Վանի թագավորությունը շարունակում էր աջակցել իր դաշնակիցներին Ասորեստանի դեմ նրանց մղած պայքարում: Դրա վկայություններից է Ք. ա. 739 թ. Վանի թագավորության գերիշխանության ներքո գտնվող Ուլուբա երկրի դեմ ձեռնարկված ասորեստանյան արշավանքը: Ասորեստանցիներն այստեղ նվաճեցին որոշ տարածքներ՝ դրանցից կազմավորելով նոր նահանգ: Գրավվեց նաև հակաասորեստանյան դաշինքի նոր կենտրոնի վերածված Կուլլանի քաղաքը (Ունքի-Պատտին), որով ծանր հարված հասցվեց Վանի թագավորության ազդեցությանը Հյուսիսային Սիրիայում: Տասնյակ երկրներ, այդ թվում՝ Սամալը, Կարգամիսը, Դամասկոսը, Սամարիան, փյունիկյան քաղում իշխանություններ, ինչպես նաև Վանի թագավորության դաշնակիցներ Մելիդն ու Գուրգումը, հրաժարվեցին հետագա պայքարից: Ասորեստանյան հարկատուների շարքում էր նաև փոքրասիական Թաբալ երկիրը, որն այս ժամանակ ընդգրկում էր մոտ երկու տասնյակ իշխանություններ: Հյուսիսային Սիրիայում ասորեստանցիները կազմավորեցին երկու նոր նահանգներ՝ Խատարիկկա և Ծիմիրրա:

Վանի թագավորության դիրքերը սասանվեցին նաև արևելքում: Դեռևս Ք. ա. 744 թ.՝ իրանական առաջին արշավանքի ժամանակ, տեղի էր ունեցել Թիզլաթալասարի հանդիպումը Մանայի արքա Իրանգուի հետ: Ասորեստանցիները փորձում էին

ստանալ մանացիների աջակցությունը՝ խոստանալով նրանց օժանդակել Վանի թագավորության գերիշխանությունից ազատվելու համար: Երկու արքաների հանդիպումը կրկնվեց Ք. ա. 737 թ.: Մանայի աջակցությունը հնարավորություն տվեց Թիզլաթալասարին արձանագրելու աննախադեպ հաջողություններ: Տասնյակ մարական ցեղեր դարձան Ասորեստանի հարկատուներ: Ասորեստանյան ազդեցության տակ հայտնվեցին Մանան և Էլլիպին: Բացի այդ, ապահովվեց ասորեստանյան բանակի մատակարարումը ձիերով: Այժմ արդեն Թիզլաթալասարը կարող էր մտածել Վանի թագավորությունից ակնկալվող վտանգն ընդմիշտ վերացնելու մասին: Արդեն Ք. ա. 736 թ. արձանագրվեցին Ասորեստանի և Վանի թագավորության հերթական բախումները Նալ լեռան շրջակայքում:

Ք. ա. 735 թ. Թիզլաթալասար III-ը արշավեց Վանի թագավորություն և առաջացավ մինչև մայրաքաղաք Տուշպա: Քաղաքը գրավվեց և ավերվեց, թեև չհաջողվեց տիրել անառիկ միջնաբերդին: Վանի թագավորության գերիշխանության տակ գտնվող Խաբիի և Ուլուբա երկրները կցվեցին Ասորեստանին: Վանի թագավորությունը կորցրեց նաև իր մերձեփրատյան տիրույթները, մասնավորապես Կումմուխին հարևան հինգ ամրոցներ և Էնզի(տե) երկիրը:

Ք. ա. 734 թ. Թիզլաթալասարն արշավեց դեպի փյունիկյան ծովափ և Պաղեստին՝ հասնելով մինչև Գազա և «Եգիպտոսի հովիտ»: Արդյունքում Ասորեստանի վերահսկողության տակ հայտնվեցին Եգիպտոսը Հյուսիսային Սիրիային, Փյունիկիային, Միջագետքին և Արաբական թերակղզուն կապող առևտրական ուղիները: Սակայն միշտ չէ, որ գործերը հարթ էին ընթանում: Ասորեստանի դեմ հանդես եկան փյունիկյան, արամեական պետական կազմավորումներն ու իսրայելական մի քանի համայնքներ: Միջամտելով մի կողմից՝ Դամասկոսի և Իսրայելի գլխավորած դաշինքի, իսկ մյուս կողմից՝ Հուդայի միջև ընթացող պատերազմին՝ Ք. ա. 733 թ. Թիզլաթալասարը մեկ անգամ ևս արշավեց Հյուսիսային Սիրիա և Պաղեստին: Միայն Դամասկոսի և Իսրայելի ջախջախումը Ք. ա. 732 թ. վերջնականապես ամրապնդեց ասորեստանյան դիրքերը հարավ-արևմուտքում: Գերեվարվեց մեծաթիվ բնակչություն, այստեղ կազմավորվեցին ասորեստանյան երեք նոր նահանգներ:

Թիզլաթալասարի նվաճումների արդյունքում Ասորեստանի տարածքները գրեթե կրկնակի անգամ ընդարձակվեցին: Բաբելոնիան հայտնվեց ասորեստանյան փաստացի շրջափակման մեջ: Այն խոր ճգնաժամ էր ապրում այստեղ ծավալված գահակալական պայքարի պատճառով, որին հավելվել էին տնտեսական դժվարությունները: Պատահական չէ, որ այստեղ անգամ ձևավորվեց ասորեստանյան ուժով ստեղծված իրավիճակին վերջ տալու կողմնակիցների խմբավորում: Վերջինիս հրավերով Ք. ա. 729 թ. Թիզլաթալասարը մտավ Բաբելոնիա և ջախջախեց քաղղեական ցեղերին՝ գերեվարելով ավելի քան 120 հազար մարդու: Բաբելոնյան իրադարձություններին էլամական հնարավոր միջամտությունը բացառելու նպատակով առանձին արշավանք իրականացվեց Էլամի սահմանամերձ շրջաններ, որոնք գրավվեցին և ներառվեցին Ասորեստանի կազմում: Թիզլաթալասարը հռչակվեց բաբելոնյան արքա՝ ստանալով Պուլու անունը: Բաբելոնիան միացվեց Ասորեստանին:

2. ՍԱԼՄԱՆԱՍԱՐ V ԵՎ ՍԱՐԳՈՆ II

Թիզլաթալասար III-ի հաջորդ Սալմանասար V-ը (Ք. ա. 726-722 թթ.) ժառանգեց հսկայական կայսրություն, ինչպես նաև բարելոնյան գահը, ուր նա կառավարում էր Ռուլայ անունով: Սալմանասարը սկսեց հենվել իր հոր օրոք ձևավորված զինվորական վերնախավի վրա: Վերջիններս դժգոհ էին երկրում քրմության ունեցած տնտեսական հզորությունից և վերջինիս քաղաքական դերակատարությունից: Սալմանասարը սկսեց վարել ասորեստանյան խոշոր քաղաքների ինքնավարությունը սահմանափակելու, քրմության դերը նվազեցնելուն ուղղված քայլեր: Օրինակ՝ վերացվեցին Աշուր քաղաքի արտոնությունները:

Իր արտաքին քաղաքականության մեջ նա հենվում էր զինվորականության վրա: Սալմանասար V-ը ձեռնամուխ եղավ Պաղեստինի վերջնական նվաճմանը: Ք. ա. 724 թ. ասորեստանյան բանակը պաշարեց Իսրայելի թագավորության մայրաքաղաք Սամարիան: Քաղաքի պաշարման անհաջող ընթացքը ազդակ հանդիսացավ Սալմանասարի քաղաքականությունից դժգոհ ուժերի համար: Կազմակերպված դավադրության արդյունքում արքան գահընկեց արվեց և սպանվեց: Գահ բարձրացավ նրա եղբայր Սարգոն II-ը (Շարրում-կեն, Ք. ա. 721-705 թթ.):

Սարգոնի օրոք որդեգրվեց նոր գաղափարախոսություն, որի հիմքում ընկած էր գրեթե միապաշտության հասած Աշուրի պաշտամունքի բացարձակացումը: Նրա պաշտամունքը ասորեստանցիները սկսեցին ներդնել հարևան երկրներում, որ հաճախ ուղեկցվում էր պաշտամունքային հնագույն ավանդույթներ ունեցող կենտրոնների ոչնչացմամբ (օրինակ՝ Կումմեն և Մուծածիրը՝ Թեշուր և Խալդի աստվածների պաշտամունքի գլխավոր կենտրոնները): Փորձ արվեց Աշուրի պաշտամունքը ներդնելու անգամ Բաբելոնում:

Սարգոն II-ի առաջին արշավանքներն ուղղված էին դեպի արևմուտք: Կարկարի մոտ նա ջախջախեց Համատի արքա Յաուրիդիի և նրա դաշնակիցների զորքերը, հնազանդեցրեց Ասորիքը, ապա ուղղվեց դեպի Սամարիա: Գրավելով քաղաքը՝ նա այստեղից գերեվարեց շուրջ 27 հազ. մարդ, քաղաքը վերակառուցեց և բնակեցրեց տերության այլ շրջաններից բերված բնակչությամբ. այս երկրամասը վերածվեց ասորեստանյան նահանգի: Ասորեստանցիները շարժվեցին դեպի եգիպտական սահման, գրավեցին Գազան, ապա ջախջախեցին Գազայի արքա Խանունիին օգնության եկած եգիպտական բանակը: Թերևս նույն արշավանքի ժամանակ հպատակեցվեց նաև Հուդայի թագավորությունը:

Ք. ա. 712 թ. Սարգոնն արշավեց դեպի Պաղեստին: Արշավանքի պատճառը Աշուրում տեղ գտած իրադարձություններն էին: Աշուրի արքա Ազուրիին Սարգոնը հենացրել էր գահից՝ գահ բարձրացնելով նրա եղբայր Ախիմետիին: Սակայն աշուրցիները հրաժարվեցին նրա իշխանությունը ձանաչելուց և գահ բարձրացրին ոմն Յամանիի: Վերջինս փորձեց իր կողմը գրավել Հուդայի, Մոավի, Էդոմի և Պաղեստինի տիրակալներին՝ ձգտելով դաշնակցել նաև փյունիկյան քաղաքների և Եգիպտոսի հետ: Սարգոնը շտապ գործ ուղարկեց, որը գրավեց Աշուրը: Յամանին, որը

փախել էր Քուշ (Եթովպիա), վերջինիս տիրակալ Շաբակայի կողմից հետագայում հանձնվեց ասորեստանցիներին: Աշուրը վերակազմավորվեց ասորեստանյան նահանգի: Ասորեստանցիները կատարեցին վերաբնակեցումներ՝ տերության արևելյան սահմաններից այստեղ գաղթեցնելով զգալի թվով բնակչություն: Ք. ա. 706 թ. սահմաններում առաջին անգամ Ասորեստանը իր ազդեցությունը տարածեց նաև Կիպրոսում:

Դժվար էին ընթանում Սարգոնի գործերը Բաբելոնիայում: Բաբելոնյան վերնախավի հակասորեստանյան ուղղվածությամբ խմբավորումը Ք. ա. 721 թ. քաղղեսական Բիթ-Յակին երկրի առաջնորդ Մարդուկ-ապլա-իդդինային հրավիրեց Բաբելոն և թագադրեց որպես Բաբելոնիայի արքա: Սարգոնը Դեր քաղաքի մոտ Ք. ա. 720 թ. բախվեց Բաբելոնիայի դաշնակից էլամական բանակի հետ: Ասորեստանյան բանակը պարտվեց, և շուրջ տասը տարի Սարգոնը չէր փորձում նոր արշավանք իրագործել Բաբելոնիա:

Ասորեստանյան արքայի պատվությունը մասամբ պայմանավորված էր երկրի հյուսիսային և հյուսիսարևմտյան սահմաններում ստեղծված իրավիճակով: Սարգոնի II-ի կրած պարտությունից հետո Վանի թագավորությունը նոր վերելք էր ապրում Ռուսա I-ի օրոք: Վերջինս վերականգնեց Վանի թագավորության գերիշխանությունը Մուծածիրում, ապա ձեռնամուխ եղավ Ասորեստանի դաշնակից Մանայի թագավորությունը տրոհելուն: Ռազմական միջամտության շնորհիվ Մանային ենթակա Ջիկիրտու, Անդիա և Ուիշդիշ երկրներում իշխանության բերվեցին Վանի թագավորության կողմնակիցները: Մանայում սպանվեց ասուրամետ արքա Աձան, և գահ բարձրացվեց Ուլուսունուն: Արդյունքում Ասորեստանը կորցրեց կարևոր դաշնակցի:

Դերի ճակատամարտից հետո Սարգոնը ստիպված էր իրականացնել մի շարք արշավանքներ՝ փորձելով պահպանել վերահսկողությունը Մանայի ու Տավրոսի լեռնագոտու պետական կազմավորումների նկատմամբ: Դրանց բարձրակետը Ք. ա. 714 թ. Սարգոնի իրագործած «VIII տարվա արշավանքն էր», որն ավարտվեց փայլուն հաջողությամբ: Ուաուշ լեռան մոտ (ներկայիս Սոհենդը՝ Ուրմիա լճից արևելք) պարտության մատնելով Ռուսային և նրա դաշնակիցներին՝ Սարգոնը ներխուժեց Վանի թագավորության մերձուրմյան տիրույթներ: Ասորեստանյան զորքերը պտույտ գործեցին Ուրմիա լճի շուրջը՝ գրավելով յոթ մարզ և ավերելով 430 բնակավայր: Արշավանքն ավարտվեց Մուծածիրի նվաճումով և Վանի թագավորության գլխավոր՝ Խալդի աստծո «գերեվարությամբ»: Վանի թագավորությունը կորցրեց ռազմավարական մեծ նշանակություն ունեցող տարածքներ Ուրմիայի հարավում և արևմուտքում, որոնք անցան մանացիների վերահսկողության տակ: Մուծածիրը կցվեց Ասորեստանին:

Սարգոն II-ի արևելյան քաղաքականության կարևոր մասն էր կազմում Զագրոսյան լեռնագոտին: Այստեղ Ասորեստանի հերթական գոհը Միջագետքի հետ ավանդաբար կապված՝ արևմտյան Իրանի հանգուցային կետերից Կիշեսսուն էր: Ք. ա. 716 թ. Սարգոնը նվաճեց Կիշեսսուն: Շրջակա տարածքները կցվեցին Կիշեսսունին, և կազմավոր-

վեց նոր նահանգ՝ Կիշեսաու կենտրոնով: Մեկ այլ նահանգ կազմավորվեց Խարխարի տարածքներից: Արևելքում Սարգոնն այլևս խոշոր նվաճումներ չիրագործեց:

Միայն դրանից հետո Սարգոնը վերստին բնեռվեց բաբելոնյան խնդրին: Ք. ա. 710 թ. Սարգոն II-ը մեկ անգամ ևս արշավեց Բաբելոնիա: Ասորեստանյան ներխուժմանը դիմակայելու անգոր Մարդուկ-ապլա-իդդինան հեռացավ Բաբելոնիայից: Ք. ա. 709 թ. Սարգոնը, Դուր-Յակին քաղաքի մոտ ջախջախելով քաղղեացիներին, գրավեց Մարդուկ-ապլա-իդդինայի վերջին հենարանները: Բիթ-Յակինից ասորեստանցիները գերեվարեցին ավելի քան 90 հազ. մարդ: Նույն տարում Սարգոնը թագադրվեց որպես Բաբելոնիայի արքա:

Դեռևս Ասորեստանի և Վանի թագավորության հակամարտության տարիներին փորձելով լուծարել Փոքր Ասիայի լուվիական պետությունների դաշինքը Վանի թագավորության հետ՝ սարգոնյան արքունիքը սկսեց մեկը մյուսի հետևից վերացնել լուվիական պետությունները: Դեռևս Ք. ա. 718 թ. վերացվեց Թարալի Շինուխտու երկրի, Ք. ա. 717 թ.՝ լուվիական երկրներից հզորագույնի՝ Կարգամիսի պետականությունը: Նույն ճակատագիրն ունեցավ Բիթ-Բուրուտաշը 713 թ.: Սարգոնի հետևողական քաղաքականությունը՝ վերացնելու լուվիական պետությունները, դեռևս կանգուն երկրներին մղում էր մերձենալու Վանի թագավորության, ինչպես նաև հակասորեստանյան ցանկացած ուժի հետ, ինչպիսին էր Փոյուզիան, և ինչպիսիք կարող էին լինել Արևելյան Փոքր Ասիայում աստիճանաբար ամրապնդվող կիմերական ցեղերը: Անգամ Խիլակկուի և Բիթ-Բուրուտաշի արքա Ամբարիսը, որն ամուսնացել էր Սարգոնի դստեր հետ, հեռացավ Սարգոնից, ինչի համար գահընկեց արվեց: Ք. ա. 712-711 թթ. Մելիդի և Գուրգումի հակասորեստանյան ելույթներում Վանի թագավորությունն ըստ երևույթին ուներ որոշակի դերակատարում:

Վանի թագավորության հետագա միջամտությունները բացառելու նպատակով Ք. ա. 712 թ.՝ Մելիդի և Կամմանուի նվաճումից հետո, Սարգոնը վերջինիս հինգ քաղաքներ վերածեց հսկիչ ամրոցների Վանի թագավորության դեմ՝ ձգտելով սեպ խրել նրա և լուվիական պետությունների միջև: Դա չխանգարեց վերջիններիս փորձերին՝ կապեր հաստատելու Վանի թագավորության հետ: Հայտնի է Կուեի արքա Ուրիկկիի կողմից Վանի թագավորություն ուղարկված պատվիրակության մասին, որին փոյուզացիները ձերբակալել էին և հանձնել ասորեստանցիներին: Ք. ա. 708 թ. Սարգոնը վերացրեց ասորեստանյան երբեմնի հովանավորյալ Կումմուխի պետությունը: Դրա առիթը վերջինիս արքա Մուտալլուի հրաժարվելն էր ասորեստանյան գերիշխանությունից: Հավատարիմ նոր քաղաքականությանը՝ Սարգոնը տեղահանեց Կումմուխի բնակչությանը և վերաբնակեցրեց Հարավային Միջագետքում՝ Բիթ-Յակինի «քաղաքներում», իսկ դրանց արամեական և քաղղեական բնակչությանը վերաբնակեցրեց Կումմուխում և Մելիդում:

Այս քայլը առավել բարդացրեց Ասորեստանի և Վանի թագավորության հարաբերությունները: Երկու երկրներն էլ սկսեցին նախապատրաստվել նոր պատերազմի: Առաջին ընդհարումներից հետո, երբ թվում էր՝ պատերազմն անխուսափելի է, զարգացումներն ընթացան այլ ուղղությամբ. խնդիրներ ծագեցին Ասորեստանի արևելափոքրասիական սահմանների մոտ:

Ք. ա. 708 թ. հաջորդած շրջանում, երբ հարավարևելյան Փոքր Ասիայում Սարգոնը վերջ տվեց պետականության հին ավանդույթներ ունեցող լուվիական պետությունների գոյությանը, նկատվում են քաղաքական նոր տեղաշարժեր: Այստեղ սկսել էին իրենց խոսքն ասել դեռևս ոչ այնքան տեսանելի ուժեր, որոնցից էր թաբայան Ատունա պետությունը: Վերջինիս գործողությունները Ասորեստանին ենթակա կամ նրա ազդեցության տակ գտնվող փոքրասիական տարածքներում լուրջ սպառնալիք էին պարունակում այստեղ ասորեստանյան տիրապետության համար:

Կուեի ասորեստանյան նահանգապետ Աշշուր-շարրու-ուծուրին Սարգոնի հղած նամակից պարզ է դառնում, որ Ատունան և Իշտունդան Ք. ա. 709 թ. սահմաններում հարձակվել և գրավել էին թաբայան մեկ այլ երկրի՝ Տուվանայի արքա Ուրբալայի քաղաքները, որը Ասորեստանի հետ բարեկամական հարաբերություններ ուներ դեռևս Թիզլաթպալասար III-ի ժամանակներից: Սակայն այն փաստը, որ Սարգոնը ստիպված էր Ք. ա. 705 թ. անձամբ գլխավորել Փոքր Ասիա իրագործված արշավանքը, վկայում է իրավիճակի բարդության մասին: Հավանաբար Թիզլաթիմուտի Կուլումմու քաղաքից սերող ումն Գուրդիի դեմ Ք. ա. 705 թ. մղված ճակատամարտում ասորեստանյան բանակը պարտվեց, իսկ Սարգոնը զոհվեց:

3. ՍԻՆԱԽԵՆԵՐԻԲ

Սինախներիբը (Սին-ախսե-էրիբա, Ք. ա. 705-681 թթ.) աստվածավախ անձնավորություն էր: Գահ բարձրանալուց անմիջապես հետո նա «դիմեց» աստվածներին՝ խնդրելով իրեն հայտնել, թե որն էր իր հոր՝ Սարգոնի մեղքը: Պատճառներից մեկը, որը որպես հարցում ուղղված էր Շամաշ աստծուն, վերաբերում է Սարգոնի կրոնական քաղաքականությանը: Սինախներիբը ցանկանում էր իմանալ, թե «(արդյո՞ք) դա տեղի ունեցավ այն պատճառով, որ նա (Սարգոնը) [երկրպագում էր Ասորեստանի] աստվածներին [չափից առավել՝ նրանց գերադասելով (բառացի՝ տեղավորելով վերևում)] Բաբելոնիայի աստվածներից»: Շամաշ աստծո դրական պատասխանի դեպքում Սինախներիբը Մարդուկ աստծուն խոստանում էր մեղքը քավելու համար տաճար կառուցել այն նույն վայրում, որտեղ զոհվել էր Սարգոնը:

Վախենալով, որ աստվածները կլքեն իրեն, ինչպես ժամանակին Սարգոնին, Սինախներիբն անգամ խուսափում էր արձանագրություններում իր հոր անունը հիշատակելուց: Նա ձգտում էր հեռու մնալու այն ամենից, ինչը հիշեցնում էր հորը: Օրինակ՝ նա անմիջապես տեղափոխեց իր նստավայրը նորակառույց Դուր-Շարրուկինից Նինվե: Սինախներիբն այստեղ իրականացրեց հսկայածավալ շինարարական աշխատանքներ. վերակառուցվեցին Նինվեի տաճարները, կառուցվեց նոր պալատական համալիր, քաղաքն էպես ընդարձակվեց, շրջապատվեց կրկնակի պարիսպներով և զբաղեցնում էր շուրջ 750 հեկտար տարածք: Քաղաքի բնակչությունը կարճ ժամանակամիջոցում աճեց՝ մոտ 15 հազարից հասնելով գրեթե 120 հազարի:

Ասորեստանյան նոր գահակալը շատ խնդիրներ ուներ տերության սահմանների երկայնքով, որոնցից առաջնահերթը բաբելոնյան ուղղությունն էր: Օգտվելով Սար-

գոնի գոհվելուց՝ Մարդուկ-ապլա-իդդինան՝ Ք. ա. 703 թ. հերթական անգամ տիրեց Բաբելոնին: Նրան օգնելու նպատակով էլամական արքա Շուտրուկ-Նախխունտեն Բաբելոնիա ուղարկեց խոշոր բանակ, սակայն ճակատամարտերում էլամա-բաբելոնյան զորքերը ջախջախվեցին: Ասորեստանցիները սկսեցին ամայացնել Բաբելոնիայի տարածքը: Միայն գերեվարվածների թիվը հասնում էր 208 հազար մարդու: Սինախներիբը բաբելոնյան գահին կարգեց ոմն Բել-իբնի: Մի քանի տարի անց Բել-իբնին գահից հեռացվեց, և Սինախներիբը արքա հռչակեց իր գահաժառանգորդի Աշշուր-նադին-շումին: Մարդուկ-ապլա-իդդինայի՝ Բաբելոնի գահին տիրելու վերջին փորձը, որն իրականացվեց Ք. ա. 700 թ., կրկին ձախողվեց:

Սինախներիբը վերականգնեց նաև Ասորեստանի սասանված հեղինակությունը արևելամիջերկրածովյան ավազանի երկրներում: Ք. ա. 701 թ. ձեռնարկված արշավանքով պատմվեց Սիդոնի ապստամբ արքա Լուլին. վերջինս ստիպված էր փախչել Կիպրոս: Ասորեստանցիները նրա գահին բազմեցրին Տուբա՛լուին, որը պարտավորվեց հարկ վճարել Ասորեստանին: Նույն արշավանքի կապակցությամբ Սինախներիբի արձանագրությունները հայտնում են «Ամուրրու երկրի արքաներից» հարկ ստանալու մասին:

Սիրիայում ասորեստանյան տիրապետությունը տապալելուն էր միտված պաղեստինյան էքրոն քաղաքի ապստամբությունը: Վերջինիս բնակիչները տապալել էին ասորեստանյան դրածո Պադիին և քաղաքը հանձնել Եգեկիելին: Վերջինիս աջակցում էր Քուշի թագավորությունը, որի տիրապետության տակ էր նաև Եգիպտոսը: Սինախներիբն արշավեց Պաղեստին, ջախջախեց եգիպտական և եթովպական զորքերին, գրավեց էքրոնը, ապա և պաշարեց Հուդայի մայրաքաղաք Երուսաղեմն ու թագավորության «46 ամուր, պարսպապատ քաղաքները»: Թեև Երուսաղեմը գրավել չհաջողվեց, բայց հրեաները ստիպված էին ընդունել Սինախներիբի պարտադրած ծանր պայմանները: Հուդայի թագավորությունը կորցրեց իր տարածքների զգալի մասը, որոնք անցան նրա հարևաններին (Աշդոդ, Գազա, Էքրոն), Եգեկիելը ստիպված էր վճարել հսկայական ռազմատուգանք և տալ պատանդներ: Դեպի Հուդա Սինախներիբի իրագործած արշավանքից հետո՝ ընդհուպ մինչև «Բաբելոնյան գերություն», Հուդայի թագավորությունը ստացած հարվածներից այդպես էլ չվերականգնվեց: Միայն գերեվարվածների թիվը անցնում էր 200 հազարից:

Արևմուտքում Ասորեստանը այլևս լուրջ խնդիրներ չունեցավ: Ասորեստանյան ռազմական ներկայությամբ շահագրգռված էին հատկապես անդրհորդանանյան թագավորությունները (Ամոն, Մոավ, Էդոմ), որոնց տարածքով անցնում էին առևտրական կարևոր մայրուղիներ՝ այդ երկրների տնտեսության հիմքը: Ասորեստանն անհրաժեշտ էր նրանց՝ պաշտպանվելու Արաբական անապատի ցեղերի ավարառուական արշավներից:

Ջբաղված լինելով տերության այլ հատվածներում՝ Սինախներիբը զուսպ քաղաքականություն էր վարում արևելքում: Այստեղ նա սահմանափակվում էր տարածքային փոքր հավելումներով կամ զագրոսյան այս կամ այն երկրի սահմանները վերաձևելով: Ասորեստանյան իշխանության ամրապնդման նպատակով այստեղ իրականացվեց վարչական նոր բաժանում, և կազմավորվեցին հինգ նահանգներ: Սինախներիբի օրոք Վանի թագավորության հետ ևս Ասորեստանը պահպանում էր բարեկամական հարաբերություններ:

Այլ էր իրավիճակը հարավարևելյան Փոքր Ասիայում: Սարգոնի պարտությունից հետո Ասորեստանը կորցրել էր իր գերիշխանությունը Մելիդի և Թիլգարիմուի նկատմամբ: Սինախներիբը Ք. ա. 696 և 695 թթ. երկու արշավանք իրագործեց դեպի հարավարևելյան Փոքր Ասիա՝ այն նույն ուժերի դեմ, որոնց դեմ մղված ճակատամարտում գոհվել էր Սարգոնը. աղբյուրը այս կապակցությամբ վերստին հիշում է Գուրդիին: Թեև արքայի տեքստերը հայտնում են Թիլգարիմու քաղաքի նվաճման մասին, սակայն ամրապնդվել այստեղ նրան չհաջողվեց: Սինախներիբի արձանագրած հաղթանակը բավարար էր միայն Դաշտային Կիլիկիայում՝ Կուեում, նրա տիրապետության մասնակի պահպանման համար. Մելիդը Սինախներիբի հաջորդ Ասարհադդոնի օրոք շարունակում էր մնալ որպես թշնամի երկիր:

Սինախներիբին չհաջողվեց ամուր հաստատվել նաև Բաբելոնիայում: Այստեղ գործող ասուրամեթ հզոր խմբավորումը, հենվելով էլամի վրա, փորձում էր ազատվել ասորեստանյան գերիշխանությունից: Բաբելոնյան գործերին էլամի հետագա միջամտությունները բացառելու նպատակով Սինախներիբը Ք. ա. 694 թ. արշավեց էլամի դեմ: Որոշ հաջողություններին հետևեց էլամցիների պատասխան արշավանքը Բաբելոնիա, որի ընթացքում Աշշուր-նադին-շումին գերի ընկավ: Միայն Ք. ա. 693 թ. ասորեստանցիները մեկ անգամ ևս տիրեցին Բաբելոնին: Էլամցիների կողմից բաբելոնյան գահին նշանակված Ներգալ-ուշեգիբը գերի ընկավ ասորեստանցիներին: Հաջորդ տարի Սինախներիբը ներխուժեց էլամ և գրավեց էլամական որոշ տարածքներ: Մեկ տարի անց տեղի ունեցավ խոշոր ճակատամարտ Խալուեում՝ էլամա-բաբելոնյան և ասորեստանյան զորքերի միջև, որտեղ կողմերից և ոչ մեկը չհասավ հաղթանակի: Սինախներիբը Ք. ա. 689 թ. կրկնեց իր արշավանքը հարավ և պաշարեց Բաբելոնը: Քաղաքը գրոհով գրավվեց և հավասարեցվեց հողին, ողջ մնացած բնակչությունը գերեվարվեց:

Քրմական վերնախավին սիրաշահելու նպատակով Սինախներիբը գահաժառանգ հռչակեց իր կրտսեր որդի Ասարհադդոնին: Վերջինիս մայրը՝ Նաքիա-Ջակուտուն, բաբելոնուհի էր, որը զգալի դեր խաղաց այդ հարցում: Ապահովության համար Սինախներիբը Ասարհադդոնին հեռացրեց մայրաքաղաքից: Ասարհադդոնի նշանակումով Սինախներիբն իր դեմ տրամադրեց ավագ որդուն, ով աջակիցներ ուներ ասորեստանյան վերնախավում:

Ք. ա. 681 թ. Սինախներիբը սպանվեց իր որդու կողմից տաճարում աղոթելիս: Ինչպես «Աստվածաշնչում» է նշվում. «Երբ նա (Սինախներիբը) երկուպզում էր իր Նեարաբ աստծու տանը, նրա որդիներ Ադրամելէքն ու Սարասարը նրան սրով հարուստեցին և Արարատի երկիրը փախան: Նրա փոխարեն թագաւորեց իր որդին՝ Ասորդանը»:

4. ԱՍԱՐՀԱԴԴՈՆ

Ասարհադդոնը (Աշշուր-ախու-իդդինա) (Ք. ա. 681-669 թթ.) հարկադրված էր իր իրավունքները պաշտպանել գեների ուժով: Խանիզալքատում (Հյուսիսային Սիրիա) նրա և եղբայրների միջև տեղի ունեցավ ճակատամարտ, որն ավարտվեց

Ասարհադղոնի հաղթանակով, և հայրասպան եղբայրները ստիպված էին փախչել: Ասարհադղոնը գրավեց մայրաքաղաքը, ուր և Ք. ա. 680 թ. հանդիսավորությամբ քազմեց ասորեստանյան գահին:

Իր գահակալության սկզբից եթե Ասարհադղոնը սկսեց սիրաշահել իշխող խավերին՝ փորձելով նաև հարթել հատկապես քրմական և զինվորական վերնախավերի միջև առաջացած տարաձայնությունները: Արքայի հրամանով սկսվեց Բաբելոնի վերականգնումը: Հայտարարվեց, թե աստվածները ներել են Բաբելոնին և կամենում են վերադառնալ այնտեղ: Բաբելոն վերադարձան Ասորեստան գերեվարված բնակիչները:

Դեռևս Ք. ա. 707–705 թթ. հետո Ասորեստանն արևելափոքրասիական–վերինեփրատյան գոտում գործ ուներ նոր իրողությունների հետ: Այստեղ ձևավորվել էին քաղաքական ուժեր, որոնք ցուցաբերում էին մեծ կենսունակություն: Այս հանգամանքն էր, որ Ասորեստանի և Վանի թագավորության միջև հարաբերությունների որոշակի բարելավման պատճառ դարձավ, քանի որ երկու տերություններն էլ խնդիրներ ունեին նույն շրջաններում: Ասորեստանյան աղբյուրները հայտնում են Ասարհադղոնի և Վանի թագավորության արքա Ռուսայի միջև կնքված դաշնագրի մասին՝ հավանաբար ուղղված այն ուժերի դեմ, որոնք սպառնալիք էին ներկայացնում երկուսի համար: Այդ ուժերից էին Ատունա–Մելիդ–Թարայան միացյալ պետությունն ու կիմերական ցեղերը:

Իր գահակալումից ոչ շատ անց՝ Ք. ա. 679 թ., Խուրշնայի ձակատամարտում (հարավարևելյան Փոքր Ասիա) ասորեստանյան արքան տարավ կարևոր հաղթանակ՝ ջախջախելով կիմերներին, որոնց առաջնորդ Թեուշպան սպանվեց: Սակայն անհաջողությամբ ավարտվեց Ք. ա. 675 թ. Մելիդ իրագործված ասորեստանյան արշավանքը: Այս արշավանքի մասին ասորեստանյան աղբյուրները լռում են, և փաստն արձանագրել է միայն «Բաբելոնյան ժամանակագրությունը»:

Մասնավորապես, Շուրբիայի արքան սկսեց նախ խոչընդոտներ հարուցել, ապա և պարզապես արգելել ասորեստանցիների մուտքը Շուրբիա: Բացի այդ, Շուրբիան ապաստան էր տալիս ասորեստանյան փախստականներին և հրաժարվում նրանց վերադարձնել: Տեքստերից մեկում խոսվում է ինչ–որ «մարդասպանների» փախուստի մասին դեպի Շուրբիա, և չի բացառվում, որ Շուրբիայում ապաստանած լինեին նաև Սինախներիբի ավագ որդիները, որոնց համար ասորեստանյան արքունի արձանագրությունները հայտնում են, թե «... նրանք փախան հայտնի չէ, թե ուր»: Ի դեպ, հայտնի է, որ այս շրջանում խիստ լարված էին հարաբերությունները նաև Շուրբիայի և Վանի թագավորության միջև: Ք. ա. 673 թ. ասորեստանյան բանակն ուղղվեց Շուրբիա: Արշավանքի դրդապատճառը փախստականներին վերադարձնելու՝ Ասարհադղոնի պահանջի մերժումն էր Շուրբիայի արքա Իկ–Թեշուբի կողմից:

Ասորեստանյան բանակը պաշարեց Շուրբիայի մայրաքաղաք Ուպպումեն, ինչը ստիպեց Իկ–Թեշուբին համաձայնվել ասորեստանյան պահանջներին ներում հայցել: Սակայն ասորեստանցիները գրոհեցին Ուպպումեն և գրավեցին այն: Ասորեստանցի փախստականները վերադարձվեցին իրենց տերերին: Ընդ որում՝ ասորեստանցիները Վանի թագավորություն վերադարձրին նաև Շուրբիայում ապաստանած նրանց փախստականներին: Վերացվեց Շուրբիայի պետականությունը, իսկ

նրա տարածքներից կազմավորվեցին երկու նոր նահանգներ՝ Ու(պ)/Պումու և Կուլլա/իմների կենտրոններով: Շուրբիական 21 քաղաքներ վերակառուցվեցին և ստացան ասորեստանյան անվանումներ:

Այս նույն ժամանակ Ասարհադղոնը ծանր պատերազմ մղեց Մանայի թագավորության դեմ, որին գումարվեց մարերի բարձրացրած ապստամբությունը: Ք. ա. 678–672 թթ. արևելք ձեռնարկված տասնյակ արշավանքները հաջողություն չբերեցին: Մանացիները գրավեցին զգալի տարածքներ հյուսիսգագրոսյան լեռներում՝ դառնալով Ասորեստանին սահմանակից, մարական երեք նահանգներ անջատվեցին Ասորեստանից, և կազմավորվեց մարական միությունը:

Շատ ավելի հաջող էին գործերն արևմուտքում: Ք. ա. 677 թ. Ասարհադղոնը արշավանք իրագործեց դեպի փյունիկյան ծովափ՝ ընդդեմ Սիդոնի: Վերջինս, թեև ուներ անառիկ դիրք՝ գտնվելով կղզու վրա, գրավվեց և ավերվեց: Գերի ընկած Սիդոնի արքա Արդի–միկուտոսին մահապատժի ենթարկվեց: Սիդոնի տարածքը վերակազմավորվեց որպես ասորեստանյան նահանգ, իսկ քաղաքը վերականգնվեց փյունիկյան իշխանությունների ուժերով և վերանվանվեց Կար–Աշշուր–ախխե–իդ–դին: Նոր պայմանագիր կնքվեց Տյուրոսի արքա Բա՛ալի հետ, որին բաժին հասավ սիդոնյան երկու քաղաք: «Ծովափի» 22 իշխանություններ ձանաչեցին Ասորեստանի գերիշխանությունը, որով միջերկրածովյան առևտուրն ամբողջությամբ անցավ Ասորեստանի վերահսկողության տակ: Օրինակ՝ Ասարհադղոնի և Բա՛ալի միջև կնքված վերոհիշյալ պայմանագրի համաձայն՝ փյունիկյան ծովափի մոտ նավաբեկության ենթարկված տյուրոսյան առևտրական նավերի բեռը պատկանելու էր Ասորեստանին: Ասորեստանյան գերիշխանության տակ էր գտնվում Կիպրոսը, որի տասը արքաներ հիշատակվում են որպես Ասարհադղոնի, իսկ հետագայում նաև Աշշուրբանապալի հպատակներ: Հաջորդ հարվածն ուղղված էր Եգիպտոսի դեմ:

Առաջին արշավանքը Եգիպտոս իրականացվեց Ք. ա. 674 թ., սակայն ձախողվեց: Միայն Ք. ա. 671 թ. ասորեստանյան զորքերը վերստին շարժվեցին դեպի Եգիպտոս: Ճանապարհին Ասարհադղոնը պատժեց Տյուրոսի արքա Բա՛ալին, որը դաշնակցել էր Եգիպտոսի հետ: Տյուրոսը գրավվեց, և նրա տիրոջներից կազմավորվեց նոր նահանգ: Եգիպտոսում ասորեստանցիները հանդիպեցին այստեղ իշխող եթովպական հարստության արքա Տախարկայի բանակի ղեկավարությանը: Մայրաքաղաք Մեմֆիսի մոտ ասորեստանցիները ստիպված էին տալ երեք ձակատամարտ: Ի վերջո Մեմֆիսը գրավվեց, և ասորեստանյան վերահսկողության տակ հայտնվեց ողջ Ստորին Եգիպտոսը: Ձեռք բերվեց հսկայական հարստություն, գերի վերցվեց նաև փարավոնի ընտանիքը: Մեծաթիվ եգիպտացիներ՝ մասնավորապես արհեստավորներ, տարվեցին Ասորեստան: Այսուհետ Ասարհադղոնը սկսեց կրել նաև «Եգիպտոսի արքայից արքա», «Պատուրիշիի և Քուշի արքա» տիտղոսները:

Եգիպտոսը բաժանվեց մոտ երկու տասնյակ «թագավորությունների»՝ ասորեստանյան պաշտոնյաների վերահսկողության ներքո, քաղաքներում տեղադրվեցին կայազորեր: Ասորեստանի դիրքերը Եգիպտոսում, սակայն, թույլ էին: Շուտով այստեղ բռնկվեց ապստամբություն, և Տախարկան զորք ուղարկեց Ստորին Եգիպտոս:

Ասորեստանյան կայսրերը հայտնվեցին պաշարման մեջ, և Ք. ա. 669 թ. Ասարհադդոնը նոր արշավանք սկսեց Եգիպտոսը հնագանդեցնելու համար, սակայն Եգիպտոսի ճանապարհին մահացավ:

5. ԱՇՇՈՒՐԲԱՍԱԴԱԿ

Ասարհադդոնը իրեն գահաժառանգ հռչակեց կրտսեր որդուն՝ Աշշուրբանապալին (Աշշուր-բան-ապալի), իսկ երկրորդին ժառանգություն թողեց բաբելոնյան գահը: Նրա վճռի վրա մեծապես ազդել էր Ասարհադդոնի մայրը՝ Նաբիա-Ջակուտուն, որի կամքով Աշշուրբանապալին հավատարմության երդում տվեց իր «հավասար եղբայր» Շամաշշումուկինը (Շամաշ-շումա-ուկկին):

Աշշուրբանապալին իր ժամանակաշրջանի ուսյալ անձանցից մեկն էր: Տիրապետում էր մի քանի լեզուների: Նրա հրամանով էր հիմնադրվել Նինվեի գրադարանը՝ մի քանի տասնյակ հազար տեքստերով, ուր խնամքով պահվում էին արքունի գրագրությունների պատճենները, ինչպես նաև կրկնօրինակվում էին ավելի վաղ շրջանում գրված տեքստեր: Ենթադրվում է, որ դրանց մի մասը պատկանում էր Աշշուրբանապալի գրչին: Արքայի օրոք երկրում իրականացվեցին լայն շինարարական աշխատանքներ: Իր արձանագրություններում նա հպարտանում էր, թե տիրապետում է այնքան արհեստների, որքան որ կան աշխարհիս երեսին:

Աշշուրբանապալը վարում էր ակտիվ արտաքին քաղաքականություն: Նրա առաջին գործերից մեկը ասորեստանյան տիրապետությունը թոթափած Եգիպտոսը հնագանդեցնելն էր: Աջակցելով տեղի ասուրամետ արքայիկներին՝ ասորեստանյան զորքերը Ստորին Եգիպտոսից մեկ անգամ ևս դուրս մղեցին եթովպացիներին: Վերջիններիս փորձերը՝ Ք. ա. 667 թ. և Ք. ա. 663 թ. հետ գրավելու Եգիպտոսը, ավարտվեցին անհաջողությամբ: Աշշուրբանապալի եգիպտական արշավանքներին հաջորդեց փյունիկյան ծովափ ձեռնարկված պատժիչ արշավանքը, որն ավարտվեց ասորեստանյան գերիշխանության վերահաստատմամբ:

Ասորեստանցիները նպատակ չունեին յուրացնելու Եգիպտոսը՝ թերևս այն համարելով անհնար. պատահական չէ, որ վերաքնակեցումներ այստեղ ասորեստանցիները գրեթե չիրագործեցին: Նրանք ձգտում էին պարզապես տեսնելու մասնատված Եգիպտոս և թույլ չտալու վերջինիս միավորումը Քուշի արքաների իշխանության տակ, ինչն ուղղակիորեն կսպառնար Ասորեստանի դիրքերին Արևելյան Միջերկրածովքում: Սակայն Աշշուրբանապալին վիճակված չէր երկար իշխել Եգիպտոսում: Արդեն Ք. ա. 656 թ. Սախի կառավարիչներից Թուշամիլկին (Պսամմետիս I) թոթափեց ասորեստանյան տիրապետությունը:

Աշշուրբանապալի օրոք աննախադեպ աճեց ասորեստանյան ազդեցությունը Վանի թագավորության վրա: Դրան նախորդել էր Ասորեստանի և Վանի թագավորության հարաբերությունների լարված մի շրջան: Ասորեստանյան գուշակային տեքստերից մի քանիսը վերաբերում են Վանի թագավորության արքա Ուրսայի կողմից (Ռուսա II^o) Շուրբիա ներխուժման հնարավորությանը: Վերջինիս արձանագրություններից մե-

կում առկա է Ասորեստան իրականացված արշավանքը փաստող վկայություն: Հայտնի է նաև Վանի թագավորության մարզերից մեկի կառավարիչ Անդարիայի անհաջող արշավանքը դեպի Շուրբիա հավանաբար Ք. ա. 657 թ.: Ասորեստանը դրան պատասխանեց՝ Վանի թագավորության դեմ հրահրելով սկյութներին, որոնք ծանրագույն հարված հասցրին նրան: Ք. ա. 652 թ. Ռուսան ստիպված էր Աշշուրբանապալի մոտ ուղարկել դեսպանների և շնորհավորել նրա հաղթանակը Էլամի նկատմամբ:

Աշշուրբանապալի արտաքին քաղաքականության մեջ Էլամը գրադեցնում էր կարևոր տեղ, որի հետ հարաբերություններում նա շարունակում էր հավատարիմ մնալ ավանդական քաղաքականությանը՝ պահպանելով *status quo*-ն: Սակայն դա չարդարացրեց իրեն. Էլամը շարունակում էր միջամտել Բաբելոնիայի գործերին: Ասորյունավետ էին նաև Էլամը դրածո արքաների միջոցով վերահսկելու ասորեստանյան արքունիքի փորձերը: Երկու տերությունների հարաբերություններում շրջադարձային պահ էր հատկապես Շամաշշումուկինի ապստամբությանը Էլամական արքունիքի ցույց տված գինական աջակցությունը: Նինվեում վճռեցին «Էլամական հարցին» տալ արմատական լուծում:

Բաբելոնյան ապստամբության տապալումից հետո Աշշուրբանապալը ձեռնամուխ եղավ Էլամի ջախջախմանը: Ք. ա. 648/47-646 թթ. դեպի Էլամ իրագործված մի քանի արշավանքներով Էլամական թագավորությանը հասցվեց ծանրագույն հարված, և այն կազմալուծվեց: Էլամական անցքերին նախորդել էր Բաբելոնիայի արքա Շամաշշումուկինի բարձրացրած ապստամբությունը:

Ասորեստանյան քանակը շարժվեց Բաբելոնիա, և Խիթիտուի մոտ բաբելոնյան քանակը կրեց ծանր պարտություն: Ջախջախելով նաև օգնության եկած Էլամական զորքերին՝ Աշշուրբանապալը Էլամում կազմակերպեց գահակալական պայքար՝ դրանով չեզոքացնելով այս երկիրը: Շամաշշումուկինը մեկուսացվեց, և Աշշուրբանապալը անարգել մոտեցավ Բաբելոնին ու պաշարեց այն: Երեք տարվա պաշարումից հետո սովից և համաճարակից ուժասպառ քաղաքն ընկավ, Ք. ա. 648 թ. գոհվեց նաև Բաբելոնիայի արքան:

Շամաշշումուկինի ապստամբության ձնումից հետո Բաբելոնիայում գահ բարձրացվեց Կանդալանուն (Ք. ա. 647-627 թթ.): Վերջինիս անձի մասին ոչինչ հայտնի չէ, նեթադրվում է անգամ, որ դա կարող էր լինել նույն Աշշուրբանապալը, որը պարզապես բաբելոնյան գահին էր բազմել՝ ստանալով այդ անունը: Հաջորդ արշավանքով Աշշուրբանապալը պատժեց այն բոլոր ուժերին, ովքեր օգնել էին իր ապստամբ եղբորը (Էդում, Մոավ, Նաբաթեա, փյունիկյան իշխանություններ, արաբական տարբեր ցեղեր):

Թվում էր՝ Ասորեստանն այլևս խնդիրներ չունեի: Բաբելոնիան հնագանդեցված էր, Էլամն այլևս դադարել էր լուրջ դերակատար լինելուց: Դեռևս Ք. ա. 660 թ. Մանայի թագավորություն իրագործված հաղթական արշավանքի արդյունքում Աշշուրբանապալը վերադարձրել էր Ասարհադդոնի օրոք կորցրած տարածքները: Մանայում Աշշուրբանապալը կազմակերպեց արքայի սպանությունը և գահին բազմեցրեց իր դրածոյին: Ասորեստանը մասամբ վերականգնեց իր դիրքերը Փոքր Ասիայում. ասորեստանյան կթն ոչ գերիշխանությունը, ապա առնվազն հեղինակությունն էին ձանաչում փոքրա-

սիական Մելիդ-Թաքայան միացյալ պետությունը, Խիլակկուն և անգամ հեռավոր Լի-
դիան: Այսպես էր Աշշուրբանապալը հայտնում վերջինիս «հնազանդության» մասին.

«Գուզ(զ)ուն՝ Լուդդուի արքան, երկիր, որը ծովի մյուս կողմում է՝ հեռավոր վայրում,
որի անունն արքաները՝ իմ հայրերը, չէին լսել, իմ աստված Աշշուրը՝ իմ արարիչը, ստի-
պեց նրան տեսնել ինձ (իր) երազում: Ծնկի՝ իջիր և բռնի՛ր Աշշուրբանապալի ոտքերը...»:

Բարեկամություն հարաբերությունները Ասորեստանի և Վանի թագավորության
միջև: Ք. ա. 643 թ. թվագրվող Աշշուրբանապալի արձանագրություններից մեկում
նշվում է իրեն ուղղված՝ Վանի թագավորության արքա Սարդուրիի նամակների մա-
սին, որում վերջինս նրան դիմում էր որպես իր «հոր» և «տիրոջ», որին մշտապես
մատուցում էր ընծաներ: Այս փաստը կարող է վկայել ոչ միայն ասորեստանյան ազ-
դեցության, այլև երկու արքայատների միջև տեղ գտած դինաստիական հնարավոր
կապի մասին: Սարդուրին, Աշշուրբանապալին դիմելով որպես իր «հոր», հնարավոր
է՝ նկատի ունենալ իր աներիորդը: Նման փաստերի կարելի է հանդիպել ասորեստան-
յան աղբյուրներում: Դինաստիական ամուսնությունները կարևոր տեղ էին զբաղեց-
նում ասորեստանյան արքաների արտաքին քաղաքականության մեջ:

Աշշուրբանապալի կառավարման վերջին տարիների մասին գրեթե ոչինչ հայտ-
նի չէ: Նմանապես նրա գահակալության ավարտը. ասորեստանյան էպոնիմների
հիմնական ցանկը սպառվում է Ք. ա. 649 թ-ով: Բաբելոնյան ժամանակագրությունը
ընդհատվում է գրեթե հիսուն տարի (667-616 թթ.), իսկ Աշշուրբանապալի տարեգ-
րությունները ավարտվում են Ք. ա. 636 թ-ով: Ասորեստանյան էպոնիմների պարա-
կանոն ցանկերից դատելով՝ Ք. ա. 633 թ. դեռ իշխում էր Աշշուրբանապալը: Նրա
կառավարման շրջանում կազմված վերջին տեքստերը թվագրվում են Ք. ա. 631 թ.:

6. ԱՍՈՐԵՍՏԱՆԸ ՎԵՐՋԻՆ ԱՐՔԱՆԵՐԻ ՕՐՈՒՔ՝

Աշշուրբանապալի օրոք Ասորեստանը, թվում է, իր հզորության բարձրակետին
էր: Սակայն դա իրականում թվացյալ էր և պարզապես ռազմական գերակշռության
արդյունք: Ինչ-որ մի պահից Ասորեստանը կորցրեց նաև այդ գերակշռությունը:

¹ Ասորեստանի Նոր թագավորության պատմության աղբյուրները տես Grayson A.K., Assyrian and Babylonian Chronicles, Locust Valley, New York, 1975; Grayson A.K., Assyrian Royal Inscriptions. vol.II, Wiesbaden, 1976; Starr I., Queries to the Sungod. Divination and Politics in Sargonid Assyria, Helsinki, 1990; Tadmor H., The Inscriptions of Tiglath-Pileser III King of Assyria, Critical Edition, with Introductions, Translations and Commentary, Jerusalem, 1994; Glassner J.-J., Mesopotamian Chronicles, Atlanta, 2004; Mattila R., The King's Magnates: A Study of the Highest Officials of the Neo-Assyrian Empire, Helsinki, 2000 և այլն; ողջ դարաշրջանի կամ առանձին արքաների կառավարման փուլերի քաղաքական պատմության հարցերի ամփոփ շարադրանքը՝ Tadmor H., The Campaigns of Sargon II of Assur: A Chronological-Historical Study, JCS 12, 1958, 22ff., 77ff.; Oded B., Mass Deportations and Deportees in the Neo-Assyrian Empire, Wiesbaden, 1979; Mayer W., Sargons Feldzug gegen Urartu -714 v.Chr.: Text und Übersetzung, MDOG 115, 1983, 65ff.; Grayson A.K., Assyrian Officials and Power in the Ninth and Eight Centuries, SAAB 7/1, 1993, 19ff.; Grayson A.K., Assyrian Civilization. - In: CAH III/2, 2008, 194ff. և այլն:

Երկրի ներսում և նրա հարևանությամբ տեղի էին ունենում գործընթացներ, որոնք
հանգեցնելու էին Ասորեստանի անխուսափելի փլուզմանը: Ասորեստանյան տերու-
թյունն արդեն Աշշուրբանապալի իշխանության վերջում ընկղմվեց ճգնաժամի մեջ,
որից դուրս գալ այլևս չէր կարող: Դրա դրսևորումն էին երկրում սկսված գահակա-
լական պատերազմները:

Արդեն Աշշուրբանապալի հաջորդը՝ Աշշուր-Էթիլ-իլանին (Ք. ա. 631-628/7 թթ.),
գահ բարձրացավ ներքինապետ Սին-շում-լիշիրի աջակցությամբ միայն: Թերևս
այս հանգամանքից ելնելով՝ նա իր նստավայրը Նինվեից տեղափոխեց Բաբելոն:
Պատահական չէ, որ ինչպես բաբելոնյան, այնպես էլ անտիկ ավանդությունը նրան
ներառում է բաբելոնյան արքաների ցանկում. արքայի արձանագրությունների մի
մասը նույնպես կազմվել է Բաբելոնիայի քաղաքներում:

Սինշարիշկունը (Սին-շար-իշկուն, Ք. ա. 628/7-612 թթ.) նույնպես Աշշուրբանա-
պալի որդին էր և, ըստ երևույթին, բռնազավթել էր գահը Նինվեում: Նրան սկզբնա-
պես հաջողվեց իր իշխանությունը տարածել ոչ միայն Ասորեստանում: Մի քանի բա-
բելոնյան խոշոր քաղաքներ, այդ թվում՝ Նիպպուրը, Ուրուկը, Սիպպարը և Բաբելո-
նը, ձանաչեցին նրա իշխանությունը: Ք. ա. 627 թ. հետո Աշշուր-Էթիլ-իլանին այլևս
չի հիշատակվում: Նրա փոխարեն հայտնվեց գահի մեկ այլ հավակնորդ՝ վերոհիշյալ
Սին-շում-լիշիրը: Վերջինս իրեն հռչակեց Ասորեստանի արքա, որի իշխանության
տակ հայտնվեց գրեթե ողջ Հյուսիսային Բաբելոնիան, ինչպես նաև Բաբելոն քա-
ղաքը: Ք. ա. 626-625 թթ. սահմաններում Ասորեստանում միաժամանակ իշխում էին
երկու արքաներ՝ չհաշված գահի այլ հավակնորդներին: Սին-շում-լիշիրի իշխանու-
թյունը կարճատև էր. նրանից հայտնի բոլոր արձանագրությունները թվագրվում են
գահակալության տարով (Ք. ա. 627 կամ 626 թթ.): Ասորեստանում ծագած խառնակ
իրավիճակից փորձեց օգտվել Բաբելոնը:

Նախորդող շրջանում Ասորեստանին այդպես էլ չհաջողվեց հիմնովին հաստատ-
վել Բաբելոնիայում: Թեև Բաբելոնն ուներ արքա, սակայն նրա իշխանությունը ձևա-
կան էր, և գահ էր բարձրանում ասորեստանցիների կամքով: Դրան հակառակ՝ Բա-
բելոն քաղաքում ասորեստանյան դիրքերը թույլ էին, առավել ևս՝ այստեղ շարունա-
կում էր գործել ասուրամերժ հզոր մի խմբավորում:

Կանդալանուի մահից հետո (Ք. ա. 627 թ.) Ասորեստանում ծավալված գահա-
կալական պայքարի պատճառով ձգձգվեց Բաբելոնում նոր արքայի հաստատու-
մը: Երկիրը մոտ մեկ տարի չունեւ արքա: Առաջ եկած բացը անմիջապես լրացրին
քաղղեացիները: Ոմն Նաբոպալասար (= Նաբու-ապալ-ուծուր), որը հավանաբար
ունեւ քաղղեական ծագում և, ըստ անտիկ ավանդության, Սարակուսի (իմա՝ Սինշա-
րիշկունի) զորավարն էր, հանդես եկավ Ասորեստանի դեմ: Ք. ա. 626 թ. Նաբոպա-
լասարը գրավեց Բաբելոնը և թագադրվեց որպես արքա: Նրա պայքարը իշխանու-
թյան համար շուտով վերաճեց Ասորեստանի դեմ ազատագրական պատերազմի:

Ք. ա. 625 թ. Նաբոպալասարը անհաջող փորձ արեց գրավելու Նիպպուրը, որը
մինչև 622 թ. ասորեստանցիները կարողացան պահել իրենց ձեռքում: Սինշարիշ-
կունի իշխանությունը ձանաչեց Սիպպարը: Մյուս կողմից Նաբոպալասարն ամուր

դիրքեր ուներ Բաբելոնում և Բորսիպպայում: Այս շրջանում հիմնական պայքարն ընթանում էր Ուրուկին տիրապետելու համար: Միայն Ք. ա. 620 թ. Ուրուկը վերջնականապես անցավ Նաբոպալասարի իշխանության տակ:

Մինչ այդ՝ դեռևս Ք. ա. 623 թ., խնդիրներ ծագեցին բուն Ասորեստանում: Սինշարիշկունի դեմ խռովություն բարձրացրեց Դեր քաղաքը: Թեև ասորեստանյան արքային հաջողվեց ձնել այն, սակայն այս անգամ նոր ապստամբություն ծագեց Ասորեստանի անդրեփրատյան նահանգներում: Օգտվելով ասորեստանյան արքայի և քանակի բացակայությունից՝ ապստամբները շարժվեցին դեպի Նինվե, և նրանց առաջնորդը, որի անունը աղբյուրում չի պահպանվել, մտավ Նինվե ու իրեն հռչակեց Ասորեստանի արքա: Երկիր վերադարձած Սինշարիշկունը, ձնելով խռովությունը, վերստին տիրեց գահին:

Գահակալական պայքարն Ասորեստանում էապես թուլացրեց երկրի դիրքերը նաև արտաքին աշխարհում: Ասորեստանը ստիպված էր Ք. ա. 620 թ. վերջերին դաշինք կնքել Եգիպտոսի արքա Պսամմետիս I-ի հետ: Եգիպտոսը աստիճանաբար սկսեց լրացնել Ասորեստանին հատկապես Սիրիայում, ինչը միաժամանակ հնարավորություն էր տալիս ասորեստանյան արքային առայժմ ողջ ուժերն ուղղելու առավել վտանգավոր թշնամու՝ Նաբոպալասարի դեմ: Այս շրջանից սկսած՝ Ասորեստանը ստիպված էր մղել պարզապես գոյության պայքար:

Դեռևս Ասորեստանում տիրող խառնակ ամիսների ընթացքում Նաբոպալասարը ձեռնամուխ էր եղել Ուրուկի պաշարմանը, որն ասորեստանյան տիրապետության հանգուցային կետն էր Բաբելոնիայի հարավում: Ք. ա. 620 թ. վերջերին Ուրուկը հայտնվեց Նաբոպալասարի ձեռքում: Դա ծանր հարված էր Ասորեստանին: Ք. ա. մոտ 618–617 թթ. ընթացքում Նաբոպալասարը ասորեստանյան զորքերից մաքրեց Բաբելոնիայի մեծ մասը: Սկսած Ք. ա. 616 թ.՝ ռազմական գործողությունները տեղափոխվեցին ասորա–բաբելոնյան սահմանային գոտի, ապա և Ասորեստանի միջնաշխարհ:

Ք. ա. 616 թ. Նաբոպալասարը սկսեց իր արշավանքը դեպի Ասորեստան՝ շարժվելով Եփրատի հոսանքով դեպի վեր: Կարլին քաղաքի մոտ տեղի ունեցավ խոշոր ճակատամարտ, որի մասին «Բաբելոնյան ժամանակագրությունը» հայտնում է. «Նաբու–ապալ–ուծուրը նրանց դեմ բարձրացավ և Աբ անսի 12–րդ օրը ճակատամարտ տվեց Աշշուրի զորքին: Իսկ Աշշուրի զորքը նրա առջև ետ մղվեց, և մեծ պարտություն նա հասցրեց Աշշուրին, ավարը նրանց նա գրավեց մեծաքանակ: Մանուսիները, որոնք եկել էին նրանց օգնության, և Աշշուրի մեծամեծները գերվեցին: Այդ ժամանակ էլ նա գրավեց Կարլինը...»:

Դեպի Կարլին շտապած Սինշարիշկունի բանակը չգտավ այստեղ քաղաքացիներին, որոնք, ավարառության ենթարկելով շրջակա տարածքները, վերադարձել էին Բաբելոն: Նոր ճակատամարտեր տեղի ունեցան Ք. ա. 615 թ. Փոքր Զաբի ափերի մոտ՝ Առապիայի մերձակայքում՝ Տիգրիսի ափերին՝ Տակրիտայն ամրոցի (ներկայիս Տիկրիթը) պարիսպների մոտ: Մարտերը վճռական հաղթանակ չպարգևեցին և ոչ մեկին:

Ասսորա–բաբելոնյան պատերազմում շրջադարձային նշանակություն ունեցավ մարտի ներգրավումը դրան: Ասորեստանն անզոր գտնվեց պայքարելու երկու ճա-

կատով: Դեռևս Ք. ա. 615 թ. վերջերին կորսվեց Առապիան, իսկ Ք. ա. 614 թ. մարտը նվաճեցին Աշշուրը: Ք. ա. 612 թ. քաղաքական և մարական գորքերը միասին պաշարեցին Նինվեն: Երեք ամիս շարունակ պաշարվածները համառ դիմադրություն էին ցույց տալիս հակառակորդին: Մայրաքաղաքի պարիսպների տակ մղվեց երեք ճակատամարտ: Վերջապես Նինվեն գրավվեց և հիմնահատակ ավերվեց, ասորեստանյան ազնվականությունը, ինչպես նաև զենքի ունակ բնակչությունը բնաջնջվեց: Սինշարիշկունը զոհվեց քաղաքի գրավման ժամանակ:

Այնուամենայնիվ, Ասորեստանը դեռևս չէր խորտակվել: Ք. ա. 611–610 թթ. քաղաքական քանակը ստիպված էր մարտեր մղել ասորեստանյան տերության արևմուտքում: Այստեղ գահ էր բարձրացել Ասորեստանի վերջին արքան՝ Աշշուրուբալիտ II–ը (Ք. ա. 612–609/5 թթ.^(*)): Վերջինս փորձեց վերադարձնել կորսվածը՝ հենվելով եգիպտական փարավոն Նեխո II–ի (Ք. ա. 610–595 թթ.) օգնության վրա: Ք. ա. 610–609 թթ. մարտական գործողություններ ընթացան Խառանի մատույցներում, որն անցել էր քաղաքացիների ձեռքը: Աշշուրուբալիտի փորձը՝ վերագրավելու քաղաքը, ավարտվեց անհաջողությամբ: Դրանից հետո նա այլևս չի հիշատակվում: Ք. ա. 605 թ. Կարգամիսի, ապա Համատի ճակատամարտերում բաբելոնյան արքայազն Նաբուգոդոնոսորը ջախջախեց եգիպտական բանակը, որով էլ Ասորեստանի գոյամարտն ավարտվեց:

Ասորեստանը, սակայն, չանհետացավ պատմության թատերաբեմից: Կարծես քաղաքացիների իշխանությունը ասորեստանյան ողջ տարածքի վրա չէ, որ հաստատվել էր: Եթե ասորեստանյան միջնաշխարհում քաղաքացիական տիրապետությունը կարելի է համարել կասկածից դուրս, ապա տերության ծայրամասային շրջաններում, հատկապես արևմուտքում այդ տիրապետությունը թույլ էր արտահայտված կամ հնարավոր է՝ իսպառ քացակայում էր: Մասնավորապես, Ասորեստանյան պետականության հարատևության հետքեր են տեսանելի տերության նահանգային կենտրոններից Դուր–Կալոյիմում (Թել Շեյխ Խամադ հնավայրը՝ Խարուրի ստորին հոսանքի շրջանում): Այստեղից հայտնաբերվել են անգամ ասորեստանյան լեզվով գրված «հետասորեստանյան» տեքստեր, որոնք վերաբերում են Ք. ա. 603 և 600 թթ.:

Նորքաբելոնյան տերության կործանումից հետո Ասորեստանի տարածքն անցավ Աքեմենյաններին: Վերջինիս աստրապություններից մեկը կոչվում էր «Ասորեստան»: Կյուրոս II–ը Բաբելոնի նվաճումից հետո հրամայել էր Աշշուր վերադարձնել Բաբելոն տարված ասորեստանյան աստվածների արձանները: Աշշուր աստծո պաշտամունքը հարատևեց մինչև Ք. հ. II–III դդ. արդեն պարթևական Աշշուր քաղաքում: Ընդ որում՝ Ք. հ. II դ. Աշշուրում վերականգնվեց համանուն աստծո տաճարը:

Աքեմենյան արքա Դարես I–ի օրոք ասորեստանյան տարածքները բաժանվեցին մի քանի հատվածների: «Ասորեստան» կոչվող աստրապությունն ընդգրկում էր Եփրատից արևմուտք ձգվող շրջանը, որը բաբելոնյան աղբյուրներում շարունակում է հանդես գալ «Գետից անդին» անվանումով: Ասորեստանյան միջնաշխարհը կցվեց «Մարաստան» աստրապությանը:

Բազմաթիվ ասորեստանցիներ են հիշատակվում Աքեմենյան դարաշրջանի

տնտեսական փաստաթղթերում, մասնավորապես՝ Պերսեպոլիսից: Օրինակ՝ նրանցից մեկը՝ Պան-Աշշուր-լամուրը, Կյուրոսի որդի Կամբիզի օգնականներից էր: «Ասորեստան» սատրապության կառավարիչները Աբեմենյան դարաշրջանում գերազանցապես ասորեստանցիներ էին, ինչը բացառություն էր՝ մյուս սատրապությունների համեմատությամբ: Ընդհանրապես մեծ էր ասորեստանցիների դերը Աբեմենյան տերության կյանքի տարբեր ոլորտներում: Ասորեստանյան անձնանունները հիշատակվում են ընդհուպ մինչև պարթևական պետության անկումը, գլխավորապես արամեերեն և հունարեն գրված տեքստերում: Սակայն այդ անունների երկրորդ քաղաքիչները կազմված էին արդեն արամեերենով, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ ասորեստանցիներն արդեն դարձել էին արամեախոս: Ասորեստանյան մշակույթը հարատևեց քավական երկար, և անգամ իսլամական դարաշրջանում երբեմնի ասորեստանյան քաղաքներում դեռ երկրպագում էին հին աստվածներին:

Երբեմնի տերության անդրեփրատյան երկրամասին Աբեմենյան դարաշրջանում տրված «Ասորեստան» անվանումը հարատևեց դպրության տարբեր կենտրոններում և արամեերենի միջնորդավորությամբ անցավ հունարենին որպես «Սիրիոս» կամ «Սիրոս», որից և՛ Սիրիան (Ասորիք): Սակայն այս անվանումները դեռևս կիրառվում էին համագործակցության միջնակության միջոցով: Օրինակ՝ Ալեքսանդր Մակեդոնացու տերության ժառանգորդ Սելևկյան պետությունը շարունակում էր հանդես գալ իբրև «Ասորեստան»: Եփրատից արևմուտք և արևելք ընկած հատվածները սկսեցին հստակ տարանջատվել միայն հռոմեական դարաշրջանում: Վերջինիս արևելյան սահմանի մի զգալի մասն անցնում էր Եփրատ գետով, որից արևմուտք ընկած հռոմեական նահանգը ստացավ «Սիրիա» անվանումը՝ ի տարբերություն Եփրատից արևելք ձգվող ոչ հռոմեական տարածքի՝ «Ասորեստանի» (այս շրջանում՝ նաև Ադիաբենե):

7. ԱՍՈՐԵՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՆԱԿԸ

Քաղաքական կարգը

Ասորեստանի պետականությունը իր՝ շուրջ մեկ և կես հազարամյա գոյության ընթացքում անցել է զարգացման տևական փուլ՝ Աշշուրի վաղ քաղաքային մշակույթից մինչև «համաշխարհային տերություն»՝ Ք. ա. IX–VII դդ.:

Աշշուրի պետության քաղաքական կառուցվածքը սկզբնական փուլում վաղ ընդգծված տոհմատիրական բնույթ ուներ՝ տոհմային ավագանու վճռական դերակատարմամբ պետության կյանքի բոլոր ոլորտներում: Ընդհուպ մինչև Շամշի-Ադադ I-ի կառավարումը Աշշուրում արքայական իշխանություն, որպես այդպիսին, գոյություն չուներ: Պետության գերագույն գործադիր իշխանությունը իրականացնում էր ժառանգական իշխանություն ունեցող՝ *իշխակկում* (բառացի՝ «փոխանորդ, տեղապահ», զուգահեռ է շումերական *էսսիին*) տիտղոսը կրող պաշտոնյան, որի գործառույթները տարածվում էին շինարարական ոլորտի վրա (տաճարային և ռոտոզոլա-

կան կառույցներ), թերևս նաև ռազմական: Վարչական և դատական գործառույթները տնօրինում էր ընտրովի պաշտոնյան՝ *ուկուլլումը*: Աշշուրի պետության մեջ կարևորագույն դերը պատկանում էր քաղաքային խորհրդին: Աշշուրի կառավարիչների պաշտոնական տիտղոսը ասվածի լավագույն վկայությունն է՝ «Աշշուր աստծո տեղապահ/փոխանորդ»:

Աշշուրի պետության՝ որպես կենտրոնացված ամուր պետականության իրական հիմնադիրը Շամշի-Ադադ I-ն էր: Նրա օրոք քաղաքային և համայնքային ավագների խորհուրդների օրենսդիր գործառույթները գրեթե վերացվեցին. վերջիններս պետության կյանքում այլևս նախկին դերը չուներին: Դրանց փոխարեն իրական իշխանությունը անցավ նորաստեղծ ռազմական շրջանների (*խալծու*) ձեռքը, որոնց գործունեությունը ամբողջապես վերահսկվում էր արքայի կողմից: Դրանց կառավարիչները նշանակվում էին արքայի կողմից: Հիմնավորապես վերաձևվեց պետության քաղաքական, տնտեսական և հոգևոր իշխանության համակարգը: Չնայած Աշշուրի և դրան հաջորդած միտաննական տիրապետության շրջանում արքայական իշխանությունը զգալիորեն ամրապնդվեց, սակայն միայն Միջին ասորեստանյան փուլում այն սկսեց վերածվել իրական միապետության:

Ասորեստանյան պետության քաղաքական կարգը էականորեն սկսեց փոփոխվել Ք. ա. XIV դ. երկրորդ կեսից, հատկապես Արիկղենիլիի կառավարման շրջանից՝ չնայած նրա նախորդ Աշշուրուրալլիտ I-ը եգիպտական փարավոնին գրած նամակում իրեն անվանում է «ուժեղ արքա»: Իսկ ահա Արիկղենիլիի տիտղոսաշարը՝ «ուժեղ արքա, Ասորեստանի արքա», վկայում է արքայական իշխանության հետագա հզորացման, իսկ հետագայում լայն նվաճողական քաղաքականության ծավալման ընթացքում՝ նաև բացարձակացման օգտին: Դրան զուգահեռ սկսում է նվազել Աշշուր քաղաքի խորհրդի դերը: Ավելի ուշ՝ Ք. ա. X–IX դդ., այդ գործընթացը ավելի խորացավ: Աշշուրի խորհրդից բացարձակապես անկախ գործելու մղումով արքաները իրենց նստավայր էին դարձնում այլ՝ հիմնականում նորակառույց քաղաքներ՝ Կար-Թուկուլթի-Նինուրտան, Կար-Սալմանասարը, իսկ Ք. ա. VII դ.՝ Նինվեն: Աշշուր քաղաքը վերածվել էր ընդամենը պաշտամունքային կենտրոնի և արքաների դամբարանի: Վերջնականապես ձևավորվում է նաև արքաների օրինակելի տիտղոսաշարը՝ «մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, Ասորեստանի արքա»:

Ասորեստանում արքայական իշխանությունը էականորեն տարբերվում էր նախորդ՝ շումերական և համաժամանակյա՝ բաբելոնյան արքայապետություններից: Արքան համարվում էր գերագույն մարդկային էակը՝ նշանակված գլխավոր աստված Աշշուրի կողմից: Սակայն նա միևնույն ժամանակ մահկանացու էր, այլ ոչ անմահ: Իհարկե, հաճախ տեքստերում և արքաներին պատկերող բարձրաքանդակներում ու արձանների վրա արքաներն օժտվում էին աստվածային հատկանիշներով, սակայն նրանց անձի աստվածացումը այդպես էլ չբացարձակացվեց: Արքայի բացարձակ իշխանությունը դրսևորվում էր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Նա գործի գլխավոր հրամանատարն էր, գերագույն դատավորը և Աշշուր աստծո քրմապետը (*շանգու*): Սակայն նա միաժամանակ պարտավոր էր հաշվի նստել կրոնապաշտա-

մունքային սահմանափակումների, անձի մասնավոր սեփականության, ինչպես նաև քաղաքների՝ նախկինում ունեցած արտոնությունների հետ:

Ապագա արքան, ստանալով այդ կարգավիճակը, պարտավոր էր անցնել տևական նախապատրաստություն: Նորաստեղծության պետության շրջանում՝ հատկապես Սարգոն II-ի և նրա հետնորդների օրոք, պատանի արքայազնին փոխադրում էին «Գահաժառանգման տուն» (bit-redūti): Այստեղ արքայազնը ստանում էր հիմնավոր կրթություն և դաստիարակություն (ռազմական գործ, գրել-կարդալ, այլ գիտելիքներ): Դասընթացի ավարտից հետո նա նշանակվում էր բարձր պաշտոնի կառավարման ապարատում: Մասնավորապես, երկրից արքայի բացակայության ժամանակ նա փոխարինում էր արքային:

Արքայական իշխանության ամրապնդման հետ զուգընթաց ձևավորվեց բրգաձև, խիստ կենտրոնացված քաղաքական մի կառույց, որի գլխին կանգնած էր բացարձակ իշխանությամբ օժտված արքան: Նրա անմիջական շրջապատը ներկայացված էր ազնվականության վերնախավի շարքերից նշանակված՝ գործադիր և խորհրդակցական գործառույթներով օժտված մի խումբ պաշտոնյաներից, որոնք ընդհանրապես ձևով կոչվում էին «ավագանի»: Դրանք էին՝ *շա մուխիսի էկալլի* (արքունիքի ծառայապետ), *ուներանու* (փոխվարչապետ), *տուրտանու* (քանակի հրամանատար), *մասեննու* (արքայական գանձարանի պահապան), *նագիր էկալլի* (մունետիկ), *ռաբ շաբե* (գլխավոր մատովակ), *արարակկու* (սենեկապետ), *սուկկալուներ* (վեգիրներ), *ռաբ շա ռեշի* (ներքինապետ), *սարտեննու* (դատական գործի ղեկավար), *սանգուներ* (տաճարների քրմապետեր) և *խազաննուներ* (քաղաքների կառավարիչներ):

Ք. ա. I հազ.՝ Նոր ասորեստանյան տերության կազմավորման հետ միաժամանակ, Ասորեստանը տարածապես ընդարձակվեց, և դա պահանջում էր մշակել նվաճված երկրների կառավարման համակարգ: Այս փուլում ավարտուական արշավանքները աստիճանաբար փոխարինվեցին նվաճված երկրների յուրացման քաղաքականությամբ: Բուն Ասորեստանին առավել մոտ գտնվող և հիմնավորապես նվաճված շրջանները կառավարվում էին փոխարքաների կողմից, որոնք անմիջականորեն ենթարկվում էին արքային: Մյուս երկրների նկատմամբ գերիշխանությունը գերազանցապես իրականացվում էր կախյալ պայմանագրերի միջոցով: Այդպիսի պայմանագրերը սովորաբար ամրապնդվում էին նվաճված երկրի արքայատոհմի որոշ անդամներին որպես պատանդ ասորեստանյան արքունիք փոխադրելու միջոցով:

Նվաճված երկրների անջատողական քաղաքականության ծավալման հետ կապված՝ արդեն Թիգլաթպալասար III-ի օրոք սկսվում է տեղական արքայատոհմերի իշխանագրկման քաղաքականությունը: Ասորեստանյան արքաները, հատկապես Սարգոն II-ը, տեղերում սկսում են անցնել ասորեստանյան վարչակազմերի ներդրման քաղաքականության (օրինակ՝ Հյուսիսային Սիրիայում և Փոքր Ասիայում): Միաժամանակ վերաձևվում են մարզերի սահմանները՝ դրանց կրճատման միտումով: Դա նպատակ ուներ սահմանափակելու մարզերի կառավարիչների ինքնուրույնությունը:

Ասորեստանյան պետության՝ արքայի գլխավորությամբ գործող պետական վար-

չակազմը աստվածային աստիճանակարգության երկրային պատկերն էր: Արքան պետությունը կառավարում էր այնպես, ինչպես Աշտուր աստվածը երկնքում մյուս աստվածներին:

Բանակը

Ասորեստանյան պետության գոյության ողջ ընթացքում ռազմական գործը առաջնահերթ դեր է ունեցել՝ կապված նրա աշխարհագրական յուրահատուկ դիրքի և միջազգային տարանցիկ առևտրում համապատասխան մասնակցությունն ապահովելու առումներով: Բանակի դերը աճեց հատկապես Ք. ա. XIV դ.՝ Միտաննիից անկախացումից հետո, երբ այն սկսեց ակտիվ արտաքին քաղաքականություն վարել:

Ասորեստանի բանակը ռազմական տեխնիկայի և մարտավարման առումներով շատ չէր տարբերվում ժամանակի հարևան երկրների բանակներից: Դրա հիմնական հարվածային միավորը կարճ սրերով և նիզակներով զինված հետևակն էր: Սակայն արդեն որոշ ժամանակ անց՝ հատկապես Նորասորեստանյան տերության սկզբնական շրջանում, հարթ տեղանքում վարվող ռազմական գործողություններում սկսում են լայնորեն կիրառվել մարտակառքերը: Թերևս մարտավարման այս եղանակը ասորեստանցիք ընդօրինակել էին միտաննեցիներից, որոնք այս առումով անգերազանցելի էին: Սալմանասար III-ի օրոք ասորեստանյան մարտակառքը եռաձի էր և տանում էր երկու, հազվադեպ՝ երեք հոգու՝ կառավարին և երկու զինվորներին: Այնուամենայնիվ, մարտակառքը գերազանցապես խորհրդանշական դեր էր կատարում, քանի որ դրանով մարտնչում էին արքան և ազնվականները, սակայն հիմնական հարվածային ուժը հետևակն էր: Հակառակ ընդունված տեսակետի՝ մի շարք նոր աղբյուրներ մատնանշում են, որ առնվազն արդեն Ք. ա. VIII դ. երկրորդ կեսին ասորեստանյան բանակում սկսում է լայնորեն կիրառվել հեծելազորը, որը քանակապես և շարժունակությամբ գերազանցում էր մարտակառքերին:

Ք. ա. IX դ. ասորեստանյան հեծյալները գործում էին զույգերով: Մեկը զինված էր նետ ու աղեղով և վահանով, իսկ կողքից ընթացող հեծյալը բռնում էր երկու ձիերի սանձերը: Այսինքն՝ սա կարելի է համարել մարտակառքից հեծելազորին անցման փուլ: Իսկ արդեն Թիգլաթպալասար III-ից սկսած՝ հեծյալը գործում էր միայնակ, որն ավելի մանրային և արդյունավետ էր դարձնում նրա գործողությունները:

Ասորեստանյան բանակի արմատական բարեփոխումը Թիգլաթպալասար III-ի կողմից այն վերածեց ժամանակի հզորագույն բանակի, որի թվաքանակը՝ ներառյալ տերության տարբեր շրջաններում տեղակայված կայազորերը, գերազանցում էր 100 հազարը: Բանակի սպառազինության և կարգապահության բարձր մակարդակը, ինչպես նաև ամենատարբեր տեղանքներում արդյունավետ գործելու ունակությունը այն իրավամբ վերածել էին Ասորեստանի ծավալապաշտական քաղաքականության իրականացման հզոր միջոցի:

8. ԱՍՈՐԵՍՏԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԵՆԱՐՏԸ

Միջազգետքի և Հայկական լեռնաշխարհի հասարակությունների միջև տարաբնույթ հարաբերությունները վկայված են դեռևս Նորքարեդարյան շրջանից, որ հատկապես ակնառու է «Կուր-Արաքսյան» մշակութային աշխարհի ծավալման համատեքստում: Սակայն այդ փոխհարաբերությունները ստացան կոնկրետ և նպատակամղված բնույթ Հայկական Տավրոսից հարավ ընկած հյուսիսմիջազգետքյան տարածաշրջանում վաղ պետականությունների ձևավորումից և խոշոր պետությունների ի հայտ գալուց հետո միայն (շումերական քաղաք-պետություններ, Աքքադ, Ուրի III հարստություն և Աշշուր, Ասորեստան, Բաբելոնիա, Միտաննի):

Առնվազն Բ. ա. III հազ. առաջին կեսին շումերական աղբյուրներում առկա են առասպելական բնույթի տեղեկություններ Միջազգետքից հյուսիս ընկած շրջանների հետ ունեցած փոխհարաբերությունների մասին: Դրանք վկայում են Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների վերաբերյալ շումերական քաղաք-պետությունների բնակչության մոտ որոշակի տեղեկությունների մասին, որոնց հիմքում, թերևս, ընկած էր նրանց հետ շումերների ունեցած առևտրային հարաբերությունների վերհուշը:

Շումերական դարաշրջանում Միջազգետքի և Հայկական լեռնաշխարհի հասարակությունների միջև խաղաղ հարաբերությունները Բ. ա. III հազ. երկրորդ կեսին՝ Աքքադի պետության կազմավորման հետ միաժամանակ, իրենց տեղը գիջում են շատ ավելի ինտենսիվ՝ ռազմաքաղաքական հարաբերություններին: Աքքադի առաջխաղացումը դեպի հյուսիսի և հյուսիս-արևմուտքի օգտակար հանածոներով հարուստ լեռնային շրջանները շարունակվեց նաև հետագայում. մի միտում, որն այսուհետև սկսում է գերիշխել Միջազգետքի հաջորդ աշխարհակալ պետականությունների կատարմամբ ընդհուպ մինչև Բ. ա. I հազ. կեսերը:

Աշշուրի՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածում հիմնած առևտրական գաղութների կարճատև գոյությունից հետո՝ ընդհուպ մինչև Բ. ա. XIV դ., գրավոր աղբյուրներում հստակ տեղեկություններ չկան Միջազգետքի սեմական պետականությունների հետ Հայկական լեռնաշխարհի փոխհարաբերությունների վերաբերյալ: Որ այդպիսիք, հատկապես առևտրական կապեր, անկասկած, առկա են եղել, վերականգնվում է Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններում, այդ թվում՝ ներկայիս ՀՀ հնավայրերի հնագիտական գտածոների հիման վրա:

Միջազգետքի պետությունների հետ Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների փոխհարաբերությունները դառնում են կանոնավոր և տարաբնույթ հատկապես Բ. ա. XIV դարից հետո՝ Ասորեստանի Միջին թագավորության կազմավորման հետ մեկտեղ: Միտաննական տիրապետությունը թոթափած Ասորեստանը սկսում է ակտիվ ռազմական գործողություններ հյուսիսային ուղղությամբ: Ասորեստանցիների ակտիվությունը հյուսիսում քացատրվում է երկրի՝ դեպի արտաքին աշխարհ ազատ ելքի սահմանափակությամբ: Արևմուտքը և հյուսիս-արևմուտքը գտնվում էին հզոր Խեթական տերության վերահսկողության ներքո, իսկ հարավում դեռևս իրենից լուրջ ուժ էր ներկայացնում կասսիտական Բաբելոնիան:

Միջին ասորեստանյան թագավորության մի շարք արքաների հյուսիսային արշավանքները նկարագրող տեքստերը (Աշշուրուբալիտ I-ից մինչև Աշշուրբելկալա) լի են Հայկական լեռնաշխարհի հարավային շրջաններում իրականացված հիմնականում ռազմական արշավանքների մանրամասներով (տե՛ս սույն մասի համապատասխան բաժինները): Վերջիններս մշտապես ուղեկցվում էին բախումներով այստեղի մանր քաղաքական միավորների կամ դրանց միավորման հետևանքով ստեղծված ժամանակավոր միությունների հետ: Ասորեստանի՝ հյուսիսում իրականացվող քաղաքականությունը ժամանակագրորեն կարելի է բաժանել երեք փուլերի, որոնցից յուրաքանչյուրին հատուկ էր տվյալ ժամանակահատվածը բնութագրող քաղաքական իրավիճակը Առաջավոր Ասիայում, որի համատեքստում են միայն լիարժեք ներկայանում Ասորեստանի և Հայկական լեռնաշխարհի հասարակությունների փոխհարաբերությունները:

Բ. ա. XIII դ.

Ասորեստանն իր անկախացումից հետո բախվել էր այնպիսի իրավիճակի, երբ նրա զարգացող տնտեսությունը կարիք ուներ հումքի կայուն աղբյուրների և վերահսկողության Հյուսիսային Միջազգետքը արտաքին աշխարհի հետ կապող կարևորագույն առևտրական ուղիների նկատմամբ: Իսկ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանները գտնվում էին Խեթական տերության կողմից վերահսկվող տարածքներում, որոնք խեթերի հետ կապված էին կախյալ պայմանագրերով (Տավրոսի երկայնքով գտնվող երկրները, ինչպես նաև Տավրոսից հյուսիս ընկած Իսուվան): Այս փուլում Ասորեստանի հիմնական մտահոգության առարկան հյուսիսի լեռնային շրջանների նվաճումը չէր, մի բան, որ նույնիսկ հետագա դարերում, երբ Ասորեստանը վերածվեց Առաջավոր Ասիայի հզորագույն տերության, նա ի վիճակի չէր լիարժեք կերպով իրականացնելու: Ասորեստանին առավել չափով հետաքրքրում էր այստեղ գտնվող մետաղների խոշոր հանքավայրերին տիրող մանր քաղաքական միավորների նկատմամբ թեկուզև մասնակի հովանավորության ապահովումը:

Վերոհիշյալ նպատակներով էին առաջնորդվում այս ժամանակահատվածում ասորեստանյան արքաները, որոնց արշավանքների արդյունքում տավրոսյան գոտու երկրները ժամանակ առ ժամանակ ստիպված էին որոշ քանակությամբ մետաղներ և այլ բարիքներ տրամադրել և, թերևս, պարտավորվել հետագայում ավելի կայուն հարաբերություններ պահպանել Ասորեստանի հետ: Սալմանասար I-ի և Թուկուլթի-Նինուրտա I-ի արշավանքները այդպես էլ չավարտվեցին հյուսիսի երկրների հպատակեցմամբ: Ավելին, ինչպես նշում են հենց ասորեստանյան աղբյուրները, հատկապես Թուկուլթի-Նինուրտա I-ի օրոք տավրոսյան շրջանի շատ երկրներ արդեն հասցրել էին միավորվել ընդդեմ Ասորեստանի նկրտումների: Սակայն, ինչպես երևում է նրա մեկ այլ տեքստից, հյուսիսի և հյուսիս-արևմուտքի երկրների միությունները միայն պաշտպանողական նպատակներ չէին հետապնդում: Նրանք պարբերաբար ասպատակում էին իրենց հարևան բուն ասորեստանյան տարածքները: Թուկուլթի-Նինուրտայի կառավարման առաջին տարում դեպի հյուսիս ուղղված մեծ արշավանքից հետո (Բ. ա. 1234/3 թ.) ավելի քան հարյուր տարի Ասորեստանը այլևս ի վիճակի չէր զբաղվելու Հայկական լեռնաշխարհի երկրներով:

Խեթական տերության տրոհումից հետո՝ միայն Ք. ա. XII դ. վերջերին – XI դ. կեսերին, Թիգլաթպալասար I-ը և Աշշուրբեղկալան էին, ովքեր փորձեցին վերականգնել Ասորեստանի ազդեցության ոլորտը: Բացի հումքի աղբյուրների նկատմամբ վերահսկողությունից, նրանց արշավանքները ևս մեկ կարևոր նպատակ էին հետապնդում, այն է՝ դիմագրավել հյուսիսից տասնամյակների ընթացքում դեպի Միջագետք շարժվող ժողովուրդներին, որոնց տեղաշարժերի ընթացքում, հավանաբար, Ասորեստանը կորցրել էր վերահսկողությունը իրեն հարող Տավրոսի գոտու նկատմամբ:

Թիգլաթպալասարը իր կառավարման հենց սկզբից նպատակամղված էր դեպի հյուսիս: Իր նախորդի՝ Թուկուլթի-Նինուրտա I-ի նման նա կրկին հայտնվում է Տիգրիսի և Մեծ Ջաբի վերին հոսանքներում՝ հպատակեցնելով Նաիրիի հզոր միության տարածքի զգալի մասը: Նրա տարեգրությունը միաժամանակ վկայում է, որ Ք. ա. XII դ. երկրորդ կեսին Տիգրիսի ակունքների մոտ և Արածանիի ստորին հոսանքում ասորեստանցիները բախվում են նաև մուշկերի հետ, որոնք ներխուժել էին այստեղ նույն դարի կեսերին Արևելյան Փոքր Ասիայից կամ նրան հարակից շրջաններից և հետագայում շարժվելով հարավ՝ բռնազավթել էին Ասորեստանի տիրապետության տակ գտնվող Կադմուխի երկիրը՝ Քաշիյարի լեռներում (այժմյան Միդյաթ-դադ): Չնայած Թիգլաթպալասարին հաջողվեց կանգնեցնել սրանց շարժումը, սակայն նա ստիպված էր համակերպվել մուշկերի՝ Կադմուխիում հաստատվելու փաստի հետ. մուշկերն էլ, իրենց հերթին, ընդունեցին Ասորեստանի գերիշխանությունը:

Հպատակեցնելով Կադմուխին՝ ասորեստանցիներն այնուհետև հաղթահարեցին մի շարք անմատչելի լեռներ և նվաճեցին Իշիլիշ (կամ Միլդիշ) (թերևս, Կադմուխիի և Ալզիի միջև) երկիրը: Թիգլաթպալասարի արշավանքը, այնուհետև, շարունակվում է մինչև շուրաբեյական երկրներ՝ Ալզի և Պուրուլումզի, որոնք ընկած էին Տիգրիսի ակունքներում: Այստեղ ասորեստանցիներն ընդհարվեցին ոչ թե տեղաբնիկների, այլ «խեթական երկրի» անհնազանդ մարդկանց՝ 4000 կասկերի և ուրումեացիների հետ, որոնք զավթել էին Ասորեստանին ենթակա Շուրարտու (նախկին Սուրարտու) երկրի բնակատեղիները:

Ակներև է, որ Վերին Տիգրիսի ջրավազանի երկրներում Ք. ա. XII դ. վերջին տարեցտարի ուժեղացել էին ասորեստանյան տիրապետությունից ազատագրվելու ձգտումները: Հազիվ Թիգլաթպալասարը հասցրել էր հպատակեցնել Սուրարտուի մարզեր Ալզին և Պուրուլումզին, երբ նրանցից հարավ-արևելք ծագում են նոր մտահոգություններ: Ըստ որում՝ կադմուխիները հանդես են գալիս ասորեստանյան տիրապետության դեմ այն ժամանակ, երբ Թիգլաթպալասար I-ի բանակը դեռևս գտնվում էր նրանց երկրի պարզապես թիկունքում:

Ասորեստանյան բանակը ստիպված է լինում նահանջել հարավ-արևելք՝ Կադմուխիի խոտովությունը ճնշելու համար: Ավերելով Կադմուխիի բնակավայրերը՝ Թիգլաթպալասարը հպատակեցնում է այն և ներառում իր երկրի սահմանների մեջ:

Այս հաջողությունը խթանեց Թիգլաթպալասարի հյուսիսային՝ ավելի հեռավոր արշավանքները: Եվ եթե մինչ այդ ասորեստանյան արքան հյուսիսում հասել էր մինչև

Տիգրիսի ակունքները (Ալզի և Պուրուլումզի), ապա հետագայում նա արդեն երևում է Արածանիի ստորին հոսանքում՝ Եփրատի հետ նրա խառնարանի շրջանում: Այստեղ նա նվաճում է Իշուան (խեթ.՝ Իսուվա, հայկ.՝ Ծուփք) և հարկատու դարձնում այն:

Հպատակեցնելով Իշուան՝ նա ուղի է հարթում դեպի Նաիրիի միության կենտրոնական մարզերը: Այդ նպատակով ասորեստանյան արքան զբաղվում է Խաբիսիի նվաճմամբ, որը գտնվում էր Վերին Տիգրիսի և Մեծ Ջաբի շրջանում: Ասորեստանյան բանակը ջախջախում է Խաբիսիի գլխավորած միության անդամ Սուզի երկրի զորքերը և հարկատու դարձնում այն: Այս հաղթանակը թույլ է տալիս շրջափակել Նաիրյան միության տարածքը հարավից, հարավ-արևմուտքից և հարավ-արևելքից: Դրան հաջորդեց Թիգլաթպալասարի մեծ արշավանքը դեպի Նաիրի:

Այն սկիզբ առավ Ամիդ-Դիարբաքրից և հասավ ընդհուպ մինչև Վերին ծովի (Վանա լիճ) հարավարևելյան ափերին հարող շրջանները: Ասորեստանյան զորքերը, շարժվելով Եփրատի ափերով, իրենց ճանապարհին հաղթահարեցին թվով «16 ուժեղ լեռներ»՝ Էլամա, Ամադանա, Էլիսիշ, Շերաբելի, Թարխունա և այլն: Այնուհետև ասորեստանյան զորքերը բախվեցին նաիրյան 23 երկրների հետ՝ Տումմե, Տունուրե, Կինդարի, Ուզուլա, Ունգամունի, Անդիարե, Դայանեի և այլն: Դրան հաջորդեց նոր բախում նաիրյան երկրների և նրանց դաշնակիցների՝ թվով 60 արքայիկների դեմ, որից հետո Թիգլաթպալասարը հասավ մինչև Վանա լիճ:

Այսպիսով՝ Թիգլաթպալասար I-ի արշավանքները վկայում են այն մասին, որ նաիրյան երկրները մշտապես գտնվում էին նրա ուշադրության կենտրոնում: Սակայն այդ լայնատարած շրջանների նվաճումը՝ հեշտ ձեռնարկում չէր:

Հայկական լեռնաշխարհում իր կառավարման սկզբում ունեցած հաջողություններն անցողիկ էին, քանի որ արևմուտքից՝ Սիրիական տափաստանային գոտուց սկսված արամեական ցեղերի տարեցտարի ուժեղացող ճնշումը, ի վերջո, Ասորեստանին կտրեց հյուսիսի նկատմամբ ունեցած վերահսկողությունից: Ավելին՝ արամեական սպառնալիքը այնքան իրական էր, որ դեռևս Թիգլաթպալասարի օրոք արամեացիների հարձակումների հետևանքով Հյուսիսային Միջագետքի բնակչության մի մասը ստիպված էր հեռանալ Տավրոսի լեռնային շրջաններ՝ այնտեղ ապաստան գտնելու միտումով: Նրանք այնտեղ մնացին շուրջ երկու դար և միայն Աշշուրդան II-ի օրոք վերադարձվեցին նախկին բնակավայրերը:

Թիգլաթպալասարի հաջորդ Աշշուրբեղկալան անհաջող փորձ ձեռնարկեց՝ վերադարձնելու հյուսիսում նախկինում ունեցած ազդեցությունը: Աշշուրբեղկալայից հետո՝ ընդհուպ մինչև Ք. ա. X դ. վերջերը, Ասորեստանի հյուսիսային քաղաքականության մասին որևէ տեղեկություն աղբյուրներում չի պահպանվել: Միայն այս շրջափուլի վերջերից է սկսվում Ասորեստանի ակտիվության աճը, որը հաջորդող տասնամյակներում արդեն նոր չափեր և որակ է ստանում:

Այս շրջափուլի առանձնահատկությունը Հայկական լեռնաշխարհում կազմավորված և կարճ ժամանակում այն իր մեջ ներառած Վանի թագավորության գոյությունն էր: Վերջինիս կազմավորումից ի վեր Ասորեստանը գործ ուներ ոչ թե բազմաթիվ

մանր քաղաքական միավորների, այլ մեկ հզոր պետականության հետ: Սալմանա-
սար III-ից սկսած մինչև Ասորեստանի անկումը երկու պետությունների փոխհարա-
բերությունները հիմնականում կրում էին բաց առձակատման բնույթ: Այնուամենայ-
նիվ, Հայկական լեռնաշխարհի հարավամերձ շրջաններում գոյություն ունեցող որոշ
կիսանկախ քաղաքական կազմավորումներ, օգտվելով իրենց տարածքի դժվարա-
մատչելի բնույթից, ժամանակ առ ժամանակ փորձում էին ինքնուրույն քաղաքակա-
նություն վարել: Այդպիսիներից հատկապես աչքի էր ընկնում Շուրբիան:

Վանի թագավորության կազմավորմանը նախորդող տասնամյակները համըն-
կան Նորասորեստանյան պետության ռազմաքաղաքական վերելքի և նրա կողմից
սկսված անսահմանափակ էքսպանսիայի հետ: Վերջինիս առավել ակնառու իրա-
գործողներից էին Աշշուրնաժիրպալ II-ը և Սալմանասար III-ը:

Աշշուրնաժիրպալ II-ի կառավարման օրոք ուժեղանում են Ասորեստանի դիրքե-
րը Առաջավոր Ասիայում: Մի շարք ռազմական արշավանքների շնորհիվ նա Ասո-
րեստանի տիրապետությունը հաստատեց Հյուսիսային Սիրիայում: Դրա շնորհիվ
Ասորեստանը ուղի հարթեց դեպի Միջերկրականի ափերը: Բնականաբար, կյուբա-
կան ռեսուրսներով հարուստ Հայկական լեռնաշխարհը չէր կարող վրիպել Աշշուր-
նաժիրպալի տեսադաշտից:

Աշշուրնաժիրպալի արշավանքները Նաիրյան միության դեմ սկսվում են նրա
կառավարման հենց առաջին տարվանից: Այդ արշավանքում ասորեստանցիները
հայտնվում են Տումմե երկրում: Խուսափելով ռազմական ընդհարումից՝ ասորես-
տանցիներին հարկ ուղարկեցին հարևան երկրները՝ Սիմեսին, Սիմերան, Ուլմանիան,
Ադդաուշին, Գիլգանը և Խուբուշկիան: Այնուհետև Աշշուրնաժիրպալը ներխուժեց Մեծ
Ջաբի և Տիգրիսի վերին հոսանքների միջև ընկած Խաբիսի՝ նվաճելով նրա Խատտու,
Խատուրու, Նիշտուն, Իրբիդի, Մետելիա, Արծանիա, Տելա, Խալուա բնակավայրերը:

Հաջորդ տարի Աշշուրնաժիրպալը ձեռնարկում է նոր արշավանք դեպի Նաիրի: Ի
տարբերություն նախորդի՝ նա Նինվեից շարժվում է հյուսիս՝ Տիգրիսի ձախափնյա
ավազանով, այսինքն՝ ավելի արևմտյան ուղղությամբ: Արշավանքի սկզբում ասո-
րեստանյան զորքը հպատակեցնում է Նիբուր (ժաման. Ջուդի դաղ) և Պաժատե լեռ-
ների ստորոտում ընկած շրջանը: Այնուհետև ասորեստանցիները ներխուժում են
Կադմուխի: Այստեղ Աշշուրնաժիրպալն ընդունում է Կադմուխիի, ինչպես նաև մուշ-
կերի հարկը, որոնք դեռևս Ք. ա. XII դ. հաստատվել էին այստեղ: Նույն թվականին
արքան նոր արշավանք ձեռնարկեց դեպի հյուսիս-արևմուտք: Դա պայմանավոր-
ված էր այն հանգամանքով, որ ասորեստանյան արքայի՝ մայրաքաղաք Նինվեում
գտնվելու պահին նրան հայտնի էր դարձել, որ ասորեստանցիները իրենց կառա-
վարչի հետ միասին ապստամբել էին և զավթել արքայական քաղաք Դամդամուսան:

Ուստի Աշշուրնաժիրպալը Քաշիյարիի լեռնանցքով հասավ Դամդամուսա և պար-
տության մատնեց ապստամբներին: Որից հետո, օգտվելով հարմար առիթից, նա շարժ-
վեց դեպի հարևան Նիբրու երկիր: Մարտերում վերջիններս տվեցին շուրջ 3000 զոհ:

Ավարտելով գործերը Նիբրուում՝ Աշշուրնաժիրպալը շարժվեց Տուշխա (ժաման.
Կարինը՝ Վերին Տիգրիսի աջ ափին): Վերջինս ավերվեց, սակայն հաշվի առնելով
քաղաքի հարմար դիրքը՝ արքան վերակառուցեց նրա պարիսպները և այն վերա-

բնակեցրեց: Դեռևս Տուշխայում նա ընդունեց հարկեր նաիրյան երկրների արքա-
ներից՝ Բիթ-Ջամանիի Ամմե-Բաալից, Շուրբիայի Անխիտեից, Նիրդունի Լաբտու-
րուից: Ստացված հարկը բաղկացած էր մարտակառքերից, ձիերից, ջորիներից,
արծաթից, ոսկուց, բրոնզե անոթներից, խոշոր ու մանր եղջերավոր անասուններից
և գինուց: Բացի այդ՝ Նաիրյան միության նկատմամբ Ասորեստանի կողմից սահ-
մանվեցին նաև որոշակի պարտավորություններ:

Այսպիսով՝ Աշշուրնաժիրպալ II-ի՝ Ք. ա. 882 թ. արշավանքը նաիրյան երկրների դեմ
ավարտվեց Տուշխա քաղաքում: Մի ամբողջ շարք այլ երկրներ՝ Բիթ-Ջամանին, Շուր-
բիան, Միջին Ուրումուն, Նիրդունը, ստիպված էին հրաժարվել դիմադրելուց: Հավանա-
բար ասորեստանցիների տիրապետությունը այս շրջաններում դեռևս ամուր չէր, բացի
այդ, այստեղ ընթանում էր տեղական քաղաքական միավորների խոշորացման գոր-
ծընթաց, ինչը արդեն փաստ էր Աշշուրնաժիրպալի հաջորդ Սալմանասար III-ի օրոք:

Ք. ա. 879 թ. Աշշուրնաժիրպալը արշավեց Կադմուխի, որտեղից էլ հասավ Աստ-
վաճների լեռնանցքը (Էլիմ-դաղ լեռնապարը Տիգրիսի աջ ափին): Արշավանքի հե-
տագա երթուղին Նաիրիի դեմ արդեն ընթացել է Կիբակու բնակավայրով, որտեղ
Աշշուրնաժիրպալը գիշերել է և ընդունել նրա հարկը՝ խոշոր անասուններ, գինի,
բրոնզե անոթներ: Այստեղից նա շարունակեց դեպի հյուսիս-արևմուտք՝ ձանա-
պարհին հնագանդեցնելով մի շարք երկրներ, սակայն ստիպված էր վերադառնալ
Քաշիյարի լեռների Նիբրու երկրում ծագած ապստամբության պատճառով:

Ավարտելով գործերը Քաշիյարիում՝ նա կրկին ուղևորվեց դեպի Նաիրի: Այստեղ
առաջին հարվածը ստացավ Նիրդուն (Բաթման-սուի գետաբերանի մոտ) երկրի կա-
ռավարիչ Լաբտուրուն: Հետո նա Նիրդունից շարժվեց Տուշխա, որտեղից էլ անցնելով
Տիգրիսի մյուս ափը՝ մոտեցավ Դիրրա երկրի արքայական քաղաք Պիտուրային: Եր-
կոյա մարտերից հետո քաղաքը գրավվեց, ողջ մնացածները սպանվեցին: Հաջոր-
դաբար գրավվեցին Դիրրայի մի շարք այլ բնակավայրեր: Ասորեստանյան զորքը որոշ
ժամանակ էլ անցկացրեց այս շրջաններում, որով էլ արշավանքն ավարտվեց: Դրա
արդյունքում ժամանակավորապես հպատակեցվեցին Նաիրյան միության մի ամբողջ
շարք երկրներ, որոնք ընկած էին Վանա լճից հարավ և հարավ-արևմուտք: Աշշուրնա-
ժիրպալին հաջողվեց որոշ ժամանակ ապահովել ասորեստանյան տիրապետությունը
Նաիրիում: Հետագայում Աշշուրնաժիրպալը կրկին անդրադարձավ Նաիրիի խնդրին:
Ընդհանուր առմամբ՝ նա չորս արշավանք է ձեռնարկել դեպի Նաիրի:

Արշավանքների երթուղիների հիման վրա գծագրվում է Նաիրի միության զբաղեց-
րած տարածքը: Դրանք ընկած էին մինչև Տիգրիսի ակունքները և Եփրատի վերին հո-
սանքները արևմուտքում, մինչև Ուրմիա լճի արևմտյան ափերը արևելքում և Բոհտա-
նի ավազանը հյուսիսում: Սակայն Նաիրիի տարածքը չէր սահմանափակվում այսքա-
նով: Աշշուրնաժիրպալի արշավանքները չէին շոշափում Նաիրիի հյուսիսարևմտյան
մարզերը՝ Դայանի-Տայքը և Վերին ծովի (Սև) հարավարևելյան ափերը:

Սալմանասար III-ի արշավանքները դեպի Հայկական լեռնաշխարհի համընկան
Վանի թագավորության կազմավորման հետ: Այս պահից սկսվում է Ասորեստանի և
Վանի թագավորության միջև շուրջ երկու դար տևած հակամարտությունը:

Սալմանասար III-ը իր կառավարման առաջին իսկ տարում՝ Ք. ա. 859 թ. նախա-

ձեռնեց արշավանք դեպի հյուսիս: Միմեսի լեռնանցքով (Դիյալա գետի միջին հոսանքների շրջան) առանց դժվարության հասավ Խուրուշկիա, որտեղից նրա առաջխաղացումը բարդացավ՝ կապված տեղացիների կազմակերպված դիմադրության հետ: Ի վերջո, ասորեստանյան զորքը գրավեց Վանի թագավորության արքա Արամուի ամրացված քաղաք Սուգունիան: Լքելով այնուհետև Սուգունիայի սահմանները՝ ասորեստանցիները հայտնվեցին Նաիրի երկրի ծովափին (անկասկած, Վանա լիճը): Դրանով էլ ավարտվեց Սալմանասար III-ի այդ արշավանքը:

Երեք տարի անց (Ք. ա. 856 թ.) Սալմանասարը, հպատակեցնելով Թիլ-Բարսիպ քաղաքը Եփրատի ափին, այնուհետև Ամիդ-Դիարբքրի մոտով հայտնվեց Էնգիտե (հայկ. Անձիտ) գավառի տարածքում: Այստեղից ասորեստանցիները հասան Արծանիա (Արածանի) գետի ափերը՝ Եփրատի հետ նրա խառնարանից ոչ հեռու, որտեղից էլ՝ Սուխմու երկիր: Սուխմուի նվաճումից հետո ասորեստանյան բանակը շարունակեց շարժվել դեպի Նաիրիի ծայրամասային շրջաններ՝ հասնելով մինչև Դայաննի (հայկ. Տայք): Դայաննիի բնակավայրերն ավերվեցին, և ձեռք բերվեց խոշոր ռազմավար:

Դայաննիից Սալմանասարի բանակն ընթացավ դեպի Արամուի մայրաքաղաք Արծաշկու (հայկ. Արծկե)՝ Վանա լճի հյուսիսարևմտյան ափին: Անկարող լինելով դիմադրել՝ ուրարտական արքան լքում է իր քաղաքը և բարձրանում Ադդուրու լեռները: Հետապնդելով հակառակորդին՝ ասորեստանցիները նրան պարտության են մատնում, գրավում Արամուի ճամբարը և ավերում ու հրկիզում արքայանիստ Արծաշկուն՝ շրջակա բնակավայրերով հանդերձ:

Ուղևորվելով Արծաշկուից՝ ասորեստանյան զորքերը բարձրանում են Էրիտիա լեռը (ըստ երևույթին, Սիփան լեռը՝ Վանա լճից հյուսիս), որտեղ Սալմանասարը կանգնեցնում է իր վիթխարի պատկերաքանդակը՝ Վանի թագավորության նկատմամբ տարած հաղթանակի պատվին փորագրված արձանագրությամբ հանդերձ: Այնուհետև, շարունակելով երթուղին դեպի հարավ-արևելք, Սալմանասարը մուտք է գործում Արմարիի մարզի տարածքը: Վերջինս Վանի թագավորության կենտրոնական շրջանն էր, որը համընկնում է պատմական Հայաստանի Վասպուրականի հետ: Ինչպես Արծաշկու արքայական քաղաքում և շրջակա բնակատեղիներում, այստեղ ևս ասորեստանցիները ավերեցին և հրկիզեցին հիշյալ մարզի քաղաքները: Այնուհետև ասորեստանյան բանակը շարժվում է դեպի Ուրմիա լիճ, որտեղից էլ՝ Վանա լճից հարավ՝ Բոհտան գետի հովիտ:

Հետագայում ևս երկու անգամ՝ Ք. ա. 856 և 844 թթ., Սալմանասար III-ը ձեռնարկեց արշավանքներ դեպի Հայկական լեռնաշխարհ, սակայն դրանք ընդգրկում էին շատ ավելի նեղ աշխարհագրական շրջանակներ, որ հնարավոր է բացատրել այստեղ արդեն հզորացող Վանի թագավորության կազմակերպված դիմադրությամբ: Այդ մասին անուղղակի կարելի է ենթադրել Վանի թագավորության արքա Սարդուրի I-ի արձանագրությունների հիման վրա: Այստեղ Սարդուրին կրում է՝ «Արքա մեծ, արքա հզորագույն, արքա տիեզերքի, արքա Նաիրի երկրի, որին հավասարը չկա, զարմանալի հովվապետ, մարտից չվախեցող, արքա հպատակեցնող անհպատակների...» տիտղոսաշարը, ինչը վկայում է նրա պետության ռազմական ներուժի օգուտին: Միաժամանակ դա խոսում է այն մասին, որ Վանի երիտասարդ պետությունը Ք. ա. IX դ. վերջերին պետք է լիներ Ասորեստանի վտանգավոր մրցակիցը հյուսիսում:

Հիշյալ նպատակով, սկսած Սալմանասար III-ի կառավարման 27-րդ տարվանից (Ք. ա. 832 թ.), ասորեստանցիները ձեռնարկեցին ռազմական արշավանքների մի ամբողջ շարք դեպի հյուսիս, ուր նրանք ընդհարվեցին Սարդուրի I-ի զորքերի հետ: Այսուհետև Ասորեստանի և Վանի թագավորության բախումները ստանում են ավելի հաճախակի բնույթ: Մասնավորապես Ք. ա. 832 թ. ասորեստանյան բանակը Տիգրիսի ակունքների շրջանով շարժվում է դեպի Արածանիի հովիտ, ուր հանդիպում է Սարդուրիի բազմաքանակ զորքերի դիմադրությանը: Իսկ Ք. ա. 829 թ. ասորեստանյան զորքերը ներխուժում են Բոհտանի հովիտը՝ նաիրյան Խուրուշկիա մարզ:

Այսուհետև երկու պետությունների միջև ընդհարումները տեղի էին ունենում դրանց սահմանամերձ գոտիներում, առանց էական տարածքային զավթումների:

Այսպիսով, ասորեստանյան սեպագիր աղբյուրների համաձայն, Սալմանասար III-ի՝ դեպի հյուսիս ձեռնարկած ռազմական արշավանքներից կարելի է դատել Վանի թագավորության հզորության աստիճանական աճի մասին: Շարունակաբար սասանվում են Ասորեստանի դիրքերը հյուսիսային տարածքներում:

Ք. ա. 827 թ. դեպի Խուրուշկիա ռազմական արշավանքից հետո Սալմանասար III-ը արդեն ի վիճակի չէր հյուսիսում միջամտելու անընդհատ վերելք ապրող Վանի թագավորության ներքին գործերին:

Դեպի նորաստեղծ Վանի թագավորություն Սալմանասար III-ի արշավանքից հետո այն արագորեն վերելք ապրեց, և սկսվեց Հայկական լեռնաշխարհի միավորումը: Վանի թագավորության արքաներ Մենուայի և հատկապես Արգիշտի I-ի ու Սարդուրի II-ի օրոք այն արդեն մի պետություն էր, որը սկսել էր ընդարձակել իր տիրույթները և ազդեցության գոտիները հարավում, հարավ-արևմուտքում և հարավ-արևելքում՝ ի հաշիվ նախկինում Ասորեստանի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող շրջանների (Վանի թագավորության և Ասորեստանի հարաբերությունների համար տե՛ս վերը՝ համապատասխան բաժինները): Վանի թագավորության առաջխաղացման հետևանքով Թիգլաթպալասար III-ի կառավարման նախօրեին ձևավորվել էր հակաասորեստանյան ընդարձակ դաշինք, որը միավորում էր Արևելյան Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի բազմաթիվ քաղաքական միավորներ (Մելիդը, Կումմուխը, Արպադը և այլք):

Թիգլաթպալասարի օրոք Ասորեստանի ռազմաքաղաքական վերելքը և Վանի թագավորության ու նրա դաշնակիցների նկատմամբ տարած վճռական հաղթանակները փոխեցին իրավիճակը հոգուտ Ասորեստանի: Նրա և Սարգոն II-ի օրոք Վանի թագավորությունը ոչ միայն կորցրեց Հայկական լեռնաշխարհից դուրս ունեցած տարածքները, այլև Ք. ա. 714 թ.՝ դեպի իր կենտրոնական շրջաններ կազմակերպված ավերիչ արշավանքի ընթացքում, ծանր հարված ստացավ: Այնուամենայնիվ, Արգիշտի II-ի գործողությունների շնորհիվ Վանի թագավորությունը կարողացավ որոշակիորեն վերականգնվել և նույնիսկ աստիճանաբար վերադարձնել իր նախկին ազդեցության գոտիների մի մասը: Իսկ Ռուսա II-ը արդեն գրեթե վերականգնեց պետության հզորությունը՝ հեռահար արշավանքներ ձեռնարկելով դեպի արևմուտք, արևելք և հյուսիս-արևելք:

Ք. ա. VII դ. կեսերից Ասորեստանի և Վանի թագավորության հարաբերություններում նկատվում է հրաժարում բացահայտ առձակատումից, որ պայմանավորված էր երկու պետությունների անվտանգությանը սպառնացող այլ ուժերի գոյությամբ

և ակտիվությամբ: Ասորեստանի համար դրանք Բաբելոնիայի, Էլամի և սկյութների գործողություններն էին, իսկ Վանի թագավորության համար՝ սկզբում՝ կիմմերները, այնուհետև, թերևս, սկյութները:

Հոգևոր-մշակութային առնչություններ

Հայաստանի և Միջագետքի պետությունների միջև փոխհարաբերությունները չէին սահմանափակվում միայն ռազմաքաղաքական ոլորտով: Ավելի քան երկհազարամյա բազմաբնույթ շփումները չէին կարող իրենց արտացոլումը չգտնել հոգևոր և նյութական մշակույթի ոլորտում: Չնայած առ այսօր այս խնդրի շուրջ համապարփակ հետազոտություններ չկան, սակայն առկա նյութերը թույլ են տալիս հավաստել սերտ փոխազդեցությունների օգտին: Վերջիններս առավել ակնհայտ են հայերենում միջագետքյան լեզուներից կատարված փոխառությունների պարագայում:

Հատուկ ուսումնասիրությունները թույլ են տվել հայերենում բացահայտել սեմական լեզուներից կատարված մեծաքանակ փոխառություններ: Վերջիններիս աղբյուրը աքքադերենն է և արամեերենը (ասորերենը): Առաջինից հայերեն անցած է համարվում շուրջ երեք տասնյակ, իսկ երկրորդից՝ ավելի քան երկու հարյուր բառ: Ընդ որում՝ հնարավոր է, որ հայերեն մուտք գործած արամեերեն համարվող բառերի մի մասը իրականում ծագել է աքքադերենից:

Ասորեստանի և Վանի թագավորության փոխհարաբերությունները չէին սահմանափակվում միայն հակամարտությամբ: Վերջինիս մշակույթի առանձին բնագավառների հետազոտությունը թույլ է տվել բացահայտել երկու պետությունների միջև առկա փոխհարաբերությունների այլ ոլորտներ, որոնք չէին կարող արտացոլվել սեպագրական աղբյուրներում: Դրանք ընդգրկում են ինչպես հոգևոր, այնպես էլ նյութական մշակույթի տարբեր բնագավառներ: Ընդ որում՝ փոխհարաբերությունների ուղղվածությունը, հատկապես Վանի թագավորության գոյության շրջանում, գերազանցապես միակողմանի ուղղվածություն ուներ՝ Միջագետքից դեպի հյուսիս:

Վերոհիշյալ ազդեցությունների շարքում առավել ակնառուն միջագետքյան սեպագրական ավանդույթի մուտքն էր Վանի թագավորություն արդեն Սարգուրի I-ի օրոք: Մի շարք վաղ ուրարտական պաշտոնական արձանագրություններ գրված են հենց աքքադերեն լեզվով:

Նյութական մշակույթի ասպարեզում ասորեստանյան ազդեցությունը նկատվում է ի դեմս բարձրաքանդակի և որմնանկարի: Կարծիք կա այն մասին, որ ասորեստանյան ազդեցություն պետք է համարել Վանի թագավորության վարչաքաղաքական կառուցվածքը, ուրարտական արքաների տիտղոսաշարը:

Հին Միջագետքի պետությունների և առաջին հերթին Ասորեստանի հետ Հայկական լեռնաշխարհի պետականությունների փոխհարաբերությունները իրենց արտացոլումն են գտել հայկական բանավոր ավանդույթում և մատենագրության մեջ: Հատկապես այս առումով անհրաժեշտ է հիշատակել Պատմահայր Մովսես Խորենացու «Հայոց պատմության» առաջին գիրքը, որտեղ առանձնացված է Հայկ նահապետի և նրա սերունդների մի շարք ներկայացուցիչների առնչակցությունը Միջագետքի պատմության մի շարք դրվագներին:

Այդ դրվագների շարքում հիշատակելի են հետևյալները.

- ա) Հայկի տոհմի ելքը Միջագետքից և հաստատվելը Հայկական լեռնաշխարհում, նրա հաղթանակը Բելի նկատմամբ Հայոցձորի ճակատամարտում,
- բ) Արամ նահապետի արշավանքը դեպի «Ասորվոց դաշտ»,
- գ) Արա Գեղեցիկ (նաև Արայան Արա) և Շամիրամ,
- դ) Շամիրամի կողմից ջրանցքի կառուցումը (իրականում՝ Ուրարտուի արքա Մենուայի ջրանցքը),
- ե) Ասորեստանի արքա Սինախներիբի հայրասպան որդիների փախուստը Հայաստան,
- զ) Պարույր Սկայորդու մասնակցությունը Ք. ա. 612 թ. Նինվեի գրավմանը՝ որպես Մարաստանի արքա Կիաքսարի դաշնակից:

Խորենացու ներկայացրած միջագետքյան-հայկական առնչությունները, անկասկած, որոշակիորեն ածանցվում են նրա աշխատության հիմնական առանցքագաղափարին՝ հայոց պատմության դրվագները կապելու ժամանակի արժանահիշատակ իրադարձությունների և անձանց հետ, որոնց շարքում առաջին հերթին Ասորեստանի արքաներն են: Սակայն միաժամանակ դրանց հիմքում ընկած են նաև իրական առնչություններ, որոնց մասին կարելի է անտողակիորեն դատել Ք. ա. II-I հազ. ասորեստանյան տեքստերի պահպանած տեղեկությունների հիման վրա:

Այդ առումով կարևոր է Վանի թագավորության արքա Ռուսա II-ի՝ Կարմիր բլուրից հայտնաբերված արձանագրության մեջ միջագետքյան կարևոր աստվածություններից մեկի՝ Մարդուկի անվան հիշատակությունը մի ենթատեքստում, որը վկայում է այստեղ նրա երկրպագման օգտին:

Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի միջև պատմական երկարատև ժամանակահատվածի ընթացքում վկայված փոխհարաբերությունների ոլորտը, անկասկած, ավելի մեծ է եղել, քան ներկայումս հնարավոր է բացահայտել: Երկու քաղաքակրթական աշխարհների՝ հազարամյակներ ընդգրկող փոխշփումների հիմքում, բացի քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային կապերից, որոնք պայմանավորված էին միմյանց հաջորդող պետականությունների գոյությամբ և սերտ շփումներով, առկա է ևս մեկը, որն անհամեմատ ավելի դժվար է ուրվագծել: Դա, սկսած առնվազն Ք. ա. IV հազարամյակից, Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջաններից դեպի հարավ և հարավ-արևմուտք ուղղված էթնիկական խոշոր և մասնակի տեղաշարժերն էին, որոնց ընթացքում երկու տարածաշրջանների շփման գոտում էթնիկ պատկերի պարբերական թարմացումը պետք է լիներ: Մասնավորապես, այդպիսի էթնիկ բազմաշերտության լավագույն օրինակը Հայկական լեռնաշխարհի ինչ-որ հատվածից Ք. ա. III հազ. և ավելի ուշ Միջագետքում և Սիրիայում խուրրիների հաստատումն էր, որտեղ նրանք արդեն հաջորդ հազարամյակում ապրում էին սեմական և այլ ժողովուրդների հետ միևնույն տարածաշրջանում (տե՛ս Բաժին 4. Գլուխ 1): Արդյունքում Հայկական Տավրոսի գոտին և ավելի հարավ ընկած հյուսիսմիջագետքյան տարածաշրջանը վերածվել էր մի յուրատեսակ քաղաքակրթական սիմբիոզի:

ԲԱԲԵԼՈՆԻԱ

ԳԼՈՒԽ 1

ԲԱԲԵԼՈՆԻԱՆ Ք. Ա. XIX-XI ԴԱՐԵՐՈՒՄ

Մինչև Ք. ա. XX դ. այն տարածքը, որտեղ հետագայում կազմավորվեց Բաբելոնիան, շումերական քաղաքակրթական արեալի հյուսիսային սահմանամերձ հատվածն էր, որը քաղաքական, մշակութային և տնտեսական որոշակի վերելք էր ապրում Աքքադի պետության գոյության դարաշրջանում: Միայն Ք. ա. XX դ. կեսերից Միջագետք ներգաղթած ամորեական ցեղերի մի մասի հաստատումով կենտրոնական Միջագետքում՝ մասնավորապես Եփրատի և Տիգրիսի առավելագույն մերձեցման վայրում, որտեղով անցնում էր հյուսիս-հարավ կարևորագույն ճանապարհը, Բաբելոն քաղաքը, նաև հարակից շրջանները, սկսում են վերածվել քիչ թե շատ առաջատար կենտրոնի միջագետքյան աշխարհում:

1. ՀԻՆ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Ամորեացիները հաստատվեցին կենտրոնական և Հյուսիսային Միջագետքի քաղաքային կենտրոններում՝ սկզբնական փուլում վարելով իրենց հատուկ կիսաքոչվոր կենցաղ և միայն ժամանակի ընթացքում յուրացնելով տեղացիների մշակույթը:

Հայտնի չէ, թե ինչ պարագայում ամորեացիները վերցրին իշխանությունը Բաբելոնիայում: Համաձայն ավելի ուշ շրջանի գրավոր ավանդության՝ Բաբելոնիայի պետության հիմնադիրը ամորեացի ցեղապետ Սումու-արումն էր, որը Ք. ա. XIX դ. հաստատվեց այստեղ (Ք. ա. 1894-1881 թթ.): Ընդհուպ մինչև Ք. ա. XVII դ. կեսերը, բացառությամբ Աշշուրի, Բաբելոնիայի ամորեական հարստության ստեղծած պետությունը Միջագետքի այն մանր իշխանություններից մեկն էր, որոնց քաղաքական և տնտեսական ազդեցության ոլորտը սահմանափակվում էր համեմատաբար փոքր տարածքով: Ավելին՝ այս փուլում Բաբելոն քաղաքը դեռևս պետության առաջատար կենտրոնը չէր: Համենայնդեպս, հոգևոր-մշակութային առումով Բաբելոնիայում

անվիճելի հեղինակություն էին վայելում երկու հնագույն քաղաքներ՝ Սիպպարը՝ հյուսիսում և Նիպպուրը՝ հարավում: Հնարավոր է, որ Բաբելոնիայի ամորեական դինաստիան կապված էր Սիպպարի հետ, քանի որ ակնհայտորեն հենվում էր դրա՝ Շամաշ աստծո տաճարի (Էբաբբարա) քրմության վրա: Սկսած Սումու-արումից՝ բաբելոնյան արքաները ամեն կերպ հովանավորում էին Սիպպարին՝ քաղաքը նույնիսկ ազատելով հարկերից: Բաբելոնյան մի շարք արքաներ, ներառյալ Համմուրապին, կառուցապատում և բարեկարգում էին Սիպպարը:

Առաջին հինգ արքաների օրոք Բաբելոնիան որևէ տեսանելի ազդեցություն չուներ այս տարածաշրջանում: Այս փուլը Բաբելոնիայի և ընդհանրապես Միջագետքի՝ ամորեական ցեղերի ներհոսքի ազդեցությանը ենթարկված մյուս տարածքների համար բնութագրվում է որպես հիմնականում քաղաքաբնակ տեղական աքքադական բնակչության (անկախ էթնիկական պատկանելությունից) և եկվոր կիսաքոչվոր ամորեացիների համակեցության հիմքերի ձևավորման շրջան:

Սկսած Սումու-արումից՝ ամորեական հարստության մի քանի արքաների գործունեության առաջնահերթ խնդիրը Բաբելոնի և հարակից քաղաքների ամրությունների և տաճարների վերակառուցումն էր, որոնք տուժել էին նախորդ փուլում պատերազմներից կամ ուղղակի բնության ուժերի ներգործության հետևանքով: Ոչ պակաս կարևոր խնդիր էր դրված՝ ապահովել հարակից շրջանների նկատմամբ կայուն գերիշխանություն: Մեկը մյուսի հետևից գրավվեցին Դիլբատը, Կազալլուն, Քիշը, Բորսիպպան, սահմանների երկայնքով կառուցվեցին ամրություններ:

Ք. ա. XVIII դ. սկզբներին սկսվեց Բաբելոնիայի ռազմաքաղաքական վերելքը: Սին-մուբալլիտի (Համմուրապիի հայրը) ջանքերով ստեղծվեց Բաբելոնիայի, Իսինի և Ուրուկի դաշինքը, որն ուղղված էր հարավից սահմանակից հզոր Լարսայի և արևելյան հարևան Էշնուննայի դեմ: Սակայն հյուսիսում Շամշի-Ադադ I-ի գործողությունները թույլ չտվեցին իրականացնել տարածքային նվաճումներ: Շատ շուտով արքան ստիպված էր ավելի շատ մտահոգվել իր բուն սահմանների անվտանգության ապահովման մասին, ամրացնել Բաբելոնի պարիսպները:

Համմուրապիի (Ք. ա. 1792-1750 թթ.) կառավարման սկզբում իրավիճակը Միջագետքում խիստ լարված էր՝ կապված մի շարք ամորեական պետականությունների միջև մշտապես ընթացող պատերազմների, ժամանակավոր քաղաքական դաշինքների հակամարտության և այլ հանգամանքների հետ: Հինգ տարում Համմուրապին մեկը մյուսի հետևից գրավեց Իսինը, Ուրուկը, Էմուտբալը, Մալգիումը, Ռապիբումը: Վերջին երկուսը գտնվում էին Բաբելոնիայի գլխավոր հակառակորդներ Էշնուննայի և Լարսայի տիրապետության տակ: Համմուրապիի կառավարման շրջանի ռազմաքաղաքական հաջողությունների բարձրակետը Էշնուննայի, Էլամի, Սուբարտուի (= Աշշուր) և Լարսայի նվաճումն էր: Քիչ անց գրավվեց նաև Մարին, որով ողջ Միջագետքը Պարսից ծոցից մինչև Հայկական Տավրոսի հարավային ստորոտները անցան Բաբելոնիայի գերիշխանության ներքո:

Համմուրապիի կառավարման վերջին տարիներն անցան նորաստեղծ վիթխարի պետության ամրապնդման, որոշ նվաճված պետությունների (մասնավորապես

Էշնուննայի և նրա դաշնակիցների) անջատողական միտումների պայմաններում: Համմուրապիի «Օրենսգրքի» ստեղծման գլխավոր դրոշմապատճառ պետք է համարել նորաստեղծ տերության ամրապնդման, ներքին միասնականության ապահովման խնդիրը:

Մահվանից քիչ առաջ Համմուրապին արքա հռչակեց որդուն՝ Սամսուիլունային (Ք. ա. 1749–1712 թթ.), որը սկզբից ևեթ բախվեց ներքաղաքական լուրջ խնդիրների հետ: Էլամի արքա Կուտիր–Նախսունտե I–ի արշավանքի հետևանքով Բաբելոնիայի վերահսկողությունից դուրս եկավ Հարավային Միջագետքի հատվածը՝ Ուրուկ քաղաքի հետ միասին: Արքայի համար ծանր փորձություն էր ունի Ռիմ–Սինի (թերևս Համմուրապիի կողմից գերեզարկված Ուրի արքա Ռիմ–Սին I–ի որդին)՝ չորս տարի տևած ապստամբությունը, որի ճնշումից հետո նա ձեռնարկեց լայն շինարարական աշխատանքներ՝ թերևս պատերազմի ժամանակ ավերված քաղաքների վերականգնման նպատակով: Վերակառուցվեցին մի շարք տաճարներ, մասնավորապես Քիշում:

Բաբելոնիայի վերջին արքաների կառավարումն անցավ համեմատաբար խաղաղ պայմաններում: Այնուամենայնիվ, Բաբելոնիայի թագավորությունը աստիճանաբար կորցնում էր իր նախկին հզորությունը և հեղինակությունը, նմանապես նաև Համմուրապիի օրոք պետության ունեցած տարածքը: Նույնիսկ Սամսուիլունայի օրոք Միջագետքի հյուսիսը և հարավը միայն ձևականորեն էին ընդունում Բաբելոնի արքայի գերիշխանությունը: Վերջակետը դրվեց Ք. ա. 1595 թ., երբ խեթական արքա Մուրսիլիս I–ը, դաշնակցած Եփրատի միջին հոսանքների շրջանում գտնվող Խանա պետության հետ, արագ երթով մտավ Միջագետք և գրավեց Բաբելոնը՝ վերջ տալով դրա վերջին արքա Սամսուիլունայի և ընդհանրապես ամորեական հարստության իշխանությանը:

2. ԿԱՍՍԻՏԱԿԱՆ ԲԱԲԵԼՈՆԻԱ

Ամորեական հարստության անկումից հետո Միջագետքում քաղաքական գերիշխանությունն անցավ նախկինում այստեղ ներթափանցած կասսիտական ցեղերին: Վրա հասավ Բաբելոնիայի պատմության մի փուլ, որը տևեց մինչև Ք. ա. XII դ. և պայմանականորեն ստացել է «Միջին բաբելոնյան դարաշրջան» անվանումը:

Կասսիտներն առաջին անգամ հիշատակվում են Համմուրապիի օրոք որպես մարտունակ զինվորներ, որոնց վրա արքան ռազմական ծառայության պարհակ էր դրել: Համմուրապիի որդի Սամսուիլունայի օրոք կասսիտները հոծ զանգվածով զբաղեցնում էին Բաբելոն քաղաքից շուրջ 100 կմ հյուսիս՝ Սիպպար քաղաքի շրջակայքը: Սրանք գերազանցապես երկրագործական–արհեստագործական կենցաղավարմամբ ապրող ոչ սեմական էթնիկական խումբ էին, որոնք լոյալ էին բաբելոնյան իշխանությունների նկատմամբ: Նրանք միաժամանակ աչքի էին ընկնում ակն-

հայտ ռազմական ունակություններով՝ ծառայելով բաբելոնյան քանակում: Հատկանշական է, որ հետագայի՝ արդեն կասսիտական դարաշրջանի միջագետքյան և օտար ծագման աղբյուրներում բազմիցս հիշատակվում է կասսիտների մոտ ձիաբուծության խաղացած նշանակալից դերի, ինչպես նաև մարտակառքերի կարևոր նշանակության մասին:

Ինչ վերաբերում է կասսիտների ավելի վաղ շրջանի պատմությանը, ներառյալ նրանց էթնիկական պատկանելությունը և նախնական բնակության վայրը նախքան Միջագետքում հայտնվելը, ապա այս խնդիրները դեռևս վերջնական լուծում չեն ստացել: Առաջին ուսումնասիրողներից Ֆ. Դելիշը գտնում էր, որ կասսիտները ի սկզբանե հանդիսացել են Բաբելոնիայի հնագույն բնակչությունը, մի տեսակետ, որ հետագայում ընդունելություն չգտավ: Առավել տարածված ժամանակակից տեսակետի համաձայն՝ կասսիտները Միջագետք են ներթափանցել Իրանական բարձրավանդակից՝ Ջագրոսի վրայով: Կասսիտների նախնական բնակության վայրի այսպիսի տեղադրումը գլխավորապես հենվում է նրանց ցեղանվան և Ստրաբոնի հիշատակած կոսսայոյների անվան նմանության վրա (Strabo 11.13.6). վերջիններս նշվում էին որպես մարերի հարևաններ:

Կասսիտերենի վերաբերյալ առ այսօր առկա են երկու կասսիտերեն–աքքադերեն բառարաններ (դրանցից մեկը պարունակում է մի քանի տասնյակ դիցանուններ և հասարակ բառեր, մյուսը՝ 19 անձնանուններ): Սրանց հետազոտությունը թույլ է տվել վստահաբար նշել, որ կասսիտերենը որևէ կերպ չէր առնչվում աքքադերենին: Նմանապես պարզ է, որ կասսիտերենը չէր կարող ազգակցական կապի մեջ լինել նաև դրավիդյան լեզուներին պատկանող էլամերենի հետ:

Աղբյուրները նշում են կասսիտների մեծ շարժունակությունը: Նրանց ներկայությունը հավաստվում է նաև Նուզիում (ժաման. Յորդան թեփե), Տերքայում (ժաման. Թեյ Աշարա), Ալալախում (Թեյ Աչանա) և Խանայում:

Չնայած այն հանգամանքին, որ կասսիտների իշխանության գալուն համաժամանակյա բաբելոնյան աղբյուրները հստակ տեղեկություններ չեն պարունակում նրանց քաղաքական կազմակերպման աստիճանի վերաբերյալ, այնուամենայնիվ շատ ավելի ուշ շրջանի աղբյուրները նշում են, որ կասսիտների մոտ նախքան Համմուրապիի արքայատոհմի անկումը արդեն գոյություն է ունեցել արքայական իշխանություն: Այդ մասին է վկայում Ք. ա. XII դ.՝ Իսինի հարստության օրոք կազմված «բաբելոնյան արքայացանկը», որտեղ կասսիտական արքայատոհմի ընդհանուր կառավարման ժամանակաշրջանը ներկայացված է որպես 576 տարի: Եթե Ք. ա. 1349 թ. սկսած՝ իշխած կասսիտական արքաների կառավարման տարեթվերը հայտնի են, ապա դրանից առաջ իշխածների հարցում եղած անորոշությունը թույլ է տվել մասնագետներին առաջնորդվել միջին թվաբանականով՝ յուրաքանչյուրին պայմանականորեն վերագրելով շուրջ 20 տարի: Այսպիսի եղանակով կասսիտական արքայատոհմի կառավարման սկիզբը պետք է ընկնի մոտավորապես Ք. ա. XVII դ. կեսերը: Ասվածից կարելի է եզրակացնել, որ դեռևս Համմուրապիի արքայատոհմի կառավարման շրջա-

նում կասսիտներն ունեցել են որոշակի ինքնավար կարգավիճակ Բաբելոնիայի կազմում:

Բաբելոնիայում կասսիտական արքայատոհմի իշխանությունը տևեց շուրջ հինգ դար՝ ընդհուպ մինչև դրա ավարտը՝ Ք. ա. 1155 թ.: Կասսիտների օրոք Բաբելոնիան վերջնականապես միավորվեց ամուր պետականության շրջանակներում այն բանից հետո, երբ Ք. ա. 1475 թ. կասսիտական արքա Ուլամբուրիաշը ճնշեց երկրի հարավում ծագած ապստամբությունը: Նրա հաջորդներից Ագում III-ը մեկ անգամ ևս ստիպված էր արշավել Բաբելոնիա՝ ճնշելու դրա հարավում ծագած ապստամբությունը:

Կասսիտները շատ արագ և արդյունավետ կերպով ներառվեցին բաբելոնյան և ընդհանրապես միջագետքյան քաղաքական, տնտեսական և մշակութային կյանք: Կասսիտական արքայատոհմի գոյության ողջ ընթացքում չկա որևէ տեղեկություն տեղական գերակշիռ սեմական բնակչության և կասսիտների միջև որևէ առձակատման կամ սառը հարաբերությունների առկայության մասին: Ավելին՝ կասսիտական արքաները ծավալեցին լայն շինարարական գործունեություն՝ վերականգնելով երկրի տարբեր քաղաքներում նախկինում կառուցված և կիսավեր վիճակում գտնվող տաճարները (Բաբելոն, Ադաբ, Բորսիպպա, Իսին, Լարսա, Նիպպուր, Սիպպար և այլն): Կուրիգալգու I-ը Բաբելոնից շուրջ 100 կմ հյուսիս-արևմուտք կառուցեց նոր մայրաքաղաք՝ Դուր-Կուրիգալգուն:

Հարաբերությունները հյուսիսային հարևան Ասորեստանի հետ բավական անկայուն էին, գլխավորապես սահմանային վեճերի պատճառով: Ամեն դեպքում, սկզբում Բաբելոնիայի արքա Կարահինդաշի և Ասորեստանի արքա Աշշուր-բել-նիշեշուի, այնուհետև նույն Կարահինդաշի և Ասորեստանի արքա Պուզուր-Աշշուր III-ի միջև կնքվեցին պայմանագրեր, որոնցով հաստատագրվեցին երկու պետությունների սահմանները: Այնուամենայնիվ, երկու երկրների իշխող արքայատոհմերի միջև նույնիսկ գոյություն ունեին ազգակցական կապեր: Այդ մասին հստակ վկայություն կա մինևնույն իրադարձության մասին պատմող ասորեստանյան և բաբելոնյան ժամանակագրություններում: Ասորեստանյան ժամանակագրության՝ Ասորեստանի արքա Աշշուրուբալիտ I-ին վերաբերող հատվածում հիշատակվում է Բաբելոնիայի գահի համար մղված պայքարն արտացոլող մի իրադարձություն: Ըստ այդ տեղեկության՝ Աշշուրուբալիտի դուստր Մուբալիտատ-շերուան կնության էր տրվել Բաբելոնիայի արքա Բուրնա-բուրիաշ II-ի որդուն: Ի նշանավորումն երկու երկրների միջև բարեկամական հարաբերությունների՝ Աշշուր քաղաքում կառուցվել էր Բաբելոնիայի գլխավոր աստված Մարդուկի տաճարը: Հորը հաջորդած Աշշուրուբալիտի թոռան՝ Կարախարդաշի դեմ, սակայն, ապստամբություն էր բռնկվել, և իշխանության էր եկել կասսիտական ազնվական Նագի-Բուգաշը: Ասորեստանյան զորքը մտել էր Բաբելոնիա, մահապատժի ենթարկել գահը բռնազավթողին և արքա հռչակել Բուրնա-բուրիաշի որդի Կուրիգալգու Կրտսերին (II):

Կասսիտական առաջին արքաների օրոք Բաբելոնիան հարաբերական ակտիվություն էր ցուցաբերում իր անմիջական հարևանությամբ ընկած պետությունների

հետ հարաբերություններում: Սկզբնական շրջանում նրան ուղեկցում էին հաջողությունները: Կուրիգալգու II-ը (Ք. ա. 1333-1312 թթ.) հաղթեց Էլամի արքա Խուր-բատիլային և նույնիսկ կարողացավ գրավել Էլամի մայրաքաղաք Սուսան (Շոշ): Թերևս, սա Բաբելոնիայի վերջին լուրջ ռազմաքաղաքական հաջողությունն էր: Ասորեստանի հետ հարաբերությունները, հատկապես Էնլիլ-նիրարի I-ից սկսած, որպես կանոն, ընթանում էին ոչ հօգուտ Բաբելոնիայի: Ասորեստանյան-բաբելոնյան հակամարտության դրդապատճառը սահմանային վեճերն էին, և նրանց միջև մղված պատերազմների ավարտին սահմանները վերաձևվում էին: Այնուամենայնիվ, արդեն սկսած այս ժամանակներից, զգացվում էր, որ Բաբելոնիան կորցրել էր իր նախկին ռազմաքաղաքական ներուժը: Սահմանների ևս մեկ վերաձևում կատարվեց Ադադնիրարի I-ից Նագիմարուտտաշի կրած պարտությունից հետո:

Շուտով կրկին վերականգնվեցին Էլամի պարբերաբար կրկնվող ասպատակությունները, որոնց հետևանքով Բաբելոնիայի համար խիստ դժվարացավ սեփական սահմանների, հատկապես Բաբելոնիան միջագային առևտրական ուղիներին կապող ճանապարհների անվտանգության ապահովումը: Եթե Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հետ կապը վտանգվում էր Ասորեստանի կողմից, ապա արևմուտքում, Եգիպտոսի և սիրիա-փյունիկյան աշխարհի ու Բաբելոնիայի միջև գործում էին կիսաքոչվոր արամեացիները և սեմական այլ ցեղեր:

Ասորեստանյան և Էլամական սպառնալիքին դիմագրավելու նպատակով բաբելոնյան արքաներն ընդհուպ մինչև Ք. ա. XIII դ. կեսերը ապավինում էին Խեթական տերության հետ ունեցած դաշնակցային հարաբերություններին, որը ձևավորվել էր դեռևս նախորդ դարի երկրորդ կեսին: Սակայն արդեն Բաբելոնի արքա Կադաշման-Էնլիլ II-ի օրոք իրավիճակը փոխվեց: Թերևս, Բաբելոնիայում որոշ քաղաքական ուժեր գիտակցում էին խեթամետ դիրքորոշման վնասները, որի հետևանքով երկրի գլխին մշտապես կախված էր ասորեստանյան ներխուժման վտանգը: Մանկահասակ բաբելոնյան արքայի խնամակալ Իտտի-Մարդուկ-բալատուն խեթական արքա Խաթթուսիլիս III-ի հետ ունեցած նամակագրությունում քացահայտորեն դրսևորում էր խեթա-բաբելոնյան դաշինքից հեռացման միտումներ: Արքայի խնամակալի կասկածները Բաբելոնիայի համար վերոհիշյալ դաշինքի նպատակահարմարության մասին իրոք հիմնավոր էին, քանի որ երկրի մեկուսացած դիրքը երկու հզոր հարևանների (Ասորեստան և Էլամ) միջև, պոտենցիալ դաշնակիցներ Խաթթիի և Եգիպտոսի հետ անկայուն հաղորդակցության պարագայում, լավ հեռանկար չէր խոստանում, ինչը մի քանի տասնամյակ անց լիովի դրսևորվեց:

Ք. ա. XIII դ. վերջին քառորդում սկսվեց Բաբելոնիայի քաղաքական անկման գործընթացը: Ք. ա. 1224 թ. (*) Թուկուլթի-Նինուրտա I-ը պարտության մատնեց Բաբելոնիայի արքա Կաշտիլիաշ IV-ին և գրավեց Բաբելոնիան, որը յոթ տարի շարունակ գտնվում էր Ասորեստանի անմիջական վերահսկողության տակ: Այդ ընթացքում երկիրը կառավարեցին Ասորեստանից կախյալ երեք արքաներ: Սակայն գլխավոր սպառնալիքը, այնուամենայնիվ Ասորեստանը չէր, որը ինքն արդեն քաղաքական անկում էր ապրում, այլ արևելյան հարևան Էլամը: Ասորեստանի տիրա-

պետության տարիների ընթացքում Էլամի արքա Կիդին-Խուտրանը երկու արշավանք ձեռնարկեց, որոնց ընթացքում ավերվեցին մի շարք խոշոր քաղաքներ (Դերը, Նիպատը և այլն) և նույնիսկ տաճարներ: Թուկուլթի-Նինուրտայի կառավարումից հետո Բաբելոնիայում մի կարճ ժամանակով իշխանության եկավ կասսիտական արքայատոհմը: Առաջինը Կաշտիլիաշի որդի Ադադ-շումա-ուծուրն էր, ում օրոք Բաբելոնիան լիովին անկախացավ Ասորեստանից:

Բաբելոնիայի անկումը վրա հասավ որոշ ժամանակ անց: Սկզբում Ասորեստանի արքա Աշշուրդան I-ը, այնուհետև Էլամի արքա Շուտրուկ-Նախսունտեն մեկ տարվա ընթացքում մեկը մյուսի հետևից արշավեցին Բաբելոնիա: Չնայած հարվածը ծանր էր, այնուամենայնիվ, ևս մեկ արքա կարողացավ հասնել իշխանության՝ Էնլիլ-նադին-ախսեն, որը, սակայն, շուտով պարտություն կրեց Էլամի նոր արքա Կուդուր-Նախսունտեից և գերեվարվեց Էլամ: Էլամ տարվեց նաև Բաբելոնիայի հովանավոր աստված Մարդուկի արձանը: Սրանով ավարտվեց կասսիտական Բաբելոնիայի գոյությունը:

Կասսիտական դարաշրջանը Բաբելոնիայում նշանավորվեց մշակութային մեծ վերելքով, որն արտահայտվեց ինչպես երկրի ներսում տնտեսության նշանակալից կայունացմամբ և հոգևոր կյանքի ստանդարտացմամբ իր բոլոր բաղադրիչներով, այնպես էլ Բաբելոնիայի մշակութային մեծ դերով ժամանակի Առաջավոր Ասիայում:

Այս շրջանում էր, որ աքքադերենի բաբելոնյան բարբառը և սեպագրի բաբելոնյան համակարգը վերածվեցին *lingua franca*-ի և *scripta franca*-ի ողջ Առաջավոր Ասիայում, այդ թվում՝ պահպանողական միտումներով աչքի ընկնող Եգիպտոսում՝ կիրառվելով որպես միջազգային նամակագրության և պայմանագրերի լեզու: Բաբելոնյան գիտությունը, բժշկությունը, գուշակային պրակտիկան լայնորեն տարածված էին մերձավոր և հեռավոր հարևանների մոտ:

Ինչ վերաբերում է բուն կասսիտական մշակութային ազդեցությանը Բաբելոնիայում, ապա դրա վերաբերյալ աղբյուրները շատ քիչ տեղեկություններ են պահպանել. հիմնականում այն պատճառով, որ կասսիտները շատ արագ մերվեցին միջագետքյան մշակութային աշխարհին՝ դառնալով դրա բաղկացուցիչ մասը և կրողները: Այս երևույթը առավել վառ է արտահայտված կասսիտական դարաշրջանի Բաբելոնի կրոնական համակարգում: Բաբելոնիայի դիցարանը շարունակվեց այն տեսքով, ինչպիսին կար մինչև կասսիտների կողմից իշխանության գալը՝ բացառությամբ երկու աստվածությունների, որոնց աղբյուրները հիշատակում են որպես «արքայի աստվածներ»՝ Շուքամունան և Շումալիյան: Ակնհայտորեն սրանք կասսիտների քնիկ էթնիկ աստվածություններն էին, որոնք համարվում էին արքայի (այսինքն՝ արքայատոհմի) հովանավորները, ճիշտ այնպես, ինչպես Միտաննիում Ինդրան, Վարունան և Նասասոյա երկվորյակները: Հայտնի են ևս շուրջ երկու տասնյակ կասսիտական դիցանուններ, սակայն պարզ չեն դրանց գործառույթները, ինչպես նաև նրանց նվիրված տաճարների կամ այլ սրբավայրերի առկայությունը:

3. ԻՍԻՆԻ ԱՐՔԱՅԱՏՈՒՄԸ

Կասսիտական արքայատոհմի գահագրկումից հետո Բաբելոնիայում հաստատվեց սեմական ծագման մի արքայատոհմ, որը ծագում էր Իսին քաղաքից (Եփրատի ափին՝ ժաման. Ադ-Դիվանիյա բնակավայրից 35 կմ հարավ-արևմուտք): Միայն որոշ ժամանակ անց Բաբելոն քաղաքը դարձավ համանուն պետության վարչական կենտրոն:

Իսինյան արքայատոհմին հաջողվեց մասնակիորեն վերականգնել Բաբելոնիայի՝ նախկինում կորցրած տարածքը, իսկ չորրորդ արքա Նաբուգոդոնոսոր I-ը (Նաբու-կուդուրի-ուծուր) (Ք. ա. 1124-1103 թթ.) նույնիսկ վճռական պարտության մատնեց Էլամին: Խորհրդանշական է, որ հաղթանակից հետո արքան Բաբելոն վերադարձրեց Էլամցիների կողմից գերեվարված Մարդուկ աստծո արձանը: Հյուսիսային հարևան Ասորեստանի հետ հարաբերություններն ընթանում էին անկայուն հաջորդականությամբ: Սկզբնապես հաջողությունը ուղեկցում էր բաբելոնցիներին, սակայն Ասորեստանի արքա Աշշուր-ռեշա-իշին երկու անգամ ծանր պարտության մատնեց բաբելոնցիներին: Այնուհետև Թիգլաթպալասար I-ը, իր արշավանքներից մեկի ընթացքում հաղթելով Բաբելոնիայի արքա Մարդուկ-նադին-ախսենին, նույնիսկ գրավեց երկրի գլխավոր քաղաքներ Դուր-Կուրիգալզուն, Սիպպարը, Բաբելոնը. ասորեստանցիները հրդեհեցին արքայական պալատը: Ժամանակավորապես Բաբելոնիայի զգալի մասն ընկավ Ասորեստանի անմիջական տիրապետության տակ:

Բաբելոնիայի, ինչպես նաև Ասորեստանի հետագա պատմությունը սերտորեն առնչվում է առաջավորասիական ճգնաժամին: Ջրային ռեսուրսների նվազումը հանգեցրեց մշակովի հողատարածությունների կրճատման, որն էլ իր հերթին ստիպեց արևմուտքի կիսաքոչվոր արամեական ցեղերին տեղաշարժվել Բաբելոնիա և Ասորեստան: Չնայած Բաբելոնի արքա Մարդուկ-նադին-ախսեն և Թիգլաթպալասարը համաձայնության եկան միասնաբար պայքարելու արամեացիների դեմ, սակայն հաջողությունը փոքր էր: Ք. ա. 1083-1082 թթ. Ասորեստանում ընթացող ուժեղ երաշտը համամիջագետքյան բնույթ ուներ, քանի որ, ըստ «Բաբելոնյան ժամանակագրության», այս շրջանում «ախլամոների երկրի 105 արքաներ» եկան և հաստատվեցին Բաբելոնիայում: Այսքան մեծ քանակությամբ կիսաքոչվոր արամեացիների մուտքը երկիր չէր կարող բացասաբար չանդրադառնալ առանց այդ էլ քաղաքական անկայունությամբ տառապող Բաբելոնիայի վրա:

Այս ծանր շրջանում Ասորեստանի և Բաբելոնիայի հարաբերությունները ժամանակավորապես բարելավվեցին: Ասորեստանի արքա Աշշուրբելլալայի և Բաբելոնիայի արքա Մարդուկ-շապիկ-գերիի միջև հաստատվեցին բարեկամական հարաբերություններ: Աշշուրբելլալան իր դաշնակցի մահից հետո էլ դեռ որոշ ժամանակ շարունակում էր Բաբելոնիայի նկատմամբ ազդեցություն պահպանել, քանի որ նրա ճնշման տակ Բաբելոնիայի արքա հռչակվեց արքայական ծագում չունեցող, հավանաբար արամեական ցեղապետ Էսագիլ-շադունիի որդի Ադադ-ապլա-իդիինան:

Երկու երկրների միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ, որոնք ամրապնդվեցին Ադադ-ապլա-իդդինայի դստեր և Աշշուրբեղկալայի ամուսնությամբ: Ամենայն հավանականությամբ, Ասորեստանի և Բաբելոնիայի հարաբերությունների սերտացումը, ինչի մասին վկայում է «Բաբելոնյան ժամանակագրությունը» («Ասորեստանի և Բաբելոնիայի ժողովուրդները միավորվեցին» արտահայտությունը), կապված էր արամեական ցեղերի ճնշման ուժեղացման հետ, որը հավասարապես սպառնում էր երկուսի անվտանգությանը:

Սակայն դրանով արամեացիների ներհոսքը չդադարեց, քանի որ Ադադ-ապլա-իդդինայի օրոք արամեացիները և սուտիները կրկին ասպատակեցին երկիրը, մասնավորապես Բաբելոնիայի կարևորագույն քաղաքներից Սիպպարը և Նիպպուրը: Բաբելոնյան քաղաքների և բնակավայրերի զգալի մասում հաստատվեցին արամեական և սուտիական ցեղեր, երկիրը զգալի տնտեսական հարված ստացավ:

Ադադ-ապլա-իդդինային հաջորդեցին ևս երեք արքաներ, որից հետո Բաբելոնիայի վերաբերյալ աղբյուրները տեղեկություններ գրեթե չեն պարունակում: Թերևս արքայական իշխանությունը Բաբելոնիայում վերացել էր գերագանցապես պետականության ավանդույթներ չունեցող արամեական և սուտիական բնակչության զանգվածային ներթափանցման հետևանքով:

Ք. ա. XI դ. վերջերից ընդհուպ մինչև X դ. սկիզբը Բաբելոնիայում կրկին փորձեր արվեցին վերստեղծելու կորսված պետականությունը: Այս անգամ նախաձեռնությունը իրենց վրա վերցրին Բաբելոնիայի ծայր հարավից՝ Պարսից ծոցի շրջակայքից ծագող թվով երեք արքայատոհմեր: Աղբյուրների խիստ սուղ տեղեկությունները թույլ են տալիս ենթադրել, որ սրանց կառավարման շրջանում Բաբելոնիան մի շարք մանր, որպես կանոն՝ ինքնուրույն և մեծ դժվարությամբ մեկ միասնական վարչական միավորի մեջ ներառված կենտրոնների միասնություն էր: Արքաների իշխանությունը հենվում էր ընդամենը ցեղապետերի հեղինակության և նրանց տրամադրության տակ եղած զորքի քանակի վրա: Դատելով երկրորդ արքայատոհմի արքա Սիմբար-շիպակի գործունեությունից՝ նրա ուշադրության կենտրոնում էր գտնվում նախորդ տասնամյակներին քոչվորների հարձակումներից տուժած պաշտամունքային կենտրոնների, մասնավորապես Սիպպարի և Նիպպուրի վերականգնումը: Փորձեր էին արվում վերականգնելու երկրի գլխավոր աստվածների տաճարներին տրվող մատուցումները: Արքան որոշ ակտիվություն էր ցուցաբերում նաև արտաքին քաղաքականության ասպարեզում՝ փորձելով նվաճել Ասորեստանին հարող շրջանները: Սակայն շարունակվող երաշտը և սովը տնտեսական անլուծելի խնդիրներ էին առաջադրում: Ք. ա. X դ. կեսերով թվագրվող՝ հարկերի չափերին նվիրված մի տեքստում հիշատակվում են հացահատիկի աննախադեպ բարձր գները երկրում, որ կարող է վկայել սննդամթերքի չափազանց սուղ վիճակի օգտին:

Ք. ա. X դ. վերջերից աստիճանաբար իր հզորությունը վերականգնող Ասորեստանի ակտիվությունը չշրջանցեց նաև Բաբելոնիան: Ադադնիրարի II-ը երկու անգամ արշավեց սկզբում ընդդեմ Շամաշ-մուղամիթի, այնուհետև՝ Նաբու-շումա-իշկունի: Ասորեստանցիների հաղթանակից հետո, այնուամենայնիվ, երկու երկրներ-

րի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որն ամրապնդվեց դինաստիական ամուսնություններով, և ճշգրտվեցին սահմանները: Ասորեստանի և Բաբելոնի միջև բարիդրացիական հարաբերությունները շարունակվեցին նաև Սալմանասար III-ի օրոք: Վերջինս վճռական դեր կատարեց օրինական արքա Մարդուկ-զաքիր-շումիի եղբոր կողմից նրա դեմ սկսված ապստամբության ճնշմանը:

Հաջորդող դարերի ընթացքում Բաբելոնիան անկայուն, գերագանցապես մանր քաղաքական միավորներից բաղկացած բազմաթնիկ մի տարածք էր: Բնիկ սեմական ծագման բաբելոնցիներից բացի՝ այստեղ ապրում էին նույնպես քաղաքաբնակ կասսիտներ, որոնց հարևանությամբ, հիմնականում քաղաքներից դուրս, առկա էր ոչ հեռավոր անցյալում երկրում հաստատված կիսաքոչվոր կյանքով ապրող՝ արևմտասեմական ծագման արամեացիների և սուտիների սովոր զանգված: Վերջիններիս «քաղաքակրթման» գործընթացն անցավ ոչ առանց բարդությունների և արդեն Ք. ա. IX-VIII դդ. նրանք ինտեգրվեցին բաբելոնյան հասարակությանը: Քաղաքական անկայունությունը, բազմալեզու և բազմակենցաղ իրավիճակը բաբելոնյան հասարակության բնորոշ առանձնահատկությունն էր:

4. ՔԱՂԴԵԱԿԱՆ ՅԵՂԵՐԸ ԲԱԲԵԼՈՆԻԱՅՈՒՄ

Հավանաբար հենց այս ժամանակաշրջանում էր, որ Բաբելոնիայում աստիճանաբար աճում էր արամեական ու քաղղեական ցեղերի դերը և ազդեցությունը: Սրանցից առաջինը Բաբելոնիայում հաստատվեցին արամեացիները, որոնք բավական երկար ժամանակ պահպանում էին իրենց կիսաքոչվոր կենսակերպը և դժվարությամբ էին ձուլվում Բաբելոնիայի քաղաքական-մշակութային կյանքում: Սեպագրական աղբյուրներին հայտնի էին շուրջ 40 արամեական ցեղեր, որոնք հիմնականում զբաղեցնում էին բաբելոնա-էլամական սահմանամերձ շրջանները: Ասվածը վերաբերում է Բաբելոնիային, քանի որ Ասորեստանում արամեացիները միանգամայն այլ, շատ ավելի մեծ դերակատարում ունեին: Սալմանասար III-ի տեքստերում հիշատակվում են քաղղեական երեք հիմնական ցեղեր՝ Բիթ-Դակկուրի, Բիթ-Ամուկանի և Բիթ-Յակին: Արամեացիների համեմատությամբ քաղղեացիները ավելի շուտ անցան նստակեցության և հարմարվեցին բաբելոնյան հասարակությանը: Քաղղեացիների ավելի վաղ շրջանի պատմությունը և նրանց նախնական բնակավայրի խնդիրը դեռևս պարզ չէ: Քաղղեացիների՝ արամեացիների հետ ազգակցական սերտ կապի վկայություն կարելի է համարել նրանց ցեղանունը՝ ասորեստանյան աղբյուրների Kaidu, որը գրեթե նույնական է Աստվածաշնչի Kešed. Kašdim-ին. վերջինս համարվում է արամեացիների անվանադիր նախնի Aram-ի հորեղբայրը: Որոշ քաղղեական հատուկ անուններ ունեն հստակ արևմտասեմական զուգահեռներ. օրինակ՝ Բիթ-Ադինի, Բիթ-Յակին, Ջարդի-իլ և այլն:

Այս փուլում արդեն քաղղեացիներն ամենևին քոչվորներ չէին, քանի որ, ըստ

ասորեստանյան աղբյուրների, նրանց մի մասը քաղաքաբնակ էր, մյուս մասը գրադվում էր երկրագործությամբ: Ասորեստան առաքված հարկի և նվերների շարքում հիշատակվում են թանկարժեք մետաղներ, փղոսկրե զարդեր և արհեստագործական այլ արտադրանք: Աղբյուրներում պահպանված քաղղեական ցեղապետերի և այլ անձնանունների զգալի մասը աքքադական է, որ կարող է վկայել նրանց՝ տեղական բնակչության հետ ինտեգրման և ուժացման որոշակի աստիճանի առկայության մասին: Բաբելոնի արքաների իշխանությունը քաղղեական ցեղերի նկատմամբ հարաբերական էր:

Քաղղեական ցեղերի քաղաքական վերելքը սկսվեց Շամշի-Ադադ V-ից և Ադադ-նիրարի III-ից, երբ վերջիններս ձեռնարկեցին Բաբելոնիայի նվաճումը: Շամշի-Ադադի արշավանքի ժամանակ Բաբելոնի արքային աջակցում էին քաղղեացիները, էլամցիները և այլք: Երկրի ծայր հարավում ապրող կիսանկախ քաղղեացիների համար մետրոպոլիայի թուլացումը խթանեց նրանց քաղաքական նկրտումները: Ասորեստանցիներին հաջողվեց հասնել առավելության երկու ճակատամարտերում. ըստ աղբյուրի՝ այդ ընթացքում հակառակորդը տվել էր 15 հազար սպանված, ևս 2000 զինվոր գերվել էր: Ադադ-նիրարին հիշատակում է Բաբելոնիայի և մասնավորապես քաղղեական «բոլոր արքաների» վերածվելը հարկատուների՝ առանց նշելու ռազմական արշավանքը:

Ք. ա. VIII դ. կեսերից Բաբելոնիայում սկսվում է ներքաղաքական զարգացումների մի տևական գործընթաց, որը միտված էր երկրի անկախության վերականգնմանը: Հատկանշական է, որ դրանում առաջնորդող դերը ստանձնեցին քաղղեական ցեղերը, որոնք ժամանակ առ ժամանակ, ոչ առանց հաջողության, փորձում էին հաստատվել Բաբելոնիայի գահին, որը, բնականաբար, հանդիպում էր Ասորեստանի արագ հակաքայլերին: Բաբելոնիան իրավական առումով գտնվում էր Ասորեստանի ենթակայության տակ, սակայն, Եգիպտոսի հետ միասին, նրա թե՛ կարգավիճակը, թե՛ դերը տերության մեջ այլ էին: Բաբելոնիան հնագույն քաղաքակրթության օրրան էր, որն ուներ քաղաքական ինստիտուտների վերին աստիճանի զարգացած համակարգ, ինչպես նաև հոգևոր և նյութական մշակութային արժեքների վիթխարի գանձարան: Բաբելոնիան Ասորեստանի համար վերջիններիս ներմուծման անսպառ աղբյուր էր, որը չէր կարող ասորեստանյան տեսանկյունից դուրս մնալ այդ պետության անմիջական ազդեցության սահմաններից: Թիզլաթալասար III-ից սկսվում է Ասորեստանի և Բաբելոնիայի հակամարտությունը Միջագետքում քաղաքական առաջնության համար, որն ավարտվում է հաջորդ դարի վերջին քառորդում:

Ք. ա. 770-ական թվականներին Բաբելոնիայի գահն անցավ քաղղեացի Մարդուկ-ապլա-ուծուրին, որին հաջորդեց ոմն Էրիբա-Մարդուկը Բիթ-Յակինից: Թերևս քաղղեացիների վերելքը որոշ անհանգստություն էր պատճառում Ասորեստանին, որին ձեռնտու էր թույլ Բաբելոնիայի գոյությունը: Հավանաբար այդ էր պատճառը, որ երբ իշխանությունը Բաբելոնիայում կրկին անցավ տեղական արքայատոհմին՝ ի դեմս Նաբոնասարի, Թիզլաթալասար III-ը աջակցեց նրան ընդդեմ քաղղեացիների և արամեացիների իր կառավարման հենց առաջին տարում՝ Ք. ա. 744 թ.:

Սակայն արքան գրադված էր սիրիական պատերազմներով, բացի այդ, նրա դաշնակից Նաբոնասարի մահից հետո Բաբելոնիայի գահը ժառանգած որդին երկու տարի անց զոհ գնաց ապստամբության: Նրան Բաբելոնիայի գահին փոխարինեց ապստամբության ղեկավար, արքայական ծագում չունեցող Նաբու-շումա-ուկինը: Վերջինս կառավարեց ընդամենը մեկ տարի և երկու ամիս և իր հերթին գահագրվեց քաղղեական Բիթ-Ամուկանի ցեղի առաջնորդ Նաբու-մուկին-գերիի կողմից, որն էլ զավթեց իշխանությունը:

Թիզլաթալասարը ստիպված էր Ք. ա. 731-729 թթ. կրկին անդրադառնալ Բաբելոնյան գործերին: Արքան մեկը մյուսի հետևից մի շարք հաղթանակներ տարավ քաղղեական ցեղերի նկատմամբ: Մյուս ցեղերի առաջնորդները հարկադրված էին ընդունել Ասորեստանի գերիշխանությունը: Քաղղեացիների կորուստները շոշափելի էին, քանի որ ասորեստանցիներն իրենց հետ տարան տասնյակ հազարավոր խաղաղ բնակչություն և վիթխարի ռազմավար: Բաբելոնիայի նկատմամբ կայուն գերիշխանություն ապահովելու նպատակով, մասնավորապես հաշվի առնելով այնտեղ տեղական գահակալական պայքարը՝ Թիզլաթալասարը նպատակահարմար չհամարեց Բաբելոնիայի գահին նշանակել Նաբոնասարի ժառանգներից որևէ մեկին, այլ ինքն իրեն հռչակեց արքա: Թիզլաթալասարի կողմից ստեղծված երկմիասնական (Ասորեստան և Բաբելոնիա) պետությունը շարունակվեց նաև Սալմանասար V-ի կարճատև կառավարման օրոք, որի մահից հետո քաղղեացի ցեղապետ Մարդուկ-ապլա-իդդինան զավթեց Բաբելոնիայի գահը, միավորեց բոլոր ցեղերին և հակաասորեստանյան դաշինք կնքեց Էլամի հետ:

Այս պահից սկսվում է Բաբելոնիայում և ընդհանրապես Միջագետքում քաղղեացիների պատմության նոր փուլ, որի ավարտին վերջիններս հասան քաղաքական և մշակութային աննախընթաց վերելքի: Սարգոն II-ից սկսած՝ Բաբելոնիան և մասնավորապես քաղղեական ցեղերը սկսում են ավելի հաճախակի հայտնվել ասորեստանյան արքաների այն տեքստերում, որտեղ նկարագրվում են վերջիններիս արտաքին քաղաքական ձեռնարկումները: Դատելով ըստ ամենայնի՝ արդեն հիմնավորապես քաղղեականացած Բաբելոնիան իրենից լուրջ վտանգ էր ներկայացնում Ասորեստանի շահերի համար, հատկապես նրա և ավանդաբար հակաասորեստանյան դիրքորոշում ունեցող Էլամի հարաբերությունների հետագա սերտացման համատեքստում: Այս ժամանակաշրջանից սկսվում է Ասորեստանի և Էլամի տևական հակամարտությունը Բաբելոնիայի նկատմամբ ուղղակի գերիշխանության համար: Ասորեստանյան հարաձուլ սպառնալիքի պայմաններում քաղղեական ազնվականությունը կողմնորոշվում էր դեպի հարևան Էլամ, որն իր հերթին հաճախակի միջամտում էր բաբելոնյան գործերին՝ չխուսափելով Ասորեստանի դեմ ուղղակի առձակատումից:

Սարգոն II-ն իր կառավարման հենց առաջին տարում արշավանք ձեռնարկեց հարավ, որի ընթացքում պարտված քաղղեական բնակչության մի մասին բռնի վերաբնակեցրեց Սիրիայում: Ըստ ամենայնի՝ այս արշավանքը էական հարված չհասցրեց Բաբելոնիայի ներուժին, քանի որ Սարգոնը 12 տարի անց կրկին անդրա-

դարձավ հարավային Միջագետքին: Ավելին՝ այս արշավանքի առթիվ քաբելոնյան ժամանակագրությունը հաղորդում է, որ Սարգոնը Բաբելոնիայի հյուսիսում՝ Դեր քաղաքի մոտ, պարտություն էր կրել էլամի արքա Խումբանիգաշից: Այս անգամ ասորեստանցիները ձեռնարկեցին Բաբելոնիայի վերջնական նվաճման ծրագրի իրագործումը: Մարդուկ-ապլա-իդդինային աջակցում էին էլամի արքա Խումբանիգաշը, նաև Գամբուլուն: Սրանցից Գամբուլուն արամեական ցեղամիություն էր, որը զբաղեցնում էր Բաբելոնիայի հարավ-արևելքը:

Արշավանքը սկսվեց Ք. ա. 710 թ.: Բաբելոնիայի արքան հիմնավորապես նախապատրաստվել էր ասորեստանյան արշավանքին, քանի որ նախապես ամրացրել էր երկրի ամրոցները: Սակայն Սարգոնը նախ հարձակվեց Տիգրիսի արևելյան ափերին՝ էլամի հարևանությամբ գտնվող Գամբուլուի վրա, որպեսզի կանխի այնտեղից սպասվող հնարավոր օգնությունը Մարդուկ-ապլա-իդդինային: Այնուհետև, ստիպելով Գամբուլուի պարտված առաջնորդներին հպատակվել, Սարգոնը գրավեց Դուր-Աքիխարա ամրոցը. այստեղ նշանակվեց ասորեստանյան կառավարիչ: Գամբուլուի վեց շրջաններ ներառվեցին Ասորեստանի կազմում: Գամբուլուի հարևանությամբ՝ Ուկնու գետի ափերին բնակվող մի շարք ցեղեր կամավոր հնազանդվեցին Սարգոնին, իսկ նրանք, ովքեր դեռևս հավատարիմ էին Բաբելոնիայի արքային, դաժանորեն պատժվեցին: Նրանց բնակավայրերը ասպատակության ենթարկվեցին:

Սրանով այդ տարվա արշավանքն ընդհատվեց և շարունակվեց հաջորդ տարի: Սարգոնը պաշարեց հակառակորդի գլխավոր հենակետ Բիթ-Յակին ամրոցը: Պաշարումը ձգձգվեց, և միայն այն քանից հետո, երբ Սարգոնը խոստացավ ազատ քաց թողնել Մարդուկ-ապլա-իդդինային իր մերձավորների հետ միասին, վերջինս հանձնեց այն: Բաբելոնիայի ազնվականությունը ստիպված էր հնազանդվել նվաճողին: Քաղղեական ցեղերը նույնպես պատրաստակամություն հայտնեցին դառնալու Ասորեստանի հարկատուները:

Սարգոնի արշավանքը զգալի վնաս պատճառեց Մարդուկ-ապլա-իդդինայի ձևավորած հակաասորեստանյան դաշինքին, սակայն սրանով չկտրվեց Բաբելոնիայի դիմադրությունը: Արդեն հաջորդ տարում Սարգոնը նոր արշավանք սկսեց, որի դրդապատճառը քաղղեական Բիթ-Յակին ցեղամիության հակաասորեստանյան գործողություններն էին: Սարգոնը հասավ հաջողության և հաղթեց հակառակորդին: Ըստ աղբյուրի՝ միայն այս արշավանքի ընթացքում Բիթ-Յակինից գերեվարվեց 90 հազար 850 մարդ, և վերցվեց խոշոր ռազմավար: Գերված բնակչությունը տեղավորվեց մայրաքաղաք Կալախում և այլ վայրերում: Սարգոնը մեկ անգամ ևս շարժվեց դեպի էլամական սահման, որտեղ գրավվեցին մի քանի ամրացված բնակավայրեր: Այստեղ բերվեց լուսիական Կոմմուխից (Կոմմագենե) տեղահանված բնակչություն: Բաբելոնյան արշավանքի ավարտին Սարգոնը Բաբելոն քաղաքում նշանակեց կառավարիչ, որով փորձում էր քաղաքը և մնացած բուն Բաբելոնյան քաղաքները անջատել քաղղեական ցեղերի վերահսկողությունից:

Սարգոնի վերոնշյալ արշավանքի նկարագրությունից պարզվում է, որ տվյալ պահին Բաբելոնիայում քաղղեացիները անվիճելիորեն առաջատար ռազմաքաղաքա-

կան ուժն էին: Մնացած էթնիկական խմբերից արամեացիները և սուտիները, որպես կանոն, աջակցում էին նրանց, սակայն միաժամանակ հաճախ էին ոտնձգություններ կատարում բուն Բաբելոնյան բնակչության նկատմամբ: Բաբելոնի, Սիպպարի, Նիպպուրի և մյուս խոշոր քաղաքների բնակչությունը քաղղեացիների հետ պահպանում էր նորմալ հարաբերություններ, սակայն նրանց շարքերում քիչ չէին ասորեստանամետ ուժերը: Քաղղեացիների հետագա հզորացման արգելակման նպատակով Սարգոնը Բաբելոնիայում ստեղծեց երկու վարչական միավոր՝ Բաբելոնը և Գամբուլուն, որտեղ նշանակվեցին ասորեստանյան կառավարիչներ: Միաժամանակ նա իրականացնում էր ժողովրդագրական տեղաշարժերի քաղաքականությունը՝ փորձելով նոսրացնել քաղղեացիների թվաքանակը Բաբելոնիայում, այնպես, ինչպես նա վարվում էր Ասորեստանի նվաճած մյուս երկրներում: Բիթ-Յակինից գերված շուրջ 22 հազար զինվորներ վերցվեցին ասորեստանյան բանակ և տեղադրվեցին նվաճված Կոմմուխում՝ որպես այստեղի ասորեստանյան կառավարչի զորամիավորում: Միաժամանակ նա ձգտում էր սեպ խրել քաղղեացիների և նրանց դաշնակից էլամի միջև՝ նրանց հանդիպվալարում այլ վայրերից բերված էթնիկական խմբեր վերաբնակեցնելով: Սարգոնի տեքստերից ակնհայտ է նաև Բաբելոնիայի առաջատար քաղաքների տեղական բնակչության հանդեպ դրսևորած վերաբերմունքի նպատակը՝ նրանց տարանջատել ռազմաքաղաքական մեծ ուժ ներկայացնող քաղղեացիներից:

Նույնիսկ Սարգոնի վերջին երկու արշավանքներից հետո էլ Բաբելոնիան շարունակում էր պայքարել իր ինքնուրույնության համար: Երկրից հեռացած Մարդուկ-ապլա-իդդինան շարունակեց պայքարը Սարգոնի հաջորդ Սինախներիբի օրոք: Նա վերադարձավ և փորձեց կազմակերպել իր ուժերը: Ք. ա. 703 թ., երբ Սինախներիբը առաջին անգամ արշավեց Բաբելոնիա, այստեղ նրա դեմ հանդես էին գալիս նախկին դաշնակիցները՝ Մարդուկ-ապլա-իդդինան և էլամի գործը: Պարտությունից հետո Մարդուկ-ապլա-իդդինան կրկին հեռացավ երկրից, իսկ Բաբելոնիայում արքա հռչակվեց ոմն Բել-իբնին: Սինախներիբը Բաբելոնիայից որպես ռազմավար Ասորեստան գերեվարեց 208 հազար մարդու: Սակայն երեք տարի անց Սինախներիբը ստիպված էր մեկ անգամ ևս արշավել Բաբելոնիա՝ ընդդեմ նույն Մարդուկ-ապլա-իդդինայի: Վերջինս հեռացավ Պարսից ծոցի կղզիներից մեկը: Հատկանշական է, որ ընդամենը երեք տարի առաջ Սինախներիբի՝ Բաբելոնիայի գահին նստեցված Բել-իբնին իր մերձավորների հետ միասին տարվեց Ասորեստան, մի փաստ, որ թույլ է տալիս ենթադրել Բաբելոնյան ազնվականության հակաասորեստանյան դիրքորոշման մասին:

Այս անգամ Սինախներիբը Բաբելոնիայի արքա նշանակեց իր ավագ որդի Աշուր-նադին-շումինին: Բիթ-Յակինից էլամի սահմանամերձ շրջաններ հեռացած բնակչության դեմ Սինախներիբը հետագայում կազմակերպեց նոր արշավանք, որը, ըստ նրա, ավարտվեց հաջողությամբ: Սակայն այս նույն իրադարձության մասին Բաբելոնյան ժամանակագրությունը այլ բնույթի տեղեկություն է հաղորդում:

Ըստ վերջինիս տվյալների՝ Սինախներիբի որդու կառավարման վեցերորդ տա-

րում Ասորեստանի արքան արշավել էր Էլամի սահմաններ, սակայն նրա վերադարձից հետո Էլամի արքա Խալլուշու-Ինշուշինակ I-ը իր հերթին հարձակվել և գերեվարել էր Աշշուր-նադին-շումիրին՝ նրա փոխարեն Բաբելոնիայի արքա հռչակելով Ներգալ-ուշեգիրին: Միայն հաջորդ տարի ձեռնարկած արշավանքի ընթացքում էր, որ Բաբելոնիայի արքան գերվեց և ուղարկվեց Ասորեստան: Նրա փոխարեն արքա դարձավ Սինախներիբի դրածո Մուշեգիր-Մարդուկը, սակայն նա էլ չորս տարի անց գահագրկվեց, որից հետո մի որոշ ժամանակ Բաբելոնիայում արքա չկար: Այս իրադարձությունից հետո Բաբելոնիան փաստացի վերածվեց Ասորեստանի անմիջական տիրապետության տակ գտնվող երկրի: Ընդ որում, դատելով աղբյուրներից՝ Ասարհադդոնի օրոք պահպանվում էր նախկին միասնական Բաբելոնիայի վարչաքաղաքական տրոհվածությունը, որի նպատակը բնիկ բաբելոնցիներին քաղղեացիներից և արամեացիներից տարանջատելն էր: Ընդհանրապես Բաբելոնիայի հարավը, որտեղ գերազանցապես ապրում էին քաղղեացիներ և արամեական ցեղեր, Ասորեստանի գերիշխանությունը ստիպված էր ընդունել միայն ռազմական հարկադրանքի ձևման տակ և փաստացի կիսանկախ կարգավիճակ ուներ: Թերևս դրանում կարևորագույն դեր ուներ Ասորեստանի և Էլամի միջև Սինախներիբի ու Ասարհադդոնի օրոք ընթացող բացահայտ հակամարտությունը Բաբելոնիայի համար: Էլամցիներն օգտագործում էին այս տարածաշրջանի հակասասորեստանյան ուժերին՝ այստեղ գերիշխանություն հաստատելու նպատակով:

Իր կառավարման վերջում Ասարհադդոնն իր պետությունը բաժանեց երկու մասի: Ասորեստանում արքա հռչակվեց Աշշուրբանասպալը, իսկ Բաբելոնում՝ նրա կրտսեր որդիներից Շամաշ-շում-ուկկինը:

ՆՈՐ ԲԱԲԵԼՈՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՆԱԲՈՒԳՈՂՈՆՈՍՈՐ II

Ք. ա. 626 թ. սկսված և գրեթե քսան տարի տևած պատերազմն Ասորեստանի դեմ ավարտվեց Բաբելոնիայի արքա Նաբոպալասարի հաղթանակով: Հավանաբար Նաբոպալասարը (Նաբու-ապալ-ուծուր, Ք. ա. 626-605 թթ.) ծագումով քաղղեացի էր, ուստի և համարվում է Բաբելոնիայում նոր՝ քաղղեական հարստության հիմնադիրը: Հայտնի է միայն, որ նա գործել է Բաբելոնիայի հարավում՝ Ուրուկում, որը և առաջինն է ձանաչել նրա գահակալությունը:

Իր կյանքի վերջում Նաբոպալասարը երկրի կառավարումը հանձնեց գահաժառանգ որդի Նաբուգոդոնոսորին¹: Նաբուգոդոնոսոր II-ը (Նաբու-կուդուրրի-ուծուր) (Ք. ա. 605-562 թթ.) կարող առաջնորդ և զորավար էր, ով հաջողությամբ վարում էր բանակի հրամանատարությունը դեռևս Նաբոպալասարի գահակալության վերջին տարիներին: Նրան են պատկանում եգիպտական բանակի դեմ Ք. ա. 605 թ. Կարգամիսում և Համատում ձեռք բերված հաղթանակները, որով Ասորեստանի գոյամարտն ավարտվեց:

Նորընծա արքան շարունակեց վարել ակտիվ արտաքին քաղաքականություն: Բաբելոնիան, որի տիրապետության տակ էր հայտնվել նաև Հյուսիսային Միջագետքը, ձգտում էր դուրս գալու Միջերկրական ծով՝ տիրելու ասորեստանյան այն երկրամասին, որը սեպագիր աղբյուրներում հայտնի էր «Գետից անդին» տերմինով: Բաբելոնիայի գլխավոր հակառակորդը Եգիպտոսն էր, որը չէր հրաժարվում ասորեստանյան ժառանգությանը տեղ դառնալու մտքից: Պայքարն ընթանում էր Սիրիայում, Փյունիկիայում և Պաղեստինում:

Կարգամիսի և Համատի ձակատամարտերից քիչ անց՝ 605 թ., Նաբուգոդոնոսորը վերադարձավ գործող բանակ: Ք. ա. 604 թ. նրա հրամանատարությամբ բաբելոնյան զորքերը սկսեցին հնազանդեցնել Սիրիայի իշխանությունները: Նույն

¹ Նոր բաբելոնյան շրջանի աղբյուրները տես Beaulieu P.-A., *Legal and Administrative Texts from the Reign of Nabonidus*, New Haven, 2000; Բաբելոնիայում Նաբուգոդոնոսոր II-ի և նրա հաջորդների կառավարման շրջանի մասին տես Brinkman J.A., *A Political History of Post Kassite Babylonia*, Rome, 1968; Frame G., *Babylonia 689-627 B.C.: A Political History*, Chicago, 1981; Wiseman D.J., *Nebuchadnezzar and Babylon*, Oxford, 1985; Beaulieu P.-A., *King Nabonidus and the Neo-Babylonian Empire*. - In: CANE I-II, 1995, 969ff.; Eph'al E., *Nebuchadnezzar the Warrior: Remarks on his Military Achievements*, IEJ 53, 2003, 178ff.; Sack R.H., *Images of Nebuchadnezzar. The Emergence of a Legend*, Selinsgrove, 2004 և այլն:

տարում Նաբուգոդոնոսորը գրավեց Ասկալոն (Աշկելոն) քաղաքը Միջերկրական ծովի ափին: Արևմուտքում իրագործված հաղթական արշավանքները կրկնվեցին Ք. ա. 603–602 թթ.:

Արևելամիջերկրածովյան ավազանում բաբելոնյան ակտիվությունը անհանգստություն առաջ բերեց Եգիպտոսում: Պատահական չէ, որ Ք. ա. 601 թ. Սիրիա և Պաղեստին ձեռնարկված հերթական արշավանքի ժամանակ բաբելոնյան զորքերին դիմագրավում էր արդեն եգիպտական բանակը: Երկու ուժերի միջև տեղի ունեցած ճակատամարտը հաղթանակ չպարգևեց կողմերից ոչ մեկին. երկու բանակներն էլ կրեցին ծանր կորուստներ, և Նաբուգոդոնոսորը ստիպված էր վերադառնալ ձեռնունայն:

Եգիպտոսի դեմ պատերազմում չհասնելով էական արդյունքների՝ Նաբուգոդոնոսորը ձեռնամուխ եղավ այս երկրի տնտեսական շրջափակմանը: Ք. ա. 599 թ. բաբելոնյան զորքերը վերստին արշավեցին դեպի արևմուտք, այս անգամ ընդդեմ արաբական անապատաբնակ ցեղերի, որոնցից վերցվեց մեծ քանակությամբ ավար: «Գերեվարելով» նաև նրանց աստվածներին՝ զորքերը վերադարձան Բաբելոն: Արշավանքի հիմնական նպատակը, սակայն, այս տարածքներով անցնող քարավանային ուղիների վերահսկողությունն էր, ինչը և իրականացվեց:

Եգիպտոսը հայտնվեց ծանր իրավիճակում: Անկում ապրող առևտուրը խթանելու նպատակով եգիպտացիները ստիպված էին թույլ տալ հույներին առևտրական գաղութ հիմնել իրենց երկրում, ինչին մինչ այդ համառորեն դիմադրում էին: Հունական Նավկրատիս գաղութը կարճ ժամանակ անց վերածվեց եգիպտական առևտրի կարևորագույն կետի: Ավելին, ի զորու չլինելով ռազմական ուժով ամրապնդվելու արևելամիջերկրածովյան ավազանում՝ փարավոն Նեխո II-ը սկսեց Բաբելոնիայի դեմ տրամադրել պաղեստինա-փյունիկյան իշխանություններին, իսկ Ք. ա. 598 թ. նրա դրդմամբ Բաբելոնիայի դեմ ապստամբեց Հուդան:

Նույն թվականին Նաբուգոդոնոսոր II-ը խոշոր արշավանք իրագործեց դեպի Պաղեստին: Բաբելոնյան զորքերը պաշարեցին և Ք. ա. 597 թ. գրավեցին Հուդայի մայրաքաղաք Երուսաղեմը: Նաբուգոդոնոսորը գահընկեց արեց Հուդայի թագավոր Հովակիմի որդի Հովակիմին և «*արքա հաստատեց իր սեփական ընտրությամբ*»: Հուդայի նոր արքան Ծեղեկիան էր: Բաբելոնյան զորքերը վերադարձան հարուստ ռազմավարով՝ տանելով շուրջ 10 000 գերիների:

Բաբելոնիան շարունակ խնդիրներ էր ունենում արևմուտքում: Օգտվելով Բաբելոնիայում սկսված հուզումներից՝ Եգիպտոսի նոր փարավոն Ապրիասի դրդմամբ բաբելոնյան գերիշխանության դեմ շարունակում էին հանդես գալ պաղեստինա-փյունիկյան տարածաշրջանի իշխանությունները, իսկ շուտով եգիպտական զորքերը գրավեցին Գազան:

Գազան Պաղեստինի խոշորագույն քաղաքն էր, առևտրի և արհեստների կենտրոն. այստեղով էին անցնում առևտրական կարևոր մայրուղիներ: Բաբելոնիայի համար դրությունը քարդանում էր նրանով, որ Եգիպտոսի կողմն անցան նրա հետ

ավանդաբար կապված փյունիկյան մի քանի խոշոր քաղաքներ, այդ թվում Տյուրոսն ու Սիդոնը: Բաբելոնիայի իշխանությունն արևմուտքում ըստ էության վերացվեց: Դրան գումարվեց Ծեղեկիայի ապստամբությունը:

Այս զարգացումներին Նաբուգոդոնոսորը պատասխանեց վճռական գործողություններով: Հերթական անգամ արշավելով Պաղեստին՝ բաբելոնյան զորքերը դուրս մղեցին այստեղից եգիպտացիներին, ապա Ք. ա. 589 թ. վերստին պաշարեցին Երուսաղեմը, որն ընկավ Ք. ա. 587 թ.: Նաբուգոդոնոսորը գերեց և կուրացրեց Ծեղեկիային, նրա որդիները մահապատժի ենթարկվեցին, ազնվականությունը քննաշնչվեց, Հուդայի թագավորությունը կցվեց Բաբելոնիային: Ավերվեցին քաղաքի պարիսպներն ու Երուսաղեմի տաճարը, իսկ բազմահազար բնակիչներ գերեվարվեցին: Հաջորդ հարվածն ուղղվեց Տյուրոսին, որը պաշարվեց և միայն տասներեք տարի անց, հասնելով որոշակի փոխզիջման, Տյուրոսն ընդունեց բաբելոնյան գերիշխանությունը: Ք. ա. 567 թ. Նաբուգոդոնոսորը նոր արշավանք իրագործեց Եգիպտոս, սակայն էական արդյունքի չհասավ:

Նաբուգոդոնոսոր II-ը զուսպ քաղաքականություն էր վարում արևելքում: Այստեղ հիմնական դերակատարը Բաբելոնիայի դաշնակից մարերն էին, քայց վերջիններիս հետ հարաբերությունները շարունակ վատթարանում էին: Եթե Ք. ա. 598–97 թթ. Նաբուգոդոնոսորը դեռևս կարող էր օժանդակություն ակնկալել մարերից՝ պաղեստինյան իր արշավանքի համար, ապա, սկսած Ք. ա. 595 թ., երկու կողմերի հարաբերությունները դարձան թշնամական: Մարերը սկսեցին ապաստան տալ հարյուրավոր բաբելացիների, իսկ Բաբելոնիան՝ մար փախստականների: Աճող լարվածության և ռազմական ներխուժման սպառնալիքն էր, որ ստիպեց արքային ձեռնամուխ լինել պաշտպանական ամրությունների շղթայի կառուցման աշխատանքներին:

Նաբուգոդոնոսորի օրոք Բաբելոնիան ծաղկում էր ապրում: Երկիրը հսկայական եկամուտներ էր ստանում առևտրից, ինչը հնարավորություն տվեց կատարելու խոշոր շինարարական աշխատանքներ, հատկապես Բաբելոնում: Վերակառուցվեցին քաղաքի ամրությունները: Բաբելոնը շրջապատվեց կրկնակի պարիսպներով, որոնցից արտաքին պարիսպն ուներ 8,3 կմ երկարություն, 8 մ բարձրություն և 3,7 մ հաստություն: Ներքին պարիսպն ուներ մինչև 14 մ բարձրություն և 6,5 մ հաստություն, ձգվում էր գրեթե 6 կմ: Վերակառուցվեց քաղաքի գլխավոր տաճարային համալիրը՝ Է-տեմեն-անկին, ուր վեր էր հանում զիկկուրատը՝ 91 մ բարձրությամբ («Բաբելոնի աշտարակը»): Վերակառուցվեց Մարդուկ աստծո տաճարը: Բաբելոնը վերածվեց Առաջավոր Ասիայի խոշորագույն քաղաքի՝ շուրջ 200 000 բնակչությամբ: Լայնածավալ աշխատանքներ իրականացվեցին տերության այլ կենտրոններում: Նաբուգոդոնոսորը հիմնեց նաև նշանավոր «Կախովի այգիները», որը հետագա ավանդությունը վերագրում էր Շամիրամին:

2. ՆԱԲՈՆԻԴԸ ԵՎ ԲԱԲԵԼՈՆԻԱՅԻ ԱՆԿՈՒՄԸ

Չնայած ռազմական առումով Նաբուգոդոնոսորի օրոք Բաբելոնիան հզոր պետություն էր, սակայն ներքաղաքական ասպարեզում իրավիճակն ամենևին կայուն չէր: Նրա մահից հետո Բաբելոնիայի խոշոր վաճառականական տները, որոնք մեծ դեր ունեին երկրի քաղաքական կյանքում, ինչպես նաև քրմությունը, սկսեցին միջամտել գահակալության խնդրին: Այս պայքարն ավարտվեց նրանով, որ Նաբուգոդոնոսորին հաջորդած որդին՝ Ամել-Մարդուկը, իշխեց ընդամենը երկու տարի և սպանվեց Ներիզլիսարի (Ներգալ-շար-ուծուր) կողմից, որն էլ և բազմեց գահին (Ք. ա. 559-556 թթ.):

Ներիզլիսարը Ամել-Մարդուկի քրոջ՝ Կասշայայի ամուսինն էր, որ ծագում էր արամեական ազգեցիկ Պուկուդու ցեղից: Առևտրական վերնախավի աջակցությունը վայելող Ներիզլիսարի օրոք արքայական իշխանությունը փոքր-ինչ կայունացավ: Դա բաբելոնյան արքային թույլ տվեց իրագործել նոր արշավանքներ: Ք. ա. 557 թ. Բաբելոնիայի վերինեփրատյան տարածքները ենթարկվեցին կիլիկյան իշխանություններից Պիրինդուի արքա Ապուուաշուի զորքերի հարձակմանը: Ի պատասխան՝ բաբելոնյան բանակը շարժվեց Կիլիկիա, ուր՝ Խումն վայրում, ջախջախեց նրանց, ապա սկսեց հետապնդել Ապուուաշուին: Թեև Ապուուաշուին բռնել չհաջողվեց, սակայն գրավվեց նրա մայրաքաղաք Ուրան: Խորանալով երկրում բաբելոնցիները գրավեցին Կիրշի քաղաքը, որին հաջորդեց ծովափից ոչ հեռու «Օվկիանոսի մեջտեղում» ընկած կղզու վրա գտնվող Պիտուսու քաղաքի նվաճումը: Ավերածությունների ենթարկվեցին ծովափնյա շրջանները ընդհուպ մինչև Լիդիայի սահման, որով էլ վերջակետ դրվեց արշավանքին:

Ներիզլիսարին հաջորդած որդին՝ Լաբաշի-Մարդուկը, չքուրեց գահակալության մեկ տարին և գոհ գնաց հերթական պալատական դավադրությանը: Գահը բաժին հասավ դավադրության մասնակիցներից Նաբոնիդին (Նաբիում-նա'իդ, Ք. ա. 556-539 թթ.):

Նաբոնիդը պատկառելի տարիքի էր, երբ բազմեց գահին: Նա արամեական ցեղերից մեկի առաջնորդ Նաբու-բալասսու-իքքիի միակ որդին էր: Արքայի մայրն էր Ադդա-գուպպին, որը եղել էր Խառան քաղաքի Սին աստծո տաճարի քրմուհին: Խառանի գրավման ժամանակ նա գերեվարվել էր Բաբելոն և այստեղ՝ արքունիքում, Նաբուգոդոնոսոր II-ի և Ներիզլիսարի օրոք հասել բարձր դիրքի: Ադդա-գուպպին ժամանակի ազդեցիկ դերակատարներից մեկն էր. Նաբոնիդն իր գահակալությամբ մասամբ պարտական էր մորը: Հայտնի է, որ նա էր Նաբոնիդին տարել արքունիք և որդու համար դիրք ապահովել: Նաբոնիդը գրաճանաչ էր և տիրապետում էր սեպագրին: Որպես Սին աստծո քրմուհի և նրա պաշտամունքի համոզված հետևորդը՝ Ադդա-գուպպին նույն ոգով մեծացրել էր և իր որդուն, որի վրա ուներ հսկայական ազդեցություն:

Կարծում են, որ Նաբոնիդը մոլեռանդ հավատացյալ էր, ինչպես իր մայրը, Սին աստծո հավատամարտիկ, որը գահակալության սկզբից նեթ սկսեց առաջ մղել այս

աստծո պաշտամունքը: Ոմանք նրան դիտում են որպես բանիմաց անձի և գիտնականի, որը պարզապես ձգտում էր վերականգնելու մոռացված հինը:

Իրականում նրա գործողություններն ուղղորդվում էին Ադդու-գուպպի կողմից, իսկ Սին աստծո անվան տակ իրականում ոչ թե բաբելոնյան Լուսնի աստվածն էր, այլ այն մարմնավորում էր արամեական համապատասխան աստվածությանը: Հետնաբոնիդյան դարաշրջանում ընդդեմ Նաբոնիդի գրված մի տեքստից հայտնի է դառնում նաև այդ աստվածության անունը՝ Իլթերի: Այս անվան տակ, ենթադրվում է, թաքնված է արևմտասեմական աշխարհում Լուսնի աստված Սախարը, որին երկրպագում էին նաև Բաբելոնիայում հաստատված արամեացիները: Սիրիայում նրա պաշտամունքը նույնացվել էր Սին աստծո պաշտամունքի հետ:

Սկսած Ք. ա. XII դ. վերջերից՝ բաբելոնյան աստվածաբանական միտքը հենվում էր Մարդուկի՝ իբրև գերագույն աստված և աստվածների հայր լինելու դրույթի վրա: Մինչդեռ Նաբոնիդը որպես այդպիսին ընդունում էր Լուսնի աստծուն: Ամրապնդվելով գահին՝ նա սկսեց նվազեցնել Մարդուկի դերը, արհամարհում էր նրա հետ կապված ծեսերն ու տոնակատարությունները: Ժամանակի ընթացքում նա դադարեց մասնակցել Մարդուկի «ձեռքը բռնելու» և «սրբազան ամուսնության» կարևորագույն ծեսերին, որոնցով Բաբելոնիայում նշանավորվում էր նոր տարվա սկիզբն ու ակնկալվում բերրի տարի:

Նաբոնիդը սկսեց միջամտել տաճարների գործերին: Իր գահակալության առաջին իսկ տարում ուխտագնացության մեկնելով հարավային Բաբելոնիայի քաղաքներ՝ նա միջամտեց Ուրուկ քաղաքի Էաննայի տաճարի գործերին: Փոխելով կառավարիչներին՝ վերահսկողության տակ վերցրեց տաճարները, ստիպեց, որ տաճարապատկան հողերը տնօրինության տրվեն անհատ անձանց, փոփոխություններ մտցրեց անգամ տաճարների ծիսակարգերում: Իր գահակալության երկրորդ տարում նա իր դստերը նշանակեց Ուր քաղաքի Նաննա/Սին աստծո տաճարի գլխավոր քրմուհի՝ նրան տալով նոր, շումերական անուն՝ Էն-նիգալդի-Նաննա, որը բառացի նշանակում է «Գերագույն քրմուհին Նաննայի պահանջն է»:

Նաբոնիդը ձգտում էր երկրում իրագործելու Լուսնի աստծուն նվիրված տաճարների լայնածավալ շինարարություն, իսկ Ք. ա. 553 թ. վերականգնեց դեռևս մարաբաբելոնյան զորքերի կողմից Խառանի գրավման ժամանակ ավերված Սին աստծո գլխավոր տաճարը:

Իր գործողությունները նա հաճախ էր քողարկում՝ դրանց տալով տարբեր բացատրություններ: Մերթ դիմում էր Նաբուգոդոնոսոր I-ի անվանը, երբ, իբր, արքան վերականգնում էր նրա օրոք սահմանված կարգերը, մերթ վերակառուցումների ժամանակ «հայտնաբերվում» էին «հին» տեքստեր, որոնց տվյալներն օգտագործում էին վերականգնելու «նախկին կարգերը»: Այսպիսով՝ «հին» անվան տակ էր Նաբոնիդն իրականացնում իր նոր քաղաքականությունը:

Նաբոնիդի գործողությունները թշնամաբար ընդունվեցին հատկապես Մարդուկ աստծո քրմերի կողմից: Միառժամանակ Նաբոնիդին հաջողվում էր վե-

րահակել իրավիճակը՝ շնորհիվ ռազմական հաջողությունների: Դրանք ուղղված էին առևտրական մայրուղիները վերահսկելուն և բխում էին Բաբելոնիայի առևտրական վերնախավի շահերից: Վերջինիս աջակցությունը Նաբոնիդին հավասարակշռում էր քրմության ընդդիմությանը: Այսպիսով՝ Նաբոնիդի դիրքերն ամուր էին այնքան ժամանակ, քանի դեռ ապահովված էր առևտրական վերնախավի աջակցությունը: Գլխավոր պայմանը առևտրական ուղիների անվտանգությունն էր և նոր շուկաների նվաճումը: Դրան էր միտված Նաբոնիդի արտաքին քաղաքականությունը:

Գահ բարձրանալուց մի քանի ամիս անց Նաբոնիդն արշավեց Կիլիկիա: Արշավանքն ավարտվեց հաջողությամբ, այստեղից տարված գերիները արքայի կառավարման առաջին տարվա լրանալու կապակցությամբ նվիրաբերվեցին բաբելոնյան աստվածների տաճարներին:

Ք. ա. 553–552 թթ. Նաբոնիդն արշավեց դեպի արևմուտք՝ լիբանանյան լեռներ, ապա Պաղեստին, ուր պատերազմում էր Էդոմի դեմ: Այս նույն շրջանում բաբելոնյան զորքերը սկսեցին խորանալ արաբական անապատներում՝ հյուսիսային Հիջազի տարածքներում: Նա հաղթեց Դադանու երկրի արքային, ապա գրավեց Տեյման: Այս ուղղությամբ բաբելոնյան զորքերը գրավեցին հսկայական տարածք, գլխավորապես քարավանային ճանապարհների երկայնքով ընկած մի շարք օազիսներ՝ Պադակկուն, Խիբրան, Յադիխուն և Յաթրիբը: Այս վերջինս հետագայի Մեդինան էր՝ իսլամի երեք սրբազան քաղաքներից մեկը: Յաթրիբը բաբելոնյան արշավանքների վերջին սահմանն էր:

Արաբական թերակղզու հյուսիսային և արևմտյան հատվածներն ունեին կարևոր նշանակություն: Այստեղով էին անցնում մի կողմից Եգիպտոսը Միջագետքին և Պարսից ծոցի երկրներին, իսկ մյուս կողմից Հնդկական օվկիանոսն Արաբական և Կարմիր ծովերով Արևելամիջերկրածովյան ավազանին կապող ճանապարհները: Դրանց վերահսկողությունը մեծ նշանակություն ուներ Բաբելոնիայի համար, քանի որ Եփրատը փոխել էր իր հունը, գետաբերանը դարձել էր ծանծաղ, և ծովային ճանապարհը, որն անցնում էր Ուրով դեպի Պարսից ծոց և հարավային ջրեր, դադարել էր գործելուց: Նաբոնիդը նվաճված տարածքների վրա կառավարիչ չնշանակեց, այլ ինքը հաստատվեց այստեղ՝ որպես նստավայր ընտրելով Տեյման, ուր կառուցեց խոշոր պալատական համալիր: Բաբելոնի կառավարումը նա հանձնարարեց որդուն՝ Բել-շար-ուծուրին:

Առայժմ պարզ չեն այն պատճառները, որոնք Նաբոնիդին մղեցին հեռանալու Բաբելոնից և մեկուսանալու այս հեռավոր վայրում: Տեյմայի ընձեռած առևտրական հնարավորությունները և ընդհանրապես նրա ռազմավարական դիրքն այնուամենայնիվ չեն ենթադրում արքայի անմիջական ներկայության անհրաժեշտություն, հետևաբար Տեյմա տեղափոխվելու պատճառներն այլ էին և, թերևս, դարձյալ կապված էին արքայի կրոնաքաղաքական գործունեության հետ: Ենթադրվում է, որ դա հարկադրված քայլ էր: Չկորցնելու համար գահը՝ նա ստիպված էր զիջել բաբելոնյան այն խմբավորմանը, որը նրան քերել էր իշխանության, քայքայել էր կիսում արքայի

կրոնական պատկերացումները: Հայտնի է, որ բնակչության մեջ ևս Նաբոնիդի ձեռնարկումները լայն աջակցության չարժանացան:

Մինչդեռ Բաբելոնիայից դուրս Նաբոնիդը խնդիրներ չուներ, իսկ Տեյմայի ընտրությունը, բացի իր առևտրական հնարավորություններից, պայմանավորված էր նաև այն հանգամանքով, որ Արաբական թերակղզու հյուսիսում մեծ էր Լուսնի աստծո դերը: Ըստ այդմ՝ Տեյման յուրատեսակ փոխզիջում էր. արքան մնում էր գահին, իսկ Բաբելոնիան կառավարում էր նրա որդին:

Նաբոնիդը Տեյմայում անցկացրեց տասը տարի: Այս ընթացքում Բաբելոնիան կառավարում էր Բել-շար-ուծուրը: Նա երկրի փաստացի տիրակալն էր, թեև տեքստերը շարունակում էին կազմել՝ ըստ Նաբոնիդի գահակալության տարիների: Այս շրջանում կազմված տեքստերը երբեմն հիշատակում են Նաբոնիդին և Բել-շար-ուծուրին միաժամանակ, երբեմն արքայազնը իրականացնում էր գործառույթներ, որ սովորաբար արքայի առանձնաշնորհ իրավունքն էր: Սակայն բաբելոնյան գլխավոր՝ Նոր տարվա տոնակատարությունը, որ այնուամենայնիվ պահանջում էր արքայի անմիջական ներկայությունը, դադարեց նշվելուց: Ք. ա. 543 թ. Նաբոնիդն անսպասելիորեն վերադարձավ Բաբելոն:

Տեյմայում անցկացրած տարիներին փոխվել էր իրավիճակը Բաբելոնիայի արևելքում: Դեռևս Նաբուգոդոնոսոր II-ի օրոք նկատվող լարվածությունը Բաբելոնիայի և Մարաստանի միջև, որը վերաճել էր երկրի հանդեպ անմիջական սպառնալիքի հավանաբար արդեն Ներիգլիսարի օրոք և Նաբոնիդի կառավարման առաջին տարիներին, Նաբոնիդը լուծել էր յուրովի՝ մարերի դեմ հանելով պարսիկներին: Դա թույլ տվեց նրան առժամանակ ապահովել իր արևելյան սահմաններն ու ձեռնամուխ լինել արևմուտքում նվաճումներ իրականացնելուն: Սակայն մարերի ջախջախումը պարսիկների կողմից ունեցավ շատ ավելի բացասական հետևանքներ, քան կարող էին ենթադրել բաբելոնյան արքունիքում: Դրանով ճանապարհ բացվեց նոր թշնամու առջև՝ պարսկա-բաբելոնյան հնարավոր դաշնագրի առկայությանը հակառակ: Անշանի արքան՝ Կուրաշը (Կյուրոս II), կարճ ժամանակամիջոցում իր վերահսկողության տակ վերցրեց մարական տարածքները, Ք. ա. 547 թ. արշավեց դեպի Հայկական լեռնաշխարհ, ինչ-որ մի շրջանում գրավեց գրեթե ողջ Փոքր Ասիան, իսկ Ք. ա. 543 թ. նրան հնազանդվեց Կիլիկիայի թագավորությունը: Պարսկական նվաճումների արդյունքում Բաբելոնիան գրեթե հայտնվեց շրջափակման մեջ, մանավանդ որ հարաբերությունները Եգիպտոսի հետ բարեկամական չէին:

Բաբելոնիայի շրջափակումը խիստ դժգոհություն առաջացրեց երկրի խոշոր վաճառականության մոտ: Մայրաքաղաքում սրվող իրավիճակն էր թերևս պատճառը, որը ստիպեց Նաբոնիդին տասնամյա բացակայությունից հետո վերադառնալ Բաբելոն: Սակայն նրա վերադարձով լարվածությունը չմեղմացավ, իսկ մի շարք պաշտոնյաների փոփոխությունը՝ անգամ Բել-շար-ուծուրի հեռացումը գործերից, չէր կարող փոխել իրավիճակը: Ավելին՝ դժգոհությունը Նաբոնիդը փորձեց խեղդել ճնշումներով: Դրանց առաջին գոհը քրմությունն էր: Սինի պաշտամունքը բացար-

ձականացվեց՝ նրանում մարմնավորելով նաև այլ աստվածությունների և կոչելով մինչ այդ անսովոր՝ «աստվածների աստված(ներ)» անվանաձևով: Բազում տաճարներ, այդ թվում և Էսագիլան՝ Մարդուկի գլխավոր տաճարը, Նաբոնիդը սկսեց ընծայել Սինին:

Ստեղծված իրավիճակում քրմությունը և հատկապես բաբելոնյան առևտրական վերնախավը, որը խիստ տուժում էր պարսկական սպառնալիքի պայմաններում առևտրական ուղիների շրջափակումից, հայացքն ուղղեցին դեպի Կուրաշը՝ Անշանի արքան: Նաբոնիդի և նրա տոհմի դեմ կազմակերպվեց դավադրություն: Թերևս հրավիրված լինելով գահին բազմելու՝ Բ. ա. 539 թ. Կյուրոսի բանակը ներխուժեց Բաբելոնիա:

Բաբելոնյան բանակը կանգնած էր Սիպպարի մոտ՝ Հյուսիսային Բաբելոնիայում: Ընդառաջ գնալով ներխուժողներին՝ արքայազն Բել-շար-ուծուրի հրամանատարությամբ բանակը պարսկական զորքերին հանդիպեց Օպիս քաղաքի մոտ: Ճակատամարտում բաբելոնյան զորքերը կրեցին ջախջախիչ պարտություն, որից հետո բաբելոնյան քաղաքները սկսեցին կամավոր հանձնվել հակառակորդին: Պարսկական բանակին առանց դիմադրելու անձնատուր եղավ Սիպպարը: Քաղաքի պաշտպանությունը գլխավորելու համար Սիպպար եկած Նաբոնիդը որևէ ազդեցություն չունեցավ դեպքերի ընթացքի վրա և ստիպված էր փախչել Բաբելոն: Երկու օր անց առանց մարտի Բաբելոն մտան բաբելոնյան Գուտիում մարզի կառավարիչ Ուզբարուի զորքերը, որոնք անցել էին պարսիկների կողմը: Նաբոնիդը գերվեց: Կյուրոսը անձնական ունիայով Բաբելոնիան միացրեց իր տերությանը՝ հռչակվելով նաև Բաբելոնիայի արքա:

Սրանով ավարտվեց նորբաբելոնյան տերության անկախ գոյության շրջանը: Թեև պարսիկները պահպանեցին բաբելոնյան թագավորությունը, բայց դա ձևակաություն էր և տուրք ավանդույթներին, որը երկար շարունակվել չէր կարող:

3. ԲԱԲԵԼՈՆԻԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐԻՆ

Հայկական լեռնաշխարհը բաբելոնյան դիցավիպական ավանդության մեջ

Հայկական լեռնաշխարհը Բաբելոնիայի բնակիչներին ծանոթ էր վաղնջական ժամանակներից՝ կապված տիեզերաստեղծման, համաշխարհային ջրհեղեղի և անմահության որոնումների դիցավիպական ավանդապատումների հետ:

Տիեզերաստեղծման մասին պատմող հին միջագետքյան ամենաամբողջական բնագրում՝ բաբելոնյան «Էնումա էլիշ...» («Երբ վերևում...») պոեմում, պատմվում է աստվածների հին ու նոր սերունդների պայքարի, երիտասարդ աստվածների հաղթանակի և արարչագործության մասին: Հին միջագետքցիների, մասնավորապես բաբելոնացիների տիեզերածնական պատկերացումներն ամփոփող այս պատմության մեջ, իբրև արարչագործության կենտրոն, հանդես է գալիս նախ-

նական լեռը, որը յուրօրինակ կապ է ապահովում երկնքի և երկրի միջև: Այդ լեռից սկզբնավորվում են Տիգրիսն ու Եփրատը: Այսինքն՝ հնագույն բաբելոնյան ընկալումներում որպես արարչագործության կենտրոն հանդես է գալիս Հայկական լեռնաշխարհը:

Համաշխարհային ջրհեղեղի մասին բաբելոնյան ավանդագրույցը հանգամանորեն շարադրել է Բաբելոնի Բել աստծո տաճարի քրմապետ Բերոսոսը՝ թարգմանելով այն հունարենի: Ըստ այդմ՝ մեղսագործ մարդկությանը ոչնչացնելու որոշում կայացնելով՝ աստված չմոռացավ մի քանի բարեպաշտների՝ Քսիսուրոս արքայի գլխավորությամբ, որոնց պատվիրեց տապան կառուցել: Երբ բարեպաշտ արքան ցանկացավ իմանալ, թե ուր պիտի հասնի իր նավը փրկելու համար, երկնքից պատասխան լավեց. «Աստվածների մոտ»: Իսկ երբ փրկվածները ցած իջան նավից, երկնային ձայնն ավետեց, որ նրանք Հայաստանում են (հունարեն բնագրում՝ Արմենիա): Բերոսոսը նաև ավելացնում է, որ նավի բեկորները մինչև իր ժամանակները պահպանվել են Հայաստանի լեռներում, որոնցից մարդիկ, պոկելով ձյուրի կտորներ, թալիսմաններ են պատրաստել իրենց համար:

Հնագույն միջագետքյան ավանդության մեջ անմահություն որոնող գլխավոր հերոսը Գիլգամեշն է, որի մասին ասքերը գրի են առնվել հին աշխարհի բազմաթիվ լեզուներով: Շումերական «Գիլգամեշն ու Անմահության երկիրը» վիպերգում Գիլգամեշը որոշում է ուղևորվել անմահության երկիր և բռնում է «դեպի Արատա ճանապարհը»: Իսկ բաբելոնյան «Գիլգամեշ» էպոսում հերոսը հաղթահարում է Մաշու լեռները՝ Հայկական լեռնաշխարհի հարավը եզերող Մասիու-Մասիոն լեռները:

Հին Բաբելոնյան թագավորությունը և Հայկական լեռնաշխարհը

Հարուստ են նաև Բաբելոնի և Հայկական լեռնաշխարհի պատմական շփումները, որոնք առկա են դեռևս Հին Բաբելոնյան հարստության ժամանակաշրջանում: Հարստության ամենահզոր արքա Համմուրապին արշավել է դեպի Հայկական լեռնաշխարհ՝ թողնելով այդ մասին հիշատակություններ: Մասնավորապես նրա իշխանության 30-րդ տարում՝ Էլամի դեմ արշավանքի ընթացքում, որպես վերջինիս դաշնակիցներ, Համմուրապիի դեմ պատերազմել են Սուբարտու (Սուբուր) և Գ/Կուտիում երկրների զորքերը: 32-րդ տարում նա պատերազմում է Սուբարտուի, Գ/Կուտիումի և Էշնուննայի (Դիալա գետի հովտում) դեմ: 33-րդ տարվա դեպքերի թվարկումներում նշվում է, որ նա գրավել է Սուբարտուի որոշ քաղաքներ (առանց որոշակիացման), իսկ 37-րդ տարում դեպի հյուսիս կատարած արշավանքի ընթացքում հաղթել է Թուրուկկու, Կակմու և Սուբարտու երկրներին: 39-րդ տարում, որպես ամփոփում, նշվում է, որ Համմուրապին հաղթել է իր բոլոր թշնամիներին մինչև Սուբարտու երկիր:

Ուր քաղաքից գտնված շումերերեն և աքքադերեն երկլեզու արձանագրության մեջ Համմուրապին պատմում է Էլամ (?), Գուտիում, Սուբարտու և Տուգրիշ երկրների մասին, «որոնց լեռները հեռավոր են, և լեզուները՝ խառնիճաղանջ»:

Սուրբարտու (Սուրբոր) երկրի հզորության մասին են վկայում նաև այդ ժամանակաշրջանի դիվանագիտական տեքստերը: Թեև Հարիրիից գտնված նամակներից մեկում նշվում է, որ Համմուրապին շարունակ հորդորում էր Մարիի արքա Զիմրիլիմին գնալ Սուրբարտու և նրա արքաներին գրավել իրենց կողմը, ինչը, սակայն, հնարավոր չէր անել առանց մեծ քանակի: Զիմրիլիմը Համմուրապիին գրած նամակում դժգոհում է, որ դեպի հյուսիս արշավելու համար նա իրեն օգնության է ուղարկել ընդամենը 3-հազարանոց քանակ:

Սուրբարեցիները հիշատակվում են այդ ժամանակաշրջանի քաղաքաբնակներում և այլ տեքստերում: Հետաքրքիր է, որ Էլամից գտնված արձանագրություններում հիշատակվում է «սուրբարեցիների ջրանցքը», ինչը կարող է կապվել Սուրբարտու-Էլամ դաշինքի (Համմուրապիի իշխանության 30-րդ տարում) հետ:

Միջին Բաբելոնյան թագավորությունը և Հայկական լեռնաշխարհը

Հայկական լեռնաշխարհի և Բաբելոնի առնչությունների հետ կարող է կապվել նաև կասսիտների պատմաշրջանը: Կասսիտներն առաջին անգամ գրավեցին Բաբելոնը Ք. ա. XVIII դարում, սակայն չհաստատվեցին այնտեղ: Հետագայում՝ Ք. ա. 1595 թ., նվաճելով Բաբելոնը՝ նրանց արքայատոհմն իշխեց կենտրոնական Միջագետքում մինչև Ք. ա. 1155 թ.:

Կասսիտների էթնիկ բնութագրի և սկզբնական բնակավայրի հարցերը գիտության մեջ եղել են երկարատև քանավեճի առարկա և այսօր էլ վերջնական պատասխան չեն գտել: Ուսումնասիրողների մի մասն ուշադրության է հրավիրում այն փաստին, որ նրանցից մեզ հասած անվանումներում առկա է խիստ ընդգծված հնդեվրոպականություն (Սուրիաշ, Բուրիաշ, Մարրուտաշ, Գանդաշ, Թիմիրաշ, Բուգաշ, Դակաշ, Շումալիա և այլ դիցանուններ և անձնանունները), ինչը կարող է կողմնորոշել դեպի Հայկական լեռնաշխարհ: Կասսիտների լեզվանյութում առկա են արևելափոքրասիական զուգահեռներ, որոնք խոսում են հօգուտ այդ շրջանների հետ երկարատև շփումների: Մյուս կողմից խեթական աղբյուրներում Հայկական լեռնաշխարհի արևմուտքում և հարավ-արևմուտքում գտնվող Թեգարամա, Խիմուվա, Իսուվա (Շոփթ) երկրների գործերը կրում են «կասսիական» անվանումը, իսկ Մասիու-Մասիոն (այժմ՝ Տուր-Աբդին) լեռներն ասորեստանյան աղբյուրներում կոչվում են Քաշիյարի: Կասսիտ արքաները կրում էին «արքա Արման և Պադան երկրների» տիտղոսը, իսկ ողջ Բաբելոնիային տիրելուց հետո այն կոչեցին Կարդունիաշ (անջատելով վերջավորությունները՝ կատանանք մաքուր տեղանունը՝ Քարդու. այդ անվամբ է Հայաստանը կոչվում նաև Աստվածաշնչի հին ասորական Պեշիտտա անվանումը կրող թարգմանության մեջ):

Հատկանշական է, որ Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի հնագիտական առնչություններում իր առատությամբ առանձնանում է հենց կասսիտական Բաբելոնի դարաշրջանը: Ուշագրավ է նաև, որ ավելի ուշ շրջանում հիշատակվող Նաիրի-Խուրուշկիայի արքա Յանգուի անունը կասսիտների լեզվում նշանակում է «արքա»:

Նոր Բաբելոնյան թագավորությունը և Հայաստանը

Ք. ա. VII դ. վերջին քառորդում Առաջավոր Ասիայում կարևոր դերակատարում ձեռք բերած Նոր Բաբելոնյան թագավորությունը և Մարաստանը որոշում են միավորել ուժերն ընդդեմ Ասորեստանի: Մովսես Խորենացու տեղեկացմամբ՝ Սկայորդու որդի Պարույր Հայկագունին, որն իր իշխանության ներքո միավորել էր Վանա լճից մինչև Եփրատ ընկած տարածքը, միանում է Մարաստանի և Բաբելոնի հակաասորեստանյան դաշինքին: Ք. ա. 612 թ. դաշնակից զորքերը գրավեցին Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն, որին մասնակցելու համար Պարույրը թագադրվեց Մարաստանի արքա Կիաքսար-Վարբակեսի կողմից և ճանաչվեց Հայաստանի թագավոր:

Դատելով Աստվածաշնչից՝ Ք. ա. 590-ական թվականներին Հայոց թագավորությունը պետք է լուրջ ուժ դարձած լիներ տարածաշրջանում: Դա է վկայում Երեմիա մարգարեի կողմից Արարատի թագավորության հիշատակությունն անիրավ Բաբելոնի դեմ պատերազմի կանչվող թագավորությունների շարքում:

Հայաստանն աշխարհի հնագույն՝ քաբելոնյան քարտեզում

Բաբելոնյան քաղաքակրթության ուշագրավ ժառանգություններից մեկը հանրահայտ «Աշխարհի քաբելոնյան քարտեզն» է, որը պատմության մեջ ողջ հայտնի աշխարհը մեկ գծագրմամբ ներկայացնելու առաջին օրինակն է: Ք. ա. I հազ. առաջին կեսին ստեղծված քացառիկ այդ քարտեզում հիշատակվում է յոթ երկրանուն (Ուրարտու (Ուրաշտու), Ասորեստան, Դեր, Սուգա (Շուշան), Բիթ-Յակին, Խաբբան, Բաբելոն), որոնցից առաջինը Հայաստանն է՝ նշված «Ուրարտու» («Ուրաշտու») անվամբ:

Հայ-քաբելոնյան առնչություններն Աքեմենյան տերության ժամանակաշրջանում

Կյուրոս Մեծը, որպես դաշնակից ունենալով Տիգրան Երվանդյանին, եռամյա պայքարում հաղթեց Ադահակին և Ք. ա. 550 թ. հիմնեց իր տերությունը: Վերջինիս դեմ ստեղծվեց հզոր դաշինք՝ Լիդիայի (Փոքր Ասիա), Բաբելոնի և Եգիպտոսի մասնակցությամբ: Ք. ա. 546 թ. Կյուրոսին հաջողվում է հաղթել Լիդիային, իսկ 539 թ. նվաճել Բաբելոնը:

Ուշագրավ տեղեկություններ է պահպանել Բեհիսթունյան արձանագրությունը հայ-քաբելոնյան դաշնակցության մասին: Երեք լեզուներով Դարեհ I-ն արձանագրել է տվել Կյուրոս Մեծի մահից հետո սկսված գահակալական կռիվների և պարսից տիրակալության դեմ ոտքի ելած երկրների ու ժողովուրդների ապստամբությունների ճնշման պատմությունը: Արձանագրությունը տեղեկացնում է, որ Հայաստանը (պարսկերեն մասում կոչվում է Արմինա, էլամերենում՝ Հարմինույա, բաբելերենում՝ Ուրարտու) նվաճելու համար Դարեհ I-ն իրականացրել է հինգ արշավանք:

Նույն արձանագրության 49–52–րդ բաժինները հաղորդում են չափազանց հետաքրքիր մի իրադարձության մասին: Դրա համաձայն՝ Դարեհի դեմ Բաբելոնում բարձրացած ապստամբությունը ղեկավարում էր «հայազգի Արախան՝ Խալդիտայի որդին»: Դա մի կողմից ցույց է տալիս, որ Ք. ա. 520–ական թթ. հայոց մեջ շարունակվում էր Խալդի աստծո պաշտամունքը, մյուս կողմից վկայում Բաբելոն–Հայաստան կապի մասին: Դա նաև մղում է ենթադրելու, որ Բաբելոնի ապստամբությունը կարող էր ուղղորդված լինել Հայաստանից:

Հայ–բաբելոնյան տնտեսական առնչության մասին եզակի մի վկայություն է պահպանել Հերոդոտոսը: Ըստ նրա հաղորդման՝ առևտուրը Հայաստանի և Միջագետքի միջև կատարվում էր Եփրատ գետով. «Այժմ ես կպատմեմ այն մասին, ինչն ինձ այս քաղաքից (Բաբելոնից) հետո թվում է ամենազարմանալի: Նավերը, որոնցով նավում են գետն ի վար՝ դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից վերև, նրանք կտրում են ուռենիներ, որոնցով պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կավե ծածկով, նավի հատակի նման... Այդ նավերը պատրաստում են և՛ շատ մեծ, և՛ առավել փոքր: Դրանցից ամենամեծերն ունեն հինգ հազար տաղանդ տարողություն»:

Մեկ հունական (ատտիկյան) տաղանդը հավասար է 26,2, իսկ բաբելոնյան տաղանդը՝ 40 կիլոգրամի: Չափի ժամանակակից միավորով արտահայտված՝ ստացվում է, որ Հայաստանից Բաբելոն նավարկած ամենամեծ նավերն ունեցել են ավելի քան 130 տոննա (բաբելոնյան տաղանդով հաշվելու պարագայում՝ 200 տոննա) տարողություն: Եթե անզամ խիստ չափազանցված է այս թիվը, վկայությունն, այնուամենայնիվ, խոսում է հոգուտ Եփրատով Հայաստանից մեծածավալ նավարկություն կատարելու փաստի:

ԲԱԲԵԼՈՆԻԱՅԻ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

(ամորեական հարստություն)

Սումու–արում.....	(1894–1881)	Ադադ–շումա–իդդինա.....	(1222–1217)
Սումուլաել.....	(1880–1845)	Ադադ–շումա–ուծուր.....	(1216–1187)
Սաբիում.....	(1844–1831)	Մեյի–շիպակ.....	(1186–1172)
Ապիլ–Սին.....	(1830–1813)	Մարդուկ–ապլա–իդդինա I.....	(1171–1159)
Սին–մուբալլիտ.....	(1812–1793)	Չաբաբա–շումա–իդդինա.....	(1158)
Համմուրապի.....	(1792–1750)	Էնլիլ–նադին–ախսե.....	(1157–1155)
Սամսուիլունա.....	(1749–1712)	Մարդուկ–կաբիտ–ախսեշու.....	(1158–1141)
Աբի–էսուխ.....	(1711–1684)	Իտտի–Մարդուկ–բալասու.....	(1140–1133)
Ամմիդիտանա.....	(1683–1647)	Նինուրտա–նադին–շումի.....	(1132–1127)
Ամմիծադուկա.....	(1646–1626)	Նաբուգոդոնոսոր I	
Սամսուդիտանա.....	(1625–1595)	(Նաբու–կուդուրրի–ուծուր).....	(1126–1105)

(կասսիտական արքաներ)

Գանդաշ.....	(XVII դ. կեսեր)	Էնլիլ–նադին–ապլի.....	(1100–1083)
7–8 արքաներ			
Ազում II.....	(1595–1571)	Մարդուկ–նադին–ախսե.....	(1100–1083)
Բուրնա–բուրիաշ I.....	(1510)	Մարդուկ–շապիկ–գերի.....	(1082–1070)
Կաշտիլիաշ II		Ադադ–ապլա–իդդինա.....	(1069–1048)
Ուլամ–բուրիաշ.....	(1450)	Մարդուկ–ախսե–էրիբա.....	(1047)
Ազում III		Մարդուկ–գեր?.....	(1046–1035)
Կարահնդաշ I.....	(1415)	Նաբու–շումու–լիբուր.....	(1034–1027)
Կադաշման–խարբե		Սիմբար–շիպակ.....	(1025–1008)
Կուրիզալու I		Էա–մուկին–գերի.....	(1008)
Կադաշման–Էնլիլ I.....	(XIV դ. կեսեր)	Կաշշու–նադին–ախսե.....	(1007–1005)
Բուրնա–բուրիաշ II.....	(1363–1335)	Էուլմաշ–շակին–շումի.....	(1005–989)
Կարահնդաշ II		Նինուրտա–կուդուրրի–ուծուր I.....	(988–986)
Կարախարդաշ.....	(1333)	Շիրիկտի–Շուքամունա.....	(986)
Նազի–Բուգաշ.....	(1333)	Մար–բիտի–ապլա–ուծուր.....	(985/4–980/9)
Կուրիզալու II.....	(1332–1308)	Նաբու–մուկին–ապլի.....	(979–944)
Նազի–Մարուտաշ.....	(1311–1286)	Նինուրտա–կուդուրրի–ուծուր II.....	(944)
Կադաշման–Տուրգու.....	(1285–1268)	Մար–բիտի–ախսե–իդդինա.....	(943)
Կադաշման–Էնլիլ II.....	(1267–1253)	Շամաշ–մուդամիթ.....	(900 (*9))
Կուդուր–Էնլիլ.....	(1252–1243)	Նաբու–շումա–ուկին I.....	(899(*9)–888(+3–4))
Շագարակտի–Շուրիաշ.....	(1242–1231)	Նաբու–ապլա–իդդինա.....	(887(+3–4)–855(+3–4))
Կաշտիլիաշ IV.....	(1230–1224)	Մարդուկ–զաքիր–շումի I... ..	(854(+3–4)–819(*5))
Էնլիլ–նադին–շումի.....	(1224)	Մարդուկ–բալասու–իկրի... ..	(818(+5–6)–813(–1))
Կադաշման–խարբե II.....	(1223)	Բաբա–ախա–իդդինա.....	(812(–1))
		Նինուրտա–[...]	
		Մարդուկ–բել–գերի	
		Մարդուկ–ապլա–ուծուր.....	(770(+))
		Էրիբա–Մարդուկ.....	(769(+))–761(+)
		Նաբու–շումա–իշկուն.....	(760(+))–748
		Նաբու–նաժիր.....	(747–734)

սուրբարական և խորրիական-սեմական ցեղապետությունների, իսկ հետագայում նաև համամիջագետքյան պետությունների կրոնական համակարգերի հիմնական տարրերանշանը դրանց բազմաբանակությունն է: Ընդհուպ մինչև Ք. ա. III հազ. վերջերը Միջագետքում գոյություն չունեին միասնական համակարգված դիցարան: Յուրաքանչյուր քաղաք-պետություն ուներ սեփական պաշտամունքային համալիրը՝ իր հովանավոր աստծո գլխավորությամբ: Կային, իհարկե, համաշումերական մի քանի աստվածներ, որոնք, ըստ շումերների, ամենաակտիվ մասնակցությունն էին ունեցել երկրի, մարդկության և մնացած ամեն ինչի ստեղծման գործում: Դրանք էին՝ Անուն (երկնքի աստվածը), Էնլիլը (նաև Էլիլ՝ «աստվածների և մարդկանց արքան»), Էնկին (ստորերկրյա ջրերի և Համաշխարհային օվկիանոսի աստվածը), Ինաննան (սիրո և ռազմի աստվածուհին), Ուտուն (արևի աստվածը), Նգիրսուն (ռազմի աստվածը) և այլն:

Նախապես վերոհիշյալ աստվածներից յուրաքանչյուրը որևէ շումերական քաղաքի հովանավոր աստվածն է եղել և միայն հետագայում՝ դրանց քաղաքական վերելքի հետ միաժամանակ, ստացել է համաշումերական կարգավիճակ՝ իր կայուն տեղն ապահովելով Ք. ա. II-I հազ. միջագետքյան դիցարանում: Շումերական դիցարանի համակարգումը տեղի ունեցավ III հազ. վերջերին - II հազ. առաջին կեսին՝ Ուրի III դինաստիայի շրջանում, երբ սկզբում Աքքադի, այնուհետև՝ կուտիների տիրապետությունից հետո Միջագետքը շուրջ մեկ դար միավորվեց ամուր պետականության մեջ՝ խիստ կենտրոնացված և հզոր արքայական իշխանության պայմաններում:

Միջագետքյան կրոնապաշտամունքային համակարգի հիմքում ընկած է շումերական կրոնը, որը հետագա ժամանակներում, ոչ էական փոփոխություններով, պահպանվեց սեմախոս բնակչության (աքքադացիներ, ամորեյներ, արամեացիներ և այլն) ներհոսքից հետո: Ըստ այդմ՝ Միջագետքի ժողովուրդների կրոնական պատկերացումները պայմանականորեն կարելի է բաժանել երկու փուլերի՝ շումերական (Ք. ա. III հազ.) և աքքադական (Ք. ա. II-I հազ.):

Շումերական տեքստերում պահպանվել են մեծ քանակությամբ առասպելական պատմություններ, որոնք նվիրված են աշխարհաստեղծմանը: Ըստ շումերների՝ Էնլիլ աստվածն էր, ով երկինքը բաժանեց երկրից: Հետագայում Բաբելոնում աշխարհաստեղծումը վերագրվում էր այդ քաղաքի հովանավոր աստված Մարդուկին: Ինչ վերաբերում է մարդկանց, ապա կարծում էին, որ Էնկին և աստվածուհի Նինմահն էին ստորերկրյա օվկիանոսից (Աբգու) վերցված կավից ծեփել մարդկանց: Մարդկանց ստեղծումը բացատրվում էր այն հանգամանքով, որ մինչև նրանց հանդես գալը գոյություն ունեին աստվածային ծագման էակներ՝ անունակները, ովքեր ապրում էին ստորերկրյա թագավորությունում և ի վիճակի չէին զբաղվելու տնտեսությամբ (երկրագործություն և անասնապահություն): Աստվածները մարդկանց

¹ Միջագետքի ժողովուրդների կրոնական պատկերացումների և առասպելների մասին տես Kramer S.N., Inanna's Descent to the Nether World, Continued and Revised, JCS 5, 1951, 1ff.; Kramer S.N., Sumerian Mythology, New York, 1961; Kramer S.N., Sumerian Myths and Epics. - In: ANET (3rd. ed.), 1969, 37ff.; Jacobsen Th., The Treasures of Darkness: a History of Mesopotamian Religion, New Haven, 1976; Dalley S., Myths from Mesopotamia. Creation, the Flood, Gilgamesh and Others, London, 1989 և այլն:

ստեղծեցին, որպեսզի նրանք աշխատեն և աստվածներին կերակրեն մատուցումների ու զոհաբերությունների տեսքով:

Շումերները աստվածներին էին վերագրում մարդկանց կենցաղում տեղ գտած բոլոր զբաղմունքները, ընդ որում՝ դրանցից յուրաքանչյուրը որևէ աստծո ստեղծածն էր:

Բավական շատ են պատմությունները հանդերձյալ աշխարհի մասին: Շումերների կարծիքով՝ այնտեղ իշխում էր Էրեշկիգալ աստվածուհին: Հանդերձյալ աշխարհում բարեկեցիկ կյանքով կարող էր ապրել միայն այն մարդը, ով թաղվել էր համաձայն ծեսի, պատերազմի դաշտում զոհվածները և բազմազավակ մարդիկ: Մնացած բոլորն ընկնում էին դժոխք, որտեղ նրանք անունակների կողմից դատապարտվում էին մահվան: Առանց ծեսի թաղված մարդիկ կարող էին հետագայում բարձրանալ երկիր և դժբախտություն բերել մարդկանց:

Միջագետքում սեմախոս աքքադացիների և հետագայում այստեղ հայտնված մյուս սեմական ժողովուրդների վաղ շրջանի կրոնական պատկերացումների մասին աղբյուրները որևէ տեղեկություն չեն հաղորդում: Նրանց բոլոր աստվածները նույն շումերական աստվածներն են, որոնց մի մասի անունները ուղղակի ստացել էին սեմական անվանումներ: Այսպես՝ արևի աստված Ուտուն սկսեց կոչվել Շամաշ, Ինաննան՝ Իշտար, Իշկուրը՝ Ադադ, և այլն: Իսկ *դեմիուրգ* (արարիչ) աստված Էնլիլը կոչվեց Բել (աքքադ.՝ «տեր»):

Աքքադական կրոնական պատկերացումները Ք. ա. II հազ. ընթացքում անցան զարգացման լուրջ փուլ: Հենվելով շումերականի վրա՝ ձևավորվեց մի վերամշակված համակարգ, որն ամրագրվել է Ք. ա. X դ. Բաբելոնում ստեղծված կոսմոգոնիական ընդարձակ էպոսում՝ «Էնումա էլիշ» (աշխարհաստեղծման առասպելի աքքադական տարբերակը, աքքադ.՝ «Երբ վերնում»):

Էպոսում արտացոլված կոսմոգոնիական գերիշխող տարրը, նորոյթը աստվածների հաջորդական սերունդների գաղափարն է: Յուրաքանչյուր նոր սերունդ գերազանցում է նախորդին և նրանից հետո հասնում իշխանության, քանի որ նա ավելի ուժեղ է (*թեոգոնիա*՝ «աստվածամարտություն»): Արդյոք այս գաղափարը ծնունդ էր առել աքքադացիների, թե նրանց հարևան խորրիների մոտ, պարզ չէ: Համենայնդեպս, խորրիական առասպելաբանության մեջ այն հիմնավորապես արմատացած էր: Այստեղ գլխավոր գործող անձը Բաբելոնի գլխավոր աստված Մարդուկն է, որին էլ վերագրվում է դեմիուրգ աստծո գործառույթը: Նա է, ով ստորերկրյա օվկիանոսի տիրակալ հրեշ-աստվածուհի Թիամատին սպանելով, այնուհետև առանձնացնում է երկինքը երկրից և հաստատում կարգունակները երկրում, որից հետո ստեղծում է մարդկանց: Հատկանշական է, որ էպոսի ասորեստանյան տարբերակում Մարդուկի փոխարեն հանդես է գալիս Աշուր աստվածը (մայրաքաղաքի հովանավոր աստվածը):

Ք. ա. I հազ. Ասորեստանի և Բաբելոնիայի պատմության վերջին շրջանում կրոնական պատկերացումները որոշ մասնակի փոփոխությունների ենթարկվեցին հիմնականում արամեական ցեղերի ներհոսքի հետևանքով, սակայն այդ փոփոխությունները էական ազդեցություն չունեցան:

2. ԳԻՐԸ

Հին Միջագետքի ժողովուրդների ստեղծած հարուստ մշակութային արժեքների շարքում կարևորագույն տեղ ունի սեպագիրը, որի առաջին նմուշները թվագրվում են Ք. ա. III հազ. սկզբներով՝ շումերական պետականությունների շրջանում:

Շումերները սկզբնապես օգտվում էին պատկերային գրից, որտեղ յուրաքանչյուր նշան ներկայացնում էր որևէ ընդհանրական առարկա կամ գաղափար՝ իր բոլոր իմաստային երանգներով: Շումերական պատկերային գաղափարագիրը ի վիճակի չէր արտահայտելու լեզվի բառերի հնչյունական կազմը: Այս գրից օգտվողը պետք է տիրապետեր շումերերենին, որպեսզի կարողանար ընթերցել արձանագրության տեքստը: Արդեն շումերական դարաշրջանի վերջին փուլում պատկերային գիրը ապրեց նկատելի բովանդակային և արտաքին վերափոխումներ: Պատկերային նշանները աստիճանաբար պարզեցվեցին՝ իրենց տեղը զիջելով պարզ և բարդ սեպախմբերին: Միայն պատկերային գրին ծանոթ անձը կարող է հեռավոր նմանություն նշմարել դրա և սեպագրի համապատասխան նշանների միջև: Այս գիրը ստացել է սեպագրի անվանումը, քանի որ նշանները դրոշմվում էին կավի վրա եռանկյունաձև-սեպաձև ձողիկներով: Այդպես գրելը անհամեմատ ավելի հեշտ էր, և տեքստ կազմելը զգալիորեն արագանում էր:

Հիմնավորապես փոփոխվեց նաև գրի բովանդակային կողմը: Թեև նախկին պատկերային, այժմ արդեն սեպագրի նշանախմբերը հիմնականում պահպանեցին իրենց գաղափարային իմաստները, սակայն ստացան լրացուցիչ հնչյունական՝ վանկային արժեքներ: Սեպագիրը բաղկացած էր երեք տիպի հնչյունական վանկային նշաններից՝ բաց (ma, pa, ta և այլն), փակ (am, ap, at և այլն) և փակ եռամաս (mar, par, maš և այլն): Այսպիսի վանկային նշանների առկայությունը թույլ էր տալիս լիարժեքորեն վերարտադրել աքքադերենի հնչյունական կազմը: Սեպագիրը բաղկացած էր շուրջ 600 նշաններից, որոնցից յուրաքանչյուրը ժամանակի ընթացքում ձեռք էր բերել հավելյալ գաղափարային և վանկային իմաստ: Սեպագիր տեքստ կազմող գրիչը կամ այն ընթերցողը պետք է տիրապետեր նշանների այդ բազմիմաստությանը (պոլիֆունիա), որպեսզի կարողանար օգտվել գրից:

Սկսած Շումերից՝ սեպագրի տեքստերը գրվում էին հիմնականում կավի վրա: Հաճախ օգտագործվում էին նաև քարը և մետաղը, սակայն միայն շինարարական, կոթողային քնույթի տեքստերի համար: Արքայական, տաճարային և այլ արխիվների համար նախատեսված տեքստերը բացառապես գրված են կավի վրա: Դրանք ցուցակագրվում և պահվում էին արխիվներում այն միտումով, որպեսզի անհրաժեշտության դեպքում օգտվողը հեշտությամբ հայտնաբերի:

Սեպագրին տիրապետելը բարդ և տևական ուսուցման արդյունք էր: Միջագետքյան քաղաքներում կային սեպագրի դպրոցներ (շումերերեն՝ É. DUB. BA «սեպագրի աղյուսակի տուն»), որտեղ ուսուցումը տևում էր երեք տարի: Այստեղ, բացի բուն սեպագրից,

¹ Պատկերային գրից դեպի սեպագրի ուշ շրջանի զարգացման մասին տես Labat R., Manuel d'épigraphie akkadienne (Signes, Syllabaire, Idéogrammes), Paris, 1988; սեպագրի նշանների ամբողջական ցանկը տես Borger R., Assyrisch-babylonische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1978.

սովորեցնում էին շումերերեն, աքքադերեն, վայելչագրություն, մաթեմատիկա, երգեցողություն և հարակից գիտելիքներ: Հիմնականում հասարակության վերնախավից դուրս եկած այսպիսի դպրոցի շրջանավարտը, տիրապետելով ժամանակի բոլոր գիտություններին, վերածվում էր հասարակության արտոնյալ խավի ներկայացուցիչ:

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջագետքում գեղարվեստական ժանրի ստեղծագործությունների հիմքը դրվել է դեռևս շումերական դարաշրջանում, չնայած շումերական գրականության նմուշների մեծ մասը գրի է առնվել միայն հետագայում՝ Ուրի III հարստության և հին բաբելոնյան շրջանում:

Բուն շումերական դարաշրջանից պահպանվել են հիմնականում աստվածներին ուղղված համառոտ ձոներ: Իսկ արդեն Ք. ա. III հազ. վերջերից պահպանվել են շումերական գրականության ամենատարբեր ժանրերին վերաբերող ստեղծագործություններ՝ ընդարձակ ձոներ, աղոթքներ, ողբեր, նույնիսկ Ուրի արքա Շուլգիի երեխայի համար գրված օրորոցային երգ, ինչպես նաև առասպելաբանական ժանրի մի ողջ համաստեղություն: Հատուկ շարք են կազմում նաև հետագայում աստվածացված՝ շումերական որոշ արքաների գործունեությանը նվիրված հերոսապատումները (Էնմերքար, Լուգալբանդա և Գիլգամեշ): Սրանցից հատկապես առանձնանում է Գիլգամեշի մասին ընդարձակ էպիկական պոեմը, որը նվիրված է Ուրուկի արքայի կյանքին: Առկա են նաև որոշ քանակությամբ լիրիկական ստեղծագործություններ, որոնք գերազանցապես նվիրված են Ինաննա աստվածուհուն: Վերոհիշյալ ստեղծագործությունները հիմնականում գրված են չափածո ժանրով:

Միջագետքում սեմախոս բնակչության տարածումը, սկսած Աքքադի պետությունից, որևէ կերպ չընդհատեց շումերական գրականության, ինչպես նաև մշակույթի մյուս ոլորտների կենսագործունեությունը: Ավելի ճիշտ տեղի ունեցավ հակառակը: Սկզբում Աքքադի, այնուհետև Ասորեստանի և Բաբելոնիայի գոյության ընթացքում, հատկապես սկզբնական փուլում շումերական գեղարվեստական գրականության բոլոր հիմնական մոդելները լայն տարածում ունեին, որոնց օրինակով ստեղծվում էին համապատասխան ստեղծագործություններ աքքադերեն լեզվով: Մոդելներից զատ, աննշան փոփոխություններով, հաճախ կրկնակվում

¹ Շումերական գրականության մասին առկա են մեծաքանակ ընդհանրացող և մասնավոր աշխատություններ՝ Kramer S.N., loc.cit.; Dalley S., loc.cit. (առասպելները); Kramer S.N., Enki and Ninhursag: A Sumerian «Paradise» Myth, Philadelphia, 1945; Civil M., Enlil and Namzitarra, AfO 25, 1964, 65ff.; Hallo W.W. and Dijk J.van, The Exaltation of Inanna, New Haven, 1968; Kramer S.N., The Death of Ur-nammu and his Descent to the Netherworld, JCS 21, 1967, 104ff.; Klein J., Three Sulgi Hymns: Sumerian Royal Hymns Glorifying King Sulgi of Ur, Ramat Gan, 1981; Heimpel W., The Nanshe Hymn, JCS 33, 1981, 65ff.; Michalowski P., Sumerian Literature: an Overview. - In: CANE III-IV, 1995, 2279ff. և այլն: Ասուրա-բաբելոնյան գեղարվեստական գրականության ժանրերի մասին տես Bottéro J., Akkadian Literature: an Overview. - In: CANE III-IV, 1995, 2293ff.

էին շումերական հերոսապատումը կամ առասպելական պատմությունը: Օրինակ՝ շումերական «Ինաննա աստվածուհու գնալը անդրաշխարհ» ստեղծագործության մեջ փոփոխված էր միայն աստվածուհու անունը (աքքադական տարբերակում՝ Իշտար) և որոշ մանրամասներ:

Այնուամենայնիվ, ասորեստանյան-բաբելոնյան գրականությունը շումերականի պարզ կրկնակումը չէր: Հատկապես Ք. ա. II հազ. երկրորդ կեսից սկսվում է աքքադերենով գրված բուն աքքադական՝ բովանդակությամբ միանգամայն նոր տիպի գրականության ծնունդը: Այդպիսի ստեղծագործություններից էին «Ատրախասիսը», «Էնումա էլիշը», սեփական աստվածներին նվիրված չափածո լիրիկական բանաստեղծություններ, աղոթքներ և ծեսեր: Գրականության ասպարեզում նորոյթ էր աստվածաբանական թեմաներով երկխոսությունների կամ մենախոսությունների հանդես գալը (օրինակ՝ հին բաբելոնյան շրջանից եկող «Մարդու և նրա աստծո երկխոսությունը», «Երկխոսություն վաստատեսության մասին») և այլն: Գրականության նոր ժանրերից էին նաև արքայի գործունեությունը նկարագրող ստեղծագործությունները, որտեղ ռազմական արշավանքը նկարագրող պատմությունը՝ ներառյալ ոչ ռազմական դիպվածները, ներկայացվում էր զուտ գեղարվեստորեն: Ավելի ուշ, հատկապես Նորասորեստանյան թագավորության շրջանում, այդպես էին կազմվում ասորեստանյան արքաների տարեգրությունները: Այս տիպի ստեղծագործությունների հիմքում ընկած էր «պատմական էպոս» կոչվող ժանրը, որի ամենավաղ նմուշը Աքքադի պետության հիմնադիր Սարգոն I-ի մասին պատմող «Ռազմի արքա» երկն է:

4. ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջագետքը հին Առաջավոր Ասիայի այն տարածաշրջանն էր, որտեղ գիտական գիտելիքները սաղմնավորվել են Ք. ա. IV հազ. վերջերից և ժամանակի ընթացքում վերաճել քաղաքակրթական գործընթացի շարժիչ ուժի: Ինչպես և Եգիպտոսում, այստեղ գիտությունը ունեցել է առաջատար տեղ պետությունների տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքում¹:

Հին Միջագետքում գիտելիքների որոշակի բնագավառի տիրապետող մարդը կոչվում էր «իմաստուն» (apkallu և ummanu): Դրանք կարող էին լինել գրիչներ, աստղագուշակներ, նույնիսկ արհեստավորներ: Այսպես էին բնութագրվում բոլոր նրանք, ովքեր

ունեին համապատասխան գիտելիքներ՝ աշխատելու իրենց մասնագիտությամբ: Ինչ վերաբերում է գիտությանը արդի պատկերացմամբ, ապա դրանց նկատմամբ կիրառվում էին այլ տերմիններ՝ «մեծ գիտելիքներով օժտված», «գրագետ», «ձմարիտ գիտելիքով օժտված» և այլն: Թե՛ գրիչները, թե՛ գիտնականները պատկանում էին հասարակության վերնախավին, նրանց ծառայություններից օգտվում էին արքունիքը, տաճարները:

Միջագետքյան աղբյուրներում պահպանվել են մեծ քանակությամբ տեքստեր, որոնք նվիրված են այն ժամանակներում հայտնի գիտական գիտելիքներին՝ աստվածաբանություն, աստղագուշակություն, մաթեմատիկա, բժշկագիտություն, իրավագիտություն: Այս տեքստերի մեծ մասը ուսումնական բնույթի է, և դրանք ուղղված էին աշակերտներին ու բոլոր նրանց, ովքեր ցանկություն ունեին տիրապետելու գիտության այդ բնագավառներին:

Բժշկագիտություն

Միջագետքյան աղբյուրներում պահպանված մեծաքանակ բժշկագիտական տեքստերը թույլ են տալիս կարծիք կազմել բժշկագիտության զարգացման մակարդակի վերաբերյալ: Տարբերակվում էին բնական պատճառներից ծագած հիվանդություններ (ցրտահարություն, շոգ և այլն), ինչպես նաև որևէ արարքի համար աստվածային պատժի հետևանք հանդիսացող հիվանդություններ: Նույնիսկ առաջին դեպքում սովորաբար հիվանդությունը համարվում էր պատժի ձև: Շատ հաճախ բժշկագիտական տեքստերում որպես բուժման միջոց առաջարկվում էին ինչպես զուտ գիտական, այնպես էլ մոզական բուժամիջոցներ: Հիմնականում բուժամիջոցները բուսական ծագում ունեին. տեքստերում տրվում է դրանց պատրաստման եղանակը, ինչպես նաև կանխատեսում՝ «հիվանդը կբուժվի» կամ «չի բուժվի»:

Միջագետքի բժիշկները բավական հստակ պատկերացում ունեին մարդու ներքին օրգանների վերաբերյալ, որին նրանք հասել էին կենդանիների ներքին օրգանների հետազոտման արդյունքում: Իրականացվում էին մարմնի տարբեր մասերի վիրահատություններ, սակայն դրանց բարդության աստիճանի մասին տեղեկությունները բավարար չեն: Դատելով աղբյուրներից՝ առավել տարածված էին աչքի զանազան հիվանդությունները, որոնց գոյությունը պայմանավորված էր Միջագետքի շոգ, անապատային կլիմայով:

Մաթեմատիկա և աստղագիտություն

Միջագետքի ժողովուրդների մոտ մաթեմատիկական գիտելիքների զարգացածության աստիճանի վերաբերյալ տեղեկությունները գերազանցապես պահպանվել են հին բաբելոնյան և Սելևկյան դարաշրջանի և որոշ այլ տեքստերում: Դրանք բազմապատկման և բաժանման մաթեմատիկական աղյուսակներ են, երկրաչափական տարբեր մարմինների չափումներ, արմատ և այլ գործառույթներ:

Մաթեմատիկայի հետ անխզելիորեն կապված էր աստղագիտությունը, որի ուսումնասիրության համար միջագետքյան գիտնականները կիրառում էին մաթե-

¹ Միջագետքում գիտական գիտելիքների ծագման և զարգացման մասին տե՛ս Levey M., Chemistry and Chemical Technology in Ancient Mesopotamia, Amsterdam-New York, 1959; Oelsner J., Vorderasiatische Mathematik und Astronomie. – In: Geschichte des wissenschaftlichen Denkens im Altertum (Hrsg. F.Jürss), Berlin, 1982, 50ff.; Wilcke C., Göttliche und menschliche Weisheit im alten Orient. In: Weisheit-Archäologie der literarischen Kommunikation III, München, 1991, 259ff.; Nemet-Nejat K.R., Cuneiform Mathematical Texts as a Reflection of Everyday Life in Mesopotamia, New Haven, 1993; Glassner J.-J., The Use of Knowledge in Ancient Mesopotamia. – In: CANE III-IV, 1995, 1815ff.; Rochberg F., Astronomy and Calendars in Ancient Mesopotamia. – In: CANE III-IV, 1995, 1925ff. և այլն:

մատիկական մեթոդներ: Աստղագիտության վերաբերյալ աղբյուրները անհամեմատ ավելի շատ տեղեկություններ են պարունակում: Հետաքրքրությունը երկնային լուսատուների նկատմամբ վկայված է դեռևս շումերական տեքստերում, որտեղ հիշատակվում են լուսինը, արևը, Վեներա, Սիրիոս մոլորակները և մի շարք համաստեղություններ՝ Մեծ Արջի, Պղեյադներ, իսկ արդեն Նորասորեստանյան շրջանի տեքստերում պահպանվել են աստղերի ամբողջական ցուցակներ:

Աստղագիտության հետ սերտորեն առնչվում են աստղագիտական կանխագուշակումները, որոնք չափազանց մեծ տեղ ունեին Միջագետքի ժողովուրդների առօրյա կյանքում: Երկնային լուսատուների շարժումների, արևի և լուսնի խավարումների ու այլ երևույթների հիման վրա կատարվում էին կյանքի տարբեր ոլորտներին վերաբերող գուշակություններ: Այդպիսի գուշակությունների դերը խիստ աճեց հատկապես Ք. ա. VIII դ.՝ Սարգոն II-ի արքունիքում:

Իրավական միտք

Գրավոր օրենքներ ստեղծելու փորձեր Միջագետքում կատարվեցին դեռևս շումերական դարաշրջանում, սակայն դրանք ընդգրկում էին սահմանափակ խնդիրներ: Օրինակ՝ Լագաշի կառավարիչ Ուրուինիմզիայի կողմից հրատարակվեցին մի շարք օրենքներ (թերևս դրանք ավելի շուտ հրամանագրեր էին, քան օրենքներ բառիս բուն իմաստով):

Հին Միջագետքի իրավական մտքի բարձրակետը Ք. ա. XVIII դ. Բաբելոնիայում Համուրապի կողմից ստեղծված՝ 282 հոդվածներից բաղկացած օրենսգիրքն էր, որը շումերա-աքքադական դարաշրջանի օրենքների տարբեր ժողովածուներին գերազանցում էր ոչ միայն իրավական նորմերի քանակով, այլև ձևակերպման անհամեմատ ավելի բարձր մակարդակով:

Օրենսգրքի տեքստը բաղկացած է երեք բաժնից՝ ներածություն, օրենքներ և վերջաբան: Նախապես օրենսգիրքը բաղկացած է եղել 282 հոդվածներից, սակայն արդեն Էլամում դրանց մի մասը քերվել է, որպեսզի այդ հատվածում տեղադրվի Էլամի արքայի հաղթական արձանագրությունը: Պահպանված 247 հոդվածները վերաբերում են բաբելոնյան հասարակության կյանքի ամենատարբեր բնագավառներին: Անկախ այն հանգամանքից, որ դեռևս պարզ չէ՝ արդյոք Համուրապին հավաքել էր տվել Բաբելոնիայում և ընդհանրապես Միջագետքում գործող բոլոր օրենքները, թե այն ընդամենը հնարավոր նախադեպերի հավաքածու է, այնուամենայնիվ Օրենսգիրքը կարևորագույն դեր կատարեց միջագետքյան հասարակության և ընդհանրապես առաջավորասիական իրավական մտքի զարգացման գործում: Որ Համուրապին մեծապես կարևորում էր Օրենսգիրքը, վկայում է նրա արձանագրություններում «արդարության արքա» մակդիրի առկայությունը:

5. ՃԱՐՏԱՐԱԿԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՆՊԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Միջագետքի ժողովուրդների կերտած մշակութային արժեքների շարքում առավել ակնառուն, թերևս, ճարտարապետությունն ու քանդակագործությունն են, որոնց իրենց ասպացույցը պեղված հազարավոր հուշարձաններն են¹:

Ինչպես հոգևոր և նյութական մշակույթի մյուս բնագավառներում, միջագետքյան ճարտարապետության ակունքները հասնում են մինչև շումերական քաղաքապետությունների դարաշրջան: Արդեն Ուրուկի ճարտարապետներին հայտնի էին ուղղանկյուն կոթողային շինությունները, որը բնորոշում էր կանոնավոր հատակագծով կառուցված պալատական և տաճարային համալիրները: Միջագետքյան ճարտարապետության բնորոշ առանձնահատկությունը բացարձակ համաչափության ընդգծումն էր: Այդպիսի բնութագրական կառույցներից էին *զիկկուրատները* (քառանկյուն տաճարները), որոնցից հայտնի ամենավաղ նմուշը թվագրվում է Ք. ա. 3000 թ. սահմաններում: Հետագայում այդ ավանդույթը պահպանվեց՝ էլ ավելի կատարելագործվելով ինչպես չափերի, այնպես էլ արտաքին և ներքին հարդարանքի հաշվին: Այս տիպի կառույցներից հատկապես աչքի էր ընկնում շուրջ հազար տարի անց Ուրի III հարստության արքաներ Ուր-Նամուի և Շուլգիի եռահարկ զիկկուրատը. այն ուներ շուրջ 20 մ բարձրություն և զբաղեցնում էր 2800 մ² տարածք:

Միջագետքյան ճարտարապետության բարձրակետը, անկասկած, Նոր բաբելոնյան դարաշրջանն է, երբ ստեղծվեցին անգերազանցելի կոթողային ստեղծագործություններ: Դրանց շարքում են Բաբելոն քաղաքի Մարդուկ աստծո տաճարը՝ 91 մ բարձրությամբ («Բաբելոնյան աշտարակ»), Է-տեմեն-անկի անունը կրող վիթխարի տաճարը և այլն:

Վաղ հունական ցեղեր – հոնիացիներ՝ թերակղզու արևմուտքում, Էգեյան ծովափին:

Հայկական ցեղեր – թերակղզու արևելքում:

Խուրրիներ – Կիլիկիայում և թերակղզու տարբեր շրջաններում: Խուրրիները վկայված են Փոքր Ասիայում առնվազն կապադովկիական փուլից, ինչի վկայությունն են որոշ քանակությամբ հատուկ անունները: Ընդհուպ մինչև Ք. ա. XVI դ. խուրրիների դերը Փոքր Ասիայում չնչին էր: Նրանք զանգվածաբար սկսում են ներթափանցել այստեղ Հին թագավորության շրջանում և մանավանդ Ք. ա. XV դ.՝ Խաթթուսասում խուրրիական արքայատոհմի հաստատումից հետո: Թերակղզու տարբեր շրջաններում առկա էին խուրրիական զգալի անկլավներ: Դրա վկայությունն է վերոհիշյալ շրջանների հնավայրերից խուրրիներն մեծաքանակ սեպագիր տեքստերի առկայությունը (Սապինուվա քաղաքը հյուսիսում, Ժաման. Օրթաքոյ), Կից-ցուվատնա-Կիլիկիան:

Խաթթեր — թերակղզու կենտրոնում: Խաթթերը կենտրոնական Փոքր Ասիայի ոչ հնդեվրոպական բնակիչներն էին, որոնք, ըստ ընդունված տեսակետի, նվաճվեցին եկվոր խեթերի կողմից և Հին Խեթական թագավորության կազմավորման պահին արդեն կորցրել էին իրենց լեզուն:

Կասկեր — թերակղզու հյուսիս-արևելքում: Կասկական որոշ բնակչություն ապրում էր Բարձր Հայքի մի մասում: Ըստ մասնագետների՝ կասկերենը որոշակիորեն առնչվում է խաթթերենին կամ արևմտակովկասյան լեզուներին:

Վերոհիշյալ էթնիկական խմբերից բացի՝ այստեղ ապրել են նաև այլք, որոնց պատկանելության վերաբերյալ որևէ հիմնավոր փաստ գոյություն չունի:

Փոքր Ասիայում առաջին պետական կազմավորումները հայտնվեցին դեռևս Ք. ա. III հազ. երկրորդ կեսին՝ թերակղզու կենտրոնական և արևելյան շրջաններում, և որոնք արդեն հաջորդ հազարամյակի սկզբներին վկայված են Աշշուրի առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող սեպագրական աղբյուրներում: Ք. ա. XVII–XVI դդ. մեծաքանակ խեթական և խաթթական մանր պետական կազմավորումների միավորման հետևանքով Փոքր Ասիայում ձևավորվեց Խեթական թագավորությունը, որը գոյատևեց մինչև Ք. ա. XII դ. սկզբները: Խեթական տերության տրոհումից հետո դրա տարածքի մի մասում հանդես եկան մի շարք ավելի մանր պետականություններ՝ լուվիական կամ ուշ խեթական պետությունները, որոնք շարունակեցին խեթական քաղաքակրթության քաղաքական և հոգևոր-մշակութային ավանդույթները՝ ընդհուպ մինչև Ք. ա. VIII դ. վերջերը: Լուվիական պետականության անկման շրջանում Փոքր Ասիայի արևմտյան հատվածում ձևավորվեցին երկու համեմատաբար խոշոր պետություններ՝ Մեծ Փոյուզիան (Սանգարիոս գետի հովտում) և Լիդիան (Փոքր Ասիայի

ծայր արևմուտքում և հարավ-արևմուտքում): Փոյուգիայի ռազմաքաղաքական վերելքը համեմատաբար կարճատև էր, և այն շուտով ծանր հարված ստացավ՝ կիմերների արշավանքի հետևանքով, իսկ որոշ ժամանակ անց ընկավ հարևան Լիդիայի տիրապետության տակ: Վերջինս Ք. ա. VII-VI դդ. միավորել էր Փոքր Ասիայի գերակշիռ մասը՝ վերածվելով ժամանակի առաջատար քաղաքական ուժի: Լիդիան կորցրեց իր դերը Ք. ա. 546 թ.՝ ընկնելով Աքեմենյան արքա Կյուրոս Մեծի տիրապետության տակ:

Տևական և համընդգրկուն են հին Փոքր Ասիայի քաղաքական ու հոգևոր-մշակութային աշխարհի և Հայկական լեռնաշխարհի հնագույն հասարակությունների միջև ընթացած փոխհարաբերությունները: Դրանք ընդգրկում էին Լեռնաշխարհի արևմուտքը, այնտեղ, որտեղ գրավոր աղբյուրներով վկայված են մեր տարածաշրջանի առաջին պետականությունները՝ Հայասան, Ազգին, Իսուվան, Ալզին և այլք: Այդ փոխհարաբերությունները լավագույնս արտացոլվել են հայոց լեզվի բառապաշարում և կրոնա-պաշտամունքային ոլորտում: Հին փոքրասիական լեզվամշակութային շերտի առկայությունը հայկական իրականության մեջ կարող է վկայել խեթա-լուվիական լեզուների կրողների մասնակի հայացման օգտին՝ վաղ հայկական պետությունների կազմավորման և ամրապնդման ընթացքում:

Ուսումնասիրությունները պարզեցին, որ Խեթական պետությունը, կազմավորվելով Փոքր Ասիայի կենտրոնական շրջաններում՝ Հալիս գետի հոսանքի միջին ավազանում, գոյատևել է շուրջ 500 տարի՝ վերածվելով Առաջավոր Ասիայի հզորագույն տերության, որի բուն տարածքը և ազդեցության գոտիները տարածվում էին Էգեյան ծովից մինչև Եփրատ գետի հովիտը և Սև ծովից մինչև Հարավային Սիրիա: Տերության տրոհումից հետո (մոտ. Ք. ա. XIII դ. վերջ - XII դ. սկիզբ) Խաթթի տարածքի մի մասում ձևավորվեցին նրա ժառանգորդ հանդիսացող «ուշ խեթական» կամ լուվիական բազմաթիվ մանր պետություններ, որոնք իրենց հերթին գոյատևեցին ևս շուրջ 500 տարի՝ վերջնականապես նվաճվելով սկզբում Լիդիայի, այնուհետև Աքեմենյան Իրանի կողմից Ք. ա. VII-VI դդ.:

Համապատասխանաբար, հնագույն Փոքր Ասիայի քաղաքական և մշակութային պատմությունը բաղկացած է երկու ժամանակահատվածներից: Առաջինն ընդգրկում է խեթական պետականության սկզբից (ներառյալ ավելի վաղ շրջանի վաղ պետական կազմավորումների փուլը) մինչև Խեթական տերության տրոհումը, իսկ երկրորդը՝ լուվիական պետությունների պատմությունը¹:

Հին Փոքր Ասիայի քաղաքակրթությունների պատմությունը ներկայացվում է երկու փուլերով՝ Խեթական պետություն և հետխեթական դարաշրջանի լուվիական պետություններ:

Պատմության աղբյուրները

Մինչև XX դ. սկզբները Փոքր Ասիա թերակղզու հնագույն քաղաքակրթությունների պատմությունը գիտությանը մնում էր անհայտ: Մասնագետների տեղեկությունները սահմանափակվում էին Փոյուգիայով, Լիդիայով և Լիկիայով, որոնց այս կամ այն կերպ անդրադարձել էին հունահռոմեական պատմիչները և աշխարհագիրները: Ու թեև XIX դ. երկրորդ կեսից՝ սեպագրի վերծանությունից հետո, ասորեստանյան և բաբելոնյան աղբյուրներում մասնագետները բազմիցս հանդիպում էին «Խաթթի երկրի» հիշատակություններին, սակայն դրանք հնարավորություն չէին ընձեռում ո՛չ տեղադրելու այն, ո՛չ էլ դատելու այդ պետության ունեցած դերի մասին:

Խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի պատմության սկզբնաղբյուրները ի հայտ եկան միայն 1906 թ. սկսած, երբ գերմանացի հնագետ Հ. Վինկլերը Մաքրիդի բեյի հետ անսպասելի հայտնագործություն կատարեց թերակղզու կենտրոնում՝ Անկարայից շուրջ 150 կմ արևելք գտնվող Բողազքոյ կոչվող բլրի վրա: Հայտնաբերվեցին շուրջ 10 000 կավե սալիկներ, որոնք տեղում մասնագետներ չունենալու պատճառով ուղարկվեցին Գերմանիա՝ ուսումնասիրելու նպատակով: Սեպագիրը այդ հայտնագործության պահին վաղուց արդեն ընթերցված էր, սակայն գտածոների միայն չնչին մասն էր հասկացվում, այն է՝ մասնագետներին լավ հայտնի աքքադերեն լեզվով գրվածները: Մյուսներն ընթերցվում էին, սակայն դրանց լեզուն անհայտ էր մնում մինչև 1915 թ., երբ չեխ արևելագետ Բ. Հրոզնին պարզեց այդ լեզվի հնդեվրոպական բնույթը: Նորահայտ լեզվին շուտով տրվեց «խեթերեն» անվանումը (գերմաներեն՝ Hethitisch, անգլերեն՝ Hittite, ռուսերեն՝ хеттский և այլն), քանի որ դրանցում բազմիցս հիշատակվում էր «Խաթթի երկիրը»:

Խեթական սեպագիր տեքստերը իրենց բովանդակությամբ տարբեր են (տարբերություններ, ինքնակենսագրական տեքստեր, պայմանագրեր, հրահանգներ պաշտոնյաներին, ծիսապաշտամունքային, գուշակություններ, աղոթքներ, երազներ, առասպելներ): Դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս հանգամանորեն հետազոտել խեթական քաղաքակրթության բոլոր դրսևորումները: Առ այսօր հայտնի տեքստերի ճշող մեծամասնությունը գրված է խեթերենով, սակայն կան զգալի քանակությամբ խորրիերեն, լուվիերեն, աքքադերեն, իսաթերեն և շումերերեն տեքստեր: Արքունիքում և խոշոր քաղաքների ու տաճարների դպրատներում աշխատում էին ժամանակի

¹ Լուվիական պետությունների ամփոփ պատմությունը տես՝ Hawkins J.D., The Neo-Hittite States in Syria and Anatolia. - In: САН III/1, 1982, 372ff.; Косян А.В., Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII-VIII вв. до н.э. (по иероглифическим лувийским источникам), Ереван, 1994; Jasink A.M., Gli stati Neo-Ittiti. Analisi delle fonti scritte e sintesi storica, Pavia, 1995.

առաջատար երկրների լեզուներին տիրապետող գրիչներ, ովքեր հարկ եղած դեպքում կազմում էին տեքստեր այդ լեզուներով:

Գտնված հազարավոր արձանագրությունները ինքնագիր եղանակով կամ գիտական տառադարձմամբ հրատարակվել են մի շարք սերիաներով¹: Այդ աշխատանքն ընթանում է առ այսօր, քանի որ պեղումները շարունակվում են ինչպես Բողազքոյում, այնպես էլ Փոքր Ասիայի այլ հնավայրերում: Հրատարակվել են շուրջ 30 հազար արձանագրություններ և դրանց բեկորներ:

Խեթերեն լեզվի և արձանագրությունների ուսումնասիրմամբ զբաղվել և զբաղվում են այնպիսի հանրաճանաչ մասնագետներ, ինչպիսիք են Հ. Վինկլերը, Է. Ֆոռերը, Յ. Ֆրիդրիխը, Ա. Գյոթցեն, Է. Կավենյակը, Ֆր. Կոռնելիուսը, Հ. Գ. Գյուտերբոկը, Օ. Գրընին, Հ. Օտտենը, Է. Լարոշը, Վ. Իվանովը, Հ. Քլենգելը, Գ. Վիլհելմը և այլք: Խեթական սեպագիր արձանագրությունների և հարևան երկրներից հայտնի համաժամանակյա գրավոր աղբյուրների հիման վրա կատարվել են հիմնարար ուսումնասիրություններ Խեթական տերության քաղաքական, տնտեսական և մշակութային պատմության վերաբերյալ²:

Խեթական պետականության կազմավորմանը նախորդող փուլի՝ քաղաք-պետությունների պատմության վերաբերյալ անգնահատելի սկզբնաղբյուրներ են այսպես կոչված «կապադովկիական աղյուսակները»³: Դրանք Քանեսի (ժամանակակից Բյուլթեփե՝ Կայսերի քաղաքից շուրջ 20 կմ հյուսիս-արևելք) պեղումներից հայտնաբերված աքքադերենով գրված տասնյակ հազարավոր սեպագիր սալիկներն են, որոնք ներկայացնում են Ք. ա. XIX–XVIII դդ. Փոքր Ասիայի տարբեր շրջաններում գոյատևած՝ Աշշուրի առևտրական գաղութների գործունեությունն արտացոլող տեքստեր:

1930–ական թվականներից սկսվեց և հաջորդող տասնամյակներում հիմնականում ավարտվեց հնագույն Փոքր Ասիայի պատմության գրավոր աղբ-

յուրների մեկ այլ խմբի՝ հիերոգլիֆային գրի վերծանությունը⁴: Այս գերազանցապես կոթողային բնույթի հարյուրավոր արձանագրությունները գրված են խեթերենին ազգակից լուվիերեն լեզվով և հիմնականում թվագրվում են Ք. ա. XIV–VIII դդ.: Խեթական պետության տրոհումից հետո հիերոգլիֆային գիրը նրա տարածքում կազմավորված պետականությունների պաշտոնական գիրն էր (տե՛ս «Բաժին 2. Գլուխ 2»):

Խեթական պետության պատմության վերաբերյալ կարևորագույն տեղեկություններ են պարունակում համաժամանակյա եգիպտական, միտանական, ասորեստանյան, բաբելոնյան և ուգարիտյան տեքստերը⁵, որոնց տեղեկությունները առնչվում են այդ երկրների և խեթերի փոխհարաբերություններին:

Խեթական սեպագիր աղբյուրների ուսումնասիրության գործում իրենց ավանդն ունեն նաև հայ մասնագետները⁶: Նրանց ուշադրության կենտրո-

¹ Meriggi P., Die hethitische Hieroglyphenschrift, ZA 39, 1929-30, 165ff.; Meriggi P., Sur le déchiffrement et la langue des Hiéroglyphes „Hittites“, RHA 2, fasc.9, 1932, 1ff.; Meriggi P., Die längsten Bauinschriften in „Hethitischen“ Hieroglyphen, Leipzig, 1934; Meriggi P., Hieroglyphisch-hethitisches Glossar. Zweite, völlig umgearbeitete Auflage, Heidelberg, 1962; Meriggi P., Manuale di eteo geroglifico, P.I: Grammatica (Incunabula graeca, vol.XIII), Roma, 1966; Meriggi P., Manuale di eteo geroglifico, P.I: Testi - 1a serie (Incunabula graeca, vol.XV), Roma, 1967; Meriggi P., Manuale di eteo geroglifico, P.II: Testi - 2a e 3a serie (Incunabula graeca, vol.XV), Roma, 1975; Meriggi P., Manuale di Eteo Geroglifico, Parte II: Tavole - 2a e 3a serie (Incunabula graeca, vol.XV), Roma, 1975; Bossert H.Th., Die phönizisch-hethitischen Bilinguen vom Karatepe, Oriens 1, 1948, 163ff.; Bossert H.Th., Die Entzifferung der B-L Schrift wird fortgesetzt, Or. 29/1, 1960, 110ff.; Gelb I., Hittite Hieroglyphs. vols.I-III, Chicago, 1931-1942; Laroche E., Les hiéroglyphes hittites. Première partie. L'écriture, Paris, 1960; Hawkins J.D., A.Morpurgo-Davies and G.Neumann, Hittite Hieroglyphs and Luwian: New Evidence for the Connection, Göttingen, 1974; Hawkins J.D., Corpus of Hieroglyphic Luwian Inscriptions, Berlin - New York, 2000 և այլն:

² Luckenbill D.D., Ancient Records of Assyria and Babylonia, vol. I (From the Earliest Times to Sargon), Chicago, 1926; Grayson A.K., Assyrian Royal Inscriptions. vol.I, Wiesbaden, 1972; Grayson A.K., Assyrian Royal Inscriptions. vol.II, Wiesbaden, 1976; Grayson A.K., The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods / vol.1: Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC), vol. I, Toronto - Buffalo - London, 1987 և այլն:

³ Մարտիրոսյան Ն., Խարբերի շրջանները՝ հայոց հնագույն օրրանը (Խարբերի և անոր ոսկեղէն դաշտը գրքում, Նյու Յորք, 1957), 87-166; Մարտիրոսյան Ն., Պրատումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ 3, 1961, 82-107; Капанцян Гр., Хайаса-колыбель армян, Ереван, 1948; Jahukyan G.B., The Hayasa Language and its Relation to the Indo-European Languages, ArOr 29, 1961, 353ff.; Джаукян Г.Б., Очерки по истории дописменного периода армянского языка, Ереван, 1967; Ջահուկյան Գ.Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987 և այլն; Хачатрян В.Н., Некоторые вопросы хеттской лексики, ИАН 12, 1963, 91слл.; Хачатрян В.Н., Хеттская надпись KUB XXIX N.7, ИФЖ 2, 1964, 165слл.; Хачатрян В.Н., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971; Խաչատրյան Վ.Ն., Հայաստանը մ. ք. ա. XV-VII դարերում, Երևան, 1998; Բարսեղյան Լ.Ա., Հայասա-Ազգիի ու նրա մի բանի քննակալարի տեղադրման հարցի շուրջը, ՊԲՀ 3, 1963, 307-313; Բարսեղյան Լ.Ա., Հայասա-Ազգիի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր 6, 1963, 101-106; Բարսեղյան Լ.Ա., Հայասա-Ազգիի ռազմա-քաղաքական պատմությունից, ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր 7, 1964, 73-79; Մկրտչյան Ն.Ա., Հայերենի և խեթերենի բառային որոշ ընդհանրություններ, ՊԲՀ 1, 1969, 238-246; Mkrtchyan N.A., Neue hethitisch-armenischen lexikalische Parallelen, AcAn 22/1-4, 1974, 313ff.; Мкртчян Н.А., Редупликация глаголов в хеттском и армянском, ДВ II, 1976, 76слл.; Аракелян А.Б., Назначение сооружения *ARKIU

¹ KBo; KUB; HT; Weidner E., Politische Dokumente aus Kleinasien, Leipzig, 1923; ABoT; IBoT.

² Հրատարակվել են խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի պատմությունն ամփոփող մի շարք հետազոտություններ՝ Cavaignac E., Les Hittites, Paris, 1950; Gurney O.R., The Hittites, Baltimore, 1966; Lloyd S., Early Highland Peoples of Anatolia, London, 1967; Cornelius Fr., Geschichte der Hethiter, Darmstadt, 1973; Macqueen J., Hittites and Their Contemporaries in Asia Minor, London, 1975; Ардзинба В.Г., Хеттское царство и Эгейский мир. - В кн.: ИДВ II, 1988, 118слл.; Гиоргадзе Г.Г., Ранняя Малая Азия и Хеттское царство. - В кн.: ИДМ 1, 1989, 212 слл; Bryce T.R., The Kingdom of the Hittites, Oxford, 1998; Klengel H. et al., Geschichte des Hethitischen Reiches, Leiden-Boston-Köln, 1999 և այլն):

³ Քանեսի տեքստերը հրատարակված են տարբեր մասնագետների կողմից՝ Hrozny B., Inscriptions Cuneiformes du Kultepe, vol.1, Praha, 1952; Garelli P., Tablettes cappadociennes de collections diverses, RA LVIII/2, 1964, 53ff.; Garelli P., Tablettes cappadociennes de collections diverses (suite), RA LIX/1, 1965, 19ff.; Matouš L. und M.Matoušová-Raymová, Kappadokische Keilschrifttafeln mit Siegel, Praha, 1984 և այլն:

նում հիմնականում գտնվել են Հայկական լեռնաշխարհի վերաբերյալ խեթական սեպագրական և հիերոգլիֆային լուվիական աղբյուրների տեղեկությունները, ինչպես նաև խեթա-հայկական լեզվամշակութային փոխառությունները: Առաջինը Բ. Հրոզնու աշակերտ, մասնագետ Ն. Մարտիրոսյանն էր: Հայաստանյան խեթագետների շարքում խոշոր ներդրում ունի Գր. Ղափանցյանը, որի ուսումնասիրությունները հիմք հանդիսացան հայ խեթագիտության զարգացման համար: Նրա «Հայասան – հայերի բնօրրանը» հիմնարար աշխատությունը նվիրված է Հայկական լեռնաշխարհի պատմության հետազոտմանը՝ ըստ խեթական սեպագիր աղբյուրների: Գր. Ղափանցյանի կողմից խեթերենի և հայերենի փոխհարաբերությունների խնդիրը շարունակեց զարգացնել ակադ. Գ. Զահուկյանը իր տարբեր ուսումնասիրություններում:

Լուրջ ավանդ ունեն Վ. Խաչատրյանը, որի ուսումնասիրություններն ընդգրկում են Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի տեղանունները և հայաստանյան վաղ քաղաքական միավորների պատմությունը ըստ խեթական աղբյուրների, ինչպես նաև բուն խեթագիտական խնդիրներ, Ն. Մկրտչյանը, ում հետազոտություններն ընդգրկում են խեթա-հայկական լեզվական փոխհարաբերությունները, և Լ. Բարսեղյանը, ով հետազոտել է Հայկական լեռնաշխարհի կարևոր քաղաքական միավորներից Հայասայի տեղադրության և պատմության խնդիրները: Հայ խեթագետների հաջորդ սերունդը ներկայանում է Ա. Առաքելյանի, Լ. Գոլովկյովայի, Ա. Քոսյանի և Հո. Հարությունյանի ուսումնասիրություններով: Խեթագիտական ավանդույթը Հայաստանում շա-

րունակվում է ի դեմս ներկա հատորի կազմմանը մասնակցող մի շարք երիտասարդ մասնագետների:

Գրավոր աղբյուրների տվյալները լրացվում են Փոքր Ասիայի տարբեր շրջաններում կատարված և այժմ էլ պարբերաբար ընթացող հնագիտական պեղումների նյութերով: Խեթական տասնյակ հնավայրերի հիմնավոր ուսումնասիրությունները հնարավորություն են ընձեռում վերականգնելու խեթական քաղաքակրթության ստեղծած մշակութային արժեքները: Այդպիսի հետազոտություններ են ընթանում առ այսօր խեթերի մայրաքաղաք Խաթթուսասում (Բողազքոյ) և այլ հնավայրերում (Քյուլթեփե, Ալիշարիյոյուք, Ալաջահիյոյուք, Աջեմիյոյուք, Կուշակլը, Մաշատիյոյուք և այլն):

по данным хеттских текстов, ВОНА 9, 1975, 88слл. и այլն; Головлева Л.М., Царство Алзи во второй половине II тыс. до н.э., ДВ III, 1978, 71слл.: Քոսյան Ա.Վ., Ուշխեթական Մեդիդ պետությունը ըստ հիերոգլիֆային լուվիական աղբյուրների), ԼՀԳ 6, 1984, 62-70; Kosyan A.V., The Epithet "Celestial" in Hieroglyphic Luwian Inscriptions, Aof 15/1, 1988, 114ff.; Քոսյան Ա.Վ., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999; Քոսյան Ա.Վ., Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա.XV դարում, ՊԲՀ 3, 2000, 161-174; Քոսյան Ա.Վ., Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄՄԱԵԺ XX, 2001, 233-245; Քոսյան Ա.Վ., Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ 3, 2002, 225-241; Քոսյան Ա.Վ., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004; Քոսյան Ա.Վ., Մուրսիլիս II-ի հայասական արշավանքները (նոր սկզբնաղբյուրներ), ՊԲՀ 2, 2004, 197-204; Քոսյան Ա.Վ., Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՄԱԵԺ XXIII, 2004, 472-484; Քոսյան Ա.Վ., Հայասայի աստվածները (KUB XXVI 39), ՄՄԱԵԺ XXIV, 2005, 444-457; Kosyan A.V., Arnuwandas I in the East, AJNES I, 2006, 72ff.; Kosyan A.V., An Aryan in Isuwa, Iran and the Caucasus 10/1, 1ff. և այլն; Ղազարյան Ռ., Հայասա-Ազգիի տեղադրության հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, Երևան, 2005, 35-39; Ղազարյան Ռ., Կասկա երկիրն ըստ սեպագիր աղբյուրների, ՄՄԱԵԺ XXVI, 2007, 52-64; Ղազարյան Ռ., Հայասա. քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009; Խանգաղյան Մ., Իսուվայի արքան և Թուդիսիյաս IV-ը (KUB XXXI 68), ՄՄԱԵԺ XXIII, 2004, 339-346; Խանգաղյան Մ., Խեթական արտաքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ, ՄՄԱԵԺ XXVI, 2007, 13-24; Հմայակյան Հ., Հայասական ԳՍ.GUR-ը և Արա Գեղեցիկը, ՄՄԱԵԺ XXIII, 2004, 381-394; Հմայակյան Հ., Խեթերեն marnuwa բառը, ՄՄԱԵԺ XXVI, 2007, 45-51.

ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՀԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

Փոքր Ասիայի տարբեր շրջաններ արդեն Ք. ա. III հազ. կեսերից թնակոխեցին վաղ պետականության դարաշրջանը, առաջացան քաղաք-պետություններ, որոնք հիշատակվում են նաև միջագետքյան աղբյուրներում: Դրանցից աչքի էին ընկնում Քանեսը կամ Նեսան, Պուրուսիանդան (ներկայիս Աջեմիոյուքը՝ Կապադովկիայում), Ցալպան (Հալիսի գետաբերանի շրջանում), Կուսսարը և այլն: Շնորհիվ Ք. ա. XX դ. վերջերից դեպի Փոքր Ասիա ուղղված աշտարակյան առևտրական գաղութային համակարգի ընդլայնման՝ սրանք սերտ հարաբերություններ հաստատեցին միջագետքյան աշխարհի հետ: Փոքրասիական քաղաքները կառավարվում էին «իշխանների» կողմից (Աշշուրի տեքստերում՝ ruba'um): Այս պետությունները գերազանցապես մեկը մյուսից անկախ մանր քաղաքական միավորներ են, որոնց միջև մշտական պայքար էր ընթանում գերակայության կամ ուղղակի տարածքների զավթման համար:

Պետականության հետագա զարգացման և տնտեսության նշանակալից աճի վկայությունն է այս դարաշրջանի փոքրասիական հնավայրերի ուսումնասիրությունը: Կոթողային կառույցների առկայությունը, արհեստների և հատկապես մետաղագործության զարգացումը, ամրացված բնակավայրերի ի հայտ գալը վկայում են հարստության կուտակման և ակնհայտ սոցիալական շերտավորման մասին: Այս ամենի արդյունքում նկատվում են ակտիվ առևտրական փոխառնչություններ էգեյան և առաջավորասիական մշակութային աշխարհների հետ:

Ք. ա. XVIII դ. Փոքր Ասիայում տևական պայքարը քաղաք-պետությունների միջև հանգեցրեց Կուսսարի արքայատոհմի հաղթանակին: Կուսսարի արքա Պիթխանան գրավեց Նեսան (= Քանես), իսկ նրա որդի Անիտան՝ Ցալպուվան, Պուրուսիանդան, Սալատիվարան և Խաթթուսասը: Նա իր պետության մայրաքաղաք դարձրեց Նեսան: Ժամանակավորապես Անիտայի պետությունը միավորեց թերակղզու կենտրոնը: Ժամանակագրորեն այս իրադարձությունը համընկնում է Փոքր Ասիայում Աշշուրի առևտրական գաղութների անկմանը, որը հետևանք էր Հյուսիսային Միջագետքում խուրրիական իշխանությունների հզորացման և խուրրիների տեղաշարժերին Հայկական Տավրոսի արևմտյան հատվածի երկայնքով, ինչպես նաև Համմուրապիի օրոք Բաբելոնի վերելքի, որի գերիշխանությունը ստիպված էր ընդունել Աշշուրը:

Անիտայի հաջողություններն անցողիկ էին: Նրա կառավարման ինչ-որ մի պահ Քանեսը նվաճվեց և ավերվեց անհայտ հակառակորդի (թերևս դա նախկինում նվաճված Սալատիվարան էր) կողմից: Դրանից մի քանի տասնամյակ անց Կենտրոնական Փոքր Ասիայում արդեն միանգամայն այլ իրավիճակ էր տիրում:

Նոր թագավորության խեթական արքաներն իրենց ծննդաբանական ծառը հասցնում էին մինչև ոմն Լաբարնա: Եվ չնայած տեքստերում հիշատակություններ կան Լաբարնայից առաջ իշխած արքաների մասին, սակայն մասնագետները հենց նրան են համարում առաջինը: Ենթադրվում է նաև, որ Լաբարնան նույնն է, ինչ նրա հաջորդ Խաթթուսիլիս I-ը: Բանն այն է, որ լաբարնա քառը խեթական արքաների տիտղոսն է, բացի այդ, այս անունը հետագայի խեթական արքաների ցանկում այլևս հանդես չի գալիս: Անիտայի և Հին թագավորության միջև ժառանգականության խնդիրը առայժմ պարզված չէ: Տեքստերից մեկում որպես արքա հիշատակվող ոմն Թուդիսալիյաս կարող էր լինել Անիտայի անմիջական ժառանգորդը, ըստ այդմ՝ Անիտայից հետո Փոքր Ասիայում կարող էր շարունակել գոյատևել նրա պետությունը՝ ընդհուպ մինչև Խաթթուսիլիս I:

Հին թագավորության հզորացումը կապված է Խաթթուսիլիս I-ի կառավարման հետ: Նրա օրոք էր, որ Խեթական պետությունը, նվաճելով Փոքր Ասիայի մեծ մասը, փորձեց ընդարձակվել թերակղզու սահմաններից դուրս: Խաթթուսիլիսը մայրաքաղաքը Կուսսարից տեղափոխեց Խաթթուսաս, որն էլ մնաց որպես այդպիսին մինչև Խեթական պետության տրոհումը: Նոր մայրաքաղաքի պատվին արքան ընդունեց իր անունը, որ նշանակում էր «խաթթուսացի»:

Իր պատերազմների երկրորդ տարում արքան արշավեց Տավրոսից հարավ ընկած հյուսիսսիրիական Յամհադ պետություն (կենտրոնը՝ ժամանակակից Հալեպ քաղաքը) և տարածաշրջանի խուրրիական իշխանություններ՝ Ուրշու, Իգալալիս և այլն: Երբ հաջորդ տարում նա շարժվեց Արցախ՝ Էգեյան ծովեզերքին, երկիրը սկսեցին ասպատակել անդրտավրոսյան շրջանից հարձակված խուրրիները: Նրանք նվաճեցին երկրի զգալի մասը՝ բացի մայրաքաղաքից: Արքային հաջողվեց հետ մղել թշնամիներին, իսկ հաջորդ երկու տարիներին նա զբաղվեց իր սիրիական հակառակորդներով: Պատերազմը մեծ հաջողություն չբերեց խեթերին: Ուրշուի պաշարման ժամանակ արքան ծանր վիրավորվեց և վերադարձից քիչ անց մահացավ:

Խաթթուսիլիսի մահից որոշ ժամանակ առաջ արքայատոհմի մի քանի անդամներ դավադրություն սկսեցին գահաժառանգման հարցում: Հնարավոր հետևանքները կանխելու նպատակով արքան որդեգրեց և իրեն հաջորդ հայտարարեց թոռանը՝ պատանի Մուրսիլիսին:

Մուրսիլիս I-ը շարունակեց պապի ակտիվ արտաքին քաղաքականությունը: Իր կառավարման հենց սկզբում նա անցավ Տավրոսի լեռները և պարտության մատնեց Յամհադին: Այնուհետև, հավանաբար միջին Եփրատի շրջանում գտնվող կասսիտական Խանա իշխանության հետ դաշնակցած, Մուրսիլիսն արշավեց դեպի Բաբելոնիա: Արքան նվաճեց քաղաքը՝ վերջ տալով այստեղ իշխող ամորեական արքայատոհմի իշխանությանը և որպես ռազմավար գերեվարեց Բաբելոնի գերագույն

աստված Մարդուկի արձանը: Այդ արշավանքից հետո Բաբելոնիայում իշխանության եկան կասսիտները:

Վերադարձից հետո Մուրսիլիսը զոհ գնաց իր քրոջ ամուսին Խանտիլիսի կազմակերպած դավադրությանը: Այս պահից սկսած՝ Խեթական պետությունը հայտնվում է տասնամյակներ տևած անկայուն ներքաղաքական իրավիճակում, որի գլխավոր առանձնահատկությունը գահաժառանգման հստակ համակարգի բացակայության բացասական հետևանքներն էին: Միմյանց հաջորդած արքաների մեծ մասը իշխանության էր գալիս նախորդի սպանության հետևանքով: Արքայատոհմի ներսում, նաև տոհմային ազնվականության շարքերում մշտական պայքար էր գնում հանուն իշխանության:

Խանտիլիս I-ը ստիպված էր ծանր պատերազմներ մղել երկու ձակատով՝ սիրիական խուրրիների և հյուսիսի կասկերի դեմ: Արշավանքը դեպի Սիրիա՝ ընդդեմ Կարգամիսի, հաջողություն չբերեց, և նա հետ դարձավ: Հավանաբար այս արշավանքի նախաձեռնումը պայմանավորված էր հենց խուրրիների առաջխաղացմամբ, քանի որ այս շրջանում խուրրիները նվաճեցին երկրի մեծ մասը՝ գերեվարելով խեթական թագուհուն իր որդիների հետ միասին: Հյուսիսում կասկերը նվաճեցին և ավերեցին խեթերի կարևորագույն պաշտամունքային կենտրոններից մեկը՝ Ներիկը (Հալիսի ստորին հոսանքներում՝ մերձսևծովյան գոտում), որը խեթերը հետագայում այդպես էլ չկարողացան վերադարձնել:

Իրադրությունը չփոխվեց Ամմունասի օրոք: Նրա կառավարումն անցավ շատ լարված իրավիճակում: Հաջողությունները զուգորդվում էին անհաջողություններով: Աղբյուրների հավաստմամբ՝ Խաթթին զրկվեց Ադանիայից (ներկայիս Ադանա) և Արցավայից: Ամմունասի օրոք Խեթական պետության քաղաքական հետաքրքրությունների հարավարևելյան հատվածում արդեն ստեղծվել էր անբարենպաստ իրավիճակ, որի պատճառը միտանական խուրրիների աննախադեպ ակտիվությունն էր: Միտանների արքա Պարատտարնան, եթե ոչ նրա նախորդը, կարողացել էր հիմնավորվել Կիցցուվատնայում (Կիլիկիա) և այնտեղ ստեղծել քույր-թագավորություն: Այսուհետև խեթերին Սիրիայից բաժանող Տավրոսի լեռնաշղթան գտնվում էր Միտանների և նրա դաշնակից Կիցցուվատնայի հսկողության տակ: Տեստեսական առումով խեթերի համար կենսական նշանակություն ունեցող սիրիա-միջագետքյան տարածաշրջանի դռների փակվելը, անկասկած, բացասաբար պիտի անդրադառնար Խաթթիի հետագա վիճակի վրա:

Տելեպինուսի կառավարման նախօրեին Խաթթուսիլիս I-ի և Մուրսիլիս I-ի արշավանքների շնորհիվ ստեղծված ընդարձակ պետությունը գերազանցապես սահմանափակվում էր Խաթթիի բնօրրանով՝ մայրաքաղաքի շրջակայքով և որոշ այլ տարածքներով: Հարավ-արևելքից խուրրիները, հյուսիսից և հյուսիս-արևելքից կասկական ցեղերը, իսկ արևմուտքից Ասսուվա անվանումը կրող մանր պետականությունների միությունը պարբերաբար ասպատակում և ավերում էին երկիրը: Առանձին պահերի Խեթական պետությունը վերածվում էր երկրորդական քաղաքական ուժի: Տելեպինուսի անվան հետ են կապված Խեթական պետության պատմու-

թյան երկու կարևոր իրադարձություններ, որոնք զգալիորեն կայունացրին իրավիճակը և հիմք դրեցին նրա հետագա վերելքին:

Առաջինը գահաժառանգման նոր կարգն էր.

«Այսուհետև Խաթթուսասում ոչ ոք չպիտի չարիք պատճառի արքայական տոհմի որդուն և նրան խոցի դաշույնով: Թող արքա դառնա միայն արքայի որդիներից առաջինը: Եթե արքայի որդիներից առաջինը չկա, ապա թող արքա դառնա նա, ով երկրորդն է: Իսկ եթե արքայի որդիներից ոչ մեկը չկա, ապա թող արքա դառնա նա, ով կնության կվերցնի (արքայի) առաջին դստերը»:

Տելեպինուսի օրենքը իրավամբ արքայական իշխանության հաղթանակն էր տոհմային ավագանու և, ըստ էության, տոհմատիրական կարգերի մնացուկների նկատմամբ: Այսուհետև արքան ինքը պետք է որոշեր և ավագների խորհրդի ձևական հաստատմանը ներկայացներ գահի ժառանգորդին, այլ ոչ թե այդ հարցը դներ քննարկման: Ընդ որում՝ կարգը սահմանում էր արքայական իշխանության ուղղակի ժառանգում արական գծով՝ ի դեմս գործող արքայի որդիների: Չնայած հետագայում էլ արքաների դեմ դավադրությունները շարունակվում էին, սակայն խոշոր ազնվականության ձեռքից նրանց ունեցած արտոնությունը վերցվեց:

Տելեպինուսի օրոք էր, որ սկսվեց գրավոր օրենքների կազմումը: Թերևս միասնական օրենսգիրք, ինչպես Բաբելոնում Համմուրապիի օրոք, չի եղել, սակայն օրենքների հավաքման և գրառման գործընթացն արդեն իսկ վկայում է Տելեպինուսի կողմից խեթական հասարակության կյանքում կայունացման սաղմեր ներմուծելու քաղաքականության մասին:

Հաջող էր Տելեպինուսի գործունեությունը նաև արտաքին քաղաքականության ասպարեզում: Նա հաջողությամբ ավարտեց փոքրասիական մի շարք տարածքների վերանվաճումը (Լավացանտիյա, Խուրմա, Սուկցիա, Պարսուխանդա = Պուրուսխանդա) և պայմանագիր կնքեց Կիցցուվատնայի արքա Իսպուտախսուի հետ: Այսուհետև արքան մուտք գործեց Հյուսիսային Սիրիա՝ հասնելով մինչև Խասսուվա:

2. ՄԻՋԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Տելեպինուսի հաջորդների օրոք արտաքին քաղաքականության ասպարեզում խեթերը կրկին բախվեցին լուրջ խնդիրների հետ: Այս անգամ էլ նրանց հիմնական հակառակորդը արդեն հզորացած Միտաննին էր, որից կախյալ քաղաքական կազմավորումները եզերում էին Տավրոսի շրջանով անցնող Խեթական պետության հարավարևելյան սահմանները: Գրավոր աղբյուրները հնարավորություն են ընձեռում միայն խիստ մոտավոր պատկերացում կազմելու Բ. ա. XV դ. առաջին կեսին խեթերի և գլխավորապես Կիցցուվատնայի միջև փոխհարաբերությունների բնույթի վերաբերյալ:

Իրավիճակը Խեթական պետության համար նպաստավոր դարձավ Եգիպտոսի փարավոն Թութոս III-ի միտաննական արշավանքների շրջանում, երբ եգիպտացիները պարտության մատնեցին Միտաննիին և անցան Եփրատի ձախափնյակը: Խեթական արքա Յիդանտաս II-ը (կամ նրան հաջորդած Խուցցիյաս II-ը) կարողացավ որոշակի ազդեցության հասնել Միտաննիի դաշնակից Կիցցուվատնայի նկատմամբ: Կիցցուվատնայի արքա Պիլիյայի հետ կնքված պայմանագրից ակնհայտ է խեթական արքայի առավել նպաստավոր վիճակը:

Յիդանտասի հաջորդի՝ Խուցցիյասի կառավարման ընդհատվեց վերջինիս սպանությամբ, որի կազմակերպիչը արքայի թիկնազորի հրամանատար Մուվատալլիսն էր, ով կառավարեց որպես Մուվատալլիս I: Սակայն որոշ ժամանակ անց գահը բռնազավթողի դեմ սկսվեց ապստամբություն. Մուվատալլիսն ու նրա կողմնակիցները սպանվեցին, և արքա հռչակվեց օրինական արքայատոհմի ներկայացուցիչ Թուդխալիյաս II-ը, որի գահակալման հետ է կապված Խեթական պետության և մշակույթի պատմության մի կարևոր իրադարձություն:

Դեռևս Միջին թագավորության շրջանում Տավրոսի գոտուց դեպի կենտրոնական Փոքր Ասիա սկսվել էր խուրրիների աստիճանական ներթափանցումը (գլխավորապես խաղաղ ճանապարհով), որի արդյունքում այստեղ ձևավորվել էին խուրրիական անկլավներ: Խեթական ծառայության մեջ գտնվող խուրրիական ազնվականությունը շուտով հասավ զգալի դիրքի և ազդեցության: Ինչ-որ մի պահ, խեթական արքայատոհմի հետ ինտեգրման շնորհիվ, ի դեմս Թուդխալիյասի, խուրրիական արքայատոհմը վերցրեց իշխանությունը Խաթթիում և պահեց այն ընդհուպ մինչև Խեթական պետության տրոհումը: Այս առումով հատկանշական է, որ այսուհետև խեթական արքաները, նախապես կրելով խուրրիական անուններ, գահ բարձրանալիս ստանում էին խեթական դինաստիական անուններ: Խուրրիական էին նաև թագուհիների անունները: Խուրրիների ներթափանցումը շարունակվեց նաև հետագայում, որի վկայությունը խեթական պաշտոնական դիցարանում մեծաքանակ խուրրիական աստվածների առկայությունն էր (տե՛ս ստորև՝ «Խեթական մշակույթը» բաժնում):

Թուդխալիյասը իր կառավարման առաջին վեց տարիների ընթացքում նվաճեց գրեթե ողջ Փոքր Ասիա թերակղզին: Առաջին արշավանքն ուղղված էր դեպի արևմուտք: Այստեղ նա հաղթեց Աստուվա անվանումը կրող 22 երկրներից բաղկացած միությանը: Արշավանքն ավարտվեց Տարուխսայի և Վիլուսայի նվաճմամբ: Այնուհետև արքան հպատակեցրեց հյուսիսի կասկական ցեղերին, հետո անցնելով Եփրատը՝ մտավ և գրավեց Իսուվան (հետագայի հայկ. Ծոփք): Վերջում Թուդխալիյասը հաղթեց Միտաննիին, հասավ մինչև նրա մայրաքաղաք Վաշշուկաննի և նվաճեց Կիցցուվատնան: Վերջինիս հետ կնքվեց պայմանագիր, որով այս երկիրը դարձավ խեթերից կախյալ թագավորություն: Խեթերի գերիշխանությունը տարածվում էր նույնիսկ Կիպրոս կղզու վրա: Փաստորեն Թուդխալիյասի պետությունը կրկնում էր դեռևս Բ. ա. XVI դ. Խաթթուսիյիս I-ի տերությանը, սակայն էլ ավելի մեծ ներուժի պայմաններում: Խեթերի հաջողությանը, անկասկած, նպաստեց Միտաննիի թուլացումը Եգիպտոսի փարավոն Թութոս III-ի արշավանքների հետևանքով:

Թուդխալիյասին հաջորդեց նրա որդեգիր Առնուվանդաս I-ը, որի ուշադրությունը հիմնականում ուղղված էր նախորդի նվաճումների պահպանմանը: Նա ստիպված էր պայքարել երեք ուղղություններով: Արևմտյան Փոքր Ասիայում մեծ ակտիվություն էր դրսևորում և փաստորեն խեթերի վերահսկողությունից դուրս էր եկել Թուդխալիյասի դրածո՝ Յիպասա երկրի կառավարիչ Մադուվատտասը: Հյուսիսի կասկերը սկսել էին ասպատակել խեթահպատակ շրջանները՝ ավերելով նույնիսկ մայրաքաղաքին հարող խեթական բնակավայրերը: Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Վերին Եփրատի շրջանում, բռնկվել էր ապստամբություն Պախաուվա երկրում (այս մասին տե՛ս ստորև՝ «Խեթական տերությունը և Հայկական լեռնաշխարհը» բաժնում): Առնուվանդասը ուժերի գերագույն լարումով կարողացավ հասնել իրավիճակի վերահսկմանը:

Դեռևս Առնուվանդասի կառավարման շրջանում նախկին հակառակորդներ Միտաննիի և Եգիպտոսի հարաբերությունները սկսեցին բարելավվել: Միտաննիի արքա Արտադամայի և Թութոս IV-ի միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ, որոնք ամրապնդվեցին դինաստիական ամուսնությամբ: Դրան հաջորդած պայմանագրի համաձայն՝ Եգիպտոսը գերիշխանություն ստացավ Քադեշի, Ամուրրուի (Փյունիկիա) և Ուգարիտի նկատմամբ, այսինքն՝ Սիրիայի հյուսիսում Խաթթին այսուհետև ստիպված էր հաշվի նստել, Միտաննիից բացի, նաև Եգիպտոսի շահերի հետ:

Սակայն, անդրտավրոսյան ճակատում ձևավորված աննպաստ իրավիճակից զատ, բուն Փոքր Ասիայում Խեթական պետությունը առավել բարդ խնդրի առջև էր կանգնած: Դեռևս Առնուվանդասի օրոք Տերության գերիշխանության տակ գտնվող ծայրամասային երկրների անջատողական միտումները Թուդխալիյաս III-ի կառավարման սկզբնական փուլում վերաճեցին խոշոր աղետի: Տարեցտարի աճող սպառնալիքը հանգեցրեց Խաթթիի տարածքի էական կրճատման: Բ. ա. XIII դ. Խաթթուսիյիս III-ի կողմից կազմված տեքստում նկարագրվում է Առնուվանդասից հետո Խեթական տերությունում տիրող ծայրաստիճան ծանր վիճակը:

«(6) Նախկինում Խաթթի երկրները թշնամիներից նվաճվեցին, (7) Կասկական թշնամին եկավ Խաթթի երկրները նվաճեց և իրեն Նենասաս քաղաքը սահման (8) դարձրեց: Ստորին երկր[ի] կողմից Արցալայի թշնամին եկավ և նա էլ (9) Խաթթի երկրները նվաճեց և [Տ]ուվանուվան ու Ուդան իրեն սահման դարձրեց: (10) Հեովից Արալաննաս[ի] թշնամին եկավ և ողջ Գասաիյա երկիրը նվաճեց: (11) Հեովից Ազգիի թշնամին եկավ և ողջ Վերին [երկրն]–երը նվաճեց (12) և իրեն Սամուխա քաղաքը սահման դարձրեց [g]: Իսկ Իսուվայի [թշնամին] եկավ [և] Թեգարանա [երկիրը] նվաճեց: (13) Հեովից Արմատուսայի թշնամին [եկավ] և նա էլ Խաթթի երկրները [ը] նվաճեց (14) և իրեն Կիցցուվատնա քաղաքը [սահման դարձրեց: [Խաթթ]թուսաս քաղաքն էլ (15) հրդեհվեց: Եվ [միայն] [. . .] hešti– տունը փրկվեց [g]: (16) Երբ հորս հայրը՝ Ս[ուպպիլուլիոսն]սար, մեծ արքա]ն, հերոսը, հայտնվեց (17) [և] թագավորության գահին բազմեց, նա թշնամիներին Խաթթի երկրներից (18) [վտարեց]:»:

Խեթական տերության թուլացումը պայմանավորված էր ոչ այնքան նվաճված

երկրների հարձակումներով, որքան ներքին հանգամանքներով: Ք. ա. XIV դ. կազմված՝ Խաթթիի աստվածներին ուղղված Մուրսիլիս II-ի աղոթքում հիշատակվում է մեծաքանակ բնակավայրերի ամայացումը՝ արքայի պապի (Թուդխալիյաս III) օրոք երկրում մոլեգնող սովի և ժանտախտի համաճարակի պատճառով: Փաստորեն դեռևս Թուդխալիյասի շրջանում Խաթթիում առկա էին լուրջ տնտեսական խնդիրներ, որոնց հետագա խորացումը հանգեցրեց ճգնաժամի: Մի խնդիր, որի հետ Խեթական տերությունը պիտի պարբերաբար բախվեր նաև հետագայում, և որը ի վերջո դարձավ նրա վերջնական տրոհման գլխավոր պատճառներից մեկը:

Թշնամական հարձակումների և մանավանդ մայրաքաղաքի հիմնավոր ավերման հետևանքով Թուդխալիյասը ստիպված էր ժամանակավորապես մայրաքաղաքը տեղափոխել Հալիսի ափին գտնվող կրոնական խոշոր կենտրոն Սամուխա քաղաքը (գետի վերին հոսանքների շրջանում):

Այսպիսով՝ Առնուվանդաս I-ից հետո Խեթական տերությունը փաստացի տրոհվեց, ինչպես նվաճված երկրների ապստամբությունների և խեթական տարածքների ասպատակությունների, այնպես էլ ներքաղաքական անկայունության հետևանքով: Տերության վերականգնման գործընթացը սկսեց նույն Թուդխալիյասը, և ավարտեց նրա որդին՝ Սուպալիուլիումասը, Ք. ա. XIV դ. կեսերին: Հենց այս վերջինիս կառավարումով էլ սկսվում է Խաթթիի պատմության նոր փուլը՝ Նոր թագավորությունը:

3. ՆՈՐ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ. ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Նախկին տերության արևելյան շրջաններից Թուդխալիյաս III-ը սկսեց Խեթական պետության տարածքի վերականգնման գործընթացը, որը հանգամանորեն շարադրված է Թուդխալիյասի թոռան՝ Մուրսիլիս II-ի կողմից կազմված «Սուպալիուլիումասի գործունեությունը» անվանումը կրող ծավալուն տեքստում: Ըստ դրա՝ Սամուխայից խեթերը պարբերաբար արշավանքներ էին կազմակերպում կասկերի, հայասցիների, իսուվացիների և Արևմտյան Փոքր Ասիայի երկրների դեմ: Թուդխալիյասի պատերազմներում հորը ակտիվորեն օգնում էր նրա գահակից և հաջորդ Սուպալիուլիումաս I-ը (Ք. ա. 1345–1322): Արդեն վերջինիս միանձնյա կառավարման օրոք խեթերը վերանվաճեցին նախկին փոքրասիական տիրույթները, որին հաջորդեց նրա միտաննական արշավանքների շարքը:

Միտաննական արշավանքին նախորդեց հայասական խնդրի կարգավորումը: Սուպալիուլիումասը ազգեցի ազնվական Խուկկանային նշանակեց Հայասայի արքա՝ նրա հետ կնքելով պայմանագիր (տե՛ս «Խեթական տերությունը և Հայկական լեռնաշխարհը» բաժինը): Այնուհետև, նվաճելով միտաննամետ Իսուվան, նա արագ երթով մտավ Ալզի (հայկ. Աղձնիք), որտեղից էլ՝ Հյուսիսային Սիրիա: Հետագա ռազմական գործողությունների արդյունքում խեթերը նվաճեցին Միտաննին, իսկ որոշ ժամանակ անց Սիրիայի հյուսիսում ստեղծեցին քույր-թագավորություն՝

Կարգամիս մայրաքաղաքով: Կարգամիսի առաջին արքա նշանակվեց Սուպալիուլիումասի որդիներից Պիյասսիլին: Կարգամիսի թագավորությանը վերապահված էին մեծ լիազորություններ Խաթթիի հյուսիսսիրիական տիրույթների, ինչպես նաև Խաթթիից կախյալ հարևան քաղաքական միավորների նկատմամբ: Պիյասսիլիի իշխանությունը ժառանգական էր և փոխանցվում էր հորից որդի:

Այնուհետև արքան զբաղվեց Միտաննիով: Տուշրաթթայի խեթամետ որդի Շատտիվազան նշանակվեց Միտաննիի արքա: Վերջինիս հետ կնքվեց պայմանագիր, որով Միտաննին վերածվեց Խաթթիի կրտսեր դաշնակցի՝ կախյալ կարգավիճակով: Ի դեմս Կարգամիսի և կախյալ Միտաննիի՝ խեթերը լուծեցին երկու կարևոր խնդիր: Առաջինը կայուն ներկայությունն էր տնտեսական մեծ նշանակություն ունեցող Սիրիայում, երկրորդը՝ գլխավոր հակառակորդ Եգիպտոսի դեմ ամուր արգելապատնեշի ստեղծումը: Այսուհետև Կարգամիսը և Միտաննին պետք է համատեղ իրականացնեին եգիպտական (իսկ քիչ ավելի ուշ՝ նաև ասորեստանյան) ճակատի վերահսկողությունը:

Սիրիայում գտնվելու ընթացքում սրվեցին Սուպալիուլիումասի հարաբերությունները Եգիպտոսի հետ՝ կապված Թուֆանհամոնի այրի Անխեսենամոնի միջադեպի հետ: Ըստ խեթական աղբյուրի՝ վերջինս խեթական արքային խնդրել էր իր որդիներից մեկին ուղարկել Եգիպտոս՝ որպես իրեն ամուսին և փարավոն: Եգիպտոսի սահմանների մոտ Սուպալիուլիումասի չորրորդ որդին՝ Ցաննանցան, դավադրաբար սպանվեց, թերևս, հետագայում փարավոն դարձած Էյեյի դրոմամբ: Ի պատասխան դրա՝ խեթական զորքը թագաժառանգ Առնուվանդասի գլխավորությամբ մտավ Եգիպտոսի կողմից վերահսկվող Հարավային Սիրիա, խոշոր ավերածություններ իրականացրեց և հազարավոր ռազմագերիներ տարավ Փոքր Ասիա:

Թերևս այս շրջանում Փոքր Ասիայում սկսված ժանտախտի նոր համաճարակն էր պատճառը, որ խեթերը հնարավորություն չունեցան ավարտին հասցնելու եգիպտական զործերը: Շուտով Սուպալիուլիումասը, իսկ քիչ անց նրան փոխարինած Առնուվանդաս II-ը գոհ գնացին համաճարակին: Վերջինիս փոխարինեց Սուպալիուլիումասի կրտսեր որդին՝ Մուրսիլիս II-ը:

Մուրսիլիսը գահ բարձրացավ խիստ աննպաստ իրավիճակում: Ըստ նրա «Տարեգրությունների», օգտվելով հոր և եղբոր մահից, բոլոր նվաճված երկրները ապստամբել և դուրս էին եկել խեթերի ենթակայությունից:

Առաջինը Արևմտյան Փոքր Ասիայում գտնվող Արցավա անվամբ հանդես եկող երկրների դաշնությունն էր: Արցավայի առավել ակնառու քաղաքական միավորի՝ Միլլավանդայի (Միլեթ՝ Էգեյան ծովափին) արքա Ուխխացիտին, որը մինչ այդ խեթերի ենթակայության տակ էր գտնվում, դաշինք էր կնքել Ախխիյալայի հետ: Մուրսիլիսն անձամբ առաջնորդեց բանակը և հաջողությամբ ավարտեց արշավանքը. Միլլավանդայի արքան հեռացավ կղզիներից մեկը: Հաջորդ տարում արքան ավարտեց արևմուտքի հպատակեցումը: Այս պահից ի վեր Արցավան այլևս չի հիշատակվում խեթական աղբյուրներում, որ նշանակում էր սույն դաշնության վերացում:

Ինչ վերաբերում է անդրտավրոսյան տարածաշրջանին, ապա Հյուսիսային Սիրիայում

Կարգամիսի արքա Պիյասսիին՝ Մուրսիլիսի եղբայրը, առայժմ հաջողությամբ գսպում էր խեթահպատակ Միտաննիի նկատմամբ Ասորեստանի նկրտումները:

Հատկապես լարված էր իրավիճակը արևելքում, որտեղ Հայասան և նրա հարևան կասկական Տիրիյա երկիրը լուրջ սպառնալիք էին ստեղծել խեթերի տիրույթների նկատմամբ (տե՛ս «Խեթական տերությունը և Հայկական լեռնաշխարհը» բաժնում): Մուրսիլիսին հաջողվեց երեք տարում լուծել նաև այս խնդիրը: Հայասայի արքա Ան-նիյայի հետ կնքվեց պայմանագիր:

Արտաքին քաղաքականության ասպարեզում ռազմական հաջողությունները Մուրսիլիսը զուգակցում էր վերանվաճված երկրների հետ սերտ դիվանագիտական հարաբերությունների հաստատումով, մի քաղաքականություն, որ սկսվել էր դեռևս Սուպպիլուլիումաս I-ի օրոք: Հաճախ այդպիսի պայմանագրերն ամրապնդվում էին դինաստիական ամուսնություններով՝ տեղական արքաների և խեթական արքայադուստրների միջև: Այդպիսի պայմանագրեր կնքվեցին Ամուրրուի, Ուգարիտի, Խապալլայի, Միրա-Կուվալիյայի, Սեխա գետի երկրի հետ (վերջին երեքը՝ արևմտյան Փոքր Ասիայում):

Մուրսիլիսը փորձում էր լուծել նաև պատերազմների և այլ պատճառների հետևանքով Տերության սահմանամերձ շրջանների բնակաթափ եղած բնակավայրերի վերաբնակեցման խնդիրը: Այդ նպատակով տասնյակ հազարավոր մարդիկ նվաճված երկրներից, այդ թվում՝ Խաթթիի տարբեր շրջաններից, վերաբնակեցվեցին այստեղ: Վերաբնակիչները տեղաբաշխվում էին արքայական և ազնվականական տնտեսություններում, ռազմավարական նշանակություն ունեցող սահմանամերձ և տաճարապատկան բնակավայրերում:

Մուրսիլիսի օրոք, հակառակ արտաքին քաղաքականության ասպարեզում ունեցած ակնառու հաջողությունների, լուրջ խնդիրներ կային՝ կապված ժանտախտի համաճարակի նոր բռնկման և արքայատոհմի ներսում լարված իրավիճակի հետ: Երկրորդ դեպքում պատճառը արքայի և Սուպպիլուլիումաս I-ի վերջին կնոջ՝ բաբելոնյան արքայադուստր Ամմինայայի միջև բախումն էր: Այնուամենայնիվ, այս շրջանում Խեթական տերությունը կրկին լիովին վերականգնվեց և, ինչպես հոր օրոք, Առաջավոր Ասիայի հզորագույն ռազմաքաղաքական ուժն էր:

Մուրսիլիսի որդի Մուվատալլիս II-ը գահ բարձրացավ համեմատաբար կայուն իրավիճակում: Բուն փոքրասիական թատերաբեմում լուրջ խնդիրներ չէին սպասվում: Արևմուտքում ստեղծվել էր Խաթթիի հետ դաշնակցային պարտավորություններով կապված երկրների համակարգ, իսկ հյուսիսի կասկերը դադարեցրել էին ասպատակությունները: Այլ էր իրավիճակը սիրիական տիրույթներում: XIX դինաստիայի հիմնադիր Սեթի I-ից սկսված՝ Եգիպտոսի ակտիվությունը ակնհայտ նպատակ էր հետապնդում վերականգնելու նախորդ տասնամյակներում այստեղ կորցրած գերիշխանությունը: Փարավոնը հարձակումներ ձեռնարկեց խեթերից կախյալ Ամուրրուի և Քաղեշի դեմ, որը նշանակում էր բացահայտ մարտահրավեր: Եգիպտոսի դեմ հեռանկարում ակնկալվող բախումը պահանջում էր համապատասխան քայլեր:

Արևմուտքում դիրքերն ամրապնդելու նպատակով արքան վերականգնեց գերիշխանությունը Վիլուսայի (= Տրոադա) նկատմամբ, որը ժամանակավորապես նվաճվել էր տարածաշրջանում գործող ումն Պիյամարադուսի կողմից: Վերջինս վտարվեց Վիլուսայից և ապաստան գտավ Ախիյավայում (միկենյան Հունաստանում, թերևս հենց Միկենքում), իսկ Վիլուսայի արքա Ալաքսանդուսի հետ պայմանագիր կնքվեց:

Եգիպտոսի դեմ պատերազմի նախօրեին Մուվատալլիսը մայրաքաղաքը տեղափոխեց հարավային Փոքր Ասիայում գտնվող Թարխունտասսա քաղաքը (Կոնյայի հարթավայրում): Արքան նպատակ ուներ նստավայր դարձնելու Սիրիային շատ ավելի մոտ գտնվող քաղաքը, որտեղից հեշտ էր դեկավարել նպաստավոր պատերազմը Եգիպտոսի դեմ: Ոչ պակաս կարևոր էր Խաթթուսասի անհարմար դիրքը հյուսիսի կասկերի մշտական ասպատակությունների պարագայում:

Խաթթուսասում կառավարիչ նշանակվեց Միտաննամուվան, իսկ կասկերին հարող ողջ սահմանամերձ գոտին, այդ թվում՝ Վերին երկիրը, հանձնվեց արքայի կրտսեր եղբայր Խաթթուսիլիսին: Խաթթուսիլիսին տրված տարածքում կազմակերպվեց ռազմականացված գոտի: Այն արևմուտքից արևելք ձգվում էր մոտավորապես ժամանակակից Մերզիֆոնից մինչև Սեբաստիա՝ ընդգրկելով կասկական ցեղերին հարող մի շարք առանցքային շրջաններ (Իսխուպիտտա, Մարիստա, Կատապա, Խանխանա, Դուրմիտտա և այլն):

Ք. ա. 1274 թ. Սիրիայի Քաղեշ քաղաքի մոտ տեղի ունեցավ խոշոր ճակատամարտ Մուվատալլիսի և Ռամզես II-ի միջև, որին մասնակցում էին մեծաքանակ օժանդակ ջոկատներ Եգիպտոսին և Խաթթիին ենթակա երկրներից: Մուվատալլիսի բանակում ներկա էին նաև ջոկատներ Միտաննիից, Արցավայից, Լուկկայից (Լիկիա), Վիլուսայից, Կիցցուվատնայից, Կարգամիսից, Ուգարիտից և այլ երկրներից: Օգտվելով եգիպտացիների անզգուշությունից և կիրառելով անսպասելի գրոհի տակտիկա՝ Մուվատալլիսը հասավ հաջողության: Չնայած ճակատամարտն ավարտվեց առանց կողմերից որևէ մեկի շոշափելի առավելության, սակայն արդյունքում խեթական գերիշխանությունը Հյուսիսային և Կենտրոնական Սիրիայի նկատմամբ մնաց անսասան: Ավելին՝ ճակատամարտից հետո Ամուրրուն կրկին անցավ խեթերի գերիշխանության տակ:

Մուվատալլիսին հաջորդեց նրա որդին՝ Ուրխի-Թեշուրը (գահակալական անունը՝ Մուրսիլիս III), որի կառավարման յոթ տարիներն անցան հորեղբոր՝ Խաթթուսիլիսի հետ հակամարտության պայմաններում: Ուրխի-Թեշուրը փորձեց վերացնել Տերության փաստացի երկատումը՝ կրկին մայրաքաղաք դարձնելով Խաթթուսաքը: Որոշ ժամանակ անց սկսվեց ակնհայտ առձակատում, որն ավարտվեց արքայի գահազրկմամբ, և Ուրխի-Թեշուրը վտարվեց սկզբում Արևմտյան Փոքր Ասիա, այնուհետև հեռացավ Եգիպտոս:

Խաթթուսիլիսը եռանդուն, քաղաքական գործչին հատուկ ունակություններով օժտված անձնավորություն էր, որի կառավարման շրջանում Խեթական տերությունը հասավ ակնհայտ հաջողությունների ինչպես արտաքին, այնպես էլ ներքաղաքական կյանքում:

Արևմտյան Փոքր Ասիայում խաթարուսիլիսը վերջապես կարողացավ լուծել Ախիսի-յավայի դրոմամբ այստեղ տարիներ շարունակ իրավիճակը սրող Պիյամարադուսի խնդիրը, որով միաժամանակ արևմուտքը կրկին անցավ խեթերի վերահսկողության տակ: Տերության հեռավոր շրջանների նկատմամբ վերահսկողությունը կայունացնելու, նաև Ուրխի-Թեշուսի համակիրների հետ հարաբերությունները բարելավելու նպատակով նա հարավային Փոքր Ասիայում ստեղծեց Թարխունտասայի քույր-թագավորությունը, որի առաջին արքա նշանակվեց Ուրխի-Թեշուսի որդին՝ Կուրունտան: Հալիսի ստորին հոսանքների շրջանում նա կազմեց ևս մի քույր-թագավորություն՝ Տումմաննան, որի արքա նշանակվեց թագածառանգ Թուդխալիյասը: Արևելքում ձևավորվեց Իսուվայի թագավորությունը, որի առաջին արքա հռչակվեց Արի-Շարրուման: Վերջինիս կնության տրվեց խաթարուսիլիսի դուստր Կիլուշխեպան (այս մասին տե՛ս ստորև՝ «Խեթական տերությունը և Հայկական լեռնաշխարհը» բաժնում): Խեթական ևս մեկ արքայադուստր՝ Գասսուլիյավիյան, դարձավ կախյալ Անուրրուի թագուհի: Այսպիսով՝ Տերության սահմանամերձ շրջաններում ստեղծվեց խաթարուսայի արքայատոհմի հետ ազգակցական կապերով կապված և բարձր կարգավիճակով օժտված կախյալ պետությունների շղթա:

Խաթարուսիլիսի արտաքին քաղաքական կարևորագույն ձեռքբերումը խեթա-եգիպտական դարավոր հակամարտության ավարտն էր: Ք. ա. 1258 թ. խաթարուսիլիսը և Ռամզես II-ը Սիրիայում՝ խաթթի և Եգիպտոսի ազդեցության գոտիների միջև ընկած սահմանամերձ հատվածում, անձնական հանդիպման ժամանակ կնքեցին «հավերժական խաղաղության և բարեկամության պայմանագիր», որով վերջ տրվեց երկու տերությունների միջև դեռևս Ք. ա. XV դ. սկիզբ առած լարված հարաբերություններին: Ըստ պայմանագրի՝ կողմերը պարտավորվում էին այսուհետև բոլոր վիճելի տարածքային խնդիրները կարգավորել միայն խաղաղ բանակցությունների միջոցով, չսատարել օրինական արքայի հակառակորդներին, ինչպես նաև ռազմական ուժով օժանդակել դաշնակցին երրորդ կողմի դեմ ընթացող պատերազմի ժամանակ: Պայմանագիրը հարատևեց ընդհուպ մինչև դարավերջը և կարևոր նշանակություն ունեցավ Առաջավոր Ասիայում հարաբերական խաղաղության պահպանման գործում:

Թուդխալիյաս IV-ը (մոտ 1240–1220 թթ.) իշխանության եկավ հոր՝ խաթարուսիլիս III-ի՝ քաղաքական իրադարձություններով հարուստ, սակայն անկայուն հաջողություններով ուղեկցվող կառավարման վերջին շրջանի լարված մթնոլորտում: Խեթա-եգիպտական պայմանագրի շնորհիվ սիրիա-պաղեստինյան գոտում status quo-ի հաստատագրումը կայունացրել էր խաթթի հարավային շրջաններում տիրող իրավիճակը: Սակայն հարավ-արևելքում և արևմուտքում իրադրությունը մնում էր լարված՝ հղի հետագա բարդացման հեռանկարով: Հենց նշված ձևկատներն էլ հանդիսացան Թուդխալիյասի արտաքին քաղաքական գործունեության գլխավոր ուղղությունները:

Թուդխալիյասի գործունեության սկիզբը համընկավ Ասորեստանի առաջխաղացման հետ դեպի Հյուսիսային Սիրիա և Հայկական լեռնաշխարհի հարավ-արև-

մուտք: Դեռ Սալմանասար I-ի ժամանակներում սկսված ասորեստանյան առաջխաղացումը դեպի Հյուսիսային Միջագետք, Վերին Եփրատի և Վերին Տիգրիսի ավազանների՝ խեթերից կախյալ շրջաններ շարունակվեց նոր թափով Թուդուլթի-Նի-նուրտա I-ի օրոք: Կախյալ Միտաննիի նվաճումը Սալմանասարի կողմից վերացրեց այն արգելապատնեշը, որը Կարգամիսի քույր-թագավորության օգնությամբ առժամանակ զսպում էր Ասորեստանին: Հարավարևելյան Փոքր Ասիայի մատուցներում ուժերի հարաբերակցությունը աստիճանաբար փոխվում էր հօգուտ Ասորեստանի: Այդ էր պատճառը, որ Թուդխալիյաս IV-ը չէր կարող անտարբեր դիտորդի դերում մնալ:

Ք. ա. 1234/3 թ. Թուդխալիյասը ձեռնարկեց կանխարգելիչ արշավանք, որը, սակայն, անհաջողության մատնվեց: Նիխրիյայի մոտ ասորեստանյան զորքը հաղթեց, ինչու՞մ կարևոր դեր խաղաց խեթերի դաշնակից Իսուվայի զորքի չժամանելը ձակատամարտի վայր:

Այնուամենայնիվ, Թուդխալիյասի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրը Արևմտյան Փոքր Ասիան էր, որտեղ խաթարուսիլիս III-ի ջանքերով ժամանակավորապես հաստատված կայուն իրավիճակը սկսել էր սասանվել: Թուդխալիյասը արշավեց դեպի Լուկկա երկրներ՝ նվաճելով դրա գլխավոր քաղաքներ Տալավան (անտիկ շրջանի Տլոս), Ավարնան (անտիկ շրջանի Արիննա) և Պինալեն:

Բավական լարված էր իրավիճակը Վիլուսայի առնչությամբ: Նախքան Թուդխալիյասի արևմտյան արշավանքները խեթամետ Վիլուսայի արքա Վալմուն գահազրկվել էր Ախիսիյավայի դաշնակից Միլլավանդայի արքա Ատպասի կողմից: Խեթերը ոչ միայն վերադարձրին Վալմունի իշխանությունը, այլև Միլլավանդայում արքա նշանակեցին Ատպասի որդի Մասխուիտտային: Միլլավանդայում խեթամետ արքայի նշանակումով Ախիսիյավան դուրս մղվեց Փոքր Ասիայում իր ունեցած գլխավոր հենակետից՝ այլևս հնարավորություն չունենալով ակտիվորեն միջամտելու այս տարածաշրջանի գործերին:

Ասորեստանյան և արևմտափոքրասիական ձակատներում ստեղծված իրադրությունը ստիպեց Թուդխալիյասին դիմել կտրուկ միջոցների: Կախյալ Անուրրուի արքա Սաուզամուվայի հետ կնքված պայմանագիրն արտացոլում է տվյալ ժամանակաշրջանում գոյություն ունեցող ուժերի հարաբերակցությունը: Այն միաժամանակ դիվանագիտության պատմության մեջ թերևս առաջինն էր, որն ամրագրում էր հակառակորդ երկրների մեկուսացման (բլոկադա) սկզբունքը:

(4) «Եթե Եգիպտոսի արքան Արևիս բարեկամ է, (5) քեզ էլ պիտի բարեկամ լինի, (6) Բայց եթե նա Արևիս թշնամի է, (7) նա քո թշնամին պիտի լինի, (8) Եվ եթե Բաբելոնի արքան (9) Արևիս բարեկամ է, քեզ էլ նա (10) բարեկամ պիտի լինի, և եթե նա Արևիս (11) թշնամի է, քեզ էլ պիտի նա թշնամի լինի, (12) Եթե Ասորեստանի արքան Արևիս թշնամի է, (13) քեզ էլ պիտի նա թշնամի լինի: (14) Քեզնից առևտրականը թող Ասորեստան (15) չգնա, իսկ նրանից առևտրականին (16) դու քո երկիր մի՛ թողնի, (17) քո երկրով թող նա չանցնի: (18) Եվ եթե նա քո երկիր գա, բռնի՛ր նրան և ուղարկի՛ր նրան Արևիս մոտ»: Այնուհետև. (23) «Ոչ մի ախիսիյավյան նավ թող չգնա նրա մոտ»:

Վերոհիշյալ հատվածից կարելի է եզրակացնել, որ Խաթաբի արքան Ասորեստանը և Ախիյալվան դիտում էր որպես թշնամական երկրներ, որոնց հետ Տերության տարածքի բոլոր կախյալ երկրներին արգելվում էր որևէ հարաբերության մեջ մտնել: Միաժամանակ արգելվում էր որևէ շփում վերոհիշյալ երկրների հետ: Հակառակ դրան՝ Եգիպտոսը և Բաբելոնիան դիտվում էին որպես բարեկամական երկրներ:

Թուղխալիյասի արտաքին քաղաքական ձեռնարկումներից էր նաև Ալասիայի (Կիպրոս) գրավումը:

Արտաքին ուժերի նկատմամբ ունեցած հաջողությունները չեզոքացվեցին Թարխունտասայի ապստամբության և նրա արքա Կուրունտայի՝ պետական հեղաշրջման փորձի հետևանքով: Պարզ չէ, թե Կուրունտայի կողմից մայրաքաղաք Խաթաբուսասի նվաճման պահին որտեղ էր գտնվում Թուղխալիյասը: Խաթաբուսասում Կուրունտայի անունը կրող հիերոգլիֆային կնիքի դաջվածքների առկայությունը վկայում է նրա անթաքույց նկրտումների մասին («Մեծ արքա, լաբարնա Կուրունտա»): Խեթական արքաների տիտղոսաշարի կիրառումը նշանակում էր, որ Կուրունտան դրժել էր Խաթաբուսիլիսի, այնուհետև Թուղխալիյասի հետ կնքված պայմանագրերը:

Թուղխալիյասի և Կուրունտայի միջև ծագած քաղաքացիական պատերազմին մասնակցում էին խեթական արքայատոհմի և խոշոր ազնվականության մի շարք ներկայացուցիչներ, այդ թվում նաև Իսուվայի արքան: Թուղխալիյասին հաջողվեց հետ նվաճել մայրաքաղաքը, որից հետո նա չեղյալ հայտարարեց Կուրունտայի հետ պայմանագիրը:

Թուղխալիյասի օրոք Խաթաբուսասի և Թարխունտասայի արքայատոհմերի միջև ժամանակ առ ժամանակ ի դերն ելնող հակամարտությունը չէր կարող բացասաբար չանդրադառնալ Տերության տարածքային ամբողջականության պահպանման և վտանգավոր հարևանների հարձակումների դեմ սահմանների պաշտպանության կազմակերպման վրա: Տերության ներքաղաքական կառույցը ակնհայտորեն քայքայվում էր: Եվ եթե Թուղխալիյասին հաջողվեց ժամանակավորապես կայունացնել իրավիճակը և հաղթող դուրս գալ Կուրունտայի դեմ մղված պայքարում, ապա նրա հաջորդ Անուվանդաս III-ի կարճատև կառավարումից հետո իշխանության եկած մյուս որդու՝ Սուպալիուլիումաս II-ի շրջանի իրադարձությունները Տերությունը անդառնալիորեն ուղղում էին դեպի անկում:

Սուպալիուլիումասը ստիպված էր ռազմական գործողություններ վարել Հարավային և Հարավարևմտյան Փոքր Ասիայում, որտեղ նվաճվեցին Թարխունտասասն, Մասան, Լուկկան, Իկունան (Իկունինոն) և Կիպրոս կղզին:

Սակայն վերոհիշյալը չի կարող դիտվել որպես խեթերի անվիճելի հաջողություն: Այլ աղբյուրներից հայտնի տեղեկությունների լույսի տակ ուրվագծվում է քննարկվող ժամանակաշրջանի իրադարձությունների իրական պատկերը:

Ուգարիտի վերջին արքա Ամմուրապիի նամակից պարզվում է, որ նրա ողջ նավատորմը ուղարկվել էր Լուկկա՝ խեթական արքային օգնելու, և որ հակառակորդի 7 նավեր (տեքստում չի նշվում դրանց պատկանելությունը) սպառնում են քաղաքին:

Իսկ դրանից քիչ անց Ամմուրապիին առաքված նամակում հիշատակվում է ուգարիտյան նավատորմի ոչնչացման մասին:

Վերոհիշյալ նամակների համադրումը Սուպալիուլիումասի տեքստերի հետ թույլ է տալիս ենթադրել, որ Լուկկայից մինչև Ուգարիտ, ներառյալ Կիպրոս կղզին, խեթերը գործ ունեին մի հակառակորդի հետ, որը հիմնականում գործում էր ծովում, և որ սպառնալիքը բավական լուրջ էր, ինչի արդյունքում ուգարիտյան նավատորմը շարքից դուրս էր եկել՝ անպաշտպան թողնելով քաղաքը: Անկասկած, այստեղ հնարավոր է նշմարել այսպես կոչված «ծովի ժողովուրդների» ներկայությունը, որոնք այս իրադարձությունների շրջանում՝ Ք. ա. 1208 թ., վկայված են եգիպտական փարավոն Մերենպտահի արձանագրության մեջ որպես արևմուտքից՝ Լիբիայի կողմից դեպի Եգիպտոս ձգտող հակառակորդ: Այսինքն՝ խեթական արքայի վերոհիշյալ արշավանքներն անհրաժեշտ է մեկնաբանել որպես Փոքր Ասիայի առափնյա շրջաններ մուտք գործել ցանկացող «ծովի ժողովուրդների» խմբերի նկատմամբ խեթական արքայի կանխարգելիչ միջոցառումներ, որոնց նպատակն էր խոչընդոտել վերջիններիս հաստատվելու Տերության տարածքում: Սպառնալիքի լրջության օգտին է վկայում այն, որ Կիպրոսը նվաճելիս խեթերը մղել էին երեք ծովային և մեկ ցամաքային ճակատամարտ:

Ոչ պակաս լարված էր իրավիճակը բուն խեթական տարածքներում: Երկրում սկսվել էին ապստամբություններ, ավերվում և թալանվում էին նույնիսկ տաճարապատկան հողերը: Խաթաբում տիրող խառնակ իրավիճակը կարող էր որոշակիորեն կապված լինել տևական երաշտի հետ, որը ստիպում էր խեթերին Եգիպտոսից հացահատիկ ներմուծել:

Այսպիսի ծայրահեղ վտանգավոր իրավիճակում Ք. ա. XII դ. սկզբներին խեթական տերությունը հեռացավ պատմական ասպարեզից, ինչի վկայությունը խեթական գրավոր ավանդույթի ընդհատումն էր և մայրաքաղաք Խաթաբուսասի ու կենտրոնական Փոքր Ասիայի մի շարք քաղաքների ավերածությունները և ապաքնակեցումը:

Ավանդաբար Խաթաբի անկումը վերագրվում էր «ծովի ժողովուրդների» կամ խեթերի այլ հարևանների հարձակումներին: Սակայն վերջին երեք տասնամյակներում կուտակված սկզբնաղբյուրների լույսի տակ վերոհիշյալ իրադարձությունը մասնագետները հակված են համարելու ոչ թե օտար նվաճման հետևանք, այլ ներքին բազմերանգ զարգացումների արդյունք, որը զգալիորեն խթանվել էր առաջավորասիական ճգնաժամն ուղեկցող երևույթների (Էթնիկական տեղաշարժեր, ապաքնակեցում և գերբնակեցում և այլն) ազդեցության տակ: Մասնավորապես, ներկայումս գերիշխում է Խաթաբի «տրոհման» տեսությունը իր մի շարք տարբերակներով: Խաթաբի անկման խնդրի ուսումնասիրությունը առաջավորասիական ճգնաժամի փուլում ինչպես Փոքր Ասիայում, այնպես էլ Էգեյան ծովի ավազանում և այլուր վկայված համանման իրողությունների հետ համադրման լույսի տակ թույլ է տալիս ենթադրել ոչ թե պետականության ավարտ արտաքին ուժերի վճռական միջամտությամբ, այլ տրոհում բաղկացուցիչ մասերի: Մի իրավիճակ, որի լավագույն ապացույցը արդեն

Ք. ա. XII դ. Փոքր Ասիայում և հարակից շրջաններում Խեթական տերության քաղաքական-մշակութային ժառանգորդ հանդիսացող տարածքով ավելի մանր պետությունների առկայությունն է (տե՛ս ստորև՝ «Լուվիական պետությունները» գլուխը):

4. ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲԱՆԱԿԸ

Խեթական պետականությունը իր շուրջ 500-ամյա գոյության ընթացքում անցավ վարչաքաղաքական զարգացման տևական շրջան:

Կուսսարի և Նեսայի փուլին (Ք. ա. XVIII դ.) բնորոշ էին քաղաք-պետությունները՝ տոհմացեղային հենքի վրա ձևավորված, տարածքով փոքր քաղաքական միավորներ, որոնցում արքայական իշխանությունը՝ դեռևս բացարձակացված չէր: Այս շրջանում, ինչպես նույնիսկ հետագայում՝ Հին թագավորության մի զգալի մասում, մեծ էր տոհմային ազնվականության դերը, որը վճռական ձայն ուներ պետական կարևորագույն խնդիրների, այդ թվում՝ գահաժառանգման խնդրում: Ժողովրդական ժողովը (*պանկուս*), որ վկայված է նաև հետագա դարերում, դեռևս լուրջ ուժ էր ներկայացնում, սակայն աստիճանաբար այն իր տեղը սկսում էր զիջել տոհմային ազնվականության խորհրդին (ավագների խորհուրդ՝ *տուլիյա*): Օրինակ՝ Խաթթուսիլիս I-ը իր թոռանը՝ Մուրսիլիսին, իրեն հաջորդ հռչակելու նպատակով ստիպված էր հրավիրել ազնվականության խորհուրդ և համոզել ու նույնիսկ սպառնալ հաստատելու իր որոշումը: Ընդհանրապես գահաժառանգման հարցում հստակ կարգի բացակայությունն, ընդհուպ մինչև Տելեպինուս, կարելի է համարել արքայական իշխանության թուլության, ամուր, կենտրոնացված պետականության բացակայության դրսևորում:

Ք. ա. XV դ. երկրորդ կեսին և հաջորդող շրջանում, Խեթական տերության ձևավորման հետ մեկտեղ առաջ եկավ այն կառուցվածքը, որը բնորոշ էր Խաթթի պատմության վերջին երկու դարերին:

Տերությունը բազմաստիճան կառույց էր, որի միջուկը կազմում էր հիմնականում Հալիս գետի ներքին ավազանով սահմանափակվող բուն Խաթթին: Տերության ծայրամասային շրջաններում Սուպպիլուլիումաս I-ից մինչև Խաթթուսիլիս III-ի կառավարման շրջանում ձևավորվել էր հատուկ բարձր կարգավիճակ ունեցող քույր-պետությունների մի համակարգ՝ Կարգամիսը՝ Հյուսիսային Սիրիայում, Թարխունտասսան՝ Փոքր Ասիայի հարավում, Իսուվան՝ Վերին Եփրատի ավազանում, Տումմաննան՝ բուն Խաթթիից հյուսիս-արևմուտք (անտիկ աղբյուրների Դոմանիտիսի շրջանը), Սելաս գետի երկիրը՝ Փոքր Ասիայի արևմուտքում (Մեանդրոս գետի հովտում), և Ամուրրուն: Այստեղ ժառանգաբար իշխում էին Խաթթուսասի արքայատոհմի հետ ազգակցական կապերով կապված տեղական արքայատոհմերը:

Սրանցից բացի, ավելի ցածր կարգավիճակով գոյություն ունեին մեծաքանակ այլ վարչական միավորներ, որոնք, թերևս, անմիջականորեն վերահսկվում էին քույր-

պետությունների կողմից. վերջիններս պատասխանատու էին նրանց վրա դրված պարտավորությունների կատարման համար:

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ խմբի կախյալ պետությունների հետ փոխհարաբերությունները կարգավորվում էին պայմանագրերով: Խաթթիի «մեծ արքայի» հանդեպ կախյալ երկրների վրա դրված պարտավորությունների շարքում առաջնահերթ տեղ ունեին 1) լոյալությունը, 2) զորաջոկատների տրամադրումը պատերազմների ժամանակ, 3) երրորդ կողմի հետ ինքնուրույն հարաբերությունների արգելքը և 4) հակառակորդի հարձակման դեպքում Տերության համապատասխան տարածքի պաշտպանության գործի կազմակերպումը սեփական միջոցներով:

Բուն Խաթթիում բնակավայրերի ներքին խնդիրների կառավարման գործը իրականացնում էին համայնքների ընտրովի պաշտոնյաները: Մեծաքանակ տաճարային կենտրոններում՝ հարակից երկրագործական շրջանների հետ միասին, այդ խնդիրը դրված էր քրմապետների վրա:

Տերության սահմանամերձ շրջանները ներառված էին ռազմական օկրուգների մեջ: Սրանց կառավարիչները նշանակվում էին խեթական արքայի կողմից և պարտավոր էին վերահսկել իրենց վստահված տարածքում տեղի ունեցող յուրաքանչյուր իրադարձություն (բնակչության վրա պարտավորությունների կատարում, սահմանի խախտում և այլն): Այդ պաշտոնյաները արքայից ստանում էին հստակ հրահանգներ իրենց վստահված շրջաններում կայուն իրավիճակ ապահովելու վերաբերյալ:

Խեթական տերության տարածքային ամբողջականության պահպանումը և մշտական պատերազմները պահանջում էին պահել մարտունակ բանակ: Բանակի կորիզը կազմում էին հետևակը և մարտակառքերի ջոկատները: Հատկապես կարևոր նշանակություն ունեին վերջիններս, առանց որոնց սովորաբար որևէ ձակատամարտ տեղի չէր ունենում: Երկանիվ, երեք զինվոր տեղավորող հարյուրավոր թեթև մարտակառքերը ի վիճակի էին վճռելու ձակատամարտի ելքը: Պահպանվել է Ք. ա. XV-XIV դդ. թվագրվող մի ընդարձակ տեքստ (այսպես կոչված «Կիկկուլիի ձեռնարկը»), որը նվիրված է մարտակառքերին լծվող ձիերի վարժեցման տեխնիկային:

Խեթական բանակի ռազմավարության հիմնական բնորոշ գծերից էր պատերազմների ժամանակ մարտական գործողությունների անսպասելիության ապահովումը: Այն ներառում էր գիշերային տեղաշարժեր, որոնք ավարտվում էին հանկարծակի հարձակումներով: Այդպիսի ընթացք ունեցավ Ք. ա. 1274 թ. Քաղեշի ձակատամարտը, որի ելքը վճռեց Օրոնտես գետի հակառակ ափից հարյուրավոր մարտակառքերի անսպասելի գրոհը Ռամզես II-ի առաջապահ զորամասի վրա:

Խեթական բանակի համալրման կարևոր աղբյուր էին հանդիսանում կախյալ երկրների արքաների և կառավարիչների տրամադրած օգնական ջոկատները, ինչպես նաև այդ երկրներից պայմանագրային հիմունքներով զինձառայության վերցված վարձու զինվորները:

Բնական սահմանների բացակայությունը, ինչպես նաև աշխարհագրական դիրքը Խեթական տերությունը վերածում էին բոլոր կողմերից խոցելի քաղաքական միավորի, որի ամբողջականությունը և անվտանգությունը հնարավոր էր պահպա-

նել միայն մարդկային և նյութական ռեսուրսների մշտական մոբիլիզացիայի, խոշոր մարտունակ բանակի և պարբերաբար իրականացվող կանխարգելիչ կամ պատժիչ ռազմական միջամտության միջոցով: Երկու կամ ավելի ուղղություններում միաժամանակյա ռազմական գործողությունները հաճախ ավարտվում էին զգալի տարածքային կորուստներով: Խեթական պետականության պատմության ընթացքում բազմիցս արտաքին և ներքին բացասական գործոնների համատեղ հանդես գալու պատճառով Տերությունը հաճախ հայտնվում էր անկման եզրին, և միայն մեծ ջանքերի գնով այն կրկին վերականգնվում էր (օրինակ՝ Մուրսիլիս I-ից, Անուվանդաս I-ից, Սուպալիուլիումաս I-ից հետո): Այս տեսանկյունից դիտարկելով Խեթական տերության քաղաքական պատմության զարգացման միտումները՝ դրա տրոհումը Ք. ա. XII դ. սկզբներին հնարավոր է որակել որպես վերընթաց և վայրընթաց զարգացումների կանոնավոր հաջորդականության մի հերթական փուլ, որից հետո, սակայն, այն հնարավոր չեղավ վերակենդանացնել:

5. ԽԵԹԱԿԱՆ ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Խեթական մշակույթի ձևավորման գործում վճռորոշ դեր ուներ Փոքր Ասիայի բնակչության բազմաթիվ բնույթը: Այս ընդարձակ տարածաշրջանը բնակեցնող ժողովուրդների դարավոր շփումների արդյունքում էլ ձևավորվեց փոքրիշատե ընդհանուր գծերով առանձնացող մի մշակույթ, որն իր արմատներով հասնում էր ընդհուպ մինչև նեոլիթյան դարաշրջանի խորքերը, և որը պայմանականորեն անվանում են Խեթական տերության մշակույթ:

Խեթական մշակույթի կարևոր դրսևորումներից էր գիրը: Խեթական դարաշրջանի Փոքր Ասիայում գուգահեռաբար գործում էին երկու տարբեր գրավոր ավանդույթներ՝ փոխառյալ միջագետքյան սեպագիրը և տեղական ծագում ունեցող հիերոգլիֆային (պատկերային) գիրը:

Սեպագիրը Փոքր Ասիա էր մուտք գործել երկու փուլով: Առաջինը դեռևս Ք. ա. XIX դ. Աշշուրի փոքրասիական գաղութների գործունեության շրջանում, երկրորդը՝ արդեն Հին թագավորության կազմավորման փուլում: Ընդ որում՝ այս երկրորդ փուլում խեթերը սեպագիրը փոխառել են ոչ թե Ասորեստանից կամ Բաբելոնից, այլ Հյուսիսային Սիրիայի մեկ այլ սեպագրական գրչական դպրոցից:

Սեպագիրը լայն կիրառություն ուներ մայրաքաղաքի արքունի և տեղական վարչական կենտրոնների դիվաններում: Դրանով գրվում էին արքայական հրամաններ, հրահանգներ, ծիսապաշտամունքային և տնտեսական բնույթի տեքստեր, միջազգային պայմանագրեր և այլն: Ինչպես Միջագետքում և այլուր, գրում էին կավե սալիկների վրա, որոնք այնուհետև թրծվում և պահվում էին դիվաններում՝ նախապես ցուցակագրվելով: Մայրաքաղաքի դիվանում աշխատում էին հարյուրավոր գրիչներ: Բոլոր թիչ թե շատ կարևոր տեքստերը պարբերաբար արտագրվում էին՝

դրանք ոչնչանալուց փրկելու նպատակով: Այսօր հայտնի են ավելի քան 30 հազար սեպագիր սալիկներ, որոնց գերակշիռ մասը արդեն հրատարակված է:

Սեպագրական ավանդույթը Փոքր Ասիայում ավարտվեց Խեթական տերության տրոհման հետ միաժամանակ՝ իր տեղը զիջելով հիերոգլիֆային գրին:

Հիերոգլիֆային գիրը իր արմատներով հասնում է առնվազն Ք. ա. II հազ. սկզբները, սակայն առաջին գրավոր հուշարձանը Ք. ա. XVI դ. Կիցցուվատնայի արքա Իսպուտախսուի կնիքն է: Հետագայում, մասնավորապես XIII դ. հիերոգլիֆային գիրը սկսում է ավելի լայն կիրառություն ստանալ հատկապես վերջին արքաների օրոք: Դրանով արդեն սկսում են գրել մեծածավալ տեքստեր: Մայրաքաղաքի արքունի դիվանում (թերևս նաև այլ վայրերում) աշխատում էին հիերոգլիֆային գրով գրող գրիչներ, որոնք կոչվում էին «փայտի վրա գրող գրիչ»: Այս անվանումը կարող է նշել, որ նախապես հիերոգլիֆներով գրում էին փայտի վրա և միայն հետագայում՝ այլ նյութերի:

Խեթական արխիվներում պահվող սեպագիր տեքստերը գրված են մի շարք լեզուներով՝ խեթերեն, սեպագիր լուվիերեն (ի տարբերություն Տերության տրոհումից հետո հայտնի լուվիերենի՝ հիերոգլիֆային գրով գրված բարբառի), պալայերեն, խաթերեն, աքքադերեն, խուրրիերեն, շումերերեն: Միևնույն տեքստում (հատկապես ծիսական բնույթի) հանդիպող տարբեր լեզուներով գրված հատվածների առկայությունը վկայում է այն մասին, որ գրիչները տիրապետում էին առնվազն մի քանի լեզուների:

Խեթական սեպագրական ավանդույթի բաղկացուցիչ մասն է գեղարվեստական գրականությունը, որը գերազանցապես ներկայացված է ծիսապաշտամունքային ոլորտով:

Ջուտ գեղարվեստական գրականության հուշարձաններից պահպանվել են միայն խեթական, խաթական և խուրրիական ծագման առասպելները: Դրանք ներկայացնում են տարբեր աստվածների գործունեությանը նվիրված պատմություններ: Այս տիպի ստեղծագործությունները, ինչպես, օրինակ, աշխարհաստեղծման առասպելը, մեռնող-հառնող աստված Տելեպինուսի մասին պատմությունը, աստվածամարտը («Երգ Ուլլիկումմիի մասին»), վիշապամարտը և այլ թեմաներ, ներկայացվում էին հանդիսականներին՝ համապատասխան աստվածներին նվիրված կրոնական տոների ժամանակ:

Խեթերի մոտ գեղարվեստական գրականության այլ ժանրերի մասին աղբյուրներում տեղեկությունները խիստ սուղ են: Առկա սահմանափակ թվով գեղարվեստական գրականության նմուշները գրված են գերազանցապես աքքադերեն լեզվով՝ ներկայացնելով միջագետքյան գեղարվեստական ժանրը: Մասնավորապես առասպելաբանական բնույթի «չափածո» ժանրի ստեղծագործությունները բացառապես միջագետքյան ազդեցության արդյունք են:

Խեթական Փոքր Ասիայի նյութական մշակույթի կարևոր բնագավառներից են ճարտարապետությունը և քանդակագործությունը: Շինանյութով, հատկապես քարտեսակներով հարուստ այս տարածաշրջանում ստեղծվեցին կոթողային

կառույցներ, որոնց հիմնական առանձնահատկությունը տեղանքի պայմաններին առավելագույն հարմարվածությունն էր: Այս առումով նշելի են հատկապես ամրաշինությունը և ժայռափոր տաճար-սրբավայրերը:

Խեթական ճարտարապետությունը կոթողային է, կառուցապատման եղանակը՝ «կիկլոպյան»: Բնակավայրի կամ սրբավայրի հարմարվողականությունը ժայռին և ժայռակերտ կառույցներն ընդհանրապես խեթական ճարտարապետական լանդշաֆտի կերտման կարևորագույն առանձնահատկություններն են: Խեթական քաղաքը քաղկացած էր հիմնականում երեք մասերից՝ ամրացված միջնաբերդ, ներքին և արտաքին քաղաք: Քաղաքների հատակագիծը, որպես կանոն, անհամաչափ է, կազմված տարբեր շինությունների առանձնացման սկզբունքով, ընդ որում՝ յուրաքանչյուր շինություն յուրահատուկ է և չի կրկնում մյուսին: Հիմքերը հիմնականում քարից են, պատերը՝ հույս առնելով, տանիքները՝ տափակ: Խեթական կոթողայնության ամենափայլուն օրինակը Խաթթուսասն է, որն իր միջնաբերդի, ներքին ու արտաքին քաղաքների պարիսպներով, քանդակագարդ դարպասներով, պալատներով, տաճարներով և ամբարներով Առաջավոր Ասիայի առավել տպավորիչ քաղաքներից մեկն էր:

Խեթական արվեստը ոճաբանական տեսանկյունից բնորոշվում է պլացիկոթյամբ՝ լայն, պարզ ձևերով, որոնք ենթադրում են յուրահատուկ շարժում: Հիմնական թեմաները կրոնական են, ավելի քիչ են որսի և պատերազմական տեսարանները: Քանդակագործության գլխավոր մոտիվը մարդու/աստվածության և կենդանու (հիմնականում՝ ցուլի և առյուծի) պատկերագրությունն է: Հատկապես յուրահատուկ են ժայռերի վրա կատարված ռելիեֆային պատկերները: Նմանատիպ պատկերագրությամբ են բնորոշվում նաև խեթական կնիքները, որոնք հիմնականում դրոշմ-կնիքներ են, չնայած խեթերն օգտագործել են նաև գլանաձև կնիքներ: Խեթական խեցեղենը հիմնականում ունի կարմիր հիմնագույն և դեռևս Միջին Բրոնզի դարից ժառանգված ձևեր: Խեթերի կողմից հատկապես սիրված են եղել կենդանակերպ անոթները:

Խեթերը, որոշակիորեն ազդվելով սիրիա-միջագետքյան և եգիպտական մշակույթներից, կարողացան ստեղծել մի ուրույն կոթողային մշակույթ, որի ազդեցության տակ էին գտնվում հարակից տարածքները: Այդ ազդեցությունները մասամբ շարունակվեցին նաև հետագա ժամանակաշրջաններում ու տեսանելի են հատկապես փոյուզական և ուրարտական միջավայրերում:

Խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի կրոնական համակարգը բազմաշերտ էր և ներառում էր այս տարածաշրջանը բնակեցնող տարբեր ժողովուրդների կրոնական պատկերացումները:

Հին թագավորության դիցարանում ուժեղ էր կենտրոնական Փոքր Ասիայի նախախեթական բնակչության՝ խաթերի ազդեցությունը: Խաթական աստվածները (Իստանուս, Վուրու(ն)սեմու, Մեցցուլլա, Կատախցիֆուրի, Տարու և այլն) կարևոր տեղ ունեին թագավորության պաշտոնական դիցարանում:

Ոչ հնդեվրոպական խաթական աստվածների պաշտամունքը Խեթական պե-

տության օրոք պահպանվեց և գոյատևեց արդեն հնդեվրոպական խեթա-լուվիական աստվածությունների հետ կողք կողքի: Վերջիններս ներկայացված էին հետևյալ աստվածներով՝ Թարխունտաս (Ամպրոպի աստված), Պիրվա (ռազմի աստծո հատկանիշներով օժտված հովանավոր աստված), Շիվատ-Տիվատ (Արևի-Օրվա աստված), Յարրի (ռազմի աստված), Արմաս (Լուսնի աստված) և այլն:

Ք. ա. XV դ.՝ խուրրիական արքայատոհմի իշխանության գալով, արմատապես փոխվում են պաշտոնական դիցարանի կազմը և բնույթը: Դիցարան են ներառվում խուրրիական հիմնական աստվածությունները (օրինակ՝ Թեշուր, Խեբատ, Շարրումա աստվածային եռյակը), ինչպես նաև դրա հետ կապված խուրրիական առասպելների մի ողջ շարք է ներթափանցում Փոքր Ասիա: Նոր դիցարանի վառ դրսևորումն էր Խաթթուսասից ոչ հեռու գտնվող ժայռափոր խոշոր սրբավայրը: Խուրրիական աստվածների մոտքը չվերացրեց տեղական աստվածությունների պաշտամունքը: Նախկինի պես առաջին պլանում էր գտնվում խեթական դիցարանի գերագույն աստված Թարխունտասի պաշտամունքը, որի տաճարները սփռված էին Փոքր Ասիայի գրեթե բոլոր շրջաններում, և որը նույնացվում էր խուրրիական Թեշուրի հետ:

Կրոնը արտակարգ կարևոր դեր ուներ խեթական Փոքր Ասիայում: Տարվա ընթացքում արքայի անմիջական հովանավորությամբ և մասնակցությամբ իրականացվում էին մի շարք համապետական ծեսեր (*անտախշում*, *պուրուլլիյա* և այլն): Արքան պարտավոր էր ծեսերի ընթացքում անձամբ գլխավորել բոլոր հիմնական գործողությունները նույնիսկ պատերազմների ժամանակ: Գարնանային գլխավոր տոնը *անտախշում* կոչվող ծեսն էր, որի ընթացքում ծիսական թափորը, արքայի և թագուհու գլխավորությամբ, շրջում էր մայրաքաղաքին հարող բնակավայրերում: Ծեսեր էին իրականացվում նաև Տերության այլ քաղաքներում և մանր բնակավայրերում գտնվող տաճարներում, որտեղ պահպանվում էին աստվածների (այդ թվում՝ օտար) արձանիկները: Ծիսակատարության ընթացքը կանոնակարգված էր, և դրա որևէ տարրի խախտումը համարվում էր սրբապղծություն, որը աստվածային պատժի հիմք կարող էր ծառայել:

Խեթերի առօրյա կյանքում խիստ կարևոր դեր ունեին կրոնական պատկերացումներին սերտորեն առնչվող գուշակությունները և մոգությունը (վերջինս իր երկու դրսևորումներով՝ «սպիտակ» և «սև»): Ներկայացված էին գուշակության ամենատարբեր ձևեր՝ թռչունների ներքին օրգանների, թռչիչի հետազոտություն, խաղաքարերի նետում և այլն: Պաշտամունքային ոլորտը ներառում էր նաև բժշկության բնագավառը. գուշակության միջոցով փորձում էին պարզել հիվանդության աղբյուրը և առաջարկել բուժում:

Ընդհանուր առմամբ, ինչպես և Առաջավոր Ասիայի մյուս երկրներում, խեթերի մոտ էլ առօրյա կյանքը իր բոլոր դրսևորումներով ներթափանցում էր կրոնական պատկերացումներով:

6. ԽԵԹԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԵՐԿՐՆԵՐԸ

Խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի և նրան արևելքից հարող Հայկական լեռնաշխարհի հասարակությունների միջև տարաբնույթ առնչությունները, ընդհուպ մինչև Ք. ա. XVI դ., վերականգնվում են միայն նյութական մշակույթի հուշարձանների հիման վրա: Իսկ նշված ժամանակից սկսած՝ Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումները, սկզբում դիպվածաբար, այնուհետև շատ ավելի կանոնավոր սկսում են հանդես գալ խեթական սեպագիր աղբյուրներում:

Քաղաքական փոխհարաբերություններ

Արդեն Հին թագավորության արքա Խաթթուսիլիս I-ի օրոք խեթերը քաղաքական շահեր ունեին Վերին Եփրատի ավազանի շրջանում: Խեթական արքայի սիրիական պատերազմների համատեքստում հիշատակվում է հայկական Ծոփքի տարածքում հետագայի խեթական և ասորեստանյան տեքստերից հայտնի Խինձուտա քաղաքը: Հին թագավորության հետագա պատմության ընթացքում պետության տևական թուլացման պատճառով խեթական աղբյուրներում այլ տեղեկություններ չեն պահպանվել:

Ք. ա. XV դ. երկրորդ կեսից՝ Թուդխալիյաս II-ի նվաճողական պատերազմների շրջանում, խեթական աղբյուրները սկսում են ավելի հաճախակի անդրադառնալ Հայկական լեռնաշխարհի երկրներին: Միտաննիի և նրա դաշնակիցների դեմ ձեռնարկված արշավանքների ընթացքում Թուդխալիյասը նվաճում է «ընդարձակ երկիր» Իսուվան, որին աջակցում էր Միտաննիի արքա Սաուստատարը (= Սաուսադատտար): Խեթերի հարձակման ժամանակ իսուվական բնակչության մի մասը հարկադրված էր ապաստան գտնել դաշնակից Միտաննիում, և վերջինիս արքան հրաժարվել էր վերադարձնել փախստականներին: Իսուվան և վերինեփրատյան երկրները այս պահից հայտնվում են խեթական գերիշխանության տակ:

Քիչ ավելի ուշ շրջանի աղբյուրներից պարզվում է, որ խեթական տիրապետությունը այնքան էլ հիմնավոր չէր, քանի որ վերինեփրատյան երկրների մի մասը արդեն հաջորդ արքայի՝ Անուվանդաս I-ի օրոք փորձում էր թոթափել օտար տիրապետությունը:

Անուվանդաս I-ի կառավարման սկզբում կամ ավելի վաղ Պախխուվայում նախ՝ Ուսապայի, այնուհետև՝ Միտայի գլխավորությամբ սկսվեց ապստամբություն. Պախխուվային հարում էին որոշ այլ երկրներ (օրինակ՝ Արխիտան՝ հետագայի Հայաստանում): Խեթերին դժվարությամբ հաջողվեց ձնշել ապստամբությունը, որի ավարտին Անուվանդասը վերինեփրատյան երկրների հետ կնքեց կոլեկտիվ պայմանագիր:

Պայմանագրի կետերից պարզվում են այն պարտավորությունները, որոնք վերինեփրատյան երկրները պետք է ստանձնեին Տերության հանդեպ՝ ա) հավատարմություն խեթական արքայի նկատմամբ, բ) պատերազմի դեպքում ռազմական ջո-

կատների տրամադրում, գ) առանց խեթական արքայի գիտության որևէ պետության հետ հարաբերություններ չունենալ: Այս տարածաշրջանից խեթերը զգալի քանակությամբ զինվորներ էին հավաքագրում խեթական բանակ: Հայտնի է, որ Կումմախա քաղաքի (հետագայի հայկ. Կամախ-Անի) զինվորները ներգրավված էին խեթական մայրաքաղաքի արքայական պալատի պահապան զորամասում:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ վերոհիշյալ պայմանագիրը ուժի մեջ մնաց միայն մի կարճ ժամանակ: Անուվանդասից հետո ներքաղաքական լուրջ խնդիրների առջև կանգնած Տերությունը քայլ առ քայլ կորցրեց իր նվաճումները: Ավելին՝ խեթական տարածքները պարբերաբար ենթարկվում էին նրանց հարձակումներին: Հենց այս ժամանակաշրջանում էր, որ Իսուվան և Ազգին, անցնելով հարձակման, զգալի տարածքներ նվաճեցին խեթերից (տե՛ս վերը՝ «Միջին թագավորություն. Խեթական պետության կազմավորումը» քաժինը): Իսուվացիները գրավեցին Եփրատից արևմուտք ընկած Թեգարաման, իսկ ազգեցիները սահման դարձրին Սամուխան (Հալիսի վերին հոսանքների շրջանում):

Այս իրադարձություններից որոշ ժամանակ անց սկսվեց խեթերի և Հայկական լեռնաշխարհի երկրների միջև ինտենսիվ հարաբերությունների նոր փուլ: Սկզբում Թուդխալիյաս III-ը, այնուհետև Սուպալիլուլիումաս I-ը Տերության տարածքների վերանվաճման շրջանում ազգեցիների և իսուվացիների հետ մշտական բախումների մեջ էին: Հակամարտությունը տևական բնույթ ուներ, քանի որ ազգեցիները խուսափում էին վճռական ճակատամարտերից և պարբերաբար ասպատակում էին խեթերին պատկանող Վերին երկիրը (Եփրատի և Հալիսի միջև ընկած շրջանը):

Թուդխալիյասին հաջողվեց Կումմախա քաղաքի մոտ հաջողության հասնել Հայաստայի արքա Կարաննիսի նկատմամբ: Հավանաբար ճակատամարտից հետո Կարաննիսը զրկվեց իր իշխանությունից, նշանակվեց նոր արքա՝ Մարիյասը, որի հետ կնքվեց պայմանագիր: Հայաստայի նվաճումը հիմնավոր չէր, քանի որ որոշ ժամանակ անց Մարիյասը հրավիրվեց Խաթթուսաս և այնտեղ մահապատժի ենթարկվեց: Թերևս Հայաստայի անհնազանդությունն էր պատճառը, որ Սուպալիլուլիումաս I-ը Հայաստայի արքա նշանակեց խեթական ծառայության մեջ գտնվող հայասացի ազնվական Խուկկանային՝ նրա հետ կնքելով պայմանագիր. Խուկկանային կնության տրվեց խեթական արքայի քույրերից մեկը:

Պայմանագիրը խեթերի արտաքին քաղաքականության ասպարեզում նշանավորում էր նոր փուլ այն առումով, որ առաջին անգամ մետրոպոլիայի և կախյալ պետության միջև հաստատվում էին սկզբունքորեն նոր տիպի փոխհարաբերություններ: Դինաստիական ամուսնությամբ ամրապնդված պայմանագիրը կախյալ Հայաստայի համար նախատեսում էր անհամեմատ ավելի արտոնյալ կարգավիճակ, քան առկա էր Խաթթիի և մյուս նվաճված երկրների փոխհարաբերություններում: Մետրոպոլիայի և կախյալ երկրի միջև այսպիսի հարաբերությունների հաստատումը դարձավ խեթերի տերության կազմակերպման գերիշխող միտումը հաջորդ՝ Ք. ա. XIII դ.:

Սուպալիլուլիումասի օրոք Հայկական լեռնաշխարհի մեկ այլ պետության՝

Իսուվայի հետ խեղճերի հարաբերությունները այլ բնույթի էին: Իսուվայում ավանդաբար ուժեղ էին միտաննամետ ձգտումները, որոնք վկայված էին դեռևս Ք. ա. XV դ.: Սուպպիլուլիումասի կողմից Տերության տարածքների վերանվաճման շրջանում Իսուվա էին հեռացել խեթահպատակ շրջանների շատ բնակիչներ: Օգտվելով հարմար առիթից և որպես նախապատրաստություն իր միտաննական արշավանքի՝ խեթական արքան գրավեց Իսուվան, վերադարձնելով այստեղ ապաստան գտած բնակչությանը: Թերևս խեթական նվաճումն այնքան հիմնավոր էր, որ այսուհետև Իսուվան դադարում է հանդես գալ որպես հակախեթական ուժ, իսկ արդեն Ք. ա. XIII դ. այստեղ կազմավորվում է խեթամետ դիրքորոշում ունեցող Իսուվայի թագավորությունը:

Սուպպիլուլիումասի մահից հետո Խաթթիում սկսված քաղաքական ճգնաժամի փուլում Հայասան և Ազգին կրկին դուրս են գալիս խեթերի գերիշխանությունից: Մուրսիլիս II-ի կառավարման սկզբում այս երկրները, ինչպես նախկինում, ասպատակում էին խեթական տարածքները և հրաժարվում վերադարձնել ռազմագերիներին և իրենց մոտ փախած խեթական բնակչությանը:

Ք. ա. 1315 կամ 1314 թ. Մուրսիլիսը պատերազմ սկսեց Հայասայի և Ազգիի դեմ, որն ավարտվեց միայն երեք տարի անց: Պատերազմի ավարտից հետո նրա և Հայասայի արքա Աննիյայի միջև կնքվեց պայմանագիր:

Մուրսիլիսի արշավանքներից հետո շուրջ կես դար Հայկական լեռնաշխարհի պետականությունները այլևս չեն հիշատակվում խեթական աղբյուրներում: Ք. ա. XIII դ. տեքստերից կարելի է ենթադրել, որ Հայասայի և Ազգիի նկատմամբ Աննիյայի պայմանագրով հաստատագրված՝ խեթերի ունեցած գերիշխանությունը կարճատև պետք է լիներ: Այդ մասին կարելի է եզրակացնել Խաթթուսիլիս III-ի շրջանի տեքստերից մեկում հիշատակվող իրադարձության հիման վրա: Ըստ դրա՝ Խաթթիի հյուսիսարևելյան շրջաններում գտնվող բնակավայրերից մեկում արքան տեղավորել էր Ազգիից բերված վերաբնակիչներին: Այս փաստը կարող է վկայել խեթերի և ազգեցիների միջև վերսկսված բախումների առկայության մասին, իրավիճակ, որի վերաբերյալ կան տեղեկություններ ինչպես Խաթթուսիլիսի, այնպես էլ նրա հաջորդ Թուդիալիյաս IV-ի տեքստերում: Այս առումով հիշատակության են արժանի Թուդիալիյասի «Հրահանգները»՝ ուղղված Տերության սահմանամերձ շրջանների կառավարիչներին, որտեղ արքան, ի թիվս որոշ երկրների, հանձնարարում է Ազգիին սահմանակից շրջանի կառավարչին աչալուրջ լինել և բացառել բնակչության տեղաշարժեր Խաթթիից Ազգի և հակառակը:

Ի տարբերություն Ազգիի՝ Խաթթուսիլիսի օրոք բացարձակապես այլ բնույթի հարաբերություններ են հաստատվում Խաթթիի և Իսուվայի միջև: Աղբյուրների քաղաքայության պատճառով դժվար է ուրվագծել Իսուվայում խեթամետ թագավորության կազմավորման ընթացքը: Սակայն կան որոշ հիմքեր, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ Խաթթուսիլիսը խեթական ծառայության մեջ գտնվող իսուվական ազնվականական տոհմերից մեկի ներկայացուցչին նշանակել էր ժառանգական իշխանությամբ օժտված արքա: Տեքստերից հայտնի Իսուվայի առաջին արքան Արի-Շարրուման էր, որն ամուսնացած էր խեթական արքայի դուստր Կիլուշխեպայի հետ:

Նրան հաջորդեց որդին՝ Էխլի-Շարրուման, որը մինչև գահակալումը ապրում էր Խաթթուսասում:

Հոգևոր-մշակութային փոխհարաբերություններ

Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների միջև քաղաքական հարաբերությունների հետ զուգահեռաբար առկա էին նաև խոր հոգևոր-մշակութային փոխառնչություններ, որոնք ձևավորվել էին երկու տարածաշրջանների ժողովուրդների դարավոր շփումների արդյունքում: Աղբյուրների սակավության պատճառով ներկայումս դրանք հնարավոր է ներկայացնել միայն երկու բնագավառների միջոցով՝ լեզվական և ծիսապաշտամունքային: Ընդ որում՝ այդ փոխառնչությունները վկայված են ինչպես հնդեվրոպական խեթա-լուվիական լեզուների և հայերենի, այնպես էլ ոչ հնդեվրոպական խաթերենի և հայերենի միջև:

Փոքրասիական-հայկական լեզվական առնչություններ

Հին փոքրասիական քաղաքակրթությունների անմիջական հարևանությամբ գտնվող Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի բնակչությունը լեզվական շփումներ է ունեցել ինչպես հնդեվրոպական խեթա-լուվիական (հատկապես Ք. ա. II հազ. վկայված խեթերեն, պալայերեն, լուվիերեն՝ սեպագիր և հիերոգլիֆային տարբերակներով), այնպես էլ ոչ հնդեվրոպական լեզուների կրողների հետ: Խեթերենը, պալայերենը և լուվիերենը տարածված էին Հայկական լեռնաշխարհի մերձակայքում: Այդ շփումների արդյունքում առկա է որոշակի քանակությամբ բառապաշար, որը մասնագետները համարում են ուղղակի կամ միջնորդավորված փոխառություն խեթերենից և լուվիերենից: Խեթա-լուվիական լեզուներից հայերենում կատարված փոխառությունների իրական ծավալը այսօր դժվար է որոշել հայոց լեզվի առաջին հուշարձանների (Ք. հ. V դար) և վերոհիշյալ լեզուների միջև ընկած մեծ ժամանակահատվածի պատճառով (խեթերենի և սեպագիր լուվիերենի պարագայում՝ շուրջ 1500 տարի): Բացի այդ, մինչև վերջին երկու-երեք տասնամյակները հնդեվրոպաբանները և ընդհանրապես հայագետները հայերենի կրողների մուտքը Հայկական լեռնաշխարհ տեղադրում էին լավագույն դեպքում Ք. ա. XII դ., այն է՝ Խեթական տերության տրոհման շրջանում: Իսկ դրանից բխում է, որ այս փուլում խեթերենը հայերենի վրա չէր կարող ուժեղ ազդեցություն թողնել, քանի որ Տերությունը արդեն գոյություն չուներ: Մեկ այլ, ոչ պակաս լուրջ բարդություն է շատ մասնագետների այն մտավախությունը, որ հայերենում փոխառյալ որակվող զգալի քանակությամբ բառաձևեր կարող էին երկու լեզուներում հանդիսանալ հնդեվրոպական ընդհանրության ժամանակներից եկող ժառանգություն:

Նույնիսկ վերոհիշյալ բարդությունները ամենևին չեն խոչընդոտում հայերենում տասնյակ խեթա-լուվիական բառաձևերի ներկայությունը առանձնացնելուն: Դրանք ներառում են ինչպես հասարակ (գոյականներ, բայեր), այնպես էլ հատուկ անուններ (դիցանուններ, անձնանուններ, տեղանուններ):

Հայ-փոքրասիական լեզվական առնչությունների բնույթը որակելիս մասնագետները հիմնականում որպես ելակետ են ընդունել համեմատական լեզվաբանության մեջ համատարած ընդունված չափանիշը՝ հնչյունական համապատասխանությունը: Ընդունելով դրա կարևորությունը՝ այնուամենայնիվ անհրաժեշտ է հաշվի առնել վերոհիշյալ փոխհարաբերությունների պատմական ենթատեքստը:

Իր վաղ շրջանի ուսումնասիրություններում ակադ. Գ. Ջահուկյանը նշել էր խեթերենից հայերեն հնարավոր փոխառությունների ենթաշերտային ազդեցությունը, սակայն իր հետագա հետազոտություններում չխորացրեց այն: Խոսքը պետականության անկումից հետո խեթա-լուվիական լեզուների կրողների որոշ հատվածների ձուլման մասին է հայ ժողովրդի մեջ, որի արդյունքում առաջինները իրենց հետ պետք է հայերեն ներմուծեին մայրենի լեզվի բառեր:

Վերջին շրջանում ի հայտ են եկել հայերենի վրա խեթա-լուվիական լեզուների ենթաշերտային ազդեցությունը հիմնավորող փաստեր, սակայն ոչ թե հայ-փոքրասիական կոնտակտային գոտում, այլ Հայկական լեռնաշխարհի հարավում և արևելքում (Վանա և Սևանա լճերի շրջանը): Այսինքն՝ խեթերի պատմական տարածքից հեռու ընկած տարածքների որոշ հին անվանումների քննությունը ցույց է տալիս, որ տեղի բնակչության մեջ եղել է, ամենայն հավանականությամբ, խեթերենին մոտ լեզվով խոսող մի շերտ: Այս լեզվից կարող էին ծագել հին *Սևան*, *Սիւնիք* (նոր՝ Սևան, Սյունիք) տեղանունները, հմմտ. խեթ. *šiu-*, *šiu-na/i-* «աստված» >> «արևի աստված», *šiwanni* «աստվածային» բառերը, հնդեվրոպական արևի և լուսավոր երկնքի աստծու **dyeu-* անունից (սեպագիր *š-* ն խեթերենում սովորաբար ներկայացնում է *s* հնչյունը): Հատկանշական են Սյունիքի *արև* հիմքով տեղանունները, որոնց մեջ *Արևիս*, *Արևիք*, *Արևյաց տուն* ձևերը ցեղանվանական բնույթ ունեն (որպես «արևյաններ»՝ արևապաշտների ցեղ/երկիր, Սյունիքի հավանական թարգմանությունը):

Հայկական լեռնաշխարհին հարող խեթական տերության արևելյան շրջանները այդ պետականության ձևավորման փուլում խեթերի բնօրրանն էին. այստեղ է տեղադրվում Պիթխանայի և Անիտայի թագավորությունը, այստեղից էր միառժամանակ կառավարում Խաթթուսիլիս I-ը (տե՛ս վերը՝ «Հին թագավորություն» բաժնում): Արևելքում խեթական հոծ բնակչության առկայության օգտին է վկայում Ք. ա. XII դ. այստեղ լուվիական Մելիդի թագավորության կազմավորման փաստը: Խեթական տերության տրոհման շրջանում Կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության արտագաղթը երկու հիմնական ուղղություն ուներ՝ հարավ և արևելք (թերևս՝ նաև արևմուտք), որի վկայությունը Մելիդի պետականության երկարատև գոյությունն էր:

Ավելին՝ խեթական տեքստերում հիմնավոր վկայություններ կան Խաթթիի և Վերին Եփրատի ավազանի երկրների միջև քաղաքական շփումների, այստեղ խեթա-լուվիական լեզուների առկայության օգտին (տե՛ս վերը): Ք. ա. XIII դ. Իսուվայի և Խաթթիի միջև հարաբերությունների սերտացումը նույնպես ենթադրում է խեթական հավելյալ բնակչության ներհոսք: Իսուվայի քույր-թագավորությունը գտնվում էր խեթական տերության քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային ուժեղ ազդեցության ոլորտում, այստեղ ծանոթ էին խեթական սեպագրական գրչությանը:

Ավելին՝ Առնուվանդաս I-ի և վերինեփրատյան երկրների միջև կնքված կոլեկտիվ պայմանագրում Իսուվայում և հարևան շրջաններում հիշատակվում են խեթա-լուվիական անուններ կրող տեղացի ազնվականներ («ավագներ»)՝ Վալվացիտիս, Սանթաս, Թարխունդացիտի, Ուրավալկուի և այլն:

Հայերենի և ոչ հնդեվրոպական խաթերենի հավանական ընդհանուր բառերից հիշատակելի են հետևյալները. *whu* (խաթ. *ah-* «ծիսական կանչ»), *huquδիւմ* «կերուխումի հետևից ընկնել» (խաթ. *haggazuel* – «մատովակ»(?)), *ջնար* (*zinar-* «երածշտական գործիք»), *փաղ-*, *բաղ-* «համա» (*pala* «և, նաև»): Սրանց կարելի է ավելացնել նաև *hali(ya)-ri* («ծիսական) երգիչ», որն անբաժանելի է խուրրիական *halmi* – «երգ» և հայ. *խաղ* «երգ» բառերից և *հաշմ/խաշմ* «խեղ, կտորած անդամով, պակասավոր», համադրելի խաթական դարբնության աստված *Hašamili-*ի հետ (տարածաշրջանի դարբնության աստվածները պատկերացվել են որպես հաշմված, հմմտ. հուն. Հեփեստոսի կերպարը, որը նույնպես խաթական փոխառություն պետք է համարել): Այս գուգահեռները, որոնք բոլորը չէ, որ միարժեքորեն ընդունելի են, հիմնականում հակված են բացատրելու որպես միջնորդավորված ազդեցության արդյունքներ (հիմնականում՝ խաթերենից խեթերեն, ապա՝ հայերեն):

Կան նաև հայ-խաթական անվանաբանական համընկնումներ: Այսպես՝ Քսենոփոնը Մշո դաշտավայրի գետը՝ Մեղրագետը, անվանում է *Teleboas* (Անարասիս. IV, 4, 3): Այս անունն ակներևորեն համադրելի է *teleb/p-* արմատով հինանատոլիական անունների հետ, որոնք պետք է կապված լինեն խաթական *Teleb/pinus*, *Teleb/pi* (կրճատ տարբերակ) դիցանվան հետ: Այս աստվածը հանդես է գալիս որպես ամպրոպի աստծու անհետացող որդի, որին կարողանում է գտնել միայն մեղուն (հմմտ. Մեղրագետ-մեղու առնչությունը): Մեղրագետի շրջանը՝ Տարոն գավառը, հին հնչողությամբ՝ Տարան, միանգամայն համեմատելի է խաթական ամպրոպի աստված Տարուի անվան հետ, որի խեթական ձևն էր *Tarawa*: Նախաքրիստոնեական դարաշրջանում Տարոնը ամպրոպային հատկանիշներ ունեցող Վահագն աստծու պաշտամունքի կենտրոնն էր: Այս համընկնումները ցույց են տալիս, որ խաթերենը կամ նրա մի բարբառը հավանաբար հնում խոսվել է Հայկական լեռնաշխարհում, և ուրեմն եղել են հայ-խաթական ուղղակի առնչություններ:

Վերոհիշյալը թույլ է տալիս խոսել հայ-փոքրասիական դարավոր փոխհարաբերությունների մասին, որը և պետք է արտացոլվեր լեզվական շփումներում: Եվ ի վերջո, Մելիդի թագավորության տարածքը հետագայում ներառվեց Փոքր Հայքի մեջ, որտեղ էլ կարող էին տեղ գտնել լեզվական ընդհանրություններ բուն խեթա-լուվիական և հայախոս բնակչության միջև:

Խեթա-հայկական ծխապաշտամունքային առնչություններ

Խեթական դարաշրջանի Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների միջև սերտ փոխհարաբերությունների համատեքստում առանձնահատուկ տեղ ունի պաշտամունքային ոլորտը: Գր. Ղափանցյանից սկսած՝ ուսումնասիրողները բացահայտել են հայկական հեթանոսական դիցարանի և պաշտա-

Մելիդը (Մալաթիա), Համատը (Ժաման, Համան՝ Սիրիայում), Ունքի/Պատտինը (Ամուք լճի շրջակայքը՝ Սիրիայի հյուսիս-արևմուտքում), Գուրգումը (Ժաման, Մարաշ), Մացուվատին (ասորեստ. Թիլ-Բարսիպ = Ժաման, Թել էլ Ախմար), թերևս, նաև Կումմուխը (Կումմազենն): Թարխունտասայի տարածքում առաջ եկան Բիթ-Բուրուտաշը, Շինուխտուն, Տուվանան (ասորեստ. Տուխանա, անտիկ Տիյանա), Ատունան և այլն, որոնք ասորեստանյան աղբյուրներում հաճախ կրում են Թաբալ հավաքական անվանումը: Դաշտային Կիլիկիայում ստեղծվեց Կուեն: Սրանց մի զգալի մասը քաղաք-պետություն էր:

Քաղաքական տեսանկյունից Ք. ա. XII-VIII դդ. գոյատևած խեթական պետականության հիմնական բնորոշ առանձնահատկությունը պետությունների աստիճանական տրոհումն էր ավելի մանր միավորների:

Այսպիսով՝ խեթական տերության ժառանգորդ հանդիսացող լուվիական պետականությունները զբաղեցնում էին Փոքր Ասիայի արևելյան, հարավկենտրոնական շրջանները (Հալիսի մեծ ոլորանի շրջանը), Կիլիկիան, ինչպես նաև Հյուսիսային Սիրիան: Լուվիական պետությունների տարածքի խնդիրը հիմնականում կախված է սեփական հիերոգլիֆային արձանագրությունների հայտնաբերման վայրերից, ինչպես նաև համաժամանակյա հարևան պետությունների զբաղոր աղբյուրների տեղեկություններից: Հնարավոր է՝ այն որոշակիորեն ավելի ընդարձակ է եղել, սակայն առայժմ այդ մասին ուղղակի տեղեկություններ չկան:

Լուվիական պետությունների բնակչության էթնիկական կազմի խնդիրը ավելի բարդ է, քան զբաղեցրած տարածքի ձգգրտումը: Բացի լուվիացիներից և խեթերից, բավական սովոր գանգված պիտի կազմեն կասկերը (Կենտրոնական Փոքր Ասիայում), սեմական ժողովուրդները՝ հիմնականում արամեական ցեղերը (Հյուսիսային Սիրիայում), վաղ հայկական լեզվական տարրը (թերակղզու արևելքում՝ Եփրատին հարող շրջաններում) և փոյուզացիները (Արևմտակենտրոնական Փոքր Ասիայում):

Լուվիական պետականության տարածքը միատարր չէր: Ք. ա. XII դ. էթնիկական տեղաշարժերի համատեքստում որոշ շրջաններում ձևավորվել էին այլալեզու անկլավներ: Այսպես՝ Հյուսիսային Սիրիայում և Տավրոսի հարավային նախալեռներում էին գտնվում խառը՝ խեթա-լուվիական և արամեական բնակչություն ունեցող իշխանություններ (օրինակ՝ Սամալը և Բիթ-Ադինին), որտեղ իշխում էին արամեական արքայատոհմերը:

Լուվիական պետությունների պատմության աղբյուրները բազմաբնույթ են և պահպանվել են ինչպես սեփական, այնպես էլ հարևան երկրների զբաղոր ավանդույթներում: Դրանք առաջին հերթին լուվիական պետությունների պաշտոնական գրագրության լեզու հանդիսացող հիերոգլիֆային լուվիերեն արձանագրություններն են, որոնց վերծանությունը հիմնականում ավարտվեց 1940-50-ական թվականներին (տես Բաժին 2. Գլուխ 1): Այս՝ գերազանցապես շինարարական բնույթի կոթողային արձանագրությունները կազմված են լուվիական արքաների և այլ կարգավիճակ ունեցող կառավարիչների կողմից և հավաստի սկզբնաղբյուրներ են այդ պետությունների պատմության վերաբերյալ:

Կարևորագույն աղբյուրներ են նաև համաժամանակյա ասորեստանյան և Վանի թագավորության սեպագիր տեքստերը, որոնք մինչև հիերոգլիֆային արձանագրությունների վերծանվելը այս պետականությունների պատմության հիմնական սկզբնաղբյուրներն էին:

Հետխեթական դարաշրջանի Փոքր Ասիայի նյութական մշակույթի ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուրներ են մի շարք հնավայրերի հնագիտական հետազոտությունների ընթացքում հայտնաբերված նյութերը:

Լուվիական պետությունների պատմության ուսումնասիրության ասպարեզում, որ հիմնավորապես խթանվեց հիերոգլիֆային գրի վերծանության շնորհիվ, խոշոր ներդրում ունեն այնպիսի մասնագետներ, ինչպես Բ. Լանդսբերգերը, Թ. Հ. Բոսսերտը, Դ. Հոկինսը, Մ. Վեֆլերը, Ա. Մ. Յասինքը, Ա.-Մ. Վիտկեն և այլք: Լուվիական պետականության պատմության խնդիրները ուսումնասիրվել են նաև Հայաստանում:

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Լուվիական պետությունները Ք. ա. XII-X դարերում

Հետխեթական դարաշրջանում Փոքր Ասիայում և Հյուսիսային Սիրիայում կազմավորված և շուրջ 500 տարի գոյատևած լուվիական պետականության պատմությունը կարելի է պայմանականորեն բաժանել երկու շրջափուլերի: Առաջինը, որ մոտավորապես ընդգրկում է Ք. ա. XII-X դդ., բնութագրվում է խեթական տերության տրոհումից հետո նրա տարածքի մի մասում պետականության և մշակութային ավանդույթների գոյատևումով և այդ պետությունների հետագա ռազմաքաղաքական վերելքով, ընդհուպ մինչև դրանց մեծ մասի տրոհումը քաղկացուցիչ մասերի: Երկրորդ փուլը (Ք. ա. IX-VIII/VII դդ.) բնորոշվում է լուվիական պետությունների ներառմամբ ասորեստանյան և ուրարտական էքսպանսիայի ոլորտը, որի ավարտին դրանց մեծ մասը կորցրեց իր անկախությունը, ապրեց ժողովրդագրական էական փոփոխություններ՝ ինչպես Ասորեստանի և Վանի թագավորության արքաների կողմից իրականացվող տեղահանությունների, այնպես էլ արտաքին աշխարհից նոր էթնիկական խմբերի ներհոսքի հետևանքով:

Ստորև լուվիական պետությունների պատմությունը կներկայացվի վերոհիշյալ շրջափուլերով, քանզի առանձին պետությունների պատմության սկզբնաղբյուրները չափազանց սուղ են: Երկու փուլերում էլ առավել աչքի ընկնող լուվիական պետություններն էին Կարգամիսը, Մելիդը, ինչպես նաև Ք. ա. VIII դ.՝ թաբայան երկրները:

Դատելով հետխեթական շրջանի առավել վաղ հիերոգլիֆային արձանագրություններից և համաժամանակյա ասորեստանյան տեքստերից՝ խեթական տերության տրոհման շրջանում Կարգամիսը և Թարխունտասան էին այն կենտրոնները, որտեղ առանց ընդմիջման շարունակվեցին խեթական պետականության ավանդույթները:

Կարգամիսի (ժաման. Ջերաբլուս, թուրք-սիրիական սահմանի վրա՝ Եփրատի ափին) շուրջ մեկդարյա պեղումները որևէ հիմք չեն տալիս ենթադրելու XII դ. ընթացքում եղած ավերածությունների մասին՝ ի տարբերություն ավելի արևմուտք ընկած սիրիական ծովափնյա բնակավայրերի: Ամենայն հավանականությամբ, «ծովի ժողովուրդների» այլքը չէր հասել Սիրիայի խորքերը:

Ինչպես հայտնի է, Կարգամիսի խեթական արքայատոհմի՝ խեթական վերջին արքա Սուպալիուլիումաս II-ի ժամանակակիցը Տալմի-Թեշուրն էր, որից հետո՝ XII դ. վերջերին, Թիգլաթպալասար I-ի տեքստերում հիշատակվում է «Խաթթիի քաղաք Կարգամիսի արքա Ինի-Թեշուրը»: Այսինքն՝ երկու արքաների միջև ընկած էր շուրջ մեկդարյա ժամանակահատված: Կարգամիսի արքայի խորրիական անունը ենթադրում է խեթական դարաշրջանի քաղաքական ավանդույթների շարունակականություն:

Վճռական փաստարկը Եփրատի արևելյան ափին գտնվող Լիդար Հյույսից (Սամսատ քաղաքից ոչ հեռու) հայտնաբերված և նախկինում որպես Կարգամիսի վերջին արքա ենթադրվող Տալմի-Թեշուրի որդու կնիքի երկու դաջվածքներն են: Այս երկվեզվյան (հիերոգլիֆային և սեպագիր) կնիքի վրա պահպանված տեքստը հայտնում է հետևյալը. «Արքա Կուցի-Թեշուր, Կարգամիս երկրի արքա, Տալմի-Թեշուրի՝ Կարգամիս երկրի արքայի՝ աստվածներից ճանաչված որդի»:

Այսպիսով՝ Տալմի-Թեշուրին Կարգամիսի գահին հաջորդել է որդին՝ Կուցի-Թեշուրը, որի հետնորդները կառավարել են նաև Փոքր Ասիայի արևելքում՝ Մելիդում: Մելիդի արքայատոհմի կապը Կուցի-Թեշուրի հետ պարզվեց Արսլանթեփեից (հին Մալաթիա) վաղուց հայտնի երկու արձանագրություններից, որտեղ մելիդյան արքաներ Ռունտիյասը և Անուվանտիսը հիշատակում են իրենց պապին՝ Կուցի-Թեշուրին:

Այս հայտնագործության պատմագիտական արժեքը դժվար է գերազնահատել, քանի որ այն միանշանակ վկայում է Կարգամիսում խեթական ժամանակներից եկող արքայական իշխանության շարունակականության մասին: Որ այս դարաշրջանում Կարգամիսը ամենևին փոքր քաղաքական միավոր չի եղել, փաստվում է Մելիդում կարգամիսյան արքայատոհմի մի ճյուղի տիրապետությունը հաստատող մելիդյան արձանագրություններով:

Կարգամիսյան արձանագրությունները պահպանել են շուրջ մեկ տասնյակ արքաների անուններ, ևս երեքը՝ Ինի-Թեշուրը, Սանգարան և Պիսիրիսը հայտնի են ասորեստանյան տեքստերից: Սրանցից Ք. ա. XII-XI դդ. թվագրվում են, բացի Ինի-Թեշուրից, ևս երկուսը՝ X-pa-ziti-ն և նրա որդի Ուրա-Թարխունտասը: Դ. Հոկինսը արիսայիկ արձանագրություններից մեկում ընթերցում է «Մեծ արքա Թուդխալիաս», որին, նկատի ունենալով այս տիտղոսի առկայությունը, նույնպես կարելի է տեղադրել XII-XI դդ.:

Այսպիսով՝ Խաթթիի տրոհումից հետո անցած երկու դարերի ընթացքում Կարգամիսում վկայված են հինգ արքաներ, որոնք բոլորն էլ կրում են խեթական արքաների «մեծ արքա» տիտղոսը՝ Կուցի-Թեշուր, Ինի-Թեշուր, Թուդխալիաս, X-pa-ziti

և Ուրա-Թարխունտաս: Սրանցից վերջին երկուսը, անկասկած, կառավարել են մոտավորապես Ք. ա. XI դ. երկրորդ կեսին - X դ. սկզբներին, և Ուրա-Թարխունտասից հետո, ամենայն հավանականությամբ, Կարգամիսում տեղի է ունեցել արքայատոհմի փոփոխություն:

Այսպիսով՝ Խաթթիի տրոհումից հետո նախկին տերության սիրիական և արևելափոքրասիական տիրույթներում շուրջ երկու դար շարունակեց գոյատևել Կարգամիսի քույր-թագավորությունը: Ասորեստանյան արքաների համաժամանակյա տեքստերում այս պետությունը շարունակում էր կոչվել «Մեծ Խաթթի»՝ այնպես, ինչպես Խեթական տերությունը: Կարգամիսում իշխում էին խեթական արքա Սուպալիուլիումաս I-ի որդիներից Պիյասսիլիի հիմնած արքայատոհմի արքաները, ընդհուպ մինչև Ք. ա. XI դ. վերջերը - X դ. սկզբները:

Այս նույն ժամանակներում Խաթթիի փոքրասիական շրջանների մի մասում շարունակում էր գոյատևել մեկ այլ պետություն, որը իր՝ խեթական ժամանակաշրջանից հայտնի մայրաքաղաքի անունով պայմանականորեն ընդունված է անվանել «Թարխունտասսա»:

Խաթթիի ժառանգորդ Թարխունտասսայի գոյությունը հաստատվում է Կոնյայի հարթավայրի երկու վայրերից հայտնաբերված արձանագրությունների հիման վրա՝ կազմված «մեծ արքա» Խարտապուսի կողմից: Նկատի ունենալով հետագայում՝ Ք. ա. IX-VIII դդ. ասորեստանյան և Վանի թագավորության աղբյուրներում այս շրջանում հիշատակվող Թարալի մեծաքանակ պետությունների առկայությունը՝ ենթադրվում է, որ Խեթական տերության անկումից հետո այստեղ խեթական պետականության ավանդույթները պետք է շարունակվեին: Խարտապուսի պետությունը, փաստորեն, դեռևս XIII դ. 60-ական թվականներից Կոնյայի հարթավայրում և հարակից շրջաններում խեթական արքայատոհմի մի ճյուղի (Մուվատալլիս II-ի թոռ Կուրունտան) կողմից կառավարվող և Կարգամիսին հավասար կարգավիճակ ունեցող թագավորության շարունակությունն էր:

Թարխունտասսայի թագավորության զբաղեցրած տարածքի և քաղաքական պատմության վերաբերյալ տեղեկությունները առայժմ խիստ սուղ են:

Ինչ վերաբերում է Արևելյան Փոքր Ասիային, որտեղ Կարգամիսի արքաների գերակայությամբ գոյություն ուներ Մելիդի թագավորությունը, ապա Խաթթիի տրոհման շրջանում այստեղ հնագիտորեն ավերածություններ վկայված չեն: Հյուսիս-արևելյան ժողովուրդների տեղաշարժերը չեն ընդգրկել այս շրջանը, նույնը նաև ասորեստանյան աղբյուրների հիշատակած մուշկերի, ուրումեացիների և կասկերի տեղաշարժերը: Փաստորեն, Խեթական տերության գոյության շրջանում այստեղ գտնվող Մալդիա-Թեգարամայի շրջանը նույնպես շարունակում էր մնալ խեթական քաղաքական ավանդույթների ոլորտում:

Լուվիական պետությունների շարքում առանձնահատուկ տեղ էր զբաղեցնում Կարգամիսը, որը՝ որպես նախկինում Խեթական տերության քույր-պետություն, կարևորագույն դերակատարում ուներ Խաթթիի արտաքին քաղաքականության ոլորտում՝ ապահովելով վերջինիս սիրիա-միջագետքյան բոլոր ձեռնարկումների իրական-

նացումը: Որպես կանոն՝ խեթերը սիրիական կախյալ երկրների նկատմամբ վերահսկողությունն իրականացնում էին Կարգամիսի միջոցով: Դատելով ըստ ամենայնի՝ Խաթթիի տրոհումից հետո Կարգամիսը բավական երկար պահպանեց իր այդ՝ նախկինում ունեցած դերը սիրիական տարածաշրջանում՝ անմիջականորեն վերահսկելով Տավրոսից հարավ ընկած նախկին խեթական տիրույթների մեծ մասը:

Կարգամիսի պատմության առաջին փուլի ընթացքում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունների մասին աղբյուրների տեղեկությունները խիստ սահմանափակ են, սակայն Հյուսիսային Սիրիայի այլ լուվիական պետություններից մեզ հասած տեքստերի հետ համադրումը թույլ է տալիս հանգել կարևոր եզրակացությունների:

Խեթական տերության տրոհումից հետո Կարգամիսի առաջին հավաստի հիշատակությունը գալիս է Ասորեստանի արքա Թիզլաթպալասար I-ից, ում հեռահար արշավանքի հետևանքով ասորեստանյան բանակը, կտրել-անցնելով Հյուսիսային Սիրիան, հասավ Միջերկրական ծովի ափերը (տե՛ս «Բաժին 1. Մաս 2. Գլուխ 2»): Արշավանքը չէր կարող բացասական անդրադարձ ունենալ Կարգամիսի թագավորության հետագա գոյության համար, քանի որ վերջինիս արքա Ինի-Թեշուբը, միաժամանակյա հարկ տալով նվաճողին, պահպանեց իր երկրի միասնությունը:

Այս նույն ժամանակներում է առաջին անգամ հիշատակվում Մելիդի թագավորությունը՝ Ասորեստանի արքա Թիզլաթպալասար I-ի՝ Ք. ա. 1112 թ. դեպի «Վերին ծով» կազմակերպած արշավանքը նկարագրող տեքստում: Քիչ ավելի ուշ հիշատակվում է «Միլիդիա քաղաքի արքա Ալլումարին», որից ասորեստանյան արքան հարկ էր ստացել: Այս պահից ի վեր, ընդհուպ մինչև Ք. ա. IX դ. առաջին կեսը, Մելիդը ասորեստանյան աղբյուրներում այլևս չի հիշատակվում:

Անցած ավելի քան երկու հարյուր տարվա ընթացքում Մելիդի թագավորության պատմության վերաբերյալ տեղեկությունները սահմանափակվում են տեղական՝ հիերոգլիֆային արձանագրությունների (թվով շուրջ 20)՝ դժվարընթեռնելի հատվածներ պարունակող ենթատեքստերում: Վերոհիշյալ արձանագրությունները թույլ են տալիս լրացնել Մելիդի պատմության «խավար դարաշրջանի» պատմությունը:

Մելիդյան արձանագրություններում պահպանվել են Ք. ա. XII-X դդ. կառավարած առնվազն 10 արքաների անուններ, որոնցից առաջինի անվան առաջին սկզբնամասը գրված է գաղափարագրով՝ PUGNUS-mili: Այն նախկինում ընթերցվել է որպես Սուլումիլի՝ Թիզլաթպալասար III-ի տեքստերում որպես Մելիդի արքա հիշատակվող Սուլումալի անվան հետ համադրման հիման վրա:

Հետխեթական փուլի առաջին երկու դարերի ընթացքում, շնորհիվ մելիդյան վաղ շրջանի հիերոգլիֆային արձանագրություններում պահպանված սուղ տեղեկությունների, կարելի է մասնակիորեն վերականգնել Մելիդի քաղաքական պատմության որոշ հարցեր: Վերոհիշյալ արձանագրություններից երեքում տեղեկություններ են հաղորդվում Մելիդի տարածքի և ռազմաքաղաքական պատմության որոշ խնդիրների վերաբերյալ:

Մելիդյան արքայատոհմի երկրորդ ներկայացուցիչ Ռունտիյասի երկու արձանագրությունները վկայում են հօգուտ այն բանի, որ արդեն XII դ. կեսերին արևելա-

փոքրասիական այս պետությունը զգալի քաղաքական ակտիվություն է ցուցաբերել, հատկապես Եփրատից արևմուտք ուղղությամբ:

Տեքստերից մեկում հիշատակվում է երկու լեռների նվաճումը (Խարխար և Մուցի): Սրանց տեղայնացման համար բավարար տեղեկություններ են պահպանվել Ք. ա. IX-VIII դդ. հիերոգլիֆային լուվիական և ասորեստանյան աղբյուրներում: Վերջիններիս օգնությամբ հնարավոր է դառնում Խարխարը համարել ներկայիս Էրջիյաս (անտիկ Արգեսո) լեռան տեղական անվանումը, իսկ Մուցին՝ Կիլիկյան Տավրոսի մի մասը հանդիսացող ժամանակակից Բուկարդաղլարը անվանումը կրող լեռնազանգվածի խեթա-լուվիական անվանաձևերը:

Հենվելով Ռունտիյասի արձանագրության մեջ հաղորդվող տեղեկությունների վրա՝ հնարավոր է հանգել մի կարևոր եզրակացության, այն է՝ արդեն այս ժամանակաշրջանում Մելիդը դրսևորել է արտաքին քաղաքական մեծ ակտիվություն, քանի որ Ռունտիյասը ի վիճակի է եղել ռազմական արշավանք կազմակերպելու դեպի ժամանակակից Կայսերիի շրջան և հարակից տարածքներ: Սա այն շրջանն է, որի անմիջական հարևանությամբ է ենթադրվում Թարխունտասա – «Խարտապուսի պետությունը»:

Եթե ընդունենք, որ Մելիդի տիրույթներն արևելքում սահմանափակվել են Եփրատով, ապա Ռունտիյասի արևմտյան արշավանքի տվյալների հիման վրա կարելի է եզրակացնել, որ նրա օրոք այս պետությունն ունեցել է բավական խոշոր տարածք՝ շուրջ 300 կմ արևելքից արևմուտք: Ռունտիյասի հաջորդների օրոք (Անուվանտիս և Տարաս) նույնպես շարունակվել են արտաքին քաղաքական ձեռնարկումներ, որոնց վերաբերյալ կան որոշ տեղեկություններ:

Այսպիսով՝ Խաթթիի տրոհումից հետո Մելիդը խեթական պետականության ժառանգորդն էր Հարավարևելյան Փոքր Ասիայում: Կարգամիսից ծագող տեղական արքայատոհմի արքաները Ք. ա. XII-XI դդ. ստեղծել են մի զգալի տարածք ընդգրկող պետություն: Դատելով Մելիդի ավելի ուշ շրջանի պատմությունից՝ ըստ ասորեստանյան և ուրարտական աղբյուրների, այս քաղաքական միավորը զգալի դեր է խաղացել լուվիական քաղաքական-մշակութային համակարգում: Մելիդի քաղաքական վերելքին անկասկած պետք է նպաստեր փոքրասիական տարածաշրջանում հզոր ռազմաքաղաքական ներուժ ունեցող պետության բացակայությունը, ինչպիսիք էին արդեն Ք. ա. IX-VII դդ. Ասորեստանը և Վանի թագավորությունը:

Լուվիական պետությունները Ք. ա. IX-VIII դարերում. Ասորեստանի և Վանի թագավորության էքսպանսիան

Ք. ա. IX դ. կեսերից Մելիդի թագավորությունը, ինչպես նաև Հարավարևելյան Փոքր Ասիայի և Հյուսիսային Սիրիայի լուվիական ու արամեական պետականությունները ներքաշվեցին ռազմաքաղաքական վերելք ապրող Ասորեստանի Նոր թագավորության արտաքին քաղաքականության ոլորտը:

Ասորեստանյան առաջին արքան Աշշուրնաժիթպալ II-ն էր, ում օրոք սկսվեց Հյուսիսային Սիրիայի նվաճումը: Ք. ա. 876 թ. անցնելով Եփրատը արամեական

Բիթ–Ադինիի տարածքով՝ ասորեստանյան զորքը մտավ Կարգամիսի տարածք (ադրյուրն այն անվանում է «Խաթթի») և ստացավ դրա արքա Սանգարայի հարկը: Այնուհետև, շարունակելով երթը, ասորեստանցիք հաջորդաբար ներթափանցեցին արամեական Բիթ–Ագուսի, լուվիական Ունքի (տեղական անվանումը՝ Պատտին, ժամանակակից Ամուք լճին հարող շրջաններում), որից հետո Օրոնտես գետի հովտով հասան մինչև փյունիկյան ծովեզերք: Այս արշավանքի ընթացքում հյուսիսսիրիական պետությունները դիմադրություն ցույց չտվեցին՝ սահմանափակվելով միայն ասորեստանյան արքային նվերներով սիրաշահելով: Այն որևէ քաղաքական հետևանք չունեցավ, ինչի ապացույցը Սալմանասար III–ի կողմից սկսված նոր արշավանքների շարքն էր:

Սալմանասարի արևմտյան արշավանքներն ընդգրկեցին ողջ հյուսիսսիրիական տարածաշրջանը, ինչպես նաև Հարավարևելյան Փոքր Ասիան և տեղից շուրջ քառորդ դար: Ք. ա. 858 թ. սկսած՝ ասորեստանյան զորքերը կանոնավոր արշավում էին՝ փորձելով Ասորեստանի կայուն ներկայությունն ապահովել այստեղ:

Ասորեստանի առաջին հարվածն իր վրա ընդունեց Բիթ–Ադինին՝ Ք. ա. 858–855 թթ.: Ավարտելով դրա նվաճումը՝ Սալմանասարը Եփրատից արևմուտք բախվեց Կարգամիսի, Սամալի և Ունքիի միացյալ ուժերի հետ, որոնց աջակցում էին ևս երկու լուվիական երկրներ՝ Կուեն և Խիլակկուն (Կուեից արևմուտք): Հաջողությունն ուղեկցեց ասորեստանցիներին, որից հետո արքան վերադարձավ: Այնուամենայնիվ, արևմուտքում նա դեռ խնդիրներ ուներ լուծելու, քանի որ հաջորդ տարի ասորեստանցիք կրկին արշավեցին, ստացան նախորդ տարում պարտված երկրների հարկը (նաև Մելիդի արքա Լալլիի հարկը), որից հետո շարժվեցին հարավ: Ք. ա. 855 թ. անհաջողություն կրելով Կարկարի մոտ (Օրոնտեսի ափին) արամեական Դամասկոսի և լուվիական Համատի կողմից ստեղծված 12 պետություններից բաղկացած միացյալ զորքի դեմ ձևակատամարտում՝ նա հետ դարձավ: Սալմանասարի հետագա տարիների արշավանքները Կենտրոնական Սիրիայում էական հաջողություն չբերեցին Ասորեստանին:

Հնագանդեցնելով Սիրիայի հյուսիսը՝ Սալմանասարը սկսեց Հարավարևելյան Փոքր Ասիայի նվաճումը: Առաջին արշավանքն ուղղված էր Կուեի դեմ (Ք. ա. 839 թ.), որին հաջորդեց Ք. ա. 837 թ. արշավանքը Մելիդի հարավային սահմաններով դեպի Թաբալ: Թաբալի արքա Տուատտեն (լուվիական Տուվատիս), ինչպես նաև դրա հարևանությամբ գտնվող Խուրուշնան (անտիկ Կիբիստրա) առանց դիմադրության հպատակվեցին: Այստեղից իջնելով Կուեն՝ Սալմանասարը վերադարձավ Ասորեստան: Նրա կառավարման վերջին տարիներին Կուեում և Հյուսիսային Սիրիայի որոշ երկրներում տեղի ունեցան անհնազանդության դեպքեր, որոնք ձնշվեցին:

Չնայած Սալմանասարի շարունակական արշավանքներին և լուվիական ու արամեական պետությունների նվաճմանը՝ Ասորեստանի դիրքերն այստեղ կայուն չէին: Բիթ–Ադինիում տեղակայված ասորեստանյան կառավարիչը ի վիճակի չէր վերահսկելու բոլոր այս երկրները: Այստեղ շարունակում էին ժառանգաբար կառավարել տեղական արքայատոհմերը, և կախվածությունը Ասորեստանից արտահայտվում

էր միայն ամենամյա հարկի առաքմամբ: Նրանք ներքին կյանքում ինքնուրույն էին, և միայն դեպքից դեպք ասորեստանցիները միջամտում էին: Սալմանասարի մահից հետո ավելի քան կես դար Ասորեստանը հիմնականում դուրս մղվեց Հյուսիսային Սիրիայից և Փոքր Ասիայից՝ զրկվելով նաև իր ներկայությունից բխող տնտեսական խոշոր հեռանկարներից: Ադադնիրարի III–ը փորձում էր ակտիվություն ցուցաբերել Սիրիայում, սակայն նրա գործողությունները լուրջ հաջողություն չբերեցին և համեմատելի չէին Սալմանասարի արշավանքների հետ:

Ասորեստանը փոքրասիական լուվիական երկրների հանդեպ նկրտումներ ունեցող միակ հզոր ուժը չէր: Ք. ա. IX դ. վերջերից խաղի մեջ մտավ Վանի թագավորությունը: Սկզբում Մենուան իր գերիշխանությունը հաստատեց Մելիդի նկատմամբ, այնուհետև Արգիշտի I–ը, կտրել–անցնելով Մելիդը, իր հեռահար արշավանքն ավարտեց նրա արևմտյան հարևան Թաբալի տարածքում: Վանի թագավորության արշավանքների հետևանքով Մելիդը ուղղակի կախման մեջ ընկավ նրանից, մի քան, որ վկայված է Արգիշտիի հաջորդ Սարգուրի II–ի օրոք:

Ադադնիրարի III–ի օրոք Ասորեստանի արտաքին քաղաքականության որոշ ակտիվացումը չէր կարող չանդրադառնալ հզորացած Վանի թագավորության հետ Մելիդի փոխհարաբերությունների վրա: Արդեն Ք. ա. VIII դ. կեսերից լուվիական և արամեական երկրները հայտնվեցին Ասորեստանի և Վանի թագավորության առձակատման ոլորտում: Մելիդի, Գուրգուսի, Կումմուխի, Բիթ–Ագուսիի և այլոց զորքերը մասնակցում էին Ք. ա. 743 թ. Քիշտանի և Խալպիի մոտ տեղի ունեցած ձևակատամարտին, որտեղ Թիգլաթպալասար III–ի հաղթանակով սկսվեց Ասորեստանի կողմից լուվիական պետությունների նվաճման գործընթացը:

Իրավիճակը կտրուկ փոխվեց Թիգլաթպալասար III–ի իշխանության գալով: Ք. ա. 743 թ. Քիշտանի և Խալպիի ձևակատամարտում Վանի թագավորության և նրա դաշնակից լուվիական ու արամեական երկրների նկատմամբ տարած հաղթանակներից հետո ասորեստանցիները սկսեցին սիրիափոքրասիական տարածաշրջանի լուվիական և արամեական երկրների նվաճումը: Մի քանի տարում Ասորեստանի տիրապետությունը տարածվեց Կենտրոնական Սիրիայից մինչև Տավրոսից հյուսիս ընկած Թաբալի վրա: Ադրյուրները, որպես Ասորեստանի հարկատուներ, հիշատակում են, Կումմուխը, Կուեն, Դամասկոսը, Կարգամիսը, Համատը, Սամալը, Գուրգուսը, Մելիդը, Թաբալը, Տուխանան, Ատունան, Իշտունդան, Խուբիսան:

Թիգլաթպալասարի օրոք արմատապես փոխվեց սիրիափոքրասիական երկրների նկատմամբ Ասորեստանի քաղաքականությունը: Նախկինում ասորեստանցիք սահմանափակվում էին վերոհիշյալ տարածաշրջանի երկրների նկատմամբ գերիշխանության հաստատմամբ, որը հիմնականում արտահայտվում էր ամենամյա հարկի սահմանումով: Այստեղ շարունակում էին իշխել տեղական արքայատոհմերը, և ներքին գործերում նրանք որոշակիորեն ինքնուրույն էին: Թիգլաթպալասարն առաջինն էր, ով ձեռնարկեց կախյալ երկրները ասորեստանյան վարչաքաղաքական համակարգ ներառելու գործը: Ք. ա. 730–ական թվականներին սիրիական մի շարք երկրներում վերացվեց տեղական արքայատոհմերի իշխանությունը, և վեր-

ջիններս վերածվեցին ասորեստանյան մարզերի՝ ուղղակիորեն կառավարվելով ասորեստանյան կառավարիչների կողմից (Ունքի, Կուլլանի, Խատարիկկա, Ծիմիր-րա, Դամասկոս, Նաև, հավանաբար, Մանծուատե): Այս քաղաքականության նպատակը նվաճված երկրների բնակչության կենտրոնախույս միտումների դրսևորման հնարավորությունը նվազագույնի հասցնելն էր, քանի որ մարզերի կազմակերպումը ուղեկցվում էր արքայատոհմների և ազնվականության մի մասի բռնի տեղահանմամբ ու ասորեստանյան տերության այլ շրջաններում բնակեցմամբ: Տեղերից բնակչության դուրսբերման հետ միաժամանակ այնտեղ բնակեցվում էր Ասորեստանի այլ շրջաններից բերված այլախոս բնակչություն: Մի քաղաքականություն, որն իր բարձրակետին հասավ Սարգոն II-ի օրոք:

Սարգոնի ակտիվությունը հյուսիսում և արևմուտքում թերևս համեմատելի է Սալմանասար III-ի շրջանի հետ: Սկսած Ք. ա. 718 թ.՝ ասորեստանյան զորքերը առանձնահատուկ եռանդով իրականացրին մի շարք ռազմական գործողություններ, որոնց հետևանքով Սիրիայի հյուսիսը և Հարավարևելյան Փոքր Ասիան վերածվեցին ասորեստանյան մարզերի: Առաջինը թաքայան Շինուխտուն էր, որի արքա Կիյակկին մահապատժի ենթարկվեց, երկրի տարածքը հանձնվեց հարևան Ատունային, իսկ ազնվականությունը տեղահանվեց Ասորեստան: Նույն թվականին գահընկեց արվեց Թաքալի առավել հզոր պետություն Բիթ-Բուրուտաշի արքա Խուլլին, փոխարենը արքա հռչակվեց Ամբարիսը, որին կնության տրվեց Սարգոնի դուստրերից մեկը՝ Ախատ-աբիշան: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ նման քայլերն էլ ի վիճակի չէին կարգավորելու արտաքին քաղաքական խնդիրները:

Ք. ա. 714 թ. Սարգոնի՝ դեպի Վանի թագավորություն ձեռնարկած արշավանքի շրջանում Թաքալի երկրները դուրս եկան Ասորեստանի վերահսկողությունից հավանաբար Ռուսա I-ի և Փոյուգիայի արքա Միտայի (անտիկ աղբյուրների Միդաս) ջանքերի շնորհիվ, որոնք փորձում էին ստեղծել հակաասորեստանյան դաշինք: Սարգոնի՝ Կուեի ասորեստանյան կառավարչի հետ ունեցած նամակագրությունից պարզվում է, որ Կուեի արքա Ուրիկկին փորձել էր դեսպանություն առաքել Վանի թագավորություն, սակայն նրանք ձերբակալվել էին Միտայի կողմից և հանձնվել ասորեստանցիներին: Սարգոնը գահագրկեց Ամբարիսին՝ վերջինիս 500 մերձավորների հետ միասին տեղահանելով Ասորեստան: Նույն թվականին գահագրկվեց Բիթ-Բուրուտաշի արևելյան հարևան Մելիդի արքա Գունգինանին, իսկ հաջորդ տարի՝ նաև վերջինիս փոխարեն արքա նշանակված Թարխունագին: Մելիդում նոր արքա չնշանակվեց, այլ փոխարենը նրա տարածքը կցվեց Տավրոսից հարավ ընկած և Սարգոնի պատկերացմամբ՝ հավատարիմ Կումմուխին:

Ք. ա. 717 թ. գահագրկվեց Կարգամիսի արքա Պիսիրիսը, և երկիրը վերածվեց ասորեստանյան մարզի: Տավրոսից հարավ ընկած լուվիական պետություններից միայն Կումմուխն էր, որ դեռ որոշ ժամանակ պահպանեց իր հարաբերական ինքնուրույնությունը՝ գերազանցապես շնորհիվ Ասորեստանի նկատմամբ լոյալության: Սակայն Ք. ա. 708 թ. Կումմուխն էլ նվաճվեց, և նրա վերջին արքա Մուտալլուն (Մուվատալլիս) գերեվարվեց Ասորեստան:

Այսպիսով՝ Ք. ա. 708 թ. լուվիական պետականությունները մի կարճ ժամանակահատվածում գրեթե ամբողջությամբ ներառվեցին Ասորեստանի վարչաքաղաքական համակարգ: Այնուամենայնիվ, հետագա քաղաքական զարգացումներն անկանխատեսելի էին:

Լուվիական պետությունները Ք. ա. VII դարում. ասորեստանյան տիրապետության ավարտը

Չնայած Սարգոն II-ի ձեռնարկումներին, որոնց ընթացքում Փոքր Ասիայի լուվիական երկրները կորցրին իրենց անկախությունը՝ վերածվելով ասորեստանյան մարզերի, այնուամենայնիվ այս ընդարձակ տարածաշրջանում Ասորեստանի հաջողությունները ժամանակավոր էին: Ընդամենը մի քանի տարի անց՝ Ք. ա. 705 թ., Սարգոնը ստիպված էր անձամբ ղեկավարել ասորեստանյան զորքն ընդդեմ Կուլումմայի կառավարիչ Գուրդիի: Ճակատամարտն ավարտվեց նրա պարտությամբ: Արքան ընկավ մարտում, մի իրադարձություն, որով Ասորեստանի փաստացի տիրապետությունը Փոքր Ասիայում՝ Տավրոսից հյուսիս, ավարտվեց: Արդեն հաջորդ տարի Սինախիսերիբի արշավանքը Թաքալ ավարտվեց անհաջողությամբ, իսկ շուրջ տասը տարի անց՝ Ք. ա. 695 թ., ասորեստանյան աղբյուրները հաղորդում են Թիլգարիմնուում (նախկին Մելիդի կարևոր կենտրոններից մեկը) ում Գուրդիի կողմից պետության ստեղծման մասին: Դժվար է կապ չտեսնել այս վերջինի և Ք. ա. 705 թ. Սարգոնի հակառակորդի միջև:

Սարգոն II-ի կառավարման օրոք և հետագայում Փոքր Ասիայում հակաասորեստանյան միտումների աճը և ասորեստանյան տիրապետության ավարտը թերևս պայմանավորված էին այս տարածաշրջանում ժողովրդագրական լուրջ փոփոխություններով ու ասորեստանցիների կողմից լուծարված լուվիական պետականությունների տարածքում ապրող էթնիկական այլ խմբի ակտիվությամբ: Փաստորեն, Գուրդին վերականգնեց Մելիդը, իսկ որոշ ժամանակ անց ասորեստանյան աղբյուրները հաղորդում են նաև Թաքալի պետության գոյության մասին:

Գուրդին ոչ միայն կարողացավ թոթափել Ասորեստանի գերիշխանությունը, այլև զգալիորեն ընդարձակեց իր տիրույթները: Մելիդում ստեղծված նոր պետականությունը բավական կայուն դուրս եկավ: Ո՛չ Սինախիսերիբը, ո՛չ էլ նրա հաջորդներ Ասարհադդոնը և Աշշուրբանակալը չկարողացան այստեղ գերիշխանություն հաստատել:

Ըստ աղբյուրների՝ Ասարհադդոնի օրոք Արևելյան Փոքր Ասիայում, ինչպես նաև Թաքալում սուր հակամարտություն էր ընթանում մի կողմից՝ Ասորեստանի, մյուս կողմից՝ Մելիդի, Թաքալի և նրանց հետ դաշնակցած կիմերների միջև: Ասարհադդոնի կողմից Ք. ա. 679 թ. Խուրուշնայի մոտ (նախկին լուվիական Խուրիսան) կիմերներին հասցված պարտությունից մի քանի տարի անց՝ Ք. ա. 675 թ., Ասորեստանը պատերազմ սկսեց ընդդեմ Մելիդի արքա Մուգալ-

լուի, որը նրան հաջողություն չբերեց: Այդ է վկայում այն փաստը, որ արքայի պաշտոնական արձանագրություններում արշավանքի մասին տեղեկությունները պահպանվել են Շամաշ աստծուն ուղղված ասորեստանյան արքայի գուշակային տեքստերում: Այստեղ հիշատակվում են Մելիդի արքա Մուգալլուն և Թաբալի արքա Իշկալլուն, որոնց դեմ ռազմական գործողություններ էին վարում ասորեստանյան զորավարները: Այնինչ Ք. ա. 675 թ. թվագրվող բաբելոնյան ժամանակագրության մեջ հիշատակվում է Ասարհադդոնի արշավանքն ընդդեմ Մելիդի՝ առանց նշելու պատերազմի արդյունքը: Մասնագետների միահամուռ կարծիքով՝ այս պահին Մուգալլուն Ասորեստանից լիովին անկախ կառավարիչ էր, ինչպես և նրան ժամանակակից, հարևան Թաբալի կառավարիչ Իշկալլուն: Թե ինչպիսի ավարտ ունեցավ այդ հակամարտությունը, պարզ չէ, սակայն Աշշուրբանասալի կառավարման առաջին տարիներով թվագրվող մեկ այլ ասորեստանյան տեքստ արդեն հիշատակում է Թաբալի արքա Մուգալլունին: Անկասկած, նախորդ շրջանի իրադարձությունների զարգացումը հանգեցրել էր Մելիդի և Թաբալի միավորմանը մեկ միասնական պետության մեջ:

Մուգալլուի ստեղծած պետության հետագա պատմության վերաբերյալ առկա է ևս մեկ տեղեկություն: Աշշուրբանասալի ուշ շրջանի տեքստերից մեկը (մոտ Ք. ա. 640 թ.) հաղորդում է Մուգալլուի որդու մասին, ով սկզբում հարկ էր առաքում Ասորեստան, սակայն այնուհետև միացել էր կիմմերական առաջնորդ Դուգդամմեի (Հերոդոտոսի Լիգդամիսը) հետ: Կիմմերների հետ Մելիդ-Թաբալի դաշինքը, թերևս, կայացել էր Դուգդամմեի՝ դեպի Լիդիա ձեռնարկած հաջող արշավանքի և դրա մայրաքաղաք Սարդեսի գրավման համատեքստում:

Այսպիսով՝ Ասարհադդոնի օրոք ավարտվում են Փոքր Ասիայում ասորեստանյան տիրապետությունը վերականգնելու փորձերը, և այստեղ ձևավորվում են նոր պետականություններ: Դրանց հետագա պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրներում էական նշանակություն ունեցող տեղեկություններ այլևս չկան մինչև այն պահը, երբ այս տարածքի արևելյան մասն ընդգրկվում է Աքեմենյան տերության մեջ՝ կազմելով դրա Ք. ա. XIII սատրապության մասը:

3. ՓՈՔՐ ԱՍԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԻՐԻԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Ք. ա. II հազ. վերջին դարերում՝ Խեթական տերության տրոհումից հետո, նրա մշակութային ժառանգությունը շարունակվեց այն տարածքում, որտեղ ձևավորվեցին լուվիական պետությունները: Դա վերաբերում է ինչպես նյութական (ճարտարապետություն, քանդակագործություն և այլն), այնպես էլ հոգևոր մշակույթին:

Հետխեթական շրջանի Փոքր Ասիայի և Սիրիայի լուվիական պետականությունների նյութական և հոգևոր մշակույթի գլխավոր առանձնահատկություններն են Խեթական տերության մշակութային ավանդույթների շարունակումը, միաժամանակ՝

դրանց տեղական դրսևորումների հետագա կարծրացումը, որոնք ժամանակի ընթացքում վերածվում են ուղղորդիչ միտումի: Ոչ պակաս կարևոր առանձնահատկություն պետք է համարել հարևան մշակութային համայնքների (առաջին հերթին՝ սեմական) ազդեցության անձր՝ համեմատած Խեթական տերության ժամանակների հետ: Լուվիական դարաշրջանի մշակույթի վերաբերյալ աղբյուրները համեմատաբար սահմանափակ են և ներառում են կոթողային կառույցների մնացորդները, ինչպես նաև ծիսապաշտամունքային ոլորտը:

Ինչպես և Խեթական դարաշրջանում, խոշոր քաղաքները բաղկացած էին երկու մասերից՝ պարսպապատ բարձրադիր միջնաբերդից և ստորին քաղաքից, որը նույնպես ամրացված էր պարսպով: Արքայական պալատի կարևորագույն մասն էր կազմում սյունաշար դահլիճը (աքքադ.՝ *բիթ խիլանի* – «խիլանի տուն»), մի ոճ, որը Ք. ա. IX դ. ասորեստանյան արշավանքների ընթացքում տարածվեց Միջագետքում: Պալատների, տաճարների, նաև պարիսպների մուտքի մոտ ստորին շարվածքի քարերը գրեթե ամենուրեք զարդարվում էին առասպելական կամ ռազմի տեսարաններ պատկերող քարձրաքանդակներով: Մեծ քանակություն են կազմում կոթողային արձանները (աստվածներ, արքաներ): Ուշ Խեթական մշակույթի ուժեղ ազդեցություն են կրում նաև Սիրիայի արամեական պետությունները (Սամալ, Բիթ-Ագուսի, Բիթ-Ադինի և այլն):

Խեթական դիցարանի սինկրետիկ կառուցվածքը ժառանգվեց լուվիական պետությունների կողմից: Դիցարանը գլխավորում էր Ամարոպի աստված Թարխունտասը: Մեծ ժողովրդականություն էին վայելում Կուրաբան (փոյուզական Կիբելե), Կարխուխասը (այս երկուսը՝ հատկապես Կարգամիսում), Արևի աստված Տիվատը, Լուսնի աստված Արմասը:

4. ԼՈՒՎԻԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Լուվիական պետություններից Մելիդի տարածքը համապատասխանում էր պատմական Փոքր Հայքին, ինչից բխում է, որ հետագայի հայկական պետականության և էթնոսի ձևավորման գործընթացում մեծ պետք է լիներ լուվիական քաղաքիչի դերը: Հայագիտական ուսումնասիրություններում, սկսած Պատմահայր Մովսես Խորենացուց, Փոքր Հայքի և հարակից շրջանների հետ է հիմնականում առնչվում հայ ժողովրդի վաղ պատմությունը, Մելիդում էր գտնվում «Տուն Թորգոնան», որտեղից առաջին հայկյանները, ըստ ավանդության, տարածվեցին և բնակեցրին Մեծ Հայքը: Վերոհիշյալի լույսի տակ լուվիական-հայկական առնչությունները նոր բովանդակություն են ստանում, և ըստ այդմ՝ լուվիարենակ աշխարհի՝ Հայկական լեռնաշխարհին հարող տարածքների հետ կապերը կարող են ներկայանալ ոչ որպես երկու կամ ավելի պետականությունների, համապա-

տասխանաբար նաև էթնիկական խմբերի միջև փոխհարաբերություններ, այլ հայոց պատմության բաղկացուցիչ մաս: Ստորև համառոտակի բնութագրենք այդ փոխառնչությունները, քաղաքական և լեզվամշակութային տեսանկյուններից (հայ-փոքրասիական փոխառնչությունների՝ ավելի վաղ շրջանի իրողությունների մասին տե՛ս Բաժին 2. Գլուխ 1):

Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի միջև քաղաքական առնչությունների կիզակետում ընկած է «Տուն Թորգոմայի» խնդիրը, որն առ այսօր մասնագիտական քննարկումների առարկա է: Նկատի առնելով «Տուն Թորգոմայի» հետ հայոց առաջին նահապետների՝ խորենացիական կապը, մասնագետների զգալի մասը հակված է հենց անդրեփրատյան տարածքներում փնտրելու հայոց վաղ պետականության հնագույն օջախներից մեկը: Ըստ վաղուց ի վեր ձևակերպված տեսության՝ Ք. ա. VIII դ. վերջերին Մելիդի թագավորության անկման շրջանում այստեղ պետք է տեղի ունենար իշխանության փաստացի անցում գահագրկված և Ասորեստան բռնագաղթված լուվիական արքայատոհմից հայկականին: Այդ տեսակետի հիմնավորումը, բացի տարածքային համապատասխանությունից, կարելի է տեսնել ի դեմս Մելիդում լուվիական արքայատոհմի անկմանը հաջորդող տասնամյակների ընթացքում գրավոր աղբյուրներով լավ վկայված աննախադեպ քաղաքական ակտիվության:

Ք. ա. 712 թ.՝ Մելիդի վերջին արքա Թարխունագիի գահագրկումից և պետության տարածքի՝ նրա հարավային հարևան Կումմուխին կցելուց մի քանի տարի հետո, այստեղ Ասորեստանը բախվեց մի նոր հակառակորդի հետ, որը վերստեղծեց պետականությունը և մարտահրավեր նետեց իր ավանդական հակառակորդին: Ք. ա. 705 թ. Սարգոն II-ի վերջին ճակատամարտը և վախճանը մարտադաշտում հենց այս հակառակորդի դեմ էր մղվում: Թե՛ Սինախներիբը, թե՛ նրա հաջորդ Ասարհադոնը չկարողացան լուծել Մելիդի խնդիրը: Վերջինիս օրոք Մելիդը նույնիսկ ընդարձակվեց իր արևմտյան հարևան Թաբալի հաշվին՝ անհաղթահարելի պատենեշ ստեղծելով Ասորեստանի համար:

Մելիդում և լուվիաբնակ տարածքներում իշխանության անցումը ենթադրաբար վաղ հայկական իշխանություններին պետք է ընթանար ասորեստանցիների կողմից տեղահանության քաղաքականության համատեքստում: Ընդ որում՝ հնարավոր է, որ Ասորեստանի արքաները, հատկապես Թիզլաթպալասար III-ը և Սարգոն II-ը կարող էին հենց իրենք միտումնավոր կերպով նպաստել դրան՝ նպատակ ունենալով ապահովագրել իրենց ավանդաբար հակասորեստանյան դիրքորոշում որդեգրած լուվիական ազնվականության և բնակչության անջատողականությունից: Մի իրավիճակ, որ հիշեցնում է նույն ժամանակներում և ավելի ուշ Ասորեստանի և նրա արևելյան հարևան Էլամի փոխհարաբերությունները, որոնց արդյունքում իրանալեզու տարրը աստիճանաբար զբաղեցրեց նախկին Էլամական տարածքը՝ ժամանակի ընթացքում վերածվելով է՛լ ավելի վտանգավոր հակառակորդի (տե՛ս Բաժին 3. Գլուխ 1 և 2):

Այսպիսով՝ լուվիական պետականության արևելյան հատվածը (Մելիդ, մասամբ

նաև՝ Կումմուխ) վատահաբար կարող են դիտվել որպես հայկական էթնոսի և պետականության ձևավորման կարևորագույն տարածք, մի կոնտակտային գոտի, որտեղ խեթա-լուվիական և վաղ հայկական էթնոմշակութային աշխարհները բավական երկար գոյատևել են միմյանց հետ և սերտ շփումներ ունեցել: Այս առումով լուվիական պետականության արևելյան հատվածը պետք է որոշակիորեն մաս կազմեր հայոց վաղ պատմության:

Լուվիական էթնոսի հետ դարեր տևած սերտ շփումները պետք է իրենց արտահայտությունը գտնեն հայոց լեզվում լուվիերենից կատարված փոխառություններում: Ներկայումս այս հարցում մասնագետները միակարծիք չեն, քանի որ չկան հստակ չափանիշներ, որոնք թույլ կտան այս կամ այն բառի ծագումը վերագրել հենց լուվիերենին, այլ ոչ խեթերենին կամ որևէ այլ խեթա-լուվիական լեզվի: Փոքր Հայքում և Կումմագենեում լուվիական էթնոսի տևական առկայությունը, Ք. ա. VIII-VII դդ. նրանց պետականությունների անկումը՝ մի կողմից, մյուս կողմից՝ հետագայում դրանց ներառումը հայոց պետականության ոլորտ բնականոն կերպով պետք է հանգեցնեն լուվիացիների հայացմանը: Թերևս հայերենի լուվիզմները հենց այս եղանակով կարող էին հայտնվել հայերենում, այսինքն՝ հայկական էթնոսի արևմտյան և հարավարևմտյան եզրագծային շրջանների բնակչության մեջ զգալի տոկոս պետք է կազմեն նախկին լուվիացիները՝ հայոց լեզվի որոշ բարբառներ ներմուծելով իրենց գենետիկ նախնիների քառաֆոնդը:

ԽԵԹԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

Խաթթուսիլիս I	(XVII դ. երկրորդ կես)	Խաթթուսիլիս II?
Մուրսիլիս I	(XVII դ. վերջ XVI դ. սկիզբ)	Թուդխալիյաս II
Խանտիլիս I		(XV դ. երկրորդ կես)
Ցիդանտաս I		Առնուվանդաս I
Ամմունաս		(XV դ. երկրորդ վերջ - XIV դ. սկիզբ)
Խուցցիյաս I		Թուդխալիյաս III
Տելեպինուս	(մոտ. 1500 թ.)	Սուպալիլուլիումաս I
Տախուրվալիլ		(մոտ. 1343-1322 կամ 1218)
Ալլուվամնա		Առնուվանդաս II
Խանտիլիս II		(1322/21 կամ 1318/17)
Ցիդանտաս II		Մուրսիլիս II
Խուցցիյաս II		(մոտ. 1322/21-?)
Մուվատալիլիս I		Մուվատալիլիս II
Թուդխալիյաս I		(XIII դ. առաջին քառորդ)
		Մուրսիլիս III
		(մոտ. 1270-1266)
		Խաթթուսիլիս III
		(մոտ. 1266(2)-1236)
		Թուդխալիյաս IV
		(մոտ. 1236(2)-1220)
		Սուպալիլուլիումաս II
		(մոտ. 1220-1200)

Դյակոնով Ի. Մ., Խեթերը, փոյուզացիները և հայերը, ՀՍՄՈ ԳԱ Տեղեկագիր 11, 57–80, 1956:

Խանզադյան Մ., Իսուվայի արքան և Թուրխալիյաս IV–ը (KUB XXXI 68), ՄՄԱԵԺ XXIII, 339–346, 2004:

Խանզադյան Մ., Խեթական արտաքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ, ՄՄԱԵԺ XXVI, 13–24, 2007:

Խաչատրյան Վ. Ն., Հայաստանը մ. թ. ա. XV–VII դարերում, Երևան, 1998:

Հնայական Հ., Հայաստանի ճ.Մ. GUR–ը և Արա Գեղեցիկը, ՄՄԱԵԺ XXIII, 381–394, 2004:

Հնայական Հ., Խեթերեն marnuwa բառը, ՄՄԱԵԺ XXVI, 45–51, 2007:

Ղազարյան Ռ., Հայաստան–Ազգիի տեղադրության հարցի շուրջ, Մերձավոր Արևելք, Երևան, 35–39, 2005:

Ղազարյան Ռ., Կասկա երկիրն ըստ սեպագիր աղբյուրների, ՄՄԱԵԺ XXVI, 52–64, 2007:

Ղազարյան Ռ., Հայաստան քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009:

Մարտիրոսյան Ն., Խարբերողի շրջանները՝ հայոց հնագույն օրրանը, 87–166 (Խարբերող և անոր ոսկեղեն դաշտը, Նյու Յորք, գրքում), 1957:

Մարտիրոսյան Ն., Պրատումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ 3, 82–107, 1961:

Մկրտչյան Ն. Ա., Հայերենի և խեթերենի բանային որոշ ընդհանրություններ, ՊԲՀ 1, 238–246, 1969:

Մկրտչյան Ն. Ա., Խեթա–հայկական զուգահեռներ, ԼՀԳ 7, 58–69, 1970:

Պետրոսյան Ա. Ե., Հայոց ազգաձագման հարցեր ավանդական տվյալների քննության լույսի տակ, ՊԲՀ 2, 189–224, 2003:

Պետրոսյան Ա. Ե., Հայկական դիցարանի հնագույն ակունքները, ՊԲՀ 2, 205–233, 2004:

Պետրոսյան Ա. Ե., Հայոց ազգաձագման հարցեր, Երևան, 2006:

Պետրոսյան Ա. Ե., Արամազդ, Երևան, 2006:

Պետրոսյան Ա. Ե., Հայկական ավանդական դրամայի ակունքների շուրջ, ՊԲՀ 2, 256–284, 2006:

Պետրոսյան Ա. Ե., Ստուգաբանություններ. Հանդես ամսօրյա, 2007:

Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և հնդեվրոպական հին լեզուները, Երևան, 1970:

Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:

Քոսյան Ա. Վ., Ուշխեթական Մեյդղ պետությունն ըստ հիերոգլիֆային լուվիական աղբյուրների, ԼՀԳ 6, 62–70, 1984:

Քոսյան Ա. Վ., Էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. XII դարում, ՊԲՀ 1, 65–78, 1991:

Քոսյան Ա. Վ., Կրկին էթնիկական տեղաշարժերի մասին, ՊԲՀ 1/2, 247–255, 1994:

Քոսյան Ա. Վ., «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը, ՊԲՀ 1/2, 207–220, 1996:

Քոսյան Ա. Վ., Խեթական տերությունը և Ախիխյավան (Տրոյական պատերազմը), Երևան, 1997:

Քոսյան Ա. Վ., Իսուվան (Մոփքը) մ. թ. ա. XIII–XII դդ., ՊԲՀ 1/2, 177–192, 1997:

Քոսյան Ա. Վ., Տուն Թորգոմայ (առասպել և իրականություն), Երևան, 1998:

Քոսյան Ա. Վ., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ձգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:

Քոսյան Ա., Սարգոն II–ը և Արևելյան Փոքր Ասիայի երկրները, ՄՄԱԵԺ XVIII, 219–229, 1999:

Քոսյան Ա. Վ., Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում, ՊԲՀ 3, 161–174, 2000:

Քոսյան Ա. Վ., Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄՄԱԵԺ XX, 233–245, 2001:

Քոսյան Ա. Վ., Անի–Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ 3, 225–241, 2002:

Քոսյան Ա. Վ., Իսուվայի կրոնական կենտրոնները խեթական դարաշրջանում, ՄՄԱԵԺ XXI, 315–331, 2002:

Քոսյան Ա. Վ., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004:

Քոսյան Ա. Վ., Մուրսիլիս II–ի հայաստան արշավանքները (տր սկզբնաղբյուրներ), ՊԲՀ 2, 197–204, 2004:

Քոսյան Ա. Վ., Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՄԱԵԺ XXIII, 472–484, 2004:

Քոսյան Ա. Վ., Հայաստանի աստվածները (KUB XXVI 39), ՄՄԱԵԺ XXIV, 444–457, 2005:

Ավետիսյան Գ. Մ., Государство Митании, Ереван, 1984.

Արակеляն Ա. Բ., Назначение сооружения ⁵ARKIU по данным хеттских текстов, ВОНА 9, 88–92, 1975.

Արակеляն Ա. Բ., Термин ⁶šinaršī в хеттских клинописных текстах, ИФЖ 3, 238–241, 1975.

Արակеляն Ա. Բ., Nilamma по данным хеттских текстов, ДВ 3, 107–114, 1978.

Արակеляն Ա. Բ., Хеттские источники о халентуве, ВОНА 11, 62–67, 1983.

Արдзинба В. Г., Ритуалы и мифы древней Анатолии, Москва, 1982.

Արдзинба В. Г., Хеттское царство и Эгейский мир. – В кн.: ИДВ II, 118–201, 1988.

Արутյոնյան Н. В., Топонимика Урарту, Ереван, 1985.

Արутյոնյան Н. В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.

Արутյոնյան Р. С., Домашняя жизнь хеттов (хеттские представления и обряды, связанные с домом) (Автореферат диссертации на соиск. уч. степ. к. и. н.), Ереван, 1992.

Արутյոնյան Р. С., Некоторые особенности хеттских домашних праздников, ВДИ 1, 1992.

Արдзюмян Г. Д., Дохристианские культы армян. – В сб.: Армянская этнография и фольклор 18, 61–146, 1991.

Գիորգաձե Գ. Գ., Ранняя Малая Азия и Хеттское царство. – В кн.: ИДМ 1, 212–234, 1989.

Գоловлева Л. М., Царство Алзи во второй половине II тыс. до н. э., ДВ III, 71–87, 1987.

Джаукян Г. Б., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967.

Джаукян Г. Б., О соотношении хайасского и армянского языков. I–III, ИФЖ 1, 68–88, 2, 60–79, 1988.

Дьяконов И. М., Хетты, фригийцы и армяне, ПС 1, 333–368, 1961.

Дьяконов И. М., Предыстория армянского народа, Ереван, 1968.

Дьяконов И. М., Малая Азия и Армения около 600 г. до н. э. и северные походы вавилонских царей, ВДИ 2, 34–64, 1981.

Կապանյան Գր., Хеттские боги у армян, ԵՊՀ, Գիտական աշխատություններ, հատ. XIV, Երևան, 243–316, 1940.

Կապանյան Գր., Хайаса–колыбель армян, Ереван, 1948.

Կոսյան Ա. Վ., Лувийские царства Малой Азии и прилегающих областей в XII–VIII вв. до н. э. (по иероглифическим лувийским источникам), Ереван, 1994.

Մելիքիշվիլի Գ. Ա., Урартские клинообразные надписи, Москва, 1960.

Մկրտչյան Ն. Ա., Редупликация глаголов в хеттском и армянском, ДВ II, 76–85, 1976.

Սեդրախյան Ա. Ե., Армянский эпос и мифология, Ереван, 2002.

Մախչատյան Վ. Ն., Некоторые вопросы хеттской лексики, ИАН 12, 91–102, 1963.

Մախչատյան Վ. Ն., Хеттская надпись KUB XXIX N. 7, ИФЖ 2, 165–181, 1964.

Մախչատյան Վ. Ն., Восточные провинции Хеттской империи, Ереван, 1971.

Ակուրգալ Է., The Art of the Hittites, London, 1962.

Ակուրգալ Է. und M. Hirmer, Die Kunst der Hethiter, München, 1976.

Ալբրայտ Գ. Վ., The Amarna Letters from Palestine. – In: САН II/2, 98–116, 1975.

Արչի Ա., Hittite and Hurrian Literatures: an Overview. – In: CANE III–IV, 2367–2377, 1995.

Արչի Ա. und H. Klengel, Ein hethitischer Text über die Reorganisation des Kultes, Aof 7, 143–157, 1980.

Արո Տ., Tabal. Zur Geschichte und materiellen Kultur des zentralanatolischen Hochplateaus, Helsinki, 1998.

- Astour M. C., The Arena of Tiglath-Pileser III's Campaign Against Sarduri II (743 B. C.), *Assur* 2/3, 1–23, 1979.
- Barnett R. D., Phrygia and the Peoples of Anatolia in the Iron Age. – In: *CAH* I/2, 417–442, 1975.
- Beal R., The History of Kizzuwatna and the Date of the Šunaššura Treaty, *Or* 55, 424–445, 1986.
- Beckman G., Hittite Diplomatic Texts, Atlanta, 1996.
- Beckman G., Hittite Birth Rituals, Wiesbaden (=StBoT 29), 1983.
- Bittel K., Grundzüge der Vor- und Frühgeschichte Kleinasien. 2. erweiterte Auflage, Tübingen, 1950.
- Bittel K., Hattusha, the Capital of the Hittites, New York, 1970.
- Bittel K., Das Ende des Hethiterreiches. – In: Jahresbericht des Instituts für Vorgeschichte der Universität Frankfurt, 36–56, 1976.
- Bittel K., Die archäologische Situation in Kleinasien um 1200 v. Chr. und während der nachfolgenden vier Jahrhunderte. – In: Griechenland, die Ägäis und die Levante während der "Dark Ages" vom 12. bis zum 9. Jh. v. Chr. Akte des Symposiums von Stift Zwettl (NO) II. – 14. Oktober 1980 (Hrsg. von S. Deger-Jalkotzy), Wien, 24–47, 1983.
- Bossert H. Th., Die phönizisch-hethitischen Bilinguen vom Karatepe, *Oriens* 1, 163–192, 1948.
- Bossert H. Th., Zur Geschichte von Karkamis, *SCO* 1, 35–67, 1951.
- Breasted H., Ancient Records of Egypt. Historical Documents From the Earliest Times, 5 vols., Chicago, 1906–1907.
- Bryce T. R., Some Reflections on the Historical Significance of the Tawagalawas Letter (KUB XIV 3), *Or* 48/1, 91–96, 1979.
- Bryce T. R., A Reinterpretation of the Milawata Letter in the Light of the New Join Piece, *AnSt* 35, 13–23, 1985.
- Bryce T. R., The Boundaries of Hatti and Hittite Border Policy, *Tel Aviv* 13–14, 85–102, 1986–1987.
- Bryce T. R., The Kingdom of the Hittites, Oxford, 1998.
- Bryce T. R., Life and Society in the Hittite World, Oxford, 2002.
- Carruba O., Beiträge zur mittelhethitische Geschichte. I–II, *SMEA* 18, 137–195, 1977.
- Cavaignac E., *Les Hittites*, Paris.
- Cornelius Fr., *Geschichte der Hethiter*, Darmstadt, 1973.
- Delaporte L., *Malatya*, Paris, 1946.
- Diakonoff I. M. and S. M. Kashkai, Geographical Names According to Urartian Texts, Wiesbaden (=RGTC 9), 1981.
- Edel E., Der Vertrag zwischen Ramses III. von Ägypten und Hattusili III. von Hatti, Berlin, 1997.
- Fales F. M., Notes on Some Nineveh Horse Lists, *Assur* I/3, 5–24, 1974.
- Falkner M., Studien zur Geographie des alten Mesopotamien, *AfO* 18, 1–37, 1957–1958.
- Forlanini M., Appunti di geografia etea. – In: *Studia Mediterranea* 1 (=Fs. P. Meriggi), Pavia, 165–184, 1979.
- Forlanini M., The Kings of Kaniš. – In: *Atti del II Congresso Internazionale di Hittitologia* (Pavia 28 VI–2 IX 1993 (Ed. O. Carruba), Pavia, 123–132, 1995.
- Forrer E., Die Provinzeinteilung des Assyrischen Reiches, Leipzig, 1920.
- Forrer E., Die Boghazköi-Texte in Umschrift. I–II, Leipzig, 1922–1926.
- Forrer E., *Hajasa-Azzi*, *Caucasica* IX, 1–24, 1931.
- Frantz-Szabo G., Hittite Witchcraft, Magic, and Divination. – In: *CANE* III–IV, 2007–2019, 1995.
- Friedrich J., Staatsverträge der Hatti-Reiches in hethitischen Sprache, Bd. 2, Leipzig (=MVAG 34), 1930.
- Fuchs A., Die Inschriften Sargons II. aus Khorsabad, Göttingen, 1994.
- Gardiner A. H., *The Kadesh Inscriptions of Ramesses II*, Oxford, 1960.
- Garelli P., *Les Assyriens en Cappadoce*, Paris, 1963.
- Garelli P., *Tablettes cappadociennes de collections diverses*, *RA* LVIII/2, 53–68, 1964.
- Garelli P., *Tablettes cappadociennes de collections diverses (suite)*, *RA* LIX/1, 19–48, 1965.
- Garstang J., *The Hittite Empire*, London, 1923.
- Gelb I., *Hittite Hieroglyphs*. vols. I–III, Chicago, 1931–1942.
- Genge H., Nordsyrisch-südanatolische Reliefs. Eine archäologisch-historische Untersuchung, Datierung und Bestimmung, Copenhagen, 1979.
- Gessel van B. H. L., *Onomasticon of the Hittite Pantheon*, vols. I–III, Leiden – New York – Köln, 1998.
- Goetze A., *Kizzuwatna and the Problem of Hittite Geography*, New Haven, 1940.
- Götze A., Die Pestgebete des Mursili, *KIF* 1, H. 2, 161–251, 1930.
- Goetze A., Some Groups of Ancient Anatolian Proper Names, *Language* 30/3–4, 349–359, 1954.
- Grayson A. K., *Assyrian Royal Inscriptions*. vol. I, Wiesbaden, 1972.
- Grayson A. K., *Assyrian and Babylonian Chronicles*, Locust Valley/New York, 1975.
- Grayson A. K., *Assyrian Royal Inscriptions*, vol. II, Wiesbaden, 1976.
- Grayson A. K., *The Correspondence of Sargon II*, Part I, Helsinki (=SAA I), 1987.
- Grayson A. K., *The Royal Inscriptions of Mesopotamia. Assyrian Periods / Vol. 2: Assyrian Rulers of the Early First Millennium BC I (1114–859 BC)*, Toronto–Buffalo–London, 1991.
- Grayson A. K., *The Royal Inscriptions of Mesopotamia. Assyrian Periods / Vol. 3: Assyrian Rulers of the Early First Millennium BC II (858–745 BC)*, Toronto–Buffalo–London, 1996.
- Grelois J. –P., *Les Annales Decennales de Mursili II (CTH 61. I)*, *Hethitica* IX, 17–146, 1988.
- Greppin J. A. C., *Luwian Elements in Armenian*, *ДБ* III, 115–126, 1973.
- Greppin, J. A. C., *The Anatolian Substrata in Armenian – An Interim Report*, *AAL* 3, 65–71, 1982.
- Greppin J. A. C., *The Survival of Ancient Anatolian and Mesopotamian Vocabulary until the Present*, *JNES* 50/3, 203–207, 1991.
- Gurney O. R., *Anatolia c. 1750–1600*, – In: *CAH* II, Ch. VI, 1–33, 1962.
- Gurney O. R., *The Hittites*, Baltimore, 1966 (nmu. pwpqu. Mockba, 1987).
- Gurney O. R., *Anatolia, c. 1600–1380B. C.* – In: *CAH* vol. II, Ch. XV/a, 3–30, 1973.
- Güterbock H. G., *The Deeds of Suppiluliumas as told by his son, Mursili II*, *JCS* X, 41–68, 75–98, 107–130, 1956.
- Güterbock H. G., *Toward a Definition of the Term Hittite*, *Oriens* 10, 233–239, 1957.
- Güterbock H. G., *A View of Hittite Literature*, *JAOS* 84/2, 107–115, 1964.
- Güterbock H. G., *The Hittite Conquest of Cyprus Reconsidered*, *JNES* 26, 73–81, 1967.
- Güterbock H. G., *Les hiéroglyphes de Yazılıkaya*, Paris, 1982.
- Güterbock H. G. and Th. P. J. den Hartog, *The Hittite Instruction for the Royal Bodyguard*, Chicago (=AS 24), 1991.
- Haas V., *Magie und Mythen im Reich der Hethiter*, Hamburg, 1977.
- Haas V., *Betrachtungen zur Dynastie von Hattusa im Mittleren Reich (ca. 1450–1380)*, *AoF* 12/2, 269–277, 1985.
- Haas V., *Geschichte der hethitischen Religion (=Handbuch der Orientalistik. Abt. I, Bd. 15)*, Leiden, 1994.
- Hawkins J. D., *Assyrians and Hittites*, *Iraq* 36, P. 1/2, 67–83, 1974.
- Hawkins J. D., *Some Historical Problems of the Hieroglyphic Luwian Inscriptions*, *AnSt* 29, 153–167, 1979.
- Hawkins J. D., *Kargamis*. – In: *RIA* V/1, 426–446, 1980.
- Hawkins J. D., *The Neo-Hittite States in Syria and Anatolia*. – In: *CAH* III/1, 372–441, 1982.
- Hawkins J. D., *Kuzi-Tešub and the "Great Kings" of Karkamis*, *AnSt* 38, 99–108, 1988.
- Hawkins J. D., *The Inscriptions of the Kızıldağ and the Karadağ in the light of the Yalburt Inscription* – In: *Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honor of Sedat Alp* Ed. Ankara, 259–275, 1992.
- Hawkins J. D., *The Historical Significance of the Karahöyük (Elbistan) Stele*. – In: *Aspects of Arts and Iconography: Anatolia and its Neighbors. Studies in Honor of Nimet Özgüç* (Eds. M. J. Mellink, E. Porada and T. Özgüç), Ankara, 273–279, 1993.
- Hawkins J. D., *Karkamish and Karatepe: Neo-Hittite City-States in North Syria*. – In: *CANE* I–II, 1295–1307, 1995.
- Hawkins J. D., *The Hieroglyphic Inscription of the Sacred Pool Complex at Hattusa (Südburg)*, Wiesbaden (=StBoT, Beiheft 3), 1995.
- Hawkins J. D., "Great Kings" and "Country-Lords"

- at Malatya and Karkamiš. – In: *Studio Historiae Ardens. Ancient Near Eastern Studies Presented to Philo H. J. Houwink ten Cate on the Occasion of his 65th Birthday* (Eds. Th. P. J. van den Hout and J. de Roos), Istanbul, 73–85, 1995.
- Hawkins J. D., *Corpus of Hieroglyphic Luwian Inscriptions*, Berlin – New York, 2000.
- Hawkins J. D. and J. N. Postgate, *Tribute from Tabal, SAAB II/1*, 31–40, 1988.
- Heinhold-Krahmer S., *Untersuchungen zu Piyamaradu (Teil I)*, Or. 52/1, 81–97, 1983.
- Helck W., *Nochmals zur Ramses. III Seevölkerbericht*, SAK 14, 129–145, 1987.
- Hoffmann I., *Der Erlaß Telipinus*, Heidelberg, 1984.
- Hoffner H. A., *A Join to the Hittite Mita-text*, JCS 28, 60–62, 1976.
- Hoffner H. A., *The Milawata Letter Augmented and Reinterpreted*. – In: *28ème Rencontre Assyriologique Internationale*, Vienna, 1981 (= AFO Beiheft 19), 130–137, 1983.
- Hoffner H. A., *Hittite Myths*, Atlanta, 1990.
- Hoffner H. A., *The Laws of the Hittites*, Leiden – New York – Köln, 1997.
- Hout Th. P. J. van den., *Der Ulmitešub-Vertrag: Eine prosopographische Untersuchung*, Wiesbaden (=StBoT 38), 1995.
- Houwink ten Cate Ph. H. J., *The History of Warfare According to Hittite Sources: the Annals of Hattusilis I (Part II)*, *Anatolica* XI, 47–83, 1984.
- Hrozny B., *Inscriptions Cuneiformes du Kültepe*, vol. I, Praha, 1952.
- Huxley G. L., *Achaean and Hittites*, Oxford, 1960.
- Imparati F., *La leggi ittite*, Roma, 1964.
- Jahukyan G. B., *The Hayasa Language and its Relation to the Indo-European Languages*, *ArOr* 29, 353–405, 1961.
- Jahukyan G. B., *Did Armenians Live in Asia Anterior Before the Twelfth Century B. C.* – In: *When Worlds Collide: Indo-Europeans and Pre-Indo-Europeans* (Eds. T. L. Markey and J. A. C. Greppin), *Ann Arbor*, 25–33, 1990.
- Jasink A. M., *Gli stati Neo-Ittiti. Analisi delle fonti scritte e sintesi storica*, Pavia (= *Studia Mediterranea* 10), 1995.
- Kalaç M., *Das Pantheon der hieroglyphenluwischen Inschriften*, *Or* 34/4, 401–427, 1965.
- Kammenhuber A., *Hippologia Hethitica*, Wiesbaden, 1961.
- Klengel H., *“Hungerjahre” im Hatti*, *AoF* 1, 165–174, 1974.
- Klengel H. et al., *Geschichte des Hethitischen Reiches*, Leiden–Boston–Köln, 1999.
- Kosyan A. V., *The Epithet “Celestial” in Hieroglyphic Luwian Inscriptions*, *AoF* 15/1, 114–118, 1988.
- Kosyan A., *Hartapus and the Problem of Early Tabalian History (12th–10th B. C.)*. – In: *ŠULMU IV: Everyday Life in Ancient Near East. Papers Presented at the International Conference*, Poznan, 19–22 September, 1989, Poznan, 183–187, 1993.
- Kosyan A. V., *The Mushki Problem Reconsidered*, *SMEA XXXIX/2*, 253–266, 1997.
- Kosyan A. V., *The End of the Hittite Empire: Thracians in Armenian Highland?* – In: *Armenian Perspectives* (Ed. N. Awde), London, 35–38, 1997.
- Kosyan A. V., *Sargon II and Kurtis of Atuna: an Interpretation*. – In: *Studia Linguarum* 3/1 (*Memoriae A. A. Korolev dicata*), Moscow, 191–203, 2002.
- Kosyan A. V., *Arnuwandas I in the East*, *AJNES* I, 72–97, 2006.
- Kosyan A. V., *An Aryan in Isuwa, Iran and the Caucasus* 10/1, 1–6, 2006.
- Kühne C. und H. Otten, *Der Šaušgamuwa-Vertrag*, Wiesbaden (= StBoT 16), 1971.
- Landsberger B., *Sam,al*, Ankara, 1948.
- Landsberger B., *Assyrische Königsliste und ‘Dunkles Zeitalter’*, *JCS* 8, 31–73, 106–133, 1954.
- Lanfranchi B., *Sargon’s Letter to Aššur-šarru-ušur: an Interpretation*, *SAAB II/1*, 59–64, 1988.
- Laroche E., *Lécanomancie hittite*, *RA* 52, 150–162, 1958.
- Laroche E., *Les hiéroglyphes hittites. Première partie. L’écriture*, Paris, 1960.
- Laroche E., *Textes mythologiques hittites en transcription. Première partie: Mythologie anatolienne*, *RHA* 23, fasc. 77, 61–178, 1965.
- Larsen M. T., *The Old Assyrian City-State and Its Colonies*, Copenhagen, 1975.
- Lebrun R., *Hymnes et prières Hittites*, Louvain-la-Neuve, 1980.
- Lewy H., *Anatolia in the Old Assyrian Period*. – In: *CAH* I, Ch. XXIV, 1–29, 1965.
- Lloyd S., *Early Highland Peoples of Anatolia*, London, 1967.
- Loon M. van, *Anatolia in the Second Millennium B. C.*, Leiden, 1985.
- Luckenbill D. D., *Ancient Records of Assyria and Babylonia*, vol. I (From the Earliest Times to Sargon), Chicago, 1926.
- Luckenbill D. D., *Ancient Records of Assyria and Babylonia*, vol. II (From Sargon to the end), Chicago, 1927.
- Macqueen J., *Hittites and Their Contemporaries in Asia Minor*, London 1975 (*Երկրորդ հրատ.* 1986, *ռուս. հրատ.* Москва 1983).
- Masson E., *Le pantheon de Yazılıkaya*, Paris, 1981.
- Matouš L. und M. Matoušová-Raymová, *Kappadokische Keilschrifttafeln mit Siegeln*, Praha, 1984.
- McMahon G., *The Hittite State Cult of the Tutelary Deities*, Chicago (= AS 25), 1991.
- Mellaart J., *Troy VIIA in Anatolian Perspective*. – In: *The Trojan War. Its Historicity and Context* (Eds. L. Foxhall and J. K. Davies), Liverpool, 65–72, 1984.
- Meriggi P., *Die hethitische Hieroglyphenschrift*, *ZA* 39, 165–212, 1929–1930.
- Meriggi P., *Sur le déchiffrement et la langue des Hiéroglyphes „Hittites“*, *RHA* 2, fasc. 9, 1–58, 1932.
- Meriggi P., *Hieroglyphisch-hethitisches Glossar. Zweite, völlig umgearbeitete Auflage*, Heidelberg, 1962.
- Meriggi P., *Manuale di eteo geroglifico*, P. I: *Grammatica (Incunabula graeca, vol. XIII)*, Roma, 1966.
- Meriggi P., *Manuale di eteo geroglifico*, P. II: *Testi – 1a serie (Incunabula graeca, vol. XIV)*, Roma, 1967.
- Meriggi P., *Manuale di eteo geroglifico*, P. II: *Testi – 2a e 3a serie (Incunabula graeca, vol. XV)*, Roma, 1975.
- Meriggi P., *Manuale di eteo Geroglifico*, Parte II: *Tavole – 2a e 3a serie (Incunabula graeca, vol. XV)*, Roma, 1975.
- Mkrtychyan N. A., *Neue hethitisch-armenische lexikalische Parallelen*, *AcAn* 22/1–4, 313–319, 1974.
- Neu E., *Der Anitta-Text*, Wiesbaden, 1974.
- Orlin L. L., *Assyrian Colonies in Cappadocia*, The Hague – Paris, 1970.
- Orthmann W., *Untersuchungen zur späthethitischen Kunst*, Bonn, 1971.
- Otten H., *Ein althethitischer Vertrag mit Kizzuwatna*, *JCS* 5/4, 129–132, 1951.
- Otten H., *Neue Quellen zum Ausklang des Hethitischen Reiches*, *MDOG* 94, 1–23, 1963.
- Otten H., *Die Apologie Hattusilis III. Das Bild der Überlieferung*, Wiesbaden (= StBoT 24), 1981.
- Otten H., *Die Bronzetafel aus Bogazköy. Ein Staatsvertrag Tuthalijas IV*, Wiesbaden (= StBoT, Beih. 1), 1988.
- Özgül T., *Kültepe and its Vicinity in the Iron Age*, Ankara, 1971.
- Özgül T., *Maşat-Höyük*, Ankara, 1977.
- Özgül T., *Inandiktepe*, Ankara, 1988.
- Petrosyan, *The Indo-European and Ancient Near Eastern Sources of the Armenian Epic*, Washington DC. (= *JIES Monograph* No 42), 2002.
- Russell H., *Preclassical Pottery of Eastern Anatolia*, Oxford, 1980.
- Saggs H. W. F., *The Nimrud Letters*, 1952, Trowbridge, 2001.
- Saporetti Cl. – F. Imparati, *L’autobiografia di Hattusili I*, *SCO* 14, 40–85, 1965.
- Schuler E. von, *Hethitische Dienstanweisungen für höhere Hof- und Staatsbeamte*, Graz, 1957.
- Schuler E. von, *Die Kaškäer. ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien*, Berlin, 1965.
- Schultheiss T., *Hethitisch und Armenisch*, *KZ* 77/3–4, 219–234, 1961.
- Sevin V., *The Early Iron Age in the Elâziğ Region and the Problem of the Mushkians*, *AnSt* 41, 87–97, 1991.
- Singer I., *Hittites and Hattians in Anatolia at the Beginning of the Second Millennium B. C.*, *JIES* 9, 119–134, 1981.
- Singer I., *Western Anatolia in the Thirteenth Century B. C according to the Hittite Sources*, *AnSt* 33, 205–217, 1983.
- Singer I., *The Battle of Nihriya and the End of the Hittite Empire*, *ZA* 75, 100–123, 1985.
- Starr I., *Queries to the Sungod*, Helsinki (= *SAA* IV), 1990.
- Stefanini R., *Studi ittiti*, *Athenaeum* 40, 22–30, 1962.
- Sürenhagen D., *Ein Königssiegel aus Kargamis*, *MDOG* 118, 183–190, 1986.

միջև սերտ փոխշփումներին և հիմք ստեղծելով Ք. ա. IV դարի վերջին քառորդից ձևավորված հելլենիստական քաղաքակրթության կայացման և հետագա զարգացման համար:

Հին Իրանի բաժինը եզրափակում է Պարթևաստանը, որը, ձևավորվելով հելլենիստական աշխարհի արևելյան մասում, քիչ անց վերածվեց ժամանակի հզորագույն տերություններից մեկի՝ հանդիսանալով սկզբում Սելևկյան տերության, այնուհետև Հռոմի գլխավոր հակակշիռ ուժը Առաջավոր Ասիայում:

Հին Իրանի պետությունները, սկսած մարական դարաշրջանից, իրենց ողջ պատմության ընթացքում սերտ շփումների մեջ են եղել Հայաստանի հետ, ինչը հատկապես ակնառու է՝ սկսած Աքեմենյան տերության ժամանակներից:

ԷԼԱՄ

1. ՏԱՐԱԾ-ՔԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

«Էլամ» անվանումը ծագում է երբայերեն՝ *‘élām-ից*, որի աղբյուրը աքքադական տեքստերի *KUR.Elamti/u* (շումերերեն՝ *KUR.Elama*, գաղափարագիր՝ *KUR.NIM. MA^{KI}*) և էլամական տեքստերի *Ha(l)tamti* անվանաձևերն են:

Հնարավոր չէ միանշանակ ուրվագծել էլամական պետական կազմավորումների սահմանները պատմական տարբեր դարաշրջաններում, քանի որ դրանք շարունակաբար փոխվել են: Ք. ա. III հազ. – II հազ. սկզբին էլամ երկրանունը համապատասխանում էր հետագայի Պարսքի (Ֆարս) տարածքին, այն է՝ Անշան (կամ Անձան, Անշան) երկրին: Իր առավել ընդարձակ շրջանում էլամն ընդգրկում էր Իրանական բարձրավանդակի հարավային, հարավարևմտյան և արևմտյան հատվածը, այն է՝ ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության Խուզիստան և Իլամ, Լուրիստան, Բախթիարիա և Չհարմահալ, Ֆարս, Բոյերահմադի և Քոհգիլուն, Բուշեիր օստանները (նահանգները): Էլամի հարավային սահմանը Պարսից ծոցն էր, արևմուտքից այն սահմանակից էր Եփրատ և Տիգրիս գետերի ստորին հոսանքների շրջաններին, որը հնում հայտնի էր որպես «Ծովի երկիր»: Էլամի հյուսիսային սահմանները ձգվում էին հայտնի չեն: Էլամի ազդեցության գոտին տարածվել է մինչև Փոքր Ջար գետի ավազան (հյուսիսում) և Կենտրոնական Իրան՝ Դաշտ-է-Քյավիրի և Դաշտ-է-Լուրի անապատներ (հյուսիս, հյուսիս-արևելք), որտեղից հայտնի են վաղ էլամական մի քանի գաղութներ (օրինակ՝ Թեփե Սիակ հնավայրը): Հայտնի չէ, թե որքան է տարածվել էլամի ազդեցությունը Պարսքից արևելք և հարավ-արևելք՝ դեպի Բելուջիստան և Սիստան ձգվող շրջաններում: Միջին էլամական փուլում էլամական պետություններն ընդգրկում էին հիմնականում Խուզիստանի, Պարսքի և Բուշեիրի շրջանները: Ք. ա. I հազ., կապված իրանական էթնիկ տարրի ներհոսքի, ապա և ասորեստանյան նվաճումների հետ, երկրի սահմանները աստիճանաբար սեղմվեցին, և Ք. ա. VII դ. էլամը հիմնականում պարփակվել էր Խուզիստանում:

Էլամերեն լեզվի տարածման շրջանը Կենտրոնական Ջագրոսներից մինչև Բելուջիստան ձգվող շրջանն է: Էլամերենի տեղական անվանումը չի պահպանվել, իսկ գիտական գրականության մեջ կիրառվող «էլամերեն լեզու» տերմինը վերցվել է շումերերեն *eme Elama*՝ «էլամի լեզու» անվանումից: Վերջնական լուծում չի գտել էլամերենի լեզվական պատկանելության խնդիրը: Այն գերազանցապես աղերսում են դրավիդյան լեզուների խմբին:

Էլամի տարածքը պատմաաշխարհագրական առումով բաժանվում է երկու հիմնական շրջանների՝ Սուսա և Անշան: Սեպագիր աղբյուրներում դրանք տարբերակվում էին որպես «ստորին» և «վերին» Էլամ: Այս երկու քաղաքական կենտրոններից առաջինն ընկած էր Զագրոսի լեռնաշղթայի երկայնքով ձգվող հարթավայրային շրջաններում (Խուզիստան), երկրորդն առավել բարձրադիր էր և գտնվում էր Պարսքում (միջին բարձրությունը՝ մոտ 1600 մ): Անշանը (Թել-ի Մայյան հնավայրը) մինչաքեմենյան դարաշրջանի խոշորագույն բնակավայրն էր Իրանի տարածքում, Խուզիստանում խոշորագույնը Սուսան էր:

Էլամի հարթավայրային շրջաններն ու լեռնային հովիտներն ունեն արտակարգ բերրի հողեր: Դրանք սնուցող ջրի հիմնական աղբյուրը Քարուն, Քարխե, Մանդ և Քուր գետերն են: Տարեկան տեղումները Խուզիստանում տատանվում են 250–380 մմ սահմաններում, Պարսքում՝ մոտ 200–340 մմ:

Իրանական բարձրավանդակը հարուստ է ամենատարբեր օգտակար հանածոներով: Երկաթի հանքեր կան Կենտրոնական Իրանում (Յագդ), պղնձի և անագի հարուստ հանքեր՝ Քերմանի և Սպահանի օստաններում: Մետաղահանքերով, հատկապես անագի պաշարներով արտակարգ հարուստ է նաև Իրանական բարձրավանդակին հարևանող ներկայիս Աֆղանստանի տարածքը: Այս տարածաշրջանը հայտնի է որպես մետաղագործության հնագույն կենտրոններից մեկը:

2. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Էլամական քաղաքակրթությանը վերաբերող տարաբնույթ վկայություններն ընդգրկում են ավելի քան երեքհազարամյա մի ժամանակաշրջան: Գրավոր վկայությունները բազմաթիվ են, ընդ որում՝ էլամական քաղաքակրթությունը առանձնանում է իր թողած, էլամական սեպագրով գրված հարուստ գրավոր մշակույթի բազմազանությամբ: Էլամական սեպագիր դպրության հնագույն օրինակները վերաբերում են Ք. ա. XXIII դ. և կիրառվել են ընդհուպ մինչև Ք. ա. 350 թ.: Սեպագիր էլամերենից բացի՝ կիրառվել է, այսպես կոչված, «գծային էլամական» գիրը, որոնց նախորդել է «նախաէլամական» գրի դարաշրջանը:

Վերջին երկու գրահամակարգերից առավել բազմաքանակ են և աշխարհագրական լայն տարածում ունեն «նախաէլամական» գրի հուշարձանները: Դրանք հայտնաբերվել են Իրանական բարձրավանդակի մի շարք հուշարձաններից, մասնավորապես Սուսայից, Թեփե Օգրաքիից և Թեփե-Սիակիից, հարավային և հարավարևելյան Իրանի հուշարձաններից (Թել-ի Մայյան և Թեփե Յահյա), ինչպես նաև Շահր-ի Սոխթայից: «Նախաէլամական» գրով արձանագրված տեքստերի քանակը հասնում է մոտ 1600-ի, իսկ գիրը կիրառվել է Ք. ա. 3100–2900 թթ. ընկած ժամանակահատվածում: «Գծային էլամական» գրից մեզ են հասել 22 տեքստեր՝ գրված Ք. ա. 2150–2100 թթ. սահմաններում: Գրավոր մշակույթի այս յուրահատուկ գծապատկերային համակարգերը ցայսօր վերձանված չեն կամ ընթերցվում են մասնակի:

Էլամական սեպագիր աղբյուրների քանակը հասնում է մի քանի հազար միավորի: Դրանց հիմնական զանգվածը կազմում են վարչատնտեսական բնույթի տեքստերը: Շատ ավելի հասկանալի են արքայական հանդիսավոր արձանագրությունները՝ գերագանցապես ընծայագրեր: Դրանք անգնահատելի աղբյուր են հատկապես այն ժամանակահատվածների համար, երբ միջագետքյան համաժամանակյա աղբյուրները գրեթե ոչինչ չեն հաղորդում էլամի մասին:

Էլամական արձանագրությունների բազմաքանակությանը հակառակ՝ դրանցից քաղվող տեղեկատվությունը սահմանափակ է: Դա պայմանավորված է ինչպես արքունի արձանագրություններին բնորոշ կաղապարայնությամբ, այնպես էլ բառապաշարի, քերականական կառուցվածքի, հնչյունաբանության հետ կապված խնդիրներով, որոնք թեական են դարձնում տեքստերի ընթերցումները: Ընդ որում՝ էլամական տեքստերի մի զգալի մասը վերաբերում է Աքեմենյան դարաշրջանին և էլամի քաղաքական պատմության ուսումնասիրության համար առաջնակարգ աղբյուր չի հանդիսանում:

Էլամի պատմության հաջորդ աղբյուրը համաժամանակյա միջագետքյան տեքստերն են: Հին էլամական դարաշրջանը լուսաբանվում է շումերա-աքքադական և հին ու միջին բաբելոնյան դարաշրջանների աղբյուրների շնորհիվ: Անհամեմատ հարուստ տեղեկություններ են պարունակում նոր էլամական դարաշրջանին վերաբերող ասորա-բաբելոնյան աղբյուրները: Դրանց շարքում առաջնահերթ տեղ ունեն արքայական արձանագրությունները և տարեգրությունները, արքունի դիվանի նամակները, գուշակային տեքստերը, վարչատնտեսական բնույթի հաշվետվությունները և այլն: Կարևորագույն տեղեկություններ են պահպանել նաև բաբելոնյան աղբյուրները, որոնց շարքում հատկապես առանձնանում են «ժամանակագրությունները»: Էլամին վերաբերող վաղ աղբյուրներից է նաև «Աստվածաշունչը»:

Էլամը, շնորհիվ իր թողած հարուստ պատմական ժառանգության, մշտապես գտնվել է Հին Արևելքի պատմությունն ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Առկա են էլամի պատմությանը, պատմական աշխարհագրությանը, հնագիտությանը, մշակույթին, լեզվաաշխարհին վերաբերող մասնավոր և ընդհանուր բնույթի մեծաքանակ ուսումնասիրություններ: Դրանցից առանձնանում են Ֆ. Վ. Քյոնիգի, Զ. Քամերոնի, Վ. Հինցի, Ի. Դյակոնովի, Մ. Սթոլպերի և այլոց ընդհանրացնող աշխատանքները Էլամի պատմության և հնագիտության, Ֆ. Վալայի աշխատությունը Էլամի պատմական աշխարհագրության, Հ. Փեյլերի, Է. Ռայնրի, Ա. Կամմեն-հուբերի, Ի. Դյակոնովի, Ֆ. Գրիյո-Սյուգինիի, Մ. Սթոլպերի, Վ. Հինցի և Հ. Քյոնի, Մ. Ժ. Սթևի, Մ. Խաչիկյանի և այլոց ուսումնասիրությունները էլամական արձանագ-

¹ Էլամի պատմության առկա են մի շարք ընդհանրացնող աշխատություններ՝ König F.W., Geschichte Elams, AO 29, 1931, 1ff.; Cameron G.G., History of Early Iran, Chicago, 1936; Hinz W., Das Reich Elam, Stuttgart, 1964; Carter E., M.W.Stolper, Elam. Surveys of Political History and Archaeology, Berkeley - Los Angeles - London, 1984; Potts D.T., The Archaeology of Elam: Formation and Transformation of an Ancient Iranian State, Cambridge, 1999 և այլն: Էլամերեն լեզվի մասին տես Reiner E., The Elamite Language. - In: Spuler (ed.) Altkleinasiatische Sprachen, HdOr, I.2.2, Leiden - Köln, 1969, 54ff.; Hinz W., H. Koch, Elamisches Wörterbuch 1-2, Berlin, 1987; Khačikjan M., The Elamite Language, DocAs IV, Roma, 1998 և այլն:

րությունների և էլամերեն լեզվի մասին: Էլամի նյութական մշակույթի, էլամական տարածքներում իրականացված հնագիտական աշխատանքների ամփոփումը կարելի է գտնել Պ. Ամյեի, Լ. Վանդեն Բերգի, Է. Փորադայի, Է. Քարթերի, Դ. Փոթսի և այլոց աշխատություններում: Էլամական կրոնին և հավատալիքներին են անդրադարձել Վ. Հինցը, Պ. դե Միրոշեջին, Հ. Քյոհը, Ֆ. Վալան և այլք:

3. ՎԱՂ ԷԼԱՄԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էլամի տարածքում առաջին պետական կազմավորումները ի հայտ եկան Ք. ա. III հազ. սկզբներին: Դրանցից էին, օրինակ, առևտրական կարևորագույն մայրուղիների խաչմերուկում ընկած Սուսան (Շոշը՝ Խուզիստանում), Ավանը, Անշանը (ներկայիս Թեյ-ի Մայյան հնավայրը Պարսքում), Սիմաշկին: Հետագայում դրանք միավորվեցին յուրատեսակ դաշնության՝ Էլամի թագավորության մեջ, որի մայրաքաղաքներն էին սկզբնապես Ավանը, Անշանը, ապա և Սուսան:

Էլամական քաղաք-պետությունների ծնունդը մեծամասամբ պայմանավորված էր Հարավային Միջագետքի և Իրանական բարձրավանդակի միջև կամ վերջինիս միջնորդությամբ էլ ավելի հեռավոր շրջանների հետ իրականացվող աշխույժ առևտրով: Էլամցիները ձգտում էին ներթափանցելու Իրանական բարձրավանդակի խորքերը, հաստատվելու այստեղ և վերահսկելու Իրանական բարձրավանդակի վրայով կատարվող միջագային առևտուրը: Էլամցիների ներկայությունը վկայված է Իրանական բարձրավանդակի գրեթե ողջ տարածքում, իսկ Էլամի ազդեցությունը տարածվում էր մինչև ներկայիս Աֆղանստան և Պակիստան, ինչպես նաև Պարսից ծոցի հարավային ափեր:

Էլամը իր գոյության ընթացքում սերտորեն կապված էր միջագետքյան քաղաքակրթությունների հետ: Երկրանվան առաջին հիշատակումները վերաբերում են Շումերի պատմության Վաղդինաստիական դարաշրջանին: Այդ հիշատակումները հանդիպում են գերագանցապես դիցերգերում, և դրանց պատմականության վրա միշտ չէ, որ կարելի է հենվել: Այնուամենայնիվ, դրանք մնում են որպես հիմնական աղբյուր Էլամի վաղ պատմության ուսումնասիրության համար:

Դեռևս Ք. ա. մոտ 2600 թ. վերաբերող շումերական արքայացանկը (կազմված Ք. ա. մոտ 2100 թ.) հիշում է Վաղդինաստիական II շրջանի Քիշի առաջնորդ Էն-Մերարագեսին, ով «որպես ավար տարել է Էլամ երկրի գեները»: Աղբյուրները հավաստում են այս անձի պատմականությունը, սակայն նրա էլամական արշավանքների մասին ոչինչ հայտնի չէ:

Շումերական արքայացանկում հիշատակված մի քանի առասպելական հերոսներ՝ Էնմերկարը, Լուգալբանդան, Դումուզին և Գիլգամեշը, նույնպես առնչվել են էլամական աշխարհի հետ: Հնարավոր է, որ դիցերգերը պահպանել են Միջագետքի և Էլամի միջև տեղ գտած հնագույն շփումների սուսկ արձագանքները:

Վաղդինաստիական II շրջանում էլամական խոշորագույն քաղաքական կենտրոն էր Ավանը, որի ճշգրիտ տեղորոշումը ցայսօր մնում է անհայտ: Շումերական արքայացանկը հիշում է հարավային Միջագետքում գերիշխանություն հաստատած Ավանի հարստության երեք արքաների (Ք. ա. մոտ 2500 թ.), որոնք իշխել էին «356 տարի»: Սուսայից հայտնաբերված մեկ այլ արքայացանկ հայտնում է Ավանի 12 արքաների անուններ («Ավանի II հարստություն»), որոնցից յոթն այլ աղբյուրներում չեն հանդիպում: Աղբյուրը չի նշում նաև այս արքաների կապը միմյանց հետ կամ կառավարման որևէ թվական: Ավանի հարստության հիմնադիրն էր Պելին:

Վաղդինաստիական III շրջանի՝ պատմականորեն արդեն վկայված արքաներից Քիշի տիրակալ Էննա-իլը, Լագաշի տիրակալ Էաննատումը (Ք. ա. մոտ 2450 թ.) հայտնում են Էլամի դեմ մղված ճակատամարտերի, իսկ վերջինս նաև Սուսայի նկատմամբ ձեռք բերված հաղթանակի մասին: Այս բախումների պատճառների մասին կարելի է դատել Լագաշի առաջնորդներից Էնետարգիի այն տեղեկությունից, ըստ որի՝ Լագաշի ուժերը ջախջախել են ավարառության դուրս եկած էլամական 600-հոգանոց մի խմբի և հետ վերցրել Լագաշից տարված ավարը: Շումերական քաղաքների և Էլամի միջև իրականացվում էր նաև աշխույժ առևտուր, ինչի վկայությունն են Լագաշից հայտնաբերված տնտեսական բովանդակությամբ տեքստերը:

Միջագետքում Սարգոն Աքքադացու պետության ի հայտ գալով սկսվեցին քաղաքական արշավանքներն Էլամի դեմ: Իր լայնածավալ տերությունը Սարգոնը կերտեց նաև Էլամի և Բարախշի/Պարախշում (= Մարխաշի) երկրի նկատմամբ ձեռք բերված հաղթանակների շնորհիվ: Սարգոնի տեքստերը հիշատակում են բազում էլամական առաջնորդների և մի շարք տեղանուններ՝ ներառյալ Սուսան և Ավանը, որոնք գրավվել էին քաղաքացիների կողմից:

Դեպի Էլամ և Բարախշի արշավանքները շարունակեց Սարգոնի որդի Ռիմուշը: Վերջինիս արձանագրությունները փաստում են քաղաքացիների հաղթանակի մասին: Էլամն ընկավ քաղաքական գերիշխանության տակ, ինչը շարունակվեց նրա հաջորդ Մանիշտուսուի օրոք ևս: Էլամի կառավարիչներից Էշլումը, օրինակ, իրեն համարում էր «Մանիշտուսուի ծառա»: Աքքադի հիշյալ արքայի արձանագրությունները հայտնում են նաև Անշանի և Շիրիխումի նվաճման մասին՝ «ծովի այն կողմում» ընկած երեսուներկու այլ քաղաքների հետ միասին:

Նարամսինի կառավարման տարիները հիմնականում անցան զանազան երկրների «ապստամբությունները» ճնշելով: Դրանց շարքում էր Էլամը, որի նկատմամբ հաղթանակներ են արձանագրում քաղաքական տեքստերը: Նարամսինի դարաշրջանին վերաբերող հետագա՝ հին բաբելոնյան շրջանի տեքստերից մեկը նշում է նրա կողմից «ողջ Էլամ երկիրը՝ մինչև Բարախշի և Սուբարտու երկիր» նվաճելու մասին:

Ք. ա. XXIV դ. վերջերից ընդհուպ մինչև XXIII դ. վերջ Էլամը գտնվում էր Աքքադի թագավորության քաղաքական և մշակութային հզոր ազդեցության ներքո: Այս շրջանում Էլամում պաշտոնական ու տնտեսական բնույթի գրառումները կատարվում էին քաղաքներն լեզվով: Անգամ էլամական տաճարներում դրվում էին քաղաքական արքաների արձանները: Էլամի և Աքքադի թագավորության փոխհարաբերությունների

արտացոլումն է Ք. ա. մոտ 2230 թ. մի կողմից՝ Նարամսինի, իսկ մյուս կողմից՝ Ավանի առաջնորդի միջև կնքված պայմանագիրը: Դրանով Էլամի կառավարիչը պարտավորվում էր հանդես գալ Նարամսինի թշնամիների դեմ: Աքքադական հարստության իշխանությունը տարածվում էր Էլամի գգալի մասի վրա, որը կառավարվում էր Սուսայի «կառավարիչ» և Էլամի «փոխարքա» կոչումներն ունեցող անձանց կողմից:

Սակայն միջագետքյան ընկալումներում Էլամ երկրանունը ընդհանրական անվանում էր, և այս տարածքն իրականում ներկայացնում էր մի քանի քաղաքական միավորներ: Դրանցից մեկը Սուսան էր, որն այս շրջանում ուներ երկրորդական դեր՝ Ավանի համեմատությամբ: Տվյալներ կան նշելու առնվազն երեք-չորս Էլամական այլ քաղաքական միավորների գոյության մասին, որոնցից մեկը կարող էր լինել Սիմաշկին:

Ավանի վերոհիշյալ 12 արքաներից վերջինը Պուզուր-Ինշուշինակն էր: Նա հիշատակվում է նաև Լագաշի արքա Պուզուր-Մամայի մի արձանագրության մեջ: Վերջինս Շար-կալի-շարրիի կառավարման ավարտին նշանակվել էր Լարսայի կառավարիչ, իսկ հետո իրեն հռչակել անկախ տիրակալ: Ըստ այդմ՝ Պուզուր-Ինշուշինակի կառավարումն ընկնում է ինչ-որ մի շրջանում՝ Շար-կալի-շարրիի օրոք կամ նրանից հետո: Ենթադրվում է, որ նա կարող էր լինել նաև Ուրի III հարստության հիմնադիր Ուր-Նամմուի ժամանակակիցը:

Պուզուր-Ինշուշինակը վարում էր ակտիվ նվաճողական քաղաքականություն: Ավանի արքան նվաճեց Սուսան և Անշանը, արշավեց դեպի հյուսիս, ուր նա հասավ մինչև Կիմաշ՝ Փոքր Զարի ավազանում: Նա հաղթեց կուտիներին, ինչպես նաև Սիմաշկի երկրի արքային: Սակայն Պուզուր-Ինշուշինակի հաջողություններն անցողիկ էին: Ք. ա. XXII դ. երկրորդ կեսին Էլամը հիշատակվում է Լագաշի կառավարիչ Գուդեայի արձանագրություններում: Դրանցում հայտնվում է Անշանի և Էլամի նկատմամբ հաղթանակի, ինչպես նաև Լագաշ եկած Էլամցիների և «սուսեցիների» կողմից քաղաքի տաճարները հարդարելու մասին:

Միջագետքում Ուրի III հարստության հաստատմամբ սկսվեց նոր փուլ Էլամական աշխարհի հետ հարաբերություններում: Ուրի արքա Շուլգիի տեքստերը վկայում են նրա իշխանության առկայությունը Սուսայում: Շուլգիի իշխանությունը վկայված է նաև Էլամական մեկ այլ կենտրոնում՝ Ադամդունում: Արձանագրություններում վերստին հիշատակվում են շումերների նշանակած Սուսայի «կառավարիչները» և Էլամի «փոխարքաները»: Դինաստիական ամուսնությունների միջոցով սերտ հարաբերություններ հաստատվեցին Ուրի ուղղակի ենթակայությունից դուրս գտնվող Էլամական այլ կազմավորումների հետ: Օրինակ՝ Շուլգիի դուստրերն ամուսնացել էին Ավանի, Մարխաշիի և Բաշիմե երկրի արքաների հետ: Խորացան տնտեսական կապերը, ստեղծվեց կանոնավոր հաղորդակցության ցանց, լայն ծավալներ ընդունեց վարձկանությունը. շումերները վարձում էին Էլամցիներին աշխատանքի կամ ռազմական ծառայության:

Շուլգիի գործողությունների արդյունքում հնարավոր դարձավ խորացնել միջագետքյան ազդեցությունը հարավարևմտյան Իրանում: Սուսայի շրջանը Շուլգիի

հաջորդ Ամար-Սուենի օրոք վերածվեց շումերական նահանգի: Սուսայում սկսեցին պահել Ուրի III հարստության արխիվները, քաղաքը ենթարկվում էր շումերցի կառավարչի: Պատահական չէ, որ Ուրի III հարստության տեքստերը տարբերակում էին «Սուսա երկիրը» «Էլամ երկրից»:

Իրավիճակը փոխվեց Ամար-Սուենի հաջորդ Շու-Սուենի օրոք: Թեև նա շարունակում էր իշխել Սուսայում և փորձում էր դիվանագիտական ամուսնությունների ճանապարհով պահպանել իր ազդեցությունը, սակայն շուտով ներքաշվեց պատերազմների մեջ՝ մասնավորապես ընդդեմ Անշան, Սիմաշկի և Զարշալի երկրների: Նրա հաջողություններն անցողիկ էին, և արդեն Իբբի-Սուենի օրոք երկիրը կորցրեց Սուսան: Իբբի-Սուենը փորձում էր պահպանել իր ազդեցությունն այստեղ՝ մերթ դիմելով զենքի ուժին, մերթ՝ դիվանագիտական ամուսնությանը: Աղբյուրները հայտնում են Խուխնուր, Սուսա, Ավան և Ադամդուն երկրների դեմ նրա մղած պատերազմների մասին: Թեև Իբբի-Սուենը հայտնում է իր հաղթանակի մասին, սակայն քիչ անց նա պարտվեց Էլամցիների և նրանց դաշնակից «Սու ժողովրդի» կողմից: Մայրաքաղաք Ուրը գրավվեց, Էլամցիները գերեվարեցին Իբբի-Սուենին, որը և մահացավ գերության մեջ: Ուրի III հարստությունը կործանած Էլամական այս ուժը Սիմաշկին էր:

Սիմաշկիի ճշգրիտ տեղորոշումը ցայսօր անհայտ է: Ենթադրվում է, որ այն գտնվել է կա՛մ Լուրիստանում՝ Սպահանի մոտ, կա՛մ Քերմանից Քաշան ձգվող հատվածում: Շումերական աղբյուրներում Սիմաշկին հանդես է գալիս որպես հավաքական անվանում՝ «Սիմաշկի երկրներ», ինչը վկայում է, որ գործ ունենք մանր պետական կազմավորումների խմբի կամ պարզապես ինչ-որ տարածք մատնանշող ընդհանրական անվանման հետ: Հնարավոր է, որ այդ արքաների մի մասը իշխել է զուգահեռ՝ ցանկում նշված մեկ կամ մի քանի արքաների հետ:

Միջագետքում Ուրի III հարստության անկմանը հաջորդած Էլամական գերիշխանության դեմ հանդես եկավ Իսինի արքա Իշբի-Էրրան (2017-1985): Արքային հաջողվեց Ուրից դուրս մղել Էլամական կայսզորն ու ազատագրել քաղաքը: Իսինի հարաբերությունները Էլամցիների հետ միշտ չէ, որ թշնամական էին: Իշբի-Էրրայի արձանագրությունները հայտնում են Էլամական արքաներ Կինդաստուի և Իդադդուի ուղարկած դեսպանությունների և դինաստիական ամուսնության մասին: Նրա դուստրերից մեկն ամուսնացել էր Սուսայի կառավարիչ Խու(մ)բան-Շիմտիի հետ: Ըստ երևույթին երկու երկրների միջև հաստատվեցին խաղաղ հարաբերություններ, Իշբի-Էրրայի հաջորդ Շու-իլիշուն նշում է Անշանից Ուրի գլխավոր աստվածության՝ Նաննայի վերադարձի մասին, որը «գերի էր տարվել» Էլամցիների կողմից Ուրի գրավման ժամանակ:

Էլամը խաղաղ հարաբերություններ ուներ նաև իր մեկ այլ հարևանի՝ Էշնուննայի հետ: Մասնավորապես հայտնի է, որ Էլամական արքա Տան-Ռուխուրատերն ամուսնացել էր Էշնուննայի տիրակալ Բիլալամայի դստեր հետ: Անշանի տիրակալներից մեկի և Իսինի արքա Շու-իլիշուի հաջորդ Իդդին-Դագանի դստեր ամուսնության մասին հայտնի է այլ տեքստերից: Այսպիսով՝ դինաստիական ամուսնությունների շնորհիվ աստիճանաբար ձևավորվեց միջագետքյան պետություններից մի քանիսի

և Էլամական աշխարհի միջև «պայմանագրային հարաբերությունների» յուրատեսակ համակարգ:

Այս համակարգը գործում էր արդյունավետ, և հաճախ Միջագետքում առաջնության համար ընթացող պատերազմներին Իսինը և Էլամը հանդես էին գալիս համատեղ: Այդպիսին էր Իսինի արքա Ջամբիայի պայքարը Լարսայի տիրակալ Սին-իկի-շումի դեմ, ուր Ջամբիային աջակցում էին Էլամական զորքերը: Մինչ այդ Լարսայի ուժերի և Էլամցիների միջև տեղի ունեցած բախումների մասին են հայտնում Լարսայի տիրակալ Գունգունումի արձանագրությունները:

Միջագետքյան պետությունների և Էլամի հարաբերություններին վերաբերող Ք. ա. XX–XIX դդ. տեղեկությունները սուղ են: Դրանք գերազանցապես վկայում են ռազմական բախումների մասին, ինչպես, օրինակ, վերոհիշյալ Գունգունումի արձանագրություններում: Վերջինս հայտնում է Բաշիմեի և Անշանի նկատմամբ ձեռք բերված հաղթանակների մասին: Ենթադրվում է, որ Գունգունումի հաղթանակները Էլամական պետությունների նկատմամբ սիմաշկյան գերիշխանության անկման պատճառ դարձան: Էլամը մուտք գործեց զարգացման նոր շրջան:

4. ԷԼԱՄԸ «ՍՈՒԿԿԱԼՄԱՆՆԵՐԻ» ՕՐՈՔ

Էլամի պատմության այս շրջանն այդպես է կոչվում Էլամական արքաների կրած շումերական *sukkal mah* (արքադերեն՝ *sukkalmahu*) տիտղոսի պատճառով, թեև մասնագիտական գրականության մեջ այս դարաշրջանը կոչվում է նաև «Էբարտյան»՝ հարստության հիմնադիրը համարվող Էբարատ (Էբարտի) II-ի անունից:

Երկրում գերագույն իշխանությունը պատկանում էր արքային, որը կրում էր շումերական *sukkal mah*՝ «մեծ նախարար» (= արքա) տիտղոսը: Նրանք միջագետքյան աղբյուրներում հիշատակվում են որպես «Էլամի մեծ արքաներ»: Երկրում երկրորդ դեմքը, գահակից արքան և պետության փաստացի առաջնորդը մեծ արքայի կրտսեր եղբայրն էր (հազվադեպ՝ որդին), ով կրում էր շումերական *sukkal* տիտղոսը՝ համարվելով Էլամ և Սիմաշկի երկրների «նախարար-արքա»: Նա նաև գահաժառանգն էր: Պետության մեջ երրորդ դիրքը զբաղեցնում էր նույնպես *sukkal* տիտղոսը կրող Սուսայի «նախարար-արքան» (սովորաբար՝ «մեծ արքայի» որդին կամ ազգականը): «Մեծ արքայի» մահվան դեպքում նրան հաջորդում էր Էլամի և Սիմաշկիի արքան, որի գահին բազմում էր Սուսայի արքան, իսկ նրա փոխարեն Սուսայի արքա էր ընտրվում մեկ այլ անձ: Իրական իշխանությունը, սակայն, գտնվում էր Էլամական գանազան քաղաքներում իշխող տեղական հարստությունների ձեռքին: Երկիրը բաժանված էր ավելի փոքր վարչաքաղաքական միավորների, որոնք կառավարվում էին «հայրերի» կողմից:

Արքայի մահվան դեպքում իշխանությունն անցնում էր մայրական գծով՝ քրոջ որդիներին: Էլամական արքունիքում ընդունված էր ամուսնությունը հարազատների՝

եղբոր և քրոջ միջև, իշխում էր լիիրատը, երբ արքայի մահից հետո նրա եղբայրը կամ եղբոր ժառանգը ամուսնանում էր թագուհու հետ և դրանով ձեռք բերում գահին բազմելու իրավունք:

Սուկկալմախների հարստության հիմնադիրն էր «մեծ արքա» Էբարատը, ով արձանագրություններում հիշվում է իր որդի Էլամի և Սիմաշկիի արքա Շիլխախայի հետ: Սակայն ավելի ուշ շրջանի տեքստերում հենց Շիլխախան է համարվում հարստության հիմնադիրը. Էլամական ուշ շրջանի արքաները իրենց ծագումը հասցնում էին Շիլխախայի քրոջ որդուն: Էլամական արմատներ ուներ նաև Լարսայում հաստատված արքայատոհմը: Լարսայի արքաներ Վարադ-Սինը և Ռիմ-Սինը ակնհայտ Էլամական անուն կրող Շիմտի-Շիլխակի որդի Կուդուր-մարուկի զավակներն էին: Ընդ որում՝ առկա է կարծիք հիշյալ Շիմտի-Շիլխակի և Շիլխախայի նույնականության մասին:

Սուկկալմախների իշխանության շրջանում Էլամն արագորեն դուրս եկավ սիմաշկյան հարստության վերջում նկատվող ճգնաժամից և սկսեց վարել ակտիվ արտաքին քաղաքականություն: Էլամական դեսպաններ են հիշատակվում Մարիում և Բաբելոնի արքա Համմուրապիի արքունիքում, դեսպանների փոխանակություն է կատարվել հյուսիսսիրիական Քատնա պետության և Էլամի միջև:

Էլամի ռազմական ակտիվությանը վերաբերող առաջին տեղեկությունը գալիս է Շուշարրա քաղաքի առաջնորդի կողմից Աշշուրի ամորեական հարստության հիմնադիր Շամշի-Ադադ I-ին ուղղված նամակից: Այնտեղ ասվում է Էլամի արքա Շուրուխտուխի կողմից բանակի առաքման մասին Փոքր Ջարի ավազան՝ Գուտիում: Էլամական այս արքայի հաղթակոթողում նշվում է ավելի քան 70 քաղաքների նվաճման մասին: Էլամի ծավալման մասին տեղեկություններ են պահպանվել Մարիի տեքստերում: Վերջիններս հիշում են Էլամական երկու արքաների՝ Շեպլարպակին և Կուդուգուլուշին, որոնցից առաջինը Անշանի արքան էր և կրում էր Էլամի «նախարար-արքա» տիտղոսը, իսկ երկրորդը Սուսայի «նախարար-արքան» էր: Նրանք երկուսն էլ Շուրուխտուխի եռապետության անդամներ էին և հետագայում հաջորդեցին նրան որպես «մեծ արքաներ»: Նրանց օրոք Էլամական զորքերը հայտնվեցին Գուտիումում և Էշնուննայում, այնուհետև գրավեցին Շուրաթ-Էնլիլ և Էկալլատում քաղաքները: Էլամական համադաշնությունն ապրեց աննախադեպ վերելք: Դրա վկայությունն էր այն, որ եթե Բաբելոնի արքա Համմուրապին և Մարիի արքա Ջիմրի-Լիմը միմյանց դիմում էին որպես «եղբայր»՝ ձանաչելով իրենց իրավահավասարությունը, ապա նրանք երկուսն էլ Էլամական «մեծ արքային» դիմում էին որպես իրենց «հոր»:

Էլամի և նրա դաշնակից Էշնուննայի զորքերը շարունակեցին առաջխաղացումը դեպի Սիրիա: Դուրս գալով Բալիխ և Խաբուր գետերի ավազան՝ նրանք գրավեցին Իդամարազ քաղաքը: Դաշնակիցները պաշարեցին Ռազամա քաղաքը, ապա Մարիից պաշարվածներին օգնելու հնարավորությունը բացառելու նպատակով Էլամական մեկ այլ բանակ շարժվեց Մարի: Սակայն քաղաքը գրավել չհաջողվեց:

Էլամը լայնորեն ներկայացված էր Միջագետքի ոչ միայն քաղաքական կյանքում:

Ունենալով բացառիկ կարևոր դեր առևտրական հարաբերություններում՝ էլամցիներն իրենց ձեռքում էին պահում մետաղների տարանցիկ առևտուրը, հատկապես պղնձի և անագի, որի կարիքը մեծապես զգում էին Միջագետքում: Էլամը (Անշանը) և՛ հանքեր ուներ, և՛ մետաղ էր ստանում արևելքից՝ հանդես գալով նաև որպես միջնորդ: Արևելքում էլամական տիրապետության կամ ազդեցության սահմանագիծը հայտնի չէ: Թել-ի Մայանից գտնված արձանագրության մեջ առկա է էլամական «մեծ արքաների» տիտղոսաշարը, ինչից կարելի է ենթադրել, որ էլամական իշխանությունը առնվազն տարածվում էր մինչև Մայան: Էլամի արքա Շուրուխուտուխի (էլամ. Շիրուխուտուխ) գահակցի՝ Շիմուտ-վարտաշի անունն է ընթերցվում Լիյանից (Բուշնիր) գտնված նվիրատվական արձանագրության մեջ, ինչը ևս կարող է վկայել Պարսքի ծովափնյա հատվածի վրա էլամական գերիշխանության առկայության մասին:

Հյուսիսային Միջագետքում էլամցիների առաջխաղացումը փորձեց կանխել Բաբելոնիան: Մարիի հաղթանակից հետո էլամի հետագա հարձակումները բացառելու նպատակով Համմուրային արշավեց էլամի դաշնակիցների՝ Էշնունայի, Սուբարտուի և Գուտիումի դեմ: Նրա որդի Սամսուիլունայի արձանագրությունները հայտնում են Գուտիումից մինչև էլամի սահման ձգվող պատերազմների մասին: Միջագետքյան աղբյուրներում «մեծ արքա» Կուկ-նաշուր III-ից հետո այլևս էլամական առաջնորդներ չեն հիշատակվում: Ենթադրվում է, որ «մեծ արքաների» դարաշրջանը շարունակվեց ընդհուպ մինչև Ք. ա. XV դ. առաջին կեսը:

5. ՄԻՋԻՆ ԷԼԱՄԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ք. ա. XV–XIV դդ. միջագետքյան աղբյուրներն էլամին քիչ են անդրադառնում: Ենթադրվում է, որ այս փուլում էլամն ապրում էր մասնատվածության շրջան: Այնուամենայնիվ, որոշ առաջնորդներ հավակնում էին համաէլամական տիրապետության: Նրանցից էր Կիդինուն, որն իր արձանագրության մեջ հանդես էր գալիս «Սուսայի և Անշանի արքա» տիտղոսով: Նույն տիտղոսն էին կրում էլամական այլ առաջնորդներ՝ Տան-Ռուխուրատերը և Ինշուշինակ-շար-իլանին: Սրանց ոչ կառավարման տարիները, ոչ անգամ հերթականությունը հայտնի չէ:

Ք. ա. XIV դ. վերջերի բաբելոնյան ժամանակագրություններից մեկը հայտնում է կասսիտական արքա Կուրիգալզու II-ի կողմից (Ք. ա. 1332–1308 թթ.) Էլամ իրագործված արշավանքի, նրա արքա Խուրբատիլային հաղթելու և երկիրը նվաճելու մասին: Կուրիգալզուի արձանագրություններում նշվում է Սուսայի, էլամի և Մարխաշիի նվաճման մասին: Նրա մի քանի տեքստեր հայտնաբերվել են նաև Սուսայից: Էլամը կարծես թե հայտնվել էր կասսիտական տիրապետության տակ:

Դեռևս Ք. ա. XIV դ. վերջերին էլամական աշխարհում աճեց Իգե-Խալկիի իշխանական տան հեղինակությունը: Հարստության հիմնադիր Իգե-Խալկին կրում էր «արքա» տիտղոսը: Նրան հաջորդեցին որդիները, որոնցից վերջինը արդեն իշխում

էր նաև Սուսայում: Արքա Խումբան-նումենան Սուսայում կառուցեց տեղի Ինշուշինակ աստծուն նվիրված տաճար, իր արձանագրությունում նա կրում էր «Սուսայի և Անշանի արքա», «թագավորությունը ընդարձակող» տիտղոսները: Շատ ավելի բազմաբանակ են նրա որդու՝ Ունտաշ-Նապիրիշայի արձանագրությունները: Նա կատարեց լայնածավալ շինարարական աշխատանքներ՝ այդ թվում կառուցելով նոր նստավայր՝ Ալ-Ունտաշ-Նապիրիշան, Սուսայից 40 կմ հարավ-արևելք:

Նոր նստավայրի կառուցումը թերևս նպատակ ուներ վերացնելու Սուսայի և Անշանի մրցակցությունը հոգուտ երրորդի: Փոփոխություններ են նկատվում նոր արքայատոհմի որդեգրած գաղափարախոսության մեջ: Սկսվեց «աքքադականացված» Սուսայի «էլամականացումը»: Նրանք, Սուսայի Ինշուշինակ աստծուն գուգահեռ (հարթավայրային էլամ), առաջ մղեցին Լեռնային էլամի Նապիրիշա աստծո պաշտամունքը: Այս երկու աստվածությունները սկսեցին հիշատակվել համատեղ, որոշակիորեն վերացավ անջրպետը էլամի երկու հատվածների միջև:

Երկրի նյութական և մարդկային միջոցների կենտրոնացումը մեկ իշխանության ներքո հնարավորություն տվեց արդյունավետ օգտագործելու հնարավորությունները նաև արտաքին ասպարեզում: Դատելով էլամ տարված միջագետքյան Իմմերիյա աստծո արձանի վրա առկա արձանագրությունից՝ էլամական բանակն ավարտության էր ենթարկել Տուպիաշ երկիրը, որտեղից և տարվել էր արձանը: Սերտ հարաբերություններ հաստատվեցին էլամական և կասսիտական արքայատների միջև: Տեղ գտան դինաստիական ամուսնություններ:

Էլամն օգտվեց իր հարևան կասսիտական Բաբելոնիայի թուլացումից և Ասորեստանի կողմից Ք. ա. 1225 թ. նրա նվաճումից: Էլամական արքա Կիդին-Խուտրան I-ը Ք. ա. 1224 թ. արշավեց Բաբելոնիա, գրավեց Դեր և Սիպպար քաղաքները: Բաբելոնիայում ասորեստանյան դրածոն գահընկեց արվեց: Բաբելոնյան գահին ասորեստանյան հաջորդ դրածո Ադադ-շում-իդդինի կառավարման տարիներին Կիդին-Խուտրանը մեկ անգամ ևս արշավեց Բաբելոնիա և գրավեց Իսին ու Մարադ քաղաքները:

Կիդին-Խուտրանի գահակալության այլ մանրամասներ հայտնի չեն: Ընդհանրապես մութ է մնում էլամի պատմության շուրջ կեսդարյա մի ժամանակահատված՝ մինչև աղբյուրներում հստակ վկայված էլամական հաջորդ արքայի հիշատակությունը: Վերջինս «Շուտրուկյան» հարստության հիմնադիր և միջին էլամական դարաշրջանի հզորագույն արքա Շուտրուկ-Նախխունտե I-ն էր:

Շուտրուկ-Նախխունտեի իշխանությունը տարածվում էր գրեթե ողջ էլամի վրա: Արքայի գործունեության վկայություններ կան Սուսայում, Անշանում և այլուր: Էլամական արքան վարում էր ակտիվ արտաքին քաղաքականություն, հատկապես դեպի Բաբելոնիա: Ք. ա. 1158 թ. Շուտրուկ-Նախխունտեն ներխուժեց Բաբելոնիա և գահընկեց արեց նրա արքա Զարբա-շումա-իդդինային: Էլամական տեքստերից մեկը հայտնում է «700 քաղաքների» նվաճման մասին: Նրանք մեծ ռազմավար տարան Բաբելոնիայի խոշոր քաղաքներից, այդ թվում՝ Աքքադի արքա Մանիշտուսուի արձանը, Նարամսինի հաղթակոթողը, Համմուրայի օրենքների կոթողը և այլն:

Բաբելոնյան արշավանքը կրկնվեց Ք. ա. 1155 թ.: Էլամական բանակը մտավ Բաբելոնիա և գերեց կասսիտական հարստության վերջին արքա Էնլիլ-նադին-ախսինին: Գերեվարվեց բազմահազար բնակչություն, ավարառության ենթարկվեցին բաբելոնյան սրբազան քաղաքները: Որպես ռազմավար տարվեցին աստվածների արձանները, այդ թվում՝ գերագույն՝ Մարդուկ աստծո արձանը:

Էլամի վերելքը շարունակվեց Շիլխակ-Ինշուշինակ I-ի օրոք: Էլամական պետությունը ապրեց աննախադեպ տարածքային աճ: Արևմուտքում էլամական զորքերը հասան մինչև Էբիխ (Ջերեկ-Խամրին)՝ դուրս գալով Եփրատի ափ, հյուսիսում՝ Առապխա և Նուզի՝ Փոքր Զաբի ավազանում, մտան ասորեստանյան միջնաշխարհ: Էլամական ազդեցության սահմանն ընդարձակվեց նաև արևելքում՝ մինչև Մարվ-Դաշտ: Երկրում լայն ծավալներ ընդունած տաճարաշինությունը շարունակեց էլամական հաջորդ արքան՝ Խուտելուդուշ-Ինշուշինակը: Սա էլամի հզորության գագաթնակետն էր:

Էլամցիները երկար պահպանեցին իրենց դիրքերը Բաբելոնիայում. Շուտրուկ-Նախսունտեի հաջորդների կառավարման շրջանում Բաբելոնիան վերածվել էր էլամական նահանգի՝ կառավարվելով էլամցի տեղապահների կողմից:

Էլամն անսպասելի ծանր հարված ստացավ Իսինի II հարստության արքաներից Նաբուգոդոնոսոր I-ը Ք. ա. մոտ 1115/1110 թ. սահմաններում Դեր քաղաքի մոտ գլխովին ջախջախեց Խուտելուդուշ-Ինշուշինակին: Բաբելոնյան զորքերը ներխուժեցին Էլամ, իսկ Խուտելուդուշ-Ինշուշինակը ստիպված էր նահանջել մինչև Անշան: Էլամը ենթարկվեց ավարառության, բաբելոնցիները վերադարձրին Էլամ գերեվարված աստվածներին:

Ամենայն հավանականությամբ, այս իրադարձությունից հետո Շուտրուկյան հարստությունը սպառվեց: Հաջորդած երեք հարյուրամյակներում Էլամը գրեթե դադարում է աղբյուրներում հիշատակվելուց:

6. ՆՈՐ ԷԼԱՄԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

Էլամական պետության կտրուկ անկումը պայմանավորված չէր միայն բաբելոնյան հարվածներով: Էլամի անկման խնդրում որոշակի դերակատարում կարող էր ունենալ իրանախոս էթնիկ տարրերի հոսքը Էլամ: Ուշագրավ է, որ էլամական մի քանի քաղաքներ, օրինակ՝ Անշանը, որը դեռևս Ք. ա. մոտ 1100-1000 թթ. շարունակում էր մնալ Էլամի քաղաքական և տնտեսական գլխավոր կենտրոններից մեկը, արդեն Ք. ա. X դ. սահմաններում լքվում է: Դրա պատճառները հայտնի չեն, թեև որոշակի դերակատարում հնարավոր է վերագրել Էլամ ներթափանցող իրանախոս զանգվածներին:

Ք. ա. X դ. մինչև VIII դ. կեսերն ընկած ժամանակահատվածին վերաբերող համաժամանակյա փաստական տվյալները սուղ են: Բաբելոնյան «ժամանակագրություններից» մնկում հիշվում է ոմն Մար-բիթի-ապլա-ուծուր, որին աղբյուրն անվանում

է «Էլամի հեռավոր ժառանգ», և որը Բաբելոնիայում կառավարել է 6 տարի (Ք. ա. 984-979 թթ.): Հնարավոր է, որ նա ուներ էլամական արմատներ, թեև դա այնուամենայնիվ թույլ չի տալիս ենթադրել Բաբելոնիայի գահին Էլամի աջակցությամբ նրա բազմելու հնարավորության մասին: Իսկ Էլամում քաղաքական իրավիճակի մասին այս շրջանում որևէ տվյալ հայտնի չէ:

Ասորեստանյան արքա Շամշի-Ադադ V-ի դեմ Ք. ա. 814 թ. մղած ճակատամարտում բաբելոնյան արքա Մարդուկ-բալասու-իկբիին աջակցում էին էլամական զորքեր: Բացի այդ, Էլամն ապաստան տվեց բաբելոնցի փախստականներին: Այս փաստը ցույց է տալիս, որ Էլամը դուրս էր եկել ճգնաժամից և ի գորու էր միջամտելու Միջագետքի քաղաքական կյանքին՝ հանդես գալով նույնիսկ ընդդեմ Ասորեստանի:

Աստիճանաբար աճեց Էլամի ներգրավվածությունը Միջագետքի ոչ միայն քաղաքական կյանքին: Էլամցիներ են հիշատակվում հաջորդ դարակգրի ասորեստանյան աղբյուրներում: Էլամական որոշ գինատեսակներ, հատկապես աղեղը մուտք գործեցին ասորեստանյան բանակ:

Էլամում ճգնաժամի հաղթահարման և քաղաքական կենտրոնացվածության հաջորդ վկայությունը բաբելոնյան աղբյուրների այն տեղեկությունն է, ըստ որի՝ բաբելոնյան արքա Նաբու-նաժիրի կառավարման 5-րդ տարում (Ք. ա. 743 թ.) ոմն Խուրան-նիկաշ դարձել էր Էլամի արքա:

Խուրան-նիկաշ I-ի (Ք. ա. 743-717 թթ.) գահակալությունը հարուստ էր իրադարձություններով, որոնց արձագանքներն են միայն պահպանվել միջագետքյան աղբյուրներում: Բացակայում են նաև ուղղակի վկայություններ՝ Խուրան-նիկաշի ժամանակ իր արևմտյան հարևանների հետ Էլամի ունեցած հարաբերությունների մասին ընդհուպ մինչև Ք. ա. 720 թ.: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Էլամն արդեն Միջագետքի քաղաքական կյանքի հիմնական դերակատարներից էր և տրամադրված էր Միջագետքում իր շահերը պաշտպանելու խնդրում՝ ասորեստանյան ակտիվության պայմաններում: Էլամի շահերը չէին ենթադրում իր անմիջական հարևանի՝ Բաբելոնիայի նկատմամբ ասորեստանյան գերիշխանության որևէ հնարավորություն մի քանի պատճառներով:

Բաբելոնիայի հետ Էլամը հնուց ի վեր ուներ սերտ հարաբերություններ, և այն շատ ավելի կանխատեսելի հարևան էր, քան Ասորեստանը: Բացի այդ, բաբելոնյան տարածքները ծառայում էին որպես տարանջատիչ գոտի Ասորեստանի և Էլամի միջև: Եվ վերջապես Էլամը Բաբելոնիան հումքի աղբյուրներին կապող հիմնական տարանցիկ երկիրն էր, իսկ ասորեստանյան տիրապետությունը Բաբելոնիայում կհանգեցներ առևտրական մայրուղիների ծանրաբեռնվածության տեղափոխությանը՝ դեպի հյուսիս՝ «Խորասանյան մեծ ճանապարհ», որը մասամբ Ասորեստանի վերահսկողության տակ էր: Բաբելոնյան սպառման շուկաների կորուստը, առևտրական ուղիների փոփոխությունը մահացու հարված կլինեին Էլամի համար: Ասորեստանյան նվաճման սպառնալիքի տակ գտնվող Բաբելոնիայի համար ևս կարևորվում էր Էլամով անցնող առևտրական մայրուղին, որը երկու երկրներին դարձնում էր բնական դաշնակիցներ:

Թիզլաթալասար III-ի գահակալելուց հետո ասորեստանյան հավակնությունները Բաբելոնիայի նկատմամբ ընդունեցին սպառնալից բնույթ: Դրան Բաբելոնիան ի զորու չէր միայնակ դիմակայելու: Բաբելոնիայի հարավում հաստատված արամեական և քաղդեական ցեղերը թեև կարևոր գործոն էին, բայց ոչ այն ուժը, որի հետ հաշվի կնստեին ասորեստանցիները: Միակ ուժը, որն ի զորու էր լրջորեն սպառնալու Ասորեստանի հետապնդած նպատակներին, էլամն էր:

Էլամի հնարավոր միջամտությունը կանխելուն էր ուղղված ասորեստանյան արքայի արշավանքը Էլամին սահմանամերձ շրջաններ, որոնք գրավվեցին և ներառվեցին Ասորեստանի կազմում: Ուղղակի ասուրա-էլամական բախումներ աղբյուրները չեն արձանագրում: Ըստ երևույթին Թիզլաթալասարի արշավանքն ուժի ցուցադրում էր Էլամին՝ նրան մղելու գերծ մնալ բաբելոնյան գործերին միջամտելուց: Նույն՝ Բ. ա. 729 թ. Թիզլաթալասարը մտավ Բաբելոն և թագադրվեց բաբելոնյան թագով:

Բ. ա. 721 թ. քաղդեացիների առաջնորդ Մարդուկ-ապլա-իդդինան տիրեց Բաբելոնին և թագադրվեց որպես Բաբելոնիայի թագավոր: Հնարավոր է ենթադրել, որ էլամական արքան ևս օժանդակել է նրա գահ բարձրանալուն: Ասորեստանն անմիջապես արձագանքեց դրան. Սարգոն II-ը շարժվեց հարավ: Բ. ա. 720 թ. Դերից ոչ հեռու տեղի ունեցավ խոշոր ձակատամարտ ասորեստանյան և էլամական բանակների միջև: Ըստ «Բաբելոնյան ժամանակագրության»՝ էլամական զորքերը հաղթանակ տարան:

Խուբան-նիկաշ I-ին փոխարինեց Շուտրուկ-Նախխունտ II-ը (Բ. ա. 717-699 թթ.): Վերջինս կարողացավ օգտվել Դերի ձակատամարտից հետո ստեղծված իրավիճակից՝ ձեռնամուխ լինելով երկրի սահմանների ընդարձակմանը: Ասորեստանյան տեքստերից մեկում նշվում է էլամական զորքերի կողմից Շամա՛ունու ամրոցի գրավման սպառնալիքի մասին, որը նվաճել և վերակառուցել էր դեռևս Սարգոն II-ը:

Արքայի արձանագրություններից մեկում խոսվում է դեպի Կարինդաշ իրագործված արշավանքի մասին: Այս տեղանունը համադրվում է իրանական Քերենդ քաղաքի հետ՝ Իսլամաբադից հյուսիս: Մեկ այլ արձանագրության մեջ թվարկվում են 32 երկրների անուններ, որոնք նվաճել էր արքան: Դրանց շարքում առանձնանում է Արմանը, որը համադրվում է ներկայիս Խոլմանի հետ՝ Կենտրոնական Ջագրոսներում: Այս փաստերը վկայում են էլամական ակտիվության մասին ասորեստանյան ազդեցության տակ գտնվող գոտում՝ Էլլիպի երկրում (Ժաման. Քերմանշահ):

Ասորեստանում երկար չէին կարող հանդուրժել նման իրավիճակը: «Ուրարտական հարցի» լուծումից հետո Սարգոն II-ը անդրադարձավ Բաբելոնիային: Դերի ձակատամարտից տասը տարի անց Սարգոն II-ը արշավեց Բաբելոնիա: Տեղի ունեցան մի շարք բախումներ ասորեստանյան և էլամական զորքերի միջև: Ասորեստանցիները նվաճեցին երկու սահմանային ամրոցներ՝ գերելով էլամցի 7500-ից ավելի զինվորների, նաև 14 քաղաքներ Ուկնու գետի շրջանում (հավանաբար՝ Քարխեն):

Մարդուկ-ապլա-իդդինան լքեց Բաբելոնը և հեռացավ Էլամ՝ օգնության խնդրանքով դիմելով էլամական արքային: Աղբյուրները հայտնում են Մարդուկ-ապլա-իդդինայի կողմից Շուտրուկ-Նախխունտին ուղարկված ընծաների մասին:

Վերջինս ընդունեց ընծաները, բայց ձեռնպահ մնաց բաբելոնյան արքային օժանդակելուց՝ միաժամանակ թույլ չտալով, որ նա մտնի Էլամ: Բ. ա. 709 թ. Սարգոնը վերադարձավ Բաբելոնիա՝ գրավելով Մարդուկ-ապլա-իդդինայի ձեռքին մնացած վերջին ամրությունները, սակայն խուսափեց Էլամի դեմ որևէ քայլ իրականացնելուց՝ բավարարվելով միայն էլամա-բաբելոնյան սահմանը ամրացնելով:

Բ. ա. 708 թ. Էլլիպիի ասուրամետ արքա Դալտան մահացավ, և գահի համար պայքար սկսվեց նրա բրոջ որդիների միջև: Նրանցից մեկը՝ Նիբեն, օգնության խնդրանքով դիմեց Շուտրուկ-Նախխունտին, իսկ մյուսը ապավինեց Սարգոնին: Շուտրուկ-Նախխունտն զորքեր ուղարկեց Նիբենի հաստատելու գահին, սակայն հաջողություն չունեցավ: Ասորեստանյան զորքերը գրավեցին Նիբեի կենտրոնատեղին՝ Մարուքիշտու ամրոցը: Ասորեստանյան մեկ այլ տեքստ հայտնում է, որ Դալտայի որդիներից մեկ ուրիշը մեկնել է էլամական արքայի մոտ, ենթադրելի է՝ նույն պատճառով: Էլամցիներն աջակցեցին նոր հավակնորդին՝ Լուդուին: Էլամին չհաջողվեց Էլլիպիի գահին նստեցնել իր թեկնածուին, և երկիրը կորցրեց այդ տարանջատիչ գոտին:

Բ. ա. 703 թ., երբ Մարդուկ-ապլա-իդդինան հերթական անգամ տիրեց Բաբելոնին, ասորեստանյան նոր ներխուժման սպառնալիքի առջև նա ստիպված էր օգնություն խնդրել Էլամից: Այս անգամ Շուտրուկ-Նախխունտն Բաբելոնիա ուղարկեց խոշոր բանակ: Դաշնակիցները սկզբնապես հասան հաջողության Քիշ քաղաքի մոտ: Սակայն Սինախներիքի բանակը Քիշ քաղաքի մոտ ծանր պարտության մատնեց հակառակորդներին: Սինախներիքը Բաբելոնիայի արքա նշանակեց ոմն Բել-իբնին, իսկ Մարդուկ-ապլա-իդդինան ստիպված էր վերստին փախչել:

Շուտրուկ Նախխունտ II-ը նոր անհաջողություն կրեց Էլլիպիում: Վերջինիս արքա Աշպարարան, թեև գահին էր բազմել ասորեստանյան ուժի շնորհիվ, սակայն աստիճանաբար հեռացել էր Ասորեստանից: Բ. ա. 702 թ. Սինախներիքն արշավեց Էլլիպի, գրավեց երկրի կարևորագույն քաղաքները, ապա Էլլիպիի երկրամասերից Բիթ-Բարրուն կցեց Ասորեստանին: Օղակը Էլամի շուրջը սկսեց սեղմվել:

Մի քանի տարի անց Բել-իբնին գահից հեռացվեց. ասորեստանցիները նրան կասկածում էին էլամցիների հետ գաղտնի կապեր հաստատելու մեջ: Հակառակ Բել-իբնիի արդարացումներին՝ Սինախներիքը նրան գահընկեց արեց և Բաբելոնի թագավոր հռչակեց իր գահաժառանգ որդի Աշշուր-նադին-շումիին: Մարդուկ-ապլա-իդդինան, որը Բ. ա. 700 թ. մեկ անգամ ևս փորձել էր տիրել Բաբելոնին՝ ապավինելով Էլամի աջակցությանը, կրեց նոր պարտություն և այս անգամ արդեն ընդմիշտ ստիպված եղավ հրաժարվել իր հավակնություններից ու լքել Բաբելոնիայի սահմանները: Հայտնի չէ՝ այս անցքերին Էլամն ունեցավ որևէ մասնակցություն, թե ոչ: Սինախներիքի ասորեստանյան աղբյուրները Շուտրուկ-Նախխունտին շարունակում են կոչել Մարդուկ-ապլա-իդդինայի դաշնակից, միաժամանակ սահմանափակվում՝ հայտնելով Էլամի արքային իբր համակած «սարսափի» մասին:

Շուտրուկ Նախխունտ II-ի անհաջողությունները դժգոհություն առաջացրին էլամական վերնախավի մոտ: «Բաբելոնյան ժամանակագրության» հաղորդմամբ

արքայի եղբայր խալլուշուն գերեց նրան: Ենթադրելի է, որ էլամական արքան կա՛մ սպանվել է, կա՛մ բանտարկվել: Գահին տիրեց խալլուշուն (Ք. ա. 699–693 թթ.):

«Բաբելոնյան ժամանակագրության» մեջ խալլուշու անունով հիշատակվող էլամական նոր արքան համադրվում է Սուսայից գտնված մի քանի շինարարական–նվիրատվական բնույթի արձանագրություններում հիշատակվող խալլուտաշ–Ինշուշինակի հետ:

Խալլուտաշ–Ինշուշինակը հավատարիմ մնաց հակասորեստանյան ավանդական քաղաքականությանը: Թեև նրա կառավարման առաջին տարիների մասին աղբյուրները ոչինչ չեն հայտնում, բայց հետագա տեքստերից կարելի է եզրակացնել, որ էլամը ապաստան էր տալիս փախստականների, հավանաբար՝ Մարդուկ–ապլա–իդդինայի կողմնակիցների և, ընդհանրապես, բոլոր նրանց, ովքեր տրամադրված էին Ասորեստանի դեմ:

Էլամի տարածքներից ասորեստանյան տիրապետության դեմ գործող խմբավորումներին չեզոքացնելու նպատակով Սինախներիբը Ք. ա. 694 թ. արշավանք ձեռնարկեց էլամի դեմ: Նրա արձանագրությունները հայտնում են էլամական հինգ շրջաններ գրավելու, արամեացիների և էլամցիների գերեվարելու և թալանի մասին:

Ասորեստանյան բանակի հետագա առաջխաղացումը կանխելու նպատակով խալլուտաշ–Ինշուշինակը իրականացրեց պատասխան հարված՝ արշավելով Բաբելոնիա և գրավելով Սիպպարը: Սինախներիբի որդին՝ Բաբելոնիայի արքա հռչակված Աշշուր–նադին–շումին, գերվեց և ուղարկվեց էլամ: Էլամցիները սկսեցին սպառնալ նաև Դեր քաղաքին:

Ք. ա. 694 թ. Բաբելոնիայում ստեղծվեց այսպիսի իրավիճակ. երկրի հյուսիսում գործում էր էլամա–բաբելոնյան բանակը, մինչ ասորեստանյան զորքերը երկրի հարավում հայտնվել էին փաստացի շրջապատման մեջ: Էլամական բանակը հետ մղեց ասորեստանցիների մի քանի գրոհներ՝ նրանց ստիպելով նահանջել դեպի Էրիդու, ինչը հնարավորություն տվեց խալլուտաշ–Ինշուշինակին բաբելոնյան գահին բազմեցնելու Ներգալ–ուշեգիբին:

Էլամցիների հաջողությունը երկար չտևեց: Սինախներիբի արձանագրությունները հաղորդում են ասորեստանյան նոր գրոհի մասին, որի արդյունքում էլամցիները հետ էին քշվել, իսկ խալլուտաշ–Ինշուշինակի որդին սպանվել էր մարտում: Թեև աղբյուրը չունի հստակ թվագրում, սակայն նկարագրված դեպքերը կարող էին տեղի ունեցած լինել Ներգալ–ուշեգիբին բաբելոնյան գահին հաստատելուց ոչ շատ անց:

Ք. ա. 693 թ. Ներգալ–ուշեգիբի զորքերը գրավեցին ասորեստանյան հսկողության տակ գտնվող Նիպպուր քաղաքը: Ենթադրվում է այդ գրոհին էլամական ուժերի մասնակցություն: Ասորեստանյան բանակը Հարավային Բաբելոնիայում մեկուսացված գործեց գրեթե ինը ամիս՝ գրավելով Ուրուկ քաղաքը: Ներգալ–ուշեգիբը օգնության դիմեց խալլուտաշ–Ինշուշինակին, բայց չսպասելով նրա ուժերին՝ ձակատամարտ տվեց ասորեստանցիներին: Ուրուկի անկումից 7 օր անց Նիպպուրի մոտ նա ծանր պարտություն կրեց, գերի ընկավ և ուղարկվեց Ասորեստան: Ջախջախվեցին նաև օգնության շտապող էլամական զորքերը: Այս պարտությունները խալլուտաշ–Ինշուշինակի համար արժեցան

նրա գահը: Ըստ «Բաբելոնյան ժամանակագրության»՝ արքայի հպատակները Ք. ա. 693 թ. սպանեցին նրան: Գահն անցավ նրա որդի Կուդուր–Նախխունտեին (Ք. ա. 693–692 թթ.): Վերջինս ստիպված էր դիմակայել դեպի էլամ առաջացող ասորեստանյան բանակին: Ք. ա. 692 թ. Սինախներիբի բանակը ներխուժեց էլամ: Կուդուր–Նախխունտեին տեղափոխվեց առավել ապահով վայր՝ Խիդալու, որը գտնվում էր «հեռավոր լեռներում»: Սակայն խռովության հետևանքով Կուդուր–Նախխունտեին սպանվեց:

Կուդուր–Նախխունտեին հաջորդեց նրա եղբայր Խուրան–մենանուն (Ք. ա. 692–689 թթ.): Էլամի արքան, ասորեստանյան նոր արշավանքը բացառելու միտումով, փորձեց նրանց ուշադրությունը շեղել դեպի Բաբելոնիա: Հավանաբար ոչ առանց էլամական աջակցության՝ բաբելոնյան արքա Մուշեգիբ–Մարդուկը հանդես եկավ Ասորեստանի դեմ: Խուրան–մենանուն հավաքեց խոշոր բանակ, ներառյալ զորքեր էլլիպից, Պարսումաշից և Անշանից: Էլամական ճամբար զորքեր էին ուղարկել նաև քաղղեական և արամեական բազում ցեղեր: Միացյալ բանակի թիվը, ըստ ասորեստանյան աղբյուրներից մեկի, անցնում էր 150 հազարից:

Ասորեստանյան և դաշնակից բանակները հանդիպեցին Խալուլում՝ Տիգրիսի ափին: Ճակատամարտը վճռական հաջողություն չբերեց կողմերից որևէ մեկին: Էլամցիների հաղթանակը բավարարեց միայն ասորեստանյան առաջխաղացումը դեպի էլամ կասեցնելու համար, սակայն դրա փոխարեն չվերացավ Բաբելոնիայի գլխին կախված սպառնալիքը: Ավելին՝ Ասորեստանն իր ողջ ներուժն ուղղեց Բաբելոնիայի դեմ և Ք. ա. 689 թ. պաշարեց Բաբելոնը: Մինչ ծանր մարտեր էին ընթանում քաղաքի պարիսպների մոտ, էլամը դուրս եկավ խաղից: Պատճառը Խուրան–մենանունի առողջական վիճակն էր: Նույն թվականին նա մահացավ:

Խուրան–մենանունի հաջորդեց Խուրան–խալտաշ I–ը (Ք. ա. 689–681 թթ.): Նրանից արձանագրություններ հայտնի չեն: Միջազետքյան աղբյուրները ևս չեն մանրամասնում նրա կապը նախորդ արքաների հետ: Միակ փաստը, որը հայտնում է «Բաբելոնյան ժամանակագրությունը», հավանաբար էլամցիների կողմից գերի տարված Ուրուկի աստվածների վերադարձն էր Բաբելոնիա: Աղբյուրը հայտնում է նաև, որ դրանից ոչ շատ անց Խուրան–խալտաշը հանկարծամահ է եղել:

Բաբելոնիայի կորուստը կարծես թե ամրապնդեց էլամում ասուրամետ խմբավորման դիրքերը, և թերևս պատահական չէ, որ Խալուլեի ձակատամարտին հաջորդած տասը տարիների ընթացքում աղբյուրները չեն արձանագրում ասուրա–էլամական որևէ առձակատում: Կարելի է ենթադրել, որ Խուրան–խալտաշն ինքը եղել է այդ խմբավորման անդամ կամ առնվազն վայելել նրա աջակցությունը:

Խուրան–խալտաշ I–ին հաջորդեց նույնանուն արքա՝ Խուրան–խալտաշ II–ը (Ք. ա. 681–675 թթ.): Ընդ որում՝ կարելի է ենթադրել, որ նա գահին է բազմել նույն ասուրամետ խմբավորման աջակցության շնորհիվ: Դա երևում է հետևյալ փաստից: Մարդուկ–ապլա–իդդինայի որդին, օգտվելով Սինախներիբի մահվանից, փորձ կատարեց գրավելու բաբելոնյան գահը, բայց մատնվեց անհաջողության և ապաստանեց էլամում: Խուրան–խալտաշի հրամանով նա սպանվեց: Բաբելոնյան գահի մեկ այլ հավակնորդ, որը փորձում էր ստանալ էլամի ռազմական օժանդակությունը,

նույնպես մերժում ստացավ: Ըստ երևույթին էլամական արքունիքում արդեն տիրում էր այն միտքը, որ ասորեստանյան արշավանքներից խուսափելու լավագույն միջոցը բաբելոնյան գահի հավակնորդներին չօժանդակելն է:

Սակայն իր կառավարման վերջում Խուրան-խալտաշը վերստին սկսեց միջամտել բաբելոնյան գործերին: Մասնավորապես նա աջակցում էր Մարդուկ-ապլա-իդ-դինայի որդիներից Նաբու-ուշալլիմին՝ ընդդեմ ասորեստանյան գերիշխանությունը ճանաչած նրա եղբոր՝ Նա'իդ-Մարդուկի: Էլամցիները պատվիրակություններ էին ուղարկում Նա'իդ-Մարդուկի տիրույթ՝ «Ծովի-երկիր»՝ փորձելով գտնել աջակիցներ: Հաջողություն չունենալով՝ նրանք սկսեցին ամայացնել «Ծովի երկրի» բնակատեղիները: Ավելին՝ Ք. ա. 675 թ. Խուրան-խալտաշն անձամբ արշավեց դեպի Բաբելոնիա և գրավեց Սիպպարը: Ասորեստանի արքա Ասարհադդունը ստիպված էր միջոցներ ձեռնարկել՝ Բաբելոնիայի սահմաններն ամրացնելու ուղղությամբ: Սակայն Էլամի արքան շուտով մահացավ: Գահն անցավ նրա եղբորը՝ Ուրտակին (Ք. ա. 675-664 թթ.):

Ասարհադդունի արձանագրությունները նշում են, որ եթե նախկինում Էլամի և Գուտիումի արքաները թշնամաբար էին տրամադրված ասորեստանյան արքաների հանդեպ, ապա այժմ «սարսափելով» ասորեստանյան հզորությունից՝ նրանք պատվիրակություններ ուղարկեցին Նինվե՝ բարեկամության ձեռք մեկնելով: Էլամական արքայի անունը չի հիշատակվում, սակայն տեքստը վերաբերում է Ք. ա. 673 թ. իրադարձություններին և ամենայն հավանականությամբ նկատի ունի Ուրտակին: Վերջինիս գահ բարձրանալով՝ ասուրա-էլամական հարաբերություններում նկատվում են բարիդրացիական միտումներ: Դրանում կարող էր դեր խաղալ Իրանական բարձրավանդակում քաղաքական իրավիճակի փոփոխությունը: Ասորեստանյան տերությունը ցնցած մարական հզոր ապստամբությունն ու մարական միության ծնունդը, հնարավոր է, խթան դարձան երկու երկրների մերձեցման համար:

Ք. ա. 674 թ. էլամցիները Բաբելոնիա վերադարձրին Իշտար դիցուհու և բաբելոնյան այլ աստվածությունների արձանները: Աղբյուրները հայտնում են Ասարհադդունին Ուրտակի գրած նամակի մասին՝ խաղաղության առաջարկով: Ասորեստանցիներին հետաքրքրում էր էլամական արքայի անկեղծությունը, ինչի համար իրականացվեցին գուշակություններ: Երկու երկրների միջև կնքվեց դաշինք:

Ուրտակը հավատարիմ մնաց այս դաշինքին: Ասորեստանյան տեքստերից մեկը հայտնում է, որ Էլամի արքան չանսաց իր եղբայրների հորդորներին՝ նվաճելու Բաբելոնիան: Ասուրա-էլամական խաղաղ հարաբերությունները շարունակվեցին նաև Աշշուրբանապալի կառավարման առաջին տարիներին: Ասորեստանն օգնեց սովի մատնված Էլամին՝ առաքելով հացահատիկ և ապաստան տալով Ասորեստան գաղթած էլամցիներին: Այս անցքերը տեղի ունեցան Ք. ա. 669-664 թթ. սահմաններում: Իսկ Ք. ա. 664 թ. Ուրտակի բանակը ներխուժեց Բաբելոնիա: Էլամական արքայի այս քայլն անսպասելի էր նաև Աշշուրբանապալի համար: Նա անմիջապես արձագանքեց դրան և զորք ուղարկեց: Ասորեստանյան բանակի առաջխաղացման մասին տեղեկանալով՝ Ուրտակը նահանջեց Էլամ:

Ուրտակի գործողությունների դրդապատճառները պարզ չեն: Այս անցքերին վե-

րաբերող տեքստերից կարելի է եզրակացնել, որ Ուրտակը Բաբելոնիայում ուներ համախոհներ, որոնք կարող էին ունենալ որոշակի դերակատարություն: Ենթադրվում է, որ Բաբելոնիա արշավելով՝ Ուրտակը վստահ էր, որ ասորեստանյան ռազմական հակազդեցություն չի լինելու:

Աշշուրբանապալը չփորձեց սակայն ներխուժել Էլամ, որ պետք է բացատրել այլ ճակատներում արքայի մղած մարտերով: Դրա փոխարեն Աշշուրբանապալի տարեգրությունը հայտնում է նույն տարում Ուրտակի վաղաժամ մահվան մասին: Բացաված չէ արքայի բռնի մահվան հնարավորությունը, թերևս, ասորեստանյան դրոմամբ: Աշշուրբանապալի աղբյուրները հայտնում են մեծաթիվ էլամցիների՝ Ասորեստան փախուստի մասին, ընդ որում՝ նրանց շարքում եղել են արքայական ընտանիքի 60 անդամներ, Էլամի «անհաշիվ քանակությամբ» նետաձիգներ ու քաղաքացիներ, այդ թվում՝ Ուրտակի երեք և Խուրան-նիկաշ II-ի երկու որդիները: Կարելի է ենթադրել, որ Ուրտակի մահը Էլամում առաջ է բերել գահակալական պայքար, որի արդյունքում խմբավորումներից մեկը, որն ուներ ասուրամետ դիրքորոշում և թերևս արքայի սպանության կազմակերպիչն էր, պարտվելով ապաստանել էր Ասորեստանում:

Էլամի գահին բազմեց Ուրտակի խորթ եղբայր Թե-ումմանը (Ք. ա. 664-653 թթ.), որի կառավարման տարիների հիմնական իրադարձությունները մնում են անհայտ: Բաբելոնյան գործերին նրա միջամտության մասին որևէ վկայություն ևս առկա չէ: Ասորեստանի և Էլամի հարաբերությունների մասին կարելի է դատել այն փաստից, որ Աշշուրբանապալն իր արձանագրություններում էլամցուն անվանում էր «հրեշաղեն»:

Եթե Թե-ումմանն իրոք նույնանում է Տեպտի-Խուրան-Ինշուշինակին, ապա կարելի է առանձնացնել նրա ձեռնարկած հետավոր արշավանքը դեպի Բալխուտե և Լալլար՝ Փոքր Զաք գետի ավազանում, ինչն աննախադեպ էր նախորդ դարաշրջանների համար: Էլամական ակտիվությունը ասորեստանյան սահմանների մոտ կարող էր լինել միայն պատճառներից մեկը՝ Աշշուրբանապալի էլամական արշավանքի համար: Պատճառներից մեկն էլ Թե-ումմանի պահանջն էր՝ ուղղված Աշշուրբանապալին՝ հանձնելու նրա մոտ ապաստանած էլամցիներին, ինչն ասորեստանյան արքան մերժեց: Պակասավոր տեքստերից մեկում նշվում են Թե-ումմանի խոսքերը՝ Ասորեստանը նվաճելու իր մտադրության մասին: Արքան ասում էր. «Ես չեմ [քնի մինչև] չգամ ու խնջույք չանեմ Նինվեի կենտրոնում»: Էլամական քանակը շարժվեց դեպի Ասորեստան: Սակայն տեղեկանալով ասորեստանյան բանակի մոտենալու մասին՝ Թե-ումմանը շրջվեց հետ և վերադարձավ Սուսա:

Թե-ումմանի կառավարման շրջանի գլխավոր իրադարձությունը Ուլայա գետի մոտ տեղի ունեցած ճակատամարտն էր, որտեղ էլամական բանակը գլխովին ջախջախվեց: Վիրավորված Թե-ումմանը փորձեց փախչել իր որդու՝ Տամարիտուի հետ, սակայն գերվեց և գլխատվեց:

Արշավանքի հաղթական ավարտից հետո Աշշուրբանապալին հղված նամակում պաշտոնյաներից մեկը առաջարկում էր արքայորդիներին կարգել նահանգապե-

տեր Էլամի և «Ծովի երկրի» վրա: Սակայն ասորեստանյան արքան չգնաց նման արմատական քայլի: Նա սպանված արքաների փոխարեն գահ բարձրացրեց ասորեստանյան արքունիքում ապաստանած Ուրտակի երկու որդիներին: Խուրան-նիկաշը հռչակվեց Էլամի թագավոր, իսկ եղբայրը՝ Տամմարիտուն, դարձավ Խիդալուի արքա: Աշշուրբանապալը պահպանեց նախկին կարգը՝ սպանված երկու արքաների փոխարեն գահ բարձրացնելով երկու արքաների: Փոխարենը Էլամական արքաներին «առաջարկվեց» դաշինք կնքել Ասորեստանի հետ: Նրանք պարտավորվեցին ճանաչել Ասորեստանի գերիշխանությունը և վճարել հարկեր: Էլամցիները ստիպված էին համաձայնվել նաև զգալի տարածքային կորուստների հետ: Տեքստերից մեկում արդեն ինքը՝ Աշշուրբանապալն է հանդես գալիս «Ասորեստանի և Էլամի արքա» տիտղոսով:

Խուրան-նիկաշ II-ը կառավարեց կարճ (Ք. ա. 653-652/1 թթ.): Աշշուրբանապալը հայտնում է, որ Էլամցին դրժեց իր հետ կնքած դաշինքը: Աշշուրբանապալը հայտնում է նաև Ք. ա. 652 թ. Բաբելոնիայում իր գահակալ եղբոր՝ Շամաշ-շում-ուկկինի բարձրացրած ապստամբությանը Էլամական արքայի ներգրավվածության մասին «կաշառքի» դիմաց:

Խուրան-նիկաշ II-ի քանակը Ունդասիի (Էլամ. Ունտաշ)՝ Թե-ումմանի որդիներից մեկի առաջնորդությամբ շարժվեց դեպի Ասորեստան: Ասորեստանյան զորքերի հետ հանդիպումը տեղի ունեցավ Մանգիծի քաղաքի մոտ: Էլամական քանակն այս անգամ ևս կրեց ծանր պարտություն:

Ք. ա. 652/1 թ. Էլամական արքունիքում կազմակերպվեց հերթական դավադրությունը, և Խուրան-նիկաշ II-ը գահընկեց արվեց: Ընդ որում՝ Աշշուրբանապալի կողմից ուղարկված նամակում դեռևս խոսվում է այն մասին, որ ասորեստանյան արքան աջակիցներ ունի Էլամում: Նրանցից մեկն էլ հասցեատերն էր՝ ոմն Մենանու, ով արքային խոստանում էր վրեժ առնել Խուրան-նիկաշից, ինչը և, ըստ երևույթին, նա իրագործեց: Դավադրության մյուս մասնակիցը Խիդալուի արքա Տամմարիտուն էր: Վերջինս էլ հռչակվեց Էլամի արքա:

Տամմարիտուի համար ասորեստանյան բարեհաճության ապահովումն ըստ էության միջոց էր միայն գահ բարձրանալու համար: Ասորեստանյան արքունիքում հույս ունեին, որ Տամմարիտուի գահակալումով Էլամը դուրս կգա պատերազմից: Այս մասին է վկայում նրա գահակալության առաջին օրերին վերաբերող գուշակային հարցումներից մեկը, թե արդյոք Էլամական արքան կմիանա պատերազմին: Սակայն Տամմարիտուն շարունակեց աջակցել Բաբելոնիային: Աշշուրբանապալի տարեգրության մեջ նա մեղադրվում է Շամաշ-շում-ուկկինին աջակցելու և ասորեստանյան իշխանությունը չճանաչելու մեջ:

Նոր արքայի օրոք Էլամական զորքերն ակտիվացրին իրենց գործողությունները Բաբելոնիայում: Օրինակ՝ գուշակային տեքստերից մեկում նշում է ասորեստանյան զորքերի կողմից Ք. ա. 651 թ. բաբելոնացիներից գրավված Նիպպուր քաղաքի վրա Էլամական զրոհի հնարավորության մասին:

Տամմարիտուի գահակալությունն ավարտվեց նույն կերպ. նա գահընկեց արվեց:

Աշշուրբանապալի տարեգրությունը հայտնում է Տամմարիտուի «ծառաներից» ոմն Ինդաբիբիի ապստամբելու և գահին տիրելու մասին: Ըստ երևույթին Էլամական արքունիքում ասորամետ ուժերը շարունակում էին ակտիվորեն գործել: Տամմարիտուն ծովային ճանապարհով փախավ Բաբելոնիա, ապա և ապաստան խնդրեց Աշշուրբանապալից իր հարազատների և մեծամեծների հետ միասին: Աշշուրբանապալն ընդառաջեց՝ թերևս ցանկանալով նրան հետագայում օգտագործել Էլամական իր ծրագրերում:

Ինդաբիբիի գահակալության հանգամանքների վրա լույս է սփռում նաև այն փաստը, որ նրա օրոք Էլամ-ասորեստանյան հարաբերությունները սկսեցին վերստին ջերմանալ: Պատահական չէ, որ Ք. ա. 649 թ. Աշշուրբանապալն Ինդաբիբիին ուղղած նամակում նրան անվանում է «իմ եղբայր», ինչը ոչ միայն խոսում է հարաբերությունների կարգավորման մասին, այլև մատնանշում երկու երկրների իրավահավասարությունը: Կան որոշակի հիմքեր՝ ենթադրելու երկու արքաների միջև կնքված դաշինքի մասին, ինչը, սակայն, չէր խանգարում Աշշուրբանապալին՝ հարկ եղած դեպքում խոսելու ուժի դիրքերից: Օրինակ՝ պահանջելով վերադարձնել հավանաբար դեռևս մինչև Ինդաբիբիի գահակալումը գերի ընկած ասորեստանցիներին՝ Աշշուրբանապալը հակառակ պարագայում սպառնում էր ավերել նրա քաղաքները և Էլամական գահին բազմեցնել մեկ ուրիշի: Ասորեստանյան արքան սպառնալից տոնի համար կարծես թե ուներ պատճառներ: Էլամական արքունիքի ասուրամետ խմբավորումը գործեց շատ ավելի արագ: Ինդաբիբին սպանվեց, և գահ բարձրացավ Խուրան-խալտաշ III-ը (մոտ Ք. ա. 649/8-645 թթ.):

Աշշուրբանապալի տարեգրության համաձայն՝ Խուրան-խալտաշ III-ի հայրը Ատտամետուն էր: Նման անուն կրում էր Խուրան-նիկաշ II արքայի նետաձիգների հրամանատարը, թեև պնդել այս երկուսի նույնականությունը դժվար է: Հնարավոր է, որ Խուրան-խալտաշ III-ը գահ էր բարձրացել Բաբելոնի անկումից հետո, ինչը կարող էր խրախուսել և ամրապնդել ասուրամետ խմբավորման դիրքերը՝ տապալելու Ինդաբիբիին: Խմորումները Էլամում սրանով չավարտվեցին: Երկրում չէին դադարում խռովությունները, որոնցից մեկի ժամանակ սպանվել էր արքայի եղբայրը:

Աշշուրբանապալի առաջին արշավանքն իրականացվեց Ք. ա. 648 կամ 647 թ.: Զորքերը Էլամ մտան երկու ուղղությամբ: Ասորեստանյան զորքերն առաջացան և գրավեցին «արքայական քաղաք» Բիթ-Իմբին: Գերի վերցվեցին արքայի եղբայրը, Թե-ումմանի կինը և մի քանի որդիները, այլ պաշտոնյաներ: Խուրան-խալտաշը լքեց իր նստավայր Մադակտուն և նահանջեց լեռները: Աշշուրբանապալը Էլամի գահին վերահաստատեց Տամմարիտու II-ին:

Տամմարիտուն գահին մնաց մի քանի ամիս: Նա շուտով գահընկեց արվեց, ձերբակալվեց և հետ տարվեց Նինվե: Ասորեստանյան աղբյուրն արդեն նրան հիշում է այլ գերի արքաների հետ Աշշուրբանապալի կառքին լծված: Արշավանքի ընթացքում գրավվեցին Էլամի արևմուտքում ընկած 29 քաղաքներ: Հետագայում էլ Բաբելոնիայի տարածքից իրականացվում էին պարբերական ներխուժումներ դեպի Էլամ: Ստեղծված իրավիճակից փորձեց օգտվել ոմն Խուրան-նիկաշը, ով ապստամբեց:

Խուրան-խալտաշի դեմ: Այս քառասային իրավիճակում որոշ առաջնորդներ Աշշուր-բանապալի հետ բանակցելու փորձ ձեռնարկեցին: Վերջիններս Էլամի դժբախտությունների պատճառ համարում էին Շամաշ-շում-ուկկինի աջակից քաղղեացի Նաբու-բել-շումատիին, ով ապաստան էր գտել Էլամում և այստեղից շարունակում էր գործել Ասորեստանի դեմ: Աշշուրբանապալին ուղղված էլամցիների նամակում տարակուսանք էր հայտնվում Աշշուրբանապալի քայլերի համար՝ գտնելով, որ իրենք մեղավոր չեն և պատրաստ են հանձնելու Նաբու-բել-շումատիին: Էլամցիներին անշուշտ հայտնի էին ասորեստանյան արքայի գործողությունների պատճառները. Նաբու-բել-շումատին Էլամում աջակիցներ ուներ: Գտնելով, որ իր պահանջը չի կատարվում՝ ասորեստանցիները մեկ անգամ ևս արշավեցին Էլամ:

Խուրան-խալտաշը նահանջեց երկրի խորքը՝ դեպի Դուր-Ունտաշ, այնուհետև ապաստանեց լեռներում: Էլամի դաշտավայրային հատվածն անցավ ասորեստանցիների վերահսկողության տակ: Գրավվեց մայրաքաղաք Սուսան, քաղաքը թալանվեց, քանդվեց գլխավոր զիկլուրատ-տաճարը, գերեվարվեց քրմությունը և մեծաթիվ բնակչություն, աստվածների և արքաների արձաններն ու անգամ տաճարների զարդաքանդակները: Էլամական արքաների դամբարանները քանդվեցին, իսկ ոսկորները տարան Ասորեստան:

Այնուամենայնիվ սրանից հետո էլ Էլամը դեռևս գոյատևում էր: Էլամի հերթական արքա է հիշատակվում ոմն Պա՛են, սակայն դեռևս ողջ էր Խուրան-խալտաշը, որը վերադարձել էր ամայացած Մադակտու՝ այդ ընթացքում ճնշելով վերոհիշյալ Խուրան-նիկաշի ապստամբությունը: Պա՛են չկարողացավ հաստատվել գահին և ստիպված էր փախչել Ասորեստան: Խուրան-խալտաշը Էլամից դուրս մղեց Նաբու-բել-շումատիի ուժերին, իսկ սպանված քաղղեացու մարմինն ուղարկվեց Ասորեստան: Այս մասին հայտնում էր անձամբ Էլամի արքան Աշշուրբանապալին ուղղված նամակում: Որոշ ժամանակ անց Խուրան-խալտաշի դեմ սկսվեցին նոր խռովություններ, և արքան ստիպված էր վերստին ապաստանել լեռներում: Այստեղ նա գերվեց, ապա և տարվեց Նինվե: Աշշուրբանապալի աղբյուրներն այնուհետև Խուրան-խալտաշին հիշում են որպես այն չորս արքաներից մեկը, որին լծել էին Աշշուրբանապալի մարտակառքին:

Ք. ա. 646 թ.՝ Էլամի ջախջախումից հետո, միջագետքյան սեպագիր աղբյուրներում այս երկիրը հիմնականում դադարում է հիշատակվելուց: Էլամի պատմության հաջորդող շրջանը գերագանցապես մնում է անհայտ: Այս մուգ շրջանի վրա որոշակի լույս են սփռում էլամական արձանագրությունները, թեև դրանց սուղ նյութը թույլ չի տալիս վերհանել անգամ էլամական նոր արքաների իշխանության ժամանակագրությունը:

Հիմնական խնդիրը վերաբերում է Ք. ա. 646 թ. հետո իշխած էլամական առաջին արքային: Որոշ հետազոտողներ այստեղ տեսնում են Խուրան-իմենայի որդի Շուտուր-Նախիսունտեն՝ տարբերակելով նրան Շուտուրկ-Նախիսունտե II-ից: Անորոշություն է տիրում նաև այս շրջանում էլամական այլ, թերևս արդեն տեղական առաջնորդների իշխանության հարցում: Պահպանվել են արձանագիր փմաքան-

դակներ, որոնցում հիշատակվում են *կուտուր* (արքայազն, իշխան) Խաննին, էլամական արքաներ Շուտուր-Նախիսունտեն, Խուրան-շուտուրուկը, Ատտա-խամիտի-Ինշուշինակը, որոնք դեռևս իշխում էին՝ կրելով էլամական արքաների ավանդական տիտղոսաշարը՝ «Անշանի և Սուսայի արքա, թագավորությունը ընդարձակող, տերը(՝) Էլամ (երկրի), ինքնակալը(՝) Էլամ (երկրի)»: Էլամական անուններ կրող այլ «արքաներ» էլ են հիշատակվում (VII դ. վերջ - VI դ. սկիզբ): Հաճախ համատեքստից դուրս այս հիշատակումները պարզապես վկայում են էլամական պետականության ավանդույթների շարունակության մասին, հնարավոր է՝ Էլամի մի զգալի հատվածի վրա:

Ք. ա. 640-ականներից հետո և հավանաբար ընդհուպ մինչև 550-ական թթ. Էլամի տարբեր հատվածներում գոյությունը շարունակեցին մի քանի պետական կազմավորումներ: Ք. ա. 626 թ. քաղղեացի Նաբոպալասարը Բաբելոնի գրավումից հետո, փորձելով սիրաշահել էլամցիներին, Սուսա վերադարձրեց ասորեստանցիների կողմից գերեվարված էլամական աստվածների արձանները: Էլամական աջակցությունը կարևոր էր քաղղեացիների համար, և պատահական չէ, որ էլամական մասնակցության հետքեր են տեսանելի Նինվեն գրոհած ուժերի շարքում: Սա վկայում է, որ առնվազն Սուսայում պետք է որ գոյություն ունենար ինչ-որ պետական կազմավորում: Սուսայից բացի՝ պետականություններ պետք է լինեին Էլամի լեռնային շրջաններում: Դրանցից էին, օրինակ, Սամաթին, հավանաբար՝ Խուզիստանի հյուսիսում կամ Լուրիստանում: Սամաթիից հայտնի են առնվազն չորս արքաների անուններ:

Էլամական պետականության որոշակի վերելք կարելի է տեսնել բաբելոնյան արքա Նաբուգոդոնոսորի աղբյուրներում: Մասնավորապես հայտնի է Ք. ա. 596 թ. Բաբելոնիա էլամական ներխուժման մասին:

Աստվածաշնչյան տվյալներից դատելով՝ այդ հարաբերությունները միշտ չէ, որ խաղաղ էին: Երեմիայի մարգարեություններից մեկում խոսվում է «էլամական աղեղի» կոտորվելու, թագավորության կործանման և նրա ժողովրդի ցիրուցան լինելու մասին: Եզեկիելը նկարագրում է Ասորեստանի ու Էլամի կործանումը նույնանման խոսքերով, ընդ որում՝ տեքստը վերաբերում է Ք. ա. 584 թ.: Գրեթե նույն շրջանով թվագրվող Երեմիայի մարգարեությունում կիմներների և մարերի թագավորների հետ մեկտեղ հիշատակվում են Էլամի թագավորները: Էլամը հիշատակվում է նաև Դանիելի մարգարեություններից մեկում՝ «Բաբելոնիայի արքա» Բաղդասարի կառավարման երրորդ տարում: Հիշյալ Բաղդասարը նույնացվում է բաբելոնյան արքա Նաբոնիդի որդի Բել-շար-ուծուրի հետ, ով Բաբելոնի կառավարիչն էր: Ըստ այդմ՝ տեքստը հնարավոր է թվագրել 555-542 թթ. ընկած ինչ-որ մի շրջանով:

Էլամական պետականություններին սպառնացող հիմնական վտանգը դեռևս Ք. ա. X դ. սկսված էլամական աշխարհի իրանականացումն էր: Հավանաբար արդեն Ք. ա. VII դ. առաջին կեսին էլամական տարածքի մի զգալի մասը իրանախոս էր: Վերջիններս ներկայացնում էին մի քանի պետական կազմավորումներ էին, որոնցից գլխավորներն էին Պարսումաշը և Անշանը: Ասորեստանյան ազդեցության աճով պայմանավորված՝ այս երկրները կարող էին որոշակի մասնակցություն ունենալ արդեն Էլամի դեմ Ասորեստանի վարած քաղաքականու-

թյանը՝ դրանից բխող հետևանքներով: Կյուրոս II-ը և նրան նախորդած երեք արքաները կրում էին «Անշանի արքա» տիտղոսը, ինչը վկայում է, որ էլամական վերջին արքաների «Անշանի և Սուսայի արքա» տիտղոսը նախկին ավանդության բովանդակագուրկ շարունակությունն էր: Անշան քաղաքը ևս անկում էր ապրում Պարսքում ընթացող արմատական տեղաշարժերի, մասնավորապես քոչվորական կենսակերպի աննախադեպ աճի պայմաններում՝ պայմանավորված իրանական էթնիկ տարրերի ներթափանցման հետևանքով ժողովրդագրության փոփոխությամբ:

Էլամական աշխարհում Պարսումաշի և Անշանի դերակատարությունը կարող էր աճել Ասորեստանի անկումից և մարական միության քայքայումից հետո: Ենթադրվում է, որ Ք. ա. 540 թ. սահմաններում էլամական քաղաքական միավորումներն արդեն գտնվել են Կյուրոս II-ի գերիշխանության ներքո:

Ք. ա. 522-519 թթ. էլամական ապստամբությունները պարսկական գահին բազմած Դարեհի դեմ՝ Աճինայի, ապա և Մարտիայի գլխավորությամբ, հաջողություն չունեցան: Նրանց երրորդ ապստամբությունը Ատտամետուի գլխավորությամբ հնարավոր եղավ ձնշել պարսկական բանակի խոշոր ուժերի մասնակցությամբ միայն: Էլամցիները պարտվեցին, Ատտամետուն գերվեց և ենթարկվեց մահապատժի: Էլամի տարածքը վերակազմավորվեց պարսկական սատրապության, որը հին պարսկերենում կոչվում էր Խուժա՝ Սուսա կենտրոնով: Էլամի երբեմնի մայրաքաղաքը դարձավ Աքեմենյան տերության քաղաքական կենտրոն և արքայանիստ:

Էլամական քաղաքակրթությունը հսկայական հետք թողեց Աքեմենյանների տերության վրա: Էլամերենն Աքեմենյան տերության պաշտոնական գրագրության լեզուներից էր և ընկած էր Աքեմենյան սեպագրի ակունքներում, էլամական ազդեցությունը նկատվում է Աքեմենյան ճարտարապետության և քանդակագործության մեջ, հոգևոր և աշխարհիկ կյանքի այլ ոլորտներում: Պատահական չէ, որ Էլամը հիշատակվում է երկրորդը՝ պարսիկներից հետո, մինչդեռ Աքեմենյանները կրում էին «պարսիկների և մարերի արքա» տիտղոսը: Հատկապես մեծ էր էլամցիների ներգրավվածությունը Աքեմենյան վարչակազմում:

Աստիճանաբար էլամական էթնիկ տարրը տարրալուծվեց իրանական աշխարհի մեջ: Արաբ միջնադարյան հեղինակների (Իստահրի, ալ-Մուքքադաի) վկայությամբ Խուզիստանի տարածքում դեռևս խոսում էին իրենց համար ոչ հասկանալի, «դիվային» լեզվով, որն անվանում էին «Խուզի»: Փաստական տվյալների բացակայության պատճառով հնարավոր չէ միանշանակ պնդել հնագույն էլամերենի հետ այդ լեզվի ունեցած հնարավոր կապը: Էլամ երկրանունը դեռևս Աքեմենյան դարաշրջանում կիրառվում էր տարածական նշանակությամբ և հետագայում պահպանվեց որպես պատմաաշխարհագրական անվանում՝ Էլիմայիս՝ հանդիպելով հունահռոմական աղբյուրներում և հարատևելով մինչև մեր օրերը (Իլամ):

7. ԷԼԱՄԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Էլամի մշակույթի վերաբերյալ գիտության տրամադրության տակ առկա են սահմանափակ քանակությամբ տեղեկություններ, որոնք թույլ են տալիս միայն մասնակիորեն վերականգնել էլամական քաղաքակրթության մշակութային ժառանգությունը: Դրանք արձանագրված են ի դեմս համաժամանակյա շումերական, ասորեստանյան և բաբելոնյան գրավոր աղբյուրներում հիշատակվող էլամական դիցանունների, ինչպես նաև Էլամի տարածքում պեղված նյութական մշակույթի հուշարձանների:

1. ԿՐՈՆԸ

Քաղաքականապես մասնատված էլամական աշխարհը չունեք միասնական, կանոնակարգված դիցարան: Յուրաքանչյուր խոշոր քաղաքական միավոր ուներ իր դիցարանը, որը մյուսներից տարբերվում էր թե՛ իր կազմով և թե՛ աստվածների քանակով ու նրանց գործառույթներով: Նման տեղական դիցարաններից հայտնի է Ավանինը, որի աստվածներից էին Պինիգիրը, Խուտրանը, Նախխունտեն, Խումբանը և Կիրմաշիրը: Սիմաշկի պետության աստվածներից հայտնի են Խիշմիտիկը, Ռուխուրատերը և Նապիրիշան, Անշանի աստվածներից էին Կիրիրիշան, Սիմութը, Կիլախ-շուպիրը, Ուպուրկուպակը և այլն: Սուսայում երկրպագվող աստվածներից էին Ինշուշինակը, Իշնիկարաքը, Լագամալը, Մանգաթը և այլն: Ընդ որում՝ առկա տեղեկությունների մեծ մասը վերաբերում է միայն Սուսայի շրջանին, իսկ Վերին կամ «Խորքային» Էլամին վերաբերող տվյալները սուղ են: Բացառություն են կազմում վիմագրերն ու բարձրաքանդակները, որոնք որոշ չափով լրացնում են բացը:

Սեպագիր աղբյուրներում հիշատակվող ավելի քան 200 դիցանունների մեծ մասը բուն էլամական աստվածություններն են, սակայն քիչ չէ նաև միջագետքյան աստվածների թիվը, որոնք հավասարապես երկրպագվում էին էլամցիների կողմից: Շումերական և աքքադական բազում աստվածություններ, օրինակ՝ Ինաննան, Սինը, Բելետ-ալին, Շալան, Իշկուր/Աղադը և այլն, իրենց տաճարներն ունեին Սուսայում: Բնակչության մեջ սրանց պաշտամունքի առկայության վկայությունն է բազում էլամցիների անձնանունների քաղաղրիչ հանդես եկող միջագետքյան աստվածությունների անունները (օրինակ՝ Էրրա, Էա, Էնլի, Սին, Աղադ և այլն):

Էլամում միջագետքյան աստվածություններից բացի՝ առկա էր նաև այն հեռավոր երկրների աստվածների պաշտամունքը, որոնց հետ Էլամն ուներ ակտիվ առևտրական կապեր: Օրինակ՝ Էլամում հայտնի էր Էնգագ աստծո պաշտամունքը, որը Դիլմունի (ներկայիս Բահրեյն) մեծ աստվածն էր:

Բուն էլամական աստվածների մեծ մասը հանդես է գալիս պատմական որոշակի ժամանակաշրջանում, իսկ հետագա դարերի գրավոր աղբյուրներում նրանք դադարում են հիշատակվելուց: Որոշ աստվածություններ հիշատակվում են ընդամենը մեկ անգամ, շատերը հայտնի են միայն վարչատնտեսական և առօրյա կյանքին վերա-

բերող տեքստերից, մեծավ մասամբ՝ որպես անձնանունների բաղադրիչներ, իսկ էլամական աստվածությունների մոտ կեսը հայտնի է միայն շումերական և արքա-դական աղբյուրներից:

Ըստ այդմ՝ ընդունված է էլամական դիցարանը դիտարկել ըստ պատմական փուլերի՝ ստորաբաժանելով հին, միջին և նոր էլամական շրջանների:

Հին էլամական շրջան

Այս շրջանին վերաբերող առաջին կարևոր աղբյուրը Նարամսինի և հավանաբար Խիտայի՝ Ավանի առաջնորդի միջև կնքված դաշնագիրն է, ուր հիշատակվել են մոտ քառասուն աստվածներ (պահպանվել է երեսուներեք դիցանուն): Նրանց գրեթե կեսը հանդիպում է միմիայն այս դաշնագրում, իսկ մյուսները՝ հետագայում ևս:

Այս աստվածություններից ամենից հաճախ հիշատակվում է Ինշուշինակը, որը Սուսայի գլխավոր աստվածն էր (նրա անունը նշանակում է «Սուսայի տեր»): Հին էլամական դարաշրջանում Սուսայում իշխած էլամական տարբեր հարստությունների տիրակալները մեծապես կարևորել են Ինշուշինակի պաշտամունքը: Գրեթե յուրաքանչյուր արքա վերանորոգել է նրան ձուլված տաճարները կամ կառուցել նորերը: Արձանագրություններում հազվադեպ հանդես է գալիս նաև Նարունդի աստվածուհին: Սակայն նրա էլամական ծագումը վիճելի է, առավել ևս, որ Միջագետքում նա ընկալվում էր իբրև Իգիգի աստվածությունների կին: Դիցանունների ճնշող մեծամասնությունը պատկանում է միջագետքյան այն աստվածություններին, որոնց պաշտամունքը խորությամբ արմատավորվել էր Սուսայի շրջանում: Ուշագրավ է, որ Վերին Էլամի այս կամ այն հարստության արքաները, որոնք իրենց տիրապետությունն էին հաստատել Սուսայի վրա, չէին փորձում տեղի բնակչությանը պարտադրել իրենց աստվածների պաշտամունքը:

Միջին էլամական շրջան

Միջին էլամական փուլում նկատելի տեղաշարժեր արձանագրվեցին էլամական արքաների կրոնական քաղաքականության մեջ: Սուսայի շրջանում վերջնական տիրապետության հասնելու նպատակով նրանք փորձում էին նվազեցնել միջագետքյան ավանդական ազդեցությունը, Սուսայի բնակչությանը կապել Վերին Էլամի հետ, նախ և առաջ, հոգևոր կապերով:

Այս քաղաքականության սկիզբը դրվեց Իգե-Խալկիի հարստության արքաների օրոք, որոնց արձանագրություններում առավել ու առավել սակավ են հանդիպում միջագետքյան աստվածությունները, փոխարենը լայնորեն ներկայացված են էլամական աստվածները: Այսպես՝ «Կիդինյան» հարստության արքաներն իրենց համարում էին «Կիրմաշիր աստծո ծառա»: Երդմնագրերում, որոնք նախկինում կազմվում էին Արևի արքադական աստված Շամաշի անունով, սկսում է հանդես գալ էլամական Ռուխուրատեր աստվածը: Այս զարգացումները խորացան Ունտաշ-Նապիրիշայի օրոք: Նա սկսեց իր հարստության աստվածների պաշտամունքը ոչ միայն ներմուծել Սուսա, այլև պարտադրել տեղի բնակչությանը: Սուսայից ոչ հեռու կա-

ռուցված Դուր-Ունտաշ քաղաքի տաճարային համալիրը, որը սկզբնապես ձուլվել էր Սուսայի Ինշուշինակ աստծուն, քանդվեց և վերակառուցվեց հսկայածավալ մի շինության՝ էլամական մեծ աստված Նապիրիշայի տաճար-գիկկուրատի: Սուսայի շրջան ներմուծված այլ աստվածություններից էին Տեմտին, Մաշտի և Ուպուրկուպակ աստվածուհիները, որոնց համար արքան կառուցեց տաճարներ:

Այդ գործընթացը շարունակվեց «Շուտրուկյան» հարստության օրոք: Թեև Ինշուշինակը պահպանեց իր դիրքը, սակայն արձանագրություններում նրան սկսեցին նախորդել այլ աստվածություններ, մասնավորապես՝ Նապիրիշան և նրա կին Կիրիրիշա աստվածուհին, ովքեր հետին պլան մղեցին Սուսայի գլխավոր աստծուն: Միջագետքյան աստվածությունների դերակատարությունը ևս հասցվեց նվազագույնի: Շիլխակ-Ինշուշինակ I-ի տեքստում հիշատակվող աստվածություններից միայն Նաննարն էր, ով ուներ միջագետքյան ծագում:

Նոր էլամական շրջան

Սուսայի «էլամականացման» գործընթացը շարունակվեց նոր էլամական շրջանում ևս՝ ընդհուպ մինչև էլամական համադաշնության անկում: Մեծ հեղինակություն վայելող Ինշուշինակի, Նապիրիշայի, Լագամալի, Պինիգիրի, Նախխունտեի կողքին ի հայտ են գալիս նախկինում չվկայված կամ քիչ հայտնի աստվածություններ, ինչպիսիք էին Մաշտին, Տեպտին, Շաշումը, Շատին և Լալին: Սուսայում աննախադեպ աճում է Խու(մ)բան աստծո դերակատարությունը: Այս աստծո անունը՝ որպես անձնանվան բաղադրիչ, հանդիպում է նոր էլամական դարաշրջանի արքաների կամ արքայական ընտանիքի անդամների գրեթե կեսի անուններում:

Էլամական աստվածների գործառույթները, հավատալիքներն ու պաշտամունքային կառույցները

Էլամական դիցարանը, լինելով տեղային դիցարանների մի խառնակույտ, երբևէ չկանոնակարգվեց: Առկա փորձերը հետապնդում էին քաղաքական նպատակներ և խորությամբ չարմատավորվեցին էլամցիների շրջանում: Օրինակ՝ ձգտելով ամրապնդել Անշանի հարստության համաէլամական տիրապետությունը՝ Շիլխակ-Ինշուշինակ I-ը Ավանի աստվածներից Խուտրանին հռչակեց անշանյան Նապիրիշա աստծո և Կիրիրիշա աստվածուհու որդի: Աստվածային մեկ այլ գույգ էին կազմում Ինշուշինակ աստվածն ու նրա կինը, որի անունը գրվում էր շումերական Ինաննա աստվածուհու գաղափարագրով: Կիրիրիշա և Մաշտի աստվածուհիները համարվում էին «աստվածների մայր»:

Քիչ են տվյալները էլամական այս կամ այն աստծո գործառույթների մասին, հայտնի չէ՝ հատկապես որոնք էին գլխավոր, և որոնք՝ երկրորդական աստվածներ: Օրինակ՝ բազմաթիվ աստվածներ են հանդես գալիս միևնույն՝ «մեծ» տիտղոսով, ինչը նշանակում էր դիցարանի գլխավոր, ընդ որում՝ նրանց շարքում կային նաև աստվածուհիներ: Առկա նյութերը հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու սոսկ առանձին աստվածությունների գործառույթների մասին:

Էլամական գերագույն աստվածներից Նապիրիշայի մասին հնարավոր է դատել Կուրանգունի սրբավայրի բարձրաքանդակներից: Այստեղ Նապիրիշան պատկերված է մարդու գլխով՝ վիշապօձի վրա բազմած: Աստվածությունը մի ձեռքով բռնել էր վիշապօձի գլուխը, իսկ մյուս ձեռքին կենաց ջրերի ակունք-սափորն էր: Սափորից երկու առվակով հոսող կենաց ջրերի մոտիվը պատկերագրության մեջ նրան մոտեցնում է ջրերի միջագետքյան Էա (Էնկի) աստծուն: Մեկ այլ աստված՝ Լագամալը, զուգադրվում էր Անդրաշխարհի տիրակալ Ներգալի հետ: Էլամում Արևի աստվածն էր Նախսունտեն, թեև միջագետքյան տեքստերից մեկում նա հիշվում է որպես Լուսնի աստված: Այդ նույն տեքստում Նարունդի աստվածուհին է համարվում Արևի աստված: Էլամական աղբյուրները չեն մատնանշում ռազմի գործառույթներ ունեցող որևէ կոնկրետ աստծո. հայտնի են միանգամից մի քանիսը, որոնք հաղթանակ էին պարգևում: Մինչդեռ միջագետքցիները Էլամական մի քանի աստվածների նույնացնում էին Նինուրտայի հետ՝ հավանաբար նրանցում տեսնելով ռազմի հատկանիշներ: Մեծ թիվ էին կազմում պահապան աստվածները (Ինշուշինակ, Կիրիրիշա, Նապիր, Մանգաթ, Սիլիր-կատրու ևն), որոնք ընկալվում էին որպես արքաների կամ ամբողջ երկրի հովանավոր:

Էլամական դիցարանի առանձնահատկություններից էր իգական աստվածությունների բացառիկ կարևոր դերակատարությունը: Սկզբնապես Էլամական դիցարանները գլխավորում էին աստվածուհիներ: Նարամսինի՝ Էլամական առաջնորդի հետ կնքած պայմանագրում աստվածների թվարկումը սկսվում է Պինիգիր աստվածուհով: Այլ՝ առավել հայտնի աստվածուհիներից էին Կիրիրիշան, Ուպուրկուպակը, Մաշտին և Մանգաթը: Պատահական չէ, որ Էլամի պատմության գրեթե ողջ շրջանում արքայական իշխանությունը փոխանցվում էր իգական գծով:

Էլամցիների մոտ խորն էր հավատը հանդերձյալ կյանքի հանդեպ: Էլամական գրեթե բոլոր աստվածությունները այս կամ այն կերպ կապվում էին մահվան և հանդերձյալ կյանքի հետ: Նման աստվածությունները կոչվում էին «մահվան» աստվածներ: Հանդերձյալ կյանքը կապվում էր դռների կամ դարպասների՝ որպես այդ կյանք տանող մուտքերի պաշտամունքի հետ, ընդ որում՝ որպես «դարպաս» հանդես էր գալիս նաև խոտածածկ հողը: Օրինակ՝ Կիրիրիշա աստվածուհին, որի անունը պարզապես նշանակում էր «մեծ աստվածուհի», տեքստերից մեկում բնորոշվում է որպես «կյանքի տիրուհի, որն իշխանություն ունի մարգագետինների՝ դարպասների վրա»: Հանդերձյալ աշխարհը կապվում էր նաև բերրիության և պտղաբերության հետ: Անդրաշխարհի և բերրիության հետ կապվող մյուս աստվածներից էին Ինշուշինակը, Իշնիկարաբը, Լագամալը և Նապիրիշան: Տվյալներ են պահպանվել աստվածների կոնկրետ գործառույթների մասին: Մասնավորապես հանդերձյալի հոգին Իշնիկարաբ և Լագամալ աստվածներն ուղեկցում էին Ինշուշինակի մոտ, որը համարվում էր դատավոր (բառացի՝ «կշռող») և վճռում նրա ճակատագիրը: Տաճարում իրականացվող այս արարողությունից հետո միայն հանգուցյալը կարող էր հուղարկավորվել:

Էլամի տարածքից հայտնի են պաշտամունքային մեծ նշանակություն ունեցող մի

քանի սրբավայրեր, այդ թվում՝ Կուրանգունը, Իգա/Մալամիրը և Նախշ-է Ռոստամը. վերջինս իր նշանակությունը պահպանեց ընդհուպ մինչև սասանյան շրջան:

Էլամական հուշարձանները բացօթյա սրբավայրեր են՝ աստվածներ, ծիսական շքերթներ և երկրպագողներ պատկերող բարձրաքանդակներով, ուր տոնակատարությունների ժամանակ այցելության էին մեկնում արքաները՝ իրականացնելով ծեսեր քրմերի և բազմության ներկայությամբ: Բացօթյա սրբավայրերից հնագույնը Կուրանգունն է, որը թվագրվում է Ք. ա. XVII դ. :

Բացի սրբավայրերից, Էլամում գոյություն են ունեցել տաճարների մի քանի տիպեր: Առավել նշանակալի և խոշոր կառույցները զիկկուրատներն էին: Դրանք մի քանի մակարդակ ունեցող խոշորածավալ շինություններ էին, որոնց վերին հատվածում գտնվում էր «բարձր տաճարը»: Վերջինս զարդարված էր ջնարակած սալիկներով, իսկ տանիքին տեղադրված էին բրոնզաձույլ եղջյուրներ, որոնք տաճարների հարդարանքի կարևոր բաղադրամասերից էին: Զիկկուրատի ստորոտին կառուցված տաճարի մոտ էր գտնվում հանդիսավոր դարպասը, իսկ ողջ համալիրը կառուցվում էր սրբազան մարգագետնի տարածքում և կոչվում էր «մարգագետնի տաճար»: Պահպանված խոշորագույն տաճարային համալիրը գտնվում է Չողա Զանքիլում: Վերջինիս զիկկուրատը շրջապատված էր մոտ մեկ տասնյակի հասնող Էլամական տարբեր աստվածների տաճարներով:

Էլամում մարդկանց կյանքը հագեցած էր կրոնական արարողություններով: Էլամցիներն ունեցել են Նորալուսնի տոն, Կիրմաշիր/Կիրվաշիր աստծուն նվիրված տոն, տարբեր ամիսներին նվիրված տոնակատարություններ, հատուկ ծիսական արարողություններ են իրականացվել նաև «աստծո մարտակառքի» և «արքայի մարտակառքի» առջև: Կարևորագույն ծեսերից էր Նոր տարվա տոնակատարությունը, որը նշվում էր գարնանային գիշերահավասարի օրը և պահանջում էր արքայի ու թագուհու անմիջական մասնակցություն: Ծեսերն ուղեկցվում էին երաժշտությամբ:

Էլամի հոգևոր կյանքին ծանր հարված հասցրեց Ասորեստանը: Ասորեստանյան արքա Աշշուրբանապալի արձանագրությունները նշում են նվաճված Սուսայից Ինշուշինակ, Սիմուր, Լագամալ, Պինիգիր, Խուտրան, Կիրմաշիր և այլ աստվածների գերեվարման մասին: Սուսայի շրջանի խոշոր տաճարներն ու սրբարանները հիմնովին ավերվեցին և թալանվեցին, քրմությունը գերեվարվեց կամ կոտորվեց: Հետագայում Էլամում հոգևոր կյանքն ապրեց որոշակի վերածնունդ՝ պայմանավորված նոր Էլամական դարաշրջանի մանր քաղաքական կազմավորումների վերելքով: Մասնավորապես այս շրջանում էր՝ Ք. ա. VI դ. առաջին կեսին, որ կերտվեցին ծիսապաշտամունքային մեծածավալ բարձրաքանդակներ: Հոգևոր կյանքը որոշ չափով վերականգնվեց Սուսայում: Հայտնի է, որ Ասորեստանի կործանումից հետո Աշշուրբանապալի «գերեվարած» աստվածները բաբելոնյան արքա Նաբոպալասարի կողմից վերադարձվեցին իրենց պաշտամունքային կենտրոններ:

Նոր Էլամական շրջանի ուշ փուլում տեղ գտած Էլամական քաղաքակրթության վերելքը կարճ տևեց: Շուտով Էլամական տարածքները նվաճվեցին Կյուրոս II-ի կողմից, ապա հայտնվեցին Աքեմենյան տերության կազմում: Արդեն Քսերքսես I-ի

օրոք սկսված և ողջ տերության մեջ նկատվող կրոնական անհանդուրժողականությունը իր հետևանքներն էր ունենալու նաև Էլամում՝ հանգեցնելով պաշտամունքային հնագույն կենտրոնների կործանմանը:

2. ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Հարուստ է և ինքնատիպ էլամցիների թողած մշակութային ժառանգությունը: Նրանք ստեղծել են սեփական գիր (գծային էլամերեն), սեպագիր դպրություն, որը, ազդված լինելով միջագետքյանից, այնուամենայնիվ, չէր կրկնում նրան. այն հետագայում ընկավ Աքեմենյան սեպագիր դպրության ակունքներում: Էլամցիներն ունեին յուրօրինակ արվեստ, հզոր ճարտարապետություն, բարձրարվեստ քանդակագործություն:

«Էլամական արվեստ» ասելով՝ հասկանում ենք նյութական մշակույթի այն աշխարհը, որն ընդգրկում է Ք. ա. 3400 թ. մինչև Ք. ա. մոտ 525 թ. ընկած ժամանակաշրջանը: Այն ներկայանում է մի քանի տասնյակ հուշարձաններից հայտնաբերված նյութական մշակույթի նմուշներով, որոնց մեծ մասը ծագում է Սուսայից: Այդ իսկ պատճառով երկար ժամանակ Սուսայի արվեստը նույնացվում էր էլամականի հետ: Մինչդեռ Սուսան, գտնվելով միջագետքյան աշխարհի հարևանությամբ, իր վրա էր կրում միջագետքյան արվեստի հզոր ազդեցությունը և, առնվազն սկզբնապես, այդ աշխարհի մի մասնիկն էր:

Էլամական արվեստի անցած ուղին ստորաբաժանվում է նախաէլամական, հին, միջին և նոր էլամական արվեստի փուլերի:

Նախաէլամական փուլի (Ք. ա. IV հազ. վերջ – III հազ. առաջին կես) արվեստին բնորոշ ճյուղերը երկուսն են՝ խեցեգործություն և կնիքագործություն: Հայտնի են դրանց տասնյակ ձևեր, որոնց ակունքներում ընկած են Իրանական բարձրավանդակի նեոլիթյան հասարակությունների թողած խեցեգործական իրերի տիպերն ու զարդանախշերը: Յուրահատուկ է հատկապես կնիքների պատկերագրությունը: Այստեղ, երկրպագության տեսարաններին զուգահեռ, գերակշռում են երևակայական էակները: Դրանք ներկայացնում են մարդու զլխով երկտանի կենդանիներ, կեամարդ–կեսկենդանի կամ մի քանի կենդանիների խառնուրդ կազմող երևակայական էակներ, այսպես կոչված «գրիֆոններ» և այլն: Պատկերագրության այս մոտիվներն ունեին հնագույն ակունքներ, և թեև դրանք հանդիպում են հինարևելյան այլ հասարակություններում ևս, սակայն ամենևին չեն նույնանում միմյանց: Հնարավոր է, որ որոշ մոտիվների մուտքը Միջագետք տեղի է ունեցել Էլամից: Էլամական վաղ պատկերագրությունն ուներ բազում առանձնահատկություններ: Բավական երկարատև կյանք ունեցավ հատկապես մարդու զլխով օձակերպ արարածների պատկերումը: Այդ երկարատևությունը պայմանավորված էր էլամցիների պատկերացումներով, երբ օձերը նույնանում էին կենաց ջրերի, նրանց հոսքի հետ, կապվում վերարտադրության և պտղաբերության մասին պատկերացումներին: Պատահական

չէ, որ աստվածուհիների մեծ մասը սովորաբար պատկերվում էր օձի իրանով, օձերի շրջապատում կամ այս կամ այն կերպ ասոցացվում այդ սողուններին:

Հին էլամական արվեստի փուլն ընդգրկում է Ք. ա. 2100–1600 թթ. ընկած շրջանը: Այս շրջանի համար բնութագրական են գերազանցապես Սուսայից հայտնաբերված մեծաթիվ բրոնզե արձանիկներն ու կնիքները: Հիմնականում գերիշխում են կրոնական, առասպելաբանական թեմաները:

Միջին էլամական շրջանից, որն ընդգրկում է մոտ Ք. ա. 1600–1150 թթ., մեզ են հասել սակավաթիվ նյութեր, որոնց մեծամասնությունը գտնվել է այս շրջանի խոշորագույն Հաֆթ–թեփե հնավայրից: Այս դարաշրջանի արվեստի գլուխգործոցներն են էլամական արքա Ռեստաշ–Նապիրիշայի կոթող–վիմազիրը և նրա կնոջ՝ թագուհի Նապիրասուտի բրոնզաձույլ արձանը, որի միայն իրանը կշռում է 1800 կգ: Միջին էլամական դարաշրջանի աչքի ընկնող արվեստի գործերից է այսպես կոչված «էլամական արքայի զլուխը»:

Այս դարաշրջանի էլամական արվեստում ի հայտ է գալիս որմնանկարչությունը, որի օրինակները հայտնաբերվել են Անշանից: Էլամական նորամուծություն էր ջնարակած սալիկների կիրառությունը, որը հետագայում լայն տարածում գտավ Աքեմենյան շրջանում: Շուտուրուկ–Նախխունտե I–ն իր արձանագրություններից մեկում նշում է, որ ինքն առաջինն է տաճարը զարդարել ջնարակած սալիկներով: Դամբարաններում ի հայտ են գալիս թաղման ծեսի հետ կապված և չթրծված կավից պատրաստված մարդու գունազարդ զլուխներ, որոնք հանգուցյալի և դամբարանային իրերի հետ միասին իջեցվել էին այնտեղ:

Արվեստի ուշագրավ գործ է Սուսայից հայտնաբերված տաճարային համալիրի բրոնզե մանրակերտը (60x40 սմ): Այստեղ՝ տաճարի աշտարակների, սրբազան ծառերի, ծիսական անոթների շարքում, պատկերված են մերկամարմին երկու քրմեր ինչ–որ արարողություն կատարելիս: Մանրակերտը տաճարին էր ընծայել Շիլխակ–Ինշուշինակ I–ը: Ընդհանրապես, Էլամը բրոնզագործության հայտնի կենտրոն էր և այդ դերը պահպանեց ընդհուպ մինչև հելլենիստական դարաշրջան:

Նոր էլամական արվեստի (Ք. ա. մոտ 1000–525 թթ.) կարևոր օրինակներից է Ատտա–խամիտի–Ինշուշինակի բարձրաքանդակը: Ընդհանրապես, արքայական կոթողային բարձրաքանդակներն աչքի են ընկնում հանդիսավորությամբ, կերպարները ստատիկ են, դրա փոխարեն դինամիկ է կնիքների պատկերագրությունը՝ առօրյա կյանքի բազում մանրամասնություններով: Նոր էլամական շրջանի ուշ փուլում նոր ծաղկում է ապրում քանդակագործությունը, հատկապես ժայռերի վրա կատարված ռելիեֆային պատկերները:

Էլամական արվեստի ազդեցությունը զգալի է ինչպես Իրանական բարձրավանդակի՝ Էլամին հարևան մանր պետական կազմավորումներում, այլև Ուրմիա լճի հարավային ափերին ընկած Մանայի թագավորությունում: Պատահական չէ, որ էլամական արվեստը՝ պետականության կորստից հետո չանհետացավ, այլ իր տարբեր դրսևորումներով առժամանակ ևս ապրեց Աքեմենյան տերունական արվեստի մեջ:

Էլամի առավել նշանակալի և խոշոր կառույցները զիկկուրատներն էին: Այդպի-

սիք հայտնաբերվել են Սուսայից, Ալ-Ռնտաշ-Նապիրիշա/Դուր-Ռնտաշ քաղաքից (Չողա Ջանքի) և Չողա Պանից: Ջիկկուրատի հետքեր հայտնաբերվել են նաև Հաֆթ-Թեփե հնավայրից:

Էլամական կոթողային ճարտարապետության ամենափայլուն օրինակը Դուր-Ռնտաշի գիկկուրատն է: Այն կառուցել է Ռնտաշ-Նապիրիշա արքան: Կառույցն աղյուսաշեն է, երեք կողմերից յուրաքանչյուրի երկարությունն է 105 մ, իսկ չորրորդ կողմն ունի 109 մ երկարություն: Ջիկկուրատն ունի 4 մակարդակ, որոնցից վերջինի վրա բարձրանում է հինգերորդը՝ այսպես կոչված «վերին տաճարը»: Ջիկկուրատի ընդհանուր բարձրությունն է 52,5 մ, շրջապատված է կրկնակի պարիսպներով (1200x800 և 400x400 մ) և ունի 7 մուտք: Համալիրի առջև հայտնաբերվել են տասնչորս զոհասեղաններ: Ջիկկուրատի մերձակայքում պահպանվել են մոտ մեկ տասնյակ աստվածությունների առանձին տաճարներ: Ջիկկուրատի գլխավոր մուտքը երեսպատված էր տարբեր գույների ջնարակած սալիկներով: Ճարտարապետության մեջ էլամական նորամուծություն է դիտվում կամարակապ եռաստիճան որմնախորշերի կառուցումը, քիտումի օգտագործումն իբրև կապակցող նյութ շինարարության մեջ:

Էլամական ճարտարապետության լավագույն օրինակը Սուսա քաղաքն է: Քաղաքի վրա իշխում էր ամրացված միջնաբերդը, որն ուներ իր սրբազան հատվածը, որտեղ գտնվում էր Սուսայի գիկկուրատը: Քաղաքում մեծ թիվ են կազմել տաճարները, իսկ նրա երբեմնի տեսքի մասին պատկերացում են տալիս Սուսայի գրավումը պատկերող ասորեստանյան բարձրաքանդակները: Սուսան իր միջնաբերդով, գիկկուրատով, պալատական համալիրներով և պարիսպներից դուրս սփռված քաղաքային թաղամասերով Առաջավոր Ասիայի խոշորագույն քաղաքներից մեկն էր:

ԷԼԱՄԻ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

«Ավանի I հարստություն»	Նապիր-խուշ
Երեք արքաներ որոնք իշխել են «356 տարի»:	Կիկկու-ծիմե-տեմտի
?	Լուխ-իշշան (2300-ական թթ.)
Լու [.....]	Խիշիպրաշինի
Կուուկ [-իշշակ]	(Խիշեպրատեպ)..... (2270-ական թթ.)
	Խիեխու
	Խիտա (2230-ական թթ.)
	Պուզուր-Ինշուշինակ (2200-ական թթ.)

«Ավանի II հարստությունը»

Պեյի	Սիմաշկիի արքայատոհմը
Տարի	
Ուկկու-Տախիշ	Գիրնամե (XXI դ. առաջին կես)
Խիշուր	Տագիտա I (2040-ական թթ.)
Շուշուն-տարանա	Էբարտի I (2030-ական թթ.)

Տագիտա II	Միջին էլամական դարաշրջան
Լու[...ր]ակլուխան (Տան-Ռուխուրատեր I)	(1683-1680)
Կինդատու (XXI դ. վերջին քառորդ)	Կիդինու (XV դ. սկիզբ)
Իդարդու I (Ինդատու-Ինշուշինակ)	Տան-Ռուխուրատեր II
Տան-Ռուխուրատեր I	Շալլա
(մոտ 1980-1970-ական թթ.)	Ինշուշինակ-շար-իլանի
Էբարատ (Էբարտի II)	(Ինշուշինակ-սունկիր-Նապպիպիր)
Իդարդու II	Տեպտի-ախար (XIV դ. կեսեր)
Իդարդու-Նապիր	Խուրբատիլա (XIV դ. վերջին քառորդ)
Իդարդու-տեմտի	

Իգե-Խալկիի արքայատոհմ

«Սուկկավմախների» (Էբարտյան) արքայատոհմը

Էբարատ (= Էբարտի II)	Իգե-Խալկի (XIV դ. վերջին քառորդ)
Շիլխախա (XIX դ. առաջին քառորդ)	Պախիր-իշշան (XIV դ. վերջին քառորդ)
Կուկ-Նաշուր I	Ատտար-կիտախ
Ատտա-Խուշու	Խումբան-Նումենա (մոտ 1270-ական թթ.)
Շուրուխտուխ (Շիրուկտուխ I)	Ունտաշ-Նապիրիշա
(XVIII դ. առաջին քառորդ)	(մոտ 1350-1330-ական թթ.)
Շեպլարպակ (Շիվե-պալար-խուխպակ) ...	Ունպախաշ-Նապիրիշա
(XVIII դ. երկրորդ քառորդ)	Կիդին-Խուտրան I ... (XIII դ. վերջին քառորդ)
Կուդուզուլու I (XVIII դ. երկրորդ քառորդ)	Կիդին-Խուտրան II
Իդամարազի (XVIII դ. երկրորդ կես)	Նապիրիշա-Ռնտաշ
Կուտիր-Նախսունտե I ... (1730-1710-ական թթ.)	Կիդին-Խուտրան III
Լիլա-իրտաշ (XVIII դ. վերջ)	
Տեպտի-Ազուն (XVII դ. սկիզբ)	
Տան-Ուլի (1680-ական թթ.)	
Տեպտի-Խալկի (XVII դ. կեսեր)	
Կուկ-Նաշուր II	
(մոտ 1650 թ.)	
Կուտիր-Շիլխախա I .. (XVII դ. երրորդ քառորդ)	
Կուկ-Նաշուր III (XVII դ. երրորդ քառորդ)	
Տեպտի-Ռապտաշ (1620-ական թթ.)	
Կուդուզուլու III	
(XVII դ. վերջ)	
Տատա	
(մոտ 1600 թ.)	
Ատտա-մերրա-Խալկի	
(մոտ 1580 թ.)	
Պալա-իշշան	
(մոտ 1570 թ.)	
Կուկ-Կիրմաշ (1540-ական թթ.)	
Կուկ-Նախսունտե (1520-ական թթ.)	
Կուտիր-Նախսունտե II	
Կուտիր-Շիլխախա II	

Շուտրուկյան հարստություն

Խալլուդու-Ինշուշինակ'	(XII դ. առաջին կես)
Շուտրուկ-Նախսունտե I ...	(1160-ական թթ.)
Կուտիր-Նախսունտե III	(1150-ական թթ.)
Շիլխակ-Ինշուշինակ I	(XII դ. երկրորդ կես)
Խուտեյուդու-Ինշուշինակ	(XII դ. վերջին քառորդ)

Շիլխինա-խամրու-Լագամար

Էլամական դարաշրջան

Խուրան-տախրա (*)	(760-743)
Խուրան-նիկաշ I	(743-717)
Շուտրուկ-Նախսունտե II	(717-699)
Խալլուշու (Խալլուտաշ-Ինշուշինակ)	(699-693)

Կուդուր-Նախխունտե	(693-692)
Խուրան-մենանու	(692-689)
Խուրան-խալտաշ I	(689-681)
Խուրան-խալտաշ II	(681-675)
Ուրտակ	(675-664)
Թե-ումման (Տեպտի-խուրան-ինշուշինակ) ...	(664-653)
Խուրան-նիկաշ II	(653-652/1)
Տամարիտու	(652/1 ^ո - 650/49 ^ո)
Ինդարիբի	(650/49 ^ո - 649/648 ^ո)
Խուրան-խալտաշ III	(649/8 ^ո -645 ^ո)
Ուրախարուա (խուրան-խարուա)	(648/647թ.)
Տամարիտու II	(648/647թ.)
Պա'է	(647/646թ.)

Ուշ էլամական դարաշրջանի տեղական իշխողներ (թ.ա. 640-540-ական թթ.)
Շուտուր-Նախխունտե (III ^ո)
Խուրան-շուտուրուկ
Ատտա-խամիտի-Ինշուշինակ (Ատտամետու ^ո)

Սամաթի արքաները

Ամպիրիշ
Աննի-Շիլխակ
Ունգի-կիլիկ
Ունսակ

ՄԱՐԱՍԱՆ

Մինչև XIX դ. երկրորդ կեսը, երբ հայտնաբերվեցին միջագետքյան հնագույն քաղաքակրթություններին վերաբերող հնագիտական և գրավոր վկայությունները, Առաջավոր Ասիայի երկրների պատմության հիմնական աղբյուր էին հունահռոմեական պատմագրության տվյալները, մասամբ՝ «Աստվածաշունչը»: Դրանք մեծապես ազդեցին տարածաշրջանի վաղ պատմությանը նվիրված առաջին գիտական ուսումնասիրությունների վրա: Հունահռոմեական՝ հաճախ քաղաքականացված պատմագրության տվյալները հիմնականում ընդունվում էին աներկբա, և դրանց հիման վրա կառուցվել էր աշխարհի այնպիսի մի մանրակերտ, որի առանցքում էր «իդեալական Արևմուտքի» և «բարբարոսական Արևելքի» հակադրությունը: Հաճախ արհեստականորեն ուռձացվում էր Արևելքի երկրների դերը, երկրներ, որոնց հաղթելու էր հունական, ապա և հռոմեական ուժը: Այս հիմքի վրա հնում գծագրվում էին սահմաններ, որոնց երբևէ չէր հասել այն ուժը, որին վերագրվում էին այդ սահմանները: Նմանապես պատմական իրադարձությունները հաճախ էին ուղեկցվում մտացածին, առասպելական պլոթներով և դրանց մաս կազմող անձանց կերպարանավորումներով:

Անտիկ պատմագրության մասին ասվածը գերազանցապես վերաբերում է մինչև Աքեմենյան տերության անկումն ընկած դարաշրջանի և, ի մասնավորի, Մարաստանի պատմությանը: Օրինակ՝ Մեդիոս Λόγος-ը շարադրած Հերոդոտոսին հասանելի չի եղել ուղիղ տեղեկատվություն Մարաստանի կամ Ասորեստանի մասին: Հերոդոտոսի տեղեկատվությունը միջնորդավորված էր, հաճախ առասպելականացված և կրում էր Աքեմենյան արքունիքի պաշտոնական գաղափարախոսության ազդեցությունը: Թերևս սրանով էր պայմանավորված այն փաստը, որ Հերոդոտոսի ուրվագծած «Մարական տերության» սահմանները գրեթե համապատասխանում էին իրոյա Աքեմենյան տերության տարածքին:

1. ՏԱՐԱՄՔԸ

Տեղեկությունները մարերի բնակության սահմանների մասին սուղ են, իսկ առկա աղբյուրների տվյալները՝ վիճելի: Հստակ չեն նաև հիշատակվող տեղանունների տեղորոշումները, ինչը թույլ կտար ուրվագծել մարերի բնակության մոտավոր սահմանները: Գլխավոր խնդիրները երկուսն են: Առաջինը ասորեստանյան աղբյուրներում հիշատակվող Սագրիթի նույնացումն է Էկրատանայի (ներկայիս Համադան) հետ,

որը մարերի «մայրաքաղաք-կենտրոնատեղին» էր: Երկրորդը վերաբերում է որպես մարերի բնակության հեռավոր սահման դիտվող Բիկնի լեռան տեղորոշմանը: Այն նույնացվում է Իրանական բարձրավանդակի Դեմավենդ լեռնագագաթին՝ Թեհրանից հյուսիս-արևելք, թեև առկա է կարծիք՝ Բիկնին որոնելու Ջագրոսյան լեռներում: Առավել հստակ ուրվագծվում է մարերի տարածման արևմտյան՝ Ջագրոսյան լեռներով անցնող սահմանը: Այն, սակայն, շարունակաբար փոխվում էր՝ մարական ներթափանցման արդյունքում տեղ գտած ժողովրդագրական փոփոխություններով պայմանավորված: Այսպես՝ Ջագրոսյան գոտում տեղորոշվող մի շարք երկրներ ասորեստանյան արշավանքների արդյունքում կորցնում են իրենց բնիկ բնակչությանը, իսկ մարերի ներհոսքը հանգեցնում էր դրանց մարականացմանը: Հետագայում դրանք պարզապես հիշատակվում են որպես «մարական»: Հարավում մարական սահմանը մոտենում էր Էլամին, որից բաժանված էր մի քանի «բուֆերային» երկրներով: Մարերի բնակության հյուսիսային և արևելյան սահմանները հստակ չեն:

Իրանական բարձրավանդակի հնագույն քաղաքակրթությունների ուսումնասիրությանն են նվիրվել հազարավոր ուսումնասիրություններ, այդ թվում՝ Մարաստանի պատմությանն ու պատմական աշխարհագրությանը, այստեղ իրականացված հնագիտական աշխատանքներին՝, այսպես կոչված «մարերենի» ուսումնասիրությանը, մարերի և ընդհանրապես իրանախոս ցեղերի նախապատմությանը, Մարաստանի նյութական և հոգևոր մշակույթին:

2. ՄԱՐԱԿԱՆ ՑԵՂԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԳԵՏՔԻ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Միջագետքը Իրանական բարձրավանդակից զատող Ջագրոսյան լեռներում ձևավորվել էր Ջամուա միությունը, որը հետևողական պայքար էր մղում Ք. ա. I հազ. սկզբներից վերստին սկսված ասորեստանյան արշավանքների դեմ: Դրանք մեծ ծավալ ընդունեցին հատկապես ասորեստանյան արքա Աշշուրնաժիթպալ II-ի իշխանության առաջին տարիներին: Ջամուայի կազմում միավորված տասնյակ իշխանություններն ի զորու չգտնվեցին կանխելու ասորեստանցիների մուտքը Ջագրոսյան տարածաշրջան: Սալմանասար III-ն արդեն իրականացնում էր տարածքային նվաճումներ, որի առաջին արդյունքը Ջագրոսյան լեռների փեշերին ձգվող ասորեստանյան Խաբրուրի նահանգն էր: Հաջորդող տարիներին ասորեստանցիները

¹ Дьяконов И.М., История Мидии от древнейших времен до конца IV в., Москва – Ленинград, 1956; Грантовский Э.А., Иран и иранцы до Ахеменидов, Москва, 1998; Diakonoff I.M., Media. - In: Gershevitch I. (ed.), The Cambridge History of Iran, vol. 2: The Median and Achaemenian Periods, Cambridge, 1985, 36ff.; Medvedskaya I.N., Iran. Iron Age, Oxford, 1982; Zawadzki S., The Fall of Assyria and Median-Babylonian relations in the Light of Nabopolassar Chronicle, Poznan, 1988; Young T.C., The Early History of the Medes and the Persians and the Achaemenid Empire to the Death of Cambyses. - In: CAH IV (2nd ed.), Cambridge, 1988, 1ff.; Liverani M., The Rise and Fall of Media. - In: Fales F.M. (Ed.-in-Chief), Continuity of Empire (?). Assyria, Media, Persia, HANE/M V, Padova, 2003, 1ff.; Roaf M., The Median Dark Age. - In: Continuity of Empire (?). Assyria, Media, Persia, HANE/M V, Padova, 2003, 13ff. և այլն:

ձգտում էին պահպանելու Ջագրոսյան տարածաշրջանում ստատուս քվոն և արևելք էին արշավում գրեթե տասնամյա պարբերականությամբ:

Տարածաշրջան ձեռնարկված հաջորդ արշավանքը կապված էր Սալմանասար III-ի կողմից Նամրու երկրում Ք. ա. 843 թ. գահ բարձրացված արքա Յանգուի գործունեության հետ: Ք. ա. 834 թ. ասորեստանյան զորքերը վերստին արշավեցին դեպի Ջագրոսյան լեռներ: Արշավանքի նկարագրությունը պահպանած տեքստերից այսպես կոչված «Սև կոթողը» հայտնում է.

«Շարժվելով Պարսուա երկրից՝ իջա դեպի Մեաու երկիրը, Ամադայա (^{mā}Amādāya) երկիրը, Արագիաշ երկիրը (և) Խարխար երկիրը, նվաճեցի քաղաքները՝ դրանց շրջակա բնակավայրերի հետ: Ես ոչնչացրի և թալանեցի նրանց, նվաճեցի, ավերեցի (և) քաղաքները ևս այրեցի: Ես կանգնեցրի իմ արքայական պատկերը Խարխար քաղաքում»:

Ամադայա անվամբ երկիր (^{mā}Amātāya, ^{mā}Hamātāya) ասորեստանյան աղբյուրներում հիշատակվում է առաջին անգամ: Ասորեստանյան աղբյուրը այս երկրանվան հետ կապված այլ մանրամասներ չի հաղորդում և սահմանափակվում է վերոհիշյալ Յանգու արքային գերեվարելու մասին տեղեկատվությամբ:

Տարբեր կարծիքներ են հայտնվել «(Ա)Մադայա» («մար») անվան ծագման մասին: Սկզբնապես այս տերմինն ընկալվում էր որպես էթնիկ անվանում: Նորագույն հետազոտությունները կասկածի տակ են վերցնում տերմինի ինքնանվանում լինելու, ինչպես նաև իրանական լեզվաշխարհին պատկանելու հնարավորությունն ընդհանրապես: Ենթադրվում է, որ այն կարող էր վերաբերել Ջագրոսյան լեռներում գոյություն ունեցած փոքր ցեղապետություններից մեկին կամ լինել սոցիալական տերմինի վերածված անվանում, որով Ջագրոսյան տեղաբնիկները կոչում էին որոշակի կենցաղավարական ընդհանրություններ ցուցաբերող խմբերի՝ անկախ դրանց էթնիկ պատկանելությունից, որը և մուտք էր գործել նախ միջագետքյան, ապա և պարսկական դպրություն՝ հետագայում հասանելի դառնալով նաև հունական աշխարհին: Հերոդոտոսին հայտնի չէր «մար(եր)», «Մարաստան» տերմինների որևէ բացատրություն: Նա խոսում է վեց ցեղերի հիման վրա Մարաստանի «կազմավորման» մասին, որոնցից ոչ մեկը չէր կրում «մար» անվանումը, իսկ նշվածներից առնվազն մեկը՝ մագերը, իրականում սոցիալական տերմին էր, այլ ոչ ցեղանուն: Խոսել մարական «ինքնության» մասին ըստ էության հնարավոր չէ:

Հաջորդ առանձնահատկությունն այն է, որ հարյուրավոր էթնիկ խմբերից և երկրներից միայն մարերն են, որոնց ասորեստանյան աղբյուրները հիշատակելու էին «հզոր մարեր» (*madāyu dannūti*) մակդիրով: Մարերին տրված այս «մակդիրն» ընկալելի է դառնում, երբ անդրադարձ է արվում միջագետքյան սեպագիր դպրության ավանդույթներին:

Նախ *dannu* տերմինի «հզոր» թարգմանությունը դրա նշանակություններից մեկն է միայն, իսկ երբեմն նույն այս տերմինը կիրառվում է բացասական՝ «դաժան», «վայրի» և պարզապես «վատ» իմաստներով, որոնք տիպական են հակառակորդներին քննորոշելիս:

Ասորեստանցիների և ընդհանրապես Միջագետքի բնակչության ընկալմամբ հա-

կառակորդ համարվում էին բոլոր լեռնաբնակներն անխտիր: Նրանք, ի տարբերություն «քաղաքակիրթ» դաշտաբնակի, ընկալվում էին որպես բարբարոս, քաղաքակրթություն չունեցող ժողովուրդներ, և այս հակադրությունը սեպագիր աղբյուրներում շեշտվում է բազմիցս: Այն արտահայտվել է միջագետքյան առասպելաբանության մեջ. օրինակ՝ կուտիները, որոնց Միջագետքի բնակիչը բնութագրում էր որպես դաժան, անողորմ թշնամի, և որոնք կործանեցին Աքքադի թագավորությունը, հետագա դիցերգերում արդեն անձնավորվում էին որպես լեռներում ծնված կիսամարդ-կիսաառասպելական էակներ՝ «ումման-մանդա» (թարգմանաբար՝ «կարծես թե՛ մա՛րդ»):

Ենթադրվում է, որ «մար» տերմինը սկզբնապես վերաբերել է Զագրոսների առավել խուլ կամ Ասորեստանից հեռու ընկած ինչ-որ շրջանի, ուր և հանդիպելով իրենց անծանոթ եկվորների՝ ոչ միայն «մար» անվանումն են փոխանցել նրանց, այլև բնորոշել ճառու տերմինով՝ ելնելով նույն առասպելաբանական պատկերացումներից: Պատահական չէ, որ Զագրոսյան լեռնաբնակներին ասորեստանյան աղբյուրները մշտապես անվանել են նաև «կուտիներ»: Իսկ այն փաստը, որ տեքստերից մեկում «մար» անվան փոխարեն գրվել է «մանդա», պատահական չէ, առավել ևս, որ ավելի ուշ շրջանի բաբելոնյան տեքստերը մարերին հիշում են գերազանցապես որպես «ումման-մանդա»: Ուշագրավ է, որ հայկական վաղ պատմագրության մեջ մարերը հիշվում են որպես կիսաառասպելական էակներ՝ «վիշապազունք», Աժդահակի (Դահակ-վիշապի) սերունդ:

Միայն Սարգոն II-ի ժամանակաշրջանից սկսած՝ տեքստերում առասպելականի կողքին սկսում են գերակշռել մարերի «իրատեսական» բնութագրումները, ինչպիսիք էին «հեռավոր մարեր», «Բիկնի լեռան շրջակայքի մարեր» արտահայտությունները: Ուստի և «մար», «մարական» տերմինները կիրառվում են լայն իմաստով՝ որպես պատմական ասպարեզ իջած իրանալեզու կամ գերազանցապես իրանալեզու էթնիկ տարրերի ամբողջություն:

Ք. ա. 832-828 թթ. ասորեստանյան բանակը կրկին ուղղվեց դեպի Զագրոսներ՝ խորանալով այն նույն տարածքներում, ինչ՝ Ք. ա. 834 թ.: Սակայն արշավանքը մանրամասնող տեքստերը չեն հիշատակում Ամադայան: Հնարավոր է, ասորեստանյան բանակի երթուղին չի անցել այս երկրի մոտով կամ գուցե այդ անվանումը իրականում կրել է շարժունակ էթնիկ մի խումբ, որը չուներ մշտական բնակության տարածք և դեգերում էր ինչ-որ մի տեղ՝ Խարխար և Արագիաշ երկրների մերձավորությամբ: Ընդհանրապես, քոչվորությունը զագրոսյան բնակչության կենցաղավարության հիմնական ձևերից մեկն էր:

Սալմանասարից հետո առաջին խոշոր արշավանքը մարերի դեմ ձեռնարկեց Շամշի-Ադադ V-ը Ք. ա. 820 թ.: Անցնելով տասնյակ հարկատու երկրներով՝ ասորեստանյան բանակը բախվեց Գիզիլիբունդա երկրի առաջնորդներից Կինակիի ուժերին, ապա Ուրաշ քաղաքի մոտ ջախջախեց գիզիլիբունդացիների միացյալ ուժերին առաջնորդող արքա Պիրիշատիին: Ձեռք բերելով մեծ ռազմավար՝ ասորեստանցիները պարտության մատնեցին մար Խանածիրուկային և Արագիաշի տի-

րակալ Մունիրսուարտային: «Նաիրի երկրի արքաները» հրաժարվեցին շարունակել դիմադրությունը, և ստանալով նրանց 27 առաջնորդների հարկը՝ Շամշի-Ադադը վերադարձավ Ասորեստան:

Դատելով աղբյուրից՝ մարերի ներհոսքը զագրոսյան լեռնաշխարհի շարունակվում էր, ընդ որում՝ ընդլայնվել էին նրանց ներկայության աշխարհագրական սահմանները: Խանածիրուկայի գործից 140 հեծյալ ռազմագերիների հիշատակությունը հուշում է, որ նրա ուժերն ընդհանրապես կարող էին բաղկացած լինել միայն հեծյալներից, ինչն ակնարկում է մարերի քոչվորական կենսակերպի մասին: Իսկ աղբյուրի հիշատակած Խանածիրուկայի «արքայական քաղաք» Սագբիթը, թեև երբեմն նույնացվում է հետագա Մարաստանի մայրաքաղաք Էկրատանայի հետ, սակայն իրականում կարող էր լինել ոչ ավելին, քան ժամանակավոր ճամբար-բնակատեղի:

Գիզիլիբունդայի և Արագիաշի մերձավորությամբ մարական համայնքների առկայությունը տարածաշրջանում չուներ խոր արմատներ, և նոր տարածքներում հիմնվելու համար նրանք համագործակցում էին տեղի ուժերի հետ: Վերջիններս դրանով հնարավորություն էին ստանում մարերի գինական ուժն օգտագործելու Ասորեստանի և այլ երկրների դեմ: Ամենայն հավանականությամբ՝ ռազմական ծառայության դիմաց մարերին տրվում էր բնակության տարածք: Այդպիսին էր, հավանաբար, Գիզիլիբունդայի արքա Պիրիշատիի, Արագիաշի տիրակալ Մունիրսուարտայի և մար առաջնորդների միջև կայացած համաձայնությունը: Համագործակցությունը առժամանակ շարունակվեց, և Ադադնիրարի III-ի արձանագրությունները զագրոսյան երկրների շարքում հիշատակում էին մարերի հետ տեղ գտած բախումները (Ք. ա. 809 թ.):

Իրավիճակն արմատապես փոխվեց Ք. ա. VIII դ. սկզբին: Զագրոսյան տարածաշրջանի պետություններին ասորեստանցիների հասցրած հարվածները ճանապարհ էին բացում մարերի առջև: Ավելին՝ հնարավոր է ենթադրել, որ այս շրջանում տեղ են գտել առաջին շփումները մարերի և զագրոսյան լեռնաշխարհում նվաճողական ակտիվ քաղաքականություն վարող Վանի թագավորության միջև: Վերջինիս հաջողվել էր դեռևս Մենուայի օրոք վերահսկողության տակ վերցնել Ասորեստանը հումքի աղբյուրներին կապող հյուսիսզագրոսյան ճանապարհները, իսկ արդեն Արգիշտին ձգտում էր վերահսկողության հասնելու նաև Կենտրոնական Զագրոսներով անցնող կարևորագույն մայրուղու՝ այսպես կոչված «Խորասանյան մեծ ճանապարհի» նկատմամբ (հետագայի «Մետաքսի ճանապարհի» մի հատվածը): Ըստ այդմ՝ Ք. ա. VIII դ. առաջին տասնամյակներում նկատվող մարերի ակտիվության աննախադեպ աճը կարող էր պայմանավորված լինել վերոհիշյալ գործոններով: Մարերի ձեռնարկած հեծելագորային, ավարառուական արշավները, հնարավոր է, ուղղորդված էին Վանի թագավորության կողմից:

Մարերի աճող դերակատարման մասին է վկայում ասորեստանյան էպոնիմների ցանկը: Վերջինս մարերի դեմ ուղղված արշավանքներ է արձանագրել Ք. ա. 800, 799, 793, 792, 789, 788, 787 թթ., ի լրումն Ք. ա. 797 թ. դեպի Նամրի ձեռնարկված արշավանքի, ինչը նույնպես կարող էր ուղղված լինել մարերի դեմ: Միմյանց հաջորդող արշավանքների կրկնությունը կարող է հուշել ոչ այնքան ռազմական բախումների,

որքան դրանց բացակայության մասին: Չունենալով բնակության մշտական տարածք՝ շարժունակ մարերը խուսափում էին ասորեստանցիներից, և վերջիններիս տասնյակ արշավանքներն ըստ էության ավարտվում էին անարդյունք:

Ավելին՝ Ք. ա. մոտ 785 թ. սկիզբ առած ասորա-ուրարտական լայնածավալ պատերազմն ավարտվեց Ասորեստանի պարտությամբ, և Ջագրոսյան տարածաշրջանը հայտնվեց Վանի թագավորության վերահսկողության տակ: Վերջինս զագրոսյան ուղիների վերահսկողությունը մասամբ իրականացնում էր ենթակա թագավորությունների ուժերով, ինչպիսիք էին Մանան և Պարսուան, հավանաբար, որոշակի ոստիկանական դեր վերապահված էր նաև մարերին:

Արդյունքում Ասորեստանը կտրվեց հումքի աղբյուրներից և հայտնվեց ծանր իրավիճակում: Ճգնաժամից դուրս գալու փորձ ձեռնարկեց Աշշուրդան III-ը՝ Ք. ա. 766 թ. արշավանք ձեռնարկելով մարերի դեմ: Անհաջողությամբ ավարտվեցին նաև Աշշուրնիրարի V-ի արշավանքը դեպի Վանի թագավորություն և վերջինիս գերիշխանության տակ գտնվող երկրներին ոտքի հանելու նրա փորձերը: Սարգուրի II-ը Ջագրոսյան լեռներ ձեռնարկած խոշոր արշավանքով վերահաստատեց իր գերիշխանությունը տարածաշրջանում:

3. ՄԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ Ք. Ա. VIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Ք. ա. 744 թ. գահ բարձրացած Թիգլաթպալասար III-ը ի գորու գտնվեց հաջողությամբ պայքարելու Վանի թագավորության դեմ: Վերջինս կորցրեց իր գերիշխանությունը Ջագրոսներում, անկախացավ Մանան, որը հայտնվեց Ասորեստանի ազդեցության տակ: Նոր իրավիճակում փոփոխվեց նաև Ասորեստանի արտաքին քաղաքականությունը: Այն սկսեց իրականացնել ծավալման քաղաքականություն և ձեռնամուխ եղավ Ջագրոսյան գոտու յուրացմանը՝ ձգտելով ապահովել առևտրական ուղիների անվտանգությունը մշտական ներկայությամբ:

Թիգլաթպալասար III-ը, արշավելով Իրանական բարձրավանդակ, վերացրեց Պարսուայի և Բիթ-Խամբանի անկախությունը. ծանր հարված հասցվեց նաև մարերին: Մարերի հարևան դարձած Ասորեստանը արդեն ի գորու էր նրանց դեմ գործելու առավել արդյունավետ:

Նախապատրաստվելով Վանի թագավորության հետ վճռական բախման՝ Թիգլաթպալասար III-ը Ք. ա. 737 թ. կազմակերպեց աննախադեպ արշավանք դեպի Իրանական բարձրավանդակ: Ասորեստանցիները խորացան Կենտրոնական Իրանի կիսաանապատային տարածքներում՝ հասնելով Նիշա, այն է՝ հունա-հռոմեական աղբյուրների Նիսեական դաշտը Ղազվիի շրջանում, ապա Ռուա (թերևս Ռեյը՝ Թեհրանի մոտ) և «Աղի անապատ» (Դաշտ-է-Քյավիր): Վերադարձին նրանք ծանր հարված հասցրին մարերին մինչ այդ անհասանելի մարական տարածքներում: Տասնյակ ցեղեր դարձան Ասորեստանի հարկատուներ:

Ասորեստանյան արշավանքների պատճառով սահմանափակվեց մարերի ռազ-

մական ակտիվությունը: Մարերը գրեթե վերջ տվեցին իրենց արշավներին: Նրանք սկսեցին ասորեստանցիների հետ մտնել առևտրական հարաբերությունների մեջ՝ հանդես գալով որպես ուղղակի և միջնորդ առևտրականներ: Թերևս պատահական չէ, որ արևելքում հիմնադրված ասորեստանյան նոր կենտրոններն իրենց անվանումներում գերազանցապես կրում էին «Kār» բաղադրիչը: Այն աքքադերեն kār(m) բառն է, որը նշանակում է «նավահանգիստ/հանգրվան, առևտրական կետ»: Հիշյալ կենտրոնները մարերի հետ իրականացվող փոխանակային առևտրի վայրեր էին: Ասորեստանցիները նախ և առաջ շահագրգռված էին ձիերի առևտրի մեջ, անգամ այս տարածքներ գործուղվեցին ձիերի առքուվաճառքով զբաղվող առևտրականներ: Մարերից հարկը հավաքվում էր գրեթե բացառապես ձիերով, հնարավոր է՝ նաև լաջվարդով կամ մետաղներով. ասորեստանյան պատկերացմամբ՝ Բիկնի լեռն ընկալվում էր որպես «լաջվարդի լեռ»: Սակայն հայտնի է, որ Միջագետքը լաջվարդ ստանում էր շատ ավելի հեռվից՝ Բադախշանի լեռներից, և մարերը միայն միջնորդներ էին լաջվարդի առևտրում: Մարերը սկսեցին կարևոր դեր խաղալ հատկապես քարավանային առևտրի մեջ: Առևտրի այս ձևը Միջագետք-Իրանական բարձրավանդակ առևտրում նորամուծություն էր, իսկ մարերը հայտնի էին նաև որպես ուղտաբույծներ: Պատահական չէ, որ մարերին Թիգլաթպալասար III-ի ժամանակաշրջանի տեքստերի տված անվանումներից մեկն էլ «արևելքի արաքներ» տերմինն էր, ինչը ևս հուշում է ոչ միայն մարերի կենցաղավարության ձևը, այլև վկայում է քարավանային առևտրում նրանց առաջնային դերակատարման մասին:

Հաստատված անդորրը նպաստավոր պայմաններ էր ստեղծում մարերի խաղաղ ներթափանցման համար դեպի Միջագետք: Մար առևտրականներ հայտնվեցին նաև Ասորեստանում: Աշշուր մայրաքաղաքում աշխատում էին ծագումով մար արհեստավորներ: «Մար» անձնանունը կրող անձինք են հիշվում ասորեստանյան գրագրություններում որպես, օրինակ, գործարքի վկա, վարկատու կամ պաշտոնյա:

Խաղաղ գոյակցության շնորհիվ Ջագրոսյան լեռներում սկսվեցին ժողովրդագրական փոփոխություններ՝ մարական տարրի աճող դերակատարմամբ: Տարածաշրջանի տասնյակ պետական կազմավորումներ, որոնք կապ չունեին մարերի հետ, մի քանի տասնամյակ անց հիշատակվում են «Մադայա» ընդհանրական անվանումով, այսինքն՝ արդեն ընկալվում էին որպես մարական: Նույն երևույթը նկատվում էր զագրոսյան երկրներում, օրինակ՝ Մանայում: Վերջինիս մի շարք մարզեր նույնպես ներթափվել էին մարականացման. աղբյուրներում հիշատակվում են անձինք, ովքեր կրում էին իրանական անձնանուններ՝ Դայաուկկու (հին պարսկ. *Dahyu-ka-), Բագադատի (հին պարսկ. *Baga dāta) և այլն:

Մարական տարրի աճող դերը տեղի պետական կազմավորումներին կանգնեցրեց խնդիրների առջև: Ձեռք բերելով իշխանական լծակներ և աջակցություն ստանալով մարական աշխարհից՝ մարերը հաճախ էին ապստամբում տեղի արքայատների դեմ: Նմանատիպ գործընթաց վկայված է Մանայում, երբ ակնհայտ իրանական անուններ կրող մանայական մի քանի նահանգապետեր բազմիցս ապստամբում էին տեղի արքայատան դեմ:

Նույն խնդրի առջև էր հայտնվել նաև Ասորեստանը: Թիզլաթպալասար III-ի իրանական արշավանքները թեև ապահովեցին տարածքային աճ, սակայն ունեցան նաև բացասական հետևանքներ: Նպատակ ունենալով ստեղծել «տարածքային կայսրություն»՝ կենտրոնական իշխանության նշանակած վարչակազմերով, նորանվաճ Պարսուա և Բիթ-Խամբան երկրների իշխող վերնախավը և բնակչության մեծ մասը ասորեստանցիների կողմից զանգվածաբար տեղահանվելով՝ արմատախիլ արվեց: Դա ճանապարհ էր բացում մարական ներթափանցման առջև: Թիզլաթպալասարի մարական արշավանքից երկու-երեք տասնամյակ անց այստեղ հիշատակվող ցեղապետերի անունների մեծ մասն իրանական են:

Հաջորդը Միջագետքի հետ ավանդաբար կապված, արևմտյան Իրանի հանգուցային կետերից Կիշեսսուն էր: Ք. ա. 716 թ. ասորեստանյան արքա Սարգոն II-ը նվաճեց Կիշեսսուն, տեղական բնակչությունը գերեվարվեց: Շրջակա տարածքները հավելվեցին Կիշեսսուին, և կազմակերպվեց նոր նահանգ: Բուն քաղաքը վերանվանվեց Կար-Ներգալ, իսկ տարածքը վերաբնակեցվեց տերության այլ ծայրամասերից բերված բնակիչներով: Նույնը կատարվեց Խարխար քաղաքում, որտեղ ձևավորվեց նոր նահանգ: Արշավանքը եզրափակվեց՝ «հզոր մարերի» 28 առաջնորդներից հարկեր հավաքելով: Թեև ասորեստանցիները նորանվաճ տարածքներ տեղափոխեցին իսրայելցիների համայնքներ, սակայն այստեղ իրանական էթնիկ տարրի գերազանցությունն արդեն իրողություն էր:

Արևելքում ասորեստանցիներն այլևս խոշոր նվաճումներ չիրագործեցին: Հիմնական ուժերը Վանի թագավորության և լուվիական երկրների դեմ ուղղած Սարգոն II-ը ստիպված էր սահմանափակել իր գործողություններն Իրանական բարձրավանդակում: Ասորեստանը փորձում էր պարզապես պահպանել կայունությունը արևելյան նահանգներում: Մասնավորապես, զագրոսյան երկրներից Կարալլուի Ք. ա. 713 թ. ապստամբությունը կարծես թե աջակցություն էր ստացել դրսից: Պատահական չէ, որ Կարալլուն հնազանդեցնելուց հետո ասորեստանյան բանակը ասպատակեց տասնյակ մարական ցեղապետությունների տարածքը: Նույն աղբյուրները հայտնում են մարերի 45 առաջնորդներից հարկեր ստանալու մասին: Շատ ավելի ծավալուն էր Ք. ա. 715 թ. նորանվաճ Խարխարում սկսված ապստամբությունը, որը տարածվել էր դեպի Բիթ-Խամբան և Նամրու: Ապստամբության ճնշումից հետո Խարխար քաղաքն ամրացվեց «Մադայայի հնազանդեցման համար»: Սա անուղղակի փաստում է ապստամբությանը մարական այլ ցեղերի մասնակցության մասին: Սարգոնյան ժամանակաշրջանի տեքստերը հայտնում են Կար-Շարրու-ուկին (Խարխար) նահանգում հաստատված մարերի մասին: Հավանաբար մարական տարրն էր, որ ապստամբեց Կարալլուում Ք. ա. 706 թ., քանի որ տեղի բնակչությունը նախկինում Սարգոնի կողմից ամբողջությամբ տեղահանվել էր: Այս ամենի արդյունքում ասորեստանյան արքան ստիպված էր փոքրասիական իր հայտնի արշավանքը ձեռնարկելուց առաջ մեկ անգամ ևս շարժվել արևելք:

Իրավիճակն արևելքում արմատապես փոխվեց Սինախներիբի իշխանության տարիներին: Սարգոն II-ի իրագործած «VIII տարվա արշավանքի» արդյունքում

ուրարտական վտանգից ձերբազատված Մանայի թագավորությունը սկսեց հեռանալ Ասորեստանից և նրա «հովանավորությունից»: Մանացիները, ի զորու չլինելով ուղղակի հանդես գալու Ասորեստանի դեմ, աստիճանաբար բարելավեցին իրենց հարաբերությունները մարական ցեղերի հետ՝ աջակցության խոստումներով վերջիններիս դրդելով հակաասորեստանյան ելույթների:

4. ՄԱՐԱՏԱՆԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Սինախներիբի իշխանության տարիներին Ասորեստանը հիմնականում զբաղված էր փոքրասիական երկրների, արամեացիների, Բաբելոնիայի, Էլամի դեմ պատերազմելով և խուսափում էր արևելքում նոր նվաճումներ իրականացնելուց: Նրա օրոք ասորեստանյան տիրապետության սահմանագիծն արևելքում անցնում էր ներկայիս Սանանդաջ-Կանգավար-Նահավանդ-Խորամաքաղ-Դեհլորան գծով: Հավանաբար այս նույն շրջանում Սարգոն II-ի հիմնած երկու նահանգների փոխարեն կազմվեցին հինգը՝ Կիշեսսուն, Խարխարը, Սապարդան, Կար-Կաշշին և Մադայան:

Վարչական նոր բաժանումը միտված էր արևելյան նահանգներում ասորեստանյան վերահսկողության արդյունավետության բարձրացմանը: Ըստ երևույթին ասորեստանցիներին մտահոգում էր բնակչության մեծամասնությունը կազմող և փաստացի ինքնուրույն, սեփական տոհմիկ վերնախավի կողմից առաջնորդվող մարերի կիսանկախ կարգավիճակը: Մար առաջնորդների շրջանում հասունանում էր օտար տիրապետությունը թոթափելու միտքը: Սկսվեցին բախումներ մար առաջնորդների միջև, որոնցից ասուրամետ կողմնորոշում ունեցողներն առայժմ իշխանության էին մնում ասորեստանցիների շնորհիվ:

Ժամանակի ընթացքում ասորեստանյան նահանգային վարչակազմերին ավելի ու ավելի մեծ դժվարությամբ էր հաջողվում բնակչությունից հավաքել հարկերը: Հարկահավաքությունը աստիճանաբար վերածվեց պատժիչ արշավանքների: Ասորեստանյան տիրապետությունն Արևելքում դարձավ ձևական՝ սահմանափակվելով նահանգային կենտրոններով կամ ռազմական հենակետերով: Դրանցից դուրս սփռված բնակավայրերում տնօրինում էին մար առաջնորդները:

Մարերի մոտ իշխող տրամադրությունների արմատական փոփոխություն տեղի ունեցավ՝ կապված Ք. ա. 680-ական թթ. վերջերից սկսված ասսուրա-մանայական հակամարտության հետ: Դաշնակցելով սկյութների հետ՝ մանացիները հանդես էին եկել Ասորեստանի դեմ: Ք. ա. 678-676 թթ. ընթացքում մանացիներն ու սկյութները սկսեցին պարբերաբար ներխուժել նաև մարական նահանգներ: Մանայական զորքերի հարձակման հետևանքով Ասորեստանը կորցրեց հյուսիսզագրոսյան լեռնանցքների վերահսկողությունը: Մանացիները մտան Խուբուշկիա, և ստեղծվեց Ասորեստան ներխուժման իրական սպառնալիք:

Ասորա-մանայական պատերազմի սկզբում Ասորեստանը կորցրել էր վերահսկողությունը արևելյան նահանգներում՝ Սապարդա, Կար-Կաշի, Մադայա, մասամբ նաև՝ Բիթ-Խամբան, Կիշեսսու, Խարխար: Կտրվել էր կապը նահանգային կենտրոնների և գործերի հանգրվանների միջև: Ասորեստանյան կայազորերը հայտնվել էին պաշարման մեջ:

Մարերի հակաասորական տրամադրությունների, տարբեր առաջնորդների միջև տարվող բանակցությունների մասին տեղեկություններ են պահպանել ասորեստանյան աղբյուրները: Առավել երևելի առաջնորդներից հիշատակվում են «քաղաքի տեր» Կաշտարիտին՝ Կար-Կաշի «երկրի» փաստացի տիրակալը, Մամիտարշուն՝ Մադայայից, և Դուսաննին՝ Սապարդայից: Շուտով սկսվեց համընդհանուր ապստամբություն Կաշտարիտի գլխավորությամբ: Մարերը գրավեցին այդ երեք նահանգները: Ապստամբությունը սկսվելուց կարճ ժամանակ անց մարերը ներխուժեցին Կիշեսսու, դեպի ուր շարժվեցին նաև մանագիներն ու սկյութները: Կիշեսսուի նույնանուն կենտրոնը պաշարվեց դաշնակիցների կողմից:

Մինչ դաշնակիցները զբաղված էին ասորեստանյան ամրոցները պաշարելով, Ասարհադդոնը ձեռնարկեց պատասխան արշավանք: Արշավանքն անարդյունք էր, և դաշնակիցները շարունակեցին առաջխաղացումը դեպի Խարխար, Բիթ-Խամբան և Պարսումաշ՝ նպատակ ունենալով պատերազմը տեղափոխել Ասորեստանի տարածք: Նրանք մոտեցան Դուր-Աշշուր քաղաքին, որտեղով անցնում էին Ասորեստանի սահմանները գրեթե երկու դար առաջ՝ դեռևս Աշշուրնաժիրպալ II-ի օրոք:

Ասորեստանը հայտնվեց ծանր իրավիճակում, և միայն Շուրրիայի նկատմամբ ձեռք բերված հաղթանակը հնարավորություն տվեց Ասարհադդոնին ուժերն ուղղել արևելք: Արշավանքը սկզբում անհաջողությամբ էր ընթանում, որը դժգոհություն առաջ բերեց երկրում: Ասարհադդոնը ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը գտավ դիվանագիտության մեջ: Նա անջատ բանակցություններ սկսեց Կաշտարիտի, Մամիտարշուի և սկյութների հետ: Արքան կարողացավ համաձայնության գալ սկյութական առաջնորդ Պարտատուայի հետ, որն ամրապնդվեց ասորեստանյան արքայադստեր հետ Պարտատուայի ամուսնությամբ:

Այսպիսով՝ սկյութների մի զգալի զանգված անցավ ասորեստանցիների կողմը, որը ստիպեց մարերին գնալ զիջումների: Մարական մի քանի ցեղապետեր Բ. ա. 672 թ. Ասարհադդոնի հետ կնքեցին դաշնագրեր: Մարերը դուրս բերեցին գործերը նվաճված տարածքներից՝ բավարարվելով ապստամբության օջախ երեք նահանգներով: Ապստամբությունն ավարտվեց:

5. ՄԱՐԱՍՏԱՆԸ Բ. Ա. VII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

Մարական ապստամբությանը հաջորդած տարիներին Իրանական բարձրավանդակում էական տեղաշարժեր չարձանագրվեցին: Ասորեստանը, թեև կրեց տարածքա-

յին կորուստներ, սակայն պահպանեց իր ներկայությունը Զագրոսյան լեռներից արևելք: Այստեղ նա, ի դեմս Պարտատուայի սկյութների, ձեռք բերեց կարևոր դաշնակցի, որի օգնությամբ առժամանակ պիտի պահպաներ իր դիրքերն Արևմտյան Իրանում:

Ինչ վերաբերում է Մանային, ապա մարական ապստամբության ավարտից հետո նա նահանջեց նվաճված տարածքների մեծ մասից: Այնուամենայնիվ, հաջորդող շրջանում Մանան ապրեց տարածքային աճ՝ ընդարձակվելով դեպի արևելք՝ ի հաշիվ մարական տարածքների: Մարական որոշ ցեղեր հայտնվեցին մանագիների գերիշխանության տակ:

Իր գոյությունը պահպանում էր Էլլիպի երկիրը, որին հարևանող շրջաններում, Բ. ա. VII դարի կեսերից սկսած, հաստատվել էր պարսկական ցեղերի կազմած Պարսումաշի թագավորությունը:

Բ. ա. 670-ական թթ. իրադարձություններից առավելապես շահեցին մարերը: Ասորեստանի մարաբնակ նահանգներից երեքը՝ Կար-Կաշին, Մադայան և Սապարդան, ձեռք բերեցին անկախություն՝ կազմելով այսպես կոչված «միասնական» Մարաստան պետությունը:

Մարաստանի՝ մարական ապստամբությանը հաջորդած պատմությանը վերաբերող աղբյուրների սղությունը թույլ չի տալիս ուրվագծել նրա տարածքը ինչպես այս փուլում, այնպես էլ հետագայում: Մարական տարածքները հաճախ հիշատակող աղբյուրները որպես նրանց բնակության հեռավոր սահման նշում են Բիկնի լեռը (հավանաբար՝ ներկայիս Դեմավենդը) և Պատուշարրի երկիրը «Աղի անապատի հարևանությամբ»՝ Թեհրանի մոտ: Այս տեղանունների կապակցությամբ ասորեստանյան արքաներից մեկը դրանք համարում է «մարերի բնակության հեռավոր տարածքներ, որտեղ արքաներից՝ իմ հայրերից ոչ մեկը երբևէ ոտք չէր դրել»: Միաժամանակ, սակայն, հնարավոր չէ Զագրոսներից մինչև հյուսիսարևելյան Իրան ձգվող այս տարածքը մարական համարել: Ասորեստանյան ընկալմամբ «մարական» տարածքները պատմական այս ժամանակաշրջանում կարող էին ժողովրդագրական այլ դիմագիծ ունենալ:

Նույնը կարելի է ասել մարական պետության դեպի Հայկական լեռնաշխարհ և Այսրկովկաս ծավալման մասին: Որպես դրա վկայություն ընդունվող «Ռուսայի փոքր քաղաքի» նվաճման հնարավորությունը մարերի կողմից Բ. ա. 640-ական թթ. սահմաններում հիմնավորված չէ, քանի որ ամրոցը կործանվել էր Վանի թագավորությունում տեղ գտած քաղաքացիական պատերազմների ընթացքում: Մարաստանը իր կազմավորմանը հաջորդած տասնամյակներում քաղաքական թույլ միավոր էր և նման հնարավորություն չուներ: Հնարավոր է միայն ուրվագծել մարական պետության արևմտյան սահմանը՝ ելնելով ասորեստանյան նահանգների տեղադրությունից: Պետք է ենթադրել, որ մարական պետությունը Բ. ա. VII դ. երկրորդ կեսին զբաղեցնում էր ներկայիս Ղազվինից դեպի Գորգան, Դաշտ-է-Քյավիրի անապատներից Համադան ձգվող տարածքը, որը մասամբ համապատասխանում է հետագայի Ատրպատականին կամ Փոքր Մարաստանին:

Մարական նորակազմ պետության ակտիվության առաջին փորձը՝ Բ. ա. 652 թ.

միջամտելու Միջագետքում ընթացող զարգացումներին (եթե խոսքն այստեղ իրոք վերաբերում է մարերին), ավարտվեց անհաջողությամբ: Որպես Բաբելոնիայի դաշնակիցներ՝ ընդդեմ Ասորեստանի հանդես եկած մարերը կրեցին ջախջախիչ պարտություն: Ըստ Հերոդոտոսի՝ Ասորեստանին հաղթանակ պարգևեցին նրա դաշնակից Պարտատուայի սկյութները:

Ք. ա. VII դ. երկրորդ կեսի համար բացակայում են հստակ տեղեկություններ մարական պետության տարածքի, կառուցվածքի և կազմի մասին: Դատելով հնագիտական տվյալներից՝ մարական անկախացած նահանգներում տիրում էր այն նույն իրավիճակը, ինչ որ նախորդ դարում: Մարաստանը պահպանեց իր ցեղային կառուցվածքը, և քաղաքական իշխանության որոշակի կենտրոնացում տեղի չունեցավ: Անգամ Հերոդոտոսը տեղյակ էր, որ արքաներն ընտրվում էին: Թերևս զուգադիպություն չէ, որ Մարաստանի մայրաքաղաք Էկբատանայի անունը թարգմանվում է որպես «հավաք(ատեղի)»: Մարաստանի արքան մեկն էր հարյուրավոր ցեղային առաջնորդներից և միայն «առաջինը՝ հավասարների մեջ»: Իսկ նման ձևաչափ ունեցող կառավարման համակարգը բնորոշ էր տոհմացեղային հարաբերություններին: Ներկայումս շրջանառվում է մարերի այսպես կոչված «քոչվորական պետության» տեսությունը, որը շուտով վերածվելու էր Մարաստանի «քոչվորական տերության»:

Դրա փոխարեն տեղի էր ունենում բուն Ասորեստանի արևելյան հատվածի մարականացում: Մարական էթնիկ տարրը գերակշռող դարձավ ոչ միայն Ասորեստանի անդրզագրոսյան տարածքներում, այլև Հյուսիսային Միջագետքի մի շարք շրջաններում: Ասորեստանյան արքաները ստիպված էին հաշվի նստել այս իրողության հետ և փորձում էին մար առաջնորդներին հնարավորինս մոտ պահել արքունիքին:

Ասորեստանյան արքունիքում մարերին սկսեցին շնորհել կարևոր դիրքեր, ինչպիսին էր, օրինակ, «արքունի թիկնապահի» պաշտոնը: Աձեց մարերի դերը բանակում: Հնարավոր է, որ դեռևս Սարգոն II-ի օրոք են մարերը ծառայության վերցվել ասորեստանյան բանակում, իսկ այժմ արդեն ամբողջ զորամասեր բաղկացած էին մարերից: Մարերից էր կազմված արքայազնի թիկնազորը, հնարավոր է՝ նաև պալատի պահակազորն ընդհանրապես: Մարական ուժերի առաջնորդը, ըստ Կտեսիասի, Արբակեսն էր: Ամբողջ մարական ցեղեր վերցվում էին ռազմական ծառայության, նրանց հետ կնքվում էին պայմանագրային հարաբերություններ:

6. ՄԱՐԱՍՏԱՆԻ «ՎԵՐԵԼՔԸ ԵՎ ԱՆԿՈՒՄԸ»

Կյուաքսարեսի թագավորությունը

Ք. ա. VII դ. կեսերի Մարաստանի պատմության հիմնական աղբյուրը Հերոդոտոսն է: Նա հայտնում է մարական երկու արքաների՝ Դեյոկեսի հաջորդ Փրաորտեսի և վերջինիս որդի Կյուաքսարեսի գործունեության մասին: Առաջինը իշխել է 22, երկրորդը՝ 40 տարի, ներառյալ Մարաստանում սկյութների գերիշխանության

28 տարիները: Ըստ այդմ՝ հիշյալ արքաների կառավարման համար առաջարկվել են երկու տարբեր ժամանակագրություններ: Դրանցից առաջինը միանշանակ հենվում է Հերոդոտոսի պատմության վրա և, ըստ այդմ, մար արքաների համար առաջարկում կառավարման մոտ 150-ամյա շրջան, այն է՝ Դեյոկես (Ք. ա. 699-647 թթ.), Փրաորտես (Ք. ա. 646-625 թթ.), Կյուաքսարես (Ք. ա. 624-585 թթ.) և Աստյուագես (Ք. ա. 585-550 թթ.): Հետագայում առաջարկվեց Կյուաքսարեսի կառավարման 40 տարիներից հանել «սկյութական տիրապետության» 28 տարիները՝ Փրաորտեսի համար առաջարկելով Ք. ա. 674-653 թթ., իսկ Կյուաքսարեսի համար՝ Ք. ա. 624-585 թթ.՝ Ք. ա. 652-625 թթ. ընդունելով որպես «սկյութական տիրապետության» դարաշրջան: Այս վերակազմության հիման վրա փորձ է արվում համատեղելու անտիկ և սեպագիր աղբյուրների տվյալները:

Միանգամայն այլ է պատկերը համաժամանակյա սեպագիր աղբյուրների տեսանկյունից: Տարօրինակ կերպով դրանք չեն արձագանքել Մարաստանի կյանքի որևէ դրվագի՝ սահմանափակելով պատմական այս դարաշրջանը վերականգնելու հնարավորությունները:

Եթե Հերոդոտոսի պատումը Իրանական բարձրավանդակում և, ընդհանրապես, «Ասիայում» սկյութների 28-ամյա գերիշխանության մասին ունի որևէ պատմական հիմք, ապա դա կարող է վկայել վերջիններիս ոչ թե իրական տիրապետության, այլ մարական աշխարհում նրանց խաղացած ակտիվ դերի մասին: Այդ դերակատարությունն իրականում ոչ այլ ինչ էր, քան պարբերաբար իրագործվող ավարառուական բնույթի արշավներ: Ասորեստանը շարունակում էր օգտագործել սկյութներին իր հակառակորդների դեմ: Սկյութների ուժերով Ք. ա. 650-ական թթ. սահմաններում Վանի թագավորությանը հասցվեց ծանր հարված, Ասորեստանը նրանց ուղղեց կիմմերների դեմ՝ դեպի Փոքր Ասիա: Կարելի է ենթադրել, որ արդեն Ք. ա. 630-620-ական թթ. սահմաններում մարական աշխարհում սկյութներն այլևս չէին կարող ապահովել նշանակալի ներկայություն: Ինքը՝ Հերոդոտոսը, այսպես է ներկայացնում սկյութների բացակայությունը. «Սկյութները քաստոթ տարի տիրեցին Ասիայում և իրենց բռնությամբ ու անկարգությամբ ամեն ինչ կործանեան հասցրին: Բացի յուրաքանչյուր ժողովրդից վերցրած որոշակի հարկից, նրանք անցնում էին երկրով մեկ և հափշտակում ամեն ինչ: Ահա սրանց մեծ մասին Կյուաքսարեսը և մեղացիները հրավիրեցին խնջույքի և հարբեցնելով նրանց՝ կոտորեցին. այսպիսով՝ մեղացիները նորից վերականգնեցին իրենց իշխանությունը...»:

Մարերը ձերբազատվեցին սկյութներից, իսկ Ասորեստանը կորցրեց այն լծակը, որն ապահովում էր նրա դիրքերը Իրանական բարձրավանդակում: Ասորեստանն այլևս չունեի բավարար ներուժ՝ անգամ իր սահմաններն անխախտ պահելու համար: Բաբելոնիայի կորուստը Ք. ա. 626 թ. և դրան հաջորդած ծանր պատերազմը, արևելյան նահանգներին վերաբերող տեղեկությունների բացակայությունը հուշում է, որ երբեմնի գերիզոր տերությունը կորցրել էր իր արևելյան տիրույթները: Դրանց մեծ մասը հավանաբար անցավ մարերին, մասամբ, հնարավոր է, Պարսումաշին կամ Անշանին:

Ասորեստանյան տերությունն Աշշուրբանասպալի իշխանության վերջում ընկղմ-

վեց ձգնաժամի մեջ, որից ի գորու չէր դուրս գալու: Դրա առաջին նշաններից էր Բաբելոնի կորուստը -Ք. ա. 626 թ.: Բուն Ասորեստանում բռնկվեց գահակալական պայքար՝ առավել խորացնելով ձգնաժամը: Ի վերջո Սին-շար-իշկունի կառավարման շրջանում Ասորեստանը ստիպված էր մղել պարզապես գոյության պայքար (տե՛ս Բաժին 1. Մաս 2. Գլուխ 3):

Սկզբում Ասորեստանի հիմնական հակառակորդը Բաբելոնիայի արքա հոչակված քաղղեացի Նաբոպալասարն էր: -Ք. ա. 618-617 թթ. ընթացքում Նաբոպալասարն ավարտեց Բաբելոնիայի նվաճումը և պատերազմը տեղափոխեց Ասորեստանի տարածք: Եվս երկու տարի, և ասուրա-բաբելոնյան հակամարտությանը միջամտեց Մարաստանը:

Դեռևս -Ք. ա. 616 թ. դրությամբ ոչինչ չէր վկայում ասուրա-բաբելոնյան պայքարին մարերի ներգրավման հնարավորության մասին: Փաստն այն է, որ Ասորեստանի դաշնակից Մանայի թագավորությունը օգնական գործեր էր ուղարկել բաբելոնյան բանակի դեմ մարտնչող ասորեստանյան զորակայան: Մանայական զորքերի հայտնվելը Մանայից հեռու հուշում է, որ այս ժամանակաշրջանում Ասորեստանի դաշնակիցը վտանգ չի զգացել մարերից:

Իսկ -Ք. ա. 615 թ. մարտական գործողությունների ավարտական փուլում անսպասելիորեն Ասորեստան ներխուժեցին մարերը, և Ասորեստանը կանգնեց ծանր իրավիճակի առջև: -Ք. ա. 614 թ. նրանք ունեցան Ումաթիշտարի առաջնորդությամբ ընթացան դեպի Նինվե և գրավեցին Աշշուրը: Դեպի Աշշուր առաջացող Նաբոպալասարի բանակը կա՛մ միտումնավոր կերպով չմասնակցեց քաղաքի գրավմանը, կա՛մ Աշշուրի անկումը անսպասելի էր նաև նրանց համար. աղբյուրը հայտնում է, որ Նաբոպալասարը շարժվել էր դեպի Աշշուր՝ օգնելու մարերին: Քաղաքի ավերակների մոտ նա Ումաթիշտարի հետ կնքեց դաշնագիր: Սրանով ավարտվեցին մարտական գործողությունները:

-Ք. ա. 612 թ. բաբելոնյան և մարական զորքերը տարբեր ուղղություններով շարժվեցին դեպի Նինվե և եռամսյա պաշարումից հետո գրավեցին այն: Նինվեից հետո բաբելոնյան բանակը շարունակում էր մարտեր մղել ասորեստանյան տերության արևմուտքում: Երկամյա դադարից հետո աղբյուրները մարերին հիշում են մեկ անգամ ևս՝ -Ք. ա. 610 թ. Խառան քաղաքի գրավման կապակցությամբ: Բաբելոնա-մարական միացյալ ուժերը գրավեցին Խառանը, որից հետո մարերը հետ վերադարձան:

Այսպիսով՝ մոտ քառասուն տարի անց մարերը վերստին հայտնվեցին աղբյուրների տեսադաշտում: Միջագետք ներխուժման և Ասորեստանի դեմ պատերազմում մարերի կարևորագույն դերակատարման մասին են փաստում և՛ սեպագիր, և՛ անտիկ աղբյուրները: Կտեսիասը շեշտում է, որ բաբելոնացիները պատերազմի ժամանակ ընդունել էին մարերի առաջնորդ Արբակեսի առաջնայնությունը: Հերոդոտոսը Նինվեի գրավման կապակցությամբ անգամ չի հիշատակում բաբելոնացիներին: Միաժամանակ, Նաբոպալասարի աղբյուրներում միայն մեկ անգամ որպես մարերի արքա հիշատակվող Ումաթիշտարի անունը մեկն է այն երկու անձնանուններից, որ համահունչ է Հերոդոտոսի հերոսների անուններին: Վերջինիս մոտ որպես մարերի արքա է հիշատակվում Կյուաքսարեսը, որի անունն աղերսվում է Ումաթիշտարի հետ:

Ըստ Հերոդոտոսի՝ Կյուաքսարեսը Փրատրտեսի որդին էր և Դեյոկեսի թոռը, որը ոչնչացրեց սկյութական վերնախավին, վերջ տվեց նրանց գերիշխանությանը և մասնակցեց Ասորեստանի կործանմանը՝ հիմք դնելով մարական տերությանը: Հերոդոտոսը նրան է վերագրում մարական աշխարհագրորդ կանոնավոր բանակի վերակազմավորելու գործը:

Կտեսիասի հաղորդումը ասորեստանցիների մոտ ծառայող մարերի, Հերոդոտոսի հաղորդումը Կյուաքսարեսի ռազմական բարեփոխումների մասին իրականում կարող էին լինել հեռավոր արձագանքը ասորեստանյան բանակի կազմում ձևավորված մարական կանոնավոր զորամասերի մասին: Հնարավոր է՝ Ումաթիշտարն իրականում ասորեստանյան բանակի մարական ստորաբաժանումների հրամանատարն էր կամ էլ վերը հիշված ասորեստանյան դաշնագրային համակարգի անդամներից մեկը: Համակարգը կազմվել էր Ասարիադոնի կողմից և, ամենայն հավանականությամբ, գործում էր Աշշուրբանասպալի օրոք ևս:

Այսպիսով՝ Ումաթիշտար-Կյուաքսարեսի մարերը կա՛մ ծանոթ էին ասորեստանյան ռազմարվեստին, կա՛մ անգնահատելի օգնություն էին ստացել ասորեստանյան բանակի մարական զորամասերից, որոնք կարող էին անցնել իրենց հայրենակիցների կողմը և ապահովել Աշշուրի գրավումը:

Հնարավոր է, որ մարերի մասնակցությունը Ասորեստանի նվաճմանը պայմանավորված էր զուտ ավարառուական նպատակներով: Ուշադրության է արժանացել այն փաստը, որ մարերը հիշատակվում են առնվազն չորս խոշոր քաղաքների գրավման կապակցությամբ՝ Առապիսա, Աշշուր, Նինվե և Խառան: Դրանց նվաճումից հետո մարերը սովորաբար վերադառնում էին, իսկ բաբելոնյան բանակը շարունակում էր մարտական գործողությունները: Օրինակ՝ Նինվեի անկումից հետո բաբելոնյան բանակը շարունակեց առաջ շարժվել դեպի Նաժիրինա (Մժրին), մինչդեռ մարերն, ավարով բեռնված, վերադարձել էին: Տպավորություն է ստեղծվում, որ մարերն ընդհանրապես հետաքրքրված չէին տարածքային նվաճումներով, և նրանց մասնակցության շարժիչ ուժը ռազմավար ձեռք բերելու հեռանկարն էր:

Ենթադրվում է, որ իրականում բաբելոնացիներն էին, որ հատկապես -Ք. ա. 615 թ. Աշշուրը գրավելու անհաջող փորձից հետո կարողացան պայքարի մեջ ներգրավել մարական այն ուժերին, որոնց կհետաքրքրեր ասորեստանյան քաղաքների հարստությունը, բայց ոչ ասորեստանյան տարածքները:

Նինվեի գրավման գործում մարերի դերակատարման և դրանում հայերի մասնակցության մասին ուշագրավ տեղեկություն է հաղորդում նաև Պատմահայր Մովսես Խորենացին: Ըստ նրա՝ հայոց արքա Պարույր Սկայորդին մարաց արքայից, որին նա անվանում է Վարբակես, թագ էր ստացել մարերին ռազմական ուժով աջակցելու համար:

Ասոյուազեսի թագավորությունը

-Ք. ա. 612 թ. համարվում է մարական լայնածավալ տերության սկզբնավորման թվական՝ հիմնվելով բացառապես անտիկ պատմագրության տվյալների վրա: Սա-

կայն ակնհայտ հակասություն կա այդ տվյալների և սեպագիր ու հնագիտական աղբյուրների միջև:

Տարօրինակ է, սակայն փաստ, որ բաբելոնյան աղբյուրները, որոնք հստակ պատկերացում ունեն մարերի մասին, Խառանի գրավմանը հաջորդած շուրջ 50-ամյա դարաշրջանում ոչինչ չեն հաղորդում Մարաստանի վերաբերյալ: Պահպանված աղբյուրները հիշատակում են առանձին մարերի՝ մարական աշխարհի հետ կապ չունեցող համատեքստում:

Ըստ Հերոդոտոսի՝ Նինվեից հետո Կյուաքսարեսը հպատակեցրել էր ասորեստանցիներին և տիրել Հալիս գետից արևելք ձգվող ողջ Ասիային: Ըստ այդմ՝ ընդունված էր կարծել, թե ասորեստանյան տարածքները բաժանվել են դաշնակիցների միջև, և որ Հյուսիսային Միջագետքն ու Հյուսիսային Սիրիան անցել են մարերին: Նույն աղբյուրի համաձայն՝ մարա-լիդիական պատերազմից հետո Հալիս գետը ձանաչվել էր Մարաստանի և Լիդիայի սահման: Արևելքում մարերի գերիշխանությունը, ըստ անտիկ պատմագրության, տարածվում էր մինչև Կենտրոնական Ասիա, Աֆղանստան և Տաջիկստան, իսկ Բակտրիան և սակերի ցեղերը կախման մեջ էին մարերից: Այս տեղեկությունների հիման վրա ծնվեց «մարական տերությունը»:

Ակնհայտ է, որ անտիկ պատմագրության կողմից «մարական տերության» տարածքը համապատասխանեցվել է իրենց քաջածանոթ Աքեմենյան տերության տարածքին, որը ևս Փոքր Ասիայից ձգվում էր Կենտրոնական Ասիա և Հնդկաստան: Սրանում թերևս տեսանելի է Աքեմենյանների՝ մարերի իրավահաջորդ լինելու պաշտոնական գաղափարախոսության ազդեցությունը, որով Աքեմենյան տարածքները Հերոդոտոսի մոտ ինքնաբերաբար նույնացվել են մարականին:

Մյուս միտումը, որն իր կնիքն է թողել Մարաստանի «հերոդոտոսյան» սահմանների վրա, Փոքր Ասիայի արևմուտքի՝ Հոնիայի, Միսիայի, Լիդիայի, Լիկիայի և Պիսիդիայի համար հունական պոլիսների և Աքեմենյան տերության միջև ընթացող պատերազմի գաղափարական հիմնավորումն էր հօգուտ հույների: Հալիս գետը հայտարարելով Մարաստանի և Լիդիայի սահման՝ Հերոդոտոսը փորձում էր ցույց տալ, որ մարերի իրավահաջորդ Աքեմենյաններն իրավունք չունենին Հալիսից դեպի արևմուտք ընկած տարածքների նկատմամբ:

Հերոդոտոսը, խոսելով Դեյոկեսի կողմից մարական վեց ցեղերը միավորելու մասին, հիշում է նրանց անվանապես՝ բուսեր, պարետակեններ, սորուքատներ, արիզանտներ, բուդիներ, մոզեր: Ցեղերից Պարետակենն նույնացվել է Ասարհադդոնի հիշատակված մարական Պարտակկա կամ Պարտակկա երկրների կամ անգամ հետագայի պարթևների հայրենիքի հետ: Սա կարող է ակնարկել մարերի տարածման սահմանները մինչև Կասպից ծովի հարավարևելյան շրջանները: Մեկ այլ համադրությամբ՝ Պարետակենն կարող է նույնական լինել Սարգոն II-ի մի տեքստում հիշատակվող մարական Պարտականու երկրի հետ: Այս դեպքում այն կարող էր գտնվել Քարունի վտակ Դեզ գետի վերին ակունքների շրջանում՝ Համադանից հարավ-արևելք: Հայտնի են նաև բուդիները, եթե այս ցեղանունը իրականում կապված է սեպագիր աղբյուրներում հիշատակվող Բուդու երկրի հետ: Վերջինս ընկած

էր Բաբելոնիայի և Էլամի սահմանագծին: Այս համադրումները կարող են ուրվագծել «մարական տերության» որոշակի տարածք Կասպից ծովի մերձափնյա շրջաններից Զագրոսյան լեռներ ձգվող հատվածում:

Տարօրինակ է, որ ասորեստանյան տիրապետության տապալումից հետո մարական տարածքներում չեն նկատվում ասորեստանյան պետական կառույցների ժառանգորդության փաստեր, ասորեստանյան քաղաքական կառույցները չփոխարինվեցին մարականով: Ասորեստանյան տիրապետության շրջանում ծաղկում ապրող քաղաքատիպ կենտրոններն ու տաճարները, ինչպիսիք էին Թեփե Նուշ-ի Զան, Թեփե Բարա Զան, Գողին Թեփե հնավայրերը, մարական տիրապետության շրջանում խաղաղ կերպով լքվում են: Նկատվում է քոչվորական կենսաձևի նոր վերելք, բնակչության շարժունակության կտրուկ աճ: Մարաստանի պատմության տերմոնական շրջանի մշտական բնակավայրեր վկայված չեն: Հերոդոտոսի կողմից Մարաստանի մայրաքաղաք հռչակված յոթնապարիսպ Էկրատանան թվագրվում է ոչ վաղ, քան Աքեմենյան դարաշրջանով, իսկ մարական դիտվող մի շարք կառույցներ իրականում պատկանել են սասանյան դարաշրջանին: Բացակայում են պետականության պայման հանդիսացող երկու կարևոր քաղաքիչները՝ կոթողային ճարտարապետությամբ բնակավայրերն ու արքունի դիվանները, այսինքն՝ արքունիք, պաշտոնություն, հետևաբար և տարածքային կառավարում ենթադրող համակարգը:

Մարական կենտրոնացված պետության բացակայության մասին են խոսում և՛ սեպագիր, և՛ աստվածաշնչյան համաժամանակյա աղբյուրները:

Բաբելոնյան արքա Նաբոնիդի օրոք մարերը ներկայացվում են որպես *ունան-մանդա* գումարած նրանց կողքից գնացող արքաների բազմություն: Նույն պատկերն է նաև աստվածաշնչյան աղբյուրներում: Դրանք շեշտում են մարերի արքաների բազմության մասին, ինչպես, օրինակ՝ Երեմիայի մարգարեությունում. «Ե՛վ կհամե-րացինների բոլոր թագավորներին, և՛ Էլամի բոլոր թագավորներին, և՛ մարերի բոլոր թագավորներին, հյուսիսի բոլոր թագավորներին՝ իրար մոտիկ թե՛ հեռու, և՛ աշխարհի բոլոր թագավորություններին, որ երկրի երեսին են...»:

Ք. ա. մոտ 594/3 թ. թվագրվող Երեմիայի մարգարեություններից մեկում կոչ էր արվում Արարատի, Միննիի, Աքբանազի թագավորություններին հանդես գալ Բաբելոնիայի դեմ: Այս կոչում վերստին հիշվում են մարաց արքաները: Բաբելոնի դեմ մար արքաներին հրավիրելու մասին խոսվում է մարգարեության մեկ այլ հատվածում:

Այն, որ «մարական տերությունը» մեկ կառույց չէր, հայտնի էր անգամ անտիկ աղբյուրներին: Հերոդոտոսի համաձայն՝ թագավորական իշխանությունը խորթ էր մարերին, նրանք ունեին բազմաթիվ առաջնորդներ, և քիչ չէին այնպիսիք, որոնք «ծագում էին հայտնի տոհմերից և արիությամբ իրեն (այսինքն՝ Դեյոկեսին – Ե. Գ.) չէին զիջում»: Քսենոփոնը «մարական տերության» կազմում տեսնում էր մի քանի թագավորությունների՝ հիշելով, օրինակ, Հայաստանի և Կասպադովկիայի արքաներին:

Կարելի է կարծել, որ «մարական տերություն» ասվածը որոշակի միջնաշխարհ-միջուկ ենթադրող և դրան հարևանող էթնոքաղաքական տարբեր միավորների այն

ամբողջությունն էր, ուր էական, բայց ոչ բացարձակ դերակատարում ունեին մարերը: Նրանք կապված էին միմյանց հետ այնքանով, որքանով որ ունեին ընդհանուր շահեր ընդդեմ սկզբնապես ասորեստանյան, հետագայում՝ Նոր բաբելոնյան տերությունների: Ընդ որում՝ հարաբերությունների այս մակարդակը չէր ենթադրում երկարատև համագործակցություն: Դրա լավագույն օրինակը տեսնում ենք Հայաստանի և Մարաստանի փոխհարաբերություններում (տե՛ս ստորև «Մարաստանը և Հայաստանը» բաժնում):

Ըստ այդմ՝ բովանդակային առումով «մարական տերություն» տերմինը կարելի է ընկալել զուտ որպես պայմանական միավոր՝ փյունիկյան ծովափից Զագրոսյան լեռներ ձգվող աշխարհից դուրս, և դրան հակադիր մեկ այլ աշխարհ: Այդպիսին էր ժամանակին Աքքադի արքա Նարամսինի դեմ ձևավորված հյուսիսի 17 թագավորների դաշինքը, այդպիսին էր նաիրյան արքաների, հետագայում՝ Վանի թագավորության, լուվիական և զագրոսյան արքաների դաշինքը Ասորեստանի դեմ:

Այս տեսանկյունից է բացատրվում նաև Փոքր Ասիայում մարերի ներկայությանը վերաբերող Հերոդոտոսի տեղեկությունը՝ արտահայտված լիդիա-մարական վեցամյա պատերազմի տեսքով: Ենթադրվում է, որ այստեղ ևս գործ ունենք տարածքային նվաճումներ չենթադրող արշավանքների հետ՝ մարերի և Հայկական ու Իրանական բարձրավանդակների այլ ուժերի մասնակցությամբ: Ըստ այդմ՝ կասկածելի են նաև Հայկական լեռնաշխարհում մարերի գերիշխանության և Վանի թագավորության նվաճման մասին առկա տեսակետները, որ թխում էին լիդիա-մարական պատերազմին վերաբերող Հերոդոտոսի այս նույն պատումից:

Հնագիտական տվյալները ևս չեն վկայում արևմտյան ուղղությամբ Մարաստանի տարածքային աճի մասին: Փոքր Ասիայում մարական տիրապետության հանգուցակետ համարվող Կերկենես լեռան խոշոր ամրոցը, որը երբեմն նույնացնում են Հերոդոտոսի հիշատակած Պտերիայի հետ Կասպադովկիայում, ըստ երևույթին ընդհանրապես կապ չի ունեցել մարերի հետ: Ոչ միայն Փոքր Ասիայում, այլև, ընդհանրապես, Զագրոսներից արևմուտք մարական տիրապետության նյութական վկայություններ չկան:

Մարաստանի «վերելքը և անկումը»

Մարաստանի վերջին արքան Աստյուագեսն էր: Ըստ Հերոդոտոսի՝ նա գահ է բարձրացել լիդիա-մարական պատերազմի ավարտից ոչ շատ անց՝ Կյուաքսարեսի մահվանից հետո՝ կառավարելով 35 տարի: Աստյուագեսը հայտնի է նաև բաբելոնյան աղբյուրներից, որոնք նրան հիշում են Իշտումեգու անունով: Բաբելոնյան աղբյուրները Նաբոնիդի կառավարման շրջանում վերստին անդրադառնում են մարերին՝ թեև արքայական արձանագրություններում «մար», «Մարաստան» տերմինները չեն հանդիպում, այլ շարունակվում է կիրառվել արխայիկ անվանաձև *ուսնան-մանդան*: Իշտումեգուն վերջինիս արքան էր:

Աստյուագես-Իշտումեգուի կառավարման առաջին երկու տասնամյակների մա-

սին ոչ մի վկայություն չկա: Անուղղակի փաստերից կարելի է ենթադրել, որ հիշյալ ժամանակահատվածում մարա-բաբելոնյան հարաբերությունները խիստ սրվել են: Այն դերակատարությունը, որ ունեցան մարերը Ասորեստանի կործանման հարցում, այժմ սպառնում էր Բաբելոնիային: Այս մասին կարելի է դատել Երեմիայի մարգարեություններում մար արքաներին ուղղված կոչից՝ Արարատի, Միննիի և Աքանագի թագավորությունների հետ համատեղ հանդես գալու Բաբելոնիայի դեմ դեռևս Նաբուգոդոնոսոր II-ի օրոք:

Միաժամանակ մոռյալ գույներով են ներկայացվում մարերը Նաբուգոդոնոսոր II-ի հաջորդների արձանագրություններում: Բաբելոնյան աղբյուրներում մարերին վերագրվում է կործանողի դեր՝ շեշտելով, մասնավորապես, Խառանի և նրա Սին աստծո տաճարի ավերումը *ուսնան-մանդայի* կողմից, թեև հայտնի էր, որ քաղաքի գրավումը իրականացվել է նույն բաբելոնյան զորքերի ծանրակշիռ մասնակցությամբ: Աղբյուրների միտումը՝ *ուսնան-մանդային* վերագրելու ողջ բացասական դերակատարությունը, կարող է վկայել մարա-բաբելոնյան լարված հարաբերությունների մասին: Պատահական չէ, որ Նաբոնիդի արձանագրություններից մեկը շեշտում է, որ մարերը ավերել են ոչ միայն ասորեստանյան, այլև բաբելոնյան քաղաքները:

Պատմագիտության մեջ տարածված տեսակետի համաձայն՝ Ասորեստանի կործանումից հետո Հյուսիսային Միջագետքն ու Հյուսիսային Սիրիան անցել են մարերին: Դրա հավաստիության բացահայտման համար, գրավոր տեղեկություններից գատ, կարևորվում է հնագիտական աշխատանքների արդյունքների վերլուծությունը: Սակայն դրանք վկայում են այստեղ ոչ թե մարական, այլ բաբելոնյան տիրապետության մասին:

Նախ և առաջ՝ ասորեստանյան քաղաքները չանհետացան պատմության թատերաբեմից: Վերակառուցման հետքեր են առկա Աշշուրում, Նինվեում, Կալխուում, Դուր-Շարրուկինում, Առապիսայում: Ընդ որում՝ քաղաքային կենտրոնների ավերմանը հաջորդած վերականգնողական աշխատանքներն իրականացվել են ասսորա-բաբելոնյան մշակույթի կրողների կողմից: Այսինքն՝ քաղաքներ վերադարձողների զգալի մասը նախկին բնակիչներն էին: Հետասորեստանյան դարաշրջանի նյութական մշակույթի շատ նմուշներ ակնհայտորեն բաբելոնյան արտադրանք են: Բացի այդ, որոշ շինություններում վերակառուցումներն արվել են բաբելոնյան ճարտարապետությանը բնորոշ գծերով: Նիմրուդ-Կալխուից հայտնաբերվել են անգամ Նոր բաբելոնյան սեպագիր տեքստեր: Վերջիններս հայտնի են Դուր-Կատլիմուից և Գուզանայից (Խաբուր գետի ավազան): Բաբելոնյան տեքստերից մեկը հայտնում է Գուզանայի բաբելոնյան կառավարչի անունը: Իսկ Սիպպարից հայտնաբերված տեքստում խոսվում է Աշշուրի բաբելոնյան կառավարչի մասին: Վերջին տեքստը թվագրվում է Ք. ա. 559 թ.:

Նինվեում ևս քաղաքի ավերմանը հաջորդած շրջանում նկատվում են վերականգնողական աշխատանքների հետքեր. վերականգնվել է Նաբու աստծու տաճարը, պալատական որոշ համալիրներ և այլ շինություններ: Նմանատիպ իրավիճակ է նաև ասորեստանյան այլ կենտրոններում:

Կարևոր տեղեկություններ են պահպանվել նաև Նաբուպալասարին հաջորդած արքաներից: Նաբուգոդոնոսոր II-ի արձանագրություններից մեկում հիշատակվում է Զամուայի բաբելոնյան նահանգապետը: Երբեմնի ասորեստանյան նահանգ Զամուան ընկած էր ասորեստանյան միջնաշխարհի անմիջական հարևանությամբ՝ Զագրոսյան լեռների ստորոտին: Իսկ դա հուշում է, որ նրանից արևմուտք ընկած ասորեստանյան կենտրոնները, մասնավորապես Նինվեն և Աշշուրը ևս պատկանել են Բաբելոնիային: Նույնը վերաբերում է Առապխային և Խառանին. խիստ կասկածելի է վերջիններիս՝ մարերի ձեռքն անցնելու հնարավորությունը: Ամենայն հավանականությամբ, ասորեստանյան միջնաշխարհն ամբողջությամբ, ինչպես նաև դրանից արևմուտք ձգվող ասորեստանյան նախկին տիրույթները անցան Բաբելոնիային:

Սակայն Նոր բաբելոնյան տերությունը ի զորու չգտնվեց յուրացնելու այս տարածքները, քաղաքակրթության կենտրոնից այն վերածվեց տերության ծայրամասի: Ամենայն հավանականությամբ՝ մարական մշտական սպառնալիքը թույլ չտվեց բաբելոնացիներին հիմնովին հաստատվել այստեղ: Օրինակ՝ Բաբելոնի արքա Ներգալ-շար-ուծուրը ստիպված էր Առապխայից Սիպպար տեղափոխել աստվածների արձանները, որ, թերևս, պայմանավորված էր քաղաքին սպառնացող մարական ներխուժման հնարավորությամբ: Բաբելոնյան իշխանություններին մշտապես մտահոգում էր տերության արևելյան սահմանների և անգամ Միջնաշխարհի անվտանգությունը: Դեռևս Նաբուգոդոնոսոր II-ն էր ձեռնամուխ եղել ամրացնելու Բաբելոնը և նրա մերձավորությամբ ընկած կարևորագույն քաղաքները՝ կառուցելով Սիպպարից մինչև Օպիս ձգվող ամրությունների հզոր շղթա, որը Քսենոփոնը հիշատակում է որպես «մարական պատ»:

Ամենայն հավանականությամբ՝ մարական սպառնալիքն ի վերջո դարձել է իրականություն, և կարող ենք ենթադրել արդեն Նաբուգոդոնոսոր II-ի օրոք և հաջորդած տարիներին տեղ գտած մարական արշավանքների մասին: Դրանք էին, որ պատճառ դարձան երբեմնի ասորեստանյան, այժմ արդեն բաբելոնյան քաղաքների ավերմանն ու դրանց մի մասի վերջնական լքմանը:

Այսպես կոչված Նաբոնիդի «երազը» նկարագրող արձանագրության համաձայն՝ Մարդուկ աստվածն արքային հրամայել է վերականգնել Խառանի Սին աստծո տաճարը, որը ավերակ էր մնացել 54 տարի շարունակ: Հիմնվելով այս տեղեկության վրա՝ ենթադրվել է, որ քաղաքն այդ ընթացքում գտնվել է մարերի ձեռքին, ինչն էլ անհնար է դարձրել տաճարի վերականգնումը: Այս տեղեկությունը, սակայն, իրականում վկայում է ոչ թե մարական տիրապետության մասին, այլ 54-ամյա վաղեմության դեպքերի արտահայտությունն էր Խառանի գրավման ժամանակ մարերի ունեցած դերակատարության մասին: Հայտնի է, որ Խառանի Սին աստծո տաճարը՝ էխուլխուլը, որի քրմուհին էր եղել Բաբելոնիայի արքա Նաբոնիդի մայր Ադդա-գուպպին, այդ անցքերի ժամանակ հիմնովին ավերվել էր, և Նաբոնիդի օրոք Բաբելոնիայում տիրող հակամարական պաշտոնական գաղափարախոսության պայմաններում Խառանի նվաճումը վերագրվել է մարերին, իսկ դրա վերականգնումը

Նաբոնիդի կողմից համարվել Մարդուկ աստծո կամքը, որը «սպասել էր» նրա գահ բարձրանալուն: Այստեղից էլ գոյանում է 54 տարին (Ք. ա. 610–556 թթ.):

Նաբոնիդի մի արձանագրության մեջ հայտնվում է Սին աստծո տաճարը վերականգնելու անհնարինության մասին՝ քաղաքը շրջապատած ունևան-մանդայի պատճառով: Կարելի է ենթադրել, որ թշնամական Մարաստանի սահմանները նրա օրոք մոտեցել էին Խառանին: Հետևաբար մարերը վերահսկում էին Զագրոսներից մինչև Խառան ձգվող տարածքը: Սա վստահությամբ կարելի է ասել մասնավորապես Արբա՛իլի համար: Հայտնի է, որ քաղաքին ինչ-որ մի պահ տիրել են մարերը, ավելի կոնկրետ՝ իրանախոս սագարտիացիները: Արբա՛իլը հավանաբար ծառայում էր որպես հենակետ՝ հյուսիսային Միջագետք և Հյուսիսային Սիրիա մարական հետագա առաջխաղացման համար: Ընդ որում՝ կարող ենք հետևել մարերի ծավալմանը ոչ միայն արևմտյան ուղղությամբ: Մասնավորապես Քսենոփոնի մոտ հանդիպում ենք Հայաստանի հպատակեցման մասին ընդարձակ վկայությունների՝ մարերի արքա Աստյուագեսի օրոք, թեև Հայաստանի արքան, այնուամենայնիվ, մնաց իշխանության: Ընդհանրապես, այսպես է ներկայանում «մարական տերությունը» Հերոդոտոսի մոտ. «Մեդական տիրապետության ժամանակ ... մեկ ազգ իշխում էր մյուսին, իսկ մեդացիները՝ բոլորին, նաև իրենց մերձավոր հարևաններին. սրանք՝ իրենց հարևաններին, սրանք էլ՝ իրենց հարևաններին և այլն»:

Հերոդոտոսի հիշյալ խոսքերը, սեպագրական և հնագիտական աղբյուրների տվյալները վկայում են, որ «մարական տերություն» ասվածն իրականում պետական կառավարման կայուն ավանդույթներ չունեցող, զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող էթնոքաղաքական բազում ուժեր ընդգրկող մի բարդ կոնգլոմերատ էր, ուր մար արքաներն ունեին հեղինակություն, բայց ոչ բացարձակ իշխանություն:

Հերոդոտոսի կողմից Աստյուագեսի կառավարման վերջին շրջանի համար նրա տված նկարագրությունից կարելի է եզրակացնել, որ մարական վերնախավը արքայի հանդեպ թշնամաբար էր տրամադրված: Հերոդոտոսը հայտնում է մարական վերնախավի ներկայացուցիչ Հարպագոսի և «առաջին մարերի» միջև կայացած համաձայնության մասին՝ ընդդեմ Աստյուագեսի: Դրա պատճառը, թերևս, Աստյուագեսի փորձն էր սահմանափակելու մար առաջնորդների դերը՝ փորձելով կենտրոնացնել իշխանությունը արքայի և արքայատոհմի ձեռքում: Ընդ որում՝ այս փորձը կարող էր և ունենալ գաղափարական հենք՝ լինելով իրանական աշխարհում նոր ուսմունքի՝ գրադաշտականության արմատավորման առաջին վկայություններից մեկը: Զրադաշտը, որը Կյուաքսարեսի, գուցե նաև Աստյուագեսի ժամանակակիցն էր, իր քարոզներում դեմ էր արտահայտվում տոհմային ազնվականությանը: Ամենայն հավանականությամբ, Աստյուագեսը հարել էր գրադաշտականությանը: Պատահական չէ, որ խոսելով մար արքայի մասին՝ Հերոդոտոսը շեշտում էր մոզերի խորհուրդներին հետևելու նրա հակվածությունը: Ասորեստանյան կամ բաբելոնյան օրինակով պետություն ստեղծելու Աստյուագեսի ջանքերը կարող էին վերածվել գաղափարաբա-

նական պայքարի՝ զրադաշտ արքայի և հին աստվածներին հարող տոհմային ազնվականության միջև:

Եթե ամբողջացնելու լինենք Նաբոնիդի շրջանի աղբյուրների տեղեկությունները, կարելի է ենթադրել բաբելոնյան պետության նկատմամբ մարական իրական սպառնալիքի գոյությունը: Նաբոնիդը հապաղում էր կատարելու Մարդուկ աստծո հրամանը՝ թերևս զգուշանալով, որ Խառանի վերականգնումը կարող էր դիտվել հակամարական քայլ և ազդակ կհանդիսանար մարական ներխուժման համար: Նաբոնիդը կատարեց իր խոստումը մի քանի տարի անց՝ մարական վտանգի բացակայության պայմաններում:

Դատելով այն սպառնալիքից, որի առջև կանգնած էր բաբելոնյան պետությունը, կարելի է ենթադրել, որ պարսիկների հակամարական ապստամբությունն իրականում ուղղորդված էր բաբելոնացիների կողմից և ճիշտ ժամանակին էր: Դա թույլ տվեց բաբելոնյան արքային ոչ միայն վերացնել մարական սպառնալիքը, այլև իրագործել նոր նվաճումներ Արարական սարահարթում:

Ե՛վ սեպագիր, և՛ անտիկ աղբյուրները համակարծիք են՝ հայտնելով մարերի դեմ պարսկական ցեղերի բարձրացրած ապստամբության և դրա արդյունքների մասին: Դրանցից «Նաբոնիդի ժամանակագրությունը» արձանագրում է. «*Վեցերորդ տարի ... Իշտունեզուն*՝ *հավաքեց [իր բանակը] և շարժվեց Կուրաշի՝ Անշանի արքայի դեմ՝ գերելու նրան (և) նվաճելու [նրա երկիրը]: Իշտունեզուի բանակը ապստամբեց նրա դեմ և գերեց նրան: Նր[անք հանձնեցին նրան] Կուրաշին: (...) Կուրաշը (արշավեց) դեպի Էկրատանա արքայական քաղաքը: Արծաթ, ոսկի, բարիքներ, ունեցվածք [...], որ նա տարավ Էկրատանայից որպես ավար, նա տարավ Անշան: (...) ունեցվածքն ու բարիքները, որ գորքերը [...]*»:

Ավելի ընդարձակ տեղեկություններ են պահպանվել անտիկ աղբյուրներում: Հերոդոտոսը հայտնում է Աստյուագեսի թագավորության 35-րդ տարում (Ք. ա. 550 թ.) պարսիկների առաջնորդ Կյուրոսի ապստամբության և նրա դեմ Աստյուագեսի մղած երկու ճակատամարտերի մասին: Դրանցից առաջինը մարերի արքան տանուլ տվեց այն պատճառով, որ մարական բանակն առաջնորդող Հարպագոսը և մար առաջնորդների մեծ մասը անցան պարսիկների կողմը: Երկրորդ ճակատամարտը ևս, ուր մարական բանակին գլխավորում էր անձամբ Աստյուագեսը, ավարտվեց Կյուրոսի հաղթանակով: Կյուրոսը, ով, ըստ անտիկ պատմագրության, մայրական գծով Աստյուագեսի թոռն էր, կենդանի թողեց նրան՝ թույլատրելով ապրել մինչև իր մահը:

Մարական տարրը նորաստեղծ Աքեմենյան պետության մեջ ունեցավ կարևոր դերակատարում՝ ծառայելով պետությանը կամ հանդես գալով դրա դեմ՝ փորձելով վերականգնել իր անկախությունը: «Մարաստան» տերմինը ժամանակի ընթացքում վերածվեց աշխարհագրական հասկացության՝ գուրկ էթնիկ բովանդակությունից: Էկրատանայի շրջանը հունահռոմեական պատմագրության կողմից արդեն կոչվում էր Սիրումեդիա՝ այստեղ արամեական կամ արամեախոս դարձած էթնիկ տարրի զգալի դերի պատճառով:

7. ՄԱՐԱՍԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍԱՆԸ

Հայ-մարական առնչությունների պարզաբանումը բավական վիճահարույց խնդիր է՝ կապված այն հանգամանքի հետ, որ արդեն մեր թվարկության սկզբներին մարերը՝ որպես առանձին ժողովուրդ, վերացել էին պատմության թատերաբեմից, և այսօր դժվար է որոշել, թե մասնավորապես մշակույթի և լեզվի որ բնորոշ տարրերը պետք է համարել մարական: Հատկանշական է նաև, որ արդեն Ք. ա. II դ. պարթևական աշխարհակալության տարածումն իր մեջ կլանեց մարական մշակույթն ու լեզուն. մարերն, ըստ էության, մասամբ հայացան, մասամբ էլ դարձան պարթև: Այնպես որ, հայերենում որոշ իրանական ազդեցությունների ծագումնաբանությունը հավասարապես կարող է վերաբերել թե՛ պարթևական, թե՛ «միջին մարական» լեզվոլորտին: Այլ խոսքերով ասած՝ հայերենում որոշ մարաբանություններ կարող էին անցնել պարթևերենի միջոցով, և հակառակը՝ որոշ պարթևաբանություններ կարող էին մարական ծագում ունենալ: Հնարավոր է նաև հին մարական բառաձևերի մի մասի փոխարինումը նոր պարթևական կամ միջինպարսկական ձևերով:

Հայ-մարական շփումների վաղեմությունը նույնպես դժվարացնում է դրանց բնույթը որոշելու գործը: Քանի որ մարական պետությունը ստեղծվեց Հայկական լեռնաշխարհի անմիջական հարևանությամբ, դեռ ավելին՝ նախամարական ցեղերը, ըստ ասորեստանյան սեպագիր աղբյուրների, նախապես բնակվում էին Վերին Զագրոսի ճյուղավորումներում (տե՛ս վերը), ապա հայերի և մարերի շփումները սկսվել են շատ ավելի վաղ, քան այդ ժողովուրդների ստեղծած պետությունների քաղաքական փոխհարաբերություններն ու առնչությունները:

Ելնելով պահպանված տեղանունների քննությունից՝ հայերի և մարերի առաջին շփումները տեղի են ունեցել Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մատույցներում՝ Վասպուրական և Պարսկահայք (Նոշիրական) նահանգների տարածքներում: Այդ մասին վկայում է, նախ և առաջ, Մարանդ գավառի անվանումը, որի մեջ *-անդ* տեղանվանական վերջածանցը (հմմտ. Վան-անդ, Հաբ-անդ) կցված է մար արմատին՝ մարերի ցեղանվան հայկական տարբերակին: Եթե հաշվի առնենք, որ վերջածանցները հաճախ ծագում են գոյականներից, ապա *-անդ* ձևը հնարավոր է նույնացնել *հայ*. անդ/հանդ «արտ» բառի հետ, ըստ այդմ՝ ողջ տեղանունը կնշանակի «մարական դաշտ, հովիտ»:

Սակայն հնարավոր է նաև նույն գավառանունը բացատրել որպես իրանական կազմություն՝ *իրան*. -(w)and վերջածանցով (ինչպես Damāwand, Nahāwand, Bagrewand/Bagrawand, Zarewand/Zarawand տեղանունները, նաև իրանականից փոխառյալ *հայ*. դարաւանդ բառը և այլն): Այս դեպքում դժվարություն է առաջանում բացատրելու /ր/-ի առկայությունը մար ցեղանվան մեջ, քանի որ սպասելի էր *իրան*. *Māḍand ձևը: Ի դեպ, Մարանդի կենտրոնական քաղաքը նույնպես կոչվում է Մարանդ, որը մինչ օրս էլ գոյություն ունի Իրանի Ատրպատականում:

Մարանդ գավառից արևմուտք գտնվում էր Ճուարշ-ոտ գավառը. այս անվանումն արդեն ակնհայտորեն ունի իրանական ծագում: Այստեղ էր Վասպուրականի իշխան-

ների ձևեռանցը՝ Մարական ավանը (նոր ժամանակներում՝ Մարաքյանը), որի անվանումը, ամենայն հավանականությամբ, կրկին առնչվում է «մար» ցեղանվանը: Ս. Երեմյանը Մարական բնակավայրի հետ է նույնացնում Մարակերտը, որը, սակայն, Գողթան երգերը հիշատակում են Շարուրի դաշտում՝ Ճուարշ-ռոտ գավառից հյուսիս:

Մարանդ գավառի մյուս՝ արևելյան կողմում գտնվում էր Պարսպատունիք գավառը (*իրան. *parθ- / pars- «ծայրամաս, ծայրագավառ»*), որը հայոց միջնադարյան աղբյուրներում կոչվում էր նաև «Մարաց կողմանք»: Ուրմիա լճի արևմտյան ափին էր տեղադրված Մարի գավառը, նոր ժամանակներում՝ Մարգավար < *Մար-գավառ, Բարանդուզ գետի հովտում: Մարի անվան հիմքում հավանաբար նույնպես ընկած է «մար» ցեղանունը: Մարիից հարավ-արևմուտք գտնվող գավառները՝ Նիխորականը, Դասնը և Մահկերտ-տունը, միասին կոչվում էին «Մարաց ամուր աշխարհ»: Մովսես Խորենացին մինչև այս շրջանները, մասնավորապես մինչև Զարասպ լեռ է հասցնում հայոց իշխանության տարածումը:

Ըստ Խորենացու հաղորդած հայոց ծննդաբանական ավանդազրույցի՝ հայերի երկրորդ անվանադիր նախնու՝ Արամ նահապետի հիմնական հակառակորդը մարերի առաջնորդ Նիքար Մաղեսն էր «այր հպարտ և պատերազմասեր»: Յ. Մարկվարտի կարծիքով՝ Նիքար անունը նույնական է վերոհիշյալ Նիխոր-ական գավառանվան հետ, որը ծագում է *իրան. *ni-xvār-akan* ձևից: Պետք է ենթադրել, որ այս տարածքը եղել է մարերի գլխավոր կենտրոններից կամ հենակետերից մեկը, որտեղից մարական ռազմաշունչ ցեղերը հարձակումներ էին գործում դեպի Հայկական լեռնաշխարհ: Հետևաբար Արամի և Նյուբար Մաղեսի (Նյուբար «Մարացի») հակամարտության պատմությունն այլաբանորեն ներկայացնում է հայկական և մարական ցեղերի պայքարը, թեև չպետք է բացառել, որ նաև որոշ իրական պատմական դեմքեր կարող էին լինել այս առասպելի կերպարների նախատիպերը:

Խորենացու պատումի համաձայն՝ Նյուբարի գորքերը «քուշանների նման» ասպատակել էին հայոց սահմանները և երկու տարի իրեն ծառայեցրել: Արամը ժողովում է մոտ հինգ բյուր քաջ աղեղնավորներ ու նիզակավորներ և «պատահե՛ Մեղացոցն նրիտասարդաց»՝ «յեզերս սահմանացն հայոց»: Հանկարծորեն Արամը «յառաջ քան զծագել արեգական, սատակեաց զբազմութիւն անբոխիցն, և զնոյն ինքն զՆիքարն զկոչեցեալն Մաղես ձերբակալ արարեալ ածէ յԱրմաիր, և անդ ուրեմն ի ծայրս աշտարակի պարսպին ցից վարեալ երկաթի ընդ ձակատն, յորմն վարսել հրամայէ, ի տեսիլ անցաւորաց և ամենայն եկելոց անդր. և զաշխարհն նորս մինչև ի լեռնն անուանեալ Զարասպ՝ ի ծառայութեան հարկի կալա մինչև ցթագաւորութիւնն Նինուսի ի վերայ Ատրեստանի և Նինուէի»: Նշված Զարասպ լեռն, ըստ Ս. Երեմյանի տեղորոշման, համապատասխանում է Զագրոսի լեռնահամակարգին պատկանող ներկայիս Սիահ-բուհին (Սև լեռ)՝ 3497 մ բարձրությամբ, և գտնվել է Մարի, Նիխորական, Մահկերտ ու Մատեանք գավառների միջև:

Հետաքրքիր է, որ հույն աշխարհագրագետ Ստրաբոնը նույնպես հայկական ցեղերի իշխանության տարածումը հասցնում է մինչև Զարասպ լեռ, Դասն և Մահկերտ-տուն գավառներ: Թեև նա կոնկրետ այդ տեղանունները չի նշում, սակայն

հիշատակում է դրանց անմիջական հարևանությամբ գտնվող Ադիաբենեն: Ստրաբոնը Արամին կոչում է Արմենոս հունական անվանաձևով և նրան համարում արգոնավորդներից մեկը՝ Յասոնի ուղեկիցը: Հետաքրքիր է, որ Արմենոսի և Յասոնի հակառակորդի դուստրը՝ Մեդեան, հունական պատմագրության մեջ համարվում էր մեղացիների (մարերի) անվանադիր նախամայրը: Այսինքն՝ Ստրաբոնի պատումի համաձայն՝ նույնպես ստացվում է, որ հայերի նախահոր հակառակորդները մարական ցեղերն էին: «Արմենոսի հետ եղողները», ըստ Ստրաբոնի, բնակեցրել են Հայաստանի որոշ գավառներ՝ «մինչև Քալաբենեն ու Ադիաբենեն՝ Հայաստանի սահմաններից դուրս»: Արմենոսն «իր անունը թողել է Արմենիային»: Քալաբենենի և Ադիաբենենի հիշատակումը հստակ ցույց է տալիս, որ հայերի նախնիները հասել են ներառյալ մինչև «Մարաց ամուր աշխարհը», որն էլ հետագայում մտել է Մեծ Հայքի թագավորության մեջ:

Հայերն իրենց հակամարտությունը մարերի հետ արտահայտել են նաև սրբազան պաշտամունքատեղիների՝ լեռների պայքարի միջոցով: Մեր օրերում գրառված, չափազանց արխաիկ մի առասպելում հայերի խորհրդանիշը Տավրոս լեռն է, որը հանդես է գալիս որպես ամպրոպային ցլակերպ հերոս՝ հսկայական եղջյուրներով: Տավրոսի հակառակորդը վիշապագուն մարերի խորհրդանիշն է՝ եղջերավոր վիշապ Զագրոսը: Այս լեռնաշղթան Ուրմիո և Վանա լճերի ավազանների ջրբաժանն է (այն, ի դեպ, որոշ աղբյուրներում կոչվում է նաև Նիխորական): Ուշագրավ է, որ նշված առասպելում Տավրոսի ու Զագրոսի եղջյուրները նույնպես լեռնագագաթներ են՝ երկվորյակ անուններով՝ Առնոս և Արտոս, Մասիոս և Մասիս:

Ըստ առասպելի՝ վիշապ Զագրոսն ուզում է ուտել Տավրոսին և կովի է ելնում նրա դեմ (կրկին այստեղ տեսնում ենք մարերի նախահարձակ լինելը, ինչպես Նյուբար Մաղեսի դեպքում): Հետաքրքիր է, որ Զագրոսի ու Տավրոսի կռիվը տեղի է ունենում Հաքքարիում՝ «Արգեոլի և Զուդիի կողմերում»: Մարտի հենց սկզբում Տավրոսը, «թեև տարածությամբ ավելի փոքր, բայց ավելի ուժեղ լինելով, այնպես է հարվածում Զագրոսի ձակատին, որ նրա եղջյուրները պոկվում են: Մի եղջյուրը թռչում, ընկնում է Արգեոլից ոչ հեռու և ցցվում է գետնի մեջ, որը մինչև այսօր Մասիոս է կոչվում, իսկ մյուս եղջյուրը թռչում և խրվում է Արարատի կողը, որը մինչև այսօր Մասիս է կոչվում»: Այս դրվագում բացատրվում է երկու նշանավոր լեռների առաջացումը՝ Մեծ Մասիսի և Մասիոսի (= Տուր Աբդին կամ Մարդինի լեռնաշղթա):


Այնուհետև «Զագրոսը շշմած մեջքը դեմ է տալիս Տավրոսի Առնոս և Արտոս եղջյուրներին: Տավրոսը բարկացած այնպես ուժեղ է խփում նրա մեջքին ու փորին, որ մի մեծ ձոր է բացում Կոտուրից սկսած մինչև Տիարտիտը: Այդ ձորը, իբրև վկա, մինչև օրս էլ մնում է, որով հոսում է Զար գետը: Ասում են, թե այդ ձորը Զագրոսի ալյուրն է, որը թեև վշում է, բայց անուշ ու անմահական ջուր է»: Տավրոսի հարվածից նոր սեյսմիկ գործընթացներ են տեղի ունենում, և պարտված Զագրոսի փորոտիքի աղի ջրերի մի մասը հոսում է դեպի Վան ու կազմում Վանա լիճը: «Այդ օրվանից սկսած՝ Զագրոսը, իր գլուխն առած, քաշվում է մի կողմ: Նրա մարմնի մի ծայրը հասնում է Արարատ, իսկ գլուխը՝ Շիրազ և Հնդստան»:

Հայերը «մար» ցեղանունը կապել են իրան. mār «ոձ» բառի հետ, այդ պատճառով էլ մարերին համարել են «վիշապագուններ»: Հայոց հնագույն էպոսում՝ «Վիպասանքում», կարմիր թելի նման անցնում է վիշապ-մարերի և հայոց ամպրոպային հերոսների մի քանի սերունդ տևող հակամարտության պատմությունը: Այս հակամարտությունը կարելի է մեկնաբանել նաև որպես հայրիշխանական սոցիալական կառուցվածք ունեցող ցեղերի պայքար՝ ընդդեմ մայրիշխանության: Ի տարբերություն հայոց անվանադիր նախնիների (Հայկ, Արամ)՝ որպես մարերի նախնի հիշվում են կանայք. հունական առասպելաբանության մեջ՝ Մեդեան, իսկ հայոց էպոսում Մեծ Հայքի մարական ցեղերի նախամայրը կոչվում է Անույշ: Ըստ Մովսես Խորենացու հաղորդած առասպելների՝ Անույշը Մարաց վերջին թագավոր Ածղահակի կինն էր, որի անվան մասին նույնպես հայոց Պատմահայրը նշում է. «գի Ածղահակդ՝ ի մեր լեզուս է վիշապ»:


Ուշագրավ է, որ Ածղահակի հակառակորդի՝ հայոց արքա Տիգրանի անունը լեզվաբանների կողմից սովորաբար նույնպես ստուգաբանվել է մարերենով: Այն կազմված է նույն արմատից, ինչ Տիգրիս գետանունը, որը, ըստ Ստրաբոնի, մարերեն լեզվով պարզապես նշանակում է «նետաձգություն»: Տիգրանի անունը կարելի է բացատրել որպես «տեգով սպանող» կամ «նիզակակիր»: «Վիպասանք» էպոսում պատմվում է, թե ինչպես է Տիգրանը ծնվում «Հայկազանց երկրի» բարձրաբերձ լեռան գագաթին, «որոյ գագաթնն սաստկութեամբ ասոնամանեաց թուէր պատեալ»: Ակնհայտորեն այստեղ ակնարկվում է Մեծ Մասիսը, քանի որ Տիգրանը, ծնվելով ծիրանագգեստ կնոջից, անմիջապես մի վիշապ սանձելով, արշավում է դեպի հարավ-արևելք՝ Մարաստանի վրա: Առասպելում կենդանակերպ խորհրդանիշի միջոցով բնորոշվում է մարերի և Մարաստանի վիշապային ընկալումը հայերի կողմից:

Տիգրանի և Ածղահակի մենամարտը նկարագրվում է ամպրոպի աստծո և վիշապի պայքարի խիստ տիպական հասկանիչներով: Արծվի թներով սլանալով՝ Տիգրանը հասնում է Ածղահակի արքունական ապարանքին: Վերջինս կանգնած էր ապարանքի տանիքին՝ գեղեցիկ շատրվանների մեջ: Տիգրանն իսկույն հարձակվում է նրա վրա. ամենի ախոյանները «նախ ի տեգ նիզակաց զմարմինս երկաքանձիրոցս յոշելով, վտակս արեան ի վայր հոսեցուցաք, և զարեգակնատես երեսս ապարանիցս արեան հոսեալ ցուցաք ծով»: Այստեղ արյան ծովի և վերևից հոսող արյան վտակների հիշատակումն արտացոլում է հայոց ժողովրդական հավատալիքներում առկա երկնային «Ծիրանի ծովի» առասպելույթը, որն ամպրոպի ժամանակ ակնկոծվում, և որտեղից անձրև է թափվում երկրի վրա: Նույն մտածելակերպն առկա է նաև այն պատկերացման մեջ, թե իբր ամպրոպային հերոսները ճիպոտահարում են երկներում բառաչող վիշապին, որի արյան շիթերը հոսում են ներքև անձրևի տեսքով:


Ի վերջո Տիգրանը սպանում է Ածղահակին, ընդ որում՝ հայտնի է նաև նույն մենամարտի առավել պատմականացված տարբերակը, ըստ որի՝ հայոց և մարաց բանակների բախման ժամանակ Տիգրանը «նիզակաւ օրինակ իմն որպէս զշուր հերձեալ գերկաթի անուր հանդերձն՝ շանհրէ գԱծղահակ յընդարձակ տեգ նիզակին, և յանհոռիել միտանգամ զձեռնն՝ արտաքս զկէս մասն թոքոցն հանդերձ գինուն ի դուրս բերէ»: Ած-



Միջագետքյան մշակույթի հուշարձաններ




Ուր քաղաքի «շտանդարտը», Ք. ա. III հազ.



Միջագետքյան սեպագիր արձանագրություններ




Լագաշի կառավարիչ Գուդեա




Շումերական արձանիկ



Ուր քաղաքի զիկկուրատը, Ք. ա. III հազ.



Աբբադի արքա Սարգոնը



Աբբադի արքա Նարամսինի հաղթական արձանագրությունը



Առասպելական էակ (լամասու)



Փոքրասիական բարձրաբանդակ, Ք. ա. VIII դար




Ասորեստանյան բարձրաբանդակ. Աշոնասծիրյալ II-ը առյուծի որսի պահին




Սարգոն II



Աշխարհի բաբելոնյան բարտեզը



Հերոզիֆային լուսիական արձանագրություն, Ք. ա. XIII դ.



Խեթական արքայի ընծայագիր՝ արքայական կնիքով, Ք. ա. XV դ.




Միջագետքյան աստվածներ, Ք. ա. III հազ.



Խեթական մայրաքաղաք Խաթթուսասի «Առյուծի դարպասը»



Էրանական մշակույթի նմուշներ, Ք. ա. III-II հազարամյակներ



Գուր Ունտուաշ Նապիրիշա քաղաքը, Էրան, Ք. ա. XIII դար




Պերսեպոլիս



Տեսարան
Պերսեպոլիսից



Հատված Բեհիսթունյան
արձանագրությունից



Պերսեպոլիսի համայնապատկերը



Նախշ-է Ռոստամ. Արեւմտյան արքաների դամբարանը



Քսերքսես արքայի
արձանագրությունը
Վանից



Արեւմտյան
գինկորներ



Արշակ I



Արշակ II



Արտաբան I



Արտաբան II



Գոդերձ




Օրոդես II



Հրահատ III



Վաղարշ IV



Աստիորոս II
(Սելևկյան արքա)



Միհրդատ Եփեսոսոր
(Պունտոսի արքա)



Պողոսնոս I
(Եփեսոսի արքա)

Սելևկյան արքաներ



Աստիորոս II Թետոս



Սելևկոս I



Աստիորոս I Ստոկեր



Դանտարիոս I Ստոկեր



Պերգամոն քաղաքի մանրակերտը (ժամանակակից վերակառուցում)



Պերգամոնի թատրոնը

դահակի առաջին կնոջը՝ Անուշին, և ավելի քան մեկ բյուր մար աղջիկներ ու պատանիներ՝ գերիների բազմությամբ, Տիգրանը բնակեցնում է Մասիսի արևելյան կողմում՝ մինչև Գողթնի սահմանները՝ «մինչև հանդեպ անրոցին Նախճասանու»՝ նրանց տալով բազմաթիվ դաստակերտեր և երեք ավաններ՝ Խրամ, Ջուղա և Խորշակունիք։ Խորենացու խոսքերով՝ այս բոլոր առասպելախառը իրադարձությունները պատմվում էին «թուելեաց» երգերում։

Հետաքրքիր է, որ Թովմա Արծրունու հաղորդած մի հին ավանդագրույցի համաձայն՝ Հաքքարիի Ջուլամերկ կամ Ջլմար բնակավայրի անվանումը նույնպես առնչվել է առասպելական Աժդահակի սերնդին. ըստ Վասպուրական աշխարհի պատմագրի՝ Կորճայքի Փոքր Աղբակ գավառի Ջլմար և Սրինգ ամրոցներում իշխում էր մարաց վերջին թագավոր Աժդահակի զարմից մի կին՝ Ջայլամար անունով, որի անունով էր կոչվում ամրոցը. Ջայլամարի դուստր Անուշին կնության առավ Սահակ Արծրունին՝ միաժամանակ նաև տիրանալով կնոջ ընդարձակ կալվածքներին։ Ինչպես երևում է Արծրունու այս տեղեկությունից, Ջահուկ գավառն իր Ջլմար կենտրոնով այդ ժամանակ մտնում էր Փոքր Աղբակի մեջ, այդտեղ էր գտնվում նաև Ջողա լեռը, որոնք բոլորն էլ տեղադրված էին Նիխորական գավառից հյուսիս։ Պատահականություն չէ, որ նույն տեղանունները՝ Ջահուկ/Ճահուկ, Ջողա/Ջուղա/Ճողա, հանդիպում ենք նաև Նախճավանում՝ Խորենացու հաղորդած մարերի վերաբնակեցման պատմության մեջ։

Ցավոք, մարերեն լեզվով ոչ մի արձանագրություն հայտնի չէ, ուստիև մարերենի վերաբերյալ շատ քիչ տեղեկություններ կան։ Բացի անձնանուններից և տեղանուններից՝ մարերեն առանձին բառեր կան պահպանված հունական աղբյուրներում, ինչպես նաև հին պարսկական սեպագիր տեքստերում։ Մարերենի՝ հին պարսկերենի վրա ունեցած ազդեցության մասին գրել են շատ գիտնականներ, այդ թվում՝ Ա. Մեյեն և Է. Բենվենիստը։ Եղած աղբյուրների հիման վրա մարերենի վերականգնման փորձ է արել Մ. Մայրիոֆերը։ Դեռևս Հ. Հյուբշմանը մարերենից փոխառյալ էր համարում *հայ*, *բրինձ*, *պղինձ*, *գանձ* բառերը, որոնց մեջ պարսկերեն ջ-ի դիմաց ունենք ձ։

Վ. Բ. Հենինգը առաջին իրանագետներից մեկն էր, որ մատնացույց արեց հայմարական լեզվական առնչությունները և նշեց դրանց մի հնչյունական օրինաչափության մասին։ Ըստ նրա՝ մարական –ո– հնչյունակապակցությունը հայերենում տվել է –ոշ– (իսկ հետագայում՝ –ոյ–), որից և ունենք հայ. *գանձ*, *զինձ* բառերը։

Ըստ Ա. Փերիխանյանի՝ Արտաշես I-ի մի արամեատառ արձանագրության մեջ, որը գտնվել է Իշխանասարի ստորոտից (Սիսիանից Գորիս տանող ճանապարհին), հանդիպում են մարական բառեր։ Այս սահմանաքարի տեքստի բովանդակությունը բավականին տարբերվում է նախորդներից, այդ իսկ պատճառով էլ ենթադրվում է, որ այն իր վրա կրում է Սյունիքին սահմանակից իրանական երկրամասի՝ Ատրպատականի, այն է՝ Փոքր Մարաստանի լեզվի ազդեցությունը։ Հաշվի առնելով գտնված կոթողապան (ստելա) թվագրման ժամանակաշրջանը՝ դրա լեզուն բնորոշվում է որպես «միջին մարերեն»։

Այս արձանագրության յոթերորդ տողում վկայված բառը թարգմանվում է «հաղթափառ» և ստուգաբանվում միջ. մար. *Vanakafarr ձևով, որն, իր հերթին, ծագում է հին մարերեն *Vanakafarnah- կազմությունից և նշանակում է «հաղթական Ֆառնը կրող»: Հին իրանցիների կրոնում xvarnah- «Ֆառն, Փառք» հասկացությունն ունեցել է առանցքային նշանակություն: Ի դեպ, Կոտեսիասի մոտ վկայված կատիչների արքայի անունը՝ Օναφօրոս, ծագում է հենց *Vana-farnah ձևից, որը հնչյունապես ավելի հեռու է Իշխանասարի արտաշիսյան սահմանաքարի տեքստում արձանագրված մականունից:

Նույն արձանագրության ութերորդ տողում վկայված է գրեթե բարդ բառը, որի առաջին բաղադրիչը գրված է հետերոգրաֆիական փոխանցմամբ, այսինքն՝ նրա փոխարեն դրված է արամեական գաղափարագիր, և ուստի ամբողջ բառը միջ. մար. *tāgabar «թագավոր, թագակիր» կազմությունն է:

Նույն արձանագրության վերջին իններորդ տողում գրված բառը՝ *šrsrt, ծագում է միջ. մար. *axšahasart (իրան. *xšaθra-sarta) «Շահիի հետ միացած» կամ «Շահրով պաշտպանված» կազմությունից:

Մարերենին, ամենայն հավանականությամբ, բնորոշ է եղել նախահավելվածային (պրոթետիկ) a-ի առկայությունը իրանական այն կազմություններում, որոնք սկսվում են բաղաձայններով: Այս օրինաչափությունը հաշվի առնելով՝ հայերենում մարական փոխառություններ են համարվում այն բառերը, որոնք /r/-ից առաջ ունեն /ա/ ձայնավոր, օրինակ՝ արագ (հմմտ. պարթ. rag) «արագ», առասան (հմմտ. պարսկ. rasan) «ձուպան, պարան», արոյր (հմմտ. պարթ. rōd, միջ. պարսկ. rōy) «բրունգ» և այլն, ընդ որում՝ ուշագրավ է, որ այս բառերից շատերը հետագայում փոխառվել են նաև պարթևական համապատասխան ձևերից և ստացել /ե/ նախահավելվածային ձայնավոր՝ երագ – «արագ», երասան «ասնձ» (ինչպես երանգ, Երուանդ, Երուագ բառերում): Նույն օրինաչափությանը հանդիպում ենք Երասխ (Արաքս) գետանվան մեջ, որի մեկ այլ տարբերակը վկայված է «մարական» Արասխ ձևով. այդ գետը հոսում է Ուրմիո ծովակից հարավ՝ սկիզբ առնելով Զարասպ լեռան արևելյան լանջից և թափվելով լիճը. ժամանակին այն կազմում էր համանուն Արասխ գավառի և Մեծ Հայքի հարավային սահմանը:

Արձանագրության վերջին տողում վկայված բառը թարգմանվում է «հաղթափառ» և ստուգաբանվում միջ. մար. *Vanakafarr ձևով, որն, իր հերթին, ծագում է հին մարերեն *Vanakafarnah- կազմությունից և նշանակում է «հաղթական Ֆառնը կրող»: Հին իրանցիների կրոնում xvarnah- «Ֆառն, Փառք» հասկացությունն ունեցել է առանցքային նշանակություն: Ի դեպ, Կոտեսիասի մոտ վկայված կատիչների արքայի անունը՝ Օναφօրոս, ծագում է հենց *Vana-farnah ձևից, որը հնչյունապես ավելի հեռու է Իշխանասարի արտաշիսյան սահմանաքարի տեքստում արձանագրված մականունից:

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Աքեմենյան տերությունը իր ամենաընդարձակ շրջանում ձգվում էր հյուսիսային Բալկաններից մինչև Հնդկաստան, Կովկասյան լեռներից և Կենտրոնական Ասիայի տափաստաններից մինչև Եթովպիա: Տերության սիրտը Պարսքն էր, որը մասամբ համապատասխանում է ներկայիս Իրանի Իսլամական Հանրապետության Ֆարս օստանին: Տարբեր ժամանակներում Պարսքը ներառել է հարևան Քերմանը, Մարվը, արևմուտքում հասել մինչև Պարսից ծոց, հարավում՝ Հորմուզի նեղուց:

Պարսքի տարածքը գերազանցապես բարձրադիր է (միջին բարձրությունը՝ մոտ 1600 մ)՝ ձգված տարբեր կլիմայական գոտիներում, տարեկան տեղումները տատանվում են 200–340 մմ սահմաններում, որոշ հատվածներում՝ ավելի քիչ (Թանգեստան): Շնորհիվ կլիմայական գոտիականության՝ Պարսքն ունի բուսատեսակների հարուստ բազմազանություն: Հնարավոր է զբաղվել երկրագործությամբ: 1200–ից մինչև 1500 մ բարձրության վրա մշակում են արմավենի, մինչև 1600 մ բարձրության վրա աճում է նոնենին, իսկ խաղողագործությամբ հնարավոր է զբաղվել անգամ 2200 մ բարձրություն ունեցող գոտիներում: Մեծ են Պարսքի անասնապահական հնարավորությունները: Ամենայն հավանականությամբ, նրա տարածքն է շումերական աղբյուրներում հանդես գալիս որպես «ձիերի երկիր»: Պարսքում մինչ օրս որոշ ցեղեր վարում են քոչվորական կյանք՝ տեղափոխվելով տեղից տեղ հաճախ մինչև 300 կմ, նրանց հիմնական զբաղմունքը անասնապահությունն է: Պարսքի տարածքը հարուստ է օգտակար հանածոներով, հատկապես՝ մետաղահանքերով:

1. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Աքեմենյան տերությանը վերաբերող գրավոր վկայությունները բազմաթիվ են և հարուստ: Այն առանձնանում է նաև սեփական՝ Աքեմենյան սեպագիր դպրության թողած գրավոր մշակույթի հարուստ ժառանգությամբ: Աքեմենյան սեպագիր տեքստերը կազմվել են հին իրանական ենթախմբի երկու լեզուներից մեկով՝ հին պարսկերենով: Այս լեզուն արձանագրություններում հանդես է գալիս «արիերեն» անունով (ariyā): Աքեմենյան սեպագիր գրահամակարգը կազմվել է՝ հին պարսկերենի հնչյունական օրինաչափություններից ելնելով: Այս գրահամակարգի հնագույն օրինակները վերաբերում են Ք. ա. VI դ. վերջին քառորդին և կիրառվել են ընդհուպ մինչև Ք. ա. IV դ. երրորդ քառորդը:

Աքեմենյան սեպագիր արձանագրությունները հիմնականում ծագում են Պարսից, Էլամից և Մարաստանից (Սուսա, Պերսեպոլիս, Պասարգադը, Բեհիսթուն, Նախշ-է Ռոստեմ, Էկբատանա/Համադան): Արձանագրությունները զլխավորա-

պես վիճազիր են՝ արձանագրված ժայռերի, պատերի կամ քարե խարխուսների վրա: Զգալի թիվ են կազմում ոսկե և արծաթե թիթեղների վրա գրված տեքստերը, արձանագիր առարկաները (կենցաղային իրեր, զենքեր ևն) և կնիքները: Վերջիններիս առավել մեծ քանակը հայտնաբերվել է Դասկիլեյա քաղաքից (ժաման. Էրեղլի)՝ Աքեմենյան տերության փոքրասիական Փոյոզիա սատրապության երբեմնի կենտրոնից: Հին պարսկերեն սեպագիր տեքստերից մինչ օրս հայտնի է մոտ 200-ը:

Աքեմենյան տեքստերը հիմնականում կաղապարային բնույթի՝ գերազանցապես եռալեզու (հին պարսկերեն, բաբելերեն և էլամերեն), սակավ՝ քառալեզու (նաև հին եգիպտերեն) հանդիսավոր արձանագրություններ են: Բացառություն է կազմում Դարեհ I-ի Բեհիսթունի եռալեզու արձանագրությունը, որի միայն հին պարսկերեն տեքստը կազմում է 515 տող: Կարևոր պատմական տեղեկություններ են պարունակում Աքեմենյան արքաների՝ Նախշ-ե Ռոստեմի վիճակորդ դամբարաններին կից գրված տեքստերը, Քսերքսես I-ի կրոնաքաղաքական բովանդակությամբ տեքստերը Պերսեպոլիսից և Պասարգադքից: Մեզ հասած տեքստերի հիմնական զանգվածը կազմվել է Դարեհ I-ից Քսերքսես I-ն ընկած շրջանում: Արտաքսերքսես I-ից սկսած՝ դրանց քանակը կտրուկ նվազում է: Աքեմենյան սեպագիրը լայն կիրառություն չունի և աստիճանաբար դուրս մղվեց գործածությունից: Առօրյա գրագրության համար օգտագործում էին այլ գրահամակարգեր, և պատահական չէ, որ առկա է Ք. ա. 500 թ. սահմաններում կազմված ընդամենը մեկ սեպագիր աղյուսակ՝ գրված հին պարսկերենով:

Իրանական ցեղերի վաղ պատմության և Աքեմենյան տերության կազմավորման դարաշրջանի լուսաբանման համար բացառիկ կարևորություն ունեն ասուրա-բաբելոնյան աղբյուրները, որոնցից առանձնանում են Ք. ա. VII դ. ասորեստանյան արքաներ Սինախներիթի և Աշշուբանասայալի արձանագրությունները: Ասուրա-բաբելոնյան աղբյուրներից հայտնի են իրանական մեծաթիվ անձնանուններ, դիցանուններ և տեղանուններ: Կարևոր տեղեկություններ են պահպանել Նոր բաբելոնյան դարաշրջանի արքայական արձանագրությունները, որոնց շարքում առանձնանում են բաբելոնյան արքա Նարոնիդի «ժամանակագրությունները»: Բաբելոնիայից հայտնի են նաև աքքադերենով գրված Կյուրոս II-ի մի քանի արձանագրություններ:

Աքեմենյանների կողմից նվաճվելուց հետո Բաբելոնիայում շարունակվում էր կիրառվել սեպագիր գրահամակարգը: Մեզ են հասել տարբեր քաղաքներում կազմված հազարավոր տեքստեր, որոնց հրատարակությունը կամ վերախմբագրումը շարունակվում է մինչ օրս: Օրինակ՝ հատկապես մեծաքանակ են բաբելոնյան խոշոր վաճառական տներից Մուրաշու և Էգիթի ընտանիքների թողած գրագրությունները, մատյաններն ու առևտրական գործարքների արձանագրումները:

Երրորդ կարևոր խումբը էլամական աղբյուրներն են: Էլամերենով կազմվել են ոչ միայն հանդիսավոր բնույթի արձանագրություններ, այլև այն կիրառվել է որպես պաշտոնական գրագրության լեզու: Նման օրինակներ են նաև, հավանաբար, Հայաստանի Արմավիր հնավայրից հայտնաբերված էլամերեն տեքստերը: Էլամական արձանագրությունների հիմնական զանգվածը ծագում է Սուսայից և Պերսեպոլիսից: Սուսայի արխիվը (մոտ 300 տեքստ) գերազանցապես վերաբերում է նոր էլամական դարաշրջանի ուշ փուլին և վաղ Աքեմենյան շրջանին: Աքեմենյան դարաշրջանում

կազմված էլամական խոշորագույն արխիվը հայտնաբերվել է Պերսեպոլիսից: Դրանք հիմնականում տնտեսական բնույթի փաստաթղթեր են և արքունի պաշտոնյաների գրագրություններ: Այդ տեքստերում պահպանված իրանական միայն անձնանունների թիվը կազմում է մոտ երկու հազար:

Հին պարսկերենը երբևէ չդարձավ *lingua franca*: Որպես այդպիսին ծառայում էր այսպես կոչված «տերունական» կամ «պաշտոնական արամեերենը»: Արամեերենը նման դերակատարում ուներ դեռևս ասորեստանյան տերության մեջ, ապա փոխանցվեց Նոր բաբելոնյան տերությանը և շարունակեց իր դերակատարումը ևս մոտ 1500 տարի:

Աղբյուրների հաջորդ խումբը արամեական տեքստերն են: Աքեմենյան դարաշրջանում կազմված արամեերեն տեքստերը՝ գրված գլանափաթեթների վրա, մեծավ մասամբ պահպանվել են Եգիպտոսում: Մի քանի հարյուրի հասնող տեքստերի մեծ մասը հայտնաբերվել է Էլեֆանտինայի ռազմական ճամբարի տարածքից և Սաքքարայից (Մեմֆիս): Դրանք ընդգրկում են ինչպես հանդիսավոր բնույթի արձանագրություններ (օրինակ՝ Բեհիսթունի արձանագրության արամեերեն տարբերակը), այնպես էլ վերաբերում են առօրյա կյանքի տարբեր ոլորտների: Արամեերեն տեքստեր են հայտնաբերվել Պերսեպոլիսից, Փոքր Ասիայից (Սարդես, Դասկիլեյա, Արեքսուն), Պաղեստինից (Սամարիա) ևն: Տերության մեջ արամեերենով է իրականացվել արքունի գրագրության ճնշող մասը: Սատրապական դրամների մի մասը ևս կրել է արամեերեն արձանագրություններ: Պահպանվել են ինչպես արամեատառ արձանագրություններ՝ գրված հին պարսկերենով, այնպես էլ հայտնի են արամեերենով գրված սեպագիր տեքստեր:

Աքեմենյան տերության պատմության աղբյուրների առանձին խումբ են կազմում եգիպտական արձանագրությունները: Առկա են նաև Դարեհ I-ին պատկանող շինարարական բնույթի արձանագրություններ: Աքեմենյան շրջանի Եգիպտոսի պատմության անցքերը լուսաբանվել են եգիպտական արձանագրություններում, որոնց զգալի մասը գրված է դեմոթական գրով:

Աքեմենյան տերության մեջ օգտագործվել է նաև հունարենը որպես պաշտոնական հաղորդակցության միջոց: Աքեմենյան արքունիքում կային հույն դպիրներ, լայնորեն տարածված էին փոքրասիական սատրապների հատած դրամները՝ հունարեն մակագրություններով:

Շնորհիվ հունական աշխարհի հետ անմիջական հարևանության՝ Աքեմենյան տերությունը մշտապես գտնվել է հունահռոմեական պատմագրության ուշադրության կենտրոնում: Հույն և հռոմեացի հեղինակներից առանձնանում են Հեկատոս Միլեթցու, Հերոդոտոսի, Կտեսիասի, Թուկիդիդեսի, Քսենոփոնի, Թեոպոմպի, Ստրաբոնի, Դիոդորոսի, Պոմպեոս Տրոգոսի և այլոց գործերը, որոնք ամբողջությամբ կամ մասնակի նվիրված են Աքեմենյան տերության պատմությանը: Այս խմբին են պատկանում նաև օտարագրի, սակայն հունարենով գրած պատմիչները, ինչպիսիք են Բերոսոսը և Մանեթոնը:

Հին իրանցիների հոգևոր ընկալումների, սոցիալական հարաբերությունների կարևորագույն աղբյուր է Ավեստան: Պատմական բնույթի բազում տեղեկությունների կարելի է հանդիպել «Աստվածաշնչում»: Դրանց շարքում է, օրինակ, Կյուրոսի հրամանագիրը՝ հրեաներին Երուսաղեմ վերադարձնելու մասին:

Աքեմենյան տերության պատմությանը և մշակույթին նվիրված են հազարավոր արժեքավոր ուսումնասիրություններ¹, որում խոշոր ավանդ ունեն Ա. Օլմսթեդը, Է. Հերցֆելդը, Գ. Քամերոնը, Ռ. Գիրշմանը, Մ. Դանդամանը, Պ. Բրիանը, Ի. Դյակոնովը, Պ. դե Միրոշչեֆին, Է. Գրանտովսկին, Մ. Մայրիոֆերը, Ռ. Ցադոկը (Իրանի պատմություն, պատմական աշխարհագրություն, էթնիկ խնդիրներ), Ջ. Քամերոնը, Է. Հերցֆելդը, Ռ. Քենթը, Վ. Հինցը և այլք (աղբյուրների հրատարակություններ և աղբյուրագիտական ուսումնասիրություններ), Բ. Պորտենը, Մ. Դանդամանը, Պ. Բրիանը, Վ. Լուկոնինը և այլք (սոցիալ-տնտեսական և հասարակական հարաբերություններ): Հին պարսկերենի ուսումնասիրության ուղղությամբ անգնահատելի ծառայություններ են մատուցել Ռ. Քենթը, Ա. Մեյեն, Է. Բենվենիստը, Վ. Հինցը, Մ. Մայրիոֆերը, Վ. Բրանդենշտայնը, Ֆ. Վալան, Ռ. Շմիդտը և այլք²:

Աքեմենյան Իրանի արվեստի, մշակույթի, տարբեր մշակույթների փոխազդեցության ուսումնասիրության ուղղությամբ աշխատանքներ են իրականացրել Ռ. Գիրշմանը, Է. Պորտենը, Կ. Նիլանդերը, Վ. Լուկոնինը, Պ. Կավմեյերը, Է. Ակուրգալը և այլք: Աքեմենյան դարաշրջանի հուշարձաններն ու նյութական մշակույթն ուսումնասիրել են Է. Հերցֆելդը, Ռ. Գիրշմանը, Դ. Ստրոնախը, Լ. Վանդեն Բերգը, Մ. Ռոֆը և այլք: Բազում ուսումնասիրություններ են իրականացվել՝ նվիրված հին իրանական կրոնին՝ Է. Հերցֆելդ, Հ. Նյուբերգ, Ռ. Ֆրայ, Վ. Հենինգ և այլք: Հայ իրանագետները նույնպես զգալի ավանդ ունեն Աքեմենյան դարաշրջանի պատմության և մշակույթի ուսումնասիրության հարցում:

2. ՆԱՆԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Իրանական ցեղերի՝ Իրանական բարձրավանդակ մուտք գործելու ճշգրիտ ժամանակը հայտնի չէ: Ամենավաղ թվագրությունը, որն առաջարկվել է Իրանական բարձրավանդակ այդ ցեղերի մուտքի համար, Ք. ա. 1600 թվականն է: Այս թվագրումն առաջարկվել է՝ հիմքում ունենալով տեղի էլամական քնակավայրերի կտրուկ անկումը, ինչը կարող էր պայմանավորված լինել տարածք նոր էթնիկ խմբերի ներթափանցմամբ: Վերջիններիս մեջ տեսնում են «հիպոթետիկ վաղ պարսիկների»:

Ք. ա. մոտ 1000 թ. սահմաններում էլամական երբեմնի խոշորագույն Անշան քաղաքն ու հարակից քնակավայրերը վերջնականապես լքվում են: Այս փաստը հիմք

ընդունելով՝ հիշյալ թվականն ընդունվում է որպես Անշանում պարսկական ցեղերի լուրջ ներկայության հետևանք, որը պարտադրել է նաև իր կենսակերպը՝ քաղաքային կյանք չենթադրող քոչվորություն: Որպես Իրանական բարձրավանդակ պարսկական ցեղերի մուտքի ստորին սահման առաջարկվում է Ք. ա. 850 թ.:

Ինդիկներ են առկա նաև Պարսքում առաջին պարսկական բնակավայրերի նույնականացման և դրանց ի հայտ գալու ժամանակաշրջանի հետ կապված: Առաջարկված թվագրումները տատանվում են Ք. ա. VIII դ. ընդհուպ մինչև VI դ.: Այս շրջանով թվագրվող ոչէլամական կոթողային կառույցներ հայտնի չեն, ինչը կարող է կապված լինել պարսկական ցեղերի կիսաքոչվոր կենցաղավարման հետ: Ըստ Հերոդոտոսի՝ պարսկական տասը ցեղերից վեցը հողագործ էին, չորսը՝ անասնապահ քոչվորներ: Ենթադրվում է, որ Աքեմենյան առաջին արքաներն իրականում անասնապահությամբ և մասամբ երկրագործությամբ զբաղվող ցեղերի առաջնորդներ էին, ինչպես նախկինում մարական «տերությունը»:

Դեռևս անցյալ դարի սկզբներից Աքեմենյան Իրանի վաղ պատմությանը վերաբերող աշխատանքներում գերակշռում է Ուրմիա լճի ավազանը որպես պարսկական ցեղերի բնօրրան դիտելու տեսակետը: Պարսումաշ երկրի հիշատակությունը ասորեստանյան Ք. ա. VII դ. աղբյուրներում՝ երբեմնի էլամական Անշան երկրի տարածքում կամ մերձավորությամբ, թույլ է տվել ենթադրել պարսկական ցեղերի գաղթ մերձուրմյան ավազանից դեպի հետագայի Պարսք Ք. ա. 800–600 թթ. ընթացքում: Սակայն նման գաղթ ոչ սեպագիր աղբյուրներում, ոչ էլ հնագիտորեն վկայված չէ, իսկ այս տեսակետը ծագել է Բարշուա/Պարսուա երկրի զուտ անվանական նմանությունից և դրա՝ Ուրմիա լճի ավազանում տեղորոշելու հնարավորությունից: Այնինչ Բարշուա/Պարսուա երկիրը գտնվել է Կենտրոնական Զագրոսներում և, բացի անվանական նմանությունից, ամենայն հավանականությամբ որևէ կապ չի ունեցել Պարսումաշ/Պարսքի հետ:

Պարսումաշ/Պարսք երկրանունը հավանաբար զուգահեռ է հին հնդկերեն *pārsva-*ին, որ նշանակում էր «հարևան/սահմանային շրջան», «անմիջական հարևանող»: Այս անունը ստացել են դեպի Իրանական բարձրավանդակ հնդիրանական ցեղերի տեղաշարժի առաջին ալիքի կրողները: Ըստ այդմ՝ «պարսիկ» տերմինը նշանակել է «նվաճողների (արիացիների) առաջապահ խմբի անդամ», «առաջամարտիկ»: Ի դեպ, Աքեմենյան արքաները բազմիցս են շեշտում իրենց՝ «արիական» ընդհանուր էթնիկ աշխարհի մաս կազմելու մասին, ինչպիսին է, օրինակ, հին պարսկերեն արձանագրություններում հաճախ հանդիպող «...պարսիկ, պարսիկի որդի, արիացի, արիական ցեղից» ձևակերպումը:

3. ՅԵՂԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՄԻՆԶԵՎ ՏԵՐՈՒԹՅՈՒՆ

Իրանական բարձրավանդակում հաստատված պարսկական տարակազմ ցեղերի շարքում աքեմենյան տոհմի՝ գերիշխանության հասնելու ճշգրիտ ժամանակը նույնպես հայտնի չէ: Ենթադրվում է, որ Աքեմենյաններն առաջատար դիրքեր ունեին արդեն Ք. ա. IX դ. վերջերին, չնայած այդ մասին փաստացի տվյալներ չկան:

¹ Cameron G.G., History of Early Iran, Chicago, 1936; Olmstead A.T., History of the Persian Empire, Chicago, 1948; Ghirshman R.D., Persia from the Origins to Alexander the Great, London, 1964; Herzfeld E., The Persian Empire. Studies in Geography and Ethnography of the Ancient Near East, Wiesbaden, 1968; Дандамаев М.А., Иран при первых Ахеменидах, Москва, 1963; Дандамаев М.А., Политическая история Ахеменидской державы, Москва, 1985; Briant P., From Cyrus to Alexander: A History of the Persian Empire, Winona Lake, 2002; Cook J.M., The Persian Empire, London – Melbourne – Toronto, 1983; Curtis J., Ancient Persia, London, 2000; Allen L., The Persian Empire, London, 2005 և այլն:

² Meillet A., E. Benveniste, Grammaire du vieux-perse, Paris, 1931; Kent R.G., Old Persian. Grammar, Texts, Lexicon, New Haven, 1953; Brandenstein W., M.Mayrhofer, Handbuch des Altpersischen, Wiesbaden, 1964; Hinz W., Altiranische Sprachgut der Nebenüberlieferungen, Wiesbaden, 1975; Schmitt R., Old Persian. - In: Woodard R.D. (ed.), The Cambridge Encyclopedia of the World's Ancient Languages, Cambridge, 2004, 717ff. և այլն:

Ասորեստանյան արքա Սինախների արձանագրությունները, ներկայացնելով Էլամա-բաբելոնյան դաշինքի դեմ Ք. ա. 691 թ. արքայի ձեռնարկած արշավանքն ու խալուվի ճակատամարտի դրվագները, Էլամի արքայի մի շարք դաշնակիցների թվում հիշատակում են նաև Պարսումաշ և Անշան երկրները: Աշուրբանապալը Ք. ա. 646 թ. Էլամի նկատմամբ ձեռք բերած վճռական հաղթանակից հետո հիշատակում է ոմն Կուրաշի կողմից Նինվե ուղարկված դեսպանության մասին, որը ժամանել էր Պարսումաշ երկրից:

«Կուրաշը՝ Պարսումաշ երկրի արքան, լսելով իմ հզոր հաղթանակի մասին, որին ես հասա Աշուրի, Բելի և Նաբուի՝ մեծ աստվածների, իմ տերերի հետ միասին Էլամի նկատմամբ, (և որ) ես ինչպես հեղեղ խորտակեցի Էլամ երկիրը, Արուկլուին՝ իր ավագ որդուն, իր տուրքի հետ միասին նա ուղարկեց Նինվե՝ իմ տերունական քաղաքը, և խնդրեց իմ տիրապետությունը»:

Ընդունված է կարծել, որ Կուրաշը Աքեմենյան առաջին արքաներից էր՝ Կյուրոս I-ը (Ք. ա. մոտ 650–600 թթ.): Էլամի ջախջախումից հետո նա ընդունել է Ասորեստանի գերիշխանությունը և Ասորեստան որպես պատանդ ուղարկել իր որդի Արուկլուին: Կյուրոսին հաջորդել է Կամբիզ I-ը (մոտ Ք. ա. 600 թ. մինչև 559 թ.), որը մարական արքա Աստյուագեսի դստեր ամուսինն էր և գտնվել է մարական գերիշխանության տակ: Կյուրոս I-ը և Կամբիզ I-ը հիշատակվում են հետագայում Կյուրոս II-ի կողմից՝ որպես իր անմիջական նախորդներ: Այս արքաների պատկանելությունը Աքեմենյան տոհմին նախկինում կասկած չէր հարուցում:

Աղբյուրները (Կյուրոս II-ի «Բաբելոնյան գլանը» և Աքեմենյան տոհմից Դարեհ I-ի Բեհիսթունի արձանագրությունը) մատնանշում են երկու տարբեր արքայացանկեր: Կյուրոսի արձանագրությունը հայտնում է.

«... Կյուրոս, որդին Կամբիզի՝ մեծ արքայի, Անշան (քաղաքի) արքայի, թողը Կյուրոսի՝ մեծ արքայի, Անշան (քաղաքի) արքայի, ծոռը Չիշպիշի՝ մեծ արքայի, Անշան (քաղաքի) արքայի»:


Այլ է պատկերը Դարեհ I-ի մոտ: Վերջինս հայտնում է.


«Իմ հայրն էր Վշտասպը, Վշտասպի հայրն էր Արշամը, Արշամի հայրն էր Արիարամնեւը, Արիարամնեւի հայրն էր Չիշպիշը, Չիշպիշի հայրն էր Աքեմենը»:

Գրականության մեջ որպես իրական ընդունվում էր կա՛մ մեկը, կա՛մ մյուսը՝ կապված այն հանգամանքի հետ, որ Կյուրոսի արքայացանկն ավարտվում է Չիշպիշով. Աքեմենյան տոհմի նախահայր Աքեմենին նա չի հիշատակում, այն դեպքում, երբ Դարեհի մոտ Չիշպիշը Աքեմենի որդին էր: Ենթադրվել է, որ Կյուրոսը ներկայացրել է Աքեմենյանների երկու ճյուղավորումներից մեկը, որով նա և Դարեհը դառնում էին հեռավոր ազգականներ:

Երկու արքայատների ծագումը Աքեմենից՝ նրանից սերելով Կյուրոսի նախնի Չիշպիշին, իրականում չունի պատմական հենք և ամենայն հավանականությամբ արվել էր քաղաքական նկատառումներով՝ Դարեհի կամքով: Այս առումով Բաբելոնից գտնված Կյուրոս II-ի արձանագրությունը, որում նա իրեն համարում էր «Աքեմենյան», կարող էր կազմված լինել հետագայում՝ Դարեհի օրոք: Այս միտումը շա-

ՊԱՐՍԱԿԱՆ ԿՅՈՒՐՈՍ





րունակվեց Դարեհի հաջորդների կողմից: Հայտնի են հին պարսկերեն տեքստեր, որոնք իբր կազմվել էին Դարեհի նախնիներ Արշամի և Արիարամնեսի կողմից: Այդ տեքստերում վերջիններս հանդես են գալիս «մեծ արքա, արքայից արքա, Պարսքի արքա» տիտղոսներով՝ կարծես հավաստելով Դարեհի խոսքերն իր՝ իբր արքաների ընտանիքի պատկանելու մասին: Մինչդեռ պարզվել է, որ դրանք իրականում կեղծ էին և կազմվել են ուշ արքեմենյան շրջանում:

Նման դրսևորումները թույլ են տալիս ենթադրել, որ Դարեհ I-ի գահ բարձրանալով իրականում նախորդ արքայատոհմի ժառանգական իշխանությունը վերացել է, և տերության մեջ հաստատվել է Արքեմենյան տոհմի բռնապետությունը:

Համաժամանակյա սեպագիր աղբյուրներից Աշշուրբանապալի վերոհիշյալ տեքստը Կուրաշին միանշանակ համարում է Պարսումաշի արքա: Կուրաշ անունը հանդես է գալիս նաև Պերսեպոլիսի տեքստերում, որոնցից երկուսը կնքված են «անշանցի Կուրաշի՝ Շեշպեշի որդու» (Չիշպիշի որդի Կյուրոսի) կնիքով: Վերջինս կարող էր լինել Կյուրոս I-ը, բայց հազիվ թե Աշշուրբանապալի հիշատակած «Պարսումաշի արքա Կուրաշը»: Ըստ այդմ՝ Պարսումաշ և Անշան երկրների նույնական լինելու հնարավորությունը ևս թեական է: Այլ պարագայում պետք է ընդունել, որ Կյուրոս II-ին նախորդած երկու արքաները միասին կառավարել են առնվազն 90 տարի, ինչը քիչ է հնարավոր: Կյուրոս I-ը կառավարել է Ք. ա. մոտ 610-585 թթ.: Վերջինս, ըստ այդմ, չէր նույնանում «Պարսումաշի արքա» Կուրաշին:

Կյուրոս II-ի մոտ ևս Կուրաշը՝ Չիշպիշի որդին, անվանված է «Անշանի արքա»: Այս բնորոշումը համահունչ է Պերսեպոլիսի տեքստերի տվյալներին: Ինքը՝ Կյուրոս II-ը, բարեխոնյան արքա Նարոնիդի արձանագրություններում նույնպես հանդես է գալիս որպես Անշանի արքա: Փաստորեն, Կյուրոսի արքայատոհմը կրում էր «Անշանի արքա» տիտղոսը: Կյուրոսն ուներ պարսկական ծագում, թեև, հավանաբար, կրում էր էլամական անուն: Կուրաշ անունը տարածված էր էլամական աշխարհում: Ընդհանրապես, Կյուրոսի պետությունը, գտնվելով երբեմնի էլամի մի հատվածում, ենթարկվել էր էլամականացման:

Կյուրոս II-ը Անշանի արքա հռչակվեց Ք. ա. 559/558 թ. սահմաններում՝ հաջորդելով հորը՝ Կամբիզ I-ին: Ըստ անտիկ աղբյուրների՝ նա մայրական գծով Աստյուագեսի թոռն էր: Այս նույն աղբյուրները Կյուրոսին են վերագրում մայրաքաղաք Պասարգադքի կառուցումը: Կյուրոս II-ի՝ պատմության թատերաբեմ իջնելը կապված էր Բաբելոնիայի և Մարաստանի միջև սկիզբ առած թշնամանքի հետ, որում ներգրավվեց նաև Անշանը: Այդ թշնամանքը հանգուցալուծվեց Ք. ա. 550 թ. Կյուրոսի կողմից մարերին ջախջախելու շնորհիվ, երբ մարական արքա Իշտուամեգուն (Աստյուագես) գերվեց:

Ք. ա. 550 թ. հետո Կյուրոսը զբաղվեց պետության ընդարձակմամբ՝ իր գերիշխանությունը հաստատելով Իրանական բարձրավանդակի մեծ մասի վրա: Ըստ անտիկ պատմագրության՝ Կյուրոսի իշխանությունը ձանաչեցին «մարական տերության» կազմում գտնվող երկրները, մասնավորապես՝ Հիրկանիան և Պարթևաստանը: «Բարեխոնյան ժամանակագրությունը» այս ընթացքում Կյուրոսին հիշում է միայն մեկ անգամ՝ Ք. ա. 547 թ., Հայաստան արշավելիս:

«Նիսասան (I) ամսին Կուրաշը՝ Պարսու երկրի արքան, իր գործը հավաքեց և անցավ Տիգրիսը Արբա՛ից ցած: Այար (II) ամսին նա [արշավեց] դեպի Ուրաշտու (երկիր)...], պարտության մատնեց նրա արքային, վերցրեց նրա ունեցվածքը, հաստատեց իր կայազորն այնտեղ [...]: Այնուհետ արքան և իր կայազորը մնացին այնտեղ»:

Արշավանքի արդյունքների մասին տվյալները սուղ են, սակայն այն փաստը, որ Կյուրոսի որդի Թանաոքսարեսը հիշատակվում է որպես Հայաստանի սատրապ, հիմք է տալիս արշավանքին դրական արդյունք վերագրելու համար:

Հայաստան ձեռնարկված արշավանքի նորահայտ փաստը մեզ ստիպում է վերաբնականին նաև Կյուրոսի փոքրասիական արշավանքն ու Լիդիայի նվաճումը, որն ընդունված է թվագրել Ք. ա. 547 թ.: Ըստ Հերոդոտոսի՝ պատերազմի նախաձեռնությունը պատկանում էր Լիդիայի արքա Կրեսոսին: Սակայն դեպի Կապադովկիա նրա արշավանքն ավարտվեց անարդյունք: Սարդես նահանջած Կրեսոսի բանակը քաղաքի մոտ ջախջախվեց, քաղաքը գրավվեց, իսկ Կրեսոսը գերվեց: Պատրվակ բերելով Սարդեսում ծագած հակապարսկական ապստամբությանը հոնիական պոլիսների աջակցությունը՝ պարսիկները գրավեցին վերջինները: Հնագանդեցվեցին նաև լիդիացիները, իսկ Ք. ա. 543 թ.՝ Կիլիկիայի թագավորությունը: Փոքր Ասիան անցավ պարսիկներին: Հունական պոլիսները, թեև պահպանեցին ներքին ինքնավարությունը, սակայն պարտավոր էին վճարել հարկեր, կատարել ռազմական պարհակներ:

Ք. ա. 545–539 թթ. ընթացքում Կյուրոսը նվաճեց արևելաիրանական մի շարք երկրներ՝ Դրանգիանան, Մարգիանան, Խորեզմը, Սոգդիանան, Բակտրիան, Արախոսիան և Գանդիարան (ներկայիս Աֆղանստանի, Պակիստանի և Հնդկաստանի տարածքներում): Ճշգրիտ հայտնի չէ Էլամի նվաճման ժամանակաշրջանը: Ենթադրվում է, որ Էլամը կարող էր նվաճվել մարերի նկատմամբ Կյուրոսի ձեռք բերած հաղթանակի շրջանում՝ Ք. ա. 549 թ.:

Ըստ բաբելոնյան ժամանակագրության՝ Ք. ա. 539 թ. պարսկական բանակը ներխուժեց Բաբելոնիա: Կյուրոսը Բաբելոնիայում աջակիցներ ուներ: Դրանցից առաջինը քրմության մի հատվածն էր, որը դժգոհ էր Բաբելոնիայի արքա Նաբոնիդի վարած կրոնական քաղաքականությունից: Իսկ պարսկական նվաճումների արդյունքում Բաբելոնիայի հայտնվելը փաստացի շրջափակման մեջ մեծ վնաս էր հասցնում առևտրական խավի շահերին, որը նույնպես վերածվեց ընդդիմադիր ուժի:

Ք. ա. 539 թ. Կյուրոսը ձեռնամուխ եղավ Բաբելոնիայի նվաճմանը: Շարժվելով Միջագետքը Իրանական բարձրավանդակին կապող «Խորասանյան մեծ ճանապարհով»՝ նա մտավ բաբելոնյան Գուտիում նահանգ: Վերջինիս կառավարիչ Ուգբարուն (անտիկ աղբյուրների Գոբրիաս) անցավ Կյուրոսի կողմը:

Հայտնվելով պարսկական ներխուժման փաստի առջև՝ Նաբոնիդը Բաբելոն տեղափոխեց աստվածների արձանները: Արքայազն Բել-շար-ուծուրի գլխավորած բանակը պարսկական զորքերին հանդիպեց Օպիս քաղաքի մոտ: Ճակատամարտում բաբելոնցիները կրեցին ջախջախիչ պարտություն, իսկ արքայազնը գերի ընկավ: Օպիսի բնակիչներն ապստամբեցին Նաբոնիդի դեմ, իսկ կարճ ժամանակ

անց Օպիսը հայտնվեց պարսիկների ձեռքին: Այդ հաղթանակը հնարավորություն տվեց Կյուրոսին շրջանցելու Նաբուգոդոնոսոր II-ի օրոք կառուցված շուրջ 150 կմ երկարությամբ ամրությունների շղթան, որն իր մեջ էր պարփակում խոշորագույն քաղաքներ Սիպպարը, Բորսիպպան, Քութան և Բաբելոնը, ու շարժվել ամրաշրջափ հանգուցային կետերից Սիպպար: Սիպպարի պաշտպանությունը գլխավորում էր անձամբ բաբելոնյան արքան:

Նաբոնիդին չհաջողվեց շտկել իրավիճակը: Կայազորը չդիմադրեց, և նա ստիպված էր փախչել: Երկու օր անց Ուգբարուի բանակը առանց մարտերի մտավ Բաբելոն: գերեվարվեց նաև Նաբոնիդը: «Բաբելոնյան ժամանակագրությունը» հայտնում է, որ տիրելով երկրին՝ Կյուրոսը բաբելոնյան քաղաքներ վերադարձրեց մայրաքաղաք տարված աստվածների արձանները, իսկ Բաբելոնիայի կառավարիչ նշանակեց Ուգբարուին:

Նաբոնիդի ճակատագրի մասին բաբելոնյան աղբյուրները ոչինչ չեն հայտնում: Ըստ Բերոսոսի՝ Կյուրոսը խնայել էր Նաբոնիդի կյանքը և նրան ուղարկել պատվավոր աքսորի՝ նշանակելով հեռավոր Կարմանիայի (ներկայիս Քերմանը) կառավարիչ: Կյուրոսն այլ կերպ վարվեց արքայազն Բել-շար-ուծուրի հետ, որը ենթարկվեց մահապատժի:

Բաբելոնի անկումով Միջագետքը հայտնվեց պարսիկների իշխանության տակ: Կյուրոսը պահպանեց Բաբելոնիայի թագավորությունը՝ այն անձնական ունիայով միացնելով իր տերությանը: Նա սկսեց կրել «Բաբելոնի արքա, քազմաց արքա» տիտղոսը: Բաբելոնյան պաշտոնեությունը պահպանեց իր տեղը, քրմությունը ազատ գործելու հնարավորություն ստացավ: Բաբելոնիան վերածվեց Կյուրոսի տերության մի հատվածի, իսկ Բաբելոնը դարձավ արքայի նստավայրերից մեկը: Ք. ա. 538 թ. Բաբելոնի արքա հռչակվեց Կյուրոսի որդի Կամբիզը:

Բաբելոնիայի նվաճմանը հաջորդած ինչ-որ մի շրջանում պարսկական տիրապետությունը հաստատվեց նաև բաբելոնյան տերության միջերկրածովյան հատվածում: Ք. ա. 535 թ. ստեղծվեց Միջագետքն ու «Գետից անդին» կոչվող երկրամասն ընդգրկող նոր սատրապություն: Իր արձանագրություններից մեկում Կյուրոսը հիշատակում է «պալատներում բնակվող» և «վրանաբնակ» արքաների, որոնք ընծաներ են մատուցել իրեն: Ենթադրվում է՝ արձանագրությունը նկատի է ունեցել փյունիկյան քաղաք-պետությունների արքաներին և արաբական ցեղերի առաջնորդներին: Նույն տեղում խոսվում է «Վերին ծովից Ստորին ծով» կամ «Արևմուտքի բոլոր արքաների» կողմից ընծաներ ստանալու մասին: Թերևս արդեն Կյուրոսի օրոք պարսկական տիրապետությունը տարածվում էր մինչև Միջերկրական ծով: Երկիրը բաժանվեց վարչատարածքային միավորների՝ սատրապությունների: Կյուրոս II-ի արշավանքների արդյունքում կազմավորվեց ընդարձակ տերություն:

Այնուհետև Կյուրոսը վճռեց արշավել հյուսիս-արևելք՝ ընդդեմ կենտրոնասիական քոչվոր ցեղերի՝ մասսագետների: Ենթադրվում է, որ արշավանքը միտված էր կանխարգելելու քոչվորների ավարառուական արշավները և ամրապնդելու տերության հյուսիսարևելյան սահմանները եգիպտական արշավանքի նախօրին:

Ք. ա. 530 թ. Կյուրոսը շարժվեց դեպի Կենտրոնական Ասիա: Արաքս (Յաքսարտես՝ ներկայիս Սիրդարյա) գետի ափին տեղի ունեցած ճակատամարտում պարսկական բանակը ջախջախվեց, զոհվածների թվում էր նաև Կյուրոսը: Կյուրոսը թաղվեց հայրենիքում՝ Պասարգադքում, ուր պահպանվել է նրա դամբարանը: Կյուրոսին հաջորդեց նրա որդի Կամբիզ II-ը (Ք. ա. 529-522 թթ.): Գահ բարձրանալով՝ նա չփորձեց կրկնել Կյուրոսի արշավանքը դեպի Կենտրոնական Ասիա: Դրա փոխարեն նա սկսեց նախապատրաստվել Եգիպտոսի նվաճմանը: Կենտրոնանալով Պաղեստինում և համալրվելով փյունիկյան, կիպրոսյան և Սամոս կղզու տիրան Պոլյուկրատեսի ուղարկած նավերով՝ Կամբիզի բանակը Ք. ա. 525 թ. շարժվեց դեպի Եգիպտոս:

Եգիպտոսում այս շրջանում կառավարում էին 26-րդ (Սաիսյան) արքայատոհմի փարավոնները, որոնց օրոք երկիրը ծաղկում էր ապրում: Թեև Եգիպտոսի փորձը՝ տիրելու ասորեստանյան ժառանգությանը, ավարտվեց անհաջողությամբ, սակայն սաիսյան փարավոնները ի գործու եղան կասեցնելու Եգիպտոս ուղղված բաբելոնյան արշավանքները: Եգիպտոսը դաշնակցային հարաբերություններ ուներ Բաբելոնիայի, Լիդիայի, հունական մի շարք պոլիսների հետ: Եգիպտական բանակի զգալի մասը հույն և կարիացի վարձկաններ էին, որոնց թիվը բանակում հասնում էր մինչև 20 հազար մարդու: Եգիպտոսում պարսկական արշավանքի նախօրեին կառավարում էր Պսամմետիս III-ը (Ք. ա. 526-525 թթ.):

Պարսկական բանակը եգիպտական զորքին հանդիպեց սահմանային Պելուսիա քաղաքի մոտ: Հույն վարձկան զորքերի հրամանատար Փանեսը դավաճանեց փարավոնին և անցավ պարսիկների կողմը: Արդյունքում, եգիպտական բանակը ջախջախվեց ճակատամարտում: Փարավոնին դավաճանեցին նրա այլ մերձավորներ ևս, իսկ նավատորմի հրամանատարը առանց մարտի պարսիկներին հանձնեց եգիպտական նավատորմն ու Սաիս քաղաքը: Մայրաքաղաք Մեմֆիսը գրավվեց, իսկ Պսամմետիս III-ը գերվեց: Շուրջ 2000 մարդու, այդ թվում՝ թագաժառանգին, Կամբիզը մահապատժի ենթարկեց:

Ստորին Եգիպտոսը հայտնվեց պարսիկների ձեռքին: Երկիրը վերածվեց պարսկական սատրապության, թեև թագավորական իշխանությունն այստեղ ձևականորեն պահպանվեց. Կամբիզն իրեն հռչակեց նաև Եգիպտոսի փարավոն՝ թագադրվելով եգիպտական ծեսով: Եգիպտոսն անձնական ունիայով միացվեց տերությանը, և սկսվեց 27-րդ (պարսկական) հարստության դարաշրջանը: Պարսկական գերիշխանությունը ճանաչեցին նաև Եգիպտոսի հարևան լիբիական ցեղերն ու Կիրենաիկայի (ժաման. Լիբիայի մի մասը) հույները:

Կյանքը Եգիպտոսում սակայն ոչնչով չփոխվեց: Եգիպտացիները շարունակում էին ապրել իրենց առօրյա կյանքով, ազատ էին իրագործելու կրոնական արարողություններ, բազում եգիպտացի մեծատոհմիկներ պահպանեցին իրենց զբաղեցրած պաշտոնները: Եգիպտոսում ստեղծվեց անգամ առասպել Կամբիզի՝ իբր եգիպտական արքայադուստր Նիտետիսի որդի լինելու մասին:

Ստորին Եգիպտոսի նվաճումից հետո Կամբիզը ձեռնամուխ եղավ Վերին Եգիպտոսի

և Եթովպիայի նվաճմանը: Արշավանքը վատ էր նախապատրաստված, բանակը չունեցրեց պարենի և ջրի անհրաժեշտ պաշարներ: Դրա արդյունքում պարսկական զորքերը հայտնվեցին ծանր իրավիճակում: Կամբիզը ստիպված էր դադարեցնել արշավանքը: Անհաջողությամբ ավարտվեց նաև լիբիական օազիսներից մեկում գտնվող Ամոն աստծո տաճար ձեռնարկված արշավանքը: Ողջ բանակը կործանվեց ավազամրիկի հետևանքով:

Այս ընթացքում, օգտվելով Կամբիզի բացակայությունից, եգիպտացիներն ապստամբություն բարձրացրին: Վերադառնալով Մեմֆիս՝ Կամբիզը դաժանորեն ճնշեց ապստամբությունը, իսկ նախկին փարավոն Պսամմետիսը, որն ապստամբության ոգեշնչողն էր, ստիպված էր ինքնասպան լինել: Կամբիզը սկսեց անարգել եգիպտական տաճարները և անգամ սպանեց եգիպտացիների համար պողաբերության խորհրդանիշ հանդիսացող Ապիսին՝ աստվածացված ցլին:

Ք. ա. 522 թ.՝ մինչ Կամբիզը շարունակում էր գտնվել Եգիպտոսում, լուր ստացվեց նրա կրտսեր եղբայր Բարդիայի ապստամբելու մասին, որն իրեն հռչակել էր Պարսկաստանի արքա: Կամբիզը շտապ շարժվեց Պարսք, սակայն ճանապարհին նա մահացավ:

4. ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ. ԴԱՐԵՑ I

Հետագա իրադարձությունները հայտնի են երկու խումբ աղբյուրներից: Դրանցից առաջինը քիչ ավելի ուշ շրջանում կազմված Բեհիսթունի ընդարձակ արձանագրությունն է՝ իրադարձությունների պաշտոնական մեկնաբանությունը: Ըստ դրա՝ Կամբիզը սպանել էր իր եղբորը դեռևս եգիպտական արշավանքի նախօրեին: Բարդիայի մահը պահվել էր գաղտնի: Ոմն մոգ Գաումատա, ներկայանալով որպես Բարդիայի, տիրում է արքայական իշխանությանը: Բեհիսթունի պաշտոնական մեկնաբանությունն այս փաստն արձանագրեց «երկրում աճեց սուտը» բառերով:

Ըստ արձանագրության՝ նախքան նրա գահակալումը երկրում տեղի են ունեցել հուզումներ՝ ընդդեմ Կամբիզի, որոնք դադարել են Գաումատա-Բարդիայի իշխանության գալուց հետո: Ք. ա. 522 թ. մարտի 11-ին՝ գահ բարձրանալուց մեկ ամիս անց, Գաումատայի իշխանությունը ճանաչեց Բաբելոնիան: Այս երկրամասի տարբեր քաղաքներում տեքստերը սկսեցին թվագրել նրա անունով: Գաումատա-Բարդիայի իշխանությունը ճանաչեցին նաև տերության այլ երկրամասեր, և նա պաշտոնապես թագադրվեց Պասարգադքում:

Իր իշխանությունն ամրապնդելու նպատակով Գաումատան ենթակա երկրներին երեք տարով ազատեց հարկային և զինվորական պարտավորություններից, փորձեց սահմանափակել պարսկական տոհմային ավագանու իրավունքները: Այս քաղաքականության մեջ հնարավոր է տեսնել նաև զբաղաշտականության գաղափարախոսության որոշակի ազդեցություն: Գաումատա-Բարդիայի գործողություն-

ները, որ հավանաբար իր նախորդի՝ Կամբիզի քաղաքականության շարունակությունն էին, նպատակ ունեին ամրապնդելու արքայական իշխանությունը երկրում և ստեղծելու կենտրոնացված պետություն:

Գաումատայի գործողություններն առաջ բերեցին պարսկական ավագանու դժգոհությունը: Արքայի դեմ կազմակերպվեց դավադրություն, և նա Ք. ա. 522 թ. սեպտեմբերի 29-ին սպանվեց Մարաստանի Սիկայաուվատի վայրում: Գահն անցավ պարսկական խոշոր ազնվական տներից մեկի ներկայացուցիչ Դարեհին (Ք. ա. 522–486 թ.):

Գիտության մեջ իշխող տեսակետի համաձայն՝ «Գաումատան» իրականում նույն Բարդիան էր՝ Կամբիզի եղբայրը: Ուշագրավ է, որ անտիկ աղբյուրները համակարծիք են մի հարցում՝ Կամբիզի եղբայրն ու գահին բազմած ինքնակոչ մոզը չափազանց նման են եղել միմյանց, անգամ մերձավորները նրանց չեն գանազանել: Ըստ Հերոդոտոսի՝ պարսիկները սկզբնապես չեն էլ կասկածել, որ իրական Սմերդիսն է դարձել արքա:

Ըստ այդմ՝ Կամբիզի կողմից կամ նրա հրամանով Բարդիային սպանելու մասին պատմությունը կարող էր լինել Դարեհի կամքով արված նղագրում, որով իշխանության եկած Աքեմենյան տոհմի ներկայացուցիչը, այսպիսով, զերծ էր մնում արքայական տոհմի անդամի սպանության մեղքից, իբր, տապալելով ինքնակոչ-րոնակալի, այն է՝ մտացածին «մոզ Գաումատային»: Իրականում Դարեհը, օգտվելով երկրում Բարդիայի և Կամբիզի միջև ծավալված պայքարից և վերջինիս մահից, ամենայն հավանականությամբ իրագործել է հեղաշրջում՝ սպանելով արդեն օրինական արքային և տիրելով գահին:

«Անում է Դարեհ արքան. «Ահա (այն) այրերը, որոնք ինձ հետ էին, երբ ես սպանեցի մոզ Գաումատային, որն իրեն կոչում էր Բարդիա. Վիդափառնա անունով (այրը)՝ Վայասպարայի որդին, պարսիկ, Ուտանա անունով (այրը)՝ Տուխրիի որդին, պարսիկ, Գաուբարուվա անունով (այրը)՝ Մարդունիայի որդին, պարսիկ, Վիդառնա անունով (այրը)՝ Բազաբիզանի որդին, պարսիկ, Բազարուխշա անունով (այրը)՝ Դատուվահայի որդին, պարսիկ, Արդունանիշ անունով (այրը)՝ Վահաուկայի որդին, պարսիկ»: Անում է Դարեհ արքան. «Դու, որ ապագայում կլինես արքա, հո՛գ տար այս այրերի սերունդների համար»:

Գաումատայի սպանությանը մասնակից յոթ պարսիկներից վեցը գահի հավակնորդ էին: Միայն Օտանեսը (Ուտանա)՝ դավադրության իրական կազմակերպիչն ու գլխավոր ոգեշնչողը, հրաժարվեց իր իրավունքից: Մնացյալ վեցից Դարեհը, թերևս, գահի ամենաթույլ հավակնորդն էր: Անտիկ աղբյուրները համակարծիք են՝ դավադրության գործում նրան վերագրելով նվազագույն դերակատարություն: Հերոդոտոսի պնդմամբ՝ մինչև թագավորելը «Դարեհը Կամբյուտեսի թիկնապահն էր և մեծ համարում չունեցրեց»: Դարեհի խոսքերն իր՝ իբր արքայական ընտանիքի պատկանելու մասին, կասկածելի են: Պատահական չէ, որ իր թագավորելը Դարեհը պայմանավորում էր Ահուրամազդայի աստվածային կամքով: Դարեհի գահակալությունը միանշանակ չընդունվեց անգամ պարսկական ավագանու որոշ անդամների կողմից: Դա-

րեհի ընտրությունից դժգոհ Վիդափառնան՝ վերոհիշյալ յոթ պարսիկներից մեկը, ի վերջո սպանվեց Դարեհի հրամանով:

Սակայն պարսկական ավագանու մեծ մասը հավատարիմ մնաց Դարեհին: Այդ պատճառով նա շտապեց վերականգնել ավագանու իրավունքները, դավադրության մասնակիցները գանազան պարզվեցին ստացան: Օտանեսը, օրինակ, ընդարձակ կալվածքներ ստացավ Կապադոկիայում, նրան վերապահվեցին մի շարք արտոնություններ: Գաուբարուվան (Գորբյուաս) ամուսնացավ Դարեհի քրոջ հետ և նշանակվեց արքունի թիկնազորի հրամանատար: Վիդառնան որպես ժառանգական տիրույթ ստացավ Հայաստանը, ուր նրա սերունդները իշխում էին դեռևս Ք. ա. III դ.:

Սակայն Կամբիզի մահը և երկրում սկսված խառնակ իրավիճակը ապստամբություններ առաջ բերեցին նվաճված երկրներում:

Առաջին ելույթը տեղի ունեցավ Էլամում, որն անմիջապես ձնշվեց: Սակայն շուտով ապստամբություն ծագեց Բաբելոնում: Վտարելով Աքեմենյան սատրապին՝ բաբելոնցիները արքա հռչակեցին ոմն Նիդինտու-Բելին: Վերջինս իրեն հայտարարեց Բաբելոնի արքա Նաբոնիդի որդի և գահ բարձրացավ դինաստիական Նաբու-կուդուրի-ուծուր անունով (Նաբուգոդոնոսոր III): Նրա իշխանությունը ճանաչեցին բաբելոնյան մի քանի քաղաքներ, ներառյալ Սիպպարն ու Բորսիպպան: Դարեհն անձամբ գլխավորեց արշավանքը՝ պարտության մատնելով ապստամբներին: Դարեհի զորքերը գրավեցին Բաբելոնը, իսկ ինքնակոչ արքան մահապատժի ենթարկվեց:

Մինչ Դարեհը զբաղված էր բաբելոնյան խնդրով, ապստամբություններ ծագեցին Մարաստանում, Մարգիանայում, Պարթևաստանում, Եգիպտոսում, Էլամում: Դարեհն ամուր հենարան չունեց անգամ բուն Պարսքում: Այստեղ ապստամբություն բարձրացրեց Վահյազդատան, որն իրեն հայտարարել էր Կամբիզի որդի Բարդիա:

Բաբելոնում վերահսկողություն հաստատելուց հետո Դարեհն իր բանակն ուղղեց Վահյազդատայի դեմ: Մինչ այդ նրա զորավարներից մեկը՝ Բակտրիայի սատրապ Դադարշիշը, ձնշեց ապստամբությունը Մարգիանայում: Սպանվեց ավելի քան 55 հազար մարդ, մոտ 7000-ը գերի վերցվեց: Ապստամբության առաջնորդ Փրադան, որն իրեն հռչակել էր արքա, գերվեց և մահապատժի ենթարկվեց:

Այս ընթացքում Վահյազդատան ընդարձակեց իր իշխանությունը տերության արևելքում՝ այն հասցնելով մինչև Արախոսիս: Ք. ա. 522 թ. դեկտեմբերից մինչև 521 թ. փետրվար Վահյազդատայի դեմ ուղարկված զորավար Վիվանան պարտության մատնեց Վահյազդատայի ուժերին և գրավեց երկրամասը: Դա հնարավորություն տվեց Դարեհին գլխավոր ուժերն ուղղելու Պարսք՝ զորավար Արտավարդիայի գլխավորությամբ: Ք. ա. 521 թ. Պարսքում՝ Պարգա լեռան մոտ, Վահյազդատան ջախջախվեց: Նա գերի ընկավ և իր մերձավորների հետ միասին ցից բարձրացվեց: Պարսքն ամբողջությամբ հայտնվեց Դարեհի իշխանության տակ:

Ապստամբության հաջորդ օջախը Մարաստանն էր: Այստեղ գահ էր բարձրացել մարական ավագանու ներկայացուցիչներից Ֆրավարտիշը (Ֆրաորտես II), որն իրեն հայտարարել էր մարական արքա Ումաքիշթարի (Կիաքսար) սերնդից՝ վերց-

նելով Քշատրիթա անունը: Դարեհն ապստամբությունը ճնշելու համար Մարաստան ուղարկեց իր զորավարներից Վիդառնային: Ք. ա. 521 թ. տեղի ունեցած առաջին ճակատամարտն ապստամբների դեմ ավարտվեց անարդյունք: Թեև Բեհիսթունի արձանագրությունը հայտնում է «Ահուրամագդայի կամքով» ձեռք բերված հաղթանակի մասին, սակայն այն փաստը, որ Վիդարնան չի զարգացրել հաջողությունը՝ մի քանի ամիս սպասելով Դարեհի գլխավոր ուժերի ժամանմանը, չի վկայում հաղթանակի օգտին:

Զորքերը կենտրոնացնելով Էկրատանայում՝ Դարեհն անձամբ գլխավորեց նոր արշավանքը Ֆրավարտիշի դեմ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Մարաստանի Կունդուրուշ վայրում: Ֆրավարտիշը ջախջախվեց. սպանվեց մոտ 34 500 մարտիկ, գերի վերցվեց ավելի քան 18 հազար մարդ: Թեև Ֆրավարտիշը կարողացավ փոքրաթիվ կողմնակիցներով փախչել դեպի Ռագա, սակայն մեկ ամիս անց նա գերվեց: Դարեհն անձամբ նրան ենթարկեց զանազան տանջանքների, ապա և հրամայեց սպանել: Ֆրավարտիշի մերձավորները մորթազերծ արվեցին, նրանց մարմինները կախեցին քաղաքի պարիսպներից՝ ի տես ժողովրդի: Դարեհը ճնշեց նաև Հյուսիսային Միջագետքում իրանախոս սագարտիացիների բարձրացրած ապստամբությունը:

Ֆրավարտիշի ապստամբությունը տարածվել էր նաև Պարթևստանում և Հիրկանիայում: Ապստամբությունը ճնշելու կոչված Վշտասպը՝ Դարեհի հայրը, ճակատամարտեց ապստամբների դեմ, սակայն շարժումը ճնշել նրան չհաջողվեց: Միայն երեք ամիս անց՝ օգնական ուժեր ստանալուց հետո, նոր ճակատամարտում նա ջախջախեց ապստամբներին: Սպանվեց մոտ 6600 մարդ, ևս 4000-ը գերի ընկավ: Ապստամբության ավելի քան 80 առաջնորդներ ենթարկվեցին մահապատժի:

Դարեհը համառ մարտեր մղեց նաև Հայաստանի ապստամբների դեմ: Առաջին ճակատամարտը հայերի դեմ Դարեհի զորավարներից պարսիկ Վահումիսան տվեց Հայաստանի սահմաններից դուրս՝ Իգալայի շրջանում (Հյուսիսային Միջագետք), Ք. ա. 522 թ. առանց էական հաջողության: Արշավանքները շարունակվեցին հաջորդ զարնանը: Ք. ա. 521 թ. մայիս-հուլիս ամիսներին Վահումիսային փոխարինած հայազգի Դադարշիշի, ապա և նույն Վահումիսայի գլխավորությամբ Դարեհի զորքերը արդեն Հայաստանի սահմաններում չորս ճակատամարտ մղեցին հայերի դեմ (Զուգահյայում, Տիգրայում, Ույամայում և Աուտիյարայում): Վերջին ճակատամարտն ավարտվեց ապստամբների պարտությամբ, և Հայաստանը վերստին հայտնվեց պարսկական իշխանության տակ:

Ք. ա. 521 թ. ամռանը նոր ապստամբություն ծագեց Բաբելոնիայում ազգությամբ հայ, Խալդիտայի որդի Արախայի գլխավորությամբ: Բեհիսթունի արձանագրության բաբելոնյան տարբերակում նշվում է ապստամբության վայրը՝ Ուր քաղաքը Հարավային Բաբելոնիայում, մինչդեռ հին պարսկերեն և էլամերեն տեքստերում որպես ապստամբության օջախ նշվում է Դուբալա քաղաքը: Արախայի ապստամբությունը արձագանք գտավ Բաբելոնում, և շուտով նա իրեն հոչակեց արքա՝ ներկայանալով որպես Նաբոնիդի որդի և ստանալով Նաբուգոդոնոսոր IV անունը: Արախայի

իշխանությունը ճանաչեցին բոլոր խոշոր բաբելոնյան քաղաքները, ներառյալ Սիպպարը, Բորսիպպան և Ուրուկը:

Ապստամբների դեմ ուղարկված Վինդափառնան հաղթեց Արախային և գրավեց Բաբելոնը, իսկ Արախան և նրա մերձավորները մահապատժի ենթարկվեցին: Համաձայն Հերոդոտոսի՝ Դարեհը հրամայեց մահապատժի ենթարկել նաև բաբելոնյան ազնվականության մոտ 3000 ներկայացուցչի, ինչպես նաև քանդել քաղաքի պարիսպները:

Դարեհի դեմ վերջին խոշոր ապստամբությունը ծագեց Էլամում: Աճինայի, ապա և Մարտիյայի ելույթներին այս անգամ հաջորդեց Ատամաիտայի (Ատտամետու) գլխավորած նոր ապստամբությունը Դարեհի կառավարման երրորդ տարում: Էլամցիների դեմ ուղարկվեցին զորքեր՝ Գաուրարուվայի գլխավորությամբ: Ատամաիտան պարտվեց և ենթարկվեց մահապատժի: Ք. ա. 520-519 թթ. ճնշվեցին ապստամբության մնացյալ օջախները, այդ թվում նաև Փոքր Ասիայում: Այս նույն ժամանակ Դարեհն իր առաջին արշավանքն իրագործեց կենտրոնասիական սակերի (սկյութների) դեմ:

Ք. ա. 518 թ. Դարեհն անցկացրեց Եգիպտոսում: Այստեղ նա մահապատժի ենթարկեց դեռևս Կամբիզի կողմից Եգիպտոսի սատրապ նշանակված Արյուանդեսին և սատրապ նշանակեց Ֆերենդատին: Եգիպտոսում Դարեհն իրականացրեց շինարարական աշխատանքներ, որոնցից առավել կարևորը դեռևս սափսյան փարավոն Նեխո II-ի սկսած և Նեղոս գետը Կարմիր ծովին կապող 84 կմ նավարկելի ջրանցքն էր: Վերականգնվեցին Մեմֆիսի և Սափսի աստվածների տաճարները: Նոր տաճար կառուցվեց Ամոն աստծո համար Թեբեի մոտ, որի կառուցումը տևեց շուրջ 20 տարի: Այստեղից գտնված արձանագրության մեջ Դարեհը հանդես է գալիս որպես Ամոն աստծո որդի: Ըստ աղբյուրի՝ պարսից արքան համակրանք էր վայելում Եգիպտոսում: Պատահական չէ, որ նրանից մեզ են հասել այստեղ կազմված եգիպտերեն հարյուրավոր արձանագրություններ՝ ավելի շատ, քան մնացյալ Աքեմենյան արքաներինը միասին վերցված:

Ապստամբությունները Դարեհից խլեցին նրա կառավարման առաջին 15 ամիսները, երկիրը հնազանդեցնելու համար նրանից պահանջվեց տալ 19 ճակատամարտ, միայն զոհվածների թիվը, որ հայտնում են աղբյուրները, անցնում էր 100 հազարից:

Իր գործերը նա հավերժացրեց Բեհիսթունի բարձրաքանդակների և կից եռալեզու ընդարձակ արձանագրության մեջ: Այստեղ պատկերված է Դարեհը՝ իր երկու զինակիցներով, իսկ նրա առջևում են ինը կապկապված ինքնակոչ արքաներ: Դարեհ I-ի գահակալությամբ սկսվեց նոր՝ Աքեմենյան տոհմի իշխանության դարաշրջանը:

Դարեհը շրջահայաց գործիչ էր: Ահա այսպես է նա ներկայանում արձանագրություններից մեկում.

«... Ես տաքարյուն չեմ: Բարկության պահին ես զսպում եմ ինձ: Ես տիրապետում եմ ինձ...: Ես ունեմ ամուր մարմին: Որպես ռազմիկ՝ ես քաջ պատերազմող եմ...: Ես տեսնում եմ՝ ով է ընդվզող, և ով՝ ոչ: Սկզբում ես մտածում եմ, ապա նոր գործում»:

Ձգտելով օրինական տեսք տալ իր իշխանությանը՝ Դարեհը փորձեց կապ ստեղծել իր և նախորդ արքայատան միջև: Այդ նպատակով նա ամուսնացավ Կյուրոսի դուստրերի՝ Առոսսայի և Արոյուստոնեի հետ: Բացի այդ՝ նա գտավ, որ իր և Կյուրոսի տոհմերը «սերում են» նույն անձից՝ իր տոհմի նախահայր Աբեմենից (տե՛ս վերը): Իր այս քայլով նա փորձում էր կապվել Կյուրոսի արքայատան հետ՝ իր նախահայր Աբեմենին համարելով նաև Կյուրոսի նախնի, իր գահակալության համար ստեղծելով օրինականության շղարշ:

Ամրապնդելով իր իշխանությունը՝ Դարեհը Ք. ա. 520–519 թթ. սահմաններում կատարեց վարչական բարեփոխում: Երկրում ներդրվեց սատրապական համակարգը, վերացվեցին ենթակա երկրների պետականությունները: Բեհիսթունի արձանագրության մեջ թվարկվում են 23 երկրներ: Ըստ Հերոդոտոսի՝ Աբեմենյան տերության մեջ ապրում էին 70 ժողովուրդներ, և կային 20 սատրապություններ: Այս թիվը, սակայն, մնայուն չէր, և սատրապությունների քանակը շարունակաբար փոխվում էր:

Վերակազմավորվեց բանակը: Նրա հիմքը կազմում էր այսպես կոչված «Անմահների գունդը»՝ բաղկացած 10 հազար մարտիկներից: Այս գունդը գերազանցապես հավաքվում էր պարսիկներից և մարերից, սակավ ղեկավարում նաև ընդգրկում էր էլամցիների: Այս զորամիավորման մի մասը (1000 մարտիկ) կազմված էր բացառապես պարսիկ ազնվականներից և ծառայում էր իբրև արքայի անձնական թիկնազոր:

Բանակը կազմված էր հիմնականում իրանախոս տարրերից: Օրինակ՝ պարսիկներից և մարերից գատ, մեծ էր արևելաիրանական ժողովուրդներից հավաքված ռազմիկների թիվը՝ գերազանցապես հեծյալ նետաձիգներ: Արշավանքների ժամանակ զորքեր էին հավաքում նաև ենթակա այլ ժողովուրդներից, սակայն գլխավոր հրամանատարությունը գտնվում էր պարսիկների ձեռքին: Աբեմենյանները պահում էին մեծաքանակ մշտական զորքեր՝ այն տեղաբաշխելով տերության տարբեր հատվածներում: Միայն Եգիպտոսում Աբեմենյանները պահում էին 10–12–հազարանոց զորքանակ: Միջերկրական ծովում Աբեմենյաններն ունեին հարյուրավոր նավերից բաղկացած հզոր նավատորմ:

Ք. ա. 518 թ. Դարեհը երկրում ներդրեց համընդհանուր հարկային համակարգ: Աղյուրներից հայտնի է b-ra/u տերմինը, որը դրամով վճարվող արքայական հարկն էր: Ըստ Հերոդոտոսի՝ պարսիկները, որպես իշխող խավ, ազատված էին հարկերից: Սակայն պահպանված տնտեսական բնույթի գրագրություններից դատելով՝ պարսիկներն առնվազն վճարել են բնահարկ: Հերոդոտոսի ներկայացրած ցանկի համաձայն՝ սատրապություններից գանձվող հարկերի տարեկան գումարը կազմում էր 7740 բաբելոնյան արծաթ տաղանդ:

Ներդրվեց նաև միասնական դրամական համակարգ: Դրա հիմքում ընկած էր ոսկե դարնեհիկը (1 = 8,416 գ ոսկի): Աբեմենյան տերության մեջ սկսեցին հատել չորս տիպի դրամներ՝ արքայական և սատրապական՝ արքայի պատկերով, ինչպես նաև Աբեմենյաններին ենթակա երկրների և քաղաքների դրամները, հաճախ՝ տեղի կառավարիչների պատկերով:

Ք. ա. 517 թ. ընթացքում Դարեհ I-ը արշավեց Հնդկաստան: Արշավանքին նա-

խորդել էր արքայի հրամանով կարիացի Սկիլակոսի ծովային ճանապարհորդությունը Հնդկաստան՝ ծանոթանալու երկրին: Պարսիկները գրավեցին երկրի հյուսիս–արևմուտքը, որտեղ կազմվեց նոր սատրապություն, որն ընդգրկում էր Ինդոս գետի միջին և ստորին հոսանքի շրջանը:

Աբեմենյան տերությունը Դարեհի օրոք սկսեց ծավալվել նաև դեպի արևմուտք: Ք. ա. 517 թ. Աբեմենյան նավատորմը Օտանեսի գլխավորությամբ գրավեց հունական Սամոս և Լեմնոս կղզիները, իսկ Քիոս կղզին կամավոր ճանաչեց պարսկական գերիշխանությունը: Ք. ա. 516 թ. Աբեմենյան զորքերը Հելլեսպոնտոսի (Բոսֆոր) նեղուցով առաջին անգամ անցան եվրոպական մայրցամաք: Տեղի բնակչությունն ու հունական գաղութները ճանաչեցին պարսկական գերիշխանությունը: Առանց դիմադրության հնազանդեցվեց Թրակիան: Աբեմենյան զորքերը դուրս եկան Իստրա (Դանուբ) գետի ափեր: Դարեհը, սակայն, անհաջողության մատնվեց հյուսիսսևծովյան սկյութների դեմ ձեռնարկած արշավանքում: Դարեհի զորավար Մեգաբազոսն ավարտեց Թրակիայի մնացյալ հատվածի և Էգեյան ծովի հյուսիսային ափերի հունական քաղաքների նվաճումը: Պարսիկներին հպատակվեց նաև Մակեդոնիայի արքա Ալեքսանդր I-ը: Ք. ա. 512 թ. դրությամբ Էգեյան ծովը Սև ծովին կապող նեղուցների գոտին անցել էր պարսիկների վերահսկողության տակ:

5. ԱՔԵՄԵՆՅԱՆՆԵՐԻ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ»

Պարսկական արքունիքը Փոքր Ասիայի հոնիական քաղաքների հանդեպ վարում էր մեղմ քաղաքականություն: Պարսիկները չէին միջամտում նրանց ներքին կյանքին, գործում էին տեղական ինքնակառավարման մարմինները, ծաղկում էին արհեստներն ու առևտուրը՝ շնորհիվ նաև տերության տարածքում ազատ առևտուր անելու հնարավորության: Պարսիկները հոնիական պոլիսների վերահսկողությունն իրականացնում էին հույն վերնախավի շարքերից ընտրված կառավարիչների՝ տիրանների միջոցով, որոնք հավատարիմ էին արքունիքին: Այսպես՝ Դարեհ I-ին մեծ ծառայություններ մատուցեց Միլեթի տիրան Հիստիայոսը արքայի սկյութական արշավանքի ժամանակ, որի դիմաց ստացավ ընդարձակ տարածքներ Թրակիայում:

Արևմուտքում Դարեհի քաղաքականությունը շոշափում էր մայրցամաքային Հունաստանի և հատկապես Աթենքի կենսական շահերը: Վերջինիս համար սևծովյան գաղութները հացի հիմնական մատակարարներն էին, իսկ նեղուցների գրավումը պարսիկների կողմից անհնար էր դարձնում դրա իրականացումը: Հունաստանի պոլիսների մուտքը Աբեմենյան շուկա սահմանափակ էր, իսկ նրանց հիմնական առևտրական հակառակորդը Աբեմենյանների կողմից հովանավորվող փյունիկյան քաղաքներն էին: Աբեմենյան իշխանության ամրապնդումը Էգեյան ծովի արևելքում սպառնում էր Հունաստանի պոլիսներին, քանի որ պարսիկներն այժմ տնօրինում էին ռազմածովային խոշոր ուժերի: Աբեմենյան արքունիքն ապաստան էր տալիս

հունական պոլիսներից քաղաքական պայքարի արդյունքում վտարված ազնվականներին: Այսպես՝ Դարեհն ապաստան տվեց Աթենքից վտարված տիրան Հիպպիասին՝ Պիսիստրատոսի որդուն:

Աքեմենյան տերության և մայրցամաքային Հունաստանի հակամարտության համար հիմք հանդիսացան Հոնիական Հունաստանում ծավալված իրադարձությունները:

Ք. ա. 500 թ. Կիկլադյան կղզիներից մեկում՝ Նաքսոսում, իրականացվեց հեղաշրջում: Իշխանությունն անցավ դեմոսին, իսկ այստեղից վտարված ազնվականներն ապաստան գտան Միլեթում: Միլեթի տիրան Արիստագորասն առաջարկեց Լիդիայի սատրապ Արտաֆրենեսին, որը Դարեհի եղբայրն էր, համատեղ արշավանք կազմակերպել Սամոս՝ վերականգնելու այստեղ տիրանիան: Ք. ա. 499 թ. Աքեմենյանների և միլեթցիների 200 նավից բաղկացած տորմիդը՝ պարսիկ Մեգաբաստեսի և Արիստագորասի գլխավորությամբ շարժվեց Նաքսոս, սակայն արշավանքը ձախողվեց: Սա պատճառ դարձավ, որպեսզի Միլեթում բռնկվի ապստամբություն: Ապստամբության ակունքում կանգնած էին Արիստագորասը, որը դրանով փորձում էր խուսափել պատասխանատվությունից, և Դարեհի արքունիքում գտնվող Հիստիայոսը՝ արքայի խորհրդականը:

Միլեթի ապստամբությունը ոգևորությամբ ընդունվեց հոնիական մի շարք պոլիսներում, որտեղ նույնպես սկսեցին տապալել տիրաններին: Արիստագորասը մեկնեց մայրցամաքային Հունաստան՝ աջակցություն խնդրելու: Սակայն նրա ակնկալիքներն այստեղ չարդարացան: Սպարտայի արքա Կլեոմենեսը հրաժարվեց օգնել: Աթենքում թեև խոստացան աջակցել, բայց օգնությունը չնչին էր: Աթենացիներն ուղարկեցին ընդամենը 20 ռազմանավ, ևս 5 ռազմանավ տրամադրեց Միլեթի հետ ավանդաբար կապված Էրետրիան՝ Էվբեա կղզու պոլիսներից մեկը:

Վերադառնալով Միլեթ՝ Արիստագորասը գլխավորեց դեպի Սարդես ձեռնարկված արշավանքը: Ապստամբները գրավեցին քաղաքը, սակայն միջնաբերդը մնաց անտոկ: Ավելին՝ քաղաքը գրեթե ամբողջությամբ հրդեհվեց, այրվեց նաև լիդիացիների գլխավոր՝ Կիբելն աստվածուհու տաճարը, ինչը լիդիացիներին տրամադրեց հոնիացիների դեմ: Վերջիններս ստիպված էին նահանջել: Ք. ա. 498 թ. Եփեսոսի մոտ տեղի ունեցած ձակատամարտում ապստամբները ջախջախվեցին, իսկ հոնիական քաղաքների միությունը կազմալուծվեց:

Հաջողության չհասնելով ցամաքում՝ ապստամբներն ակտիվացրին ծովային գործողությունները: Նրանք գրավեցին Բյուզանդիոն քաղաքը, հաջողվեց նաև ոտքի հանել Կարիայի և Լիկիայի մի շարք քաղաքների: Ապստամբներին հարեց Կիպրոսի խոշորագույն քաղաք Սալամինը: Սակայն Ք. ա. 497–496 թթ. պարսիկները վերանվաճեցին Կիպրոսը, ապա սկսեցին գրավել Փոքր Ասիայի քաղաքները: Ք. ա. 494 թ. Միլեթից ոչ հեռու՝ Լադա կղզու մոտ տեղի ունեցած ձակատամարտում հոնիական նավատորմը ջախջախվեց, որից հետո գրավվեց նաև ապստամբության կենտրոն Միլեթը:

Աքեմենյան զորքերը զարգացրին հաջողությունը՝ Ք. ա. 493 թ. գրավելով հո-

նիական ապստամբներին աջակցած Քիոս կղզին, ապա նաև Լեսբոսն ու Հելլեսպոնտոսի քաղաքները: Հոնիական պոլիսներում պարսիկները վերականգնեցին տիրանների իշխանությունը: Աքեմենյան արքունիքում սկսեցին մտածել նաև մայրցամաքային Հունաստանի նվաճման մասին: Ըստ անտիկ ավանդության՝ Դարեհը, առաջին անգամ լսելով Սարդեսը հրդեհած աթենացիների անունը, պատվիրել էր իր ապաստարհին ամեն օր՝ ընթրիքից առաջ, ասել՝ «Ո՛վ տեղ, հիշի՛ր աթենացիներին»:

Ք. ա. 492 թ. Դարեհը ձեռնարկեց իր առաջին արշավանքը մայրցամաքային Հունաստան: Աքեմենյան բանակն ու նավատորմը՝ շուրջ 30 հազար զինվոր և 600 ռազմանավ, Դարեհի փեսա Մարդոնիոսի գլխավորությամբ շարժվեց դեպի Հելլեսպոնտոս: Սակայն արշավանքը ձախողվեց: Աֆոնի հրվանդանի մոտ փոթորիկը խորտակեց նավատորմի գրեթե կեսը, զոհվեց շուրջ 20 հազար մարդ:

Այս անհաջողությունը չփոխեց Դարեհի մտադրությունները: Արքայի պահանջով մայրցամաքային Հունաստանի և Էգեյան ծովի կղզիների՝ դեռևս անկախ պոլիսներ ժամանեցին պարսկական դեսպանություններ՝ հույներից պահանջելով իրենց հանձնել «հողն ու ջուրը», այն է՝ ձանաչել Աքեմենյան արքայի գերիշխանությունը: Պոլիսների մեծ մասն ընդունեց այդ պահանջը, սակայն Սպարտան և Աթենքը մերժեցին: Ք. ա. 490 թ. Աքեմենյան նավատորմը շարժվեց դեպի Հունաստան՝ Դարեհի եղբորորդի Արտաֆրենեսի և Դատիսի գլխավորությամբ: Աքեմենյան ուժերը նախ գրավեցին Նաքսոս կղզին, ապա շարժվեցին դեպի Էվբեա և գրավեցին Էրետրիա քաղաքը: Մի քանի օր անց պարսկական 20–հազարանոց բանակն ամի իջավ Ատտիկայում՝ Մարաթոնի դաշտում՝ Աթենքից ընդամենը 42 կմ հեռու:

Աթենական 10–հազարանոց բանակը, որին միացան Պլատեա քաղաքի շուրջ 1000 զինվորները, ուղարկվեցին պարսիկներին ընդառաջ: Քանի որ տեղանքը հնարավորություն չէր տալիս պարսկական հեծելազորին ազատ գործելու, ուստի Դատիսը վճռեց Աթենքը գրավել ծովից: Օգտվելով այն հանգամանքից, որ Աքեմենյանների զորքերի մի մասն արդեն գտնվում էր նավերի վրա՝ աթենացիները նետվեցին գրոհի և ջախջախեցին պարսիկներին: Դատիսը փորձեց անակնկալ գրոհով գրավել անպաշտպան Աթենքը, սակայն հույները ժամանակին վերադարձան քաղաք: Պարսիկները ստիպված էին հետ վերադառնալ: Դարեհը սկսեց նախապատրաստվել նոր արշավանքի, սակայն Ք. ա. 486 թ. Եգիպտոսում ծագած ապստամբությունը խանգարեց նրա մտահղացման իրականացմանը: Նույն թվականին՝ 36 տարի թագավորելուց հետո, Դարեհը մահացավ:

Դարեհը գահաժառանգ էր հռչակել Կյուրոսի դուստր Ատոսայից ծնված իր չորս որդիներից առաջնեկին՝ Քսերքսեսին, թեև նա ուներ նրանից ավագ ևս երեք որդի՝ ծնված իր առաջին կնոջից: Անտիկ պատմիչները Դարեհի ընտրությունը պայմանավորում են պարսիկների շրջանում առկա սովորությամբ՝ գահին էր բազմում ոչ թե ավագ որդին, այլ որդիներից նա, ով առաջինը կծնվեր հոր գահակալելուց հետո:

Քսերքսեսի (Ք. ա. 486–465 թթ.) առաջին գործողություններից մեկը Եգիպտոսի ապստամբության ճնշումն էր: Եգիպտոսը ենթարկվեց ավերածությունների, կործանվեցին և թալանվեցին բազում տաճարներ: Նա հրաժարվեց Եգիպտոսի փարա-

վոնի տիտղոսից՝ դրանով փաստորեն վերացնելով եգիպտական թագավորությունը: Հավանաբար ապստամբության ընթացքում սպանված սատրապ Ֆերենդատի փոխարեն Քսերքսեսը Եգիպտոսի սատրապ նշանակեց իր եղբայր Աքեմենին:

Եգիպտոսը հնազանդեցնելուց ոչ շատ անց ապստամբություն բռնկվեց Բաբելոնում: Ապստամբներին այստեղ առաջնորդում էր ոմն Բել-շիմաննին: Վերջինս իրեն հռչակեց արքա, նրա իշխանությունը ճանաչեցին բաբելոնյան մի քանի քաղաքներ, մասնավորապես Բորսիպպան և Դիլբատը: Սակայն ապստամբությունը լայն ծավալներ չընդունեց: Դրա բռնկումից երկու շաբաթ անց այն ճնշվեց, ապստամբության առաջնորդները մահապատժի ենթարկվեցին:

Բել-շիմաննիի ապստամբությունից երկու տարի անց Բաբելոնում բռնկվեց նոր ապստամբություն՝ Շամաշ-ռիբիի գլխավորությամբ: Օգտվելով այն հանգամանքից, որ Աքեմենյան բանակի գլխավոր ուժերը սկսել էին կենտրոնանալ Փոքր Ասիայում, նախապատրաստվելով հունական արշավանքին՝ ապստամբները իրենց իշխանությունը հաստատեցին շրջակա խոշոր քաղաքների վրա: Քսերքսեսի հրամանով շտապ հետ կանչված զորքերը Մեգաբյուզոսի գլխավորությամբ գրավեցին Բաբելոնին: Քսերքսեսը հրամայեց քանդել քաղաքի պարիսպները, ավերվեցին նաև Էսագիլան և Է-տեմեն-անկին, դրանց հարստությունը բռնագրավվեց, Պերսեպոլիս տարվեց անգամ Մարդուկի ոսկե արձանը: Քսերքսեսը, ինչպես Եգիպտոսի պարագայում, հրաժարվեց «Բաբելոնի թագավոր» տիտղոսից: Բաբելոնը թեև որպես արքունի նստավայր շարունակում էր գոյատևել, սակայն կորցրեց իր նշանակությունը:

Նախապատրաստվելով հունական արշավանքին՝ Խալկիդիկե թերակղզում՝ Աֆոն հրվանդանի մոտ, փորվում էր հրվանդանը շրջանցող ջրանցք: Միաժամանակ, ցամաքային բանակի անցման համար պոնտոնային կամուրջներ կառուցվեցին Հելլեսպոնտոսի վրա: Ավելին՝ Աքեմենյան արքունիքը համաձայնության եկավ Կարթագենի հետ՝ նրան հրահրելով պատերազմ սկսել Սիցիլիայի հունական գաղութների դեմ՝ վերջիններիս հնարավոր օգնությունը մետրոպոլիայի պոլիսներից քացառելու նպատակով:

Ք. ա. 481 թ. սկսված արշավանքը Քսերքսեսն անձամբ էր ղեկավարում: Ըստ Հերոդոտոսի՝ Քսերքսեսի ցամաքային բանակն ուներ 1 մլն 700 հազար հետևակ, 100 հազ. հեծյալ, որոնցից 20 հազարը՝ ուղտերի վրա, նավերում կար 517 հազար 610 զինվոր, իսկ գումակի և նավերի անձնակազմի հետ միասին զորքերի ընդհանուր թիվը հասնում էր 5 մլն 283 հազար 220 մարդու: Այլ անտիկ հեղինակների մոտ թվերն առավել «համեստ են»՝ տատանվում են 700 հազարից 800 հազարի սահմաններում: Հետազոտողների մեծ մասի կարծիքով՝ պարսիկների թիվը տատանվում էր մոտ 200 հազար մարդու սահմաններում, իսկ նվազագույն թիվը, որ բերվում է գրականության մեջ՝ 50-75 հազար է: Հիմք ընդունելով բանակի մատակարարման և թիկունքի ապահովման հետ կապված խնդիրները՝ ենթադրվում է, որ Հունաստանում գործող Քսերքսեսի բանակը կարող էր ունենալ ոչ ավելի, քան 100-120 հազար զինվոր:

Աքեմենյան բանակը Հելլեսպոնտոսով մտավ Թրակիա, ապա բաժանվելով երեք

զորաբանակի՝ մի քանի ուղղություններով շարժվեց դեպի հարավ: Նավատորմն ընթանում էր ափագծի երկայնքով: Թերմն թաղաքի մոտ զորքերը վերստին միավորվեցին: Այստեղ արքան ընդունեց հունական պոլիսներից վերադարձած պատվիրակներին: Որոշ պոլիսներ, այդ թվում՝ Թերեն և Աքայան, ճանաչել էին արքայի գերիշխանությունը: Իսկ թեսալացիներն ուղղակի անցան պարսիկների կողմը: Քսերքսեսի բանակը առանց դիմադրության տիրեց Հյուսիսային Հունաստանին:

Հունական պոլիսների համաժողովը վճռեց նվաճողներին դիմադրել Հյուսիսային Հունաստանը Միջին Հունաստանին կապող Թերմոպիլյան լեռնանցքում՝ թույլ չտալու նրանց հետագա առաջխաղացումը: Սակայն սպարտացիները, ովքեր ընդհանրապես դեմ էին Միջին Հունաստանը պաշտպանելուն, այս հարցում չհասնելով համակարծության, Թերմոպիլե ուղարկեցին ընդամենը 300 զինվոր՝ արքա Լեոնիդասի գլխավորությամբ: Թերմոպիլեում տարբեր պոլիսներից հավաքված զինվորների ընդհանուր թիվը հասավ 6500 մարդու: Միաժամանակ հունական նավատորմը շարժվեց Էվբեա կղզու հյուսիսային ափեր՝ Արտեմիսիա հրվանդան՝ Աքեմենյան նավատորմին ընդառաջ:

Ք. ա. 480 թ. օգոստոսին երեք օր պարսիկներն անարդյունք գրոհում էին Թերմոպիլյան կիրճը: Չորրորդ օրը, երբ տեղի բնակիչներից Էֆիալտեսը պարսիկներին ցույց տվեց կիրճը շրջանցող լեռնային արահետներից մեկը, Լեոնիդասը հրամայեց բոլորին նահանջել: Նահանջն ապահովելու նպատակով նա մնաց իր սպարտացի զինվորներով: Կիրճի բոլոր պաշտպանները զոհվեցին: Պարսիկների կորուստները հասնում էին 20 հազար զինվորի:

Թերմոպիլյան կիրճի անկումից հետո բացվեց Միջին Հունաստան տանող ճանապարհը: Աքեմենյան զորքերը գրավեցին երկրամասի պոլիսները՝ Դորիդան, Լոկրիդան, Փոկիդան, իսկ Բեոտիայի պոլիսները վաղուց էին անցել պարսիկների կողմը:

Աթենական ժողովրդական ժողովը, ստրատեգոս ընտրված Թեմիստոկլեսի խորհրդով, վճռեց քաղաքն առանց դիմադրության հանձնել պարսիկներին: Բնակչությունը տեղափոխվելու էր մոտակա Սալամին և Էգինե կղզիները, իսկ թշնամուն դիմագրավելու էին ծովում: Զենքի ունակ ողջ բնակչությունը վերցվեց նավատորմ, ընդունվեց օրենք, որով թույլատրվում էր Աթենքից վտարված քաղաքական վտարանդիներին վերադառնալ և մասնակցել պատերազմին:

Քսերքսեսը մտավ Աթենք: Հաղթահարելով քաղաքի ակրոպոլիսում ամրացած փոքրաթիվ մարդկանց դիմադրությունը՝ պարսիկները տիրեցին քաղաքին, որը ենթարկվեց թալանի և ավերածությունների: Քսերքսեսի ցամաքային բանակի հետ միասին Աթենքին մոտեցավ նաև նավատորմը: Աքեմենյան արքան բանագնացներ ուղարկեց մայրաքաղաք Սուսա՝ ավելտելու իր հաղթանակը:

Քսերքսեսը սակայն հեռու էր իրական հաղթանակից: Դեռ կանգուն էր հունական նավատորմը: Հելլեսպոնտոսն անցնելուց Աքեմենյան նավատորմը կրել էր խոշոր կորուստներ: Արշավանքի սկզբում ունեցած ճնշող գերակշռությունը հասել էր նվազագույնի: Ք. ա. 480 թ. սեպտեմբերի 28-ին Սալամինի մոտ հունական

նավատորմը հաղթանակ տարավ: Քսերքսեսը շտապեց բանակի հիմնական ուժերով նահանջել Փոքր Ասիա՝ Հունաստանում Մարդոնիոսի հրամանատարությամբ թողնելով զորաբանակ:

Ք. ա. 479 թ. Մարդոնիոսը բանակցություններ սկսեց Կթենացիների հետ անջատ հաշտություն կնքելու նպատակով, սակայն Կթենացիները մերժեցին: Արդյունքում Մարդոնիոսը մտավ Միջին Հունաստան և մեկ անգամ ևս գրավեց Աթենքը: Չհասնելով Կթենացիների հետ համաձայնության, ապա և տեղեկանալով, որ սպարտական զորքերը մոտենում են քաղաքին՝ Մարդոնիոսը նահանջեց Թեբե, ուր տեղանքն առավել բարենպաստ էր պարսկական հեծելազորի գործողությունների համար: Գլխավոր ձևակառուցողը տեղի ունեցավ Բետտիայի Պլատեա քաղաքի մոտ: Հունական պոլիսների միացյալ բանակը Սպարտայի մանևհասակ արքայի խնամակալ էֆոր Պավսանիասի գլխավորությամբ վճռական հաղթանակ տարավ Մարդոնիոսի նկատմամբ: Մարդոնիոսը զոհվեց, իսկ Աթեննյան բանակի մնացորդները նահանջեցին Փոքր Ասիա:

Հունական պոլիսները նոր հաղթանակի հասան արդեն Փոքր Ասիայի ափերի մոտ՝ Միլեթից ոչ հեռու գտնվող Միկալե հրվանդանի մոտ: Այստեղ կենտրոնացել էր Աթեննյան 60-հազարանոց զորաբանակը Տիգրանի հրամանատարությամբ: Հունական նավատորմը Միկալեի մոտ անարգել դեսանտ իջեցրեց: Ճակատամարտում Աթեննյանների ցամաքային բանակը կրեց նոր պարտություն, իսկ Տիգրանը զոհվեց: Միկալեի հաղթանակը հնարավորություն տվեց ազատագրելու նաև Էգեյան ավազանի կղզիները: Ք. ա. 478 թ. Կթենական նավատորմը գրավեց Խերսոնես թերակղզին, միաժամանակ Պավսանիասի առաջնորդած նավատորմը գրավեց Կիպրոսի մեծ մասը, ապա տիրեց Բյուզանդիոնին:

Միկալեի ձևակառուցողից հետո հույն-պարսկական ընդհարումները տեղի էին ունենում մեծ ընդմիջումներով՝ որպես առանձին իրագործված փոքրածավալ գործողություններ: Միայն Ք. ա. 468 թ., այն քանից հետո, երբ Աթեննյան իշխանությունը վերականգնվեց Կիպրոսում, Կթենական միությունը անցավ վճռական գործողությունների: Փոքր Ասիայի հարավային ափեր ուղարկվեց նավատորմ՝ Կթենացի Կիմոնի գլխավորությամբ: Էվրիմեդոնոս գետի մոտ տեղի ունեցած ծովային ձևակառուցողական Աթեննյան նավատորմը ջախջախվեց: Մարտերը շարունակվեցին ցամաքում, որտեղ մեկ անգամ ևս հաջողվեց պարտության մատնել Աթեննյանների ցամաքային ուժերին:

Աթեննյան տերությունը սկսեց ցնցվել: Դրա առաջին արտահայտությունը արքայի եղբայր Մասիստեսի ապստամբելու փորձն էր: Երկրում սկսված դժգոհության ալիքն ավելի խորացավ Ք. ա. 467 թ. բռնկված սովի պատճառով: Համաձայն պաշտոնական վավերագրերի՝ հացի գները թանկացել էին ավելի քան յոթ անգամ: Այս շրջանում արքայի նկատմամբ մեծ ազդեցություն ձեռք բերեցին նրա թիկնազորի հրամանատար Արտաբանոսը և ներքինի Ասպամիթրան: Վերջիններս դավադրություն կազմակերպեցին Քսերքսեսի դեմ և Ք. ա. 465 թ. նրան սպանեցին: Գահին բազմեց Քսերքսեսի որդի Արտաքսերքսես I-ը (Ք. ա. 465-424 թթ.):

Արտաքսերքսեսի կառավարումը հենց սկզբից հարթ չընթացավ: Ք. ա. 464 թ. նրա դեմ ապստամբեց եղբայրը՝ Բակտրիայի սատրապ Վշտասպը: Ապստամբությունը ճնշվեց, իսկ Վշտասպը զոհվեց մարտում: Անհանգստանալով, որ մյուս եղբայրները ևս կարող են ապստամբել, Արտաքսերքսեսը հրամայեց բոլորին կոտորել:

Ք. ա. 460 թ. խոշոր ապստամբություն բռնկվեց Եգիպտոսում: Ապստամբության պատճառը պարսկական վարչակազմի գործած ապօրինություններն էին հատկապես եգիպտական սրբավայրերի նպատմամբ, ինչպես նաև ծանր հարկերը: Առաջինը ոտքի ելան լիբիացիները՝ Ինարայի գլխավորությամբ: Մեկ այլ ապստամբություն ծագեց Սաիսում: Այստեղ ապստամբներին առաջնորդում էր Ամիրտիան: Նրանց ձեռքն անցավ ողջ Ստորին Եգիպտոսը՝ բացառությամբ Մեմֆիսի: Եգիպտոսի սատրապ Աթեննը, հավաքելով խոշոր բանակ, դուրս եկավ ապստամբների դեմ: Տեղի ունեցած ձևակառուցողական պարսիկները ջախջախվեցին, սպանվեց նաև Աթեննը:

Ապստամբներն օգնության խնդրանքով դիմեցին Կթենացիներին: Վերջիններս արձագանքեցին՝ եգիպտական ափեր ուղարկելով Աթենական միության ավելի քան 200 նավից բաղկացած նավատորմ՝ ցամաքային խոշոր ուժերով: Միության նավատորմը մտավ Նեղոս, ջախջախեց այստեղ Աթեննյանների եգիպտական տորմիորը, ապա շարժվեց դեպի Մեմֆիս: Քաղաքի միջնաբերդը, ուր ամրացել էր պարսկական կայազորը, պաշարվեց:

Մեմֆիսի պաշարումը տևեց գրեթե մեկ տարի՝ պաշարողներին պատճառելով մեծ կորուստներ: Աթեննյան արքունիքի փորձը՝ Աթենքի դեմ հանել Սպարտային, արդյունք չտվեց: Դա ստիպեց Արտաքսերքսեսին Եգիպտոսի դեմ հանել նոր բանակ՝ Սիրիայի և Փյունիկիայի սատրապ Մեգաբյուզոսի գլխավորությամբ: Ք. ա. 456 թ. Աթեննյան զորքերը ջախջախեցին ապստամբներին և մինչև 454 թ. հնազանդեցրին գրեթե ողջ Եգիպտոսը: Ապստամբության առաջնորդներից Ինարան, ինչպես նաև մի քանի տասնյակ հույներ մահապատժի ենթարկվեցին: Եգիպտոսի նոր սատրապ նշանակվեց Արշամը:

Ք. ա. 450 թ. Արտաքսերքսեսի դեմ ապստամբեց նույն Մեգաբյուզոսը: Նա երկու անգամ պարտության մատնեց իր դեմ ուղարկված զորքերին: Աթեննյան արքան ստիպված էր հաշտություն կնքել Մեգաբյուզոսի հետ՝ նրան տալով մի շարք արտոնություններ, պահպանելով նաև պաշտոնը՝ որպես Սիրիայի և Փյունիկիայի սատրապ: Արտաքսերքսեսի այդ քայլը պայմանավորված էր հունական նոր արշավանքի սպառնալիքով:

Ք. ա. 449 թ. Աթենական միության 200 նավից բաղկացած նավատորմը Կիմոնի գլխավորությամբ գրավեց Կիպրոսի մի մասը: Նա 60 նավից բաղկացած մի զորախումբ ուղարկեց Եգիպտոսի ափեր՝ փորձելով նոր ապստամբություն հրահրել Ամիրտիայի գլխավորությամբ, որը դեռ շարունակում էր պայքարել պարսիկների դեմ: Մնացյալ նավախումբով Կիմոնը շարժվեց դեպի Կիտիոն՝ Կիպրոսի քաղաքներից մեկը: Քաղաքի պաշարումը անհաջող ընթացք ստացավ, հիվանդությունից մահացավ նաև Կիմոնը: Մոտեցող փյունիկյան և կիլիկյան տորմիղների պատճա-

նով աթենացիները դադարեցրին պաշարումը և նահանջեցին Սալամին՝ Կիպրոսի գլխավոր հունական քաղաքը: Սալամինի մոտ տեղի ունեցած ծովային և ցամաքային մարտերում Աթեննյան զորքերը վերստին ջախջախվեցին:

Կիտիոնի և Սալամինի ճակատամարտերը հույն-պարսկական պատերազմների շարքում վերջինն էին: Հաշտություն կնքելու կողմնակիցների դիրքերն ամրապնդվեցին Աթենքում Կիմոնի մահից հետո: Աթեննյան արքունիքում նման դիրքորոշում ունեին Մեգաբյուզոսն ու Թրակիայի սատրապ Արտաբազոսը: Վերջիններս տեղեկացրին աթենացիներին Արտաքսերքսեսի՝ հաշտություն կնքելու պատրաստակամության մասին: Աթենացիներն ընդունեցին հաշտություն կնքելու առաջարկը: Աթեննյան տերության մայրաքաղաք Սուսա ուղարկվեց պատվիրակություն՝ Կալլիոսի գլխավորությամբ:

Ըստ պայմանագրի՝ Փոքր Ասիան և Էգեյան ավազանը բաժանվեցին ազդեցության գոտիների: Թեև փոքրասիական հունական քաղաքները ձեռնարկեցին մնում էին Աթեննյան գերիշխանության տակ, սակայն դրանց փաստացի կառավարումը, բացառությամբ մի քանիսի, անցնում էր աթենացիներին: Աթեննյան զորքերը հետ էին քաշվելու Էգեյան ծովի ափերից: Աթեննյան արքան փաստացի գրկվում էր նաև Էգեյան ծովում նավատորմ պահելու իրավունքից: Կիպրոսը վերադարձվեց Աթեննյաններին, իսկ Աթենական միությունը ձեռնպահ էր մնալու այսուհետ Եգիպտոսին օժանդակելուց:

6. ԱԹԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՐԵՏԻ ՀԱՋՈՐԴՆԵՐԻ ՕՐՈՔ

Արտաքսերքսեսի միակ օրինական ժառանգը՝ Քսերքսես II-ը, գահին մնաց ընդամենը մեկուկես ամիս և սպանվեց պալատական դավադրության հետևանքով: Գահ բարձրացած Արտաքսերքսես I-ի որդիներից Սոգդիանոսը՝ ծնված արքայի հարձերից մեկից, արքունիքում չունեւր ամուր հենարան: Վերջինս ստիպված էր գահին բազմելու հրավիրել խորթ եղբորը՝ Բակտրիայի սատրապ Օքոսին (Վահաուկա): Վերջինս չէր շտապում մեկնել մայրաքաղաք և միայն արքունի որոշ մեծամեծների իր կողմը գրավելուց հետո, որոնց թվում էին Եգիպտոսի սատրապ Արշամն ու հեծելազորի հրամանատար Արքարը, իրեն հոչակեց արքա: Սոգդիանոսը վեցուկես ամիս կառավարելուց հետո անձնատուր եղավ՝ ապավինելով Օքոսի ողորմածությանը, սակայն ենթարկվեց մահապատժի:

Նոր արքան ընդունեց դինաստիական Դարեհ անվանումը (Դարեհ II, Ք. ա. 423–404 թթ.): Նա անմիջապես հրամայեց մահապատժի ենթարկել Քսերքսես II-ի սպանության մասնակիցներին, ապա ճնշեց իր եղբայր Արսիտայի ապստամբությունը Սիրիայում: Չնայած դրան՝ դավադրություններն ու պալատական հեղաշրջման փորձերը չդադարեցին: Տարբեր ժամանակներում արքայի դեմ ապստամբեցին պարսկական վերնախավի ներկայացուցիչներից Տերմտուքոսը և Ամորզոսը, որոնք

անհաջողություն կրեցին: Ք. ա. 413 թ. ապստամբեց Լիդիայի սատրապ Պիստոֆանան: Ապստամբությունը ճնշվեց Տիսափեռնեսի կողմից, որն իր կողմը գրավեց սատրապի հույն վարձկանների հրամանատար Լիկոնին: Տիսափեռնեսն առատորեն պարգևատրվեց Դարեհ II-ի կողմից՝ նշանակվելով Լիդիայի, Կարիայի և Հոնիայի սատրապ:

Դարեհ II-ի օրոք Աթեննյան արքունիքը փորձեց վերականգնել իր նախկին ազդեցությունն արևմուտքում: Օգտվելով Աթենքի ծանր դրությունից՝ նա Տիսափեռնեսին հանձնարարեց իր ձեռքը վերցնել հարկահանության գործը Հոնիայի քաղաքներում, որը մինչ այդ տնօրինում էին աթենացիները: Այդ նպատակով Տիսափեռնեսը Ք. ա. 412 թ. ձեռնտու դաշնագիր կնքեց Սպարտայի հետ: Դաշնագրով Սպարտան ճանաչում էր Աթեննյան արքայի լիակատար իրավունքները Փոքր Ասիայի հունական պոլիսների նկատմամբ: Փոխարենը Աթեննյան արքունիքը պարտավորվում էր ռազմական և նյութական օգնություն ցուցաբերել Սպարտային՝ Աթենական միության դեմ նրա մղած պայքարում: Տիսափեռնեսի բանակն ու սպարտացիները սկսեցին գրավել Փոքր Ասիայի անհնազանդ քաղաքները: Սակայն կարճ ժամանակ անց ի հայտ եկան տարաձայնություններ, ինչը ստիպեց վերանայել դաշնագրի դրույթները: Ք. ա. 410 թ. կնքվեց նոր դաշնագիր:

Սպարտայի հետ դաշնագիր կնքած մյուս պաշտոնյան Թրակիայի սատրապ Փառնաբազոսն էր, որի ուժերը գործուն մասնակցություն ունեցան Պելոպոննեսյան պատերազմների վերջին փուլին: Օրինակ՝ Ք. ա. 409 թ. Կիզիկոսի ծովամարտին Սպարտայի գլխավորած Կորնթոսյան միության հետ աթենացիների դեմ կռվում էր նաև Աթեննյան սատրապ Փառնաբազոսի նավատորմը: Աթեննյան արքունիքը վճռեց ավարտին հասցնել պատերազմը՝ ամբողջությամբ աջակցելով Սպարտային: Ք. ա. 408 թ. Տիսափեռնեսը պաշտոնազրկվեց՝ իր ձեռքում պահելով միայն Կարիայի սատրապի պաշտոնը, իսկ Լիդիայի, Փոյուզիայի և Կապադովկիայի սատրապությունները տրվեցին Դարեհի որդիներից Կյուրոս Կրտսերին: Վերջինս ուներ արտակարգ լիազորություններ, մասնավորապես նրան էին ենթարկվելու Փոքր Ասիայում տեղաբաշխված Աթեննյան զորքերը:

Կյուրոս Կրտսերը սկսեց գործուն աջակցություն ցույց տալ Սպարտային: Աթեննյան գանձարանից Սպարտային փոխանցվեց ընդհանուր առմամբ 5000 տաղանդ գումար: Դրանով հնարավոր էր հինգ տարի շարունակ պահել 100 նավ՝ իր անձնակազմով: Սպարտական ուժերը՝ Լիսանդրոսի հրամանատարությամբ, սկսեցին գրավել հոնիական պոլիսները՝ դրանց կառավարումը հանձնելով Կյուրոսին:

Պելոպոննեսյան պատերազմից, ըստ էության, հաղթանակած դուրս եկավ Աթեննյան տերությունը: Աթեննյանները, առանց լուրջ ռազմական գործողությունների, վերականգնեցին իրենց իշխանությունը ողջ Փոքր Ասիայում: Չնայած սրան՝ Աթեննյանների հզորությունը խաբուսիկ էր: Տերության ներսում այդպես էլ կայունություն չտիրեց: Փոքր Ասիայի սատրապները մշտապես պատերազմում էին միմյանց դեմ, ինչին սովորաբար արքունիքը չէր խառնվում: Քիչ չէին առանձին սատրապների ելույթները նաև կենտրոնական իշխանության դեմ: Ք. ա. 411–408 թթ.

Փոքր Ասիայում և Մարաստանում ծագած ապստամբություններին հետևեց նորը՝ այս անգամ արդեն Եգիպտոսում:

Ք. ա. 405–404 թթ. սահմաններում հուզումներ սկսվեցին Եգիպտոսում գտնվող լիբիացիների շրջանում: Այն վերածվեց ապստամբության՝ Ամիրտիա II-ի գլխավորությամբ, որն իրեն հռչակեց փարավոն: Ապստամբների ձեռքն անցավ ողջ Եգիպտոսը, այստեղ տեղաբաշխված պարսկական զորքերը վտարվեցին, իսկ այլազգիներից կազմված որոշ կայազորային ուժեր հավատարմության երդում տվեցին նոր փարավոնին: Սիրիայում տեղաբաշխված Աքեմենյան զորքերի հրամանատար Աբրոկոմը սկսեց գումարել զորքեր՝ Եգիպտոս արշավելու նպատակով, սակայն Փոքր Ասիայում սկսված նոր և անսպասելի զարգացումները փոխեցին Եգիպտոսը հնազանդեցնելու ծրագրերը: Կյուրոս Կրտսերն ապստամբություն էր բարձրացրել Փոքր Ասիայում:

Կյուրոս Կրտսերի ապստամբությունը կապված էր գահաժառանգման խնդրի հետ: Նա՝ որպես Դարեհ II-ի որդիներից կրտսերը, ձգտում էր տիրել գահին՝ ապավինելով մոր օժանդակությանը: Հայտնի է, որ թագուհի Պարիսատիդեն մեծ ազդեցություն ուներ ինչպես արքունիքում, այնպես էլ արքայի վրա: Սակայն արքան գահաժառանգ էր հռչակել ավագ որդուն՝ Արշակին, և հրաժարվում էր փոխել որոշումը: Կյուրոսն իր հավակնությունները բացատրում էր հնագույն սովորությամբ, ըստ որի՝ գահաժառանգ էր դառնալու արքայի որդիներից նա, ով առաջինն էր ծնվել հոր գահակալելուց հետո: Արքայի ավագ որդին ծնվել էր մինչև Դարեհի գահ բարձրանալը:

Ք. ա. 404 թ., տեղեկանալով Դարեհ II-ի հիվանդության մասին, Կյուրոս Կրտսերը շտապեց Բաբելոն: Նույն թվականին արքան մահացավ: Աքեմենյան մայրաքաղաք Պասարգադքում հանդիսավորությամբ գահին բազմեց Արշակը՝ ընդունելով դինաստիական Արտաքսերքսես անունը (Արտաքսերքսես II, Ք. ա. 404–358 թթ.):

Երբոր գահակալությանն ընդդիմացած Կյուրոսը, վերադառնալով Փոքր Ասիա, հրաժարվեց նրա իշխանությունը ճանաչելուց: Նա սկսեց զորքեր գումարել, ռազմական օժանդակություն ստացավ Սպարտայից, վարձու զորքեր հավաքվեցին մայրցամաքային Հունաստանի մի շարք շրջաններից: Ռազմական նախապատրաստությունները պաշտոնապես իրականացվում էին իբրև թե Կարիայի սատրապ Տիսափեռնեսի դեմ արշավելու նպատակով:

Հավաքելով խոշոր բանակ, այդ թվում նաև մոտ 13 հազար հույն վարձկաններ՝ սպարտացի Կլեարքոսի գլխավորությամբ Կյուրոսը դուրս եկավ Սարդեսից՝ ուղղվելով դեպի Կիլիկիա: Երբ հույն վարձկանները հրաժարվեցին շարունակել ճանապարհը՝ կասկածելով, որ Կյուրոսն իրականում արշավում է արքայի դեմ, հայտարարվեց, թե արշավանքն ուղղված է Սիրիայի սատրապ Աբրոկոմի դեմ: Միայն Սիրիայում Կյուրոսը զինվորներին հայտնեց արշավանքի իրական նպատակալետը: Այս ընթացքում Աքեմենյան արքան գումարում էր զորքերը: Հետ կանչվեց Աբրոկոմի բանակը, որը պատրաստվում էր արշավելու Եգիպտոս: Հավաքելով մոտ 40-հազարանոց բանակ՝ Արտաքսերքսեսը շարժվեց դեպի Բաբելոնիա:

Երկու բանակները հանդիպեցին Ք. ա. 401 թ. սեպտեմբերի 3-ին Կունաքսայում՝

Բաբելոնից մոտ 90 կմ հեռու: Անտիկ հեղինակների պնդմամբ՝ Կյուրոսը մոտ էր հաղթելուն, սակայն զրոհներից մեկի ժամանակ նա սպանվեց: Կյուրոսի բանակը սկսեց նահանջել, իսկ հետո անցավ Արտաքսերքսեսի կողմը: Հույն վարձկանները, որոնք Կյուրոսի զոհվելու մասին իմացան միայն հաջորդ օրը, իրենց ծառայություններն առաջարկեցին Արտաքսերքսեսին: Կայացված համաձայնությամբ հույներին հնարավորություն տրվեց նահանջելու դեպի Հոնիա՝ պայմանով, որ ճանապարհին բռնություններ չեն լինելու: Սակայն պարսիկ զորավար Տիսափեռնեսի մոտ խորհրդակցության կանչված հույն զորավարները դավադրաբար սպանվեցին, և հունական զորքը ստիպված էր նահանջել դեպի Հյուսիսային Միջագետք, ապա և, անցում կատարելով Հայաստանի միջով, դուրս գալ սևծովյան ափ:

Սպարտայի կողմից պատերազմը շարունակվեց նաև Կյուրոսի զոհվելուց հետո: Հոնիական քաղաքները, որոնք գտնվում էին Կյուրոսի իշխանության տակ, Արտաքսերքսեսի հնարավոր արշավանքի սպառնալիքի տակ օգնության խնդրանքով դիմեցին Սպարտային: Վերջինս 5000 զինվոր ուղարկեց Եփեսոս՝ պաշտպանելու տեղի բնակչությանը: Ք. ա. 395 թ. սպարտական 20-հազարանոց բանակը արքա Ագեսիլայոսի գլխավորությամբ Սարդեսի մոտ ջախջախեց Փոքր Ասիայի սատրապությունները ստացած Տիսափեռնեսի ուժերին: Վերջինս արքայի հրամանով ենթարկվեց մահապատժի: Նրան փոխարինած Տիփրավստեսը կարողացավ կաշառքի միջոցով հունական մի շարք պոլիսների, ներառյալ Աթենքը, Կորնթոսը, Արգոսը և Թեբեն, դուրս բերել Սպարտայի դեմ: Սկսվեց այսպես կոչված Կորնթոսյան պատերազմը: Ք. ա. 394 թ. դաշնակիցների միացյալ նավատորմը աթենացի Կոնոնի գլխավորությամբ, որին աջակցում էր Աքեմենյան սատրապ Փառնաբազոսի նավախումբը, գլխովին ջախջախեց Լիսանդրոսի հրամանատարած սպարտական նավատորմը: Փոքրասիական ափերի բազում կղզիներ, ինչպես նաև հոնիական մի քանի քաղաքներ կամավոր ընդունեցին Աքեմենյանների գերիշխանությունը: Մարտական գործողությունները շարունակվեցին առժամանակ ևս: Ի վերջո Սպարտան ստիպված եղավ զորքերը հետ կանչել Փոքր Ասիայից և հաշտություն խնդրել պարսիկներից: Վերջիններս ընդառաջեցին, քանի որ նրանց ծրագրերի մեջ չէր մտնում նաև Աթենքի չափազանց հզորացումը: Այս շրջանում Աթենքն ակտիվորեն աջակցում էր Աքեմենյան գերիշխանությունը թոթափած Սալամին քաղաքի արքա Էվագորասին, որի տիրապետության տակ էր հայտնվել գրեթե ողջ Կիպրոսը:

Սպարտական պատվիրակությունը Անտալիդասի գլխավորությամբ Ք. ա. 387 թ. ժամանեց Սարդես: Այստեղ ժամանեցին նաև այլ պոլիսների դեսպանները: Հաշտության պայմանագիրը կնքվեց Ք. ա. 386 թ. և ստացավ Անտալիդասի անունը: Պայմանագրով Աքեմենյանները վերականգնեցին իրենց նախկին դիրքերը Փոքր Ասիայում և Էգեյան ծովում: Բացառվելու էր հունական որևէ ռազմաքաղաքական դաշինքի ձևավորումը՝ բացառությամբ Սպարտայի և նրա դաշնակիցների: Հետագայում Աքեմենյան արքունիքը իր վրա վերցրեց նաև հունական պոլիսների միջև հաշտարարի դերը:

Եթե Աբեմենյաններին հաջողվում էր պահպանել իրենց քաղաքական կշիռը հունական աշխարհում, ապա այլ էր իրավիճակը Եգիպտոսում:

Դարեհ II-ի մահով Եգիպտոսում սպառվեց 27-րդ՝ պարսկական կամ «մարական» հարստությունը: Եգիպտոսում ապստամբություն բարձրացրած և իրեն փարավոն հռչակած Ամիրտիան նոր՝ 28-րդ հարստության միակ ներկայացուցիչն էր (Ք. ա. 405/404–399 թթ.): Նրանից հետո գահն անցավ Մենդես քաղաքից սերող Նեֆերիտ I-ին, որն էլ հիմնադրեց եգիպտական 29-րդ հարստությունը: Եգիպտոսը վերելք ապրեց հատկապես Նեֆերիտ I-ի հաջորդի՝ Ակորիսի օրոք (Ք. ա. 393–382/80 թթ.):

Ակորիսը վարում էր ակտիվ արտաքին քաղաքականություն, որի առանցքն ուղղված էր Աբեմենյան տերության դեմ: Նա դաշնակցային հարաբերություններ հաստատեց Աբեմենյանների հակառակորդների հետ, ներառյալ Աթենքը, Կիպրոսը, փոքրասիական պիսիդիացիները: Նրա օրոք վերստին աճեց հույն վարձկան զորքերի կշիռը եգիպտական բանակում: Միաժամանակ սկսվեց ռազմածովային խոշոր նավատորմի շինարարությունը:

Եգիպտոսի վերելքից անհանգստացած Արտաքսերքսես II-ը սկսեց ռազմական նախապատրաստություններ տեսնել: Անտալկիդասյան հաշտությունը հնարավորություն էր ընձեռում Աբեմենյան արքային ողջ ուժերն ուղղելու Կիպրոսի և Եգիպտոսի վերանվաճմանը:

Նախկինում Հայաստանի մի մասի սատրապ, ապա և Լիդիայի ու Հոնիայի սատրապ նշանակված Տիրիբազոսի գլխավորությամբ Աբեմենյան մի նավախումբ ուղղվեց Եգիպտոսի դաշնակից Կիպրոսի դեմ, իսկ ցամաքային ուժերը՝ Փառնարագոսի և Տիփրավստեսի գլխավորությամբ, շարժվեցին Եգիպտոսի դեմ: Ք. ա. 385–383 թթ. Եգիպտոս իրագործված արշավանքներն անարդյունք էին: Ակորիսը ոչ միայն հաջողությամբ դիմագրավեց նրանց, այլև ինքն անցավ հարձակման: Նա գրավեց փյունիկյան քաղաք Տյուրոսը, իսկ եգիպտական նավատորմը սկսեց գերիշխել արևելամիջերկրածովյան ավազանում:

Ք. ա. 382 թ. Տիրիբազոսն ավարտեց նախապատրաստական աշխատանքները: Կիպրոսի նվաճման համար կենտրոնացվեցին ցամաքային և ծովային խոշոր ուժեր՝ Հայաստանի, ապա և Միսիայի սատրապ նշանակված Օրոնտասի գլխավորությամբ: Ք. ա. 381 թ. Կիտիոն քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Կիպրոսի արքա Էվագորասը պարտվեց և ստիպված էր նահանջել Սալամին: Ի վերջո կողմերը եկան համաձայնության, որով Կիպրոսի արքան ձանաչելու էր ի գերիշխանությունը:

Մինչ Աբեմենյանները զբաղված էին կիպրական խնդրով, Եգիպտոսում տեղի ունեցավ իշխանափոխություն: Ակորիսի մահից հետո նրան հաջորդած երկու փարավոնները կառավարեցին ընդամենը մի քանի ամիս, և գահը բռնազավթվեց Նեկտաներ I-ի կողմից, որն էլ հիմնեց եգիպտական 30-րդ հարստությունը:

Նեկտաներ I-ը (Ք. ա. 380–363 թթ.) հաջողությամբ հետ մղեց Ք. ա. 373 թ. Եգիպտոս իրագործված պարսկական արշավանքը: Համաձայն աղբյուրների՝ Փառնա-

բազոսի առաջնորդած Աբեմենյան 200-հազարանոց բանակը, 20 հազար հույն վարձկանների և 300 նավից կազմված տորմիդի ուղեկցությամբ հաղթահարելով սահմանային Պելուսիա քաղաքի մոտ կառուցված արգելքները, հաջողությամբ ավիջավ Նեղոսի գետաբերանում և սկսեց ամայացնել երկիրը: Սակայն Փառնարագոսը հապաղեց գրավել մայրաքաղաքը: Արդյունքում կորսվեց թանկարժեք ժամանակը, սկսվեցին Նեղոսի վարարումները, և Աբեմենյան բանակը ստիպված էր ծանր կորուստներով հետ դառնալ:

Ք. ա. 363 թ. Նեկտաներ I-ին հաջորդեց որդին՝ փարավոն Տախեն (Ք. ա. 363–361 թթ.): Նա շարունակեց պայքարը Աբեմենյանների դեմ: Դաշնակցելով Փոյուզիայի սատրապ Արիոբարզանեսի հետ, որն ապստամբել էր արքայից արքայի դեմ, Տախեն վճռեց գրավել Աբեմենյանների անդրեփրատյան տարածքները՝ Սիրիան, Փյունիկիան ու Պաղեստինը:

Նրան հաջողվեց հավաքել խոշոր բանակ: Իր 80-հազարանոց բանակին միացան շուրջ 11 հազար հույն վարձկաններ: Նրանց մեջ էր 80-ամյա Ագեսիլայոսը՝ առաջնորդելով սպարտացի վարձկաններին: Եգիպտական նավատորմն ուներ 120 նավ, որոնց միացան Փոքր Ասիայի ապստամբ սատրապների ուղարկված շուրջ 50 ռազմանավեր:

Ներխուժելով Ասորիք՝ Տախեն սկսեց հաջողությամբ առաջանալ երկրում, սակայն նրա թիկունքում բռնկվեց ապստամբություն, որը արշավանքի ձախողման պատճառ դարձավ: Եգիպտական բանակի զորավարներից մեկը՝ Տախեի ազգական Նեկտաները, իրեն հռչակեց փարավոն: Սպարտացի վարձկաններն աջակցեցին նրան, և Տախեն ստիպված էր փախչել Աբեմենյան արքայի մոտ: Ճնշելով Եգիպտոսում բարձրացված խռովությունը՝ Նեկտաներ II-ը պաշտոնապես բազմեց գահին (Ք. ա. 361–343 թթ.):

Այսպիսով՝ Աբեմենյան արքունիքի փորձերը՝ հասնելու անջատված տարածքների վերանվաճմանը, ավարտվեցին անարդյունք: Իսկ արշավանքները խլում էին հսկայական նյութական և մարդկային միջոցներ: Միայն Տիրիբազոսի արշավանքը Կիպրոս արժեցավ 15 հազ. տաղանդ՝ չհաշված մարդկային կորուստները: Խորացավ քաղաքական մասնատվածությունը տերության մեջ: Հուզումները շարունակվում էին փյունիկյան և փոքրասիական սատրապություններում: Փոքր Ասիայում ստեղծվեց առանձին՝ Կարիայի թագավորությունը, որն առավել հզորացավ Մավսոյոս արքայի (Ք. ա. 377–353 թթ.) և Արտեմիսիա թագուհու օրոք (Ք. ա. 353–350 թթ.):

Աբեմենյանների տերությունը ցնցվեց հատկապես, այսպես կոչված, «սատրապների մեծ ապստամբության» ժամանակ: Նախկինում Արտաքսերքսես II-ի թիկնազորի հրամանատար, ապա փոքրասիական մի քանի սատրապությունների կառավարիչ նշանակված Դատամեսը Ք. ա. 373 թ. հրաժարվեց արքայից արքայի իշխանությունը ձանաչելուց: Նա Կապադովկիայում և Փոքր Ասիայի այլ շրջաններում կառավարում էր որպես անկախ տիրակալ՝ հատելով անգամ սեփական դրամներ՝ արքայականի նմանությամբ: Դատամեսին միացան Փոյուզիայի սատրապ Արիոբարզանեսը, Հոնիայի սատրապ Օրոնտասը և, ի վերջո, նաև Լիդիայի սատրապ

Ավտոփրադատեսը: Ապստամբ սատրապները ռազմական օժանդակություն ստացան փոքրասիական լիկիացիների և պիսիդիացիների կողմից, ինչպես նաև Սպարտայից և Աթենքից: Գրեթե տասը տարի Փոքր Ասիան անկախ էր Աքեմենյան արքայից: Սատրապներն անգամ պատրաստվում էին ներխուժել Սիրիա: Սակայն Աքեմենյան արքունիքին հաջողվեց խարդավանքների միջոցով՝ շահագրգռելով առանձին սատրապների, երկպառակություն սերմանել նրանց շարքերում և, ի վերջո, Ք. ա. 359 թ. Դատամեսի սպանությամբ ապստամբությունն ավարտվեց:

Աքեմենյան տերությունը տարածքներ էր կորցնում նաև արևելքում: Անջատվեցին Խորեզմը, Սոգդիանան, մի շարք սկյութական ցեղեր արքայի հպատակներից վերածվեցին նրա դաշնակիցների: Փլուզվող տերությունը փրկելու մի վերջին ջանք գործադրեց Արտաքսերքսես II-ին հաջորդած որդին՝ Օրոսը, որը ստացավ դինաստիական Արտաքսերքսես III անունը (Ք. ա. 358–338 թթ.): Նա անմիջապես հրամայեց կոտորել գահի բոլոր հնարավոր հավակնորդներին: Ըստ անտիկ հեղինակների՝ միայն մեկ օրում սպանվեցին նրա եղբայրներից 80-ը:

Արտաքսերքսեսը կարող գործիչ էր: Սկզբից նեթ նա լծվեց փլուզվող տերությունը վերականգնելու գործին: Ճնշվեցին հուզումները Փոքր Ասիայում և Սիրիայում, հնազանդեցվեցին մերձկասպյան կադուսիացիների ցեղերը, ընդ որում՝ այդ գործում աչքի ընկած Արշամ Կողոմանոսը որպես պարզև ստացավ Հայաստանի սատրապի պաշտոնը:

Հաջորդ քայլն Աքեմենյանների իրական իշխանության վերականգնումն էր Փոքր Ասիայում: Արտաքսերքսեսն էապես սահմանափակեց փոքրասիական սատրապների իրավունքները, մասնավորապես՝ նրանց արգելելով պահել վարձու զորքեր: Բոլոր սատրապներից պահանջվեց ցրել զորքերը: Արքայի հրամանին ընդդիմացավ Փոյուգիայի սատրապ Արտաբազոսը, որին միացավ Միսիայի սատրապ Օրոնտասը: Ք. ա. 356 թ. նրանք կարողացան հույն վարձկանների ուժերով պարտության մատնել Արտաքսերքսեսի բանակին: Սակայն հաջորդ մարտերում սատրապները պարտվեցին, Օրոնտասը հանձնվեց արքայի ողորմածությանը, իսկ Արտաբազոսը ապաստան գտավ Մակեդոնիայում:

Ք. ա. 350 թ. Արտաքսերքսեսն առաջին փորձն արեց գրավելու Եգիպտոսը, ինչն ավարտվեց անհաջողությամբ: Ավելին՝ Ք. ա. 349 թ., ապավինելով եգիպտական օգնությանը, Աքեմենյանների դեմ ապստամբեցին փյունիկեցիները՝ Սիդոնի արքա Թեննեսի գլխավորությամբ: Ապստամբները, ստանալով Եգիպտոսի ռազմական օժանդակությունը, կարողացան երկու անգամ պարտության մատնել Աքեմենյան բանակներին: Ապստամբությունը ծավալվեց՝ ընդգրկելով Կիլիկիան, Կիպրոսը և Պաղեստինը: Այս իրավիճակում Արտաքսերքսեսն իր ձեռքը վերցրեց բանակի հրամանատարությունը՝ անձամբ գլխավորելով արշավանքը դեպի Փյունիկիա:

Ք. ա. 345 թ., հավաքելով հսկայական բանակ և շուրջ 300 նավից բաղկացած նավատորմ, Աքեմենյան արքան պաշարեց անառիկ Սիդոնը: Սիդոնի արքայի դավաճանության պատճառով Աքեմենյան զորքերը անակնկալ մտան քաղաք: Սիդոնը ենթարկվեց սարսափելի ավերածությունների, սպանվեց ավելի քան 40 հազար մարդ,

որը մնացած բնակչությունը գերեվարվեց և վաճառվեց ստրկության: Հաջորդ տարի փյունիկյան քաղաքները դադարեցրին դիմադրությունը: Փյունիկիան կցվեց Կիլիկիային, սատրապ նշանակվեց Մազայոսը: Նույն տարի վերանվաճվեց Կիպրոսը:

Ք. ա. 344 թ. Արտաքսերքսես III-ը մայրցամաքային Հունաստանի պոլիսներ ուղարկեց դեսպանություններ՝ նրանցից պահանջելով իրենց զորքերով մասնակցել արքայի եգիպտական արշավանքին: Աթենքն ու Սպարտան հրաժարվեցին զորք տրամադրելուց, սակայն մի քանի այլ պոլիսներ, այնուամենայնիվ, զորքեր ուղարկեցին: Ք. ա. 343 թ. Արտաքսերքսեսի բանակն ուղղվեց դեպի Եգիպտոս:

Աքեմենյան զորքերի դեմ փարավոն Նեկտաներ II-ը կարողացավ դուրս բերել շուրջ 100-հազարանոց բանակ, որոնցից 20 հազար հույներ էին, նույնքան էլ կազմում էին լիբիացի վարձկանները: Փարավոնն ուներ նաև հզոր նավատորմ:

Մարտերը սկսվեցին սահմանային Պելուսիա քաղաքի մոտ: Մինչ եգիպտացիները հաջողությամբ պաշտպանում էին քաղաքը՝ հետ մղելով աքեմենյան բանակի բոլոր զրոհները, լուր ստացվեց այն մասին, որ պարսիկները գտնվում են եգիպտական բանակի խոր թիկունքում: Դա ստիպեց փարավոնին իր զորքերով հետ դառնալ: Պելուսիայից հետո Աքեմենյան զորքերը սկսեցին գրավել Դելտայի շրջանի քաղաքները և առաջանալ դեպի մայրաքաղաք Մեմֆիս: Այս նույն շրջանում տարածայնություններ ծագեցին Նեկտաների հույն և եգիպտացի զորավարների միջև: Արդյունքում հույն վարձկանները դավաճանեցին փարավոնին և անցան Արտաքսերքսեսի կողմը: Նեկտաները ստիպված էր լքել մայրաքաղաքը և փախչել Նուբիա, ուր կառավարեց մինչև Ք. ա. 341 թ.:

Եգիպտոսը կորցրեց իր անկախությունը: Երկիրը ենթարկվեց թալանի և ավերածությունների, որպես պատիժ՝ ավերվեցին քաղաքների ամրությունները, հրդեհվեցին մի շարք տաճարներ: Սակայն Աքեմենյան արքայի կողմից Եգիպտոսի սատրապ նշանակված Ֆերենդատին այդպես էլ չհաջողվեց լիովին հնազանդեցնել երկիրը: Արդեն Ք. ա. 338–336 թթ. Ստորին Եգիպտոսը վերագտավ իր անկախությունը: Այստեղ փարավոն հռչակվեց հավանաբար նուբիական ծագում ունեցող Խաբաբաշը: Նրա դեմ պայքարել վիճակված էր արդեն Աքեմենյան հաջորդ արքային:

Արտաքսերքսես III-ի օրոք առժամանակ հաջողվեց վերականգնել փլուզվող տերությունը: Սակայն դա արվեց ոչ այնքան սեփական ուժերի, որքան բանակում աճող դերակատարություն ունեցող հույն վարձկանների շնորհիվ: Պատահական չէ, որ եգիպտական արշավանքի ժամանակ բանակի իրական հրամանատարությունն իրականացնում էին հույն զորավարները: Բացի այդ, գործադրված բոլոր միջոցներին հակառակ՝ երկիրը հնարավոր չեղավ գերծ պահել պարբերաբար կրկնվող հուզումներից, որին գումարվում էր տարբեր խմբավորումների պայքարն արքունիքում: Այս պայքարին զոհ գնաց նաև արքան: Ք. ա. 338 թ. ներքինի Բագասի դրդամբ արքան թունավորվեց իր անձնական բժշկի կողմից:

Գահն անցավ Արտաքսերքսեսի կրտսեր որդի Արշեսին (Ք. ա. 338–336 թթ.): Կարճ ժամանակ անց նա ևս սպանվեց իր ողջ ընտանիքով հանդերձ՝ զոհ գնալով նույն Բագասի կազմակերպած դավադրությանը: Գահին բազմեց Աքեմենյանների կողմնա-

յին ճյուղերից մեկի ներկայացուցիչ, Հայաստանի սատրապ, 45-ամյա Արշամ Կողոմանուրը: Վերջինս բարելոնյան տեքստերից մեկում հիշատակվում է Արտաշատ անունով: Գահ բարձրանալով՝ նա ընդունեց դինաստիական Դարեհ անունը:

Դարեհ III-ը (Ք. ա. 336-330) իր կառավարման սկզբում ստիպված էր մեկ անգամ ևս արշավել Եգիպտոս և ձնշել այստեղ բարձրացված ապստամբությունը: Թեև Եգիպտոսը վերանվաճվեց, սակայն Դարեհին վիճակված չէր շարունակել Արտաքսերքեսի գործը: Աքեմենյան տերությանը սպառնում էր Մակեդոնիան:

7. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ք. ա. 338 թ.՝ Մակեդոնիայի կողմից Հունաստանի նվաճումից շատ չանցած, նրա արքա Ֆիլիպոս II-ը սկսեց ծրագրեր մշակել դեպի Աքեմենյան տերություն արշավանք կազմակերպելու ուղղությամբ: Երկու տարի անց՝ Ք. ա. 336 թ., Ֆիլիպոսը զորավար Պարմենիոնի գլխավորությամբ 10-հազարանոց զորաբանակ ուղարկեց Փոքր Ասիա: Սակայն նույն տարվա ամռանը՝ խնջույքներից մեկի ժամանակ, նա սպանվեց: Գահն անցավ նրա որդուն՝ 20-ամյա Ալեքսանդր III-ին (Ք. ա. 336-323 թթ.):

Վերջինս, ձնշելով իր դեմ բարձրացված ապստամբությունները Մակեդոնիայում և Հունաստանում, ձեռնամուխ եղավ վաղորդ ծրագրված արշավանքի իրականացմանը: Պարմենիոնի բանակը հետ կանչվեց Փոքր Ասիայից՝ գլխավոր ուժերի հետ միասին նախապատրաստվելու նոր արշավանքին:

Աքեմենյան արքունիքը հարկ եղած միջոցառումները չձեռնարկեց վերահաս վտանգը կանխելու համար: Պարմենիոնի զորաբանակի ներխուժումը Փոքր Ասիա դիտվեց որպես թոցուցիկ դրվագ, ինչպիսիք եղել էին տասնյակ անգամներ: Աքեմենյան բանակը ցրված էր տերության լայնածավալ տարածքներում և չէր կարող արագ կենտրոնացվել: Բանակը Աքեմենյան տերության գոյության ողջ ընթացքում այդպես էլ չդարձավ կուռ կառույց: Պահպանվեց այն ըստ ցեղերի և ազգությունների համալրելու ավանդույթը: Պարսկական հետևակն իր մարտունակությամբ խիստ զիջում էր հունա-մակեդոնական փաղանգին: Հիմնական հարվածային ուժը արևելախորհրդանակյան ժողովուրդներից հավաքվող հեծելազորն էր և հույն վարձկաններից կազմված հետևակը: Պատահական չէ, որ մակեդոնական ներխուժման նախօրեին բանակը համալրվեց շուրջ 30 000 հույն վարձկաններով:

Ք. ա. 334 թ. Ալեքսանդրի 35-հազարանոց բանակը, որի մի մասը կազմում էին հույն և կրետացի ռազմիկները, 160 նավից բաղկացած նավատորմի ուղեկցությամբ անցավ Հելլեսպոնտոսը և Գրանիկոս գետի ափին մղված ճակատամարտում ջախջախեց փոքրասիական սատրապների միացյալ բանակը: Պարսկական հեծելազորը երկար չդիմադրեց, իսկ հույն վարձկանները, որոնց թիվը հասնում էր շուրջ 20 հազարի, ընկան շրջապատման մեջ և ջախջախվեցին: Ճակատամարտում սպան-

վեցին Լիդիայի և Հոնիայի սատրապ Սպիրիդատն ու Դարեհ III-ի որդիներից մեկը:

Լիդիան և Փոյուզիան, ինչպես նաև հոնիական քաղաքների մեծ մասը կամավոր ընդունեց Ալեքսանդրի գերիշխանությունը, թեև գտնվեցին և այնպիսիք, որոնք համառ դիմադրություն ցույց տվեցին նվաճողներին: Մասնավորապես՝ Ալեքսանդրի բանակը Միլեթ և Հալիկաոնաս քաղաքները գրավեց միայն ծանր մարտերից հետո: Իր գործողություններն ակտիվացրեց Աքեմենյան նավատորմը՝ Գրանիկոսի ճակատամարտից հետո Դարեհի կողմից փոքրասիական բանակի և նավատորմի հրամանատար նշանակված տաղանդավոր զորավար, ծագումով հույն Մեմնոնի գլխավորությամբ: Վերջինս, ունենալով բացահայտ առավելություն ծովում, սկսեց վերագրավել Էգեյան ծովի կղզիները: Գրավվեց Քիոսը, ապա և Լեսբոս կղզու մեծ մասը: Մեմնոնը ծրագրել էր անգամ ափ դուրս գալ բուն Հունաստանում, սակայն նրա անսպասելի մահը Լեսբոս կղզում՝ Միտիլենե քաղաքի պաշարման ժամանակ, խափանեց այն: Դարեհի կողմից նոր հրամանատար նշանակված Փաոնաբազոսը չկարողացավ շարունակել Մեմնոնի ծրագիրը:

Այս ընթացքում Ալեքսանդրը շարունակում էր առաջանալ Փոքր Ասիայի ներքին շրջաններով: Ք. ա. 334-333 թթ. մակեդոնական արքան ձմեռն անցկացրեց տեղի լեռնական բնակչությանը հնազանդեցնելով, ապա արդեն Ք. ա. 333 թ. ամռանը շարժվեց դեպի Կիլիկիա: Ալեքսանդրի բանակին այս անգամ դիմավորեց անձամբ Աքեմենյան արքան՝ բազմահազար զորքով: Ճակատամարտը տեղի ունեցավ Կիլիկիայի և Սիրիայի սահմանագլխին ընկած Իսոս քաղաքի մոտ: Չնայած թվական գերակշռությանը՝ Դարեհի բանակը կրեց ջախջախիչ պարտություն: Նրա ձամբարը գրավվեց, գերի ընկան արքայի մայրը, կինը, երկու դուստրերն ու մանկահասակ որդին:

Իսոսի ճակատամարտը Ալեքսանդրի ձեռքը հանձնեց ողջ Սիրիան ու Փյունիկիան: Դամասկոսը, Արվաղը, Բիբլոսն ու Սիդոնը առանց մարտի հանձնվեցին հաղթողին: Աքեմենյան նավատորմը զրկվեց իր հանգրվաններից, իսկ փյունիկյան և կիպրական նավերն սկսեցին ծառայել Ալեքսանդրին: Միայն կղզու վրա գտնվող անառիկ Տյուրոս քաղաքը համառ դիմադրություն ցույց տվեց նվաճողներին: Քաղաքի պաշարումը տևեց զրեթե յոթ ամիս և մեծ կորուստներ պատճառեց պաշարողներին: Ի վերջո, կառուցելով կղզին ցամաքին միացնող հողաթումբ՝ Ալեքսանդրի բանակը գրավեց քաղաքը և հաշվեհարդար տեսավ բնակչության հետ:

Մինչ Ալեքսանդրը զբաղված էր Տյուրոսի պաշարմամբ, Դարեհի զորավար Նաբարզանը անհաջող փորձ արեց վերագրավելու Փոքր Ասիան: Դարեհը սկսեց միջոցներ որոնել Ալեքսանդրի հետ հաշտություն կնքելու համար: Արքայի դեսպանները Ալեքսանդրին առաջարկեցին ստանալ Եփրատից արևմուտք ընկած բոլոր տարածքները, 10 հազար տաղանդ գումար՝ որպես փրկագին արքայական ընտանիքի համար, և ամուսնանալ արքայի դուստրերից Ստատիրայի հետ: Ալեքսանդրը մերժեց առաջարկը՝ առաջ քաշելով Դարեհի համար նվաստացուցիչ պայմաններ:

Ք. ա. 332 թ. աշնանը հունա-մակեդոնական բանակը շարժվեց Եգիպտոս: Շուրջ երկամյա պաշարումից հետո գրավվեց Գազան. տեղի բնակչությունն ու կայազո-

րը ոչնչացվեցին: Հասնելով Պելուսիա՝ նա քաղաքը գրավեց առանց մարտի: Ճանապարհը դեպի Եգիպտոս քաց էր: Եգիպտոսի Աբեմենյան նորանշանակ սատրապն իր տրամադրության տակ չունեւ անհրաժեշտ ուժեր և ստիպված էր երկիրն առանց մարտի հանձնել նվաճողներին: Եգիպտացիները ցնծությամբ ընդունեցին Ալեքսանդրին: Նրան հոչակեցին Ամոն աստծո որդի՝ թագադրելով որպես Վերին և Ստորին Եգիպտոսների փարավոն: Ստեղծվեց անգամ առասպել Ալեքսանդրի՝ իբր Նեկտաներ II-ի որդին լինելու մասին, որով օրինական տեսք էր հաղորդվում նրա գահակալությանը Եգիպտոսում:

Ալեքսանդրն իր արշավանքը վերսկսեց 331 թ. գարնանը: Դուրս գալով Եգիպտոսից՝ հունա-մակեդոնական մոտ 50-հազարանոց բանակը շարժվեց դեպի Միջագետք: Այս ընթացքում Դարեհն ակտիվորեն պատրաստվում էր հակահարվածի: Տերության տարրեր հատվածներից կանչվել էին զորքեր, երկրում ծավալվեց քարոզչական լայն աշխատանք:

Աբեմենյան զորքերի դեմ վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Հյուսիսային Միջագետքում՝ Արբելա քաղաքից ոչ հեռու՝ Գավգամելա գյուղի մոտ: Դարեհ III-ին հաջողվեց դուրս քերել մոտ 100-հազարանոց բանակ, որի առնվազն մեկ երրորդը կազմում էր հեծելազորը: Բանակն ուներ 200 մանգաղակիր մարտակառք և 15 մարտական փիղ:

Ճակատամարտը տեղի ունեցավ Ք. ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին: Այն Դարեհի համար սկսվեց քավական հաջող: Աբեմենյան բանակի աջ թևը՝ Մազայոսի գլխավորությամբ, կարողացավ ձեռքել հակառակորդի ձախ թևը և սպառնալ Ալեքսանդրի ճամբարին: Ճակատամարտի ելքը լուծեց Ալեքսանդրի առաջնորդած հետայրոսների («ընկերների») ծանրագեն հեծելազորի գրոհը Աբեմենյան բանակի կենտրոնի վրա, ուր գտնվում էր Դարեհը: Վերջինս, չսպասելով ճակատամարտի ելքին, փախուստի դիմեց: Սկսվեց խուճապ, և բանակի կենտրոնը դիմեց փախուստի: Ալեքսանդրի բանակի ձախ թևը ջախջախած Մազայոսն ու հույն վարձկանները, տեսնելով ճակատի կազմալուծումը, դադարեցրին մարտը և նահանջեցին դեպի Բաբելոն:

Մազայոսն առանց մարտի քաղաքը հանձնեց Ալեքսանդրին, ինչի դիմաց վերահաստատվեց Բաբելոնի սատրապի պաշտոնում: Մեկ ամիս անցկացնելով Բաբելոնում՝ Ալեքսանդրի բանակը շարունակեց առաջխաղացումը և անարգել գրավեց Սուսան: Շարժվելով դեպի Պարսք՝ հունա-մակեդոնական զորքերն այստեղից դուրս մղեցին տեղի սատրապ Արիոբարզանեսի ուժերին: Վերջինս նահանջեց դեպի Էկրատանա, ուր ապաստանել էր Դարեհը: Աբեմենյանների մյուս մայրաքաղաքները՝ Պերսեպոլիսն ու Պասարգադքը գրավվեցին առանց մարտի: Ալեքսանդրի ձեռքն ընկավ հսկայական հարստություն, իսկ Պերսեպոլիսում, ի պատասխան պարսիկների կողմից Աթենքի հրդեհման, նրա զինվորները հրդեհեցին Քսերքսեսի պալատը: Տեղի բնակչության զգալի մասը բնաջնջվեց:

Ք. ա. 330 թ. գարնանը Ալեքսանդրը շարժվեց դեպի Էկրատանա, ապա սկսեց հետապնդել Դարեհին, որը փոքրաթիվ զորքով, իրեն հավատարիմ մնացած հույն վարձկանների հետ նահանջում էր դեպի Բակտրիա՝ ձգտելով այստեղ հավաքել նոր

բանակ: Սակայն արքան սպանվեց իր ուղեկիցներից մեկի՝ Բակտրիայի և հարակից երկրների սատրապ Բեսի կողմից: Դարեհի մարմինը Ալեքսանդրը հրամայեց հանդիսավորությամբ հողաբերել:

Իրեն արքա հռչակած Բեսը, չնայած նվաճողներին ցույց տվեց համառ դիմադրություն, սակայն ի վերջո գերվեց և ենթարկվեց դաժան մահապատժի (Ք. ա. 329 թ.): Շուրջ երեք տարի տևած ծանր մարտերից հետո նվաճվեցին տերության ծայրամասային տարածքները՝ Սոգդիանան և Դրանգիանան: Աբեմենյան տերությունը կործանվեց:

8. ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Պետական կարգը

Աբեմենյան տերության առաջնորդն ու երկրի տերը Հաքամանիշի (Աբեմեն) տոհմից սերող արքան էր, որն ուներ անսահմանափակ իշխանություն: Աբեմենյան արքաները (հին պարսկ. xšāyaθiya, միջին և նոր պարսկ. šāh, արիերեն լեզվի *kšai՝ «կառավարել, իշխել» բառից) կրում էին «մեծ արքա», «արքայից արքա», «բազմաց (երկրների) արքա» և այլ տիտղոսներ: Բաբելոնյան սեպագիր և եգիպտական հիերոգլիֆային արձանագրություններում Աբեմենյանները ավանդույթի ուժով շարունակում են հանդես գալ տեղի արքաների տիտղոսաշարերով: Օրինակ՝ Դարեհ I-ը եգիպտական արձանագրություններում հիշատակվում է ոչ միայն որպես «Վերին և Ստորին Եգիպտոսի արքա» և «Ջույգ երկրների տեր», այլև «Ատում աստծո որդի», «Ռա աստծո պատկեր» և այլն:

Աբեմենյան արքաները գահին տիրում էին ժառանգաբար: Սովորաբար գահը ժառանգում էր ավագ որդին: Սակայն, ըստ հունական աղբյուրների, պարսիկների մոտ առկա էր սովորույթ, ըստ որի՝ գահը ժառանգում էր այն որդին, ով առաջինն էր ծնվել հոր գահակալությունից հետո: Առկա է նաև կարծիք, ըստ որի՝ Դարեհ I-ից մինչև Արտաքսերքսես II Աբեմենյանները իշխում էին գահաժառանգ որդիների հետ համատեղ:

Աբեմենյան տերության զգալի հատվածում ստրկությունը անհայտ էր ընդհանրապես, առկա էին ավատատիրությունը հիշեցնող երևույթներ: Տերության մեջ գործում էր հստակ աստիճանակարգություն, ըստ որի՝ ազնվականությունը արքայից արքայի հետ կապված էր երդումով, որի արտահայտությունն էր նրանց կրած լայն գոտիները («կապերը»): Այս առանձնահատկությունն ուներ խոր արմատներ և տալում էր դեպի հնդիրանական, եթե ոչ՝ հնդեվրոպական ընդհանրության շրջան:

Աբեմենյան տերությունը բազմազգ երկիր էր, որտեղ, ըստ Հերոդոտոսի, ապրում էին 70 ժողովուրդներ: Նրանց մի մասը, մասնավորապես մարերն ու արևելաիրանական ժողովուրդներն, ունեին համեմատաբար բարձր դիրք:

Դարեհ I-ի Բեհիսթունի արձանագրության մեջ թվարկվում են տերության կազմում գտնվող 23 երկրներ: Դրանք էին՝ Պարսք, Էլամ, Բաբելոն, Ասորեստան, Արաբիա, Եգիպտոս, «ծովի (մոտ ապրող) ժողովուրդներ», Լիդիա, Հոնիա, Մարաստան, Հայաստան, Կապադովկիա, Պարթևաստան, Դրանգիանա, Արիանա, Խորեզմ, Բակտրիա, Սոգդիանա, Գանդհարա, Սկյութիա, Սատտարգիադա, Արախոսիա, Մակա: Տերությունը բաժանված էր սատրապությունների, որոնք, ըստ Հերոդոտոսի, 20-ն էին: Սատրապությունների քանակը մշտական չէր, և դրանց սահմանները հաճախ փոխվում էին: Օրինակ, եթե Փոքր Ասիան Դարեհ I-ի օրոք ներկայացնում էր չորս սատրապություն, ապա Դարեհ III-ի օրոք դրանց թիվը հասել էր յոթի: Որոշ շրջաններ, օրինակ՝ Կիլիկիան, թեև գտնվում էր տերության կազմում, բայց թագավորություն էր և ուներ իր սեփական արքայատունը. այն իշխանության մնաց ընդհուպ մինչև Արտաքսերքսես II-ը:

Սատրապությունները գլխավորում էին բարձրաստիճան պաշտոնյաները՝ սատրապները: Վերջիններս նշանակվում էին արքայի կողմից և ունեին լայն իշխանություն: Նրանց տնօրինության տակ էին սատրապության կառավարման, դատավարության, հարկահավաքման գործերը, հատում էին դրամներ, հաճախ առաջնորդում սատրապական զորքերը: Նրանք անգամ կարող էին մղել ինքնուրույն պատերազմներ: Սատրապների իշխանությունը Ք. ա. IV դ. դարձավ գրեթե անսահմանափակ: Սատրապության վարչակազմը կրկնում էր Աքեմենյան արքունիքին: Վարչակազմերն ունեին հաշվապահներ, գրագիրներ, մեծ թիվ էին կազմում տեսուչները՝ «արքայի աչքերը» կամ «դիտողները»: Այս անձինք հաճախ ուղեկցող զորախմբով շրջում էին ողջ երկրով մեկ ու հետևում հրամանների իրագործմանը և կարգուկանոնի պահպանմանը: Նրանք հաշվետու էին անձամբ արքային: Թեև այս պաշտոնյաների կոչումը մեզ հայտնի չէ, սակայն Էլեֆանտինայի արամեերեն ձեռագրերից մեկում պահպանված *gwšky*՝ տերմինը թույլ է տալիս ենթադրել, որ նրանք կոչվել են **gaušaka*, իմա՝ «ունկնդիր, հետևող» (հմմտ. հայ. *գուշակ*՝ «լրտես, մատնիչ»):

Տերության իշխող էթնիկ տարրի՝ պարսիկների ձեռքին էին գտնվում ոչ միայն արքունի բոլոր գլխավոր պաշտոնները՝ քաղաքացիական թե՛ ռազմական, այլև նրանք էին գլխավորում սատրապությունների տեղական վարչակազմերը: Առավել կարևոր սատրապությունների կառավարումը շատ հաճախ տրվում էր արքայական տան անդամներին: Սատրապների իշխանությունը չուներ ժամկետային սահմանափակում, իսկ որոշ երկրներում (օրինակ՝ Հայաստանում) սատրապներն իշխում էին ժառանգաբար, որոնց պաշտոնը վերահաստատում էր արքան: Իրենք՝ պարսիկները, որպես իշխող էթնիկ տարր, ի տարբերություն այլ ժողովուրդների, չէին կառավարվում սատրապի կողմից, այլ նրանց առաջնորդ դիտվում էր անձամբ Աքեմենյան արքան:

Ընդհանուր առմամբ նվաճված ժողովուրդներն օգտվում էին բավարար ազատություններից: Կիլիկիան կառավարվում էր տեղի արքայատան կողմից, առանձին թագավորություններ էին նաև փյունիկյան մի շարք քաղաքներ: Հոնիական քաղաքները պահպանեցին իրենց պոլիսային կառուցվածքը. այստեղ Աքեմենյան դարա-

շրջանում գործում էին ինքնակառավարման ինստիտուտները: Գրեթե կիսանկախ կարգավիճակ ունեին կենտրոնասիական ցեղերը:

Աքեմենյան տերությունն ուներ մի քանի մայրաքաղաքներ (Պերսեպոլիս, Պասարգադք, Էկրատանա, Բաբելոն, Սուսա): Սակայն տերության վարչական կենտրոնը, սկսած հավանաբար Դարեհ I-ից, Սուսան էր: Այդ են վկայում ոչ միայն Դարեհի կողմից Սուսայում իրականացված լայնածավալ շինարարական աշխատանքներն ու խոշոր պալատական համալիրի շինարարությունը, այլև այստեղ սեպագիր արխիվների գոյության փաստը: Պասարգադքը Աքեմենյանների համար մնում էր իբրև սրբազան քաղաք, և համաձայն հունական աղբյուրների՝ այստեղ էին թագադրվում ուշ շրջանի արքաները: Աքեմենյանների համար առանձնահատուկ դեր ուներ Պերսեպոլիսը: Այստեղ էին նրանք դիմավորում Նոր տարին (պարսկ. *Novrūz*):

Աքեմենյան տերության վարչակազմը ձևավորվել էր հինարևելյան տերությունների (մասնավորապես՝ բաբելոնյան և էլամական) օրինակով՝ հարմարեցվելով նոր պահանջներին: Աքեմենյան արքունիքը գլխավորում էր հազարապետը, որը նաև արքայի անձնական թիկնազորի հրամանատարն էր: Արքունիքի գլխավոր պաշտոնյաների շարքից հայտնի են գանձապահը և գլխավոր մատուցակը, Հերոդոտոսն արքունի պաշտոնյաների շարքում հիշատակում է «սենեկապետի», «լրաբերի» և այլն:

Արքունիքում և սատրապական կենտրոններում գործում էին մեծ թվով գրագիրներ: Կենտրոնի և սատրապությունների միջև գրագրությունն իրականացվում էր «տերունական արամեերենով», կիրառվում էին նաև էլամերենն ու բաբելերենը, տերության արևմուտքում՝ հունարենը, Եգիպտոսում՝ հիերոգլիֆային և դեմոթական եգիպտերենը և այլն: Ք. ա. 460 թ. սահմաններում Աքեմենյան դիվանը վերակազմավորվեց, և արքունի գրագրությունը սկսեցին վարել միմիայն տերունական արամեերենով:

Բանակը

Աքեմենյանները նոր նվաճումների, սահմանների պաշտպանության և տերության ամրոցականության ապահովման նպատակով զենքի տակ էին պահում մշտական խոշոր բանակ: Բանակի կազմն ու զինվածությունը փոխվում էր ժամանակին զուգընթաց: Եթե Կյուրոս II-ի ժամանակ արական սեռի բոլոր պարսիկները պարտավոր էին զինվորագրվել բանակին, ապա Դարեհ I-ի օրոք դրվեց կանոնավոր բանակի հիմքը:

Բանակը հիմնականում հավաքագրվում էր պարսիկներից և մարերից: Նրա միջուկը այսպես կոչված «Անմահների գունդն» էր՝ բաղկացած 10 հազար մարտիկներից: Ընդ որում՝ այս զորամիավորման առաջին գունդը՝ բաղկացած 1000 մարտիկներից, կազմված էր բացառապես պարսիկ ազնվականության ներկայացուցիչներից և ծառայում էր իբրև արքայի անձնական թիկնազոր: «Անմահների գնդի» մանրամասն զինվածության նկարագրությունը մեզ է հասցրել Հերոդոտոսը: «Անմահների գնդի» զինվորների հարյուրավոր բարձրաքանդակներով են պատված Պերսեպոլիսի հանդիսավոր մուտքերը:

Մշտական բանակը հիմնականում կազմված էր իրանախոս տարրերից: Պարսիկներից ու մարերից հետո բանակում մեծ էր արևելաիրանական ժողովուրդներից հավաքված ռազմիկների թիվը: Բանակն անհրաժեշտության դեպքում համալրվում էր լրացուցիչ և օժանդակ ուժերով: Արշավանքների ժամանակ զորքեր էին հավաքում ենթակա ժողովուրդներից, որոնք ստորաբաժանվում էին ըստ էթնիկ կազմի և ունեին համապատասխան զինվածություն: Հերոդոտոսը, օրինակ, թվարկում է Քսերքսես I-ին զորքեր տրամադրած 46 ազգերի: Եգիպտա-նուբիական սահմանի մոտ գտնվող Էլեֆանտինայի ռազմական ձամբարում ծառայում էին տերության տարբեր հատվածներից հավաքագրված զինվորներ՝ պարսիկներ, մարեր, խորեզմցիներ, հույներ, կարիացիներ և մեծ թվով հրեաներ: Խաղաղ ժամանակ բանակը գտնվում էր ռազմական ձամբարներում կամ իբրև կայազորներ ցրված էր տերության տարբեր հատվածներում: Դրանք տեղաբաշխված էին խոշոր քաղաքներում և ամրոցներում, սահմանամերձ ամրություններում և գլխավոր ճանապարհների երկայնքով տեղակայված պահակակետերում:

Աքեմենյանները պահում էին նաև մեծաթիվ վարձու զորքեր, որոնք հավաքագրում էին գերազանցապես հույներից: Ծանրագեն հետևակայիներից կազմված այս ուժերը սկսեցին աստիճանաբար փոխարինել պարսկական հետևակին: Ժամանակի ընթացքում աճեց նաև հույն հրամանատարների դերը բանակում, որոնք սկսեցին գլխավորել անգամ առանձին արշավանքներ:

Միջերկրական ծովում Աքեմենյաններն ունեին մի քանի հարյուր նավերից բաղկացած հզոր նավատորմ: Պարսիկներին նավեր էին տրամադրում փոքրասիական հույները, լիկիացիները, կարիացիները, փյունիկեցիները, կիլիկեցիները, եգիպտացիները: Միայն կիպրոսցիները կարող էին տրամադրել 150 նավ: Նավատորմն ուներ մեծ թվով օժանդակ նավեր ու փոխադրամիջոցներ:

Սուղ են տվյալները Աքեմենյան բանակի կազմակերպվածության մասին: Հայտնի է, որ «Անմահների գնդի» հրամանատարը և ընդհանրապես ռազմական գործի տնօրինողը հազարապետն էր, որը համարվում էր «երկրորդը՝ արքայից հետո»: Գլխավոր հրամանատարությունը մշտապես պարսիկների ձեռքին էր, և միայն միջին ու ցածր հրամանատարական պաշտոնները կարող էին զբաղեցնել այլազգիները: Բանակը կազմված էր հեծելազորից և հետևակից, որոնք բաժանվում էին նիզակակիրների և նետաձիգների ջոկատների: Բանակն ուներ մանգաղակիր մարտակառքեր ու մարտական փղեր: Ջորագնդերը ստորաբաժանվում էին առավել փոքր միավորների, որոնցից աղբյուրներում վկայված են «հարյուրակները»:

Տնտեսությունը

Աքեմենյան տերության տնտեսության հիմնական ճյուղերն էին գյուղատնտեսությունը (երկրագործություն և անասնապահություն), առևտուրն ու արհեստները:

Աքեմենյան տերության տնտեսությունը համաչափ չէր զարգացած և կախված էր բնակլիմայական պայմանների ընձեռած հնարավորություններից, ինչպես նաև

տեղի բնակչության կենցաղավարումից: Երկրագործական հնարավորություններով աչքի ընկնող շրջաններից էին Եգիպտոսը և Բաբելոնիան: Աքեմենյան իշխանությունները մշտական ուշադրություն էին դարձնում ոռոգման ցանցի պահպանման և ընդլայնման վրա՝ յուրացնելով նորանոր հողատարածքներ: Արհեստական ոռոգման հիման վրա հնարավոր դարձավ երկրագործությամբ զբաղվել Իրանական բարձրավանդակում, ինչպես նաև Աֆղանստանում: Աքեմենյան շրջանում ստեղծված ջրանցքները գործում են մինչ օրս: Հացահատիկային հիմնական մշակաբույսը գարին էր, աճեցնում էին նաև ցորեն, կորեկ և այլն:

Հողատարածքների մեծ մասն արքայի, արքայական ընտանիքի անդամների, բարձրաստիճան պաշտոնյաների, տաճարների ու խոշոր վաճառականական տների սեփականությունն էր: Որոշ ջրանցքներ նույնպես տաճարների կամ մասնավոր անձանց սեփականությունն էին:

Աքեմենյան արքունի տնտեսությունները զբաղեցնում էին ընդարձակ տարածքներ, որոնցում աշխատում էին տասնյակ հազարավոր մարդիկ: Օրինակ՝ Դարեհ I-ի օրոք կազմված տեքստերում հիշատակվում են արքունի մոտ հարյուր քաղաքներ և գյուղեր՝ ավելի քան 16 հազար աշխատողներով, որոնց զգալի մասն արհեստավորներ էին: Նույն արքայի տեքստերից մեկում խոսվում է 700 հովիվների մասին:

Հողերը, այդ թվում՝ վարելահողեր, այգիներ, մարգագետիններ ևն, ինչպես նաև ընտանի կենդանիների հոտերը, սովորաբար սեփականատերերի կողմից տրվում էին վարձակալության անհատ մարդկանց: Վարձակալի ժառանգը կարող էր թարմացնել պայմանագիրը և հողը տնօրինել նաև հետագայում: Նման հարաբերությունները, սակայն, գործում էին հիմնականում Բաբելոնիայում, մասամբ նաև Եգիպտոսում:

Աքեմենյան տերությունը հսկայական եկամուտներ էր ապահովում առևտրից: Առևտրի ծաղկմանը նպաստեց Դարեհ I-ի կողմից չափ ու կշռի կայուն համակարգի ներդրումը: Հսկայական տարածքների միավորումը մեկ տերության մեջ հնարավորություններ էր ստեղծում վաճառականների համար՝ ծավալելու իրենց գործունեությունը: Աքեմենյան արքունիքն իր հերթին նպաստում էր առևտրի զարգացմանը՝ այդ նպատակով կառուցելով իջևանատներ ունեցող ապահով ճանապարհներ: Դրանցից առավել հայտնին այսպես կոչված «Արքունի ճանապարհն» էր, որը Սարդեսից և Եփեսոսից Փոյուզիայի, Կիլիկիայի, Կապադովկիայի, Հայաստանի և Միջագետքի վրայով ձգվում էր մինչև Սուսա: Ճանապարհի ընդհանուր երկարությունն էր 450 փարսախ կամ 13500 ստադիոն, այն է՝ մոտ 2600 կմ: Գործում էին նաև այսպես կոչված «ամենեղանակյա ճանապարհներ» (Բաբելոնից Սուսա և Պերսեպոլիս, Բաբելոնից Էկբատանա, Իսոսից Սինոպ և այլ երթուղիներով), որոնք ապահովում էին անխափան հաղորդակցություն: Առևտրին մեծապես նպաստեց նաև դեռևս եգիպտական փարավոն Նեխո II-ի օրոք սկսված և Դարեհ I-ի կողմից ավարտված Սուեզի ջրանցքի կառուցումը, որով Կարմիր ծովն ու հարավային ջրերը ներկայիս Սուեզիի մոտից Նեղոսի դելտայի բազուկներից մեկով կապվեցին Միջերկրական ծովին: Ջրանցքն ուներ բավարար լայնություն երկու նավերի անցման համար, իսկ

անցումը Կարմիր ծովից Միջերկրական ծով տևում էր ընդամենը չորս օր: Դարեհի հրամանով իրագործվեց ծովային ճանապարհորդություն դեպի Հնդկաստան՝ ուսումնասիրելու նրա ամերը:

Համաձայն Հերոդոտոսի՝ Դարեհ I-ի իրագործած բարեփոխումների թվում էր նաև հարկային կուռ համակարգի ներդրումը, երբ ամրագրվեց յուրաքանչյուր սատրապության վճարելիք հարկի չափը: Տերության եկամուտների հիմնական մասը բաժին էր ընկնում հարկահավաքությանը: Հարկը կարող էր վճարվել ոսկով, արծաթով, փղոսկրով, մետաղե անոթներով, ընտանի կենդանիներով, գինով, ձեթով և այլն: Ըստ Հերոդոտոսի՝ սատրապություններից գանձվող հարկերի տարեկան գումարը հասնում էր 7740 բաբելոնյան արծաթե տաղանդի: Թեև Հերոդոտոսի հաղորդմամբ պարսիկներն ազատված էին հարկերից, սակայն առկա տվյալները թույլ են տալիս ենթադրել, որ նրանք վճարել են առնվազն բնահարկ: Կար նաև դրամով վճարվող արքայական հարկ: Հավաքված դրամը պահում էին Էկրատանայի, Սուսայի և Պերսեպոլիսի գանձարաններում:

Դարեհի կողմից ներդրվեց միասնական դրամական համակարգ: Դրա հիմքում ընկած էր ոսկե դահեկանը (հուն. *dareikós*, հին պարսկ. *dari* «դեղին, ոսկե» բառից): Մեկ դահեկանը կշռում էր 8,416 գրամ ոսկի, իսկ երեք հազար դահեկանը կազմում էր մոտավորապես մեկ տաղանդ: Ոսկե դրամներ հատելու իրավունք ուներ միայն Աքեմենյան արքան: Տերության մեջ հատում էին չորս տիպի դրամներ՝ արքայական և սատրապական՝ արքայի պատկերով, ինչպես նաև Աքեմենյաններին ենթակա երկրների ու քաղաքների դրամները, հաճախ՝ տեղի կառավարիչների պատկերներով: Դրամների հիմնական գանգվածը արծաթից էր՝ միջինը 5,56 գրամ քաշով (դահեկանի արժեքի 1/20-րդը), և պղինձ: Աքեմենյան ոսկեդրամները չէին արձանագրվում: Արձանագրություններ ունեին գլխավորապես փոքրասիական սատրապների և քաղաքների հատած դրամները՝ հիմնականում արամեերեն, հունարեն և լիկիերեն գրություններով:

Թեև արդեն Քսերքսես I-ի օրոք Դարեհի ներմուծած դրամական համակարգն ամբողջությամբ սկսեց գործել, սակայն դրա կիրառության շրջանակը սահմանափակ էր: Անգամ բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց վարձը ստանում էին արծաթի ձուլակտորներով կամ պատրաստի արտադրանքով: Դրամն օգտագործվում էր գերազանցապես Փոքր Ասիայի սատրապություններում, ինչպես նաև մայրցամաքային Հունաստանի պոլիսների հետ առևտուր անելու ու վարձկան զինվորներին վճարելու նպատակով: Տերության հիմնական հատվածում գերակշռում էին բնատնտեսությունն ու փոխանակային առևտուրը: Ընդ որում՝ տերության մեջ, հատկապես նրա գոյության վերջին շրջանում, լայնորեն շրջանառվում էին հունական, մասնավորապես՝ աթենական դրամները:

Հավաքված հարկերը ծախսվում էին երկրի պաշտոնեությանը, բազմամարդ արքունիքը պահելու, շինարարական աշխատանքների, բանակի կարիքները հոգալու վրա: Բնակչությունը, բացի հարկերից, պարտավոր էր կատարել աշխատանքային պարհակներ՝ մասնակցելով ամրոցաշինական, ջրանցքաշինական և այլ աշխատանքների:

Իրավունք և արդարադատություն

Իրավունքն ու արդարադատությունը կազմում էին Աքեմենյան տերության գաղափարական հիմքերից մեկը: Օրենքն ընկալվում էր իբրև Ահուրամազդա աստծո կողմից տրված, որի իրականացնողն էր արքան, և աղբյուրներում հանդիպում է «արքայի օրենք» անունով: Դարեհ I-ն իր գահակալությունն ու գործողությունները բացատրում էր երկրում աճած «սուտը» Ահուրամազդայի կամքով վերացնելու, արդարությունն ու կարգը վերահաստատելու ձգտումով: Աքեմենյան արքաներին հույն հեղինակները հաճախ բնութագրում էին իբրև արդարադատ, օրինապաշտ և առաքինի անձանց: Ըստ Պլատոնի՝ Դարեհ I-ի հաստատած օրենքների և իրավական համակարգի շնորհիվ էր, որ Աքեմենյան տերությունը գոյատևել է մինչև իր օրերը:

Աքեմենյան օրենքների որևէ ժողովածու չի պահպանվել: Այդ օրենքները կրում էին հինարևելյան իրավունքի մեծ ազդեցությունը: Օրինակ՝ Դարեհ I-ի հրամանով իրականացված տասնվեցամյա աշխատանքի արդյունքում ի մի բերվեցին Եգիպտոսում գործող օրենքները և գրի առնվեցին արամեերենով և դեմոթական եգիպտերենով: Հայտնի է, որ Արտաքսերքսես I-ի օրոք ավարտվել է նաև հրեական օրենքների ժողովածուի կազմումը, ընդ որում՝ որպես դատավոր հանդես էր գալու հրեա քահանայապետը:

Իբրև երկրի գերագույն դատավոր և արդարադատություն իրականացնող հանդես էր գալիս արքան: Նրա կնիքով հաստատված հրամանն ընդունվում էր որպես անառարկելի օրենք՝ անսահմանափակ գործունեության ժամկետով: Օրինակ՝ Դարեհ I-ի կողմից պարսիկ ազնվական Օտանեսին տրված առանձնաշնորհումները գործում էին նաև հետագա արքաների օրոք:

Երկրում կային արդարադատություն իրականացնող պաշտոնյաներ, որոնց ընտրում էր արքան պարսիկների շարքից, և որոնք պաշտոնավարում էին ցմահ: Նրանք կոչվում էին «արքայական դատավորներ»: Հնարավոր է, որ Աքեմենյան դատական համակարգը փոխառվել էր Բաբելոնիայից, ուր ևս գործել է «արքայական դատավորներ»-ի ինստիտուտը: Դատավորներն ունեին նաև սովորության օրենքները մեկնաբանելու իրավասություն:

Հերոդոտոսի հաղորդումներից դատելով՝ մեղավորին պատժելուց առաջ հաշվի էին առնում նրա ծառայություններն արքայական ընտանիքին և այն համեմատում գործված մեղքի հետ: Իրավունքի այս կերպ իրագործումը ծագում էր գրադաշտական գաղափարախոսությունից, երբ Ռաշնուն կշռում էր մահացածի բարի և չար գործերը: Արքաները խստորեն հետևում էին արդարադատության պահպանմանը: Կաշառակեր և անօրինություններ թույլ տված դատավորները ենթարկվում էին մահապատժի: Մեղավոր ճանաչված անձանց խստորեն պատժում էին: Տարածված էր մահապատիժը՝ ցից հանելու միջոցով, մարմնական տարբեր պատիժները՝ ընդհուպ մինչև խեղանդամություն և աքսոր:

Աքեմենյան տերության կրոնը՝ գրադաշտականությունը, որի հիմնադիրն էր Զրադաշտը, իր արմատներով հանգում էր հնդեվրոպական հավատալիքներին: Զրադաշտականության հիմքում ընկած էր աստվածային և երկրային աշխարհները սահմանող բարձրագույն և արդար կարգը: Այն մարմնավորողը հավերժական հուրն էր, որի առջև գրադաշտականը պետք է օրվա մեջ հինգ անգամ աղոթեր:

Զրադաշտականությունը դուալիստական ուսմունք է, որի առանցքը Աստծո և Դևի, Բարու և Չարի, Լույսի և Խավարի պայքարն է, ինչը մարմնավորվում էր ի դեմս երկու կերպարների՝ բարի և ստեղծարար ոգի Սպենտա Մանյուի՝ գրադաշտականության զերագույն աստված Ահուրամազդայի, և նրա հակառակորդ Անգրա Մանյուի՝ Ահրիմանի:

Ահուրամազդան արարիչ աստված էր՝ Երկնքի և Երկրի, մարդու և մարդկային երջանկության արարիչը՝ «արիացիների աստվածը», ինչպես անվանվում է Նախշ-է Ռոստեմի արձանագրություններում: Աքեմենյանների աստվածաբանական միտքը կենտրոնացված էր նրա շուրջը: Նրա աստվածային կամքով էին Աքեմենյան արքաները պայմանավորում իրենց թագավորելը:

Ահուրամազդան ոչ միայն արքայի ու նրա տան, այլև ողջ երկրի հովանավորն էր: Իր արձանագրություններից մեկում Դարեհը խնդրում է Ահուրամազդայից, որ նա պաշտպանի երկիրը թշնամու բանակից, անբերրիությունից, ստից (ապստամբություններից) և այլն:

Ահուրամազդայի արարչությունն են Ամահրասպանդները՝ բնաշխարհի առանձին մասերի արարիչներն ու հովանավորները, որոնք վեցն էին, և Յագատները, որոնց շարքում են հին պարսկական դիցարանի աստվածներ Միթրան և Անահիտը: Այս աստվածությունները հանդես են գալիս՝ սկսած Արտաքսերքսես II-ից, թեև դեռևս Դարեհի արձանագրություններն են հիշում «աստվածների, որոնք կան»: Հերոդոտոսի հաղորդմամբ՝ պարսիկները «... զոհեր մատուցում են արևին և լուսնին, և՛ հողին, և՛ հրին, և՛ ջրին, և՛ հողմերին: Ի սկզբանե նրանք միայն սրանց էին զոհեր մատուցում, իսկ հետագայում նրանք ասորեատանցիներից և արարներից սովորեցին զոհ մատուցել Ուրանիային: Ասորեատանցիները Աֆրոդիտեին անվանում են Մյուլիտտա, արարները՝ Ալիտատ, իսկ պարսիկները՝ Միթրա»:

Համաձայն Հերոդոտոսի՝ պարսիկները չունեին տաճարներ և աստվածների արձաններ ու ծեսերն իրականացնում էին բացօթյա: Դարեհ I-ի արձանագրություններում թեև հիշատակվում է «պաշտամունքի վայրը» կամ «աստվածների տունը», բայց այն կարող էր լինել բացօթյա սրբավայր:

Միայն Արտաքսերքսես I-ից սկսած՝ պարսիկներն իրենց աստվածների համար կանգնեցնում են մարդակերպ արձաններ: Այս մասին է հաղորդում Բերոսոսը՝ հայտնելով, որ առաջին նման արձանները կանգնեցվել են Բաբելոնում, Սուսայում, երկու Էկրատանաներում (Պարսքում և Բակտրիայում), Դամասկոսում և Սարդեսում:

Աքեմենյան արքաները՝ առնվազն մինչև Քսերքսես I-ը հանդուրժող էին այլ կրոնների հանդեպ, հովանավորում էին եգիպտական, բաբելոնյան, հունական և այլ տա-

ճարներին, կառուցում էին նորերը: Սակայն Քսերքսես I-ի, օրոք սկսվեց և լայն ծավալներ ընդունեց կրոնական անհանդուրժողականությունը, ինչին նպաստեցին երկրում ծագած ապստամբությունները: Օրինակ՝ Բաբելոնի Մարդուկ աստծո ոսկեծույլ արձանը արքայի հրամանով տարվեց Պերսեպոլիս և վերաձուլվելով մեկընդմիջտ ոչնչացվեց: Այս քաղաքականությունը նպատակ ուներ արմատախիլ անելու պետականության հին ավանդույթներ ունեցող երկրների անջատողական ձգտումները: Քսերքսեսի օրոք Ահուրամազդայի պաշտամունքը բացարձականացվեց: Նրա ընդարձակ արձանագրությունը («Ընդդեմ Դևերի»), հայտնում է, որ Քսերքսեսը բարութանդ է արել «Դևերի» տաճարը և հաստատել Ահուրամազդայի պաշտամունքն այնտեղ:

Հայտնի է, որ Աքեմենյան արքաների անձը չէր աստվածացվում, թեև Էսքիլեսի մոտ Դարեհն ու Քսերքսեսը դիտվում են իբրև աստվածներ:

Արվեստը և ճարտարապետությունը

Աքեմենյան տերությունը զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող և տարբեր մշակույթներ ունեցող բազում ժողովուրդների ամբողջություն էր: Այդպես էլ չստեղծվեց Աքեմենյան միասնական մշակույթ, ինչպես և չառաջացավ Աքեմենյան տերության «քաղաքացի»: Բայց, այնուամենայնիվ, մեծաթիվ ժողովուրդների հավաքը մեկ տանիքի ներքո չէր կարող ճանապարհ չհարթել տարաբնույթ փոխազդեցությունների համար, ինչի արդյունքում էլ ծնվեց այսպես կոչված «Աքեմենյան տերունական մշակույթը»:

Աքեմենյան արվեստի ձևավորումը և զարգացումն ընթացել են երկու փուլով՝ «արխաիկ» և «դասական»: «Արխաիկ» փուլը ներկայացված է գլխավորապես Պասարգադքի հուշարձանախմբով և թվագրվում է Կյուրոս Մեծի ժամանակաշրջանով: Պասարգադքը համարվում է Աքեմենյան արվեստի ծննդավայրը: Մինչդեռ «դասական» փուլը երկարատև մի շրջան էր՝ սկսած Պերսեպոլիսի և Նախշ-է Ռոստեմի հուշարձանների կառուցումից և գրեթե անփոփոխ հարատևեց մինչև Աքեմենյան տերության անկումը:

Աքեմենյան արվեստն աչքի էր ընկնում իր յուրօրինակությամբ, երբ արվեստի որևէ ճյուղ, որն այս կամ այն դրսևորմամբ հանդիպում էր որևէ էթնիկ խմբի մոտ, նոր որակ էր ստանում՝ համակցվելով մեկ այլ էթնիկ խմբի նմանատիպ դրսևորման հետ: Հաճախ նման համակցությունն ունենում էր մի քանի ակունքներ՝ հոնիական-փոքրասիական, միջագետքյան, եգիպտական-արևելամիջերկրածովյան, կենտրոնասիական և այլն: Այդ իսկ պատճառով հաճախ դժվար է Աքեմենյան արվեստում հենց իր՝ պարսկականի (կամ իրանականի) առանձնացումը:

Հայտնի չէ Աքեմենյան որևէ այլ հուշարձան, որը հնարավոր լիներ թվագրել մինչև Կյուրոս Մեծն ընկած ժամանակաշրջանով: Աքեմենյան ճարտարապետության «արխաիկ» փուլի գլխավոր հուշարձանը Պասարգադքն է՝ իր ժամանակի համար աննախադեպ ընդարձակ, նախկինում չորս կողմից պարտեզներով շրջապատված պալատական մի համալիր: Պասարգադքի բնութագրական կառույցներից են հա-

մալիրի հանդիսավոր մուտքը, գահանիստ պալատը, «ընդունելությունների սրահը» և Կյուրուսի դամբարանը: Հաշվի առնելով հոնիական ճարտարապետության հզոր ազդեցությունը Պասարգադքում՝ ենթադրվում է, որ քաղաքը կառուցվել է Կյուրուսի կողմից Լիդիայի նվաճումից հետո՝ Փոքր Ասիայից բերված վարպետների մասնակցությամբ: Բացի Պասարգադքից, պալատական համալիրի ավերակներ են հայտնաբերվել նաև այլ վայրերից:

«Դասական» փուլի Աքեմենյան ճարտարապետությունը ներկայացված է Դարեհ I-ի հիմնադրած և հետագայում ընդարձակված Պերսեպոլիսի հուշարձանախմբով՝ Պասարգադքից 43 կմ հյուսիս: Այն 450x300 մ մակերեսով արհեստական հարթակի վրա կառուցված պալատական համալիր է, որի կենտրոնում 100 սյունանոց հսկայական սրահն է՝ ապադանան (70x70 մ): Սրահի սյուները վեր են խոյանում գրեթե 20 մ՝ պսակվելով կենդանակերպ խոյակներով: Ապադանային կից կառուցված են սյունազարդ այլ սրահներ և առանձին շինություններ՝ այսպես կոչված «Դարեհի պալատը», «Գանձատունը», Քսերքսես I-ի «Հարեմի պալատը» և այլն: Աքեմենյան արքայի կողմից խոշորամասշտաբ աշխատանքներ իրականացվեցին Սուսայում և Էկրատանայում, որոնց բաղկացուցիչ մաս էր կազմում պալատական համալիրների կառուցումը:

«Դասական» շրջանի ճարտարապետությունը և արվեստն իրենց բարձրակետին հասան Քսերքսես I-ի օրոք՝ ստանալով նոր ձև ու բովանդակություն: Սակայն արդեն նրանից հետո «դասական» արվեստում նկատվում է կաղապարայնացում, հետագա բոլոր գործերը պարզապես կրկնում էին նախորդներին, թեև Աքեմենյան արքաները երկրում շարունակում էին իրականացնել լայնածավալ շինարարություն՝ ընդհուպ մինչև Արտաքսերքսես III:

Պերսեպոլիսից ոչ հեռու՝ Նախշ-է Ռուստեմում են գտնվում Աքեմենյան չորս արքաների ժայռափոր դամբարանները: Առաջինը պատկանում է Դարեհ I-ին: Մյուս երեքը, որոնցում հուղարկավորվել են Քսերքսես I-ը, Արտաքսերքսես I-ը և Դարեհ II-ը, առաջինի ճշգրիտ ընդօրինակությունն են: Նմանատիպ դամբարաններ են փորվել նաև Կուե-է Ռախմաթ լեռան փեշերին և հավանաբար պատկանել են Արտաքսերքսես II և Արտաքսերքսես III արքաներին: Դրանցից ոչ հեռու հայտնի է ևս մեկ՝ ենթադրաբար՝ Դարեհ III-ին պատկանող, բայց անավարտ մնացած դամբարան:

Աքեմենյան ճարտարապետությանը բնորոշ կառույցներ հայտնի են տերության այլ վայրերից ևս: Դրանց շարքում առանձնանում է Սուսան՝ տերության վարչական կենտրոնը՝ իր հզոր միջնաբերդով և պալատական համալիրով: Վարչական շենքերը գտնվել են պալատից ոչ հեռու՝ այսպես կոչված «արքայական քաղաքում»:

Աքեմենյան դարաշրջանի նյութական մշակույթի ամենատարածված ճյուղը խեցեգործությունն է: Սակայն Աքեմենյան շրջանում չձևավորվեց խեցեղենի գերակա որևէ ձև, որը բնորոշվեր որպես «Աքեմենյան»: Օրինակ՝ միայն Իրանական բարձրավանդակը Աքեմենյան շրջանում ներկայացնում էր ինը գոտիներ՝ իրենց բնորոշ խեցեղենով:

Աքեմենյան արվեստի կարևորագույն և լավ ներկայացված ճյուղը քանդակագործությունն է: Դարեհի մերձավորների և գերեվարված «ինքնակոչ» արքաների պատ-

կերներն են փորագրվել այսպես կոչված «Ասիայի դարպասների» մոտ՝ Բեհիսթունի ժայռի վրա: Պալատական համալիրները զարդարված էին հարյուրավոր բարձրաքանդակներով՝ ի ցույց դնելով արքաների հզորությունն ու տերության գաղափարախոսությունը: Աքեմենյան արքաների «ընդունելության տեսարաններ»-ն իրենց վրա կրում էին ասսուրա-բաբելոնյան պատկերագրության ազդեցությունը: Եզակի բարձրաքանդակներ են հարկատու ժողովուրդների պատվիրակներին և Աքեմենյան բանակի զինվորներին ներկայացնող պատկերները: «Դասական» շրջանի Աքեմենյան քանդակագործության գլուխգործոց են Դարեհի պալատի բարձրաքանդակները՝ արքայից արքայի և գահաժառանգ արքայազնի պատկերներով:

Աքեմենյան արվեստի մյուս ճյուղը մետաղագործությունն էր: Այն առանձնանում է իր տարածվածությամբ և միակն է, որի նմուշներին կարելի է հանդիպել կենտրոնից դուրս՝ Փոքր Ասիայում, Հայաստանում, Սիրիայում, Պաղեստինում, Եգիպտոսում, Կենտրոնական Ասիայում և այլուր: Պահպանվել են մեծ թվով առարկաներ՝ ոսկե և արծաթե սպասք, տարատեսակ պոչակներ (ոխտոններ), սափորներ, պաշտամունքային անոթներ, զենքեր, ապարանջաններ, նվիրատվական թիթեղներ և այլն:

Հենց այս՝ «վերնախավային» բնույթի առարկաներով էր ներկայանում Աքեմենյան տերունական մշակույթը, մշակույթ, որին իրականում անհաղորդակից մնացին Աքեմենյանների գերիշխանության տակ միավորված ժողովուրդները: Աքեմենյան տերունական մշակույթը վերնախավային մշակույթ էր, և տերության անկումից հետո այն արագորեն տարրալուծվեց Արևելքի հունականացող մշակույթի մեջ:

9. ԱՔԵՄԵՆՅԱՆ ԻՐԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Իրանական բարձրավանդակի հետ Հայաստանն ուներ սերտ կապեր՝ սկսած դեռևս նախագրային ժամանակներից: Վանի թագավորության գոյության շրջանում Արևմտյան Իրանի տարածքները հայտնվեցին նրա գերիշխանության տակ: Իրանում Վանի թագավորության ներկայությունը խոր հետք թողեց տեղի հասարակությունների վրա, ինչն առավել ցայտուն դրսևորվեց ավելի ուշ, երբ պատմության ապարեզ իջավ Աքեմենյան տերությունը:

Վանի թագավորության և Աքեմենյան քաղաքակրթությունները ժամանակագրորեն չեն հատվել միմյանց, սակայն վերջինս մասամբ Վանի թագավորության ժամանակ ստեղծված քաղաքակրթության ժառանգորդն էր: Թե ինչպես են այդ ավանդույթները փոխանցվել Աքեմենյաններին, պարզ չէ: Հնարավոր է, որ դրանում դերակատարություն է ունեցել մի երրորդ երկիր, ինչպիսին կարող էր լինել, օրինակ, մերձուրմյան ավազանում ընկած Մանայի թագավորությունը, հնարավոր է՝ մարական որևէ ցեղապետություն:

Աքեմենյան քաղաքակրթության վրա Վանի թագավորության ազդեցությունը դրսևորվում է մի շարք ոլորտներում՝ սեպագիր դպրություն, նյութական և հոգևոր մշակույթ, արվեստ և ճարտարապետություն:

Սեպագիր դպրություն

Թեև Աբեմենյան սեպագիր դպրությունը ակունքներով հանգում է էլամականին, սակայն դրանում հստակ դիտարկվում են Վանի թագավորության հանդիսավոր արձանագրություններին բնորոշ ոճական մի շարք առանձնահատկություններ: Ինչպես Վանի թագավորության տեքստերում, հին պարսկերեն արձանագրություններում ևս հանդիպում են գրեթե միանման, կաղապարային ձևակերպումներ, ինչպիսիք են, օրինակ՝ տարվա իրադարձությունների ամփոփագրերը: Հին պարսկերեն արձանագրություններում իրադարձությունների նկարագրությունը տրվում է իբրև արքայի ուղղակի խոսք, ինչը, Վանի թագավորությունից գատ, բնորոշ չէր այլ սեպագիր դպրություններին: Հին պարսկերեն սեպագիր տեքստերում կիրառվում էին բառանջատիչ սեպեր, ինչը ևս հանդիպում է ուրարտական սեպագիր աղյուսակներում և այլն:

Ճարտարապետություն

Վանի թագավորության որոշ կենտրոններ գոյատևեցին նաև Աբեմենյան դարաշրջանում՝ մասամբ ենթարկվելով որոշ փոփոխությունների: Մյուս կողմից՝ Վանի թագավորության ճարտարապետությունը թողեց գուցե միջնորդավորված, բայց նշանակալի հետք Աբեմենյան ճարտարապետության վրա: Ընդ որում՝ այդ ազդեցությունը նկատվում է դեռևս մարական հուշարձաններում:

Կարծիք կա, որ Աբեմենյան ճարտարապետությանը բնորոշ գլխավոր կառույցներից մեկը՝ *ապսղանտան*, իր արմատներով հանգում է Վանի թագավորության այունազարդ դահլիճներին: Նույնը վերաբերում է Աբեմենյան աշտարակ-տաճարներին, որոնց ակունքներում, թերևս, ընկած են Վանի թագավորության աշտարակավոր կառույցները: Աբեմենյան արքաների դամբարանները վիմափոր են և հիշեցնում են Վանի թագավորության նմանատիպ կառույցները: Ակնհայտ նմանություններ են առկա նաև շինարարական տեխնիկայի բնագավառում: Աբեմենյան ամրաշինության մեջ ևս նկատելի է Վանի թագավորության ազդեցությունը:

Արվեստ

Աբեմենյան արվեստը բազմաշերտ է և ներառում է տարրեր բոլոր այն ժողովուրդներից, որոնք հայտնվել էին տերության կազմում: Մյուս կողմից՝ Աբեմենյան տերունական արվեստի վրա հզոր ազդեցություն թողեցին առաջավորասիական այն երկրները, որոնք տերության կազմավորման շրջանում այլևս գոյություն չուներին: Դրանց թվում էին, նախ և առաջ, Ասորեստանը, ապա Բաբելոնիան և էլամական թագավորությունները: Հատկապես մեծ էր էլամի ազդեցությունը Անշանի պարսկական պետության վրա: Մյուս կողմից՝ առկա է նաև Վանի թագավորության ներդրում:

Աբեմենյան արվեստում տարածված էր Արևի թևավոր սկավառակի մոտիվը: Այն ընդհանրապես բնորոշ չէր հինարևելյան հասարակություններին ընդհուպ մինչև Ք. ա. II հազ. սկիզբը և այստեղ հայտնվեց, թերևս, խորրիական ներթափանցում-

ների հետ: Թևավոր սկավառակի մոտիվը արմատավորվեց հատկապես Հյուսիսային Միջագետքում՝ փոխառվելով ասորեստանցիների կողմից: Նրանց մոտ այն սկսեց մարմնավորել Աշուր աստծուն: Այս մոտիվը լայնորեն վկայված է նաև Վանի թագավորության արվեստում՝ մարմնավորելով նրա գերագույն աստված Խալդիին: Հավանաբար Վանի թագավորությունից այն անցավ Իրանական բարձրավանդակ՝ աստիճանաբար փոխակերպվելով Աբեմենյանների գերագույն աստծո խորհրդանիշի: Թևատարած արևի սկավառակը դարձավ Աբեմենյան տերունական արվեստի ամենատարածված մոտիվը, նաև արքայական իշխանության խորհրդանիշ: Հայաստանում պաշտոնավարած Աբեմենյան սատրապներից Տիրիբազուսի դրամների վրա ևս կարելի է տեսնել թևավոր սկավառակի պատկերը:

Վանի թագավորության ազդեցությունը դրսևորվում է նյութական մշակույթի գրեթե բոլոր ոլորտներում, հատկապես մետաղագործության մեջ: Օրինակ՝ Վանի թագավորության շրջանի բրոնզե առարկաների շարքում տարածված էին կենդանակերպ բռնակներով կաթսաները: Առյուծի կամ գրիֆոնի գլուխներով այդ բռնակները կոչված էին պաշտպանելու ծիսական կաթսաների պարունակությունը: Նման կրկույթ նկատվում է նաև Աբեմենյան բրոնզագործության մեջ: Վանի թագավորության շրջանի նախաստիպերից են ծագում, հավանաբար, Աբեմենյան դարաշրջանում լայնորեն վկայված բրոնզե զարդարուն թասերը՝ դրվագված ճառագայթաձև դասավորված լոտոսի պսակաթերթիկներով: Վանի թագավորության ազդեցությունն էին կրում Աբեմենյան արքաների գահերի բաղադրատարրերն ու զարդաքանդակները:

Նկատելի ընդհանրություններ են դիտվում նաև խեցեգործության մեջ: Աբեմենյան դարաշրջանի խեցեղենի որոշ նախաստիպեր կարելի է տեսնել Վանի թագավորության խեցեղենի մեջ: Առավել բնութագրականը Վանի թագավորության ժամանակաշրջանի երկկանթանի բարձրադիր սափորներն են, որոնք ոչ միայն հարատևեցին Հայաստանում (նման մետաղե սափորով են պատկերված հայերը Պերսեպոլիսի բարձրաքանդակներում), այլև լայն տարածում գտան Հայաստանից դուրս՝ նրան հարակից տարածքներում:

Հայտնի է, որ Աբեմենյանների վրա հսկայական ազդեցություն է թողել միջագետքյան պատկերագրությունը: Աբեմենյան արքային պատկերող հանդիսավոր բարձրաքանդակները հար և նման են ասորեստանյան նույնարժանիակ օրինակներին: Այնուամենայնիվ, պատկերագրության մեջ Վանի թագավորության ազդեցությունը նույնպես նկատելի է:

Դիցաբանություն

Հայ-իրանական դիցաբանական կապերի գոյությունն անվիճելի է, թեև դրանց սկզբնավորումը, հավանաբար, տեղի էր ունեցել Աբեմենյան տերության կազմավորումից շատ առաջ: Հայտնի է, որ Վանի թագավորության դիցաբանի գերագույն աստված Խալդիի կինը՝ Վարուբանի աստվածուհին, Խալդիի պաշտամունքային կենտրոն Մուծաձիրում երկրպագվում էր Բազմաշուր կամ Բագրարտու անվամբ:

Այս անունը մեկնաբանվում է իրանական լեզվահիմքով՝ «Աստված իմաստուն»: Սա ըստ էության նույնն է, ինչ պարսկական Ահուրամազդան (*Ahura Mazda*՝ «Իմաստության տեր» կամ «Տեր իմաստուն»)։ Վերջինս, սակայն, արական աստվածություն է։

Մյուս կողմից՝ ակնհայտ կերպարային ընդհանրություններ են դիտվում Խալդիի և Ահուրամազդայի միջև։ Օրինակ՝ երկու աստվածությունների քննադատական կողմերից է նրանց անտեսանելի էությունը։ Պատկերագրության մեջ այս երևույթի արտահայտչաձևերից էր այսպես կոչված «դատարկ կառքի» մոտիվը։ Խալդին ուներ իր մարտակառքը, որում, սակայն, նա երբևէ չէր պատկերվում։ Ըստ Հերոդոտոսի՝ Աքեմենյան քանակի առջևից «Անմահների գնդի» ուղեկցությամբ տանում էին ութ սպիտակաթույր ձիեր լծած «Ջևսի» (Ահուրամազդայի) դատարկ մարտակառքը։

Բանավոր ավանդազրույցներ

Աքեմենյան արքա Դարեհ I-ի գահակալության հերոդոտոսյան պատումը, դրա հետ կապված Պատմահոր հաղորդումը արքայի կանգնեցրած բարձրաքանդակի և կից արձանագրության մասին, որտեղ, իբր, ասվում էր, թե «*Դարեհը՝ Հյուսաստասպեսի որդին, իր ձիու... և ձիապան Օրթարեսի առաքինության շնորհիվ տիրացավ պարսից թագավորությանը*», հիշեցնում է ասորեստանյան աղբյուրների այն տեղեկությունը, ըստ որի՝ Մուծածիրի տաճարում պահվող Վանի թագավորության արքա Ռուսա I-ի պղնձաձույլ արձանախմբի վրա եղել է արքայի արձանագրությունը՝ «*Իմ երկու ձիերով և մեկ կառավարով իմ ձեռքը տիրեց Ուրարտուի արքայական իշխանությանը*»: Հնարավոր է, որ Վանի թագավորությունում գոյություն է ունեցել նման ավանդազրույց, որը պահպանվել ու փոխանցվել էր իրանական աշխարհ և, թերևս, կենդանի էր Հերոդոտոսի ժամանակներում ևս։

Նշված փաստերը վկայում են Աքեմենյան Իրանի վրա Վանի թագավորության մշակույթի ունեցած նշանակալի ազդեցության մասին։ Դրա պատճառներն ու ազդեցությունների փոխանցման ձևերն առայժմ անհայտ են։ Փաստ է միայն, որ Վանի թագավորության մշակույթը ակնհայտորեն հետաքրքրել է Աքեմենյաններին։ Եվ պատահական չէր Աքեմենյան արքա Դարեհ I-ի ցանկությունը՝ արձանագրություն թողնել Վանի թագավորության երբեմնի մայրաքաղաք Տուշպայում՝ Վանա ժայռի վրա, ինչը, սակայն, իրագործեց միայն նրա որդին՝ Քսերքսես I-ը։

Հայաստանը Աքեմենյան տերության վարչատնտեսական և ռազմական հստակարգում

Հայ-իրանական փոխհարաբերությունները դրսևորվեցին էլ ավելի ինտենսիվ կերպով Վանի թագավորության անկումից հետո։

Բարելոնյան ժամանակագրության համաձայն՝ Ք. ա. 547 թ. Կյուրոս II-ը գրավել է Ուրաշտուն և այստեղ թողել կայազոր։ Հավանաբար բարելոնյան աղբյուրը նկատի է ունեցել Վանի թագավորությանը հաջորդած Երվանդունյաց թագավորությունը։

Հայաստանը դարձավ սկզբում Կյուրոսի պետության մաս, այնուհետև՝ Աքեմենյան տերության սատրապություն։ Հայերի ապստամբությունը Դարեհ I-ի դեմ հաջողություն չունեցավ։ Շուրջ երկու դար Հայաստանը գտնվում էր Աքեմենյանների գերիշխանության ներքո։

Աքեմենյանների արձանագրություններում Հայաստանը կոչվում է Արմինա (*Armīna*), որից ծագել է հայերին հույների տված *արմեններ*, *Արմենիա* անվանումները (*ἄρμένιοι*, *Ἀρμενία*)։ Աքեմենյանների էլամերեն տեքստերում երկրանունը հանդես է գալիս *Har-mi-nu-ya(-ip)* անվանաձևով, իսկ բարելոնյան տեքստերում՝ *Ուրաշտու* (*𐎠𐎼𐎷𐎡𐎴*–*ra-āš-ta*), քնակիչները՝ ուրարտացի, (*𐎠𐎺𐎠*–*ra-āš-ta-a-a*)։ Հայաստանը Էլեֆանտինայի արամեերեն քնագրում հիշատակվում է *ʾrṣt* անվանումով (իմա՝ *Արարատ*, հնարավոր են այլ տարբերակներ ևս)։

Աքեմենյան դարաշրջանին վերաբերող սեպագիր աղբյուրներում Հայաստանի և հայերի հիշատակումները մեծաքանակ չեն։ Դրանք հիմնականում Դարեհ I-ի թողած արձանագրություններն են, ուր թվարկվում են ենթակա երկրները, այդ թվում՝ Հայաստանը։ Աքեմենյան այլ արձանագրություններում Հայաստանի հիշատակումները շարունակվում են ընդհուպ մինչև Ք. ա. IV դ. կեսերը. վերջին հիշատակությունը պատկանում է Արտաքսերքսես III-ին։ Հանդիսավոր արձանագրություններից դուրս հայերի մասին հիշատակվում են բարելոնյան միայն մի տեքստում։ Մուրաշու տան դիվանին պատկանող այդ տեքստը վճարման վկայագիր է, որը կնքել է «մելիտեացիների և ուրաշտացիների» կառավարիչ Իլտամմեշ-բարակկուն։ Տեքստը թվագրվում է Դարեհ II-ի կառավարման 6-րդ տարով (Ք. ա. 418 թ.)։

Աքեմենյան արձանագրություններում Հայաստանը հանդես է գալիս որպես առանձին երկիր։ Մինչդեռ, ըստ անտիկ աղբյուրների, Հայաստանը առնվազն ինչոր մի ժամանակ բաժանված էր երկու վարչական հատվածների։ Հերոդոտոսը դրանք հիշատակում է որպես XIII և XVIII սատրապություններ։ Քսենոփոնը Հայաստանի սատրապ Օրոնտեսից գատ հիշատակում է «Արևմտյան Հայաստանի» կառավարիչ Տիրիբբագոսին, որին կոչում է «հյուպարքոս»։ Ալեքսանդրի արշավանքների ժամանակ հայկական զորքերին առաջնորդում էին երկու զորավարներ, որոնք, ենթադրվում է, ներկայացրել են հայաստանյան երկու սատրապությունները։ Այնուամենայնիվ, Հայաստանի վարչական բաժանման խնդիրը դեռևս լուծված չէ։

Հայաստանի սատրապական կենտրոնների հարցը նույնպես պարզ չէ։ Նախկինում որպես այդպիսին դիտարկվում էին Վանը և Էրեբունին։ Սակայն Աքեմենյան դարաշրջանը ներկայացնող խոշոր պալատական համալիրի գոյությունը Բենիամինում (Շիրակ, Ք. ա. V–IV դդ.), Աքեմենյան սյունազարդ դահլիճն Ալթընթեփեում, էլամական սեպագիր տեքստերի առկայությունը Արգիշտիխինիլի–Արմավիրում, որոնք այժմ թվագրվում են Աքեմենյան դարաշրջանով և դիտարկվում իբրև վարչատնտեսական տեքստեր, դրդում են ընդլայնելու նման կենտրոնների թիվը Հայաստանում։ Իսկ թե դրանցից որն է եղել սատրապական նստավայր, պարզ չէ։ Քսենոփոնը հիշատակում է Հայաստանի սատրապի ապարանք–նստավայրեր, որոնց անունները, սակայն, չի հայտնում։

Հայաստանի սատրապներից հայտնի են Թանառեսարեսը (·)՝ Կյուրոս Մեծի կրտսեր եղբայրը (Ք. ա. VI դ. երկրորդ կես), Օրոնտեսը (Ք. ա. V դ. վերջ – մոտ 380–ական թթ.), Տիրիբազոսը (Ք. ա. մոտ 400–394 թթ.), Օրոնտեսը (կրկին⁽²⁾, Ք. ա. 362–354 թթ.⁽³⁾), Արշամը (Կողոմանոս, Ք. ա. 354⁽²⁾–336 թթ.) և Օրոնտեսը (Ք. ա. 336⁽²⁾–330 թթ. որպես սատրապ, 330/29 թ. մինչև 300⁽²⁾ թթ.՝ հայոց արքա): Այս ցանկը հնարավոր է թվում լրացնել այլ անուններով (Արոանդես/Օրոնտես⁽²⁾՝ Ք. ա. V դ. կես, Արտաստուրա՝ ⁽²⁾Ք. ա. V դ. երկրորդ կես):

Վերոհիշյալ սատրապներից մի քանիսը կրել են Օրոնտես (հայ. Երվանդ) անունը: Այս անվան կրկնությունը կարող է վկայել Հայաստանում սատրապական իշխանության՝ մեկ տոհմի պատկանելու մասին՝ սկսած առնվազն Ք. ա. V դ. վերջերից: Աքեմենյանների անկումից հետո Հայաստանի սատրապ Օրոնտես–Երվանդն իրեն հռչակեց արքա՝ հիմնելով Երվանդունիների արքայատոհմը: Երվանդունիների ծագման խնդիրը (հայկական, իրանական կամ մեկ այլ) դեռևս մնում է վիճահարույց: Ստրաբոնի հաղորդմամբ՝ Հայաստանում իշխել են «յոթ պարսիկներից» մեկի՝ Հյուդառնեսի (Վիդառնա) սերունդները, որոնցից վերջինը նույնպես կրել է Օրոնտես անունը:

Սատրապից բացի, երկրում գործում էին Աքեմենյան կենտրոնական իշխանության նմանությամբ ստեղծված վարչական կառույցներ՝ նշանակովի պաշտոնյաներով: Արմավիրի տեքստերից մեկում հիշատակվում է frataraka–պաշտոնյան, որը կարևոր դիրք էր զբաղեցնում սատրապական վարչակազմում: Այլ պաշտոնյաների թվում էին, հավանաբար, մատովակները: Նրանք բարձր պաշտոններ էին զբաղեցնում ինչպես Աքեմենյան արքունիքում, այնպես էլ հինարևելյան երկրներում ընդհանրապես:

Հայաստանի Աքեմենյան վարչակազմը բնակչության հետ հարաբերությունները կարգավորում էր գեղջկավազների միջոցով, որոնք իրականացնում էին միջնորդի դեր համայնքի և իշխանությունների միջև:

Նվաճված երկրներում Աքեմենյանները տեղակայում էին կայազորեր: Եգիպտոսում տեղաբաշխված Աքեմենյան մշտական զորաբանակի թիվն, օրինակ, տատանվում էր 10–12 հազարի սահմաններում: Հայտնի չէ՝ արդյո՞ք Հայաստանում ևս Աքեմենյանները պահել են կայազորեր: Քսենոփոնը հիշատակում է Կյուրոսի կողմից հայերի և խաղայների շփման գոտում ամրություն կառուցելու և դրանում կայազոր թողնելու մասին, սակայն նրա այս պատումը, եթե անգամ ունենա պատմական հիմք, վերաբերում էր դեռևս մարական տիրապետության շրջանին: Ընդհանուր առմամբ կարելի է փաստել, որ Աքեմենյանների համար Հայաստանը չունեց այն ռազմավարական նշանակությունը, ինչ ներկայացնում էին տերության արևմտյան տարածքները, մասնավորապես Փոքր Ասիան, Եգիպտոսը, Փյունիկիան և Կիպրոսը: Այս երկրները, գտնվելով հունական աշխարհի անմիջական հարևանությամբ, մշտապես հարվածի տակ էին և խոցելի, ինչն առաջացնում էր Աքեմենյան բանակի խոշոր ուժերի մշտական ներկայության անհրաժեշտություն: Հունական աշխարհից եկող վտանգից բացի՝ փոքր դեր չէին խաղում թվարկված երկրների անջատողական ձգտումները, իսկ Հայաստանի պարագայում նման փաստ Ք. ա. 522–521 թթ. ապստամբությունից զատ չկա: Ըստ ամենայնի, Հայաստանում խոշոր զորաբանակ պահելու անհրաժեշտու-

թյուն չկար, հայտնի չեն նաև տվյալներ ամրոցներում այլազգիներից կազմված կայազորային ուժեր տեղակայելու մասին: Հավանաբար Աքեմենյանները Հայաստանում հենվում էին սատրապին ենթակա տեղական՝ սատրապական զորքի վրա, որին, ըստ անհրաժեշտության, գումարվում էր աշխարհազորը: Քսենոփոնը հիշատակում է սատրապական զորքերի, որոնք կազմված էին գերազանցապես հայերից, մարդերից, տառիներից, խաղայներից ևն: Հայաստանը փոքրասիական սատրապությունների հետ միասին կազմում էր առանձին ռազմական միավոր:

Պարսիկներին հպատակ այլ ժողովուրդների պես հայերը նույնպես պարտավոր էին մասնակցել Աքեմենյան արքաների արշավանքներին: Հայերը հիշատակվում են Հունաստան արշաված Քսերքսես I–ի բանակի կազմում, ինչպես նաև հետագայում: Կուևաքսայի ձակատամարտին (Ք. ա. 401 թ.) մասնակցում էր Հայաստանի սատրապներից Օրոնտեսը: Հայերը Աքեմենյան բանակի կազմում մասնակցում էին Իսոսի ձակատամարտին (Ք. ա. 333 թ.): Այստեղ հայոց բանակի թիվը կազմել է 40 հազար հետևակ և 7000 հեծյալ: Գավգամելայի ձակատամարտում հայկական զորքերը գտնվել են Աքեմենյան բանակի աջ թևում՝ Օրոնտեսի և Միթրաուստեսի հրամանատարությամբ:

Բաբելոնիայում ստեղծված ռազմական ձամբարներից մեկում ծառայում էին նաև հայ ռազմիկներ: Հնարավոր է, որ հայեր գտնվել են նաև Աքեմենյան տերության այլ տարածքներում տեղաբաշխված կայազորերում:

Աքեմենյան ռազմական արշավանքները զլխավորել են նաև Հայաստանում կառավարած սատրապները: Օրինակ՝ Ք. ա. 380–ական թթ. Տիրիբազոսը և Օրոնտեսը, որոնց ձեռքին էր կենտրոնացված փոքրասիական մի քանի սատրապությունների կառավարումը, առաջնորդել են Աքեմենյան բանակի ու նավատորմի արշավանքը դեպի Կիպրոս:

Տնտեսություն և առևտուր

Ինչպես Աքեմենյան տերության մեջ մտնող մյուս ժողովուրդները, հայերը ևս վճարում էին հարկեր և պետք է կատարեին զանազան պարիակներ: Հերոդոտոսը հայերին հիշատակում է Աքեմենյան XIII սատրապության կազմում, որոնք պակտյուիկների ու մինչև Եվբսիդյան Պոնտոս (Սև ծով) ձգվող տարածքների իրենց «հարևանների» հետ համատեղ պարտավոր էին վճարել 400 արծաթ տաղանդ հարկ: Հայաստանյան XVIII սատրապությունը պետք է վճարել 200 տաղանդ:

Պերսեպոլիսի Աքեմենյան պալատի բարձրաքանդակներում պատկերված են պարսիկներին հարկատու ժողովուրդները: Հարկատուների շարքում են նաև հայերը, որոնք մատուցում են սահմանված հարկատեսակները խորհրդանշող ձի և երկկանթ մետաղյա սափոր: Համաձայն Ստրաբոնի՝ հայերը պարտավոր էին տարեկան 20 հազար մտրուկ որպես տուրք վճարել Աքեմենյան արքային միհրական տոնակատարությունների համար: Որպես տուրք ձիեր տալու մասին հիշատակում է նաև Քսենոփոնը:

Քսենոփոնին Հայաստանը ներկայանում էր որպես ծաղկուն գյուղատնտեսական երկիր: Ի տարբերություն գյուղատնտեսության՝ չնչին են տեղեկությունները առևտրի

մասին: Հայաստանում իշխող բնատնտեսության պայմաններում առևտրադրամային հարաբերությունները թույլ էին զարգացած: Աքեմենյան սատրապներն իրավունք ունեին հատելու սեփական դրամ: Սակայն հայաստանյան սատրապների կողմից հատված դրամներ և դրանց շրջանառության մասին վկայություններ առկա չեն: Թեև հայտնի են Հայաստանի սատրապներից Տիրիբազոսի և Օրոնտեսի դրամները, բայց դրանք բոլորն էլ հատվել են հոնիական և կիլիկյան քաղաքներում՝ Փոքր Ասիայի տարբեր սատրապություններում նրանց պաշտոնավարման ժամանակ:

Հայաստանում դրամական շրջանառության փաստական վկայություններ, այնուամենայնիվ, հայտնի են: Էրեբունիից գտնվել է Ք. ա. V–IV դդ. հատված միլեթյան երկու դրամ, Ք. ա. VI–V դդ. թողարկված աթենական դրամ է հայտնաբերվել Սյունիքից: Այս շրջանում առևտրադրամային հարաբերությունների մեջ հավանաբար ներթափանցված էին միմիայն հայաստանյան վերնախավն ու տեղի Աքեմենյան վարչակազմը:

Աքեմենյան տերության տնտեսական կյանքին Հայաստանի բնակչության մասնակցությունն ընդհանուր առմամբ մեծ չէր: Համենայնդեպս, Աքեմենյան դարաշրջանի վարչատնտեսական բնույթի հազարավոր սեպագիր տեքստերում հայեր չեն հիշատակվում: Թերևս միջնորդավորված էր նաև Հայաստանի արտաքին առևտուրը: Հերոդոտոսը հաղորդում է Հայաստանից արտահանվող ընտիր գինու մասին: Գինու առևտուրը, որն իրականացվում էր Եփրատ գետով, հնարավոր է, իրենց ձեռքն էին վերցրել օտարազգի առևտրականները: Հերոդոտոսի այս հաղորդումից բացի՝ Եփրատով իրականացվող գինու առևտրի վկայությունների հանդիպում ենք հինարևելյան սեպագիր աղբյուրներում, ինչը վկայում է նման առևտրական հարաբերությունների երկարամյա պատմության մասին:

Հավանաբար Հայաստանն առավելապես կապված էր Փոքր Ասիայի հետ, ինչի վկայություն կարելի է դիտել Հայաստանից հայտնաբերված հոնիական և աթենական դրամներն ու փոքրասիական ծագում ունեցող իրերը: Բացի այդ՝ Ստրաբոնի հաղորդումը՝ Կոմանայում (Կապադովկիա) Հայաստանից բերված ապրանքների կամ հայ վաճառականների ներկայության մասին, թեև վերաբերում է ավելի ուշ շրջանի, բայց նույնպես կարող է վկայել հայ-փոքրասիական տնտեսական վաղ կապերի գոյության օգտին:

Տերության այլ հատվածների հետ Հայաստանն ուներ կանոնավոր հաղորդակցություն: Հայաստանով (XIII սատրապություն) էր անցնում Աքեմենյան «արքունի ճանապարհի» մի հատվածը՝ 56,5 փարսախ երկարությամբ (մոտ 340 կմ) և 15 կայաններով:

Նյութական մշակույթ

Հայաստանում նախորդ դարաշրջանից եկած մեծ թվով բնակավայրեր և ամրոցներ շարունակեցին իրենց կյանքը նաև Աքեմենյան շրջանում: Զուգահեռաբար Աքեմենյանների օրոք իրականացվեցին զգալի շինարարական աշխատանքներ՝ վերափոխելով և նոր պահանջներին համապատասխանեցնելով գլխավորապես Վանի թագավորության շրջանի շինությունները կամ կառուցելով նորերը:

Հայաստանում Աքեմենյան դարաշրջանում կառուցված թերևս միակ համալիր շինությունը Բենիամին գյուղի պալատական կառույցն է՝ Աքեմենյան ճարտարապետությանը բնորոշ մի շարք գծերով, ինչպիսիք են, օրինակ՝ «պերսեպոլիսյան» տիպի խարիսխները:

Առկա տվյալները ցույց են տալիս, որ կենտրոնի հետ շփումներն իրականացվել են առավելապես վերնախավային մակարդակով, որը հաղորդակից էր Աքեմենյան տերունական մշակույթին: Հայաստանի վարչական կենտրոններում այս մշակույթին բնորոշ գտածոների առկայությունը և կենտրոններից դուրս դրանց իսպառ բացակայությունը կարելի է դիտարկել այս համատեքստում: Ամենայն հավանականությամբ բնակչության ճնշող մեծամասնությունը մնաց անհաղորդ Աքեմենյան տերունական մշակույթին:

Հայաստանի տարբեր հուշարձաններից հայտնաբերվել են Աքեմենյան մշակույթը ներկայացնող բազում իրեր: Դրանց թվում են Էրեբունիի արծաթյա պտյակները՝ հարուստ դրվագումներով: Պոյակներից մեկը պատրաստվել է իրրև հեծյալ: Վերջինս պատկերված է Աքեմենյան վերնախավին բնորոշ զգեստներով, կրում է «մարական» գդակ, ունի կարճ դաշույն՝ «ակինակ»: Պերսեպոլիսի պալատական բարձրաքանդակներում հայերին առաջնորդող պաշտոնյան ևս կրում է այսպես կոչված «մարական» զգեստ:

Հայաստանի տարածքից հայտնաբերվել են Աքեմենյան դարաշրջանին բնութագրական իրեր, մասնավորապես՝ խեցեղեն:

Լեզվական փոխառություններ

Հնդեվրոպական մայր լեզվի տրոհումից հետո հայերենն ու հին իրանական լեզուները հանդիպեցին մեկ անգամ ևս՝ Աքեմենյան դարաշրջանում: Այս լեզուների անմիջական շփման արդյունք է հայերենում իրանական վաղ փոխառությունների գոյությունը: Ինչպես հայտնի է, հայերենն իրականացրել է մեծաքանակ փոխառություններ իրանական լեզուներից: Թեև փոխառությունների ճնշող մեծամասնությունն արվել է սկզբում պարթևերենից, ապա միայն միջին պարսկերենից, սակայն դրանց վաղագույն շերտը թվագրվում է դեռևս Աքեմենյան տիրապետության դարաշրջանով՝ արված հին իրանական լեզուներից, հատկապես հին պարսկերենից: Վաղ փոխառությունների թվում են, օրինակ՝ հայ. *գուշակ* (իմա՝ *լրտես, մասնիչ*)՝ հին պարսկ. **gaušaka*, հայ. *թշնամի*՝ հին իրան. **duš-manyu*, հայ. *պարսեղ*՝ հին իրան. **paridaiza*, հայ. *թշվառ*՝ հին իրան. **duš(h)uvarna* և այլն: Որոշ տերմինների (օրինակ՝ հայ. *ապարան-ք, տաճար, վասն* և այլն) փոխառվելու ժամանակաշրջանը հայտնի չէ. դրանք կարող էին լինել ինչպես պարթևական, այնպես էլ Աքեմենյան շրջանում արված փոխառություններ:

Աքեմենյան տիրապետության շրջանում Հայաստանում սկսվեց իրանականացման գործընթաց, որի դրսևորումներից մեկն էլ պարսկերենի տարածումն էր երկրում: Ըստ Քսենոփոնի տեղեկությունների՝ Հայաստանի որոշ գյուղերում հասկանում և խոսում էին պարսկերեն, եթե, իհարկե, հույների համար հայերեն խոսքը

չէր ընկալվել իբրև «պարսկերեն»: Այս շրջանում Հայաստան մուտք գործեցին նաև տերության պաշտոնական գրագրության լեզուները: Վանա ժայռի վրա պահպանվել է Քսերքսես I-ի եռալեզու արձանագրությունը, Արմավիրից հայտնաբերվել են էլամական տեքստեր: Արամեերենի լայն կիրառությունը Հայաստանում նույնպես կարող էր ժառանգված լինել Աքեմենյան ժամանակներից: Թեև Աքեմենյան դարաշրջանում Հայաստանում հունարենի գործածության վկայություններ չկան, բայց այս լեզուն ամենայն հավանականությամբ խորթ չէր տեղի վարչակազմին, մասամբ՝ վերնախավին, թերևս նաև առևտրականներին:

Հոգևոր կապեր

Աքեմենյան դարաշրջանում սկսված Հայաստանի իրանականացումն արտահայտվեց նաև դիցաբանական մակարդակում: Օրինակ՝ հայերենի իրանական (հին պարսկական) հնագույն փոխառություններից մեկը, ըստ մի կարծիքի, հայոց պետական դիցարանի գերագույն աստված *Արամազդի* անունն էր (հին պարսկ. Auramazdā): Ինչպես հայտնի է, հայոց դիցարանի աստվածների անունների մեծ մասն ունի իրանական ծագում (հայ., *Անահիտ*, ավեստ. Anāhīta, հայ., *Միհր*, ավեստ. Miθra, հայ., *Վահագն*, ավեստ. Vərəθraγna, հայ., *Սպանդարամետ*, ավեստ. Spəntā Ārmaitiš և այլն, որոնք փոխառված են պարթևերենից): Դիցանունների նույնությունը թույլ է տվել դեռևս անտիկ հեղինակներին նույնացնելու այս աստվածությունները ևս: Հետագայում Ստրաբոնը գրում էր, որ հայերը կատարում էին նույն սրբազան արարողությունները, ինչ որ պարսիկները: Բառապաշարի ընդհանրությունները չէին սահմանափակվում միայն դիցանուններով: Հոգևոր աշխարհին վերաբերող հին հայերեն շատ տերմիններ ևս ունեն իրանական ծագում, որոնց մի մասը փոխառվել է Աքեմենյան դարաշրջանում (օրինակ՝ հայ. *կախարդ* բառը ավեստ. kaxvarəda-ից):

Իրանական ազդեցություն է նկատվում հայկական բանահյուսության մեջ, անգամ աշխարհիկ գրույցներում: Հայտնի է «*խորտը մորտ է գտեր*» ասացվածքը, որը վերաբերում է սիրահար զույգերին: Հայերենում *խորտը* (*խորտ*) և *մորտը* ծաղիկ տեսակներ էին, որ հանդիպում են Ավեստայում որպես դիցաբանական անուններ՝ Haurvatāt և Amərətāt:

Հայոց հոգևոր աշխարհում տեղ գտած այս գործընթացն արտահայտվեց հիմնականում անվանաբանության մեջ. հայկական աստվածությունները գերազանցապես պահպանեցին իրենց հնագույն կերպարները և իրանական նույնանուն աստվածներից սովորաբար տարբերվում էին իրենց գործառույթներով: Բացի այդ, ի տարբերություն իրանականի, հայոց դիցարանում բացակայում էր գրադաշտականության (հատկապես՝ մագդեականության) հիմքում ընկած երկու գլխավոր դերակատարներից մեկը՝ Անուրամազդայի հակառակորդ Չարը խորհրդանշող Ահրիմանը: Հին հայկական հավատալիքներում չար ուժեր, իհարկե, առկա էին, ընդ որում՝ դրանց անվանումներն իրանական էին (հմմտ., օրինակ՝ *դև*, *վիշապ*, *պարիկ*, *հուշկապարիկ*, *նահանգ* ևն):

Հայոց դիցարանը, ի տարբերություն դիցանունների, քիչ ընդհանրություններ ուներ իրանականի հետ: Մյուս կողմից՝ Աքեմենյան տիրապետության դարաշրջանը

թերևս շրջադարձային էր հայ դիցաբանական մտքի ձևավորման առումով, որի հաջորդ աստիճանն էր դառնալու հետագա Հայաստանի պետական դիցարանը:

Աքեմենյանները հետագա հայ իրականության մեջ

Հետաքրքիր է, որ հայ-պարսկական (Աքեմենյան) փոխհարաբերություններն արտացոլող դրվագներ գրեթե տեղ չեն գտել հին հայ վիպական ժառանգության մեջ: Այս առումով հայ ավանդությունը հիմնական տեղը հատկացրել է հայ-մարական փոխհարաբերություններին: Այս շարքում են Նյուբար Մաղեսի դեմ հայոց նախնի հայկյան Արամի մղած պատերազմի, մար արքա Վարբակեսի և հայոց նախարար Պարույր Սկայորդու դաշինքի, Տիգրան Երվանդյանի և Ածղահակի մասին գրույցները:

Մինչդեռ Հայաստանում Աքեմենյան ավանդույթները տերության անկումով չմարեցին: Երվանդունիներին հաջորդած Արտաշեսյան արքաներն իրենց նախնիներին, ինչպես ենթադրվում է, հանգեցնում էին Աքեմենյաններին: Թեև սա տարածված երևույթ էր Արևելքի հելլենիստական թագավորություններում (Պոնտոս, Կապադոկիա), սակայն տվյալ դեպքում հնարավոր է այն ընդունել իբրև երբեմնի իրողությունների հետավոր արձագանք. Հայաստանի սատրապներից Օրոնտեսը, որին հիշատակում է Քսենոփոնը, ամուսնացած էր Արտաքսերքսես I-ի դուստր Հոդոգունեի հետ: Իսկ Արտաշեսյան հարստությունը, հնարավոր է, սերում էր Երվանդունիներից: Իրենց նախնիներին Աքեմենյաններին էին հանգեցնում նաև Կոմմագենեի արքաները: Այս երկրի արքայատոհմը Երվանդունիների մի ճյուղն էր, որն իր ծագումնաբանությունը սկսում էր Դարեհ I-ից:

Հնարավոր է, որ սատրապական Հայաստանից հայկական թագավորությանը փոխանցվեց Աքեմենյան կառավարման համակարգը: Հատկանշական է, որ Աքեմենյան արքաների տիտղոսաշարը գրեթե նույնությամբ հանդիպում է Արտաշես I-ի թողած արամեագիր սահմանաբարերին: Արմավիրի տաճարում, հնարավոր է, հայոց արքաների աստվածացված նախնիների շարքում կանգնեցվել են նաև Աքեմենյան արքաների արձանները:

ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

Կյուրոս II	(559–530)	Դարեհ II	(423–404)
Կամբիզ	(529–522)	Արտաքսերքսես II	(404–359)
Բարդիա	(522)	Արտաքսերքսես III	(358–338)
Դարեհ I	(521–486)	Արտաքսերքսես IV	(337–336)
Քսերքսես I	485–465)	Ալեքսանդր Մեծ	(330–323)
Արտաքսերքսես I	(464–424)	Դարեհ III	(336–330)
Քսերքսես II	(424)	Բես (Արտաքսերքսես IV/V)	(330)
Սոգդիանոս	(424)		

ՊԱՐԹԵՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Իրանական բարձրավանդակը Աքեմենյան տերության անկումից հետո ներառվեց նորաստեղծ հելլենիստական Սելևկյան պետության կազմում: Հաջորդող տասնամյակների ընթացքում Սելևկյանները տիրում էին Միջերկրական ծովից մինչև Հնդկաստան և Կենտրոնական Ասիա ընկած հսկայածավալ շրջաններին: Սակայն Սելևկյան պետության արքաներին չհաջողվեց երկար ժամանակ տիրել այս ընդարձակ և բազմաէթնիկ երկրամասին: Ք. ա. III դ. կեսերին այստեղ ձևավորվեց Պարթևական պետությունը, որը շուրջ հինգ հարյուր տարի պետք է կարևորագույն դեր խաղար Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում¹:

Ք. ա. III դ. ընթացքում անընդմեջ պատերազմների, երկպառակությունների և ապստամբությունների հետևանքով Սելևկյան պետությունը հետզհետե թուլանում էր: Նրանից շարունակ անջատվում էին նոր տարածքներ: Այդ պետության համար առանձնակի մեծ վտանգ հանդիսացավ Ք. ա. 256 թ. սկսված հյուսիսիրանական պարս (կամ սպարս) կոչված վաչկատուն ցեղի ապստամբությունը Սելևկյան պետությունից անջատվելու համար: Հիշյալ ցեղի գոյությունը վկայված էր դեռևս Աքեմենյանների ժամանակներից, երբ նրանք զբաղեցնում էին մի տարածք, որը մոտավորապես համապատասխանում է ժամանակակից Իրանի Խորասան նահանգին: Ալեքսանդր Մակեդոնացու մահվանից հետո Արևմտյան Թուրքեստանում տեղի ունեցավ ցեղերի տեղաշարժ: Միանգամայն հավանական է, որ այդ ցեղերի մեջ էին գտնվում նաև պարսները:

Արևելքից՝ Բակտրիայից կամ Օխ գետի (ներկայիս Ամուդարյան) ափերից շարժվելով դեպի բուն Իրանի տարածքը՝ պարսները նախապես զբաղեցրին Կասպից ծովի ողջ հարավարևելյան երկրամասը՝ Պարթևք կամ Պարթևաստան, իսկ ավելի ուշ շարժվելով առաջ՝ հաստատվեցին ծովի արևմտյան ափերին՝ Մեծ Հայքի Բաղասական երկրում: Պարսների շարժումը կտրուկ ուժեղացավ, երբ այն սկսեցին գլխա-

վորել այդ ցեղի առաջնորդներ Արշակը (հուն.՝ Արսակ) և նրա եղբայր Տրդատը (Տիրիդատ): Այս երկու եղբայրները հանդես եկան հունա-մակեդոնական տիրապետության տեղական ներկայացուցիչների դեմ՝ որպես հույների կողմից ձնշված ասիական քնակչության առաջնորդներ:

Ամենայն հավանականությամբ, տեղեկանալով, որ Սելևկյան պետության ներսում տեղի են ունենում դինաստիական երկպառակություններ, իսկ արևմուտքում այն ջախջախիչ պարտություն էր կրել գալլերից ու առհասարակ ապրում էր խոր քաղաքական ճգնաժամ, Արշակը և Տրդատը սպանեցին Սելևկյանների սատրապին (ստրատեգոսին) և Ք. ա. 247 թ. ստեղծեցին Պարթևական կամ Արշակունիների պետությունը: Այս իրադարձությունը իրանցի պատմաբանների կողմից քննադատվել է որպես Իրանի ըմբոստացում Արևմուտքի դեմ, որը հանգեցրեց նրա նոր վերածննդին:

Ներխուժելով Պարթևաստան՝ Արշակը հարկադրված էր հաղթահարելու ոչ միայն Սելևկյան իշխանության տեղական ներկայացուցիչների, այլև պարթևական քնակչության դիմադրությունը: Ստրաբոնը տեղեկացնում է, որ սկզբում Արշակը և իր հետնորդները «թույլ էին, քանի որ մշտական պատերազմներ էին մղում մի ժողովրդի դեմ, որից խլվել էր այդ երկիրը»: Սակայն հետագայում պարսներն աստիճանաբար ձուլվեցին տեղացի պարթևների մեջ, ընդունեցին նրանց լեզուն, մշակույթը, կրոնը և բարքերը:

Այսպիսով՝ պարթևական պետության և հարստության հիմնադիր դարձավ Արշակ I-ը (Ք. ա. 247-217 թթ.), որի մասին հռոմեական պատմիչ Հուստինոսը արտահայտվել է հետևյալ կերպ. «անհայտ ծագում ունեցող, բայց մեծ խիզախության տեր մարդ»: Մինչև իր գահակալումը նա զբաղվել էր ավազակությամբ և կողոպուտով: Նույն պատմիչը նաև նշում է, որ Արշակը «պարթևների համար նույնքան արժանահիշատակ էր, որքան պարսիկների համար՝ Կյուրոսը, մակեդոնացիների համար՝ Ալեքսանդրը, հռոմեացիների համար՝ Հռոմուլոսը»:

Պարթև տիրակալները գահ բարձրանալուց հետո բոլորն էլ կոչվում էին Արշակ՝ պահպանելով, սակայն, իրենց անձնանունները: Արշակ անունը մեկնաբանվում է որպես ցեղի անվանում, որ ծագում է Ավեստայում հիշատակվող *արեշա* (արջ) բառից: Մեկ այլ վարկածի համաձայն՝ Արշակ նշանակում է «տղամարդ»՝ «հերոս»՝ *արշան* բառից: Հետագայում Արշակ անունը ձեռք է բերում նաև դինաստիական տիտղոսի իմաստ («Արշակունի»):

Արշակունիներն իրենց նախահայր էին համարում Աքեմենյան Արտաքսերքսես II արքային: Սակայն այս ծագումնաբանությունը ոչ մի պատմական հիմք չունի: Իսկ միջնադարյան իրանական ավանդույթը Արշակունիների ծագումը վերագրում էր Քեյ Բավուսի որդի Սիյավուշին:

Պարթևական նորաստեղծ պետությունը կենսունակ գտնվեց և կարողացավ դիմագրավել իր առջև ծառայած բոլոր մարտահրավերներին: Սկզբնական շրջանում Պարթևաստանը ստիպված էր ձանաչել Սելևկյանների գերագույն իշխանությունը: Ընդ որում՝ այդ շրջանում Պարթևական պետության կազմի մեջ մտնում էին միայն

¹ Պարթևաստանի պատմության վերաբերյալ առկա են բազմաթիվ ընդհանրացնող աշխատություններ՝ Gutschmid A., Geschichte Irans und seiner Nachbarländer von Alexander dem Grossen bis zum Untergang der Arsaciden, Tübingen, 1888; Debevoise N.C., A Political History of Parthia, Chicago, 1938; Кошеленко Г.А., Культура Парфии, Москва, 1966; The Parthians, London, 1967; Wolski J., Arsace Ier, fondateur de L'Etat parthe, AI 3, 1974, 159ff.; Периханян А.Г., Общество и право Ирана в парфянский и сасанидский периоды, Москва, 1983; Brosius M., The Parthians, London and New York, 2006 և այլն:

Կասպից ծովից արևելք և հարավ-արևելք ընկած տարածքները: Դեռևս չէին ձևավորվել նաև պետության կենսագործունեության համար անհրաժեշտ վարչաքաղաքական կառույցները: Դա տիպիկ ռազմա-քոչվորական միասնություն էր, որը դեռևս պետք է ձանապարհ անցներ կազմակերպված պետականություն կերտելու համար: Տևական ժամանակ պարթևները չունեին նաև մշտական մայրաքաղաք: Հետագայում որպես Պարթևական պետության գահանիստեր հանդես են եկել Նիսան, Հեկատոմպիլոսը, Էկբատանան (Հանգամատանա), Տիգրիսի վրա գտնվող Սելևկիա քաղաքը և Քոնեսիֆոնը (Տիգրոն):

Արշակը եռանդուն գործողություններով ընդարձակում էր իր պետությունը և դիմագրավում Սելևկոս II Կալլինիկոսի (Ք. ա. 238–237 թթ.) ձեռնմանը: Վերջինիս փորձերը՝ վերջ տալու Պարթևաստանի անկախությանը, ավարտվեցին կատարյալ ձախողմամբ: Ուստի Սելևկոսը ստիպված էր միառժամանակ ձանաչել պարթևների ինքնուրույնությունը՝ իր գերիշխանության ներքո:

Տեղական բնակչության հետ ընդհարումներից մեկի ժամանակ Արշակ I-ը սպանվում է, մի հանգամանք, որը վկայում է այդ շրջանում Պարթևաստանում ռազմաքաղաքական իրադրության ծայրահեղ լարվածության մասին: Արշակ I Մեծին հաջորդեց նրա եղբայր Տրդատը, որն ընդունեց Արշակ II գահակալական անունը (Ք. ա. 217–211 թթ.): Նրա նստավայրն էր Ասակա քաղաքը, որի տեղը առ այսօր անհայտ է: Ենթադրվում է, որ այն գտնվել է Կասպից ծովի արևելյան ափերի մերձակայքում:

Սելևկյանների պետության թուլացման և հունա-բակտրիական թագավորության տրոհման ու քայքայման դարաշրջանում պարթևները վճռական քայլեր կատարեցին իրենց տարածքների ընդլայնման և անկախության ամրապնդման ուղղությամբ: Արշակ II-ը իր տիրույթներն ընդլայնեց Կոպետ-դաղ լեռնաշղթայից հարավ ընկած տարածքներում, կազմակերպեց մարտունակ բանակ, կառուցեց մի շարք քաղաքներ ու ամրոցներ: Նրան հաջողվեց գրավել Նիսա քաղաքը, որը մի կարճ ժամանակամիջոցում դարձավ պետական նոր կազմավորման քաղաքական կենտրոնը (այստեղ էր թաղված Արշակ I-ը): Հետագայում պարթևական պետության գահանիստը Տրդատը տեղափոխեց անմատչելի Դարու ամրոցը: Այնուհետև նրան հաջողվեց գրավել հարևան Հիրկանիան (Վրկանը), որը նորաստեղծ պետության պաշտպանունակության ամրապնդման համար առաջնակարգ նշանակություն ուներ:

Պարթևական պետության համար վտանգը հնարավոր էր ինչպես արևմուտքից, այնպես էլ արևելքից: Ուստի հենց սրանք էին պարթևաց արքայի ռազմական ծավալապաշտության հիմնական ուղղությունները: Մինչդեռ Սելևկյանների պետության արևմտյան շրջաններում ռազմաքաղաքական իրադրությունը աստիճանաբար կայունանում էր: Բաբելոնում, Սուգիանայում և Պերսիդայում ձեռնելով հուզումները և ձեռք բերելով խաղաղ դադար՝ Սելևկոս II Կալլինիկոսը որոշեց զբաղվել իր հսկայական պետության արևելյան գործերով: Մասնավորապես նա ծրագրել էր վերականգնել Սելևկյանների տիրապետությունը նրանից անջատված հեռավոր հյուսիսարևելյան սատրապություններում:

Մի պահ Տրդատ I-ի (Արշակ II) վիճակը դառնում է օրհասական: Նա նույնիսկ

ստիպված է լինում փախուստի դիմել՝ ապաստան գտնելով *սպասյակ* կոչված ցեղերի մոտ: Սակայն վերադասավորելով իր ուժերը՝ շուտով նրան հաջողվեց պարտության մատնել Սելևկյանների զորքերին և փրկել պետությունը վերահաս կործանումից: Այդ հաղթանակը, ըստ Հուստինոսի, հետագայում պարթևները համարում էին իրենց ազատագրության օրը և ամեն տարի նշում էին այն: Այսպիսով՝ Սելևկոս II-ի փորձը Պարթևաստանի անկախությունը ոչնչացնելու ուղղությամբ ավարտվեց կատարյալ ձախողմամբ:

Արշակ II-ին հաջողվեց պահպանել իր իշխանությունը Պարթևաստանի նկատմամբ ընդհուպ մինչև իր մահը՝ Ք. ա. 211 թ., երբ այդ պետությունն արդեն կայացած էր: Նրա մահվանից հետո պարթևական գահը ժառանգեց Արտավան I-ը, որի գահակալական անունն էր Արշակ III (Ք. ա. 211–191 թթ.): Սրա օրոք արևմուտքից Սելևկյան պետության սպառնալիքը շարունակում էր թևածել Պարթևաստանի վրա: Սելևկոս II-ի անհաջող արևելյան արշավանքից քսանութ տարի հետո նրա որդին՝ Անտիոքոս III-ը (Ք. ա. 223–187), Ք. ա. 209 թ. որոշում է հնազանդեցնել պարթևներին և արևելքում վերականգնել Սելևկոս Նիկատորի տիրապետության ժամանակ ստեղծված սահմանները:

Իր պետության արևմտյան և հյուսիսային ծայրամասերում ապահովելով խաղաղություն և անդորրություն, ինչպես նաև կարգավորելով գործերը Հայաստանում, միաժամանակ ստանալով Ատրպատական-Մարաստանի կառավարիչ Արտաբազանի աջակցության վերաբերյալ խոստումը՝ Սելևկյան արքան, անձամբ անցնելով իր հսկայական բանակի գլուխ, ձեռնամուխ է լինում արևելյան արշավանքին: Ի թիվս հիշատակված այլևայլ խնդիրների՝ Անտիոքոսի կարևորագույն նպատակն էր վերականգնել Սելևկյանների տիրապետությունը հելլենիստական աշխարհի հյուսիսարևելյան ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող երկրամասերում:

Անտիոքոս III-ը ներխուժում է պարթևական թագավորության տարածքը՝ թափանցելով նույնիսկ նրա խորքերը: Պարթևաստանի և նրա սահմանակից հունա-բակտրիական պետության միջև գոյություն ունեցող եթե ոչ թշնամական, համեմայն դեպս ոչ բարեկամական հարաբերությունները նշանակալիորեն հեշտացնում էին Անտիոքոսի գործը Պարթևաստանի դեմ հարձակողական պատերազմ մղելու գործում:

Անտիոքոսի բանակը սկզբում ձեռք բերեց ակնառու հաջողություններ: Նրան նույնիսկ հաջողվեց գրավել պարթևական թագավորների պաշտոնական նստավայրերից մեկը՝ Հեկատոմպիլոսը: Գիտակցելով, որ ուժեղ հակառակորդի հետ բաց առձակատումը լավ հեռանկար չի խոստանում՝ Արտավան I-ը լայնորեն օգտագործում էր պարթևական հայտնի նահանջ-հակահարձակում մարտավարությունը՝ անակնկալ և շարունակական հարվածներով հակառակորդին հյուծելու ու մաշեցնելու, նրան հուսահատության հասցնելու և վերջնական պարտության մատնելու բազմիցս փորձված ձևը:

Աստիճանաբար Անտիոքոսը համոզվեց, որ սա մի պատերազմ էր, որի հաջող ավարտը դժվար է գուշակել: Ուստի նա գերադասեց հաշտությունը: Կողմերի միջև կնքվեց խաղաղության համաձայնագիր: Ատրպատական-Մարաստանի և

Հայաստանի կառավարիչների նման Պարթևաստանի թագավորը պարտավորվում էր ձանաչել Անտիոքոսի գերագույն իշխանությունը՝ միաժամանակ պահպանելով իր տիրոջներն ու արքայական տիրոջը Սելևկյանների պետության դաշնակցի իրավունքով: Այսպիսով՝ Արտավան I-ը կարողացավ ձեռք բերել կարճատև խաղաղություն, որն անհրաժեշտ էր իր պետությունն ամրապնդելու համար:

Իրադրությունը սկսեց կտրուկ փոխվել հոգուտ Պարթևաստանի Ք. ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտում հռոմեացիներից Անտիոքոս III-ի քանակի ջախջախիչ պարտությունից և Սելևկյաններին պարտադրված պայմանագրից հետո:

Սելևկոս IV-ի օրոք (Ք. ա. 187-175 թթ.) Սելևկյանների տիրապետությունից Հայաստանի ազատագրումն անմիջական ներգործություն ունեցավ Ատրպատական-Մարաստանի, Պարթևաստանի և հունա-բակտրիական թագավորության տիրակալների քաղաքական վարքագծի վրա: Պարթևական Հրահատ I արքան (Ք. ա. 176-171 թթ.) սկսում է իր գործողություններում ավելի ազատ զգալ: Միաժամանակ Ք. ա. 187 թ. Անտիոքոս III-ի մահը դեռևս կիսանկախ պարթևական պետությանը հույս էր ներշնչում՝ ձեռք բերելու կատարյալ անկախություն:

Այսպիսով՝ պատերազմների բովով անցած պարթևական պետությունը իր գոյության ընդամենը կես հարյուրամյակի ընթացքում ոչ միայն կարողացավ կայունացնել իր ներքին ու արտաքին քաղաքական վիճակը, այլև դրսևորել հզորացման, վերելքի ու ծավալապաշտության անզուսպ ձգտումներ:

2. ՊԱՐԹԵՎԱՍՏԱՆԻ ՎԵՐԵԼԲԸ

Պարթևական աշխարհակալության իսկական հիմնադիրը Միհրդատ I Մեծն էր կամ Արշակ VI-ը (Ք. ա. 171-138 թթ.), որի օրոք Արշակունիների պետությունը վերածվեց համաշխարհային տերության: Միհրդատին հաջողվում է գրավել Հիրկանիայից և Պարթևաստանից Մարաստան տանող ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող լեռնանցքները (այսպես կոչված Կասպիական դարպասները) և Մարաստանի մեծ մասը միացնել իր պետությանը: Այնուհետև պարթևներն իրենց գննքը ուղղում են դեպի արևելք՝ քոչվորական ռազմաշունչ ցեղերի դեմ: Այստեղ նրանք իրենց պետությանն են միացնում Գեդրոսիան, Դրանգիանան (ներկայիս Սեյխտան/Սիստան կամ Սակաստան), Արիյանան (ներկայիս Աֆղանստանի Հերաթի շրջանը), ինչպես նաև Մարգիանայի օազիսը՝ դրանով իսկ դաժան հարված հասցնելով երկպառակություններից թուլացած հունա-բակտրիական պետությանը, որը շուտով նոր՝ ավելի սարսափելի հարձակման ենթարկվեց Կենտրոնական Ասիայի քոչվոր ցեղերի կողմից (Ք. ա. 136 թ.): Ի վերջո վաչկատուն ցեղերի հասցրած մահացու հարվածների հետևանքով հունա-բակտրիական պետությունը կործանվեց: Դա Պարթևաստանը ազատեց արևելքից մշտական հարձակման սպառնալիքից և պայմաններ ստեղծեց արևելքում ու հարավում նվաճողական քաղաքականություն

ծավալելու համար: Մասնավորապես պարթևները գրավեցին Իրանական բարձրավանդակի հարավային շրջանները՝ Պերսիդան կամ Պարսքը և Էլիմայիսը (Էլիամիդա): Տեղնկություններ կան, որ Միհրդատը պատերազմում էր նաև Հնդկաստանի սահմանների մոտ գտնվող Արախոսիայում:

Արևելյան սահմաններն ամրապնդելուց հետո՝ Ք. ա. 145 թ., Միհրդատը սկսում է իր հայացքն ուղղել դեպի արևմուտք՝ գրավելով Տիգրիսյան Սելևկիան (Ք. ա. 141 թ.), Բաբելոնիան և Շոշը (Սուսան): Սելևկյան Դեմետրիոս II Նիկատորը (Ք. ա. 145-140 թթ.) փորձեց վերականգնել իր տերության սահմանները և հետ բերել կորցրածը: Այդ նպատակով նա ռազմական դաշինք կնքեց Հելիոկլես քակտրիացու հետ, որպեսզի ստիպի Միհրդատին պայքար մղել երկու ճակատով: Սակայն պարթևաց արքան Ք. ա. 141-140 թթ. ջախջախում է Հելիոկլեսին: Այնուհետև պարթևները խաբում են Դեմետրիոսին՝ կեղծ բանակցություններ սկսելով նրա հետ՝ իբր թե խաղաղության դաշն կնքելու համար: Բանակցությունների ժամանակ անակնկալ կերպով գերում են նրան և, ըստ Հուստինոսի, ծաղրելու նպատակով նրան պտտեցնում այն բոլոր քաղաքներով, որոնք ժամանակին անցել էին Դեմետրիոսի կողմը: Ի վերջո Միհրդատը ոչ միայն խնայում է գերված Սելևկյան արքայի կյանքը, այլև նրան ամուսնացնում իր աղջկա՝ Հոդոգունեի հետ և նրանց բնակեցնում Հիրկանիայում՝ իր կալվածքներից մեկում՝ հույսեր փայլայելով, որ հետագայում կկարողանա օգտագործել իր փեսային ինչ-ինչ քաղաքական ծրագրեր իրագործելու համար:

Պարթևների դեմ Դեմետրիոսի արշավանքի կատարյալ ձախողումը բացասական հետևանքներ ունեցավ Ասիայում՝ հեղինիստական հասարակության համակարգի վրա՝ հիմքից սասանելով այն:

Սելևկյան թագավորին գերեվարելուց հետո Միհրդատը բոլոր հիմքերն ուներ իրեն համարելու Աքեմենյանների և Ալեքսանդր Մակեդոնացու ժառանգորդ: Նրա դրամների վրա դրոշմված «Մեծ արքա» տիտղոսը միանգամայն համապատասխանում էր իրական դրությանը: Հիրավի, նրա օրոք Պարթևաստանը արդեն դարձել էր համաշխարհային պետություն: Սակայն Արշակունիները բնավ մտադիր չէին սահման դնելու իրենց ձեռքբերումներին և դադարեցնելու նվաճողական եռանդը: Նրանք ձգտում էին իրենց տիրոջներն ընդլայնելու նաև ի հաշիվ Արևմտյան Արաբիայի, Փոքր Ասիայի և Եգիպտոսի, այսինքն՝ իրենց հսկողության տակ գտնվող տարածքները հասցնելու այնպիսի սահմանների, որ ժամանակին ուներ Աքեմենյան պետությունը: Արևելքում Պարթևական թագավորությունը Միհրդատի օրոք շփումների մեջ մտավ այսպես կոչված *սերերի* (չինացիներ) հետ, որոնք իրենց գոյության մասին արդեն սկսել էին ազդարարել հարավարևմտյան Եվրասիայի ժողովուրդներին: Միհրդատը շքեղ հանդիսավորությամբ ընդունեց չինական դեսպանին:

Դեմետրիոս II-ի եղբայր Անտիոքոս VII Սիդետեսը (Ք. ա. 138-129 թթ.) 130 թ. մեծ արշավանք կազմակերպեց պարթևների արքա Հրահատ II-ի (Արշակ VII, Ք. ա. 138-129 թթ.) դեմ: Սկզբում Անտիոքոսին ուղեկցում էր հաջողությունը: Մարտերում կոփված նրա հսկայական բանակը անկասելի թափով շարժվում էր առաջ՝ իրար հետևից գրավելով պարթևների հսկողության տակ գտնվող տարածքները: Պարթև-

ների նկատմամբ ատելությամբ լցված արևելյան թագավորները անցնում էին Անտիոքոսի կողմը: Առաջին պարտությունը պարթևական բանակը ճաշակեց Լիկա գետի մոտ: Այնուհետև այն կրեց ևս երկու պարտություն, որից հետո Անտիոքոսի զորքերը հանդիսավոր կերպով մուտք գործեցին Բաբելոն, որտեղ արքան ընդունեց Մեգաս («Մեծ») պատվավոր տիտղոսը:

Միջագետքից Սելևկյան բանակը շարժվեց դեպի «վերին սատրապություններ»՝ ճանապարհին ռազմակալման ենթարկելով Մարաստանը: Հուստինոսը հաղորդում է, որ «բոլորն անցան Անտիոքոսի կողմը, և պարթևներին ոչինչ չմնաց՝ բացի իրենց հայրենական հողերից»:

Ծանր վիճակում հայտնված պարթևների թագավոր Հրահատ II-ին այլևս ոչինչ չէր մնում բացի Անտիոքոսի մոտ դեսպաններ ուղարկելուց, որոնց խնդիրն էր ձեռք բերել հաշտություն: Միաժամանակ պարթևաց արքան մտադիր էր խաղաղ դադարն օգտագործել վճռական գործողությունների նախապատրաստվելու համար: Անտիոքոսն ընդունեց հաշտության առաջարկը, քանի որ այն համոզմունքին էր, որ պարտված և ուժասպառ եղած հակառակորդը այլևս անընդունակ է շարունակելու պատերազմը: Նա պարթևներին թելադրեց հաշտության ծանր պայմաններ:

Մինչդեռ ձգձգվող հաշտության բանակցությունների ընթացքում իրադրությունը փոխվեց ոչ հօգուտ Սելևկյանների: Օգտվելով դրանից՝ Հրահատը ոչ միայն կարողացավ վերակազմակերպել իր ուժերը, այլև անցնել հարձակման և ջախջախել Անտիոքոսի զորքերին: Վերջինս, չցանկանալով ընկնել թշնամու ձեռքը, իր ձիու հետ միասին նետվեց անդունդը (Ք. ա. 129 թ.): Հուստինոսը հաղորդում է, որ բարձր գնահատելով զոհված թշնամու խիզախությունը՝ Հրահատը նրա համար կազմակերպեց արքայական թաղում:

Անտիոքոս VII-ի և նրա բանակի կործանումը վերջնական ու մահացու հարված հասցրեց Սելևկյանների պետությանը: Երբեմնի այդ հզոր պետության բանակի ջախջախման հետ միաժամանակ կործանիչ հարված ստացավ նաև հունա-մակեդոնական տիրապետության ողջ համակարգը Առաջավոր Ասիայում:

Այս հաղթանակից հետո անցնելով Ջագրոսի լեռները՝ Հրահատի հեծելազորը մուտք գործեց Միջագետք և նվաճեց այն, այդ թվում՝ Տիգրիսի վրա գտնվող Սելևկիա քաղաքը, ինչպես նաև Բաբելոնը: Ի դեպ, Հրահատի կողմից Միջագետքում կուսակալ նշանակված Հիմերը Բաբելոնի բնակչությանը քչեց ստրկության դեպի Մարաստան:

Այս իրադարձություններից հետո Սելևկյանների համար Արևելքը վերջնականապես կորսված էր: Սելևկյան պետությունը մնաց պարփակված Սիրիայի, Փյունիկիայի և Կիլիկիայի սահմաններում: Պարթևաստանը հնարավորություն էր ստանում կայուն քաղաքական տիրապետություն հաստատելու Եփրատից արևելք ու հարավ-արևելք ընկած բոլոր տարածքների վրա:

Պարթևական թագավորության առաջխաղացումը դեպի արևմուտք դադարեց Կենտրոնական Ասիայից սակերի (սկյութների)՝ Պարթևաստան ներխուժելու պատճառով: Ռազմաշունչ այդ ցեղերը ջախջախեցին Հրահատի բանակը: Ճակատա-

մարտերից մեկում զոհվեց նաև պարթևաց երիտասարդ արքան: Գահ բարձրացավ նրա հորեղբայրը՝ Արտավան II-ը (Արշակ VIII, Ք. ա. 128-124 թթ.): Սակայն նա ի վիճակի չեղավ ստիպելու քոչվորներին վերադառնալ իրենց տափաստանները: Ք. ա. 124 թ. թոխարների դեմ ճակատամարտում Արտավանը վիրավորվեց և շուտով մահացավ: Արևելքում Միհրդատի կողմից նվաճված լայնածավալ տարածքները կորստյան մատնվեցին: Թվում էր, թե Պարթևական պետությունը իր ստացած կործանիչ հարվածների հետևանքով մոտ է կատարյալ քայքայման, մանավանդ որ քոչվորների զանգվածները շարունակում էին հորդել դեպի պարթևների հսկողության տակ գտնվող տարածքները և բնակություն հաստատել այնտեղ:

Այդ տագնապալից շրջանում արևմուտքից ևս պարթևներն ունեցան խոշոր կորուստներ: Պարթևական պետությունից անջատվեցին Էլիմայիսը և Պերսիդան: Հարավային Միջագետքում, օգտագործելով պարթևների դժվարին վիճակը, տեղական կառավարիչն իրեն պարթևներից անկախ հայտարարեց: Հայոց արքա Արտավազը գրավեց մի շարք սահմանամերձ շրջաններ, իսկ հյուսիսում վերսկսվեցին հոների հարձակումները և ավերիչ ասպատակությունները:

Միհրդատ II-ը (Արշակ IX, Ք. ա. 123-87 թթ.), հորից ժառանգելով տևական պատերազմների, ներքին խռովությունների և քոչվորների դեմ մղվող անվերջանալի ընդհարումների հետևանքով թուլացած և կատարյալ անիշխանության մատնված մի պետություն, եռանդուն քայլեր էր ձեռնարկում տերության հզորությունը և արքայատոհմի վարկը վերականգնելու համար: Որպես առաջին քայլ՝ նա ձեռնամուխ եղավ պարթևական բանակի հիմնովին վերակառուցմանը: Նոր զինված ուժերի հիմնական կորիզը դարձան ծանր սպառազինություն կրող հեծելազորայինները՝ այսպես կոչված «անխոցելիները», որոնց յուրաքանչյուր ջոկատ բաղկացած էր 1000 ռազմիկից: Ջոկատների դրոշները երկար վիշապանման ձև ունեին, որի պատճառով հույներն այդ ջոկատներն անվանում էին «վիշապներ»: Բացի այդ՝ պարթևական բանակը բաղկացած էր հեծյալ նետաձիգներից և հետևակից:

Պետության արևելքում վերսկսելով պայքարը սակերի դեմ՝ Միհրդատը մի շարք ճակատամարտերից հետո ստիպեց նրանց առաջնորդներին ճանաչել իր գերագույն իշխանությունը (Ք. ա. մոտ 115-110 թթ.): Նրան հաջողվեց գրավել Մերվը, Արիանեն և վերականգնել պարթևների իշխանությունն արևելքում: Սակայն, այնուամենայնիվ, սակերի նկատմամբ հաղթանակը կատարյալ չէր: Նրանց առաջնորդները՝ մասնավորապես գերագույն առաջնորդ Սուրենը, ճանաչվեց սակերի կողմից նվաճված Դրանգիանա (Ջարանգստան) նահանգի կառավարիչ, որն այդ ժամանակվանից սկսած կոչվեց Սակաստան: Բացի այդ՝ Սուրենը և նրա ընտանիքը պարթևական արքաների պալատում ստացան մի շարք ժառանգական իրավունքներ, մասնավորապես նորընտիր արքաների գլխին թագը դնելու, ինչպես նաև պատերազմների ժամանակ բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնը:

Միհրդատը պատերազմ սկսեց նաև հայոց արքա Արտավազի դեմ: Նրան պարտության մատնելով՝ ստիպեց ոչ միայն վերադարձնել գրավված սահմանամերձ շրջանները, այլև պատանդ տալ իր որդուն՝ Տիգրանին: Նա մի շարք հաջող արշա-

վանքներ կատարեց նաև դեպի արևմուտք՝ պարթևների տերության սահմանագիծը կրկին հասցնելով մինչև Եփրատ գետը: Ի դեպ, սա առաջին պարթևական թագավորն էր, որն իր դրամների վրա օգտագործում էր «արքայից արքա» Աքեմենյան հնագույն տիտղոսը:

Միհրդատի օրոք դաժան հարված հասցվեց առանց այն էլ հոգեվարքի մեջ գտնվող Սելևկյան պետությանը: Պարթևների ձգտումը դեպի արևմուտք այլևս թվում էր անկասելի: Նրանք Սելևկյաններին ուղղակի սեղմել էին Միջերկրականի ավերին: Պարթևական պետությունը դարձավ քաղաքակիրթ աշխարհի արևելյան և արևմտյան մասերը միմյանց հետ կապող օղակ: Իր կառավարման վերջին շրջանում Միհրդատը դիվանագիտական կապեր էր պահպանում ինչպես *սեռերի* երկրի (Չինաստան), այնպես էլ Հռոմեական կայսրության հետ: Ք. ա. I դ. սկզբին Պարթևաստանը ներգրավվեց նաև միջազգային առևտրի մեջ՝ մասնավորապես դառնալով քարավանային մեծ ճանապարհի («Մետաքսի ճանապարհ») հատվածներից մեկը, մի ճանապարհ, որն, արևելքից կտրել-անցնելով ողջ Ասիան, չինական Հան պետությունը կապում էր Միջերկրածովյան աշխարհին:

Ք. ա. 87 թ. պարթևական գահի վրա բազմեց Բաբելոնի «սատրապաց սատրապ» Գոդերձը (Գոդարգ): Վերջինս գահակալությունը սկսեց ռազմական և քաղաքական մի շարք անհաջողություններով: Նրա կառավարման շրջանում Պարթևական պետության դեմ իր հետագա ծավալման ճանապարհին որպես ամուր պատնեշ հանում էր հարաձուև կերպով հզորացող Հայաստանը: Պարթևաստանի այդ նոր տիրակալը հայոց արքա Տիգրան II-ի հետ ռազմական ընդհարումներում կրեց խոշոր պարտություններ, որոնց հետևեցին տարածքային կորուստները: Գոդերձի տիրապետության տակ մնաց լոկ կենտրոնական Միջագետքի մի աննշան մասը՝ Բաբելոն կենտրոնով: Այդ պարտությունները և առհասարակ պարթևաց արքայի անկարողությունն ու քաղաքական կամքի բացակայությունը առաջ բերեցին պարթևական ազնվականության և արքունիքի դժգոհությունը: Որպես դրա անխուսափելի հետևանք՝ անմիջապես հայտնվեց գահի նոր հավակնորդ՝ Որոդեսը (Օրոդես), որը Ք. ա. 80 թ. թագադրվեց որպես Պարթևաստանի թագավոր՝ ընդունելով Որոդես I (Արշակ XI, Ք. ա. 80-76/75 թթ.) գահակալական անունը: Սակայն վերջինիս կառավարումը շատ կարճ տևեց՝ ընդամենը չորս կամ հինգ տարի: Այդ տիրակալը չկարողացավ Պարթևաստանի համար անբարենպաստ հունով զարգացող իրադարձությունների մեջ բեկում մտցնել: Ք. ա. 76 թ. պարթևական գահի վրա նրան փոխարինեց Արշակունի Սանատրուկը կամ Մինատրուկը (Արշակ XII, Ք. ա. 76-70/69 թթ.): Այդ ութսունամյա ծերունին իր կյանքի մի զգալի մասն անց էր կացրել արևելքի քոչվոր ցեղերից մեկի՝ *սակարաունների* մոտ գերության մեջ: Ենթադրվում է, որ հենց այդ պատճառով նա կորցրել էր արքային վայել ոգու արիությունը և հպարտությունը: Նա խաղաղասեր մարդ էր և հանգիստ ու ապահով կյանքը գերադասում էր պատերազաններից: Ուստի, երբ Միհրդատ VI Եվպատորը Ք. ա. 72-71 թթ. նրան դիմեց՝ խնդրելով օգնություն հռոմեացիների դեմ մղվող պատերազմում, արքան կտրուկ մերժեց:

Սանատրուկի մահվանից հետո նրա ժառանգորդ դարձավ որդին՝ Հրահատ III-ը (Արշակ XIII, Ք. ա. 70/69-58/57 թթ.), որին վիճակված էր արդեն Սիրիայում և Միջագետքում տեսնել հռոմեացիներին որպես Պարթևական տերության վտանգավոր հարևանների: Սրա օրոք արևելքում կրկին սկսեցին դրսևորվել պարթևների աշխարհակալական ձգտումների մի նոր ալիքի առաջին նշանները: Ուշքի գալով վերջին տասնամյակների ընթացքում պարբերաբար կրած անհաջողություններից՝ Պարթևական տերությունը աստիճանաբար կարողացավ կայունացնել իր ներքին վիճակը և հնարավորություններ ստեղծել արտաքին ասպարեզում հաջողությունների ձեռքբերման համար:

Ք. ա. 57 թ. պարթևական գահին բազմեց Միհրդատ III-ը: Սակայն վերջինիս կառավարումը ևս կարճ տևեց: Պարթևական ազնվականության ավագների խորհուրդը նրան մեղադրեց «դաժանության» մեջ և գահընկեց արեց: Արքա հոչակվեց նրա եղբայր Որոդես II-ը (Ք. ա. 55-38/37 թթ.), որը հրամայեց սպանել իր եղբորը՝ Միհրդատին: Սա իր մայրաքաղաքը դարձրեց Տիգրոնը, քանի որ հայոց արքա Տիգրան Մեծը նվաճել էր պարթևների մայրաքաղաք Էկրատանան:

Պարթևական պետության մի նոր վերելքի շրջան սկսվեց Արտավան III-ի (Ք. հ. 12-38 թթ.) կառավարման տարիներին: Տերության հյուսիսային և արևելյան սահմանների մոտ Պարթևաստանի տիրակալը հաջող պատերազմներ էր մղում: Նա կարողացավ իր կողմը գրավել Միջագետքի քաղաքների վերնախավին, մանավանդ հրեաներին, որոնք նրան օգնեցին պայքարել Հռոմի կողմնակիցների դեմ: Արտավան III-ով սկսվում է Պարթևական տերության զարգացման մի նոր ժամանակաշրջան: Այս փուլում վերընթաց զարգացում ապրեց նաև պարթևական մշակույթը, գրադաշտականությունը ձևավորվեց իբրև պետական կրոն, և սկսվեց պայքար հելլենիստական պաշտամունքների դեմ:

Մեկ տասնամյակից ավելի Պարթևական պետության մեջ տեղ գտած քաղաքական անկայունությունից հետո գահ բարձրացավ Վաղարշ I-ը (Ք. ա. 51-75 թթ.), որին անտիկ հեղինակներն անվանում էին Վոլոգես: Սա պարթև Արշակունիների ամենաեռանդուն պետական և ռազմական գործիչներից էր: Սրա օրոք Պարթևաստանը կրկին նոր վերելք է ապրում և հասնում է իր հզորության գագաթնակետին: Տակիտոսը նշում է, որ պարթևական դաժան իշխողների մեջ նա միակն էր, որ իրավունքը գերադասում էր ուժից և ճշմարտությունն էր համարում մարդկային հարաբերությունների հիմքը:

Իր հզորության գագաթնակետի շրջանում պարթևական տերությունը տարածվում էր արևելքից՝ Հինդուկուշի լեռնաշղթայից մինչև արևմուտք՝ Եփրատ գետը: Պարթևները ձգտում էին իրենց տերության սահմանները հասցնել մինչև այնտեղ, ուր ժամանակին գտնվել էին Աքեմենյան տերության սահմանները:

Պարթև Արշակունիների աշխարհակալությունը բաժանված էր երկու տարաբնույթ մասերի՝ արևմտյան և արևելյան սատրապությունների: Արևմտյան պարթևներին ենթակա էին Միջագետքը և Զագրոսյան լեռնաստանը, որը ձգվում էր մինչև Մարաստան: Այս երկրամասերի բնակչությունը հիմնականում բաղկացած էր սեմա-

լեզու արամեացիներից ու արարական ցեղերից, ինչպես և հույներից, պարթևներից և այլ իրանալեզու ցեղերից:

Պարթևաստանի արևելյան և հյուսիսարևելյան նահանգներն էին Մարաստանը, Պարթևաց աշխարհը՝ «Ապար աշխարհը», Մարգիանան, Աստավանը, Ապավոդենն, Սակաստանը և սրանց հարակից երկրամասերը:

3. ՊԱՐԹԵՎԱ-ՀՌՈՍԵԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Պարթևական պետությունը, իր գոյության առաջին տարիներից սկսած, ստիպված էր մշտապես պայքար մղել հյուսիսից և արևելքից իրեն սպառնացող քոչվորական ռազմաշունչ ցեղերի դեմ: Սակայն առավել հզոր ուժը, որը Պարթևաստանի հետ մտավ հակամարտության մեջ, Հռոմեական կայսրությունն էր: Պարթևա-հռոմեական հարաբերությունները նորագույն պատմական գրականության մեջ ընդունված է անվանել «հին աշխարհի արևելյան հարց»: Ըստ այդ դարաշրջանի պատմիչների՝ «աշխարհը բաժանված էր Հռոմի և Պարթևաստանի միջև»: Այդ տեսակետի հիմքում ընկած է այն իրողությունը, որ դրանք հանդիսանում էին հին աշխարհի երկու մեծ պետությունները:

Սելևկյանների տերության վերացումից հետո Հռոմը և Պարթևաստանը դառնում են անմիջական հարևաններ, որոնց միջև գնալով ծայրահեղ սրվում էր քաղաքական ախտյանությունը: Ք. ա. 92 թ. Պարթևական պետության և Հռոմի միջև կնքված դաշնագրի համաձայն՝ երկու պետությունների միջև սահման ճանաչվեց Եփրատ գետը: Արդեն Ք. ա. 60-ական թվականների վերջին նրանց միջև հարաբերությունները շեշտված թշնամական էին: Պարթևների ծավալումը դեպի արևմուտք և Հռոմեական կայսրության ազդեցության ընդարձակումը դեպի արևելք ի վերջո հանգեցրին Միջագետքի հյուսիսային շրջաններում, Սիրիայում, Փոքր Ասիայում և Այսրկովկասում Պարթևաստանի ու Հռոմի շահերի բախմանը: Քանի որ երկու պետությունների միջև առկա էին Միհրդատ VI Պոնտացու և հայոց Տիգրան II-ի թագավորությունները, Պարթևաստանը և Հռոմը ունեին ընդհանուր թշնամիներ, սակայն 60-ական թվականներին, երբ այդ երկու պետությունների հզորությունը կտրուվեց, արևելյան Միջերկրածովյան ավազանում քաղաքական իրադրությունը ենթարկվեց արմատական փոփոխության: Այդ նոր պայմաններում պարթևները վերածվեցին վերին աստիճանի ազդեցիկ ուժի, որն ընդունակ էր ոչ միայն վարելու անկախ քաղաքականություն, այլև Հռոմը նկատմամբ ընդունելու ուղղակի թշնամական կեցվածք (Այս մասին հանգամանորեն տե՛ս Բաժին 5. Գլուխ 2):

Երկու հակառակորդների միջև կովախնձոր էին հատկապես Միջագետքը և Հայաստանը: Վերջինս նախորդ դարաշրջաններում իր ունեցած թեև հզոր, քայց մեկ հարևանին դիմակայելու իրավիճակից անցնում է երկու հզոր հարևաններին դիմակայելու վիճակին: Կոանի ու սալի միջև հայտնված Հայաստանի համար ստեղծվում

է ախտյաններից մեկի վրա կողմնորոշվելու անհրաժեշտություն, քանի որ նրանցից ոչ մեկը չէր հանդուրժում Հայաստանի ոչ միայն անկախությունը, այլև նույնիսկ չեզոքությունը: Այդ հողի վրա Հայաստանում ձևավորվում են երկու կուսակցություն՝ պարթևամետ և հռոմեամետ, որոնք պայքարի մեջ էին միմյանց հետ: Ազնվականական տոհմերի մեծ մասն ուներ պարթևական կողմնորոշում, փոքր մասը՝ հռոմեական: Ավելի ուշ՝ Օկտավիանոս Օգոստոսի և Տիբերիոսի տիրապետության շրջանում, գերակշռում է հռոմեական կուսակցությունը:

Գնեսու Պոմպեոսի և պարթևական թագավոր Հրահատ III-ի միջև առաջին լուրջ ընդհարումը տեղի ունեցավ հռոմեական զորավարի կողմից հայոց գահաժառանգ Տիգրանի գերեվարման պատճառով (Ք. ա. 65 թ.), որն ամուսնացած էր Հրահատի դստեր հետ: Սակայն այդ միջադեպը դեռևս պատճառ չհանդիսացավ Պարթևաստանի և Հռոմի միջև կատարյալ խզման և ռազմական գործողություններ սկսելու համար:

Պարթևա-հռոմեական առաջին խոշոր բախումներից մեկը տեղի ունեցավ Ք. ա. 50-ական թվականներին: 54 թ. եռապետ Մարկոս Կրասոսը ռազմերթի դուրս եկավ պարթևների դեմ՝ նպատակ ունենալով կրկնել Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը: Պլուտարքոսի արտահայտությամբ՝ նա ձգտում էր հասնելու «մինչև քակտրիացիները, հնդիկները և նրանցից այն կողմ գտնվող ծովը»: Այս պատերազմի ծախսերը հոգալու համար Կրասոսը նույնիսկ կանգ չառավ տաճարներ կողոպտելու գայթակղության առջև:

Հռոմեական զորքերը Ք. ա. 53 թ. անցան Եփրատը՝ պարթևների տերության արևմտյան սահմանը, հետ մղեցին սատրապ Սիլվակի փոքրաթիվ զորքը և Հյուսիսային Միջագետքում գրավեցին մի քանի քաղաքներ: Պարթևական թագավոր Ռոդես II-ը դեսպաններ ուղարկեց Կրասոսի մոտ՝ բողոքելու հռոմեացիների ներխուժման դեմ, հարցում կատարելու հարձակման պատճառների վերաբերյալ, շոշափելու հռոմեացիների մտադրությունները և միաժամանակ ստույգ տեղեկություններ հավաքելու նրանց ուժերի, տեղակայման վայրերի և բանակի տեղաշարժերի մասին: Կրասոսը հայտարարեց, թե դեսպանների հարցման պատասխանը կտա Տիգրիսյան Սելևկիայում, այսինքն՝ պարթևներին նվաճելուց հետո: Դեսպաններից մեկը՝ Վահիգ անունով, նկատում է, թե ավելի շուտ իր ձեռքի ափին մագեր կրուսենն, քան Կրասոսը կտեսնի Սելևկիան: Դեսպանների եզրակացությունը մեկն էր՝ պատերազմն անխուսափելի է:

Ք. ա. 53 թ. հռոմեական զորքերը վերսկսեցին ռազմական գործողությունները: Հռոմի դաշնակիցների թվում էր նաև հայոց արքա Արտավազը: Ընդ որում՝ նա առաջարկեց Կրասոսին պարթևների դեմ արշավել ոչ թե Միջագետքի կիզիչ տափաստանների ու անապատների միջով, այլ Հայաստանի վրայով՝ հռոմեական բանակը հեռու պահելու համար պարթևական հեծելազորի գործողությունների համար նպաստավոր հարթավայրերից: Անշուշտ դրանով Արտավազը մտադիր էր նաև Հայաստանն ապահովել պարթևների հարվածից: Սակայն հռոմեացի զորավարը մերժեց հայոց թագավորի առաջարկը՝ հավատ ընծայելով արար շեյխերին, որոնք խոստանում էին նրան ավելի կարճ ճանապարհով տանել Տիգրոսի վրա:

Համոզված լինելով, որ Կրասուսի ընտրած արշավանքի երթուղին վտանգավոր ու աղետաբեր է, և առհասարակ հռոմեացիների արշավանքը վատ է նախապատրաստված, Արտավազը վերադարձավ Հայաստան՝ ենթադրելով, որ իր մասնակցությունը պատերազմին կարող է անկանխատեսելի հետևանքներ ունենալ: Դա Կրասուսի կողմից մեկնաբանվեց որպես դավաճանություն: Նա ապառնաց պարթևների դեմ արշավանքից վերադառնալուց հետո հաշվեհարդար տեսնել Արտավազի հետ: Մինչդեռ պարթևների արքա Որոդեսը, հանձին հայոց թագավորի տեսնելով հռոմեացիների դաշնակցի, իր գորքերի մի մասով հարձակվում է Հայաստանի վրա և ասպատակում երկիրը:

Կրասուսն իր բանակը շարժեց դեպի Կարբե (Խառան) քաղաքի կողմը՝ Միջագետքի կիզիչ տափաստաններով: Այդ դժվարին անցման ժամանակ ռազմիկները սովի, ծարավի և հոգնածության պատճառով ուժասպառ եղան, բարոյալքվեցին և կորցրին ոգու արիությունը:

Անսպասելիորեն հռոմեական բանակի առջև հայտնվեցին պարթևական զորքերը՝ տաղանդավոր զորավար Սուրենի հրամանատարության ներքո: Պարթևները մոտ տարածությունից բացառիկ վարպետությամբ սկսեցին նետահարել հակառակորդին: Հռոմեացիները չկարողացան նաև դիմագրավել ուղտերի երամակի գրոհին: Այնուհետև պարթևները սկսեցին շրջանցել հռոմեական զորքի թևերը: Բոլորովին հուսալքված, բարոյապես ընկճված ու ջախջախված հռոմեական բանակի մնացորդները սկսեցին խուճապահար նահանջել դեպի հյուսիս՝ ձգտելով գիշերային խավարի քողի տակ կտրվել ահարկու հակառակորդից և հնարավորին չափ շուտ հասնել Կարբե: Խուճապահար փախչող հռոմեացիները հաղթողների քմահաճույքին թողեցին չորս հազար վիրավորների, որոնք կոտորվեցին պարթևների կողմից: Միաժամանակ պարթևական հեծելազորն անընդհատ հարվածներով մաշում էր թշնամու զորքը, այնուհետև շրջապատում ու գերի վերցնում նրա մեծ մասը: Մի փոքր մասին Կասսիոսի գլխավորությամբ հաջողվում է փախչել և վերադառնալ Սիրիա: Արշավանքի ընթացքում հռոմեացիները 20 հազար զոհ տվեցին և կորցրին լեզոնների արծվեկիր դրոշները: Կեղծ բանակցությունների միջոցով Սուրենին հաջողվեց տեղեկանալ, թե որտեղ է գտնվում Կրասուսն իրեն ուղեկցող հրամանատարների և զինվորների հետ: Պարթևներն առաջարկեցին նրան անձնական բանակցություններ սկսել: Թեև Կրասուսը չէր հավատում թշնամուն, սակայն իր բարոյալքված զինվորների ճնշման տակ ստիպված էր տալ իր համաձայնությունը: Եվ երբ Կրասուսը, իրեն հավատարիմ մնացած զինվորների ուղեկցությամբ բլուրից իջնելով, ցած եկավ պարթևների մոտ, նրանք ուխտադրժորեն կոտորեցին բոլորին:

Այսպիսով՝ պարթևներին ընկճելու Հռոմի առաջին փորձը ավարտվեց անհաջողությամբ: Այն ունեցավ հսկայական ռազմաքաղաքական և հոգեբանական հետևանքներ: Մինչև Կարբեի ճակատամարտը հռոմեացիները Պարթևաստանը չէին համարում Արևելքի գլխավոր ուժը, ավելին՝ նրան վերաբերվում էին արհամարհանքով: Սակայն այդ ճակատամարտից հետո, համաձայն անտիկ հեղինակների, աշխարհը բաժանվեց Հռոմի և Պարթևաստանի միջև:

Հաջողությունից ոգևորված՝ Ք. ա. 51–50 թթ. պարթևները թագաժառանգ Բակուրի գլխավորությամբ շարժվեցին դեպի Սիրիա, իսկ առանձին զորամասեր թափանցեցին Կիլիկիա: Սակայն այդ արշավանքը հաջողություն չունեցավ: Կողոպուտի նպատակով ասպատակ սփռելով մի շարք հարուստ շրջաններում՝ պարթևական հեծելազորը վերադարձավ Եփրատի ափերը:

Հռոմեական զորքերի ջախջախիչ պարտությունից հետո հայոց արքա Արտավազը դաշինք կնքեց Որոդես II–ի հետ՝ ընդդեմ Հռոմի: Այդ դաշինքը ամրակալվեց նաև դինաստիական ամուսնությամբ. Որոդեսի որդի Բակուրը (Պակոր) ամուսնացավ Արտավազի քրոջ հետ: Պարթևաց արքան Արտավազին վերադարձրեց Հյուսիսային Միջագետքի վիճելի տարածքները: Այդ պահից սկսած՝ Հայաստանը՝ իբրև պարթևական պետության դաշնակից, եռանդուն մասնակցություն էր բերում արևմուտքում հռոմեական կայսրության դեմ պարթևների ծավալած ակտիվ քաղաքականությանը, նրանց արշավանքներին և նվաճումներին:

Ք. ա. 40 թ. պարթևները կրկին ներխուժեցին Սիրիա, գրավեցին այն և ապա, զորքը բաժանելով երկու մասի, մի մասը Միջերկրական ծովի ափերով շարժվեց դեպի հարավ, երկրորդը՝ դեպի արևմուտք: Պարթևական զորքերը նվաճեցին նաև Փյունիկիան և Պաղեստինը: Այդ արշավանքին մասնակցել են նաև հայկական զորքերը, ինչը վկայում է այն մասին, որ հայ–պարթևական դաշինքը շարունակում էր ուժի մեջ մնալ:

Վերախմբավորելով իր ուժերը՝ Հռոմեական կայսրությունը սկսեց եռանդուն գործողություններ ծավալել պարթևների դեմ և արդեն Ք. ա. 37 թ. կարողացավ վերանվաճել Սիրիան ու պարթևներին դուրս մղել Եփրատի ափերից: Հատկապես Ք. ա. 38 թ. Սիրիայի Գինդար կոչված վայրում տեղի ունեցած ճակատամարտում, ինչպես նշում է Հուստինոսը, «պարթևները ոչ մի պատերազմի ժամանակ չէին կրել այդպիսի սարսափելի պարտություն»: Ծակատամարտի դաշտում ընկավ նաև պարթևական բանակի հրամանատար գահաժառանգ Բակուրը:

Այս իրադարձություններով ավարտվեց արևելյան Միջերկրածովյան ավազանի երկրներում առաջնության համար հռոմեա–պարթևական պայքարի կարևոր փուլերից մեկը: Որոդես II–ը, որը նախապես փայլուն հաջողություններ էր ձեռք բերել Հռոմի հետ պայքարում, ի վերջո հայտնվեց դժվարին կացության մեջ: Նրա լայնահուն ծրագրերը՝ իրանական միապետությունը Աքեմենյանների տիրոջների սահմաններում վերականգնելու ուղղությամբ, մտան փակուղի: Ընդ որում՝ արևմտյան արշավանքների կործանարար ելքը, որն ուղեկցվեց մարդկային և նյութական խոշոր կորուստներով, պարթևական պետության մեջ առաջ բերեց սուր քաղաքական ճգնաժամ: Որոդես II–ը կորցրեց իր հեղինակությունը «ավագների խորհրդում», որի պահանջով հրաժարվեց իշխանությունից հոգուտ իր որդու՝ Հրահատ IV–ի (Ք. ա. 38–32 թթ.):

Ք. ա. 36 թ. Հռոմը նոր արշավանք կազմակերպեց պարթևների դեմ, որ գլխավորում էր Մարկոս Անտոնիոսը: Ջեզմայի մոտ անցնելով Եփրատը՝ նա իր հսկայական բանակը շարժեց Կարինի ուղղությամբ: Այդ արշավանքի նպատակներից մեկն էր լինելու պատժել պարթևներին Կրասուսի պարտության համար և Բաբելոնը անջատել Պարթևաստանից: Արշավանքը ծրագրված էր այս անգամ իրականացնել Հայաստանի

վրայով: Հայոց Արտավազդ արքան, իր կամքին հակառակ, միացավ հռոմեական արշավանքին՝ ձգտելով, որպեսզի Հայաստանը հնարավորինս քիչ տուժի:

Հռոմեական բանակը Կարնո դաշտից շարժվեց դեպի արևելք՝ նպատակ ունենալով նախ գրավել Ատրպատական–Մարաստանը, իսկ այնուհետև բուն Պարթևաստանը: Սակայն պարթևների անսպասելի հարվածները հռոմեացիներին հաջողության ոչ մի հույս չթողեցին: Ամենուրեք պարթևները ոչնչացնում էին սննդի պաշարները և անասնակերը՝ հռոմեացիներին սովի մատնելու և նրանց տեղաշարժելու հնարավորությունից զրկելու համար: Հակառակորդին աստիճանաբար մաշելու և նրան հուսահատության ու բարոյալքման մատնելու պարթևական նահանջ–հակահարձակում մարտավարությունը փայլուն արդյունքներ էր տալիս: Անտոնիոսի փորձերը՝ ստիպել հակառակորդին տալու վճռական ճակատամարտ, ամեն անգամ ավարտվում էին անհաջողությամբ: Հռոմեացիների առաջին անհաջողությունները հայոց արքա Արտավազդին մղեցին վերանայելու իր դիրքորոշումը: Նա հետ քաշեց իր ուժերը և հրաժարվեց հետագա գործողություններին մասնակցելուց: Անտոնիոսը ապարդյուն փորձեր էր անում՝ հակառակորդին ներքաշելու վճռական ճակատամարտի մեջ: Շուտով պարթևները կրակի մատնեցին հռոմեացիների ողջ պաշարողական տեխնիկան: Տրտերը սկսվելուն պես կողմերը երկուստեք ցանկություն հայտնեցին բանակցություններ սկսելու: Սակայն դրանք ավարտվեցին անարդյունք: Դրանից հետո սկսվեց Անտոնիոսի գորքերի նահանջը, որն ուղեկցվում էր պարթևական հեծելազորի անընդհատ հարձակումներով:

Ք. ա. 30 թ. Հռոմը ծրագրեց իր արևելյան քաղաքականությանը հաղորդել նոր ուղղվածություն: Այդ ծրագրի էությունն այն էր, որ ամրապնդվեն Հռոմի սահմանները Պարթևաստանի հետ, և դրանք հնարավորինս տեղաշարժվեն դեպի արևելք: Այդ քաղաքականության իրագործումը դրվեց Օկտավիանոս Օգոստոսի վրա (Ք. ա. 31 – Ք. հ. 14 թթ.): Վերջինս իր առջև դրված խնդիրը լուծելիս առավելությունը տալիս էր դիվանագիտությանը: Օկտավիանոսի դիվանագիտական ձևությունը տվեց իր պտուղները: Ք. ա. 20 թ. մայիսի 12–ին Հռոմեական կայսրության և Պարթևական տերության միջև կնքվեց խաղաղության համաձայնագիր, որը վերջ տվեց նրանց միջև պատերազմական վիճակին: Պարթևները հանդիսավոր կերպով հռոմեացիներին վերադարձրին նրանց լեզեոնների արժվեկիր դրոշները և դեռևս կենդանի մնացած գերիներին: Անկասկած դա հռոմեական դիվանագիտության խոշոր հաղթանակն էր: Հիշյալ պայմանագրով պարթևները Տիգրան III–ին ձանաչեցին որպես Հայաստանի թագավոր, իսկ Հայաստանը՝ որպես Հռոմի ազդեցության գոտի: Ատրպատական–Մարաստանը, որը մինչ այդ հայոց արքա Արտաշես II–ի տիրապետության ներքո էր, դառնում էր ինքնուրույն պետություն: Բացի այդ՝ պարթևները պարտավորվում են չպաշտպանել Հայաստանում, Կապադովկիայում և Հրեաստանում հռոմեացիների հակառակորդներին:

Չնայած պարթևա–հռոմեական հարաբերությունների թվացյալ կարգավորմանը՝ Ք. ա. I դ. մայրամուտին և մեր թվականության արշալույսին Հռոմը առիթը բաց չէր թողնում միջամտելու Պարթևաստանի ներքին գործերին: Այսպես՝ Օգոստոս կայսրը Հրահատ IV–ի ավագ որդի արքայազն Վոնոնին, որը պատանդ վիճակում

15 տարի գտնվել էր Հռոմում, նշանակեց Պարթևաստանի թագավոր: Նա կարողացավ կառավարել միայն հինգ տարի (7–11), քանի որ հենարան չունեի պարթևական ավագանու շրջանում: Նրան օտար էին նաև պարթևական բարքերն ու սովորույթները, ինչը առաջ բերեց պարթևական ազնվականության բացարձակ ատելությունը: Հենվելով ազնվականության և արևելյան շրջանների ցեղերի ջոկատների վրա՝ Վրկանից աշխարհի և Կարամանիայի կառավարչի որդի Արտավանը, որը մոր կողմից Արշակունի էր, հանդես եկավ Վոնոնի դեմ՝ նրան հայտարարելով դավաճան: Նրա նկատմամբ հաղթանակ տանելով՝ Արտավանը հռչակվեց արքայից արքա՝ ընդունելով Արտավան III (Ք. ա. 12– Ք. հ. 38 թթ.) գահակալական անունը:

Արտավան III–ով սկսվում է Պարթևական պետության զարգացման մի նոր ժամանակաշրջան: Նա սկսում է վարել հակահռոմեական քաղաքականություն: Արտավանը աշխատում էր նաև պարթևական պետությանը ենթակա թագավորությունների գահերին բարձրացնել պարթև Արշակունիների հարստության ներկայացուցիչներին: Նրա ազգականներից մի քանիսը ցմահ կառավարման իրավունքով ստացան ամբողջ երկրներ՝ վերածվելով կիսանկախ կառավարիչների: Նա կարողացավ գրավել իր պետության թիկունքում գտնվող Ատրպատականը և վերացնել տեղական հարստությունը, որը հռոմեական քաղաքականության ջերմ պաշտպանն էր: Այդ երկրի արքայական գահը նա դարձրեց իր տոհմի ժառանգական սեփականություն: Ատրպատականի գահի վրա բազմեց Արտավանի եղբայր Վոնոնը, և այդպիսով այդ երկիրը հանվեց հռոմեական քաղաքական ազդեցության ոլորտից:

Վերականգնելով պարթևական պետության նախկին հզորությունը՝ Արտավանը միաժամանակ պայքար ծավալեց արևելքում քաղաքական գերիշխանության ձգտող Հռոմի դեմ: Արքայից արքան հստակ գիտակցում էր, թե որքան մեծ նշանակություն ունի հռոմեական կայսրության համար Հայաստանը, որին տիրելուց հետո հերթը պետք է հասներ Միջագետքին: Առհասարակ Արտավան III–ը մշակել էր հեռուն գնացող փառասիրական նպատակներ: Նա երագում էր նվաճել Հայաստանը, Կապադովկիան, Փոքր Ասիան ընդհուպ մինչև Միջերկրական ծովը և վերականգնել Աքեմենյան Իրանի սահմանները:

Վերոհիշյալ ծրագրի իրագործման համար նա ներխուժեց հռոմեական «արովինցիա Կապադովկիա»: Սակայն Արտավանին չհաջողվեց ամբողջությամբ իրականացնել իր ծրագրերը: Նրանից դժգոհ մի խումբ պարթևական մեծատոհմիկ ազնվականներ Հռոմ՝ Տիբերիոս կայսեր մոտ ուղարկեցին դեսպանություն՝ խնդրելով, որ նա թույլ տա նախկինում գահընկեց արված Հրահատ IV–ի կրտսեր որդի Հրահատին, որը 40 տարուց ավելի բնակվում էր Հռոմում, վերադառնալ Պարթևաստան և ստանձնել գահը: Տիբերիոսը համաձայնվեց բավարարել պարթևական ընդդիմադիրների խնդրանքը: Ծերունի Հրահատն ուղարկվեց հայրենիք: Սակայն տևական ճանապարհորդությունը ծովով նրա համար կործանարար եղավ: Հագիվ հասնելով Սիրիա՝ նա հրաժեշտ տվեց կյանքին:

Մինչդեռ Պարթևաստանում տիրում էր անտերունչ վիճակ: Հռոմեական ոսկին հետևողականորեն աշխատում էր ապակայունացնել պարթևական պետությունը:

Արտավան III-ի վիճակը դարձավ համարյա հուսահատական, երբ Հայաստանում նրա գորքերը ջախջախվեցին իբերների կողմից, և զոհվեցին նրա երկու որդիները: Երբ ծերունի արքան անձամբ բանակը շարժեց դեպի Հայաստան, նրա դեմ ապստամբություն բռնկվեց Միջագետքում, և նա ստիպված էր փախուստով փրկել իր կյանքը՝ ապաստան գտնելով Վրկանից աշխարհում: Այստեղ նա ռազմաշունչ սակերից հավաքեց նոր զորքեր և մեկ տարի անց՝ 37 թ., վերագրավեց իր գահը:

Սակայն վերադարձած Արտավանին վիճակված չէր երկար թագավորել: Մեկ տարի անց նա մահացավ: Բայց նրան, այնուամենայնիվ, հաջողվել էր հաղթանակով պսակել իր պայքարը՝ պարթևական արևմտյան սահմանը հասցնելով մինչև Հյուսիսային Միջագետք: Դա ամրապնդվեց պարթևա-հռոմեական 37 թ. դաշնագրով: Ըստ վերջինիս՝ հռոմեական կայսրը Արտավանին ճանաչում էր որպես Պարթևաստանի թագավոր, իսկ Արտավանը Մեծ Հայքի թագավոր էր ճանաչում Միհրդատին՝ վրաց Փարսման I թագավորի եղբորը: Որպես պատանդ՝ Արտավանը Տիբերիոսի մոտ էր ուղարկում իր Դարեն որդուն՝ բազում ընծաներով:

Արտավանի հետ խաղաղության պայմանագրի կնքումը Տիբերիոսի արտաքին քաղաքականության փայլուն հաղթանակն էր: Սակայն հռոմեական քաղաքականության հաջողությունը կարճատև էր: Տիբերիոսի մահը և Կալիգուլայի գահակալումը (37-41 թթ.) արմատապես փոխեցին հռոմեացիների համար բարենպաստ իրադրությունը, որը ստեղծվել էր Կայսրության արևելյան սահմաններում: Ատելությանը լցված լինելով Տիբերիոսի նկատմամբ՝ Կալիգուլան ձգտում էր փոխել նրա արտաքին քաղաքական կողմնորոշումները: Հռոմեական սենատորների հրահրումով, որոնք ձգտում էին վերականգնել կառավարման հանրապետական համակարգը, 41 թ. Կալիգուլան սպանվեց:

55 թ. իր զորքերով Արևելք շարժվեց հայտնի գորավար և քաղաքական գործիչ Գնեոս Կորբուլոնը: Վերջինս դեսպաններ ուղարկեց Տիգրան, որպեսզի հաշտության բանակցություններ սկսի Վաղարշ I-ի հետ: Ստեղծված պայմանների ճնշման տակ պարթևաց արքան ստիպված էր ընդունել հռոմեացիների առաջարկած պայմանները և պատանդներ ուղարկել Հռոմ: «Վոյոզեաք, որպեսզի թե՛ պատերազմին նախապատրաստվի, թե՛ պատանդների անվան տակ իրենից հեռացնի կասկածելի մրցակիցներին, հանձնում է Արշակունիների ընտանիքից ամենատերևելիներին», — հաղորդում է Տակիտոսը:

I դ. երկրորդ կեսից սկսած՝ պարթև Արշակունիների արքայատոհմի ներսում անընդմեջ գահակալական կռիվներ էին գնում դրա երկու թևերի միջև, որոնց հիմնական մասը հենվում էր արևելյան և հյուսիսարևելյան իրանական նահանգների վրա, իսկ նրանց հակառակորդները հենարան էին գտնում Միջագետքի հելլենականացած վերնախավի մոտ և սովորաբար հովանավորություն էին ստանում հռոմեական կայսրերի կողմից:

II դ. սկզբին երկու պետությունների միջև սկսվեց հակամարտությունների և առձակատումների մի նոր փուլ, որի պատճառն այն էր, որ այդ ժամանակ Հռոմը փորձեր էր կատարում իր զորքերը շարժելու դեպի Կասպից ծովի ափերը: Դրանով Հռոմը ձգտում էր նաև իր հսկողության տակ վերցնել «Մետաքսի ճանապարհի» ճյուղա-

վորումներից մեկը, որը հարավարևմտյան Ասիայի և Միջերկրածովյան ավազանի քաղաքակիրթ երկրները կապում էր չինական Հան կայսրության հետ: Սակայն այդ արշավանքը հաջողությամբ չավարտվեց, և հռոմեական զորքերը, հասնելով մինչև Աղվանքի խորքերը, մասամբ ոչնչացվեցին սարմատների կողմից, մասամբ ստիպված էին նահանջել Աղվանքի և Հայաստանի տարածքից:

Այդ շրջանում Հռոմեական կայսրության արևելյան սահմանների մոտ քաղաքական իրավիճակը վերին աստիճանի լարված էր: Պարթևների ուշադրությունը հիմնականում ուղղված էր Կենտրոնական Ասիայի վրա, ուր ներխուժել էր չինական բանակը՝ Բան-Չաոյի հրամանատարությամբ (Ք. հ. 97-98 թթ.): Բացի այդ՝ ավելի վաղ պարթևները բախվել էին մի նոր բարդության: Նրանց թիկունքում պետության հյուսիսարևելյան մասում, առաջացել էր հզոր քուշանաց թագավորությունը: Մյուս կողմից էլ Հյուսիսային Կովկասից վաչկատուն ցեղերը, ալանների գլխավորությամբ, անընդհատ հարձակումներ էին գործում պարթևական պետության վրա: Այդպիսի մի ավերիչ արշավանք տեղի ունեցավ Ք. հ. 75 թ.: Պարթևներն ուրիշ ելք չունեին, քան խնդրելու հռոմեական կայսրին միջոցներ ձեռնարկել այդ վտանգի դեմ: Դոմետիանոս կայսրը (Ք. հ. 81-96 թթ.) արձագանքեց այդ խնդրանքին և զորքեր ուղարկեց Հյուսիսային Կովկաս: Այդ զորքերը հասան մինչև Կասպից ծովի ափերը՝ փաստորեն իրենց հսկողության տակ վերցնելով Կովկասի բոլոր հաղորդակցության ուղիները: Ընդ որում՝ կայուն կերպով հաստատվելով այդ վայրերում՝ հարկ եղած ժամանակ Հռոմեական կայսրությունը թույլ էր տալիս, որ «բարբարոսները» ներխուժեն Այսրկովկաս:

Այս շրջանում Հռոմեական կայսրության և Պարթևաստանի միջև հարաբերությունները խիստ հարափոփոխ էին, և մշտապես խաղաղությունն ընդմիջվում էր պատերազմով: Այդ պատերազմների հիմքում գլխավորապես ընկած էր միջագային նշանակություն ունեցող առևտրական ճանապարհների նկատմամբ հսկողություն սահմանելու շահագրգռությունը: Մասնավորապես կողմերը ձգտում էին տիրանալու Արևելքը (Հնդկաստան, Չինաստան) Արևմուտքի (Միջերկրածովյան ավազան, Միջագետք, Հայաստան) հետ կապող կարևորագույն առևտրական-քաղաքականային ճանապարհին:

113 թ. Տրայանոս կայսրը ձեռնամուխ եղավ մի խոշոր արշավանքի դեպի արևելք: Նվաճելով Հայաստանը՝ այնուհետև Ք. հ. 115 թ. հռոմեացիները գրավեցին Տիգրանը: Պարթևական թագավոր Օսրոյը (Խոսրով) ստիպված էր փախուստի միջոցով փրկել իր կյանքը՝ հռոմեացիներին թողնելով արքայադստերը և հռչակավոր արքայական ոսկե գահը: Այնտեղից շարժվելով դեպի հարավ՝ Տրայանոսը հասավ մինչև պարթևական Մեսենեն (Մեշան) սատրապություն՝ Պարսից ծոցի ափին: Բոլոր այս երկրամասերը կցվեցին նորաստեղծ հռոմեական «պրովինցիա Մեսոպոտամիային»: Այդ հաղթանակի համար Ք. հ. 116 թ. Տրայանոսին շնորհվեց «Պարթևացի» պատվավոր տիտղոսը:

Թ. Մոմզենի պատկերավոր արտահայտությամբ՝ «Տրայանոսի արևելյան նվաճումները լուսավորեցին Հռոմեական կայսրության մտայն մայրամուտը այնպես, ինչպես

կայծակն է մի ակնթարթ ցրում խավարը զիշերվա, բայց այս վերջինիս նման նոր արշալույսի նախագուշակներ չէին»:

Շ. Մանանդյանը նշում է, որ «Տրայանոսի աշխարհակալական նոր քաղաքականությունը, որ կրկնությունն էր Կրասոսի և Անտոնինոսի ազդեցիվ ու նվաճողական արևելյան քաղաքականության, չուվեց դրական հետևանքներ: Հռոմեական Ք. հ. 114–117 թթ. հաղթական արշավանքները փաստորեն ուժերի ու նյութական միջոցների գուր և անօգուտ վատնում էին: Հաղթանոսի ժամանակ... Հռոմեական կայսրության ասիանան արևելքում նորից դարձավ, ինչպես և առաջ, Եփրատ գետը»:

Ք. հ. 117 թ. Տրայանոսը մահացավ՝ իր ժառանգորդին թողնելով մի դժվարին խնդիր. կայսրությունը դուրս բերել քաղաքական ճգնաժամից, որի մեջ նա հայտնվել էր արևելքում ազդեցիվ պատերազմի հետևանքով: Պարթևական պետությունը ևս, որը կրել էր դաժան պարտություններ, դեռևս չէր հաղթահարել ներքին դինաստիական պայքարը և ի վիճակի չէր Եփրատից արևմուտք անհապաղ վարելու հարձակողական պատերազմ Հռոմեական կայսրության դեմ: Այսպիսով՝ կողմերը կարիք ունեին խաղաղության կամ, ծայրահեղ դեպքում, գինադադարի: Տրայանոսի հաջորդներ Հաղթանոսը (Ք. հ. 117–138 թթ.) և Անտոնինոս Պիոսը (Ք. հ. 138–161 թթ.) հրաժարվեցին իրենց նախորդի բոլոր նվաճումներից և հետագան Հայաստանից, Միջագետքից ու Ադիաբեններից: Պարթևների ու հռոմեացիների միջև սահմանը կրկին դարձավ Եփրատ գետը: Միաժամանակ նրանք հարձակողական քաղաքականությունից անցան պաշտպանողականի. արևելքում վերականգնվեց նախկին վիճակը: Հաղթանոս կայսրը նույնիսկ վերադարձրեց Օսրոյի դստերը և խոստացավ վերադարձնել Տիգրանում գրավված ոսկե գահը: Հայաստանը վերականգնվեց՝ որպես «բուֆերային» պետություն, որը պետք է կառավարեին հռոմեական կայսրերի կողմից հաստատված Արշակունի տոհմի թագավորները: Հռոմը միառժամանակ ստիպված էր իր արևելյան քաղաքականությունն իրագործելիս նախապատվությունը տալ դիվանագիտական և ռազմավարական պաշտպանությանը:

Վաղարշ II-ը (Ք. հ. 128/129–147 թթ.) փորձում էր Հռոմի հետ պահպանել բարեկամական հարաբերություններ, որը, սակայն, ոչ միշտ էր հաջողվում: Երբ պարթևական գահ բարձրացավ Վաղարշ III Պերոզը (Ք. հ. 148–191 թթ.), Պարթևաստանը նորից ուժեղացավ և անցավ ակտիվ արտաքին քաղաքականության: Վաղարշի «Պերոզ» («հաղթող, հաղթական») տիտղոսը վկայում էր նրա ռազմաշունչ ոգու և ծավալապաշտական նպատակների մասին: Նրա երկարամյա իշխանության ընթացքում ներքին խռովությունները Պարթևաստանում բոլորովին դադարել էին: Պատերազմական գործողություններ սկսելով հռոմեացիների դեմ՝ Էլեգեյա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարթևները ծանր պարտության մատնեցին հռոմեացիներին: Այնուհետև անցնելով Եփրատը՝ պարթևական զորքերը ներխուժեցին Սիրիա, գրավեցին Եդեսիա քաղաքը և հասան մինչև Պաղեստին՝ ասպատակելով հռոմեական հսկողության տակ գտնվող երկրամասերը: Մարկոս Ավրելիոս կայսրը (Ք. հ. 161–180 թթ.) դիմեց կտրուկ միջոցների ռազմական գործողությունների ընթացքը արմատապես փոխելու համար: Նա Արևելք նետեց կայսրության ողջ ռազմական ուժը: Ծավալուն ռազմական նախա-

պատրաստությունների հետ մեկտեղ ձեռնարկվեցին նաև դիվանագիտական բայեր: Մասնավորապես՝ Հռոմն առաջարկեց Վաղարշ III-ին դադարեցնել պատերազմը և կնքել խաղաղություն «status quo ante bellum» սկզբունքի հիման վրա: Սակայն այդ առաջարկը մնաց անպատասխան: Ուստի Ք. հ. 163 թ. հռոմեական զորքերն անցան հարձակողական գործողությունների Հայաստանում, Սիրիայում և Միջագետքում: Այս պատերազմը, որ պաշտոնապես կոչվում էր «հայկական և պարթևական», մղվում էր երկու ուղղությամբ՝ Արտաշատի և Տիգրանի: Հայաստան ուղարկվեց հատուկ զորաբանակ Կապադովկիայի կուսակալ Ստատիոս Պրիսկոսի գլխավորությամբ, որը համառ կռիվներից հետո նվաճեց Հայաստանը: Հռոմեական զորքերը գրոհով վերցրին Արտաշատը, որը ենթարկվեց կողոպուտի և ավերածության:

Այդ նույն ժամանակ հռոմեական մի ուրիշ զորաբանակ Ավիդիոս Կասսիոսի հրամանատարությամբ Ջուզանյի հարավակողմում՝ Դուրա-Եվրոպոս քաղաքի մոտ, հաղթանակ տարավ Վաղարշ III-ի նկատմամբ և մտավ Հյուսիսային Միջագետք, ուր գրավեց Եդեսիան և Մծբինը:

Վաղարշ III-ն, անընդհատ նահանջելով, ստիպված եղավ թողնել Միջագետքը և անցնել Տիգրիսի արևելյան ափը: Կասսիոսը, հալածելով նրան, հասավ Բաբելոնիա, որտեղ ավարի և հրդեհի մատնեց հեյլենիստական աշխարհի խոշորագույն կենտրոն Սելևկիա քաղաքը: Ավերածության մատնվեց նաև Տիգրան մայրաքաղաքը, ուր Ք. հ. 165 թ. արքայական դղյակը հավասարեցվեց հողին: Այդ հաղթանակների համար Մարկոս Ավրելիոսը և Լուկիոս Վերոսը ստացան «Հայկական» («Armenicus») պատվանունը, իսկ երբ պարթևական պատերազմը ևս հաջողությամբ զլուխ բերվեց, երկուսն էլ ստացան նաև «Պարթևական» («Parthicus») տիտղոսը: Վաղարշ III-ը հարկադրված եղավ փախչել իր երկրի խորքերը, իսկ Կասսիոսը վերադարձավ Սիրիա, որովհետև Պարթևաստանում բռնկվել էր ժանտախտի համաճարակ, որը մեծ կորուստներ էր պատճառում իր բանակին:

Սակայն պարթևներն իրենց մեջ ուժ գտան վերախմբավորելու բանակը և անցնելու պատասխան հակահարձակման, որը, սակայն, հաջողություն չունեցավ: Դրա հետևանքը Խաբուրից արևմուտք ընկած շրջանների հանձնումն էր Հռոմին և նրա քաղաքական տիրապետության հաստատումը Եդեսիայի ու Կարբեի նկատմամբ:

Հռոմեա-պարթևական ավելի քան չորս տարվա պատերազմից հետո՝ Ք. հ. 166 թ., կողմերի միջև կնքվեց խաղաղության պայմանագիր: Այդ պայմանագրի համաձայն՝ Հռոմեական կայսրությանն էր մնում Միջագետքի հյուսիսարևմտյան մասը՝ Եդեսիա, Կարբե, Մծբին, Դուրա-Եվրոպոս քաղաքներով հանդերձ: Այն սահմանագիծը, որ որոշվեց Միջագետքում, գոյություն ունեցավ գրեթե մինչև արաբների նվաճումները՝ VII դ. կեսերը: Իսկ Մեծ Հայքի թագավորության սահմանները հարատևեցին մինչև նրա բաժանումը՝ Ք. հ. 387 թ.:

Սակայն Ք. հ. 166 թ. պայմանագիրը երկու կողմերի համար ստիպողական մի դադար էր, քանի որ երկուստեք բավարարված չէին դրա պայմաններից: Հետևաբար առաջիկայում սպասվում էին նոր՝ ավելի դաժան ռազմական բախումներ:

Ք. հ. 191 թ. գահ բարձրացավ Վաղարշ IV-ը (Ք. հ. 191–207 թթ.): Վաղարշը փայ-

լուն կերպով օգտագործեց Հռոմեական կայսրության ներքին երկպառակությունները և վերստին հռոմեացիներից հետ նվաճեց Միջագետքը, որը, սակայն, շուտով կրկին կորսվեց:

Պարթևաստանում արքայական իշխանության թուլությունը և գահի համար մշտական պայքարը դժվարացնում էին նրա դիմադրությունը Հռոմին: Դա հնարավորություն տվեց կայսր Սեպտիմիոս Սևերոսին պարթևների դեմ կազմակերպելու մեծ արշավանք: Ք. հ. 198 թ. հռոմեական զորքերը կայսրի գլխավորությամբ Եփրատի ամերով իջան Բաբելոնիա և նավարկելի դարձնելով Եփրատը Տիգրիսի հետ միացնող հին ջրանցքը՝ շարժվեցին դեպի Տիգրիս գետը, ուր հանկարծակիի բերեցին պարթևական զորքին և մատնեցին ծանր պարտության: Նրանք գրավեցին Բաբելոն և Սելևկիա քաղաքները, որոնք պարթևների կողմից արդեն ավերված ու դատարկված էին: Իսկ Տիգրոն քաղաքը, որ անձնատուր էր եղել, մատնվեց կողոպուտի և կոտորածի: Սեպտիմիոս Սևերոսը դաժան ավերածություն կատարեց նաև Միջագետքի կենտրոնական շրջաններում և այնտեղից 100 հազար մարդ քշեց Սիրիա ստրկության վաճառելու համար:

Պարթևաստանի դեմ մղված պայքարում ձեռք բերված այդ հաջողությունների համար Սեպտիմիոս Սևերոսին հռոմեական սենատը շնորհեց «Parthicus Maximus» տիտղոսը: Հռոմեական այս հաղթական արշավանքի հետևանքով կայսրության արևելյան սահմանը առաջ շարժվեց մինչև Տիգրիս գետը:

Վաղարշ IV-ին փոխարինեց որդին՝ Վաղարշ V-ը (Ք. հ. 207/8–222/23 թթ.), իսկ Հռոմում Սեպտիմիոս Սևերոսին հաջորդեց Կարակալլան (Ք. հ. 211–217 թթ.): Այդ ժամանակ Պարթևաստանը գտնվում էր իր անկման նախօրյակին: Կարակալլան փորձեց օգտագործել պարթևների թուլացումը և մեկ հարվածով նվաճել ամբողջ Առաջավոր Ասիան: Նա երազում էր կրկնել Ալեքսանդր Մակեդոնացու հաղթարշավը դեպի արևելք: Կարակալլան պարթևների դեմ պատերազմ հրահրելու պատրվակ ծառայեցրեց հիմնականում Հայաստանը կառավարելու հարցը: Ք. հ. 211 թ. հռոմեական բանակը անցավ Տիգրիսը և գրավեց Միջագետքն ու Մարաստանի մի մասը: Իր ճանապարհին հռոմեական բանակը ավերածության ու կողոպուտի էր մատնում ամեն ինչ: Գրավելով Արբելա քաղաքը՝ Կարակալլան հրամայեց ցրիվ տալ այստեղ թաղված Արշակունի թագավորների ոսկորները և պղծել նրանց գերեզմանները:

Պարթևների և հռոմեացիների միջև վճռական բախումը կանխվեց շնորհիվ այն բանի, որ հռոմեական բարձրաստիճան գինկորականության կողմից Կարակալլայի դեմ կազմակերպվեց դավադրություն, և նա սպանվեց: Սակայն, այնուամենայնիվ, Կարակալլայի հաջորդը՝ Մակրինոս կայսրը, տվեց այդ ճակատամարտը: Այն տեղի ունեցավ Մծքինի շրջանում և տևեց երեք օր: Երկու կողմերն էլ ունեցան ծանր կորուստներ, սակայն ճակատամարտը կողմերից որևէ մեկին հաղթանակ չբերեց: Ոստի Մակրինոսը պատգամավորներ ուղարկեց պարթևաց արքայի մոտ՝ առաջարկելով հաշտություն: Վերջինս տվեց իր համաձայնությունը, և Ք. հ. 217 թ. կողմերի միջև կնքվեց խաղաղության պայմանագիր:

Արտավան V-ը (Ք. հ. 222/3–227 թթ.) եղավ պարթև Արշակունիների արքայատոհմի վերջին ներկայացուցիչը: Նրան հաջողվեց պարտության մատնել հռոմեա-

կան զորքերին: Դրանք, սակայն, պարթևների վերջին հաջողություններն էին նրանց թագավորության անկման նախօրյակին: Պարթևական աշխարհակալությունն արդեն ապրում էր իր մայրամուտը:

4. ՊԱՐԹԵՎԱՍՏԱՆԻ ԱՆԿՈՒՄԸ

Փորձենք ներկայացնել պարթևական պետության թուլացման գլխավոր պատճառները, որոնք հանգեցրին նրա կործանմանը: Նախ՝ այդ պետությունը ներքուստ միատարր չէր: «Նրանում բացակայում էր անհրաժեշտ էթնիկական ու քաղաքական գոյվածությունը: Արշակունիների պետությունը ոչ միայն բաժանված էր առանձին կախյալ թագավորությունների, այլև խայտաբղետ պատկեր էր ներկայացնում էթնիկական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման տեսակետից»: Ըստ էության, այդ պետությունը ռազմաքաղաքական տարբեր միավորներից բաղկացած մի համադաշնություն էր, որի մեջ մտնում էին աշխարհագրական պայմաններով, բնակչության էթնիկական կազմով, տնտեսական ու սոցիալ-քաղաքական զարգացման մակարդակով միմյանցից տարբերվող տարածքներ: Այսպես, օրինակ՝ պետության կազմի մեջ մտնող ինքնակառավարվող հունական պոլիսները պահպանում էին իրենց հարաբերական անկախությունը, իսկ մի շարք տարածքներ՝ Ատրպատականը, Էլամը, Պերսիդան, գտնվում էին պարթևներից կախման մեջ: Այդ երկրները, հատկապես հունական պոլիսները, շեշտված թշնամանքով էին վերաբերվում «բարբարոսների» (այդպես էին նրանք անվանում իշխող պարթևական տարրին) նկատմամբ՝ հաճախ բարձրացնելով ապստամբություններ կամ աջակցություն ցույց տալով նրանց հակառակորդներին: Սուր հակասություններ կային նաև պարթևական պետության մեջ մտնող առանձին երկրների միջև: Արշակունի վերջին կառավարիչները արդեն կորցրել էին իրենց վերահսկողությունը այն տարածքների մեծ մասի նկատմամբ, որոնք ձևականորեն համարվում էին իրենց տիրույթները:

Պարթևաստանի անկմանը զգալիորեն նպաստեց Առաջավոր Ասիայում II դ. վերջին և III դ. սկզբին սկսված սոցիալ-տնտեսական և քաղաքական համընդհանուր ճգնաժամը, որի հետևանքով կտրուկ նվազեց քարավանային առևտրի ծավալը:

Պարթևական պետության անկմանը մեծապես նպաստեցին նաև արքայատոհմի ներսում անընդմեջ տեղի ունեցող գահակալական կռիվները դրա երկու թևերի միջև, որոնցից մեկը հենվում էր արևելյան և հյուսիսարևելյան իրանական նահանգների, իսկ մյուսը՝ Միջագետքի հելլենականացած վերնախավերի վրա:

Այդ բոլորի անխուսափելի հետևանքը եղավ այն, որ Պարթևական պետության մի շարք իրանական շրջաններում կյանքի կոչվեցին ուժեղ իշխանապետություններ, որոնց տիրապետող շրջանները և դրանք գլխավորող տեղական արքայատոհմերը այլևս չէին ուզում ենթարկվել Տիգրոնում նստող Արշակունի արքայից արքաներին: Պարթևական պետության մեջ հասունանում էր քաղաքացիական մեծ պատերազմ պարթևների, պարսիկների և մարերի միջև: Պարթև Արշակունիները ի վիճակի չէ-

ղան իշխանությունն իրենց ձեռքում պահելու, և նրանց պետությունը կործանվեց: Իրանական գահի վրա նրանց փոխարինելու եկավ Սասանյան պետությունը: Արտավան V-ի որդիները և պարթև ավագանու ներկայացուցիչները ապաստան գտան Հայաստանում: Թեև հայոց արքա Տրդատ II-ը փորձում էր Սասանյանների դեմ կազմակերպված արշավանքի միջոցով վերականգնել Պարթևական թագավորությունը, սակայն հաջողություն չունեցավ:

5. ՊԱՐԹԵՎԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Պարթևական պետությունը ձևավորվեց իր նախորդ Աքեմենյան տերության անկումից շուրջ 80 տարի անց՝ Սելևկյան տերության անմիջական քաղաքական գերիշխանության ընդմիջարկումից հետո, դեռևս վերջնական կոնսոլիդացիայից շատ հեռու կանգնած իրանալեզու աշխարհում քաղաքական տեսանկյունից որպես դրա միավորող: Բուն իրանական ավանդական մշակույթի հիմնավոր ներծծումը հեղինակաբար քաղաքային մշակույթի հզոր տարրերով չէր կարող իր հետքը չթողնել պարթևական մշակույթի վրա: Ոչ պակաս կարևոր գործոն էր նաև պարթևական պետության վարչաքաղաքական կառուցվածքը, որտեղ կենտրոնական իշխանության հարաբերական թուլությունը (տե՛ս վերը) էապես արգելակում էր միասնական մշակույթի ձևավորմանը: Այդ է պատճառը, որ Պարթևաստանի մշակույթ՝ որպես այդպիսին դժվար է տարբերակել: Տերության քաղաքական կենտրոնների՝ մայրաքաղաքների հաճախակի փոփոխությունները կարող էին նշանակել, որ նույնիսկ «տերունական մշակույթի» ձևավորումը անհրաժեշտ մակարդակի չէր հասնել:

Հենց հիշյալ հանգամանքներով է պայմանավորված Պարթևաստանի մշակութային համայնապատկերի խայտաբղետ բնույթը, որը ներառում էր ամենատարբեր մշակութային իրողություններ: Կան հավաստի տեղեկություններ այն մասին, որ պարթևական արքաները որոշակի ջանքեր էին թափում Տերության ողջ տարածքում միասնականության տարրերի ներդրման ուղղությամբ: Այսպես՝ Վաղարշ I-ի հրամանով բոլոր մարզերից հավաքվեցին տվյալ տարածաշրջանի պատմության վերաբերյալ առկա գրավոր աղբյուրները և ի պահ տրվեցին արքունի դիվանում: Թերևս այս ձեռնարկման նպատակը Տերությունը բնակեցնող ժողովուրդներին ավելի լավ ճանաչելն էր նրանց մշակութային արժեքների միջոցով:

Չնայած պետության բնակչության հիմնական խոսակցական լեզուն պարթևերենն էր, ինչպես նաև իրանական այլ լեզուներ, սակայն արքունիքում և ազնվականության մի մասը օգտագործում էր հունարենը: Հունարենը միաժամանակ պետության պաշտոնական գրագրության լեզուն էր: Հունարենից ոչ պակաս կիրառություն ուներ դեռևս Աքեմենյան շրջանում իրանական աշխարհ ներթափանցած արամեական գիրը: Իսկ Պարթևաստանի միջագետքյան տիրույթներում երբեմն կիրառվում էր նույնիսկ իր վերջին շունչն ապրող քաբելոնյան սեպագիրը: Թերևս պարթևական շրջանում միտում կար արամեական այբուբենը վերածելու սեփական գրի համա-

կարգի, քանի որ պահպանվել են ավելի քան մեկ տասնյակ արամեատառ արձանագրություններ, որոնց լեզուն արդեն պարթևերենն էր:

Նույնպիսի իրավիճակ էր տիրում նաև քաղաքաշինության, մասնավորապես ճարտարապետության և քանդակագործության բնագավառում: Պարթևական տերության մշակույթը դրա գոյության մեծ մասի ընթացքում ակնհայտորեն հետերոգեն էր: Ամենուրեք նկատվում էր միասնականության բացակայություն: Տերության արևելյան շրջանների նյութական մշակույթը զգալիորեն տարբեր էր արևմուտքից, որի վրա ուժեղ էր հելլենիստական (նաև հռոմեական) ազդեցությունը: Օրինակ՝ արևելքում շինարարության ժամանակ օգտագործվում էր հում աղյուս, այնինչ արևմուտքում՝ քար և թրծված աղյուս: Պարթևաստանի գոյության ողջ ընթացքում հատկապես առաջին դարերում, տերության տարբեր շրջաններում պարզորոշ նկատվում էր հելլենիստական, իսկ Միջագետքում նաև տեղական ճարտարապետության ուժեղ ազդեցությունը: Դրա լավագույն օրինակը պարթևների մայրաքաղաք Տիգրանն էր: Այն կառուցվեց Տիգրիսի ափին՝ հին միջագետքյան Օպիս քաղաքի տարածքում: Քաղաքը նախկին Արքայական ճանապարհի վրա էր: Դեռևս Սելևկոսը Օպիսի դիմաց՝ գետի հակառակ ափին, կառուցել էր Սելևկիա քաղաքը: Հետագայում պարթևները արքայանիստը Սելևկիայից տեղափոխեցին գետի հակառակ ափը՝ Տիգրան: Սելևկիան հետագայում Սասանյանները անվանափոխեցին որպես Վեհ Արդաշիր՝ «Արդաշիրի գեղեցիկ քաղաք»: Քաղաքը շարունակաբար կառուցապատվում էր, իսկ բնակչությունը՝ աճում: Այն զբաղեցնում էր շուրջ 30 քառ. կմ տարածք (համեմ. Հռոմը՝ 13, 7):

Ավելի ուշ տեղական ճարտարապետները փորձում էին այն որոշակիորեն ձևափոխել՝ տուրք տալով տեղական ավանդույթներին: Արևմտյան շրջաններում քանդակագործությունը կրում էր հին առաջավորասիական ավանդույթների ակնհայտ ազդեցությունը, այնինչ Արևելքում այն ուներ տեղական, ավելի պարզունակ արմատներ. այստեղ արձանները սովորաբար կերտվում էին կավից և չափերով շատ ավելի փոքր էին:

Նույն երևույթը առկա է նաև որմնանկարչության և գեղարվեստական մշակույթի մյուս ոլորտներում: Դուրա-Եվրոպոսից հայտնաբերված Միթրա (Միհր) աստվածը պատկերված է որպես հեծյալ որսորդ՝ պալմիրյան ազնվականության հատկանշական հագուստով, ինչը վկայում է Լևանտյան նախատիպին ընդօրինակելու մասին:

Պարթևական պատկերագրությունը կարելի է որակել որպես հունա-հռոմեական «գավառական պատկերագրության» դրսևորում, որտեղ պարզորոշ երևում են տեղականի տարրեր: Դա հստակ արտահայտված է մարդկային ֆիգուրի պատկերման մեջ (ֆրոնտալ, խոշոր աչքերով): Սա Պարթևական տերության արևմտյան շրջաններում էր: Ինչ վերաբերում է բուն պարթևական տարածքներին, ապա այստեղ հելլենիստական ազդեցությունը շատ թույլ էր արտահայտված: Որմնանկարները կատարված են կոպիտ, առանց լրացուցիչ հարդարանքի (որոշ բացառություն են կազմում Միհրդատ II-ի և Գողերձ II-ի պատկերները):

Պարթևական պատկերագրությունը առավել ամբողջական ներկայացված է դրամների վրա: Այստեղ է, որ հնարավոր է տեսնել պատկերագրության զարգաց-

ման փուլերը: Ինչպես և որմնանկարչության ասպարեզում, այստեղ էլ ուժեղ է հելլենիստական ազդեցությունը:

Պարթևական ամենավաղ դրամի (Միհրդատ II) դիմային կողմում արքայի դիմագծերը խիստ ընդգծված են. աչքերը՝ խոշոր, ծնոտը՝ ամուր: Արքայի գլխանոցը հիշեցնում է մի կողմից՝ Աքեմենյան շրջանի սկյութական գլխանոցը, մյուս կողմից՝ Նոր էլամական շրջանի բարձրաքանդակների վրա եղած պատկերները: Դրամի հակառակ կողմում պատկերված է արքայատոհմի նախնի Արշակի աստվածացված պատկերը: Վերջինիս ձեռքում աղեղ է, որով պատկերը հիշեցնում է Սելևկյանների դրամների հակառակ կողմում ներկայացված արքայատոհմի նախնի համարվող Ապոլլոն աստծո պատկերը: Փաստորեն, վաղ շրջանի պարթևական դրամները պատճենում էին Սելևկյան դրամները:

Սկսած Միհրդատ II-ից՝ նկատվում են փոփոխություններ: Արքան պատկերվում է երկար, սրածայր գլխանոցով՝ զարդարված թանկարժեք քարերով: Բացի այդ՝ արքան կրում է երկար մորուք: Այս պատկերագրությունը սկսում է գերիշխել հետագա ժամանակներում: Նոր փոփոխություն է վկայված արդեն Միհրդատ III-ի շրջանում: Եթե նախկինում արքան պատկերվում էր պրոֆիլով, ապա այժմ նա հանդես է գալիս ֆրոնտալ դիրքով:

Կրոնի ոլորտում Պարթևաստանը ներկայացված էր զրադաշտականությամբ, որին բնորոշ էր դուալիզմը՝ Ահուրամազդա (Ռրմիզդ) աստծով մարմնավորված բարի նախասկզբի և չարը խորհրդանշող Ահրիմանի հավերժական պայքարը: Հետագայում զրադաշտականությունը ստացավ իր վերջնական ձևավորումը՝ ամրագրվելով հին իրանցիների սուրբ գրքում՝ Ավեստայում: Ահուրամազդայի հետ մեկտեղ կարևոր աստվածություններից էին Միթրան և Անահիտը: Պարթևական ազնվականության շրջանում ուժեղ էին սինկրետիկ միտումները՝ հելլենիստական և զրադաշտական կրոնների միաձուլումը: Այդ միտումը ակնառու է տերության տարբեր շրջաններում, որտեղ միաձուլված էին Ահուրամազդան և Ջևար, Միթրան և Հելիոսը, Վրթրագնան (Վահագն) և Հերակլեսը:

Պարթևական տերության կազմում գտնվող երկրներում պահպանվում էր տեղական ավանդական աստվածությունների պաշտամունքը: Այսպես՝ Միջագետքում, մասնավորապես Բաբելոնիայում շարունակվում էր Մարդուկ աստծո պաշտամունքը՝ Իշտարի և Նանայի հետ միասին, այնպես, ինչպես Հրեաստանում սեփական աստվածները:

6. ՊԱՐԹԵՎԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ՓՈԽՏԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ք. ա. I դ. առաջին տասնամյակներին Հայաստանը քայլ առ քայլ ընթանում էր աշխարհակալական պետություն դառնալու ճանապարհով: Բռնելով արտաքին նվաճումների ուղին՝ նրան հաջողվել էր Պարթևաստանից ևս գրավել մի շարք տարածքներ: Գնալով հզորացող Հայաստանը դառնում էր պարթևական պետության

գլխավոր ախոյանը: Հայաստանը իր տարածքով և քաղաքական կշռով ժամանակի երրորդ մեծ պետությունն էր: Ընդ որում, ի տարբերություն Պարթևաստանի, Մեծ Հայքի թագավորությունը իրենից ներկայացնում էր մի միաձույլ էթնիկական պետություն, քանի որ այն բնակեցված էր մեկ ժողովրդով՝ հայերով, որը խոսում էր մի լեզվով: «Ահա այս հանգամանքներն էին, որ նշանակալից պատմական գործոն էին հանդիսանում և Մեծ Հայքին հնարավորություն էին տալիս տոկայու և գոյատևելու երկու մրցակից աշխարհակալությունների միջև և նույնիսկ հարկադրելու, որ նրանք իրենց արտաքին քաղաքականությունը վարելիս հաշվի նստեն Մեծ Հայքի պետության հետ»:

Երկու հարևան պետությունները՝ Հայաստանը և Պարթևաստանը, դառնում են լուրջ մրցակիցներ, և նրանց միջև ծայր են առնում պատերազմներ, որոնք ընթանում էին փոփոխակի հաջողությամբ: Պարթևների արքայից արքա Միհրդատ II-ը, որի օրոք Պարթևաստանը սկսել էր վերելք ապրել, պատերազմելով հայոց թագավոր Արտավազդի դեմ, գրավում է Մեծ Հայքի թագավորության մի մասը, ինչպես նաև հետ է խլում նախկինում պարթևներին պատկանող սահմանամերձ հողերը: Նա ստիպում է, որ հայոց արքան որպես պատանդ իրեն հանձնի իր թագածառանգ որդի Տիգրանին: Վերջինս իր կյանքի շուրջ մեկ տասնամյակ անց է կացնում պարթևական արքունիքում: Միհրդատ II-ի մոտ ծնվում է Արտավազդին գահընկեց անելու և նրա փոխարեն Տիգրանին հայոց գահի վրա նստեցնելու գաղափարը: Ուստի նա ազատ է արձակում Տիգրանին և օժանդակում նրա գահակալմանը՝ որպես հատուցում պահանջելով Հայաստանի հարավարևելյան մասում՝ մարական սահմանի մոտ գտնվող «Յոթանասուն հովիտներ» կոչվող տեղանքը: Տիգրանը թագադրվել է հենց այն վայրում, որտեղ նա հետագայում հիմնել է Տիգրանակերտ քաղաքը:

Հայոց Տիգրան II արքան (Ք. ա. 95-55 թթ.) սկզբնապես պարթևների նկատմամբ վարել է զգույշ քաղաքականություն և յոթ-ութ տարի՝ մինչև Միհրդատի մահը, ոչ մի ռազմական կամ դիվանագիտական քայլ չի ձեռնարկել նրանց դեմ: Ընդհակառակը՝ նա իր դուստր Ատովմային ամուսնացրել էր Միհրդատի հետ: Սակայն Ք. ա. 87 թ., երբ վերջինս մահացավ, և պարթևական գահի վրա նստեց Գողերձը (Արշակ X), Տիգրանի զորքերը պարթևներից հետ խլեցին «Յոթանասուն հովիտները», այնուհետև ներխուժեցին Ատրպատական-Մարաստան, իսկ ապա մտնելով բուն Մարաստան՝ գրավեցին պարթևական արքայից արքայի նստավայրերից մեկը՝ Էկրատանան, որտեղ հայկական զորքերը կրակի մատնեցին թագավորի դղյակը: Ահաբեկված ու շփոթահար Գողերձը ստիպված էր խնդրել հաշտություն և հօգուտ Տիգրանի հրաժարվել ինչպես «Յոթանասուն հովիտներից», այնպես էլ Ատրպատյան Մարաստանի ու Հյուսիսային Միջագետքի նկատմամբ իր գերիշխանությունից: Իսկ ամենակարևորը՝ պարթևաց թագավորը ստիպված էր հրաժարվել «արքայից արքա» տիտղոսից, որն այսուհետև կրելու էր հաղթանակած Տիգրանը:

Այսպիսով՝ պարթևական պետությունն ընկճված էր: Այնուհետև շարժվելով դեպի հարավ՝ հաղթական հայկական բանակը իրար հետևից գրավեց Կորդուքը, Ադիաբենեն՝ պատմական Ատրեստանը, որտեղից դուրս եկավ Հյուսիսային Միջագետք՝ գրավելով Միգդոնիան՝ Մծրին մայրաքաղաքով և Օսրոյենեն՝ Ուոհա (Եդեսիա) քաղաքով:

Գողերձին հաջորդած պարթևական թագավորները՝ Որոդես I-ը և Սանատրուկը (Սինատրուկ), քայլեր չկատարեցին հետ վերցնելու իրենց կորցրած հողերը և վերականգնելու Պարթևական պետության հեղինակությունը:

Սկզբնաղբյուրների հիման վրա ենթադրվում է, որ խուրրիների աշխարհագրական տարածման արեալը Միտաննիի կազմավորմանը նախորդող փուլում չափազանց մեծ է եղել: Այդ են վկայում մասնավորապես Հյուսիսային Սիրիայից հայտնի գրավոր աղբյուրները: Այսպես, օրինակ՝ Էրլայի (Ժաման. Հալեպի շրջանում) դիցարանում ներկայացված էին մի ամբողջ շարք խուրրիական կարևոր աստվածներ՝ քաղաքի հովանավոր աստված Կուրա, ռազմի աստված Աշտաբի, Ադամմա, Ամմարիգու, Իշխարա, Իդակուլ: Թերևս Էրլայում առկա էր խուրրիական բնակչություն, ինչպես նաև խուրրիական ծագում ունեցող արքայատոհմ: Վերջին շրջանում ի հայտ եկան հնագիտական և լեզվական նոր տվյալներ հօգուտ այն ենթադրության, որ խուրրիները առկա են եղել Հյուսիսային Միջագետքում առնվազն Ք. ա. III հազ. սկզբներից, ինչպես նաև վկայված են հարավային ու հարավարևելյան Փոքր Ասիայում արդեն Քանեսի տեքստերում: Նկատի առնելով խուրրիներն մի շարք բարբառ-

ՄԻՏԱՆՆԻ

I. ՏԱՐԱԾՔԸ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Այն տարածքը, որտեղ Ք. ա. XVII-XVI դդ. ձևավորվեց Միտաննին, ընկած է Եփրատի մեծ ոլորանի և Տիգրիսի վերին հոսանքների միջև՝ Հայկական Տավրոսի հարավային նախալեռնային շրջանում: Այստեղ են սկիզբ առնում Եփրատի վտակներ Խարուրը և Բալիխը իրենց բազմաթիվ վտակների հետ միասին: Այս ջրառատ և բերրի շրջանը, որը կազմում է «Բարեբեր կիսալուսնի» հյուսիսային հատվածը, բնական կամուրջ է Կենտրոնական և Հարավային Միջագետքի ու Հայկական լեռնաշխարհի, սիրիա-փոքրասիական աշխարհի և Իրանական քարձրավանդակի միջև, որի հնարավորությունները անչափ մեծ էին ինչպես երկրագործական-արհեստագործական հասարակության ձևավորման, այնպես էլ ժամանակի միջազգային տարանցիկ առևտրին անմիջականորեն մասնակից լինելու առումներով: Այստեղ էին գտնվում Եփրատի և հատկապես Տիգրիսի մի շարք գետանցումները, որոնց երկայնքով էլ, բնականաբար, անցնում էին բոլոր քարավանային ուղիները:

Էթնիկական առումով Միտաննիի տարածքը, կապված նրա աշխարհագրական դիրքի հետ, նույնպես բազմատարր էր: Հյուսիս-հարավ, արևելք-արևմուտք և հակառակ ուղղություններով տեղաշարժվող էթնիկական խմբերը մասամբ հաստատվում էին այս բարեբեր տարածքում, որի արդյունքը ինչպես այս կամ այն էթնոսի քաղաքական գերիշխանության հերթագայություններն էին, այնպես էլ մշակութային պատկերի հարստացումը:

Սկզբնաղբյուրների հիման վրա ենթադրվում է, որ խուրրիների աշխարհագրական տարածման արեալը Միտաննիի կազմավորմանը նախորդող փուլում չափազանց մեծ է եղել: Այդ են վկայում մասնավորապես Հյուսիսային Սիրիայից հայտնի գրավոր աղբյուրները: Այսպես, օրինակ՝ Էրլայի (Ժաման. Հալեպի շրջանում) դիցարանում ներկայացված էին մի ամբողջ շարք խուրրիական կարևոր աստվածներ՝ քաղաքի հովանավոր աստված Կուրա, ռազմի աստված Աշտաբի, Ադամմա, Ամմարիգու, Իշխարա, Իդակուլ: Թերևս Էրլայում առկա էր խուրրիական բնակչություն, ինչպես նաև խուրրիական ծագում ունեցող արքայատոհմ: Վերջին շրջանում ի հայտ եկան հնագիտական և լեզվական նոր տվյալներ հօգուտ այն ենթադրության, որ խուրրիները առկա են եղել Հյուսիսային Միջագետքում առնվազն Ք. ա. III հազ. սկզբներից, ինչպես նաև վկայված են հարավային ու հարավարևելյան Փոքր Ասիայում արդեն Քանեսի տեքստերում: Նկատի առնելով խուրրիներն մի շարք բարբառ-

ների առկայությունը՝ խորրիական էթնոսը պետք է քաղկացած լիներ համապատասխան քանակությամբ ինքնուրույն խմբերից, որոնց ձևավորումը արդյունք էր նրանց տարաբնակեցվածության դեռևս վաղ ժամանակներից:

Արդեն Միտաննիի կազմավորման նախօրեին Հյուսիսային Միջագետքի բնակչությունը գլխավորապես քաղկացած էր խորրիական, սեմական (ամորեական) տարրից, ինչպես նաև որոշ քանակությամբ հնդիրանցիներից: Սրանցից հատկապես կարևոր դեր են խաղացել առաջին երկուսը:

Խորրիները Միտաննիի տարածքում հայտնվել են Ք. ա. III–II հազ. ընթացքում՝ տարբեր տեղաշարժային ալիքներով: Նրանք լավ վկայված են Աքքադի և Ուրի III դինաստիայի պետություններից մեզ հասած գրավոր աղբյուրներում: Մասնազետների շրջանում գերիշխում է այն տեսակետը, որ նախքան Հյուսիսային Միջագետքում բնակվելը խորրիները հանդիսացել են ինչ–որ լեռնային շրջանի բնակիչներ: Որպես այդպիսին հիմնականում նշվում է Հայկական լեռնաշխարհը¹: Անկախ այն հանգամանքից, թե Հայկական լեռնաշխարհի կոնկրետ որ շրջանում կարող էին բնակվել խորրիները, պարզ է, որ ողջ II հազ. և I հազ. առաջին կեսին խորրիական զգալի էթնիկական տարր իրոք բնակվում էր Հայկական Տավրոսի տարբեր շրջաններում և նույնիսկ դրանից հյուսիս: Դրա վկայությունն է խորրիական անուններ կրող արքաների և այլ կարգավիճակ ունեցող կառավարիչների ներկայությունը այս տարածքում: Մասնավորապես՝ խորրիական անուններ են կրում Ալզիի (հայկական Աղձնիք) արքա Անտարատալը (խեթական արքա Սուպալիլուլումաս I–ի ժամանակակիցը), նույն Ալզիի արքա Էխլի–Թեշուրը Ք. ա. XIII դ. վերջին, Ալզիի հարավային հարևան Բարխիի արքա Կիլի–Թեշուրը՝ Կալի–Թեշուրի որդին, նույն շրջանում գտնվող Ուրրատինաշ քաղաքի կառավարիչ Շադի–Թեշուրը և այլք:

Ըստ գերիշխող տեսակետի՝ խորրիները Միջագետք են ներթափանցել երկու տարբեր ալիքներով: Առաջինը Ք. ա. III հազ. կեսերին, իսկ երկրորդը՝ Ք. ա. XVII–XVI դդ.: Այս ենթադրության հիմքում ընկած է այն հանգամանքը, որ վաղ խորրիներն լեզուն զգալիորեն տարբեր է արդեն միտաննական շրջանի խորրիներնից: Խորրիներնի առնչությունը հին Առաջավոր Ասիայի կամ ժամանակակից որևէ լեզվաընտանիքի հետ առ այսօր քննարկման խնդիր է: Պարզ է միայն, որ Առաջավոր Ասիայի հնագույն լեզուներից միայն ուրարտերենն է, որ սերտորեն առնչվում է խորրիներնին՝ նրա հետ միասին կազմելով առանձին լեզվախումբ: Մասնագիտական գրականության մեջ առաջ է քաշվել մի տեսակետ, ըստ որի՝ խորրի–ուրարտական լեզվախումբը ծագումնաբանորեն առնչվում է արևելակովկասյան (դադստանյան) լեզուների հետ:

¹ Gelb I., Hurrians and Subarians, Chicago, 1944, 70; Friedrich J. 1969, Churritisch. – In: Altkeinasische Sprachen. I A. Leiden/Köln, 1969, 1; Steiner G., Hurrian and Urartian as Caucasian Languages, AAL 13, 1992, 33; Steinkeller P., The Historical Background of Urkesh and the Hurrian Beginnings in Northern Mesopotamia – In: A View From the Highlands, Herent, 1998, 96 և այլն: Առաջարկվել են նաև այն տեղորոշումներ (Կասպից ծովից հարավ և հարավ–արևելք՝ Kammenhuber A., Die Arier im Vorderen Orient und die historischen Wohnsitze der Hurriler, Or. 46, 1977, 214, Հյուսիսային Միջագետքի հնագույն բնակչությունը՝ Ungnad A., Subartu, Beiträge zur Kulturgeschichte und Völkerkunde Vorderasiens, Berlin und Leipzig, 1936, 134ff. և այլն):

Կան հիմնավոր վկայություններ Միտաննիի բնակչության կազմում հնդիրանական (կամ հնդարիական) տարրի առկայության մասին: Դրանք են՝ Միտաննիի արքայատոհմի արքաների դինաստիական անունները, Միտաննիի անմիջական գերիշխանության տակ գտնվող սիրիական մանր քաղաքական միավորների արքայիկների անունների նույնպես հնդիրանական ստուգաբանությունը, ինչպես նաև խեթական սեպագիր տեքստերից մեկում, որ ներկայացնում է ձիավարության ձեռնարկ՝ կազմված ծագումով խորրի Կիկկուլիի կողմից, մի շարք արիերեն տերմինների առկայությունը: Չնայած որոշ մասնագետներ կասկածի տակ են առել Միտաննիում արիացիների ներկայությունը՝ արիերեն բառերի և հատուկ անունների առկայությունը այստեղ համարելով դարեր առաջ այլ վայրերում (մասնավորապես՝ Այսրկովկասում կամ Ուրմիա լճի շրջակայքում) խորրիների և արիացիների սերտ շփումների հետևանք, սակայն վերջին շրջանում հայտնվել է հիմնավոր կարծիք միտաննական արիերենի խոսակցական լինելու մասին¹:

Խորրիները և արիացիները գրավոր աղբյուրներով լավ վկայված են նաև Միտաննիից դուրս՝ Առաջավոր Ասիայի շատ տարածաշրջաններում: Նրանց ներկայությունը հատկապես զգալի էր Սիրիայում, Կիցցուվատնայում (Կիլիկիա), Փոքր Ասիայում, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան և հարավարևմտյան շրջաններում: Դա բացատրվում է ոչ միայն Միտաննիի նվաճողական քաղաքականությամբ, այլև նշված էթնիկական խմբերի շարժունությամբ: Ռազմական գործում հմուտ խորրիները և արիացիները ծառայության էին անցնում տարբեր երկրների արքաների մոտ՝ ստանալով տիրույթներ և ակտիվորեն մասնակցելով ներքաղաքական կյանքին: Ժամանակի խոշոր պետությունների բանակներում (օրինակ՝ եգիպտական) խորրիները և արիացիները համարվում էին էլիտար զորամասեր: Միտաննցիները հայտնի էին որպես հմուտ կառավարներ, և նրանց բանակի գլխավոր հարվածային ուժը կազմում էին մարտակառքերի ջոկատները: Ք. ա. XVI–XIII դդ. Միջագետքի, Սիրիայի և Քանաանի պետությունների բանակներում երկանիվ թեթև մարտակառքերի զանգվածային կիրառությունը կապվում է Միտաննիի հետ:

2. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Միտաննիի պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրները պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ ա) Միտաննիի կազմավորմանը նախորդող շրջանում Հյուսիսային Միջագետքի խորրիական իշխանություններին հիշատակող աղբյուրներ և բ) արդեն Միտաննիին համաժամանակյա աղբյուրներ:

Առաջին խմբի հնագույն սկզբնաղբյուրներն են Ք. ա. XXIII դ. թվագրվող, արքադերենով գրված Ուրկեշ և Նավար քաղաքների արքա Ատալշենի տեքստն է և քիչ ավելի ուշ շրջանում կազմված Ուրկեշի քուրմ Տիշատալի խորրիներն տեքստը:

¹ Wilhelm G., The Hurrians, Warminster, 1989: 17; Kühne C., Imperial Mittani: An Attempt at Historical Reconstruction. – In: SCCNH 10, 1999, 209f. և այլն:

Անհամեմատ ավելի ընդարձակ են Միտաննիի գոյության շրջանին վերաբերող աղբյուրները, որոնք իրենց հերթին բաղկացած են սեփական՝ միտաննական և հարևան պետությունների արձանագրություններից:

Բուն միտաննական սեպագիր արձանագրությունների քանակը շատ քիչ է, քանի որ առայժմ չի հայտնաբերվել որևէ արխիվ (մայրաքաղաք Վաշտուկաննիի կամ որևէ այլ վարչական կենտրոնի): Դրանք հիմնականում, բացի Տուշրաթթայի նամակից, Միտաննիի որոշ արքաների կնքադրոշմներ են, որտեղ նշված են նրանց անունը և տիտղոսը:

Ամենավաղ միտաննական աղբյուրը նրա արքա Շուտտարնա I-ի (Ք. ա. XVI դ. վերջ) կնքադրոշմն է, որ հայտնաբերվել է Ալալախից: Հաջորդը Առապխայի արքա Իտխի-Թեշուրին հղված Միտաննիի արքա Սաուսադատտարի նամակն է:

Միտաննական աղբյուրներից առավել ընդարձակը Միտաննիի արքա Տուշրաթթայի նամակն է՝ հղված Եգիպտոսի փարավոն Ամենհոտեպ III-ին, որտեղ ներկայացված են Տուշրաթթայի՝ իշխանության գալու հանգամանքները, միտաննա-եգիպտական փոխհարաբերությունները, ինչպես նաև Խաթթիի և Միտաննիի միջև առաջին ռազմական բախումը: Հաջորդը Տուշրաթթայի նամակն է Ամենհոտեպ IV-ին (Էխնաթոն), որտեղ հիշատակվում են արքայի պապի օրոք միտաննական արքայադստեր՝ Եգիպտոսի փարավոնին կնության ուղարկելու հանգամանքները:

Եվ, վերջապես, Միտաննիի պատմության կարևոր աղբյուրներից է արդեն Ք. ա. XIV դ. երկրորդ կեսին Խաթթիից կախյալ միտաննական արքա Շատտիվազայի և խեթական արքա Սուպալիուլիումաս I-ի միջև կնքված պայմանագիրը:

Անհամեմատ ավելի ընդարձակ է Միտաննիի վերաբերյալ օտար աղբյուրների ծավալը: Դրանք ներառում են եգիպտական, խեթական, ասորեստանյան, բաբելոնյան, ուգարիտյան և սիրիական մանր քաղաքական միավորներից մեզ հասած սեպագիր տեքստերը: Վերջիններս կարևոր տեղեկություններ են պահպանել ոչ միայն Միտաննիի քաղաքական պատմության, այլև, որոշ դեպքերում ավելի մեծ չափով՝ խուրրիերեն լեզվի, նրանց կրոնի և ընդհանրապես մշակույթի վերաբերյալ:

Ժամանակագրորեն ամենավաղ տեքստերն են Ալալախի արքա Իդրիմիի արձանագրությունը, ինչպես նաև նույն Իդրիմիի և Կիցցուվատնայի արքա Պիլլիայի միջև կնքված պայմանագիրը, որտեղ հիշատակություններ կան Միտաննիի արքա Պարատտարնայի մասին:

Միտաննիի և նրանից կախյալ սիրիական մանր իշխանությունների հետ Եգիպտոսի XVIII դինաստիայի փարավոնների՝ Ք. ա. XV դ. մղած տևական պատերազմները լուսաբանվում են բազմաթիվ եգիպտական աղբյուրներով:

Միտաննիի և խեթական տերության փոխհարաբերությունները քավական ընդարձակ կերպով լուսաբանվում են տարբեր երկրների հետ խեթական արքաների կնքած պայմանագրերով, ինչպես նաև այլ տեքստերով: Դրանց շարքում հատկապես կարևոր տեղեկություններ են պարունակում Թուդխալիյաս II-ի «Տարեգրությունները», նույն արքայի և Կիցցուվատնայի արքա Սունասուրայի միջև կնքված պայմանագիրը, Առնուվանդաս I-ի և Իսմերիգայի ազնվականների միջև կնքված պայմանագիրը, Սուպալիուլիումաս I-ի և Շատտիվազայի պայմանագրում, Սուպ-

պիլուլիումասի և սիրիական Նուխաշշե պետության արքա Տետտեի միջև կնքված պայմանագրերում, ինչպես նաև Սուպալիուլիումասի և Միտաննիի արքա Տուշրաթթայի միջև ընթացած պատերազմների մասին պատմող տեքստերը: Միտաննիի գոյության վերջին շրջանի վերաբերյալ տեղեկություններ կան խեթական արքաներ Խաթթուսիլիս III-ի և Թուդխալիյաս IV-ի՝ տարբեր բնույթի տեքստերում:

Վերջապես կարևոր տեղեկություններ են հաղորդվում նաև Ք. ա. XIV-XIII դդ. ասորեստանյան տեքստերում, որոնք վերաբերում են դեպի խեթահպատակ Միտաննիի տարածք ուղղված Ասորեստանի միջին թագավորության արքաների արշավանքներին:

Միտաննիի և ընդհանրապես խուրրիերենի պատմության, լեզվի և մշակույթի վերաբերյալ առկա են մեծաքանակ հատուկ ուսումնասիրություններ: Պատմական բնույթի աղբյուրների սակավության պատճառով Միտաննիի պատմությունը հիմնականում ուսումնասիրվել է այս պետությունը տարբեր աղիթներով հիշատակող հարևան պետությունների պատմության համատեքստում: Այնուամենայնիվ, առկա են որոշակի քանակությամբ հետազոտություններ, որոնցում փորձ է արվել հնարավորինս ավելի հիմնավոր ներկայացնելու Միտաննիի համապարփակ պատմությունը¹:

Շատ ավելի ընդարձակ են խուրրիերենին նվիրված ուսումնասիրությունները², որոնք հենվում են, բացի վերը նշված խուրրիերեն փոքրաքանակ տեքստերից, խուրրիերեն լեզվով գրված մեծաքանակ, հիմնականում ծիսական ոլորտին վերաբերող հազարավոր տեքստերի վրա, որոնք հայտնաբերվել են խեթական մայրաքաղաքից և այլ տեղական արխիվներից:

Միտաննիի պատմության և խուրրիերեն լեզվի ուսումնասիրության ասպարեզում կարևոր ավանդ ունեն նաև հայ մասնագետները³: Խուրրիերենի և հայերենի

¹ Götze A. 1936, Hethiter, Churriter und Assyrer, Oslo, 1936; Gelb I.J., Loc.cit.; Gelb I., New Light on Hurrians and Subarians, Studi Orientalistici in onore di Giorgio Levi della Vida I, Roma, 1956, 378ff.; O'Callaghan R.T., Aram Naharaim. A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B.C., Roma, 1948, 51ff.; Wilhelm G., Loc.cit.; Wilhelm G., The Kingdom of Mitanni in Second-Millennium Upper Mesopotamia. - In: CANE I-II, 1995, 1243ff.; ИДВ II, 66слл.; Янковская Н.Б., Ашшур, Митанни, Аррапхэ. - В кн.: ИДМ I, 1989, 184слл.; խուրրիական էթնիկ տարրի վաղ պատմության մասին տես Salvini M., The Earliest Evidence of the Hurrians Before the Formation of the Reign of Mittanni. - In: A View From the Highlands, Herent, 1998, 99ff.; Steinkeller P., Loc.cit., 75ff.

² Speiser E., Introduction to Hurrian, New Haven, 1941; Bush F.W., A Grammar of the Hurrian Language, Ann Arbor, 1964; Diakonoff I.M., Hurrisch und Urartäisch, München, 1971; Thiel 1975; Laroche 1980 և այլն:

³ Аветисян Г.М., Военно-политические отношения между Митанни и Хеттским государством в середине XIV в. до н.э., ВОНА 9, 1977, 104слл.; Аветисян Г.М., Хурриты на рубежах Малой Азии до установления могущества Митанни ДВ 3, 1978, 5слл.; Аветисян Г.М., Государство Митанни, Ереван, 1984 և այլն; Хачикян М.Л., Шумерско-хурритский словарь из Рас-Шамры как источник по хурритской диалектологии, ВДИ 3, 1975, 21слл.; Хачикян М.Л., Из старохурритских заклинаний, ДВ 2, 1976, 251слл.; Хачикян М.Л., Хурритский и урартский языки, Ереван, 1985; Khačikyan M.L., The Hurrian Verb Revisited. - In: SCCNH 10, 1999, 257ff.; Khačikyan M.L., To the Genesis of the Category of Aspect in Hurrian and Urartian, AJNES III/1, 2008, 61ff.; Khačikyan M.L., Notes on Hurro-Urartian Phonology and Morphology, AoF 36/2, 2009, 234-242 և այլն:

միջև առնչությունների խնդիրը քննարկվել է հայագետ-լեզվաբանների տարբեր աշխատություններում¹:

3. ԲԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հյուսիսային Միջագետքում Միտաննի կազմավորմանը նախորդող փուլի մասին տեղեկությունները խիստ սահմանափակ են: Դեռևս Բ. ա. III հազ. երկրորդ կեսին այս տարածքում առկա մանր իշխանությունների հիշատակություններից մինչև Բ. ա. XVI դ., երբ առաջին անգամ հանդես է գալիս «Միտաննի» տերմինը որպես պետության անվանում, անցած շուրջ ութ դարերի ընթացքում, դատելով սկզբնաղբյուրներից, խորրիական էթնիկական տարրը այստեղ նշանակալից դեր ուներ: Այստեղ Աքքադի, Ուրի III դինաստիայի, Աշշուրի և հին Բաբելոնյան տեքստերում բազմիցս հիշատակվում են Հյուսիսային Միջագետքում իշխած խորրիական անուններ կրող տեղական կառավարիչներ: Դրանք են՝ Տիշատալը և Ատալշենը (Ուրկեշ և Նավար քաղաքներից), Տախիշատիլին (Ագուխինում), Կիրաշենիվեն և Պուտտիմատալը (Միմուրում), Տուրումնատկին (Ապում) և այլն:

Խորրիական իշխանությունները Աշշուրի պետության, իսկ հետագայում նաև Բաբելոնի թուլացումից հետո ակնհայտորեն սկսում են իրենց ձեռքը վերցնել տարածաշրջանի քաղաքական դեկոր: Այդ մասին կարելի է հստակ պատկերացում կազմել Բ. ա. XVI դ. ընթացքում խեթական արքաներ Խաթթուսիլիս I-ի և Մուրսիլիս I-ի սիրիական պատերազմների համատեքստում խորրիների հիշատակությունների հիման վրա: Խասսուվայի, Ուրշուի և այլ իշխանություններում խորրիական տարրի առկայությունը, Մուրսիլիսի հաջորդ Խանտիլիս I-ի օրոք խորրիների կողմից դեպի Խեթական պետության տարածք ավերիչ արշավանքը վկայում են այն մասին, որ տվյալ պահին խորրիները գերիշխում էին Հյուսիսային Միջագետքում: Թե արդյոք այս շրջանում արդեն ձևավորվել էր միասնական պետականություն, դժվար է ասել: Նմանապես անհայտ է մնում այն քաղաքական միավորը, որի շուրջ առնվազն Բ. ա. XVI դ. վերջերին արդեն միավորվել էին Հյուսիսային Միջագետքի խորրիական իշխանությունները:

Միտաննի կազմավորման խնդիրը սերտորեն առնչվում է այս պետության անվան հարցին:

«Միտաննի» տերմինը առաջին անգամ հանդես է գալիս գրեթե միաժամանակ ինչ-

պես միտաննական, այնպես էլ եգիպտական աղբյուրներում: Գիտությանը առայժմ հայտնի առաջին միտաննական արքայի՝ Շուտտարնա I-ի կնիքում գրված է. «Շուտտարնա, Կիրտայի որդին, Մաիտաննի արքա»: Իսկ Թուրմոս I-ի արձանագրության մեջ հիշատակվում է Մաիտաննի (հետագայում՝ Միտաննի) երկիրը: Սակայն «Միտաննի» տերմինը իր տարբերակներով համեմատաբար ավելի քիչ կիրառական էր, քան հարևանների կողմից պետությանը տրված մյուս երեք անվանումները:

Եգիպտական տեքստերը ավելի հաճախ կիրառում էին «Նախ(ա)րինա» (սեմական անվանում՝ «գետերի երկիր»), ասորեստանցիք՝ «Խանիգալբատ» (Խալիգալբատ, Խաբինգալբատ), իսկ խեթերը՝ հիմնականում «Միտաննի», իսկ երբեմն՝ «Խուրրի» և Խանիգալբատ:

Վերոհիշյալ անվանումներից «Խուրրին», մասնագետների կարծիքով, Միտաննի իշխող բնակչության անվանումից է ծագում: Հատկանշական է, որ խեթական աղբյուրներում բազմիցս բնակավայրերը կրում են «խուրրիական» անվանումը (խեթ.՝ hurlaš)՝ ընդգծելու բնակչության էթնիկական պատկանելությունը: Նախ(ա)րինան, անկասկած, բուն Միտաննի բնօրրանի աշխարհագրական առանձնահատկության (Խաբուրի քաղաքի վտակներով ողողվող տարածքը) հետ է կապված: Խանիգալբատի մեկնաբանությունը առայժմ հնարավոր չէ: Ինչ վերաբերում է Միտաննիին, ապա առաջարկվել են մի շարք բացատրություններ, որոնցից որևէ մեկին դժվար է նախապատվություն տալ: Ներկայումս առավել ընդունելի պետք է համարել այն առայժմ դժվար հիմնավորվող ենթադրությունը, ըստ որի՝ Հյուսիսային Միջագետքում դեռևս Բ. ա. III հազ. կեսերից առկա բազմաթիվ խորրիական քաղաքական միավորներից մեկը Բ. ա. XVI դ. հնդարիական ծագման արքայատոհմի գլխավորությամբ կարողացել էր միավորել տարածաշրջանի խորրիական իշխանությունները և ստեղծել միասնական պետականություն: Հատկանշական է, որ նախքան Միտաննի կազմավորումը դրա տարածքի հարուստ անվանաբանական նյութերում որևէ հնդարիական անձնանուն վկայված չէ, մի փաստ, որը թույլ է տալիս հենց վերջիններիս վերագրել վերոհիշյալ գործընթացը:

Միտաննի առաջին արքաների կառավարման վերաբերյալ աղբյուրների տեղեկությունները խիստ կցկտուր են, և դրանց հիման վրա հնարավոր չէ պատկերացում կազմել դրա քաղաքական պատմության վերաբերյալ: Աղբյուրներից հայտնի առաջին չորս արքաների միայն անուններն են պահպանվել (Պարատտարնա, Կիրտա, Շուտտարնա, Պարսադատտար):

Առաջին հիմնավոր վկայությունները գալիս են Պարսադատտարի որդու՝ Սաուսադատտարի կառավարման ժամանակաշրջանից: Վերջինիս կառավարումն ընդունված է տեղադրել Թուրմոս III-ի ասիական արշավանքների ավարտական փուլում կամ դրանից հետո:

Թուրմոսի արշավանքների ընթացքում Միտաննին կորցրել էր իր հյուսիսսիրիական դաշնակիցներին, վտանգվել էր նաև իր իսկ գոյությունը: Սաուսադատտարը կարողացավ վերամիավորել պետությունը, հաղթել Աշշուրի արքա Աշշուր-նադին-ախխե I-ին և նույնիսկ Միտաննի ազդեցությունը տարածել ընդհուպ մինչև Միջերկրականի փերն ընկած պետությունների վրա՝ Հալեպ, Մուկիշ և Ուգարիտ:

¹ Հայերենում խորրիերենից կատարված փոխառությունները հետազոտված են մի շարք մասնագետների կողմից (Ղափանցյան Գր., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961, 104-130; Капанцян Гр., Историко-лингвистические работы (К начальной истории армян. Древняя Малая Азия), Ереван, 1975, 270սլ.; Мкртчян Н.А. 1983, Субстратные названия растений в армянском языке, ДВ 4, 1983, 24սլ.; Мкртчян Н.А., Семитские языки и армянский, Ереван, 2005, 30սլ.; Хачикян М.Л., Хурритский и урартский языки, 55սլ.; Ջախուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, 422-427; Greppin J.A.C., Some Effects of the Hurro-Urartian People and their Languages upon the Earliest Armenians, JAOS 111/4, 1991, 720ff. և այլք):

Միտաննիի մայրաքաղաքը Վաշշուկաննին էր (նաև Ուշշուկանի), որը գտնվում էր ժամանակակից Մարդինի շրջանում:

Եթե Սաուսադատտարի ձեռնարկումները Տավրոսից հարավ ընկած շրջաններում հաջող էին, ապա այլ էր իրավիճակը հյուսիսում: Խեթական արքա Թուդխալիյաս II-ի ազդեցիվ գործողությունները արևելքում և հարավ-արևելքում զգալիորեն կրճատեցին Միտաննիի ազդեցության գոտիները: Խեթերին հաջողվեց գրավել Միտաննիի ազդեցության տակ գտնվող Իսուվան, իսկ որոշ ժամանակ անց նրանք պայմանագիր կնքեցին միտաննամետ Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի հետ, որով վերջինս, փաստորեն, դուրս եկավ Միտաննիի հետ նախկինում ունեցած դաշնակցային դաշտից: Հավանաբար այս իրադարձությունների շրջանում Թուդխալիյասը նույնիսկ արշավել էր Միտաննիի մայրաքաղաքի շրջան: Խաթթիի հետ ունեցած անհաջող բախումներն էին թերևս պատճառը, որ Սաուսադատտարի որդու՝ Արտադամա I-ի օրոք Միտաննիի և Եգիպտոսի միջև հաստատվեց խաղաղություն, որն ամրապնդվեց դինաստիական ամուսնությամբ:

Խեթա-միտաննական հարաբերությունների վերը նշված ենթատեքստից բխում է, որ Սաուսադատտարի կառավարման վերջին շրջանում Միտաննիի ազդեցության ոլորտը զգալիորեն նվազել էր, և նրա որդին՝ Արտադամա I-ը, ստիպված էր էլ ավելի սերտ փոխհարաբերություններ հաստատել իր դաշնակից Եգիպտոսի հետ: Այնուամենայնիվ, այս փուլում արդեն պարզորոշ զգացվում էր, որ Միտաննիի քաղաքական կառույցը սկսել էր ձեռքեր տալ: Արտադամային փոխարինած Շուտտարնա II-ը փորձում էր պահպանել իր պետության անվտանգությունը Եգիպտոսի միջոցով: Թե որքանով դա հաջողվեց նրան, պարզ չէ, համենայնդեպս նրա հաջորդ Արտաշումարայի օրոք երկրում սկսվեցին ներքին երկպառակություններ:

Ոմն Ուտխի, ով արքայական ծագում չունեի, կազմակերպեց Արտաշումարայի սպանությունը և նրա փոխարեն արքա հռչակեց սպանվածի մանկահասակ եղբորը՝ Տուշրաթթային: Հնարավոր է՝ Ուտխին հակաեգիպտական ուժերի առաջնորդն էր, քանի որ նրա խնամակալության շրջանում հարաբերությունները Եգիպտոսի հետ ընդհատվեցին: Այնուամենայնիվ, Միտաննիի արտաքին քաղաքական կողմնորոշումը դեպի Եգիպտոս կարձ ժամանակում վերականգնվեց, ինչը ակնհայտ է Տուշրաթթայի ընդգծված հակախեթական և միաժամանակ եգիպտամետ դիրքորոշումից:

Տուշրաթթայի ինքնուրույն կառավարման շրջանում իրադարձությունների զարգացումը տանում էր դեպի Միտաննիի քաղաքական անկում, որ պայմանավորված էր ոչ միայն Խեթական տերության ազդեցիվ արտաքին քաղաքականությամբ, այլև Եգիպտոսի պասիվությամբ ասիական թատերաբեմում, ինչպես նաև նախկինում Միտաննիից կախյալ Ասորեստանի տարեցտարի հզորացմամբ:

Տուշրաթթայի նամակը Ամենհոտեպ III-ին ներկայացնում է մի իրավիճակ, երբ խեթական սպառնալիքը ակնհայտ էր, և արքան փորձում էր կրկին հենվել իր եգիպտական դաշնակցի վրա: Նամակում հիշատակվում է խեթերի նկատմամբ տարած հաղթանակը, որը, սակայն, ավելի շուտ երկրորդական նշանակության սահմանային բախում պետք է լիներ:

Արտաշումարայի սպանությունից և Տուշրաթթայի հակախեթական դիրքորոշման ի հայտ գալուց հետո Միտաննիում սկսվում է պայքար գահի համար, որի մանրամասները պարզ չեն, սակայն հայտնի է, որ միտաննական դինաստիական անուն կրող ոմն Արտադամա, իսկ հետո նրա որդի Շուտտարնան հանդես էր գալիս որպես խեթերի, ինչպես նաև Ասորեստանի դաշնակից: Մասնագետների մեծ մասը գտնում է, որ Արտադաման միտաննական արքայատոհմի ներկայացուցիչ էր, ով տիրում էր պետության հյուսիսարևելյան շրջաններին և չէր ընդունում Տուշրաթթայի իշխանությունը: Սակայն չի բացառվում, որ Արտադաման փաստացի տիրույթներ չունեի, այլ դիտվում էր որպես այդպիսին միայն խեթերի կողմից: Ամեն դեպքում իրավիճակը Միտաննիում ծայրաստիճան լարված էր, և իրադարձությունների զարգացումը հանգեցրեց նրա անկմանը:

Խեթական բանակը մտավ Իսուվա, այնուհետև Ալզի և մուտք գործեց բուն Միտաննի՝ գրավելով նրա տարածքի մեծ մասը: Դրանից հետո գորքը շարժվեց ընդհուպ մինչև Եգիպտոսի կողմից վերահսկվող կենտրոնական Սիրիա՝ միաժամանակ պաշարման մեջ պահելով Կարգամիս քաղաքը: Քաղաքի գրավումից քիչ անց Տուշրաթթան սպանվեց իր մերձավորների կողմից, իսկ Շուտտառնա III-ը ասորեստանցիների և ալզեցիների հետ գրավեց մայրաքաղաք Վաշշուկաննին: Նվաճողները միտաննական պալատի ողջ հարստությունը վերցրին որպես ռազմավար: Տուշրաթթայի որդին՝ Շատտիվազան, մարտակառքերի ջոկատի հետ փախավ Բաբելոնիա, իսկ հետագայում հեռացավ Փոքր Ասիա: Ստանալով խեթական արքայի հովանավորությունը՝ նա նշանակվեց արդեն խեթահպատակ Միտաննիի արքա:

Շատտիվազայի գահակալումով խեթերը փորձում էին Միտաննին վերածել կախյալ թագավորության և դրանով արգելել Ասորեստանի կողմից հովանավորվող Շուտտառնա III-ի իշխանության գալը, որի հետևանքով Միտաննին կվերածվեր նրա ազդեցության գոտու:

Այսպիսով՝ Ք. ա. 1330-1320-ական թթ. Միտաննին դադարեց գոյություն ունենալուց որպես ինքնուրույն քաղաքական ուժ և այնուհետև, ընդհուպ մինչև իր անկումը՝ շուրջ մեկ դար, գտնվում էր մի կողմից Խաթթիի, մյուս կողմից Ասորեստանի միջև՝ ծառայելով որպես արգելապատնեշ վերջինիս դեմ:

Միտաննիի հետագա շրջանի քաղաքական պատմության միայն առանձին դրվագներ են հայտնի: Այս շրջանում Միտաննիի մայրաքաղաքը արդեն տեղափոխվել էր Տաիդու (Տուր Արդին լեռներից հյուսիս կամ Խաբուրի վերին հոսանքների շրջանում): Ք. ա. XIII դ. Միտաննին բազմիցս ենթարկվեց Ասորեստանի արքաներ Ադադնիրարի I-ի, Սալմանասար I-ի և Թուկուլթի-Նինուրտա I-ի հարձակումներին: Շատտիվազային հաջորդած Միտաննիի վերջին երեք արքաները՝ Շատտուարա I-ը, Վասաշատտան և Շատտուարա II-ը, ի վիճակի չէին որևէ լուրջ դիմադրություն ցույց տալու անմիջական հարևան Ասորեստանի պարբերաբար կրկնվող հարձակումներին: Միայն Խաթթիի ռազմական և դիվանագիտական ճնշմամբ էր պայմանավորված Միտաննիի գոյությունը:

Ադադնիրարի I-ի տեքստի համաձայն՝ Միտաննիի արքա Շատտուարա I-ը թշնամություն էր սկսել Ասորեստանի դեմ, և նա ստիպված էր արշավանք կազմա-

կերպել: Միտաննիի արքան գերեվարվեց և տարվեց Ասորեստան, սակայն հետո երդվեց լոյալ գտնվել և ազատ արձակվեց: Շատտուարայի որդին՝ Վասաշատտան, նույնպես թշնամություն սկսեց՝ հույսը դնելով խեթերի վրա: Ասորեստանյան զորքի արշավանքն ավարտվեց Միտաննի մայրաքաղաքի և երկրի մեծ մասի նվաճումով և ավերումով: Չնայած կրած մեծ կորուստներին (գանձարանի բռնագրավում, արքայական ընտանիքի գերեվարում)՝ սա դեռ Միտաննիի վերջը չէր: Թերևս իր դաշնակից Խաթթիի աջակցությամբ իշխանության եկավ Շատտուարա II-ը, որի օրոք շարունակվում էր հակամարտությունը Ասորեստանի հետ:

Հանգուցալուծումը վրա հասավ Սալմանասար I-ի կառավարման շրջանում: Վերջինս իր արշավանքի ընթացքում հասավ մինչև Եփրատ՝ Կարգամիսի դիմաց՝ ավերելով 180 բնակավայր և գերեվարելով 14 400 մարդ: Շատտուարա II-ը ի վիճակի չէր դիմադրություն ցույց տալու: Այս արշավանքից հետո Միտաննիի մասին հիշատակությունները սեպագրական աղբյուրներում դադարում են: Ճիշտ է, Թուկուլթի-Նինուրտա I-ի տեքստերում հիշատակվում է արշավանքն ընդդեմ Սուբարու, Ամադանի, Ալշե (= Ալզի) և խուրրիական այլ քաղաքական միավորների, սակայն արդեն ակնհայտորեն խոսքը ոչ թե միասնական պետության, այլ Միտաննիի տարածքում գոյատևած առանձին իշխանությունների մասին է:

Միտաննիի՝ Ասորեստանի կողմից նվաճվելուց հետո նրա տարածքում և նախկին ազդեցության գոտիներում խուրրիական էթնիկական տարրը, ինչպես նաև մանր քաղաքական կազմավորումները պահպանվեցին և գոյատևեցին դեռ դարեր շարունակ, ինչի վկայությունը Հյուսիսային Միջագետքի և Հայկական լեռնաշխարհի հարավային ու հարավարևմտյան շրջաններում գրավոր աղբյուրներով վկայված բազմաթիվ խուրրիական անձնանուններն են:

4. ՄԻՏԱՆՆԻԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Միտաննին Առաջավոր Ասիայի այն եզակի պետականությունն էր, որի մշակութային պատմության ճնշող մասի վերաբերյալ տեղեկությունները պահպանվել են նրա մերձավոր և հեռավոր հարևաններից մեզ հասած սկզբնաղբյուրներում: Դրանք ներառում են ինչպես խուրրիերեն լեզվի հուշարձանները և օտարների կողմից «խուրրիական» որակվող մշակութային արժեքները (կրոնապաշտամունքային ոլորտի տարբեր իրողություններ, գեղարվեստական գրականություն և այլն), այնպես էլ այլ երկրներում խուրրիական անկլավների հնագիտական ուսումնասիրությունները: Այս է պատճառը, որ ավելի ճշգրիտ է խոսել ոչ թե Միտաննիի, այլ ընդհանրապես խուրրիական մշակույթի մասին: Միննույն ժամանակ ակներև է, որ որպես խուրրիական դիտվող մշակութային իրողությունների համակարգում առկա են զգալի քանակությամբ օտար ազդեցություններ՝ կապված ողջ Առաջավոր Ասիայում խուրրիական էթնիկական տարրի մեծ ցրվածության հետ:

Սակայն միննույն ժամանակ, ինչպես բուն Միտաննիի, այնպես էլ այլ երկրներում

խուրրիական անկլավներում խուրրիների հետ մեկտեղ առկա է որոշակի արիական էթնիկ շերտ (տե՛ս վերը՝ «Միտաննիի տարածքը և բնակչությունը» բաժինը), և «խուրրիական մշակույթ» տերմինը լիովին չի արտացոլում իրերի իսկական վիճակը: Այդ է պատճառը, որ խուրրիական և Միտաննիի ու հարակից շրջանների հնդարիական մշակութային իրողությունները մասնագիտական գրականության մեջ ներկայացված են որպես մեկ մշակութային արեալին հատուկ երևույթներ:

Խուրրիական մշակույթի առավել կարևոր և լավ ուսումնասիրված բնագավառը կրոնն է իր քոլոր դրսևորումներով, որին նվիրված են մեծաքանակ հետազոտություններ:

Խուրրիական դիցարանը, կրոնա-ծիսական ողջ համակարգը իր կառուցվածքով միատարր չէր: Բուն Միտաննիի, սիրիական իշխանությունների, ինչպես նաև փոքրասիական գրավոր աղբյուրներում հիշատակվող աստվածությունների ցանկերում առկա են զգալի տարբերություններ, որոնք հետևանք են խուրրիների և տարբեր էթնոմշակութային տարածաշրջանների տևական փոխազդեցությունների: Այս խուրրիաբնակ շրջանների դիցարաններում առանձնանում են համախուրրիական մի շարք աստվածներ, որոնք միաժամանակ լայնորեն երկրպագվում էին նաև այլ ժողովուրդների կողմից:

Խուրրիական դիցարանը գլխավորում էր Ամպրոպի աստված Թեշուբը՝ «աստվածների հայրը» (նույնն է, ինչ ուրարտական Թեշեբան), որի պաշտամունքային հիմնական կենտրոնը Կումմե քաղաքն էր Հյուսիսային Միջագետքում:

Թեշուբից ոչ պակաս տարածված էր Շավուշկա աստվածուհու պաշտամունքը, որը նույնացվում էր միջագետքյան-սեմական Իշտարի հետ: Շավուշկան մարմնավորում էր պտղաբերությունը, միաժամանակ նաև ուներ ռազմի աստվածուհու, ինչպես նաև երկրի հովանավորի գործառույթներ: Այս աստվածուհու արևմտասեմական համարժեքն է քանաանյան Աստարտե-Աշտորետը:

Խուրրիական հնագույն և կարևորագույն աստվածներից էր Կումարբին, որի գլխավոր պաշտամունքային կենտրոնն էր Ուրկեշ քաղաքը: Կարևոր դեր ունեին նաև ռազմի աստվածության գործառույթներով օժտված Նուպատիկ և Աշտարի աստվածները, Լուսնի աստված Կուշուխը, արևի աստված Շիմիզին և այլն:

Միտաննիում երկրպագվել են նաև զգալի թվով շումերական և սեմական աստվածներ (Անու, Ալալու, Էա, Նիկկալ = շումերական Նինգալ), որ բացատրվում է Հյուսիսային Միջագետքում սեմական էթնիկական տարրի ներկայությամբ:

Միտաննիում երկրպագվող աստվածների շարքում հիշատակվում են նաև չորսը, որոնց հնդարիական ծագումը կասկածի առարկա չէ: Դրանք են Ինդրա, Միթրա, Վարունա և Նասատյա երկվորյակները: Սրանց առկայությունն ընդունված է մեկնաբանել որպես իշխող արիական արքայատոհմի հովանավոր աստվածներ:

Միտաննական կրոնի կարևոր բաղկացուցիչ մասն է հիմնականում խեթական աղբյուրներից հայտնի խուրրիական առասպելաբանությունը, որի վրա, իր հերթին, զգալի է միջագետքյան և հյուսիսսիրիական ազդեցությունը:

Խուրրիական առասպելաբանության հենքում ընկած է աստվածների տարբեր սերունդների պայքարը իշխանության համար, որն արտացոլված է «Երկնքի արքա-

յության երգ» անվանումը կրող ստեղծագործության մեջ: Ըստ դրա՝ աստվածների երեք տարբեր սերունդներ հաջորդաբար պայքարել են միմյանց դեմ իշխանության համար, մինչև այն պահը, երբ իշխանությունը վերջնականապես անցել է Ամպրոպի աստծուն, որն իր հակառակորդներին ամփոփել է հողի մեջ:

«Ուլլիկումմիի երգը» աստվածների միջև իշխանության համար պայքարի ևս մեկ դրսևորումն է: Այստեղ Կումարբի աստվածը փորձում է պայքարել Ամպրոպի աստծո դեմ: Ծովի աստծո հետ դաշնակցելով՝ Կումարբին լճի մեջ ստեղծում է մի հսկա ժայռ: Միայն Էա աստծո օգնությամբ է Ամպրոպի աստվածը կարողանում հաղթել Ուլլիկումմիին: Ամպրոպի աստծո և Ուլլիկումմիի առասպելի ձևավորման միջավայրը, դատելով սկզբնական մոտիվի առանձնահատկություններից (հրեշի ծնունդը քարից), կարող էր ձևավորվել խորրիների՝ Հայկական լեռնաշխարհում ապրած շրջանում և միայն հետագայում, արդեն Հյուսիսային Սիրիայում ստանալ իր վերջնական տեսքը:

Կումարբիի և Ամպրոպի աստծո պայքարի թեման հանդես է գալիս նաև Խեղամմու հրեշի մասին պատմող ապքում: Հին աստվածների կողմից ստեղծված հրեշի և Ամպրոպի աստծո պայքարի մոտիվը, ըստ մի կարծիքի, հետագայում Փոքր Ասիայի վրայով կարող էր անցնել հունական առասպելաբանություն՝ հանդես գալով ի դեմս Ջևաի և Տիֆոնի մարտի:

Պահպանվել են այլ մոտիվներով ևս մի քանի առասպելական պատմություններ, որոնք թույլ են տալիս պատկերացում կազմել խորրիական դիցաբանության խոր արմատների վերաբերյալ:

Որպես հին միջագետքյան, սիրիական փոքրասիական քաղաքակրթությունների շփման գոտի՝ սկզբում Հյուսիսային Միջագետքի խորրիական իշխանությունները, այնուհետև Միտաննին մշակութային արժեքների ներկրող և փոխանցող էին: Ընդ որում, դատելով առկա նյութերից՝ այստեղ ընթանում էր տարբեր մշակութային աշխարհներում ստեղծված արժեքների հետագա զարգացման գործընթաց, որի հետևանքով, վերոհիշյալ իրողությունների սերտաձման շնորհիվ, ձևավորվում էր յուրատեսակ սիմբիոզ: Մասնավորապես, ասվածը վերաբերում է ինչպես կրոնապաշտամունքային ոլորտին, այնպես էլ սեպագրական գրավոր ավանդույթին: Միտաննեցիները դրանց պարզ ընդօրինակողները և փոխանցողները չէին, այլ որակական նոր մակարդակի հասցնող ժողովուրդ:

Միտաննական մշակույթի կարևոր բաղկացուցիչ մաս են կազմում ռազմական արվեստի ասպարեզում խորրիների ներդրումը, Առաջավոր Ասիայում -Ք. ա. II հազ. լայն տարածում ստացած մարտակառքերը, նոր տիպի աղեղը, զինվորի և ձիու համատարած գրահավորման պրակտիկան և այլն: Մարտակառքին լծվող ձիերի վարժեցման ձևերը (տե՛ս վերը) հավաստում է, որ խորրիների մոտ այն հասել էր կատարելության աստիճանի:

Տվյալներ կան հօգուտ այն ենթադրության, որ խորրիները հեղինակն էին մի շարք նորամուծությունների ապակեգործության, թանկարժեք քարերի նմանակման, բրդի ներկման և այլ ասպարեզներում:

Մեծ է միտաննական հոգևոր և նյութական մշակույթի ազդեցությունը սիրիա-

միջագետքյան աշխարհի և Փոքր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի տարբեր շրջանների վրա: Մասամբ դա բացատրվում է, ինչպես նշվել է սույն բաժնի սկզբում, խորրիների շարժունակությամբ, վերոհիշյալ տարածաշրջաններում խորրիական խոշոր անկլավների ներկայությամբ: Սակայն դրա հետ մեկտեղ Միտաննիի կենտրոնական դիրքը նշված տարածքների հանդիպավայրում նույնպես կարևոր, եթե ոչ գլխավոր գործոն պետք է համարել մշակութային արժեքների տարածման ասպարեզում: Միտաննական ազդեցությունը հատկապես նկատելի է Միջագետքի հարևան պետությունների՝ Սիրիայի և Խեթական տերության վրա:

5. ՄԻՏԱՆՆԻՆ, ԽՈՒՐՐԻՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Միտաննիի և Հայկական լեռնաշխարհի հասարակությունների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ սկզբնաղբյուրները սահմանափակ տեղեկություններ են պարունակում, որոնք գերազանցապես պահպանվել են համաժամանակյա խեթական սեպագիր տեքստերում՝ խեթա-միտաննական հարաբերությունների համատեքստում: Վերոհիշյալ աղբյուրները թույլ են տալիս ենթադրել Միտաննիի և Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավարևելյան շրջանների միջև գոյություն ունեցած բավական սերտ փոխհարաբերություններ, որոնց բնույթը, սակայն, հաճախ դժվար է բացահայտվում:

-Ք. ա. XVI դ.՝ Խեթական Հին թագավորության արքաներ Խաթթուսիլիս I-ի և Մուրսիլիս I-ի սիրիական պատերազմներից հետո, որոնք որոշակի տեղեկություններ են պարունակում ապագա Միտաննիի տարածքում գոյություն ունեցած խորրիական իշխանությունների և Հայկական լեռնաշխարհի պետական կազմավորումների միջև (տե՛ս վերը՝ «Քաղաքական պատմություն» բաժինը), ժամանակագրորեն ամենավաղ աղբյուրը Թուդխալիյաս II-ի արևելյան արշավանքներն են: Ըստ դրա՝ Միտաննիի և Իսուվան դաշնակիցներ էին, և խեթերի արշավանքի ժամանակ Միտաննիի արքա Սաուստատարը (= Սաուսադատար) աջակցում էր Իսուվային: Հավանաբար խեթական նվաճումը հիմնավոր չէր, քանի որ Թուդխալիյասի հեռանալուց հետո Իսուվան, թերևս, Միտաննիի օգնությամբ կրկին անկախացել էր: Խեթերի երկրորդ արշավանքից հետո Իսուվայի բնակչության մի մասը ապաստան է գտնում Միտաննիում, և միտաննական արքան մերժում է Թուդխալիյասի պահանջը՝ նրանց հետ վերադարձնելու:

Վերոհիշյալ իրադարձությունը հավանաբար վկայում է Իսուվայի նկատմամբ Միտաննիի ունեցած քաղաքական ազդեցության, եթե ոչ ուղղակի գերիշխանության մասին: Միտաննիի հեռացած իսուվացիները կարող էին լինել նաև խորրիներ: Իսուվայի անմիջական հարևանությամբ խորրիական էթնիկական տարրի ներկայությունը վկայված է Թուդխալիյաս II-ի հետնորդ Աննուվանդաս I-ի օրոք: Իսուվայում, անկասկած, առկա էր նաև խորրիական բնակչություն, սակայն որոշ քանակությամբ խորրիական անձնանունների կողքին, ըստ վաղագույն խեթական տեքստերի, վկայված է շատ ավելի սովոր ոչ խորրիական (խեթա-լուվիական, իսկ ավելի շատ՝ դժվար ստուգաբանելի):

Միտաննիի քաղաքական ազդեցության ոլորտում գտնվող հաջորդ կարևոր քաղաքական միավորը Իսուվայի հարավային հարևան Ալզին էր (հայկ. Աղձնիք), որի իշխող արքայատոհմը ծագումով խուրրիական էր (տե՛ս վերը):

Իսուվայի և Ալզիի նկատմամբ ունեցած քաղաքական ազդեցությունը թույլ է տալիս ենթադրել Վերին Եփրատի ու Վերին Տիգրիսի ավազանների հետ առնվազն Ք. ա. II հազ. Միտաննիի սերտ քաղաքական կապերի մասին, որը նաև զգալիորեն հետևանք էր վերոհիշյալ շրջաններում խուրրիական բնակչության ներկայության: Իսկ այդ պարագայում անխուսափելի էին անմիջական շփումները խուրրիների և հայոց լեզվի կրողների միջև, որը և արտացոլված է հայերենում՝ ի դեմս որոշակի քանակությամբ բառարմատներում: Դրանք ներկայացնում են լեզվի հիմնական բառաֆոնդը, որ կարող է վկայել, սերտ շփումներից զատ, նաև խուրրիերենի կրողների մի մասի՝ կազմավորվող հայոց էթնոսի մեջ ձուլվելու մասին:

Հայ-խուրրիական լեզվական առնչությունների առաջին հանգամանայից ուսումնասիրությունը պատկանում է Գր. Ղափանցյանին: Հետագա ուսումնասիրություններից կարևոր են Ջ. Գրեպինի, Ի. Դյակոնովի, Ն. Մկրտչյանի, Մ. Խաչիկյանի անդրադարձները այդ թեմային: Առկա նյութը քննական կերպով ներկայացված է Գ. Ջահուկյանի նշված հիմնարար աշխատության մեջ:

Կան նաև հայ-խուրրիական անվանաբանական ընդհանրություններ: Գր. Ղափանցյանը ներկայացրել է խուրրիերենից հայերենին անցած մի շարք հատուկ անուններ, որոնցից, ըստ Գ. Ջահուկյանի, քիչ թե շատ հավանական կարող են լինել հետևյալները՝ Ակիթ - Akitta/i, Արտիթ - Arditi, Բութ - Putu:

Խուրրիական առասպելաբանության մեջ կենտրոնական տեղ էր զբաղում ամպրոպի աստված Թեշուբը, որը լուսնական դարաշրջանում գերագույն աստվածն էր նաև Խեթական տերությունում: Հատկանշական է, որ Խեթական տերության և խուրրիերենի՝ այլուրեք անհետացումից շատ դարեր անց՝ Ք. ա. VIII-VII դդ., այդ դիցանվամբ կազմված խուրրիական արքայանուններ են հիշվում Հայկական լեռնաշխարհի հարավում՝ Շուբրիա երկրում և մերձակայքում (տե՛ս վերը): Դա ցույց է տալիս խուրրիերենի գոյատևումը այդ շրջանում և նրա՝ Ամպրոպի աստծո պաշտամունքի նշանավոր կենտրոն լինելը: Շուբրիան համապատասխանում է հետագա հայկական Սասունի շրջանին՝ հայոց էպոս «Սասնա ծռերի» հայրենիքին: Էպոսում Սասունը հիմնում են Սանասարը և նրա երկվորյակ եղբայր Բաղդասարը Տիգրիս գետի մի վտակի ափին: Սանասարը՝ էպոսի հերոսների զենքի՝ կայծակի թրի առաջին տերը, ամպրոպի աստծո մի կերպարն է: Հատկանշական է, որ Թեշուբը ևս երկվորյակ է. նա հղացվում է իր եղբայր Տաշմիշուի և Տիգրիս գետի հետ միասին: Ըստ այդմ՝ Սասունի հիմնադիր Սանասարը, փաստորեն, ուշ վիպական տարբերակն է տեղի հին ամպրոպային աստծու՝ Շուբրիայի Թեշուբի:

Թեշուբի շարքի առասպելների հետքեր կարելի է տեսնել նաև Հայկական լեռնաշխարհի այլ շրջաններում, որտեղ բազում հնագույն անվանումներ, նաև խուրրիական ծագման, անցել են հայերենին: Թեշուբի պաշտամունքի կենտրոնները հայտնի են սեպագիր Kumm- տարրով անվանումներով (Kummi, Kummiya): Հայոց գերագույն Արամազդ աստծու, որն ի թիվս այլոց նաև ամպրոպային հատկանիշներ ուներ, պաշտամունքի կենտրոնն էր Անի-Կամախը, որը խեթական ժամանակներում հայտնի էր

որպես Kummaha և ամպրոպի աստծո պաշտամունքի նշանավոր կենտրոնն էր: Սա ցույց է տալիս, որ Արամազդը տեղի Թեշուբի մի ժառանգորդն էր: Կումայրին (ներկա-յիս Գյումրի), թերևս, նույնպես կապված է Թեշուբի շարքի առասպելների հետ:

Թեշուբի գլխավոր հակառակորդներից էր քարե հրեշ Ուլլիկումմին (Սևlikummi, հաճախ մեկնաբանվում է որպես «Կումմի քաղաքը կործանող», որն ընդամենը «ժողովրդական ստուգաբանություն» է): Այս անունը, որտեղ -mmi-ն կարող է խուրրիական մի ածանց լինել, շատ է հիշեցնում Վանի թագավորության աղբյուրների մերձսևանյան Seliku-ni/hi երկրի անվանումը (ni-ն և hi-ն ածանցներ են), որը հին հայկական Գեղարքունին է (հետագայում՝ Գեղարքունիք, հայերենին բնորոշ w > գ զարգացմամբ): Հենց Selikuni երկրի տարածքներում են կենտրոնացած հնագույն Հայաստանի հանելուկային «վիշապ» քարակոթողները, և կարելի է ենթադրել, որ այդ տեղանունը, ի վերջո, կապված է հին առասպելական քարե հրեշի անվան հետ:

Հայկական լեռնաշխարհի հարավային և հարավարևելյան բարձրադիր շրջաններում խուրրիական էթնիկ տարրի գոյատևումը, որի հիմնավոր ապացույցներն են խուրրիերենից հայերենին անցած զգալի թվով բառերը (տե՛ս վերը), ենթադրում է խուրրիալեզու բնակչության որոշ մասի ձուլում հայ ժողովրդի մեջ: Երկու էթնոսների շփումները պետք է բավական ինտենսիվ և սերտ լինեին հատկապես Ք. ա. II հազ. վերջերից սկսած, երբ միջազենության գրավոր աղբյուրները հիշատակում են Հայկական լեռնաշխարհից դեպի Հյուսիսային Միջագետք տեղ գտած էթնիկական տեղաշարժերի մասին: Այս տեսանկյունից դիտարկելով հայ ժողովրդի կազմավորման խնդիրը՝ հայագիտության առջև կարող են նոր հեռանկարներ բացվել՝ կապված Պատմահայր Մովսես Խորենացու պատմության մեջ հիշատակվող Հայկազունների ցանկի հետ:

Ակնհայտորեն Պատմահայրը իր ցանկում միավորել է տարբեր ժամանակներում Հայկական լեռնաշխարհում և հարակից շրջաններում գոյատևած տարբեր պետական կազմավորումների տիրակալների: Դրանցից մեկը կարող էր լինել, թերևս, Միտաննի, որի տիրույթները տարածվում էին Լեռնաշխարհի Տավրոսյան գոտու զգալի հատվածի վրա՝ ընդհուպ մինչև Իսուվա-Շուփք: Այդպիսի ենթադրության օգտին է վկայում միտաննական արքայացանկի երկու արքաների՝ Պարատարնայի և Վասաշատտայի անունների նմանությունը համապատասխանաբար Խորենացու ցանկի Պարետի և Վաշտակի հետ:

ՄԻՏԱՆՆԻ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

Պարատարնա.....(1470-ական թթ.)	Տուշրաթթա..... (1365-1335/1322)
Կիրտա	Արտադամա II
Շուտտարնա I.....(1450-ական թթ.)	Շուտտարնա III
Պարսադատտար.....(1440-ական թթ.)	Շատտիվազա
Սաուսատտար (Սաուսադատտար).....	Շատտուարա I.....(1290-ական թթ.)
	(1420-ական թթ.)
Արտադամա I..... (1400-ական թթ.)	Վասաշատտա
Շուտտարնա II..... (1380-ական թթ.)	Շատտուարա II
Արտաշունարա	Ատալ-Թեշուբ.....(1220-ական թթ.)

Է Բ Լ Ա

1. ԷԲԼԱՅԻ ՔԱՂԱՔ-ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Միջերկրական ծովի արևելյան ավազանում մարդու բնակության հետքերը վերաբերում են հինքարեդարյան ժամանակաշրջանին: Այն նաև համաշխարհային քաղաքակրթության հնագույն օջախներից մեկն է՝ կազմելով Առաջավոր Ասիան ուսումնասիրողների կողմից «Բարեբեր մահիկ» անվանակոչված տարածաշրջանի արևմտյան մասը: Այս տարածքը մոլորակի երկրագործական հնագույն օջախներից է, ընդ որում այստեղ է վկայված բացառիկ կարևորություն ունեցող վաղ երկրագործական բնակատեղիներից Երիքովը (Յերիխոն), որը թվագրվում է Ք. ա. VIII-VII հազ.: Տարածաշրջանում երկրագործական մշակույթը սկսեց լայն տարածում ստանալ Ք. ա. VI հազ.¹ ծնունդ տալով նստակյաց, երկրագործական բնակչությամբ բնակավայրերի:

Արևելամիջերկրածովյան ավազանը Ք. ա. IV հազ. վերջին և III հազ. հիշեցնում է տարբեր ցեղերի ու ժողովուրդների մի խառնարան: Նշված ժամանակաշրջանում մի կողմից տարածաշրջան են ներխուժում սեմալեզու ցեղերը, որոնցից հիշատակելի են քանաանցիները, ամորեացիները (ամովրացիները), իրենց հետագա պետության անվամբ պայմանականորեն «Էբլացիներ» կոչվողները, խուրրիական, ինչպես նաև հնդեվրոպական ցեղերը: Եթե սեմալեզու զանգվածները տարածաշրջան մուտք գործեցին հարավից, ապա խուրրիական և հնդեվրոպական էթնիկ տարրերը ներհուսեցին Հայկական լեռնաշխարհից և Փոքր Ասիայից:

Ք. ա. III հազ. սկզբներին արևելամիջերկրածովյան ավազանում հիմնվեցին առաջին քաղաքային տիպի բնակավայրերը, որոնք դարձան վաղ պետական կազմավորումների կենտրոններ: Դրանցից նշանավոր էին Ալալախը, Էբլան, Յարմուտին, Բիրբուսը, Տյուրոսը, Հագորը և այլն: Նշվածներից Ալալախում արդեն Ք. ա. IV հազ. վերջերին և III հազ. սկզբներին առկա է հնագույն տաճար, որը վկայում է վերջինիս կրոնապաշտամունքային կենտրոն լինելու մասին: Հետագայում, հատկապես Ք. ա. II հազ. առաջին կեսին Ալալախում առկա է պալատական համալիր, երկիրը քաղա-

քական, առևտրական և մշակութային հարաբերություններ ուներ ոչ միայն հարևան, այլև հեռավոր, հատկապես միջագետքյան հնագույն պետական կազմավորումների հետ, ընդ որում՝ Ալալախում կիրառվում էր միջագետքյան սեպագիրը:

Ք. ա. III հազ. կեսերին տարածաշրջանի խոշորագույն քաղաքական միավոր է դառնում Էբլան (Թել Մարդիխ հնավայրը՝ Հալեպից մոտ 55 կմ հարավ-արևմուտք), որի քաղաքական և տնտեսական ազդեցության տակ Ք. ա. XXV-XXIII դդ. հայտնվեց Սիրիայի մեծ մասը: 1970-ական թթ. Էբլայի հնավայրը պեղող իտալական արշավախումբը Պ. Մատիեի գլխավորությամբ հայտնաբերեց շուրջ 17 հազար սեպագիր սալիկ, որի հիմնական մասը կազմում էր Էբլայի արքայական արխիվը (հայտնաբերված բնագրերի թիվը հետագայում աճեց): Արձանագրությունների ընթերցումից պարզվեց, որ նշված ժամանակաշրջանում Էբլան եղել է քավականին հզոր պետություն, որն առևտրական լայն ցանցով կապված էր շրջակա երկրների հետ: Տեքստերի զգալի մասը տնտեսական բնույթի վավերագրեր են, որոնք վերաբերում են Էբլայի արքունի ծախսերին, այլ երկրների ու քաղաքների հետ ունեցած առևտրափոխանակային և այլ հարաբերություններին:

Էբլայից հայտնաբերված սեպագիր արձանագրությունները որոշակի պատկերացում են տալիս նաև պետական կառուցվածքի, հասարակական և սոցիալական հարաբերությունների, հավատալիքների մասին: Էբլայում պետության գլուխ կանգնած էր արքա-քրմապետը, որը կրում էր malikum (բառացի՝ «նա, ում խորհուրդ են տալիս» կամ «նա, ով խորհուրդ է ընդունում») տիտղոսը: Շումերա-աքքադական արձանագրություններում Էբլայի արքա-քրմապետը կրում էր lugal և en («արքա», «տեր», «տիրակալ») տիտղոսները: Արքան ուներ խորհրդականներ, արքունիքում գործում էին մեծ թվով նշանակովի պաշտոնյաներ: Դատելով փաստերից՝ Էբլայի կենտրոնական շրջանի բնակչության թիվը հասնում էր մինչև 30 հազարի, իսկ ողջ պետությանը՝ մոտ 260 հազարի, որը բավականին մեծ թիվ էր այն ժամանակներում:

Էբլայի ներքին և արտաքին կյանքում առանցքային նշանակություն ուներ առևտուրը, հատկապես միջագետքյան տարանցիկ առևտուրը: Առևտրական ճանապարհներին տիրելու, դրանք վերահսկելու համար Ք. ա. XXIV-XXIII դդ. սուր պայքար ծավալվեց Էբլայի և Աքքադի տերության միջև: Սարգոն Աքքադացու՝ Եփրատի հովտով դեպի հյուսիս և արևմուտք կատարած արշավանքի մասին տեքստերում Էբլան հիշատակվում է որպես նրա կողմից նվաճված քաղաք: Այդ նվաճումը, սակայն, ճակատագրական չեղավ, և Էբլան շարունակեց կարևոր միջագետքյան դերակատարումը:

Էբլայի վերջնական նվաճումն իրականացրեց Սարգոնի թոռ Նարամսինը Ք. ա. XXIII դ. վերջերին, երբ Էբլայի արքան էր Իբբի-Ջիբիրը: Էբլայի նվաճումից և ավերումից հարյուրամյակներ անց (Ք. ա. II հազ. վերջերին) Էբլան կրկին վերելք ապրեց, քաղաքը շրջապատվեց նոր պարիսպներով, վերակառուցվեց պալատը, սակայն այլևս չունեցավ իր նախկին հզորությունը:

2. ԷԲԼԱՆ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԸ

Հայկական լեռնաշխարհի վաղ հասարակությունների և Էբլայի հարաբերության հարցը քննարկման առարկա է դարձել դեռևս այն ժամանակներից, երբ հայտ-

¹ Արևելամիջերկրածովյան ավազանի վաղնշակա ժամանակաշրջանների պատմության մասին կա մեծաքանակ գրականություն: Առավել ընդհանրացնող աշխատանքներից տես Kenyon K.M., Archaeology in the Holy Land, London, 1960; Albright, W. F., The role of the Canaanites in the history of civilization, Appendix to The Bible and the Ancient Near East, Essays in Honor of William Foxwell Albright (Ed. E. G. Wright), Garden City/New York, 1961, 328ff; Кинк X. A., Восточное Средиземноморье в древнейшую эпоху, Москва, 1970; Matthiae P., Ebla. Un Impero Ritrovato, Torino, 1977; Matthiae P., Ebla. An Empire Rediscovered, London-Sydney-Auckland-Toronto, 1980; Pettinato G., The Archives of Ebla. An Empire Inscribed in Clay, New York, 1981; Cagni L. (ed.), La Lingua di Ebla. Atti del convegno internazionale (Napoli, 21-23 aprile 1980), 1981; Cagni 1984; Cagni 1987; ДЭ; Klengel H., Syria 3000 to 300 B.C., Berlin, 1992; Alström G.M., The History of Ancient Palestine from the Paleolithic Period to Alexander's Conquest, Sheffield, 1993.

ԿԱՍԿԵՐ

1. ՏԱՐԱԾՔԸ

Կասկեր անվանումը կրող ընդարձակ էթնիկական խմբի վերաբերյալ ամենավաղ տեղեկությունները պահպանվել են հիմնականում խեթական սեպագիր աղբյուրներում դեռևս խեթական Հին թագավորության շրջանից: Որոշ թոռուցիկ հիշատակություններ կան նաև Ք. ա. XII դ. և Ք. ա. VIII դ. ասորեստանյան սեպագիր արձանագրություններում¹:

Ըստ խեթական աղբյուրների՝ Կասկա կամ Գասգա ընդհանրական անվանումը կրող ցեղերը զբաղեցնում էին խեթերից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած շրջանները: Խեթերին կասկերից բաժանում էին Արևելապոնտական լեռները: Արևելքից արևմուտք կասկերի տարածքը սկսվում էր Հալիս (Կըզըլըրմակ) գետի վերին ավազանից մինչև Վերին Եփրատ՝ ներկայիս Երզնկայից արևմուտք, ներառյալ Իրիս (Յեշիլըրմակ) և Լիկոս (Գայլ-գետ, Կելկիտ) գետերի հովիտները: Այստեղից դեպի արևմուտք նրանք հիշատակվում են ընդհուպ մինչև Հալիսի գետաբերանի շրջանը: Հնարավոր է՝ Հալիս և Լիկոս գետերի ակունքներից հյուսիս-արևելք՝ ներկայիս Տրապիզոնի և Բաթումի շրջանները նույնպես բնակեցված են եղել կասկական ցեղերով:

Կասկերի էթնոլեզվական պատկանելության խնդիրը առ այսօր քննարկման առարկա է: Այդ հարցի պարզաբանման համար որպես աղբյուր են ծառայում խեթական աղբյուրներում պահպանված կասկական տեղանունները և անձնանունները:

Կասկերի անվանումը վաղուց համադրվել է հյուսիսկովկասյան չերքեզների անվան հետ: Ք. ա. II հազ. վերջի ասորեստանյան աղբյուրները, որպես կասկերի անվան համարժեք, օգտագործել են նաև *սպիշլու* (աբեշլա) ցեղանունը, որը նման է արևմտակովկասյան *սիշլուս* ցեղանվանը: Կասկերի լեզուն մերձեցվել է նաև խաթերենի հետ: Մասնագետները նշում են խաթերենի ազգակից լինելը կովկասյան լեզուներին, մասնավորապես՝ ուրիխերենին, չերքեզերենին կամ աղղղերենին և արխազերենին:

¹ Կասկական ցեղերը Ք.ա. II հազարամյակում բացառապես հիշատակվում են խեթական սեպագիր աղբյուրներում: Կասկերի քաղաքական պատմության և լեզվական նյութերի ամփոփ ուսումնասիրությունը տես Schuler von E., Die Kaškaer, Ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien, Berlin, 1965; Гиоргадзе Г.Г., К вопросу о локализации и языковой структуре каскских этнических и географических названий, ПС 1, 1961, 161սլ. խեթա-կասկական փոխհարաբերությունների մասին տես սույն հատորի «Խեթական պետությունը» գլխում:

նաբերվեցին Նարամսինի արձանագրությունները, որոնցում նա հանդես է գալիս «նվաճողն Արմանումի և Էրլայի» տիտղոսով: Խնդրի արծարծումն ավելի ակտիվացավ, երբ հայտնի դարձավ, որ Էրլայի տեքստերում ևս Արմին երբեմն հիշատակվում է Էրլայի հետ (Eb-la^{ki} wa Ar-mi^{ki}), ուստի բազմաթիվ ուսումնասիրողներ իրավամբ այդ գույզը համադրեցին աքքադական աղբյուրների՝ «Արմանումի ու Էրլայի» հետ:

Ինչպես արդեն նշվել է (տե՛ս «Բաժին 1. Մաս 1. Գլուխ 1»), եղել են փորձեր՝ Արմանումը Հալեպի շրջանում տեղադրելու կամ Հալեպի հետ նույնացնելու, որոնք, սակայն, լիովին անհիմն դարձան, երբ հայտնի դարձավ, որ Էրլայական բնագրերը Արմիից անկախ հիշատակում են Հալեպը՝ Խալաբի ձևով. այն նույն կերպ հիշվում է նաև Մարիից գտնված տեքստերում:

Արմին բազմիցս հիշատակվում է Էրլայի տեքստերում: Դրանցից մեկում Արմին նշվում է Էրլայից և Դուլու քաղաքից հետո: Այսինքն՝ այդ քաղաքը գտնվել է Ուրսաումի (Եղեփայի) և Խառանի շրջանում: Էրլա-Դուլու-Արմի հաջորդականությունը հուշում է, որ վերջինս պետք է գտնվեր առաջին երկու բնակավայրերը կապող զծի ուղղության վրա, այն է՝ Եփրատի Հայկական Տավրոսով անցման շրջանում կամ հարակից տարածքներում:

Մեկ այլ տեքստում հիշվում են Արմիի երկու բնակիչ, որոնցից մեկն անվանված է Հայայի միջնորդ (լիագոր): Այնուհետև նույն բնագրում հիշատակվում է Ազի տեղանունը (կամ, գուցե, ցեղանունը): Վերջինս ակնհայտորեն հիշեցնում է խեթական աղբյուրների Ազգի երկրանունը, որը, թերևս, «Հայասայի» համարժեքն է: Մի ուրիշ բնագրում Հայա անունը կապվում է Խութիմու տեղանվան հետ, որը հիշատակվում է Ջաբարում, Ուտիգա/ու, Ուրշու (Ուրսաում), Իրրիտում, Խառան և Թիշում քաղաքներից հետո: Այսպիսով, մի կողմից՝ Արմիի հիշատակումն Ազիից առաջ, մյուս կողմից՝ Արմիի կապվելը Խութիմուի հետ Հայա ցեղանվան (հատուկ անվան) միջոցով, ինչպես նաև վերը բերված համադրումները վկայում են, որ Էրլայի բնագրերում հանդիպող *Արմի* երկրանունը վերաբերել է Հայկական լեռնաշխարհի տարածքին:

Արմիի՝ Հայկական լեռնաշխարհում գտնվելու աներկբա ապացույցն է նաև այն փաստը, որ այն Էրլայի բնագրերում առավել հաճախ հանդիպում է Ուրսաում (Ուրշու), Դուլու, Խառան, Ուտիգա/ու, Կակմ(ի)ում, Խազուվան (Խասսու), Նագար, Թուր, Էսու (Էշու), Գուդադանում, Արադիգ, Մանուվատ, Էբալ և այլ բնակավայրերի հետ, որոնք բոլորն էլ գտնվել են Հայկական լեռնաշխարհի հարավում, հարավ-արևմուտքում և կից շրջաններում:

Ըստ Էրլայի տեքստերի՝ Հայկական լեռնաշխարհի տարածքում հիշատակվող իշխանություններից առնվազն երեքը՝ Արմին, Ուրսաումը և Կակմիումը, ունեցել են սեփական արքաներ: Չնայած այն հանգամանքին, որ նշված երեք թագավորությունների և Հայկական լեռնաշխարհի ու հարակից տարածքների երկու տասնյակից ավելի բնակավայրերի վերաբերյալ մեզ են հասել մի քանի տասնյակ տեքստեր, դրանք հայագիտության մեջ դեռևս չեն դարձել լուրջ քննարկման առարկա: Նշենք նաև, որ տնտեսական բնույթի վավերագրերից բացի, Էրլայից գտնվել են նաև Հայկական լեռնաշխարհին վերաբերող այլ տեքստեր, որոնք նույնպես չեն քննարկվել հայագիտական շրջանակներում:

Մինչև Ք. ա. XIV դ. կեսերը կասկերը դեռևս գտնվում էին տոհմատիրական փուլում: Հայտնի է, որ միայն Մուրսիլիս II-ի օրոք էր, որ կասկական Տիբիյա երկրում առաջին անգամ հանդես է գալիս արքայական իշխանություն:

Համաձայն խեթական աղբյուրների՝ կասկերը իրենց հաճախակի կազմակերպած ավարատուական հարձակումներով մշտական սպառնալիք էին խեթերի բնօրրանի՝ մայրաքաղաքին հարող տարածքի համար: Կասկերը մարտունակ զինվորներ էին և հաճախ զինծառայության էին վերցվում խեթերի կողմից:

2. ԿԱՍԿԵՐԸ Ք. Ա. XVI-XIII ԴԱՐԵՐՈՒՄ

Կասկական ցեղերի մասին առաջին գրավոր վկայությունները վերաբերում են Հին խեթական թագավորության շրջանին: Այս և հետագա դարերում կասկերի և խեթերի փոխհարաբերությունները բնութագրվում են բացահայտ հակամարտության դրսևորումներով, հատկապես Խեթական պետության արտաքին քաղաքական խնդիրների սրման պայմաններում: Խաթթիի հյուսիսային և հյուսիսարևելյան սահմանների երկայնքով ցրված կասկական բազմաթիվ ցեղերը օգտագործում էին յուրաքանչյուր առիթը՝ ասպատակելու սահմանամերձ շրջանները՝ երբեմն հասնելով նույնիսկ մայրաքաղաք Խաթթուսասին: Գրեթե յուրաքանչյուր խեթական արքայի գործունեությունը լուսաբանող տեքստերում առկա են կասկերի հետ բախումներն արտացոլող տեղեկություններ: Կասկերի այսպիսի դերակատարումը Խեթական պետության հետ ունեցած փոխհարաբերություններում առաջին հերթին պայմանավորված էր ոչ այնքան կասկերի մարտունակությամբ կամ մեծաքանակությամբ, ինչպես նաև քաղաքական կազմակերպության ցածր մակարդակով, որքան նրանց զբաղեցրած տարածքի առանձնահատկություններով:

Խեթերի համար հյուսիսային Փոքր Ասիան տնտեսական լուրջ նշանակություն չուներ: Այն ընկած էր լեռնային մի շրջանում, որի հիմնական հարստությունը, բացի թերակղզու հյուսիս-արևմուտքի հարուստ մետաղահանքերից, լեռնաբնակ կասկերի անասնապահական տնտեսությունն էր: Բացի այդ՝ կասկական տարածքը հենու էր ժամանակի առևտրական ուղիներից: Այստեղ չկար այն տնտեսական մեծ ակնկալիքը, որն առկա էր հարավում, արևմուտքում և արևելքում: Այդ էր պատճառը, որ խեթերին կասկերը մտահոգում էին այնքանով, որքանով անհրաժեշտ էր ապահովագրել բուն Խաթթիի հյուսիսային սահմանները՝ այլ ուղղություններում ծավալվող էքսպանսիայի համար: Այսպիսով՝ կասկերի և խեթերի հարաբերություններում առաջինները հանդես էին գալիս որպես Խաթթիի անկառավարելի հարևաններ, որոնց նկատմամբ անհրաժեշտ էր մշտական աչալրջություն:

Սակայն խեթա-կասկական պարբերաբար կրկնող ընդհարումները ամենևին չեն նշանակում, որ նրանց միջև այլ բնույթի փոխհարաբերություններ չեն եղել: Աղբյուրների վկայությամբ՝ կասկական ցեղերից խեթերը մշտապես զինվորներ էին

հավաքագրում՝ պայմանագրային հիմունքներով: Որպես հմուտ մետաղագործներ՝ կասկ-արհեստավորների արտադրանքը հայտնի էր ոչ միայն Խաթթիում, այլև այլ երկրներում:

Կասկերի առաջին հիշատակությունը վերաբերում է խեթական արքա Խանտիլիս I-ի կառավարման ժամանակաշրջանին (Ք. ա. XVI դ. երկրորդ կես): Խանտիլիսը ստիպված էր պատերազմներ մղել երկու ճակատով՝ սիրիական խուրրիների և հյուսիսի կասկերի դեմ: Օգտվելով այն հանգամանքից, որ խեթական արքայի հիմնական ուշադրությունը բևեռված էր խուրրիների վրա, կասկերը նվաճեցին և ավերեցին խեթերի կարևորագույն պաշտամունքային կենտրոններ Ներիկ և Տիլիուրա քաղաքները, որի հետևանքով խեթական պետությունը կտրվեց սևծովյան ափամերձ տարածքներից: Խանտիլիսը հրամայեց նոր ամրություններ կառուցել Խաթթուսասի և հարակից քաղաքների շուրջ՝ հիմնականում հյուսիսից սպասվող վտանգի դեմ:

Խեթական արքա Տելեպինուսի (Ք. ա. XVI դ. վերջ) կառավարման նախօրեին խեթական պետությունը գերազանցապես սահմանափակվում էր Խաթթիի բնօրրանով՝ մայրաքաղաքի շրջակայքով և որոշ այլ տարածքներով: Հարավ-արևելքից խուրրիները, հյուսիսից և հյուսիս-արևելքից կասկական ցեղերը, իսկ արևմուտքից Ասսուվա հավաքական անվանումը կրող մանր պետականությունները պարբերաբար ասպատակում և ավերում էին երկիրը: Խեթերը դժվարությամբ էին կարողանում պահպանել իրենց գերիշխանությունը ենթակա տարածքներում. ավելին՝ նրանց պետության բնօրրանը նույնպես վտանգի տակ էր: Տելեպինուսին հաջողվեց վերականգնել Խեթական պետության թուլացած դիրքերը և որոշ չափով ամրապնդել պետությունը:

Թուդիսալիյաս II-ը (Ք. ա. XV դ. երկրորդ կես) կարողացավ նվաճել գրեթե ողջ Փոքր Ասիան: Սակայն այն ժամանակ, երբ խեթերի հիմնական ուժերը գտնվում էին թերակղզու արևմուտքում, հյուսիսից ներխուժած կասկերը ավերեցին Խեթական պետության կենտրոնական շրջանները: Թուդիսալիյասը ստիպված էր վերադառնալ Խաթթուսաս: Խեթական զորքերին հաջողվեց մաքրել երկիրը կասկերից, այնուհետև, հետապնդելով նրանց՝ ներխուժել Կասկա, որտեղ նրանց դեմ դուրս եկավ կասկերի միացյալ բանակը: Ճակատամարտը տեղի ունեցավ Տիվարա բնակավայրի մոտ, որտեղ խեթերը հաղթանակ տարան և սկսեցին զբաղել լեռներում գտնվող կասկերի դժվարամատչելի ամրությունները: Հաջորդ տարի Թուդիսալիյասը կրկնեց իր արշավանքը և նվաճեց Կասկա երկիրը:

Թուդիսալիյասին հաջորդած Առնուվանդաս I-ի օրոք (Ք. ա. XV դ. վերջ - XV դ. սկիզբ) կասկերը սկսել էին ասպատակել խեթահպատակ շրջանները՝ ավերելով նույնիսկ մայրաքաղաքին հարող բուն խեթական բնակավայրերը: Ավերվել և ամալացել էին խեթա-կասկական սահմանային գոտում գտնվող մի շարք խեթական պաշտամունքային կենտրոններ՝ Ներիկը, Խուրսաման, Կաստաման, Սերիսան, Խիմուվան և այլ բնակավայրեր (Հալիսի ստորին հոսանքներում): Այստեղի տաճարները թալանվել էին, իսկ սպասարկող անձնակազմը գերեվարվել էր: Առնուվանդասը ջանքեր էր գործադրում՝ ամրապնդելու հյուսիսային սահմանը: Այդ նպատակով

նա պայմանագրեր կնքեց կասկական ցեղերի հետ, որից հետո միայն ուժերի գերագույն լարումով կարողացավ վերահսկողության տակ առնել իրավիճակը: Սակայն նրանից հետո իրավիճակը կրկին սրվեց:

Ք. ա. XIII դ. Խաթթուսիլիս III-ի օրոք կազմված տեքստում նկարագրվում է Առնուվանդասից հետո Խեթական տերությունում տիրող ծայրաստիճան ծանր վիճակը: Խաթթիին հարևան մի շարք երկրներ հարձակվել էին և նվաճել խեթական բազմաթիվ տարածքներ: Այսպես՝ կասկերը ավերել էին պետության կենտրոնական շրջանները՝ մայրաքաղաք Խաթթուսասով հանդերձ, իսկ Նենասսա քաղաքն իրենց սահմանն էին դարձրել: Հնարավոր է, որ կասկերի լայնածավալ հարձակման պատճառով խեթական հիմնական ուժերը կենտրոնացել էին հյուսիսային ուղղության վրա, հատկապես որ վտանգված էր մայրաքաղաքը, ինչն անպաշտպան էր թողել խեթերի այլ սահմանամերձ շրջանները:

Թուդիսալիյաս III-ից (Ք. ա. XIV դ. առաջին կես) մեծ ջանքեր պահանջվեցին կորցրած տարածքները հետ գրավելու համար: Այդ պայքարում նրան օգնում էր որդին՝ արքայազն Սուպալիուլիումասը: Խեթական արքան իր հետագա գործողությունների համար հենակետ դարձրեց Վերին երկիրը:

Նախ և առաջ հարկավոր էր Վերին երկիրը անվտանգ դարձնել Կասկա և Հայասա երկրների հարձակումներից: Այդ երկրների դեմ արշավանքը ղեկավարել է Սուպալիուլիումասը, որը, չհանդիպելով Հայասայի գործին, բախվել է Կասկա երկրի գործերին և հաղթել նրանց: Ավելի ուշ արշավանքը կրկնվել է, և Սուպալիուլիումասի գործը նորից հանդիպել է կասկերի մեծաքանակ ուժերին, որոնց օգնության էին եկել օգնական ուժեր: Խեթերին հաջողվել է ծուղակը գցել նրանց և ջախջախել՝ մեծ քանակությամբ գերիներ վերցնելով:

Այնուհետև բախումները շարունակվել են բուն Խաթթիում: Այստեղ կասկական ուժերն առժամանակ նահանջեցին՝ հնարավորություն տալով խեթերին վերականգնելու իրենց ավերված քաղաքները: Թուդիսալիյասն այժմ իր ուժերն ուղղեց դեպի Փոքր Ասիայի արևմուտք: Օգտվելով խեթական բանակի հեռացումից՝ կասկերը Կատիսարիյա և Գազգապա բնակավայրերի կողմից (Հալիսի ստորին հոսանքներում) հարձակվեցին և նորից ավերեցին արքայազն Սուպալիուլիումասի ամրացրած խեթական քաղաքները: Թուդիսալիյասը վերադարձավ և գրավեց դրանք, իսկ օգնության եկած կասկական ուժերին պարտության մատնեց: Սակայն Թուդիսալիյասին չհաջողվեց երկար ճաշակել իր հաղթանակի պտուղները. խեթա-կասկական պատերազմը դեռ ավարտված չէր: Շուտով կասկերի տասներկու ցեղերից բաղկացած գործը ներխուժեց Խաթթի: Սուպալիուլիումասը մեկ անգամ ևս հաղթեց նրանց և հետ խլեց վերցրած ավարը:

Թուդիսալիյաս III-ին հաջորդած Սուպալիուլիումաս I-ի օրոք (Ք. ա. 1344-1322 թթ.) սկսվեց Խաթթիի նոր վերելքը: Օգտվելով խաղաղությունից՝ խեթական բնակչությունը սկսեց վերադառնալ իր նախկին բնակավայրերը, որոնք գտնվում էին կասկական տարածքների մոտ: Սակայն այն բանից հետո, երբ կասկերին հայտնի դարձավ, որ խեթական բանակում համաճարակ է տարածված, նրանք հարձակվեցին և

գերեվարեցին վերաբնակիչներին: Նրանք նաև գրոհեցին այնտեղ գտնվող խեթական գործերի ամրացված ճամբարների վրա: Սակայն խեթերին հաջողվեց հետ մղել կասկերի գրոհը և ստիպել նրանց հեռանալ այդ տարածքներից: Սուպալիուլիումասին հաջողվեց նաև կասկերին քշել Իստախարա երկրից և այնտեղ վերականգնել խեթական տիրապետությունը: Սուպալիուլիումասն իրեն ենթարկեց կասկերի «հանրահայտ Տիմուխալա քաղաքը»:

Մուրսիլիս II-ն իր տարեգրության մեջ նշում է, որ այն ժամանակ, երբ իր հայրը (Սուպալիուլիումաս I-ը) կռիվներ էր մղում խուրրիական երկրներում, Կասկա երկիրը թիկունքից հարվածեց և ավերեց տերության տարածքների մի մասը, իսկ մի մասն էլ զավթեց: Այստեղ առաջին անգամ հիշատակվում է կասկական Տիբիյա երկրի առաջնորդ Պիխսունիյան, որը հարձակվել էր Վերին երկրի վրա և գրավել Իստիտինա երկիրը, այնուհետև հասել մինչև Ջազգիսա երկիր:

Խեթա-կասկական մի հերթական բախում էլ տեղի էր ունեցել նախկինում խեթերին պատկանող սրբազան Ներիկ քաղաքի մոտ: Ըստ խեթական աղբյուրի՝ խեթերն այստեղ հաղթանակ են տարել, բայց Ներիկն այդ ժամանակ չի ներառվել Խաթթիի կազմի մեջ: Դա իրականացվեց միայն Սուպալիուլիումասի թոռան՝ Խաթթուսիլիս III-օրոք:

Սուպալիուլիումասի օրոք թեև Խաթթին ջախջախեց Միտաննիին, նվաճեց Սիրիան ու սկսեց մրցակցել Եգիպտոսի հետ, սակայն կասկերի հարցն այդպես էլ մնաց չլուծված: Այն ժամանակ, երբ հիմնական խեթական ռազմական ուժերը բացակայում էին բուն Խաթթիից, կասկերը վերսկսեցին իրենց հարձակումները խեթական տարածքների վրա, և խեթերը հարկադրված եղան շատ տարիներ վատնել նրանց ասպատակությունների հետևանքները վերացնելու համար:

Հարևան երկրները սկսեցին թշնամանալ Խեթական տերության դեմ դեռևս Սուպալիուլիումաս I-ի կենդանության վերջին տարիներին, երբ համաճարակ էր տարածվել Խաթթիում: Այնուհետև թշնամիների թիվը գնալով աճեց՝ պայմանավորված այդ արքայի և հաջորդ գահակալի՝ Առնուվանդաս II-ի (Ք. ա. 1322-1321 թթ.) մահով: Իսկ երբ խեթական գահը փոխանցվեց դեռահաս Մուրսիլիսին, քաղաքական իրավիճակը երկրում չկարգավորվեց:

Մուրսիլիս II-ը (Ք. ա. 1321-1295 թթ.) իր տարեգրություններում հաղորդում է այն մասին, որ թշնամի երկրները, այդ թվում նաև Կասկան, հարձակվել էին խեթական տարածքների վրա և ավերել դրանք: Իր կառավարման առաջին երկու տարիներին Մուրսիլիսը, այլ երկրների ապստամբությունները ձնելուց զատ, զբաղված էր նաև կասկերի արշավանքների հետևանքները վերացնելով և նրանց դեմ պատժիչ գործողություններ ձեռնարկելով: Իր թագավորության միայն երրորդ տարում նրան հաջողվեց հաղթել կասկերին և իր ուժերն ուղղել դեպի Արցալա երկիր:

Իր գահակալության հինգերորդ տարում Մուրսիլիս II-ը լեռնային Ասիարպայա երկրում գրոհեց կասկական ուժերի վրա և հաղթելով նրանց՝ ազատագրեց դեպի Պալա երկիր (անտիկ շրջանի Պալիլագոնիա) տանող ճանապարհները: Հաջորդ տարի խեթերը նոր պատժիչ արշավանք ձեռնարկեցին Ջիսարիյա երկրի կասկերի դեմ, որոնց մեղադրեցին դեռևս Թուդիսալիյաս III-ի ժամանակ Տարիկարիմու

լեռնային երկրի կողմից Խաթթուսասի վրա արշավելու համար: Հավանաբար սա միայն պատճառ էր, որպեսզի արդարացվեն խեթերի կողմից պատժիչ արշավանքի ընթացքում կասկերի դեմ գործադրված դաժանությունները: Զիխարիյան Տարիկարիմուի հետ միասին նվաճվեց, իսկ քնակավայրերն ավերվեցին: Այս երկիրը, հավանաբար, մոտ էր գտնվում մայրաքաղաքին, այդ պատճառով Մուրսիլիսն ավերեց այն, որպեսզի կասկերի հերթական արշավանքի համար հենակետ չդառնա:

Սակայն Վերին երկրի անվտանգության հարցն այդպես էլ մնաց չլուծված, քանի որ այն սահմանակից էր ոչ միայն Կասկա երկրին, այլ նաև Խաթթի մեկ այլ վտանգավոր թշնամուն՝ Հայասային, որը նույնպես սպառնում էր այս խեթական երկրամասին և ժամանակ առ ժամանակ նաև համագործակցելով կասկերի հետ՝ ներխուժում այդ տարածքներ: Վտանգն առավել ցայտուն դարձավ, երբ կասկական Տիրիյա երկրի առաջնորդ Պիխսունիյան իրեն հռչակեց արքա: Եթե նախկինում խեթերը բախվում էին լեռնաբնակ կասկական տարբեր ցեղերի հարձակումներին, որոնք, հավանաբար, միավորվում էին միայն խեթերի դեմ արշավանքների ժամանակ, ապա այժմ՝ Պիխսունիյայի ի հայտ գալով, վտանգ ստեղծվեց, որ կասկական ցրված ցեղերը կարող են միավորվել մեկ արքայի իշխանության ներքո և ավելի կազմակերպված արշավանքներ ձեռնարկել խեթական տարածքների վրա: Խեթերի համար վտանգավոր էր հյուսիսում ունենալ կասկերի նման ռազմատենչ ցեղերի կենտրոնացված թագավորություն: Այդ պատճառով Մուրսիլիսն անմիջապես միջոցներ ձեռնարկեց՝ վերացնելու վտանգը: Պատերազմի համար առիթ հանդիսացավ Պիխսունիյայի հանդուգն պատասխանը խեթական արքայի պահանջին՝ վերադարձնել կասկերի կողմից գերված խեթահպատակներին և ազատել խեթական տարածքները: Խեթական զորքը ներխուժեց Տիրիյա, որտեղ տեղի ունեցած ճակատամարտում կասկերը պարտություն կրեցին, երկիրն ամայացվեց, իսկ Պիխսունիյան գերվեց: Այնուհետև խեթերն իրենց իշխանությունը վերահաստատեցին Իստիտինա երկրում, որը մինչ այդ նվաճվել էր Պիխսունիյայի կողմից: Կասկերի առաջնորդի հետագա ճակատագիրը հայտնի չէ: Հավանաբար խեթական արքան նրան կա՛մ մահապատժի էր ենթարկել, կա՛մ պատանդ վերցրել՝ Տիրիյա երկիրը հնազանդ պահելու համար:

Սակայն կասկական խնդիրն այդպես էլ մնաց չլուծված: Իր թագավորման հետագա տարիներին Մուրսիլիսը կրկին արշավեց դեպի Կասկա երկիր: Կասկական Կապուպուվա քնակավայրի մոտ տեղի ունեցած ճակատամարտում խեթական արքան հաղթանակ տարավ: Այս արշավանքի ընթացքում Մուրսիլիսը հավաստիացնում էր, որ իրեն հաջողվել է հասնել այնտեղ, որտեղ մինչ այդ ոչ մի խեթական արքա ոտք չէր դրել: Դրանից հետո նա մեկ անգամ ևս արշավեց Կասկա երկիր և գրավեց Տապապանուվա երկիրը, այնուհետև շարժվեց դեպի Խատենցուվա երկիր և նվաճեց Յիտխարիյա քնակավայրը: Մուրսիլիսը նշում է, որ Տելիպիսուսից հետո ինքն առաջինն էր, ով նվաճեց Խատենցուվան:

Մուրսիլիսը շարունակեց քայլեր ձեռնարկել պետության հյուսիսային սահմանները ամրացնելու ուղղությամբ: Նա իր կառավարման քսանչորսերորդ տարում ավերեց և նվաճեց կասկական Տիմուխալա, Կարասուվա, Յիմումուվա, Տասմախա,

Յիյանտիսկա, Տապապանուվա և այլ քնակավայրերը, որտեղից մեծ քանակությամբ ավար վերցրեց: Հաջորդ տարի նրա զորքերը կրկին արշավեցին նույն ուղղությամբ: Նվաճվեցին նաև Կապերի և Խուրնա սրբավայրերը, որոնք, չնայած չթալանվեցին, սակայն հարկատու դարձան:

Մուրսիլիսի կառավարման վերջին տարիներին խեթա-կասկական պատերազմները վերսկսվեցին: Խեթական արքան գրավեց և ավերեց կասկական Տագաստա, Իստալուպա, Կապուպուվա, Խուտպա, Յագապուրա, Կասիպա քաղաքները, բարձրացավ Կապագապա լեռները, գրավեց Տախանտատիպան և Տակկուվախինան: Մուրսիլիսը ձեռնարկեց նաև կասկական տարածքներին հարող ավերված քնակավայրերի վերաբնակեցման միջոցառումներ, որպեսզի ամուր պատնեշ ստեղծի կասկական ներխուժումների դեմ: Մասնավորապես, նա վերականգնեց դեռևս Խանտիլիսի օրոք լքված Տիլիուրա քաղաքը, փորձ արեց նաև վերահաստատելու խեթական իշխանությունը սրբազան Ներիկ քաղաքի վրա: Այդ նպատակով հազարավոր մարդիկ նվաճված երկրներից և Խաթթի տարբեր շրջաններից վերաբնակեցվեցին այստեղ:

Մուրսիլիսին հաջորդած Մուվատալլիս II-ի օրոք (թ. ա. 1295–1272 թթ.) նորից ծառայեցավ կասկական խնդիրը: Մուպիլիուլիումասի և Մուրսիլիսի կողմից իրականացված ռազմական նվաճումները և վերաբնակեցման քաղաքականությունը բավարար չէին կասկական խնդրի վերջնական լուծման համար: Մուվատալլիսի թագավորման տարիներին նորից տեղի ունեցան կասկական ներխուժումներ դեպի տերության մայրաքաղաքից հյուսիս և հյուսիս-արևելք ընկած տարածքներ: Եգիպտոսի դեմ պատերազմի նախօրեին Մուվատալլիսը Խաթթի մայրաքաղաքը տեղափոխեց հարավային Փոքր Ասիայում գտնվող երկրորդական նշանակություն ունեցող Թարխունտասա քնակավայր: Այս ձեռնարկման պատճառները հիմնականում երկուսն էին: Արքան նպատակ ուներ նստավայր դարձնելու Սիրիային շատ ավելի մոտ գտնվող քաղաքը, որտեղից հեշտ էր դեկավարել Եգիպտոսի դեմ սպասվող պատերազմը: Սակայն այս քայլին դիմելու առավել հիմնավոր պատճառ էր մայրաքաղաք Խաթթուսասին մշտապես սպառնացող կասկական վտանգը: Մինչ այդ տեղի էր ունեցել հերթական ասպատակությունը, որի ժամանակ կասկական միացյալ զորքերը (բաղկացած 800 մարտակառքից և մեծ քանակությամբ հետևազորից), անցնելով Մարասսանտիյա (Հալիս) գետը, հասել էին մինչև Քանես (ներկայիս Քյուլթեփե, Կայսերիի մոտ):

Կասկերի վտանգավոր ավարառուական արշավանքները չեզոքացնելու համար Մուվատալլիսը նրանց երկրին հարող ողջ սահմանամերձ գոտին, այդ թվում՝ Վերին երկիրը, հանձնեց իր եղբորը՝ Խաթթուսիլիսին: Նրան հանձնված տարածքներում ստեղծվեց ռազմականացված գոտի: Այն արևմուտքից արևելք ձգվում էր մուտավորապես ժամանակակից Մերզիֆոնից մինչև Սիվաս-Սերաստիա՝ ընդգրկելով կասկական ցեղերին հարող մի շարք առանցքային շրջաններ (Իսխուպիտտա, Մարիստա, Խիսասխապա, Կատապա, Խանխանա և այլն): Մուվատալլիսը Խաթթուսիլիսին նշանակեց նաև Խակպիս երկրի արքա:

Փաստորեն, խեթական արքան կասկական խնդրի լուծումը փորձեց գտնել սահմանամերձ թագավորության ստեղծումով: Այժմ տերության կենտրոնական նահանգներին վտանգ չէր սպառնում, և Մուվատալլիսը սկսեց ազատ գործել հարավում: Համենայնդեպս, Ք. ա. 1274 թ. Սիրիայի Քաղեշ քաղաքի մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում, ի թիվս այլ երկրների, որոնք ճակատամարտին մասնակցել են խեթական կողմից, եգիպտական տեքստում նշվում է նաև Կասկա երկիրը: Սա կարող է փաստել միայն այն մասին, որ կա՛մ այդ ժամանակ կասկական որոշ ցեղեր ենթարկվում էին խաթթիին, կա՛մ ճակատամարտին մասնակցել են վարձկան կասկ զինվորներ, ինչն ավելի հավանական է: Այս գործում, հավանաբար, կարևոր դեր է ունեցել խաթթուսիլիսը:

Մուվատալլիսին հաջորդեց նրա որդին՝ Ուրխի-Թեշուրը (Ք. ա. 1272-1267 թթ.), որի կառավարման տարիներն անցան հորեղբոր՝ խաթթուսիլիսի հետ հակամարտության պայմաններում: Այս առճակատման ընթացքում մի շարք կասկական ցեղեր օժանդակեցին խաթթուսիլիսին՝ խեթական տարածքներում բնակվելու իրավունք ստանալու դիմաց: խաթթուսիլիսի՝ արքա հռչակվելուց հետո (Ք. ա. 1267-1237 թթ.) ոչ մի հիշատակություն չկա այն մասին, որ կասկերն արշավել են խաթթի վրա. նույնը նաև նրա հաջորդ Թուդխալիյասի օրոք: Ավելին՝ եգիպտական մի արձանագրությունում նշվում է, որ խաթթիի տիրակալը (խաթթուսիլիսը), փարավոնին կնության տալով իր դստերը, նաև հարուստ ընծաներ է ուղարկել Կասկա (տեքստում տրված է Կեշկեշ) և Արցավա երկրներից: Սա կարող է փաստել այն մասին, որ կասկերի մի մասը այդ ժամանակ ենթակա էր խեթերին:

Կասկերի վերաբերյալ ժամանակագրորեն վերջին հիշատակությունը խեթերի մոտ հանդիպում ենք խաթթիի արքա Թուդխալիյաս IV-ի (Ք. ա. 1230-20-ական թթ.) կառավարման շրջանից: խաթթիի սահմանային նահանգների կառավարիչներին տրված հրահանգներում արքան հանձնարարում էր նախագգուշական միջոցներ ձեռնարկել ընդդեմ Ազգի, Կասկա և Լուկկա երկրների: Ուրեմն նշված ժամանակաշրջանում խաթթին բարիդրացիական հարաբերությունների մեջ չի եղել Կասկայի հետ: Թուդխալիյասին հաջողվեց ժամանակավորապես կայունացնել իրավիճակը, սակայն նրա հաջորդ Անուվանդաս III-ի կարճատև կառավարումից հետո իշխանության եկած մյուս որդու՝ Սուպիլուլիումաս II-ի օրոք՝ Ք. ա. XII դ. սկզբներին, խեթական տերությունը հետագավ պատմական ասպարեզից, ինչի վկայությունը խեթական գրավոր ավանդույթի ընդհատումն է և մայրաքաղաք խաթթուսասի ու կենտրոնական Փոքր Ասիայի մի շարք քաղաքների ավերածությունները և ապա-բնակեցումը:

Հաշվի առնելով խեթերի հյուսիսային, հյուսիսարևելյան հարևան կասկական ցեղերի կողմից խաթթուսասի և շրջակա քաղաքների վրա մշտապես կատարվող ավերիչ արշավանքների մասին բազմաթիվ հիշատակությունները խեթական աղբյուրներում՝ մասնագետների մի մասը հենց նրանց կամ միաժամանակ մի քանի ժողովուրդների հարձակմանն է վերագրում կենտրոնական Փոքր Ասիայի՝ Ք. ա. XII դ. սկզբի ավերածությունները:

Կասկերի և թերակղզու այս շրջանի այլ ժողովուրդների մասնակցությունը նշված իրադարձություններին տրամաբանական է ոչ միայն նախորդ ժամանակաշրջանի նմանատիպ դեպքերի, այլև Ք. ա. XII դ. կեսերին կասկերի՝ մեկ այլ ուղղությամբ ընթացած տեղաշարժերի տեսանկյունից: Խոսքը վերաբերում է Թիզլաթալասար I-ի կողմից Հայկական լեռնաշխարհի արևմուտքում կասկերի և այլ ժողովուրդների շարժումների հիշատակությանը:

Մինչ այդ կասկական ցեղերի մշտական հարձակումները խեթական բնօրրանի վրա թույլ են տալիս ենթադրել նրանց ակտիվությունը նաև Ք. ա. XIII դ. վերջին:

3. ԿԱՍԿԵՐԸ Ք. Ա. XII-VIII ԴԱՐԵՐՈՒՄ

Խեթական տերության տրոհման հետևանքով Ք. ա. XII-X դդ. Առաջավոր Ասիայի պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրները կտրուկ նվազում են, իսկ եղած սահմանափակ նյութը լուսաբանում է գլխավորապես ներմիջագետքյան և ներեգիպտական խնդիրները՝ բացառությամբ Ք. ա. XII դ. վերջերի և XI դ. առաջին կեսի ասորեստանյան տեքստերի:

Ասորեստանի արքա Թիզլաթալասար I-ը (Ք. ա. 1114-1077 թթ.) հայտնում է, որ 4000 կասկեր և ուրումեացիներ ներխուժել են Ասորեստանին ենթակա Սուբարտու երկիր և գրավել նրա քաղաքները, այնուհետև, հավանաբար տեղի տալով ասորեստանյան զերազանցող ուժերին, հնազանդվել և ենթարկվել են Ասորեստանի արքային: Նույն իրադարձության մասին են պատմում Թիզլաթալասարի ևս երկու տեքստեր, որտեղ կասկերի փոխարեն հիշատակվում են ապիշլուները:

Այս իրադարձությունից հետո ավելի քան երեք դար կասկերը դուրս են մնում հարևան երկրների գրավոր աղբյուրների տեսադաշտից: Ամենայն հավանականությամբ, նրանք շարունակում էին բնակվել իրենց նախնական բնակության վայրերում՝ բացառությամբ այն հաստվածների, որոնք առաջավորասիական ճգնաժամի շրջանում տեղաշարժվել էին Փոքր Ասիայի տարբեր շրջաններում: Այդ է վկայում Ասորեստանի արքա Թիզլաթալասար III-ի (Ք. ա. 744-727 թթ.) տեքստերից մեկում, ի թիվս Մելիդի և Թարալի հարկատու արքաների, Կասկու երկրի արքա Դադիլուի հիշատակությունը: Իսկ Սարգոն II-ի օրոք (Ք. ա. 721-705 թթ.) Կասկուն նշվում է որպես մեկը Փոքր Ասիայի հակասասորեստանյան դիրքորոշում ունեցող երկրներից, որոնց բնակչության մի մասը բռնի կերպով տարհանվել և վերաբնակեցվել էր այլ վայրերում: Մեկ այլ տեքստում Ասորեստանի արքան տալիս է այն երկրների ցանկը, որոնք նա նվաճել էր. այստեղ հիշատակվում է նաև Կասկու երկիրը: Սա կասկերի վերջին հիշատակությունն է սեպագրական աղբյուրներում:

ՀՆԴԱՐԻԱՑԻՆԵՐ

Առաջավոր Ասիայի քաղաքական կյանքում որոշակի դերակատարում ունեցած էթնիկական խմբերից էին հնդարիացիները, որոնց հիմնական զանգվածը Ք. ա. II հազ. բնակություն հաստատեց տարածաշրջանի արևելյան հատվածում՝ հիմք դնելով իրանալեզու պետականություններին (տե՛ս Բաժին 3. Գլուխ 3): Մյուս, առավել փոքրաքանակ հատվածը ավելի վաղ՝ Ք. ա. II հազ., տարածվեց Միջագետքում և Սիրիայում, նաև Փոքր Ասիայի տարբեր շրջաններում, որտեղ հանդես էր գալիս որպես մի շարք խոշոր և մանր պետականությունների հիմնադիր և իշխող քաղաքական վերնախավ (տե՛ս Բաժին 4. Գլուխ 1): Արիացիների այս երկրորդ խմբի քաղաքական ակտիվությունը տևեց համեմատաբար կարճ և ավարտվեց Ք. ա. XIII դ.՝ Միտաննիի և նրա հովանավորության տակ գտնվող սիրիական մանր իշխանությունների անկումով: Արիացիների մեկ այլ խումբ Իրանական բարձրավանդակի վրայով ներթափանցեց Հյուսիսային Հնդկաստան:

«Արիացի(ներ)» (հին հնդկերեն՝ *árya*, հին պարսկերեն՝ *ariya*, Ավեստայի լեզվով՝ *airiia*) անունն էին կրում գլխավորապես Հնդկաստանում և Իրանական բարձրավանդակում հաստատված այն ժողովուրդները, որոնք ներկայացնում էին հնդեվրոպական լեզվաընտանիքի հնդիրանական կամ «արիական» ճյուղը¹: Այն ընդգրկում է հնդարիական կամ հնդկական լեզվախումբը (հատկապես՝ սանսկրիտը, որի հնագույն ձևը Վեդաների լեզուն է՝ «վեդայական սանսկրիտը»), «ավեստերենը» (Ավեստայի լեզուն) և հին պարսկերենը:

«Արիացի» անունն ուներ ընդհանրական նշանակություն՝ հստակ տարբերակելով «արիական» լեզվի կրողին «ոչ արիացուց» (հին հնդկերեն՝ *an-árya*, հին պարսկերեն՝ *an-ariya*, Ավեստայի լեզվով՝ *an-airiia*): Վերջինս կարող էր լինել ինչպես հնդեվրոպական այլ ճյուղի ներկայացուցիչ, այնպես էլ ոչ հնդեվրոպացի: «Արիացի» անունը պահպանվել է «Երան» (Իրան, իրանցի), «Իռ» կամ «Իռոն» (ալան), հավանաբար նաև «Էյրե» (Իռլանդիա) անունների մեջ:

Հնդարիական նախահայրենիքի տեղորոշման հարցում կարծիքները տարամետ են: Ներկայումս առավել հավանական է դիտվում արիական նախահայրենիքի «պոնտական» տեղադրությունը՝ նկատի ունենալով Սև ծովից հյուսիս ձգվող տափաստանային տարածքները²: Մյուս կողմից՝ որոշ հետազոտողներ հյուսիսարևմտյան Իրանում՝ Ուրմիա լճի ավազանում, տեսնում են ոչ միայն հնդիրանական էթնոսի որոշակի ներկայություն («միտաննական կամ միջագետքյան արիացիներ»)–ի բնակության շրջանը³, այլև այստեղ են տեղադրում արիացիների նախահայրենիքն ընդհանրապես⁴:

Հնդիրանցիների տրոհումը երկու հիմնական խմբի՝ հնդարիացիների և իրանցիների, տեղի ունեցավ Ք. ա. II հազ. սկզբներին:

Հնդարիացիների մուտքը Հնդկաստան (սկզբնապես Փենջաբ և հարակից տարածքներ) թվագրվում է՝ սկսած Ք. ա. մոտ 1700–ական թթ.: Հաղթահարելով տեղի բնակչության դիմադրությունը, որոնք Վեդաներում հիշատակվում են Դասա կամ Դասյու անվամբ, հնդարիացիները սփռվեցին ողջ Հյուսիսային Հնդկաստանի տարածքով: Նրանց մուտքը Հնդկաստան ընթացել է մի քանի փուլերով, ընդ որում՝ այդ փուլերին ներթափանցող խմբերն արդեն խոսել են միմյանցից որոշակիորեն տարբերվող բարբառներով:

Իսկ Առաջավոր Ասիայի գրավոր աղբյուրներում հնդարիացիների առաջին հիշատակումները վերաբերում են Ք. ա. XVII–XVI դդ.: Նրանց առանձին խմբեր շարժվեցին արևմուտք՝ Բերրի Կիսալուսնի գոտի, ենթադրվում է՝ այս տարածք խուրրիական ներգաղթի վերջին հոսանքին զուգահեռ: Հայտնի է, որ խուրրիական Միտաննի պետության իշխող խավը, ներառյալ արքայատոհմը, ուներ արիական ծագում: Վկայված են նրանց ներկայության հետքեր՝ արիական լեզվաշխարհին պատկանող բազմաթիվ անձնանուններ, Միտաննիի պետական դիցարանում հիշատակված դիցանուններ, ինչպես և առանձին տերմիններ: «Միտաննական արիերեն»–ով են ստուգաբանվում արքայանունները (Արտադամա, Տուշրաթթա, Շատտիվազա), այլ անձնանուններ (Ավաշշուրա, Կալմաշուրա, Վարասամա, Պուրդայա և այլն), մի քանի դիցանուններ (Ինդրա, Միթրա, Վարունա, Նասատյաներ) և գլխավորապես ձիավարժությանն առնչվող տերմիններ (*aššuššani* «ձիավարժ», *aikawartanna* «մեկ շրջան», *panzawartanna* «հինգ շրջան» և այլն)⁵:

Արիացիները համակենցության մեջ մտան խուրրիների հետ՝ աստիճանաբար ձուլվելով նրանց ինչ–որ գոտիներում, սակայն դեռ երկար պահպանելով իրենց ինքնությունը: Արիական ներկայության հետքեր են երևում նաև Միտաննիից դուրս՝ այս

¹ Ամիոսի տես Parpola A., The Formation of the Aryan Branch of Indo-European. - In: Blench, Spriggs 1999, 180ff.; Sims-Williams N.(ed.), Indo-Iranian Languages and Peoples, Proceedings of the British Academy 116, Oxford, 2002. Ar(i)ya տերմինը (հ.-ե. «տեր») սանսկրիտում և «Ավեստայի լեզվով» ուներ «ազնվական», «մեծագարն», «հավատարիմ», «սրբազան» նշանակությունները, որոնք բնութագրում էին արիացիների նախնական հայրենիքի՝ *Áryāvarta*-յի (հին պարսկերեն՝ *Aryāna*, ավեստ. *Āryānam Vaejāh*) քնակչին: Հետագայում այն ձեռք բերեց «տեր», «մեծահարգ» և համանման իմաստներ: Տերմինի նշանակության համար որպես «օտարական», «վերաբնակիչ» և «նվաճող» տես և հմնտ. Thieme P., Der Fremdling im Rigveda. Eine Studie über die Bedeutung der Worte *ari*, *arya*, *aryaman* und *aarya*, Leipzig, 1938; Skalmowski W. 1995, Old Persian Parθava-. - In: Van Lerberghe, Schoors 1995, 311ff.

² Parpola A., Násatyas, the Chariot and Proto-Aryan Religion, Journal of Indological Studies 16-17, 2004-2005, 1ff.
³ Diakonoff I.M. 1972, Die Arier im Vorderen Orient: Ende eines Mythos (Zur Methodik der Erforschung verschollener Sprachen), Or. NS, 41/1, 1972, 118ff.
⁴ Sarianidi V., Near Eastern Aryans in Central Asia, JIES 27, 1999, 295.
⁵ Մանրամասն տես Mayrhofer M., Die Arier im Vorderen Orient – ein Mythos? (Österreichische Akad.d.Wiss. Phil.-Hist. Klasse, Bd.294, Abh.1), Wien, 1974; Mayrhofer M. 1983, The Earliest Linguistic Traces of Aryans outside India and Iran, Journal of the K.R. Cama Oriental Institute 50, 1983, 87, 87ff. Kammenhuber A., Die Arier im Vorderen Orient, Heidelberg, 1968.

պետության և խեթական ու եգիպտական տերությունների ազդեցության գոտիներում ընկած մի շարք պետական կազմավորումներում¹: Լինելով խիստ ռազմունակ՝ արիացիները զգալի դերակատարում ունեցան տարածաշրջանի ռազմաքաղաքական կյանքում: Դրա վկայությունը սիրիա-պաղեստինյան գոտում Ք. ա. XV-XIII դդ. գոյություն ունեցած մի քանի տասնյակ մանր պետական կազմավորումների արքայիկների արիական անուններն են (Քաղեշի իշխան Այտագամա, Արինայի իշխան Արիվանա, Կանիտիսի իշխան Պիրիյաշաումա, Հեբրոնի իշխան Շովարդատա և այլն²: Արիական ազնվականության ակնհայտ վկայություններ կան Փոքր Ասիայում՝ Կիցցուվատնա-Կիլիկիայի արքա Սունասսուրա և Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Իսուվայում:

Ինչ վերաբերում է իրանցիներին, ապա, տարածում գտած կարծիքի համաձայն, նրանց տեղաշարժը դեպի հարավ՝ Կենտրոնական Ասիա և Իրանական բարձրավանդակ, տեղ է գտել ավելի ուշ: Ներհոսքն ընթացել է մի քանի փուլերով, ամեն անգամ՝ մի որոշակի քարքառով խոսող իրանական ցեղախմբի կողմից: Ներթափանցման ճշգրիտ ուղիները դեռևս հստակ չեն: Կարծիքներից մեկի համաձայն՝ իրանցիները («արևմտյան իրանցիներ», այն է՝ մարերն ու պարսիկները) Իրանական բարձրավանդակ են շարժվել Հայկական լեռնաշխարհի վրայով՝ անցնելով Կովկասյան լեռները, ուր նրանք հայտնվել են՝ շարժվելով Կասպից ծովի հյուսիսային ափագծի երկայնքով: Ըստ երկրորդ մտեցման՝ նրանք շարժվել են Կենտրոնական Ասիայի տափաստաններից ուղիղ դեպի հարավ, ապա, անցնելով Դաշտ-է Քյավիրի անապատը, հասել Զագրոսյան լեռներ, ուր և նրանք վկայված են՝ սկսած Ք. ա. IX դարից: Այս վերջին տեսակետը թվում է առավել հիմնավոր՝ ելնելով, նախ, «իրանական» խեցեղենի տարածման ուղիներից, հետագա պատմական դարաշրջանում նման ներթափանցումների կրկնություններից (սելջուկ-թյուրքեր, մոնղոլներ ևն), ինչպես նաև հին պարսկերեն (հարավարևմտյան իրանական) և սողղերեն (հյուսիսարևելյան իրանական) լեզուների միջև նկատվող որոշակի մերձավորությունից, ինչը ևս կարող է հուշել իրանցիների շարժման ուղղությունը:

Վերջին ներթափանցող խմբերն այսպես կոչված «արևելյան իրանցիներն» էին (արևելաիրանական ժողովուրդները), որոնք հաստատվեցին Բակտրիայում, Արաքոսիայում, Մարգիանայում (մոտավորապես ներկայիս Աֆղանստանի տարածք), ինչպես նաև Բելուջիստանում (Պակիստանի և Հնդկաստանի սահմաններում):

¹ Քոսյան Ա., Արիացիները Պակիստանում, ՄՄԱԵԺ XXV, 247-258; Kosyan A., An Aryan in Isuwa, Iran and the Caucasus 10/2, 2006, 1ff.

ԱՐԱՄԵԱՅԻՆԵՐ

Ք. ա. II հազ. վերջերից Առաջավոր Ասիայի քաղաքական թատերաբեմում հայտնված և հաջորդ հազարամյակում քաղաքական, տնտեսական ու մշակութային յուրահատուկ բնութագրիչներով աչքի ընկնող էթնիկական խմբերից էին սեմական ծագման արամեական ցեղերը, որոնց աշխարհագրական տարածման արեալը զգալի էր՝ Սիրիայի ներքին շրջաններից մինչև Իրանական բարձրավանդակ, Հարավային Միջագետքից մինչև Հայկական Տավրոսի գոտի: Պատմական ասպարեզ դուրս գալու պահին կիսաքոչվոր կենցաղավարությամբ հայտնի, տասնյակ խոշոր և մանր ցեղերից բաղկացած այս էթնիկական ընդհանրույթը, մի քանի դար շարունակ բնակվելով Առաջավոր Ասիայի տարբեր պետականությունների անմիջական հարևանությամբ, ի վերջո կարողացավ իր հաստատուն տեղը գտնել՝ հասնելով պետականության աստիճանի՝ ցեղապետություններից մինչև ավելի խոշոր միավորներ¹:

1. ԱՐԱՄԵԱՅԻՆԵՐԸ Ք. Ա. II ՀԱՋԱՐԱՄՅԱԿՈՒՄ

Արամեացիների վաղ շրջանի պատմությունը թաղված է անհայտության մեջ, քանզի համաժամանակյա միջագետքյան սեպագրական աղբյուրներում Ասորեստանից և Բաբելոնիայից արևմուտք՝ սիրիական տափաստաններում բնակվող ցեղերին հաճախ տրվում էին ընդհանրական անվանումներ՝ առանց էթնիկական տարրերակման (*սուտուներ* և *ախյանու-արամեացիներ*): Սրանցից առաջինը՝ *սուտու* կոչվող ցեղերը, հանդես են գալիս դեռևս Ք. ա. III հազ. վերջերից՝ Ուրի III հարստության շրջանից՝ որպես անապատի քոչվորներ: Արամ անունը կրող քաղաք-երկիրը հայտնի է Նարամսինի երկու տեքստերից, որտեղ հիշատակվում է նրա կառավարիչ Դուբուլը:

¹ Արամեացիների՝ հինարևելյան դարաշրջանի վերաբերյալ առկա են մի շարք հիմնարար հետազոտություններ՝ Kraeling E.G., Aram and Israel, New York, 1918; Schiffer 1911; O'Callaghan R.T., Aram Naharaim. A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B.C., Roma, 1948 [համապատասխան հատվածները]; Dion P.E., Aramaean Tribes and Nations of First-Millennium Western Asia - In. CANE I-II, 1995, 1281ff.; Lipinski E., The Aramaeans. Their Ancient History, Culture, Religion, Leuven-Paris, 2000; նաև Հ. Ավետիսյանի ուսումնասիրությունները՝ Аветисян Г.М., Северная Месопотамия и юго-западные области Армянского нагорья, Ереван, 1997; Ավետիսյան Հ.Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ. թ. ա. XVII-IX դարերում, Երևան, 2002:

Arami, Arame, Aramu անունով տեղանունը հաճախակի հիշատակվում է Ռուրի III հարստության և հին բաբելոնյան շրջանի տեքստերում: Ամեն ինչ վկայում է այն մասին, որ վերոհիշյալ քաղաքը մի փոքր քաղաքական միավոր էր:

Արամ երկրի տարածքը վաղուց ի վեր համադրվել է աստվածաշնչյան Պաղդան-Արամի հետ, որն ընկած էր Հյուսիսային Միջագետքի կարևոր կենտրոններից Խառան քաղաքի շրջանում: Սա այն վայրն է, որտեղ Ասորեստանի արքա Ադադնիրարի I-ը առաջին անգամ հիշատակում է արամեական *ախրամու* ցեղին, և որտեղ, ըստ Աստվածաշնչի, բնակվում էին արամեացիները: Արամեացիների և սուտունների միջև հնարավոր կապի մասին կարծիքը դժվար է հիմնավորել, քանի որ հետագայում էլ Նոր ասորեստանյան շրջանում, նրանք զուգահեռաբար հիշատակվում են որպես Բաբելոնիայի բնակչություն:

Վաղ արամեացիներին տրված *ախրամու* անվանումը ամենայն հավանականությամբ նրանց ցեղանունը չէ, այլ ընդհանրական անվանում, որ կարող էր նշանակել «ընկեր, գործակից, դաշնակից»: Արամեացիների ցեղանունը՝ *արամ*, բացատրվում է որպես «քոչվոր»: Բացառված չէ, որ արամեացիների ցեղանունը որևէ կապ չունի սեմական կամ խուրրիական աշխարհի հետ: Արամեացիների ցեղանվան մեկ այլ բացատրություն է առաջարկում Է. Լիպինսկին՝ փորձելով այն բխեցնել ենթադրյալ վաղ սեմական բառից («*ārām*»), որը արաբերենում նշանակում է «վայրի ցուլեր»:

Արամեացիների վաղ պատմության հարցում առկա վերոհիշյալ խնդիրները թույլ չեն տալիս հաստատապես պարզել ինչպես նրանց նախնական բնակության աշխարհագրական տարածքը, այնպես էլ այդ էթնոնիմով բնորոշվող ցեղախմբերի տարածման արեալը՝ ընդհուպ մինչև այն պահը, երբ նրանք սկսեցին կանոնավոր կերպով հիշատակվել սեպագրական աղբյուրներում:

Ընդհուպ մինչև Ք. ա. XIII դ. արամեացիները ժամանակի խոշոր պետությունների կազմում կամ նրանց քաղաքական ազդեցության հանդիպավայրում գտնվող և ժամանակ առ ժամանակ ինքնուրույնություն դրսևորող բնակչություն էին: Մինչև 1330-ական թվականները նրանց նախնական բնակության տարածքը գտնվում էր Միտաննիի կազմում: Վերջինիս՝ խեթերի կողմից նվաճվելուց հետո՝ արդեն Ադադնիրարի I-ի, Սալմանասար I-ի և Թուկուլթի-Նինուրտա I-ի միտաննական արշավանքների շրջանում և Ք. ա. XII դ. ձգնաժամի փուլում, ախրամու արամեացիները սկսում են աստիճանաբար դուրս գալ տարածաշրջանի քաղաքական թատերաբեմ: Մասնավորապես նրանք հիշատակվում են Սալմանասարի կողմից՝ որպես խեթահպատակ Միտաննիի և խեթերի դաշնակիցներ՝ ընդդեմ Ասորեստանի: Իսկ դրանից ավելի վաղ՝ խեթական արքա Խաթթուսիլիս III-ի՝ Բաբելոնիայի արքա Կադաշման-Էնլիլ II-ին հղված նամակում խոսվում է Փոքր Ասիայից Բաբելոնիա ձանապարհին ախրամուների ավազակային գործողությունների մասին, որի պատճառով բաբելոնյան արքան խուսափել է դեսպանություն առաքել իր դաշնակցին:

Առաջավորասիական ձգնաժամի հենց առաջին շրջանից կտրուկ աճում է արամեացիների՝ առանց այդ էլ մեծ շարժունակությունը: Միջագետքի ողջ արևմտյան

սահմանամերձ գոտում՝ ընդհուպ մինչև անդրեփրատյան տարածքներ, ներառյալ Ամուրրուն (Փյունիկիա), ասորեստանյան արքաները հիշատակում են արամեացիների դեմ մղվող անվերջ բախումները: Արամեացիների հիմնական զանգվածը ձգտում էր ներթափանցել Միջագետքի հյուսիս, թերևս այն պատճառով, որ այդ տարածքն ավելի մոտ էր գտնվում իրենց պատմական բնակության վայրին: Նրանց մի հատվածը, որը կարող էր նույնանալ իրենց ազգակից քաղղեական ցեղերին, շարժվում էր կենտրոնական և հարավային Միջագետք: Թիգլաթպալասարի և Աշշուրբելկալայի՝ արամեացիների դեմ մղած արշավանքներից հետո՝ Ասորեստանի տևական թուլացման շրջանում, արամեացիների շարժումները շարունակվեցին: Այլևս գրեթե չհանդիպելով լուրջ դիմադրության՝ նրանք աստիճանաբար նստադրվեցին Կենտրոնական և Հյուսիսային Սիրիայում, Հայկական Տավրոսի հարավամերձ շրջաններում, ինչպես նաև բուն Միջագետքում՝ Ասորեստանում և Բաբելոնիայում:

2. ԱՐԱՄԵԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (Ք. Ա. X-VIII ԴԱՐԵՐ)

Երբ Ասորեստանը կրկին սկսեց վերելք ապրել և անցավ ակտիվ արտաքին քաղաքականության, միջագետքյան սեպագրական աղբյուրները տեղեկացնում են տասնյակ արամեական իշխանությունների առկայության մասին, որոնք սփռված էին Միջագետքին հարող շրջաններում՝ միջին Եփրատի երկայնքով, ինչպես նաև Սիրիայում: Միջագետքյան պետությունները ի վիճակի չէին արգելելու արամեացիների ներհոսքը դեպի իրենց կողմից նախկինում վերահսկվող տարածքներ: Նախկին Միտաննիի տարածքում կազմավորվեցին բավական խոշոր արամեական իշխանություններ, ինչպես Բիթ-Բախիանի (Խաբուրի վերին հոսանքների շրջանում), Բիթ-Խալուպե (Խաբուրի ստորին հոսանքների շրջանում), Բիթ-Ադինի (Եփրատի մեծ կեղմանից հարավ՝ լուվիական Կարգամիսի հարևանությամբ), Բիթ-Ջամանի (ժաման. Դիյարբաքրի շրջանում), Կապարայի իշխանությունը (անվանումը հայտնի չէ. Կապարան դրա կառավարիչն էր), *տեմաննի* կոչվող արամեական տոհմի կողմից ստեղծված քաղաքական միավորները (վերջիններս՝ Նածիբինա-Մծրինի և Խուզիբինա քաղաքների [ժաման. Մարդինից հարավ-արևելք] շրջանում):

Արամեական իշխանությունների մի ողջ շարք կազմավորվեց Եփրատից արևմուտք՝ Հյուսիսային և Կենտրոնական Սիրիայում: Եթե Միջագետքին հարող շրջաններում արամեացիները ստիպված էին իրենց ներկայությունը ապացուցել քիչ թե շատ հզոր Ասորեստանի և Բաբելոնիայի դեմ տևական պայքարում, ապա այլ էր իրավիճակը Սիրիայում: Չնայած աղբյուրները գրեթե տեղեկություններ չեն պարունակում այստեղ նրանց առաջխաղացման մասին, սակայն այս տարածաշրջանի հետագա պատմության լույսի տակ հնարավոր է ենթադրել, որ արամեացիների շարժումը լուվիական պետականության արեալ, գերազանցապես խաղաղ

ներթափանցման արդյունք պետք է լինեն: Ք. ա. XII-XI դդ. Հյուսիսային Սիրիայում ձևականորեն քաղաքական հեգեմոն դիտվող Կարգամիսի և հարևան շրջանների տարբեր հատվածներում արամեացիները ստեղծեցին տարածքով փոքր, սակայն բավական կայուն քաղաքական միավորներ՝ Սամալ (Ամանոսի լեռների արևելյան հատվածում, կենտրոնը՝ ժաման. Զինջիրլի բնակավայրը), Բիթ-Ագուսի (կամ Յախան)՝ Արպաղ մայրաքաղաքով (Բիթ-Ադինիից արևմուտք): Իսկ Կենտրոնական Սիրիայում ձևավորվեց արամեական ամենահզոր պետությունը՝ Դամասկոսը:

Սիրիա-միջագետքյան աշխարհում արամեական ցեղերի տարածման և նրանց պետականությունների ստեղծման գործընթացն ուներ մի կարևոր առանձնահատկություն, որը տարբերում էր արամեացիներին Առաջավոր Ասիայում և այլ տարածաշրջաններում էթնիկական խմբերի ներթափանցման շատ օրինակներից: Արամեացիների տեղափոխությունը բնակության նոր վայրեր միայն հազվադեպ էր ուղեկցվում բռնի եղանակով և բախումներով, այն էլ, որպես կանոն, միայն Միջագետքում: Արամեացիները շատ արագ հարմարվում էին տեղական պայմաններին և համագործակցում տեղի քաղաքական միավորների հետ: Դրա լավագույն օրինակը նախկին Միտաննիի տարածքում և Սիրիայում գոյություն ունեցող պետականությունների և արամեական իշխանությունների հարաբերություններն են, որոնք արտացոլված են ասորեստանյան աղբյուրներում: Երկու դեպքում էլ ասորեստանցիները հանդիպում էին լուվիական-արամեական և խուրրիական-արամեական համատեղ միությունների: Պատճառը, թերևս, այն էր, որ արամեացիները օտար էթնիկական խումբ չէին Առաջավոր Ասիայում, այլ ընդամենը ժամանակի քաղաքական կենտրոնների անմիջական հարևանությամբ ապրող ժողովուրդ, որը, չնայած այդպես էլ չհասավ համախմբման այն աստիճանին, որպեսզի ստեղծի միասնական պետականություն, սակայն անբաժանելի մասն էր կազմում իր նոր կենսատարածքի քաղաքական, տնտեսական և մշակութային իրողությունների:

3. ԱՐԱՄԵԱՑԻՆԵՐԸ Ք. Ա. VIII-VII ԴԱՐԵՐՈՒՄ

Արամեական իշխանությունների աստիճանական նվաճումը և ներառումը Նոր ասորեստանյան տերության կազմում իր հետ բերեց նրանց կենսագործունեության շարունակման նոր եղանակներ: Դա արամեացիների ինտեգրումն էր ասորեստանյան պետության կյանքին: Հատկապես Ք. ա. VIII դ. կեսերից ասորեստանյան տեքստերն ավելի ու ավելի հաճախ են հիշատակում պետության ռազմաքաղաքական և տնտեսական կյանքում արամեացիների ներկայությունը:

Արամեացիներից շատերը պետական կառավարման համակարգում և բանակում զբաղեցնում էին բարձր պաշտոններ: Արամեական անուններ են կրում, օրինակ, մի շարք էպոնիմներ և նահանգապետեր, բանակային բարձր հրամանատարներ: Մեծ բանակությամբ արամեացիներ էին ծառայում ասորեստանյան բանակում, և նրանց

մի մասը հասել էր շատ բարձր դիրքի: Այսպես՝ հայտնի են «մայր-թագուհու թիկնագործի հրամանատար Սալամանուն», «ներքինապետի թիկնագործի հրամանատար Խանունուն» և այլն: Բարձր գինվորականության պարագայում արամեացիների ներգրավվածության աստիճանը զգալիորեն կախված էր Նոր ասորեստանյան արքաների կողմից իրականացվող զանգվածային տեղահանությունների քաղաքականությունից:

Արամեացիների ներկայությունը և դերը Ասորեստանում չէր սահմանափակվում միայն ռազմավարչական համակարգում ծառայությամբ: Էլ ավելի խոստուն են այն փաստերը, որոնք վկայում են ասորեստանյան տերության մշակույթում արամեական տարրերի աստիճանական ներթափանցման մասին: Ասորեստանի տարբեր շրջաններից հայտնի են սեպագիր տեքստեր պարունակող աղյուսակներ և այլ գրված իրեր, որոնց վրա առկա են արամեերեն այբուբենով արված նշումներ: Դրանց շարքում կան նույնիսկ երկլեզվյան՝ սեպագրով և արամեերենով կազմված կնիքներ, որ միանշանակ վկայում է դրանց տերերի արամեական պատկանելության մասին: Արքունիքում, շատ ազնվականական տներում, բանակում և այլուր աշխատում էին արամեացի գրիչներ, որոնք գրում էին ոչ թե աքքադերենով, որին լավ էին տիրապետում, այլ սեփական այբուբենային գրով՝ մագաղաթի վրա: Արամեական գրի կիրառությունը Ասորեստանում կարող է բացատրվել այբուբենային գրի գործնականությամբ. դրանով անհամեմատ ավելի հեշտ և արագ կարելի էր գրել: Կան փաստեր, որոնք վկայում են արամեական գրի կիրառման մասին նույնիսկ հեռավոր փյունիկյան քաղաքներում:

Արամեական այբուբենը իր համար ճանապարհ էր հարթում ոչ միայն Ասորեստանում: Սիրիայի և հարավային Փոքր Ասիայի լուվիական պետություններում դրանով երբեմն գրում էին արքաների պաշտոնական արձանագրությունները: Դրա լավագույն օրինակը Կուեի (Դաշտային Կիլիկիայում) լուվիական արքա/կառավարիչ Ացատիվատասի մեծածավալ երկլեզվյան կոթողային արձանագրությունն է Կարաթեփեից, որտեղ ներկայացված են տեքստի երկու զուգահեռ տարբերակները՝ հիերոգլիֆային լուվիերենով և արամեերենով: Զգալի քանակությամբ արամեերեն արձանագրություններ են պահպանվել Սիրիայի բուն արամեական պետություններից:

Ասորեստանում արամեական բնակչության երկարատև գոյությունը, երկու ժողովուրդների շփումները արտահայտվել են նաև լեզվական ոլորտում: Արամեերենի վրա աքքադերենի անվիճելի ազդեցության հետ միաժամանակ, որ բնական էր, վկայված է նաև հակառակ ազդեցություն: Աքքադերենում առկա են մեծ քանակությամբ արամեերեն փոխառություններ:

Ըստ ամենայնի՝ Ք. ա. VIII-VII դդ. արամեացիները արդեն լուրջ ներկայություն էին ապահովել ասորեստանյան տերությունում՝ ներթափանցելով դրա կենսագործունեության բոլոր ոլորտները: Բնականաբար, տերության մայրամուտին՝ կենտրոնական իշխանության անկման փուլում, նրանք շարունակեցին գոյատևել այժմ արդեն սկզբում Նոր քաբելոնյան, այնուհետև Աքեմենյան տերության կազմում:

Նոր բարելոնյան տերության շրջանում արամեական ազնվականությունը, ժամանակավորապես երկրորդ պլան մղված լինելով երկրի քաղաքական կյանքից, ի վերջո հասավ իշխանության: Բարելոնիայի արամեացի ազնվական Նարու-բալասու-իքքիի որդի Նարոնիդը Ք. ա. 555 թ. դարձավ արքա: Որ վերջինս ոչ միայն պահպանում էր հիշողությունները իր ծագման մասին, այլև փորձում էր մեծացնել արամեացիների դերը երկրում, վկայում է Նարոնիդի քաղաքականությունը պաշտամունքային ասպարեզում: Նա իր արձանագրություններից մեկում արամեացիների կարևոր քաղաքական և կրոնական կենտրոն հռոման քաղաքի Լուսնի աստված Սինին հայտարարում է «բոլոր աստվածների վրա աստվածային արքա», որ կարող էր նշանակել միայն վերոհիշյալ աստվածության պաշտամունքի գերակայության հաստատման ձգտում:

Միջագետքի՝ Աքեմենյան տերության կազմ ներառվելուց հետո էլ շարունակվում է արամեացիների ակտիվ կենսագործունեությունը: Աքեմենյանների հանդուրժողական քաղաքականությունը նվաճված երկրների նկատմամբ, որի արդյունքում տեղերում պահպանվեցին քաղաքական, տնտեսական և մշակութային ենթակառուցվածքները, արամեացիների դերը նույնիսկ էլ ավելի աճեց նախորդ փուլի համեմատ: Արդեն Դարեհ I-ի օրոք արամեական այբուբենը վերածվում է արքունի և տեղական դիվանների գրագրության հիմնական միջոցի՝ դրանով իսկ ստանալով պետական գրի կարգավիճակ: Աքեմենյանների օրոք արամեերեն գրի և լեզվի կիրառումը հզոր ազդակ դարձավ դրանց տարածման համար Տերության գերիշխանության տակ գտնվող երկրներում՝ Փոքր Ասիայում, Լևանտում, Եգիպտոսում, ինչպես նաև Հայաստանում (վերջինում այն շարունակվեց նաև հետագայում՝ Արտաշեսյան հարստության օրոք): Ավելին՝ արամեերենը նույնիսկ վերածվել էր հիմնական խոսակցական լեզվի ողջ Միջագետքում (lingua franca):

Արամեացիների հետագա պատմությունը սերտորեն շաղկապված է Առաջավոր Ասիայի տարբեր երկրների քաղաքական, հոգևոր-մշակութային և տնտեսական պատմության հետ՝ ներկայանալով որպես օրինակ պետականագուրկ էթնոսի գոյատևման՝ շնորհիվ գոյություն ունեցող էթնոքաղաքական և սոցիալ-տնտեսական իրավիճակներին առավելագույնս ինտեգրվելու ունակ էթնիկական հանրույթ: Այս դարաշրջանից ի վեր արամեացիները իրենց ժամանակակիցներին հայտնի են այսուր (հայերեն «ասորի» անվամբ), որը ծագում է Ասորեստանի անվանումից:

ՍԿՅՈՒԹՆԵՐ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սկյութները Առաջավոր Ասիայի քաղաքական թատերաբեմում հայտնվեցին Ք. ա. VII դ.՝ կապված դեպի այս տարածաշրջան նրանց արշավանքների հետ:

Սկյութների արշավանքների, նրանց և առաջավորասիական պետությունների փոխհարաբերությունների մասին պահպանվել են կարևոր տեղեկություններ միջագետքյան սեպագիր աղբյուրներում: Արժեքավոր հաղորդումներ են պարունակում նաև հույն հեղինակների աշխատությունները ոչ միայն նրանց առաջավորասիական, այլև հյուսիսմերձսևծովյան բնակության վայրի և գործունեության մասին: Հայ մատենագիրների երկերում անուղղակի վկայություններ կան սկյութական արշավանքների վերաբերյալ: Դրանք սերտորեն միահյուսված են հայոց պատմությանը և դիտարկվում են հայ արքաների գահակալական շարքի ընդհանուր համատեքստում: Վերջապես, ժամանակակից հետազոտության համար անգնահատելի աղբյուր են հնագիտական և լեզվաբանական տվյալները:

Առաջավոր Ասիայում սկյութների մուտքը և քաղաքական ազդեցությունը վերաբերում է Ք. ա. VII-VI դդ.: Հերոդոտոսի տեղեկության հիման վրա ընդունված է համարել, որ Ք. ա. VII դ. սկզբին կիմերական ցեղերի հետքերով սկյութները ներխուժել են Առաջավոր Ասիա՝ հասնելով մինչև Ուրմիա լճի ավազան, պարբերաբար ավազակային հարձակումների ենթարկել Ասորեստանի հյուսիսային տարածքները, իսկ հետագայում դաշինք կնքել Ասորեստանի արքայի հետ:

Կիմերներին հետապնդելով Առաջավոր Ասիայում հայտնվելը առասպելական ավանդագրույցին քնորոշ հատկանիշ է, որպիսին հանդիպում է Հերոդոտոսի երկի այլ հատվածներում ևս: Պատմական իրականությունն այն է, որ Առաջավոր Ասիայում սկյութական լայնածավալ նվաճումները հաջորդել են կիմերական նվաճումներին:

Ասորեստանյան աղբյուրներում նշվում է, որ սկյութները կայանել էին «Մանացիների երկրում», այսինքն՝ Սկյութական «թագավորությունը» հարևան էր Ուրմիա լճի հարավ-արևելքում գտնվող Մանայի թագավորությանը: Սակայն որտեղից էին սկյութները հասել Մանայի տարածք, մինչև ուր էին հասնում նրանց գերիշխանության սահմանները, երբ և ինչ ուղիներով են տեղի ունեցել նրանց տեղաշարժերը, առայժմ մնում է անհայտ:

Սկզբնաղբյուրներում առաջին անգամ *սկյութ* ցեղանունը հիշատակվում է Ասար-հաղոթնի իշխանության տարիներին՝ Ք. ա. 670-ական թթ.: Այստեղ նրանց *škuša* անվանումը հանդես է գալիս *աշկ/գուգա* տարբերակով: Սկյութների տարածքը, որը տարածվում էր մինչև Մանա երկրի սահմանները և Ուրմիո լիճ, կոչվում էր *Iškuzâ(y)* կամ *Ašguzâ(y)/Asguzâ(y)*:

2. ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՂԵՐԻ ՆԱԽԱՀԱՅՐԵՆԻՔԻ ԽՆԴԻՐԸ

Ըստ Հերոդոտոսի՝ սկյութները Առաջավոր Ասիա են ներթափանցել Մեծ Կովկասի լեռնաշղթայով՝ Սև ծովի հյուսիսային առափնյա շրջաններից: Ուշագրավ է, սակայն, որ «Իլիականը» այդ շրջաններում հիշատակում է միայն թրակացիներին, մյուսներին և արիներին: Դա նշանակում է, որ Ք. ա. X-VIII դդ. հույնի համար անծանոթ է եղել *սկյութ* ցեղանունը:

Սկյութների ծագման հերոդոտոսյան հատվածից երևում է, որ Պատմահայրն օգտվել է իրարամերժ աղբյուրներից՝ դրանց տվյալները համադրելով իր պատմական հայեցակարգին: Նրա օրոք հելլենները սկյութ էին անվանում հյուսիսսևծովյան տարածքի բնակիչներին, այնինչ Առաջավոր Ասիայում այլևս սկյութներ հայտնի չէին: Հերոդոտոսը տեղյակ էր սկյութների կողմից կիմմերների երկիրը գրավելու գրոյցին, սակայն այդ պատմությունը նա փորձում է տեղայնացնել իրեն ծանոթ աշխարհագրական տարածքներում: Այնուամենայնիվ, ըստ Հերոդոտոսի, սկյութների ծագման մասին «*կա մեկ այլ գրոյց ևս, որին ևս առավել հավիված եմ: Այն այսպիսին է: Ասիայում բնակվող վաշկատուն սկյութները, պատերազմում նեղվելով մասսագետներից, անցել են Արաքս գետը և եկել կիմմերների երկիրը, քանզի, ինչպես պատմում են, այժմ սկյութների գրադեցրած երկիրը անցյալում պատկանելիս է եղել կիմմերներին:*»

Հաշվի առնելով այն փաստը, որ մասսագետները Հերոդոտոսի ժամանակ տարածվում էին Կասպից ծովից արևելք, սույն տեղեկության մեջ հիշատակված Արաքսը հետազոտողները հաճախ նույնացրել են Սիրդարյա գետին: Սակայն իրավացիորեն նշվել է, որ Արաքս անունով կարող էին կոչվել Սիրդարյա, Վուգա կամ հայկական Արաքս գետերը: Կարծիք կա նաև, որ այդ գետը եղել է Ամուդարյան, որի իսկական անունն էր Օքսուս, բայց հայկական Արաքսի ազդեցությամբ այն անտիկ հեղինակները հաճախ կոչել են Արաքս:

Հետագայում Արտամոնովը հակվեց հերոդոտոսյան Արաքսը հայկական Երասխի հետ նույնացմանը: Նրա կարծիքով՝ սկյութները Արաքսն անցել են Առաջավոր Ասիայում իշխելուց հետո և կրկին վերադարձել Կովկասից հյուսիս գտնվող իրենց նախահայրենիք: Այս տեսության հիման վրա ենթադրվեց, որ սկյութները նախապես բնակվել են Կենտրոնական Ասիայում և հետագայում անցնելով Ամուդարյա-Արաքսը՝ շարժվել են դեպի Առաջավոր և Փոքր Ասիա, իսկ ավելի ուշ պարսվելով մարերից՝ անցել են Երասխ-Արաքսը և հայտնվել Սև ծովի հյուսիսում:

Այնուամենայնիվ, Հերոդոտոսի և Դիոդորոս Սիկիլիացու հաղորդումներից կարելի է հանգել այն հետևության, որ սկյութներն իսկապես կիմմերների երկրում հայտնվել են՝ անցնելով հայկական Արաքսը: Ընդ որում՝ Այսրկովկասից նրանց «վերադարձի» մասին որևէ ակնարկ չկա վերոհիշյալ երկերում: Ավելին՝ նրանք պարզորոշ նշում են, որ արաքսամերձ շրջանը սկյութների սկզբնական բնակության տարածքն էր:

Դիոդորոսը, որն օգտվել է առավել հին աղբյուրներից, գրում է, որ սկյութները սկզբում փոքր թվով բնակվում էին Արաքս գետի մոտ, բայց շնորհիվ իրենց ռազմասեր արքաներից մեկի, նրանք նվաճեցին մինչև Կովկասյան լեռնային երկիրը, ինչպես նաև այլ շրջաններ Մայոտիս լճի երկայնքով՝ ընդհուպ մինչև Թանախս գետը:

Այստեղից կարելի է ենթադրել, որ սկյութների ծագման առնչությամբ նշված գետը հայկական Արաքսն է, որտեղից սկյութներն անցել են Կովկասյան լեռները և հասել մինչև Ազովի ծով (= Մայոտիս լիճ) և Դոն գետ (= Թանախս): Հետևաբար սկյութների նախնական բնակության տարածքը եղել է Արաքս-Երասխ-գետի ստորին հոսանքի մոտ՝ Առանի կամ Մուդանի դաշտավայրում, որտեղ հասել են մասսագետների արշավանքները: Ս. Երեմյանի կարծիքով՝ մասսագետները դեռ մեր թվարկության սկզբին բնակվելիս են եղել Ապշերոնի թերակղզուց հյուսիս՝ մինչև Սամուր գետ: Թե որ դարում են նրանք այնտեղ թափանցել, դժվար է ասել: Այսուհանդերձ, սկյութների նախահայրենիքը բավական հեռու է եղել Կասպից ծովից, քանի որ թե՛ Հերոդոտոսը, թե՛ Դիոդորոսը, նշելով Արաքսի մասին, ոչինչ չեն գրում Կասպիցի վերաբերյալ:

Հետագայում հենց այս շրջաններից պետք է սկյութա-սակերի մի ալիքը տեղաշարժվեր անդրկասպյան տարածքներ և Կենտրոնական Ասիա՝ Արաքս գետի անունը տեղափոխելով Ամուդարյա կամ Սիրդարյա գետերի վրա: Պատահական չէ, որ մարդաբանական նյութի քննությունը ցույց է տալիս, որ կենտրոնասիական սակերին վերագրվող հատկանիշներն ունեն ակնհայտորեն առաջավորասիական ծագում:

Սկյութների ինքնանվան՝ *սկոլոտ* ցեղանվան հնագույն տարբերակը՝ *sk(i)slu- կամ *sk(i)olo- արմատը, սեպագիր աղբյուրներում հիշատակվում է դեռևս Ք. ա. VIII դ.: Այն նշվում է առանց «սկյութական» հոգնակիակերտ -t վերջածանցի, որտեղից կարելի է եզրակացնել, որ այդ ցեղը կամ ժողովուրդը եղել է ոչ իրանական, այսինքն՝ պատկանել է այժմ ընդունված ընկալմամբ սկյութների՝ նախաիրանական բաղկացուցիչ շերտին:

Ուրարտագիտության մեջ ընդունված էր այս ժողովրդի և նրա երկրի անունը կարդալ ^{KUR}iš-qi-gu-lu կամ 'iš-qu-gu-ul-hi: Սակայն եթե հաշվի առնենք, որ ուրարտերենում երկու ձայնավորի միջև տարածված է եղել -y- > -g- անցումը, ապա Իշկիգուլու կամ Իշկուգուլի երկրանունը պետք է ընթերցվեր ^{KUR}iš-qi-yu-lu կամ 'iš-qu-yu-ul-hi: Այս դեպքում արդեն ակնառու է սկյութների սկոլոտ ցեղանվան *sk(i)slu- / *sk(i)olo- արմատի հետ նրա առնչությունը՝ սեպագրին հատուկ i- նախահավելվածով:

Իշկի(յ)ուլուն տեղադրվում է միջնադարյան Աշոցք գավառի տեղում՝ մինչև Չալդր լճի արևելյան ափը: Ոմանք այս ցեղի բնակության սահմանները հյուսիսում հասց-

նում էին մինչև Ջավախք և Թռեղք՝ համարելով, որ այն գտնվում էր Կուր գետի միջին հոսանքից հարավ-արևմուտք:

Իշկի(յ)ուլուն հիշատակվում է Արգիշտի I-ի Մարմաշենի արձանագրությունում, որտեղից ակնհայտ է դառնում, որ այդ ցեղի զբաղեցրած տարածքը գտնվում էր Էրիախի երկրից հյուսիս: Արգիշտիի նույն տեքստում այն նշվում է կրկին Էրիախի հարևանությամբ. այստեղ խոսվում է դեպի Էթիունի կատարած արշավանքի մասին: Ընդ որում՝ կարելի է եզրակացնել, որ Էրիախին և Կատարգան մտնում էին Էթիունիի մեջ, բայց Իշկի(յ)ուլուն՝ ոչ:

3. ՍԿՅՈՒԹԱԿԱՆ «ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ» ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԸՆԴԱՐՁԱԿՈՒՄԸ

Ի. Դյակոնովի կարծիքով՝ սկյութների ընդհանրական ցեղանունն ի սկզբանե եղել է «Արիա» (aryā-), ինչպես և այլ իրանական ժողովուրդներինը: Այս տեսակետը, բնականաբար, չի տարածվում սկյութների նախաիրանական նախնիների վրա, որոնց լեզվի նշանակալից տարրերը որպես ենթաշերտ պահպանվել են սկյութերենում և նրա ժառանգ հանդիսացող լեզուներում, մասնավորաբար՝ օսերենում:

Սկյութների արիական նախնիները առաջին անգամ հիշատակվում են Ռուսա I-ի Ծովինարի արձանագրությունում՝ Սևանա լճի հարավային ափին: Այստեղ նշվում է, որ Ռուսան գրավել է «լճից այն կողմ գտնվող» 19 երկրներ, այդ թվում՝ Արիա(ինի) և: Այս երկրանունը Գ. Մելիքիշվիլին ընթերցում է ^{KUR}a-ri-a, իսկ Ն. Հարությունյանը՝ ^{KUR}a-ri-a-i-ni՝ համարելով, որ -ini-ն ոչ թե հոլովական վերջավորություն է, այլ տեղանվանական վերջածանց:

Դժվար է ասել, թե որքանով էր հիմնավոր Ռուսա I-ի կողմից անդրսևանյան երկրների նվաճումը: Կարծիք կա, որ նրա հիմնական հարվածն ուղղված է եղել Սևանի ավազանում գտնվող չորս երկրների դեմ: Ամեն դեպքում, անդրսևանյան երկրների անվանական հիշատակումը այս արձանագրության մեջ ցույց է տալիս, որ այդ ժամանակ սկյութները և նրանց հարևան ցեղերը դեռ հանդես չէին գալիս որպես մեկ միասնական ուժ և չունեին զորեղ «թագավորություն», որը կարողանար դիմակայել Վանի թագավորության զորքերին: Հատկապես թե ընդունում ենք ^{KUR}a-ri-a-i-ni ընթերցումը, ապա շատ հավանական է, որ «սկյութական» այդ երկիրը գտնվում էր Կուր-Արաքսյան միջագետքի հարևանությամբ, որը հետագայում ստացավ *Առանի դաշտավայր* անվանումը:

Արդեն Բ. ա. VIII դ. վերջերին սկյութների իրանալեզու քոչվոր նախնիները սկսում են տարածվել դեպի Հայկական լեռնաշխարհ և Իրանական սարահարթ երկու հիմնական ուղղություններով՝ հյուսիս-արևմուտքով և հարավով: Նրանք օգտվեցին տարածաշրջանում ստեղծված բարենպաստ իրադրությունից, քանի որ Վանի թագավորության արքա Արգիշտի II-ն իր կառավարման առաջին տարիներին

րին ողջ ուժերը կենտրոնացրել էր տերության հարավային և արևմտյան մատույցներին: Այնուհետև՝ Բ. ա. 705 թ. սկսած, Արգիշտիին անհանգստացնում էին հզորացող վերինեփրատյան երկրները, իսկ հյուսիսում՝ կիմերները:

Այնուամենայնիվ, հավանաբար Բ. ա. VII դ. սկզբներին Արգիշտիին հաջողվում է արշավանք ձեռնարկել դեպի Սյունյաց լեռներ: Այստեղ նա գրավեց «Էթիունյան» երկիր Ծուլուկուն, որը պետք է գտնվեր Սյունիքի Ծղուկ գավառի տեղում: Ծուլուկուի արքա Զազինուն գերվեց, իսկ նրա երկիրն ընդունեց Արգիշտիի գերիշխանությունը: Թվում է՝ Արգիշտին այդպիսով կանխեց սկյութների ճանապարհը դեպի Նախճավանի և Շարուրի դաշտ:

Սակայն քոչվոր արիական ցեղերը բնականաբար պետք է Մուղանի դաշտից փորձեին բարձրանալ Արաքսի հոսանքն ի վեր: Հնարավոր է, որ նրանք հասել էին մինչև Առան գետ (ժաման. Հազարի), իսկ այստեղից մոտ էր Նախճավանի դաշտը և ճանապարհը դեպի Վանի թագավորության ներքին շրջաններ: Հենց այս պատճառով, թերևս, Արգիշտին ձեռնամուխ եղավ Վարժական գետի ավազանի նվաճմանը՝ ներկայիս Ահար, Սարաբ և Արդարիլ քաղաքների միջև: Այդպիսով նա ամբողջությամբ փակեց արիական ցեղերի ուղին դեպի Հայկական լեռնաշխարհի հարավ-արևելք:

Ըստ երևույթին, դեպի Հայկական լեռնաշխարհի արևելյան շրջաններ և մասնավորապես Սևանա լճի ավազան իրենց առաջխաղացման ճանապարհին արիախոս «սկյութները» հանդիպում են նաև լեռնական ցեղերի դիմադրությանը. այդ պատճառով իրենց ուղին շարունակում են Կուր գետի հովիտն ի վեր: Այսուհանդերձ, հնարավոր է, որ արիական այս ցեղերի մի ճյուղին դեռևս VIII դ. հաջողվել էր բարձրանալ Խաչեն գետի հոսանքով և հաստատվել միջնադարյան Մեծ Առանք գավառում, որն էլ, հավանաբար, հիշատակվում է Ծովինարի արձանագրության մեջ՝ լճից այն կողմ գտնվող «բարձր լեռներում»՝ որպես Արիա(ինի):

Սկյութների արիախոս նախնիների մեկ այլ ճյուղ կարող էր Հազարի գետի հոսանքով բարձրանալ հետագայի Աղահեճք գավառ, որի անվանումը կապում են թաթախոս լաիճների ցեղանվան հետ: *Ala(h)ič/*Ala(y)ič ցեղանունը կարող էր -ič ցեղանվանակերտ վերջածանցով ծագել ala- «իշխան» արմատից (հմմտ. ինգուշ. alæ «իշխան»), որն ուղղակի ներկայացնում է aryā- «արիացի» բառի սկյութական կամ կովկասյան հնչյունափոխված տարբերակը:

Հավանաբար *š/skuδa- ցեղանունը արիախոս քոչվոր ցեղերն ընդունել են հենց VIII և VII դդ. սահմանագծի շրջանում, երբ հասնում են Էթիու-նի/խի երկրից հյուսիս գտնվող շրջաններ՝ Թռեղք, Ջավախք և Աշոցք: Այստեղ սկյութների արիախոս նախնիները կարող էին հայտնվել՝ տեղաշարժվելով Կուր գետի հովտով դեպի վեր: Ի տարբերություն հարավում Վանի թագավորության ստեղծած «պատնեշի», արևմուտքում՝ լեռնական ցեղերի դիմադրության, և արևելքում՝ հավանաբար մասսագետների հարձակումների, հյուսիսում սկյութները, թերևս, լուրջ դիմադրության չեն հանդիպել: Արաքսի ստորին հոսանքի շրջանից սկիզբ առած նախասկյութական ցեղերի նման տեղաշարժի օգտին է վկայում նաև Այսրկովկասում «սկյութական» հնագիտական հուշարձանների տեղադրության քարտեզը:

Այս սկյութական ցեղերը հաստատվեցին ներկայիս Գյանջա քաղաքի շրջակայքում՝ Կուրի աջափնյակում: Ըստ Ստրաբոնի՝ սակերը «Հայաստանում տիրացան լավագույն հողերին, որոնց տվեցին իրենց անվանումը՝ Սակասենն»: Հուն. Σακασσηνῶν գավառանունը ծագում է սկյութ. *Saka-šayana բարդությունից, որը նշանակում է սակերի բնակավայր: Նշված երկրամասը հետագայում հայերեն հնչել է Շակաշեն: Ենթադրվում է, որ այստեղ է գտնվել Սկյութական «թագավորության» կենտրոնը:

Սկյութ-սակերի մյուս ճյուղը Շակաշենից անցել է Կուր գետը և հաստատվել հետագայի Շաքե գավառում՝ ժամանակակից Շաքի քաղաքի շրջակա տարածքներում: Ամենայն հավանականությամբ հենց այս տարածաշրջանում՝ հետագայի Կամբեճան գավառում են առաջին անգամ սկյութները շփվել օսերի կովկասյան նախնիների հետ: Այդ երկրամասը զբաղեցնող տեղաբնիկ ցեղերը սկյութների ինքնանվանումներից մեկը՝ aryāna-ն, հետագայում հնչեցրել են aīan, ինչը հաստատվում է արդի օսերենում *ry > I հնչյունական օրինաչափ անցմամբ:

Նախքան սկյութների ժամանումը Կամբեճան (*վրաց. Her-et-i*) գավառում բնակվում էր տեղաբնիկ ոչ քարթվելական *հեր* ժողովուրդը, որի մասին արձագանքները պահպանվել են «Հայկի և Բելի» առասպելի վրացական տարբերակում: Եկվոր սկյութները ժամանակի ընթացքում իրենց լեզուն և ցեղանունը (*aryāna*) թողել են հեր ժողովրդին՝ մեծապես ենթարկվելով նրա լեզվական ազդեցությանը, սակայն անմիջական հարևանները՝ չեչենների, ինգուշների, ավարների նախնիները, շարունակում էին նրանց կոչել *հիրի*:

Սկյութական հզոր ազդեցության ենթարկված տեղաբնիկ այս ժողովուրդը ժամանակի ընթացքում տարածվել է մինչև Կովկասյան լեռնաշղթայի երկու փեշերը՝ հարավային և հյուսիսային: Հենց այս ժամանակներում՝ Ք. ա. VII-VI դդ. է թվագրվում Հարավային Օսիայում գտնվող Թլիի դամբանադաշտը, որը հայտնի է իր սկյութական գտածոներով: Նույն դարաշրջանով են թվագրվում նաև մերձկուրանյան տարածքներից պեղված բազմաթիվ գտածոներ, որոնք վկայում են Այսրկովկասի, Վանի թագավորության և ավելի հարավային երկրների հետ առնչությունների մասին: Ըստ երևույթին, այդ երկրների հետ առևտրական կապերի մեջ նշանակալից դեր ուներ Սկյութական «թագավորությունը»:

4. ՍԿՅՈՒԹԱԿԱՆ ՅԵՂԵՐԻ ՆԵՐԹԱՓԱՆՑՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԵՆԱՐՏ

Հաստատվելով Շակաշենում՝ սկյութների արիական նախնիները հարմար կենտրոնական դիրք զբաղեցրին իրենց շրջապատող լեռնական ցեղերի համեմատ: Այստեղից նրանց մի ճյուղը Սևանա լճի հյուսիսային ափով հայտնվեց Հրազդան գետի հովտում, որտեղ գտնվում էր Կելխունի «երկիրը»:

Սկյութա-սակերի ներթափանցումը Հրազդանի հովիտ չէր կարող կրել զանգ-

վածային բնույթ, քանի որ Դիլիջանի լեռնանցքը հարմար չէր մեծաքանակ բնակչության առաջխաղացման համար: Սկյութների հիմնական հոսանքն, ըստ երևույթին, շարժվելով Կուրի հովտով դեպի հյուսիս-արևմուտք, հասավ հետագայի Վիրքի տարածք: Վիրքով սկյութները շարունակեցին իրենց ուղին դեպի արևմուտք, որտեղից «սկյութական դուռ» կոչված հովտով մտան ժամանակակից Ասպինձայի շրջան: Միջնադարյան հայկական աղբյուրներում այդ «դարպասը» կոչվում է Դուռն Ասկուրա, որում պահպանվել է սկյութների հայերեն ցեղանվան հնագույն տարբերակը (*սկուր կամ *ասկուր): Այստեղ հետագայում կառուցվել է Ասկուրա կամ Ասկուրեթ բերդը, որի պաշտպանական պարիսպների ավերակները պահպանվում են առ այսօր: Թերևս նույնպես սկյութների ցեղանունից կազմված *Ասկուրե* անունով գյուղեր հայտնի էին նաև Էրզրումի և Մուշի գավառներում:

Ինչ վերաբերում է Ասպինձա / *Ասպնջակ տեղանվանը (ժաման. Ախալցխայի և Ախալքալաքի միջև), ապա, հավանաբար, այն կազմվել է սկյութ. *aspinj- արմատից: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ասպինձա ձևում առկա է օսերենին հատուկ j - j անցում, այդ տեղանունը կարելի է կապել սկյութ. *aspinj- > *վրց. sa-m-aspinj-lo* «*հյուրասիրություն*», m-aspinj-eli «*հյուրընկալ տանտեր(ուհի)*», հայ. ասպ(ա)նջ- «*հյուրընկալ*» արմատի հետ:

Ասպինձայի շրջանից սկյութները մտել են Վանի թագավորության աղբյուրներում հիշատակված Ջարախա երկիր, որը գրավվել էր Արգիշտի I-ի կողմից: Ջարախան այդ ժամանակ, ըստ երևույթին, հետագայի Արտահան գավառով հասնում էր մինչև Չալդր լճից արևմուտք ընկած շրջաններ և մասամբ համապատասխանում էր միջնադարյան հայկական Ջավախքին: Հիմնականում Ջարախա ցեղային երկիրը, հետևաբար, զբաղեցնում էր Կուր գետի վերին հոսանքի շրջանը և գտնվում էր մի կողմից՝ Դիաուխի, մյուս կողմից՝ Իգանիի ու Իշկիյուլուի միջև:

Ջարախայից սկյութները պետք է մտնեին Իշկիյուլու և Իգա(նի) «երկրներ», որոնցից առաջինը տեղադրվում է Աշոցքի տեղում՝ մինչև Չալդր լճի արևելյան ափը: Իգա(նի)ն գտնվում էր լճից հարավ-արևմուտք, ընդ որում՝ այն հավանաբար կոչվում էր համանուն ցեղի անունով, քանի որ գրված է նաև ցեղանվան որոշագրով՝ *i-ga-ni-e-hi*:

Ամենայն հավանականությամբ, Իգանի և Իշկիյուլու «երկրների» տարածքով սկյութական ցեղերը մտան Վանի թագավորության սեպագրերում հիշատակվող Էրիախի երկիր, որը տեղադրվում է Շիրակում: Էրիախի երկրանունը առնչվում է *հեր* ցեղանվանը: Գ. Մելիքիշվիլին Էրիախի երկրի սահմանները հասցնում էր մինչև Հերեթի երկրամաս:

Այրարատ աշխարհի Շիրակ գավառանունը բազմիցս համադրվել է սկյութ. *συρακοι* «սիրակ» ցեղանվան հետ: Հավանաբար այդ ցեղանունն առնչվում է նաև Կամբեճ և Ալազան գետերի միջև ընկած *Շիրակյան* դաշտի անվանը, որը գտնվում է Հերեթում: Ն. Ադոնցի կարծիքով՝ աորսները և սիրակները, որոնք առևտրական հարաբերությունների մեջ էին հայերի հետ, իրենց անունները թողել են Այրարատ աշխարհի՝ միմյանց սահմանակից երկու գավառների վրա՝ Աշոցք և Շիրակ:

Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան այս շրջաններում հաստատված սկյութները հիշատակվում են հույն պատմագիրների կողմից: Այսպես՝ Քսենոփոնը տայեցիների, խալդերի և խալյուրների հարևանությամբ հիշատակում է *սկյութիններ*՝ *ռի* ցեղ, որոնց քաղաքն էր Գյումնիաքը. սրանց կողքին՝ հավանաբար հետագայի Ջավախքում կամ Արտահանում, բնակվում էր նրանց թշնամի այլ ցեղ: Դիոդորոս Սիկիլիացու համաձայն՝ *սկյութինների* երկիրը գտնվում էր հարթավայրային տեղանքում, որտեղից 15 օր գնալով՝ հույները տեսան Սև ծովը:

Քսենոփոնի վկայությամբ՝ հույները սկյութինների երկիր մտնում են՝ անցնելով Հարպասոս (Ἀρπασος) գետը: Ս. Պետրոսյանը այդ գետանվան առնչությամբ ենթադրում է, որ այն ունեցել է հավանաբար թրակյան ծագում և հանգում է *h.-l.* *āpra նախաձևին, որը նա բացատրում է āp — «ջուր» արմատով և -ra մասնիկով: Այս ենթադրությունը, սակայն, զուրկ է որևէ հիմքից, քանի որ թրակերենում «ջուր» բառը հնչում է βέδν (*h.-l.* *wedō[r]) նախաձևից):

Եթե իրոք Ἀρπασος գետանվան արմատն ընդունում ենք *arpa- ձևը, ապա այդ նույն ջրանունը տեսնում ենք ոչ միայն Շիրակում (Արփալիճ և Արփա=Ախուրյան գետ), այլև Վայոց ձորում՝ Արփա գետ, Գեղարքունիքում՝ Արփա(կ)՝ լճակ Գավառագետի ձախափնյակում, Արցախում՝ Արփագետիկ (Շուշիից մոտ 20 կմ հարավ): Սկյութական *arp- / *apr- արմատն առկա է նաև Ἀρρόξαις անձնանվան մեջ. այդպես է Հերոդոտոսը կոչում սկյութների առասպելական նախահայր Տարգիտաոսի որդուն, որը համարվում էր սկյութական մի ցեղախմբի անվանադիրը:

Ինչ վերաբերում է Երասխ «Արաքս» գետանվանը, ապա նրա իրանական ծագումը կասկածի տեղիք չի տալիս: Ըստ Ռ. Շմիդտի, այն հանգում է *իրան.* *a-raxsa «անյույս, մթին», իսկ ըստ Վ. Հինցի՝ մարերեն raxs «փայլուն» բառերին: Ա. Փերիխանյանը Երասխ գետանունը համարում է ծագած *իրան.* *ran(g)- «արագ շարժվել» բայի raxsā «արագընթաց» դերբայական ձևից:

Վերջին ստուգաբանությամբ՝ հաստատվում է նաև սկյութների սկզբնական նախահայրենիքի այն վարկածը, ըստ որի՝ նրանք բնակվում էին Արաքսի ստորին հոսանքի ձախափնյակում: Այսինքն՝ կանգնելով Արաքսի հոսանքի ուղղությամբ և նայելով դեպի արևելք՝ գետը գտնվում էր նրանց աջ կողմում: Փաստորեն, «Արաքս» և «աջ» հասկացությունները նախասկյութների լեզվում համընկնում էին:

Այսպիսով՝ Ք. ա. VII դ. սկզբին Սկյութական «թագավորությունը», հավանաբար, ընդգրկում էր Կուր գետի հովտում ընկած ողջ հարթավայրային տարածքը (բացառությամբ, թերևս, մերձկասպյան շրջանների)՝ հյուսիսում հասնելով մինչև Վիրք, Թռեղք ու Ջավախք, իսկ հարավում՝ մինչև հետագայի Վարդանակերտ քաղաքի շրջակայք: Թերևս հենց այս կողմերում անցնելով Արաքսը և իջնելով հարավ-արևմուտք՝ սկյութներն ընդհուպ մոտենում են Մանայի թագավորությանը:

5. ՍԿՅՈՒԹՆԵՐԸ ԱՌԱՋԱՎՈՐ ԱՄԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔՈՒՄ

«Աշգուգայի գորքերը» կամ «Ասքանագյան գունդը»

Ըստ ասորեստանյան տեքստերի՝ Ք. ա. 670-ական թթ. սկյութական առաջնորդ Իշպական, Մանայի հետ դաշինք կնքելով, արշավում է Ասորեստանի վրա: Տեքստում բառացի ասում է. «Ես մանացիների Երկրի մարդկանց, ըմբոստ կուտիներին ցրողն եմ, որը զենքով հարվածեց նրանց չփրկած Իշպակայի՝ սկյութի՝ դաշնակցի գորքերին»:

«Մանայի ժողովրդի գորքերն», ինչպես երևում է, կազմված էին ոչ թե մանացիներից, այլ եկվոր սկյութներից, այդ պատճառով էլ բնորոշվում են որպես *As-gu-za-a-a, այսինքն՝ Աշգուգայի: Ինչ վերաբերում է «Իշպակա(յ)ա» անունից առաջ դրված գաղափարագրին (𐎠), ապա այն թե՛ անձնանվան, թե՛ ցեղանվան ցուցիչ է, և տվյալ դեպքում, մեր կարծիքով, ցույց է տալիս գորքերի հատուկ անվանում՝ զորատեսակի բնորոշում, որն, ըստ էության, էթնիկ հիմունքով էր ստեղծված:

Աքքադ. *Is-pa-ka-a-a տերմինն իրավամբ Ֆ. Յուստիի կողմից վերականգնվում է որպես *Ասպակա. դրա ուշ տարբերակը III դ. երկու անգամ հանդիպում է Թանախի հունատառ վիմագրերում՝ Ἰσπακός տառադարձմամբ: Ասպակ անունը ստուգաբանվում է *իրան.* *aspa- (ou. æfsæ «մատակ») «նժույգ» արմատով՝ որպես «հեծյալ, նժույգավոր»: Սկյութերենում *իրան.* *aspa- «նժույգ» արմատից -āka վերջածանցով կազմվել էր *aspāka «նժույգավոր» բառը, որի ուղղակի վկայությունն է հյուսիսսևծովյան Aspāk(a) անձնանունը:

Այն, որ Ասարհադդոնի՝ խնդրո առարկա տեքստում նշված *aspāka տերմինին ավելացված է *իրան.* -(a)ya վերջածանցը, ակնհայտ ցույց է տալիս, որ տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե անձնանվան, այլ «նժույգավորային», «հեծյալային» բնորոշման հետ: Ամենայն հավանականությամբ այդպես էին սկյութները կոչում իրենց զորքը կամ հեծելազորը, որն էլ սեպագրային տառադարձմամբ նշվել է *Is-pa-ka-a-a ձևով: Կարելի է ենթադրել, որ Մանայում տեղակայված սկյութական հեծելազորի *Aspākaya անվանումը մանացիների միջոցով անցել է ասորեստանցիներին, ընդ որում՝ վերջիններս դա կարող էին ընկալել որպես ցեղանուն:

Տեսականորեն և հնչյունաբանորեն միանգամայն հնարավոր է նաև, որ Ասարհադդոնի տեքստում հիշատակված *Aspākaya անունը կազմված լինի ոչ թե *սկյութ.* *aspa- «նժույգ» արմատից, այլ մարական spaka «շուն» բառից: Մանավանդ եթե այն համեմատենք *պարթ.* Spak անվան հետ, որն, ամենայն հավանականությամբ, կարող է հանգել նույն spaka «շուն» արմատին: Այս ստուգաբանության դեպքում՝ *Aspākaya-ն անունը պետք է բացատրվեր որպես «շնային» և կարող էր այդպես բնորոշվել միայն հարևան ժողովուրդների (ասենք՝ մարերի) կողմից: Մեր կարծիքով՝ քիչ հավանական է, որ սկյութական գորքերը կամ նրանց առաջնորդը կոչվեին օտար բառով՝ այն էլ «շուն» նշանակող: Առավել հավանական է *aspāka «նժույգավոր» իմաստը:

Ամենայն հավանականությամբ, հենց այդ սկյութական հեծյալներն են հիշատակված Ս. Գրքում՝ Երեմիայի մարգարեության մեջ. «Ահա մի ժողովուրդ է գալիս հյուսիս-

սից՝ մի հզոր ազգ և արքաներ քազմաթիվ քարձրանում են երկրի ծագերից: [Նրանք] աղեղ և գեղարդ ունեն պահած, դաժան են նրանք՝ չեն խղճահարվում, նրանց ձայնը շատաչում է ծովի նման, վարգում են նժույգներով՝ մեկ մարդու նման շարված քո դեմ պատերազմի, դո՛ւստր Բաբելոնի: Երբ Բաբելոնի թագավորը այս լուրը լսեց, նրա ձեռքերը թուլացան. տազնապը համակեց նրան՝ ծննդկան կնոջ երկունքի պես»:

Սկյութները և Մանան

Այսպիսով՝ Մանայում տեղակայված դաշնակից սկյութների հեծելազորը այն հիմնական ուժն էր, որը սպառնում էր Ասորեստանի անվտանգությանը:

«Մանացիների երկրում» կայանած սկյութական զորքերի մասին հիշատակվում է նաև Ասարհադդոնի գուշակային տեքստերում: Մի քանի անգամ սկյութները նշվում են մարերի մեծ ապստամբության առնչությամբ, որին, ի դեպ, մասնակցել են նաև մանացիները և կիմերները: Տեքստերից մեկում, որը թվագրվում է Ք. ա. 674 թ., Ասարհադդոնը հարցնում է. «Սկյութների զորքերը, որ ապրում են մանացիների երկրամասում և որ եկել են մանացիների սահմանագլուխ, մտադի՞ր են արդյոք, ծրագրո՞ւմ են արդյոք, դուրս կգա՞ն արդյոք Խուրուշկիա երկրի լեռնանցքով ընդդեմ Խառանիա և Անիսուսկիա բնակավայրերի: Կկողոպտեն՞ արդյոք, կառգրավեն՞ մեծաքանակ ալվար Ասորեստանի սահմաններից»:

Թեև ենթադրվում է, որ սկյութների առաջնորդը զոհվել էր Ասարհադդոնի մանայական արշավանքի ժամանակ, սակայն պարզ է, որ ասորեստանցիները չեն կարողացել լուրջ հաջողության հասնել դաշնակիցների դեմ պատերազմում:

Ասարհադդոնի գուշակային տեքստերում սկյութները հիշատակվում են նաև նրա՝ Պատուշարի երկիր արշավելու կապակցությամբ՝ Կասպից ծովից հարավ՝ Էլբուրսի լեռների ստորոտում, ինչպես նաև Բեհիսթունի շրջանի առնչությամբ: Մեկ այլ տեղ սկյութները նշվում են սապարդացիների, կիմերների և մարերի հետ: Այս տեղեկությունների հիման վրա ենթադրվում է, որ սկյութները դաշնակցում էին ոչ միայն մանացիների, այլև մարական ցեղերի հետ և Ք. ա. 674 թ. հասել էին կենտրոնական Մարաստան: Ք. ա. VII դ. առաջին տասնամյակներին մարական ցեղերը դեռևս չէին ստեղծել ամուր պետական կազմավորումներ և հանդես էին գալիս տրոհված:

Սկյութական զորքերը, գտնվելով դաշնակից Մանայում, մի քանի տասնամյակ շարունակ ահեղ սպառնալիք էին Ասորեստանի համար: Այնուամենայնիվ, Ասորեստանը, հավանաբար, անմիջականորեն չէր սահմանակցում Սկյութական «թագավորությանը», քանի որ Ասորեստանի հարևանների թվում նշվում են միայն Ուրարտուն, Խուրուշկիան, Մանան և Մարաստանը:

Եթե ասորեստանյան տեքստերում սկյութների «թագավորությունը» կոչվում է Աշգուգա կամ Իշկուգա, ապա Վանի թագավորության շրջանի տեքստերում այն, ենթադրվում է, վկայված է ʿiṣ-qu-gu-ul-ḫi տարբերակով: Քանի որ Ուրարտուի արքաները դեռևս Ք. ա. VIII դ. սկսած ծանոթ էին Աշոցքի և Զավախքի տարածքում

գտնվող Իշկիյույու երկրին, որի անունը հետագայում դարձավ սկյութական ցեղերի ընդհանրական ինքնանունը, ուստի և Սկյութական «թագավորությունը» նրանք կոչում են նույն անվամբ:

Վան քաղաքի մոտակայքում՝ Ռուսախինիլից գտնված արձանագրության մեջ, հիշատակվում է Իշկույուլի թագավորության արքան, որի անունը նախկինում ընթերցվում էր 'sa-ga-áṣ-tar-a: Լեման-Հաուպտը ենթադրում էր, որ այն Իշկույուլիի արքայի նամակն է Ռուսա II-ին, ինչը չէր ընդունում Գ. Մելիքիշվիլին: Վերջինս արձանագրության համապատասխան մասը թարգմանում էր այսպես. «Մագաշտարան՝ Իշկույուլիի արքան, արշավեց Մանայի վրա...»:

Ի. Դյակոնովը, ճշգրտելով արձանագրության ընթերցումը, առաջարկեց *šá-ga-TUR-tar-a կամ *šá-ga DUMU tar-a, այսինքն՝ «Շագա՝ որդի ավագ»: Դրանից հետո եկող LUGÁL ʿiṣ-qu-gu-ul-ḫi-e կապակցությունը նա թարգմանում էր որպես «Իշկույուլիի արքայի», իսկ ամբողջը միասին՝ «Իշկույուլիի արքայի ավագ որդի Շագա»՝ ենթադրելով, որ այդ անձնավորությունը՝ որպես կուսակալ, գտնվում էր Վանի թագավորության շրջանի արքայի մոտ ծառայության մեջ: Հետագայում ենթադրվեց, որ Իշկույուլիի այս գահաժառանգը Ռուսա II-ի փոխարքան էր Մանա երկրում:

Ն. Հարությունյանը առաջարկել է թարգմանել այսպես. «Այն (?) տարում, [երբ] Ռուսա Արգիշտորդու քաղաքից Շագան՝ ավագ որդին, Իշկույուլիի [երկրի] եկավ Մանա՝ Ակավա վայր...»:

Բավական հետաքրքիր ընթերցում է առաջարկում Մ. Սավինին՝ «Շագապուտարա»: Ըստ նրա՝ TUR սեպանշանը, որը Ի. Դյակոնովն ընթերցում էր DUMU՝ «որդի», այստեղ պետք է ընկալվի որպես հնչյունազիր «pu / bu»: Ըստ այդմ՝ նա Իշկույուլիի արքայի անունը ընթերցում է *šá-ga-pu-tar-a:

Այս անձնանվան առաջին՝ «շագա»- քաղաղրիչը վաղուց արդեն համադրվել է սկյութների սակ/շակ ցեղանվանը: Երկրորդ՝ «պուտարա» քաղաղրիչը, թվում է՝ ներկայացնում է *իրան*. puθra-, *հին հնդ.* putra- «որդի» բառի սկյութական տարբերակը՝ *putra-, որը սեպագրային տառադարձմամբ կարող էր գրվել putara: Հետագայում, սկյութերենին հատուկ դրափոխության օրենքի համաձայն՝ տեղի է ունեցել *putra- > *purta- հնչյունափոխություն, որտեղից ունենք Πουρθαίος, Πουρθακός, Φουρτας սկյութական անձնանունները՝ վկայված արդեն մեր թվարկության սկզբին:

Այսպիսով՝ գործ ունենք մի արքայի հետ, որը սկյութերենով կոչվում էր *šaga-putara «սակի որդի», իսկ հայերենում ամենայն հավանականությամբ՝ Սկայորդի: Ըստ Մովսես Խորենացու՝ «մեր քաջ նախնի» Սկայորդին եղել է Ասորեստանի Սենեբերիմ արքայի ժամանակակիցը, Պարույր թագավորի հայրը:

Սկայորդի անունը գրաբարում քառացիորեն նշանակում է «սկայի որդի», որը հավանաբար ուշ ժողովրդական ստուգաբանություն է: Ամենայն հավանականությամբ, *սկայ*- արմատը ծագում է այն ցեղերի անունից, որոնք հաստատվել էին Շակաշենում, Գարդանքում, Թռեղքում, Զավախքում, Աշոցքում և շրջակա տարածքներում:

Հայ. *(h-)սկայ* բառի ծագումը Գր. Ղափանցյանը բխեցնում է սկյութների կամ սակերի ցեղանունից, որից կազմված է նաև Պարոյր Սկայորդու անունը: Գ. Ջահուկյանը, սակայն, Սկայորդի անունը համեմատում է թրակ. Σκαίοι, Σκαίβοαι ցեղանունների հետ, որոնք բխեցնում է հ. -ե. *(s)kāi- «լուսավոր» արմատից, և այդ անվան հետ է կապում *հայ.* սկայ, *հ-*սկայ բառերը: Նշված երկու ստուգաբանությունները հակասական չեն, քանի որ թրակյան ցեղերը հաճախ հանդես էին գալիս սկյութական ցեղերի հետ միախառնված: Հավանական է, որ սկյութական ցեղերը «լուսավոր» արմատով են անվանակոչվել իրենց արտաքին բաց գունավորման պատճառով:

Սկյութական «թագավորության» արքա Շագապուտարա-Սկայորդին գահակալել է, հավանաբար, մինչև Ք. ա. 670-ական թթ. սկզբները: Նրան այնուհետև փոխարինում է որդին՝ Պարտատուա-Պարոյրը:

Ամենայն հավանականությամբ, Մանայի տարածքում գտնվող սկյութական զորաջոկատները ենթարկվում էին «Աշկուգայի» արքա Պարտատուային: Ն. Ադոնցը տարբերակում է մտցնում Իշպակայի իշխանության և Պարտատուայի թագավորության միջև՝ համարելով, որ դրանք սկյութական ցեղերի տիրույթների առանձին հատվածներ էին: Առավել հավանական է թվում, սակայն, այն ենթադրությունը, որ Մանայի սկյութական հեծելազորը ենթարկվում էր Պարտատուային:

Ասարհադդուն, իր գուշակային տեքստերից մեկում դիմելով Շամաշ աստծուն, խնդրում է խորհուրդ տալ իրեն՝ արդյոք վստահի Իշկուգայի արքա Պարտատուային և իր դատերը տա նրան կնության: Պարզվում է, որ Պարտատուան բանքեր էր ուղարկել Ասորեստանի արքայի մոտ ամուսնության, ինչպես նաև բարեկամական հարաբերություններ հաստատելու հարցով: Ըստ երևույթին, այդ խնդիրները դրական ընթացք ստացան, քանի որ դրանից հետո «Սկյութական թագավորությունը» դարձավ Ասորեստանի դաշնակիցը:

Բ. Պիտրովսկու կարծիքով՝ ասորեստանյան աղբյուրների Պարտատուան նույն ինքը Պրոտոթյունես է, որը հիշատակվում է Հերոդոտոսի «Պատմության» մեջ, իսկ Մովսես Խորենացին նրան անվանում է Պարոյր Սկայորդի: Պարտատուայի մահը թվագրվում է Ք. ա. 645 թ.:

Ըստ Հերոդոտոսի՝ Պրոտոթյունեսի որդի Մադյունեսի օրոք Մարաստանը 28 տարով ընկավ սկյութական տիրապետության տակ: Ենթադրվում է, որ մարերի պարտությունը սկյութներից տեղի է ունեցել Ք. ա. 653/652 թ., և սկյութների գերիշխանությունը տևել է մինչև Ք. ա. 625 թ., որից հետո Մարաստանում գահ է բարձրացել Կիաքսարը:

Հավանաբար Ք. ա. 651/650 թ. սկյութներին հաջողվեց Վանի թագավորությունը նույնպես մասամբ ենթարկել իրենց և այնտեղ գահ բարձրացնել Էրիմենային: Այս անձնանունը չի հանդիպում ուրարտական արքայացանկում, և խիստ կասկածելի է նրա պատկանելությունը Վանի թագավորության գահատոհմին: Այնուհետև, Էրիմենայի որդի Ռուսա III-ի գահ բարձրանալով, Վանի թագավորության անկման գոր-

ծընթացն էլ ավելի արագացավ, քանի որ սկսվեց պայքար այս ուժի և ուրարտական հին արքայատոհմի միջև:

Սկյութական գերիշխանությունը չէր նշանակում, որ Վանի թագավորությունը և մարական պետությունը դադարեցին գոյություն ունենալուց. նրանք ուղղակի ժամանակավորապես կախվածության մեջ ընկան սկյութներից: Ըստ Հերոդոտոսի՝ սկյութներն իրենց բռնությամբ ամեն ինչ կործանման հասցրին: Հպատակ ժողովուրդներից վերցրած հարկից գատ, նրանք անցնում էին երկրով մեկ և ամեն ինչ հափշտակում:

Հզորացած սկյութներին հաջողվեց ավերիչ արշավանքներով հասնել մինչև Սիրիա և Եգիպտոս: Ըստ Հերոդոտոսի՝ եգիպտական փարավոն Պսամմետիս I-ը նվերներով և ընծաներով կանգնեցրեց նրանց առաջխաղացումը: Այն, որ սկյութները հասել են մինչև Սիրիա և Պաղեստին, ապացուցվում է նաև հնագիտական և տեղանվանական տվյալներով: Մասնավորապես, Պաղեստինում գտնվող Բեթ-Շեան քաղաքը հելլենիստական շրջանում կոչվում էր Սկյութոպոլիս:

Մարական արքա Կիաքսարի կողմից ջախջախվելուց հետո սկյութների մեծ մասը հեռացավ Սև ծովի հյուսիսային առափնյա շրջաններ, սակայն տեղում մնացածները ենթարկվեցին Մարաստանին: Ենթադրվում է, որ Առաջավոր Ասիայի սկյութների ինքնանունը՝ *skuša*, հունարեն տառադարձվելով որպես *σκυθαι*, հետագայում տարածվեց բոլոր հյուսիսսևծովյան ցեղերի վրա: Հատկանշական է, որ գրեթե բոլոր զինատեսակները, որոնք հին աշխարհում համարվում էին սկյութական և բազմիցս հանդիպում են հյուսիսսևծովյան պատկերագրության մեջ, ունեն այսրկովկասյան ծագում:

Սկյութների այն մասը, որ մնաց Հայկական լեռնաշխարհում, կազմեց հայ ժողովրդի բաղկացուցիչ մասերից մեկը և իր լեզվի բազմաթիվ տարրեր թողեց հայոց տեղանուններում, անձնանուններում ու բառապաշարում: Դրա հետ մեկտեղ, դեպի հյուսիս տեղաշարժվածները միատարր չէին. դրանց կազմում փոքր թիվ չէին կազմում Այսրկովկասի և Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի ներկայացուցիչները, որոնք ներառվել էին սկյութական պետական կազմավորումների մեջ:

Այդ գերիշխանությունից մի քանի տասնամյակ անց՝ Ք. ա. 593 թ., Ս. Գրքում՝ Երեմիայի մարգարեության մեջ, հիշատակվում են Արարատի, Միննիի և Աքքանազի թագավորությունները: Սկյութական «թագավորության» մասին հիշողությունը այնքան խորն էր Մեծ Հայքում, որ անգամ մոռացվել էին Արարատի (= Վանի թագավորություն) և Միննիի (= Մանա) թագավորությունների անվանումները, մինչդեռ «Աքքանազյան» անվանումը դեռ հարատևում էր: Թերևս այդ է պատճառը, որ V դ. սկզբին՝ Աստվածաշունչը թարգմանելիս, մարգարեության վերոհիշյալ հատվածը ներկայացվել է որպես «Այրարատյան թագավորություն» (= Հայաստան) և Աքքանազյան գունդ», այսինքն՝ Սկյութական «թագավորությունն» ընկալվել է ոչ թե որպես առանձին պատմաաշխարհագրական միավոր, այլ որպես «Այրարատյան» թագավորության հետ առնչվող զորագնդի անվանում:

Կորյունը հայերին ուղղակիորեն կոչում է «Աքանազյան ազգ»: Իր նշանավոր «Վարք Մաշտոցի» աշխատությունը Կորյունը սկսում է հենց այս բառերով. «ՋԱԳՔԱՆԱՍԳԵԱՆ ԱԳԳԻՆ ԵՎ ՉՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՐԻՆ ԳԱՏՈՒՈՒԹԱԿԱՐԳԵԱ ԳՐՈՅՆ, ԵՔԷ ԵՐՐ ԵՎ յՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱՍԿԻ ՄԱՏՈՒՍԿԱՐԱՐԵՑԱՆ ԵՎ ՈՐԱԿԻՄԻՎՈՒՄՆԵՐ ԱՆՈՐԳԱՏՈՒՐ ԱՍՏՈՒԱԾԵՂԷՆ շՆՈՐԽԱ ԵՐԵՆԵՑԱՆ...»:

Առայժմ պատմական աղբյուրների սակավության պատճառով դժվար է որոշել, թե Սկյութական «թագավորության» սահմանները Հայկական լեռնաշխարհի մինչև որ շրջաններն են տարածվել: Դրա հետ մեկտեղ, կասկածից վեր է, որ նշված «թագավորության» բնակչության մեջ՝ մանավանդ հյուսիսային տարածքներում, զգալի թիվ են կազմել հայերը: Հենց այս հիմնավորմամբ էլ Ք. ա. VII դ. Հայկական լեռնաշխարհը, մասնավորապես նրա հյուսիսարևելյան, հյուսիսային և արևմտյան շրջանները կարելի է պայմանականորեն կոչել «Աքանազյան-Թորգոմյան տարածք»: Ա. Քոսյանի բնորոշմամբ՝ «Աքանազյան-Թորգոմյան տարածքը» կարող էր լինել այն արեալը, որտեղ նախապես քաղաքական իշխանությունը գտնվել է առաջինների ձեռքում, իսկ հետագայում անցել երկրորդներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբելյան Մ., Երկեր, հ. Ա, Երևան, 1966:
Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972:
Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987:
Ավետիսյան Հ. Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ. թ. ա. XVII-IX դարերում, Երևան, 2002:
Դալայան Ս., Ալանական ցեղանունների առկայությունը Հայկական լեռնաշխարհի ցեղերին, Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ (Երիտասարդ գիտնականների 9-րդ նստաշրջանի զեկուցման հիմնադրույթներ), ՀՀ ԳԱԱ ՀԱԻ (խմբ. Ս. Բ. Հարությունյան և այլք), Երևան, 1999: 18-20 և Հայ ազգաբանության և հնագիտության խնդիրներ, պրակ I, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ (խմբ. Դ. Ս. Վարդումյան և այլք), Երևան, 63-68, 2006:
Դալայան Ս., Շիրուան տեղանուն ստուգաբանության շուրջ, Հայկագետան հայագիտական հանդես, հ. 26, 17-28, 2006:
Դիողորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան (թարգմանությունը՝ Ս. Մ. Կրկյաշարյանի), Երևան, 1985:
Երեմյան Ա. Ս., Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ատրեստանի պայքարը քոչվորների դեմ, ՊԲՀ 2, 89-116, 1968:
Երեմյան Ա. Ս., Ն. Մառը և VII դարի հայոց «Աշխարհացոյցը» // Մառը և հայագիտության հարցերը, Երևան, 75-91, 1968:
Կանայանց Սո., Անհայտ գավառներ Հին Հայաստանի, Էջմիածին, 1914:
Կարազոյցյան Հ., Ուրարտական գաղափարագիր անձնանուններ, ԼՀԳ 1, 72-80, 1984:
Կորյուն, Վարք Մաշտոցի (աշխատասիրությամբ Մանուկ Աբելյանի), Երևան, 1981:
Հակոբյան Թ. Խ., Սոտ. Ս. Մելիք-Բախչյան, Հ. Խ. Բարսեղյան. Հայաստանի և հարա-

կից շրջանների տեղանունների բառարան (1-4), Երևան, 1988, 1991, 1998, 1986:
Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից (թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1986:
Ղափանցյան Գր., Հայոց լեզվի պատմություն. հին շրջան, Երևան, 1961:
Սկրտչյան Ռ., Փիլիսոփայան Ա., Աքանազյան ազգի և Թորգոմի տան ժառանգաբանական խնդիրների շուրջ, Հայոց սրբերը և սրբավայրերը (խմբ. Ս. Բ. Հարությունյան, Ա. Ա. Քալանթարյան), Երևան, 383-394, 2001:
Մովսիսի Խորենացու Պատմություն հայոց (քննական բնագիրը Մ. Աբելյանի և Ս. Հարությունյանի, աշխարհաբար թարգմ. և մեկնաբանությունները Սոտ. Մալխասյանի), Երևան, 1981:
Մովսիսյան Ա., Միտաննիի արքաները Հայկագուն նահապետների ցանկում, Երիտասարդ արևելագետների հանրապետական 20-րդ գիտական նստաշրջան, Ջեկուցումների թեզեր, Երևան, 25-27, 1999:
Պետրոսյան Ա. Ե., Արամազդ, Երևան, 2006:
Պետրոսյան Ս. Գ., Շարայի ցեղամիությունը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում (մ. թ. ա. VI-V դդ.), ԼՀԳ 12. 65-75, 1979:
Ջահուկյան Գ. Բ., Հայերենը և թրակերենը, ԲԵՀ 2, 54-72, 1968:
Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
Քոսյան Ա. Վ., Էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. XII դարում («Ծովի ժողովուրդներ», մուշկեր և ուրումեացիներ), ՊԲՀ 1, 65-78, 1991:
Քոսյան Ա. Վ., Տուն Թորգոմայ, Երևան, 1998:
Քոսյան Ա. Վ., Մ. թ. ա. XII դարի մերձավորարևելյան ձգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999:

- Քոսյան Ա. Վ., Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում, ՊԲՀ 3, 161–174, 2000:
- Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների), Երևան, 2004:
- Քոսյան Ա., Արիացիները Պախխուվայում, ՄՄԱԵԺ XXV, 247–258, 2006:
- Քսենոփոն, Անարխիս (թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1970:
- Абаев В. И., Осетинский язык и фольклор, I, Москва–Ленинград, 1949.
- Абаев В. И., Историко–этимологический словарь осетинского языка, I–IV, Ленинград, 1958–1989.
- Абаев В. И., Скифо–европейские изоглоссы на стыке востока и запада, Москва, 1965.
- Аветисян Г. М., Военно–политические отношения между Митанни и Хеттским государством в середине XIV в. до н. э., ВОНА 9, 104–110, 1977.
- Аветисян Г. М., Хурриты на рубежах Малой Азии до установления могущества Митанни, ДВ 3, 5–24, 1978.
- Аветисян Г. М., Государство Митанни в эпоху войн с хеттским царем Суппилулиумой I, ИФЖ 1, 176–1986, 1978.
- Аветисян Г. М., Политическая история Митанни с XVI–XV вв. до н. э., ВДИ 1, 3–8, 1978.
- Аветисян Г. М., Государство Митанни при последних царях индо–арийской династии, ИФЖ 3, 56–61, 1982.
- Аветисян Г. М., Государство Митанни, Ереван, 1984.
- Аветисян Г. М., Из политической истории государства Киццуватны, ДВ 5, 5–20, 1988.
- Аветисян Г. М., Северная Месопотамия и юго–западные области Армянского нагорья, Ереван, 1997.
- Арки А., Заметки о географическом кругозоре текстов Эблы III тысячелетия до н. э. – В сб.: ДЭ, 297–317, 1985.
- Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
- Артамонов М. И., К вопросу о происхождении скифов, ВДИ 2, 37–47, 1950.
- Артамонов М. И., Киммерийцы и скифы (от появления на исторической арене до конца IV в. до н. э.), Ленинград, 1974.
- Гарелли П., Замечания по топонимике из архивов Эблы. – В сб.: ДЭ, 280–296, 1985.
- Гиоргадзе Г. Г., К вопросу о локализации и языковой структуре каспских этнических и географических названий, ПС 1, 161–210, 1961.
- Гомер. Илиада (перевод Н. И. Гнедича, издание подготовил А. И. Зайцев), Ленинград, 1990.
- Дунаевская И., О характере и связях языков древней Малой Азии, ВЯ 6, 62–79, 1954.
- Дьяконов И. М., Ассиро–вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951/2, 257–356, 1951/3, 207–252, 1951/4, 283–305, 1951.
- Дьяконов И. М., О языках древней Передней Азии, ВЯ 5, 43–64, 1954.
- Дьяконов И. М., История Мидии, Москва–Ленинград, 1956.
- Дьяконов И. М., Урартские письма и документы, Москва–Ленинград, 1963.
- Дьяконов И. М., Языки древней Передней Азии, Москва, 1967.
- Дьяконов И. М., Предыстория армянского народа (История Армянского нагорья с 1500 по 500 г. до н. э. Хурриты, лувийцы, протоармяне), Ереван, 1968.
- Дьяконов И. М., Арийцы на Ближнем Востоке: конец мифа, ВДИ 4, 39–63, 1970.
- Дьяконов И. М., Фригийский язык. – В сб.: Древние языки Малой Азии, Москва, 356–377, 1980.
- Дьяконов И. М., Хуррито–урартский восточно–кавказские языки, ДВ 3, 25–38, 1978.
- Есаян С. А., М. Н. Погребова, Скифские памятники Закавказья, Москва, 1985.
- Капанцян Гр., Хайаса–колыбель армян, Ереван, 1948.
- Капанцян Гр., Историко–лингвистические работы (К начальной истории армян. Древняя Малая Азия), Ереван, 1956.
- Капанцян Гр., Хурритские слова армянского языка. – В сб.: Историко–лингвистические работы, Ереван, 270–305, 1975.
- Кузьмина Е. Е., Первая волна миграции индо–иранцев на юг, ВДИ 4, 3–20, 2000.
- Куклина И. В., Этнография Скифии по античным источникам, Ленинград, 1985.
- Леонти Мровели, Жизнь картлийских царей (извлечение сведений об абхазах, народах Северного Кавказа и Дагестана): перевод с древнегрузинского, предисловие и комментарии Г. В. Цулая, Москва, 1979.
- Меликишвили Г. А., Наири–Урарту, Тбилиси, 1954.
- Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, Москва 1960.
- Мкртчян Н. А., Субстратные названия растений в армянском языке, ДВ 4, 24–37, 1983.
- Мкртчян Н. А., Семитские языки и армянский, Ереван, 2005.
- Периханян А. Г., Материалы к этимологическому словарю древнеармянского языка, часть I, Ереван, 1993.
- Пиотровский Б. Б., История и культура Урарту, Ереван, 1944.
- Пьянков И. В., К вопросу о путях проникновения ираноязычных племен в Переднюю Азию, ПС 3, 193–207, 1979.
- Страбон, География (перевод, статья и комментарии Г. А. Стратановского), Ленинград, 1964.
- Струве В. В., Новые данные по древней истории Армении, засвидетельствованные Бехистунской надписью, ИАН АрмССР 8, 31–38, 1946.
- Тер–Мартirosов Ф. И., Скифское царство в Передней Азии и исторические основы предания о Паруйре Скайорди как царе Армении, ИФЖ 1–2, 67–84, 1994.
- Техов Б. В., Скифы и Центральный Кавказ в VII–VI вв., Москва, 1980.
- Хачатрян В. Н., Восточные провинции Хеттской империи (Вопросы топонимики), Ереван, 1971.
- Хачикян М. Л., Шумерско–хурритский словарь из Рас–Шамры как источник по хурритской диалектологии, ВДИ 3, 21–38, 1975.
- Хачикян М. Л., Из старохурритских заклинаний, ДВ 2, 251–265, 1976.
- Хачикян М. Л., Диалектное членение хурритского языка (краткая сводка), ДВ 3, 39–46, 1978.
- Хачикян М. Л., Заметки по хурритской и урартской грамматике, ДВ 4, 174–178, 1983.
- Хачикян М. Л., Хурритский и урартский языки, Ереван, 1985.
- Хачикян М. Л., О соотношении хурритских и урартских диалектов, ДВ 5, 213–223, 1988.
- Хачикян М. Л., К типологической характеристике хурритского и урартского языков, КБС 5, 94–101, 1988.
- Хачикян М. Л., Историко–типологический анализ эламского, хурритского и урартского языков: параллели и расхождения. – История и языки Древнего Востока. Памяти И. М. Дьяконова, Санкт–Петербург, 314–326, 2002.
- Хачикян М. Л., Вид/время в хурритском и урартском языках. – В сб.: Эдубба вечна и постоянно (Материалы конференции, посвященной 90–летию со дня рождения И. М. Дьяконова), Санкт–Петербург, 242–247, 2005.
- Янковская Н. Б., Ашшур, Митанни, Аррапхэ. – В кн.: ИДМ I, 174–196, 1989.
- Abrahamyan L., Hero Chained on a Mountain: On the Semantic and Landscape Transformations of a Proto–Caucasian Myth, AJNES 1, 208–221, 2006.
- Archi A., The Names of the Primeval Gods, Or. 59/2, 114–129, 1990.
- Archi A., Substrate: Some Remarks on the Formation of the West Hurrian Pantheon. – In: Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp (eds. H. Otten et al.), Ankara, 7–14, 1992.
- Astour M. C., Hattušiliš, Halab, and Hanigalbat, JNES 31, 102–109, 1972.
- Astour M. C., Semites and Hurrians in Northern Transjstigris. – In: SCCNH 2, 3–68, 1987.
- Beckman G., Hittite Diplomatic Texts, Atlanta, 1996.
- Breasted J. H., Ancient Records of Egypt. II, Chicago, 1927.
- Bryce T. R., The Kingdom of the Hittites, Oxford, 1998.
- Buccellati G. – Kelly–Buccellati M., Das

- archäologische Projekt Tall Mozan/Urkeš, MDOG 111, 7–16, 1999.
- Cagni L. (ed.), *La Lingua di Ebla. Atti del convegno internazionale* (Napoli, 21–23 aprile 1980), 1981.
- Cagni L. (ed.), *Il Bilinguismo a Ebla. Atti del convegno internazionale* (Napoli, 19–22 aprile 1982), Napoli, 1984.
- Carruba O., Beiträge zur mittelhethitische Geschichte. I–II, SMEA 18, 137–195, 1977.
- Cuyler Young T. Jr., *A Comparative Ceramic Chronology for Western Iran 1500–500 B. C.*, Iran 3, 53–85, 1965.
- Cuyler Young T. Jr., *The Iranian Migration into the Zagros*, Iran 5, 11–34, 1967.
- Çilingiroğlu A., M. Salvini (eds), *Ayanis I (Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kai 1989–1998)*, Roma, 2001.
- Diakonoff I. M., *Hurrisch und Urartäisch*, München, 1971.
- Diakonoff I. M., *Die Arier im Vorderen Orient: Ende eines Mythos (Zur Methodik der Erforschung verschollener Sprachen)*, Or. NS, 41/1, 91–120, 1972.
- Diakonoff I. M., *Evidence on the Ethnic Division of the Hurrians*. – In: SCCNH 1, 77–89, 1981.
- Diakonoff I. M., *Hurro–Urartian Borrowings in Old Armenian*. JAOS 105/4, 597–603, 1985.
- Dion P. E., *Aramaean Tribes and Nations of First-Millennium Western Asia* – In: CANE I–II, 1281–1294, 1995.
- Donner H. und W. Röllig, *Kanaanische und aramaische Inschriften, I–II*, Wiesbaden (II ed. 1968), 1962–64.
- Dumont P. –E., *Indo–Aryan Names from Mitanni, Nuzi, and Syrian Documents*, JAOS 67/4, 251–253, 1947.
- Edzard D. O., *Geschichte Mesopotamiens. Von den Sumerern bis zu Alexander dem Grossen*, München, 2004.
- Fales F. M., *On Aramaic Onomastica in the Neo-Assyrian Period*, OA 16, 41–68, 1977.
- Fales F. M., *Aramaic Epigraphs on Clay Tablets of the Neo-Assyrian Period*, Roma, 1986.
- Forrer E., *Hajasa–Azzi*, Caucasia 9, 1–24, 1931.
- Foster B., *The Siege of Armanum*, Journal of the Ancient Near Eastern Society of Columbia University 14, 27–36, 1982.
- Frayne D. R., *The Royal Inscriptions of Mesopotamia, Early Periods / Vol. 2, Sargonic and Gutian Periods (2334–2113 BC)*, Toronto–Buffalo–London, 1993.
- Friedrich J., *Hethitisches Elementarbuch, II T.*, Heidelberg, 1946.
- Friedrich J., *Churritische Märchen und Sagen in hethitischer Sprache*, ZA 49, 213–255, 1950.
- Gardiner A., *The Kadesh Inscriptions of Ramesses II*, Oxford, 1965.
- Garelli P., *Nabonide*. – Dictionnaire de la Bible. Supplément, Fasc. 31, 269–286, 1958.
- Garelli P., *Importance et rôle des araméens dans l'administration de l'empire Assyrien*. – In: *Mesopotamien und seine Nachbarn* (Hrsg. H. –J. Nissen und J. Renger), Berlin, 437–447, 1982.
- Garstang J. O. R. Gurney, *The Geography of the Hittite Empire*, London, 1959.
- Gelb I., *Hurrians and Subarians*, Chicago, 1944.
- Gelb I., *Sargonic Texts from the Diyala Region*, Chicago, 1952.
- Gelb I., *New Light on Hurrians and Subarians*, Studi Orientalistici in onore di Giorgio Levi della Vida I, Roma, 378–392, 1956.
- Ghirshman R., *L'Iran et la migration des Indo-aryens et des Iraniens*, Leiden, 1977.
- Gordon C. H., *The Geographical Horizons of Ebla*. – In: *New Horizons in the Study of Ancient Syria* (Eds. M. W. Chavalas, J. L. Hayes) (=Bibliotheca Mesopotamica 25), Malibu, 63–68, 1992.
- Goetze A., *On the Chronology of the Second Millennium B. C.*, JCS 11, 53–61, 63–73, 1957.
- Götze A., *Die Annalen des Muršiliš* (=MVAG, № 38), 1933.
- Grayson A. K., *Assyrian Royal Inscriptions, vol. I*, Wiesbaden, 1972.
- Grayson A. K., *Assyrian Royal Inscriptions, vol. II*, Wiesbaden, 1976.
- Grayson A. K., *The Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods / vol. 1: Assyrian Rulers of the Third and Second Millennia BC (to 1115 BC)*, vol. I, Toronto – Buffalo – London, 1987.
- Greppin J. A. C., *Some Effects of the Hurro–Urartian People and their Languages upon the Earliest Armenians*, JAOS 111/4, 720–730, 1991.
- Greppin J. A. C., *Substratum in Armenian*, AJNES 1, 196–201, 2006.
- Güterbock H. G., *Kumarbi: Mythen vom churritischen Kronos aus den hethitischen Fragmenten zusammengestellt, übersetzt und erklärt*, Zürich–New York, 1946.
- Güterbock H. G., *The Song of Ullikummi*, JCS 5, 135–161, 1951.
- Güterbock H. G., *The Song of Ullikummi (continued)*, JCS 6, 8–42, 1952.
- Güterbock H. G., *The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II*, JCS 10, 41–68, 75–98, 107–130, 1956.
- Güterbock H. G., *Survival of the Hittite Dynasty*. – In: *The Crisis Years: the 12th century B. C. From Beyond the Danube to the Tigris* (eds. W. A. Ward and M. Sh. Joukowsky), Dubuque, 53–55, 1992.
- Haas V. – Thiel H. –J., *Die Beschwörungsritual der Allaiturah(h)i und verwandte Texte*, Neukirchen–Vluyn (=AOAT 31), 1978.
- Hagenbuchner A., *Die Korrespondenz der Hethiter*, Heidelberg, 1989.
- Heinhold–Krahmer S., *Zu Salmanassars I. Eroberungen im Hurritergebiet*, AfO 35, 79–104, 1988.
- Heltzer M., *The Suteans*, Naples, 1981.
- Herles M., *Zur geographischen Einordnung der ahlamû – eine Bestandsaufnahme*, AoF 34, 319–341, 2007.
- Hintze A., E. Tichy (eds.), *Anusantatyai. Festschrift für Johanna Narten zum 70. Geburtstag*, Münchener Studien zur Sprachwissenschaft, Beiheft NF 19, Dettelbach, 2000.
- Hoffner H. A., *Hurrian Civilization from a Hittite Perspective*. – In: *A View From the Highlands* (ed. A. Sagona), Herent, 167–200, 1998.
- Houwink ten Cate Ph. H. J., *The Records of the Early Hittite Empire*, Istanbul, 1970.
- Hrouda B., *Die Churriter als Problem archäologischer Forschungen*, Archaeologia Geographica, 14–19, 1958.
- Jakob–Rost L., *Das Lied von Ullikummi*, Leipzig, 1977.
- Justi F., *Iranisches Namenbuch*, Marburg, 1895.
- Kammenhuber A., *Hippologia Hethitica*, Wiesbaden, 1961.
- Kammenhuber A., *Die Arier im Vorderen Orient*, Heidelberg, 1968.
- Kammenhuber A., *Die Arier im Vorderen Orient und die historischen Wohnsitze der Hurriter*, Or. 46, 129–144, 1977.
- Kazanas N., *Indigenous Indo–Aryans and the Rigveda*, JIES 30, 275–334, 2002.
- Kelly–Buccellati M., *The Outer Fertile Crescent Culture: North Eastern Connections of Syria and Palestine in the Third Millennium B. C.*, UF 11, 413–430, 1979.
- Kempinski A. und Košak S., *Der Išmeriga–Vertrag*, WO 5/2, 191–217, 1969–1970.
- Kenyon K. M., *Archaeology in the Holy Land*, London, 1960.
- Kessler K. –H., *Untersuchungen zur historischen Topographie Nordmesopotamiens nach keilschriftlichen Quellen des 1. Jahrtausends v. Chr.*, Wiesbaden (=TAVO Beiheft 26), 1980.
- Khačikyan M. L., *On the Typology of the Hurro–Urartian Verb*. – In: SLANE, 165–168, 1982.
- Khačikyan M. L., *Towards the categories of aspect and version in Hurro–Urartian*, ZA 74/1, 92–97, 1984.
- Khačikyan M. L., *On Some Models in Hurrian Onomastics*. – In: SCCNH 2, 153–156, 1986.
- Khačikyan M. L., *On Some Hurro–Urartian Phonemes in the Light of the Armenian Evidence*, SMEA XXXIV, 111–113, 1994.
- Khačikyan M. L., *Sur la caractéristique typologique de l'hourro–urartéen*. – In: SCCNH 5, 21–28, 1995.
- Khačikyan M. L., *The Hurrian Verb Revisited*. – In: SCCNH 10, 257–265, 1999.
- Khačikyan M. L., *On the Origin and Evolution of the Particle –ne in Hurrian*. – In: SCCNH 15, 185–190, 2005.
- Khačikyan M. L., *To the Genesis of the Category of Aspect in Hurrian and Urartian*, AJNES III/1, 61–69, 2008.
- Khačikyan M. L., *Notes on Hurro–Urartian Phonology and Morphology*, AoF 36/2, 234–242, 2009.
- Klengel H., *Zum Brief eines Königs von Hanigalbat (IBoT I 34)*, Or. 32/3, 280–291, 1963.
- Klengel H., *Die Hethiter und Išua*, OA 7, 63–76, 1968.
- Klengel H., *Mitanni: Probleme seiner Expansion*

- und politischen Struktur, RHA XXXVI, 91–115, 1978.
- Klengel H., *Syria 3000 to 300 B. C.*, Berlin, 1992.
- Knudtzon J. A., *Die El-Amarna-Tafeln*, Leipzig, 1915.
- Kosyan A., *An Aryan in Isuwa, Iran and the Caucasus* 10/2, 1–6, 2006.
- Kraeling E. G., *Aram and Israel*, New York, 1918.
- Kühne C., *Die Chronologie der internationalen Korrespondenz von El-Amarna*, Neukirchen-Vluyn/Kevelaer (=AOAT 17), 1973.
- Kühne C., *Imperial Mittani: An Attempt at Historical Reconstruction*. – In: SCCNH 10, 203–221, 1999.
- Landsberger B., *Die Basaltstele Nabonids von Eski-Harran*, –Fs. Halil Edhem, vol. I, Ankara, 115–151, 1947.
- Landsberger B., *Sam'al*, Ankara, 1948.
- Landsberger B., *Assyrische Königsliste und 'Dunkles Zeitalter'*, JCS 8, 31–73, 106–133, 1954.
- Laroche E., *Recherches sur les noms des dieux hittites*, Paris, 1947.
- Laroche E., *Textes mythologiques hittites en transcription*, Leiden, 1969.
- Laroche E., *Glossaire de la langue hourrite*, Paris, 1980.
- Lehmann G., *Der Untergang des hethitischen Gross-reiches und die neuen Texte aus Ugarit*, UF 2, 39–73, 1970.
- Littauer M. A. and J. H. Crowell, *Wheeled Vehicles and Ridden Animals in the Ancient Near East*, Leiden, 1979.
- Loon M. van, *Mitanni – a link between east and west?*, Persica X, 47–64, 1982.
- Mallory J. P., *In Search of the Indo-Europeans: Language, Archaeology and Myth*, London, 1989.
- Matthiae P., *Ebla. Un Impero Ritrovato*, Torino, 1977.
- Matthiae P., *Ebla. An Empire Rediscovered*, London–Sydney–Auckland–Toronto, 1980.
- Mayrhofer M., *Die Indo-Arier im Alten Vorderasien*, Wiesbaden, 1966.
- Mayrhofer M., *Die Arier im Vorderen Orient – ein Mythos? (Österreichische Akad. d. Wiss. Phil.–Hist. Klasse, Bd. 294, Abh. 1)*, Wien, 1974.
- Mayrhofer M., *Welches Material aus dem Indo-Arischen von Mitanni verbleibt für eine selektive Darstellung?* – In: Neu 1982, 72–90, 1982.
- Mayrhofer M., *The Earliest Linguistic Traces of Aryans outside India and Iran*, Journal of the K. R. Cama Oriental Institute 50, 87–95, 1983.
- Millard A. R., *Assyrians and Aramaeans*, Iraq 45/1, 101–108, 1983.
- Mironov N. D., *Aryan vestiges in the Near East of the second millennium B. C.*, Acta Orientalia 11, 140–217, 1932–1933.
- Moorey P. R. S., *The emergence of the light, horsedrawn chariot in the Near East c. 2000–1500 B. C.*, World Archaeology 18/2, 196–215, 1986.
- Neu E., *Investigationes philologicae et comparativae*. – In: *Gedenkschrift für Heinz Kronasser*, Wiesbaden, 1982.
- O'Callaghan R. T., *Aram Naharaim. A Contribution to the History of Upper Mesopotamia in the Second Millennium B. C.*, Roma, 1948.
- Oppenheim L. A. et al., *Glass and Glassmaking in Ancient Mesopotamia*, Corning, New York, 1970.
- Otten H., *Ein Brief aus Hattusa an Bābu-ahū-iddina*, AfO 19, 39–46, 1959–1960.
- Otten H., *Die Apologie Hattušiliš III. Das Bild der Überlieferung*, Wiesbaden (= StBoT 24), 1981.
- Parpola A., *Nāsatyas, the Chariot and Proto-Aryan Religion*, Journal of Indological Studies 16–17, 1–63, 2004–2005.
- Parrot M., *J. Nougayrol, Un document de fondation hourrite*, RA 42, 1–20, 1948.
- Pettinato G., *Catalogo dei Testi Cuneiformi di Tell Mardikh, Materiali Epigrafici di Ebla – I*, Napoli, 1979.
- Pettinato G., *The Archives of Ebla. An Empire Inscribed in Clay*, New York, 1981.
- Piggott S., *The Earliest Wheeled Transport from the Atlantic Coast to the Caspian Sea*, London, 1983.
- Pritchard J. B., *The Ancient Near East, An Anthology of Texts and Pictures*, Princeton/London, 1958.
- Reade J. E., *Studies in Assyrian Geography. Part I: Sennacherib and the Waters of Nineveh*, RA 72/2, 157–180, 1978.
- Röllig W., *Jarmuti, Jarimuta*. – In: RLA V/3–4, 266–267, 1977.
- Saggs H. W. F., *The Nimrud-Letters, 1952 – I: The Ukin-zer Rebellion and Related Texts*, Iraq 17, 21–56, 1955.
- Salvini M., *The Earliest Evidence of the Hurrians Before the Formation of the Reign of Mittani*. – In: *A View From the Highlands*, Herent, 75–98, 1998.
- Sarianidi V., *Near Eastern Aryans in Central Asia*, JIES 27, 295–326, 1999.
- Sasson J. M., *Hurrians and Hurrian Names in the Mari Texts*, UF 6, 353–399, 1974.
- Sasson J. M., *Hurrian Personal Names in the Rimah Archives*, Assur 2, 37–68, 1979.
- Schiffer S., *Die Aramäer, historisch-geographische Untersuchungen*, Leipzig, 1911.
- Schmitt R., *Aryans*. – In: *Yarshater 1985–*, 684–687, 1987.
- Schuler von E., *Die Kaškäer, Ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien*, Berlin, 1965.
- Schwartz G. M., *The Origins of the Aramaeans in Syria and Northern Mesopotamia: Research Problems and potential strategies*. – In: *To the Euphrates and Beyond*, Brookfield (= Fs. M. van Loon), 275–291, 1989.
- Siegelova J., *Appu-Märchen und Hedammu-Mythus*, Wiesbaden (= StBoT 14), 1971.
- Siegert H., *Zur Geschichte der Begriffe 'Arier' und 'arisch'*, Wörter und Sachen 22, NF 4, 73–99, 1941/42.
- Sims-Williams N. (ed.), *Indo-Iranian Languages and Peoples, Proceedings of the British Academy* 116, Oxford, 2002.
- Singer I., *Hittites and Hattians in Anatolia at the Beginning of the Second Millennium B. C.*, JIES 9, 119–134, 1981.
- Singer I., *The Battle of Nihriya and the End of the Hittite Empire*, ZA 75, 100–123, 1985.
- Smith S., *The Statue of Idri-mi*, London, 1949.
- Soden W. Von, *Aramaische Wörter in neuassyrischen und spät-babylonischen texten*, Or. 46, 183–197, 1977.
- Sollberger E., *Princes fantômes*, RA 64, 173–174, 1970.
- Sollberger E., *Kupper J. –R.*, *Inscriptions royales sumeriennes et akkadiennes*, Paris, 1971.
- Speiser E., *Introduction to Hurrian*, New Haven, 1941.
- Starke F., *Ausbildung und Training von Streitwagenpferden: Eine hippologisch orientierte Interpretation des Kikkuli-Textes*, Wiesbaden (= StBoT 41), 1995.
- Steiner G., *Hurrian and Urartian as Caucasian Languages*, AAL 13, 1–50, 1992.
- Steinkeller P., *The Historical Background of Urkesh and the Hurrian Beginnings in Northern Mesopotamia*. – In: *A View From the Highlands*, Herent, 75–98, 1998.
- Sulimirski T., *The Scyths*. – In: *The Cambridge History of Iran*, vol. 2 (Ed. by I. Gershevitch), Cambridge, 149–199, 1985.
- Tadmor H., *The Inscriptions of Nabunaid: Historical Arrangement*. – In: *Studies in Honor of Benno Landsberger*, Chicago, 351–364, 1965.
- Tadmor H., *The Aramaization of Assyria: Aspects of Western Impact*. – In: *Mesopotamien und Seine Nachbarn* (Hrsg. H. –J. Nissen und J. Renger), Berlin, 449–470, 1982.
- Taracha P., *Religions of Second Millennium Anatolia*, Wiesbaden (= *Dresdner Beiträge zur Hethitologie*, Bd. 27), 2009.
- Thieme P., *The "Aryan" Gods of the Mitanni Treaties*, JAOS 80/4, 301–317, 1960.
- Thureau-Dangin F., *Une inscription de Naram-sin*, RA 8, p. 1911.
- Thureau-Dangin., *Tablette de Samarra*, RA 9, 1–4, 1912.
- Weidner E. F., *Politische Dokumente aus Kleinasien*, Berlin, 1923.
- Wilhelm G., *Parrattarna, Šauštatar und die Absolute Datierung der Nuzi-Tafeln*, AcAn 24, 149–161, 1976.
- Wilhelm G., *Grundzüge der Geschichte und Kultur der Hurriter*, Darmstadt, 1982.
- Wilhelm G., *Mittan(n)i*. – In: RIA VIII/3–4, 286–296, 1986.
- Wilhelm G., *The Hurrians*, Warminster, 1989.
- Wilhelm G., *The Kingdom of Mitanni in Second-Millennium Upper Mesopotamia*. – In: CANE I–II, 1243–1254, 1995.
- Wilhelm G., *Die Inschrift des Tišatal von Urkeš*. – In: *A View From the Highlands* (ed. A. Sagona), Herent, 117–144, 1998.
- Wilhelm G., *Hurrians in the Kültepe Texts*, In: *Anatolia and the Jazira in the Old Assyrian Period* (= PIHANS 111), 181–194, 2008.

Wiseman D. J., *The Alalakh Tablets*, London, 1953.
 Witzel M., *The Home of the Aryans*. – In: Hintze, Tichy 2000, 283–338, 2000.
 Witzel M., *Autochthonous Aryans? The Evidence from Old Indian and Iranian Texts*, *Electronic Journal of Vedic Studies* 7–3, 1–118, 2001.
 Vennemann T., *Zur Etymologie von Éire, dem Namen Irlands*, *Sprachwissenschaft* 23, 461–469, 1998.
 Yakar J., *Beyond the Eastern Borders of the Hittite Empire: an Archaeological Assessment*. – In:

Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sadat Alp, Ankara, 507–516, 1992.
 Yarshater E. (ed.), *Encyclopædia Iranica*, 1985–, vol. I ff., London–Boston–Henley–New York–Costa Mesa, 1985–.
 Zadok R., *Hurrians as well as Individuals Bearing Hurrian and Strange Names in Sumerian Sources*. – In: *Tell Aviv Occasional Publications* 1 (= Raphael Kutsher Memorial Volume), 219–245, 1993.

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳԵՂԱԿԱՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԲԱԺԻՆ

5

ԱՌԱՋԱԿՈՐ ԱՍԻԱՆ

ՃԵՂԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆՈՒՄ

Հայաստանի և Հայկական Սօցիալիստական Հանրապետության պատմության և մշակույթի հարցերի վերաբերյալ հարուցված հարցերի և խնդիրների լայն շրջանակում և բազմաթիվ հարկածներում հայտնվելու հետևանքով հարուցվել է մեծ թվով հարցեր և խնդիրներ, որոնք կարևոր են հայաստանյայցի հասարակության համար։ Այս հարցերի և խնդիրների լայն շրջանակում և բազմաթիվ հարկածներում հայտնվելու հետևանքով հարուցվել է մեծ թվով հարցեր և խնդիրներ, որոնք կարևոր են հայաստանյայցի հասարակության համար։

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. ՀԵԼԼԵՆԻՋՄԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հելլենիզմը՝ որպես Արևելքի երկրների պատմության մի ժամանակաշրջան, նախ և առաջ բնորոշվում է հունա-մակեդոնական նվաճողների պետությունների գոյությամբ՝ Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Արևմտյան տերության նվաճման հետևանքով: Այդ պետություններում համատեղվում էին հունական և արևելյան հասարակությունների քաղաքական համակարգերի տարրերը¹:

Քաղաքակրթական-մշակութային առումով հելլենիզմի ժամանակաշրջանին բնորոշ էր տարածին՝ արևմտյան (անտիկ) և արևելյան քաղաքակրթությունները ներկայացնող ժողովուրդների փոխազդեցությունը տնտեսական, սոցիալական և հոգևոր-մշակութային բնագավառներում:

Հունական հասարակության քաղաքական համակարգի հատկանշական գիծն էր հողատերերի, արհեստավորների և առևտրականների ինքնավար համայնքը՝ պոլիսը՝ հանրապետական (ժողովրդավարական) հաստատություններով՝ աշխարհագրով, ժողովրդական ժողովով, վերջինիս կողմից ընտրվող և նրան հաշվետու պաշ-

¹ Հելլենիզմի մասին՝ որպես պատմամշակութային դարաշրջանի, ինչպես նաև հելլենիստական պետությունների պատմության վերաբերյալ գոյություն ունի մեծաքանակ մասնագիտական գրականություն՝ Reinach Th., Mithridate Eupator. Roi de Pont, Paris, 1890; Дройзен И.Г., История эллинизма, т. I-III, Москва, 1891-1893; Bickerman E., Institution des Seleucides, Paris, 1938 (); Bickerman E., The Seleucids and the Achaemenids. - In: La Persia e il mondo Greco-romano, Roma, 87ff.; Тарн В., Эллинистическая цивилизация, Москва, 1949; Rostovtzeff M., The Social and Economic History of Hellenistic World, v. I-III, Oxford, 1941; Ранович А. Б., Эллинизм и его историческая роль, Москва-Ленинград, 1950; Зельин К.К., Основные черты эллинизма (социально-экономические отношения и политическое развитие рабовладельческих обществ Восточного Средиземноморья), ВДИ 4, 1953, 45слл.; Petit P., La civilisation hellénistique, Paris, 1965; Grimal P., Bengtson H., Caskel W., Dercharn P., Meuleau M., M.Smith, La civilization hellénistique et la montée de Rome. P.-Montréal, 1971; Will E., Mossé Cl., Goukowsky P., Le monde Grec et l'Orient, t. II, Le IV siècle et l'époque hellénistique, Paris, 1975; Шифман И.Ш., Сирийское общество эпохи принципата, Москва, 1977; Préaux C., Le monde hellénistique. La Grèce et l'Orient de la mort d'Alexandre à la conquête de la Grèce 323-146 av.J.C., Paris, 1978; Кошеленко Г. А., Греческий полис на эллинистическом Востоке, Москва, 1979; Walbank F.W., The Hellenistic World, London, 1981; Walbank, Astin 1984; Бенгтсон Б., Правители эпохи эллинизма, Москва, 1982; Kreissig H., Geschichte des Hellenismus, Berlin, 1985; Шахермайр Ф., Александр Македонский, Москва, 1986; Nicolet Cl. (ed), Rome et la conquête du monde méditerranéen (264-27 av. J.- C.) Tome 2 sous la dir. de Cl.Nicolet. 4. éd., Paris, 1993; Chamoux Fr., La civilisation hellénistique. Paris, 1992; Will 1979-1982; Walbank F.W., The Hellenistic World, London, 1981; Brun J., Le stoïcisme, Paris 1994:

տոնյաներով և համայնքի ներսում մասնավոր հողատիրությամբ: Արևելյան ավանդության պահ հասարակությունը ներկայացված էր այնպիսի կառույցով, ինչպիսին էր ռազմական-ծառայողական ավագանու աստիճանակարգը (հիերարխիան)՝ սրբագործված արքայի գլխավորությամբ: Այդ քաղաքական կառույցը գերագույն սեփականատերն էր հողի ու ընդերքի և շահագործում էր դրա վրա աշխատող գյուղական համայնքը:

Համապատասխանաբար, հակադիր էին այդ հասարակությունների հոգևոր և գաղափարաբանական արժեքները. մի կողմից՝ քաղաքացու անձնական և քաղաքական ազատությունը և հայրենի համայնքի անկախությունն ու ժողովրդավարությունը (դեմոկրատիա), մյուս կողմից՝ գերագույն աստծո կամքով հաստատված արքայի հեղինակությունն ու անսահմանափակ իշխանությունը և անհատի հպատակությունը՝ որպես այդ իշխանության իրականացման պայման:

Աքեմենյան արքաների գաղափարաբանական-միապետական պատկերացումներն ընդօրինակվեցին հելլենիստական միապետություններում՝ Պտղոմեոսյան Եգիպտոսում՝ Սելևկյան թագավորությունում, Պոնտոսում, սակայն յուրաքանչյուր դեպքում տարբեր աստիճանով՝ հարմարեցվելով տեղական պայմաններին: Միաժամանակ, հունա-մակեդոնական նվաճմանն անմիջապես չենթարկված պետությունները և ժողովուրդները՝ Հայաստանը, Պարթևաստանը, ինքնուրույնաբար և ընտրակալորեն յուրացնում էին հունական քաղաքակրթության և մշակույթի տարրերը:

Հելլենիստական ժամանակաշրջանի մյուս հատկանշական կողմը Արևելքի ժողովուրդների և հույների միջև մշակութային ու հոգևոր աստիճանական մերձեցումն էր՝ նրանց միջև օտարացման հաղթահարման գործընթացը, տարբեր ժողովուրդների միջև ընդհանուր պաշտամունքի և դավանանքի ձևավորումն ու տարածումը:

Հելլենիզմի՝ որպես Արևելյան Միջերկրածովքի և ընդհանրապես Առաջավոր Ասիայի երկրների պատմության մեջ կոնկրետ պատմական ժամանակաշրջանի ավարտը համարվում է Ք. ա. 30 թ., երբ Հռոմը նվաճեց վերջին անկախ հելլենիստական պետություն Պտղոմեոսյան Եգիպտոսը:

«Հելլենիզմ» և «հելլենիստական ժամանակաշրջան» հասկացությունները XIX դ. 30–40–ական թթ. գիտության մեջ մտցրեց գերմանացի պատմաբան Յ. Դրոյզենը: Ըստ նրա բնորոշման՝ հելլենիզմը մի ժամանակաշրջան էր, երբ Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներից հետո «հունական ոգին տարածվեց ողջ աշխարհով մեկ՝ ի վերջո ընդդիմություն («ոեակցիա») առաջացնելով Արևելքում»: Դրոյզենի մեկ այլ բնորոշմամբ՝ հելլենիզմը «հունա-մակեդոնական սկզբունքների միախառնվածքն է այլ երկրների տեղական, էթնիկական կյանքի հետ»:

Արևմտաեվրոպական պատմագիտության մեջ հելլենիզմի բնորոշումներն ընդհանուր առմամբ մեկնում էին դրոյզենյան սահմանումներից (Վ. Տարն, Մ. Ռոստովցև): 1927 թ. անգլիացի պատմաբան Վ. Տարնի աշխատության շնորհիվ գիտության մեջ ընդունվեց «հելլենիստական քաղաքակրթություն» հասկացությունը: Տարնը բնեց հելլենիզմի ժամանակաշրջանի հասարակությունների պատմության զանազան հարցեր՝ սոցիալական, քաղաքական, տնտեսական: 1941 թ. Ռոստովցևը

իր հիմնարար ուսումնասիրության մեջ ներկայացրեց «հելլենիստական աշխարհի»՝ որպես ամբողջական սոցիալ-տնտեսական երևույթի մեծածավալ պատկերը: XX դ. արևմտյան գիտության մեջ լուսաբանվել են հելլենիզմի դարաշրջանի պատմության կոնկրետ հիմնահարցերը՝ Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները (Տարն, Շախերմայեր, Բրիան), Մակեդոնական պետությունը (Վրլբենկ), Սելևկյան պետությունը (Բուշե-Լեկլերկ, Բիկերման, Մուստի), հելլենիստական պետականությունը (Էրենբերգ) և այլն: Հելլենիստական դարաշրջանի երեքհարյուրամյա քաղաքական պատմության համայնապատկերը՝ միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը, ներկայացված են Է. Վիլլի աշխատության մեջ:

ԽՍՀՄ-ում մարքսիստական պատմագիտությունը հելլենիստական ժամանակաշրջանը նախ բնութագրում էր որպես ստրկատիրական սոցիալ-տնտեսական հասարակարգի զարգացման առավել բարձր փուլ (Ա. Ռանովիչ), որով ժամանակավորապես հաղթահարվեց Հունաստանում ստրկատիրական հարաբերությունների ճգնաժամը:

XX դարի 50–ական թթ. խորհրդային պատմագիտությունը մերժեց Ռանովիչի տնտեսամետ մոտեցումը: Չժխտելով հելլենիստական հասարակություններում, մանավանդ քաղաքներում ստրկատիրության վրա հիմնված տնտեսությունների զարգացումը՝ Կ. Ջեյնը որպես հելլենիզմի հատկանշական կողմ շեշտեց հելլենական (հունա-մակեդոնական) և արևելյան տարրերի սերտ համատեղությունն ու փոխազդեցությունը «տնտեսության մեջ, սոցիալ-քաղաքական կարգում, մշակույթում, ինչը բնորոշ էր երկրների մի շրջանակին, որը սահմանափակվում էր աշխարհագրորեն և ժամանակագրորեն»:

Հելլենիստական Արևելքի պատմության հարցերը ուսումնասիրվել են նաև հայ մասնագետների աշխատություններում: Վերջիններս գերազանցապես անդրադարձել են հելլենիստական դարաշրջանի Հայաստանի քաղաքական, տնտեսական և հոգևոր-մշակութային պատմության խնդիրներին: Կարևոր ներդրում ունեն այս ասպարեզում հայ հնագետները, ովքեր ուսումնասիրել են Հայաստանի Հանրապետության տարածքում առկա հելլենիստական դարաշրջանի հնավայրերը:

2. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑՈՒ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՔԵՄԵՆՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Հելլենիստական ժամանակաշրջանին սկիզբ դրեց Մակեդոնիայի արքա Ալեքսանդր III-ի կողմից Աքեմենյան աշխարհակալության նվաճումը Ք. ա. 334–323 թթ.:

Մակեդոնացիների և հույների արշավանքը Արևելք պայմանավորված էր Հունաստանում սոցիալ-տնտեսական և քաղաքական ճգնաժամով՝ առևտրադրամային հարաբերությունների զարգացման հետևանքով պոլիսներում խոր սոցիալական շերտավորմամբ, միջին և մանր հողատիրության սնանկացմամբ և հողագուրկ

քնակչության գանգվածների գոյացմամբ: Ճգնաժամից դուրս գալու ելքը հունական պոլիսները գտան Աքեմենյան տերության տարածքի բռնազավթման և քնակչության ընչազուրկ գանգվածներին այնտեղ վերաբնակեցնելու մեջ:

Հույների արշավանքը Աքեմենյան տերության դեմ գլխավորեց Ք. ա. 337 թ. իր գերիշխանությունը Հունաստանում հաստատած Մակեդոնական թագավորությունը, որի տոհմային ավագանին փափագում էր տարածքային բռնազավթումներ և ռազմավար: Մակեդոնիայի արքաները՝ Ֆիլիպպոսն ու նրա որդի Ալեքսանդրը, կատարելության հասցրին իրենց բանակի ռազմատակտիկական սկզբունքները (հետևակի դասավորումը փաղանգով, մեծաթիվ ծանրագեն և թեթևագեն այրուձիու փոխգործողություն):

Ք. ա. 334 թ. մայիսին մակեդոնա-հունական միացյալ բանակը Ալեքսանդր III-ի (Ք. ա. 336-323 թթ.) գլխավորությամբ անցավ Հելլեսպոնտոսը (Դարդանելը): Գրանիկոս գետի ափին Ալեքսանդրը ջախջախեց փոքրասիական պարսիկ սատրապների զորքերին: Այդ հաղթանակի շնորհիվ նա տիրեց Փոքր Ասիայի հարավի քաղաքներին: Հպատակեցնելով Լիդիան և Մեծ Փոյոզիան՝ Ալեքսանդրը, անցնելով Կիլիկիայով, Ք. ա. 333 թ. նոյեմբերին Իսոսի մոտ (Ամանոսի լեռնանցքից ոչ հեռու) ջախջախեց Աքեմենյան մեծաթիվ զորքերին, որոնց գլխավորում էր Դարեհ III-ը: Հաղթանակը նրան շնորհեց Միջերկրածովքի երկրների՝ Սիրիայի, Փյունիկիայի նկատմամբ տիրակալությունը: Տյուրոս և Գազա քաղաքների դիմադրությունը Ալեքսանդրը անողորմաբար ճնշեց: Ք. ա. 332 թ. վերջերին առանց դիմադրության հանդիպելու Ալեքսանդրը մտավ Եգիպտոս: Եգիպտոսի քրմերը նրան հռչակեցին եգիպտական դիցարանի գլխավոր աստծո՝ Ամոն-Ռայի որդի: Նեղոսի դելտայում մակեդոնացի արքան հիմնադրեց քաղաք, որն իր պատվին անվանեց Ալեքսանդրիա:

Մակեդոնա-հունական և պարսկական զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Ասորեստանում՝ Գավգամելայի մոտ, Ք. ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին: Չնայած թվական գերազանցությանը՝ Աքեմենյան ռազմաէթնիկ բանակը ջախջախվեց: Ճակատամարտի վճռական պահին Դարեհը լքեց մարտադաշտը՝ իրարանցում առաջացնելով իր զորքի շարքերում: Աքեմենյան տերության ռազմական հզորությունը կոտրված էր: Ալեքսանդրը առանց մարտի մտավ Բաբելոն. նրան ենթարկվեց ամբողջ Միջագետքը: Պարսքում Ալեքսանդրը ավերեց և կողոպտեց Աքեմենյան տերության մայրաքաղաք Պերսեպոլիսը: Նրա հրամանով հրի մատնվեց Պերսեպոլիսում Աքեմենյանների արքայական պալատը: Այդ քայլը միտված էր նշանավորելու Կյուրոսի և Դարեհ Մեծի ստեղծած աշխարհակալության վախճանը: Շուտով Էկբատանից ոչ հեռու իր մերձավորների ձեռքով սպանվեց հեղինակագրված Դարեհ III-ը:

Ք. ա. 330 թ. ամռանից Ալեքսանդրը ձեռնարկեց Արևելյան Իրանի՝ Բակտրիայի և Սոգդիանեի նվաճումը: Այստեղ նրան դիմազրավում էին ոչ թե կանոնավոր բանակները, այլ քնակչության լայն գանգվածները, որոնց ղեկավարում էր տեղի ռազմատոհմատիրական ավագանին: Սոգդիանայի առաջնորդ Սպիտամենի ծավալած շարժումը մակեդոնացիները ճնշեցին զգալի կորուստների գնով:

Ալեքսանդրին հաջողվեց իր կողմը գրավել բակտրիական և սոգդական ավագանուն, նա նաև ամուսնացավ Բակտրիայի մի մեծատոհմիկի դուստր Ռոքսանեի հետ: Ք. ա. 327 թ. Ալեքսանդրը վերսկսեց իր առաջխաղացումը՝ այս անգամ Հնդկաստանը նվաճելու նպատակով: Նրա իդձն էր դուրս գալ Հնդկաստանի վրայով դեպի Արտաքին Մեծ Օվկիանոս, որն այն ժամանակվա պատկերացումներով բոլորում էր ցամաքը, և դրանով իսկ հասնել համաշխարհային տիրապետության: Հյուսիսարևմտյան Հնդկաստանում՝ Փենջաբում, Ալեքսանդրը պարտության մատնեց տեղի արքա Պորոսին, քայց նրա հետագա երթին դեպի Գանգես գետը վճռականորեն ընդդիմացավ հոգնած զորքը: Հրաժարվելով Հնդկաստանը նվաճելու մտքից՝ Ալեքսանդրը շարժվեց Ինդոսի ափով դեպի Հնդկական օվկիանոս: Ճանապարհին նա ճնշում էր բազմաթիվ ցեղերի դիմադրությունը: Ք. ա. 324 թ. Բելուջիստանի և Կարմանիայի վրայով Ալեքսանդրը վերադարձավ Բաբելոն, որը նա մտադրվեց դարձնել իր նորաստեղծ աշխարհակալության մայրաքաղաքը:

Ալեքսանդրը իրեն համարում էր Աքեմենյան արքաների ժառանգորդ: Իրանի նկատմամբ իր տիրապետությունը ապահովելու նպատակով նա դեռևս իր արշավանքի ընթացքում անցկացնում էր իրանական (պարսիկ, բակտրիական, սոգդական) ավագանու հետ մերձեցման քաղաքականություն, վերջինիս ներգրավում էր արքունիք, նույնիսկ հանձնարարում սատրապությունների ղեկավարությունը: Նրա հռչակած նպատակն էր ստեղծել միասնական իշխող վերնախավ՝ մակեդոնացիներից և պարսիկներից: Իր արքունիքում Ալեքսանդրն ընդօրինակում էր Աքեմենյան պալատական վարքաձևը: Իրանցիներից հավաքագրում էր հեծելազորն ու հետևակը, որը վարժեցված էր ու սպառազինված մակեդոնացիների պես:

Ալեքսանդրը մահացավ Ք. ա. 323 թ. հունիսին՝ դեպի Արևմտյան Միջերկրածովքի երկրներ արշավանքի նախապատրաստությունների թեժ պահին:

3. ԴԻԱԴՈՔՈՍՆԵՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Ալեքսանդրի վախճանը խթանեց նրա աշխարհակալության տրոհման գործընթացը: Անվանապես աշխարհակալության միասնությունը պահպանվում էր մինչև Ք. ա. 311 թ.: Մակեդոնական ավագանու համաձայնությամբ արքա ճանաչվեց Ալեքսանդրի որդին՝ արդեն նրա մահից հետո Ռոքսանեից ծնված Ալեքսանդր IV-ը: Խնամակալ կարգվեց Պերդիկասը, որը, շարունակելով նվաճողական քաղաքականությունը, մակեդոնական տիրապետությանը ենթարկեց Կապադովկիան: Միաժամանակ Ալեքսանդրի զորավարները՝ այսպես կոչված դիադոքոսները («հետնորդներ»), իրենց իշխանության տակ էին պահում երկրներն ու սատրապությունները, որոնք նրանք ցանկանում էին ընդարձակել և դարձնել սեփական ժառանգական տիրույթներ:

Ք. ա. 321 թ. նրանց միջև մրցակցությունը վերածվեց աշխարհակալության վերաբաժանման համար ռազմական պայքարի: Փոքր Ասիայում (Լիդիա, Փոյոզիա, Պամփոնյա) իշխում էր Անտիգոնոս Միակնանին իր որդի Դեմետրիոսի հետ միասին,

Եզիպտոսում և Փյունիկիայում՝ Պտղոմեոս I Լագոսը, Սիրիայում և Բաբելոնիայում՝ Սելևկոս I Նիկատորը, Թրակիայում և Մարմարայի փոքրասիական ծովափին՝ Լիսիմաքոսը: 306 թ. նրանք հռչակվեցին թագավորներ: Այդ քայլը նշանավորեց Ալեքսանդր Մակեդոնացու՝ արդեն անվանական դարձած աշխարհակալության գոյության ավարտը:

Ք. ա. 308 թ. Սելևկոսն ամրապնդեց իր տիրապետությունը Արևելյան Իրանում (Դրանգիանա) և դաշինքի մեջ մտավ Հնդկաստանի Մաուրյանների տերության հիմնադիր Չանդրագուպտայի հետ, որին նա զիջեց Գեդրոսիան (Բելուջիստան) և Արախոսիան (Հարավային Աֆղանստան)՝ դրանց փոխարեն ստանալով 500 մարտական փիղ:

Դիադոքոսների միջև պայքարի հանգուցալուծումը տեղի ունեցավ Ք. ա. 301 թ. Իպսոսի ճակատամարտում (Փոյոզիա), որտեղ Սելևկոսի, Լիսիմաքոսի և Մակեդոնիայի արքա Կասանդրոսի միացյալ ուժերը ջախջախեցին Անտիգոնոսի և Դեմետրիոսի զորքերին:

Ճակատամարտի հետևանքով ուրվագծվեց Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալության վերջնական տարածքային բաժանումը: Փոքր Ասիայում վերացավ Անտիգոնոսի թագավորությունը: Ձևավորվեցին երեք խոշոր պետություններ՝ Առաջավոր Ասիայում՝ Սելևկյանների, Եգիպտոսում՝ Պտղոմեոսյանների, և Բալկաններում՝ Լիսիմաքոսի:

4. ՄԱԿԵԴՈՆԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Ռազմաքաղաքական առնչություններ

Գտնվելով Աքեմենյան տերության կազմում՝ Հայաստանը, հասկանալիորեն, պետք է մասնակցեր Ալեքսանդր Մակեդոնացու դեմ պատերազմին: Դա հաստատվում է և՛ անտիկ, և՛ հայ պատմագրության վկայություններով:

Հայերի մասնակցության մասին առաջին անգամ աղբյուրները վկայում են Ք. ա. 333 թ. Իսսոսի ճակատամարտի առնչությամբ: Այդ ճակատամարտում հայերը ռազմի դաշտ էին դուրս բերել 40-հազարանոց հետևակ, 7-հազարանոց հեծյալ բանակ և զբաղեցնում էին արեմենյան բանակի աջ թևը: Աղբյուրներից, սակայն, հայտնի չէ, թե ում գլխավորությամբ էր Իսսոսի ճակատամարտին մասնակցում 47-հազարանոց հայկական բանակը:

Պատմահայր Մովսես Խորենացին տեղեկացնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ մարտնչել է Վահե Հայկագունին, որը զոհվել է «նրա ձեռքով»: Անտիկ պատմագրությունից հայտնի է, որ հայերն արեմենյան զորքի կազմում մասնակցել են Մակեդոնացու դեմ մղված երկու՝ Իսսոսի և Գավգամելայի ճակատամարտերին: Ընդ որում՝ նշվում է, որ Գավգամելայի ճակատամարտում հայկական զորքերը ղեկավարել են Օրոնտեսն (Երվանդ III) ու Միթրատեսը: Կարելի է ենթադրել, որ Վահե Հայկագունին Իսսոսի ճակատամարտին մասնակցած 47-հազարանոց հայկական բանակն է առաջնորդել և զոհվել է այդ ճակատամարտում:

Ք. ա. 331 թ. հոկտեմբերի 1-ին Գավգամելայի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում ևս հայերը կազմում էին արեմենյան բանակի աջ թևի հիմնական ուժը: Այդ առումով խիստ ուշագրավ է աջ թևի վարքագիծը, որն իր հերոսականությամբ առանձնացավ մնացած ամբողջ բանակից:

Ճակատամարտը սկսվում է առավոտյան և շարունակվում ամբողջ օրը: Երեկոյան, չդիմանալով մակեդոնական զորքի ճնշմանը, արեմենյան զորքի կենտրոնը (որը գլխավորում էր անձամբ Դարեհ III-ը) և ձախ թևը սկսում են անկազմակերպ նահանջը, որը վերածվում է խուճապահար փախուստի: Մակեդոնացին սկսում է հետապնդել Դարեհին, ինչը, սակայն, ձախողվում է արեմենյան բանակի աջ թևի (որի հիմնական ուժը հայկական զորքն էր) հերոսական գործողությունների հետևանքով: Հունա-մակեդոնական զորքի ձախ թևի հրամանատար Պարմենիոնը, ընկրկելով արեմենյան բանակի աջ թևի դիմաց, օգնություն է խնդրում Ալեքսանդրից, որը հարկադրված է լինում դադարեցնել Դարեհի հետապնդումը և թիկունքից հարձակվում է հակառակորդի վրա: Այդ ժամանակ իմանալով Դարեհի փախուստի մասին՝ աջ թևի զորամասերը, դուրս գալով ճակատամարտից, շարժվում են հյուսիս՝ Հայաստան:

Հայկական զորքերի հերոսական մասնակցությունը Գավգամելայի ճակատամարտում, փաստորեն, ձախողում է Ալեքսանդրի ծրագրերը՝ այդ ճակատամարտով զերելու Դարեհ III-ին և վերջ դնելու Աքեմենյան տերությանը: Այն գոյատևում է ևս որոշ ժամանակ:

Հերոսաբար մարտնչած և արժանապատվորեն հայրենիք վերադարձած հայկական զորքերը Գավգամելայի ճակատամարտից հետո՝ Ք. ա. 331 թ., վերականգնում են Հայաստանի անկախությունը՝ Օրոնտաս-Երվանդ III-ը Մեծ Հայքում, իսկ Միթրատեսը՝ Փոքր Հայքում:

Մակեդոնական և հայկական զորքերի հաջորդ բախումը տեղի ունեցավ 2-3 տարի անց, երբ Ալեքսանդրի զորաբանակներից մեկը Մենոն զորավարի գլխավորությամբ ուղարկվեց գրավելու Բարձր Հայքի ոսկու հանքերի շրջանը, որը ոսկու արդյունահանմամբ հռչակավոր էր դեռևս Ք. ա. III հազարամյակից: Ինչպես վկայում է Ստրաբոնը, հայերը ոչնչացրին նրա բանակը, իսկ զորավարին «խեղդամահ արեցին»: Դրանից հետո Ալեքսանդրը փորձ չարեց Հայաստան նոր զորք ուղարկելու, ինչը նշանակում էր, որ նա հաշվի էր նստում Գավգամելայում բացառիկ հերոսությամբ աչքի ընկած և Մենոնի զորաբանակը ոչնչացրած հայկական զինուժի հետ:

Հույն պատմիչ Արիանոս Փլավիոսը, որ առանց միջնորդի օգտվել է Մակեդոնացու օրագրերից և արշավի անմիջական մասնակիցների աշխատություններից, բազմիցս խոսելով Ալեքսանդրի նվաճումների մասին և մանրամասն թվարկելով հպատակեցված երկրները, Հայաստանի անունը չի հիշատակում դրանց շարքում: Հայաստանն աննվաճ մնաց նաև Մակեդոնացու մահվանից հետո, երբ նրա զորավարների միջև սկսեց ավելի քան երկու տասնամյակ տևած պատերազմների շղթան (դիադոքոսների պատերազմներ), որն ավարտվեց Ք. ա. 301 թ.՝ Մակեդոնացու աշխարհակալության մասնատումով:

Մեզ է հասել չափազանց ուշագրավ մի հաղորդում Դիոդորոս Սիկիլիացու

«Պատմական գրադարան» երկասիրության էջերում, որի համաձայն՝ մակեդոնացիների կողմից գահընկեց արված Կապադովկիայի արքա Արիարաթեւը կարողացել է վերականգնվել հայրական գահին՝ շնորհիվ Մեծ Հայքի արքա Արդուատեսի տրամադրած զորքերի. «Արիարաթեւը պարտվելով ճակատամարտում՝ ընկավ, որից հետո թե՛ Կապադովկիան և թե՛ նրան սահմանակից երկրներն ընկան մակեդոնացիների տիրապետության տակ: Իսկ Արիարաթեւը՝ նախորդ թագավորի որդին, հուսահատվելով այդ ժամանակ ստեղծված դրությունից, քչերի հետ ապաստանում է Հայաստանում: Ոչ շատ ժամանակ անց Արիարաթեւը հայերի թագավոր Արդուատեսից զորք ստանալով, սպանեց մակեդոնացիների զորապետ Անյունտասին, մակեդոնացիներին անհապաղ դուրս վտարեց երկրից և վերանվաճեց իր հայրենի իշխանությունը»: Դա տեղի է ունեցել Ք. ա. 322 կամ 301–300 թթ.: Փաստն ինքնին շատ խոսուն է. նորանկախ Հայաստանն արդեն վճռորոշ ուժ էր տարածաշրջանում:

Նույնպիսի իրականության մասին է վկայում Մեմնոն Հերակլեացու տեղեկությունը, որի համաձայն՝ Բյութանիայի Նիկոմեդես արքայի որդի Զիսելասը նախ ապաստան է գտնում Հայաստանի թագավորի մոտ (որի անունը չի նշվում), ապա արտաքին ուժերի օգնությամբ վերականգնում է թագավորությունը: Նա թագավորում է Ք. ա. 250–228 թթ.:

Վիպական Ալեքսանդրը և Հայաստանը

Ալեքսանդրի անվան հետ կապված առասպելները ստեղծվել էին նրա կենդանության օրոք, երբ նա իրականացրեց մարդկության պատմության մեջ աննախադեպ արշավանքներ: Ք. ա. 240 թ.՝ նրա մահվանից ընդամենը ութսուներեք տարի անց, հունարենով գրի առնվեց Ալեքսանդրի վեպը:

Վեպի համաձայն՝ Ալեքսանդրը ձգտում է հասնելու անմահության, որի համար բռնում է ճանապարհը «ղեպի Հայոց աշխարհ, որտեղ ակունքն է Եփրատի ու Տիգրիսի»։ Վեպի ասորական տարբերակում նրա ճանապարհին հիշվում է «Մասիս լեռնաշղթան»։ Այդ նույն ճանապարհն էր անցնում Հին Արևելքի ամենանշանավոր հերոս Գիլգամեշը (ապրել է Ք. ա. XXVII դարում), որը դարձել էր առասպելների ու էպոսի անմահության ձգտող հերոս։ Փաստորեն, հին արևելյան և հելլենիստական վիպական ավանդություններում «ղեպի Արատտա ճանապարհը» փոխարինվում է «ղեպի Հայոց երկիր ճանապարհով», Մաշու (Մասու) լեռները՝ Մասիս լեռնաշղթայով, երկու դեպքում էլ հերոսը գնում է ղեպի Եփրատի ու Տիգրիսի ակունքները, անցնում խավարով, դրախտ հիշեցնող վայրով, ապա մութ աշխարհով կամ մահվան ջրերով, հանդիպում աստվածընտրյալ հերոսին և ստանում անմահություն։

Իրականում երբևէ Հայաստան չմտած Ալեքսանդր Մակեդոնացին վիպական ավանդության մեջ բռնում է նրա ճանապարհը, քանի որ հին արևելյան հոգևոր ընկալումներում այդ երկրի հետ էին կապված դրախտայինին և անմահությանը վերաբերող պատկերացումները։

ՍԵԼԵՎԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄՎՈՐՈՒՄԸ

Ք. ա. 301 թ. Սելևկոս I Նիկատորի տերությունը ներառում էր Փոքր Ասիայի հարավ-արևելքը (Կիլիկիա, Պամփյուլիա, Կապադովկիա), Հյուսիսային Սիրիան, Միջագետքը (մինչև Պարսից ծոց), Իրանն ամբողջապես (Մարաստանը, Պարսքը, Էլամը, Պարթևքը, Կարմանիան, Դրանգիանեն, Բակտրիան և Սոգդիանեն՝ Ամուդարյա գետից դեպի հյուսիս ընկած տարածքը [ժաման. Տաջիկստան])։ Սելևկոսի առջև ծառայել էր մի դժվարագույն խնդիր՝ միասնական պետություն կազմավորել այդ վիթխարի տարածքի վրա։

Սելևկոսը և նրա ժառանգները բախվեցին Արևելքի տարրեր շրջաններում թափ առնող էթնոքաղաքական կոնսոլիդացիոն (միավորիչ) գործընթացներին, որոնք սկսվել էին դեռևս Աքեմենյանների օրոք և խթանվեցին Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքներով։ Արագորեն կայանում էին սոցիալապես և քաղաքականապես նոր էթնոտարածքային միավորումներ՝ Բակտրիան, Սոգդիանեն, Պարթևքը, Պարսքը, Բյութանիան, Կապադովկիան, արամեական համայնքները Միջագետքում։ Վերոհիշյալ շրջաններում տեղական ավագանին ձգտում էր անսահմանափակ իշխանության իրենց երկրներում։ Ավելի ցայտուն ի հայտ էր գալիս Սելևկյանների տիրած երկրների զարգացման անհամաչափությունն ու տարաբնույթ կառուցվածքը՝ կիսաքոչվոր տոհմատիրական հասարակությունները Զագրոսի ստորոտում և Արևելյան Իրանում, երկրագործական հասարակությունները՝ Պարսքում, Պարթևքում՝ քաղաքային զարգացման հնագույն ավանդույթները պահպանող Միջագետքի (Բաբելոն, Ուրուկ) քաղաքակրթությունները։

Այդ իսկ պատճառով Սելևկյանների տերության արտաքին քաղաքական պատմությունը Արևելքում և Արևմուտքում հպատակ երկրների շարունակական անկախացման պատմություն է։

Սելևկյանների իշխանության հենարանը հունա-մակեդոնական ներգաղթյալ բնակչությունն էր։ Հույները, Սելևկյանների տիրույթներ տեղափոխվելով, իրենց հետ բերում էին սոցիալ-քաղաքական կազմակերպման պոլիսային համակարգը՝ քաղաքացիական համայնքը։ Սոցիալ-տնտեսական էությանը պոլիսը երկրագործ համայնքն էր, որի անդամների հողի մասնավոր սեփականությունը պայ-

մանավորված էր տվյալ համայնքին պատկանելությանը և գտնվում էր վերջինիս գերագույն վերահսկողության ներքո: Հողին տիրել կարող էին միայն համայնքի անդամները: Նրանք էլ՝ ստրկական և վարձու աշխատանքը օգտագործող հողատերերը, մասնակցում էին հարազատ համայնքի կառավարմանը՝ կազմելով ժողովրդական ժողով, աշխարհագոր՝ ընտրելով իրենց միջավայրից պաշտոնյաներին, այսինքն՝ դրանով իսկ հանդես էին գալիս որպես լիիրավ քաղաքացիներ, իսկ բոլորը միասին՝ քաղաքացիական կոլեկտիվ («ժողովուրդ»), որը հակադրվում էր քաղաքի մնացյալ, որպես կանոն, քաղաքական իրավունքներից զուրկ բնակչությանը: Հետևաբար, որպես պոլիսին համարժեք հասկացություն գիտության մեջ օգտագործվում են «քաղաքացիական համայնք» (քաղաքացիական կոլեկտիվ), նաև «հելլենիստական քաղաք» հասկացությունները, քանի որ պոլիսը գոյություն ուներ որպես քաղաք թե՛ իր ճարտարապետական տեսքով, թե՛ առևտրի և արհեստագործության կենտրոն լինելով:

Սելևկյանների համար հունա-մակեդոնական գաղութաբնակեցումը դարձավ պետական քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը: Ք. ա. III-II դդ. Սելևկյանները հիմնադրեցին մոտ 70 քաղաք: Այսպիսով՝ Արևելքի հելլենականացումը իրագործվում էր քաղաքաշինության և ուրբանիզացման միջոցով: Պետականորեն խթանված այդ գործընթացի շնորհիվ ուրվագծվեց Սելևկյան տերության առավել հելլենականացված աշխարհագրական միջուկը՝ Սիրիան, Դաշտային Կիլիկիան և Միջագետքը: Ք. ա. II դ. ընթացքում հետզհետև կորցնելով իր տիրույթները Փոքր Ասիայում և Իրանում՝ Սելևկյան պետությունը սեղմվեց դրա սահմանների ներսում և քաղաքական-տնտեսական կենտրոնի դեր կատարող Սիրիայի անունով հաճախաբար սկսեց կոչվել Սիրիական թագավորություն:

Սելևկյանների պետությունը հունա-մակեդոնական նվաճողների և գաղութաբնակների պետություն էր, որը, սակայն, բաց էր իր պետական հաստատություններում՝ կառավարման ապարատում և բանակում հելլենականացված տեղաբնիկների՝ նախ և առաջ Սիրիայի և Միջագետքի արամեացիների ներգրավման համար:

Սելևկյան տերությունում տեղ ուներ մի կարևորագույն պատմական երևույթ: Սելևկյանների ծավալած հունա-մակեդոնական ներգաղթը նպաստում էր հույների և արևելյան ժողովուրդների տնտեսական և մշակութային փոխազդեցությանն ու մերձեցմանը, նրանց միջև համակեցության և փոխադարձ հանդուրժողականության նորմերի հաստատմանը (հելլեն - բարբարոս հակադրության մեղմում), ընդհանուր կրոնագաղափարաբանական պատկերացումների ձևավորմանը (կրոնական սինկրետիզմի երևույթն էր դեմս Սարապիսի, Իսիսի, Զևս-Բաալի պաշտամունքների և այլն):

Սելևկոս I Նիկատորը մտավ հելլենիզմի պատմության մեջ ոչ միայն որպես խոշորագույն հելլենիստական պետության հիմնադիր, այլև մեծագույն քաղաքաշինարար: Հյուսիսային Սիրիայում նա հիմնադրեց Անտիոքը, Սելևկիա Պիերիան, Լաոդիկեան, Ապամեան (App. Syr. 57):

Սիրիայի մայրաքաղաք Անտիոքը հիմնադրվեց Ք. ա. 300 թ. Օրոնտես գետի

ափին՝ ծովից 22 կմ հեռավորության վրա: Քաղաքն ի սկզբանե օժտված էր պոլիսային քաղաքական ինքնավարությամբ: Այն շարունակաբար կառուցապատվում և ընդարձակվում էր և Ք. ա. II դ. երկրորդ կեսին արդեն վիթխարի կոսմոպոլիս էր՝ 400-հազարանոց հունա-մակեդոնական բնակչությամբ: Ստվար արամեական բնակչությունը ապրում էր քաղաքի արվարձաններում: Ընդարձակ էր Անտիոքին պատկանող շրջակա գյուղատարածքը՝ Անտիոքենեն՝ քաղաքացիների մասնավոր սեփականատիրական տնտեսություններով:

Օրոնտեսի գետաբերանում կառուցված Սելևկիան (Սելևկիա Պիերիա) կատարում էր ծովային նավահանգստի դեր Անտիոքի համար: Գետի միջին հոսանքում հիմնադրված Ապամեան Սելևկոսի ռազմական հենակետերից էր՝ քանակի տեղակայման վայր, Լաոդիկեան (ժաման. Լաթաքիա) Միջերկրականի ափին խաղում էր հյուսիսսիրիական խոշորագույն ծովաքաղաքի դերը՝ մանավանդ III դ. երկրորդ կեսին, երբ Սելևկիա Պիերիան զրավեցին Պտղոմեոսյանները:

Սելևկոսի և նրա ժառանգների վարած քաղաքականության շնորհիվ Սիրիան վերածվեց Միջերկրածովքի ամենազարգացած և ծաղկուն երկրներից մեկի՝ հելլենիստական քաղաքակրթության խոշորագույն օջախի: Ք. ա. II դ. բնակչության քանակով Սիրիան երկրորդն էր Միջերկրածովքի երկրներում՝ Իտալիայից և Եգիպտոսից հետո: Սիրիայում ապրում էր մոտ 6 մլն մարդ:

Հյուսիսային Սիրիայի գյուղատնտեսության հիմքն էին կազմում հացահատիկային կուլտուրաները, խաղողագործությունը, գինեգործությունը (Օրոնտեսի հարթավայրում), բուրավետ յուղերի արտադրությունը: Սիրիայից Եգիպտոս արտահանվում էր ընկույզ, մեղր, պանիր, նուռ:

Ոչ պակաս ուշադրություն էր դարձնում Սելևկոսը Միջագետքի զարգացմանը: Հյուսիսային Միջագետքում՝ պատմական Օսրոյենեում, նրա օրոք հիմնադրվեց Անտիոք Կալլիրոյան, որն ավելի ուշ ստացավ Եդեսիա անունը, քանի որ այստեղ ներգաղթյալների մեծ մասը ծագում էր Մակեդոնիայի Եդեսիայից: Խոշոր հունա-մակեդոնական գաղութ հիմնվեց Նիսիբիսում (Մծքին), որը ստացավ Անտիոքի անունը (Անտիոք-Միգդոնիա): Հյուսիսային Միջագետքի արևելքում Սելևկոսը կառուցել տվեց ևս մի Սելևկիա՝ ժամանակակից Քիրքուքի տեղում: Միջին Եփրատի շրջանում (Միջերկրական ծովից դեպի Պարսից ծոց ուղու վրա) Սելևկոսի օրոք հիմնադրվեց Դուրա-Եվրոպոս բերդաքաղաքը՝ զինվորական բնակավայրը, որտեղ հունական համայնքը գերակշռող դեր էր խաղում նույնիսկ Ք. հ. II դ. 60-ական թթ., երբ միացվեց Հռոմեական կայսրությանը: Կենտրոնական Միջագետքում՝ Տիգրիսի ափին (Օպիսի տեղում), Սելևկոսը հիմնադրեց Տիգրիսամերձ Սելևկիան՝ տարածաշրջանի խոշորագույն պոլիսը: Ք. ա. I դ. այն ուներ 600 հազ. բնակչություն, որը կազմված էր հունա-մակեդոնացիներից և ներգաղթյալ բաբելոնցիներից:

2. ՍԵԼԵՎԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

Սելևկյան արքայի իշխանությունը հիմնավորվում էր ռազմական հաղթանակով, տիրապետությունը՝ նվաճման իրավունքով: Հաղթանակը մարտում, իր հերթին, վկայում էր աստվածներից նրա հովանավորվելու մասին:

Բանակը հնագույն Մակեդոնիայում մարմնավորում էր զինված ժողովրդին: Սակայն Սելևկյան պետության մեջ այն կորցրեց օրենսդիր մարմնի գործառույթները: Սելևկոս Նիկատորը պահանջում էր անվերապահ հպատակություն իր իշխանությանը, որն օժտված էր օրենքի ուժով: Այդ պատկերացումն արտահայտվեց Սելևկոս Նիկատորին վերագրվող խոսքերում. «Այն ինչ կայացնում է արքան, միշտ արդար է» (App. Syr. 61):

Պետական գաղափարախոսությունը քարոզում էր այն թեզը, որ արքան աշխարհը կառավարող գերագույն օրենքի շնչավորված մարմնացումն է: Այնուամենայնիվ, ինքնակայություն հաստատող այդ դրույթը չհանգեցրեց բռնակալության ձևավորմանը: Օրենքը, որին կոչված էր մարմնավորելու Սելևկյան արքան, իրականում հունական պոլիսային համակարգում ձևավորված նորմերի միակցությունն էր: Այսինքն՝ օրենքը արքայի հպատակին ճանաչում էր որպես անձեռնմխելի քաղաքացիական և քաղաքական իրավունքի կրողի:

Սելևկյան միապետության այդ առանձնահատկությունը դրսևորվում էր միապետի և քաղաքացիական կոլեկտիվների՝ քաղաքների փոխհարաբերություններում: Սելևկյան արքան հանդես էր գալիս որպես հողի գերագույն սեփականատեր, սակայն հողը տրվում էր քաղաքացիական համայնքին, որը դառնում էր մշակվող հողատարածքի իրական սեփականատերը: Արքայական՝ պետական ինքնիշխանությունը համատեղվում էր տեղերում հողի նկատմամբ քաղաքի՝ համայնքային-մասնավոր սեփականության հետ: Այսպիսով պետական սուվերենությունն այլևս հավասարազոր չէր պետական (արքայական) սեփականությանը: Պետական գերագույն իշխանության լիազորությունը սահմանափակվում էր տեղերում քաղաքացիական համայնքի մասնավոր սեփականատիրական իրավունքով: Քաղաքի հետ հարաբերություններում արքան հանդես էր գալիս որպես գերագույն ինքնիշխան, նա էր հաճախակի քաղաքի հիմնադիրն ու պաշտպանը արտաքին սպառնալիքներից, սակայն քաղաքը արքայի առջև հանդես էր գալիս որպես ինքնավար՝ սեփական օրենքներով կառավարվող միավոր: Քաղաքը հարկ էր մուծում, քաղաքական հենարան էր ծառայում նվաճված տարածքներում, բայց, որպես կանոն, քաղաքացիական համայնքը ազատ էր պարտադիր ռազմական ծառայությունից և մշտապես ձգտում էր առավել ինքնավարության, որն արտահայտվում էր քաղաքին «ազատության» շնորհումով՝ պետության օգտին հարկերի կրճատումով (մինչև լիակատար ֆիսկալային իմունիտետի ձեռքբերում), սեփական օրենքներ ընդունելու իրավունքով, նաև սեփական դրամահատմամբ:

Քաղաքի ազատությունը (հուն. էլեթերիա) պետական սուվերենություն չէր: Այն չէր ենթադրում քաղաքական անկախություն՝ միջազգային հարաբերություններում անկախ գործունեության որևէ իրավունք (օտարերկրյա պետության հետ հարաբերություններ, պայմանագրերի կնքում, պատերազմական վիճակ):

Արքայի իշխանությունը անսահմանափակ բնույթ ուներ գյուղական վայրերում, այստեղ աշխատող տեղաբնիկ գյուղացիական համայնքների՝ «արքունի մարդկանց» նկատմամբ: Նրանք կազմում էին տերության գլխավոր աշխատավոր և հարկատու դասը: Ստրկական աշխատանքը կիրառվում էր հելլենիստական պոլիսների քաղաքացիների մասնավոր սեփականատիրական տնտեսություններում:

Արքայի վերահսկողությունն անսահմանափակ էր կատոլիկոսների՝ ռազմական բնակավայրերի նկատմամբ, որոնց անդամներից էր կազմվում բանակը: Հայտնի կատոլիկոսներից էր Դուրա-Եվրոպոսը: Նրա բնակիչները իրենց հողամասերի դիմաց պարտավոր էին ծառայել արքայի բանակում: Հողի ժառանգական տիրությունն այստեղ պայմանավորված էր ռազմական ծառայությամբ: Ռազմական գործը թողնելու դեպքում հողամասը կորսվում էր:

Սելևկյանների պետության մեջ արքունական ժառանգական հողատեր ավագանին չէր ձևավորվել: Արքունիքը բաղկացած էր արքայի «ընկերների», «ազգականների» պատվավոր կոչում ունեցող անձերից, որոնք կազմում էին արքային կից պետական խորհուրդը, սակայն չունեին ամրագրված պաշտոնակատարություն: Նրանք կատարում էին տարբեր բնույթի ծառայություններ՝ դիվանագիտական առաքելություններ, ռազմական հրամանատարություն, վարչության կառավարում: Այդ անձանց կարգավիճակի առանձնահատկությունն այն էր, որ նրանք գերազանցապես ծագում էին քաղաքացիական (հանրապետական կառուցվածք ունեցող) համայնքներից, պահպանում էին կապը իրենց հայրենի քաղաքների հետ (քաղաքացիությունը) և քաղաքացու ազատ գործելակերպը: Այս անձինք կարող էին ազատորեն քննարկել արքայի վճիռները: Հայտնի են նրանց կողմից արքունիքից իրենց հայեցողությամբ հեռանալու դեպքեր:

Քաղաքներում արքան սահմանում էր իր անձի պաշտամունքը՝ որպես տեղական աստծո: Աստված հոչակված արքան համարվում էր քաղաքի հովանավորն ու պաշտպանը: Պաշտամունքը մի կողմից պարտադրվում էր քաղաքին պետության կողմից, սակայն մյուս կողմից այդ երևույթի որոշակի ժողովրդականությունը հետևանք էր հին Օլիմպիական աստվածների հանդեպ խոր հիասթափության, հասարակ մարդուց նրանց օտարացման և անհատի կողմից սեփական անգործության գիտակցման: Կայուն վիճակը քաղաքի համար կարող էր ապահովել միայն մերձավոր աստվածը՝ արքան: Հատկանշական են Սելևկյանների մականունները՝ Փրկիչ, Աստված և այլն:

3. ՍԵԼԵՎԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Արտաքին քաղաքական ասպարեզում Սելևկոս I Նիկատորը նպատակ էր դնում ենթարկել փոքրասիական թերակղզու արևմուտքը՝ Հոնիան՝ Եփեսոս, Միլեթ, Պրիենա քաղաքներով, որոնք գտնվում էին Թրակիայի և Մակեդոնիայի տիրակալ Լիսիմաքոսի տիրապետության ներքո: Այդ նպատակով նա տերության անդրտիգ-

րիսյան տարածքների (Իրանի) կառավարումը դեռևս Ք. ա. 294 թ. հանձնեց իր որդուն՝ գահակից դարձած Անտիոքոս I-ին:

Դեպի արևմուտք արշավանք նախապատրաստելիս Սելևկոսը իր գերիշխանությանը ենթարկեց Կապադովկիան ու Հայաստանը՝ ըստ երևույթին հարավարևմտյան հայկական հողերը (Մովսիս) (App. Syr. 55, 57): Ք. ա. 281 թ. Կորուպեդիոնի ճակատամարտում՝ Սիպիլոս լեռան մոտ գտնվող Մագնեսիա քաղաքից ոչ հեռու, Սելևկոս I-ը ջախջախեց Լիսիմաքոսին: Սակայն առաջխաղացման ժամանակ Թրակիայում Սելևկոսը սպանվեց իր մոտ ապաստանած Պտղոմեոս Կերավնոսի («Կայծակ») ձեռքով, որը Պտղոմեոս I-ի վտարանդի որդին էր:

Սելևկոսի վախճանին հաջորդեց նրա ռազմական ուժերի կազմալուծումը, որոնք Մակեդոնիայի արքա ճանաչեցին Պտղոմեոս Կերավնոսին: Միաժամանակ երեք կելտական ցեղեր (գալաթներ) հյուսիսային Բալկաններից ներգաղթեցին Փոքր Ասիա: Նրանց հարձակումներից մեծապես տուժեցին Փոքր Ասիայի հունական քաղաքները: Միահեծան արքա դարձած Անտիոքոս I-ը (Ք. ա. 280-261 թթ.) կարողացավ Ք. ա. 278 թ. մարտական փոքր կիրառելով ջարդել գալաթներին: Գալաթների հարձակումներին առժամանակ վերջ տրվեց. նրանք մշտական բնակություն հաստատեցին Մեծ Փոյուզիայում, որը հետագայում սկսեց կրել Գալաթիա անունը: Այնուամենայնիվ, չնայած այդ հաղթանակին՝ Սելևկյանների դիրքերը թերակզու արևմուտքում խարխլված էին: Անտիոքոս I-ը ստիպված եղավ ճանաչել Բյութանիայի արքա Նիկոմեդես I-ի անկախությունը: Էգեյան ծովի ափին անկախ պետություն՝ Պերգամոն մայրաքաղաքով հիմնադրեց տեղի կայագորապետ Ֆիլեթերոսը: Ի դեմս Անտիոքոս I-ի Սելևկյանները մեկընդմիջտ հրաժարվեցին իրենց հավակնություններից Մակեդոնիայի թագավորության վրա, որտեղ հաստատվեց Անտիգոնոս Գոնատասը՝ Դեմետրիոսի որդին և Անտիգոնոս Միակնանու թոռը:

Իր գլխավոր ուշադրությունը Անտիոքոս I-ը քնեռեց հարավային Սիրիայի և Փյունիկիայի վրա, որոնք պատկանում էին Եգիպտոսի թագավորությանը. Պտղոմեոսյանների դեմ նրա վարած պատերազմը (Առաջին «սիրիական» պատերազմը՝ Ք. ա. 274-271 թթ.) անարդյունք էր: Փյունիկիան և հարավային Սիրիան մնացին Եգիպտոսի կազմում: Ք. ա. 262 թ. Անտիոքոսը պարտություն կրեց Ֆիլեթերոսի ժառանգ՝ Պերգամոնի արքայի տիտղոս ընդունած Եվմենեսից և նրան աջակցած գալաթներից: Պերգամոնը վերածվեց Էգեյան ծովափի ազդեցիկ թագավորության:

Հարավային Սիրիայի և Փյունիկիայի համար պայքարը շարունակվեց Անտիոքոս II Թեոսի («Աստված») օրոք: Ք. ա. 268-253 թթ. Երկրորդ «սիրիական» պատերազմում Անտիոքոս II-ը, հենվելով Մակեդոնիայի աջակցության վրա, կարողացավ Եգիպտոսից զավթել հյուսիսային Փյունիկիան մինչև Սիդոն քաղաքը: Այդ հաջողությունը հարավում հնարավոր դարձավ, սակայն Կապադովկիայի կորստի գնով: Ք. ա. 255 թ. Փյունիկիայում ծավալված պատերազմի ընթացքում Կապադովկիայի կուսակալ Արիարաթ III-ը՝ պարսիկ դինաստ Արիարամնայի որդին, իրեն հռչակեց թագավոր: Անտիոքոս II-ը հարկադրված էր հաշտվել կատարվածի հետ: Եգիպտոսի դեմ հաղթանակը շուտով փոխարինվեց ծանր պարտություններով: Արիարաթ

III-ը շուտով նվաճեց Եփրատամերձ Կատաունիան (Strabo XII, 1,1)՝ անմիջական հարևան դառնալով Փոքր Հայքին:

Ք. ա. 250 թ. Սելևկյան թագավորությունից անջատվեց Պարթևքի կուսակալ Անդրագորասը, որը սկսեց իր անունից դրամ հատել: Նույն տարում թագավորական տիտղոս ընդունեց Բակտրիայի Սելևկյան կուսակալ Դիոդոտոսը: Նա հիմնադրեց Հունա-Բակտրիական հելլենիստական պետությունը: Բակտրիայի հունա-մակեդոնական վերնախավի զուխ կանգնելով՝ Դիոդոտոսը միաժամանակ մերձեցավ Բակտրիայի արևելաիրանական տոհմային ավագանու հետ, որն իր ռազմական ուժը՝ հեծելազորը, տրամադրեց նրան և պատշաճ դիրք գրավեց արքունիքում:

Անտիոքոս II-ը անկարող եղավ խոչընդոտել Արևելքում իր տիրույթների կորստին: Ք. ա. 247 թ. Եգիպտոսի արքա Պտղոմեոս III-ը գրավեց Հյուսիսային Սիրիան՝ Սելևկիա Պիերիա ծովաքաղաքով և Անտիոք մայրաքաղաքով: Անտիոքոս II-ին փոխարինած Սելևկոս II-ը (Ք. ա. 246-225 թթ.) փախավ Փոքր Ասիա, իսկ Եգիպտական գորքերը զբաղեցրին Սիրիան և անգամ Միջագետքը: Սելևկյան տերությունն, այսպիսով, հայտնվեց կործանման եզրին: Պտղոմեոսը, սակայն, շուտով վերադարձավ Եգիպտոս, և Սելևկոս II-ը վերահաստատվեց Անտիոքում: Պտղոմեոսյանները իրենց իշխանության ներքո պահպանեցին ոչ միայն Կոյլեսիիան (հարավարևելյան Սիրիան) և ամբողջությամբ Փյունիկիան, այլև զավթեցին Սելևկիա Պիերիան, որտեղ տեղադրվեց Եգիպտական կայագոր:

Ամենայն հավանականությամբ, Ք. ա. 247 թ.՝ Սելևկյանների դեմ պայքարում Եգիպտոսի հաջողությունների տարում, Պարթևքում միահեծան իշխող Անդրագորասը ընդհարվեց *պարսների* ցեղի հետ, որոնք պատկանում էին Կասպից ծովի և Անտիարյայի միջև քոչող *դահերի* (սկյութների) արևելաիրանյան ցեղային միությանը (Strabo, XI, 9, 2):

Ք. ա. 236 թ. պարսների ցեղապետերը՝ Արշակ և Տրդատ եղբայրները, գրավեցին Պարթևքը, իսկ Անդրագորասը սպանվեց: Այդ հաղթանակի շնորհիվ Արշակն ընդունեց արքայի տիտղոսը՝ դրանով իսկ հանդես գալով որպես Արշակունիների պարթևական թագավորության հիմնադիր: Պարթևքից բացի՝ պարսները տիրացան Վրկանաց աշխարհին (ժաման. Մագանդարան): Հաստատվելով Պարթևքում՝ քոչվոր պարսները արագորեն ձուլվեցին իրենցից ավելի զարգացած նստակյաց հյուսիս-արևմտաիրանական պարթևների հետ, ընդօրինակեցին նրանց լեզուն. արտաքին աշխարհը նրանց ճանաչում էր վերջիններիս անվան ներքո: Միաժամանակ պարսները երկար ժամանակ դեռ պահպանում էին քոչվոր տոհմատիրական հասարակությանը բնորոշ հաստատություններն ու բարքերը՝ արքայի իշխանությունը սահմանափակող երկու խորհուրդները, մեկը՝ ռազմատոհմային ավագանու (արքայի «ազգակիցների») և մյուսը՝ իմաստունների ու մոգերի (Strabo XI, 9, 3):

Պարսների համար Պարթևքի նվաճման խնդիրը հեշտացավ շնորհիվ Սելևկյան արքայատոհմում սկսված գահակալական կռիվ: Այդ տարիներին Սելևկոս II-ը առանց հաջողության փորձում էր հնազանդեցնել իր եղբորը՝ Անտիոքոս Հերաքսին («Բազե»), որն իր համար առանձին թագավորություն էր ստեղծել Փոքր Ասիա-

յում՝ Լիդիայում: Եղբոր դեմ պայքարում Անտիոքոսին աջակցում էին Պոնտոսի արքա Միհրդատ II-ը (Ք. ա. 250–220 թթ.), Կասպադովկիայի արքա Արիարաթ III-ը (Ք. ա. 255–220 թթ.) և Ծովք-Կոմմագենեի արքա Արշամը:

Վճռական օգնություն ստանալով գալթաններից՝ Անտիոքոս Հերաքսը ծանր պարտության մատնեց Սելևկոս II-ին Անկյուրայի ճակատամարտում (Ք. ա. 236 թ.):

Այսպիսով՝ Սելևկյանները բավարար ուժ չունեցան Արևելյան Իրանը իրենց տիրապետության տակ պահպանելու համար: Հուստինոսի վկայությամբ՝ Արշակը, «լսելով գալթաններից Սելևկոսի պարտվելու մասին լուրը, ներխուժեց Պարթևք» (Just. XVI, 4, 3): Մոտավորապես Ք. ա. 229 թ. Սելևկոսը արշավանք կազմակերպեց պարսիների դեմ, սակայն չկարողացավ հաղթահարել իր դեմ դաշնակցած՝ Արշակ II-ի և Բակտրիայի արքա Դիոդոտոս II-ի դիմադրությունը (Just. XLI, 5, 1):

4. ՍԵԼԵՎԿԱՆՆԵՐԻ ՏԵՐՈՒԹՅԱՆ ՀՋՈՐԱՅՈՒՄԸ ԱՆՏԻՈՔՈՍ III ՄԵԾԻ ՕՐՈՔ

Ք. ա. 226–223 թթ.՝ Սելևկոս III-ի կարճատև թագավորման տարիներին, Սելևկյան տերությունը գտնվում էր կազմալուծման վիճակում: Սելևկյանների հզորությունը վերականգնելու և Սելևկոս I Նիկատորի մեծատիրական քաղաքականությունը շարունակելու վճռական փորձը պատկանում է Անտիոքոս III-ին (Ք. ա. 223–187 թթ.):

Անտիոքոս III-ը իր գահակալումը սկսեց Եգիպտոսի դեմ պատերազմով, որն ընդհատվեց Մարաստանի Սելևկյան կուսակալ Մոլոնի ապստամբությամբ: Այն ձնշելով՝ Սելևկյան արքան իրեն հպատակ դարձրեց Փոքր Մարաստանի՝ Ատրպատականի թագավորությունը (Ք. ա. 221 թ.):

Ք. ա. 220 թ. Սելևկիա Պիերիայի գրավումով Անտիոքոսը վերացրեց Եգիպտոսի անմիջական սպառնալիքը մայրաքաղաքին և ապահովեց իր թիկունքը Եգիպտոսի դեմ պատերազմում: Ք. ա. 217 թ. Անտիոքոսի գլխավորած 68 հազարանոց բանակի առաջխաղացումը դեպի Եգիպտոսի սահմանը ավարտվեց եգիպտացիներից պարտությամբ Հոաֆիայի ճակատամարտում (Գագայից հարավ): Կոյլեսիրիան և Փյունիկիան դարձյալ մնացին Եգիպտոսի կազմում, այնուամենայնիվ Անտիոքոսը պահպանեց իր իշխանության տակ Սելևկիա Պիերիան:

Ք. ա. 216–213 թթ. Անտիոքոսը պայքար էր մղում Փոքր Ասիայի արևմուտքում Սելևկյանների վերջին տիրույթ Լիդիան անկախ թագավորություն դարձրած իր կուսակալ Աքեյոսի դեմ: Ք. ա. 213 թ. նա գրավեց Սարդես քաղաքը և մահապատժի ենթարկեց Աքեյոսին:

Սելևկյան թագավորության՝ որպես Արևելքի հզորագույն տերության կարգավիճակը վերականգնվեց Ք. ա. 212–208 թթ. Անտիոքոսի արևելյան մեծ արշավանքի շնորհիվ: Այդ պահին Մարաստանից դեպի արևելք ընկած գրեթե բոլոր տարածքները արդեն դուրս էին Սելևկյանների վերահսկողությունից:

Արշավանքը սկսվեց Սելևկյան բանակի հարձակմամբ Ծովքի հայկական թագավորության վրա: Սելևկոս I-ից հետո սելևկյան-եգիպտական պատերազմների ժամանակ Ծովքի և Մեծ Հայքի թագավորությունները լիակատար անկախություն էին վայելում: Անտիոքոս III-ը պաշարեց Ծովքի մայրաքաղաք Արշամաշատը: Հայոց թագավոր Քսերքսեսը ճանաչեց Անտիոքոսի գերիշխանությունը և պարտավորվեց մոծել հարկ՝ մատակարարել ձիեր: Համաձայն ուշ աղբյուրների՝ սելևկյան արքայի և Քսերքսեսի միջև հարաբերություններն ամրապնդվեցին Ծովքի թագավորի ամուսնությամբ Անտիոքոսի քրոջ՝ Անտիոքիսի հետ: Ինչ-որ ժամանակ անց նա դավադրություն կազմեց Քսերքսեսի դեմ և թունավորեց նրան: Ծովքի թագավորությունը վերածվեց Սելևկյան վարչական միավորի՝ ստրատեգիայի, որի գլուխ դրվեց ստրատեգոսը՝ տեղացի հայ ավագանու ներկայացուցիչ Զարիադրեսը (Զարեհ): Անտիոքոս III-ի արշավանքի ժամանակ հայ ավագանու մեկ այլ ներկայացուցիչ՝ Արտաշեսի ձեռքով գահընկեց արվեց Այրարատում թագավորող Երվանդը: Արտաշեսը իշխանության եկավ Մեծ Հայքում՝ որպես Անտիոքոսի ստրատեգոս՝ կուսակալ (Strabo, XI, 14, 15): Հայաստանը ներառվեց Սելևկյան տերության մեջ՝ ենթարաժամակցելով երկու վարչական միավորի (Ք. ա. 212–190 թթ.), սակայն երկրի կառավարումն իրականացնում էր հայ ավագանին:

Ք. ա. 210 թ. Էկրատանայից (Համադան) Անտիոքոսը արշավի ելավ պարթևների դեմ: Թագավորության հիմնադիր Արշակ I-ի եղբայր Արշակ II-ը նահանջեց Վրկանաց աշխարհից: Սելևկյանների և Արշակունիների միջև շուտով կնքվեց հաշտություն, ըստ որի՝ Արշակը, պահպանելով արքայական տիտղոսը, ձևականորեն ճանաչում էր Սելևկյանների գերակայությունը: Պարթևների չեզոքացումը հնարավոր դարձրեց հարձակման անցնել Հունա-Բակտրիական թագավորության դեմ: Ք. ա. 208 թ. Գերիրուդի (ժաման. Թերջեն) ափին Անտիոքոսը պարտության մատնեց Բակտրիայի արքա Եվտիդեմոսին: Բակտրիայի մայրաքաղաք Զարիասպայի (Բալխ) երկամյա պաշարումից հետո կնքված հաշտությամբ Անտիոքոսը ճանաչեց Բակտրիական թագավորության գոյությունը: Եվտիդեմոսն իր հերթին ճանաչում էր Սելևկյան արքայի գերադասությունը: Ուշագրավ է, որ իր հետ ձեռնառու պայմանով հաշտություն կնքելու օգտին Եվտիդեմոսն առաջ էր քաշում այն դրույթը, որ Բակտրիայի հյուսիսային սահմաններին կանգնած քոչվոր բարբարոսների բազմությունները սպառնալիք են ներկայացնում թե՛ Անտիոքոսին և թե՛ հույների տիրապետությանը Բակտրիայում: Այսինքն՝ Բակտրիայի թագավորության գոյությունը նա հիմնավորում էր որպես Սելևկյանների տիրույթների ու կենտրոնասիական քոչվորների միջև ռազմաքաղաքական արգելապատնեշի: Եվտիդեմոսի մտավախությունն իրականացավ Ք. ա. 141–128 թթ., երբ Սիրդարյայից այն կողմ բնակվող արևելաիրանական քոչվորների՝ սակարաուկների, թոխարների, պասիանների, ներխուժումը վերջ տվեց Հունա-Բակտրիական թագավորության գոյությանը (P. Trog. XLII, Strabo, XI, 8, 2):

Ք. ա. 206 թ. Բակտրիայից Հինդուկուշի վրայով Անտիոքոսը մտավ «Հնդկաստան» (Polyb. XI, 34)՝ Ինդոսի հյուսիսային հոսանքում՝ Մաուրյանների նախկին տերության տարածքում գտնվող մի թագավորություն: Տեղի արքայից նա առանց պա-

տերազմի ստացավ հարկ, մարտական փղեր, հնարավոր է նաև որոշ տարածքային գիջումներ: Արախտսիայի (Հարավային Աֆղանստան) և Դրանգիանեի (Սեյստան) վրայով Անտիոքոսը հասավ Կերման (Կարմանիա): Այստեղից Սելևկյան զորքերի մի մասը շարժվեց Պարսքի միջով դեպի Բաբելոն, իսկ ինքը՝ արքան, նավատորմով դուրս գալով Պարսից ծոց, հնագանդեցրեց Պարսից ծոցի առափնյա Գերիա արաբական պետությունը (Polyb, XI, 34, XIII, 9):

Անտիոքոսի արևելյան արշավանքը (Ք.ա. 212–205 թթ.) զգալիորեն բարձրացրեց նրա հեղինակությունը հելլենիստական աշխարհում, նա պաշտոնապես հորջորջվեց «Մեծ», թեև իրականում նրան չհաջողվեց ռազմական ճանապարհով վերացնել արևելյան ծայրամասերի վրա ծանրացած արտաքին քաղաքական վտանգը՝ ի դեմս պարթևների: Սակայն Սելևկյան գանձարանը մեծապես համալրվեց կախյալ երկրներից (Հայաստան, Բակտրիա, Գերիա) ստացված ռազմատուգանքների շնորհիվ: Կոտակված միջոցները թույլ տվեցին Ք. ա. 204 թ. վերսկսել ակտիվ քաղաքականությունը Արևելյան Միջերկրածովքում: Ք. ա. 201 թ. Անտիոքոսը ջարդեց եգիպտական զորքերին Պանիոնի ճակատամարտում (Հարավային Փյունիկիա), որի հետևանքով Կոլլեսիրիան և Փյունիկիան դարձան Սելևկյան տերության նահանգներ: Այսպիսով՝ Եգիպտոսի և Սելևկյանների դարավոր վեճը այդ երկրամասերի տիրապետման համար ավարտվեց Սելևկյանների հաղթանակով:

5. ՍԵԼԵՎԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄԸ ՀՌՈՍԻ ՏԵՏ (Ք. Ա. 195–189 թթ.)

Սելևկյան տերության հզորության գագաթնակետը զուգադիպեց Արևելյան Միջերկրածովք Հռոմեական հանրապետության սրընթաց մուտքի հետ: Ք. ա. 202 թ. հաղթականորեն ավարտելով Կարթագենի դեմ պատերազմը (Ք. ա. 218–202 թթ.)՝ Հռոմը վերածվեց Արևմտյան Միջերկրածովքի անսահմանափակ տիրակալի: Հռոմն արդեն միջամտեց Մակեդոնիայի և Պերգամոնի միջև պատերազմին: Նրա նպատակն էր խոչընդոտել Մակեդոնիայի թագավորության ուժեղացմանը, որը դեռևս Ք. ա. 215 թ. հակահռոմեական դաշինք էր կնքել Կարթագենի հետ, թեև առանց գործնական հետևանքների: Ք. ա. 200 թ. հռոմեական զորքերը ավ իջան Բալկաններում՝ սանձազերծելով ռազմական գործողություններ Մակեդոնիայի դեմ: Ք. ա. 197 թ. Ֆիլիպպոս V-ը ծանր պարտություն կրեց հռոմեացիներից Կինոսկեֆալեի ճակատամարտում:

Ք. ա. 196 թ. Իսթմոսյան համահունական խաղերում հռոմեացիները հռչակեցին Հունաստանի «ազատությունը» Մակեդոնիայի արքայի գերիշխանությունից, ինչն իրականում նշանակում էր Հռոմի տիրապետության հաստատումը Հունաստանում, հունական քաղաքների ներքին գործերին միջամտելու և նրանց արտաքին քաղաքականությունը վերահսկելու առանձնաշնորհ (Polyb, XVIII, 45, 5):

Անտիոքոսը թերագնահատում էր հռոմեական էքսպանսիայի սպառնալիքը: Հռոմը նրա համար անհայտ ուժ էր, և սկզբնապես Սելևկյան արքան շահագրգռված էր Ֆիլիպպոսի պարտությամբ, քանի որ վերջինս, որը Ք. ա. 203–202 թթ. Անտիոքոսի դաշնակիցն էր Եգիպտոսի դեմ պայքարում, նրա տեսանկյունից մեծ հավակնություններ ուներ Եգիպտոսի փոքրասիական առափնյա տիրույթների նկատմամբ: Ք. ա. 197 թ.՝ մինչև Կինոսկեֆալեի ճակատամարտը, Անտիոքոսը զբաղված էր փոքրասիական հարավի (Կարիայի) քաղաքների, նաև Տրալլեի Եփեսոսի ենթարկմամբ: Ք. ա. 196 թ. Անտիոքոսն անցավ Դարդանելը և ոտք դրեց Թրակիա:

Ք. ա. 196 թ. հռչակելով Իսթմոսում Հունաստանի «ազատությունը»՝ Հռոմի ներկայացուցիչները այստեղ ժամանած Սելևկյան դեսպանների միջոցով Անտիոքոսից պահանջեցին պատերազմ չվարել Ասիայի որևէ քաղաքի դեմ և մաքրել այն քաղաքները, որոնք նա գրավել էր Եգիպտոսից և Մակեդոնիայից, դեռ ավելին՝ Անտիոքոսին արգելվեց անցնել նեղուցները և մտնել Եվրոպա: Հռոմեական պատվիրակությունը, գալով Անտիոքոսի մոտ Թրակիա (Լիսիմաքիա), վերահաստատեց Հռոմի սենատի դիրքորոշումը: Բանակցություններն անարդյունք էին: Անտիոքոսը իր հավակնությունը Թրակիայի վրա հիմնավորում էր Սելևկոս Նիկատորին նրա պատկանելու փաստով:

Ք. ա. 195 թ. Անտիոքոսը իր արքունիքում ընդունեց Կարթագենից փախած Հաննիբալին, որին դարձրեց իր խորհրդատուն: Սա նշանավորեց Հռոմի հանդեպ Անտիոքոսի դիրքորոշման մեջ կտրուկ տեղաշարժը: Ք. ա. 192 թ. Հունաստանում Հռոմի կամայական կեցվածքից դժգոհ Էտոլիական դաշնության՝ հունական խոշորագույն քաղաքային դաշնային կազմավորման հրավերով Անտիոքոսը ավ իջավ Հունաստանում: Հռոմեական կողմը դա գնահատեց որպես իր դեմ պատերազմի սանձազերծում: Անտիոքոսը ակնկալում էր Էտոլիացիների և հունական մյուս քաղաքների աջակցությունը, սակայն հույների մեծ մասը մնաց չեզոք՝ սպասողական դիրքում: Հռոմին իր հավատարմությունը հավաստեց Ֆիլիպպոսը՝ Մակեդոնիայի արքան, որի կողմնորոշումը վճռորոշ էր սկսվող պատերազմում, ինչն, անշուշտ, հռոմեական դիվանագիտության մեծ հաջողությունն էր:

Ք. ա. 191 թ. Անտիոքոսը ծանր պարտություն կրեց հռոմեական բանակից Թերմոպիլեի կիրճում և նահանջեց Փոքր Ասիա: Հակառակորդների ուժերի վճռական փորձությունը տեղի ունեցավ Լիդիայում՝ Սիպիլոս լեռան մոտակայքի Մագնեսիա քաղաքի մոտ, Ք. ա. 189 թ.: Անտիոքոսի բանակը, որը բաղկացած էր տերության տարբեր ժողովուրդների զորաջոկատներից, թվապես գերազանցում էր հռոմեականին՝ 70 հազար զինվոր հակառակորդի 30 հազարի դիմաց: Ճակատամարտի սկզբում Անտիոքոսը իր հեծելազորի գլխավորությամբ հաջողության հասավ աջ թևում, բայց գրոհի ընթացքում կտրվեց իր հետևակից՝ մակեդոնական փաղանգից, որը, ճակատից և թևերից ենթարկվելով հարվածների, կազմալուծվեց և կոտորվեց փախուստի պահին:

Պարտությունը ռազմաքաղաքական աղետ էր նշանակում Սելևկյան տերության համար: Ք. ա. 188 թ. Ապամեայում (Փոյուզիա) Հռոմը Անտիոքոսին թելադրեց հաշ-

տության իր պայմանները, որոնք անվերապահորեն ընդունվեցին: Հռոմի հովանավորության տակ էին անցնում Փոքր Ասիայում Էգեյան ծովափի և Լիդիայի հունական քաղաքները և Պիսիդիան: Տավրոսի լեռնաշղթայից արևմուտք ընկած բոլոր փոքրասիական տարածքները կորսվեցին Անտիոքոսի համար: Նրան արգելվում էր դաշինքներ կնքել փոքրասիական տարածաշրջանի որևէ պետության հետ և այստեղ վարել հարձակողական պատերազմներ: Փոքրասիական տարածքներից Անտիոքոսը պահպանեց միայն Դաշտային Կիլիկիան: Այստեղ որպես Սելևկյան պետության սահման ձանաչվում էր Կալիկադոնոս գետը: Սելևկյան պետության կազմում մնաց նաև Կոմմագենեն (Եփրատի աջ ափին) (Memn. XXVI, 3):

Այսուհետ Հռոմեական հանրապետությունը հաստատվեց որպես փոքրասիական տարածաշրջանի քաղաքական իրավիճակը վերահսկող ուժ: Հռոմն իր ազդեցությունը հաստատեց կենտրոնական Փոքր Ասիայում՝ Գալաթիայում. այստեղ՝ Ք. ա. 189 թ.՝ Մագնեսիայի ճակատամարտից հետո, կոնսուլ Մանլիոս Վուլտոնի արշավանքի հետևանքով հնագանդության բերվեցին գալաթները: Գալաթիան Հռոմի վճռով հանձնվեց նրան հավատարիմ դաշնակից դարձած Եվմենեսին՝ Պերգամոնի թագավորին:

Հռոմն իր ազդեցությունը տարածեց Կապադովկիայում, այսինքն՝ Փոքր Ասիայի արևելքում: Կապադովկիայի արքա Արիարաթ IV Բարեպաշտի (Ք. ա. 220–162 թթ.)՝ Անտիոքոսի փեսայի զորքերը մասնակցեցին Մագնեսիայի ճակատամարտին, իսկ այնուհետև (Ք. ա. 188 թ.) Հռոմի դեմ գալաթների կողմին (Tit. Liv. XXXVIII, 26, 4): Արիարաթը հռոմեացիներին մուծեց ռազմատուգանք և Պերգամոնի արքայի միջնորդությամբ արժանացավ «Հռոմի բարեկամի» կոչմանը (Tit. Liv. XXXVIII, 99, 6): Նրա հաջորդի՝ Արիարաթ V-ի օրոք Կապադովկիան վերածվեց Փոքր Ասիայում Հռոմի քաղաքականության հյու կամակատարի (Ք. ա. 131–129 թթ. նա մասնակցեց Պերգամոնում Արիստոնիկոսի հակահռոմեական ապստամբության ձևմանը):

Քաղաքական պարտականություններից և տարածքային զիջումներից բացի Ապամեայի հաշտությամբ Անտիոքոսը պարտավորվում էր հռոմեացիներին մուծել 15,000 տաղանդ (ատտիկյան տաղանդը հավասար էր 26 կիլոգրամ արծաթին) ռազմատուգանք, հանձնում էր իր մարտական փղերին և ռազմատորմը՝ քացառությամբ 10 նավի՝ Սիրիայի առափնյակին պահակային ծառայության համար: Սելևկյան նավերին արգելվում էր դուրս գալ Կալիկադոնոսի գետաբերանից դեպի արևմուտք: Անտիոքոսը Հռոմին հանձնեց նաև թագմաթիվ պատանդների, այդ թվում իր որդուն՝ ապագա Անտիոքոս IV-ին:

Ապամեայում հաստատված խաղաղությունը նշանավորվեց Սելևկյան թագավորության՝ որպես համաշխարհային տերության վախճանը: Պատերազմում ի հայտ եկան հելլենիստական աշխարհի թույլ կողմերը՝ ռազմաքաղաքական մասնատվածությունը, Փոքր Ասիայի արևմուտքի ավանդաբար անկախ պոլիսների հակամիապետական, առավելապես հակասելևկյան դիրքորոշումը: Իր դերը կատարեց նաև Սելևկյան միապետության սահմանափակ կարողությունը՝ միակողմանի տնօրինելու իրեն հպատակ սիրիական և միջագետքյան քաղաքացիական համայնքների զինուժը՝ աշխարհագորը:

Իր կառավարման վերջին երկու տարում Անտիոքոսը զբաղված էր Հռոմին միջխարի ռազմատուգանքի համար անհրաժեշտ միջոցների հայթայթմամբ: Նա սպանվեց Էլիմայիսում Ք. ա. 187 թ.՝ Բել աստծուն երկրպագող բնակչության հետ ընդհարման ժամանակ, երբ փորձեց բռնագրավել այդ աստծո սրբավայրին պատկանող զանձարանը:

Ք. ա. 189 թ.՝ Սարդեսում հռոմեա-Սելևկյան նախնական բանակցությունների ժամանակ, հռոմեական կողմը առաջ էր քաշել Հռոմի ռիսերիմ թշնամի Հաննիբալի հանձնման պահանջը: Հաննիբալը այդ պահին գտնվում էր Պամփոլիայում (App. Syr. 22), որտեղից ավելի հեշտ էր անվտանգ փախչել դեպի Արևելք, այլ ոչ միանգամից Բյուրանիա, որտեղ նա ինքնասպան եղավ Ք. ա. 183 թ.: Ք. ա. 189–188 թթ. Պամփոլիայից դեպի Բյուրանիա տանող բոլոր ցամաքային ուղիները վերահսկվում էին հռոմեական զորքերով և նրանց դաշնակիցներով, Ք. ա. 188 թ. Մանլիոս Վուլտոնի զորքերը օկուպացրել էին Պիսիդիան, Պամփոլիան և Գալաթիան: Այս փաստերը նկատի առնելով՝ հարկ է հավատ ընծայել Պլուտարքոսի (Plut. Luc. XXXI, 5) և Ստրաբոնի (Strabo, II, 46, 6) այն հաղորդումներին, որ Հաննիբալը ապաստան է գտել իրեն Մեծ Հայքի թագավոր հռչակած Արտաշես I-ի արքունիքում: Հայաստանն այդ պահին ամենամանվտանգ տեղն էր Հաննիբալի համար:

Տիտոս Լիվիոսը (XXXVII, 40) և Ապալիանոսը (Syr. 32), նկարագրելով Անտիոքոսի բանակի էթնիկական կազմը Մագնեսիայի ճակատամարտում, չեն հիշատակում հայկական զորամասերը: Շատ հավանական է, որ Արտաշեսն ու Զարեհը իրենց անկախությունը հռչակել ու թագավորական տիրոջուններն ընդունել էին դեռևս Մագնեսիայի ճակատամարտից առաջ՝ հռոմեա-Սելևկյան պատերազմի սկզբնական փուլում: Ստրաբոնի այն հաղորդումը, որ նրանք անցել են Հռոմի կողմը, թերևս, հարկ է հասկանալ որպես Արտաշեսի և Զարեհի կողմից սոսկ քաղաքական դիրքի ընդունում հռոմեա-Սելևկյան պատերազմի նկատմամբ: Պոլիբիոսը և Տիտոս Լիվիոսը չեն հիշատակում նրանցից որևէ մեկի կողմից Հռոմ դեսպանության առաքման կամ Փոքր Ասիայում Հռոմի ներկայացուցիչների հետ հարաբերությունների հաստատման մասին: Այստեղ տեղին է միայն այն քացատրությունը, որ Արտաշեսը չէր ձգտում Հռոմի հետ հարաբերությունների հաստատմանը ու նրանից ձանաչվելուն, առավել ևս հաշվի չէր նստել նրա քաղաքական դիրքի հետ՝ ընդունելով Հաննիբալին Հայաստանում:

Այսինքն՝ հայոց արքան միանգամայն անկախ դիրք էր գրավում միջագային բեմահարթակում: Այդ կապակցությամբ գուցե պատահականություն չէր, որ Ք. ա. 168 թ. ի վեր Հռոմում բնակվող և հռոմեական արտաքին քաղաքականությանը քաջատեղյակ Պոլիբիոսը հիշատակում է Ք. ա. 179 թ. վերաբերյալ Արտաշեսին առանց նրա արքայական տիրոջուր նշելու, միայն որպես Հայաստանի մեծ մասի կառավարչի, թեև Ստրաբոնն ընդգծում է, որ Արտաշեսը հռչակվեց թագավոր մինչև Ապամեայի խաղաղության պայմանագիրը: Բացառված չէ, որ Պոլիբիոսի՝ Արտաշեսին տված բնորոշումը պատահական չէ և արտացոլում է Հռոմի հետ հայոց արքայի հարաբերությունները չհաստատելու փաստը և, հետևաբար, Հռոմի կողմից նրան պաշտոնապես արքա չձանաչելը:

6. ՍԵԼԵՎԿՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՆԱՅՈՒՄՆ ՈՒ ԱՆԿՈՒՄԸ

Ք. ա. 188 թ. սկսած՝ Սելևկյան թագավորությունը ամփոփվեց Սիրիայի (Սիրոփունիկն), Կիլիկիայի, Միջագետքի և Մարաստանի սահմաններում: Պարսքի և Էլիմայիսի իշխանապետությունների կախվածությունը Սելևկյաններից սուկ անվանական էր:

Սելևկյան պետության մեծատիրական դիրքի վերականգնման վերջին փորձը ձեռնարկեց Անտիոքոս III-ի որդին՝ Անտիոքոս IV-ը (Ք. ա. 175-164 թթ.): Ի խախտումն Ապամեայի պայմանագրի նա վերստեղծեց նավատորմը, ձեռք բերեց մարտական փղեր: Ք. ա. 171 թ., օգտագործելով Պտղոմեոսյանների ներքին բախումը, նա ներխուժեց Եգիպտոս: Ք. ա. 168 թ. Անտիոքոս IV-ը կրկնեց իր ներխուժումը Եգիպտոս, սակայն Հռոմը, որ հենց նոր էր նվաճել Մակեդոնիայի թագավորությունը, պահանջեց Սելևկյան արքայից թողնել Եգիպտոսը. Անտիոքոսը ենթարկվեց:

Հռոմն այսպիսով սաստկացնում էր Արևելյան Միջերկրածովքում միջազգային հարաբերությունների իր վերահսկողությունը: Եգիպտոսից վերադարձի ճանապարհին Անտիոքոսը գրավեց Երուսաղեմը: Նա փորձեց արգելել մովսիսական կրոնը՝ հուդայականությունը, և հրեաներին պարտադրել Ջևսի պաշտամունքը: Այդ քայլը հարուցեց հրեա բնակչության զանգվածային ելույթը, որը գլխավորեց Մաթաֆիա Մակաբեն: Ապստամբությունը ստացավ հունա-մակեդոնական տիրապետության դեմ համառ պայքարի բնույթ: Այն ավարտվեց Մակաբեների գլխավորությամբ ստեղծված հրեական թեոկրատիկ պետության լիակատար անկախացմամբ Ք. ա. 141-140 թթ.:

Ք. ա. 166 թ. թիկունքին ունենալով ըմբոստացած Հուդան՝ Անտիոքոսը պատերազմի մեջ մտավ Հայաստանի դեմ: Աղբյուրների տվյալները Արտաշեսի հետ նրա ռազմական ընդհարման մասին հակասական են: Կասկածից վեր է, որ Սելևկյան արքան չհասավ որևէ նշանակալից արդյունքի: Անտիոքոսը շարժվեց դեպի Մարաստանի արևելյան սահմանը, որտեղ Սելևկյանների համար հասունանում էր գլխավոր վտանգը ի դեմս հզորացող Պարթևաստանի: Նրա հանկարծակի մահը Ք. ա. 163 թ. ընդհատեց այդ արշավանքը:

Դեմետրիոս I-ի (Ք. ա. 162-151 թթ.) թագավորմամբ Սելևկյան պետության համար սկսվեց անկայունության և խլրտումների ժամանակաշրջանը: Ք. ա. 162 թ. Դեմետրիոսի դեմ ապստամբություն բարձրացրեց Մարաստանի Սելևկյան կուսակալ Տիմարքոսը: Տիմարքոսի նպատակն էր ոչ թե անջատել Մարաստանը և Բաբելոնիան, այլ գահընկեց անել հենց Սելևկյաններին և նրանց փոխարեն հիմնադրել սելիական արքայատոհմը: Նրա ելույթը հավանություն ստացավ Հռոմի սենատում: Տիմարքոսի դաշնակիցն էր Արտաշես I-ը: Դեմետրիոսին, սակայն, հաջողվեց ջախջախել և սպանել Բաբելոնիա ներխուժած Տիմարքոսին: Դեմետրիոսը իր տիրապետությունը վերահաստատեց Էկբատանայում: Արտաշեսի և Դեմետրիոսի միջև հարաբերությունների ընթացքը հայտնի չէ, սակայն, ըստ երևույթին, Հռոմում ճանաչում ստացած Սելևկյան գահի թեկնածուի՝ Տիմարքոսի հետ Արտաշեսի դաշինքն

ընդդեմ Հռոմին անցանկալի Դեմետրիոսի կարող էր որպես հետևանք ունենալ Արտաշեսի և հռոմեացիների միջև առաջին շփումների հաստատումը:

Եթե Դեմետրիոսին հաջողվեց պաշտպանել իր գահը Տիմարքոսի ոսնձգությունից, ապա նա արդեն ի գորու չէր իր իշխանությունը վերականգնելու Կոմմագենեում, որի կուսակալ Պտղոմեոսը հռչակեց իր անկախությունը Սելևկյան արքայից Տիմարքոսի ապստամբության տարիներին: Պտղոմեոսին չհաջողվեց հիմնել սելիական արքայատոհմը, և Ք. ա. 130-ական թթ. Կոմմագենեի վրա վերիշխեց Երվանդունիների արքայատոհմը:

Գիտական գրականության մեջ Կոմմագենեն գնահատվում է որպես հելլենիստական մշակույթի ծաղկուն կենտրոն: Դեռևս Ք. ա. III դ. Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորության Երվանդունի հայ թագավորները դրամներ էին հատում հունական մակագրություններով և հունական աստվածների՝ Հերակլեսի և Աթենասի պատկերներով:

Միջազգային բեմահարթակում Ծոփք-Կոմմագենեի ակտիվացումը կապված է Արշամ արքայի անվան հետ, որը պաշտպանում էր Անտիոքոս Հիերաքսին Սելևկոս II-ի դեմ նրա ելույթում: Արշամի օրոք Ծոփքում հիմնադրվեց Արշամաշատ մայրաքաղաքը՝ հավանաբար հելլենիստական տիպի քաղաք: Քաղաքական կենտրոնի փոխադրումը Եփրատի արևմտյան ափին գտնվող Սամոսատից պիտի վկայի Երվանդունիների թագավորության մեջ հայկական տարածքների (բուն Ծոփքի) քաղաքական դերի ուժեղացման մասին: Ինչպես իրավամբ ենթադրվում է՝ Արշամից հետո Երվանդունիների Ծոփք-Կոմմագենեի թագավորությունը տրոհվեց: Ք. ա. 212 թ. Ծոփքում իշխում էր Քսերքսեսը, իսկ Կոմմագենեն վարչական միավորի կարգավիճակով մտավ Սելևկյանների պետության մեջ (Ք. ա. մինչև 160-ական թթ. վերջը):

Եփրատի վերին հոսանքի գոտում իրար հետ էին շփվում հույները և արևելքի ժողովուրդները (հայեր, կապադովկացիներ, արամեացիներ, իրանցիներ): Այստեղ ի հայտ եկավ հելլենիզմի՝ որպես քաղաքակրթական երևույթի ամենահատկանշական կողմը՝ արևելյան և հելլենական մշակույթների միաձուլումը և կրոնական սինկրետիզմը: Այն ամենից ցայտուն ներկա է Կոմմագենեի կերպարվեստում, աստվածների վիթխարի քանդակներում, որոնց Ք. ա. 40-ական թթ. կերտել տվեց Կոմմագենեի թագավոր Անտիոքոս I-ը՝ Միհրդատ I Կալլինիկոսի որդին: Քանդակներում զուգակցվում են հունական և հին արևելյան գեղարվեստական մշակույթների տարրերը: Կոմմագենեի դիցարանը արևելյան և հունական աստվածների միություն էր. Ջևսը նույնացվեց Արամազդին, Ապոլոնը՝ Միհրին:

Կոմմագենեի անկախացմանը հաջորդեցին Սելևկյանների թագավորության հյուսիսային՝ եփրատամերձ և հյուսիսմիջագետքյան տարածքների անջատումները: Ք. ա. 130-ական թթ. Եդեսիայում հաստատվեց արաբական իշխանապետերի արքայատոհմը: Ք. ա. I դ. սկզբի աղբյուրներում վկայված է Ադիաբենեի արամեաստրական թագավորությունը:

Ք. ա. 152 թ. Հռոմը դժգոհ Կապադովկիայի գործերին Դեմետրիոսի միջամտելու փորձերից, աջակցեց ինքնակոչ Ալեքսանդր Բալասին ընդդեմ Դեմետրիոսի: Դե-

մետրիոսը սպանվեց սկսված կռվում, Ալեքսանդրը գրավեց Անտիոքը, բայց շուտով պատերազմի մեջ մտավ Դեմետրիոս I-ի որդու՝ Դեմետրիոս II-ի դեմ: Այդ կռիվները կործանիչ հետևանքներ ունեցան Սելևկյան պետության ամբողջականության համար: Սելևկյանների տիրոջների վրա հարձակման անցան պարթևները: Ք. ա. 147 թ. Միհրդատ I-ը (Ք. ա. 174–141 թթ.) նվաճեց Մարաստանը՝ Էկրատանա քաղաքով: Ք. ա. 141 թ. Միհրդատը գրավեց Միջագետքի խոշորագույն հունա-մակեդոնական քաղաքը՝ Տիգրիսամերձ Սելևկիան: Դեմետրիոս II-ը, հենվելով Միջագետքի հունական քաղաքների աջակցության վրա, դուրս մղեց պարթևներին, սակայն Ք. ա. 139 թ. պարտվելով՝ գերվեց նրանց կողմից: Պարթևները հնազանդեցրին Պարսքն ու Էլիմայիսը: Սելևկյան թագավորությունը սեղմվեց միայն Սիրիայի, Կիլիկիայի և Փյունիկիայի տարածքում. Միջագետքն ու Բաբելոնիան ամբողջությամբ ընկան պարթևների ձեռքը:

Ք. ա. 131 թ. Միջագետքը վերագրավելու վերջին փորձը ձեռնարկեց Անտիոքոս VII-ը: Նա դուրս մղեց պարթևներին Միջագետքից ու Մարաստանից և նույնիսկ ներխուժեց Վրկանիա: Այստեղ Հրահատ II-ն անցավ անսպասելի հակազորի: Սելևկյան բանակը և նրան ուղեկցող զաղութարանակների ստվար զանգվածն ընկան մարտերում, սպանվեցին Անտիոքոսը և նրա արքունիքը: Կատարվածը անուղղելի աղետ էր Սելևկյան պետության համար:

Պարթևական տիրապետությունը հաստատվեց ողջ Եփրատի երկայնքով՝ մինչև Հայկական Ծովքի սահմանը, և Հյուսիսային Միջագետքում ու Ատրպատականում՝ անմիջապես Մեծ Հայքի հարավային սահմանի երկայնքով: (Պարթևներին հպատակ էր նույնիսկ Կորդուքը, Ք. ա. 112 թ. պարթևական հեծելազորը ներխուժեց Մեծ Հայք (Just, XL, II, 2; Strabo XVII, 1, 19)):

Մերձավոր Արևելքում պարթևական տերության ձևավորման ավարտը նշանավորող այդ իրադարձությունները զուգադիպեցին Արևելյան Միջերկրածովքում Հռոմի առաջխաղացման վերսկսման հետ: Ք. ա. 133–129 թթ. Հռոմը նվաճեց Պերգամոնի թագավորությունը՝ նրան կտակված Ատտալոս III-ի (Ք. ա. 138–133 թթ.) կողմից: Հռոմին համառորեն դիմադրեց Արիստոնիկոսը՝ Ատտալոսի ազգականը: Հռչակվելով արքա՝ նա Հռոմի դեմ բարձրացրեց Փոյուզիայի և Մյուսիայի համայնական գյուղացիությունը: Ք. ա. 129 թ., ապստամբներին ջախջախելով, հռոմեացիները Պերգամոնի տեղում ստեղծեցին «Ասիա» պրովինցիան՝ իրենց առաջին տիրույթը Փոքր Ասիայում: Ք. ա. 120 թ. «Ասիային» միացվեց Մեծ Փոյուզիան, և դրանով հռոմեական տիրույթների սահմանը հասցվեց մինչև Սանգարիոս գետը: Իսկ Ք. ա. 111 թ. Ասիային կցվեց Լիկաոնիան, որը մինչև այդ պատկանում էր Կապադովկիային: Այսուհետ Հայաստանից (Ծովք) Հռոմի տիրույթները անջատվում էին Կապադովկիայի՝ Հռոմի արբանյակ պետության տարածքով:

Ք. ա. 129 թ. Սելևկյանների իշխանության վերացումը Միջագետքում և Մարաստանում, հսկայական նյութական ռեսուրսների կորուստը խթանեցին պետության քաղաքական կառույցի խոր ճգնաժամը:

Ճգնաժամը դրսևորվեց Սելևկյան արքայատոհմի տարբեր ճյուղերի միջև մղվող

զահակալական կռիվներում, որոնք ավերիչ էին Սիրիայի համար: Այդ արյունահեղ մրցապայքարը ուղեկցվում էր Սիրիայի վրա հարևանների հարձակումներով՝ նախաժայթի արարների, սիրիական անապատի բեդվինների, կիլիկյան ծովահենների, պարթևների: Թեև պոլիսը ճգնաժամային վիճակում չէր գտնվում, սակայն տառապում էր արտաքին քաղաքական անկայունությունից: Միևնույն ժամանակ քաղաքական անկայունության խորացումը և պետական հաստատությունների քայքայումը վտանգ էին ներկայացնում պոլիսի գոյության տնտեսական հիմքի՝ հողի գերագույն համայնական սեփականության համար:

Արյունահեղ դինաստիական կռիվներում կենտրոնական իշխանության անխուսափելի հեղինակազրկումն ու թուլացումը հանգեցնում էին պոլիսների իշխանության ամրապնդմանը տեղերում, նրանց քաղաքական ինքնուրույնության աճին, որը սկսում էր հասնել լիակատար անկախության: Սեփական ուժերով իրենց շահերը պաշտպանելու, ծովահենների և բեդվինների հարձակումները հետ մղելու նպատակով քաղաքները սկսում էին միավորվել: Ք. ա. 129 թ. սկսած՝ Անտիոքի, Սելևկիա Պիերիայի, Լաոդիկեայի և Ապամեայի միջև հաստատվեց քաղաքական համախոհություն («հոմոնոյա»): Նրանք սկսեցին իրենց անվանել «քույր-քաղաքներ» (Strabo XVI, 2, 4): Այդ կապերում վճռորոշ դեր էր կատարում դեմոսը՝ ժողովուրդը, և նրա մարմինը՝ ժողովրդական ժողովը:

Պոլիսների ինքնավարության աճը և քաղաքական ակտիվացումը Ք. ա. 129–83 թթ. պայմանավորված էին նախ և առաջ Սիրիայի ներքին վիճակի քառսայնությամբ և ոչ թե պետական անկախության ձգտումով:

7. ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ՍԻՐԻԱՆ ԵՎ ԿԻԼԻԿԻԱՆ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈՒ: ՀՌՈՄԵԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

Ստեղծված իրավիճակում հելլենիստական Սիրիայի իշխող դասակարգը՝ պոլիսների վերնախավը, ձգտում էր վերականգնել հզոր միապետական իշխանությունը, որ ունակ կլիներ վերջ տալու երկրում տիրող անկարգություններին՝ բեդվինների, ծովահենների, նաքաթեացիների հարձակումներին, ապահովելու պոլիսների հողատիրության համար բարվոք պայմանները, անվտանգ դարձնելու առևտրական ուղիները: Ք. ա. 83 թ. Հյուսիսային Սիրիայի խոշորագույն պոլիսները՝ Անտիոքը, Սելևկիա Պիերիան, Լաոդիկեան, Ապամեան միավորվել էին իրենց համար դրսից թագավոր հրավիրելու նպատակով: Սելևկյան արքայատոհմի ներկայացուցիչները՝ Կլեոպատրա-Սելենե թագուհին, նրա մանկահասակ որդի Անտիոքոս XIII-ը և մերձավորները, երկրում քաղաքական հենարան չունենալով, անգոր էին խոչընդոտելու իրենց գահընկեց անելու միացյալ քաղաքների որոշմանը: Բազմամարդ գազաթաժողովին քաղաքների ներկայացուցիչները, քննարկելով մի քանի թեկնածություն, որոշեցին Սիրիայի թագավորությունը հանձնել հայոց արքա Տիգրան Մեծին: Այդ

որոշումը, անշուշտ, Տիգրանի մեծագույն դիվանագիտական հաջողություններից էր: Հայոց արքան արդեն մեկ տարի էր, ինչ հաղթելով պարթևներին և վտարելով նրանց Ատրպատականից ու Հյուսիսային Միջագետքից, կանգնած էր Եփրատի ափին՝ Սիրիայի դարպասների առջև: Նա արդեն իրեն էր ենթարկել Եփրատի ձախափնյա Սելևկիա ամրոցը:

Ք. ա. 83 թ. գարնանը Մերձավոր Արևելքի պատմության մեջ կատարվեց նշանակալից մի իրադարձություն. Սիրիայի «ժողովրդի» (populus)՝ միացյալ քաղաքների հրավերով (Just, XL, 1) Տիգրանն իր գործով անցավ Եփրատը և արդեն Սիրիայի թագավորի կարգավիճակով հանդիսավոր կերպով մուտք գործեց Անտիոք:

Սիրիայի պոլիսները հանդես եկան որպես կարգադիր իշխանության անմիջական կրող կողմ, որն իրականացրեց իր կամքը: Պոլիսների վերնախավի ազատ ընտրության արդյունքում Տիգրանը ստանձնեց իր իշխանությունը Սիրիայում: Տիգրանի գահակալմամբ միացյալ քաղաքացիական համայնքների գերակայությունն իր տեղը զիջեց ժառանգական թագավորի ինքնիշխանությանը: Միջագային իրավունքի տեսանկյունից՝ սիրիական կողմի՝ միացյալ քաղաքների հրավերով Տիգրանի գահակալումը Սիրիայում բնորոշելի է որպես միապետական ունիա՝ միավորում Հայաստանի և Սիրիայի միջև: Ինչպես վկայում են Տիգրանի արքայական տիտղոսի առանձնահատկությունները, Սիրիայում նա իշխում էր որպես սիրիական տեղական թագավոր:

Այսպիսով՝ 6-միլիոնանոց Սիրիան՝ Սելևկյան տերության միջուկը, միավորվելով Հայաստանի հետ ընդհանուր միապետի իշխանության ներքո, Հայաստանի հետ միասին կազմեց հելլենիստական երկմիասնական տերություն (Ք. ա. 83-69 թթ.): Նրա գոյության հիմքում էր հայկական և հունա-մակեդոնա-սիրիական կողմերի քաղաքական համագործակցությունը, որը ձևակերպված էր ունիայի տեսքով:

Ի շահ Սիրիայի իշխող դասակարգի՝ Տիգրանը երկրում իրականացրեց մի շարք միջոցառումներ՝ պոլիսների քաղաքական իրավունքների ընդարձակում (Ապամեա քաղաքը), նրանցից խոշորագույններին (Լաոդիկեա, Բերիթ) հարկային իմունիտետի արտոնում, առևտրական ուղիների ապահովում ծովահենների և բեդվինների հարձակումներից: Պոլիսային վերնախավին Տիգրանը ներգրավում էր իր արքունիք: Անտիոքում՝ Տիգրան Մեծի երկրորդ մայրաքաղաքում, գործում էին քաղաքային խորհուրդն ու ժողովրդական ժողովը: Տիգրանի 14-ամյա կառավարումը խաղաղ ժամանակաշրջան բերեց Սիրիային, տնտեսական վերելք և քաղաքական ամրոցականության ապահովում:

Տիգրանի ամբողջ քաղաքական գործունեությունը հետամուտ էր գլխավոր նպատակին՝ հզոր տերության ստեղծմանը, որի կազմում միավորված կլինեին Մերձավոր Արևելքում Հռոմի էքսպանսիայի դիմագրավմամբ շահագրգռված բոլոր քաղաքական ուժերը: Այսպիսի կարևոր ուժ էր, հայոց արքայի տեսանկյունից, հելլենիստական պոլիսը: Այն դարձավ Տիգրան Մեծի քաղաքական և սոցիալական հենարանը Սիրիայում: Պոլիսային վերնախավը լիովին պահպանեց իր իշխանությունը տեղերում:

Հռոմեական աշխարհակալությունը, որը Ք. ա. 83 թ. պատակոված էր քաղաքացիական պատերազմով, ի վիճակի չէր խոչընդոտելու Տիգրանի գահակալմանը Սիրիայում, թեև այդ իրադարձությունը Հռոմում գնահատվեց որպես իր դեմ հայոց արքայի կողմից պատերազմի սանձազերծում (Cic. Pro P. Sestio oratio, 27, 58): Ք. ա. 83 թ. Տիգրանը իրեն ենթարկեց Դաշտային (Արևելյան) Կիլիկիան մինչև Կալիկադոնոս գետը (App. Syr. 48): Տեղի հունական քաղաքները (Մալլոս, Ադանա, Սոլե) չէին մասնակցել Տիգրանի հրավիրմանը Սիրիա: Կիլիկիան անմիջապես կառավարվում էր հայոց թագավորի նշանակած վարչակազմի կողմից: Ք. ա. 78-77 թթ. Կիլիկիայից քաղաքացիական համայնքները՝ թվով 12 (Strabo, XI, 15), վերաբնակեցվել էին Հայաստանում՝ Տիգրանակերտում և այլ բնակավայրերում: Տիգրանի այդ ձեռնարկումը, անշուշտ, նպաստել էր Հայաստանում քաղաքային կյանքի վերելքին, միջմշակութային փոխազդեցությունների զարգացմանը:

Ք. ա. 82 թ. Տիգրանը ապահովեց Սիրիայի և Կիլիկիայի անվտանգությունը Լեոնային (Արևմտյան) Կիլիկիայի ծովահեններից՝ «կիլիկեցիներից», որոնք Ք. ա. 90-ական թվականներից ի վեր ստեղծել էին հզոր ռազմական կազմավորում: Դաշտային Կիլիկիան իր իշխանությանը ենթարկելուց հետո Տիգրանը դարձավ ցամաքից ծովահենների անմիջական և սպառնալից հարևանը և նրանց հարկադրեց կնքել իր համար ձեռնտու դաշինք (Strabo, XIV, 5, 2): Ծովահենները դադարեցրին հարձակումները Սիրիայի քաղաքների վրա, քայքայվելի հաճախ ու հանդուգն ձևով սկսեցին ավերել Իտալիայի ափերը՝ անմիջականորեն սպառնալով ծովում Հռոմի շահերին:

Այսպիսով՝ Տիգրան Մեծի հաստատվելը Սիրիայում և Կիլիկիայում ծովահենային շարժմանը հաղորդեց քացահայտ հակահռոմեական ուղղվածություն:

Ք. ա. 73 թ. Հռոմի սենատը Սիրիայի օրինական արքա ձանաչեց հռոմեական Ասիա մարզից Հռոմ ժամանած Սելևկյան վտարանդի հավակնորդ Անտիոքոս XIII-ին՝ նրան շնորհելով Հռոմի բարեկամի և դաշնակցի կարգավիճակ: Ք. ա. 72 թ. Անտիոքոսը Հռոմից նավարկելով ափ իջավ Հարավային Սիրիայում, որտեղ նրան և իր մորը՝ Կլեոպատրա-Սելենեին, հաջողվեց Տիգրանի դեմ պայքարի հանել Փյունիկիայի հարավի քաղաքներին: Տիգրանի դեմ պայքարում Սելևկյաններին աջակցեցին Նաբաթեայի և Հուդայի թագավորությունները:

Նաբաթեան արաբական ուժեղ պետություն էր ժամանակակից Հորդանանի թագավորության տարածքում՝ Պետրա մայրաքաղաքով: Նրա արքա Հարիթաթ III-ը (Ք. ա. 87-62 թթ.) Սելևկյաններից զավթել էր Կոյլեսիրիան և Դամասկոս քաղաքը (Ք. ա. 85 թ.): Հարավում Նաբաթեայի տիրույթները ներառում էին Կարմիր ծովի հյուսիսային առափնյակը՝ Հիջազը:

Նաբաթեայի 50-հազարանոց բանակը բաղկացած էր ուղտավոր մարտիկներից և 10-հազարանոց այրուձիուց: Հարիթաթը ներխուժեց Փյունիկիա իր դաշնակցին՝ Սելևկյաններին օգնելու նպատակով: Ք. ա. 72 թ. Տիգրանը, արշավելով Կոյլեսիրիա, Դամասկոսի մոտ ծանր պարտության մատնեց նաբաթեացիներին և գրավեց Դամասկոսը: Հուդայի բանակը, որը շտապում էր դեպի Դամասկոս նաբաթեացիներին

օգնության, ճամփին առնելով նրանց պարտության լուրը, հապճեպ վերադարձավ Երուսաղեմ: Հուդան, փաստորեն, դուրս եկավ Տիգրան Մեծի դեմ պատերազմից: Ք. ա. 72 թ. Կոյլեսիրիան միացվեց Տիգրան Մեծի տիրոջներին, իսկ Հարիթաթը ճանաչեց Տիգրան Մեծի գերիշխանությունը:

Տիգրանի պայքարը տերության հարավում ծանրանում էր իր թիկունքին բարձրացվող ապստամբություններով: Ք. ա. 72 թ. Տիգրանը ստիպված էր վերադառնալ Հայաստան և ջախջախել իր դեմ ապստամբություն բարձրացրած որդուն՝ Ջարեհին, իսկ Ք. ա. 71 թ. նա ձնշեց ապստամբությունը Գորդունենում (Կորդուք): Ք. ա. 71–69 թթ. հայոց արքան իրար հետևից գրավեց Փյունիկիայի հարավում Սելևկյաններին հենարան ծառայող քաղաքները: IV դարի հռոմեական պատմագիր Ամմիանոս Մարկելլինոսը (Amm. Marc. XIV, VIII, 9–10) թվարկում է Տիգրան Մեծին ենթակա Սիրիայի և Փյունիկիայի շրջաններն ու քաղաքները, որոնք նա Ք. ա. 66 թ. զիջել էր Պոմպեոսին: Դրանց շարքում, Դամասկոսից և Հոմսից բացի, հիշատակվում են Սիդոնն ու Տյուրոսը: Այդ կարևոր վկայությամբ կոնկրետացվում է Պլուտարքոսի հաղորդումը (Plut. Luc. XXI, 2) Ք. ա. 71 թ. աշնանը Տիգրանի կողմից պաշարված փյունիկյան քաղաքների մասին. վերջիններին անունները Պլուտարքոսը չի բերում: Դամասկոսի գրավումով (Ք. ա. 72 թ.) Տիգրանը թիկունք էր նախապատրաստում հարավային Փյունիկիայի այդ քաղաքների դեմ գրոհելու համար: Իր հերթին Սիդոնի և Տյուրոսի հպատակեցումը Պտղեմայիդի գրավման նախապայմանն էր: Այսպիսով՝ Ամմիանոս Մարկելլինոսի հաղորդած տվյալները լրացնում են Փյունիկիայում հայոց արքայի վարած պատերազմի մասին Պլուտարքոսի և Հովսեպոս Ֆլավիոսի տեղեկություններում առկա բացերը: Ք. ա. 71 թ. աշնանը սելևկյաններին հաջողվեց ապստամբություն բարձրացնել Սելևկիա Պիերիայում: Այդ քաղաքը Տիգրանը չկարողացավ գրավել և միայն շրջափակեց այն: Սակայն Հյուսիսային Սիրիայի խոշորագույն քաղաքները, Անտիոք մայրաքաղաքի գլխավորությամբ, հավատարմություն պահպանեցին Տիգրանի հանդեպ: Ք. ա. 70–69 թթ. Տիգրանը Կլեոպատրա–Սելենեի գլխավորած համառ դիմադրությունից հետո գրավեց Փյունիկիայի հարավի մեծ ծովաքաղաք Պտղեմայիդը: Կլեոպատրա–Սելենեն մահապատժի ենթարկվեց Սելևկիա Եփրատամերձ ամրոցում: Անտիոքոս XIII–ը փախավ Հռոմի փոքրասիական տիրոջները: Այսպիսով՝ Սելևկյանների հակատիգրանյան ելույթը, որը բարձրացվել էր Հռոմի քաղաքական աջակցությամբ, ձնշված էր:

Ք. ա. 71 թ. Տիգրանին իր հպատակությունը հայտնեց Հուդայի թագավորությունը: Ապպիանոսի վկայությամբ՝ հայոց թագավորին հպատակվեցին Սիրիայի բոլոր ժողովուրդները մինչև Եգիպտոսի սահմանը (App. Syr., 48):

Ք. ա. 69 թ. սկսված հռոմեա–հայկական պատերազմի առաջին փուլում կրած պարտությունը հարկադրեց Տիգրանին Սիրիայից դուրս բերել հայկական զորքերը, որոնց հրամանատարը Բագադադն էր: Անտիոքոս XIII–ը հաստատվեց գահին: Լուկուլլոսը, հետևելով սենատի որոշմանը, նրան ճանաչեց Սիրիայի արքա: Ք. ա. 68 թ. Անտիոքի քնակությունը, դժգոհ Անտիոքոսի հարկային քաղաքականությունից և

քաղաքի ինքնավարությունը սահմանափակելու նրա փորձից, ապստամբեց նրա դեմ և հարկադրեց փախուստի դիմել: Ք. ա. 67 թ. Սիրիայում թագավոր ճանաչվեց Ֆիլիպպոս II–ը:

Երկու Սելևկյան հավակնորդների միջև գահի համար պայքար սկսվեց, որին ակտիվ մասնակցում էին սիրիական անապատի բեդվինները: Սակայն Սիրիայի քաղաքական կարգավիճակն արդեն կանխորոշված էր Հռոմի կողմից: Ք. ա. 66 թ. Պոմպեոսի և Տիգրան Մեծի բանակցությունների ընթացքում Տիգրանը, ճանաչվելով հռոմեական զորավարի կողմից որպես Սիրիայի թագավոր, հրաժարվեց Սիրիայից ոչ թե Սելևկյանների, այլ անմիջապես Հռոմի օգտին: Այսպիսով՝ Սիրիայի վերածվելը հռոմեական մարզի՝ պրովինցիայի, ձևակերպվեց որպես այս երկրի վրա իշխանության հանձնում Սիրիայի վերջին արքայի՝ Տիգրանի կողմից: Պոմպեոսը իրավական հիմք էր ստանում մերժելու Սելևկյանների հավակնությունները իրենց նախնիների գահին: Ք. ա. 64 թ. Պոմպեոսը մտավ Սիրիա և հայտարարեց այն Հռոմի պրովինցիա: Անտիոքոս XIII–ը շուտով սպանվեց բեդվինների ձեռքով, իսկ Ֆիլիպպոսը անհայտ պարագաներում անհետացավ քաղաքական ասպարեզից: Սիրիան դարձավ Արևելյան Միջերկրածովքում հռոմեական աշխարհակալության ռազմաքաղաքական պատվարը և հարստագույն մարզը:

ՍԵԼԵՎԿՅԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՑԱՆԿԸ

Սելևկոս I Նիկատոր	(մոտ 312–281)	Անտիոքոս V Եվկատոր.....	(164–162)
Անտիոքոս I Սոտեր	(281–261)	Դեմետրիոս I Սոտեր	(162–150)
Անտիոքոս II Թեոս	(261–246)	Ալեքսանդր I Բալաս	(150–145)
Սելևկոս II Կալլինիկոս.....	(246–225)	Դեմետրիոս II Նիկատոր	(145–138)
Սելևկոս III Կերավնոս	(225–223)	Անտիոքոս VI Դիոնիսոս	(145–140?)
Անտիոքոս III	(223–187)	Դիոդոտոս Տրիֆոն	(140?–138)
Սելևկոս IV Ֆիլոպատոր	(187–175)	Անտիոքոս VII Էվերգետես	(138–129)
Անտիոքոս IV Էպիֆանես	(175–164)		

ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

1. ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

Ք. ա. III դ. Պոնտոսի թագավորությունը գրադեցնում էր Փոքր Ասիայի հյուսիսարևելյան շրջանները, Պոնտական՝ հյուսիսային Կապադովկիայի՝ Հալիս գետի ստորին հոսանքից տարածվելով դեպի արևելք՝ մինչև Իրիս գետի հոսանքի վերին հատվածը: Հարավում նրա հարևանն էր Մեծ Կապադովկիան, իսկ արևելքում՝ Փոքր Հայքը:

Աքեմենյան աշխարհակալության օրոք այդ ոչ մեծ տարածքը, որը հեղինաստական ժամանակաշրջանում սկսեց կոչվել «Պոնտոս», մտնում էր 3-րդ, իսկ ծայրամասային արևելյան հատվածը՝ 19-րդ սատրապության մեջ:

Սև ծովի առափնյա խոշորագույն հունական քաղաքը Սինոպեն էր՝ Միլեթի հիմնադրած գաղութը, որը, անկախանալով Ք. ա. V դ. հույն-պարսկական պատերազմների ընթացքում, բացահայտորեն հարել էր Աթենքին: Սինոպեն հիմնադրել էր իր սեփական առափնյա գաղութներ Կերասունտը և Տրապիզոնը: Միաժամանակ պահպանվում էր նրա կախվածությունը պարսիկ սատրապներից: Անուղղակի տվյալները վկայում են տարածաշրջանում պարսկական գաղութաբնակեցումների մասին: Խոշոր պարսկական գաղութ էր, ըստ երևույթին, Զելան՝ ներքին Պոնտոսում, որը հայտնի էր որպես Անահիտի պաշտամունքային կենտրոն: Այսինքն՝ Պոնտոսում ի սկզբանե տեղ ուներ հեղինիզմի դարաշրջանին բնորոշ երևույթը՝ հունական և արևելյան՝ պարսկական մշակույթների փոխազդեցությունն ու աստիճանական մերձեցումը:

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքների ժամանակ Պոնտոսը փաստացի անկախություն էր վայելում: Պոնտոսի թագավորության հիմնադիր է համարվում Միհրդատ I-ը՝ Աքեմենյանների հետ ազգակցական կապ ունեցող պարսիկ մեծատոհմիկը: Ք. ա. 301 թ. Միհրդատը հաստատվեց ներգամաքային Պոնտոսի կենտրոնում՝ նստավայր դարձնելով Ամասիա քաղաքը՝ Իրիս գետի ափին: Ք. ա. 297 թ. նա իրեն հռչակեց թագավոր:

Ք. ա. III դ. ընթացքում Պոնտոսը որևէ նկատելի դեր չէր խաղում Առաջավոր Ասիայի միջազգային հարաբերություններում և ներգամաքային քաղաքական կազմավորում էր, որն իր պետական կառուցվածքով ճշտորեն վերարտադրում էր պարսկական սատրապությունը՝ վարչական ու պալատական կենտրոնացված տնտեսությամբ:

Պոնտոսի արքաները և արքունիքում կենտրոնացված պարսկական վերնախավը գիտակցում էին դեպի Սև ծով ելք ունենալու և առափնյա հունական հարուստ քաղաքների՝ ծովային առևտրի նշանավոր այդ կենտրոնների վերահսկման կարևորությունը: Այդ խնդիրը խթանեց Պոնտոսի արքաների՝ Արիոբարզան I-ի (Ք. ա. 266-250 թթ.), Միհրդատ II-ի (Ք. ա. 250-220 թթ.) և Միհրդատ III-ի (Ք. ա. 220-190 թթ.) հեղինասիրությունը՝ հունական մշակույթին հաղորդակցվելը: Նրանք փորձում էին հանդես գալ հունական քաղաքացիական համայնքների հովանավորների ու պաշտպանների դերում՝ ընդդեմ շրջակա ռազմատենչ ցեղերի (մոսինոյկներ, տիրարեններ): Պոնտոսի վերածվելը միջազգային հարաբերությունների լուրջ գործոնի կապված է Փառնակես I-ի (Ք. ա. 185-170 թթ.) գործունեության հետ: Այդ արքան առաջին իսկ քայլերով իր վրա սևեռեց Հռոմեական հանրապետության ուշադրությունը: Փառնակեսը հանկարծակի հարձակմամբ գրավեց Սև ծովի առափնյա խոշորագույն և բարգավաճ քաղաքը՝ Սինոպեն:

Միաժամանակ պոնտական թագավորի գործերը ներխուժեցին Պափլագոնիա, Գալաթիա և Կապադովկիա: Պոնտոսի էքսպանսիան բախվեց ուժեղ ռազմական դաշնության՝ ի դեմս Պերգամոնի արքա Եվմենես II-ի, Կապադովկիայի՝ Արիարաթ IV-ի, Բյութանիայի՝ Պրուսիասի, Պափլագոնիայի դինաստ Մորսիոսի: Փառնակեսի դաշնակիցն էր Փոքր Հայքի իշխանապետ Միհրդատը: Սկսված պատերազմում Փառնակեսը պարտություն կրեց և լքեց Կապադովկիայում ու Գալաթիայում գրավված երկրամասերը, բայց նրան հաջողվեց իր իշխանության ներքո պահպանել Սինոպեն, որն այսուհետև դարձավ Պոնտոսի թագավորների մայրաքաղաքը: Խաղաղությունը Փոքր Ասիայում հաստատվեց Ք. ա. 179 թ.: Հաշտության պայմանների մշակմանը մասնակցեց Հռոմը, որը ձգտում էր պահպանել Փոքր Ասիայում ստեղծված ուժային հարաբերակցությունը, թույլ չտալ առանձնապես հզորանալ իր դաշնակից Պերգամոնի արքա Եվմենեսին և ի հակակշիռ նրան՝ առանձնապես չթուլացնել Փառնակեսին: Հռոմի այդ հաշվարկի համաձայն՝ Սինոպեն մնաց Պոնտոսի թագավորության կազմում:

Սինոպեի միացումը ունեցավ կարևորագույն հետևանքներ Պոնտոսի թագավորության ամրապնդման համար: Պետության մեջ սկսեց ավելի ու ավելի վճռական դեր խաղալ հունական տարրը: Սև ծովի առափնյա հունական քաղաքների վերնախավը հետզհետե գերակշռող դիրք ձեռք բերեց արքունիքում. նրանից էր կազմվում հիմնականում պետական վարչակազմը. տեղի էր ունենում պարսիկ և տեղական վերնախավի հեղինականացում: Հույն վարձկաններից սկսեց հավաքագրվել քանակը՝ հեղինաստական բանակին հատուկ տակտիկական սկզբունքներով և մարտական կառուցվածքով: Հույները գերակշռող էին դարձել քանակի հրամանատարական կազմում: Ք. ա. II դ. վերջին Պոնտոսի թագավորությունը արդեն տիպիկ հեղինաստական բազմաթնիկ, բազմամշակութային միավորում էր, որի միասնությունը հիմնվում էր առավելապես հունական մշակույթի և լեզվի վրա:

2. ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼԲԸ.
ՄԻՀՐԴԱՏ VI ԵՎ ՊԱՏՈՐ

Փառնակեացի գահը ժառանգեց նրա եղբայր Միհրդատ IV-ը (Ք. ա. մոտ 170-150 թթ.), որը ձեռնպահ էր մնում արտաքին քաղաքական նախաձեռնություններից: Նրան հաջորդած Միհրդատ V-ը մասնակցել էր Հռոմի կողմից Պերգամոնում Արիստոնիկոսի հակահռոմեական ապստամբության ճնշմանը: Իբրև պարզևատրություն՝ Հռոմը Միհրդատ V-ին շնորհեց Պերգամոնի թագավորությունից հատած արևելյան տարածքները (Փոյոզիայի մի մասը): Ք. ա. 120 թ.՝ Միհրդատի վախճանից հետո, Հռոմը հետ վերցրեց Փոյոզիան՝ այն ընդգրկելով իր Ասիա պրովինցիայի կազմում:

Միհրդատի գահաժառանգը դարձավ Միհրդատ VI Եվպատորը (Ք. ա. 120-63 թթ.), որի գործունեությունը նշանավորեց հելլենիստական աշխարհի պատմության մեջ Հռոմի նվաճումներին դիմագրավելու վերջին մեծ փորձը: Անտիկ հեղինակները նրան նկարագրում են որպես ֆիզիկապես շատ ուժեղ, եռանդազին, վիթխարի հասակի տեր մարդու: Խոր ատելության զգացումով տարվելը Միհրդատի խառնվածքի գծերից էր, որն իր կնիքն էր դնում նրա քաղաքական գործելակերպի վրա՝ նպաստելով առավելապես բախումնահարույց վճիռների կայացմանը:

Միհրդատը կարողացավ գահ բարձրանալ իր հոր վախճանից 8 տարի հետո միայն՝ Ք. ա. 112 թ., երբ բոլորեց նրա քսան տարին: Մինչ այդ նա, երկյուղելով կյանքի համար, լքել էր իր ծննդավայր Սինոպեն՝ տարիներ շարունակ վարելով որսորդական արկածներով և վտանգներով լեցուն կյանք Պոնտոսի խուլ լեռնային վայրերում (Just. XXXVII, 2, 7-9): Սինոպեում այդ տարիներին իշխանության գլուխն անցավ Միհրդատի մայրը՝ թագուհի Լաոդիկեն (Միհրդատ V-ի այրին), որը խնամակալն էր Միհրդատի կրտսեր եղբոր՝ Միհրդատ Քրեատոսի («Բարի»): Հիմնավոր է թվում այն վարկածը, ըստ որի՝ Միհրդատը ապաստան էր գտել Փոքր Հայքի թագավոր Անտիպատրոսի արքունիքում և Փոքր Հայքի գորքերի օգնությամբ կարողացավ Ք. ա. 112 թ. վերագրավել իշխանությունը Պոնտոսում:

Միհրդատը իր առջև խնդիր դրեց միասնական թագավորության մեջ միավորել Սև ծովի առափնյա ողջ տարածքը: Այդ նպատակով նա ապահովեց իր թագավորության թիկունքը: Ք. ա. 112 թ. Անտիպատրոսի կտակով նա դարձավ Փոքր Հայքի տիրակալ (Strabo, XII, 3, 28): Փոքր Հայքն այն ժամանակ տարածաշրջանի ազդեցիկ պետություն էր: Փոքր Հայքի թագավորները՝ Սիսիսը և նրա որդի Անտիպատրոսը, իրենց տիրապետությունն էին հաստատել Սև ծովի առափնյակին՝ Փառնակիայից մինչև Տրապիզոն՝ հպատակեցնելով տեղի ցեղերին՝ խալիքներին և տիբարեններին (Strabo, XII, 3, 28): Այն վերածվեց նրա իշխանության հզոր պատվարի, որտեղ Միհրդատը կառուցեց 75 բերդ, ուր տեղադրվեցին նրա զանձերը: Բերդերից խոշորագույն էին Բասգոյդարիզան, Հյուդարան և Սինորիան:

Փոքր Հայքի ավագանին լծվեց Միհրդատի քաղաքականությանը, համալրեց նրա բազմազգ և հելլենականացված իշխող խավը: Փոքր Հայքը Միհրդատին տվեց իր մարտունակ մարդկային ռեսուրսները՝ 10 հազար ընտիր այրու-

ձի (App. Mithr. 17): Փոքր Հայքի հայ աղեղնավորները ծառայում էին Օլվիայի և Արիմի պոնտական կայսրերին:

Միհրդատի հաջորդ քայլով միացվեց Կողքիսը (Ռիոն գետի ստորին հովտում): Նրան հպատակ դարձան Սև ծովի արևելյան առափնյակի բոլոր հունական քաղաքները՝ Դիոսկուրիան (ժաման. Սուխումի մոտ), Պիտիունտը (ժաման. Պիցունդա): Տեղաբնիկ աբխազա-ադրյան ցեղերի հետ Միհրդատը կամ դաշինք էր կնքում, կամ ենթարկում նրանց իր գերագույն իշխանությանը: Ք. ա. 110 թ. Միհրդատը նախաձեռնեց Արիմի նվաճումը: Այստեղ այդ պահին ձևավորվել էր բարդ իրավիճակ: Հարավարևմտյան Արիմում խոշորագույն հունական ծովափնյա քաղաք Խերսոնեսոսը ծանր պատերազմներ էր մղում կենտրոնական Արիմում հաստատված տափաստանաբնակ սկյութների դեմ: Դառնալով կիսանստակյաց՝ սկյութները հիմնադրեցին թագավորություն Արիմի կենտրոնում՝ Նեապոլիս մայրաքաղաքով:

Սկյութները պաշարեցին Խերսոնեսոսը, քաղաքի բնակչությունը օգնություն հայցեց Միհրդատից՝ խոստանալով անցնել Պոնտոսի թագավորի գերիշխանության տակ (Strabo, VII, 4, 3-4): Արիմում ափ իջավ հունական վարձկաններից բաղկացած պոնտական բանակ՝ Միհրդատի զորավար Դիոֆանտոս Սինոպցու հրամանատարությամբ: Ք. ա. 110-107 թթ. կռիվներում Դիոֆանտոսը ոչ միայն վտարեց սկյութներին Խերսոնեսոսից, այլև հարկադրեց նրանց ձանձաղ իրենց կախվածությունը Միհրդատ Եվպատորից:

Միհրդատի նվաճողական քաղաքականության համար բարեհաջող իրադրություն ստեղծվեց Արիմի արևելքում՝ Բոսպորոսի հունական թագավորությունում:

Բոսպորոսի թագավորությունը, որն առաջացավ Ք. ա. V դ. սկզբին՝ Կերչի և Թամանի թերակղզու հունական գաղութների դաշնության հետևանքով, ներառում էր նշանակալից քաղաքներ՝ Արիմում՝ Թեոդոսիան, Թամանյան թերակղզում՝ Ֆանագորիան, իսկ մայրաքաղաքը Պանտիկապոնոն էր (ժաման. Կերչ): Բոսպորոսի թագավորները՝ Սպարտոկյանների թրակիական ծագում ունեցող արքայատոհմից, իրենց իշխանությունը տարածեցին Ստորին Կուբանի և Ազովի ծովի արևելյան առափնյակի վրա: Այստեղ՝ Դոնի գետաբերանում, հույները կառուցեցին Թանայիս խոշոր քաղաքը: II դ. վերջերին Բոսպորոսի թագավորությունը ենթարկվում էր Արիմի սկյութների և Ազովամերձ տափաստանների քոչվոր սարմատների հարձակումներին:

Այդ պարագայում Բոսպորոսի արքա Պերիսաղես V-ը երկրի վերնախավի համաձայնությամբ հոժարակամ հանձնեց իր թագավորությունը Միհրդատին (Strabo, VII, 3, 17): Այդ քայլից դժգոհ՝ Պանտիկապոնոնում և այլ հունական քաղաքներում բնակվող սկյութները ապստամբեցին: Իրենց առաջնորդ Սավմակի գլխավորությամբ նրանք գրավեցին Պանտիկապոնոնը և սպանեցին Պերիսաղեսին: Բոսպորից եկած պոնտական բանակը Դիոֆանտոսի գլխավորությամբ ճնշեց սկյութների ապստամբությունը: Սավմակը գերվեց և ուղարկվեց Պոնտոս: Արդյունքում Միհրդատը դարձավ Բոսպորոսի ողջ տարածքի տիրակալը: Բոսպորոսը կառավարվում էր նրա փոխարքաների ձեռքով: Այդ պաշտոնը հետագայում ստանձնում էին Միհրդատի որդիները. հունական քաղաքներում նշանակվում էին արքայի վերակացուներ: Սա-

կայն սկզբնական շրջանում Միհրդատը պահպանում էր Ղրիմի հունական քաղաքների ինքնավարությունը: Բուսպորտում իշխելը Միհրդատի տրամադրության տակ դրեց այդ երկրի հարուստ նյութական և մարդկային ռեսուրսները: Բուսպորտը հացահատիկի խոշորագույն արտադրողն էր: Միհրդատը այստեղից տարեկան ստանում էր 180 հազար մեդիմն հացահատիկ (1 մեդիմն = 52,50 կգ):

Այս հաջողությունները խթանեցին Միհրդատի իշխանության ներքո Հյուսիսային Սևածովյի այլ խոշոր հունական քաղաքների անցման գործընթացը: Պոնտոսի թագավորության մեջ մտավ Օլվիան՝ Հարավային Բուգի գետաբերանի մոտ, Տիրան՝ Դենեստրի գետաբերանում և Թրակիայի առափնյակը. այստեղ Միհրդատին ենթակա քաղաքներից ամենանշանավորն էր Ապոլոնիան: Այսպիսով՝ մինչև Ք. ա. 100 թ. Սև ծովը գրեթե ամբողջությամբ ընդգրկվեց Պոնտոսի թագավորի տիրոջներում: Այդ սևծովյան մեծ տերության ստեղծումն, անշուշտ, համապատասխանում էր Սևածովյի հունական քաղաքների բնակչության տնտեսական և քաղաքական շահերին: Նրանց բոլորին Միհրդատը անվտանգություն էր ապահովում ցամաքային բարբարոսական ցեղերի հարձակումներից:

Սևծովյան տերությունը անհանգիստ հարևաններ ուներ՝ ի դեմս սարմատական, սկյութական, թրակյան և այլ բարբարոս ցեղային միությունների, սակայն Միհրդատին հաջողվեց դաշինքներ կնքել նրանց հետ՝ դրանով ապահովելով իր համար վարձկան ռազմուծի անսպառ աղբյուրներ: Հռոմը ի վիճակի չէրավ խոչընդոտելու Միհրդատի հզորության սրընթաց աճին: Այդ ժամանակամիջոցին նա կաշկանդված էր պատերազմով Նումիդիայի արքա Յուգուրթայի դեմ և միաժամանակ հարկադրված էր դիմագրավել գերմանական ցեղերի՝ տևտոնների և կիմբրների Իտալիա ներխուժմանը: Միհրդատի տիրապետությունը Սև ծովի ափերին, այսպիսով, ուներ ընդարձակ սոցիալ-քաղաքական հենարան տեղերում, սակայն նրա ստեղծած տերությունը ուներ մի խոցելի կողմ: Քաղաքների ծովային առևտուրը Հունաստանի և Արևելյան Միջերկրածովյի երկրների հետ իրականացվում էր Սևծովյան նեղուցներով՝ Բոսֆորով և Հելլեսպոնտոսով: Այսինքն՝ Մարմարա ծովի ափերի վերահսկողությունը կենսական խնդիր էր դառնում Միհրդատի տերության գոյատևման համար: Նորաստեղծ տերության ապագան կախված էր, սակայն, Հռոմի վճռից: Նեղուցների շրջանը վերահսկում էր Հռոմն իր դաշնակցի՝ Բյութանիայի միջոցով: Սևծովյան առափնյակում ամփոփված Պոնտական պետության համար տնտեսական կապերի ազատության ապահովման անհրաժեշտությունը անխուսափելիորեն մղում էր Միհրդատին բախման Հռոմի հետ:

Միհրդատի փոքրասիական քաղաքականությունը. Միհրդատը և Տիրան Մեծը

Իր տիրապետությունը Բուսպորոսի վրա հաստատելուն պես՝ արդեն Ք. ա. 107 թ., Միհրդատը փորձեր ձեռնարկեց ընդարձակելու իր տիրոջները Պոնտոսից հարավ ընկած Կապադովկիայի և Պափլագոնիայի հաշվին: Վերջինս անջատում էր Պոնտոսը Բյութանիայից: Միհրդատը համաձայնության եկավ Բյութանիայի արքա Նիկո-

մեդես III-ի հետ Պափլագոնիան երկուսի միջև բաժանելու վերաբերյալ և տիրացավ երկրի մեծ մասին, սակայն այստեղ առաջին անգամ հանդիպեց Հռոմի սենատի վճռական հակազդեցությանը, որը նրան հրահանգեց թողնել Պափլագոնիան:

Պոնտոսի թագավորության հարավային թիկունքի ապահովման խնդրում առավել կարևոր էր հպատակի վերածել Կապադովկիան, որի արքաները՝ Արիարթյանները, II դ. կեսից սկսած, վարում էին հռոմեամետ քաղաքականություն՝ դարձնելով Կապադովկիան Հռոմի ազդեցության հենակետը Փոքր Ասիայի արևելքում:

Կապադովկիայի հարցում Միհրդատը բախվեց Բյութանիայի արքա Նիկոմեդես III-ի հետ, որը Ք. ա. 102 թ. գրավեց Կապադովկիան: Ք. ա. 100 թ. Միհրդատն անցավ հարձակման, գրավեց ամբողջությամբ Կապադովկիան և շուտով՝ բանակցությունների ժամանակ, անձամբ սպանեց իր կողմից թագավոր նշանակված պատանի Արիարթ VII-ին՝ Արիարթ VI-ի որդուն: Կապադովկիայի գահի վրա Միհրդատը հաստատեց իր մանկահասակ որդուն, որին անվանեց Արիարթ, և որը պաշտոնապես ներկայացվեց իբրև Արիարթյան արքայատոհմի շառավիղ: Միհրդատն իր որդու անունից անխռով կառավարում էր Կապադովկիայում մինչև Ք. ա. 96 թ., երբ կապադովկիական ավագանու և գյուղացիության համընդհանուր ապստամբությունը տապալեց նրա տիրապետությունը: Կապադովկիացիներին գլխավորեց Արիարթ VI-ի կրտսեր որդին՝ Արիարթ VIII-ը: Ապստամբներին աջակցում էին Հռոմը և Նիկոմեդես Բյութանացին: Միհրդատը վճռաբար ձնեց ապստամբությունը, Արիարթ VIII-ը փախավ հռոմեական Ասիա պրովինցիա, որտեղ շուտով հանկարծամահ եղավ:

Միհրդատի հաղթանակին համառորեն ընդդիմացավ Հռոմը: Միհրդատը Հռոմ առաքած իր դեսպանների միջոցով ապարդյուն աշխատում էր սենատին մոլորության մեջ զգել Արիարթ IX-ի ծագման վերաբերյալ, համոզել թե նա իբր բնավ իր որդին չէ, այլ սերում է Արիարթյանների արքայատոհմից: Սենատը, մերժելով այդ բացահայտ կեղծիքը, հատուկ որոշմամբ պահանջեց Միհրդատից անհապաղ մաքրել Կապադովկիան և, դեռ ավելին, կապադովկիացիներին ազատություն շնորհեց, այսինքն՝ տալով արքայազուրկների կարգավիճակ: Հռոմի արտաքին քաղաքական պրակտիկայում ազատության շնորհումը տվյալ երկիրը հռոմեական պրովինցիա դարձնելու նախորդող քայլն էր: Այսպիսով՝ Միհրդատը Կապադովկիայում անհաջողության մատնվեց՝ հանդիպելով Հռոմի, Բյութանիայի և կապադովկիացիների համատեղ դիմադրությունը: Նա ստիպված էր հետ քաշվել Կապադովկիայից:

Սակայն Հռոմն իր հերթին չհասավ նպատակին. կապադովկիական բեմահարթակում հանդես եկան նոր քաղաքական ուժեր: Կապադովկիական ավագանին վճռաբար հակառակվեց իրեն «ազատություն» շնորհելու Հռոմի որոշմանը: Կապադովկիացիներն աջակցեցին գահի իրենց թեկնածուին՝ մեծատոհմիկ Գորդիոսին, սակայն սենատը մերժեց այդ առաջարկը՝ Գորդիոսի փոխարեն թագավոր նշանակելով իր ընտրյալին՝ Արիոբարզանին, որը գահ բարձրացավ Ք. ա. 95 թ.: Արիոբարզանը պաշտոնապես ընդունեց «Հռոմեասեր» մականունը, որն ազդարարում էր նրա արտաքին քաղաքական կողմնորոշումը:

Արիոքարգանի գահակալմամբ Հռոմեական աշխարհակալության գերիշխանությունը հաստատվում էր Փոքր Ասիայի արևելքում և հակասում էր ոչ միայն Միհրդատի շահերին, այլև ընդունելի չէր նաև Հայաստանին՝ սպառնալիք ստեղծելով նրան արևմուտքից: Կապադովկիայում հեռացված Միհրդատի փոխարեն Հռոմը անսպասելիորեն հակառակորդ ունեցավ՝ ի դեմս հայոց արքայի: Մեծ Հայքի արքա Տիգրանը Ք. ա. 94 թ. իր պետությանը միացրեց Ծովքի թագավորությունը՝ դրանով իսկ կանխելով հռոմեական ազդեցության տարածումը արդեն հայկական հողերի վրա: Ք. ա. 93 թ. Տիգրանը արշավեց Կապադովկիա և դուրս վտարեց Արիոքարգանին: Ընդառաջելով կապադովկիական բնակչության ցանկությանը՝ Տիգրանը գահ քարձրացրեց Գորդիոսին:

Տիգրանի գործողությունը բացահայտ ռազմական ելույթ էր նշանակում սենատի որոշման դեմ, քանի որ հայոց արքան չտատանվեց ռազմական առձակատման մեջ մտնել հզոր Հռոմի հետ: Հայաստանի և Հռոմի արևելյան տիրույթների միջև նա արգելապատնեշ էր ստեղծում հանձին Կապադովկիայի թագավորության՝ իր հովանավորյալ Գորդիոսի գլխավորությամբ: Տիգրանի միջամտությունը Կապադովկիայում նաև նշանակում էր այստեղ ուժերի նոր վերադասավորում՝ հայ-կապադովկիական հակահռոմեական միության ստեղծում, որը բացառում էր Միհրդատի քաղաքական ազդեցությունը Կապադովկիայում: Կապադովկացիները անհաշտ էին տրամադրված Միհրդատի դեմ, և այդ դիրքը հարկադրում էր նրան ձեռնպահ մնալ Կապադովկիայում որևէ միջամտությունից: Տիգրանի հետ Միհրդատը ձգտում էր ստեղծել քարեկամական հարաբերություններ, մի նպատակ, որն իր հերթին համապատասխանում էր հայոց արքայի շահերին: Հայաստանի և Պոնտոսի միջև սահմանն անցնում էր Փոքր Հայքում՝ Վերին Եփրատի վրայով, որը հատում էր Ալիլիսենն գավառը պոնտական և հայկական հարավային մասերի: Միհրդատի տիրույթների կազմում էր գտնվում Անահտական երկիրը՝ Եփրատի հյուսիսային կողմում (Dio Cas. XXXVI, 48,1):

Ք. ա. 94 թ. Տիգրանի և Միհրդատի հարաբերություններն ամրապնդվեցին Տիգրանի ամուսնությամբ Միհրդատի դեռատի դստեր՝ Կլեոպատրայի հետ, սակայն միանգամայն անհիմն պիտի լիներ Միհրդատի ակնկալիքը հետագայում այդ ամուսնության միջոցով հնարավորություն ունենալ ազդելու Տիգրանի արտաքին քաղաքականության վրա: Ի դեմս Տիգրանի Միհրդատը հանդիպեց անկախ և հաստատակամ դաշնակցի, որի հետ քարոզ հարաբերություններում նա, չնայած իր էքսպանսիվ և տիրական խառնվածքին, երբեմն հայտնվում էր քաղաքականապես կախյալ և օգտագործվող կողմի վիճակում:

Հռոմը չէր կարող անտեսել Կապադովկիայում իր հեղինակությանը հայոց արքայի կողմից հասցրած հարվածը: Ք. ա. 92 թ. Իտալիայից Կապադովկիա ուղարկվեց հռոմեական բանակը՝ Սուլլայի գլխավորությամբ, որը ջախջախեց Գորդիոսի ուժերին և Տիգրանի զորքերին: Հայկական զորքերին հռոմեացիները հալածեցին մինչև Հայաստանի սահմանը՝ Եփրատ գետը: Այստեղ տեղի ունեցավ հռոմեապարթևական առաջին դիվանագիտական շփումը: Սուլլան և պարթև արքայից-ար-

քա Միհրդատ II-ի ներկայացուցիչը պայմանավորվեցին Մերձավոր Արևելքի տիրապետության ոլորտների բաժանման մասին: Որպես սահման ձանաչվեց Եփրատ գետը. պարթևական կողմը հռոմեացիներին առաջարկում էր նաև Տիգրանի դեմ ռազմական դաշինքի կնքում: Այդ սպառնալիքը հարկադրեց Տիգրանին վերջ դնել իր առձակատմանը Հռոմին Կապադովկիայում:

Ք. ա. 91 թ. Տիգրանի և Միհրդատի միջև կայացավ Կապադովկիայի վերաբերյալ պայմանավորվածություն, որի համաձայն՝ Տիգրանը զիջում էր Կապադովկիան Միհրդատին, սակայն տեղափոխում էր կապադովկիական աշխատունակ բնակչությանը՝ բերելով Հայաստան: Ք. ա. 91 թ. Միհրդատը վերստին իշխեց Կապադովկիայում, միաժամանակ նրան հաջողվեց վտարել Բյութանիայի գահից Նիկոմեդես IV-ին՝ Ք. ա. 94 թ. վախճանված Նիկոմեդես III-ի որդուն: Այդ քայլերից հետո Միհրդատի ակտիվությունն ընդհատվեց մինչև Ք. ա. 89 թ.:

3. ՀՌՈՄԵԱ-ՊՈՆՏԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ

Հռոմեա-պոնտական առաջին պատերազմը

Ք. ա. 91-89 թթ. Իտալիայում ընթանում էր Հռոմի դաշնակից համայնքների՝ իտալիկների (մարսեր, սամնիտներ, լուկաններ և այլք) պատերազմը Հռոմի տիրապետության դեմ՝ այսպես կոչված Դաշնակցային պատերազմը: Հռոմն ի վիճակի չէր այդ պահին ոչ միայն հակազդելու Միհրդատի գործողություններին Կապադովկիայում և Բյութանիայում, այլև պաշտպանելու իր փոքրասիական տիրույթները: Միհրդատն այդ պահին հասցրել էր կուտակել մեծ զինուժ, սակայն չէր փորձում օգտագործել քարեպատեհ հանգամանքը հակահռոմեական ելույթի համար:

Միհրդատի պասիվությունը այդ երկու տարում (Ք. ա. 91-89 թթ.) վկայում է, որ Պոնտոսի արքայի քաղաքական շահերը սահմանափակվում էին լոկ հյուսիսարևմտյան Փոքր Ասիայով, Սևծովյան նեղուցներով անցնող ուղիների վերահսկմամբ, որը նա ի վիճակի էր իրագործել՝ գերիշխելով Բյութանիայում կամ այն անմիջականորեն միացնելով իր տիրույթներին: Միհրդատի չեզոքությունը նպատակ ուներ Հռոմին ցուցադրելու իր հաշվողական դիրքը նրա հանդեպ՝ իր պոնտական շահերը ձանաչելու պայմանով: Հռոմը, սակայն, չգնահատեց Միհրդատի չեզոքությունը: Դաշնակցային պատերազմում վճռական հաջողության հասնելուց հետո Հռոմը կտրականապես պահանջեց Միհրդատից հեռանալ Բյութանիայից և Կապադովկիայից:

Ք. ա. 89 թ. Միհրդատը ենթարկվեց հռոմեական պահանջին: Ապալիանոսի կարևոր վկայությամբ (App. Mithr. 15) Ք. ա. 89 թ.-ի Հռոմի ներկայացուցիչների (Ասիայի պրոկոնսուլ Կասիոսի, սենատի ներկայացուցիչ Աքվիլիոսի) հետ բանակցություններում Միհրդատը նույնիսկ առաջարկ արեց ռազմական աջակցություն ցուցաբերել Հռոմին իտալիկների դեմ պատերազմում՝ իր շահերը Բյութանիայում՝ ծովային ուղիների ազատությունն ապահովելու դիմաց: Միհրդատի չեզոքությունը

Ք. ա. 91–89 թթ. դաշնակցային պատերազմի նկատմամբ հերքում է դեռևս հին շրջանից եկող այն կարծիքը (Strabo, VIII, 4, 3), թե նա իր գահակալման հենց սկզբից հետամտում էր Հռոմն Արևելքից դուրս մղելու նպատակը: Պլուտարքոսի վկայությամբ (Plut. Mar. XXXI, 2–5)՝ Հռոմն արդեն Ք. ա. 100–99 թթ. անհանգստացած էր Սևաժովքում Միհրդատի հզոր տերության ձևավորմամբ:

Հռոմի անզիջող դիրքը Միհրդատին միայն ապացուցում էր, որ ապահովել իր պետության հաղորդակցության ուղիների անվտանգությունը ու, հետևաբար, պետության ամբողջականությունը կարելի է միայն հռոմեական տիրապետությունը Փոքր Ասիայում և Հունաստանում խորտակելուց հետո: Ապախանոսը մատնացույց է անում Հռոմի թշնամության պատճառները. հռոմեացիները «կասկածամտությամբ էին նայում Միհրդատի թագավորության վրա՝ համարելով նրան չափազանց ընդարձակ և ուզում էին այն մասնատել» (App. Mithr., 10):

Միհրդատը այժմ պատրվակ էր որոնում պատերազմ սանձագերծելու համար, և հռոմեական կողմը շուտով այն Միհրդատին մատուցեց: Հռոմեական իշխանությունների թելադրանքով Նիկոմեդես IV–ը Ք. ա. 89 թ. աշնանը ավերեց Պոնտոսի թագավորության սահմանային տարածքները, իսկ նրա նավատորմը փակեց պոնտական նավերի համար ելքը դեպի Մարմարա ծով (App. Mithr., 12, 14):

Ի պատասխան Միհրդատը առանց լուրջ դիմադրության հանդիպելու գրավեց Կապադովկիան, իսկ Ք. ա. 88 թ. գարնանը ներխուժեց Պափլագոնիա և ջախջախեց այնտեղ բյութանական զորքերին: Նիկոմեդես IV–ը, իսկ նրանից առաջ Արիոբարզանը վտարվեցին իրենց երկրներից: Միհրդատի բազմազգ բանակը, կազմված հույներից, թրակիացիներից, բաստարներից, Փոքր Հայքի հայերից, սարմատներից, Ղրիմի սկյութներից, կովկասյան էթնոսներից (կոլխեր), ներխուժեց հռոմեական Ասիա պրովինցիա: Փոքրաթիվ հռոմեական ուժերը ջախջախվեցին, հռոմեական վարչակազմը փախուստի մատնվեց: Հռոմեական տիրապետությունն Արևելյան Միջերկրածովքում խորտակվեց, Ասիայի հունական քաղաքների բնակչությունը խանդավառությամբ էր դիմավորում Միհրդատին՝ իբրև հռոմեական լծից ազատագրողի:

Հաստատվելով Էգեյան ծովի ափին գտնվող Եփեսոս քաղաքում՝ Միհրդատն արձակեց իրեն ենթակա Փոքր Ասիայում հռոմեա–իտալիկյան բնակչության ոչնչացման հրամանը: Տեղական բնակչության մեջ վաղուց կուտակված ատելությունը հռոմեական իշխանությունների և հռոմեական գործարար խավի՝ վաշխառուների, կապալառուների դեմ, արտահայտվեց վիթխարի կոտորածով: Մի քանի օրում պոնտական զորքերը և նրանց աջակցող հունական քաղաքների բնակիչները կոտորեցին 80 հազար մարդու: Ոչնչացվեցին ոչ միայն հռոմեա–իտալիկյան գործարար՝ ֆինանսատեր դասի ներկայացուցիչները, այլև նրանց ընտանիքները, բոլոր լատինախոս անձինք: Հունական բնակչությանը ներգրավելով մասնակցելու այդ զանգվածային կոտորածին՝ ցեղասպանության իսկական ակտում, Միհրդատը ծրագրում էր իր շուրջը համախմբել քաղաքացիական համայնքները Հռոմի դեմ առաջիկա վճռական պայքարում և այդ հանցակցությամբ բացառել նրանց անցումը Հռոմի կողմը:

Այդ հաշվարկը շուտով ի հայտ բերեց իր սնանկությունը Հռոմի առաջին իսկ հաղթանակներից հետո:

Մյուս կողմից՝ հռոմեա–իտալիկների ոչնչացմամբ Միհրդատի համար բացառվում էր Հռոմի հանդեպ տևական դիվանագիտական գործելակերպի հնարավորությունն իսկ: Հռոմեա–պոնտական հակամարտությունը փոխադրվեց բացառապես ռազմաժային հակամարտության ոլորտը, որտեղ Հռոմի գերակայությունը շուտով ակնառու դարձավ: Այսուհետ Միհրդատի պետության ոչնչացումը դարձավ Հռոմի արևելյան քաղաքականության առաջնահերթ խնդիրը:

Ք. ա. 88 թ. վերջերին պոնտական զորքերը անցան Եվրոպա և գրավեցին Թրակիան. հռոմեական տիրապետությունը խորտակվեց նաև Մակեդոնիայում և Հունաստանում: Միհրդատի կողմն անցավ Աթենքը: Ինքը՝ Միհրդատը, Հունաստան չէր եկել, այլ գտնվում էր Եփեսոսում կամ Պերգամոնում, իսկ Ք. ա. 88 թ. գրառված էր Հռոմի կողմը բռնած Հոռոս կղզու պաշարմամբ: Միհրդատը հինգ տարով հարկերից ազատեց Ասիայի (նախկին Պերգամոնի թագավորության) քաղաքները: Նորաստեղծ փոքրասիական տերությունը ենթաբաժանվեց սատրապությունների: Պատերազմը Հունաստանում վարում էին Միհրդատի հույն զորավարները՝ Արքեյայոսը, Դորիլայոսը, Տաքսիլեսը և ուրիշները:

Ք. ա. 87 թ. գարնանը Հունաստան եկավ հռոմեական 40 000–անոց բանակը՝ Լուցիոս Կոռնելիոս Սուլլայի գլխավորությամբ: Երկարատև պաշարումից հետո (Ք. ա. 86 թ. մարտին) Սուլլան գրավեց Աթենքը: Ք. ա. 86 թ. Սուլլան Կենտրոնական Հունաստանում ջախջախեց թվապես գերակշռող պոնտական զորքերին երկու ճակատամարտերում՝ Քերոնեայի և Օրքոմենի մոտ: Նույն թվականին Բյութանիայում Միհրդատի դեմ սկսեց հաջողությամբ գործել երկրորդ հռոմեական բանակը (հրամանատարներ՝ Ֆլակկոս և Ֆիմբրիա):

Ծանր պարտությունները խթանեցին Միհրդատի ներքին քաղաքականության փոփոխումը: Վիթխարի կորուստները համալրելու նպատակով Միհրդատը ձեռնարկեց ստրուկների զանգվածային ազատումը քաղաքներում, հարկեր դրեց քաղաքների վրա, ինչը հարուցեց հակամիհրդատյան բացահայտ ելույթներ Եփեսոսում, Գալաթիայում, Քիոսում, Բոսպորոսում և այլն: Միհրդատի դաժան պատժամիջոցները հակառակ հետևանքների էին հանգեցնում:

Ք. ա. 86 թ. վերջերին Միհրդատի ուժերը լիովին սպառված էին. պոնտական բանակը տվեց ավելի քան 100 հազար սպանված: Միհրդատը Սուլլայից խաղաղություն հայցեց, որը և հաստատվեց նրանց անձնական տեսակցության ընթացքում Դարդանոսում (Տրոադա (Ք. ա. 85 թ. օգոստոս)) (Plut. Sulla, 20, IV): Հռոմը, պառակտված քաղաքացիական պատերազմով, ի վիճակի չէր վերջնական հաղթանակի հասնելու Միհրդատի նկատմամբ: Սուլլան շտապում էր վերադառնալ Իտալիա: Դարդանոսի համաձայնությամբ Միհրդատը Հռոմին մուծում էր 3000 տաղանդ ռազմատուգանք, հանձնում 70 ռազմանավ և իր զորքերի մնացորդներով հեռանում Պոնտոս: Հռոմի տիրապետությունը Փոքր Ասիայում լիովին վերականգնվեց: Պատժամիջոցներ կիրառվեցին հռոմեա–իտալիկյան բնակչության կոտորածին մասնակցած քաղաքներ:

րի նկատմամբ: Կապաղովկիայում և Բյութանիայում վերահաստատվեցին հռոմեական դրածոներ Արիոքարգանը և Նիկոմեդես IV-ը:

Ք. ա. 85–82 թթ. Միհրդատը զբաղված էր իր խարխլված Սևծովյան տերության միասնության վերականգնմամբ:

Ք. ա. 83–82 թթ. Ասիա պրովինցիայի կառավարիչ Մուրենան նոր պատերազմ սաղրելու մտադրությամբ իր երկու լեգեոնով երկու անգամ Կապաղովկիայի վրայով ներխուժեց Պոնտական թագավորություն: Հռոմեացիները ավերեցին և թալանեցին պոնտական հոչակավոր սրբավայր Կոմանան և 400 բնակավայր: Միհրդատի՝ Հռոմ հղած բողոքները մնացին անպատասխան: Ք. ա. 83–82 թթ. ձմեռը Մուրենան անցկացրեց գրավված հարավային Պոնտոսում: Ք. ա. 81 թ. Մուրենան Գալաթիայից երրորդ անգամ ներխուժեց Պոնտոս, Հալիս գետի ափերին այս անգամ նա հանդիպեց Միհրդատի բանակին: Միհրդատն անձամբ ղեկավարում էր պոնտական բանակի զործողությունները: Համառ ճակատամարտում հռոմեացիները ծանր կորուստներ տվեցին և հետ շարտվեցին: Ապախանոսի հաղորդմամբ՝ հռոմեական բանակը նույնիսկ փախուստի էր մատնվել (App. Mithr., 65):

Այս հաղթանակից հետո Միհրդատը վտարեց հռոմեական կայազորերը Կապաղովկիայից՝ դարձյալ դառնալով այդ երկրի տերը (Ք. ա. 81 թ.): Պատմագրության մեջ այդ հռոմեա-պոնտական բախումը Կապաղովկիայում ստացել է «Երկրորդ հռոմեա-պոնտական պատերազմ» անվանումը:

Խաղաղությունը վերահաստատվեց նույն տարում: Այդ ժամանակ Հռոմի դիկտատոր դարձած Սուլլան Մուրենային հրահանգ տվեց զերծ մնալ Միհրդատի դեմ պատերազմից: Սակայն հռոմեական կողմի ձնշմամբ Միհրդատը ստիպված էր զիջել Կապաղովկիայի մեծ մասը Արիոքարգանին:

Երրորդ հռոմեա-պոնտական պատերազմը

Թե՛ Միհրդատին, թե՛ հռոմեացիներին հասկանալի էր, որ նրանց միջև մնայուն խաղաղությունն անկարելի էր: Ք. ա. 77 թ. սենատը չընդունեց Դարդանոսի հաշտությունը վավերացնելու նպատակով Հռոմ ժամանած պոնտական դեսպանությանը (App. Mithr. 67):

Ք. ա. 76 թ. Միհրդատը կապեր հաստատեց Իսպանիայում հռոմեական սենատին ընդդիմադիր շարժման առաջնորդ Քվինտոս Սերտորիոսի հետ: Շփումները Միհրդատի և Սերտորիոսի միջև իրականացվում էին կիլիկյան ծովահենների միջնորդությամբ: Սերտորիոսի նպատակն էր տապալել նոբիլիտետի իշխանությունը Հռոմում: Շահագրգռված սենատի ուժերի թուլացմամբ Արևելքում՝ Սերտորիոսը համաձայնություն տվեց Միհրդատի իշխանության հաստատմանը Բյութանիայում և Կապաղովկիայում:

Այսպիսով՝ նոր պատերազմի պատրաստվելիս Միհրդատը ձգտում էր օգտագործել հռոմեա-իտալիկյան հասարակության պառակտումը և հենվել մարտնչող խմբավորումներից մեկի վրա: Միհրդատը լիովին վերականգնել էր իր նախկին հզորությունը, նրա ձեռքի տակ կար լավ սպառազինված 150 հազար բանակ, որի հրամանատարական կազմում ներկա էին նույնիսկ Սերտորիոսի ուղարկած հռոմեական բարձրաստիճան զինվորականներ և խորհրդատուներ:

Պատերազմի սանձազերծումը արագացվեց Նիկոմեդես IV-ի մահով Ք. ա. 74 թ.: Բյութանիայի թագավորը հասցրեց իր երկիրը կտակել Հռոմին, և սենատը պրոկոնսուլ նշանակեց Բյութանիա նորաստեղծ մարզում:

Ք. ա. 73 թ. Միհրդատը, իր մեծաթիվ ուժերի հետ միասին անցնելով Պափլագոնիան, ներխուժեց Բյութանիա և Քաղկեդոնի մոտ ծանր պարտության մատնեց Բյութանիայի նորանշանակ պրոկոնսուլ Կոտտայի զորքերին: Վերջիններս, փախուստի դիմելով, փրկվեցին Քաղկեդոնի պարիսպների ներսում: Սերտորիոսի ներկայացուցիչ զորավար Մարկոս Մարիոսը, իրեն վստահված զորքերով, մտավ հռոմեական Ասիա պրովինցիա՝ վերջինիս պրոկոնսուլ Լուկուլլոսի դեմ մարտնչելու, իսկ Միհրդատը պաշարեց հռոմեամետ ուժերի պատվար Կիզիկոս քաղաքը Մարմարա ծովի ափին: Շուտով Միհրդատը պաշարող կողմից վերածվեց պաշարվածի, որովհետև Լուկուլլոսը, հետ մղելով Մարիոսի հարձակումը, եկավ Կիզիկոսի մոտ և կտրեց պոնտական արքայի ցամաքային հաղորդակցության ուղիները:

Հռոմեացիները գրավեցին անառիկ դիրքեր Միհրդատի թիկունքում՝ մոտակա առափնյա բարձունքներին: Միհրդատի կողմից Կիզիկոսի պաշարումը տևեց մինչև Ք. ա. 73 թ. ձմեռը և հանգեցրեց նրա բանակի լիակատար քայքայմանը: Միհրդատյան զորքերի նահանջը անառիկ Կիզիկոսից դեպի Բյութանիայի քաղաքներ Նիկեա և Նիկոմեդիա ավարտվեց նրանց ջախջախմամբ՝ հետապնդող հռոմեական բանակից: Միաժամանակ ոչնչացվեց պոնտական նավատորմը Էգեյան և Մարմարա ծովերում:

Ք. ա. 72 թ. գարնանը Հռոմի կողմն անցավ Բոսպորոսի փոխարքան՝ Միհրդատի որդի Մախարեսը՝ զրկելով հորը Ղրիմի նյութական և ռազմական ռեսուրսներից: Ք. ա. 72 թ. հռոմեացիները մտան Պոնտոս, պաշարեցին Ամիսոս, Եվպատորիա, Թեմիսկյուրա քաղաքները: Միհրդատը ամրացել էր խորին Պոնտոսում՝ Կաբիրա բնակավայրում, որտեղ կովի էր պատրաստում նոր բանակը՝ 40 հազար հետևակ, 4000 հազար հեծելազոր: Ք. ա. 71 թ. մարտին Լուկուլլոսը շարժվեց դեպի Պոնտոսի խորքը՝ Կաբիրայի ուղղությամբ: Այստեղ փոփոխակի ելքով մի քանի մարտերից հետո Լուկուլլոսը ջախջախեց պոնտական զորքերին և գրավեց Միհրդատի ճամբարը: Մի քանի հարյուր հեծյալներով Միհրդատը փախավ ռազմադաշտից: Նա փրկվեց՝ գալով Հայաստան՝ Տիգրան Մեծի մոտ: Ք. ա. 71–70 թթ. հռոմեացիները կտրեցին ծովափնյա քաղաքների՝ Հերակլեայի, մայրաքաղաք Սինոպեի, Ամիսոսի, նաև Ամասիայի և Եվպատորիայի դիմադրությունը: Ք. ա. 71 թ. Լուկուլլոսը գրավեց Փոքր Հայքը: Պոնտոսի թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց:

Ք. ա. 72 թ. գարնանը Հռոմի կողմն անցավ Բոսպորոսի փոխարքան՝ Միհրդատի որդի Մախարեսը՝ զրկելով հորը Ղրիմի նյութական և ռազմական ռեսուրսներից: Ք. ա. 72 թ. հռոմեացիները մտան Պոնտոս, պաշարեցին Ամիսոս, Եվպատորիա, Թեմիսկյուրա քաղաքները: Միհրդատը ամրացել էր խորին Պոնտոսում՝ Կաբիրա բնակավայրում, որտեղ կովի էր պատրաստում նոր բանակը՝ 40 հազար հետևակ, 4000 հազար հեծելազոր: Ք. ա. 71 թ. մարտին Լուկուլլոսը շարժվեց դեպի Պոնտոսի խորքը՝ Կաբիրայի ուղղությամբ: Այստեղ փոփոխակի ելքով մի քանի մարտերից հետո Լուկուլլոսը ջախջախեց պոնտական զորքերին և գրավեց Միհրդատի ճամբարը: Մի քանի հարյուր հեծյալներով Միհրդատը փախավ ռազմադաշտից: Նա փրկվեց՝ գալով Հայաստան՝ Տիգրան Մեծի մոտ: Ք. ա. 71–70 թթ. հռոմեացիները կտրեցին ծովափնյա քաղաքների՝ Հերակլեայի, մայրաքաղաք Սինոպեի, Ամիսոսի, նաև Ամասիայի և Եվպատորիայի դիմադրությունը: Ք. ա. 71 թ. Լուկուլլոսը գրավեց Փոքր Հայքը: Պոնտոսի թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց:

Ք. ա. 72–71 թթ. Տիգրան Մեծը իր տերության մեջ բարձրացված ապստամբությունների պատճառով (Հռոմի դրածոներ Սելևկյանների՝ Փյունիկիայում և Հարավային Սիրիայում, արքայորդի Ջարեհի՝ Հայաստանում) ի վիճակի չէր միջամտելու հռոմեա-պոնտական պատերազմին և ստիպված էր չնզորություն պահպանել: Պոնտոսի

թագավորությունը վերականգնելու մտադրությամբ հայոց թագավորը ապաստան տվեց Միհրդատին և այդ պատճառով Ք. ա. 71 թ. աշնանը մերժեց Հռոմի պահանջը հանձնել Միհրդատին: Միայն Ք. ա. 69 թ. գարնանը Տիգրանին հաջողվեց կայունացնել իր տերության ներքին քաղաքական վիճակը:

Միհրդատը ամենագործուն կերպով մասնակցեց Ք. ա. 69 թ. գարնանը սկսված հայ-հռոմեական պատերազմին: Տիգրանն օգտագործում էր նրա ռազմական փորձը: Տիգրանակերտի ճակատամարտից հետո Միհրդատին հանձնարարվեց հայկական հետևակի վարժեցումը հռոմեական ռազմավարական եղանակներին:

Ք. ա. 68 թ. ձմռանը՝ Արածանիի ճակատամարտում հռոմեական բանակի նկատմամբ հայկական հեծելազորի հաղթանակից հետո, Միհրդատը, ստանալով Տիգրան Մեծից 4000 հեծելազոր, վերադարձավ Պոնտոս: Ք. ա. 67 թ. կոիլներում նա լիովին մաքրեց հռոմեական զորքերից Փոքր Հայքն ու բուն Պոնտոսը: Իր նոր հավաքագրված զինուժով և դաշակից հայկական հեծելազորով Միհրդատը Գազիուրա և Զելա քաղաքների մոտակայքում ջախջախեց Ասիա պրովինցիայից եկած հռոմեական երկու լեգեոնները՝ լեգատ Տրիարիոսի գլխավորությամբ: Մարտի դաշտում մնաց 7 հազար հռոմեացի զինվոր: Միհրդատը տիրացավ հակառակորդի ճամբարին: Ք. ա. 67 թ. գարնանը Հայաստանից Պոնտոս նահանջած Լուկուլլոսը ապարդյուն փորձեց պաշարել Միհրդատին Տալավրա քաղաքում, բայց նրա թիկունքին Կապադովկիա ներխուժած Տիգրան Մեծից սպասվող վերահաս ապառնալիքը հարկադրեց հռոմեացիներին հեռանալ Գալաթիա: Այսպիսով Ք. ա. 67 թ. գարնան վերջին լիովին վերականգնվեց Պոնտոսի թագավորությունը: Այն, սակայն, իրենից ներկայացնում էր պատերազմներից ավերված ու ամայացած ոչ մեծ պետություն՝ ամփոփված Հյուսիսային Կապադովկիայի՝ բուն Պոնտոսի և Փոքր Հայքի շրջանակներում:

4. ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Պոնտոսում պատերազմը վերսկսվեց Ք. ա. 66 թ. գարնանը, երբ Հռոմը Միհրդատի և Տիգրան Մեծի դեմ պատերազմը վարելու նպատակով Լուկուլլոսի փոխարեն ուղարկեց Գնեսու Պոմպեոսին: Միհրդատի փորձերը՝ Պոմպեոսի հետ խաղաղություն հաստատելու, մերժվեցին վերջինիս կողմից:

Հռոմեացիների գերազանց ուժերին (66 հազար հետևակ և հեծելազոր) Միհրդատը փորձեց դիմագրավել Կապադովկիայում, որտեղից ստիպված էր նահանջել Փոքր Հայք՝ իր իշխանության վերջին պատվարը: Պոմպեոսը կարողացավ Միհրդատին շրջափակել Դաստեյրայի մոտ գտնվող բարձունքի վրա: Միհրդատին հաջողվեց դուրս գալ շրջափակումից, սակայն 3 օրվա հետապնդումից հետո հռոմեացիները ջախջախեցին նրան գիշերային ճակատամարտում՝ Լյուկոս գետից ոչ հեռու: Պոնտական 32-հազարանոց բանակը լիովին ոչնչացվեց:

Միհրդատը փախավ Սինորիա բերդը: Տիգրան Մեծից օգնության մերժում ստանալով (հայոց թագավորը պատերազմի մեջ էր Պարթևաստանի հետ և միաժամանակ գտնվում էր հռոմեա-պարթևական դաշինքի սպառնալիքի ներքո)՝ Միհրդատը Սինորիայից ուղևորվեց Կողքիս: Ճանապարհին նա փորձեց նույնիսկ հակահռոմեական դաշինքներ կնքել Վիրքի թագավորի և աղվանների հետ: Ք. ա. 65 թ. Կողքիսից շարժվելով Սև ծովի առափնյակով՝ Միհրդատը հասավ Ղրիմ և վերագրավեց Բոսպորոսի թագավորությունը, որի փոխարքան՝ նրան Ք. ա. 72 թ. դավաճանած Մախարեսը, ինքնասպան եղավ: Բոսպորոսը Միհրդատը փորձեց դարձնել նոր հակահռոմեական պայքարի հենարան: Արքան ծրագրում էր բարբարոսներից և տեղացի հույներից հավաքագրված զորքերով անցնել Բալկաններ և այնտեղից ներխուժել Իտալիա: Պատերազմի պատրաստությունները խափանվեցին Բոսպորոսի քաղաքների ապստամբությամբ: Նրանց հարեցին Միհրդատի զորքերը, որոնք չէին հավատում արշավանքի հաջողությանը: Ապստամբները թագավոր հռչակեցին Միհրդատի գահաժառանգ որդուն՝ Փառնակեսին: Պաշարվելով Պանտիկապեոնի իր պալատում՝ Միհրդատը ինքնասպանությամբ վերջ տվեց կյանքին (Ք. ա. 63 թ.): Փառնակեսը Միհրդատի դին ուղարկեց Ամիսոսում բանակ դրած Պոմպեոսի մոտ՝ ճանաչվելով Բոսպորոսի արքա, Հռոմի բարեկամ և դաշակից:

Միհրդատ Եվպատորի ստեղծած պետության մեջ իրականացվում էին հելլենիստական աշխարհի հյուսիսային գոտում հունական մշակույթի հիման վրա ինտեգրացիոն գործընթացները հույն և տեղաբնիկ ժողովուրդների միջև: Փոքր Ասիայի հռոմեական նվաճումը չխախտեց, այլ միայն խորացրեց այստեղ հելլենիստական քաղաքակրթության զարգացումն ու ծավալումը՝ տեղաբնիկ և բարբարոսական տարրերի հելլենականացումը:

Ք. ա. 64 թ. Պոնտոսի թագավորության տեղում Պոմպեոսը կազմակերպեց «Պոնտոս և Բյութանիա» պրովինցիան: Փոքր Հայքը անջատվեց Պոնտոսից և տրվեց Գալաթիայի արքա Դեյոթարոսին (Strabo XII, 3, 13), որին Ք. ա. 58 թ. սենատի որոշմամբ շնորհվեց Փոքր Հայքի թագավորի տիտղոսը (Caes. B. Alex. 67): Գալաթիայի թագավորին ենթարկվեց նաև Սևածովյան առափնյակը՝ Փառնակիայից մինչև Կողքիս (Strabo, նույն տեղում): Դեյոթարոսի օրոք Փոքր Հայքը կառավարվում էր Տաքսիլես ստրատեգոսի ձեռքով (App. Bell. Civ., XIV, 7): Ք. ա. 48 թ. Փոքր Հայքի և Մեծ Հայքի (Արտաշեսյան թագավորության) միջև սահմանն անցնում էր Եփրատի վրայով (App. նույն տեղում): Փառնակեսը Ք. ա. 48-47 թթ. փորձեց վերականգնել Պոնտոսի թագավորությունը: Նա վերագրավեց Փոքր Հայքն ու ներխուժեց բուն Պոնտոս: Ք. ա. 47 թ. ամռանը Հուլիոս Կեսարը ջախջախեց Փառնակեսին Պոնտոսում՝ Զելայի մոտ: Կեսարը Փոքր Հայքը դրեց Կապադովկիայի արքա Արիոբարզան III-ի գերիշխանության տակ՝ նրա եղբայր Արիարաթի իշխանապետության կարգավիճակով (Caes. B. Alex, 66):

Ք. ա. 37 թ. Հռոմի եռապետ Մարկոս Անտոնիոսի կամքով Պոնտոսի թագավոր հռչակվեց Պոլեմոնը՝ փոքրասիական Լաոդիկեա քաղաքի հռետոր Զենոնի որդին:

Ք. ա. 37– Ք. հ. 64 թ. Արևելյան Պոնտոսում Հռոմի վերահսկման ներքո գոյություն ունեին Պոլեմոնյանների թագավորությունը: Հույն Պոլեմոնյանների արքայատոհմի ներկայացուցիչն էր Ք. հ. 17 թ. Հայաստանում թագավորած Ջենոն Արտաշեսը (17–36 թթ.): Պոնտոսի թագավոր Պոլեմոն I–ի (Ք. ա. 37 – Ք. հ. 7 թթ.) որդին:

Ք. հ. I դ. սկզբին Հռոմը վերացրեց իր ռազմաքաղաքական վերահսկմանը ենթակա փոքրասիական թագավորությունները: Արդեն Ք. ա. 25 թ. պրովինցիա դարձվեց Գալաթիայի թագավորությունը: Ք. հ. 17 թ. պրոկոնսուլական պրովինցիա դարձվեց Կապադովկիայի թագավորությունը: Նույն տարում վերացվեց Կոմմագենեի թագավորությունը: 64 թ. կայսր Ներոնի վճռով գահընկեց արվեց Պոլեմոնյանների արքայատոհմը Պոնտոսում:

Ք. հ. I դ. երկրորդ կեսից սկսած՝ Հայաստանի արևմտյան սահմաններն ընդգրկում էին Հռոմեական կայսրության վարչակազմի կողմից կառավարվող հոծ տարածքը:

ՀԵԼԼԵՆԻՍՏԱԿԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Հելլենիզմի ժամանակաշրջանում ձևավորված մշակույթը զարգացում ապրեց հռոմեական կայսրության մեջ և հետհելլենիստական Մերձավոր Արևելքում: Այն բեղուն հիմք հանդիսացավ հռոմեական, բյուզանդական, ասորական, հայկական քրիստոնեական մշակույթների ձևավորման համար: Մ. Ռոստովցևի ուշագրավ դիտարկմամբ հելլենիստական քաղաքակրթության տարրերն արտահայտվելով Արևելքում ավելի ուշ՝ Հռոմեական կայսրության օրոք «նպաստեցին մարդկության պատմության այնպիսի կարևոր երևույթներին, ինչպիսիք են Սասանյան Պարսկաստանը, վաղ քրիստոնեական Հայաստանն ու Սիրիան, նախաիսլամական Արաբիան»:

«Հելլենիստական մշակույթ» հասկացությունն ընդգրկում է երկու՝ համաժամանակյա և փոխկապակցված երևույթներ: Այն հերթական փուլն էր Հունաստանի դասական մշակույթի զարգացման մեջ, որն իրագործվեց ոչ թե Հունաստանում, այլ նվաճված Արևելքում (Փոքր Ասիա, Եգիպտոս, Սիրիա, Միջագետք)՝ արևելյան մշակույթների տարրերի յուրացումով: Հելլենիստական մշակույթ անվան տակ նկատի է առնվում նաև հելլենական քաղաքակրթության տարրերին (գիր, գրականություն, թատրոն, կերպարվեստ, ճարտարապետություն) հաղորդակից դարձած արևելյան տեղաբնիկ մշակույթները (արամեական, եգիպտական, իրանական, հայկական), որոնք ի սպաս դրեցին դրանք իրենց արժեքային համակարգերի արտահայտման խնդրին (օրինակ՝ արքայի անսահմանափակ հզորությունը փառաբանող կոմմագենյան քանդակը, հնդկական կլոր (զանդհարական) բուդդայական քանդակը):

Հելլենիստական քաղաքակրթության ամենաբնորոշ արտահայտությունը հունարևելյան քաղաքի ձևավորումն էր: Ալեքսանդրիայում, Անտիոքում, Տիգրիսամերձ Սելևկիայում, Պերգամոնում և այլուր ծաղկում էր հունական և արևելյան տարրերի փոխազդեցության հիման վրա Արևելքի համար ընդհանուր նյութական մշակույթը՝ արհեստագործության տարբեր ճյուղերը և բնակելի շինարարությունը: Այդ ընդհանրությունը հնարավոր էր առևտրական կապերի աննախադեպ խորացման շնորհիվ:

Քաղաքները կառուցվում էին կանոնավոր հատակագծով՝ ուղիղ անկյան տակ հատվող պողոտաներով (մինչև 30 մետր լայնությամբ), ունեին մշտական ջրամատակարարում: Շինությունները (հատկապես պալատական և տաճարական համալիրները) աչքի էին ընկնում կոթողայնությամբ: Ալեքսանդրիայի հռչակավոր փարոսը՝ կառուցված Ք. ա. 280–260–ական թվականներին, ուներ 120 մետր բարձրություն: Քաղաքները մշակույթի և գիտության օջախներ էին:

Հելլենիստական ժամանակաշրջանը բնորոշվում է գիտելիքների հետագա ճյուղավորմամբ, կոնկրետ գիտությունների ձևավորմամբ: Ալեքսանդրիայում Պտղոմեոսյանների կառուցած Մուսեյոնը («Մուսաների տաճար») դարձավ հունամիջերկրական աշխարհի մշակույթի և գիտության կենտրոնը: Այստեղ ստեղծագործում

ՊՈՆՏՈՍԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՔԱՅԱՅԱՆԿԸ

Միհրդատ I	(337/336–302/301)	Միհրդատ IV	(մոտ. 170–150)
Միհրդատ II	(302/301–266/265)	Միհրդատ V Էվերգետես	(150–121/120)
Արիոբարզան I	(266/265–250)	Միհրդատ VI Եվպատոր	(111–63)
Միհրդատ III	(250–220)	Փառնակես II	(63–47)
Միհրդատ III	(220–190)	Դարեհ	(39–37?)
Փառնակես I	(185–170)	Պոլեմոն I	(37–Ք.հ.7)

էին տարբեր բնակավայրերից հրավիրված գիտնականները՝ Էվկլիդեսը, Արքիմեդը, Արիստարքոսը և այլք: Մուսեյոնին կից գործում էր գրադարանը, որտեղ հենց սկզբից պահվում էր շուրջ 100 հազար գիրք: Ք. ա. III դարում ծաղկում ապրեցին բնական գիտությունները: Էվկլիդեսը դրեց երկրաչափության հիմքերը, իսկ մեխանիկայի բնագավառում խոշոր հայտնագործություններ կատարեց Արքիմեդը: Արիստարքոս Սամոսցին առաջադրեց արևակենտրոն տիեզերքի վարկածը: Ավելի ուշ Հիպարքոսի և Կլավդիոս Պտղոմեոսի ջանքերով ճանաչում ստացավ տիեզերքի մասին երկրակենտրոն պատկերացումը:

Հույների զանգվածային ներգաղթը Առաջավոր Ասիա և Եգիպտոս պայմանավորեց երկրագիտական աշխատությունների ստեղծումը: Դրանցից է Ստրաբոնի ամբողջությամբ պահպանված «Աշխարհագրությունը»: Խորացվում էին նաև բժշկական և կենսաբանական գիտությունները (Հերոֆիլոս Քաղկեդոնցի, Թեոֆրաստոս):

Պատմագրության ներկայացուցիչների շարքում առանձնանում էր Պոլիբիոսը (Ք. ա. 200–120 թթ.), որի աշխատությունը աչքի է ընկնում գիտահետազոտական բարձր մակարդակով: Պոլիբիոսը ներկայացնում է հելլենիստական աշխարհի և նրա դեմ իր առաջխաղացումը ծավալած Հռոմի փոխկապակցված պատմությունը: Նրա խնդիրն էր բացատրել Հռոմի կողմից հելլենիստական աշխարհի արագ հպատակեցման պատճառները: Որպես այդպիսին՝ Պոլիբիոսը տեսնում էր Հռոմեական հանրապետության պետական կարգի կատարելությունը հելլենիստական միապետության նկատմամբ:

Ի տարբերություն դասական շրջանի հունական փիլիսոփայության, որի պրպտումների կենտրոնում էին գոյաբանության և իմացաբանության խնդիրները, հելլենիստական դարաշրջանի փիլիսոփայությունը առաջին պլան էր մղում բարոյագիտության, անհատի և աշխարհի փոխհարաբերությունների հարցերը:

Աշխարհակալությունների կազմում գտնվող քաղաքացիական համայնքի ինքնամոտիության հաղթահարումը և դրա հետևանքով անհատի՝ համայնքի քաղաքացու ակտիվության անխուսափելի աճը խթան հանդիսացան նրա նոր ինքնագիտակցության սկզբնավորման համար՝ որպես աշխարհի՝ կոսմոսի քաղաքացու: Հելլենիստական ժամանակաշրջանի փիլիսոփայությունը, մասնավորապես ստոյիցիզմը, առաջադրում էր մարդու՝ կոսմոսի այդ քաղաքացու գնահատման զուտ բարոյական չափանիշները: Քարոզվում էր մարդկանց՝ ազատների և ստրուկների, հույների և «բարբարոսների», տղամարդկանց և կանանց հավասարությունը կանոնավորված աշխարհը (կոսմոսը) կառավարող Համաշխարհային Օրենքի առջև: Այսպիսով, պաշտպանելով մարդկության միասնության գաղափարը՝ ստոյիկյան բարոյախոսությունը որոշակի առումով նախորդում էր քրիստոնեությանը:

Փիլիսոփայական դպրոցները (ստոյիկյան, էպիկուրյան, կինիկյան) նպատակ էին դնում բարոյական նեցուկ հաղորդելու փոփոխուն և անկայուն իրականության պայմաններում սեփական անզորությունը գիտակցող անհատին, ուղղորդելու նրան դեպի երջանկություն: Ստոյիկյան դպրոցը քարոզում էր անհատի հնազանդվելը և հետևելը աշխարհը կառավարող Ճակատագրին, անհրաժեշտությանը, Բանին (Լոգոսին): Դա իրականանալի էր ճշմարտության՝ անհրաժեշտության ճանաչման շնոր-

հիվ: Էպիկուրի (340–270) ուսմունքի համաձայն՝ անհատն ի վիճակի էր հասնելու երջանկության և խուսափելու անհրաժեշտության ամենակալությունից միայն անխուսափելի ինքնամեկուսացման ու մենության մեջ՝ խորասուզվելով վայելքի (նախ և առաջ՝ հոգևոր վայելքի) մեջ: Կինիկյան փիլիսոփայությունը նախատում էր հարստամոլությունը և քարոզում աղքատությունը: Այսպիսով՝ բարոյախոսական ուսմունքները իրենց պասիվ անհատապաշտությամբ խիստ տարբերվում էին Ք. ա. VI–V դդ. հունական պոլիսի՝ քաղաքացիական համայնքի անդամների համերաշխությունն ու միասնությունը հաստատող գաղափարախոսությունից:

Արևելքի տեղաբնիկ հասարակությունները, ի դեմս իրենց մտավոր շրջանակների, ակտիվորեն և ստեղծարարորեն յուրացնում էին հունական մշակույթը:

Արևելցիները հունարենով էին գրում իրենց երկրների պատմությունները՝ անշուշտ, իբրև օրինակ ծառայեցնելով հունական դասական պատմագրության երկերը, դրանով իսկ հունարեն լեզվի միջոցով իրականացվում էր ազգային ինքնագիտակցության կայացման և զարգացման գործընթացը: Եգիպտոսում այդ գործը կատարեց քուրմ Մանեթոնը, Բաբելոնում՝ քուրմ Բերոսոսը (նա էր հելլենական միջավայրում աստղագուշակության տարածողը), Հայաստանում՝ թագավոր Արտավազդը, որը նաև ճառերի և թատերագրությունների՝ ողբերգությունների հեղինակ էր: Արտավազդը առաջիններից էր Արևելքի մտավորական ընտրանու մեջ, ով յուրացրել էր Հունաստանում ձևավորված դրամատուրգիայի գրական ժանրը՝ հայտնի դառնալով հունական մշակութային բարձրաշերտին՝ ի դեմս Պլուտարքոսի:

Արևելքի և Հելլադայի սինթեզը հատկապես բեղմնավոր էր կրոնապաշտամունքային բնագավառում: Տեղի էր ունենում հունական և արևելյան աստվածների միաձուլում (սինկրետիզմ): Աստվածներն օժտվում էին նոր գործառույթներով, հետզհետե տարածվում էր ամենագոր, միասնական և վերացական աստծո գաղափարը (Սարապիս, Իսիս), ժողովրդականություն էր վայելում Տյուխեի՝ հզոր ձևկատագրի և փոփոխական բերմունքի դիցուհու պաշտամունքը: Տյուխեին իրենց հովանավոր էին համարում ինչպես քաղաքները (Անտիոքը), այնպես էլ արքաները (Տիգրան Մեծ):

Հելլենիզմի ժամանակաշրջանում քաղաքակրթությունների և ժողովուրդների միջև փոխազդեցության և մերձեցման միտումները իրենց արտահայտությունն են գտել Տիգրան Մեծի գործունեության մեջ: Տիգրանակերտում հիմնադրվել էին հելլենական և արևելյան՝ հայկական քաղաքակրթությունները խորհրդանշող երկու կոթողներ՝ հունական թատրոնի շենքը և քաղաքից դուրս՝ վիթխարի պարադիզը (պարտեզը) (App. Mitr. 84), այգիների, որսատեղիների, ջրավազանների համակարգը, որը աշխարհի արքայակենտրոն մոդելն էր: Նրանց համատեղումը Տիգրանակերտում աննախադեպ իրադարձություն էր հելլենիզմի մշակութային պատմության մեջ և վկայում է, որ հայոց արքայի քաղաքը կատարում էր արևելյան և հունական քաղաքակրթությունների ու մշակույթների շփման և մերձեցման կենտրոնի դեր, իսկ հելլենիզմի դարաշրջանում Մերձավոր Արևելքում միջքաղաքակրթական ինտեգրացիոն միտումները բնավ դեռ չէին սպառված Ք. ա. I դ. առաջին կեսին՝ Հռոմի և Պարթևաստանի վճռական առաջխաղացման նախօրեին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ադոնց Ն., Երկեր, հատոր Դ, Երևան, 2009:
Դիոդորոս Սիկիլիացի, Պատմական գրադարան (թարգմ. Ս. Կրկյաշարյանի), Երևան, 1985:
Կրկյաշարյան Ս. Մ., Հայաստանի և Փոքր Ասիայի քաղաքների պատմության դրվագներ, Երևան, 1970:
Կրկյաշարյան Ս. Մ., Հովսեփոս Ֆլավիոս. Դիոն Կասիոս (թարգմ. քննադրից, առաջարան, ծանոթ.) (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր 9), Երևան, 1976:
Կրկյաշարյան Ս. Մ., Դիոդորոս Սիցիլիացի (թարգմ. քննադրից, առաջարան, ծանոթ.) (Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հատոր 14), Երևան, 1985:
Կրկյաշարյան Ս. Մ., Պլուտարքոս, Կենսագրություններ (թարգմ. քննադրից, առաջարան, ծանոթ.), Երևան, 2001:
Կուրտիս Ռուփոս, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը, տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987:
Ղանալանյան Ա., Ավանդապատում, Երևան, 1969:
Մանանդյան Հ., Երկեր, հ. Ա, Երևան, 1977:
Մանասերյան Ռ. Լ., Տիգրան Մեծ. Հայաստանի պայքարը Հռոմի և Պարթևաստանի դեմ (մ. թ. ա. 94–64 թթ.), Երևան, 1987:
Մանասերյան Ռ. Լ., Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997:
Մանասերյան Ռ. Լ., Թագավորական իշխանության հաստատության առանձնահատկությունները Արտաշեսյանների օրոք (թագավորն ու ավագանին), ԼՀԳ 1, 77–85, 1999:
Մանասերյան Ռ., Տիգրան Մեծ, Պատմություն 1, 144–158, 2002:
Մանանդյան Հ., Երկեր, Ա, Երևան, 1977:
Մանանդյան Հ., Երկեր, Զ, Երևան, 1985:
Մարգարյան Ե. Գ., Հելլենիստական դարաշրջանի Կոմմագենի և Ծոփքի պատմությունից, ԼՀԳ 1, 20–32, 2009:
Մելքոնյան Հ. Գ., Աղիաքենի պետությունը և Հայաստանը, Երևան, 1980:
Մարգարյան Գ. Խ., Հայաստանը վաղ հելլենիզմի ժամանակաշրջանում, ՀԺՊ 1, 500–520, 1971:
Մարգարյան Գ. Խ., Հայաստանի միավորումը և հզորացումը Արտաշես I-ի օրոք, ՀԺՊ 1, 500–520, 1971:
Տիրացյան Գ., Երվանդունիները Հայաստանում, ՏՀԳ, 1958, 6, 53–72, 1958:
Փլավիոս Արիանոս, Ալեքսանդրի արշավանքը, տե՛ս Ալեքսանդր Մակեդոնացի, Երևան, 1987:
Քոչարյան Գ., Դիլինի հելլենիստական դարաշրջանի խեցեղենը, ԼՀԳ 5, 82–97, 1974:
Օհանյան Ս., Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքը և Հայաստանը, Երևան, 2003:
Античная Греция. т. 1, Москва, 1983.
Аракелян Б. Н., Очерки по истории искусства Древней Армении (VI век до н. э. – III век н. э.), Ереван, 1976.
Бенгтсон Б., Правители эпохи эллинизма, Москва, 1982.
Бокщанин А. Г., Ганнибал – Советская историческая энциклопедия, Москва, т. 4, 99–100, 1963.
Бонгард-Левин Г. М., Г. Ф. Ильин, Индия в древности, Москва, 1985.
Виноградов Ю. Г. и В. И. Кадеев, Армянские лучники на службе Митридата Евпатора. – Второй всесоюзный симпозиум по проблемам эллинистической культуры на Востоке. Тезисы докладов, Ереван, 12–13, 1984.
Габелко О. А., Критические заметки по хронологии и династической истории Понтийского царства, ВДИ 3, 128–158, 2005.
Гафуров Б. Г., Д. И. Цибукидис, Александр Македонский и Восток, Москва, 1980.
Демографический энциклопедический словарь. Москва, 1985.
Дройзен И. Г., История эллинизма, т. I–III, Москва, 1891–1893.
Еремян С. Т., О рабстве и рабовладении в древней Армении, ВДИ 1, 12–26, 1950.

Еремян С. Т., Развитие городов и городской жизни в древней Армении, ВДИ 3, 11–31, 1953.
Зардарян М., Торгово-экономические связи Армении с эллинистическим миром (III–II вв. до н. э.) (Автореферат канд. дисс.) (Институт Археологии и этнографии АН Арм. ССР), Ереван, 1986.
Зельин К. К., Основные черты эллинизма (социально-экономические отношения и политическое развитие рабовладельческих обществ Восточного Средиземноморья), ВДИ 4, 45–56, 1953.
Канецян А., Архитектурно-строительная культура античной Армении (Автореферат канд. дисс.) (Институт Археологии и этнографии АН Арм. ССР), Ереван, 1988.
Кораблев И. Ш., Ганнибал, Москва, 1976.
Кошеленко Г. А., Греческий полис на эллинистическом Востоке, Москва, 1979.
Лосев А. Ф., Стоицизм – Философская энциклопедия, т. 5, Москва, 1970.
Макгинг Б., На рубеже. Культура и история Понтийского царства, ВДИ 3, 97–112, 1998.
Манасерян Р. Л., Процесс образования державы Тиграна II, ВДИ 2, 122–140, 1982.
Маргарян Е. Г., Страна Коммагена и Армения эллинистического периода (Автореферат канд. дисс.) (Институт истории НАН РА), Ереван, 1992.
Молев Е. А., Малая Армения и Митридат Евпатор. Проблемы античной истории и культуры. т. I, Ереван, 185–189, 1979.
Народонаселение стран мира, Москва, 1974.
Периханян А. Г., Храмовые объединения Малой Азии и Армении, Москва, 1959.
Ранович А. Б., Восточные провинции Римской империи, Москва–Ленинград, 1949.
Ранович А. Б., Эллинизм и его историческая роль, Москва–Ленинград, 1950.
Саркисян Г. Х., Самоуправляющийся город в Селевкидской Вавилонии, ВДИ 1, 68–84, 1952.
Саркисян Г. Х., Греческая ономастика в Уруке и проблема Graeco-Babyloniaca, ДВ 2, 181–217, 1976.
Саркисян Г. Х., Тигранакерт, Москва, 1960.
Степанян А. А., Развитие исторической мысли в древней Армении. Миф, рационализм и историописание, Ереван, 1991.
Тарн В., Эллинистическая цивилизация, Москва, 1949.
Тирацян Г. А., Новые археологические материалы послеарташеского времени на территории Западной Армении (Турция) и их место в истории древнеармянской культуры, ДВ 2, 134–157, 1976.
Тирацян Г. А., Культура древней Армении (VI в. до н. э. – III в. н. э.), Ереван, 1988.
Тирацян Г., Страна Коммагена и Армения, ՏՀԳ, 1956, 3, 69–74, 1956.
Хачатрян Ж. Д., Об античной коропластике Армении, ВДИ 3, 87–103, 1979.
Хачикян А. Э., Армения в сфере международной политики накануне и в начале нашей эры, Ереван, 1999.
Шахермайр Ф., Александр Македонский, Москва, 1986.
Шифман И. Ш., Сирийское общество эпохи принципата, Москва, 1977.
Alexander the Great. Reality and Myth, Rome, 1993.
Bickerman E., Institutions des Séleucides, Paris, 1938.
Bickerman E., The Seleucids and the Achaemenids. – In: La Persia e il mondo Greco-romano, Roma, 87–117, 1966.
Bivar A. D., The Political History of Iran under the Arsacids. – In: The Cambridge History of Iran, vol. 3(1), London, 21–99, 1983.
Briant P., Alexander le Grand, Paris, 1994.
Brun J., Le stoïcisme, Paris, 1994.
Chamoux Fr., La civilisation hellénistique. Paris, 1992.
Geyer Mithridates. In: Paulys Realencyclopädie der Classischen Altertumswissenschaft (RE). XV, 2. Stuttgart, col. 2163–2204, 1932 (1965).
Grimal P., Bengtson H., Caskel W., Dercharn P., Meuleau M., M. Smith, La civilization hellénistique et la montée de Rome. Paris. – Montréal, 1971.
Hümann K. und Puschtein O. 1963, Reisen in Kleinasien und Nordsyrien, Textband, Berlin, 1890.

Kennedy H. *Crusades des Belligerents*. Berlin, 1974.

Leveau R. *Le monde hellénistique*. Paris, 1969.

Lipinski E. *Et's "Nobles" - Mythological Traditions Related to Mount Olympus and to the Mountain of Olympus*. *Orientalia Lovaniensia Periodica*, 1972, 13-14, 1971.

Maissonnier E. *L'Asie et le Proche-Orient hellénistique au temps de Nigide et de Ptolémée*. In: *Annales orientales et occidentales*. Paris, 1966, 33-37, 1966.

Maquet G. *Les Égyptes et la conquête de monde méditerranéenne (264-27 av. J.-C.) Tome I avec la fin de Cl. Nicodémus et al.*, Paris, 1991.

Paul B. *La civilisation hellénistique*. Paris, 1924.

Thomsen C. *Le monde hellénistique. La Grèce et l'Orient de la mort d'Alexandre à la conquête de la Grèce 323-146 av. J.-C.*, Paris, 1978.

Kobuch T. *Mithridate Empereur roi de Pont*. Paris, 1879.

Rostovtzeff M. *The Social and Economic History of Hellenistic World*, v. I-III, Oxford, 1941.

Rostovtzeff M. *Greece and the East*. - In: *CAH VII*, 155-475, 1964.

Shaw W. W. *The Struggle of Egypt against Syria and Macedonia*. - In: *CAH VII*, 699-711, 1964.

Toutouloff G. *Studies in Christian Caucasian History*. Georgetown - Washington, 1961.

Walbank F. W. *The Hellenistic World*. London, 1957.

Walbank F. W. *Asia, A. B.*, *The Hellenistic World*. - In: *CAH*, vol. VII, Cambridge, 1968.

Wolanski M. *Asiaticism in the Greece*. - In: *PE*, 12, 200-201, 2012-2013, 1974 (1975).

Wolanski M. *Asiaticism in the Greece*. - In: *PE*, 12, 200-201, 2012-2013, 1974 (1975).

Wolanski M. *Asiaticism in the Greece*. - In: *PE*, 12, 200-201, 2012-2013, 1974 (1975).

Wolanski M. *Asiaticism in the Greece*. - In: *PE*, 12, 200-201, 2012-2013, 1974 (1975).

ՄԱՐԻՈՐԴՍԵՍ

ՎՐԱՍՏԱՆ¹

Վրաստանը զբաղեցնում է Կովկասյան լեռնաշղթայի հարավային լանջերի միջնամասից արևմուտք՝ մինչև Սև ծով և Փոքր Կովկասի հյուսիսային լանջերի միջև ընկած Կուրի և Ռիոնի իջվածքները: Ընդունված է երկիրը բաժանել չորս գոտիների՝ ըստ ծովի մակերևույթից ունեցած բարձրության, որոնցով պայմանավորված են նրանց մակերևույթի ծածկույթի, տնտեսական նշանակության, բնակլիմայական և մյուս ինքնատիպությունները: Լիխի լեռնաշղթան (Սուրամի լեռնանցքով) երկիրը բաժանում է արևելյան և արևմտյան հատվածների՝ համապատասխան պատմա-ազգագրական միավորներով: Քաղաքական կազմավորման առումով երկիրը միասնական է՝ սկսած XI դարից:

1. ՏԱՐԱԾՔԸ, ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

Վրաստանի «Սաքարթվելո» ինքնվանումը կազմված է «քարթվել-ի» էթնանունից՝ «սա» ընդհանրականություն ցույց տվող նախածանցով: Էթնանվան կազմության ու ծագման շուրջ կան այլազան բացատրություններ: Բաղադրյալ անուն լինելը ինքնին հասկանալի է, քանի որ էթնանվան հիմնական ցուցիչը՝ «քարթ», առկա է կենտրոնական Վրաստանի *Քարթ*-ի անվան, ինչպես նաև երկրի խոսվող լեզվի «քարթ»+ուր-ի > «քարթ»-ուլ-ի կոչման մեջ: Բ>Վ լծորդությունը թույլ է տալիս *վեր/վիր* տարբերակների մեջ տեսնել հայ. *վիր-ք* (հուն. *Ίβερ-ία*) - *վրացի-ներ* և *Վր-ա-ստան* ցեղանուն - երկրանվան ձևավորման ընթացքը: Գ. Ղափանցյանը *ber/bir* -ը բացատրում էր իբրև «տուն», «տոհմ», «ցեղ»: Ա. Շանիձեն, պ>կ լծորդության վկայակոչմամբ, «քարթվել-ի»-ն հանգեցնում էր «պարթել-ի/պարթենել-ի» (իմա՝ պարթևստանցի, պարթևներին ենթակա երկրի բնակիչ) կազմությանը: Մեգրելները (եգրիսցիները) վրացիներին կոչում են «*քորթու*»: Գ. Մելիքիշվիլին *քարթ* եզրույթը ստուգաբանելիս առաջնությունը տալիս էր մեգրելներնում և այլ լեզուներում այս բառի «շրջափակ», «բակ» իմաստին, որով նախ *քարթերի* բնակության կենտրոնը պիտի կոչվեր, ապա էթնանուն դառնար:

«Քարթվելական» ցեղակցությունը պայմանավորող հիմնական որոշիչն այսօրվա

¹ Հին Վրաստանի պատմության մասին տես Меликишвили Г. А., К истории древней Грузии, Тбилиси, 1959; Чубинашвили Т., К древней истории Южного Кавказа, Тбилиси, 1971; Лордкипанидзе Г., Колхида в VI-II вв. до н. э., Тбилиси, 1978; Лордкипанидзе О.Д., Наследие Древней Грузии, Тбилиси, 1989; Меликишвили Г.А. и Лордкипанидзе О.Д. (ред.), Очерки истории Грузии, Т. I, Грузия с древнейших времен по IV в. н. э., Тбилиси, 1989; և այլն:

ընկալմամբ *վրացերեն, սլաներեն, մեգրեղերեն և ճաներեն* (վերջին երկուսը միասին՝ *գաներեն*) լեզուների՝ մեկ հիմք լեզվից (այլ կերպ՝ նույն նախալեզվից) սերելու լեզվաբանական փաստարկումն է: Հնչյունական անցման օրինաչափությունները համաքարթվելական լեզվական ընդհանրության երկաստնան երկու պարբերաշրջան են վկայում: Առաջին փուլում՝ Ք. ա. II հազ. սկզբներին, հիմք լեզվից ճյուղավորվում և ինքնուրույն զարգացում է ապրում *սլաներենը*: Հաջորդ երկաստունը վիրա-կոլխական շրջանակում (իմա *վրացերենի և գաներենի* բաժանումը) թվագրվում է Ք. ա. I հազ. սկզբից մինչև Ք. ա. VII դ.: Ի հարկե, լեզվական այս ժամանակագրությունը բացարձակ չէ, իսկ նրանում *ճաներենի* բացակայությունը բացատրելի է *մեգրեղերենի* հետ ունեցած ընդհանրությամբ:

Լեզվաբանական նորագույն հետազոտությունները կասկածի տակ են առնում «Իբերա-կովկասյան» կոչված լեզվաընտանիքի գոյությունը՝ չճիստելով մասնակի ընդհանրությունները: Այդպիսիք անծանոթ չեն նաև հնդեվրոպական հիմնալեզվի հարաբերակցության մակարդակում: Հայերենի հետ եղած ստուգաբանությունների մեծ մասը պայմանավորված է այս մակարդակի շփումներով: Դատելով Փոքր Կովկասի լեռնային շրջանների տեղանուններում ճանա-մեգրեղական (= գանական) լեզվական հետքերի առկայությունից՝ ցեղային տեղաշարժեր են տեղի ունեցել դեպի արևմուտք, ինչպես որ այդպիսիք դիտարկելի են սլաներենի առնչությամբ, բայց այս դեպքում՝ հարավից դեպի հյուսիս:

ումանգի «վ-յմիզդոզ» 3 ծայրայի դեմամբցեղ «դմիզդոզա» 4 լմաուսուդի
ուներամ մայմանգե՝ 3ուրանանայամ ույոս քուր մուլգուեմվադմարանց «աս» քգմ

2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Կոլխական և իբերական (վրացական) պետական կազմավորումների առաջացումը

Վրաստանի տարածքում բնակվող ցեղերն ու ցեղային միություններն ապրել են վաղնջական պատմության աստիճանական բոլոր շրջափուլերը: Արախլոյի, Շուլավերի և Ծոփի հնավայրերի գտածոները վկայում են էնեոլիթյան բնակավայրերի առկայությունը այս տարածքում, որ վերաբերում է Ք. ա. V-IV հազարամյակներին: Արևելյան Վրաստանը հարևան տարածքների հետ, փաստորեն, ընդգրկվել է հյուսիսամիջագետքյան և իրանական էնեոլիթյան մշակույթի շրջան: Վաղ և միջին բրոնզի դարաշրջանները (IV-II հազ.) բնութագրվում են թռեղքյան գտածոներով և հայտնի են «թռեղքյան մշակույթ» անվանումով: Արևմտյան Վրաստանը այս շրջանում հարում է Փոքր Ասիայի հյուսիսարևելյան տարածքներին և առանձնանում է «կոլխական մշակույթ» բնորոշմամբ: Ք. ա. I հազ. սկզբներից, դատելով հունական աղբյուրներում արգոնավորդների մասին եղած զրոյցներից, կոլխական միջավայրում սկսում է ձևավորվել վաղդասակարգային հասարակություն, որին նպաստ բերեց Ք. ա. VIII-VI դդ. հունական բնակավայրերի հաստատումը Սև ծովի արևելյան ափերին (Փասիս, Դիոսկուրիա, Բաթիս ևն):

Գ. Մելիքիշվիլու համոզմամբ՝ քարթվելական ցեղերի ստեղծած հնագույն պետական կազմավորումը հին Կոլխեթի (Կողքիսի) թագավորությունն էր, որի գոյությունը նա թվագրում է Ք. ա. XI-VIII դդ. և անկումը պայմանավորում կիմմերների ու սկյութների դեպի հարավ շարժվելով: Ժողովրդակազմավորմանը որոշակի մասնակցություն բերեցին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքից դեպի ապագա Վրաստանի տարածք շարժվող *մուշկերը*՝ իրենց անունը ամրագրելով վրացական *մեսի, Սամցխե և Մցխեթ* ցեղանուններում ու տեղանուններում: Ենթադրվում է, որ փոքրասիական աստվածությունների պաշտամունքի հետ են կապված *Արնագ և Զադեն* աստվածները:

Այս անցուդարձին հաջորդեցին Մարաստանի հզորացումը և Վանի թագավորության աստիճանական անկումը: Ենթադրվում է, որ ուրարտախոս որոշ խմբեր պետության անկումից հետո դեպի հյուսիս են շարժվել և ձուլվել արևելավրացական ցեղային կազմավորումներին: Այդ է վկայում հին արևելյան բերքուբարիքի աստված Արալեի առկայությունը վրաց ժողովրդական երգի կրկներգում (իվրի Արալե, թարի Արալե, արի Արալե, ուր Արալեն կոչված է «տեր», «գորեղ» և «տուր» > տվող):

Ք. ա. VI դ. սկսած՝ մարերին փոխարինելու եկավ հարավիրանյան Աքեմենյանների տոհմի հարստությունը, որի տիրապետությունը տարածվեց Այսրկովկասի, այդ թվում և Վիրքի վրա:

Հերոդոտոսի հավաստմամբ՝ կոլխերը (իմա՝ արևմտավրացական ցեղերը) որևէ սատրապության կազմում չկային, բայց Աքեմենյաններին, իբրև ինքնակամ հարկ, հինգ տարին մեկ ուղարկում էին 100 տղա և նույնքան աղջիկ (III, 97): Պեղածո դրամներն ու առարկաները ցույց են տալիս, որ Սև ծովի արևելյան ափին ընկած բնակավայրերը կայուն առևտրատնտեսական հարաբերություններ ունեին հունական աշխարհի հետ: Այդպիսիք ավելի սերտ էին Միլեթի հետ, որտեղից էին վերաբնակները: Անհրաժեշտ է հիշել, որ այս շրջանի հունական աղբյուրներում Կոլխիդա (Կողքիս) տեղանունը երկու տարբեր կիրառություն ունի՝ ընդհանուր և մասնավոր: Երկրորդ դեպքում այն վերաբերում է Ակամսիսից (Ճորոխ) հյուսիս՝ մինչև Փասիս (Ռիոն) կամ Ինգուր գետ ընկած տարածքին, հարկավ Ռիոնի ավազանում գտնվող կենտրոնով: Այստեղ հաստատված քաղաքներում տեղ ուներ, ինչպես այլուր, ստրկավաճառությունը, և պատահական չէ, որ հունական որոշ աղբյուրներում կոլխ ստրուկներ են հիշատակվում:

Քարթլիի (Վիրքի) թագավորության կազմավորումը

Կոլխիդայի (Կողքիսի) և Քարթլիի միջև մեկընդմիշտ սահմանված բաժանագիծ չկար. *սուրար-սասպեր-հեսպեր-սպեր* ցեղանունների առնչակցությունը *իբեր-ին* (վիր-բ) համարվում է հարավ-արևմուտքից դեպի Արևելյան Վրաստան կատարված էթնիկական տեղաշարժերի հետևանք: Այս տարածքում քարթական/քարթվելական ցեղերը կարող էին շփումներ ունենալ վայնախական և դադստանյան էթնիկական խմբերի հետ, մասամբ և ձուլվել նրանց իրենց կազմավորման ընթացքում (*Մուխրան*,

Մուխնար, Մուխիան տեղանունները կազմված են մուխա բառից, որ իր հերթին, նույնն է խունձական միքե-ի հետ և զուգահեռներ ունի դադստանյան լեզուներում): Ինչ վերաբերում է վաղ անտիկ շրջանի երկրի բաղաբանական կացությանը, ապա հակառակ Պլուտարքոսի ցուցման («Պոմպեոս», XXXIV)՝ իբերները (վրացիները) Աքեմենյանների ազդեցության ոլորտում պիտի գտնվեին. եթե հետազոտությունները, սասպերները նույն իբերներն են, ապա Բսենուփոնի մոտ նրանք հայերի և փասիանների հետ «Արևմտյան Հայաստան» անունը կրող վարչական միավոր էին կազմում: Այս շրջանին է վերաբերում Ուփիսցիխես նշանավոր ամրության կառուցումը, որը «Վե-րին աշխարհ Վրաց» կոչվածի (Ջենա սոփելի կամ Շիդա Բարթլիի) կենտրոնն էր՝ նախորդելով Մցխեթին:

Արևելյան Վրաստանը որևէ չափով չէր առնչվել Ալեքսանդր Մակեդոնացու նվաճումներին, Սելևկյանների ու Պոնտական պետության միջև մղվող պայքարին: Եղած ավանդական տեղեկությունները պատմականություն չեն ապահովում, ուստի արևելավրացական պետական անդրանիկ կազմավորումը Փառնավազի անվան հետ է կապվում, որի մայրաքաղաքը Արմազգիխեն էր (Մցխեթը): «Քարթլի դարձը» վարքագրական-պատմական աղբյուրը պահպանել է Փառնավազյան հարստության մի քանի ներկայացուցիչների անուններ՝ Փառնավազ, Սաուրմազ, Միրվան, Փառնաջոմ, Արսոկ (Արշակ), Արիկ (Արտակ) և այլն, ինչպես նաև հիշատակություններ Արմազում նրանց ծավալված շինարարության վերաբերյալ:

Մցխեթում էին խաչվում Բարթլի եկող հիմնական ճանապարհները, հետևաբար պաշտպանական կառույցների առավել անհրաժեշտ տարածքը «Մեծ Մցխեթն» էր: Ստրաբոնի հիշատակած և մայրաքաղաքը պաշտպանող (Strabo, XI, 3, 5) Արմազգիխեն և Սևսամորան (վրաց. Ծիծամորա) Կուրի և Արագվի գլխավոր անցումներն էին պահում: Փառնավազի թագավորությունը թվագրվում է Ք. ա. III դ. առաջին կեսով: Համաձայն ուշ շրջանի վրացական աղբյուրների («Քարթլիս ցխովրեբա»)՝ նա երկիրը բաժանել էր յոթ էրիսթավությունների, որոնք միավորում էին ողջ Վիրքը (Կենտրոնական Բարթլի, Ստորին Բարթլի, Կախեթ) և մասամբ Արևմտյան Վրաստանը (Արգվեթի, Եզերք, Օձրխն): Փառնավազի հաջորդների օրոք, Ստրաբոնի տեղեկությամբ (Strabo, XI, 14, 5), ծավալվող Արտաշիսյան Հայաստանը տիրացավ Գուգարքին, և Ապոլոնորոսի այն տեղեկությունը, թե Հայաստանն ու Իբերիան Արաքսով են բաժանվում (նույն տեղում, I, 3, 21), ըստ էության այս շրջանին է վերաբերում, հետևաբար քննադրում Արաքսը շփոթված է Կուր գետի հետ:

Փառնավազյանները բավական զգուշավոր հարաբերություններ էին պահպանում հյուսիսկովկասյան լեռնականների հետ՝ փորձելով օգտվել նրանց զինական կարողությունից: Այնուամենայնիվ, միշտ չէ, որ հնարավոր էր լինում խուսափել առձակատումից: Դվալները, ծանարները, թուշերը, դիդոյցիները և այլ «լեկեր» ու «սարտունայք» հաճախ գերեվարում էին Բարթլիի բնակիչներին և վաճառքի հանում: Միաժամանակ տեղի էր ունենում ալանական ու աղդական ցեղերի տեղաշարժ դեպի հարավ: Այս անցուդարձերը գրուցախառն ձևով արտացոլված են «Քարթլիս ցխովրեբայի» սկզբի նախապատմություններում: Ինչ վերաբերում է Վիրքի արևելյան հարևաննե-

րին, այսպես կոչված՝ աղուանական ցեղախմբերին, ապա Ստրաբոնի նկարագրության համաձայն՝ նրանք տոհմացեղային համայնքի վիճակից անցում էին կատարում դեպի միասնականացում՝ որոշ դեպքերում տարածքային զիջումներ անելով հարևան գորեղ կազմավորումներին, այդ թվում՝ վրացիներին: Կամբեձանում (նոր ժամանակների Բիզիդ – Կիզիկա՝ Կուրի ձախ ափին), ըստ մի հաղորդման, միմյանց էին սահմանակցում վրացիները, հայերն ու աղուանները (Strabo, XI, 4, 1):

Ք. ա. II դ. սկզբներից, Հայաստանի հզորացմանը զուգընթաց, Վիրքը հարկադրված էր զիջումներ կատարելու Կախքի (Կախեթ) արևելյան շրջաններում: Վիրքի չորրորդ թագավոր Փառնաջոմի սպանությամբ հայոց թագավորը տիրացավ վրաց գահին, և այս կացությունը շարունակվեց մինչև հռոմեացիների հարձակումը Ք. ա. 65 թ., որի ժամանակ թագավոր է հիշվում Արտոկը (Արտակ): Այսպիսով՝ շուրջ հարյուր տարի Արևելյան Վրաստանը կառավարում էին հայ Արտաշիսյան հարստության ներկայացուցիչները:

Հայոց արքա Տիգրան II-ի և Միհրդատ VI Պոնտացու զինական համագործակցությունը Վիրքին ու Աղվանքին ևս թելադրում էր հակահռոմեական դիրքորոշում որդեգրել: Ք. ա. 66–65 թթ. Հռոմը կտրուկ հաջողություններ արձանագրեց (Տիգրանակերտի և Արտաշատի գրավումը, Միհրդատ VI Եվպատորի փախուստը Պոնտսից և այլն): Հռոմը Լուկուլլոսի փոխարեն Արևելք ուղարկեց Պոմպեոսին, որը նախ Վիրքի վրա հարձակվեց՝ հարկադրելով Արտակ (Արտոկ) թագավորին, մեծ թվով զոհեր տալով ու գերիներ թողնելով, փախչել իր նստոցից և, ի վերջո, ապավինել Պոմպեոսի ողորմածությանը՝ նրան ոսկեձուլ մահձակալ, թախտ ու սեղան նվիրելով (հմմտ. Պլուտարքոսի «Պոմպեոս», XXXVI): Փաստորեն, Հռոմը տիրացավ Հյուսիսային Կովկասից Այսրկովկասով պարթևների երկիր տանող ճանապարհներին և հող նախապատրաստեց դեպի Արևելք նվաճումները շարունակելու համար: Սակայն մինչ այդ կարևոր նկատվեց կարճ ճանապարհով Փասիս անցնել և ըստ կարելիության հետապնդել հալածական Միհրդատին, որը շուտով ինքնասպան եղավ: Պոմպեոսը Վիրքից նախ իջավ Մեծ Հայքի կողմերը, ապա այնտեղից ուղևորվեց Աղուանից թագավորին պատժելու: Շուտով սկիզբ առած ներքին կռիվները փոխեցին կացությունը. Պոմպեոսի կողմից Արիստարքոսին Կողքիսի կառավարիչ նշանակելուց կարճ ժամանակ հետո Բոսֆորի Փառնակ թագավորն իր տիրույթների մեջ ընդգրկեց ողջ առափնյան: Սակայն խնդիրն այն է, որ Կողքիսն այլևս դադարեց վարչական մեկ ամբողջություն լինելուց՝ ընկալվելով իբրև հռոմեական Պոնտոս պրովինցիայի մաս:

Կողքիսը հեղինակի դարաշրջանում

Ճիշտ է, Կողքիսի որոշ հարավարևելյան և արևելյան շրջաններ ընդգրկվել էին Վիրքի (Իբերիայի) վարչական տարածքի մեջ, սակայն վաղաժամ է խոսել համավրացական կազմավորման մասին: Գ. Մելիքիշվիլին փորձում է արևմտավրացական ցեղեր տեսնել Փոքր Հայքի կազմում (խալդեր/խալիբներ, որոնց նույնացնում է ձանական ցեղերի հետ, մոսինոյկներ և այլն), սակայն դժվար է միանշանակ ստույգ

մեկնաբանություն տալ անտիկ աղբյուրներում հիշատակվող ցեղանուններին: Անշուշտ ենթադրելի է, որ Ք. ա. II–I դդ. արևմտավրացական որոշ ցեղեր կամ ցեղախմբեր ընդգրկվեցին Պոնտական թագավորության մեջ: Այս նոր կազմավորումը անթաքույց ձգտում էր իրեն ենթարկել կամ իր ազդեցության ոլորտ ընդգրկել Սև ծովի ողջ արևելյան առափնյան: Խնդրի իրագործմանը նպաստում էին այս տարածքում հաստատված հունական վերաբնակիչների հիմնած քաղաք-կենտրոնները: Միհրդատ VI Եվպատորի օրոք (111–63) Փոքր Հայքի որոշ շրջաններ ևս մտան նրա տիրապետության տակ:

Կողքիսի քաղաքներին հարող տարածքների տեղական բնակչությունը ևս հելլենականացման էր ենթարկվում և նշանակալի մասնակցություն բերում ծավալվող ապրանքափոխանակությանը, առևտրին: Դրամագետների դիտարկմամբ, Ք. ա. II դ. սկսած՝ արևմտավրացական տարածքներում չքանում է կոլխական արծաթադրամի (թեթրի) շրջանառությունը՝ փոխարինվելով Ալեքսանդր Մակեդոնացու և Լիսիմաքոսի ոսկեդրամների նմանակներով, որոնց հարյուրավոր օրինակներ են հայտնաբերվել արևելասևծովյան տարածքներում՝ հասնելով մինչև Սվանեթ: Այս պարագան առաջ բերեց առափնյայում բնակվող ցեղերի ու ցեղախմբերի միջև (կերկեսներ, աքայացիներ, հենիոքներ, սվաններ, ափսիլներ ևն) որոշ համահարթում, և մշակութային շփում ձևավորվեց, որի հետևանքով խախտվեց նրանցից ումանց տոհմահամայնքային ավանդական կացութաձևը: Ստրաբոնը Դիոսկորիայի շրջակայքում ապրող ցեղերին տասնյակներով է հիշատակում (Strabo, XI, 2, 16):

Վիրքի թագավորության կառուցվածքին վերաբերող աղբյուրների սակավությունը ստիպում է հաճախ մնալ կոռուսիաների շրջանակում և կամ ապավինել կառույցը կազմողների եզրաբանությանը՝ ազգային բնագրերում: Նկատի պետք է առնել նաև սոցիալական այն տարբերությունը, որ գոյություն ուներ Վիրքի հարավային և լեռնական բնակչության միջև: Վերջինները կառուցվածքային հարցերում ավելի ինքնամոտի ու պահպանողական էին: Ինչ վերաբերում է Ստրաբոնի տեղեկությանը, թե այս երկրում «մարդկանց չորս տոհմ (γένος) է բնակվում» (XI, 3, 6), ապա վրացագետների հետազոտությանը պարզված է, որ խոսքը ոչ թե ցեղերի կամ ժողովուրդների մասին է, այլ վրաց հասարակության շերտային կառույցի, ուր բացի թագավորից ու նրան հարող ավագանուց, կային նաև քրմերի, ազատների ու նյութական բարիքներ արտադրող մշակների (գեղջուկների) շերտեր:

Դատելով վրաց. «էր–ի» (հմմտ. հայ. այր > էր) եզրի «ժողովուրդ» իմաստի ընդհանրացման փաստից՝ հասարակության մարդաշատ շերտը ազատներն էին կազմում, որոնց պարտականությունը զինվորական գործն էր: Ինչ վերաբերում է քրմերի ինքնությանը և նրանց դերին, ապա նկատի պիտի առնել Վիրքի դիցարանի ինքնատիպությունը, ուր խեթական–փոքրասիական միջնորդավորված ազդեցությունը որոշակի է (այդ են վկայում *Արմազ* և *Ջախեն* տեղանունների ստուգաբանությունները): Ինչ վերաբերում է հասարակության սոցիալական կառուցվածքին, ապա այժմ ընդունված է այն եզրակացությունը, թե «գործ ունենք վաղ դասակարգային հասարակության հետ, որի մեջ տակավին շատ զորեղ են նախնադարյան–համայնական կա-

ռուցվածքի մնացորդները»: Այս եզրակացությունը արդարացի է նկատվում, քանի որ գահաժառանգումը ավագությամբ է որոշվում, և թագավորը զորապետ չէ, ոչ իսկ դատավոր: Վիրքի հասարակության առաջընթացը ուղեկցվում էր դասակարգային շերտավորման խորացմամբ, մանավանդ հին ու նոր դարերի սահմանազլխին:

Վիրքի հզորացումը Ք. հ. I–II դարերում

Ք. հ. I դ. սկզբին հռոմեացիները մասամբ վերանայեցին իրենց քաղաքականությունը Վիրքում. նրանք հատկապես կարևոր համարեցին հայերի և պարթևների հետ ունեցած հակամարտություններում Այսրկովկասի երկու պետությունները՝ Վիրքն ու Աղուանքը, իրենց դաշնակից կամ օժանդակ նկատել: Գ. Մելիքիշվիլու համոզմամբ այս շրջանում «Պարթևներն ու պարթևամետ տրամադրված Հայաստանը Վիրքի համար ավելի վտանգավոր էին թվում, քան Հռոմը»:

Հայաստանի թուլացումը և պարթևների ու Հռոմի միջև մրցակցության սրումը Վիրքի թագավոր Փարսմանին (Փարսաման) հնարավորություն տվեցին իր եղբայր Միհրդատին զորքի գլուխ կարգելու և Հայաստան ուղարկելու՝ պարթև արքայից արքա Արտավան III–ի որդի Արշակի գահը գրավելու և թագավորելու: Առ այդ վրացիներն օգնության կանչեցին հյուսիսկովկասյան «սարմատներին» (ալաններ): Տակիտոսի և Դիոն Կասսիոսի տեղեկությամբ (Tac., Ann. VI, 33–35; Dio, LVIII, 26, 4) պատերազմը նրանք շահեցին, և Միհրդատը հայոց թագավոր դարձավ: Որոշ անցուդարձերից հետո՝ Ք. հ. 51 թ., Փարսմանը պատերազմ հայտարարեց իր եղբոր դեմ, սակայն հռոմեացիներին դաշնակից ունենալու նրա ակնկալիքները չարդարացան: Վրաց արքայազն Ռոդոմիստի (Հոադամիզդ) գլխավորած զորքը զանազան խարդավանքների գործադրմամբ տիրացավ Գառնի ամառանոց–բերդին և կոտորեց Միհրդատի ողջ զերդաստանը: Սակայն այս իրողության հետ չհաշտվեց պարթևաց Վաղարշ I թագավորը (51–80), որը մտավ Հայաստան ու վտարեց վրացիներին: Ռոդոմիստը նորից փորձեց վերադառնալ, սակայն հայոց ազատանին ապստամբեց, և փախուստի մատնված Ռոդոմիստի փոխարեն թագավոր կարգվեց պարթևաց թագավորի եղբայր Տրդատը: Հայրենի տուն վերադարձած Ռոդոմիստը, թերևս, հավակնեց ծերունի հոր գահին, սակայն պալատական խարդավանքների զոհ դարձավ (հմմտ. Tac., Ann. XIII, 37):

62 թ. Հռանդեայում պարթևների ու Հռոմի միջև կնքված հաշտության պայմանագիրը կարևոր փոփոխություններ առաջ բերեց Այսրկովկասում: Վրաստանն այլևս չէր կարող Հայաստանի դեմ քայլեր ձեռնարկելիս պաշտպանություն հուսալ հռոմեացիներից: 70–ական թվականներին դեպի հարավ՝ Հայաստան ու Մարաստան արշավելու փորձ ձեռնարկեցին հյուսիսկովկասյան ցեղախմբերը՝ ալանների (օսերի) գլխավորությամբ: Մովսես Խորենացու վկայությամբ (Ա, 50)՝ այս ավերածությանը մասնակցում էին վրաց զորքերը՝ փորձելով տիրանալ Հայաստանի հյուսիսային գավառներին: Ասպատակությունը ի

վերջո պարտության վերածվեց, և հայոց Սմբատ գորավարը Քարթլի հասավ ու փոխադարձ ավերածություն կատարեց: Դատելով Մցխեթի 75 թ. հունարեն արձանագրության հաղորդումներից՝ Փարսմանի որդի Միհրդատ վրաց թագավորը Վեսպասիանոսի կյանքի վերջին տարիներին (69–79) կարողացել էր կարգավորել վրաց–հռոմեական հարաբերությունները: Նորից ալանների գործակցությամբ վրաց թագավոր Քարթամի բանակը առճակատվեց հայերին Ջավախքում: Հայոց արքայորդիներ Արտավազդն ու Տիգրանը ավելի դիվանագետ գտնվեցին, քան զորականներ, և վրաց հետ դաշն կնքվեց՝ նրանց զիջելով Ծունդան, Դեմոթի ամրոցը, Ջավախքն ու Արտահանը: Այս ամենի դիմաց վրացիները պարտավորվեցին օգնական լինել հայերին և մայրաքաղաքում հայոց թագավորի պատկերով դրամ հատել:

II դ. 30–50–ական թվականներին՝ Փարսման II վրաց թագավորի օրոք, երկրի հզորացումը շարունակվում էր: Վիրքի թագավորության ազդեցությունը, դատելով զարդեղեն գտածոների ընդհանրությունից, տարածվում էր և արևմտավրացական որոշ տարածքների վրա՝ տեղ–տեղ հասնելով մինչև Ճորոխ գետ: Հաղթանակի օրոք (105–147) Փարսման II–ը գործում էր ինքնավստահ՝ հավասարապես չցանկանալով թե՛ պարթևների, թե՛ Հռոմի ներկայությունը Վիրքում, սակայն կարելի է ենթադրել, որ կայսր Անտոնինոս Պիոսի տարիներին (138–161) հարաբերությունները մեղմվեցին, և Փարսմանի այցելությունը Հռոմ ու մեծարանքով ընդունվելը ընդհանուր շահերի ձանաչման արդյունք էր: «Վրաց պատմությունը» («Քարթլիս ցխովրեբա») Փարսման II–ի անվան հետ է կապում հայ–վրացական համատեղ պայքարը պարսից դեմ և նրան անօրինակ հերոսություններ վերագրում:

Մցխեթում հայտնաբերված երկլեզվյան արձանագրության տվյալները հուշում են, որ Փարսման II–ից հետո երկրում ինչ–ինչ անցուդարձեր են տեղի ունեցել, որոնց արդյունքում գահին տիրացել է ոմն Քսեփարնուգ: Թե ինչ ազգակցություն կա սրա և III դ. կեսերին հիշվող Համազասպ թագավորի միջև, հայտնի չէ:

Պևտինգերյան քարտեզի ուսումնասիրողները արձանագրում են Մցխեթ տանող մի քանի ճանապարհներ ու նրանց ճյուղավորումներ, ինչը վկայություն է Այսրկովկասի երկրներն իրար և Առաջավոր Ասիայի հետ կապող առևտրական աշխույժ երթևեկի մասին:

Լազերի թագավորության կազմավորումը

Հռոմեացիների կողմից գրավված Կողքիսը նախ վարչական առանձին միավորի վերածվեց, ապա ենթարկվեց Պոնտոսի թագավորությանը, իսկ Ք. ա. 63 թ.՝ վերջինիս լուծարումից հետո, Գալաթիայի հետ միասին Կապադովկիայի մաս կազմեց: Ծովափնյա քաղաքներում հռոմեական գործադիրներ էին կանգնած: Հյուսիսից հարավ շարժվող լեռնականները (*ջիքեր, հենիոքներ, աքայացիներ*), Պլինիոսի վկայությամբ (NH, VI, 16), հաճախ էին հարձակվում հունական բնակչություն ունեցող քաղաքների վրա: Ակտիվացել էին նաև Կողքիսի կենտրոնական շրջաններում

հաստատված *սանիզները, աքազ–ափշիկները*: Հարավից դեպի այս շրջաններ էին տեղաշարժվում *ճանակաև* տոհմեր, որոնք արդեն տոհմական միություններ էին կազմավորում:

II դ. 30–ական թվականներից Սև ծովի արևելյան ափերին հիշատակվում են *մակրոններ* և *հենիոքներ*, Ճորոխի գետաբերանից մինչև Դիոսկուրիա (Սուխում)՝ *լազական միավորում* (Arr., Periplus, §48), նրանից հյուսիս՝ *աքազական* ցեղեր էին (մինչև ներկայումս Փսոու կոչվող գետը), որոնք տոհմակիցների հետ ցեղային միություն էին ստեղծել: Կողքիսում կողք կողքի ապրողների և այստեղ առևտրական խնդիրներով եկողների ցեղային խճանկարը պատկերացնելու համար կարելի է հիշել Պլինիոսի տեղեկությունը, թե հռոմեացիները հաղորդակցվելու համար 130 թարգմանիչ պիտի ունենային (NH, VI, 15): Ինչպես երևում է, հռոմեացիների հետ ունեցած շփումների առումով առանձնանում էր լազական կազմավորումը, որին կայսր Անտոնինոս Պիոսը (138–161) Բակուր անունով թագավոր (կառավարիչ) է տալիս:

Տասնամյակներ անց գոթական ցեղերի հարձակումները առավել թուլացրին հռոմեացիների ազդեցությունը Կողքիսում, և զուգահեռաբար ակնառու էր դառնում լազերի գերիշխող դիրքը: III դ. առաջին տասնամյակներին նրանք արդեն սահմանակցում և իրենց են ենթարկում լեռնական *ավաններին*՝ որոշ ժամանակ անց առճակատվելով հյուսիսից եկող *հուների* հետ: Այս պարագայում լազական թագավորության գորացմամբ շահագրգռված էին իրենց ազդեցության հյուսիսարևելյան սահմանները պահպանող հռոմեացիները: Լազերի թագավորության հիմնական քաղաքներն էին Արքեոպոլիսը (այժմյան Նաբալաքևի տեղում) և Ռոդոպոլիսը (այժմյան Վարդգիխեն): Վրաց թագավորության հետ սահմանի վրա էին գտնվում Կողքիսի Սկանդա և Շորապան ամրությունները:

Վիրքի թագավորությունը III դարում

224 թ. Արտաշիր Սասանյանը պարտության մատնեց Արշակունի Արտավան V–ին և երկու տարի անց իրեն Իրանի արքայից արքա հայտարարեց, որով սկիզբ դրվեց Սասանյան հարստությանը: Նրա որդի Շապուհ I–ը (242–272) շարունակեց իր նախորդի նվաճողական քաղաքականությունը: Կարելի է մակաբերել, թե առաջին Սասանյանների օրոք Վիրքը հանդես էր գալիս նրանց տիրապետության դեմ պայքարողների թվում՝ իբրև Հայաստանի ու Հռոմի դաշնակից, ինչն արձագանք է գտել ինչպես Ագաթանգեղոսի հայտնի դրվագում, այնպես էլ ազգային աղբյուրներում: Սակայն III դ. կեսերին երկիրը նվաճվում է պարսիկների կողմից: Ka'ba–i–Zardošt–ում Կարտիր մոզպետի արձանագրության համաձայն՝ Շապուհ I–ին հարկատու երկրների թվում են նաև հայերը, վրացիները (Vyršn–Iberia), ինչպես նաև Սիկանը (հուն. բնագրի Մախելունիան), որը մի շարք հետազոտողներ նույնացնում են «հենիոքների և մախելունների թագավորությանը» և համադրում Լազիկա–Կողքիսի հետ: Վրաց թագավորն այս շրջանում Համազասպն էր: Արմազիսխենի դամբարանում հայտնա-

բերված թասի պահլավերեն արձանագրության մեջ «Գուրգանի» (Վիրքի) քղեշխ է հիշատակվում Արգամեսը:

Սակայն III դ. վերջերին պարսիկների կրած պարտությունները և Կայսրության ու Իրանի միջև 283 թ. պայմանագիրը բերեցին Սասանյանների կողմից Տրդատ III Արշակունուն Հայաստանի թագավոր ճանաչելուն, իսկ 298 թ. Մծբինի 40-ամյա հաշտության պայմանագրով Իրանը վերջնականապես ընդունեց Մեծ Հայքի ու Վիրքի նկատմամբ հռոմեացիների գերիշխանությունը:

Վրաց պատմության քննարկվող շրջանը բնութագրվում է գյուղական համայնքի կազմավորման ու վերաձևման վերուվարումներով: Մեր օրերում «գյուղ» նշանակող եզրը («սոփելի») հնում ուներ միայն լայն կիրառում («աշխարհ»): «Գիւղ» և «շէն» իմաստով հին վրացերենում ունենք «դարա» եզրը, որից հետագայում գոյացավ «մղարուրի»-ն՝ նախ սոսկ «բնակիչ» և ապա՝ «գեղջուկ» նշանակությամբ: Սոցիալական կտրվածքով «դարայի» բնակիչները երկու խավ էին ներկայացնում՝ «էր-ի» (իմա՝ «ազատ») և «գլելս-ի» (հողագործ, ծառա, գեղջուկ): Դատելով հայ. «գաւառ» և վրաց. «գուառի» (ազգատոհմ, տոհմ) առնչակցությունից՝ համայնքի նախնական հիմնական բնակիչները («մկուիդր-ի») տոհմակիցներ էին: Հետագայում այդ նույն «մկուիդր-ի» եզրը ձեռք բերեց «բնիկ» իմաստը, ինչը նշանակում է, թե նա մշակովի հողամասի տեր է, դրսեկ կամ օտար չէ, գեղջկական համայնքի անդամ է, այլապես պիտի գործածվեին «մծիր-ի», «տղուե», «մոնա», «մխելվալի» եզրերը (օտարական, գերի, ծառա, աղախին, սպասավոր): Թեմը կամ համայնքը կարող էր կոչվել նաև «սախլ-ի» (բառացի՝ «տուն», բայց նաև «արյունակից», «ազգական» իմաստով): Այդ է պատճառը, որ համայնքի ավագը հաճախ կոչվում էր «մամասախլս-ի» (տանուտեր): Ինչ վերաբերում է աստիճանաբար ձևավորվող տոհմական ավագանուն, ապա Քարթլիում նրանք կոչվում էին «թավաղ» կամ «խուցես» («գլխավոր», «երէց»):

Փոքրասիական երկրների ու Հայաստանի նմանությամբ հելլենիստական դարաշրջանի Վիրքում ևս գոյություն ունեին տաճարական համայնքներ: Վրաց հասարակական կառուցվածքում լեռնային և հարթավայրային շրջաններում տաճարական հողագործության զարգացման աստիճանը նույնական չէր: Տարբեր էր նաև տաճարական միությունների սեփականության ընդգրկումը՝ երդեր ու գյուղեր: Պարզ է, սակայն, որ ինչպես այլուր՝ Քարթլիի տաճարական միությունների գլուխ կանգնած էր քրմական վերնախավը:

Արքունական պաշտոնեության առանձին ներկայացուցիչներ, ծառայության դիմաց հողատարածություններ ստանալով, վեր էին ածվում խոշոր հողատերերի: Սեփականության այդ ձևը սովորաբար կոչվում էր «ազարակ» կամ «քարդակ»: Արքայապատկան հողերը կամ տարածքները կրում էին «սեփե» անունը («ոստան», «ոստանիկ»), թեև անծանոթ չէ նաև «ոստանը» (այստեղից Ռուսթավի < «Ռստան-քաղաք» անունը): Խորենացու տեղեկությամբ թագավորագինք Վիրքում «սեփեծուլ» էին կոչվում (Բ, 7): Ի վերջո նշենք, որ հասարակության վերնախավը կրում էր «ուփալ-ի» անունը («տէր»), իսկ նրան ենթակա կամ պատկանող շերտը՝ «մոնա» կամ «դրմա»

(«ծառայ», «տղա», «մանուկ»): Սրանք իրենց հերթին խմբերի էին բաժանվում՝ «նուսղիդի մոնա» (արծաթով գնված), «մխելվալ-ի» (աղախին), նաև «սախլս ծուլի» (ընդոծին):

3. ՎԻՐՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Վերջին տասնամյակների հետազոտությունները պարզեցին, որ Քարթլիի հնագույն կենտրոնատեղին «Արմազաձոր» (Արմազիսխևի) է կոչվում ամենևին ոչ Անուրամազայի պաշտամունքի պատճառով, այլ որ տեղանունը կապված է խեթական Լուսնի աստված Arma-ի հետ, իսկ իրանական կրակապաշտության առնչվող եղելությունը ազգային աղբյուրները կապում են Փառնաջումի ժամանակների հետ: «Քարթլիս ցխովրեբայի» տեղեկությամբ (I, 106) վրաց դիցարանի խոշոր աստվածներն են Արմազը, Ջաղենը, Գաց-ն ու Գա-ն, բոլորն էլ մարդակերպ տեսքով: Ինչ վերաբերում է նույն աղբյուրում հիշվող «Իթրուջան»-ին, այն իրանական «ատրուշանի» հնչյունափոխ տարբերակն է, որ արդեն կրակապաշտության շրջանն է ներկայացնում:

Առաջավորասիական Այնանա-ն, «Դարի» ու «Տառուս»-ի նման, տեղայնացել է և հիմք դարձել «Նինո», «Նանա» կանացի անունների:

Հնագիտական և գրավոր աղբյուրները վստահաբար ցույց են տալիս, որ հողագործությամբ զբաղվող քարթվելական ցեղերը Լուսնի պաշտամունքի հետ են կապել եզան պատկերումները, ինչպես նաև Ս. Գևորգի պաշտամունքի նախնական դրսևորումները: Հարկավ, աստվածությունների անունների այս քանակությունը միաժամանակ արտացոլում է Վիրքը կազմավորող տարբեր ցեղերի ու ցեղային միությունների պաշտամունքային ինքնությունները: Այս առումով խիստ հետաքրքրական է Մովսես Խորենացու հիշած վիշապաբաղ Վահագնի՝ նրա «աստուածացեալ անդրիի» զոհերով պատվելը Վրաց աշխարհում (Ա, 31): Պատմիչը մասնավորեցնում է նրա գործառական իմաստավորումը՝ «կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն»:

Հարկավ, Կողքիսը ևս ուներ տեղական աստվածություններ. Արրիանոսի տեղեկությամբ Փասիսի մուտքը զարդարում էր աստվածուհու քանդակը՝ նվագարանով: Վրաստանի տարածքի պեղումներից հայտնաբերված են պաշտամունքային զանազան առարկաներ, որոնց թվում ուշագրավ են զորություն կերպավորող առյուծի գլխի քանդակները: Եթե արևի պաշտամունքն ընդհանուր հասկացողություն է, ապա նույնը չենք կարող ասել ջրի վերաբերմամբ, որ Իգրիսի անունով կար Կողքիսում: Հարկավ, հեթանոսական դիցարանը ներկայացնող պաշտամունքները կարող էին ունենալ իրենց նվիրված տոներ, ինչպիսին նկարագրված է «Ս. Նինոյի վարքում»:

Մինչև Բ. հ. IV դ. ներառյալ վրաց գույգ պետական կազմավորումները, ինչպես որ Հայաստանում էր, ինքնուրույն գիր ու գրչություն չունեին և այդ անհրաժեշտությունը

հոգում էին անտիկ աշխարհում տարածում ունեցող լեզուներով ու գրչությամբ: Լեոնտի Մրովելու ավանդությամբ «Քարթլիում հնչում էր վեց լեզու՝ հայերեն, վրացերեն, խազարերեն, ասորերեն, եբրայերեն և հունարեն: Այս լեզուները գիտեին Քարթլիի բոլոր թագավորները, արք և կանայք»: Հարկավ, գրառումը միջնադարյան մտածողությամբ է կատարված. իրողությունն այն է, որ Վիրքում և Կողքիսում հիմնական գրոց լեզուն անտիկ շրջանում հունարենն է եղել: Թ. Ղաուխչիշվիլու կազմած Վրաստանի հունարեն արձանագրությունների դիվանում 346 միավոր է ընդգրկված՝ մեծ մասը միջնադարյան: Հնագույնները պեղածո ամանների վրա եղած անուններ են, դրամական մենագրեր, տապանագրեր, ինչպես նաև նվիրագրեր ու շինարարական արձանագրություններ: Կողքիսում հունարեն գիրն ու գրչությունը երկար ժամանակ (մինչև X դ. ներառյալ) մնաց իբրև միակ գրոց լեզուն, ինչը բացատրելի է հունական բնակավայրերի տևական առկայությամբ ու քյուզանդական եկեղեցու ազդեցությամբ:

Արևելյան Վրաստանում Վիրքում, մանավանդ անտիկ շրջանի Մցխեթում հունարենին զուգահեռ կան նաև արամեերեն և եբրայերեն արձանագրություններ: Նշանավոր են հատկապես երկլեզու արձանագրությունները: Ընդամին Արմազի արամեերեն արձանագրության գրչության որոշ ինքնատիպություններ հիմք ծառայեցին այն վարկածին, թե այն կարող էր վրաց ազգային գրչության մեջ որոշ գրաֆիկական արտացոլում ունենալ: Սակայն հետազայում պարզվեց, որ արձանագրված առանձնահատկությունները դիտարկելի են նաև Հայաստանում եղած արամեերեն բնագրերում: Ի դեպ, հիշյալ արձանագրությունների ամփոփած տեղեկությունները շրջանցելի չեն նաև Հայաստանի հետ կապված որոշ հարցեր քննարկելիս: Օրինակ՝ Արմազիսիսի Բագինեթում 1996 թ. հայտնաբերված հունարեն արձանագրության պահպանված մասում հիշատակվում է «Հայաստանի թագավոր Վաղարշի դուստրը՝ վրաց մեծ թագավոր Համագասպի կողակիցը», որին Անագրանես դայակն ու տնտեսը նվիրում է սելիական ծախսով կառուցած բաղանիսը: Հնարավոր է, որ խոսքը վերաբերում է Համագասպ II-ին՝ Փարսման IV-ի որդուն, ուրեմն արձանագրությունը թվագրվում է III դ. սկզբով, քանի որ Վաղարշ II-ը Մեծ Հայքի թագավոր է եղել 186-198 թթ.: Ավելացնենք, որ հունարենի 'επιτροποι - եզրը կարելի է թարգմանել իբրև «հազարապետ»: Ստույգը, սակայն, մեր նախընտրած «տնտես»-ն է: Վիրքի հունարեն արձանագրությունները պատմաբանասիրական լայն հետաքրքրություն են ներկայացնում: Այսպես՝ 1867 թ. Մցխեթի մոտ հայտնաբերված Վեսպասիանոսի արձանագրության մեջ Վիրքի թագավոր Միհրդատի հայրը Փարսմանն է, իսկ մայրը՝ Համագասպուհին (Γαμασασποι), հարկավ, ոչ պատահականորեն - *ուհի* հայկական վերջածանցով:

Հունա-մակեդոնական նվաճումների շրջանակից դուրս մնացած Կողքիսը մշակութային առումով ավանդապահ գտնվեց, սակայն Ք. ա. IV-I դդ. տեղական մշակույթը հելլենիստական ազդեցությունից լիովին զերծ չմնաց: Այդ առումով ուշագրավ է հելլենիստական դարաշրջանի Վանի հնավայրի ճարտարապետական նկարագիրը. քաղաքի գլխավոր մուտքը կառուցված է հելլենիստական քաղաքի

պաշտպանական արվեստին հատուկ խնամքով՝ օժտած լինելով պահապան-աստվածուհու անդրիով: Ազդեցությունը ակներև է խոյակների գեղարվեստական մշակման թեմատիկ ընտրությամբ: Այստեղ լայն տարածում էին գտել հելլենիստական աստվածությունները, հատկապես Դիոնիսիոսն ու նրան ուղեկցող կերպարները: Նույնը վերաբերում է Հերակլեսին: Այս և այլ իրողություններ (հատկապես բնակելի կացարանների բացակայությունը) մասնագետներին ենթադրել են տալիս, թե Վանին Պլինիոսի հիշատակած Սիրիոմն է (NH, I, 13), ուրեմն և տաճարական կենտրոն է եղել: Ինչ վերաբերում է երևան եկած գունազարդ խեցեղենին (Վանի, Սաջխեթե, Իխթվիսի), ապա նրանք կարող են իբրև Վիրքի մշակութային կենտրոնների հետ կապի վկայություն ծառայել:

Ք. ա. IV-III դդ. քաղաքաշինությունն ու ամրոցաշինությունը առանձնակի վերելք են ապրում Կուրի միջին հոսանքի երկու ափերին՝ մանավանդ Քսանի և Արագվի գետերի միջակայքում: Այս տարածքում պեղված դամբարաններում հայտնաբերված ոսկե զարդերի ու իրերի մշակման և մոտիվների մեջ մասնագետները Աքեմենյան Իրանի որոշակի ազդեցություն են տեսնում, մանավանդ ականջօղերն ու կնիք-մատանիները քննարկելիս, ինչը լիովին բացատրելի է: Վիրքի քաղաքների մասին խոսելիս հատկապես պիտի հիշատակել նրանցից երկուսը՝ Ուփլիսցիխեն և Մցխեթը: Առաջինը ամրոցությամբ վիմավոր է, կացարանների հստակ հատակագծումով, երբեմն հարկերի միջև անցումների խնամյալ մշակմամբ: Ուշագրավ է ժայռավոր խոր պարկենիոսը, որը պաշտպանական կառույցի ապահովության երաշխիքն է: Հարավից հյուսիս լանջով բարձրացող քաղաքը հարթակներով երեք մասի է բաժանված՝ հիմնական դիտելով միջին հարթակը: Ի դեպ, պեղումների ժամանակ գտնվել է մի պահոց-սնդուկ՝ լեցուն պերճանքի ու գործածության այլազան առարկաներով, որոնցից շատերն ունեն ճաշակավոր մշակում (խեցեղեն, ոսկե, արծաթե, մետաղե իրեր):

Վիրքի քաղաքական, վարչական ու մշակութային պատմության համար անգնահատելի նյութեր պեղվեցին Մցխեթ հնավայրից: Բղեշխների դամբարանների բացումը նոր հարցադրումների ու պրպտումների աննախընթաց վերելք պայմանավորեց՝ մանավանդ հունարեն, արամեերեն և պահլավերեն վիմագիր վկայություններով: Մցխեթի, ինչպես նաև մյուս մշակութային կենտրոնների պեղումները շարունակվում են, և վրացագիտությունն ու արևելագիտությունը նրանից շատ սպասելիքներ ունեն:

ԱՂՈՒԱՆՔ

1. ԿՈՎԿԱՍՅԱՆ ԱՂՈՒԱՆՔԻ ՏԱՐԱԾՔԸ Ք. Ա. VI-III ԴԱՐԵՐՈՒՄ

Կովկասյան աղուան-ալբանների մասին՝ անտիկ սկզբնաղբյուրների առաջին հիշատակությունը կապված է Ալեքսանդր Մակեդոնացու արևելյան արշավանքի հետ: Ք. հ. II դ. հունալեզու պատմիչ Ֆլավիոս Արրիանոսի հաղորդումների համաձայն՝ Դարեհ III Աքեմենյանի և Ալեքսանդր Մակեդոնացու միջև Ք. ա. 331 թ. տեղի ունեցած Գավգամելայի վճռական ճակատամարտին պարսից տարացեղ բանակի կազմում մասնակցում էր նաև աղուանների զորաջոկատը: Այն կաղուանների և սակե-սինների հետ միասին գտնվում էր մեդացիների (մարերի) առաջնորդ Ատրոպատե-սի ընդհանուր հրամանատարության տակ և վճռական բախման պահին կանգնած էր Աքեմենյանների բանակի դասավորության աջ թևում՝ կենտրոնին մոտիկ: Որոշ ուսումնասիրողներ այդ դիրքի մեջ տեսնում են աղուանների զորաջոկատի ինչ-որ առանձնաշնորհ կարգավիճակի նշան, սակայն դա չի հաստատվում աղբյուրագիտական տվյալների համադիր քննությամբ:

Արրիանոսի տեղեկությունների աղբյուրը, ինչպես ինքն է նշում, Ք. ա. IV-III դդ. հեղինակ, Ալեքսանդր Մակեդոնացու ուղեկից Արիստորուոսն էր, և դա ընդհանուր առմամբ թույլ է տալիս մտածել, որ Գավգամելայի ճակատամարտին աղուանների (որպես էթնիկ առանձին խմբի կամ վարչական միավորի բնակչության) մասնակցությունը հավաստի է: Տարակուսանք է հարուցում լոկ այն, որ նրանց չեն հիշատակում Ալեքսանդրի արշավանքի մասին նույնպես մանրամասն պատմող մյուս հեղինակները, մասնավորապես Ք. հ. I դ. հռոմեացի պատմիչ Կուրցիոս Ռուփուսը: Բայց դա կարող է տարբեր բացատրություններ ունենալ, օրինակ՝ որ Ռուփուսի նկարագրության մեջ բացակայում են Գավգամելայում մարտնչած շատ այլ ժողովուրդների անուններ ևս:

Վաղ շրջանում աղուաններին հիշատակել են նաև Ք. ա. III դ. երկու հեղինակներ՝ Սելևկյան առաջին թագավորի հրամանով Կասպից ծովի ափամերձ շրջանների

¹ Կովկասյան Աղուանքի պատմության մասին տես Тревер К. В., Очерки по истории и культуре Кавказской Албании, Москва-Ленинград, 1959; Голубкина Т.И., Материалы к истории албанских племен Кавказа по данным кувшинных погребений Азербайджана (II в. до н. э. - III в. н. э.), Тбилиси, 1962; Акопян А.А., Албания-Алуанк в греко-латинских и древнеармянских источниках, Ереван, 1987; Սվազյան Հ.Ս., Աղվանից աշխարհի պատմություն (հնագույն շրջանից - VIII դարը ներհայտյալ), Երևան, 2006 և այլն:

հետազոտությունը կատարած Պատրոկլեսը և նրանից օգտված աշխարհագրագետ Էրատոսթենեսը, որոնք արձանագրել են աղուանների բնակվելը Կասպից ծովի ափին՝ կաղուաններից (հայկական աղբյուրներում՝ կատիշներ) հյուսիս: Ընդ որում՝ Ստրաբոնի և Պլինիոս Ավագի մոտ պահպանված տեղեկությունների համադրմամբ Պատրոկլեսի և Էրատոսթենեսի մոտ կաղուասական ափի երկարությունը ստացվում է շուրջ 5000 ստադիոն, իսկ «աղուանական» (ըստ Պլինիոսի՝ «Ալբանիայի») ափինը՝ 300 կամ 400: Սակայն թե՛ անտիկ, թե՛ միջնադարյան աղբյուրների վկայությունների համաձայն՝ կաղուանները զբաղեցրել են Կասպից ափամերձ շերտի լոկ մի փոքր հատվածը՝ Կուր և Արաքս գետերից հարավ և հարավկասպիական իրանական ժողովուրդներից հյուսիս-արևմուտք, որոնք հանվանն հիշատակված են տվյալ հեղինակների հենց նույն դրվագներում: Դրանից կարելի է ենթադրել, որ Ստրաբոնին և Պլինիոսին հասել է Պատրոկլեսի կազմած հաշվետվության որոշ չափով աղճատված տարբերակը (գուցե Էրատոսթենեսի երկում կամ դրա մի արտագրության մեջ), որտեղ աղուանական և կաղուասական ափամերձ տարածքների չափերի շփոթ է սարդել՝ անվանումների փոխատեղման ձևով. հետևաբար իրականում անհրաժեշտ է ուղղել նկատված վրիպումը և ենթադրել, որ Պատրոկլեսն աղուանական ափի համար արձանագրել է հենց շուրջ 5000 ստադիոն ձգվածություն (իսկ 300 կամ 400 ստադիոնը՝ կաղուասական ափի համար): Դա մոտավորապես համապատասխանում է հետագայում առաջացած Աղուանից թագավորության Կասպիական ափագծի ձգվածությանը (Կուրի կամ Արաքսի գետաբերանից մինչև Դերբենդի անցքը), առավել ևս, որ գրեթե նույն իրական երկարությունն ունեցող հարավկասպիական իրանական ժողովուրդների (Վրկան-Հյուրկանիայի) զբաղեցրած ափագիծը Պատրոկլեսը հաշվել էր մոտ նույնքան՝ 4800 կամ 4900 ստադիոն:

Ք. ա. IV դ. ավելի վաղ աղուանների անունը որևէ հավաստի աղբյուրում չի հանդիպում, իսկ Յասոնի և Հերակլեսի հունական առասպելների տարբերակները ներկայացնող մի քանի թվացյալ բացառություններ ակնհայտ գրական-գեղարվեստական ծագում ունեն և չեն կարող իրենց արձանագրման ժամանակից ավելի վաղ դարաշրջանի պատմական իրողությունների համար սկզբնաղբյուր համարվել: Մինևնույն ժամանակ, Ք. ա. V դ. առաջին կեսում Հերոդոտոսը Կասպից ծովի արևմտյան ափին՝ Կովկասյան լեռների շրջանում, գիտեր միայն բարբարոսական ցեղերի գոյության մասին, որոնք մաս են կազմել Աքեմենյանների տերության: Նորագույն ուսումնասիրություններում պարզարանված է, որ այս տարածքն, ամենայն հավանականությամբ, մաս է կազմել Աքեմենյան առաջին արքաների ստեղծած սատրապություններից (Հերոդոտոսի պնդմամբ՝ թվով 20, իսկ Աքեմենյանների արձանագրություններում՝ մի քանիսով ավելի) 18-րդի, որը գրավում էր Կովկասյան լեռներից հարավ մինչև Թռեղքի լեռնաշղթա (կամ գուցե՝ Վիրահայոց լեռներ) և ապա Կուրի գետագիծն ընկած տարածքը՝ Կողքիս-Կոլխիդայի սահմանից մինչև Կասպից ծով: Հերոդոտոսը տալիս է այդ սատրապության հետևյալ նկարագրությունը. «Մատիենների, սասպեյրների և այլրոդների վրա սահմանված էր 200 տաղանդ հարկ»: Այստեղ նշված երեք ցեղերից կամ ցեղամիություններից առաջինը՝ մատիենները, համապատաս-

խանում են հետագայի Վիրք (Իբերիա, Քարթլի) երկրի հարավարևմտյան հատվածի բնակչությանը և, ըստ Հեկատոնոս Միլեթցու (Ք. ա. VI դ.), հարևան էին ավելի հարավ բնակվող մոսխերին (իմա՝ մեսսետրիան հետագայի Մեսսետրում և հարակից շրջաններում)։ Ցեղերից երկրորդը՝ սասպեյրները, ըստ ամենայնի՝ կենտրոնական Վիրքի բնակիչներն էին (Կուր գետի երկու ափերին), իսկ երրորդ, այլուստ անծանոթ *ալարոդներ* անվան տակ հանդես էր գալիս վերջիններից արևելք, այսինքն՝ հետագայի Բուն Աղուանք երկրի բնակչությունը, հավանաբար Ալազան գետի միջին հոսանքի երկու ափերից մինչև Կասպից ծով։ Այս անվան մեջ առկա *ռոդ* բաղադրիչն առավել մեծ հավանականությամբ կարող է դիտարկվել որպես իրանական լեզուների «գետ», «ջուր» նշանակությամբ «ռոդ/ռուդ» քառը և կապվել Կուրի հետ։ Այդ դեպքում *ալա*՝ չպարզաբանված նշանակությամբ բաղադրիչը կարելի է հնարավոր այլ տարբերակների կողքին գնահատել իբրև հետագայի «Ալբանիա», «Աղուանք», «Առան», «Հերեթ» անվանաձևերի՝ նույնպես դեռևս վերջնականապես չպարզաբանված նշանակությամբ իմաստային հիմքերի հետ ինչ-որ կապ ունեցող։

Ուսումնասիրողներից ոմանք Հյուսիսարևելյան Այսրկովկասի և Հարավարևելյան Դաղստանի այս տարածքի նվաճումն ինչ-ինչ ենթադրությունների հիման վրա կապում են Աքեմենյան Պարսկաստանի առաջին արքաներից որևէ մեկի հետ (օր.՝ Կ. Տրևերը՝ Դարեհ I-ի, Հ. Սվազյանը՝ Կյուրոս Մեծի)։ Սակայն Հերոդոտոսին հասած տեղեկություններից մեկի հիման վրա հավանական է թվում մտածել, որ վերը նշված Աքեմենյան 18-րդ սատրապության տարածքի արևելյան մասը՝ կոլխերից (հետագայում՝ Լազիկա, Եգեթք, վաղ Սասանյան արձանագրություններում նաև՝ Մախեդոնիա-Սիկան) ու սասպեյրներից (հետագայում՝ Վիրք, Քարթլի) արևելք, մաս է կազմել դեռևս Մարերի տերության (Մեդիայի), որի վերջին արքային հաղթելուց հետո Իրանում Ք. ա. 560-ական թթ. իր տոհմի իշխանությունը հաստատեց պարսիկ Կյուրոս II Մեծը։ Դերբենդի լեռնանցքով սկյութների՝ Ք. ա. VII դ. երկրորդ կեսով թվագրվող մեծ ներխուժման մասին բավականին առարկայաբար պատմող Հերոդոտոսը գրում է. «Կոլխիսից Մեդիա ավելին չէ ճանապարհը, բայց նրանց միջև բնակվում է մի ազգ՝ սասպեյրները. սրանց միջով անցնելուց հետո կարելի է հասնել Մեդիա։ Այսուհանդերձ, սկյութներն այս ճանապարհով չներխուժեցին Մեդիա, այլ շեղվեցին դեպի վերին, շատ ավելի երկար ճանապարհը՝ Կովկաս լեռը ունենալով իրենց աջ կողմում։ Այստեղ մեդացիները ճակատեցին սկյութների դեմ և մարտում պարտվելով՝ կորցրին իրենց իշխանությունը»։ Ի դեպ՝ սկյութ-սակերի նույն արշավանքին է վերաբերում Ստրաբոնի մոտ պահպանված ուշագրավ տեղեկությունը, ըստ որի՝ «սակերը գրավեցին Բակտրիանան և ձեռք գցեցին Հայաստանի լավագույն հողը [իմա՝ երկրամասը – Ա.Հ.], որին իրենց անունից թողեցին Սակասենե անվանումը»։ Մեծ Հայքի՝ Կուրի աջափնյակում գտնվող Շակաշեն/Սակասենե գավառի մասին այս ուղիղ վկայությունից պարզ է դառնում նաև, որ անտիկ պատմական ավանդույթում պահպանված տվյալների համաձայն՝ Մարաստանի հզորության պահին (Ք. ա. VII դ. վերջ – VI դ. սկիզբ) գոյատևած Երվանդյան թագավորության ժամանակաշրջանում, երբ Կուրի ձախափնյակի արևելյան ընդարձակ հատվածը (մինչև Կովկասյան լեռներ և

Դերբենդի անցքը) արդեն մտնում էր մարական տիրույթների մեջ, այդ գետի աջափնյա երկրամասերը շարունակում էին Հայկական պետության մաս կազմել, ինչպես եղել էր դեռևս Վանի թագավորության ժամանակաշրջանում։

Գրականության մեջ նաև պարզաբանված է, որ Կուրի՝ որպես Հայաստանի և աղուանների բնակության տարածքի միջև սահմանի մասին կարելի է խոսել նաև Ք. ա. II դ. սկզբների համար, երբ աղբյուրները նկարագրում են Սելևկյաններից անկախություն ձեռք բերած հայոց երկու երկրների արքաներ Արտաշես I-ի և Զարեհի (Ծովիքում) «նվաճումները»։ Ներկայացնելով այդ մասին իրեն հասած տվյալները՝ Ստրաբոնը մանրամասն թվարկում է նրանց ձեռքբերումները Ատրպատականի մարերից, ապա իբերներից և արևմուտքի ու հարավի մյուս հարևան ժողովուրդներից, և այդ ընթացքում ոչինչ չի ասում աղուանների կամ Կուրի աջափնյա շրջանների վերաբերյալ։ Դրանից հետևում է, որ նշված շրջանները (հետագայի Ուտիքը և Արցախը) հայ վերջին Երվանդունիներից բնականոն ձևով էին ժառանգվել Արտաշեսի թագավորության մեջ։

Աղուանքի տարածքի Ք. ա. IV–I դդ. էթնիկական պատկերն առարկայորեն արտացոլում է նաև հնագիտական նյութը։ Կուրի ձախափնյակում մինչև Կովկասյան լեռների հյուսիսարևելյան փեշերը (Միջին Դաղստան) Ք. ա. V – Ք. հ. I դդ. տարածված, այսպես կոչված, «Յալոյլութփեի հնագիտական մշակույթն» էապես տարբերվում է հարևան երկրների հնագիտական նյութից և հետազոտողների կարծիքով՝ անկասկած կապված է աղուանական ցեղերի կենսագործունեության հետ։ Իսկ ժամանակով նրան գրեթե զուգահեռ և Կուրից հարավ մասնագետներն առանձնացնում են մեկ այլ՝ այսպես կոչված «Կարասային թաղումների մշակույթը» (Ք. ա. IV–III – Ք. հ. II–III դդ.)։ Իր գլխավոր գծերով վերջինս նույնանում է անտիկ Հայաստանի մյուս շրջանների (Արարատյան դաշտ, Շիրակ, Նախիջևան և այլն) հնագիտական մշակույթի հետ և այդպիսով մատնանշում ոչ միայն հայկական պետության, այլև հայ էթնոսի՝ մինչև Կուր գետ տարածված լինելը։ Հատկանշական է նաև «Կարասային թաղումների մշակույթին» բնորոշ նյութերի առկայությունը Կուրից հյուսիս, հատկապես Մինգեչաուրի հինավուրց գետանցի հատվածում (այդպես՝ նաև վերջինից հարավ կա «Յալոյլութփեի մշակույթին» հատուկ նյութի ոչ մեծ տարածվածություն), որը ցույց է տալիս հայերի որոշ ներթափանցումը Կուրից հյուսիս արդեն Ք. ա. վերջին դարերում։

2. ԱՂՈՒԱՆՔԸ Ք. Ա. I ԴԱՐՈՒՄ:

ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԱՄՐԱԳՆԴՈՒՄԸ

Ք. ա. I դ. 60-ական թթ. սկսած, դեպի արևելք Հոմեական կայսրության առաջխաղացման հետ կապված, անտիկ աշխարհը մանրամասն և բազմակողմանի տեղեկություններ ստացավ նաև Աղուանքի և նրա բնակիչների մասին։ Ըստ Ստրաբոնի՝

Ք. ա. 65 թ. Աղուանք ներխուժած և գրեթե մինչև նրա Կասպիական ծովամերձ շրջաններն անցած Պոմպեոսի լեգեոններին ուղեկցում էր նաև պատմիչ Թեոփանես Միտրիլենացին, որի կողմից շարադրված արշավանքի նկարագրությունն օգտագործեցին անտիկ հեղինակների բազմաթիվ սերունդներ: Հայոց արքա Տիգրան Մեծի և Պոնտոսի տիրակալ Միհրդատ VI Եվպատորի դեմ տարած հաղթանակներից հետո Հռոմն ամուր հաստատվեց Փոքր Ասիայում և հարաբերությունների զարգացած համակարգ ձևավորեց նրանից արևելք ընկած Մեծ Հայքի, Պարթևաստանի, Իբերիայի, Աղուանքի և այլ երկրների հետ: Անկյուրայում Օկտավիանոս Օգոստոս կայսեր անունից փորագրված լատիներեն արձանագրության մեջ խոսվում է Աղուանքի թագավորի դեսպանների գործունեության մասին, որը Հռոմի հետ դիվանագիտական հարաբերությունների առկայության տպավորություն է ստեղծում: Ք. ա. 34 թ. Աղուանքի տարածք մտան նաև Մարկոս Անտոնիոսի գորավար Պուբլիոս Կանիդիոսի լեգեոնները (արշավանքին մասնակցում էր նաև պատմիչ Քվինտոս Դելլիոսը): Դոմետիանոս կայսեր օրոք (Ք. հ. I դ. վերջ) ծովամերձ Կորուստանի շրջանում իրենց ներկայության մասին լատիներեն արձանագրություն էր թողել Ֆուլվիանոսի XII լեգեոնի ցենտուրիոնը: Ենթադրելի է, որ Հռոմի խաղաղ առաքելություններն Աղուանքում լինում էին էլ՝ ավելի հաճախ:

Անտիկ հեղինակների տեղեկատվական հնարավորությունների ընդլայնման իմաստով բնութագրական են Ստրաբոնի մտորումները. «Առավելապես մեր ժամանակակիցներն են կարող հավատոսի ինչ-որ բան հայտնել այն մասին, ինչ վերաբերում է բրիտանացիներին, գերմանացիներին և Իստրի ափերին բնակվողներին, ինչպես նաև կովկասյան ժողովուրդներին, օրինակ՝ աղուաններին և իբերներին... քանի որ վերջերս հռոմեացիները զորքով ներխուժեցին Երջանիկ Արաբիա..., այդ շրջանները ևս մեզ ավելի ծանոթ դարձան, քան մեր նախորդներին»: Իրոք, Աղուանքի ու նրա բնակիչների մասին տվյալ ժամանակի հաղորդումներն ավելի կանոնավոր պատկեր են ցուցաբերում, ի հայտ են գալիս երկրի համակարգված նկարագրություններ աշխարհագրական երկերում, Կլավդիոս Պտղոմեոսի մոտ տրված են նաև աշխարհագրական կոորդինատներ, աղուանները հիշատակվում են անգամ գեղարվեստական ստեղծագործություններում: Սկզբնաղբյուրներն այսուհետ համեմատաբար ճշգրիտ սահմանագատում են արևելքում մինչև Կասպից ծովի ընդարձակ ափագիծը (Կուրի գետաբերանից մինչև Դերբենդի անցքը) հասնող Աղուանից թագավորությունն իր հարևան երկրներից՝ հյուսիսում՝ Ասիական Սարմատիայից (Կովկասյան լեռների շղթաներից մեկով), հարավում՝ Մեծ Հայքից (Կուրի ընթացքով), արևմուտքում՝ Իբերիայից (Ալազան և Կամբյուսես-Իորի վտակների միջնահովիտների հատվածով): Ստրաբոնը, հղելով Պոմպեոսի ուղեկիցներին, նշում է այդ երկրի առանձնահատուկ բերքառատությունը: Պտղոմեոսը թվարկում է Աղուանքով հոսող մեկ տասնյակի չափ գետերը և երկրի 29 քաղաքները՝ նշելով դրանց կոորդինատները: Պլինիոս Ավագը թվարկում է մի քանի գետանուն (այդպես նաև Ստրաբոնը) և նշում թագավորության գլխավոր քաղաքի, այսինքն՝ մայրաքաղաքի անունը՝ Կաբալակա (այն հետագա հայկական աղբյուրներում կոչվում էր Կապաղակ, իսկ արաբա-պարս-

կական հեղինակների մոտ՝ Կաբալա): Ըստ Ստրաբոնին հասած տեղեկությունների՝ աղուանները երկրպագում էին Հելիոսին (այսինքն՝ Արևի աստված Միհրին), Ջևա-Դիոսին (Արամազդ) և ամենից շատ՝ Սելենեյին (այսինքն՝ Լուսնի աստվածուհուն՝ Անահիտին), որի սրբատեղին գտնվում էր Իբերիայի սահմանից ոչ հեռու:

Նախորդ ենթազվածքն արկարկված աղբյուրագիտական ոչ շատ հարուստ նյութի հետ հնագիտական գտածոների համադրումը ուսումնասիրողներից ոմանց հիմք է տվել ենթադրելու, թե Ք. ա. IV-III դդ. անտիկ աղբյուրներին հայտնի Աղուանքում արդեն միացյալ թագավորություն էր ձևավորված: Սակայն Ստրաբոնի «Աշխարհագրության» հայտնի տեղեկության ուշադիր վերլուծությունը ստիպում է համարել, որ թագավորության ձևավորումը հիմնավորված կլինեք թվագրել միմյայն Պոմպեոսի արշավանքներին անմիջապես նախորդած ժամանակահատվածով, այսինքն՝ Ք. ա. I դ. սկզբներով: Աղուանքին նվիրված գլխում հույն աշխարհագետն, ի թիվս այլ ուշագրավ տվյալների, գրում է. «*հիմա բոլոր [այբրաններ]ի վրա մեկն է թագավորում, իսկ սրանից առաջ ամեն մի առանձին լեզու [ունեցող ցեղ] առանձին էր թագավորվում, լեզուներն էլ քսանվեցն էին՝ միմյանց միջև հաճախակի առնչություններ չլինելու պատճառով*»: Ե՛վ ժամանակային միջակայք, և՛ պատճառ մատնանշող յուրահատուկ տրամաբանական կառուցվածք ունեցող («հիմա ... իսկ սրանից առաջ ... պատճառով») այս վկայությունն, անշուշտ, պետք է վերագրել Պոմպեոսի ուղեկիցներին, քանի որ նրանք իրենց առջև ոչ թե աղուանական ցեղերի միություն էին տեսել կանգնած, այլ արդեն միասնական թագավորություն: Սակայն միաժամանակ կարևոր է, որ տասնամյակներ անց ինքը՝ Ստրաբոնը, տեղին է գտել շարադրել այն հենց նույնատիպ կառուցվածքով («հիմա ... սրանից առաջ»): Դրանից բխում է, որ մեկ թագավորի իշխանության ներքո աղուանից 26 ցեղերի միավորումը տեղի էր ունեցել Ք. ա. 66-65 թթ.՝ հռոմեա-աղուանական բախումներից ոչ շատ առաջ, կարելի է ասել՝ ինչ-որ իմաստով գրեթե Պոմպեոսի ժամանակակիցների «աչքի առջև», որոնց, կարծեք թե, չափազանց լավ էր ծանոթ նախորդ, բաժան-բաժան լեզուներով ու թագավորիկներով ցեղային վիճակը՝ իր ակնհայտ ու թերևս մինչև Ստրաբոն շարունակական (ցեղերի՝ միմյանցից կտրվածության) գլխավոր պատճառով:

Ինչ վերաբերում է հնագիտական հետազոտություններից ի հայտ եկող և սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացածության որոշակի աստիճան մատնանշող նյութական մշակույթի հուշարձաններին, որոնց վրա հղում են կատարում Աղուանքում ավելի վաղ շրջանում (Ք. ա. IV-II դդ.) միասնական թագավորություն ենթադրող մասնագետները, ապա հարկ է նշել, որ հասարակական զարգացման տվյալ մակարդակից ինքնաբերաբար ամենևին չի բխում անկախ և միասնական պետության գոյությունը: Մոտավորապես զարգացման նույն մակարդակի վրա էին գտնվում Մարական և Աքեմենյան տերություններին ենթակա և հնագիտորեն լավ ուսումնասիրված այլ երկրներ ևս (Պարթևք, Բակտրիա, Խորեզմ, Արիա, Վրկան, Կադուսիա և այլն), որտեղ Աքեմենյանների կամ Սելևկյանների տիրապետության ավարտից հետո անմիջապես չեն ծագել ինքնիշխան պետություններ, իսկ դրանց ծագումը այս կամ այն չափով իր արտացոլումն է գտել գրավոր աղբյուրներում:

Ք. ա. III դ. հեղինակներ Պատրոկլեսը և Էրատոսթենեսը աղուաններին միևնույն շարքում էին հիշատակում կադուսների, ամարդների, անարիակների և վրկանների հետ, որոնցից ոչ մեկն անկախ պետականություն չէր ձևավորել ո՛չ այդ ժամանակ, ո՛չ հետագայում՝ մինչև Պոմպեոսի արշավանքները: Արդարացված է նաև մեկ այլ դիտարկում. Աղուանից միասնական պետության ձևավորումը Ք. ա. I դ. սկզբից ոչ ավելի վաղ ժամանակի վերագրելու օգտին է վկայում այն, որ Աղուանքի տարածքում հայտնաբերված մակեդոնական, Սելևկյան և պարթևական III–I դդ. դրամների թվում ի հայտ եկած տեղական թողարկման Սելևկյան դրահամաների նմանողությամբ նմուշները թվագրվում են Ք. ա. I դ. լոկ երկրորդ կեսով:

Աղուանից նորակազմ թագավորության առաջին բախումը հռոմեական զորքերի հետ տեղի ունեցավ Ք. ա. 60–ական թթ. սկզբին հայոց արքայի հավաքած դաշնակցային բանակի կազմում՝ Լուկոլլոսի լեգեոնների դեմ մղված ճակատամարտերում: Ըստ Պլուտարքոսի՝ Միհրդատ Եվպատորին հետապնդելու պատրվակով Ք. ա. 69 թ. զարնանը Հայաստանի սահմանները ներխուժած Լուկոլլոսի դեմ Տիգրանակերտի մատույցներում մեծ ճակատամարտի նախապատրաստվող Տիգրան II–ի մոտ «իրենց բոլոր ուժերով հավաքվեցին հայերն ու կորդվացիները, ներկայացան մեղերի և աղիաբեցիների ամբողջ բանակները իրենց թագավորների գլխավորությամբ, Բաբելոնի ծովի [կողմերի]ց եկավ արարների բազմությունը, իսկ Կասպիցի [կողմերի]ց՝ արբանների բազմությունը և այբանների հարևանությամբ բնակվող իբերներինը, ժամանեցին ոչ քիչ թվով Արաքսի [իմա՝ Օքսի] կողմերում անասնապահությամբ ապրող [և] թագավորներ չունեցող ցեղեր, որոնց համոզել էին պարզվելու ու նվերներով»: Պատմիչի խոսքերից արդարացիորեն եզրակացվում է, որ ի տարբերություն հանվանե նշված Մարական Ատրպատականի և Աղիաբենեի՝ Աղուանքի և Վիրքի բանակները Տիգրանի մոտ էին հասել առանց իրենց թագավորների, թեպետև, ըստ ամենայնի, նույնպես լրիվ կազմով: Միաժամանակ դրանից չի կարելի բխեցնել, թե Աղուանքում այդ ժամանակ չի եղել կամ անգամ թույլ է ձևավորված եղել թագավորական իշխանությունը, քանի որ «թագավորներ չունեցող» դաշնակից ցեղերի մասին (Օքս–Արաքսի ափերից, այսինքն՝ այժմյան արևմտյան Թուրքմենստանի կողմերից) աղբյուրը նշում է հատուկ ձևով: Պարզ է նաև, որ ի տարբերություն վերջինների՝ Աղուանքը մյուս թվարկված թագավորությունների նման մասնակցել է Տիգրանի գործողություններին դաշնակցային հիմունքներով, այլ ոչ թե «պարզվելու ու նվերներով»:

Տիգրանակերտի ճակատամարտն ավարտվեց հռոմեացիների հաղթանակով, սակայն հայոց արքան կարողացավ ապահովել իր տարացեղ բանակի կորիզի նահանջը երկրի խորքերը և պահպանեց այն: Դրա շնորհիվ հաջորդ տարվա սեպտեմբերին Արածանիի ափին տեղի ունեցած ճակատամարտում Տիգրանը Միհրդատի հետ միասին կասեցրեց Լուկոլլոսի առաջխաղացումը և ստիպեց նրան հեռանալ երկրի սահմաններից դեպի Միջագետք: Թեպետ առկա աղբյուրներն ուղղակի նշում չեն պահպանել, սակայն նրանց հաղորդումների մեջ հակառակ տեղեկության բացակայության հիման վրա կարելի է եզրակացնել, որ Արածանիի վերնահովտում ևս աղուանական բանակը հայոց արքայի մյուս դաշնակիցների հետ

միասին մասնակցել է հռոմեացիների դեմ մղված հաղթական ճակատամարտին (Պլուտարքոսի մոտ պահպանվել է միայն իբերների և մարդերի թեթև հեծելազորի մասին հիշատակություն):

Լուկոլլոսին փոխարինած հռոմեացի զորավար Գնեոս Պոմպեոսը երկու տարի անց՝ Ք. ա. 66 թ., կարողացավ մի շարք հաղթանակներ տանել Միհրդատ Պոնտացու և Տիգրան II–ի զորքերի նկատմամբ, որի շնորհիվ գրավեց հայոց Արտաշատ մայրաքաղաքը, ստիպեց Մեծ Հայքի արքային՝ վճարելու ռազմատուգանք և համաձայնելու Հռոմի «բարեկամի ու դաշնակցի» պարտադրված կարգավիճակին: Դրանից հետո Պոմպեոսի լեգեոնները վերսկսեցին Միհրդատի հետապնդումը, որը Հայաստանի հյուսիսային շրջանների և Վիրքի վրայով անցել էր Լազիկա–Կողքիս, այնտեղից էլ՝ Պոնտոս: Աղբյուրների տեղեկությունների համադրմամբ հնարավոր է ենթադրել, որ Աղուանից և Վրաց թագավորությունները ոչ թե պարզապես դաշնակցում էին Տիգրան II–ի հետ, այլ մտնում էին ստեղծված մի ավելի լայն դաշինքի մեջ՝ Պոնտոսից մինչև Ատրպատական, որի անդամներից մեկի՝ Մեծ Հայքի դուրս հանվելը չէր նշանակում մյուսների դաշնակցային պարտավորությունների դադարեցում: Թերևս, էապես սրանով պիտի բացատրվեն Պոմպեոսի արշավանքները Աղվանքի ու Վիրքի դեմ և վերջիններիս հետևողական մարտաշունչ դիրքորոշումը Հայաստանին արդեն հնազանդեցրած հռոմեացիների նկատմամբ:

Ըստ բազմաթիվ հեղինակների մոտ պահպանված պատմության՝ Պոմպեոսն իր հիմնական ուժերով 66 թ. ձմռան սկզբին հասավ Մեծ Հայքի և Աղուանքի՝ Կուր գետով անցնող սահմանին, սակայն որոշեց չանցնել այն, այլ ձմեռել Կուրի աջափնյա դաշտավայրում՝ ոչ հեռու նաև Վիրքի սահմաններից: Անկասկած, այդ տեղանքը պետք է համադրել հայոց թագավորների խաղիսաղի ձմեռոցի հետ՝ Ուտիք նահանգի արևմուտքում (Հախում վտակի գետաբերանի շրջանում), որի մասին հետագայում հայտնում է Ագաթանգեղոսը: Որոշ ուսումնասիրողներ ձիշտ չեն մեկնաբանել սկզբնաղբյուրների վկայությունը և այդ տեղը նույնացրել են Մեծ Հայքի Անահտական կոչված գավառի հետ: Սակայն ավելի մանրամասն վերլուծությունը ցույց է տալիս, որ աղբյուրները նշում են Պոմպեոսի որոշման մասին՝ լեգեոնները բաժանել երկու մասի, որոնցից մեկը ձմեռեց Անահտական գավառում (Փոքր Հայքի սահմանի մոտ), իսկ երկրորդն՝ իր գլխավորությամբ՝ Աղուանքի սահմանի վրա՝ Կուրի հարավային ափերին (երեք մասի բաժանված): Աղբյուրները գրում են, թե այստեղ հռոմեացիները «ուխտադրուժ» հարձակման ենթարկվեցին Կուր գետի (բնագրերում պահպանվել է գետանվան Կյուռնոս ձևը) այս ափն անցած Աղուանից թագավոր Օրոյսի (նաև՝ Օրոյգ, Օրոյսես) բանակի կողմից: Վերը կատարված ենթադրությունը շարունակելով՝ կարելի է մտածել, որ Պոմպեոսը, թերևս, դիմել էր Օրոյսին՝ Տիգրան Մեծի օրինակով հպատակվելու և Միհրդատ Եվպատորի հետ հակամարտության մեջ Հռոմի կողմն անցնելու առաջարկով: Դժվար չէ ենթադրել, որ այդ դիմումը պիտի ավարտվեր՝ հակառակ դեպքում պատերազմի պատրաստվելու սպառնալիք–առաջարկով. արդյունքում Աղուանքը նախընտրեց վերջինը: Կուրի աջ ափին Սատուրնալիաների տոնի օրերին տեղի ունեցած ծանր ճակատամարտն ավարտ-

վեց հռոմեացիների հաղթանակով, որից հետո պարտված աղուանները նահանջեցին Կուր գետի ձախափնյակ և, ըստ Պլուտարքոսի, կնքեցին «դաշնակցության ու բարեկամության» ստանդարտ պայմանագիրը՝ դրանով թույլ տալով հռոմեացիներին անխափան ներխուժել Վիրք, անցնել Կողքիս և փորձել հասնել դեպի Մեովտիս – Ազովի ծով նահանջող Միհրդատին:

Սակայն, չնայած կնքված պայմանագրին Աղուանքը հաջորդ տարի անսպասելի ներխուժման ենթարկվեց Պոմպեոսի կողմից, որը Վիրքում, Լագիկայում ու Բոսպորում Միհրդատին անհաջող հետապնդելուց հետո մոտավորապես նույն հատվածում խախտեց Կուրով անցնող՝ Մեծ Հայքի և Աղուանից թագավորության սահմանը: Ըստ պահպանված նկարագրությունների՝ հռոմեացիները, գաղտնի մնալու նպատակով երկարատև ու դժվարին գիշերային անցումներ կատարելով, հասան նախ Կամբյուսես գետին (=Իորի), ապա՝ երկրի արևմտյան տափաստանային Կամբեճան գավառը կենտրոնական շրջաններից բաժանող Ալագանին (ըստ պահպանված հատվածների՝ Աբանտոս հորջորջումով), որից այն կողմ տեղի ունեցան երկու վճռական ճակատամարտերը: Դրանցից առաջինը, հավանաբար, տեղի էր ունեցել աղուանական բանակի փոքրաթիվ ուժերի դեմ, որոնց գլխավորում էր Աղուանից թագավորի՝ անունով հիշատակված Կոտիս (կամ Կոսիս) եղբայրը. ըստ աղբյուրների վկայության՝ Պոմպեոսն անձամբ մենամարտի դուրս եկավ նրա դեմ և կարողացավ նիզակահար անել: Երկրորդ ճակատամարտն արդեն Օրոյս արքայի գլխավորած ամբողջ աղուանական զորքի դեմ էր, այսինքն, ինչպես աղբյուրներն են նշում՝ 60 հազար հետևակի և 12 կամ 22 հազար հեծելազորի: Իբրև մանրամասնություն նշվում է աղուանների բանակում ամազոնուհիների ներկայությունը, թեպետ միաժամանակ ասվում է, որ հաղթողները ճակատամարտից հետո կանացի ոչ մի դիակ չհայտնաբերեցին, այլ միայն ինչ-որ կանացի կիսակոշիկներ: Լրացուցիչ հայտնվում է, որ հռոմեացիների թվաքանակը գիջել է Օրոյսի բանակին, թեպետ ուսումնասիրողները լուրջ հիմքեր են տեսնում կասկածելու դրանում: Ըստ էության, հաջողություն էր ապահովել Պոմպեոսի հիմնական մարտավարական հնարքը՝ արշավանքի սկզբից մինչև վճռական բախումը անակնկալի բերել հռոմեական մեծաքանակ ուժերի չսպասող հակառակորդին: Իզուր չէ, որ մարտնչող լեգեոնները բացականչում էին «Է՛՛ո Սատուրնայիա»՝ ցույց տալով, որ իրոք նույն կերպ են վրեժ լուծում նախորդ տարի աղուանների «գաղտագողի» հարձակման դիմաց Կուրի ափերին:

Հաղթական ճակատամարտից հետո հռոմեացիները շարժվեցին Կասպից ծովի ուղղությամբ, սակայն շուտով դադարեցրին առաջխաղացումը՝ չհասնելով նրան (Պլուտարքոսի խոսքերով՝ մինչև ծովափ մնացել էր միայն 3 օրվա անցում): Պարտված, սակայն գերվելուց խուսափած Օրոյս թագավորը նորից հաշտություն խնդրեց և ստացավ այն իբրև Պոմպեոսի ողորմածություն: Գրելով այդ մասին՝ Դիոն Կասսիոսը հիշատակում է նաև Կասպից ծովի ափամերձ ցեղերի հետ հաղթողների պայմանադրությունների մասին («Պոմպեոսը ... այբաններին խաղաղություն պարգևեց, ինչպես նաև մի շարք այլ ցեղերի հետ, որոնք բնակվում են այն տարածքի վրա, որն ընկած է Կովկասից մինչև Կասպից ծով, ... դաշինք կնքեց, երբ սրանք իր մոտ այդ նպատակով դեսպաններ ուղարկեցին»): Ափամերձ երկրամասի ինչ-որ կարգի ինքնուրույնության մասին վկայող՝ թերևս նույն աղբյուրի (գուցե՝ Թեոփանես Միտիլենացու) հաղորդումների արդյունքն է թվում նաև Ստրաբոնի արտահայտությունը Աղուանքի ծովափնյա Կասպիանե մարզի մասին («Այբանների [մի] երկրամասն է նաև Կասպիանեն՝ անվանված, ինչպես և ծովը՝ կասպերի ցեղից, որը ներկայումս անհետացել է»): այդ աղբյուրին աշխարհագետն ուղիղ հղում է տալիս, երբ իբրև աղուանների հյուսիսարևելյան հարևան նշում է գելերի ու լեգերի ցեղը («Այբանիայից վեր լեռներում, ըստ պատմածների, բնակվում են ամազոնուհիները: Թեոփանեսը, որ Պոմպեոսի հետ մասնակցել է արշավանքին և եղել այբանների մոտ, ասում է, որ ամազոնուհիների ու այբանների միջև բնակվում են գելեր և լեգեր սկյութները»), այսինքն՝ ներկայիս լեզգի ժողովրդի վաղ նախնիներին: Իսկ ուշ հռոմեացի հեղինակներ Լուցիոս Ֆլորոսի և Ալբեյիոս Վիկտորի (IV դ.) ներկայացմամբ՝ Պոմպեոսին հնազանդված Այսրկովկասի ժողովուրդների թվում հայերից, իբերներից, կոլխերից, հենիոխներից ու աղուաններից բացի եղել են իբրև թե նաև «կասպերը»: Թեպետ այդ հեղինակները վերապատմել են Ք. ա. I դ. պատմիչ Տիտոս Լիվիոսի երկի՝ մեզ չհասած մի զլուխը, սակայն հնարավոր է նաև ենթադրել, որ տվյալ դեպքում նրանք ոչ թե բառացի են կրկնել աղբյուրում եղած ցանկը, այլ ներկայացրել են Ք. հ. III դ. սկզբի քաղաքական փոփոխություններին հաջորդած իրավիճակը (երբ մասնավորապես Աղուանից թագավորությունը կորցրել էր իր տարածքի ծովափնյա կեսը): Դա ավելի լավ է արտահայտված IV դ. մյուս հռոմեացի պատմիչի՝ Ամմիանոս Մարկելինոսի մոտ, ըստ որի գեղարվեստապաճույճ ներկայացման (Հուլիանոս կայսեր ճառի մեջ)՝ Պոմպեոսն «անցել էր այբանների երկրով և մասսագետների [իմա՝ մասքոնների], որոնց այժմ այբաններ ենք կոչում, ջախջախել էր նաև այդ ժողովրդին ու տեսել Կասպիական լիճը»:

Պոմպեոսի արշավանքների շնորհիվ Հռոմը հաստատապես ամրապնդվեց Այսրկովկասում՝ հենվելով «դաշնակից և բարեկամ» հռչակված տեղական թագավորների իշխանության վրա, այդ թվում՝ Աղուանից արքայի: Սակայն այդ «բարեկամությունը» չխանգարեց, որպեսզի Ք. ա. 61 թ. Հռոմում տեղի ունեցած հաղթահանդեսում Պոմպեոսի հետևից տարվեին, ի թիվս մի քանի նվաճված թագավորների ու նրանց հարազատների, նաև Աղուանքից տարված երկու պատանդները (Վիրքից այդպիսիք երեքն էին), որոնց Ապպիանոսը կոչում է «այբանական առաջնորդներ» («հեգեմոններ»):

Աղուանքի մասին անտիկ աղբյուրների հաջորդ տեղեկությունը վերաբերում է Ք. ա. 30-ական թթ., երբ Մարկոս Անտոնիոսը հռոմեական դիրքերն ուժեղացնելու համար փոփոխական հաջողությամբ փորձում էր Պարթևքի հզորացած տերությունից կտրել Հայաստանը (ուր թագավորում էր Արտավազդ II-ը) և հարևան այսրկովկասյան երկրները: Այստեղ նա լուրջ դիմադրության հանդիպեց, որից հետո նրա լեգեոնները Ք. ա. 34 թ. Կանիդիոս զորավարի գլխավորությամբ ստիպված եղան արշավել Հայաստանով մինչև Կովկասյան լեռները, սկզբում՝ Վիրք, ապա՝ Աղուանք, ուր թագավորում էր Ջոբերը (Ջոբերոս): Ըստ Դիոն Կասսիոսի՝ «Կանիդիոս

Կրասսոսը, արշավելով իբերների դեմ, այդ կովում հաղթեց նրանց թագավոր Փառնարագոսին, ստիպեց նրան դաշնակից դառնալ և, նրա հետ միասին ներխուժելով հարևան Ալբանիա և հաղթելով սրանց ևս ու սրանց թագավոր Ջորերոսին, սրանց նույնպես իր կողմը գրավեց»: Ստրաբոնի մի արտահայտությունից երևում է, որ Աղուանից թագավորությունում այս պարտությանը հաջորդած շրջանում ինչ-որ պարբերականությամբ հոռմեական կուսակալներ են նշանակվել (այդպես՝ նաև Հայաստանում ու Վիրքում), ամենայն հավանականությամբ՝ զինվորական:

Մովսես Խորենացու մոտ պահպանվել է Ք. ա. 30-ական թթ. Հռոմի դեմ Արտավազդ II-ի հետ աղուանների դաշնակցությանը վերաբերող հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «*գայրացեալ իմա՛ Արտաւագղը՛՝ հրահան տայր զար յարուցանել զքիբաւորս Ատրպատական նահանգին եւ զընակիչս լերինն Կաւկասո՛՛ հանդերձ Աղուանիս եւ Վրասք [եւ Խաղտեաւք], խաղայ իջանէ ի Միջագետս եւ հայրածական առնէ զգարս Հռոմայեցոց»։ Այս տեղեկության պատմական հավաստիության խնդրին անհրաժեշտ է որոշակի վստահությամբ վերաբերվել, քանի որ Պատմահայրն, ամենայն հավանականությամբ, վերցրել է այն Ք. հ. III դ. ժամանակագիր Հուլիոս Աֆրիկանոսի հինգերորդ գրքից (պահպանված՝ միայն հատուկենտ կտորներով), որն, ինչպես պարզ է դարձել վերջին տարիների ուսումնասիրություններից, իրոք պարունակել է Խորենացու մոտ մատնանշված (զլ. ԲԺ) և վերարտադրված պատմությունները Մեծ Հայքի Արտաշես I, Տիգրան II և Արտավազդ II արքաների մասին:*

3. ԱՂՈՒԱՆ-ՔԸ I-III ԴԱՐԵՐՈՒՄ

Ք. ա. I դ. սկզբներին իր գերիշխանությունը մերձավորարևելյան տարածաշրջանում լիովին հաստատած Հռոմեական կայսրության արտաքին քաղաքականության գլխավոր գործառույթներից մեկը Հյուսիսային Կովկասից եկող քոչվոր ժողովուրդների ավերիչ հարձակումներից պաշտպանության ապահովումն էր, որի պատասխանատվությունը մինչ այդ կրում էին միայն Հայաստանը և Իրանը (այդ ոլորտում լուրջ ավանդույթներ էին ձևավորվել դեռևս Մարական և Աքեմենյան տերությունների ժամանակներից): Աղուանքը և նրա ժողովուրդները երկար դարեր մեծ դեր էին խաղալու «Կասպիական» կամ «Աղուանական» դարպասներ կոչված Դերբենդ-Չողի անցքի պաշտպանության գործում: Նման դերակատարում ուներ նաև հարևան Վիրք-Իբերիան, որի տնօրինության տակ էր գտնվում Դարյալի լեռնանցքը կամ «Ալանաց դուռը» (այն ևս աղբյուրներում երբեմն կոչվում էր «Կասպիական դուռ»): Դարասկզբին Կայսրությունը հասել էր նրան, որ Կովկասյան լեռնանցքների պաշտպանության խնդրում Պարթևքի և Հայաստանի դերակատարումն էապես թուլացել էր, և դրա պատասխանատվությունը լիովին անցել էր Հռոմի «բարեկամի և դաշնակցի» կարգավիճակում հանդես եկող Վիրքին ու Աղուանքին: Հռոմեացի պատմիչ Տակիտոսի խոսքերով՝ տարածաշրջանում «թագավորում էին արտաքին

տերություններից մեր հզորության շնորհիվ պաշտպանված իբերների, ալբանների և մյուս [ժողովուրդների] թագավորները»:

Մյուս կողմից՝ նշված գործառույթի իրականացման բովում հմտացած Աղուանքն ու Վիրքն ինքնուրույն գործոն էին դարձել և լուծում էին նաև սեփական ժողովուրդների ու պետականությունների հզորացման խնդիրը: Դարասկզբին Աղուանքի ինքնուրույնության մասին մի վկայություն է պահպանել Տակիտոսը: Նրա խոսքերով՝ Պարթևքում, ապա Մեծ Հայքում թագավորած և գահընկեց արված, ապա հոռմեացիների կողմից Կիլիկիայում պահվող Վոնոն Արշակունին 19 թ. փորձեց իր աքսորավայրից փախչել Հայաստան (ձանապարհին նա սպանվեց), որպեսզի անցնի «այնտեղից ալբանների և [կամ] հենիոխների, և [ապա] իրեն արյունակից սկյութական թագավորի մոտ»: 34 թ. Աղուանքն ու Վիրքը Հռոմի օգնությամբ պատերազմի մեջ մտան Պարթևքի դեմ և կարողացան կասեցնել Արտավան III-ի (12-38 թթ.) փորձերը՝ ամրապնդելու իր գերիշխանությունը Հայաստանում, որտեղ թագավոր էր հռչակվել նրա որդի Արշակը: Այդ պատերազմում Վիրքը Դարյալով ստացավ հյուսիսկովկասյան ալանական ցեղախմբերի օգնությունը, որոնք ավերածություններ գործեցին Հայաստանում և Ատրպատականում: Ըստ Հովսեփոսի՝ «Տիրերիոս [կայսր]ը թուղթ է ուղարկում [Ատրիքի կառավարիչ] Վիտելիոսին՝ հրահանգելով նրան բարեկամություն հաստատել պարթևների թագավոր Արտաբանոսի հետ... [դրանից բացի նա] մեծ զումարներ տալով համոզում է և՛ իբերների, և՛ ալբանների թագավորներին՝ առանց վարանելու պատերազմի ելնել Արտաբանոսի դեմ: Իսկ նրանք թեև դեմ կանգնեցին, սակայն, Կասպյան դռները բաց անելով ալանների առաջ, իրենց երկրի միջով ձանապարհ տվեցին նրանց Արտաբանոսի դեմ»: 35 թ. Վիրքի թագավոր Փարասման (Փարսման) Փառնավազյանը, որն ազգակից էր հայ Արտաշիսյան արքաներին, կարողացավ թունավորել տալ Հայաստանի պարթև թագավոր Արշակին, և վրաց-աղուանական մեծաքանակ զորքով մտնելով երկիր՝ գրավեց Արտաշատ մայրաքաղաքն ու հայոց գահին բազմեցրեց իր եղբայր Միհրդատին: Հայաստանի և Պարթևքի դեմ այս պատերազմին մասնակցած Աղուանից թագավորը, որի անունն աղբյուրներում բացակայում է, Կասպից ծովի ափով բաց էր թողել սարմատական դաշնակից ցեղերին՝ միաժամանակ փակելով մյուսների ձանապարհը, որոնք գալիս էին կովելու պարթևների կողմում: Այդպես իբերներն ու աղուանները հյուսիսկովկասյան ցեղերի օժանդակությամբ շահեցին պատերազմը և պարթևա-հայկական զորքերի դեմ վճռական ճակատամարտում սպանեցին Արտավանի մյուս որդի Օրողեսին, որը պետք է փոխարիներ Արշակին հայոց գահի վրա:

Աղբյուրներն արձանագրում են նաև Հռոմի օժանդակությամբ ուժեղացած Աղուանքի և Վիրքի միջև առկա հակասություններն ու դրանց հանգուցալուծման որոշ դրվագներ, որոնցից ամենահայտնին I դ. 50-ական թթ. իբերա-աղուանական պատերազմն էր: Ըստ Տակիտոսի տեղեկությունների՝ վրաց («Հիբերիայի») թագավոր Փարասմանը 51 թ. պատերազմ էր սկսել Աղուանքի դեմ, օգնության խնդրանքով դիմել Կայսրությանը և, չնայած վերջինիս մերժմանը, հաղթանակ տարել: Դրա հետևանքով երկու երկրների միջև սահմանը տեղափոխվել էր ավելի արևելք և

հասել Ալագան գետին (հետագայում այդ գրավված տարածքը՝ Կամբեձան գավառը, վերադարձվեց Աղուանից թագավորությանը): Հռոմի դաշնակիցների միջև այսպիսի հակասությունների պատճառներից մեկը պետք է համարվի նաև Պարթևաստանի քաղաքականության կենսունակությունը, որն այդ շրջանում լիովին ընդունելի էր Հայաստանի համար: Դրա արդյունքում Մեծ Հայքում այնուամենայնիվ հաստատվեց պարթև արքայից արքա Վաղարշ I-ի (51-75 թթ.) եղբայր Տրդատ I-ի թագավորությունը, որը 62 թ. Հռանդեայի համաձայնագրի շրջանակներում վավերացվեց Ներոն կայսեր կողմից:

Դրան հաջորդող շրջանում Տակիտոսը, Սվետոնիոսը և Դիոն Կասսիոսն արձանագրել են դեպի Աղուանք և «Կասպիական դարպասներ» արշավելու համար Ներոնի լուրջ նախապատրաստական աշխատանքները: Առաջինի խոսքերով՝ «պատրաստվելով այրանների դեմ պատերազմի՝ [կայսրը իր հավաքած բազմաթիվ լեգեոնները] ուղարկեց դեպի Կասպիական անցքը, սակայն ճանապարհից հեռու կանչեց՝ Վինդեքսի ապստամբությունը ճնշելու»: Ներոնի նպատակակետի տակ այս դեպքում, անկասկած, պետք է ընկալել Դերբենդի անցքը, հետևաբար նաև արձանագրելի է, որ Հռանդեայի պայմանագրով Հռոմը պահպանել էր իր իրավունքներն ու պարտականությունները Կովկասյան լեռնանցքների պաշտպանության խնդրում, ինչը կարող էր հաջողությամբ իրականացվել միայն Աղուանից և Վրաց թագավորությունների հետ համագործակցելով: Ներոնի մեծ արշավանքը չիրագործվեց կայսրության արևմուտքում 68 թ. բռնկված ապստամբության պատճառով: Փոխարենը՝ 72 թ. հետևեց Դարյալով անցած հյուսիսկովկասյան պանական ցեղերի ասպատակությունն Այսրկովկաս, Հայաստան (ուր թագավորում էր Տրդատ I-ը) և Ատրպատական (Մեդիա): Եվ միայն տարիներ անց Դոմետիանոս կայսեր (81-96 թթ.) ուղարկած զորքերը հասան Կասպիական ծովափին: Վերջինիս օրոք էր ծովամերձ Կորուստանի շրջանում լատիներեն արձանագրություն թողել Ֆուլվիանտի XII լեգեոնի հրամանատար Հուլիոս Մաքսիմոսը:

Հարկ է նշել, որ Դերբենդի պաշտպանության հարցում Հռոմի ստեղծած համակարգում որոշակի դեր էր կատարում նաև Մեծ Հայքի թագավորությունը: Դրա մասին տեղեկություններ են պահպանվել ոչ միայն հունա-հռոմեական պատմիչների, այլև Մովսես Խորենացու մոտ: Պատմահայրն արձանագրել է Տրդատ I-ի (Արտաշես անվան տակ) բախման պատմությունը հյուսիսկովկասյան պանների հետ, ինչպես նաև II դ. երկրորդ կեսի թագավորների՝ Վաղարշ I-ի և Խոսրով I-ի պատերազմներն Աղուանքում և «Ճորա դռնից» այն կողմ, ընդ որում՝ երկու դեպքում էլ նշվում է տվյալ խնդրում հայ-հռոմեական դաշնակցության մասին: Իսկ հունա-հռոմեական պատմիչները վկայում են Կովկասյան լեռնանցքների պաշտպանությանը Աղուանքի թագավորների մասնակցության մասին, սակայն, ցավոք, ոչ մի անգամ չեն նշելով նրանց անունները: Հայտնի են Տրայանոս կայսեր (98-117 թթ.) ջանքերը Աղուանքը պաշտպանական այդ համակարգում հաստատուն պահելու ուղղությամբ, որի համար նա ստիպված է եղել թագավորական գահին դնել իր թեկնածուին: Եվտորպիոսի և Ռուփոս Փեստոսի նույնանման խոսքերով՝ «Տրայանոսը Հայաստանը ետ իյեց պարթևներից... Նա այրաններին թագավոր տվեց, իսկ իրերների, սավրոմատների,

բուսպորցիների, արաբների, օսրոյենցիների ու կոլխերի թագավորներին [իր] ենթակայության տակ առավ»: Վերջին փաստը ստիպում է ենթադրել, որ Աղուանքի անանուն թագավորը պարթևների նկատմամբ Հռոմի հաջողությունների այս շրջանում չէր կարող պարթև Արշակունի լինել, ուստի՝ ավելի հավանական է նրա պատկանելը վաղնջական արքայական տոհմին:

Տրայանոսին հաջորդած Հադրիանոս կայսեր (117-138 թթ.) իշխանության ավարտին՝ 135 կամ 136 թ., կրկնվեց դեպի Այսրկովկաս պանների ներխուժումը, որոնց համար Դիոն Կասսիոսը ծանոթագրում է. «Սրանք մասսագետներ են»: Կրկին Դարյալով անցած (Փարասման II Վրաց թագավորի թողտվությամբ) տափաստանաքանակների արշավանքը «մեծապես վնասեց Ալբանիային և Մեդիային [Ատրպատականին], շոշափեց նաև Հայաստանն ու Կասպադովկիան»: Ըստ Դիոն Կասսիոսի հետագա խոսքերի՝ պատերազմը դադարեց միայն Վաղարշ թագավորի (Մեծ Հայքի) նվերների շնորհիվ, ինչպես նաև Կասպադովկիայի հռոմեական կառավարիչ Ֆլավիոս Արիանոսի (ըստ երևույթին՝ լուրջ գործողությունների պատրաստված) վախից: Հադրիանոսի կենսագիր Էլիոս Սպարտիանոս պատմիչի խոսքերով՝ կայսրն «ամենաջերմ բարեկամություն էր պահպանում ալբանների ու իրերների հետ և առատ ընծաներ տալիս նրանց թագավորներին, թեպետ նրանք չէին բարեհաճում գնալ նրա առջև»: Ենթադրվում է, որ II դ. երկրորդ կեսին և III դ. սկզբին ևս Աղուանքը, նույն կերպ, ինչպես հարևան Մեծ Հայքը և Վիրքը (որտեղ հռոմեական լեգեոնների թողած լատիներեն արձանագրություններ են պահպանվել), առավելապես Կայսրության ազդեցության ոլորտում է գտնվել՝ շարունակելով մնալ անկախ թագավորություն:

Իրավիճակը, հավանաբար, չէր փոխվել, և Աղուանքի վաղնջական թագավորական տոհմը շարունակում էր երկրում իշխել նաև Իրանում Սասանյան արքայական հարստության հաստատումից հետո՝ 220-ական թթ.: Առաջին Սասանյանների վիմագիր արձանագրությունները հիշատակում են Աղուանք-Առանը որպես թագավորություն՝ չտալով, սակայն, նրա տիրակալի անունը: Մյուս կողմից՝ VI դ. ամենասկզբին շարադրված՝ «Վաչագանի վեպ» անվանված սկզբնաղբյուրն ուղղակի հայտնում է Աղուանքում Արշակունյաց արքայատոհմի հաստատման մասին՝ հանձին Վաչագան I Քաջի: Դա ժամանակագրորեն համապատասխանում է III դ. ամենավերջին և այդպիսով համընկնում Մեծ Հայքում Արշակունիների վերահաստատման հետ՝ հանձին Դիոկետիանոս կայսեր (284-305) կողմից Տրդատ III-ի (298-330) թագադրման (298 թ. 40 տարի ժամկետով կնքված Մծքինի հաշտության պայմանագրի շրջանակներում):

III դ. աղբյուրներն ուշագրավ փոփոխություն են արձանագրում Աղուանից թագավորության տարածքային ընդգրկման առումով՝ նրա արևելյան հատվածում: Այստեղ՝ Կասպից ծովի ողջ ափամերձ գոտում, մինչև Կովկասյան լեռները հիշատակվում է Մաքթագ թագավորությունը կամ (և) Բաղասական երկիրը, որն իր թագավորական շրջանում ընդգրկում էր Կասպից ծովի առափնյա տարածքները Կուր գետի ստորին հոսանքից մինչև Չոդ-Դերբենդի անցքը՝ ներառելով Մաքթոթք երկրամասը: Ընդ որում՝ որևէ աղբյուր չի խոսում այն մասին, որ այդ տարածքը նաև

Աղուանք է, թեկուզ՝ ժողովրդագրական իմաստով: Տվյալ հանգամանքը կարևորագույն ցուցիչ է էթնիկական պատմության համար, քանի որ եթե մինչև III դարի նշված փոփոխությունն իր ավարտին հասած լինեք աղուանական 26 ցեղերից միասնական էթնոսի ձևավորումը, ապա քաղաքական կամ վարչական սահմանների փոփոխությունը չէր կարող դառնալ ամբողջից կտրված տարածքի բնակչության ինքնանվանման (էթնանվան) կորստի պատճառ: Ըստ այսմ՝ անտիկ հեղինակների հիշատակած «ալբան» (=«աղուան») եզրույթի տակ գոնե III դ. կտրվածքով դեռևս պետք է հասկանալ ոչ թե կազմավորված էթնոս, այլ «Ալբանիա» (=«Աղուանք») անունը կրող երկրի և թագավորության հիմնական (կովկասալեզու) բնակչության հավաքական (էթնոպոտեստար) ընդհանրությունը. այն թեպետև, ըստ ամենայնի, էթնոհամախմբման որոշակի աստիճանի էր հասել և ուներ օտար աղբյուրներում արձանագրված բավականին կայուն այլանվանում (էթզոէթնանուն), սակայն իր ներսում շարունակում էր բաժանված մնալ կովկասյան լեզվաընտանիքի լեզգիական ենթախմբի լեզուներով խոսող առանձին ցեղային էթնոսների, որոնցից յուրաքանչյուրն ուներ կայուն էթնիկական ինքնագիտակցություն և ինքնանվանում (էնդոէթնանուն):

Իրանում III դ. 20-ական թթ. մեծ քաղաքական փոփոխության՝ պարթև Արշակունիների փոխարեն Սասանյանների հաստատման հետ կապված հայկական աղբյուրները տեղեկացնում են վերջինների դեմ հայ-աղուանական սերտ զինական դաշնակցության մասին: Ըստ Ագաթանգեղոսի՝ աղուանները Վիրքի և իրենց մյուս (Կուրի ձախափնյակի) հարևանների հետ միասին մասնակից էին հայոց արքա Խոսրով Մեծի (=Տրդատ II, 216-252 թթ.) բազմամյա արշավանքներին դեպի Իրանի խորքերը («ի միս ես ի զրուս տարոյն սկսանէր Խոսրով թագաւորն Հայոց զունդ կազմել եւ զար բովանդակել, զունարել զգարս Աղուանից եւ Վրաց, եւ բանալ զորունս Արանաց եւ զՃորայ պահակին, հանել զգարս Հոնաց, ասպատակ դնել ի կողմանս Պարսից, արշաւել ի կողմանս Ատրեստանի, մինչեւ ի դրունս Տիսրոնի... Վաղվադակի ի թիկունս հասանէին մեծաւ բազմութեամբ ժիր եւ քաջ առն եւ ձիոյ եւ բուն կազմութեամբ Աղուանք, Լփինք, եւ Ճիղաք, Կասպք եւ այլ ես՝ որ ի սին կողմանց, զի զլրէժ արեանն Արտեսանայ խնդրեցն»):

Հայաստանը և Աղուանքը միասին են հանդես գալիս նաև իբրև առաջին Սասանյաններին ենթակա դարձած թագավորություններ (252 թ. Տրդատ II-ի մահվանից հետո): Սասանյան արձանագրություններում՝ Նախշ-ե Ռոստեմում Կարտիր մոգպետի թողած երկլեզու, Քաաթա-ե Զարդուշտում Շապուհ I արքայից արքայի՝ եռալեզու, ինչպես նաև Պայկուլիում Նարսեհ արքայից արքայի (293-302 թթ., մինչ այդ նա եղել էր «Հայաստանի մեծ թագավոր»-ը) թողած երկլեզու բնագրերում, նրանք հիշատակված են իբրև Սասանյան տերության (Իրանշահրի) մեջ մտնող կիսանկախ երկրներ՝ շահրեր: Երեք դեպքում էլ միջին պարսկերենով *Առան* կոչված (պահլավերեն տարբերակում՝ *Արդան*, հունականում՝ *Ալբանիա*) երկրի կողքին հիշատակված է Բաղասական երկրի (Բալասագան) անունը, ինչպես նաև Ալբանական դուռը (որը Չող-Դերբենդն էր):

Այս ժամանակաշրջանում ևս Հայաստանի և Աղուանքի թագավորները շարու-

